
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

IX

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ
ԷԴՈՒԱՐԴ ԵՎ ՎԵՐԺԻՆ ՄՍԵՐԼՅԱՆՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Այս հատորով ավարտվում է Լևոն Շանթի «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակությունը: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտը և «Գիտություն» հրատարակչությունը խորին երախտագիտություն են հայտնում տեր և տիկին Մսերլյաններին, որոնց սիրահոժար հովանավորությամբ հնարավոր դարձավ հրատարակել Լ. Շանթի իննհատորյա «Երկերի ժողովածուի» ամենաստվարածավալ հինգ հատորները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՆԸ ՀԱՏՈՐՈՎ

Ж50427
Ա203199

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՆԸ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԻՆՆԵՐՈՐԴ

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՑԻԿՆԵՐ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ – 2017

ՀՏԴ 821.19-6 Շանթ
ԳՄԴ 84(5Հ)
Շ 301

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա՝
Վ. Դևրիկյան, Ավ. Իսահակյան,
Վ. Կիրակոսյան, Ս. Մարգարյան, Ա. Մանուկյան,
Ս. Սարինյան, Ե. Փամբուկյան

Հատորի խմբագիր՝ **Ա. Մանուկյան**
Բնագրերը պատրաստեցին **Ե. Փամբուկյանը,**
Խ. Վարդանյանը և Ա. Մանուկյանը,
ծանոթագրեցին **Ե. Փամբուկյանը և**
Ա. Մանուկյանը,
բառարանները կազմեց **Ա. Մանուկյանը**

Շանթ Լևոն
Շ 301 Երկերի ժողովածու/Լ. Շանթ. – Հ. IX, Նամակներ և բացիկներ / Լ. Շանթ – Եր., «Գիտություն» հրատ., 2017, 712 էջ:

ՀՏԴ 821.19-6 Շանթ
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-5-8080-1255-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017
© ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՑԻԿՆԵՐ

1. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԵԼԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ[1]

Հարգո՛ պարոն:

Իմ «երազ օրերու» մասին Ձեր ընկերութ֊յան տալիք որոշումը չատ ուշացավ, կը կարծեմ, որ դիտավորութ֊յունն֊իդ փոխված լինելու է:

Փոխված է և իմ դիտավորութ֊յունս:

Ձեր այսչափ երկար ատեն ինծի անպատասխան թողնելը իրավունք կուտա ինծի ընկերութ֊յանդ տված Համաձայնութ֊յունս ետ առնելու:

Կը խնդրեմ, որ «Երազ օրերս» ընկերութ֊յան հրատարակելի դրքերու ցանկին ջնջելու հաճիք, եթե երբևիցե այդ ցանկը մտնելու բաղդը ունեցած է[2]:

Անգամ մը ևս կը հայտնեմ ընկերութ֊յանդ իմ խորին չնորհակալութ֊յունս Ձեր ցույց տված Համակրական դիտավորութ֊յանը փոխարեն:

Որով և այս խնդիրը կը գոցվի:

Ընդունեցե՛ք ուրեմն չնորհակալութ֊յունս ու հարգանքս:

Լևոն Սեդրոսյան

96 փետր. 8, Լայբցիկ

2. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ բարեկամս:

Գուցե բարկացած եք, որ մինչև հիմա Ձեր նամակը անպատասխան ձգած եմ. պատճառը իմ ծուլութենեն ավելի Միքեն էր[1]: Միքեի մասին լուր էիք ուզած, իսկ ան այս վերջին օրերը գրեթե ամեն օր ճամբա ելնելու վրա էր. այնպես որ ես ալ կ'ըսպասեի իր մեկնելուն՝ Ձեղի վերջապես որոշ բան մը գրել կարողանալու համար:

Այսօր վերջապես ճանապարհ դրինք, բայց ո՞ւր. Պոլիս՝ սիտի մտածեք, ո՛չ. ենթադրեցե՛ք. Ամերիկա: Այս վայրկյանիս, որ Դուք այս

տողերս կարդալու վրա լինիք՝ անոր չոգենավը Լա Մանչի ջրերուն մեջն է արդեն, գուցե նույնիսկ ֆրանսական հողի վրայեն իրմեն քարթ մըն ալ ստանաք:

Այսչափը Միքեի մասին, որուն սրտագին բարևները իմ գրչե՛ս ընդունեցեք:

Գալով Ձեզ՝ չգիտեմ որոշ, թե հոս ինչ կ'ընեք կամ ինչ ընելու մտադիր եք[2]. գիտեմ այնչափ, որչափ Միքեին գրած եք. ուրիշ խոսքով՝ ոչինչ չգիտեմ: Լրագիրներու կես ծածուկ-կես հայտնի ակնարկներեն կ'ենթադրեմ, որ «Կարմիր գիրքը» անուն գրքի մը հրատարակութեամբը զբաղված եք[3]. գուցե Ձեզ հետ և ուրիշները, որոնց թվին մեջ Բաշալյանն ալ կը դնեմ[4], որուն, ի դեպ, ջերմ բարևներս տալու չի մոռնաք: Կարծեմ «Հայրենիքի» թարգմանական ոտանավորներն ալ Ձերն են, թեև Միքեն հակառակը կը պնդեր[5]:

«Կարմիր գրքի» մասին ըրած ենթադրութիւնս եթե չիտակ է, ընդունեցեք նաև իմ համակրանքս Ձեր այդ ձեռնարկին վերաբերմամբ: Կը ցանկամ Ձեզի հաջողութիւն Ձեր գրական գործունեութեան մեջ: Ես միշտ լավատես եմ եղած. և ավելի լավ օրերու կը հավատամ. կը հավատամ նաև, որ մենք օր մը հեռվեն հեռու իրար հաջողութիւն մաղթելու տեղ իրար հետ միասին գործել ալ պիտի կարողանանք, հուսանք:

Փոստի մեջ բզկտած վիպակիս փոխարեն Ձեզի անմիջապես նոր օրինակ մը ուղարկեցի[6], վերջին օրինակը, որ տրամադրութեանս տակը կար:

Ընդունեցե՛ք բարևներս.
Լևոն Սեդրոսյան

21 Հուլիս
Լայբցիկ

3. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ բարեկամս:

Այսչափ ժամանակ Ձեզի չի գրելե և իմ չորս-հինգ նամակներուս Ձեզմե և ոչ իսկ տող մը պատասխան չստանալե վերջը[1] մարդ անսովոր համարձակութեան ունենալու է Ձեզի կրկին գրելու համար, և այդ համարձակութիւնը ես մինչև այսօր չունեցա՝ չի նայելով իմ վերջին ժամանակը ունեցած ամենանեղ հանգամանքներուս: Եվ եթե այսօր գրիչ

կը վերցնեմ Ջեզի նորեն գրելու համար, այն ալ ա՛յս տեսակ նյութի մը վրա, որ այս վայրկյանիս կարդաք պիտի, կրնա՛ք երևակայեր, որ ինչ աստիճան սեղմված ու չվարած վիճակի մեջ եմ: Կարելի է այս նամակս ուրիշի մը վրա լավ տպավորություն չընե, բայց Դուք իմ աչքերուս դեմն եք միշտ այնպես, ինչպես ես Ջեզի ճանչած եմ. և այդ ինծի սիրտ կու՛տա անկեղծորեն Ջեզի գրելու:

Ինչպես գիտեք, մեկ-երկու ամիսեն երրորդ տարին կը լրանա, որ ես Գերմանիա եմ: Անցյալ տարվան Պոլսի ազմուկներեն իվեր[2] սկսան ինծի անկանոն, ուշ-ուշ ու այն ալ քիչ ուղարկել ամսական անհրաժեշտ եղող փողը. ես առժամանակ մը կառավարիլ սկսա չուրջս փոքր պարտքեր ընելով. և հիմա, երբ արդեն բավական պարտքեր դիզված է վրաս՝ Պոլսեն կը գրեն ինծի, որ վերջնականապես Հույսս Հոնկե կտրեմ, որ արդի դրամական պայմաններուն ինծի այլևս ոչինչ ընել չեն կրնար: Ես առաջուց չափազանց անկանոն վիճակս աչքի առաջ ունենալով՝ անցյալները արդեն գրած էի «Մուրճի» խմբագրին[3], որ եթե կարող է՝ ինծի քիչ-չատ կարող անձ մը ցույց տա, որուն ես դիմել կարողանամ կամ իբրև ստիփենտիատ և կամ իբրև փոխ ստակ խնդրող՝ երկու տարիի մը գեղձա հոս աշխատութիւնս շարունակելու համա՞ր: Եվ ահա՛ երեկ Պոլսեն կ'ըստանամ վերը հիշած նամակս և բոլորովին հաշիվս կը կորսնցնեմ. չորս կողմս լեցուն պարտք, ձեռքս ոչ մեկ ստակ. առանց հոս հաշիվներս մաքրելու տեղես չեմ կարող երերալ. կապված ամեն կողմե ալ ինծի խորհուրդ կու տան Պոլիս չվերադառնալ, ըսելով թե Պոլիս մտնելու ժամանակ ինծի կարող են կալանավորել, ինչպես ուրիշ շատ մը Հայ երիտասարդներու հետ պատահած է. և կը մտածեմ՝ ենթադրելով, որ անվտանգ Պոլիս դառնալ կարողացա՝ ինչ պիտի ընեմ հոն. ոչինչ. այս պայմաններուս մեջ անգործ ու ապարդյուն ժամանակ անցընելու հարկադրված եմ. ո՛չ կարող եմ գրել, ո՛չ իմ Մանկավարժութեամբ զբաղիլ. ա՛, այդ անգործութեան զազափարը անտանելի է. հոս իմ աշխատութիւններս ընդհատեմ ճիշտ կեսին, ամենաէական կետին վրա, երբ ես ամենեն ավելի իմ գործովս հետաքրքրված եմ, և երթամ Պոլիս պարապ ժամանակ անցընելո՞ւ. ո՛չ Պոլիս վերադառնալ կարող եմ, ո՛չ ալ արժե հիմա վերադառնալ, ո՛չ փող ունեմ, ո՛չ ատանալու հույս. իսկ հոս ես ամեն օր ավելի ու ավելի նեղ վիճակի մեջ կը մտնեմ. բոլորովին չվարած եմ. ինչ ընելիքս ինքս ալ չգիտեմ, և ահա՛ այս վայրկյանիս էր, որ բոլոր աքսյուբյուններս[4] մեկդի դնելով ստիպված եմ

նորեն Զեզի դառնալ: Կովկասի մեջ Զեզմե ու պարոն Սպենդիարյանեն[5] պատ ինձի ո՛չ ոք մտանեն չի ճանչնար. և ո՛չ ոքեն խորհուրդ հարցնել կարող չեմ: Արդյոք չե՞ք կարող Կովկաս կամ Ռուսաստան Զեզի ծանոթ անձի մը ինձի իբրև ստիպենտիատ առաջարկել երկու տարվան համար. պատրաստ եմ այդ ստակը իբրև փոխ առած նկատել և վերադարձիս ամսեամսիկ իմ աշխատուքենես հատուցանել: Եթե Զեզի համար անհաճո է անձամբ այդ տեսակ քայլ մը ինձի համար ընելը, գոնե դրեցե՛ք ինձի՝ ես ինքս որո՞ւ կարող եմ դիմել քիչ-չատ հավանական հույս ունենալով. միայն խնդրեմ ըստ կարելվույն չուտ պատասխանեցնեք նամակիս. կարող եք երևակայել, թե ինչ հոգեկան վիճակի մեջ եմ: Ա՛խ, ներեցե՛ք ճչմարիտ Զեզի տված այս ձանձրույքիս: Կամ գուցե կարող եք ուրիշ միջոց մը ինձի առաջարկել. Ձեր խորհուրդը չնորհակալությամբ լսելու պատրաստ եմ:

Կարոտով կը բարևեմ Ձեր ընտանիքը ամբողջապես և տիկինը[6] մանավորապես ու սիրով կը սեղմեմ Ձեր ձեռքը.

Լևոն Սեղբոսյան

96 օգոստ. 25
Լայբցիկ

Հասցես՝
Segbossian,
stad. Albert str. 26 III, Leipzig

4. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Լիսիցյան:

Մոտ երկու ամիս է ձեզի[1] նամակ մը գրած եմ. չգիտեմ՝ ստացած եք, թե ոչ, քանի որ պարոն Սպենդիարյանի ըսելով այդ միջոցին քաղաքը չեք եղած, բայց Համենայն դեպս պարոն Սպենդիարյանեն երևի իմացած կը լինիք նամակիս բովանդակության մասին[2]:

Ան ինձի համար մեկ-երկու դիմումներ ըրած է արդեն. և անհաջող. և անոր խորհրդով ես ինքս դիմեցի տիկին Անանյանին[3]. միայն, անկեղծ ըսելով, ոչինչ դրական հույս չունիմ. իսկ դրությունս օր օրի բառի բուն նշանակությամբ անտանելի կը դառնա:

Եվ իմ այս վիճակիս մեջ ես մտածեցի անմիջապես ձգեմ ու թիֆ-

լիս գամ. հոտ գործի մը ձեռք զարնեմ, մինչև տեսնենք հանգամանքները ինչ կը բերեն: Թեև իհարկե ինքս ալ չգիտեմ, թե Թիֆլիս քիչ-չատ ինծի հարմարող ինչ բանի կարող եմ աշխատիլ. բայց համենայն դեպս ինչ ալ որ լինի՝ այդ չատ ավելի լավ է, քան արդի պարտքերուս տակ ճնշված, ձեռքս առանց ատակի, հոգեկան այս անհանգիստ դրութեյունս: Եվ որ ամենաէականն է՝ ոչ ոքի վրա ծանրութեյուն չեմ լինի գոնե:

Սակայն Կովկաս գալու համար իհարկե ատակի պետք ունիմ. արդեն դրած եմ նամակ մը պարոն Սպենդիարյանին այդ խնդիրքով. նամակ մը ևս պարոն Ս. Մալխասյանին[4], որ իր հոս եղած ժամանակը խոստացավ ձեռքեն եկածին չափ ինծի համար աշխատիլ. և խնդրած եմ 300 րուբլի - ըստ կարելվույն մինչև այս ամսու վերջը - կերպ մը ինծի համար ճարել՝ մտածելով, որ այդ դումարը քիչ-քիչ հատուցանեմ իմ գալուս՝ հոտանալով, որ անմիջապես աշխատանքի մը հարելու պիտի հաջողիմ:

Ինչպես պարոն Սպենդիարյանը կը գրե, ինքը և դուք որոշեր եք ձեր շրջանին մեջ պարբերական կերպով գումար մը ժողվել և ինծի ուղարկել: Եթե այդ մեկ կամ երկու անգամվան համար լիներ միայն, և եթե այդ միջոցին հույս ունենայի, որ ուրիշ կողմե իմ համալսարան մնալս ապահովվեր, ինծի կը մնար միայն սրտագին չնորհակալութեյամբ ընդունել ձեր այդ ընկերական նվերը: Բայց ինչպես գրեցի, հույս չունիմ այդ հաջողութեյան. պ. Սպենդիարյան հաջողած չէ. պարոն Մալխասյան ընկերներես մեկուն գրած նամակին մեջ հույս չի տար. իսկ տիկին Անանյանին գրածեն իսկապես ոչինչ չեմ սպասեր. անծանոթ, հեռավոր տղու մը ուսումը չարունակելը կամ չչարունակելը ինչ հետաքրքրութեյուն կարող է ունենալ հարուստ տիկնոջ մը համար. մանավանդ մեր արդի պայմաններուն մեջ, երբ մարդ իր աչքին դեմ դժոխքեն փախած ժողովուրդի մը անոթութեյունն ու մերկութեյունը ունի[5]: - Իսկ երկար ժամանակ ձեր ընկերական օգնութեյան վրա հենվել ես չեմ ուզեր. իմ արդի երեսի վրա ինկած դրութեյանս չափ ծանր է և այն գիտակցութեյունը, որ բարեկամներուս ազնվութենեն օգտվելով՝ անոնց վրա բեռ եմ եղած, և այն ալ, ինչպես ըսի, մեր ժողովուրդի ներկա դրութեյան մեջ, ուր իրական թշվառներու բանակ մը կա ձեր նվերներուն կարոտ: Իսկ ինծի, ազնի՛վ բարեկամս, միջոց տվեք միայն իմ այս ներկա կաշկանդումես կերպ մը ապատվելու: Ձեզմե ևս կը

խնդրեմ այն, ինչ արդեն պարոն Սպենդիարյանին գրած եմ. որևէ կերպով 300 րուբլի հասցնեք ձեռքս, որ ես Կովկաս գալ կարողանամ և որքան կարելի է շուտ, ըստ կարելվույն մինչև ամսուս վերջը, որչափ քաշքշվի՝ այնչափ ավելի շատ ստակի անհրաժեշտություն կ'ունենամ հոսկե հեռանալ կարողանալու համար, տասնհինգ օր ուշ կամ կանուխ ահագին նշանակություն ունի:

Նույնիսկ ենթադրելով, որ այդ միջոցին որևէ հրաչքով կա՛մ դուք հաջողեցնեք ուսումս չարունակելու, կա՛մ իմ ըրած վորձս իրականանա, հազիվ թե մինչև հունվար ձեռքս ստակ հասնի. իսկ ես արդեն հիմա պարտքերու մեջ խեղդված եմ. այնպես որ այդ ձեզմե խնդրած 300 րուբլիին համենայն դեպս պետք ունիմ:

Ընդունեցե՛ք բարևներս, սիրելի՛ Լիսիցյան, և ինչպես միշտ, նեբող աչքով նայեցեք ձեր պլիսացավանք աշակերտի տված ձանձրույթին:

Պատասխանեցեք ինծի խնդրեմ և չո՛ւտ:

Հարգանքներս տիկնոջ.
Կը սեղմեմ ձեռքերնիդ.
Լևոն Սեղբոսյան

Հ.Գ. Նամակս, եթե կամենաք, ցույց տվե՛ք և պարոն Սպենդիարյանին. տվե՛ք անոր և իմ սրտագին բարևս:

96 դեկ. 19
Լայբցիկ

Լևոն
Հասցես. Segbossian,
Stad. Albert str. 26 III, Leipzig

1897

5. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

3 ապրիլ 97, Բաստով

Սիրելի՛ Ստեփան:

Կես ժամեն ճամբա կ'ելնեմ դեպի Խարկով. Բաստովի կայարանը նստած քեզի ու ձերոնց քանի մը տող գրելու կ'ըշտապեմ: Ծայրեն սկսեմ: Ռազմավիրական ճանապարհը[1] շատ լավ ու հանգիստ անցա. օրը տաք էր բառի բուն նշանակությամբ. նույնիսկ ձյուներուն մեջն

անգամ. ո՛չ իսկ օդի չարժում մը. Դարիալեն[2] եղնելու ժամանակ միայն կծու հով մը սկսավ գրեթե մինչև Վլադիկավկաս, բայց ես տիկնոջ ու քու խորհրդիդ բառացի կերպով հետևած էի և երևակայե՛ հինգ չասիկ էի հագած իրարու վրա, այնպես որ այդ bise-ն[3] ալ բացի դեմքս փառավորապես խաչելեն ո՛չ վնաս ավավ ինծի, ո՛չ օգուտ: Մլեթեն[4] սկսած քանի լեռան բարձրերն էինք, դժբաղդաբար շուրջս ամբողջապես ծածկված էր մառախուղով. Կազբեկ իջնելուատեն հետզհետե սկսավ բացվիլ. իսկ Կազբեկեն մինչև Դարիալեն եղնելնիս հիանալի պայծառ ու արև օր էր. - իմ վրա խոր տպավորութիւն ըրավ այդ վայրի Դարիալը. այդ չերքեզուհու չադրայով փաթթված սիրունիկ Կազբեկը, որ լեռներու մեջքին քոքեթութեյամբ վար կը նայի. բայց բանաստեղծութեյունը մեկդի. հիմա զանգը կու տան, և ես բավական բան ունիմ դեռ գրելու: Այնքանը միայն չմոռնամ ըսելու, որ կառքի թաքթավոր ցնցումին տակ մեկ անգամ մը չէր, որ հիշողութեյուններս ետ-ետ դեպի ձեր տունը վազեցին. ա՛, եթե դիտնաս ինչպես սիրով կը բարևեմ ձեզի բոլորդ:

Վլադիկավկաս դիշեր մը մնացի. թե՛ իրիկունը, թե՛ հաջորդ օրը լավ մը թափառեր եմ քաղաքը. բոլորովին միա՛յն. այդ է ձանձրալին: Գնացքին մեջ մինչև Բաստով ամբողջ հատորիկ մը կարդացեր եմ. Чехов-ի рассказ-ները[5]: - Երեկ առավոտ մտա Բաստով, առաջին տպավորութեյունս այդ դաշտին մեջ ընդարձակ փռված Դոնը եղավ. այդպես լայն գետ դեռևս տեսած չէի, որով կրնաս հասկնալ, որ վրաս ազդեր պիտի: Հյուրանոցին անմիջապես տիկնոջ հանձնարարականներուն հետևեն ինկա[6]: Նախ Լևոն վարդապետի իրերը հանձնեցի Անանովին, որ իսկը նախիջևանցու տիպ է. ծանոթացուց ինծի կնոջը և հյուրասիրեց. իրերու համար չատ ուրախացավ. «Ռուլյերուն կը տանիմ» ըսավ. ուղեց հացցնէ. տվի: Հոնկե ճաքարշ և չիտակ Նախիջևան. տասկալի հով քամի օր մը. քիչ մը այս ու այն կողմ իյնալե վերջը Գոդոյան վարժարանը գտա[7]. <1 բառ> ընդունեց ինծի. նամակները հանձնեցի. Հարցուց ձեր մասին, մանավորապես տիկնոջ: Գտա Զարիփյանը[8], փա՛հ, վա՛հ այդ նոր անբարևները. ինծի համար այնպես տարօրինակ է տեսնել ընկերիդ այդ երկար վերարկուներուն մեջ փաթթված, համրիչը ձեռքը, բոլոր անկյաններուն մեջ մեկ-մեկ երեխա. «Հայրի՛կ, հայրի՛կ», «մամա՛»: Ճաշին Զարիփյանը չի թողուց. Զարիփյանի տիկինն ալ հարցուց քենիներուդ մասին, մանավորապես տիկին Թագուհու[9], որու բարևները անոր տարած էի. և բավական բաներ պատմեց ինծի տիկինը

քու քենի տիկնանցը մասին դալրոցեն[10]: Հա՛, վերջապես իրիկունը հետզհետե տեսա մյուս աղաքը, որոնք բավական բազմաթիվ են. Հա՛, Սուրբ Խաչ[11] ալ գացի անմիջապես. հիանալի արև սիրուն իրիկուն էր. դաշտերուն մեջեն վրաս չատ լավ տպավորություն ըրավ. նույնպես այդ վանքը իր բոլոր կողմերով. հոն ալ մեկ-երկու ճեմարանցի ընկերներու հանդիպեցա. ամեն մինի եռևեն մեկը կը բռանի. ամեն տեղ կան. մեկ խոսքով՝ նոր տպավորություններով բեռնավորված դարձա քաղաք, գիշերը տղոց հետ էի. հիմա անոնք գործ ունին. բոլորն ալ կա՛մ վարդապետ, կա՛մ տերտեր. այս առավոտ քաղաքին մեջ՝ Բաստով թափոր մը ըրի ու հիմա հայտնի աղմուկին մեջ նստեր կը գրեմ: Տիկնոջ ըսած բժիշկին երթալը դժբաղդաբար անկարելի եղավ. չա՛տ կը ցավիմ, որովհետև տիկինը քանի մը անգամ իր այդ ցանկությունը կրկներ էր ինծի. մեղք: Ո՛հ, դալրոցն ալ եղա, եկեղեցին ալ. ձեր Նախիջևանը վրաս լավ ազդեց. սիրուն, մաքուր, կոկիկ քաղաք մըն է. «Հանգիստ անկյուն մը», իսկ Բաստովը եվրոպական քաղաք է արդեն:

Կ'ըշտապեմ վերջացնելու: Սիրով ու կարոտագին կը բարևեմ մայրիկը, տիկինը, տիկին ու օրիորդ քենիներդ, բոլորդ, բոլորդ. կը սեղմեմ բոլորիդ ձեռքը. ու քեզի ալ սինդ մը կը համբուրեմ:

Լևոն

6. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Ապրիլի կեսեր>

Հա՛, սիրելի՛ս, վերջապես գործի վրա եմ. եթե գիտնաս ինչ հաճույք է այսքան երկար պարապումենե վերջը Roulke-ի կամ Lipps-ի[1] մը տմտմբացող մորուքին դիմացը նստիլը տաշտշված ու աղջկան անուններով ծածկված հին պրասեզաններուն վրա. այդ անվերջ հյուրանոցե հյուրանոց, վակոնե վակոն ոտոստելե վերջը քու անկյունդ ունենալը. ա՛, այդ վակոնը. իր բոլոր կողմերով ակամա այնպես ոտոստնաստիրած եղա, որ բնավ չի զարմանաս, եթե հանկարծ երկրորդ «վակոնին մեջ» մը գրելու հիմարությունը վրաս թռավ[2]. խնդիրը այն է, որ fabula-ն[3] ալ կա, և իրակա՛ն: Հա՛, հա՛, քիթիդ տակեն մի՛ խնդար:

Բաստովի կայարանեն քեզի նամակ մը գրած եմ[4], երևի ստացած

կը լինես. մեկ-երկու գծով հոնկե կը չարունակեմ: Խայրքով հասարակ քաղաք է և վրաս ո՛չ մեկ տպավորութիւն չըրավ. Քիւե արդէն տիպիկ է. և սիրուն. միայն, ա՜հ, Աստված իմ, այդ եկեղեցիները, այդ անվերջ եկեղեցիները իրենց անչնորհք ճարտարապետութեամբ, անչնորհք նկարներով, ոսկիի տակ խեղդված, հակառակ բոլոր բողքի նման-դմբեթներով: Հապա իրենց սևագլուխները. սևագլուխը, հո՛, ինծի համար միշտ զզվելի է, բայց ատոնք, ատոնք անտանելի բաներ են արդէն: Ամբողջ օր մը քաղաքը թափառեցա, եղա Համալսարան, Լաւրան[5] և այլն. երկու հայի հանդիպեցա ընդամենը, իրավաբանութեան ուսանողներ. մեկը սարկավագ է: Մեր Ծաղկազարդի օրը[6] մոտ Վարշավա. իրենց Զատկին էր, կնոջին, ամբողջ հասարակութիւնը փողոցները. կրնաս երևակայեր կրած տպավորութիւնս. երբ կառքը փոռավոր կամուրջի վրայեն կը վազեր՝ ես քեզի կը մոռածեի[7]: Զգիտեմ ինչու Վարշավան ես միշտ երևակայած էի բուն ռուսական տիպի, ռուսական՝ սլավոնյան քաղաքակրթութեյան ամենալավ. ներկայացուցիչ քաղաք մը. և ո՛րքան եղավ զարմանքս, երբ կամուրջը անցնելուս սես ինքըզինքս Գերմանիա գտա. չենք, բարք, կյանք, փողոց, ամեն բան արևմտյան: Գուցե քու հյուրանոցդ Սաքսոնիա[8]. լվացվելս, թուալեթ տալս ու փողոց նետվիլս կես ժամվան գործ եղավ: Երկար թափառեցա այդ տոնական վխտացող բազմութեյան մեջ, որոնք իրենց Զատկի վեչերին կ'ըշտապեին կամ եկեր էին զբոսնելու. հագված, զուգված իսկ ամենքը. մի բան, որ ամենեն ավելի մարդու աչքին կը զարնե, այդ լեհերու ճաշակով և էլեկանտ հագուստն է, թե՛ այր, թե՛ կին. և այդ կիները իրենչ սիրուն կազմված ու իրենչ գրավիչ դեմքի արտահայտութեյուն ունին անպիտանները. այդ fein[9] ու խելացի դիմագծերը ես ուրիշ ոչ մեկ տեղ չեմ տեսած. և իրենչ զարմանք ուրեմն, երբ վայրկյան մը, Գերմանիայի փոխարեն, հո՛ս մնալ ու լեհական գրականութեյունն ու լեզուն ուսումնասիրել անցավ մտքես. ա՜խ, այդ լեզուն, ճի՛շտ, ճի՛շտ հայերեն. և այն ալ մեր Պոլսի. արա՛գ, թեթև՜ «չիչիչիչի». քանի՜-քանի՜ անգամ ակամա ետիս դարձա, երբ մանավանդ ձայնը կանացի էր: Դե՜, ինչպես կը տեսնես, Վարշավայդ չատ եմ ոգևորված. միակ դիսսոնանսը հրեաներն էին իրենց թավիշ գլխարկներով ու երկար վարդապետական վերարկուներով, որոնց նայիլ անկարելի է: Երեք օր մնայի Վարշավա. հեղ մը մեծ թատրոնն ալ գացի, որ ինծի այնքան ալ դուր չեկավ, ո՛չ խաղը, ո՛չ կազմը, ո՛չ նույնիսկ թատրոնի կարգերը.

դուցե անոր համար, որ չատ բան կ'ըսպասեի: Իհարկե տեսա և Զոհրաբյանին և Ղամբարյանին[10]. երկուսն ալ վրաս չա՛տ լավ տպավորություն ըրին. չգիտեմ ի՞նչ ըսեմ քեզի, որ իմ դործս այդ մարդոց հետ կապեցիր: Զոհրաբյանը միայն անգամ մը տեսա. տղան հիվանդ էր ու մթերանոց չէր դար: Հարցուց իհարկե քու մասին, Թիֆլիսի մասին, և ընդհանրապես վրաս դրավիչ տպավորություն ըրավ: Ստակի խնդիրը կարգադրեց այնպես, ինչպես իրեն գրած էիր. երեք ամիսը անդամ մը ուղարկե պիտի. առաջին եռամսյակը ստացած եմ արդեն: Վարշավայեն Բերլին չատ զվարթ անցավ. վակոնիս մեջ 17-18-ամյա ռուսուհի մը ունեի. երևակայե՛ մաթեմաթիքոս ռուսուհի մը, որ Հայտելբերկ կ'երթար համալսարան. և զարմանալին այն է, որ տգեղ չէր. սիրո՛ւն մաթեմաթիքոսուհի մը. չէ՛, իմ բոլոր կանանց հարցի մասին ունեցած բացարձակ ազատամտությամբս այդ դեռ չէի երևակայած: Բերլին ու Լայբցիկ միասին առած հազիվ երեք օր մնացի, բայց այդ ալ հերիք եղավ, որ ընկերներս բաւիս բուն նշանակությամբ ինծի կողոպտին. այնպես որ ինծի չոտով ստակ հասցնելու նայե:

Եվ հիմա ահա՛ չաթաթվան մը չափ է Մյունխեն եմ. հոս գալուս սրտանց ուրախ եմ. անհամեմատ ավելի գեղարվեստական քաղաք է, քան Լայբցիկ. ո՛չ մեծ քաղաքներու իմ ամենևին չսիրած ադմովը ունի, ո՛չ ալ փոքր քաղաքներու կյանքը (Kleinleben): Մուզե, թատրոն, երաժշտություն ամենայն առատությամբ. համալսարանն ալ համեմատաբար իմ լսել ուզած առարկաներուս ամենեն ավելի հարմարողը: Քաղաք ոտք դնելուս հաջորդ օրը արդեն լսարանն էի, և ի՞նչ կարոտով: Բացի դասախոսություններե, որ միջին հաշիվ օրական հինգ ժամ է, բոլոր ժամանակս սենյակի, տեղավորվելու, քաղաքը չափչփելու ու համալսարան ընդունվելու ձևականություններուն գնաց. ո՛չ կարդացած եմ, ո՛չ գրած, ո՛չ ալ հասարակական չինք մը այցելած. հիմա արդեն աշխատությունս քիչ կարգի ձգեցի ու նստեր եմ նամակներս գրելու, որոնք թվով բավական չատ են. քովիդ իհարկե առաջիններն է:

Հայեր հոս երեք-չորս հատ կան, որոնց երկուսը միայն տեսած եմ և այն ալ միայն երեկ: Կյանքը քիչ մը ավելի սուղ է, քան Լայբցիկ. օդը չատ անպիտան փոփոխական է և... և ի՞նչ. ոչի՛նչ, պաչտոնական մասս վերջացավ:

- *Անշուշտ կը հետաքրքրվիս, թե ինչ դասախոսություններու կը*

*Հաճախեմ, ահա՛. 1) Lipps Erſhefich. բնախոսական հիմունքներու վրա, ո՛չ հին փիլիսոփայական նեյնիմները. 2) Municker. գերմանական արդի գրականութիւնը 48-են[11] ասդին. երիտասարդ մարդ է, քննական հայացքով, բայց ոչ աչքի ընկնող ուժ. 3) Roulke. Antropologie. ինծի համար առայժմ բավական անհետաքրքիր, քանի որ ջղային դրութեան անաթոմին ու ֆիզիոլոգիի մասին կը խոսի դեռ. ծանոթ հարցերու ավելորդ կրկնութիւն մը. կ'ըսպասեմ վերջին. 4) Riehl. քաղաքակրթութեան պատմութիւնը 18 և 19-րդ դարերու. ծերուկ մըն է, հայտնի և չափազանց գրավիչ խոսվածք ունի. իր դասախոսութիւններեն ամեն մեկը վեպի մը ընթերցման ներկա լինելու պես բան մըն է. արդեն նյութը ինքնին հետաքրքիր է. 5) Shengel. Allgemeine Stautslehre. իբրև ներմուծում իրավաբանութեան կը կարդա, բայց ինծի համար նույն է, ինծի համար ալ կը լինի իբրև ներմուծում քաղաքական գիտութեան: Ինքը փաստաբան է, հետևաբար և պահպանողական, բայց այդ գիծը նույնիսկ ինծի համար օգտակար է. նախ՝ ինքնին հետաքրքիր է զարգացած ու լուրջ պահպանողականի մը օրենքներու ու գիտութեան վրա հիմնած հայացքները. և երկրորդ՝ կարծես ավելի զարգացուցիչ է. դասի միջոցին անդադար արթուն ու քննող դիրք մը բռնելու ստիպված եմ. «ա՛յ, այդ չեղա՛վ», «ինչո՞ւ», «սխալ ես», «այդ բոլորովին այլ բացատրութիւն ունի», ահա՛ քանի մը հասը այն նախադասութիւններեն, որոնք գլխուս մեջը կը դառնան իր այս ու այն առարկութեան դեմ: 6) Brentano՝ Հայտնի քաղաքատնտես. աչխուժ, հասուն այր մարդ մը. կը կարդա **Քաղաքատնտեսութիւնը իբրև գիտութիւն**, ճիշտ իմ ուզած մարդս. ա՛, ինչ հաճույք է քու սեփական մտածումները, կարծիքները, ենթադրութիւններդ նույնութեամբ այդ տեսակ իր ճյուղին մեջ հեղինակութիւն եղող մարդու մը բերնեն հաստատած ու ֆորմուլի ենթարկված լսելը: Երբեմն ոգևորութենես սեղանիս վրա նստել չեմ կրնար. դասախոսութեան չեչոն է՝ «Քաղաքատնտեսութիւնը մինչև հիմա փիլիսոփայութիւն է եղած, տեսակ մը բանաստեղծութիւն, նկատում «ինչպես պիտի լինի»-ի. պետք է գիտութեան վերածել, վերլուծում «եղածի» և ընդհանուր օրենքներու հանում»: Հիմա քաղաքատնտեսութեան զարգացման պատմութիւնը կ'ընե, և կրնաս հասկընալ, թե որչափ հետաքրքիր հարցեր կան ճանապարհին շոշափելու: Այսչա՛փ:*

Գալով քու հանձնարարութիւններուդ՝ Ա.ղ. Մակեդոնացու ան-

Թիւքվարիչ գրքերը, ինչպես ամեն անթիւքվարիչ գիրք, ամեն անգամ պատահմունքին համեմատ տարբեր գին կ'ունենա. կես արժեքովը կարծեմ համեմայն դեպս կարելի է գտնել, եթե ոչ ավելի աժան: Եթե կ'ուզես՝ փնտրելու ետևե իյնամ, եթե հոս չի գտնվի՝ Լայբցիկ անպատճառ կը ճարվի (Herrberg-ը[12] մինչև 9-10 մ., Drausen[13] մինչև 7-8, գուցե և ավելի աժան): Մանկական գրքերու Verlag-ներ[11] շատ կան. ահա՛ մեկ-երկուքի հասցեն. Verlag Dums in Wesel; G. Pohlmann in Berlin; R. Thienemann in Stuttgart; A. Kohler in Leipzig – Drezden. Եթե կ'ուզես՝ ինքդ գրե և թող իրենց քաթալոկները ուղարկեն քեզի. բայց կարծեմ ավելի հարմար է ես ինքս ժողվեմ ու քեզի ուղարկեմ. հոս չի կա, ես ալ պիտի գրեմ ու ստանամ, եթե ցանկաս: Ժողովրդական հրատարակութիւններ ընկերական ու գիտական հարցերու համար՝ Verlag Duncker und Humsblat in Leipzig և Pultkumer und Muhlbreif in Berlin: «Թե ինչպես ժողովրդական և մանկական գրադարան կազմել». այդ հարցի մասին հարցուցի և ինքս գրավաճառանոցի մեծ ցուցակը աչքե անցուցի. արդին քանի մը գիրքեր ապսպրած եմ (մանր բաներ են, մի՛ վախնար). ստանալուս պես կ'ուղարկեմ, ես կ'ուզեի ավելի նոր ժամանակվա գրված բան մը գտնեմ, անկարելի եղավ. բոլոր եղած գրքերը 80-թվականներու են: Ժողովրդական և մինչնակարգ դպրոցներու մեջ պատմութեյան գրքեր այնչափ շատ կան, որ մուտիկ ծանոթ պիտի լինել լավը որոշելու համար. գրավաճառի բսածին ականջ կախել չկինիր. ընկերներես մեկուն բսած եմ, որ փրոֆեսսորեն հարցնե. երբ պատասխանե՝ քեզի կը գրեմ:

Դե՛, սիրելի՛ս, տեղս հատավ. տո՛ւր սիրով ու կարոտով բարևներս ու հարգանքս քուկիններուդ՝ տիկնոջ, մայրիկին, օրիորդներուն, փոքրիկներուդ, բոլորիդ, բոլորիդ. և համբույր քեզի.

Լևոն

7. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան:

Որ նամակ գրելու մեջ առաջին կարգի ծուլերեն ես, որ շատ ուշուշ պիտի գրեիր ինծի, որ երկար նամակներ երբեք պիտի չգրեիր, այս բոլորը ես իհարկե գիտեի. բայց որ քու նամակներու չպատասխանելու սկզբունքդ ա՛յս աստիճան <1 բառ> կատարելագործութեյան պիտի

Հասցնելիր, ոչ, այդ չէի կրնար երևակայեր: Եղբա՛յր, դոնե քարթ մը, դոնե երկու տող. դոնե իմանամ, որ իմ գրածներս ու ղրկածները ստացեր ես, այս տասնհինգ օր է ամեն առտու քեզմե նամակ առնելու հույսով գրաբերին կ'ըսպասեմ. նամա՛կ և վո՛ղ: Ըսենք հիմա քու բազմաթիվ պաշտոններուդ վրա երկուսն ալ ավելցած է՝ դերասանականը ու ձայնավորականը[1], բայց այդ չի նշանակեր, որ Մյունխենն ինկած բարեկամիդ նամակը և փողը ուղարկելու մոռնաս: Իսկ ինչ կը վերաբերի քո նոր պաշտոններուդ, իմ կարծիքս արդեն գիտես, մեկ կողմեն իհարկե ուրախ եմ. հասարակութեյան մեջ գրաված դիրքիդ նշանն է այդ և անունիդ պատիվ մը, որ, ի՞նչ հարկ կա ծածկելու, բոլոր քեզի սիրողներուն համար հաճելի է. սակայն այս գործի այսպես ըսած սեսսական երեսն է. գալով գործնականին՝ ես չափազանց դժգոհ եմ եղեր և եմ այդ քու բազմակողմանի ու բարդ անդամութեյուններեդ, որոնք բոլորն ալ ձրի են, չատ ժամանակ կը պահանջեն և ուր, դժբաղդաբար, արդյունք մըն ալ հազիվ կրնաս առաջ բերել: Գիտե՞մ, գիտե՞մ քու պատասխանդ և վիճելու ամենևին տրամադիր չեմ, միայն երբ լրագիրը քու նոր պաշտոնիդ լուրը ինծի կը բերե՝ ես միշտ կը բարկանամ. այդ գիտցած եղի՛ր:

Նո՛ւ, դառնամ նորեն ինծի. ես միշտ հույս ունիմ, որ այս քանի մը օրը Եռիկարյանի դոնե երկու ամսականը կ'ըստանամ քեզմե[2]. իսկ հաջորդ երկու ամսականը (հուլիս-օգոստոս) եթե հնար է, սիրելի՛ս, այնպես ըրե, որ եվրոպական հաշվով օգոստոսի սկզբին ձեռքս հասնի: Դիտավորութեյունս պարզ է քեզի, ամառվան արձակուրդին օգտվիլ կ'ուզեմ, պարոն Եռիկարյանի համար իհարկե նույնն է քանի մը օր ուշ կամ կանուխ ուղարկելը. իսկ ես առանց ստակի տեղես երերալ չեմ կրնար: Մոտդիր եմ Զվիցերիա անցնելու. բավական է ըսեմ, որ Օննիկը ժրնև է հիմա[3]:

Զոհրաբյանեն չափազանց չնորհակալ եմ. կատարյալ կանոնավորութեյամբ կ'ըստանամ. թե չէ մինչև հիմա ինծմե սասը բոլոքպաղիր ստացած կը լինեիր: Միայն գիտցած եղիր, հաշիվներս ծայրը ծայրին են հասած. եթե մինչև 8-10 օր քեզմե նորեն ստակ չառնեմ՝ գործս գիշ է. բանքըո՛տ. և ալ նամակներուս ամբակոծութենեն չես ազատիր. դուցե միայն եթե ձգես և իսկույն ամարանոց վազչիս:

Ի՞նչպես է տունդ, ինչ կ'ընեն տիկի՞նը, օրիորդնե՞րը. բոլորին սիրով ու կարոտով բարևս, Է՛, ինծի խոստացաք ձեր լուսանկարները, և

սպասե՛, որ ստանաս. չա՛տ չուտով մուգաք: Լևոնիկին ու Սուրբիկին համբույր[4]:

Նամակ մը գրած եմ քեզի Ռաստովեն[5], քարթ մը ճանապարհեն[6], նամակ մը[7] և քարթ մը հոսկե[8]. երկու փաթույթ ալ բրոշյուրներ..կը հուսամ, որ ստացած ես: Հուսա՛լ:

Հիմա արդեն նոր սկսա կամաց-կամաց Թիֆլիսը տեսակ մը կարոտել. և հետս բերած տպավորություններս վերլուծել:

Գալով աշխատություններուս, լավ է. գլխավորապես կեդրոնացած եմ գրականության և քաղաքակրթության պատմության վրա. արդեն ամառվան կիսամյակը շատ փոքր է. ամիսե մը դասերը կը դադրին. իսկ Բավարիա ալ անհատնում տոներ կան[9]. կաթոլիկներ են: Մյունխենեն գոհ եմ. ձմեռը հոս կը մնամ ըստ երևույթին: - Վեպիս արտագրությունը չուտով կը վերջանա և կուղարկեմ «Մուրճին». երևի օգոստոսի համարին մեջ կը տպագրվի սկիզբը[10]:

Կը վերջացնեմ կրկնելով նամակ, նամակ, նամակ. և վող իհարկե. ինքնին հասկանալի է:

Ընդունե՛ համբույրներս. Լևոնդ

97 հունիս 28

Մյունխեն

8. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ս Ստեփան:

Անդրանիկ նամակդ առած եմ. և չես կրնար երևակայեր, թե ինչպես երեխայի պես ուրախացեր եմ: Ջափազանց ուրախ եմ ամարանոց գալերնուդ. սրտանց կը ցանկամ ձեզի բոլորի՛դ զվարթ օրեր բնության գիրկը. և թարմություն ուժերուդ, երբ քաղաք դառնաս, քի՛չ, քի՛չ աշխատե՛, հոգի՛ս. կարելիին չափ քիչ. հավտա ինծի, որ բացառիկ կերպով մտավոր շատ աշխատանք ունեցողներեն ես դուն. և այդ երբեք օգուտ չէ: Ի՞նչ կ'ընեն պզտիկներդ, օրիորդները, տիկիններդը, սրտագին բարևա բոլորիդ. Է՛, ինծի խոստացաք լուսանկարներ ուղարկել՝ ո՞ւր մնաց:

Այդ քու Ալեքսանդր Մակեդոնացու պատմության պատմությունը իրեն՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմութենեն ավելի երկար

եղավ[1]. և նամակս այսչափ ուշացնելուս պատճառն ալ այն է. կրնաս նե՛ դատի՛ր. Մյունխեն այդ կողմեն չա՛տ ձախորդ քաղաք է. ո՞ւր է Լայբցիկը. հոս ձեռքի տակ անթիւքվարիչ այդ գիրքը չի կա. «Պետք է սպասել մինչև պատահի», կ'ըսեն ինծի Հոստեղի սակավաթիվ գրավաճառները. իսկ դուն ամառը ունենալ կ'ուզես: Draysen-ի Ալեքսանդրի պատմութիւնը[2] երկու տեսակ կա. մեկը Gesch. D. Hellenismus երեք խոշոր մասերե բազկացած ընդարձակ աշխատութեան առաջին մասն է (երկու հատոր, նորը 14 մարկ) և քու ուզածը այս է. կա և Հոտկե կազմած համառոտ մը աշակերտներու ընթերցանութեան համար (5 մարկ). ես անգամ մը մտածեցի գոնե այդ համառոտը այս ամառ ձեռքդ հասցնեմ, կարելի է աշակերտիդ համար է. վերջը ես կեցա. հինգ մարկ տամ, վրայեն ալ հանդիմանութիւնդ լսեմ, չէ՛, այդ հաշիվս չի գար: Այդ համառոտ ըսածս նորեն պատկառելի հատոր մըն է (մեկի քառորդը կամ երրորդը գուցե) քարտեզներով: Եթե մեծը կ'ուզես ունենալ՝ վերջապես կերպ մը ուշ կամ կանուխ ձեռք կը բերեմ իհարկե, դժբաղդաբար ո՛չ արձակուրդիդ:

Իմ Զվիցերի երթալուս խնդիրը ինծի շատ կը նեղե. իմ կողմես վճռված հարց է. բայց միայն իմ վճռես ի՞նչ կ'ելնե. բանն է, որ Եուիկարյանեն մինչև հիմա դեռ ոչինչ չեմ ստացած. և չգիտեմ ալ, թե երբ պիտի ստանամ. ա՛հ, եթե կարողանայիր այս անկանոնութիւնը կերպ մը կարգի ձգելիր. ո՛չ միայն հիմա, այլև միշտ այդպես կը լինի՝ ես գիտեմ. ամենապետք եղած ժամանակը չեմ ստանար. և երբ ստակը կուգա՝ արդեն բանը բանեն անցած է: Ուրիշ վիճակ է բոլորովին, եթե մարդ ե՞րբ և ի՞նչ ստանալիքը առաջվընե գիտե. ինչևէ, գլուխդ չի ցավցնեմ, մեղք ես. ամսարանոցի մեջ այս հաշիվները քիչ մը անտանելի են, իրավունք ունիս. միայն երբ քաղաք դառնաս, այս տողերը անգամ մը նորեն կարդա: Սակայն եթե չհաջողցնեմ այս ամառ Օննիկիս երթալս... չգիտեմ ինչ ըսեմ. և այն ալ հիմար անկանոնութեան պատճառով. որ կը մտածեմ կատղելս կուգա: Օննիկը հոն՝ ինչպես կ'երևի մեծ գործի վրա է[3]. իր հասցեն է. Suisse, Geneve, T. Sissagian, 26, Roseraie.

«Վերժինը» ո՛չ միայն իր արդանդային վիճակը անցուցած է, այլև արդեն չատոնչ ծնված, մկրտված ու կնքված է: Եվ երբ այս տողերս կը կարդաս, ան երևի կյանքի ծանրութեան ու հարվածներուն տակ կը տքա մամուլի ու «Մուրճի» ճնշման ենթարկված[4]: Ինչ ըսել

կ՚ուզե, որ կարծիքդ կ՚ուզեմ, մանավանդ վերջին 4-5 գլուխներու համար, որոնք բոլորովին նոր են. որ առաջվընե անհամեմատ ավելի լավ է՝ ես ինքս ալ գիտեմ, գիտեմ նաև, որ այդպեսով Վերժին իր բնավորութեան վրա բավական բան չահեցավ և այդ կողմեն քեզի երախտապարտ է[5]: Ես հիմա սկսած եմ նոր գործի[6]. դեռ <մեկ բառ> ցանցերուն մեջն եմ ու խճճված, երբ թելերը վերջնականապես իրարմե զատեմ ու գրելու սկսեմ՝ մեկ-երկու տողով կը գայտնեմ քեզի էությունը. այժմ միայն այսքանը. ուսանողական կյանքն է և կովկասյան դեմքեր, Կովկասեն բերված, այսպես ըսված, լրջութիւնը (մեկակողմանի ու սխալ հասկցված) և հոս առաջացած ռեակցիոնը դրա դեմ, արդեն կրնաս երևակայեր, թե ի՞նչ հարցի չուրջ կը պտտի ուշերս:

Դե՛, սիրելի՛ս, համբույրս:
Գրե՛:
97 Հուլիս 28 Լևոն Սեղբոսյան
Մյունխեն

9. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Մյունխեն, 97 նոյեմբեր 18

Անգին Ստեփանս:

Նամակիդ պատասխանելու համար՝ հանեցի նորեն կարդացի. և ինչպես նախորդ երկու-երեք ընթերցումներուս առեն՝ այս անգամ ալ վրաս նորեն ջերմ տպավորութիւն ըրավ. իսկ առաջին անգամ ուրախութենես ուղղակի ինչ ընելս չգիտեի: Գրե՛, Ստեփա՛ն, ինծի. թող լինի ուշ-ուշ, բայց գրե մեջեմեջ. հոգիս միևնակ է· բոլորովին միևնակ, մինչ ես ծարավ եմ զգացումներու. տպավորութիւններու հաղորդակցութեան, ընկեր մը, որ ինծի հասկընա, որ բացվի ինծի. ցավը, հոգնութիւնն ու հույսերը հասկընամ: Ինքս կտրված եմ կյանքե, այսինքն այն չրջանեն, որ ինծի հետաքրքրել կրնա, որուն մեջ ես հարմարեմ, որուն մեկ կտորը լինեմ ես և մեկ գործող կտորը: Չգիտես ինչպես հասարակութեան, ժողովուրդի չրջ[ան]ի մեջ լինել կը ցանկամ, այսինքն մեր ժողովուրդի. և ինչպես գործ մը տեսնելու, չարժման մեջ լինելու, ներգործական դեր մը

խաղալու պապակը կայրե սիրաս. ա՛, երբեմն ուղղակի անտանելի է այս միայնակ, միակերպ կրաւորական ընթերցումը, այս անվերջ պատրաստվիլը, յուրացումը, գուցե կյանքիս կեսը անցած եմ արդէն և դեռ կը պատրաստվիմ. ա՛, անկարելի է չծիծաղել: Նո՛ւ, գլխուդ երեմիական չի կարդամ[1]. որ մարդ ամեն տեղ և ամեն ժամանակ տրտնջա պիտի, այդ հին երգ է. կ'ուզե՞ս քեզի առած մըն ալ չինեմ՝ L'homine c'est animal mecontent[2]:

Քեզի աւելի իմ զբաղումներս կը հետաքրքրե՝ այդ մասին գրեմ: Նախ ըսեմ, որ Շվեյցարիա երթալս ջուրը իննկաւ. չատ կը ցանկայի ու բաւական կոտրված եմ. խեղճ Օննիկս դեռ կ'ըսպասե: Գարնան բոլորովին կ'անցնիմ Ցրանսային Շվեյցարիա, հոնկե ալ վերջը Հավանորեն Ցրանսա անցնելու համար: Ամառը բավական պարապ անցավ: Գլխավոր աշխատութիւնս էր և է քաղաքակրթութեան պատմութիւն և գրական պատմութիւն, այլև նորագոյն գերման հեղինակներու ընթերցում, բայց արդէն կշտացա, ա՛խ, այնքան, այնքան քիչ չնորհքով բան կա. բոլորն ալ երիտասարդ, խարխափող ուժեր, մեկ մասը հիվանդոտ, մյուսը անգեղարվեստական: Ձմեռվան աշխատութիւնս ծրագիրը նույն է. կ'ավելնա գեղարվեստի (Kunst) պատմութիւն և նորվեկյան գրականութիւն, բայց այդ նորվեկներն ալ չսիրեցի, տեսակ մը ախտավոր, մռայլ, բևեռային մթնոլորտ, ձմեռը անգլիերեն սովորելու եմ. կարծեմ անգլիական գրականութիւնը, ֆրանսականի ու հարավայինի հետ, սրտիս աւելի մոտիկ պիտի գա. մինչև հիմա իմ ճանչցած գրականութիւններես ամենեն աւելի ռուսականը իմ սրտին խոսած է. չգիտեմ, գուցե պատանեկան տպավորութիւններ կապված են հետը, անոր համար, կամ գուցե մեր կյանքին աւելի նման է. չգիտեմ, բայց իմ Լերմոնտովն ու Թուրկենևը ո՛չ Զուտերմանի հետ կը փոխեմ, ո՛չ ալ Սարինոբերկի: Ահա՛ որն է ծրագիրս, և ինչպես կրնաս տեսներ, ամենևին ընկերական պիտութիւններու կողմը ծռված չեմ[3]. թեև դեռ հարց է, արդյոք աւելի լա՞վ չէր լինի եթե ծռած լինեի. օրական երկու ժամ քաղաքատնտեսութիւն պիտի լսեմ միայն իբրև հասարակական պիտութիւն. առայժմ. դասախոսութիւնները առաջիկա չաբթեն կ'ըսկսի. դասախոսութիւններ քիչ ունեմ. չատ լսելը ոչ մի օգուտ չունի, միջին հաշվով օրական չորս ժամ. 4-5 ժամ ալ կը կարդամ. ահա բոլորը:

Իսկ ի՞նչ հալի է Շանթը, պիտի հարցնես, գնե այդ հարցիդ ուրախ պատասխան մը տալ կրնամ. ամառը տեղս գամված մնալես ան

միայն օգտվեցավ. գրած եմ վեպ մը («Դարձ»). երեք տիպ մեր նոր երիտասարդ ուսումնական հոգևորականներեն. ավելի ճիշտ հոգևորականացուներեն. սարկավագացուի մը գարձը դեպի ետ՝ հակառակ մտածող ընտանիքի մը և մանկաբարձ աղջկա մը ազդեցության տակ: Հա՛, իմ կրոնական հայացքներս գիտես, գիտես և կրոնավորներուատելությունս, զզվանքս դեպի վանքը և այն բոլորը, որ վանքին հետ կապված է. իհարկե, այդ բոլորը վեպիս վրա պիտի անդրադառնա. սակայն ըսելս ալ ավելորդ է, որ տենդենցիայի համար աղավաղումներ, անճշտություններ և այլն, ո՛չ իսկ չափազանցություններ ընելու տրամադիր եմ. իմ նպատակս ըստ կարելվույն այդ երիտասարդ երկու-երեք տիպերը պարզ դուրս բերելս է եղած և իմ համոզումներու վերափանդան. բեմը Խծկոնքի վանքը. անշուշտ գրվածքը քիչ մը վոլեմիկական գույն ունենալու է, բայց պարզ է, որ ինծի համար գեղարվեստական ամբողջությունը, հոգեբանական վերլուծումը և անհատական տիպը (ոչ <մեկ բառ> ստվեր մը) ամենաէականն է. թե որքան հաջողած եմ այդ տագանդի խնդիր է. հիմա ինկած է գզրոցիս մեջ, մեկերկու ամիսեն կը հանեմ նորեն դուրս, կը սրբագրեմ, կը չտկեմ և կ'ուղարկեմ տպագրության, մտադիր եմ նորեն «Մուրճի» մեջ տպելու[4], թեև Արասխանյանին ոչ մի բառ գրած չեմ այդ վեպի մասին. պատճառը պարզ է. նախ կրոնական և այլ մեկ-երկու կետեր կան, որ հրատարակչականի[5] անդամներուն կրնա քիչ մը չոքի ըներ, նաև իբրև առանձին գիրք ցենզուրական ավելի խիստ հայացքի կ'ենթարկվի. իբրև ամսագրի հոդված (այն ալ վեպ) չատ բանի վրա (մանավանդ երկրորդական տողերու) մեծ ուշադրություն չի գարձվիր, իսկ ես չէի ցանկար, որ ոչինչ կրճատվեր. և վերջապես ամբողջ երկը փոքր բան մըն է («Դուբսեցիներու» կեսին չափ[6]). գուցե զարմանաս, որ ինչպես հանկարծ այդ չոր ու իմ ժանրս չի համարվող նյութին վրա ինկա[7]. ինծի ալ այդ չատ որոշ չէ. ըստ երևույթին հին տպավորություններ մեջս դիզված էին, որոնք վերջին Կովկաս գալես ավելի գրգռված դուրս հորդեցին. գիտեմ, որ կրնա գուցե քաշքշուքի նյութ դառնալ, բայց որո՞ւ հոգ. իմ գործս գրելն է. մնացածը չատ երկրորդական է ինծի համար: Հիմա ինծի կ'ըզբաղեցնե ուրիշ վեպ մը, նյութ, կազմություն ու հատակագիծ պատրաստ է արդեն, ինծի համար գործի ամենադժվար մասը. կը մնա գրելը, վաղը-մյուս օր երևի կ'անցնի գրչիս տակ. նյութը սիրուն է ու գեղարվեստական. կը կարծեմ, որ սիրուն բան մը պիտի

դուրս գա. դրողը մոր կը նմանի. երեխա մը ունենալու գաղափարը հերիք է արդեն իր ունենալիք երեխան սիրուն գտնելու և վրան սիրահարելու համար, բայց ինչ կ'ուզես ըսե. ես հավատացած եմ, որ դուն ալ պիտի հավնիս, երբ աշխատությունս գրած պատրաստ հոտ կարմիր սեղանիդ վրա դրված լինի. իսկ այդ մեծ եղելությունը (Ereigniss) երևի գալ տարվա վերջերը պիտի կատարվի. վեպիս բեմը Պոլսի մեկ անկյունն է. ֆոնը՝ ծովը, վերնագիրը՝ հավանորեն «Դերասանուհին»[8]. իր արվեստին հետևել կարենալու համար իր առաջին ճչմարիտ սերը զոհ բերելու մաքառումը աղջկան մը սրտին մեջ. մյուս գլխավոր դեմքերն են՝ աղջիկ մը գավառեն՝ անբույն մը. արցունքի ու զրկանքի համար ստեղծված ժողովրդի մը մեկ զավակը և անոր միամիտ ու վախկոտ մեկ անուրջը երջանիկ լինելու և երկու տղու դեմք՝ գիտնական մը (բնախոս), գիտնական համալսարանի դոցենտ մը, հայ իհարկե և Թուրքահայաստանի արդի պրկումներուն մեկ ներկայացուցիչը՝ կարմիր մը. անշուշտ այնքան միայն, որքան որ մեկ կողմեն կրնա գեղարվեստի շրջանակին մեջ սղմիլ, մյուս կողմեն դրաքննիչի ակնոցներու շրջանակին. Ի՛, որ այս բոլոր դրածես իսկապես ոչ մեկ գաղափար կազմելու չես, այդ ես քեզմե առաջ գիտեմ. ի՞նչ ընեմ. եթե ավելի որոշ գաղափար կազմել կ'ուզես՝ տարի մը պիտի համբերես: Այդ վեպս քսվինն է. կ'ուղարկեմ քեզի՝ ըրե ինչ որ կ'ուզես. և այս խոստումս ինծի համար այն առավելությունը ունի, որ գրելու միջոցիս ոգևորող նոր խթան մը ավելի կ'ունենամ, ըստ կարելվույն աղվոր բան մը քեզի նվիրելու:

Դե՛, այս գոյությյուն չունեցող ընծաս ձեռքդ հասցնելես վերջը քիչ մըն ալ քու մասին: Զգիտես որչափ ուրախացա կարդալով, որ ամառը աշակերտ չես ունեցած. բառի բուն նշանակությամբ կարծես իմ վրայես բան մը թեթևցավ. չես կրնար երևակայեր, թե հոգու ինչ ճնշող տպավորություն եմ զգացած ամեն անգամ, երբ քու՝ հասուն գլուխ տղու մը հետ ժամերով առանձնացած՝ քեզի համար ոչ մեկ հետաքրքրություն չունեցող հարցերով զբաղվելուդ ներկա եմ եղած. և չատ եմ միշտ մտածելով, որ քու ընելիքդ ինքդ ավելի լավ կ'իմանաս և երևի նյութական անհրաժեշտություն մը քեզի կ'ըստիպե: Կը ցանկանամ, բոլոր սրտովս կը ցանկանամ, որ այդ ուժերու ավելորդ վատնումեն ըստ կարելվույն ամառ-ձմեռ ազատվես: Զայնավոր ընտրվելուդ հաշտված եմ արդեն[9]. և եթե իրավ առօրյա զբաղումներեդ ցրվելու և հասարակական դեմքերու հետ չփումն ունենալու առիթը պիտի տա քեզի՝

այն սահեն մինչև անգամ կը չնորհավորեմ նոր պաշտոնդ և հաջողություն կը մաղթեմ. ճիշտ պէսոն ես զարկեր. ինչ որ քեզի կը պակսի. ցրվում և չփոում: Եթե այդ երկուքին միացնենք «ավելի լայն գործունեության մը փափագը»՝ կը կազմվի երրորդություն մը, որը ձեռք բերելու համար իհարկե կարժե քաղաքային վարչության մեջ ձայն մը ունենալու մեծ զոհաբերությունը: Քեզի ես չատ լավ կը հասկընամ. այդ երեքեն մասնավորապես վերջին երկուքը իմ սիրտս ալ կրծող որդերեն են. արդեն այսօրվան նամակս հոտկե սկսեցի. ինչ գրեցի՝ չիտակը չգիտեմ, բայց բառերը եթե վերցնես՝ տակը նույն իմաստը պիտի գտնես: Թարգմանությանդ ավարտելդ ալ կը չնորհավորեմ. կը մնա որ տպվածը ստանամ[10]: Եվ հաջողությունը կը ցանկամ Աբովյանիդ ու Ալ. Մակեդոնացուդ[11]: Ա՛խ... այդ Աղեկսանդր Մակեդոնացին քու խերդ անիծեց, դուն իմ, ես ալ գրավաճառներու. և նամակս այսչափ ուշացնելուս պէսով պատճառն ալ այն է. անպատճառ կ'ուզեի քեզի դրական պատասխան մը գրեմ. անկարելի եղավ, գրավաճառիս երեք անգամ իրենց ընդհանուր առևտրական թերթին մեջ ազդարարել տվի, բայց որչափ ալ որ սպասեցի՝ ահագին Գերմանիայի ոչ մեկ անկյունեն ձայն մը չելավ. ուրիշ գրքի առթիվ տասնյակներով կը թափեն օգերտները. ես այլևս անթիվկվարիչ գնելե հուսահատած՝ վճռեցի նորը գնեմ և ուղարկեմ. քանի մը մարկի համար այսչափ սպասելդ չարժեր. բայց վճռելը հերիք չէ. փող ունենալու է: Իսկ ես քանի չաբաթե ի վեր ձեռքս բնավ ստակ չունիմ. չուտով կ'ըստանամ Վարշավայեն և անմիջապես դիրքդ կ'ուղարկեմ: Իմ դրամական վիճակս, սիրելի՛ս, բնավ նախանձելի չէ. Թիֆլիսեն մեկնելուս այն ուրախությունը ունեի, որ նախորդ տարիներուն պես քիմը քիմին սպրելու ստիպված սիրտ չվինեի, սակայն դժբաղդաբար կատարելապես նույն վիճակի մեջն եմ: Տարի մը, տարիներուն պես ժամանակ ունիմ դրամեն չուրջես օգտվելու և այս գեղարվեստական հարմարությունները ուրիշ ոչ մեկ տեղ ունենալ չեմ կրնար, այս գիտակցությունը ավելի ծանր կը դառնա, երբ ստակի պակասության համար ստիպված կը լինեմ սենյակս նատելու՝ փոխանակ ավելի օգտակար կերպով ժամանակես չահվելու. ճշմարտությունը այն է, որ մինչև հաշվով ամսական 45 րուբլ կ'ըստանամ, փոխանակ անվանական 60-ի. Թումանյանեն[12] դեռ ոչինչ ստացած չեմ հոս գալես իվեր. իսկ Եոիկարյանեն ընդամենը 30 րուբլի: Հա՛, Եոիկարյանի խնդիրը երևի կը կանոնավորվի, բայց Թումանյանի խոստումը ըստ երևույթին

ջուրը իյնալու է. եթե նախազգացումս իրականանա, պիտցած եղիր նորեն քու օձիքդ բռնելու եմ: Եվ, է՛, վերջապես եռքի կանոնավորվիլը ի՞նչ ընեմ, երբ ամիսներով ես հոս առանց սառկի նստած եմ, երբ ազատ քայլ մը ընել չեմ կրնար, ենթադրելով որ այս ամիս (հոկ.–նոյ.) Զոհրաբյանեն և Եսիկարյանեն վող ստանամ, ի՞նչ պիտի ընեմ ամբողջ դեկտեմբերի ամիսը, եթե Թումանյանի 6 ամսականը չբստանամ, և հավանորեն չեմ ստանար: Է՛, բավ է ավուրն չար յուր[13]: Հա՛, մի՞թե չեմ գրած քեզի, որ իշխանուհիի[14] կողմեն ուղարկած 60 րուբլին իր ժամանակին ստացած եմ, իմ արտագին չնորհակալութիւնս ու հարգանքներս կը հայտնես իշխանուհիին. իսկ քեզի ո՛չ չնորհակալութիւն կը հայտնեմ, ո՛չ հարգանքներս, այլ պինդ մը կը համբուրեմ չրթունքներդ:

Լևոն

Բարևս տիկնոջդ, մայրիկին, քեռիներուդ: Դուն ու օրիորդ եղբաբեթը[15] ձեր լուսանկարները խոստացաք ինծի. ո՞ւր է:

1898

10. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Մյունխեն, 98, Հունվար 4

Անգին Ստեփանս, Նոր տարվան ու Ծնունդի արձակուրդներն է, իրիկուն մը. մինակ, գրասեղանի առջևը, լամպիս տակ նստած կ'ուզեմ քեզի գրեմ. ու հիշողութիւնս կը վազե ետ-ետ, ճիշտ տարի մը առաջ, ու աչքերուս դեմ կը պատկերանա ձեր տունը, մանր ու խոշոր դեպքեր, ձեր վշտի, ձեր սուգի վայրկյանները[1], և ատոնց մեջ ինկած քանի մը ժպտուն ակնթարթներ. և հիշատակներու այդ վերադարձը տարօրինակ տպավորութիւն մը կ'ընեն վրաս, տեսակ մը օրորող, չոյող, երջանուն, րոմանթիկ զգացում մը. այլևս ցավ կամ վշտակցութիւն չի կա հոս, այլ միայն մեղմ ու ընտանի հաճո զգացում մը: Եվ կը մտածեմ, որ հիմա ալ այդ օրերն են կրկին, անշուշտ ավելի զվարթ ու ավելի անամպ:

Ակամա վառ ցանկութիւն մը կ'արթննա մեջս հոս լինելու ու այս անգամ քիչ մը ավելի աղմկոտ, քիչ մը ավելի թեթև՝ Նոր տարվան ու Ծնունդի մեջ ինկած օրերը միասին անցընելու. դժբաղդաբար ցան-

կուլթյուննները իրականուլթենեն այնքան հեռու է, որչափ Կովկասը Պավարիայեն: Այնպես որ ինծի կը մնա միայն գրչի բարեմաղթուլթյուններով բավականանալու խելոքուլթյունը ունենալ և այդ բոլորը օդն համբույրով մը կենքել: Բոլոր սրտովս կը ցանկամ ձեզի զվարթ նոր տարի մը, ուրախ ու խնդում տարի մը. հաջողուլթյուն քեզի, ոգևորուլթյուն տիկնոջդ ու միշտ ծիծաղկոտ աճում փոքրիկներուդ. ընդունեցե՛ք իմ ջերմ ցանկուլթյուններս. ո՞վ գիտե, գուցե զալ տարի նորեն ձեզի հետ լինեմ. իմ ձկանի կյանքես ամեն բան կարելի է սպասել:

Թե ի՞նչ կ'ընես, ի՞նչ հալի եք՝ ոչինչ չգիտեմ. վեց ամիս առաջ նամակ մը գրեցիր և ալ կը կարծես երևի, որ ամառվան ալ հերիք է, ձմեռվան ալ. վերջին նամակս անշուշտ առած ես[2]: Գալով ինծի, սիրելի՛ս, ամենեն առաջ ամենաէականի մասին գրեմ. կ'ուզես ձանձրանաս, կ'ուզես զայրանաս՝ ճար չի կա. ինկեր ես պիտի քաշես. ես քու չնորհովդ է, որ հիմա Եվրոպա եմ, և բնականաբար բոլոր հույսս ու վստահուլթյունս քու վրադ է: Խնդիրն այն է, որ Անանյան[3] իր խոստացած ամսական տասը րուբլին չի ուղարկեր. Արասխանյան չորս-հինգ ամիս առաջ գրեց ու ոչինչ պատասխան չառնելով՝ այլևս նորեն գրել անհարմար կը համարե. ես ինքս գրեցի[4] և պարզ է որ չի պատասխանեց, կարճ խոսքով՝ այդ այլևս ջուրը ինկած խնդիր է: Այսպիսով կը մնա ձեռքս միայն Վարշավայեն ստացածս և Եսիկարյանի ամսական 15 րուբլին, որ ենթադրելով որ կանոնավոր կերպով ստանամ՝ իմ առօրյա ամենաանհրաժեշտ ծախքերս միայն կը գոցե. ստիպված եմ չնչին փենիկներ հաշվելու ամեն քայլափոխիս՝ բան մը, որ ինծի համար ուղղակի անտանելի է. անվերջ քշված ու դրամական կարիքի մեջ: Զգիտես, Ստեփան, այս մուրացկանուլթյունը, այս «մեծապատիվ» մուրացկանուլթյունը ինչպես զզվեցուցած ու կշտացուցած է ինծի: Վայրկյաններ կու գա, որ ամեն բան ձգել ու վերադառնալ կը մտածեմ. և այդ քայլը, հավատա՛, ես չատոնց ըրած կը լինեի, եթե անգործուլթյան վախը ինծի չի կաշկանդեր. վերադառնամ ի՞նչ ընեմ. Տաճկաստան չեմ կրնար անցնիր, իսկ հոտ ո՛չ գալրոց կրնամ մտներ, ո՛չ մամուլի մեջ. բոլորովին տարբեր առևտրական գործի մեջ մտնե՞մ. այդ քայլը շատ ծանր է և հոտ է, որ կանգ կառնեմ: Եվ ահա՛ կը մտածեմ, որչափ այդ «ի՞նչ ընելու» վայրկյանը ետ մղեմ, այնքան ժամանակ կը շահեմ. մուրացկանուլթյուն է թե ինչ, վերջապես ինծի հետաքրքրող նյութերով եմ զբաղված հիմա, և այդ առավելուլթյուն մըն է, որ զոհե-

լու համար գոնե հույս ունենալու եմ, որ քիչ-շատ ինծի հարմարող գրական աշխատութիւն մը պիտի կարողանամ գտնել: Ինչպես կը տեսնես – էթիկի բառարանով խոսելով-մուրացկանութիւնը բնավորութիւնս փճացուցած է արդեն. ուժս մինչև այն աստիճանին չի հասնիր, որ առանց հաշիւներու ու մտածումներու, առանց այլևայլութեան քացի տամ այս բոլորին ու վերջապես ինչ գնով ալ որ լինի անկախ դառնալու աշխատեմ: Դրա համար պետք էր, որ այսպես պինդ համոզված չլինեի, նախ՝ որ գրականութենն ու դպրոցն դուրս ես բանի պետք չեմ, երկրորդ՝ ընդունակութիւններուս վրա ավելի քիչ վստահ լինեի, և երրորդ՝ այսքան ժամանակ մուրացկանութեամբ առաջ գացած չլինեի: Վերջապես փոխանակ այդ քայլը ընելու, ես նորեն կու գամ քու վիզեդ կախվելու. խե՜ղճ Ստեփանս. քեզի ո՞վ ըսավ իմ մեջս այսպես վստահութիւն ներշնչես, թե դուն ամեն կողմեն ստակ ճարելը կրնաս, բավական է որ ուզես և ձեռնարկես: Ինչ կ'ուզես ըսե, ես հավտացած եմ, որ քեզի համար մասնավոր դժվարութիւն մը չէ ամսական տասը րուբլի ճարելդ, և վստահութեամբ ալ քեզմե լուրի կ'ըսպասեմ. իմ գործիս մեծագույն մասը դուն հաջողցուցիր, հիմա ալ ահա՜ ամբողջացուր բոլորը: Այս մեկ. ունեմ և երկրորդ խնդիր մը. մարտի սկիզբները անցնելու եմ վերջապես փրանսական Զվիցերիա Օննիկիս[5]. ամառվան կիսամյակը երևի հոն կը մնամ. և եթե փողս թույլ տա՝ հոնկե մտադիր եմ կա՛մ Փարիզ անցնելու, կա՛մ ուրիշ փրանսական քաղաք մը. բայց մարտի սկիզբը տեղս չարժվել կարողանալու համար ստակի պետք ունիմ: Մինչև այն աւուն Վարշավայեն ու Եփիկարյանեն ստանալիքովս հազիվ հոս հաշիվներս մաքրեմ. այնպես որ նորեն քեզմե կը խնդրեմ մինչև փետրվարի վերջը ինծի վաթսուն րուբլի մը հասցնելիր. ես իշխանուհիի հաշիվը ունիմ աչքիս առաջ[6], բայց ենթադրելով որ ուշարկելու քաչքչեն, կը խնդրեմ, եթե կարելի է ուրիշ տեղե մը. ա՜ռ, վերջը իշխանուհիեն առածդ հոն կը հատուցանես: Եթե մինչև փետրվարի վերջը ստակ չունենամ ձեռքս, վերջը վաթսուն րուբլին ալ այլևս հերիք չըներ, ստիպված կը լինեմ մարտ ամիսը վճարելու. և ծրնև մարտին կ'ըսկսի ամառվան կիսամյակը: Ահա՜, Ստեփան, իմ դրությունս. չգիտեմ այս բոլոր դրածս քու վրադ ինչ տպավորություն պիտի ընե. բայց ծովը խրվողը անձրևեն չի վախնար, և արդեն ըսի, որ դուն ես այն միակ մարդը, որուն այս բոլորը դրել կրնամ և որուն վրա հույս դնել կրնամ:

Այս պայմաններուս մեջ անչուչտ չես նեղանար, սիրելի՛ս, որ

մինչև հիմա Մակեդոնացիդ չուզարկեցի. կրնաս հասկընալ, որ առանց այդ քու նեղանալուդ ալ ինծի համար որչափ նեղսրտեցնող է այդ փոքրիկ հաճույքը քեզի պատճառել չի կարողանալս:

Գալով իմ կյանքիս մյուս կողմերուն՝ այն մասը, որ ղրամի հետ կախում չունի, տրտնջալու պատճառ չունիմ. մանավանդ հաջող է գրելու կողմեն. կը գրեմ ու կը կարդամ. չի զարմանաս, եթե ըսեմ, որ քեզի չափ աշխատասեր եմ ղարձած, բան մը, որ ես չատոնց տեսած չունեի: Մեկ կողմեն երևի Կովկաս գալս զարկ տվավ, գլխուս մեջ դեմքերը իրար եռևեռ ձև կ'ըստանան ու արտադրելու պահանջս առարկայացած է, մյուս կողմեն ալ ստակի պակասը ժամանակս ցրվելե ակամա կը պաշտպանի. բայց, ի սեր Աստծու, դուն ալ չելնես, Օննիկի պես, ինծի ստակե զուրկ պահես, որ ինչ է նստեմ գրիմ[7]:

«Դերասանուհին» ավարտած եմ արդեն. այն, որ քեզ խոստացած էի. բայց հիմա այդ խոստմանս այնքան ալ ուրախ չեմ, որովհետև աշխատութեյան միջոցին զանազան պատճառներով ծրագիրս սեղմվեցավ (գեղարվեստական պատճառներով) և այն մեծ աշխատութեյունը չեղավ, ինչ ես առաջ մտածեր էի. մոտ 100 երես վեպ մըն է. իհարկե գրվածքի մը արժանիքը ծավալի հետ կապ չունի, միայն ես քեզի այսպես ըսված «լուրջ» բան տալ կ'ուզեմ, բովանդակութեյամբ ծանր կշռող: Գլխուս մեջ կազմակերպվելու վրա է, եթե որոշ ձև առնի՝ քեզի կը հայտնեմ, հարատութեյան ձգտում (հասարակական ուժի) - իտեալի նվիրում. եսական, ազնվական, ուժեղ հոգի մը - ժողովրդական, ռամկական ալտրուիստ մը. միտքի իշխանութեյան ու զգացումներու այս ալիքներու վրա տարուբերվող սյուժե մը[8]: Իսկ «Դերասանուհիի» մասին նախորդ նամակիս մեջ գրած եմ կարծեմ. սիրո ու իր արվեստը զոհելու մեջ տատանվող աղջիկ մը. հոգեբանական մաքառման մը պատկերը. թե ո՞րը վերջապես կը հաղթե՝ անշուշտ կրնաս գուշակեր, քանի որ ինծի կը ճանչնաս. և առոր հյուսված գիտութեյան ու արվեստի հակադրութեյուններ, այլև Պոլիս հեղափոխականի մը տիպը[9]: Ամառվան արձակուրդին երևի վերջնական ըևիզի կ'ենթարկեմ «Դարձ»-ի հետ միասին. և չգիտեմ, որ առանձին տպելու հարմարութեյուն ունի՞ այդ փոքր բանը. և վերջապես ընկերութեյունը կը տպե:

Իսկ քու աշխատութեյուններդ ինչ վիճակի են. կենսագրութեյունները, քննադատութեյունդ. - Հա՛, ի դեպ, Վերժինի մասին կարծիքներուդ կ'ըսպասեմ, լսելս ալ ավելորդ է. թե՛ քու և թե՛ քեզի շրջա-

պատողներուն. երևի մինչև այս նամակս ստանալդ քեզի համար նոր վերջի մասը դուրս կու գա «Մուրճին» մեջ: Գրե ինծի քու մասին, գործերուդ ու դիտավորութիւններուդ մասին. չգիտես ինչպես կը ցանկամ անգամ մը նորեն հոտ լինել. դոնե քանի մը օրվան համար: Եվ ճչմարիտ ըսելով՝ այս իմ դյուրին տպավորվող տարիներս մեր կյանքեն բոլորովին կտրված ապրիլս արդյո՞ք վնաս չէ իմ գրական աշխատութեանս. սակայն այս գրած վայրկյանիս ակամա աչքս կը նետեմ սեղանիս վրա թափված գրքերուն, որոնց չատ բան պարտական եմ և որոնցմե կյանքի մեջ չատ ծանր ու չատ քիչ միայն կրնամ օգտվիր: Բայց համենայն դեպս, Ստեփա՛ն, լուրջ կը գրեմ. եթե Կովկաս, կամ Ռուսաստան, կամ Ռուսաստանեն ալ դուրս եթե որևէ ինծի հարմար գրական կամ դպրոցական աշխատանք մը ականջդ իյնա՝ ինծի մի՛չտ աչքի առաջ ունեցիր. եթե արժե՝ կը ճգեմ ու կու գամ. կարելի է վերջը զղջամ, բայց ի՞նչ փույթ:

Դե՛, կրնաս ըմբռներ, թե ինչ անհամբերութեամբ նամակիդ եմ սպասելու:

Առայժմ տո՛ւր սրտագին բարևներս ու չնորհավորութիւններս տիկնոջդ, համբույրներս փոքրիկներուդ ու հարգանքս մայրիկին ու քեռիներուդ, եթե հոտ են. և ջերմ համբույրս ալ քեզի.

Լևոնդ

11. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Մյունխեն, մարտ 23, 98

Այդ քու պատմական լռութիւնդ, սիրելի՛ս, ինծի չի զարմացներ, բայց անկեղծ խոսելով՝ տեսակ մը ցավ կը պատճառե. մինթե բաց-քարտով մը դոնե ինծի երկու տող չե՞ս կրնար գրիր, գիտե՛ս, թե ինչ անհամբերութեամբ քեզմե լուրի կ'ըսպասեմ. թե՛ իմ դրամական խնդիրներուս վերաբերմամբ և թե՛ քու կյանքիդ ու վիճակիդ: Իզո՛ւր տեղը քու գործերուդ ու արդի վիճակիդ մասին ինծի բան մը գրելը ավելորդ կը համարիս. եթե գիտնաս իմ չնորհակալութեամբ և ուրախութեամբ քու գրած ամեն տողդ կը կարդամ. և եթե գիտնաս ինչպե՛ս կտրված եմ հայկական կյանքե. հիշատակներ ունիմ միայն գլխուս մեջ, նաև «Մուրճերը», մեջեմեջ նամակ մը Արապխանյանեն ու քեզմե՝ ահա՛ բո-

լոր մթերքս: – Անցնիմ նամակիս ձանձրալի, բայց անխուսափելի մասին: Երևի իմ բաղդս է իմ դրամական հաշիվներովս քեզի անվերջ չարչարել. բայց, սիրելի՛ս, ե՛ս ալ, դո՛ւն ալ ինկեր ենք պիտի քաշինք, ճար չի կա: Նախորդ նամակս անշուշտ ստացած ես, հետևապես գիտես վիճակս. կը գրեմ միայն նոր փոփոխությունները: Քեզի գրած նամակես վերջը հունվարի մեջ այն աստիճան նեղը ինկա, որ այլևս ճարս հատած դիմեցի Զոհրաբյանին[1] ու հիմակվան պայմաններս բացատրելով՝ խնդրեցի ամսական փոխանակ երեսուն րուբլու քառասուն ուղարկել. և ատոր փոխարեն ժամանակս կարճացնել, գնա մնացած երկու տարվան տեղ միայն մեկուկես տարի ինծի օգնել: Զոհրաբյան ամենադրական պատասխանը ուղարկեց ինծի, որ կարելի է երևակայել, այսինքն ոչ մեկ պատասխան չուղարկեց. բայց եռամսյակի գլուխն փոխանակ սովորական 90-ի 120 մարկ ստացա. իհարկե չգիտեմ հիմա այդ մի՛շտ չարունակվելու է, թե միայն անգամ մը իրրև բացառություն ուղարկեց. ես իհարկե իմ լավատեսությանս միշտ հավատացած եմ, որ այդպես ալ չարունակվելու է. և այդ համոզումով ալ բոլոր սրտովս ուրախացեր էի, որ վերջապես ամսական 55-60 րուբլիի չափ ստակ պիտի անցնի ձեռքս, և ահա՛ նկավ Արասխանյանի նամակը ուրախությունս դլխուս հարամ ընելու: Դե՛, իհարկե, գիտես Եսիկարյանի պատմությունը. «Դուք իմ սանս Ներսեսյանը ընդունել չեք տար, ես ալ ձեր պաշտպանյալին չեմ օգներ». տրամաբանությունը շատ պարզ է, չա՛տ պարզ է նաև դժբաղդաբար այդ տրամաբանության նկարած աքանչելի հեռապատկերը ինծի համար: Ես դեռ հույս ունիմ իհարկե, որ Արասխանյանը և մանավանդ դուն պիտի հաջողիս համոզելու՝ քիչ մը ավելի մարդավայել ու խելքի մոտիկ վարվելու, մանավանդ գիտեմ և պարոնի չարժուն բնավորությունը, բայց եթե համառի՞, արդեն առանց այն ալ մինչև հիմա ամիսներով չարչրկելի վերջը քանի մը րուբլի կ'ուղարկեր, Է՛Հ: Կրնաս հասկընալ՝ ինչ տեսակ հոգեկան վիճակի մեջ եմ, և թե ինչու ինծի ցավ կը պատճառե, երբ քեզմե ոչ մեկ լուր չեմ ստանար, գիտե՛ս որ նեյոսիս դուն ես. մարդ տեսակ մը վստահություն գոնե կ'ըստանա, երբ կը գիտակցե, որ իր մասին մտածող մը գեթ կա: – Ինչ ըսել կուզե, որ Զվիցերիա անցնելս այլևս ջուրի ինկած խնդիր է. բայց վիտակը խոսելով՝ այդ ինծի ցավ չի պատճառեր. դեռ քիչ մը ուրախ ալ եմ հոս մնալուս: Հարցը այն է, որ հոս ինկած եմ շրջանի մեջ. և վերջապես զերմանական կյանքի մեջ

կ'ապրիմ. ընտանիք, ընկերութիւններ, ծանոթներ, խմբում, երեկոյթներ: Իմ այս երկրորդ Գերմանիա գալս ամեն կողմով իր տարբերութիւնը ունի առաջինեն[2]. բայց ամենեն ավելի աչքի ընկնողը լեզվի, մէյտ Հայերու հետ լինելու և ուրիշ մանր պատճառներով բուն գերմանական կյանքե կտրված լինելս էր. հիմա այդ ունիմ և սրտանց ուրախ եմ. այդ ինծի համար չատ ավելի կրթիչ է. հիմա ինծի այլևս արտաքին արգելք չի կա, և ընդհակառակը, ամեն դյուրութիւններ եվրոպական in das volle Leben-ի[3] մեջ նետուելու համար: Միակ կաշկանդողս նորեն այդ անլծված դրամն է. ամեն քայլափոխիդ ծախք կ'ուզե. չրջանին համեմատ հագվիս պիտի ու բնակվիս. անոնց հետ եղած ատենդ անոնց նման ուտես ու մանավանդ խմես: Մյունխեն բավական հայտնի գրական ու գեղարվեստական կեդրոն է. կան ընկերութիւններ, աչքի ընկնող գրական ներկայացուցիչներ, նոր գրողներ և չրջանը, որի մասին կը գրեմ, այսպես ըսված բոլորը modern[4] մարդիկ են ու կանայք: Չես գիտեր, երբեմն ինչ խայթող ցավ կ'ըզգամ, երբ եղած հրավերե մը հազար սուտ ու մուտ պատճառներով խուսս կու տամ, միայն այն պատճառով, որ ձեռքս քանի մը անհրաժեշտ եղող մարկերը չկան. անտանելի զգացում է բոլոր տուները առջևդ բաց գտնել, զգալ որ քեզի սիրով կ'ընդունին, գիտակցել որ այդ բոլոր եվրոպական վերին ըսված չեղջին մոտեն ծանոթանալու ու չփվելու հարմարութիւնները գուցե այլևս երբեք չի կրկնվին, և այդ բոլորի հետ ատիպված լինիս պլովդ կախ սենյակդ քաշվելու, որովհետև ամսական 10-15 րուբլի քեզի կը պակսի: Մարդու աչխատելու տրամադրութիւնն ալ կը փախչի, սերն ալ. արդեն այս վերջին ատենները գրեթե ոչինչ ըրած չունիմ. օրական մեկ-երկու ժամվան չնչին աչխատանք միայն ընդամենը. գարնան արձակուրդը մեկ կողմեն, Եուիկարյանի լուրը մյուս կողմեն: Բայց ինչ ալ որ լինի, սիրելի՛ս, այս անգամ Եվրոպա գալս և հիմա իմ հոս լինելս ինծի համար աճապին նշանակութիւն ունեցավ բոլոր վերը գրած տրտունջներուս հակառակ. և չի կարծես, թե հոս դեմքս թթված կը պատիմ անվերջ՝ Եուիկարյանին սպառնալիքին կամ դրամական ճգնաժամերուս վրա եղերերգութիւններ հորինելով. ամենևին. վայրկյաններ կան, որ իրավ անտանելի են, բայց ատոնք վայրկյաններ են միայն, ինքըզինքին պետք է հաղթել. կու տամ ինքըզինքս մոռացութեան, պարզապես չեմ մտածեր, այսինքն հնար եղածի չափ. և կ'աչխատիմ ալ. թող լինի քիչ՝ բայց լավ: Եթե քու նպատակդ ինծի գրական հո-

սանքի մեջ նետելն էր, Սահեփանս, հասած ես կատարելապես այդ նպատակիդ. գիտութեան ու գեղարվեստի դիպչետանդ մաքառումը մեջս հանդարտված է արդեն, գեղարվեստը՝ այսինքն գրականութիւնը այլևս ինձի համար կողմնակի երկրորդական աշխատանք մը չէ, այլ իմ ձգտումներուս ու հետաքրքրութեանս կեդրոնը, հիմա գրելը՝ մեջս եղած զաղափարները, իմ գիտած կամ ապրած կյանքը տիպերու մեջ պատկերացնելը, ինձի համար անհրաժեշտութիւն մը, պահանջ մըն է այլևս: Իհարկե այդ առաջ ալ կար, բայց առաջ տեսակ մը խաղի զվարճութեան կնիքը կար այդ բոլորի վրա, հիմա լուրջ գործ մըն է այդ ինձի համար. անշուշտ տարիքի հետ ալ կապված է այդ. վերջապես, ապագան ինչ ալ որ բերի, ինչ ալ որ դառնամ, մինչև վերջը գրելը՝ ստեղծելը ինձի հոգեկան կարիք մը պիտի լինի՝ այլևս տարակուսս չունիմ. և հիմա բոլոր ջանքովս այդ գրական ապագային զարգացման ու հարստացման կը ձգտեմ. տեսնել, չփվել, ապրիլ՝ միասին ապրիլ նույնքան և գուցե ավելի՛ նշանակութիւն ունի, քան կարդալը, և այդ է պատճառը, որ կը նախադասեմ հոս մնալ շրջանի ու չփման մեջ, քան Շվայց կամ Ֆրանսա նորեն առանձին միայն գրքերու հետ: Վերջին մեկ-երկու ամիսները Եվրոպան թողնելես առաջ՝ **եթե հարմարի** կանցնեմ անգամ մը Ֆրանսայով. թե ոչ՝ հեռավոր ապագային իմ սկզբական աշխատանքովս: Բայց հիմա այդչափ հեռուները չերթամ: - Կը կարդամ գրական քննադատութիւնները գլխավորապես գերման գրականութեան, գեղարվեստի պատմութիւնը և քաղաքակրթութեան: Ընթերցանութեան և դասախոսութիւններու մասին հաջորդ անգամ, երբ ամառվան կիսամյակը սկսի, այսինքն մոտ ամիս մը վերջը: Կը գրեմ ալ. բացի քեզի գրած վեպերես՝ հիմա երրորդ մը կա գրչիս տակ[5]. գուցե զարմանաս և գլուխդ չարժես իմ այս արագ իրար հաջորդող վեպերուս. միայն իսկապես ասած բնավ արագ չէ. նախ՝ վեպերը ինքնին մեծ չեն. երկրորդ՝ այդ առաջին գրութիւնն է. դեռ ատոնցմե յուրաքանչյուրը նույնքան աշխատանք է պահանջելու ինծմե, որքան և առաջին գրելը: Առաջ պատահական էր և ինքնաբերական, բայց հիմա գիտակցական տեսակ մը սխեմեմի է վերածված գրելու այդ եղանակը, նախ հնար եղածին չափ շուտ մեկ գրչով վերջացնել. քանի մը ամիս բոլորովին թողնել մեկ կողմ ու զբաղվիլ ուրիշ բաներով. վերջը նորեն ձեռք առնել վերջնական ձևակերպութեան ենթարկելու համար: Հետաքրքիր է նոր գրածներս ինչ տպավորութիւն են ընելու վրադ: Վերժինի մասին գրե-

լու, մի՛ մոռնար, դեռ պարտական ես ինծի. կ՚ուզեմ նաև դրես քեզի ծանոթ չրջանի մեջ իրենչ կարծիք կը հայտնեն, կամ վերջապես կարծիք կը հայտնեւն, թե՞ վրաս ո՛չ ուշադրություն դարձնող կա, ո՛չ ալ կարևորություն: Կը տեսնե՞ս, Հոգիս, որչափ եսական եմ. ամբողջ երեսներ միայն իմ, իմ ու նորեն իմ մասին: Ինծի արդարացնելու համար այսչափը միայն ըսեմ, որ կը կարծեմ, թե իմ նամակներես իմ մասին լսել կ՚ուզես. և ասոր համար է, որ իմ եսս բայ կը դնեմ քու դեմդ՝ իմ փոքրիկ մնծամտություններովս, հույսերովս, դժգոհություններովս, գոհություններս ու եսականություններս. իրենչ կրնամ ըներ, ինչ որ եմ՝ եմ. ինքզինքս չպարելու պետքը չեմ զգար ես ոչ ոքի դեմ. իսկ քու դեմդ՝ բնա՛վ:

Այս երկար գլխացավանքի փոխարեն՝ եթե դուն ալ ինծի քու աշխատանքիդ, ծրագիրներուդ ու կյանքիդ մասին քանի մը տող դրես՝ ալ աշխարհքը իմս կը լինի: Իսկ եթե այդ տողերուն հետ դրամական վիճակս նորեն քիչ մը հավասարակշռության մեջ բերած լինելուդ լուրը տաս, կամ գոնե քանի մը տասնյակ րուբլի ուղղակի՝ ա՛հ, այն ժամանակ ո՛չ միայն աշխարհքը, այլև տիեզերքը իմս կը լինի, և այդ վայրկյանի մը աստվածություն[6] ներշնչման մեջ կը նստիմ քեզի ոտանավոր մը գրելու, ուր տիեզերքը, աշխարհքը և ուղարկած րուբլիներդ իրար խառնելով՝ կը հորինեմ նոր տիեզերք կերտված մը, ուր մարդ այլևս ուրիշեն րուբլիներ սպասելու պետքը պիտի չունենա երբեք:

Մեկ խոսքով՝ համբույրներս քեզի ջերմ ու ջերմ. տիկնոջդ ու քեռիներուդ հարգանքներս ու կարոտով բարևներս:

Սեղմելով ձեռքդ՝ Լևոն

12. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

98 Հունիս 7, Մյունխեն

Սիրելի՛ Ստեփանս, չգիտեմ այս քանիերորդ անգամն է նամակդ կը կարդամ, և ամեն անգամ ալ կես ուրախ ու կես տխուր խառն տպավորություն մը կ՚ընես վրաս. և ակամա տեսակ մը մելամաղձոտ մտածողության մեջ կը թաղվիմ. ինծի տխրեցնողը քու ընտանեկան դժբաղդություններդ է, քու միևնակ, կտրված ու ծանրաբեռնված կյանքդ է, որ

մէջեմեջ թեթեւ վեսսիմիստ երանգ մը կու տա նամակիդ տողերուն. և այս բոլորին ալ վրան հիմա դրամական նեղութիւնդ, որը ես չգիտեի, խե՛ղճ Ստեփանոս: Բայց այս բոլորեն ալ վերջը երբ նորեն կը կարդամ նամակիդ մէջ քու ապագայի հավատքդ, եվրոպական նոր մտավոր շարժումներուն սրտանց համակրելդ, մեր գրականութեան ու հասարակական կյանքին տված կենդանի հետաքրքրութիւնդ ու կարմիր հույսերդ, չէ՛, այս բոլորեն վերջը նորեն դուն ա՛յն ես, ինչ որ միշտ իմ հիշողութեանս մէջ եղել ես քեզի ճանչնալես իվեր իբրև ուսուցիչս, իբրև բարեկամս, իբրև ընկեր. այսինքն՝ թարմ լավատես մը, խտեալներով ոգևորված ու հաջողութեան հավատացող: Հոռետես մարդիկը իմ սիրտս չեն գրավեր, չգիտեմ, գուցե սխալ ու միակողմանի կը դատեմ, բայց իմ համոզումս է, որ հաջողութեան, հաղթանակի չհավատացողը կովիլ չկրնար, անհուսութիւնը, ախորժութիւնը, անվստահութիւնը մարդուն կը ճզմե, կը ծյուրե. իսկ գործ մը տեսնելու համար խանդ ունենալու է. ուժը՝ խանդը միայն բան մը առաջացնել կրնա. եթե այդ ուժը նույնիսկ պատրանքե մը բղխի. ինչևէ, ծալենք այս փիլիսոփայութիւնները ու անցնիմ ավելի անձնական կետի մը: Վրաս՝ այսինքն Շանթի վրան հույսեր ես դրած. այդ ինծի կ'ուրախացնե իհարկե, նույնիսկ քիչ մըն ալ կը հպարտացնե. բայց ճիշտ այդ իսկ պատճառով մեկ-երկու տող գրելը հարկ կը համարիմ, վախնալով որ չլինի թե վերջը քեզի հիասթափեցնեմ: Դուն ինծմե կ'ըսպասես, թե ինչ աստիճանի կրցած եմ իմ վեպերուս մէջ «մեր կյանքը ըմբռնել», բայց խնդիրն ալ այն է, որ մեր կյանքը ըմբռնելու համար ես դեռ բնավ գլուխս կոտրած չեմ, և պարզ խոսելով՝ ես մեր կյանքը չեմ ալ ճանչնար: Ինծմե ընդհանուր հայկական տիպերու ու հայկական կյանքի վերստեղծումը կը հուսաս. մինչև հիմա ինծի բնավ հետաքրքրած չէ նեղ մտքով առած կյանքի նկարագրութիւնը ո՛չ Կովկասեն, ո՛չ Պոլսեն. նախ որ մուտեն չատ քիչ կը ճանչնամ այդ կյանքը, երկրորդ ալ՝ ինչքան ալ որ կը ճանչնամ՝ գրավիչ, հափշտակող ոչինչ չեմ գտած անոր մէջ, մասնավորապես Պոլսի կյանքին մէջ: Որ վերաղարձիս ժողովուրդի ու հասարակութեան մուտիկ չփվելով այդ բոլորը հետզհետե ինծի ավելի պիտի հետաքրքրե՝ աւտոր տարակույս անգամ չունիմ. բայց ես կը խոսիմ հիմա ներկա եղածի մասին՝ ապագան թողնելով ապագային: Հիմա դեպի գրելու ինծի դրդողը ու գրականութեան մէջ ինծի հետաքրքրողը գլխավորապես երկու կետ է. առաջինը՝ գեղարվեստական, երկրորդը՝ հասարակական:

Նկարչի մը, դերասանի մը նման հաճույք մը և պահանջ մըն է ինծի համար կյանքի պատկերացնելը, մանավանդ ներքին կյանքի՝ հոգեկան, զգացումներու, տպավորություններու ելևէջը և ինչպես նկատած եմ ինծի ավելի քաշողը զգացումներու մաքառումն է, ներքին կռիվը, ուժի արտահայտությունը, և այս բացարձակապես անկախ ամեն տեսակ տենդենցներե, ազգայնականութենե և այլն: Եթե ազգային կյանքը այդ բոլորի տակեն հոս կամ հոն դլուխը դուրս կը հանե՝ այդ այն պարզ պատճառով է, որ մեր կյանքեն առնված մարդիկ են ներկայացվածները, որ ես ինքս մեր կյանքի հետ բազմաթիվ օղակներով կապված եմ. ուրիշ խոսքով՝ անպիտակից. և իմ կարծիքովս ամենաէականը, ամենազուարը, ամենաբնականը: Մնկ կետ ինծի համար սկզբունք է՝ ինքզինքս չի բռնաբարել, չի կեղծել, չի հարկադրել. մնալ այն, ցույց տալ այն, ինչ որ իսկապես եմ, այսինքն ինծի էապես գրավող հարցերեն ու զգացումներեն դուրս չի գամ: Գուցե այդ բոլորը, որ ինծի կ'ըզբաղեցնեն, մեր կյանքի համար չատ չնչին նշանակություն ունի, գուցե բոլորովին ուրիշ տեսակի ստեղծագործություններ պետք է մեր հասարակության, գուցե այս, գուցե այն, չգիտեմ, ես մեկ բան գիտեմ, որ ես ա՛յս եմ, ա՛յն, ինչպես որ իմ նախնյաց ու իմ կրթություններ ինծի կազմեր է և ինչպես որ կյանքը դեռ կազմելու է: Ես չատ լավ գիտեմ, որ հիմա ինչ տեսակ գրվածքով ձեր ամբողջ Կովկասի գովասանքը չահիլ կրնամ. և մեծամտություն չի համարիս, եթե ըսեմ, որ այդ պահանջին գոհացում տալը ինծի համար բնավ դժվար չէ. քիչ մը գաղթականություն, քիչ մը թյուրքական հալածանք, քիչ մը Պոլսի վերջին դեպքերեն[1], քիչ մը Եվրոպայի փախստականներեն, ասոնք ճարպիկ կերպով իրարու հյուսել, հագցնել արևմտյան գրականության արտաքին վերարկուն, հոգեբանական ճշտության ու նրբության քիչ մը ուժ տալ, տեղ-տեղ ալ եվրոպական փիլքանդրի ու վեպը պատրաստ է: Բայց այդ տեսակ բան ես չեմ կրնար ընել, որովհետև այդ բոլորը իմ զգացումներես ու մտածումներես հետու է. ի՞նչ կարիք կա կեղծելու: Իհարկե վերջին չարժումները, հալածանքը, մանավանդ քանի մը դեմքեր ինծի ալ մոտեն կը հետաքրքրե ու կ'ազդե. բայց բոլորովին տարբեր կերպով, օրինակ՝ ձմեռը ինծի լուրջ կերպով զբաղեցուցած էր մատնիչի մը հոգեկան վերլուծությունը, նույնը և անձնագոհ հեղափոխականի մը, ուրկե դրամա մը դրելու միտք ունեի[2]. որը սակայն առայժմ մեկ կողմ եմ թողած նախնական ուսումնասիրության պակաս զգալով:

Բայց եթե գրեի այդ, կամ երբևիցե գրեմ, ամեն բան կրնամ ապասել, միայն ոչ Համակրական ընդունելութիւն. անչուշտ ինծի պես զգացող ու մտածող սակավութիւնները բաց առած: Այդ միշտ այդպես է, երբ մարդ ժամանակի փարոլեն ավելի բարձր տեսիլ մը իրեն համար ունի (կամ համեստ խոսելով՝ գոնե կը կարծե ունենալ): Շատ միամիտ պիտի լինի մարդ մտածելու համար, որ արդի եվրոպական գիտութիւնը մեր ժամանակակից հայկական աղքատիկրութեան փարոլին հետ նույն աստիճանի վրա կեցած է դեռ. իսկ ես հիմա այդ եվրոպական գիտական մթնոլորտին մեջ կ'ապրիմ: Զգիտեմ արդյոք այս գրածներես որոշ բան մը հասկընալ կարելի՞ է. նամակը այդ փորձանքը ունի, որ մտածմանդ թելը չարունակ ստիպված ես կտրելու՝ պետք եղածեն ավելի տեղ զոհելեն վախնալով. և այդ բոլորի հետևանքը այն է, որ մտածածիդ միայն քանի մը կտորները թուղթի վրան կը մնան, ինչևէ: Ուրեմն գրականութեան մեջ գեղարվեստորեն հոգեկան կյանքն է ինծի գրավողը ըսել կ'ուզեի, իսկ մյուս կողմեն ալ ա՛յնքան ժամանակի մարդ եմ իհարկե, որ արվեստը արվեստի համար[3] ինծի չի բավականացներ. հասարակական դեր մը խաղալու պահանջը կա մեջս, և վերջապես գիտութիւնները ինծի այնչափ կը գրավեն, որչափ և արվեստը, և ահա՛ բնականորեն գիտութիւններեն յուրացուցած գաղափարներս ուրիշի ալ հաղորդելու, այդ գաղափարներու փրոփականդը ընելու պահանջը կ'եկա մեջս. միայն դժվար խնդիր է ճարպիկ կերպով ընկերական ու գիտական հարցերը վեպին մեջ այսպես ըսած հալելը, վեպին հետ ձուլելը: Մինչև հիմա իմ փորձերուս մեջ շատ անշնորհք կերպով այդ երկու կեսը՝ գեղարվեստականը և հասարակականը իրար քով եմ դրած առանց հալել հաջողելու. հոտկե կ'առաջանան անհամ փիլիսոփայութիւնները ու վեպի զոդվածքին թուլացումը: Թե հաջորդ փորձերուս մեջ արդյոք ավելի հաջողութիւն պիտի ունենամ թե՞ չէ՝ այդ կը մնա ապագային: Հոգեկան մաքառումներ, զգացումներու վերլուծում և ընկերական ու գիտական թեարմ մտքերու ու գաղափարներու արծարծում, այս է իմ նյութս: Գիտեմ, որ քեզի որոշ բան մը հասկցնել չի կրցա. բայց ալ չեմ երկարեր, նամակով այդ տեսակ հարցերու մեջ խրվիլը արդեն խելացիութիւն չէ. վերջ տամ: Երկու խոսք «Մուրճի» մասին, թե ինչու հանձնած եմ վեպերս հոն տպելու. ամենեն առաջ՝ անձնական. Արասխանյանը այն սակավաթիվ անձերեն է, որ ես կովկաս եղած տեղս սրտանց համակրեցի, ուսանողական պարզմիտ-

ազնվութիւն մը ու զուտ արևելեան չիտակութիւն, ահա՛ որն է իր ամենեն ավելի գրավիչ և իրեն ամենեն ավելի գլխու ցավանք պատճառող հատկութիւնները: Այդ բնավորութեան տեր մարդիկ ինտրիկանոտ մարդկանց հետ գործ տեսնել չեն կրնար. և իրենց բոլոր հարաբերութիւնները ամենեն առաջ սրտի-փոխադարձ վստահութեան ու համակրանքի-հարաբերութիւն է, որով դիմացինի ազնվութենե թեթև չեղում մը գործակցութեան խզում կ'առաջացնե: Այդ է գլխավորաբար, իմ կարծիքովս, իր արդի հակառակորդներեն հեռզհետե կտրվելուն պատճառը. և որ այդ հակառակորդները ինտրիկե ազատ են ու ազնվութեան խոչոր պաչար մը իրենց թևին տակ ունին՝ այդ դժվար թե կարելի լինի պնդել: Որ Արասխանյան տղայական կողմեր ալ ունի, փոքր անապարծութիւններ, տարօրինակ միամտութիւններ՝ այդ չիտակ է անշուշտ, որու համար ալ այնքան կը ծաղրեն խեղճը: Բայց ըսե՛ խնդրեմ ո՞վ պակասութիւններ չունի, ես կը ցանկայի, որ բոլորի՛, մանավանդ իր հակառակորդներու թերութիւններն ալ այդ տեսակեն լինեին: Իսկ մնացածը դատարկ բամբասանք է. արդեն Թիֆլիս նոր եկողի մը համար վերին աստիճանի անախորժ տպավորութիւն կ'ընե ձեր այդ քաղաքի սոսկալի ու տզել բամբասասիրութիւնը, նույնիսկ ինտելիկենդ համարված մարդիկ ու երիտասարդներ, կանայք արդեն ինքնին հասկանալի են. ո՛չ ոք ուրիշի չի հավնիր, և որ ավելի տզեղն է՝ կը ծաղրե. տեսակ մը հոդտեղի խոսակցութեան աղն է այդ. արդյոք այդ վրացակա՞ն սովորութիւն է, թե՞ մեր լրագրութեան փոխադարձ հայհոյանքներու մոցուցած դաստիարակութիւնը. չգիտեմ, միայն ինծի համար խիստ ծանր էր իմ սրտանց համակրած անձերուս հասցեին փոխադարձաբար իրարու բիրտ հեգնութիւն, ըրախոսութիւններ և երբեմն նույնիսկ ատոր ակնարկներ լսելը: Այնպես որ այդ բամբասանքներուն ականջ մի՛ կախեր, սիրելի՛ս: Եվ Արասխանյանը իր գործի մեջ բնավ անպետք մարդ չէ. մեջեմեջ հոդվածներ ունի, որ, օրինակ, «Մշակի»[4] ամբողջ տարվան չարմանքա խմբագրականներու գումարին հետ չեմ փոխեր: Որ գեղարվեստական հարցերու մեջ դատողութեան մասնավոր շնորհք մը չունի, այդ ճիշտ է. բայց, փառք Աստծու, ոչ ոքին գաղտնիք չէ, որ Կովկաս այդ ասպրանքը այնքան ալ դյուրին գտնելու բան չէ. նույնիսկ ձեր տարիներով ռուսական մայրաքաղաքները թափառող ուսանողներու, նույնիսկ ձեր վիպասաններուն մեջ: Ձեմ կրնար չի ծիծաղիր, երբ թատրոնի կամ նկարչական ցուցահանդեսի մը քննադա-

տուժյունը կը կարդամ մեր թերթերուն մեջ. մի՞թե իրավ այդ աստիճան փրյուտ[5] են այդ պարոնները, որ աղջկան մը մերկ պատկերին չեն կրնար նայիր. ինծի համար այդ պարզապես ասիականուժյուն է, որ մեկ կողմեն վավաշոտուժյան հետ կապված է, մյուս կողմեն անճաշակուժյան. բայց ես խնդրես չեղիլ սկսա: Գալով «Մուրճին»՝ ամենևին այն կարծիքին չեմ, որ «Մուրճը» հիմա այն կուտա, ինչ որ տալ կրնար. դյուրուժյամբ կարելի էր շատ ավելի հարստացնել այդ ամսագիրը. բայց ատոր գլխավոր արգելքներեն մեկը գրամականն է, ուրիշ խոսքով՝ մեր հասարակուժյան մեջ հայկական գրական-գիտական ամսագրով մը հետաքրքրվողներուն բացակայուժյունը. ամբողջ չգիտեմ քանի միլիոն հայերու մեջ մեր ամենեն տարածված կովկասյան թերթը՝ «Մշակը» 2000-ի չափ բաժանորդ ունի. և այն իր օրաթերթ տեղովը՝ իբրև լուրի և իբրև բամբասանքի (հասարակ ընթերցողի համար այս կետը մեծ նշանակուժյուն ունի, և ինչպես վերը ըսի, ըստ երևույթին և ինտելիկենդներու համար) մատակարարող. այն ալ Արծրունիի հետզհետե լեկենդար դարձող հեղինակուժյունը իր ճակատին և այլն. ուրեմն ի՞նչ զարմանալու բան կա, որ ամիսը անգամ մը երևցող զուտ գրական-գիտական թերթ մը 4-500 օրինակ կը ցրվի, այդ մեր գրական խեղճուժյունը միայն կ'ապացուցանե ու կը բացատրե, թե ինչու խեղճ Արասխանյանը մուրալով գործ պիտի տեսնի: Մի՛ մոռնար, որ հազիվ տարի մը «Տարազը»[6] ձեռքդ էր ու ահագին պարտքի տակ իննկար. և դեռ «Տարազը» այն առավելուժյունը ուներ, որ չաբաթաթերթ լինելով՝ իր հասարակական ու լրագրական բաժիններուն ուժ տալ կրնար. մանավանդ այն միջոցին միակ ազատամիտ ուղղուժյան թերթն էր, եթե չեմ սխալեր («Մշակը» դադրած էր թե ինչ է[7]. ասանկ բան մը կար): Եվ մեկ ուրիշ պատճառ ալ գրողներու, աշխատողներու մատի վրա համրվիլն է, ո՛չ թե գրողներ կան ու «Մուրճին» չեն մասնակցեր, այլ պարզապես գրողներ չի կան. իսկ եղող գրողներեն ալ մեկ մասը, դուն ինքդ պիտի համաձայնիս, այն տեսակ մարդիկներ են, որոնց հետ երկու օր հաշտ գործ տեսնել անհնար է. մեկ ուրիշ մասը նյուժական, բարոյական իրավացի կամ անտեղի (այդ դատելը վրաս չեմ առներ) պատճառներով Արասխանյանցին թշնամացած են. և վերջապես կա մաս մըն ալ, որ կրնան օգներ, բայց չեն ըներ: Այդ դատարկ խոսք է, իբրև թե Արասխանյանին առաջարկեր են լրջուժյամբ և առանց եսին մոքերու իրեն օգնել և ան մերժեր է. քու հիշած երկու անուններդ ալ

բավական մոտեն կը ճանչնամ. ես ուրիշներու մասին վատ խոսել չեմ սիրեր, միայն այսքանը քեզի ըսեմ, որ այդ մարդիկը վնասեն զատ օգուտ չեն կրնար տալ խմբագրատան մը մեջ, երկրորդ օրը կռիվ կ'ըսեղծեն. ինչ զարմանք, որ Արասխանյանի բնավորութեան մարդը լավ համարե առանձին այդ բոլոր սպասավորի սև աշխատանքն ալ ինքը կատարելու, քան զլուխը կռիվներու ու զալմազալի մեջ կոխե: Գուցե զարմանաս, թե ինչ այսպես մեկենիմեկ Արասխանյանի վատաբանը դարձա. ատոր մեկ պատճառը գուցե ինազինկտիվ բնակցիոնն է. ա՛նքան այդ մարդը կը ծաղրեն ու արհարմարհել կը ձևացնեն թե՛ գրավոր և թե՛ բանացի, որ մարդ ակամա հակառակը պնդելու պահանջը կ'ըզգա. իսկ մյուս ավելի էական պատճառը «Մուրճն» է. մեր միակ գրական-հասարակական ամսագիրն է. իր բոլոր թերութիւններովը (որոնց մեկ մասը անխուսափելի են, որովհետև մեր հասարակութեան կազմեն կախված են) մեր աղքատ գրականութեան մեջ որոշ տեղ մը գրաված է արդեն. և եթե իրավ լրջորեն մեր գրական կյանքին զարկ տալ կ'ուզենք՝ աշխատենք ամսագրի բարձրացմանը օգնելու: Եվ եթե ես հիմա իմ վոքր վորձերովս որևէ աստիճանի օգուտ մը կրնամ տալ (ինչպես ինծի կը հավատացնեն) ամսագրին՝ ինչո՞ւ չի տամ: Եվ վերջապես ուրիշ շատ ավելի եսական դրդիչ մըն ալ ունիմ. գրողի համար ամենաառաջին ցանկութիւնը կարդացվիլն է. «Մուրճը» ես գիտեմ, որ հակառակ իր 4-500 օրինակ տարածման՝ գուցե տասը անգամ ավելի մեծ ընթերցողներու շրջան ունի, իսկ իմ առանձին հրատարակած գրքերս գնողն ո՞վ է. ես ինքզինքս չեմ խաբեր. իմ գրածներուս ոգին այնպես է արդեն, որ որոշ խումբ մը մարդոց համար՝ գլխավորապես երիտասարդներու կրնա հետաքրքիր լինել («գոնե առայժմ» ավելցնեմ ինքզինքս մխիթարելու համար), այսինքն այն տարրը, որը վեպի (գրքի) փող տալու ո՛չ սովորութիւն ունի, ո՛չ միջոց: Եվ վերջապես մի՞թե ավելի շանս չունիմ շատ մարդոց ձեռքեն անցնելու, երբ թե՛ ամսագրի մեջ տպվի և թե՛ վերջը առանձին: Քու առաջարկդ ընկերութեան[3] միջոցով տպել տալու՝ ինծի համար մեկ հրապույր մը ունի, այն է՝ նյութական անմիջական վճարումը, հրապույր մը, որուն դժվար է դիմադրել և ինչպես արդեն գրած եմ՝ քեզի կ'ուղարկեմ վեպերես մեկը: Նաև գրած էիր ինծի, թե Եռիկարյանը ցանկացած է ինքը իր կողմեն «Վերժինը» արտատպելու. այդ ինծի չափազանց ուրախացուց, որովհետև այդ ես նշան մը կը համարեմ, որ պարոնի համար ես հետա-

քրքրուքիյուն մը ունիմ և այդ ալ ճիշտ այն վայրկյանին, երբ մեր մեջ ամեն բան խզված կը կարծեի: Հայտնե՛ պարոնին իմ չնորհակալութիյունս. և եթե հարմար կը համարես՝ առաջարկե ոտանավորներուս փոքրիկ գրքույկով մը հրատարակվելուն. թե՛ Պոլիս, թե՛ Թիֆլիս և թե՛ տպված ու թե՛ անտիպ ոտանավորներես մաղելով-մաղելով 60 կտորի չափ բան եմ պահած միայն, որ կը ցանկայի կոկիկ-սիրուն տիպով մը հրատարակել. չի կարծեմ, որ 100 բուբլիեն ավելի ծախք նստի ամենալավ պայմանները միասին հաշվելով: Եթե համաձայնե՝ գրե՛ անմիջապես ձեռագիրը ուղարկեմ քեզի. ինչքան շուտ՝ այնքան լավ. այդ կտոր-փրթուճ թուղթի կտորները միասին պատցնելես ձանձրացած եմ արդեն. և վերջապես գուցե քիչ մըն ալ ստակ կ'անցնի ձեռքս, վերջին տարին է, որ արտասահման եմ և չէի ցանկար, որ նորեն երկու կոպեկի համար ինքզինքս ուտեմ: Ամարանոց երթալեդ առաջ այդ հարցը կարգի բեր, եթե, կրկնեմ, հարմար կը դատես: Ուղարկած 150 բուբլիդ երկինքեն իջավ. հաշիվներս մաքրեցի շուրջս. և մնացածովն ալ համբարձման արձակուրդին քանի մը օր սիրուն Ausflug[9] մը ըրի գերմանացի ընկերոջս ու ընտանիքի մը հետ (մայր մը երկու աղջիկներուն հետ), բնութիյունը կարոտած էի, լեռները. հրաշալի Bergpartie[10] մը ձյունի, մառախուղի մեջեն, ձորեր, գետ, մագլցել, աղջիկներ, poussieren[11] բոլորը իրարու հյուսված, ինչպես կը տեսնես, ամենաբանաստեղծական եղանակով մը ուղարկած 150 բուբլիդ տակեն մտա, վրայեն ելա. և հիմա խղճի կատարյալ հանգստութիյամբ ու գրպանս պարապ նստեր եմ՝ նորեն երկրորդ անակնկալ 150 բուբլի մը սպասելով: Առայժմ աշխատութիյանս ծույլ չըլլանն է. չատ քիչ կ'աշխատեմ, օդերեն է երևի, գարնան պարգևը. դասախոսութիյուններուս և ընդհանրապես արդի կյանքիս մասին հաջորդ նամակով. այնքան չատախոսութիյուն ըրի, որ այլևս տեղ չի մնաց: Գոնե դուն, հոգիդ սիրես, երկու տող բան գրե՛ ինծի Օննիկի մասին. այսպես ալ անչնորհք մարդ. դեռ բառ մը չէ գրած ինծի հոտ գալեն իվեր: Կը տեսնե՞ս կարգո՛վ, մեկերնիս կու գայնք, մյուսնիս կը վերադառնանք, երևի մինչև ան նորեն ետ դառնալու լինի, ես հոսկե ճամբա կ'ելնեմ արդեն: Ես չատ քիչերու հետ նամակագրութիյուն ունիմ. նամակը բավական ձանձրալի աշխատանք է ինծի համար. և վերջապես նամակն ու լրագիրները չատ թույլ ու գեշ աղբյուր է իրական կյանքի ուսումնասիրութիյան. ապրի՛լ, ապրիլ կ'ուզե այդ կյանքին մեջ ու այդ կյանքին համար. նամակներե, պատմածներե

բան դուրս չի գար. միշտ դիր խաղացողը կը լինի սեփական երևակայութիւնը, փոխանակ արտաքին իրականութեան. եթե ինծմէ հայկական կյանքի ըմբռնում ու պատկերացում կ'ըսպասես՝ նայե՛, որ որքան հնար է շատ այդ կյանքին մէջ խրիմ: Դե՛, սիրելի՛ս, կը համբուրեմ քեզի պինդ մը, կը խնդրեմ, որ բարևներս ու հարգանքս Հայտնես տիկնոջդ ու քնինիներուդ ու անգամ մըն ալ ձեռքդ սեղմելով կը դնեմ վերջակետս ու կը մտնեմ անկողինս, որ չառոնց գիրկը բացած ինծի կ'ըսպասէ.

Լևոն

13. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Սեպտեմբերի 9>

Ստեփահ՛ոս, դեռ չի գրեցիր. կ'ըսպասեմ. և երևի դեռ երկար գրելիք ալ չունես. իրրև քեզի պատիժ ահա՛ կ'ըսպասեցնամ ես քեզի գրեմ. որ իմ գրելս քեզի համար սպառնալիք է՝ կասկած չի կա. հավիտենական հանգերձ՝ վո՛ղ:

Ասկե երկու ամսի չափ առաջ քեզի նամակ մըն ալ գրած եմ, ուր Հայտնած էի իմ Փարիզ երթալու դիտավորութիւնս[1] ու խնդրած, որ հնար եղածին չափ շուտ Եոիկապյանի անցած վեցամսյակը ինծի ուղարկել տալու հաջողիս. է՛, որ Փարիզ երթալես հիմա բոլորովին ձեռք եմ վերցուցած արդեն՝ գուցե ինքդ ալ ենթադրած ես. ես վազ անցա Փարիզեն ալ, պոուլտեն ալ, ամեն բաներն ալ. մնայն գոնե հոս ձեռքս այնքան սուակ ունենամ, որ կարողանամ չարժվիլ. եթե այս վերջին ձմեռն ալ անցածի պես ինծի համար քաչված մեկ կողմ պիտի անցընեմ, ալ ինչխա է պետք Եվրոպա լինելու: Չի նեղանաս, Ստեփահ՛ոս, գուցե շատ պահանջող եմ դարձեր, չգիտեմ, բայց որ այդչափ կ'ուշանաս ամեն անգամ թիֆլիզեն գալիք սուակը, ես հոս իրենչ կրնամ ըներ ամսական 40 րուբլիով, որ վարչավայեն կ'ըստանամ. մանավանդ հիմա՝ ձմեռնամուտին, ուր համալսարանը վճարելու եմ, ընթերցարանը, ընկերութեան և հազար մանր ու մունր հաչիվներ, որ գոյելու է:

Ճշմարիտ, Ստեփահ՛ոն, քեզի գրելու ալ այլևս սկսա քաչվիլ. ամեն նամակիդ՛ս, չարունա՛կ. բայց իրենչ ընեմ, քեզի ալ որ չի գրեմ՝ սիրտս կը ճաթի. և վերջապես դո՛ւն ես նորեն, ուրկե իմ հույսերս կը կախվին:

Կը խնդրեմ անգամ մըն ալ, Եփիկարյան[ին] որ ձգես, Հո՞գն է, Հարուստ մարդ, իրեն ինչ փույթը. խոսե՛ Հեռը նորեն անգամ մը և Հնար եղածին չափ շուտ ուղարկե՛. եթե մինչև Հոկտեմբերի վերջերը (մեր Հաշվով) չըստանամ, ճշմարիտ չգիտեմ ինչ պիտի ընեմ, այսինքն, ո՛չ, գիտեմ. քաշվեմ պիտի նորեն սենյակս, դուռը գոցեմ ու նստիմ սենյակիս և ուսեստիս ծախքը քիլիմը քիլիմին բերելու աշխատելով, ահա՛ քեզի ուսանողություն, եվրոպական կյանք, շրջան և այլն, ինչ որ կ'ուզես:

Հոգիդ սիրես, ինչո՞ւ չես գրեր ինծի. մեջեմեջ բաց քարթ մը, երկու տող մը ստանամ՝ բան մըն է նորեն. ալ չեմ հիշեր քու դեռ մայիսին տված խոստումդ երկար գրելու, այլև վեպի՛ս մասին:

Իմ աշխատություններու, կյանքի մասին գրել կ'ուզեի քեզի, բայց հիմա այս տրամադրությանս մեջ բացարձակապես անկարելի է. հաջորդ նամակովս, որ կը հուսամ քիչ մը ավելի մարդավարի բան կը լինի և ո՛չ այս անվերջ փողի պատմությունը: Ներե՛ ինծի, Ստեփանս, գիտե՛մ, որ այս նամակները քեզի համար կարդալը շատ ավելի անախորժ է, քան թե գուցե ինծի համար գրելը, բայց ի՞նչ կ'ելնի այդ գիտնալեն. մեզի անախորժություն չի պատճառելու բոլոր ցանկությանս հետ, ահա՛ նստեր եմ ու նորեն կը գրեմ. երևի՛, շատ եսական եմ. գուցե, չգիտեմ: Է՛, վերջապես թողնեմ այս անմիտ դատողությունները. դուն չես նեղանար ինծի՝ ես այդ գիտեմ: Բոլոր ուժովս կը սեղմեմ ձեռքդ ու պինդ մը կը համբուրեմ շրթունքներդ.

Լևոնդ

Բարևներս տիկնոջ. ու քեզմե պատասխան:

14. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

98 XII 7
Մյունխեն

Անգի՛ն Ստեփանս:

Այնչա՛փ տխուր է նամակիդ վերջին տողերը. կ'ըմբռնեմ քեզի, քու «մաշող մտածումներդ», «ճնշված տրամադրությունդ». չէ՞ որ տեսա քու կյանքդ, պայմաններդ ու զբաղումներդ. գուցե և ունիս ավելի ներքին պատճառներ, որոնք ես տեսնել չէի կրնար: Ինչ ալ որ լինի,

չատ աղեկ կը հասկընամ քու կարոտդ քիչ մը հեռանալու, ցրվելու, «փախչելու», և կը հավատա՞ս, բոլոր սրտովս ցանկացա հոս լինելու, մինչև անգամ մտածեցի առաջիկա ամառ անպատճառ Թիֆլիս վերադառնալ՝ հուսալով իմ ներկայությունս գուցե քիչ մը թեթևացնե քեզի. լուրջ կ'ըսեմ, եթե նորեն Կովկաս գալ կ'ուզեմ, պատճառներեն մեկն ալ դուն ես: Ինծի համար այնքանը պարզ է, որ դուն մինակ ես. մինա՛կ, հասարակության մեջն ալ, դպրոցիդ մեջն ալ, ընտանիքիդ մեջն ալ. մասամբ բնավորությանդ, մասամբ պայմաններո՛ւդ արդյունք. և մասամբ ալ ընդհանրապես Կովկասի ասիական-ընկերական կյանքին. հոս ամե՛ն մարդ մեծ կամ փոքր դիրքով ճգնավոր մըն է. իսկ դուն ներքին այնչա՛փ հոգեկան պահանջ ունիս չիմաց, իրարանցումի, հուզվելու ու չարժուն կյանքի: Մյուս կողմեն այն սակավաթիվ քրիստոսյան բնավորություններեն ես, որոնք կու տան, չարունակ կու տան; աջ ու ձախ, և փոխարենը ոչինչ չեն ստանար. նույնիսկ անոնցմե՛, որոնցմե ամենեն ավելի հույս ունին ու ակնկալություն. իսկ անձնական երջանկությունը ստանալու մեջն է. դուն ուրիշներու համար միայն կ'ապրիս. ուրիշներո՛ւ և ապագայի՛, այդ ալ կարծեմ մեր ինդելիկենցիայի ընդհանուր ցավերեն է. բոլո՛ր ծրագիրները, հաշիվները ապագայի համար, մինչ ներկան կ'արհարմարհվի կա՛մ անգիտակից, կա՛մ ուղղակի գիտակցորեն. է՛, օրվա կյանք, ի՞նչ արժե աւոր վրա չատ գլուխ հոգնեցնել: Կարծես երբևիցե «օրվա կյանքեն» դուրս ուրիշ բան լինելու է կամ կա աշխարհիս վրա. այսօր մեր «օրվան կյանքն» է, վաղը հաջորդ սերունդի, ահա՛ բոլոր տարբերությունը: Այս բոլոր «լայասական» հատկություններիդ մեջ, եթե կա բան մը, որ քիչ մը հավատարակշռությունը կը պահե, այդ ալ քու «խամըզ»ությունն է, ինչպես թյուրքերը կ'ըսին. այսինքն ցավին ու վշտին ալ մեծ կարևորություն չես տար, դժվար վայրկյաններիդ ալ խնդալ գիտես և նոքյն ճնշոդ մտածումին վրա երկար աաեն կանգ չես առներ, և որ ինքնին չատ քիչ բան է պետք զվարթ տրամադրությունդ եւո դարձնելու համար. օրինակի համար իմ այս հոգեբանական փիլիսոփայություններս, որ գուցե քու ժպիտդ կը շարժին. վնա՛ս չէ, ավելի՛ աղեկ. գոնե հեռվեն քեզի համար բան մը ըրած կը լինիմ: Ուրախ եմ, որ Արասխանյանին չնորհավորեր ես. ան քեզի կարևորություն կու տա, ինչքան նկատած եմ. հիմա աստիճան մը ավելի պիտի չվարի խեղճը, արդեն առանց այդ ալ ան քեզի երբեք չէ կրցած հասկընալ, ինչպես ինքը կ'ըսեր: Կը հուսամ

«Դարձը» առաջիկա թվին մեջ տպվի[1]. քիչ էր մնացեր, որ նորեն պիտի սխալվեր գրիչս ու պիտի գրեի, որ քու տպավորութիւնդ անպատճառ ինծի գրես. մարդ ամէողջովին լավատեսութենեն մարմնավորված պիտի լինի, որ այլևս քեզմե այդ տեսակ ակնկալութիւններ ունենալու միամտութիւնը ունենա. ինծի, իրավ է, Հոռետեսներու չարքին մեջ դնել չես կրնար, բայց պիտի խոստովանիմ՝ իմ լավատեսութիւնս այդչափ հեռուները չերթար. ես գիտեմ, որ պետք է սպասել առնվազն մինչև փետրվար կամ մարտ, մինչև որ փող ուղարկելու պատմութիւն ելնե մեջտեղ և դուն ստիպված լինիս երկու դասի մեջ ինծի երկու տող գրելու. է՛, հին երգ: «Դերասանուհիս» կը հուսամ մինչև նոր տարի ճամբա հանելու. չգիտեմ քեզի՞ ուղարկեմ, որ նախ անգամ մը աչքե անցընես, թե՞ ուղարկեմ ուղղակի ընկերութեան հասցեին. մտածեցի, որ քու անունիդ ուղարկելը գուցե քեզի համար անախորժ է, քանի որ ինքդ անդամ ես քննող ժողովին[2] և երբ ինքդ ներկայացնես՝ խնդիրը խնամիական ձև կ'առնե. վերջապես չգիտե՛մ, գրե՛ ինծի չուտով (մի՛ վախնար, բայց քարթ մը հերիք է) ինչպես վարվիմ. Արասխանյանին արդեն գրած եմ չատոնց այդ մասին. ոչինչ պատասխանած չէ. և կարծեմ դժգոհ է. ուրիշներու միջոցով քանի-քանի անգամ հասկըցուցած է, որ ա՛յդ ալ «Մուրճի» մեջ տպել կը ցանկար. կ'աշխատեմ ուրիշ բանով մը սիրտը առնելու: Նույն «Դերասանուհին» **միևնույն ժամանակ** մաս-մաս տպվելու է և Պոլիս «Մասիս» երկշաբաթաթերթին մեջ[3], որ չուտով սկսելու է հրատարակվելու, և որուն խմբագիրն է իմ մեկ մոտիկ ուսանողական ընկերս. ինծմե անպատճառ գրվածք կ'ուզեր անմիջապես. ձեռքս ուրիշ ոչինչ չունիմ պատրաստ: Ստիպվեցա այդպես վարվելու, անշուշտ չեմ կարծեր, որ այդ պատճառով ընկերութիւնը իբրև արտատպութիւն նկատե իր տպելը, նախ՝ Պոլիս տպվածը հազիվ մինչև ամառվան վերջերը ավարտի, երկրորդ՝ քանի՞ օրինակ «Մասիս» է մտնելու ամբողջ Կովկաս. իսկ Պոլսի համար ալ, եթե ընկերութեան գրքերը ընդհանրապես Պոլիս մուտք գործել կրնան, «Մասիսի» մեջ սպվիլը իբրև ռեզլամ ծառայած կը լինի: «Դերասանուհին» գլխես «ռադ» ընելուս պես սկսելու եմ նոր աշխատութեան. եթե գործս քալե՝ կը հայտնեմ քեզի իր ժամանակին. ընդհանրապես նյութեր չատ ունիմ գլխուս մեջ, ժամանակ քիչ. և այնքան բազմակողմանի տպավորութիւններու ենթակա եմ, որ հաճախ չգիտեմ՝ որ նյութին վրա անմիջապես կեդրոնանամ: Ընթերցումներուս գուտ գիտական ու գեղար-

վեհտակական ազդեցութիւնը մեկ կողմեն, չրջապատի ազդեցութիւնը ու չրջապատիս կեանքն ու քաղաքակրթութիւնը մյուս կողմեն. անդիեն կու գան նամակներ ու լրագիրներ[4], որոնք օրվան այբող ազգային հարցերը կամ ավելի ճիշտ՝ հարցը կը բերեն, որուն առջև վայրկյան մը ուրիշ ամեն բանով զբաղվիլը ծիծաղելի կը դառնա աչքիս. կամ Կովկասեն կուգան լուրեր ու թերթեր. Հո՛ս ալ ուրիշ կյանք, ուրի՛շ ցավեր. մաքառելու ու հարձակվելու ուրի՛շ խթան կ'ավելնա մեջս. Հո՛ս, Տաճկաստա՛ն ու Հո՛տ. երեք ահագին սարերով իրարմե բաժնված կյանքեր, բոլորովին աննման իրարու. օրվան պահանջն ալ, ցավերն ալ, պետքն ալ, ընթերցողներն ալ ու մատակարարած նյութերն ալ բոլորովին ուրիշ. նույնիսկ մի'ևնույն նյութը բոլորովին այլ կերպ կը դառնա գրչիդ տակը, երբ կ'որոշես ո՞ւր տպելդ: Այս բոլորը ցրվող տպավորութիւն կ'ընե միայն ու մարդը վարանման մեջ կը դնե. սաստիկ կը ցանկայի վերջապես Հո՛տ կամ Հո՛ն կյանքի մեջ հաստատ հողի վրա կանգ առնել ու կյանքի անմիջական թարմ տպավորութեյան տակ գրելու սկսել. իմ ամենեն առած բանս Հոգեկան պառակտումն է. և լուրջ գործ մը տեսնելու համար պետք է անպատճառ մեկ բանի մը վարել, բայց բոլոր ուժերով: Այս կետին կը դառնամ նորեն: Անցնիմ իմ կրավորական զբաղումիս. լսել ու կարդալ: Այս կիսամյակին քիչ բան կը լսեմ, լսածս ալ բոլոր գրական. «Տասնըիններորդ դարու գերմանական դրամատ». երիտասարդ մըն է դոցենտը, բոլորովին նո՛ր ու թարմ երիտասարդ մը. չա՛տ գոհ եմ. չատ քի՛չերը այդպես ինծի գրավել կրցած են Համալսարան գալես իվեր: Ուրիշ դասախոսութիւն մը, որ ինծի նորեն բավական կը հետաքրքրե, «18 դարու վերջին գերմանի գրականութեյան պատմութիւնն է», քլասիկներու շրջանը. քիչ մը չատ մանրամասն կը կարդա. այդ է միակ ցավը. կորած-մոլորած ողորմելի-երկրորդական գրողներն ու գրվածներ. ստիպված ես ականջ դնելու՝ մեջեմեջ հետաքրքիր բան մը լսելու կամ սուր եղրակացութիւն մը ստանալու համար: Ուզեցի և Շեքսպիր լսել, բայց անկարող եղա. չէ՛, որ ինծի խնդրեն՝ չեմ կրնար ամբողջ ժամ մը լեզվագիտական իմաստութիւններ ու նրբութիւններ լսել. ծավալուն, մանրակրկիտ, այն ալ մինչև Շեքսպիր հասնելը դեռ երկու-երեք տասնյակ ամեն կարգի մարդոց մասին խոսելու է. մանավանդ որ անգլիերեն ալ չգիտեմ, որ հաճախ դասախոսութեյանը կը հյուսե: Կը լսեմ «Գետեսուի» մասին դասախոսութիւն մը. բայց վհատակը խոսելով՝ ավելի պարտականութիւն մըն

է, որ կը կատարեմ, քան իսկական օգուտ մը ունիմ. չգիտե՛մ, իմ մտածելու, դատելու, վերլուծելու եղանակը շատ ուրիշ կերպ զարգացավ. չափազանց հինցած ու սահմանողական գլուխներ են փրոֆեսորներու մեծագույն մասը, այնպես ալ գրված գրքերու. Համալսարանական կրթության եղանակը անգամ մը ձախորդ է. գրական ճյուղ իսկապես չկա. լեզվագիտության մեկ մասն է նկատված, և ուսանողը, որ հին ու նոր բոլոր երկերու նրբությունները տարիներով կզկզելու կը վարժեցնին, պարզապես ոչինչ զարգացում չունին բնագիտական տեսակետեն և ընկերաբանական հարցերու վերաբերմամբ, իսկ բնագիտության աչխարհայացքի տակ այսօր ամեն բան սկսած է այլ կերպ ըմբռնվիլ. արվեստը և գրականությունը բացառություն չեն: Դուն ինծի սխալ ես հասկըցած, եթե ամեն նամակիդ կը գրես, թե ես եվրոպական հին ու նոր գրական երկերը կ'արհամարհեմ. ես երկը ինքը չէ, որ կ'արհամարհեմ, այլ այդ երկերու ուսումնասիրության այսօր ընդհանուր եղած եղանակը: Անշուշտ քիչ մըն ալ ծայրահեղություն կա իմ ըմբռնմանս մեջ. այդ բնական րեաքցիոնն է միայն, որ երկար չի տևեր և արդեն սկսած է մեղմանալ: Այս վերջի երկու տարին թե՛ կյանքս, թե՛ ընթերցումներս և թե՛ տարիքս շատ բան փոխած են: Ըստ երևույթին արդեն սկսած եմ այրանալ, ամենեն խոշոր նշանը, երբ հայացքներու չափազանցությունները կ'ըսկսին հալիլ, ու կամաց-կամաց կը դառնաս նորեն այդ հին ըմբռնումներուն, որոնց նոր ճամբա ելած ժամանակդ դավաններ ես, միայն իհարկե անհամեմատ բարձրեն դիտելով. և ամենաէականը՝ կ'ըսկսիս հակառակորդդ հասկընալու, որ անմիջապես կը սանձե երիտասարդությանդ հախուռն ու եռուզ չի մտածող ուժեղ հարձակումներդ: Մարդ ակամա կ'ըսկսի զգալ, որ իր բացարձակ ճշմարտություն ընդունածը կուրություն է միայն, որ դիմացինդ ալ ճիշտ քեզի պես կը տրամաբանե: Ես ինչպես որ նոր եկած աաենս հետզհետե ազգայինեն, գրականեն, իտեալական-վերացականեն դեպի մարդկայինը, գիտականը, դրականը դիմեցի, ճիշտ նույն աստիճանով ալ հետզհետե հիմա կը դառնամ նորեն իտեալական-ազգային– գեղարվեստականին: Իմ առած միակողմանի **վերացական** կրթության և նեղ ազգային ոգու դեմ բնական հակազդեցություն մըն էր գրական գիտություններուն վարիլս, որուն բոլոր սրտովս ուրախ եմ. ան է, որ ինծի ժամանակակից մտավոր բարձրության վրա դրավ: Եթե ամբողջ աչխարհի բոլոր գրական-գեղարվեստական երկերն ալ կարդացած լինեի՝

*Իհարկէ մեծ չահ ինծի, եթէ օրվան աշխարհայայքի տերը չեմ. և մեր գործիչներու ու գրագետներու ամենամեծ պակասը այդ է. նմանապես և եվրոպական գրագետներու մեկ ստվարագույն մասին: Թե՛ մեր լրագիրներու և թե՛ հոս գերմանական թերթերու ու գրքերու մեջ չգիտես ինչ աստիճանի մեկ կողմեն միամիտ-խռեալական ապուշություններ, մյուս կողմեն վիքուն-քննադատական-բարդ իսկապես չհասկցված խակություններ կան ու պահանջներ: Իմ այս գիտությամբ ոգևորվիլս և գրական երկերու մեկ մասը դեռ կարդացած չլինելս է, որ քեզի ըսել կու տա, թե ես եվրոպական երկերը կ'արհամարհեմ. չեմ արհամարհիր, բայց չեմ տար և այն նշանակությունը, որ Կովկաս և ընդհանրապես հայերուս մեջ սովորական է տալը: Պատճառներու մեկ խոշորը իհարկե ռուսական գրականությունն է, ուր մտավոր բոլոր կյանքը արտաքին պայմաններու չնորհիվ ավելի գեղարվեստի վզին է փաթթված եղեր, քան զուտ գիտության: Այս տողերս կարդալեդ վերջը չի մտածես, որ ես նորեն այդ «եվրոպական հելինականները» աչքաթողի եմ ըրած. ո՛չ. սկսած եմ մոտեն ծանոթանալու և չարունակելու եմ ամբողջ կյանքս իհարկե. մասամբ, որովհետև ամեն զարգացած մարդու անհրաժեշտ է հայտնի գեղարվեստական երկերը ճանչնալն ու վայելելը. և երկրորդ՝ իհարկե մասնավորապես ես իբրև այսպես ըսած արվեստակից. թեխնիքաս մշակելու համար, դրդում ստանալու համար, նյութեր ընտրել սորվելու համար և վերջապես ոգևորվելու համար, մեկ բանով որչափ որ աշխատիս, այնչափ կը սիրես: Կը տեսնիս, Հոգի՛ս, որ բոլորը ինծի համար պարզ է. և գիտեմ, որ դուն այդ կ'ուզես, որ ինծի պարզ լինի. այս երկու տարվան չափ ժամանակին մեջ նորվեկյան և գերմանական հայտնի, արժեք ունեցող երկերը լրջորեն աչքի եմ անցուցած. իհարկե **ժամանակակիցները** միայն. անցյալը ինծի մասամբ չի քաշեր, մասամբ ալ ավելի ազատ ժամանակներու կը թողնեմ: Ինչ կ'ուզես ըսե, ես հիմա չեմ կրնար նստեր Կյոթեի մանր ու մունը գրվածները աչքե անցընելու, իր ամենահայտնի գրվածները եթե կարդացեր եմ այդ ալ մեծ բան է. գուցե զարմանաս, բայց այդ այդպես է: Ես դիտմամբ Կյոթեի անունը ընտրեցի, մնացածները, հո՛, բոլորը թափթփուկ բաներ. թափթփուկ, իհարկե, օտարի մը համար և մասնավորապես ինծի: Ի՞նչ, կ'ուզե՞ս, որ ես նստեմ Քլոփշտոկի մը «Միսիադը» կարդամ, թե Հերդերի մը կամ նույնիսկ Լեսսինգի ստվար հատորները: Կը կրկնեմ, այս արհամարհանք չէ, այլ պարզապես իմ հետաքրքրությանս չրջանեն դուրս է,*

ուրիշ ոչինչ. աւտոնց երկերու ընդհանուր վերլուծութիւնները կարդացած եմ, շատ Հայտնի եղած մեկ-երկու բան գտայ և կարդացած. այդչափին ալ հերիք է ինծի: Ինծի համար մեր դարը իհարկէ ամենեն ավելի հետաքրքիր է, մանաւանդ վերջին նաթուռալիստ շրջանը[5]. երկրորդ՝ միջնադարեան ազգային-ժողովրդական դիւցազնական-ժողովրդական երկերը. և... չի զարմանա՛ս, արևելքի գրականութիւնը Հունաստանը միասին առած: Եթե ըսեմ, որ ա՛յս վայրկեանիս Թևիս տակը սեղանիս վրա Վեդան[6], Ավեստան[7] ու Հունաստանի գրական պատմութիւնը իրարու վրա են շարված, գտայ տարօրինակ հնչէ քեզի: Հիմա մասնաւորապես կը կարդամ Հնդկական (աստրական, պարսկական) և Հունական գրականութիւնը, մասամբ ինծի մասնաւորապես հետաքրքրելուն, ինչպես ըսի, մասամբ ալ որովհետև վերադարձիս արդի գրատան լայն հարմարութիւնները ալ չեմ ունենալու: Իսկ իբրև նոր գրականութեան համար կը կարդամ գերման և հիւսիսային Հայտնի քննադատները, որոնցմէ Brandes[8] մասնաւորապես կը սիրեմ: Իմ մեծ պակասը, որ հիմա կ'ըզգամ, լոմանական նորագոյն գրականութիւնն է, իտալո-ֆրանսականը. է՛, այն ալ այլևս կյանքին մեջ. ալ ամեն բան միասին ընել չեմ կրնար: Թե՛ Պոլիս, թե՛ հոս ֆրանսական նորագոյն գրականութեանը ծանոթանալը դյուրին է. այսինքն մոտեն ծանոթանալը ըսել կ'ուզեմ, թե չէ Հայտնի հեղինակներուն բոլորովին անծանոթ ալ չեմ: Է՛, սիրելի՛ս, նամակս Այսմավուրքի[9] ծավալ առնել սկսավ. պետք է վերջ տալ, ուրիշ խոսքով՝ պետք է ստակային խնդիրներուն անցնիլ: Իմ հաշիվներուս Արասխանյանեն միայն երկու անգամ երեսնական րուբլի ստացած կը կարծեի. քու վերջին գրածներուդ վրա՝ քրքրեցի Արասխանյանի հին նամակները, և դուրս եկավ, որ իրավ այս տարվան սկիզբները 60 րուբլի ևս ստացած եմ իրմեն. բնավ չեմ հիշեր ստանալս և ոչ ալ գիտեմ ինչի գործ դրած լինելս, բայց որ ստացեր եմ՝ ատոր կասկած չի կա, նամակը մեջտեղն է. ինչևէ, այնպես որ քու գրած հաշիվդ կատարելապես ճիշտ է. ես ստացած եմ Եսիկարյանեն մինչև հիմա 20 ամսական մինչև նոյեմբերի սկիզբը: Այսպեսով մինչև 99-ի մարտը քեզմե կ'ըսպասեմ Եսիկարյանի ու Զիլճախյանի[10] վերջին վաթսուն րուբլիները, որով և կազատվիս իմ ձեռքես. բայց չէ՛, ինքզինքդ մի՛ խաբեր. դեռ վերջին հաշիվ մըն ալ ունիմ քեզի հետ: Դե՛, պնդե գոռիդ ու ականջ դի՛ր: Գիտես, որ Վարշավայեն դեռ մինչև օգոստոսի վերջը Թոշակս կը չարունակվի, բայց միայն այդ ստակով մինչև օգոս-

տոս հոս մնալ անկարող եմ. արդ կը խնդրեմ, որ անգամ մը իմ կողմես պարոն Եփիկարյանին խնդրես, արդյոք չի՞ համաձայնիր ինքն ալ իր օժանդակութիւնը դեռ վեց ամիս չարունակելու: Իհարկե, եթե որևէ կերպով այս խնդիրս անհարմար չի դաներ, կամ եթե կը կարծես, որ համաձայնի: Եթե քեզի համար նորեն խնդրելը ծանր է՝ վա՛զ անցիր: Կամ ուրիշ բան մը. ամառը քեզ գրած էի ոտանաւորներուս տպագրութեան մասին. եթե կը կարծես, որ ուղղակի կրկին վեց ամսականը առաջարկելը անհարմար է, այն ատեն արդյոք կարելի չէ՞, որ իրմեն 100 րուբլիի չափ ստակ խնդրեմ, որու փոխարեն ոտանաւորներս կը հանձնեմ իրեն, կուզե տպե իր հաշիվին, կամ եթե պատվին չի ձգիր՝ որևէ բարեգործական քաստայի օգտին: Քանի մը ամիս ավելի Եվրոպա մնալը չէ, որ ինծի կ'ըղբաղեցնե. ալ ո՞վ է համալսարանի մասին մտածողը, բայց հին ու միշտ հետաձգված ու միշտ չիրագործված ծրագիրս է, որ վերջին ճիգ մը կ'ընեմ իրականացնելու: Պիտի վերադառնամ Պոլիս կամ հոտ ու խրվիմ պիտի, գիտեմ, և այլևս չատ դժվար խնդիրը է այս կողմերը ոտք դնելս. և ես չատ կը ցանկայի արևմտյան Գերմանիան ալ անգամ մը տեսնելու, մանավանդ Փարիզ ու Ժվիցերիա. դանե քանի մը չաբաթով: Հաշված եմ, որ եթե Եփիկարյանի այդ խնդիրս (Հարյուր րուբլիի չափ ամենաուշը մինչև Հուլիս) հաջողվի, և եթե հարյուր րուբլիի չափ ալ «Դերասանուհիեն» ստանամ, բան մը ընելու կը հաջողիմ. նույնիսկ եթե «Դերասանուհիս» վարձը քաշքշեն ալ՝ սեղմվելով-կրճատելով ու տեղե մը մեկ մասը պարտք առնելով նորեն [կը] հաջողիմ: Ծրագիրս է Հոսկի Փարիզ, Փարիզեն Ժընև, ուր կը մնամ քանի մը ատեն, թեթև ծախքով, քանի որ Օննիկը Հոն է, Հոնկե ալ նայելով ձեռքս մնացած ստակին, կա՛մ Վենետիկով Պոլիս, կա՛մ Վենետիկով Վիեննա, կա՛մ ուղղակի Վիեննա: Այդ կախված է իհարկե և այն հարցեն, թե ո՞ւր եմ երթալու Եվրոպային՝ Պոլի՞ս, Կովկա՞ս, թե՞ գուցե Բուլկարիա. այդ մասին ալ կ'ուզեի քեզի գրեմ ու խորհուրդ հարցնեմ: Պայմանները այսպես են. Պոլիս երթալս՝ սկզբնական մուտքի դժվարութիւնը, գուցե և կյանքի անապահովութիւնը մեկ կողմ դնելով՝ ուրիշ երկու կետ ինծի կը խրթնեցնեն. նախ որ անկարելի է որևէ լուրջ գործ տեսնել. մարդ չի կա, միջոց չի կա և ամենեն գլխավորը՝ հնարավորութիւն չի կա. լրտեսներ, ստախոսներ լեցուն, տերութիւնը սուր մորուքեն անգամ կասկածող: Եվ երկրորդ՝ որևէ կերպ գուցե հարմարվիմ, կառավարվիմ, բայց ինչպես ալ որ հանգամանքները դառնան՝ այս

վատ է, որ ուժերուս մեծագույն մասը դպրոցական-կրթական խնդիրները խլելու են. գրական աշխատութիւններս նորեն կաղան պիտի, և ենթարկվեմ պիտի գրածներուս մէջն ալ անպատճառ տեղական անմիջական պետքերուն ու հայացքներուն, որոնք Կովկասի կյանքեն (գոնե մտավորական չրջանը աչքի առաջ եթե ունենանք) չատ ետ է: Կովկաս պալս ալ գլխավորաբար կյանքի անհարմարութիւն ունի. ինչո՞վ կրնամ զբաղվիլ, որ կարողանամ ինծի համար անկախ ապրել և դեռ քիչեն-միչեն Պոլիս մեր տունն ալ մեջեմեջ օգնութիւն մը հասցնել: Աչքի առաջ ունեցիր, որ տաճկահպատակ եմ, դպրոցները գոց են առջևս, մասնավոր դասերը նախ չատ խախուտ բան է, և երկրորդ՝ ի՞նչ մասնավոր դաս. չէ՞ որ իմ հայերենս անգամ օտար է հոտ. մասնավոր գործի՞ մտնեմ. եթե հարմար բան մը լինի, որ ինծի բավական ազատ ժամանակ թողնե, չիտակը չեմ մերժեր, բայց ուրկե է այդ տեսակ գործ. և ո՞վ «բանաստեղծ մարդուն» գործ կը վստահի. և ճիշտ խոսելով՝ մարդիկը մեղադրել ալ չեմ կրնար, թեև կը կարծեմ, որ Հանճն առած գործս խղճմտորեն կը կատարեմ: Եվ վերջապես այս համակերպութեյանս հակառակ՝ արդյոք իրա՞վ կրնամ մասնավոր գործով զբաղվիլ՝ այդ ալ դեռ հարց է. միայն հարմարվիլ ուղելը հերիք չէ, պետք է կարողանալ: Վերջը չատ ուրախ կը լինեի, եթե առիթ ունենայի հոս ու հոն երթալու, զանազան չերտերու հետ չփման մտնելու: Վերջապես, սիրելի՛ս, գրե ինծի անպատճառ և այդ մասին. կը հուսա՞ս, որ կերպ մը գլուխս կառավարելու հաջողիմ, եթե Կովկաս գամ. **մուրացկան գործ**, այսինքն խաթեր համար մեկ-երկու անպետք մասնավոր դաս կամ ուրիշի գործերու սրբագրութիւն և այլն, այդ՝ տեսակի բաներ բացարձակապես չեմ ուզեր. և կը ցանկամ այնքան ամսական ստակ ունենամ, որ առանց ուրիշի կարոտ լինելու քիչ-միչ մարդավարի ապրեմ: Այդ մասին կը գրես ինծի անպատճառ ամենաուշը մինչև մարտ, որ ատոր համեմատ վարվիմ: Բուլկարիա երթալու ինքս չատ ոգևորված չեմ. հոն ալ նույն անապահովութիւնը. բացի այդ հոն ալ բոլոր ուժերս նորեն մանկավարժական զբաղումները խլեն պիտի: Բարձրագույն դասարանի մեջ մանկավարժութեյան դասախոսութիւն, կամ գրականութեյան, նույնիսկ պատմութեյան դասեր իհարկե սիրով հանճն կ՝առնեմ ուր ալ որ լինիմ. բայց խնդիրը այն է, որ խնդիրը հոն չի մնար, այլ հետզհետե կը խրի. քիչ-միչ այս ու այն պատճառով կ՝ըստիպվիմ ինծի չհետաքրքրող դասեր ալ վրաս առնելու, գուցե նույնիսկ տեսչութիւն. և

մեկառժամանակ մնաս-բարո՛վ, վեպ ու գրականութիւն: Բայց վերջապես պետք է կերպ մը հարմարվիլ. ընտրելու եմ չարիքներու փոքրագույնը, ինչքան որ այդ հեռվին դատել կարելի է: Ուրեմն հիմա եզրակացութիւնս. քեզմե կ'ըսպասեմ 1/ անմիջապես գտնե քարթ մը, ուր հայտնելու ես, թե որու ուզարկեմ «Դերասանուհին», 2/ մինչև մարտ ամիսը բացի երկու վաթսուն րուբլիներու գլխացավանքեն՝ ինծի տեղեկացնես պիտի՝ արդյո՞ք Եոիկարյան (կամ գուցե ուրիշ մը) ոտանավորներուս փոխարեն կամ առանց ոտանավորներուս ինծի հարյուր րուբլի մը ուղարկելու համաձայն է. և 3/ նորեն մինչև մարտ ամիսը հայտնես ինծի քու կարծիքդ ու առաջարկդ. հարմար կը գտնե՞ս, որ նորեն Թիֆլիս գամ. խնդիրը իհարկե անպատճառ Թիֆլիսին մեջը չէ. եթե Թիֆլիս լինի՝ ուրախ եմ, բայց գավառ երթալն ալ խուսափողը չեմ: Դե՛, հոգի՛ս, բավական գործ քեզի երևք ամսվան համար: Եվ այս բոլորի փոխարեն քեզի ոչինչ չունիմ տալու, քան իմ ջերմ ու սրտագին համբույրս: Տո՛ւր բարևներս տիկնոջդ. կը հուսամ իր առողջության մասին անչուշտ ավելի՛ ցանկալի լուրեր առանալու հաջորդ նամակիդ մեջ: Կը համբուրեմ և փոքրիկներդ, ո՞վ պիտի հիմա ինչպես մեծցած են չար Լևոնիկդ ու քոքեթ աղվորիկ Սրբուհիդ:

Լևոնդ

15. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ բարեկամ:

Ամենեն առաջ ներմորեն կը շնորհավորեմ Ձեր նոր ձեռնարկը ու կը ցանկամ ուժ Ձեզի ու հաջողութիւն «Անահիտ»-ին[1]: Երկար դովասանականներ չեմ գրեր. գիտե՛մ, որ գովողներ շատ ունիք, գուցե նույնիսկ պետք եղածեն ավելի: Ընդհակառակը, պիտի չեչտեմ, որ գուտ գրական մասը (բուն երկերը) ես բոլորովին այլ կերպ տեսնել կ'ուզեի: Այդ գանգերու, կարմիր ջաղացքներու և ցավի տուներու այլանդակ նորավեպերը կամ այլաբանութիւնները, հավատացե՛ք ինծի, ուղղակի թույն է Ձեր «հեռավոր» ընթերցողներուն համար, որոնց մեծագույն մասը թարմ, խակ, հափշտակվող և իսկական գրականութեան անտեղյակ երիտասարդներ են:

«Տգավորականութիւնը»[2] կամ «անկապաշտութիւնը»[3] գրա-

կան ու քաղաքակրթական որոշ պայմաններու ծնունդ, որոշ խումբ մը հագեցած կամ քայքայված (ինչպես որ կ'ուզեք) «դարավերջիկներու» համար իր խորհուրդը կրնա ունենալ: Բայց Ձեր ընթերցողները, մի՛ մոռնաք, ո՛չ այդ ուժաքամ Եվրոպայի դարավերջիկներեն են, ո՛չ ալ վրդծելու չափ նրբացած այն երիտասարդներեն, որոնք մայրաքաղաքներու քաֆեներուն մթնոլորտին մեջ, Հավանայի մուխին վրա[4] «ունայնութեան ջիղերն» ու «ցավերուն երակներուն երանգները» կը նկարեն: Ո՛չ դարավերջիկ. մենք դարասկզբիկ ժողովուրդ ենք. մաքուր օդ, մտավոր առողջ սնունդ, առողջ զգացումներ, ազատ հայացք, ո՛ւժ, քաջալերա՛նք ու ինքնավստահութի՛ւն՝ ահա՛ ինչի է ծարավ մեր երիտասարդութիւնը, «Անահիտ»-ի ընթերցողներու մեծագույն մասը, այդ տվե՛ք մեզի. դեղերով չաղաղված հիվանդի լավան թողեք հիվանդներուն: Առո՛ղջ, ուժե՛ղ երկեր, բարեկա՛մս, ապրվա՛ծ, իսկակա՛ն զգացումներ, երգեր, վեպեր, թող լինի պա՛րզ ու անսեթևեթ, ի՛նչ փույթ. դեռ մենք ալ պարզ ժողովուրդ ենք. և մի՞թե ամենեն մեծ հրաշակերտները ամենեն պարզները չեն մինչեւույն ժամանակ: Գուցե ըսեք, որ Ձեր աշխատակիցներուն մեջ այդ ոգով գրող չիկա: Չգիտե՛մ. ես գոնե կը կարծեմ, որ Ձեր ընտրվածենեն ու թերթին տված գույնեն շատ բան կախված է: Եվ վերջապես եթե իրա՛վ գեղեցիկ, եթե իրա՛վ առողջ բան մը չեն կրնար մեր ղրողները Ձեր «Անահիտ»-ին տալ, ավելի՛ աղեկ է ձեր բոլոր ուժը տվե՛ք միայն թարգմանութեան. բայց գրական ճշմարիտ մեծ երկերու թարգմանութեան ու ինամոտ թարգմանութեան. և կարիք չկա անպատճառ, որ նորագույն հեղինակի մը գործը լինի. գրական հին, միջին ու նոր դարերու ամենանշանավոր երկերը՝անճամբ անծանոթ են ձեր ընթերցողներուն, վստա՛հ եղեք. Ձեր ճանչցած երկու տասնյակ երիտասարդութիւնը գուցե միակ բացառութիւն է ըսածիս:

Է՛, կը ներե՛ք, գուցե այս տողերուն չէիք սպասեր, և կարելի է, որ վարմունքս անտեղի ու անքաղաքավարի գտնեք: Ինծի համար նույն է. եթե Ձեր սկսած գործը սրտիս այսպես մոտիկ չլիներ, եթե Ձեր ձեռնարկած գործին սրտանց հաջողութիւն չի ցանկայի ու ապագայի համար ավելի լավագույն ակնկալութիւններ չունենայի, այս «անպատշաճութիւնը» անշուշտ չէի գործեր:

Ընդունեցե՛ք անկեղծ շնորհակալութիւնս երկու թիվերուն համար, որ մինչև հիմա ուղարկած եք. և կը հուսամ հաջորդներն ալ առանալու շնորհն ունենան, թեև ինչպես կը տեսնեք՝ նամակս

բաժնելճարը միասին չի բերեր: Հիմա վճարել չեմ կրնար, կես տարի մը վերջը վերադառնալու եմ Եվրոպային ետ. ո՞ւր՝ հաստատ չգիտեմ դեռ. բայց ուր ալ որ երթամ, կը հուսամ «Անահիտի»-ին ունեցած փոքրիկ դրամական պարտքս գոցել կարողանալու: Մյուս կողմեն գիտեմ, որ Դուք նյութականե ավելի բարոյական մտանակցություն կ'ըսպասեք ինծմե. սկզբունքով, իհարկե, պատրաստ եմ Ձեզի աչխատակցելու. բայց այս սկզբունքներեն Ձեզի ի՞նչ օգուտ, երբ այս վայրկյանիս գործնապես Ձեզի ոչինչ ուղարկել չեմ կրնար, այն պա՛րզ պատճառով, որ ձեռքս ավարտած ոչինչ չունիմ. ունեցածներս ուղարկած եմ նոր կա՛մ Թիֆլիս, կա՛մ Պոլիս՝ Շամտանճյանին[5]. իսկ դեռ չծնած երեխայի ապագայի մասին խոսելը ի՞նչ խորհուրդ ունի:

Այսօրվան փոստով կ'ուղարկեմ Ձեզի իմ վերջին առանձին տպված վեպիկս՝ «Վերժինը». չգիտեմ՝ արդին ձեռքերնիդ անցած է, թե ոչ:

Ջմռռնամ և մասնավոր չնորհակալություն հայտնելու և Ձեր սիրալիր նամակին փոխարեն, որ իր ժամանակին առած եմ: Փարիզ գալ չի կրցա դրամական պատճառներով, կը հուսամ վերադարձես առաջ գոնե քանի մը չաբաթ, դուցե մայիսի վերջերը, անգամ մը այդ կողմերը անցնիմ, այն ատեն առիթ կ'ունենանք հավանորեն ավելի մոտեն իրար ճանչնալու:

Իսկ առայժմ ընդունեցեք խնդրեմ ջերմ բարևներս:

Լևոն Սեդրոսյան

98 XII 23
Մյունխեն

Հասցես փոխված է.
Zouisen Str. 40/II r.

1899

16. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ս, Նոր տարին հետ նո՛ր բաղդ, նո՛ր ուրախություն կը ցանկամ քեզի, տիկնոջդ ու աղվորիկ փոքրիկներուդ:

Է՛, ո՞վ գիտե, կարելի է հաջորդ տարեմուտը միասին կ՛ընենք: Չվարթ տարեմուտ մը. տարեմո՛ւտ մը ու դարեմո՛ւտ մը:

Սրտագին բարևներս քովիններուն ու ջե՛րմ համբույր մը քեզի:

Լևոնդ

99 Հունվար 1

Մյունխեն

Հ.Գ. Վեպս ավարտած է[1]. կ՛ըսպասեմ պատասխանիդ, որ քանի օրեն ստանալու կը հուսամ:

17. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

99 I 5, Մյունխեն

Սիրելի՛ս, չարաթեն ավելի է վեպիս արտագրությունը ավարտած[1] քեզմե քարթի կ՛ըսպասեմ: Ինչպես կերևի՝ քու նամակ ուշացնելու հիվանդությունդ անբուժելի է. իզուր ժամանակ չի կորցնելու համար՝ ալ չըսպասեցի. վեպս այսօր փոստ ձգեցի ընկերության հասցեին: Իհարկե կը գրես ինծի քու կարծիքդ ալ, ընկերության որոշումն ալ, առանց ընկերության պաշտոնական պատասխանին կարևորություն տալու: Խնդրած եմ, որ վճարը առանց վերջնական տպագրության սպասելու առաջվընե ուղարկեն, չգիտեմ՝ պիտի ընդունվի, թե չէ: Գիտես, որ ամառվան հույսերուս մեկ խոշոր մասը այդ դումարի վրան եմ դրած, չատ ուրախ կը լինեի, եթե մինչ մայիս-հունիս ձեռքս հասներ: Ինչևէ: Բարևներս ու համբույր.

Լևոնդ

18. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս:

Եվրոպական ուսանողության ընդհանուր ժողովը, որու մասին քեզի գրած եմ[1] և որուն ես ալ մասնակցիլ կը ցանկամ, արդեն վերջնականապես որոշված է. կը կայանա Հայտելբերկ, մարտի 15/27-ին: Հոնկե ինծի համար խիստ հարմար կը լինի Ճըլանսայեն եկած ուսանողներուն հետ Փարիզ երթալ գոնե քանի մը չաբաթվան համար: Իհարկե եթե մինչև այդ՝ քեզմե դրական պատասխան ստանամ Եսի-

կարյանի Հավելված օժանդակութեան մասին: Եթե մինչև Մյունխենին մեկնելս, այսինքն ձեր հաշվով մարտի կեսերին մոտ, քեզմե որոշ պատասխան մը չառնեմ՝ մնացած միջոցներովս Ցրանսա անցնելու չեմ համարձակիր. և կ'ըսախպվիմ ուղղակի Շվայց անցնելու Օննիվիս մոտ մեկ-երկու ամսով, փոխանակ Փարիզեն վերջը հոն երթալու, ինչպես իմ ցանկութիւնս էր և է:

Այլև, ինչպես գիտես, մինչև այդ մարտի կեսերը ամենաուշը վստահ եմ քեզմե առանալու իշխանուհիի և Եոհիկարյանի վերջին ամսականները. կամ գոնե այդ երկուքեն մեկը: Եթե Փարիզ երթալս հաջողեցավ՝ իհարկե անմիջապես ձեռքս ավելի ստակ լինելու պահանջը մեծ է. եթե ոչ՝ երկուքեն մեկն ալ որ ուղարկես մինչև հոսկե հեռանալս, կրնամ կառավարվիր մինչև հաջորդ աւաքումդ: Ուրեմն ամենեն ուշը մինչև մարտի սկիզբը ձեր հաշվով ինծի պատասխան մը կը դրես, ինչ ալ որ լինի այդ պատասխանը. իմ ինչպես վարվիլս քու պատասխանեդ է կախված. չլինի թե քու հին բարի սովորութեամբ սպասես այնքան, մինչև որ ինծի դրական պատասխան մը տալ կարողանաս. հոստեղի պայմաններս այնպես են, որ ուշ եկած դրական պատասխանը ինծի շա՛տ քիչ կ'օգնե:

Նամակներս արդեն ստացած ես անշուշտ ամենքը իրենց ժամանակին, այնպես «unheimlech»[2] լռութիւն պահել գիտես, որ չի նայելով այսքան ժամանակվան փորձառութեանս, ակամա կ'երկմտիմ, միգուցե դրածներս ձեռքդ հասած չլինին:

«Դերասանուհին» անշուշտ ձեռքդ անցած է արդեն, դեռ ընկերութիւնեն լուր չունիմ. չգիտեմ արդյոք մինչև մայիս-հունիս հոնկե բան մը ստանալու հույսը կրնա՞մ ունենար. թե այդ ալ յուսախբ է:

Իմ կյանքս հիմա, սիրելի՛ս, ալիքի գոգն է, տեղատուութիւնը. ձմեռվան ամիսներու քիչ մը պետք եղած, ավելի լարված աշխատանքս ու մինակութիւնս ջիղեր ցնցեց նորեն քիչ մը. գիրք ըսած բանեն հիմա բառի բուն նշանակութեամբ կը զզվիմ. կարդալ չեմ կրնար, ուղղակի ֆիզիքապես չեմ կրնար. կարծես կ'ըսկսի ճնշվիլ: Խնդիրը ուրիշ է գրելու հետ. անհամար ծրագիրներ ունիմ վեպերու, թատերու մեծ ու փոքր. թատր մը սկսած եմ արդեն, մեկ-երկու արար գրած ալ եմ[3], բայց սոսկալած եղա ընդհատելու. ինչպես ըսի. ջղերս գրգռված են և ուժերս չարաչար գործածելն կը վախնամ. հիվանդ ուղեղեն առողջ բան ծնիլ չի կրնար. պետք չէ, որ ուղեղս հիվանդացնեմ. ավելի ապեկ է ուշ, քիչ,

բայց առողջ: Կյանքիս ընթացքը փոխելու պետք ունիմ. նո՛ր շրջանակ, նո՛ր մարդիկ, նո՛ր շրջան, նո՛ր աշխուժ. իմ կյանքիս մեջ ես արդեն ուրիշ անգամ ալ նկատած եմ, այնպես մեջեմեջ պահանջ մը ունիմ իմ վրաս ու շուրջս եղածը օձի չապիկին պես անդին նետելու, ինչ գնով ալ որ լինի. մանավանդ ա՛յս տեսակ շրջապատը, ինչպես այս ամեռվան իմ կյանքս էր. կատարյալ ճգնավորի կյանք, բա՛ց օդի ծարավ ունիմ ու չարժմա՛ն:

Գալով Եվրոպային ետ դառնալուս՝ դեռ հաստատ ոչինչ չգիտեմ. այսքանը պարզ է, որ Պոլիս երթալս ո՛չ խորհուրդ ունի, ո՛չ ալ խելացնություն է. նորեն ամենեն հավանականը Կովկասն է. որու մասին արդեն քեզի գրած եմ և կ'ըսպասեմ խորհուրդներուդ:

Սրտագին բարևներս քովիններուդ ու ջերմ համբույրներս ալ քեզի. Լևոնդ

Հասցես է. (ուրեմն մինչ մարտ 15/27)
Zouisen str. 68/II r.

Մյունխեն
II, 11, 99

19. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<Մինչև մարտի 25>[1]

Սիրելի՛ Ավետիք, նամակդ ինծի չատ ուրախացուց[2]*. կատարելապես կ'ըմբռնեմ քու արդի հոգեկան վիճակդ, ճնշումդ, մենակությունդ և Եվրոպայի ծարավդ. դուն կը նախանձիս ինծի իմ եվրոպական կյանքի մեջ լինելուս, և ես կը նախանձիմ քեզի, որ այնքան մոտ ապրած ես ժողովուրդին, որը այնքան մոտեն կը ճանչնաս և որ այնպես մոտիկ չփում ունիս մեր արդի հասարակական ձգտումներուն ու ոգևորության հետ: Այսպե՛ս է. դժգոհ են ամենքը իրենց ունեցածով, իմ բոլոր հույսն է դարձիս որևէ կերպով ժողովուրդին մոտիկ լինելու դյուրություն ունենամ. թե ինչքան պիտի հաջողի այդ ինծի՝ կը տեսնենք: Բայց իմ եսը հիմա մեկդի, քու մասին գլխավորաբար գրել կ'ուզեմ: Նախ սրտանց կը չնորհավորեմ, որ ինքդ փիլիսոփաներեն ձեռք ես վերցուցեր*[3]*. միայն ինչպես գերմանացիք կ'ըսեն՝ չլինի թե երեխան ալ իր*

վաննայի ջուրին հետ դուրս թափես: Լուրջ բնագիտական և ընկերա-
պիտական գրքերու ընթերցումը, հավատա՛ ինծի, ամենաէական բանն է
նույնիսկ ամենազուտ արտիստի համար, եթե իր ժամանակի ու հա-
յացքներու բարձրութեան վրա մնալ և դեռ ուրիշներն ալ դնալի այդ
բարձրութիւնը քաշել կ'ուզե. իսկ թե ամեն գրողի մեջ գիտակից թե
անգիտակից այդ ձգտումը կա՝ կասկած չի վերցներ: Ես ալ հիմա
պիսավորաբար ընկերական գիտութիւններով եմ զբաղված, մանա-
վանդ սոցիալ-դեմոկրատին վերջին ժամանակներն ինծի սկսած է լուրջ
հետաքրքրել: Գալով գրականութեան, սիրելի՛ս, գրագետի համար ամե-
նաէականը երկերու և անոնց քննադատութիւններու ընթերցումն է,
բայց դժբաղդաբար թե՛ երկերը և թե՛ քննադատութիւնները որպես
ցան անթիվ են[4], որ երկար հանգիստ ու տարիներու աշխատանք կ'ու-
զե. այդ կյանքի աշխատանք է, ո՛չ թե նախապատրաստական, ինչպես
դուն կը կարծես գուցե, և ինչպես ես ալ կը կարծեի, քիչիկ մը մոտեն
ծանոթանալ ուզելուդ պես սարսափած կը մնաս նյութի առատութեան,
բազմակողմանիութեան վրա, որը ստիպված ես աչքե անցընելու իբրև
քու գործդ. պետք է կարդալ սիտանին և քեզի հետաքրքրողը. բայց
ավելի հաճախ հիմար, հինցած և քեզի չհետաքրքրող բաներ. ճար չի
կա. բայի այդ՝ թեխնիքի կողմեն խիստ օգտակար է այդ, այլև մտածել
ու քննադատել կը սորվեցնե: Բայց, սիրելի՛ս, ես չեղեցա նորեն իմ ըն-
ելիքես. այս տեսակ բաներու մասին արդեն նամակով գրելը խելացիու-
թյուն չէ. կա՛մ ոչինչ չես կրնար ըսեր, կա՛մ գրածդ բեֆերատ դուրս
կու գա, երկուքն ալ անհամ, բայց կը ներես անշուշտ, որովհետև հան-
ցանքը քովդ է: Հա՛, ես այս ըսել կ'ուզեի, մեկ կամ երկու գրքով որևէ
գրականութեան ծանոթանալը խելքեդ դուրս հանե. քու հարցուցած
ընդհ. գրականութեան գրքեր ամեն չափու և հասակի պատկերազարդ
ու անպատկեր բավական կան, բայց ատոնցմե ոչ մեկը քեզի չի կրնար
պոհայներ. նախ՝ այդ գրքերուն մեջ նորագույն գրածներու մասին կա՛մ
բնավ խոսք չի կա, կա՛մ միայն անուն է տված. իսկ անցածի մասին ալ
այդ գրքերը կրնան իբրև ընդհանուր ծանոթութեան, ընդհանուր հա-
յացքի համար պետք գալ և մեծ մասով միակողմանի ըմբռնումով
գրված բաներ են. քեզի կ'ուղարկեմ միասին քաթալոկ մը, ուր այդ
կարգի ինծի քիչ-միչ հայտնի գրքերու ցանկը գծած եմ: Ավելի բանի
պետք են իհարկե որոշյալ ազգի մը կամ մանավանդ որոշյալ շրջանի մը
մասին գրված պատմութիւնները, այլև ազատ էջերը այս կամ

այն հեղինակի կամ երկի. առանք արժե կարդալ, թեև առաջվընե պետք է համբերության խոշոր պարկ մը միասին վերցնելը, որովհետև վատահորեն կարդացածիդ երեք քառորդը կա՛մ մեզ համար անհետաքրքիր է և կա՛մ ինքնին անհետաքրքիր մանրամասն բաներ են, բայց ինչպես վերն ալ ըսի, ուրիշ ճար չի կա: Բայց այդ բոլորը ո՛չ թե կարդալ, այլ աչքե անցընելու համար անգամ ահագին ժամանակ պետք է, եթե մարդ ինքըզինքը վերջնականապես ձանձրացնել չուզեր. այն ալ իհարկե ենթադրելով, որ գրատուն, գրքեր և այլն բոլոր հարմարությունները մարդ ունենա, ինչպես որ հոս է. ոչ թե ինչպես մեր երանելի աշխարհը, ուր գրեթե ամեն բան մարդ ստիպված է գնելու, գնե՛լ... ավելի չուտ քնել: Brandes-ի[5] պես տաք, աշխուժ գրված բնականպատմական բաներ չատ հազիվ կարելի է գտնել: Գալով բուն երկերուն, որոնց ընթերցումը մեզի համար իհարկե ամենաէականն է, քեզի ինչ գրեմ, սիրելի՛ս, նախ՝ ֆրանսական, անգլիական, իտալական և այլն հեղինակները ինձի ալ մոտեն ծանոթ չեն չնորհքով, ժամանակ չեմ ունեցած՝ մեկ, երկրորդն ալ՝ թողած եմ հետզհետե իրենց բնագիրներուն վրա կարդալու համար, ո՛չ թե թարգմանությունը: Այս տարիվիսին մեջ[6], որ ես հոս եմ, ավելի ծանոթացած եմ գերմանական և հյուսիսային գրականությանը. բայց հոտ ալ քեզի չատ քիչ ծանոթություն մատուցանել կրնամ, որովհետև ես գլխավորապես վիպականթատերական երկերու վրա եմ ուշքս կեդրոնացուցած, իսկ դուն քնարականը իմանալ կ'ուզես: Գերմանական քնարական բանաստեղծուհինեն, քեզի խոստովանիմ, ոչինչ կարդացած չեմ և ոչինչ ալ կարդալու միտք չունիմ, չգիտեմ, ինձի չհետաքրքրեց: Քնարական գրված հիմա ու հիմա միայն հայերեն ուտանավորները ինձի համար հետաքրքրություն ունի. եվրոպական քնարերգությունը երկար ժամանակ ձեռք առած չլինելուս կարելի է սիրտս պաղեր է. բայց ո՞ր մեկին մարդ հասնի. մանավանդ որ անսահման չափով անպետք ու հիմար գրվածներ կան, կամ առնվազն խիստ երկրորդական, գոնե իմ բաղդես ինչ որ ես կարդացեր եմ, տափակ բաներ են եղեր. մարդ վերջապես կը նախապաշարի: Քանի որ քեզի հարցը մասնավորապես կը հետաքրքրե, ուղարկած քաթալոկիս մեջ կրնաս գտնել Poetik-ները[7], բայց կը կրկնեմ, չկարծեմ որ քեզի լրջորեն գրավեն կամ օգնեն: - Հաուպտմանի «Սուզված զանգը»[8] իր ամենաբանաստեղծական գրվածներեն է. ձևը հեքիաթի ու րոմանթիկ հագուստով, որով և չատ սիրված գերմանացինե-

բեն, մանավանդ von dem grossen publicum[9]: Բայց իբրև ժամանակակից գեղարվեստական երկ չատ մեծ արժեք չունի. նախ՝ պետք է չատ մոտեն ծանոթ լինել հեղինակի անձնական կյանքին՝ գրվածքի չատ տեղերը հասկընալու համար, և երկրորդ՝ ընդհանրապես ես չեմ սիրեր այդ բոմանթիկ ափսարաթը ու հեքիաթի առասպելական աշխարհները, երբ այդ բոլորը իբրև դիմակ մըն է միայն ժամանակակից կյանք, հայացքներ ու խնդիրներ վերլուծելու համար. հեքիաթը ինծի համար միայն իբրև ժողովուրդի առողջ, կենդանի, իսկական բանաստեղծութեան արժեք ունի. իսկ ընկերական և անհատական խնդիրներ վերլուծելու ատեն ավելի հասուն ու ժամանակակից գրական ձևեր կան. ինչ կարիք կա այդ գույնզգույն անբնականութիւններուն: Ջուտերմանի «Հովհաննեսը»[10] փոմփեոյ գրված բան է, էֆեկտի վրա հաշված, ինչպես ընդհանրապես իր գրվածներու մեծագույն մասը. թուքով փակցուցած տեղեր, հոգեբանական անկարելիութիւններ, Սարդուական փիքանթութիւններ[11] միայն բեմական հաջող էֆեկտի համար. ես դժբաղդաբար բեմի վրա տեսած չեմ, իսկ ընթերցմանս տպավորութիւնը չա՛ռ միջակ է. տեղ-տեղ այնպես, կարծես իսկական ստեղծող ուժի հետ գործ ունիս, բայց այնպես, տեղ-տեղ միայն, զգուշութեամբ կոկած, տաշած, սրած ապակիի կը նմանի, որ լուսերու որոշյալ դիրքի մեջ հիշտ ադամանդի պես կը փայլփլի. ա՛յս ալ իհարկե մեծ արվեստ մըն է, բայց ապակիի արվեստ: Գու Dörmoun-ը գտնել չի կրցա. ուզեցի կարդամ քեզի որոշ տեղեկութիւն մը տալու համար, երևի անունը սխալ պիտես կամ սխալ ես ինծի գրած:

- Ինծի համար չատ հասկընալի է, որ իմ գրածներես առաջին երկուքը քեզի դուր է եկած[12]. ատոր գլխավոր պատճառը...

20. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Անգիր Ստեփանոս:

Բարի հրեշտակիս պես հասար նորեն վերջի վայրկյանին. գու լռելուդ վարժված և պիտնալով, որ սիրտ գրես միայն այն ժամանակ, երբ խոսքերե ավելի գրական բան մը ունենաս նամակիդ հետ ինծի ուղարկելիք՝ ես քու չի պատասխանելդ վերագրած էի անհաջողութեան. և ատոր համեմատ ալ գործերս կարգադրեր [էի]: Վարշավայեն խնդրե-

ցի մնացած բոլոր ամսականներս 180 րուբլիի չափ և այդ ստակի մեծագույն մասովը հոս հաշիվներս մաքրելով՝ ձեռքս մնացած քիչ մը ստակովը կը պատրաստվեի վազը Հայտելբերգ մեկնելու, ուրկե ծայրը ծայրին հասցնելով անցնելու էի Օննիկիս մոտը քեզմե լուրի սպասելու և մինչև վերադարձս մեկ-երկու ամիս գոնե հոն ֆրանսերենի կորատաս վերստին ձեռք բերելու ջանքը ընելու: Եվ ահա եկավ նամակդ. իր 60 րուբլիին, չոտով գալիք երկրորդ 60 րուբլիին, նորեն 6 ամսվա օժանդակութեան և որ ինծի համար ամենեն ավելի ուրախացուցիչն էր, բացեն ալ դրպանի ծախք ճարելու սիրուն ու հրապուրիչ խոստումովդ: Ես այլևս երկար չեմ մտածեր. և Հայտելբերգեն կ'անցնիմ Փարիզ, թեև հազիվ երկու չաբաթի չափ հերիք կ'ընե հոն ձեռքիս ստակը, բայց միևնույն է. ինչ կը լինի՝ լինի. երևի կը հասցնես ետևեն: Արդ, սիրելի՛ս, եթե մինչև այս նամակս առնելդ իմ Մյունխենի հասցեով վող կամ նամակ ուղարկած ես ինծի՝ անմիջապես քարթ մը ուղարկե հետևյալ հասցեով՝ Leon Segbossian, Etoelioudt poste restante, Paris[1]. բայց ուղարկե, որ գիտնամ և ատոր համեմատ վարվիմ. հոս հասցեն կը գրեմ իհարկե, որ ետևես ուղարկես. իսկ այս նամակես վերջը մինչև նոր հասցե տալս վերի գրած poste restante-ով կ'ուղարկես: Այս դրամական մասը, հոգի՛ս, որու մասին այլևս քեզմե չնորհակալություն չեմ հայտներ. սահման մը կա, ուրկե անդին չնորհակալություն բառը նուկնիսկ ծիծաղելի կը հնչե. եթե քու այս բոլոր հոգածության փոխարեն իմ վրաս գրած հույսերուդ մեկ մասը գոնե արդարացնեմ՝ այդ կը լինի իմ ամենեն դրական չնորհակալությունս ու երախտիքս քեզի դեմ: Բայց այս առիթով նկատեմ պիտի քեզի, որ հանցանքը իմս չէ, եթե դուն ինծմե իմ ուժերես վեր ակնկալություններ ունիս. ես քեզի ու մեր գրականությանը տալ կրնամ միայն այն, ինչ որ կրնամ: Քու ինծմե արտակարգ մեծ բաներ սպասելդ հչմարիտ չա՞տ ձախորդ բան է ինծի համար, որովհետև քու իտեալներուդ քովը իմ ուժերուս իրական արտադրությունը հավանորեն թզուկ պիտի երևա, ու գին չի պիտի դնես: Ստեփա՛նս, ես մեկ բան միայն հաստատ գիտեմ, որ ես անպետք մեկը չեմ լինիր, և որ դուն երբեք չես զղջար այդպես սրտանց ինծի ձեռք մեկնած լինելուդ համար. իսկ թե ի՞նչ կրնամ ըներ և ինչպե՞ս, այդ արդեն կախված է իմ բնավորությանս, կրթությանս ու ներկա և ապագա շրջապատիս ազդեցության խառնուրդեն. ի՞նչ խոսիմ բանի մը վրա,

որ ո՛չ ինքս հաստատ նախատեսել կրնամ, ո՛չ ալ, էապես ասած, փոխել:

Կը ցանկաս, որ ֆրանսական գրականութիւնը յուրացուցած վերադառնամ, բայց այդ անկարելիութիւն է. ոչ միայն 2-3 ամսվա, այլ երկու-երեք տասնամեակի գործ. այդ իմ կյանքիս աշխատանքն է: Մեկ ալ ինծի կը թվի, որ քիչ մը պետք եղածեն ավելի կարևորութիւն կուտաս արդի ֆրանսական գրականութեան և ընդհանրապես գրականութեան պատմութեան. այդ ալ իտեալական գիծ մըն է. մեծ բանաստեղծ կամ վիպասան լինելու համար մի՛ կարծիր, որ բոլոր անցած եղածչեղած գրականութիւնը կարդացած լինելու է. մեծ բանաստեղծները սովորաբար մեկ կամ երկու գլխավոր հեղինակ ունին իրենց Liebliny[2], ուրկե դուրս մնացածը ընդհանուր կերպով միայն կը հետաքրքրէ: Եվ այն ալ ըսեմ, որ վեպ գրողը շատ վեպ կարդալու տեսակ մը հակակրանք ունի. չուտով կը ձանձրանա. գոնե ես այդպես եմ. մեկ-երկու լավ երկ ծանր ու անալիզով կարդալ՝ իմ սիրած աշխատութիւններես է. բայց ոչ մեկ կերպով չեմ կրնար ինքզինքս ստիպել **ծանոթ լինելու համար** անգամ մը աչքե անցընել այն սոսկալի գրքերու դիզերը. գրկ. պատմութեան փրոֆեսորի գործն է այդ, բայց ո՛չ ստեղծելու հավակնոտութիւն ունեցողի: Հավատա՛ ինծի, Ստեփանս, ինծի պակսածը կյանքի սեղմ չվումը, մեր կյանքի մոտիվ ծանոթութիւնն է. ա՛յդ ես ունենալ կ'ուզեի. ա՛յդ ամենեն առաջ: Իսկ թե՛ ֆրանսական և թե՛ մյուս գրականութիւններու չահակիրներուն մոտեն ծանոթանալը **կյանքի ուսումնասիրութեան** հետ համեմատած երկրորդական է, թեև երբեք չեմ արհամարհեր, չլինի թե ինծի սխալ հասկընաս. կարդացած եմ, կը կարդամ և կարդալու եմ ամբողջ կյանքս, ուզեմ-չուզեմ: Ինչևէ, նամակս նորեն վախնամ շատ երկարի, իսկ ես այսօր հազար մանրամունր գործեր ունիմ. երկար կը խոսինք այդ բոլորի մասին քանի մը ամիս վերջը միասին: Որովհետև Կովկաս դարձս արդեն գրեթե հաստատ է. Պոլիս ո՛չ մեկ իմաստ չունի. հոն կյանքը ինծի կը չորցնե միայն և նորեն ինծի ճամբա կը հանե. ես հոն ուզեմ-չուզեմ վարժապետ պիտի լինիմ. և դժբաղդաբար մը ունիմ, որ հանճն առած գործս հաճելանցի կատարել չեմ կրնար. իսկ իմ ուժերս մանկավարժական ասպարեզի վրա գործադրելու ա՛լ հրապույր չեմ գտներ, մանավանդ մեր արդի պայմաններուն մեջ, ուր չի կարելի ընել այն, ինչ մարդ ընել կը ցանկա: Ես մանկավարժութեամբ ոգևորված էի, բայց իմ մանկավարժութիւնս

բոլորվին ուրիշ տեսակ բան էր իմ ծրագիրներուս մեջ պիտութեան թարմ հոսանքներու ազդեցութեան տակ. իսկ այդ ծրագիրներու ազատ նմանութիւն մը իրականացնել անկարելի է. գուցե ապագային նորեն իմ լուսաս ձգեմ այդ գործին մեջն ալ, բայց հիմա քանի երիտասարդ եմ՝ ուժերս կը ցանկամ գրականութեան նվիրեմ. և միայն բացարձակապես արտաքին կարիքը ինծի պիտի ստիպէ, եթե այդ գործին հիմա ձեռնարկելու հարկադրվիմ: Ես կը մտածեմ դրամիս ներած չափովը երկու կամ քիչ մը ավելի ամիս մնալ Փարիզ, հոնկե կ՝անցնիմ Զվիցերիա (ուր կյանքը շատ ավելի աժան է), մեկ-երկու ամիս ալ հոն կը մնամ: Գլխավոր ջանքս իհարկե ֆրանսերենի հատկացնելով. բայց ինծի համար անկեղծ խոսելով՝ շատ ավելի հրապուրիչ ու քաշողը ինքը րոմանական ժողովուրդի կյանքն է ու քաղաքակրթութիւնը: Հոնկե երևի օգոստոսի մեջ Եվրոպային հրաժեշտ կու տամ. ու մնացածը հոտ կը խոսինք: Հիմա այսքանը ըսեմ, որ ինծի համար անհրաժեշտ է անկախ լինելս. ինչ գնով ալ որ լինի, ես կ՝ուզեմ որևէ պաշտոն կամ գործ ունենալ. ինչ գործ ալ որ լինի, բավական է քիչ-շատ մարդավարի ապրուստի միջոց տա ինծի ու բավականաչափ ազատ ժամանակ գրական աշխատութիւններուս համար: Այս աչքի առաջ ունեցիր, սիրելի՛ս. և եթե հո՛տ ալ ինծի օգնել կրնաս՝ ըրե՛ ձեռքեդ եկածը, այս նույնը գրած եմ և Արամեանցին, թեև ան խիստ անճարակ է այդ կարգի խնդիրներու մեջ:

Վրաս բարկացեր ես «Դերասանուհիի» պատմութեան համար ու կ՝ըսես, թե ներելու չես նախապես «Մասիսի» մեջ տպել տալս: Բայց, սիրելի՛ս, ինչպե՞ս մերժեմ ընկերոջ մը, որու հետ տարիներով միասին գործել ենք երազեր ու խոսեր, որը հոսկե մեկնելուն վեպը ձեռքս ավարտած տեսեր է, և որը Պոլիս բոլորովին միայնակ առանց ուժերու, առանց ընկերներու, բոլորովին անփորձ նետվեր է լուրջ գործ մը տեսնելու ջանքերուն մեջ ու նամակ նամակի վրա կը տեղացնե վրաս վեպս հասցնելու այն աստիճան վստահ, որ իրեն մերժելու չեմ, որ իրեն մերժել չեմ կրնար. և ինչպե՞ս պանայի իրեն այդ օգնութիւնը, որովհետև իր ըսելովը այդ լուրջ օգնութիւն մըն է իրեն, և կը հավատամ իրեն, քանի որ Պոլիս փոքրիկ անուն մը ունիմ արդեն: Հիմա կը ներե՞ս, թե՞ չէ: Գիտեմ որ դուն ալ իրավունք ունիս. վեպս դեռ սկիզբեն խոստացած էի՛ քեզի. բայց նախ այն ատեն երկու ավելի ընդարձակ ծրագիր ուներ, քան թե հիմա դուրս եկավ, երկրորդ՝ ես իհարկե չգիտեի, որ «Մասիսի»

մեջ տպված լինելուս այդքան մեծ կարևորություն են տալու ընկերության մեծապատիվ անդամները. ես կը կարծեի, որ չատ-չատ վճարը պիտի կրճատեն: Իսկ ինչ անձնապես քեզի կը վերաբերի, հոգդ մի՛ ըներ, սիրելի՛ս, կը ձանձրանաս օր մը վեպերես. մի՛ վախնար, դերասանուհիս վերջին դերակատարը չէ իմ գրականությանս բեմին վրա. խոշոր և գուցե նույնիսկ ամբարտավան ծրագիրներ ունիմ գլխուս մեջը, ատոնցմե կ'ընտրես քու ուզածդ քեզի համար:

Իմ բարի սովորությամբ այսքան երկար իմ մասիս խոսելես վերջը՝ երկու բառ ալ քու մասիդ, բայց երկու սրտե բղխած բառ: Հա՛, անչուշտ կ'ներթադրես, որ Պուչկինդ կ'ակնարկեմ[3]. սրտանց հաջողություն, և խիստ հետաքրքիր եմ արդյունքը տեսնելու. «Ազգ Հանդեսի» մեջ ալ գրախոսական մը ունիս[4], որը նորեն մինչոց չեմ ունեցած տեսնելու. կը հուսամ ժրընև գտնեմ, կամ կարելի է դարձիս: Sonst[5] կը հուսամ ուրախ ես, առողջ ու քու սովորական ոգևորությամբ: Կը համբուրեմ քեզի պինդ-պինդ, կը բարևեմ տիկինդ ու փոքրիկներդ:

Վերջին համբույր մըն ալ Մյունխենեն.

Լևոն Սեդրոսյան*

Մյունխեն
99 III 25

21. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Անգլին Ստեփանս, Թավրատական Հրեային ցուցը նորեն ձեռք առի[1], որ երկու տարին իվեր Մյունխեն սենյակիս անկյունը անդարդ կը քնանար: Երեք չաբաթե իվեր արդեն չարունակ ոտքի վրա եմ: Հայտելբերգի ուսանողական ժողովի (որուն մասնակցելուս բոլոր սրտով ուրախ [եմ] և որը վրաս չա՛տ սիրուն տպավորություն ըրավ), այլև ընդհանրապես արդի տեսածիս ու լսածիս մասին քեզի հետ երկար կը խոսինք: Դուն գիտես, սիրելի՛ս, ես նամակներս օբեկտիվ գրել չեմ կրնար. ես կը գրեմ միայն այն, ինչ որ գրած վայրկյանիս կ'ըղձամ կամ կը զատեմ. ավելի չիտակ է ըսել ինչպես որ. մինչ դուն ինծմե առարկայական հայացք ու նկարագրություն կ'ըսպասես անշուշտ. զի՜հ, սպասե երկու-երեք ամիս ալ ու իսկական առարկան կ'ունենաս քու դեմդ: Ա՜հ, Ստեփա՛ն, եթե գիտնաս ի՛նչ կարոտով ու անձկությամբ

վայրկյան մը առաջ մեր կյանքին մոտեն չփվելու, ընդհանրապես այդ ապեղ-կոպիտ-վայրի-չոր ու չգիտեմ ինչ անվանված կյանքին մեջը լինելու ու անմիջապես սուր տպավորություններ ստանալու ծարավը կ'ըզգամ մեջս. այո՛, հո՛ս, նույնիսկ հոս, աշխարհքիս մայրաքաղաքը կոչվող Փարիզին մեջ, ուր կյանքը հիվանդոտ պերագրգռումով մը կ'եռա ամեն անկյուն, ամեն փողոց. այո՛, նույնիսկ հոս. ինչիս պետք այդ կյանքը, որուն վրա մեկ կողմ քաշված կը նայիմ. որուն մեջը չեմ, որուն մեջը լինել չեմ կրնար, որ ինծի փիլիսոփայաբար միայն կը հետաքրքրե, բայց ո՛չ ուղղակի առանց դատողության, օրկանական կապի մը անմիջականությամբ, որուն դուն ալ կապված լինիս գործունեության, հույսերու, կռիվներու, արգելքներու, թշվառություններու, հույզերու, ոգևորության ընդհանուր թելերով: Ես մեր կյանքեն միշտ հեռու եմ ապրած, իսկ եվրոպական կյանքի միշտ ամենաիտեալական, մաքուր, հանգիստ ու սիրուն կողմերուն եմ ես մոտ եղած, մասամբ իմ ուսանողի դիրքիս պատճառով, մասամբ շրջապատող պատահականությամբ և գլխավորաբար իմ բնածին՝ ազատ ու ցածուբեթնե, խեղճ ու տգեղութենե խուսափելու պահանջե մը մղված. բնավորության պահանջե մը, կարելի է ըսել ֆիզիքական, բնախոսական պահանջե մը. և այդ բոլորի հետևանքը իմ լավատեսությունս ու իտեալականությունս, բավական խոշոր փորցիոն մը վերացականությամբ. և ահա՛ բեակցիոնն է, որ պղովիը կը բարձրացնե հիմա. կ'ուզեմ դրական դառնամ, կ'ուզեմ դրականության մեջ լինիմ, կ'ուզեմ կյանքի իսկության մոտիկ ապրիմ. բայց պիտի կրնա՞մ, ահա՛ համբավավոր բայցը... Սակայն, սիրելի՛ս, պետք է խոստովանիմ, որ արդեն իմ մեջս չնորհքով հիվանդություն մը դարձեր է քեզի գրած նամակներս իմ հոգեկան հիմարություններովս լեցնելը: Այս անգամ միտքս դրեր էի Փարիզեն զատ քեզի ուրիշ բանի մասին չխոսիմ, բայց ահա՛ մոռացության վայրկյան մը, և երեք երեսներ լեցված են արդեն. մեղա՛, ու անցնիմ չիտակ գործին:

Երկու շաբաթ է, որ Փարիզ եմ. առաջին տպավորությունս ոչինչ եղավ. քիչ մը ավելի հարավի, արևելքի գույն մը ունի վրան, քան գերմանականը, իր ախորժ ու անախորժ կողմերով. այդ էր առաջին իմ աչքին զարնողը. մեկ ալ գեղարվեստի զգացումին առատությունը, որու մասին սակայն արդեն այնքան լսած էի, որ ինծի նոր չեկավ: Փարիզ սիրուն քաղաք է, փարթամ, մի՞թե ըսելը պետք է: Եվ ես հիմա ամբողջապես թաղված եմ իր ուսումնասիրության մեջ «Ուղեցույցը»

ձեռքս. իհարկե արտաքին ուսումնասիրության: Քաղաքի մը կամ ժողովուրդի մը ներքին կյանքը ո՛չ թե ուսումնասիրել, այլ քիչ-շատ ծանոթանալու համար այդ ժողովրդին հետ տարիներով ապրել ու չվման մեջ լինելու է. և գալես իվեր քանի մը անգամ թատրոն եղա, Հայոնի ուժերը տեսնել կ'ուզեմ, Դրայֆուսական ժողովի մը ներկա եղա[2], ուր սիրուն դիտողություններ կարելի է ընել, միչտ մյուզեներն եմ, և իմչ մյուզեներ, և օրի ներածին պես բուվարներն ու հրապարակները. օրի ներածին պես կ'ըսեմ, որովհետև չես կրնար երևակայել, թե ինչ գարշելի օր է հոս հիմա իմ բաղդես. բանաստեղծություն չի կարծես, եթե ըսեմ, որ երկու ժամուն մեջ չորս անգամ պայծառ արև կը ծագի, երեք անգամ անձրև կու գա, և անգամ մըն ալ կարկտահատն անձրև. չափազանց շատ էնֆլյուենցա կա քաղաքին մեջ, ես ալ հարկս վճարեցի, այս երեք օր է հիվանդ եմ. վաղը կը կարծեմ նորեն սլիտի կրնամ սենյակես դուրս ելնել, որը ինծի բանդի պես կու գա: Ես Փարիզ երկար չեմ մնալու և ամենաառաջին պատճառը լեզվի խնդիրն է. մի խնդար, ֆրանսերեն խոսելու միջոց ունենալու համար ստիպված եմ Փարիզեն հեռանալու. էականը ընտանիքի մը մեջ լինելն է. իսկ հոս ընտանիքի մեջ ապրուստը ամենևին իմ գրպանիս համեմատ չեն կարգադրած. իսկ դուրսը որևէ կերպ կապ գտնել շատ անհարմար է մանավանդ մեկ-երկու ամիս մնացողի մը համար, նորեն ծախք կուզե (ուսուցել). վերջապես գործնական չէ: Մյուս կողմեն առանց այն ալ խիստ ծախքեր ընելու ստիպված է մարդ, իսկ ես բոլոր ստակս հոս հատեցնել չէի ուզեր. ինչպես գրած եմ, դեռ կը ցանկայի Ժվիցերիա, Վիեննա, եթե հնար է նաև Վենետիկ անգամ մը տեսնել. բայց այս երազները հիմա մեկ կողմ: Երկրորդ 60 րուբլին ստացա քեզմե, սիրելի՛ս, որով ես հիմա հոս կրնամ դեռ ամիս մը դառնալ. և այդչափ ալ կը մնամ. մինչև այն ատեն երևի կ'ուղարկես ինծի քու համբավավոր 100 րուբլիդ, կամ կարելի է ստանամ Վարշավային, ուրկե նույնպես հավելվածի մը հույսը ունիմ: Ատով կ'անցնիմ Ժվիցերիա ու կ'աշխատիմ քիչ-շատ կրթված ընտանիքի մը մեջ վանսիոն մտնելու: Հոս մեծ մասով քանի մը հին կամ նոր ծանոթացած ընկերներու հետ սովորաբար. Հոս ուսանողությունը ուրիշ տեսակի բան է: Հոս է և բժիշկ Բաբայանը[3] կնոջն ու օրիորդներուն հետ. մեկ-երկու անգամ այցելեցի իրենց, բժիշկը կնոջ հետ կը վերադառնա շուտով, իսկ օրիորդները կը մնան դեռ:

Կ'ըշտապեմ վերջացնելու, Ստեփանոս, կ'ըսպասեմ անհամբեր

այն «երկար նամակին», որ 100 րուբլիին հետ միասին ուղարկելու ես. այդ իրենէ բաղդավոր հարյուր րուբլիանոց է լինելու ինձի համար. $8^1/_2$ ամիսն իվեր խոստացված նամակդ իրեն հետ միասին պիտի գա: Բայց վերջին վայրկյանին նորեն միտքդ չի փոխես և նորեն չի հետաձգես:

Դե՛, սիրալիր բարևներս քովինեներուդ ու համբույրս քեզի:

Լևոնդ .

Փարիզ
99 ապրիլ 16

Հասցես է.

Leon Segbossian
6, Place de l'Odeon, 6
Gari

Հ.Գ. Եթե նույնիսկ դրամ ու երկար նամակ չի կրնաս մինչև ամիս մը ինձի հասցնել, գոնե երկու տողով քու մասիդ բան մը գրե ինձի: Ես հոսկե մեկնելես առաջ կը գրեմ քեզի նորեն:

22.ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Անգիրն Ստեփանս:

Վաղը Փարիզեն կը մեկնիմ և այս քանի մը տողերովս վերջին բարևս կ'ուղարկեմ քեզի ֆրանսական հողեն: Մանրամասնութիւնները ապագա բերանացի պատմվածքի մը թողնելով՝ այսքանը միայն ըսեմ հիմա, որ Փարիզեն չատ քիչ ոգևորվեցա. իմ տեղս չէ՛. և հիմա տեսակ մը ուրախութեամբ է, որ կը հեռանամ, մանավանդ Հռենոսի ու գվիցերիական լեռներու գեղանկարները արդեն՝ աչքիս դեմը կեցած ինձի նշան կ'ընեն: Բնութի՛ւնը, ահա՛ ուր կը ձգտի հոգիս. քաղաքի աղմուկին մեջ ես օտար կ'ըզգամ ինձի. այն ալ Փարիզի պես ծով քաղաքի մը ահեղ ժխորին մեջ. ահեղ ու օտար, ուրկե ես բոլորվին կտրված եմ: Փարիզը ինձի համար աննման է իր գեղարվեստականութեամբը. ա՛յդ է միայն, որ ինձի գրավեց, այլև կը կարծեմ օգուտ մը տվավ:

Հոս հանդիպեցա իմ նախորդ Լայբցիկի ընկերներես մեկուն. հիմա անոր հետ միասին պիտի իջնինք Գվիցերիա, բայց նախապես

Բրյուսել Հանդիպելեն վերջը և Հռենոսի վրայով, որը ինչպես դիտես իմ վաղեմի ցանկութիւններես մեկն է եղած:

Գուցե զարմանաս, թե այս բոլոր ծախքերուն համար դրամս ուրկե է. նախ՝ պարոն Զուրաբյանին[1] խնդրած էի ավելորդ եռամսյակ մը, որը ուղարկեց իր սովորական կատարյալ պարզութեյամբը, որու փոխարեն ինքս ալ չդիտեմ ճշմարիտ ինչպես չնորհակալ լինիմ այդ մարդուն. երկրորդ ալ՝ տարօրինակ հոգեկան դրութեյան մը մեջն եմ. եռևը մտածելու հաշիվս կորսնցուցած եմ բոլորովին. մեկ կողմեն վերջը չի զղջալու համար՝ հիմակվան ձեռքս եղած հարմարութեյուններեն օգտված չլինելուս համար, մյուս կողմեն ալ, անկեղծ խոսելով, հույսս քիչ մը քու վրադ դրած: Ուղարկած 45 բուբլիդ ստացած եմ և ճիշտ ալ ժամանակին, ձեռքս բնավ ստակ չի կար այն օրերը. բայց այդ նամակովդ դուն ինքզինքդ ալ գերազանցեցիր. քեզմե վերջապես լուր մը առնելու ջերմ ցանկութեյամբը կը բանամ ծրարը, որուն մեջեն դրամաթուղթերը միայն ելան, որոնք ոսկայն քու մասին ինծի ոչինչ չըսին. դրամի փոխարեն չատ չնորհակալ եմ, բայց մեջը գոնե քեզմե տող մը չի գտնելս, պիտի խոստովանիմ, ինծի ծանր եկավ, ինչևէ: Եթե մինչև քեզի նոր հասցե ուղարկելս նամակ կամ դրամ ուղարկել ուզես ինծի, ուղարկե հետևյալ հասցեով.

Geneve, Mr. T. Sissagian

Roseraie, 26, Geneve, Suisse

(Հանձնել Սեդրոյանին)

Եվ առայժմ ընդունե՛ սրտագին բարևներս, որոնցմե բաժին կը հանես նաև տիկնոջ ու պզտիկներուդ: Ջերմ համբույրներով՝ Լևոնդ

99 V 29

Փարիզ *«Դերասանուհիի» խնդիրը ի՞նչ եղավ:*

23. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Հունիսի սկիզբ>[1]

Prosit![2]

Վե՛րջապես. վերջապես կրցա Օննիկի հետ զարեջուր մը խմել կենացդ: Տիկնո՛ջ ու քո՛ւ կենացդ, բարևներս ու համբույր:

Prosit! Լևոն[3]

24. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Հուլիսի սկիզբ>[1]

Սիրելի՛ Ստեփանս, բարևներ քեզի ու Համբույր՝ երկու նավակ լեցուն՝ ժընևի լճի ջրծուռնքեն[2]*: Երեք չաբաթը անցավ, որ նստած եմ հոս Օննիկիս մոտ անգործ, անփող ու աննպատակ: Կ'ըսպասեմ քեզմե լուրի ու դրամի. օգոստոսի վերջերը տոպրակս կը կապեմ ու դեպի Կովկաս. դրե՛, որ դրեմ.* *Լևոնդ*[3]

25. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

99 Հուլիս 29
ժընև

Սիրելի՛ Ստեփանս:

*Այս երկու ամիս է նստեր եմ ժընև և ամեն օր քեզմե լուրի կ'ըսպասեմ. իսկ դուն ոչինչ չես գրեր և երևի գրելիք ալ չունիս: Ես առաջ կը մտածեի, որ նամակդ ուշացնելուդ պատճառը նամակիդ հետ փող ուղարկելու ցանկությունդ է. բայց հիմա արդեն այդ հաշիվս ալ սկսավ անպետք դառնալ, որովհետև հիմա արդեն հավանորեն գացած ես ամարանոց, և ամարանոցեն ճշմարիտ չգիտեմ ինչպես ինծի փող ես ճարելու: Իսկ իմ բոլոր հույսս գիտես որ քու վրադ է. Վարշավայեն ո՛չ միայն ինծի խոստացվածը, այլև ավելի ստացած եմ. ուրիշ ոչ մեկ տեղե հույս չունիմ. ու կ'ըսպասեմ միայն քու ուղարկելիքիդ: Փարիզ ինծի գրեր էիր, որ Հարյուր րուբլիի չափ բացեն կը ճարես անշուշտ, այլև Եփիկարյանի հաշվեն 45 րուբլի կա դեռ, **եթե կրկին հաշիվներուս մեջ չեմ սխալիր.** որովհետև որոշ չեմ հիշեր, թե դուն ինծի Փարիզ քանի անգամ դրամ ուղարկեցիր: Ահա՛ այդ 145 րուբլիի չափ գումարի վրա է դրված բոլոր հույսերս, որ հոս հաշիվներս մաքրեմ ու մնացածովը անմիջապես ճամբա ելնեմ այստեղի հաշվով օգոստոսի վերջերը. չատ պետուա պատճառը պարզ է, որ հոս անմիջապես գործ մը ճարելու ետևե լինիմ: Արդեն գրած եմ կարծեմ, որ վճռած եմ չիտակ Թիֆլիս գալ. եթե հարմարվի՝ հոս կը մնամ, եթե ոչ՝ կը մտածենք, համենայն դեպս ինծի աչքի առաջ ունեցիր, եթե որևէ հարմար գբաղում հանդրպի քեզի. չատ կը ցանկայի, որ կարելի եղածի չափ չուտ, հենց առաջին օրերին ուրիշի*

վրա ծանրութիւն չդառնայի, արդեն հերիք է, որչափ մինչեւ հիմա ուրիշի դրամովը ապրեցա, քիչ մըն ալ իմ աշխատանքովս: Դրամապես ինքս իմ ուժերես կախուման ունենալը անհրաժեշտ է նոյնիսկ իմ գրական աշխատութեանս համար. ես տեսակ մը հոգեպես կապված-կաշկանդված եմ զգացած ինքզինքս, երբ նյութապես ուրիշներեն եմ կախուման ունեցած: Գիտեմ, որ ինծի կը հասկընաս, սիրելի՛ս: Գրած եմ և Արամեանցին այս մասին, բայց գիտեմ, որ ան այդ կարգի գործերուն մեջ շատ անճարակ է: Իմ Զվիցերիա գալս լեզվի և այլնի տեսակետեն գրեթե ոչ մեկ նշանակութիւն չունեցաւ, որովհետև դրամ չունիմ և ընտանիք մտնել չի կրցա. Օննիկի մոտ կ'ապրիմ, որով բոլորովին հայ շրջանի մեջ եմ. կատր մը ֆրանսերեն կարդալը իհարկե լրջորեն հաշվի առնել կարելի չէ. բայց անկեղծ խոսելով՝ այդ շատ փուլթս չէ, որովհետև ո՛չ մեկ լեզու իբրև լեզու ինծի հետաքրքրած չէ, այլ միշտ իբրև միջոց, է՛, ֆրանսերենն ալ ինծի պետք եղածին չափ կրնամ գործածեր, այսինքն կը կարդամ ու կը հասկընամ. պակսածը փրաթիկն է, որ եթե այս մեկ-երկու ամսվան մեջ բան մը ձեռք բերելու ալ լինի՝ շուտով կորսվեր պիտի հոտ գալուս պես անգործածութեանեն: Այս բոլոր բացատրականներուն դեմ դրական մեկ բան կրնամ գրեր քեզի. այդ ա՛յն է, որ ինչպես միշտ, այս անգամ ալ դրամի պակասով ամառը քիչ մը զամված մնալս ինծի դեպի գրելը մղեց. կը գրե՛մ, և վերջին նորութիւնը մը քեզի համար. տիտղոսս հիմա աստիճան մը ավելի բարձրացավ. բանաստեղծեն, վիպասանեն հիմա փեշերս ժողվեր եմ դեպի դրամատուրկը անցնելու. գրածս թատր մըն է, որ կը հուսամ արդեն վերջացած միասին բերելու[1], թեև չեմ հուսար, որ հոտ տպագրել կարելի լինի: Բայց եթե այդ չի հաջողեցա տպել, հաջորդներուն արդեպ չի կա. այո՛, մի՛ զարմանար, հաջորդներ ալ կան. թեև դեռ չըսկսված, բայց արդեն ծրագրված, և ձեռքինս վերջացնելուն պես (արդեն կես է եղած) կ'ըսկսիմ. մեկ խոսքով՝ հիմա բոլոր չոգիովս թատերական գրականութեան ալիքներուն վրայեն կը նավեմ: Եվ այս նորութիւնը, գուցե մասամբ բնական զարգացում անհետաոական, բայց իր մեծ մասովը կը պարտեմ իմ այս վերջին երկու տարվան Մյունխենի կյանքիս ու աշխատանքիս, ուրիշ խոսքով՝ քեզի. և այս վերջին նախադասութիւնը գրելը ինծի համար հաճույք մըն է, որովհետև վերջապես անտանելի է, Հավատա՛ ինծի, միշտ ուրիշն մը բարերարված լինելը. վերջապես ես ալ կը ցանկայի, որ ես ալ ի՛մ կողմես բան մը քեզի ներկա-

յացնել կարողանամ քու այդ զուտ եղբայրական անգին հոգատարութեանդ փոխարէն, կամ գոնէ իբրեւ թէ փոխարէն: Բայց է՜... դեռ չատ կ'ըշտապեմ. նախ պետք է որ հաւնիս նոր ուղղութեամբ աշխատանքիս, այսպես ըսած նոր չին-իս: Ընդհանրապես բոլոր ուրիշ խնդիրներու մասին ոչինչ չեմ գրեր՝ չատ բերանացի խոսակցութեան վերապահելով. միայն կը չնորհաւորեմ սրտանց գրական վերջին աշխատութիւններդ: Բարեւներս ու հարգանքս տիկնոջ և ով որ հիմա քովդ կա. համբոյրներս քեզի: Անհամբեր կ'ըսպասեմ քեզմէ լուրի ու փողի: Հասցես՝ T. Sissagian, Roseraie 26, Geneve (Հանձնել Սեդրոսյանին):

Օննիկը սրտանց կը բարեւե քեզի ու տիկինը:

1901

26. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հաննե՛ս ջան:

*Շոգենաւը իր բոլոր ուժովը կ'երթայ, ամբողջ մարմնովը դողալով. նոր դուրս եկանք Բուդաբեստեն, վաղը իրիկուն կ'ըլլամ Վիեննա: Եվ հիմա չնայելով չուրջիս ծուխին ու աղմուկին, չնայելով շոգենաւի դողին, որ գրելը խիստ կը դժվարացնէ, չնայելով նաև քունիս, որ արտասանութիւններես արդէն կախված է, վերջապես չնայելով այս բոլոր չնայելովներուն՝ ես նստած եմ քայուքը ու գրիչ մը վերցուցած: Ճամբին գրիչ վերցնե՜լ, գիտե՞ս ինչ ըսել է ատիկա. միայն սիրած աղջկան մը ու սիրած ընկերոջ մը համար այդ չարչարանքը հանձն առնել կարելի է. ուրիշ ժամանակ գրելը թեթեւացում է, պահանջ մըն է, հաճույք մը, իսկ ճամբին, երբ մարդ հոգնած է, ցրված, կեդրոնանալու անընդունակ ու խելքը ուրիշ կողմ: Այո բոլոր հառաջաբանը միայն անոր համար է, որ հասկընաս, թէ որ չսիւ մոտիկ ես դուն սրտիս. ես ատիկա այն ժամանակ միայն ամբողջովին գիտակցեցի, երբ Թիֆլիսը ալ ետևս էր: Ես հիմա միայն սկսեր եմ հասկընալ, որ Թիֆլիսի հետ կապված եմ եղած, որ մոտ երկու տարվան հոգտեղի կյանքս[1] վրայես առանց չոշափման անցած չէ: Նո՛ւ, այս խոստովանանքես վերջը, որ քեզի համար չատ ալ «զատարկ բան» էր, անցնեմ խոստումիս՝ համբորդութեանս նկարագրին:

Տխո՜ւր, հոգնա՛ծ, անոթի՛, քնա՛տ, ջղո՜ւտ, մինա՛կ և տխո՜ւր. ահա՛ ինչ կ'ըզգայի մեջս Թիֆլիսը թողնելու վայրկյանիս, երբ ձեր թաչկինակները դեռ կայարանն կ'ներթային: Անձրև ալ օր մը, ամբո՛ղջ օրը, անձրև ու լալկան. հալոցդ կայարանները քիչ-քիչ սկսա կլճատել այդ վերի ածականներեն մեկ-երկուքը. բայց էականը մնա՛ց. մնա՛ց. մինա՛կ ու տխո՜ւր. աննչմարելի, թեթեւ, ներքին, ծածուկ տրտմութիւն մը, որ փոշի-անձրևի մը պես չարունակ հոգիիս վրա կը մաղվեր, մինո՛ւյն է, ես խնդայի, խոսեի, դիտեի, ըլլայի մինակ թե բազմութեան մեջ. ես գուցե երբեք ինծի այսպես մինակ զգացած չէի. ե՛ս, որ ամբողջ կյանքս մինակ եմ եղած. չգիտեմ ինչի վերագրեմ. տարի՞քը արդյոք: Մինչև Բաթում ամբողջ գուբեն իմ տրամադրութեան տակն էր, չնայելով, որ ուրիշ մեկ-երկուքն ալ եկան-գացին: Աչխատ-հակալը ես էի. դատարկութեան աչխարհակալ: Վակոնիս մեկ ծայրի գուբեն նոր զույգ մըն էր, որ ամբողջ ճամբին իրենց բունն էին քաչվեր, միայն իրիկունը ծովին հոտը անոնք դուրս բերավ, իրենց Հարսանեկան ճամբորդութիւնը կը կատարեին: Ուրեմն անոնց դռան դոց ըլլալու կծիկը բացված է կարծեմ: Բայց այսպիսի խորհրմասո բանալիներու բնավ պետք չունեի վակոնիս մյուս ծայրի գուբեն բանալու համար, որովհետև... որովհետև միչտ բաց էր կռնակի վրա, և մեջն ալ նորեն զույգ մը, այսինքն ապագա զույգ մը, որ պզտիկ «կանխավճար» մը կ'ընեին իրարու: Մեկ խոսքով ինկեր էի «երկու կրակի մեջ» և վճռեցի՝ ասիկա վերջինը ըլլա, ալ երբեք չի ճամբորդեմ առանց զույգի մը. այս վճիռը ձևակերպելու վրա էի, որ երևցավ ծովը. ա՜, իմ սիրուհիս, և այդ վայրկյանեն ալ չի բաժնվեցանք իրարմե, գրեթե ամբողջ չաբաթ մը. և ինչ ծով. տա՛ք, անո՛ւշ, հանգի՛ստ, դպվող, չոյող, իր թաց, աղի համբույրներովը: Յալտան հիանալի է. ապագային քեզի հետ անգամ մը կ'երթանք: Շոգենավին մեջ մեկ-երկու աղջիկներով էի զբաղված բնականաբար, թե չէ պարոններեն ինչ խնդ. մանավանդ մեկը չիք-զրավիչ մոսկովուհի մը, շոգենավի տախտակամածը ելնելուս պես տես-ա նստարանին վրա ամբողջ հասակովը փռված իր ճերմակ-փարթամ մանթի անփույթ ծալքերուն մեջ. ինչ երկարեմ՝ ան ինծմե ավելի սկսավ «ավանսներ» ընել: Մոտեցանք բնականաբար, և... և բաժնվե-ցանք բնականաբար. իջավ Յալտա: Մինչև Օտեսսա կը կարդայի. երևակայե, կարդացի բոլոր մեր միասին գնած ֆրանսերեն գրքերը և վերջը առանց գրքի մնացի Դանուբի վրա: Կը կարդայի, կ'ուտեի ու

կ'ապրեի ծովին հետ. քանի՜- քանի անգամ մտածեցի, որ հոն ըլլայիր, վայլեիր այդ ծովը. ինծի համար մինչև հիմա ամենեն թանկ, սիրելի բանը եղած է բնութիւնը. և բնութիւն ըսելով ես կը հասկընամ գլխավորապես լեռ ու ծով: Օտեսսա չմտա անգամ, ժամանակ չի կար. ուղղակի փոխադրվեցա դեպի Կալաց[2] տանող չոգենավը, որ մյուս չոգենավեն վերջը չատ խեղճուկ երևեցավ աչքիս, նեղ ու խեղդված: Օտեսսայեն բաժնվելուս պես բարձրացավ վայրի հով մը, կատաղի, գիշերն ալ հասավ վրա: Ա՜հ, այդ գիշերը ես չեմ մոռնալու: Ծովին, անձրևեն, ցուրտեն ու ճոճքեն ամենքը փախան ներս իրենց խցիկները. ես մնացի վերը, կուզեի Դանուբին մուտքը տեսնեմ, որ գիշերվա ժամը երկուքին էր ըլլալու: Եվ վալիոիս մեջ կծկված, հնար եղածին չափ պաստառներուն ետևը կերպ մը պաշտպանված, նստած էի անկյուն մը. տախտակամածի վրա հետու ուրիշ անկյուն մը հագիվ նշմարեցի մուխին մեջեն ուրիշ զույգ մը. հոս ալ ես ու աղջիկը, ուրիշ ո՛չ ոք: Բայց մուգա այս նոր ընկերուհիս ծանոթացնելու. չոգենավի մեքենագործի մը աղջիկը, գեղեցիկ, աղքատիկ, պարզ, թարմ, անմեղ, մաքուր ռուհի մը Օտեսսայեն, որ հորը մոտ կերթար չգիտեմ որ չոգենավը. կապույտ, պարզ շրջազգեստ մը ու գլխուն ալ ճերմակ-մետաքս թաշկինակ մը: Ահա քեզի քոնտրաստ մը մյուս նավի ընկերուհիիս: Շատ ալ պարզ եղավ մեր ծանոթացումը, ի՞նչ կ'ըսեմ, մեր մտերմացումը. մեկ-երկու նախադասութիւն, ու ալ հին-հին ճանաչներ[3] էինք իրարու: Կատարյալ անմեղութիյամբ իր մաքուր, կուսական սիրտն ու հոգումները, իր անուրջները սկսավ ինծի բանալ և մութ գիշերվա հետ միասին այս բոլորը այնչափ առատ գնացին, որ վերջապես աղջիկը հանկարծ փափագ զգաց մանչ մը դառնալու և անպատճառ «Հայ մանչ մը...» և ասիկա կես-գիշերին, երբ վարը ալիքները իրենց հսկայի կաքավը կը ցատկռտեն, երբ հովերը մեր նավի թևերուն ու կայմերուն վրա հիվազային եղանակներ կը նվագեն, երբ չոգենավը այդ իրարանցումին դեմ մտածկոտ դլուխը կր ճոճե, երբ բոլոր լաթի ու պաստառի կտորները թև առած մարմնեղ ու երկաթներեն պոկ գալ ու թռչել կ'ուզեն, թռչեն ու կաքավեն ծովի ալիքներուն հետ, ծովի ալիքներուն պես. և չուրջը մութ-մութ, մո՛ւթ, մինա՛կ. մինակ այդ աղջիկը, ինծի սեղմված, թևիս տակ[4]... Ահա՛ ինչպես մտա Դանուբ, որ ես երբեք չեմ մոռնալու: Հետուն փարոս մը սկսավ վայլել. վարոսը այսպես գիշերին պետք է տեսնել: Մենք երկուքով կախվեցանք եզերքեն լավ տեսնելու համար.

ո՞վ է ծովին ուշ դարձնողը, ծովին ու խոնավութեան: Փարոսը մնաց ձախ; քիչ մը վերջը ավելի մոտիկ երևցավ կարմիր ու կանաչ ուրիշ զույգ մը: Սոսկալի ալմուկի մեջեն կը մոտենանք, զույգը սկսավ իրարմեն հեռանալ: Հանկարծ հովը թուլցավ, ճոճքը կտրվեց, ալմուկը հանդարտած էր. ու փարոսներեն մեկը մեր աջ կողմն էր, մյուսը՝ ձախ. մոտած էինք Դանուբ: Ահա՛ ինչպես սրտաչարժ մնաս բարով մը ըսավ ինծի իմ Սև ծովս: Մենք ալ ըսինք «գիշեր բարի» ու իջանք քնելու: Սակայն, սիրելի՛ս, ժամանակ է, որ քեզի ալ ըսեմ «գիշեր բարի», աչքերս կը փակվին, չարունակութիւնը հաջորդ նամակովս, որ աստված գիտե ուրկե կը գրեմ: Դուն ալ կը գրես ինծի, հա՛, մանավանդ շատ հետաքրքիր եմ գիտնալու՝ ինչ եղավ վիճակդ[5]. ես գրեթե վստահ եմ, որ այս նամակս ամարանոցդ կը կարդաս: Տո՛ւր բարևներս կնոջդ, տիկին Թումանյանցին[6] ու Վարդազարյանին[7]: Եվ իհարկե Վերնատան[8], ինչ ըսելու բան է: Համբույր մըն ալ քեզի:

Լևոն

Շոգենավին մեջ, Բուդապեստի մոտերը:
1901, Հունիս 12

27. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հուլիսի 16, Անգերա>[1]

Էլեգիա

Ոսկի լուսինը ազատ երկինքեն
Ապշած կը նայեր «Վերնատան» պլիսին,
Ուր կը մլավեր խոր ներշնչանքեն
Լքվա՜ծ, միայնա՜կ, պոչամոր ոպին[2]*:*
Պոչավոր ոպին «նոր» քերթուղության
Որու ապերախտ սաներն աներես
Նոր ոպիներու երկրպագության
Ելեր են պացեր. մեկը, է՛, Անվե՛րս,
Ասջևր Հաշիվ, մուրհակ, տոմարներ[3]*.*
Երկրորդը անտառ է քաշվեր[4]*, կըսեն,*

Տարփանքով կախված «ծուլութեան» ուսեն,
Իսկ թե երբորդը ո՞ր-դի է կորեր՝
Զգիտե ոչ-ոք[5]*,*
Ոչ-ոք այդ մասին,
Ոչ իսկ բազմահագ
Vis-a vis[6] *ոգին:*

28. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Սեպտեմբերի 7, Գլավեո>

Խայտառա՛կ մարդ:

Քու անհասկընալի լռութիւնդ խզելու համար հիմա ալ ֆիլլա-հուհիները օգնութեան կը կանչեմ[1]*: Եթե այս անգամ ալ ձայն չի հանեցիր, գիտցած եղիր, որ այլևս համբերութիւնս կորուսած, ստիպված կըլլամ դիմելու հայուհիներու օգնութեանը: Համոզված եղի՛ր, որ սպառնալիքս կը կատարեմ: Իսկ ես առայժմ զբաղված եմ բելժուհիներով, որոնք, չգիտեմ ինչու, շատ ավելի հետաքրքիր ու գրավիչ կը գտնեմ, քան հաշվապահութիւնն ու առևտրական օրենսդրութիւնը:*

Արաբիո անապատներու մէջ մոլորված երազ աղջկա կաթիլ մը ջուրի պապակող չրթունքներեն ալ ավելի քու քանի մը տողիդ ծարավի չրթունքներովս կը համբուրեմ քեզի պինդ-պինդ:

Լևոն

29. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, գիշեր է, նստեր եմ քեզի գրելու, պահ մը ձեռքս կը դնեմ աչքերուս, ու ահա՛ քու պզտիկ սենյակիդ մէջն եմ, դուն, կինդ, փոքրիկներդ, սեղանդ, բարձերը, լամպը, բոլորը, բոլորը կը կենդանանան աչքերուս դեմ. ու կը հիշեմ խոսակցութեան կտորներ, ժեստեր: Եթե գիտնա՛ս, ինչպես քաղցր է այդ ամենը հեռվեն: Ես քեզի շատ շուտ-շուտ կը հիշեմ. արդեն ընդհանրապես Թիֆլիզն ու իմ ծա-

նոթներուս վոգբրիկ, ընտիր խումբը. ես Թիֆլիզին բաժնվելես վերջը միայն զգացի, որ իմ կարծածես չատ ավելի կապված եմ եղեր Թիֆլիզին. Պոլիսեն ալ ավելի, և իմ սրտի ցանկութիւնս է ավարտելուս անպատճառ նորեն Կովկաս վերադառնալ: Բայց ավարտելու դեռ երկու խոչոր տարի կա, լավ է առայժմ սկսելս քեզի պատմեմ: Ճիշտ ամսվան մը ողիսականես վերջը ուզես դրի վերջապես Անդվերքեն[1], որը հոտ բոլոր բառարաններուն մեջը կը փնտրեի: Ո՛չ Բելժիկեն, ո՛չ բելժերեն, ո՛չ ալ Անվերսեն հիացած չեմ. մարդիկ կապրին իրենց համար. այսինքն վեց օր կ՛աշխատին և յոթներորդ օրը կ՛երգեն ու կը պարին, խոսքս ժողովուրդի մասին է. ուրիշ բան պահանջելու չէ. միա՛յն, չգիտեմ ճշմարիտ, արդեն ուրիշ ի՞նչ կրնանք պահանջեր. սոսկալի՛ աշխատող են և հիանալի՛ ուրախանալ գիտեն. մեկ խոսքով՝ սքանչելի «խալխ», բայց ես սքանչացած չեմ: Կը պակսի պզտիկ բան մը միայն. մեծութիւն, ուժի՛ ու խոչոր ապագայի հրապույրը: Պզտիկ ժողովուրդ, մանր պետութիւն և օրը օրին կյանք ինձի չեն կրնար ոգևորեր:

Հոս անցուցած առաջին մեկ-մեկուկես ամիսը. չատ զուր եղավ, հուլիսի չոգերեն գուցե: Իսկույն մտա վանսիոն մը[2], վարձեցի ուսուցիչ, ուզեցիս անկյուններեն ունեցած փրանսերենս սկսա դուրս թափ տալ, հաչվապահութիւնն ալ ներս: Վրեժս հանեցի դյուղը. Լիեժի նահանգը վալոն ընկերոջ մը ընտանիքին մեջն էի[3]. չորս-հինգ չաբաթս սիրուն էր. երաժշտութի՛ւն, աղջի՛կներ, հիանալի՛ ընութիւն և, իհարկե, ռատիքալ ծուլութիւն. այգի, ազարակ, շրջակայք, գյուղեր, քաղաք լավ թափառեցա:

Հոկտեմբերի սկիզբն էր, որ այրած դեմքով, կայծ առած տրամայով[4] ու մխացող գրպաններով քաղաք վերադարձա: Եվ հիմա ուսանող մըն եմ: Օրական 5-6 ժամ դպրոցն եմ. 1-2 ժամ ալ տանը պետք է պատրաստվիլ. ալ հիմա ինչ ըսես կա գլխուս մեջ. տոմարներ, ապրանքներ, հաչիվներ, նամակներ, աշխարհագրութիւն, տնտեսագիտութիւն, օրենագիտութիւն ... և լեզուներ, ա՛, այդ լեզուները, ամբողջ երաժշտութիւն մըն է գանգիս տակ. քաբել-մայտորը փրանսերենն է, գերմաներենը թմբկահար, փլեմըը անգլիերենինն է ու իտալերենը, որ իր բիանոն կը նվագե: Խե՛ղճ, խե՛ղճ գլուխս: Եվ խեղճ հայերենս, որ այս բոլոր աղմուկին մեջ չեն թողներ նստի ու իր տրաման գրե: Կատակոտ թռնիս մի՛ նայիր, Սահվան, սիրտս ծանր է. վայրկյաններ կու գան, որ ամբողջ վճռականութիւնս կոչ ընել ստիպված եմ բռնած

Համբես դուրս չի գալու համար. չատ դա՛ն բան է, երբ մարդ իր ընտանեկութիւնն ու կոչումը կը բանաղատես, երբ ատիպված է բանադատելու: Անցած օր, երբ անհամ փրոֆեսսոր մը ամպիոնեն իր գլխուն զոռ կուտար, իմ մտքերս չեղեցան ու պատկերացավ աչքերուս դեմ իմ պալրոցս, իմ տեսչութիւնս, իմ ուսուցչութիւնս. այն ուրի՛չ համբան, ուրի՛չ աշխատանքը. և երբ հանկարծ սթափելով ինծի գտա աշակերտ մը... աշակերտ մը առտուրի, ա՛, այնպես տարօրինակ զգացում մը խածավ սիրտս. տեսակ մը ամոթ, տեսակ մը անկում, տեսակ մը դավաճանութիւն: Այսպես վայրկյաններ են միայն, իհարկե, և մարդ ամեն բանի կը վարժվի. մանավանդ այս նոր աշխատանքս գիտական, գործնական ու հետաքրքիր կողմեր ալ ունի. նույնիսկ մեքենական աշխատանքն ու լեզուներ սորվելու միօրինակ աշխատութիւնն անգամ իր մեջ տեսակ մը տարօրինակ հաճույք ունի, հենց իրեն աշխատանքի հաճույքը գուցե. միայն երբեք չի պետք է հարցնել այդ բոլորի «ինչու համարը», «ինչուն». ուրիշ խոսքով՝ առանց փիլիսոփայութեան, հոսանքին հետ, օրը օրին. տեսակ մը մեքենաբար, առանց երկար-բարակ խորունկը մտածելու: Եվ գիտե՞ս, վերջին ըրած գյուտս է ասիկա. երջանկութիւնը մեքենական կյանքին մեջն է, երբ կ'երթաս գլուխդ կախ, լծված ձիու պես, սանձերդ թողած զանազան «պայմաններու» ու «ինստինկտներու» ձեռքը. ա՛յն վայրկյանին, երբ դուն ուզես քու կառքիդ կառավարը ըլլաս՝ մնաս բարո՛վ, երջանկութիւն. ո՛վ մտածել կ'ուզե, իրավունք չունի երջանիկ ըլլալու. հոգեկան բարձր զարգացման պինը երջանկութիւնն է. սո՛ւղ ապրանք և արդյոք արժե՞ իր պինը: Հա՛, փիլիսոփայութեան անհատակ ձորերն ինկա, տո՛ւր ձեռքդ՝ դուրս գամ: Քիչ մըն ալ դուն խոսե նայիմ, դուն ի՞նչ բանի ես, կի՞նդ. դպրոցը մեծցուցի՞ք[5]. հրատարակչական, ամսագրական, մանկավարժական, դասագիրքական և մյուս բոլոր-ականն ծրագիրներեդ հիմա որո՞ւն վրա ես: Գրե՛, ինծի համար անչա՛փ ուրախութիւն է քեզմե քանի մը տող ստանալը, հո՛ս, այսպես մինա՛կ: Սոսկալի մինակ եմ. մինակութիւններեն ամենաանտանելին-բազմութեան մեջ մինակ. կը խոսիս, կը լսես, կը խնդաս ալ, բայց սիրտդ հոտ չէ: Գրե՛: Սրտագին բարևներով տիկնոջ ու քուվիններուն. փոքրիկներդ կը համբուրեմ սլինդ-սլինդ. կը համբուրեմ և քեզի.

Լևոնդ

1901 հոկտ. 21, Անվերս

30. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հոկտեմբերի 21, Անվերս>

Վերջապե՛ս. վերջապես եկավ քու Թանկագին նամակդ[1]. Թանկագին իր վերացական ու նյութական կրկնակի իմաստներովը: Շատով կը գրեմ քեզի երկար-բարակ, առայժմ ընդունե վերի վարդը[2] Լևոնիդ կոչմեն:

31. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1901, նոյեմ. 1,

Անվերս

*Սիրելի՛ս, չգիտեմ ուրկե սկսիմ, չգիտեմ ո՛րը գրեմ, ո՛րը թողնեմ, այնքան բան է խառնած գրչիս ծայրը, որ կ՛ուզե դուրս հորդի: Լավն ան է սկսիմ Ադամ-Եվայեն[1]: Այսպես ուրեմն, ճիշտ ամսվան մը ողիսականս վերջը, հուլիսի գիզեցիկ առավոտ մը անցա Բելժիկայի սահմանը ու ոտքս դրի ավետյաց երկիրը: Շոգենավներեն, վակոններեն, հյուրանոցներեն, կայարաններեն այնպես էի հոգնած, որ վակոնիս պատուհանեն երեսիկ կոստայի առջևես ետ-ետ վազող տուներուն մեջ իրենց համար հանգիստ սենյակ մը ունեցող բոլոր երջանիկներուն: Անվերս ժամանելուս պես առաջին գործս եղավ գնալ դպրոց ու խոսել տնօրենին հետ, երկրորդ գործս՝ բանսիոն մը վարձել, երրորդը՝ ուսուցիչ մը գտնել և չորրորդը՝ ոտքերս փռել ու պառկիլ կռնակիս վրա իմ սենյակիս մեջ՝ այն երջանիկ գիտակցությամբ, որ վերջապես ի՛մ սենյակիս մեջն եմ: Բայց դժբաղդաբար երջանկությունները չա՛տ են կարճատև, ինչպես որ իհարկե գիտես: Ճշմարիտը խոսելով՝ շատ քնքուշ զգացումով մը չէր, որ առաջին անգամ ծուռ ակնարկ մը նետեցի «Հաչվապահությանս» դասագրքին վրա, ուր զանազան անհասկնալի ֆրճատումներ, գիծեր, հաշիվներ, թիվեր այնպիսի հաստատակամ որոշումով մը ինծի խրատեցնել կ՛ուզեին կարծես: Ես մուգաս օգնության կանչեցի, մուգաս եկավ, բայց խեղճը ինձմե ավելի էր խրտներ. այնպես որ մեղքցա, ետ ճամբու դրի ու ֆրանսերեն բառարանիս հետ ձեռք-ձեռքի

նետվեցա այդ հաշիվներու ու տոմարներու ծովը: Շատ լողացի թե քիչ, աս աստված գիտեն, միայն հանկարծ այնպիսի հոգնութիւն մը, դառնութիւն մը, դժգոհութիւն մը, մաղձ մը զգացի մէջս, որ չգիտեմ ճչմարիտ ինչով կը վերջանար, երբ այս անգամ մուգաս ինքը չի գար ինծի օգնութեան, քանի մը «տրամացու» դրած թիւին տակ: Եվ այդ օրէն դարձա երկու մարդ. ցորեկը հաշվապահութիւնը իր չքախմբով, պիչերները մուգաս իր տրամաներով, այսինքն իր տրամաներու ծրագիրներով: Այս առաջին ներքին մաքառտմներով, ֆրանսերէնի փեհլիվանութեամբ, փանսիոնական չոր կյանքով ու անծանոթ քաղքի մը անծանոթ սովորութիւններուն առաջին վարժութիւններովը հասեր էի օգոստոսի կեսերը: Կ'ուզե՞ս քեզի ներկայացնեմ այս մեծապատիվ երկրին. կամ մեր քաղաքը ներկայացնե՞մ քեզի: Բելժը աչխատանքի մարդն է. այնպես որ քեզի բնավ խորհուրդ չէի տար այս կողմերը ուրք գնես: Այս մե՛կ: Բելժը դեմոկրատ է բնականեն, դեմոկրատ՝ իր լավ ու վատ բոլոր կողմերով, քիչ մը պանալ, քիչ մը յունիֆորմ, բայց պարզ, դեմ եկող ու մանավանդ «խմբական». անգամ մը տեսնելու ես, թե հոս ժողովուրդը ի՞նչպես կ'ուրախանա՝ զաղափար կազմելու համար, թե ի՞նչ ըսել է խմբական կլանք: Երևակայե գիշերով ամբողջ գյուղ մը, կամ քանի մը թաղ, քանի մը հարյուր հոգի, ծեր-երիտասարդ, աղջիկ-մանչ, թև-թևի, շարք-շարք ամբողջ փողոցի լայնքով, գինվորների վաշտի մը պես, երգելով, պարելով, ցատկելով, երաժշտական խումբ մը առջևը ձգած, լամպիոններով, դրոշակներով, ծոպերով զարդարված կ'անցնին առջևեդ. և հարյուրավոր երեխաներու մրջնանոց մը, որ այդ զանգվածին չուրջը կը ցատկեն, կը դառնան երաժշտութեան թաքտին տակ: Այդ նո՛ւյն չափին տակ տատանվող, նույն ուրախութեան մեջ հռհռացող, նո՛ւյն գրգռված ինստինկտներով իրար հրմշտող զանգվածին դեմ՝ ես ակամա կը մտածեմ մեզի, մեր ժողովուրդը, ուր տասը հոգի իրարու մոտ գալ չի կրնար, ուր կինը առանձին է միշտ, մոտի՛ բաժանմունքը, ուր փողոցին մեջ երգելը հարբածի բաժինն է միայն, իսկ պարելն ու ցատկելը, նո՛ւ, միայն գժանոցեն փախածի. ահա՛ քեզի այն մեծ տարբերութիւնը արևմուտքի ու արևելքի ամբոխի-անհատի ձուլումը խմբի մեջ. արևելքի մեջ մասսան անհատներու կուտակում մըն է, իրարմե անջատ. արևմուտքի մասսան անհատներու կապակցումեն առաջացած նո՛ր օրգանական մարմին մըն է արդեն: Գալով մասնավորապես Անվերսին, առուտուրի քաղաք է, գործի քաղաք:

Ամեն տեղ, ամեն բանի մեջ կրնաս նչմարեր նույնը. ամենքը անխտիր նույն գործավորի ու վաճառականի դեմքը, հագուստն ու չարժումը ունին. արդեն միօրինակութիւնը չատ է աչքի ինկնող: Կառապանն ու իր վարժողը միայն մեկ միջոցով կրնաս իրարմե զանազաներ. իրենց նատած տեղեն: Մեկ ուրիշ հատկութիւն, որ հազիվ թե քու նախանձդ չարժե[2], երեխաներու առատութիւնն է. երբեմն փողոցները այնքան իրարու վրա թափած կ'ըլլան, որ անցնելու ժամանակ ակամա հարց կու տաս, թե այդ մարդիկը ե՞րբ ժամանակ կը գտնին իրենց մյուս առօրյա գործերն ալ վարելու: Բայց ես գառնամ նորեն ինծի, որ քեզի համար երևի ավելի հետաքրքիր է, քան Անվերսի բոլոր փողոցները իր բոլոր երեխաներով: Օպտատոսի վերջերն էր, որ նորեն գնդեցիկ առավոտ մը վերցուցի պայուսակներս մեկը ու մտա վակոն: «Ո՞ւր բարով նորեն», պիտի հարցնես: Գյո՛ւղ, Օհաննե՛ս ջան, գյուղ. քիչ մը բնութեյան մեջ թարմանալու, թափ տալու վրայես «ելք ու մուտքերու» փոշին: Դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ եղածը արդեն աչքի անցուցեր էի. քանի մը ուրիշ կարդալու բան էր մնացեր միայն. լեցուն էր արդեն պայուսակս այդ գրքերով, որոնք պիտի կարդայի գյուղը, բնութեյան ու հանգստութեյան ծոցին մեջ: Իհնչպես չէ: Հինգ-վեց չաբաթ այնպիսի փառավոր ծուլութեյամբ մի ծուլացա, որ մինչև անգամ քու հիացումը կրնայի չարժեր: Եվ այդ ընդարձակ ծուլութեյանս միջոցին հասա այն եզրակացութեյանը, թե իսկապես մենք՝ «բանաստեղծներս», բնա՛վ իրավունք չունինք մեր աղքատութենեն գանգատվելու. հարըստանալու համար պետք է աշխատիլ, աշխատիլ չարունակ. իսկ «բանաստեղծներս» ավելի գերադասած ենք աղքատ ըլլալ, միայն թե չաշխատիլ. ծուլութիւնը մեր կյանքի, մեր օրգանիզմի, մեր ջիղերու մեկ անհրաժեշտ պետքն է, մեկ թանկագին պահանջը. այնպե՛ս փռվիլ կռնակի վրա ու մտածել, երազել, երևակայել. կամ թափառիլ դաշտն ու անտառ անգործ, անհոգ իր մուզային հետ, իր անուրջներուն: Ես լուրջ կը խոսիմ, ծուլութիւնը չա՛տ, չա՛տ մեծ պետք մը, երջանկութիւն մըն է «բանաստեղծներուս» համար. ա՛, ես այդ ծուլութիւնը հիմա չատ թանկ կը գնահատիմ. հիմա՛, երբ ստիպված եմ թրանվայի ձիու պես աշխատելու: Բայց եթե խելք ունիս՝ այս տողերս մարդու չես ցույց տար, թե չէ մեր ունեցած կաթիլ մը վարկն ալ կը կորսնցնենք վերջնականապես: «Ախր» ես ալ, դուն ալ վաճառական մարդ ենք հիմա: Ուրեմն դեպի գյո՛ւղ՝ վակոն (ֆրանսական բելժ) ընտանիքի մը մեջ,

«փոմեչչիքի» նման բան մը. ագարակ, պարտեզ, այգի բոլորը տրամադրութեանս տակ, տրամադրութեանս տակ նաև երկու աղջիկներ, բոլորովին իմ տունս կարծես. քիչիկ մը երաժըշտութիւն, քիչիկ մը չարաճիճիութիւն, քիչիկ մը... պաչիկ մը, ըստ օրինացն Մուվսեսի[3], վերջապես: Իսկ տունն դուրս դյուղն ու դաշտե՛րը, դաշտե՛րը, դաշտե՛րը. դաշտի գեղեցկութիւնը ես առաջին անգամ հոս զգացի: Լեռներ չի կան, բայց հողը ալիքոտ է, որ աչքին միօրինակութիւն չի տար: Եթե դիտնաս ինչքա՜ն թռչուտներ եմ, դյուղե դյուղ, հիանալի խճուղիներով, մեծ մասով ծառուղի, մարդու քալելը կու գա. և դյուղ որ կըսեմ՝ քու Դսեղդ չի հասկընաս. հոս քու Դսեղիդ բնութեան վեհութիւնը չի կա, բայց չի կա և այն քուլտուրական խեղճութիւնը[4]. հոս դյուղերը գետնատակ քսենոֆոնյան խրճիթներ չեն[5], այլ քարաշեն փոքր տուներ, մեծ մասով երկահարկ, վերին հարկը՝ ննջարանները իր մահճակալներովն ու պարագաներովը, վարը՝ մյուս սենյակները: Երբ Հոստեղի դյուղացուն մեր գեղերու մասին պատմես, միևնույն է թե քեզի խոսիս հոթենթոտներու մասին: Այդ պատմութիներս ալ երբեմն ընկերոջս հետ, բայց մեծ մասով առանձին: Ախ, ի՞նչ կ'ըսեմ, ի՞նչպես թե առանձին, մուզայիս հետ թև-թևի. ո՛վ երջանիկ բանաստեղծական ծուլութիւն: Եվ Հիմա՞: Հոկտեմբերի կեսին դասերը սկսան, և ես այժմ ուսանող մըն եմ նորեն. «նորեն» որ կ'ըսեմ՝ բառը ճիշտ չէ, որովհետև իմ լայբցիկյան ու մյունխենյան ուսանողութիւնն բոլորովին ուրիշ բան էր, հիմակվանը ուրիշ բան. հոն ազատ էի, ժամանակս արձակ, ընտրութիւնս քեֆիս և աչխատանքս սրտովս: Իսկ հոս օրական 5-6 ժամ դպրոցի՛ մեջ միայն գործ ունիմ. մեկ-երկու ժամ ալ տանը պատրաստվիլ կ'ուզե. հազիվ օրվան լրագիրներն ու մեկ-երկու հանդես թղթատելու ժամանակ կը մնա ինծի: Մեքենայի պես բան մըն եմ դարձած հիմա. ամբողջ օրը «դաս պատրաստելու» վրա եմ, ալ առևտրական նյութեր կուզե՛ս, քաղաքական տնտեսութիւն կուզե՛ս, Նաբոլեոնի օրենսգիրքը կուզե՛ս, տնտեսական աչխարհագրութիւն կուզե՛ս. հապա լեզունե՛րը. գանգիս տակ վայրս կը գառնան, մյուսը բոլկա, երրորդը չզիտեմ ինչ, իտալերենն ալ կաստանիետ և այս բոլոր «խալմաղալին» մեջ խեղճ հայերենս փախեր մտեր է անկյուն մը և ապշած-ապշած կը նայի, թե սա ի՞նչ խայտառակութիւն է: Եվ երբ հոգնած, դլուխս բազկաթոռին հենած, ոտքերս կ'երկնցնեմ պահ մը հանգստանալու, լռիկ սենյակիս մեջ, լամպիս լույսին տակ, այս առևտրական

տակնուվրայութենեն, ակամա մտքերս կը թռչին Թիֆլիս ու վեմքիս ժպիտ մը կը ծլի, երբ կը հիշեմ, որ անցած տարի այս ատեն ամսվան մը մեջ Հոմերոս մը կը կարդայինք, երկու-երեք շաբաթվան մեջ Շեքսպիրեն բան մը կամ Էսքիլոսեն, ա՜հ, Պրոմեթեւո՜սը[6]. դառն ժպիտ մը կը ծլի շրթունքիս ու անուշ կարոտ մը մեջս:

Այս բոլորը երբ կարդաս, դուցե հանկարծ թեթեւ կասկած մը մեջդ սպրդի, Հանե՛ս ջան, թե չըլլա որ «խալխը» իրավունք ունի, որ ես արդեն «բովսկալտեր» դարձա ու գնայ: Մի՛, մտքեդ անգամ անցընելու չես. «խալխը» միշտ «խալխ» է, որ երբեք բան չի հասկընար: Ես դուցե կրնամ թղթակից մը դառնալ, դուցե հաշվապահ մը, դուցե նույնիսկ այս բոլորեն ոչինչ ալ դուրս չի գա. չգիտեմ, ինծի տվեր եմ հոսանքին ու կ'ըսպասեմ տեսնեմ ինչով պիտի վերջանա. տեսակ մը փորձ է սա կյանքի մեջ իրրեւ մարդ իմ անկախությունս ապահովելու, ուրիշին կարոտ չըլլալու, հացի խնդիրը իմ գրական աշխատանքիս առջեեն վերցընելու: Տեսակ մը տարօրինակ փորձ, դուցե և հիմար ու անկարելի. չգիտեմ, ճշմարիտ. գիտեմ միայն բան մը, թե ես գրագետ մըն եմ և մի՛միայն գրագետ մը, ինչ դիրքի ու տարապի տակ ալ որ ծպտիմ: Գալով «խալխին»՝ ես անոր կարծիքը երբեք չեմ հարցուցած ու հարցնելու ալ միտք չունիմ: Այս հառաջաբանես վերջը ուրախությամբ քեզի փոքրիկ լուր մը տամ. լուր մը, թե այս քանի մը ամիսներս բոլորովին անպետք անցած չէ հայոց ազգի գրականության համար: Նախ երկու թե երեք տրամացու պչոսա մեջ պատրաստ է. կը տեսնե՞ս ինչ առատություն: Բայց որովհետև լավ գիտեմ, թե «պչոսա մեջ պատրաստ եղող» տրամաները քեզի համար շատ պին չունեն, իսկույն ավելցնեմ, թե թուղթի վրա ալ բանիկ մը ունիմ: Գյուղեն դարձես մինչև դասերու սկիզբը տաս-տասնհինգ օր ժամանակ ունեի. անմիջապես թարմ ուժերով սկսա գործի ու երբ պլորոցը սկսավ, ես արդեն ավարտած էի տրամային կեսը, այսինքն մինչև մեկուկես արար: Դպրոցի բացումեն ալ վերջը մինչև հիմա շաբաթ ու կիրակի օրերես օգտվելով երկրորդ արարը ավարտելու վրա եմ. կը մնա միայն երրորդը, որը հույս ունիմ մինչև նոր տարի ամբողջացնելու, այսինքն աշխատանքն ու տրամադրությունը չի պակսեր հիմա ինծի. պակսածը ժամանակն է. կ'ընեմ, ինչ որ կրնամ, և եթե հաջողիմ մինչև նոր տարի ավարտելու, իհարկե, չա՛տ ուրախ պիտի ըլլամ. ո՛չ այնքան, իսկապես, տրամային համար, որքան ինծի օգնողներուն վրաս դրած հույսը ար-

դարացնելու համար: Անկեղծ խոսելով՝ ես հիմա չատ գոհ եմ, որ հոս գալս թատրոնական գործին հետ կապվեցավ. առանց իմ իշխանուհիին ու Ֆիլիպին տված խոստումիս դժվար թե այս պայմաններուն մեջ կարող ըլլայի գրական աշխատանքով ալ զբաղվելու[7]: Շաբաթ ցորեկները դպրոցեն դարձիս մեծ ուրախություն մը ունիմ, որ մինչև կիրակի իրիկուն ժամանակս իմս է, ի՛մս ու տրամայի՛նս. և այդ ուրախությունը գուցե իմ միակ արդի իրական հաճույքս է հիմա: Տրամայիս կենդրոնը կին մըն է, գործողությունը կը կատարվի Թիֆլիս: Անունը «Ուրիշի համար»[8]. ձեռներեց, աշխատանքի ու գումի կին մը, որ չարունակ ապրած է ուրիշներուն համար, ուրիշներուն օգնելու, ծառայելու, որ կուզե ու պահանջը կ՝ըզգա իր համար ալ ապրելու վերջապես. բայց իր հաճույքին համար ապրել կարողանալու համար պետք է ուրիշներու ցավը հոգ չընել. ամբողջ տրամաս այս մաքառման մեջն է. բուռն եսական պահանջ մը ապրելու, որուն դեմ կելնին գումն ու սովորությունը: Ինչպես կը տեսնես՝ զուտ հոգեբանական նյութ. և արդեն ինծմե ուրիշ բան ալ, իհարկե, չէիր կրնար սպասեր. բարքերու ու տեղական կյանքի նկարագրության հետ, գիտես, որ գլուխ չունիմ: Ավելցնեմ նաև, որ ես ինքս առայժմ իմ գրածես գոհ եմ. հիմա կը մնա միայն, որ ուրիշներն ալ գոհ ըլլան:

Իսկ դո՞ւն, տե՛ս, ինծմե օրինակ ա՛ռ ու երկար-բարակ նստե գրե: Առողջություն, ամուսնական կյանքդ, արդի դրություն ու գրական կյանքդ: Գրե՛ նույնպես, ինչ որ կա քիչ-միչ հետաքրքիր չուրջդ գրական աշխարհքին մեջ. ես հոս բոլորովին կտրված եմ ձեր բոլոր գրական բարիքեն ալ, չարիքեն ալ, գոնե քեզմե մեկ-երկու խոսք լսեմ: Ի՞նչ հալի են մեր թերթերը՝ անկոթ «*Մուրճը*», փալանը կորսատած «*Մշակը*», հնադարյան «*Նոր դարը*»[9], ցամքած «*Աղբյուրը*»[10], անտարազ «*Տարազը*» և մյուս մեթեորները: Եվ մի՞թե Վերնատունիս այդպես բոլորովին դատարկ է հիմա, ո՛չ ոք. գրե աչուղ Իսահակին, որ ամոթ է, տղամարդուն չի վայլեր այդպես փեթռտած չուչաններուն ետևեն ա՛խ-վա՛խ ընելը[11]. թող բան մը ընե, թող գրե, թող բանի մը պետք գա. բայց սրտե բղխած ազվոր բան մը: Գիտեմ, որ իր փնտրած չուչանը իրական բուռնող ու թռռմող չուչաններեն չէ, այլ չուչան մը, որ միայն բանաստեղծի հոգիին խորքը կարոտեն կը ծլի ու պատրանքով կը սնանի և որ արտաքին չուչանի անունն ու քանի մը ձևերը միայն ունի իր վրա. թող նկարե մեղի իր այդ իտեալ Շուչանը, եթե անպատճառ իր

Շուշանեն զատվիլ չի կրնար: Հապա Դերե՞նը[12], մի՞թե մինչև հիմա չերևցավ. եթե եկած է, թող գրե՛ ինծի ան ալ ու թող հասցե տա՛. կամ գրե իրեն նույնը, եթե եղած տեղը գիտես:

Այսպես ուրեմն, մնացեր ես դո՛ւն, մեր Վերնատան հավատարիմ պահապան. կու գանք, Հանո՛ւս չան, կու գանք. կը ժողվվինք նորեն, կը կարգանք նորեն մեր Սոֆոքլեան ու Սերվանտեսը, կը խոսինք, կը խոսինք նորեն ամբողջ ձմեռվան երկար գիշերներով հինեն-նորեն, գյուղեն ու «իաչախներեն», տակնուվրա կընենք նորեն մեր ամբողջ գրականությունը ու կը տաքնանք ու կոզևորվենք մեր սկզբունքներով, մեր տաղանդով, մեր գրածովն ու գրելիքներով... Իսկ առայժմ համբույրներս կը խրկեմ քեզի, մտերիմ ընկերոջ մը ջերմ, մաքուր, անկեղծ համբույրները:

Լևոնդ

32. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Նոյեմբերի 11, Անվերս>

Օհաննե՛ս չան, տրամայիս կենացը[1], ուր հիմա, այս վայրկյանիս ավարտեցի:

Լևոնդ

Այսպես ուրեմն, «Ուրիշին համարս» մտավ դարակս մինչև ցնորս տնօրինություն հանգստանալու: Ես ալ քիչիկ մը հանգստանամ ու սկսեմ արդեն երկրորդ թատերկա[2]. կը տեսնիս, որ մեծ գործի վրա եմ:

Համբույրներս

33. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Նոյեմբերի 12, Անվերս>

Դե՛, չո՛ւտ, չո՛ւտ, ելի՛ր, ծուլություն մի՛ ըներ. ելիր մատե՛ ու նամակիս պատասխանը գրե: Զարմացուցիչ նորություններ ունիմ քեզի հայտնելու. այսինքն իսկապես զարմանալու ոչինչ չի կա. բնական

բան: Այլևս դադրած եմ դպրոց հաճախելե. ինձի համար չա՛տ երկար, անգործնական ու չա՛տ չնչին արդյունք ունեցող աշխատանք էր. հիմա ինձի պետք եղածը կաշխատեմ ինքնիրենս: Դե՛, ի՞նչ ապշեցար, ելի՛ր, չո՛ւտ, չո՛ւտ, նստե նամակդ գրե:

34. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Դեկտեմբերի 12, Անվերս>

Հայաստանյայց մեծ լուսավորչին ... (ա՛յ, կը ներես) լուսանկարչին[1] բարև և ողջույն չա՛ւտ: Եվ բազում շնորհակալություն վասն «Առվակին»[2]. և անչափ սրտմտություն վասն չտայլությանն բյուտճեականին: Եվ անասելի ցաւումն բարկության վասն լռության և ծուլության եղբորն մերո խայտառակի. ամեն:

35. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Դեկտեմբերի 27, Անվերս>

...«Ողջո՛ւյն Վերնատան պխեն սրբազան».
Եւ նայեմ, տեսնեմ մեր երեք մուզան[1],
Որ ծո՛ւլ կախ ընկած իրարու ուսեն՝
Վերջին բարև մ'են՝ բերեր Անվերսեն:

36. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Իմ անգին Հանես, ամեն անգամ, որ նամակդ առնեմ, ինձի համար ահագին ուրախություն է, և երևի սաստիկ ուրախությենես սրտի լայնացում չտանալու համար է, որ այդքան հազվագյուտ են նամակներդ. այսինքն չեքե չեք[1]: Արտահայտությանս եղանակը քեզի թող չի զարմացնե. հիմա իմ օրացույցս ստացած չեքերուս վրա է ձևած, որոնք

քու նամակներուդ չափ հազվագյուտ են: Դուք հոտ ծիծաղեցեք իմ վրաս, ինչպես որ կ'ըսես, իսկ ես հոս ամենահիմար հոգեկան դրության մեջ եմ. քանի դպրոցն էի, տեսակ մը ինկած էի հոսանքին մեջ ու կամաւակամա կ'աշխատեի. իսկ հիմա, երբ բոլորովին ազատ եմ ուզածիս պես ժամանակս տնօրինելու, երբ մուտքս առատ պես մտեր է թևիս տակը ու ինծի հանգիստ չի տար, երբ գրելու պահանջը, նյութը, ծրագիրները մեջս կ'եռան, գե՜հ, խնդրե՛մ, գե՜հ, հրամմե՛ նստե՛ ու առևտրական նամակագրություններու թարգմանությունովը զբաղվե. բայց պե՛տք է, պե՛տք է զբաղվիլ, տարին չուտով կ'անցնի ու վերադարձիս գործնական բան մը պետք է հետս բերե՞մ, թե՞ չէ: Կամաց-կամաց այն ձախորդ եղրակացության կու գամ, որ իմ ջանքս մեկ թևով երկու ձմերուկ բռնել ուզել է, որը կարելի բան չէ, եթե հավտանք ժողովրդական առածին. ա՜, երբ կմտածեմ, որ արտագրելու գուցե ամենաուժեղ տարիներս է այս, որ այսպես կվատնվի. հիմա ալ որ Փարիզ կ'երթամ, գեղարվեստի ծո՛ցը, առաջուց գիտեմ, որ ներքին հակասություն ավելի պիտի սրվի, ավելի պիտի տանջե ու ավելի ալ պիտի խանգարե թե՛ տրամաներս և թե՛ առևտրական նամակներս: Է՛, ի՞նչ գլուխդ ցավցընեմ, կ'ընեմ, ինչ որ կրնամ. մնացածը գլուխը ջա՛րը. մարդ իր կաշվեն դուրս գալ չի կրնար:– Ուղարկած «Վոտակդ» իր ժամանակին ստացած եմ և մինչև հիմա կարդացի ամբողջ առաջին գրական մասը մանագիտի մը կատարյալ համբերությամբ: Եղրակացություն կ'ուզե՞ս. բոլոր վիպակները՝ մեծ ու փոքր, «հավուր պատշաճի» սիրուն կամ տգեղ «հոգվածներ» են, գեղարվեստական ու ապրելու ընդունակ ոչինչ. ամենեն գեղարվեստականը... երևակայե՛. չէ՛, չես կրնար, եթե չես կարդացեր և ապահով եմ, որ չես կարդացեր... Պուշյանցի վիպակն է[2]. սկիզբն ու վերջը, իհարկե, ավելորդ, քիչ մըն ալ գուցե անճարակ գրված, բայց մեջը կյանք կա, կռիվ՝ իտեալիզմի[3] խորտակումը նաթյուռալիզմի[4] մեջ, ամենայն տեղ նո՛ւյնը. այդ հինգերորդ գինեգիժը պիժ է հենց սկզբեն, որովհետև իտեալի մարդն է, տարբերը, բացառիկը, մաքուրը: Իտեալիստն է, որ կյանքի խնճույքին, եթե պատահի, որ մասնակցի, ամենեն շուտ կը հարբի, և եթե անգամ մը հարբեցավ, ալ վերջացավ: – Ավետիքի երգը տեղ-տեղ խորն է ու գաղափարը սիրուն[5]. ամանն է անշնորհք ու հինցած: Փափազյանի երգի գաղափարն ալ հետաքրքիր է և նոր մեր գրականության համար[6], միակ թյուրիմացությունը վերնագրին մեջն է, հոտ երգ չի կա և ըմբոստ ըլլալու համար

Հարկ չի կա իհարկե կոպիտ ու խառնակ ըլլալու: – Կը գրես, թե մեր բոլոր լրագիրները չուտով իրենց խմբագիրները փոխեն պիտի. ինչպե՞ս թե, բազկաթոռներու ծածկոց խո՛մ չեն այդ խմբագիրները, որ բոլորը միասին փոխել կարողանանք ու լվալ տանք. թեև եթե կարողանայինք հիանալի բան կ'ըլլար, որովհետև սաստիկ են թոզոտած ու կոզոտած: Հոգիդ սիրես, երբ բան մը կը գրես, մարդավարի գրե՛, որ բան հասկընամ. գրածներուդ միչտ պոչը կա, գլուխը չի կա: Այդպես ալ մինչև հիմա դեռ չեմ հասկըցեր՝ թատրոնական ընկերութիւնը կազմվեցա՞վ[7], չէ՞, ինչպե՞ս, Թիֆլիսի ներկայացումները ընկերութի՞ւն է, որ կու տա. չէ՞ որ դուն անդամ էիր մասնաժողովին. ինծի պատմելիք ոչինչ չունի՞ս: Գալով իմ տրամայիս՝ մինչև որ ինծի համար իր վերջնական կաղապարը չառնե՝ ձեզի խրկել չեմ կրնար[8]. ըսենք այդ բոլորը այդպես, քանի մը հեղ արտագրելու ժամանակ ալ չունիմ հիմա. ձեր նկատողութիւնները վերջն ալ կրնաք ներկայացներ, իսկ սրբագրելու համար երբեք ուշ չէ. ես կրկին ու կրկին պատրաստ եմ մշակելու՝ օգտվելով նկատողութիւններեն: Դեռ պետք է փոխադրել ալ. ուրիշ ցավ մըն ալատ է. գրած եմ արևմտյան լեզվով, բայց այդպես բեմ հանել կարելի չէ. վերին աստիճանի անբնական պիտի հնչե կովկասյան ականջներու. պետք է թարգմանել: Իսկ հիմա գլուխս բռնված է հաջորդ տրամայովս... երևի անունը կը դնեմ «Սրտի մարդիկ»[9]: Բուռն անձնական սիրու աղջիկ մը և ուժեղ հասարակական սիրու տղա մը, ինկած իր պարտականութեյան զգացումին ու աղջկան մեջ. ու հոտկե վարանքն ու մաքառումը: Կը կարծեմ, որ հաջող բան պիտի դուրս գա. կարծելը, կարծեմ, մեղք չէ. և վերջապես ո՞ր գրողը այդ մեղքեն զերծ է: Իսկ դուն ինչ կընես, կը գրե՞ս. չատ ես լուռ, կը կասկածեմ, որ անակնկալ մը կը պատրաստես ինծի: Մեր մյուս վերնատունականներն ինչ կընեն. բան գրած ունի՞ն, հոտ եղողներդ հավաքումներ ունի՞ք, թե՞ բոլորովին «անունը կա, ամանումը չի կա»: Գրած ես, թե նոր անդամ մըն եք դուեր մեր Վերնատան[10]. այդ ինչ աներևակայելի պյուտ. մինք որ Դիոգինեսի լապտերով ամբողջ երկու տարի կը փնտրեինք[11]. ընտրելիդ ես ամենևին չեմ ճանչնար «իբրև մարդ», իսկ «իբրև գրագետ» չատ քիչ. այնպես որ իմ ձայնս կը դնեմ բացարձակորեն քու տրամադրութեյանդ տակ: Եթե մյուս ընկերներու ձայնն ալ չահի, մկրտեցե՛ք. միայն լավ աչքի առաջ ունեցեք «մարդը», միայն «գրագետը» հերիք չէ. միայն համենայն դեպս քու քանտիտատը լավ վկայա-

կանով կը ներկայանա. ով որ կանտորա, բանկ ու առևտրական վարժարան մտնելեն վերջը նորեն Պատնասի փեչերն ի վեր կը մագլցի՝ վստահելի է, գոնե գրական տեսակետեն: – Դերենը, ուրեմն, Մոսկվա[12]. ինծի ուղարկե՛ իր հասցեն, առանց մոռնալու: Իսկ Նիկոլին ու Ավետիքին իմ սրտագին բարևները: Տարին չի լրացած գուցե հավաքվինք նորեն մեր Վերնատունը, որ երևի մինչև այն ատեն ավելի ընդարձակված ալ կըլլա... գոնե իբրև չենք:

– Ես երկու օրեն կը մեկնիմ Հոսկե, հաջորդ լուրս Փարիզեն կ'ըստանաս: Միայն, Հանե՛ս չան, քիչ մը քիչ ծուլութիւն ըրե՛. կը տեսնաս ինչքան համեստ եմ, չեմ ըսեր ծուլութիւն մի՛ ըներ. անպատճառ չեքերուն մի՛ սպասեր ինծի մեկ-երկու երես բան գրելու համար: Դե՛հ, կնոջդ տուր բարևներս և ընդունե՛ իմ ջե՛րմ, ջե՛րմ, սրտանց համբույրս.

Լևոնդ

1901, դեկտեմբեր 30,
Անվերս

37. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1901, XII 31, Անվերս

Սիրելի՛ Ստեփանս: Սպասեցի, սպասեցի իզուր քեզմե լուր մը ստանալու, նախ մտածեցի վիրավորվիմ, վերջը վճռեցի բարկանամ, մինչև որ քիչ-քիչ հասա այն փիլիսոփայական եզրակացութեան, թե դարտակ բան է, լավն ան է՝ նորեն ես ինքս նստիմ քեզի գրելու:

Երևի արդեն ականջիդ հասած կ'ըլլա իմ հռչակավոր տոն-քիխոտութիւնը, առևտրական վարժարանի մեկ դռնեն ներս մտա, ու մյուսեն դուրս. իմ տեղս չէր, սիրելի՛ս, և հիմա չգիտեմ՝ միայն առևտրական վարժարանի նկատմա՞մբ է այդպես, թե՞ ընդհանրապես առևտուրի. դեռ կը հուսամ, որ որևէ առևտրական գործի մեջ պիտի կրնամ ոտքիս տեղ ընեմ. դեռ կը հուսամ, բայց միևնույն ժամանակ սկսեր եմ վախնալու միգուցե հոս ալ մեկ պտուռնեն մտնեմ, մյուսեն դուրս գամ, ու մնամ նույն թափառական տոն-քիխոտը. ա՛, եթե գիտնաս ալ որչա՛փ ձանձրացեր եմ այս անվերջ ու գրեթե աննպատակ թափառումեն. ինծի համար ուղղակի անհասկնալի խռեալի պես բան մըն է մտածելը, թե ես ալ

երբևիցե տեղ մը հաստատ գործ, տուն ու կապ կրնամ ունենար: Անիծ-
ված արվեստ մը ունիմ, որ ո՛չ հաց կուտա, ո՛չ հանգիստ-դադար, ո՛չ
ուրիշ բանով զբաղվիլ, ո՛չ ալ գլուխ ծռել ու բավականանալ: Աչխարհք
տեսած, ճաշակը սրված, ամեն կախումե խրտչող, բարձրեն նայելու
պահանջ, դե՛հ, եկ ու հաշտեցո՛ւր. թե՛ նյութականապես բոլորովին
ըրկվիլ չեմ ուզեր, թե՛ հոգեկան վայելքներես ձեռք վերցնել չեմ կրնար.
իսկ այդ երկուքը իրարու հետ երբեք չեն լծակցիր, երբ մարդ ինք իր
ճակտի քրտինքովը ունենալ ուզե. վերջապես, հոգի՛ս, ի՞նչ երկարեմ,
չատերեն մեկն ալ ես. գրագետ մըն եմ, ուզեմ-չուզեմ, փոխել չեմ
կրնար. դեռ կը չանամ, դեռ հույս ունիմ նյութապես ալ բոլորովին
խեղճ չըլլալու. եթե չեղավ՝ գլուխը քարը:

Հիմնական ծրագիրս սա՛ է. կ'երթամ Փարիզ, աչխատելու եմ առևտրական նամակագրության վրա՝ ինչքան որ կարելի է. սա՛ է միայն, ինչ որ իրոք ես կրնամ գուցե, և ինչ որ գործնականապես ինծի պետք կրնա գար. մնացածը դարտակ բան է, և վերջապես ի՛մ բանս չէ: Մյուս կողմեն իհարկե կը չարունակեմ իմ գրական աչխատանքս. նոր տրամս ավարտած եմ արդեն[1], երրորդ մըն ալ կ'ըզբաղեցնե հիմա գլուխս[2]: Փարիզ օգտվելու եմ ժամանակես թատրոնները չափչփելու համար. բեմի վրայեն չատ բան կարելի է սորվել բեմական գրվածք արտադրելու համար. արդեն այդ է գլխավորապես ինծի Փարիզ քաչողը. թե չէ մեծ քաղաքներու հետ ճչմարիտ ես չատ գլուխ չունիմ. և չեմ կարծեր, որ ամբողջ ժամանակս Փարիզ մնամ, գուցե անցնիմ գավառական քաղաք մը կյանքին ու լեզվին ավելի մոտիկ ապրելու համար: Դեռ կը մտածեմ տարվան մը չափ քարշ գամ այս կողմերը, մինչև ֆրանսերենս մարդավարի ոտքի ելնե, ու առևտրական ֆորմուլները գլխուս անկյունները տեղավորվին, այն ատեն կը գառնամ նորեն Կովկաս... ինծի «գործ» մը վինարելու, այսինքն տրամա գրելեն զատ ուրիշ գործ մը, հացի գործ մը: Ուրիշ խոսքով՝ հո՛ն եմ դեռ՝ ուր որ էի՛, և երբ տարիե մը վերադառնամ՝ նորեն կ'ըլլամ հո՛ն, ո՛ւր որ հիմա ե՛մ և ուր որ հոտ եղած ատենս էի՛, եթե խնդրին գործնական մարդու աչքով նայինք: Բարևներս տիկնոջդ ու համբույրներս քեզի.

Լևոն

38. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Մարտի 20, Փարիզ>

Թանկագին Հիվանդա[1], ներե՛ ինծի, որ դեռ կ'ուշացնեմ քու համբավավոր քերթվածիդ պատասխանը[2]. այնքան գործ ու աշխատանք ունիմ, որ գլուխս իմս չէ. միայն այս մեկ-երկու օրը կ'աշխատիմ, որ անպատճառ կերպ մը գլուխս իմս դարձնեմ ու քեզի գրեմ երկա՛ր: Եթե պիտնաս որչա՛փ, որչա՛փ կարոտեր եմ քեզի: Համբերութի՛ւն, ուրեմն, ու առայժմ համբույրներս:

Լևոնդ

39. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Իմ սիրելի ու անչնորհք Ստեփա՛նս, ինչպես կ'երևի ես ավելի չուտ Թիֆլիս պիտի հասնիմ, քան քու նամակդ Փարիզ, արդեն ճչմարիտ ապասելն ալ դադրեցա. եթե տիկնոջդ սիրալիր երկտողը չլիներ, մինչև անգամ պիտի չդիտնայի՝ նամակներս ստացա՞ծ ես, թե ոչ: Տիկնոջդ կը հայտնե՛ս իմ ջերմ շնորհակալութիւնս. կը հայտնե՛ս, որ քրոջը մոտ արդեն եղած եմ քանի մը անգամ[1], ուր քանի մը անգամ արդեն թեյ ենք խմած ուսանողավարի. կը հայտնե՛ս, որ շատ ուրախ եմ իր դպրոցի ու գործերու հաջողութենեն, և որ ինքը այդպես գոհ է և զբաղված. կը հայտնե՛ս, որ սրտանց ուրախ եմ մանավանդ Լևոնիկի ու Սուրբիկի[2] հառաջդիմութեանը և որ պինդ-պինդ կը համբուրեմ այդ երկու չարաճճիները: Այս բոլորը կը հայտնես տիկնոջդ իմ ջերմ բարևներուս հետ միասին. իսկ քեզի՞. քեզի ի՞նչ գրեմ: Ահա՛ այս երկու ամիսեն ավելի է, որ Փարիզ եմ ու գլուխս կախած կ'աշխատիմ. և միայն կ'աշխատիմ երկայրի. մեկ կողմեն գրական աշխատանքս, մյուս կողմեն առևտրական: Փարիզ գալուս պես մոտս նորեն առևտրական գործնական վարժարան մը. ինչ որ Բելժիկ կը փնտրեի՝ բաղդ ունեցա հոս գտնելու, արդի վարժարանիս ամենամեծ առավելութիւնը այն է, որ բոլորովին գործնական հիմքի վրա է դրած, կենդրոնացած է էականի վրա և, որ գլխավորն է, քիչ ժամանակ միայն կը պահանջե. երկու-երեք

ամսվա մեջ առաջին մասը կարելի է ավարտել, իսկ առնվազն երկու եռամսյակն կարելի է դիպլոմ ստանալ. այնպես որ մինչև օգոստոս հույս ունիմ քննություն տալու և թղթի կտոր մը ձեռք ձգելու. թե՛ այս թղթի կտորը և թե՛ իմ արդի այս աշխատանքս բանի պետք գալու է, թե ոչ, չիտակը ես ինքս ալ չգիտեմ. մի անգամ սկսեցի՝ պետք է վերջացնեմ. «էչը հեծնելը մեկ ամոթ, իջնելը երկու». վերջն ալ կը տեսնենք վե՛րջը. առայժմ կ՝աշխատիմ պարտք մը կատարելու պես, նույնիսկ տեսակ մը հետաքրքրությամբ. երեք-չորս ամիսեն, երևի, գլուխս կ՝ազատեմ, կը կապեմ նորեն պայուսակներս, և, երևի, Հոկտեմբերի սկիզբները կը նստիմ նորեն տիկնոջդ դեմ, սեղանին ծայրը քեզի հետ կողք-կողքի, ու կը խոսինք նորեն հինեն ու նորեն, մնացածը, սիրելի՛ս, դարտակ բան է: Գալով գրական աշխատանքիս՝ գործնական առայժմ ոչինչ. այս ցրված ուժերով իհարկե գրել չեմ կրնար. ո՛չ կեդրոնանալու միջոց ունիմ, ո՛չ ժամանակ, բայց կը կարդամ, և լրջորեն. կը հետևիմ ֆրանսական թատերական նորագույն գրականության, համենայն դեպս, նույնիսկ գրական տեսակետեն, հույս ունիմ որ այս տարին իզուր անցած չլինիը ինծի համար: Վե՛րջապես:

Ա՛հ, հոս անգամ մը օլիմպոդ Բաբայաններու մոտ[3] հանդիպեցա տիկին Ղատիայանին[4], իհարկե իսկույն խոսք եղավ ձեր մասին. իսկ նախորդ օրն ալ քու քենուդ մոտ պատահեցա փոքր տղուն, ա՛ն, որ անգամ մը ձեր տանն եմ հանդիպած պինվոլականի համազգեստով: Մյունխենեն էր եկած. անակնկալ եղավ ինծի համար. բավական խոսեցինք, վրաս շատ համակրելի տպավորություն ըրավ:

Փակելով նամակս՝ պինդ կը համբուրեմ քեզի և չեմ ըսեր, թե կ՝ըսպասեմ պատասխանիդ:

Լևոն Սեղբոսյան

1902 մարտ 24
Փարիզ
Զգիտեմ հասցես հայտնա՞ծ եմ, թե ոչ.
6, Place de l'Ode'on, 6

40. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Ապրիլի 3, Փարիզ>

Վերնատան պսակավորներուն[1] համբույրներս ու բարևս:

41. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1902, ապրիլ 7, Փարիզ

Իմ անգին Հաննես, նոր վերադարձա նվագահանդեսեն. Պերլիոզի «Ծաուստը»[1] իր աչխուժ երաժչտութիյամբը դեռ ականջիս մեջն է, գրական բնապզներս արթընցած. ամենեն սիրուն ժամս գուցե քեզի գրելու: Կը վառեմ ճրագս ու կ'առանձնանամ յոթներորդ հարկի սենյակս: Եթե յոթներորդ չէ, վեցերորդ կը լինի ահնպատճառ. դեռ լավ չեմ համրած, թեև օրը քանի մը անգամ կ'իջնեմ ու կ'ելնեմ: Համենայն դեպս ա՛յնքան բարձր եմ, որ չարունակ տրամադրութիյանս տակն են Փարիզի գեր, նիհար, կղկղզված ու չիք, դեմոկրատ ու արիստոկրատ... ծխնելույզները, ա՛յնքան բարձր, որ ճակատս բաց կընամ ներկայանար մեր Վերնատունը. վե՛ր, միշտ վե՛ր, այդ չէ՞ մեր Վերնատան ազվոր դևիզը: Օ՛, ես չատ վերերն եմ հիմա. վերերը ու միայնակ. այդ երկուքը անբաժան են իրարմե: Ծով Փարիզը իր տենդոտ և կրքոտ ազմուկովը, չուրջիս եռուզեռումը ու իմ սեփական ամենօրյա աչխատութիյուններս, դպրոցս, հաչիվներն ու դրքերս բոլորը միասին առած նրտիս օտար ու խառնակ մթնոլորտ մըն է միշտ, ուր հոգիս կը հածի տեսակ մը չվարած ու անծանոթի մը կարոտով ու միայնա՛կ, բոլորովի՛ն միայնակ. ա՛, չի կարծես տրտունջ են այս տողերս, ամենևի՛ն. ով վերերը կը տենչա, պետք է սորվի վերի միայնութիյանը: Զգիտե՛մ, գուցե անմիտ ու անամեջ բառեր են միայն այս բոլոր ըսածներս, բառեր, դարտակ հնչյո՛ւն միայն, ներե՛, կարելի է նվագահանդեսի հնչյուններուն ազդեցութիյանը տակն եմ դեռ: Ուրիչ անգամ մը ավելի դրական կը լինիմ:

Ինչ պատմեմ քեզի իմ կյանքես ու ուրկե՞ սկսիմ. ջրհեղեղե՛ն: Հունվարի առջի օրերը, իրիկուն մը, ճեպընթացս իր բոլոր ուժովը չոգեպինդ եկավ ու խրեցավ Փարիզ: Ամբողջովին դրագետ էի այդ օրերը, վաճառականը քաչվեր, կծկտեր էր ներսս անկյուն մը՝ տեսնելով, որ իրեն չատ երես ավող չի կա: Մուսային հետ թև-թևի ընկեր էի վոզոցներն ու թատրոննները, տեսակ մը հոսանքեն տարված, տեսակ մը անհանգիստ՝ անորոչ ու տարտամ վիճակես: Պետք էր վերջ դնել, պետք էր դրական դառնալ, պետք էր «լուրջ մտածել» և դուն դիտես արդեն, թե ի՞նչ ըսել է մեզի նմաններուն համար «լուրջ մտածելը»: Օ՛, այդ

սարսափելի «լուրջը». և սկսա լուրջ մտածել. ընկա աջ ու ձախ, գտա արդի դպրոցս, հավնեցա, մտա ու սկսեցի աշխատելու, առանց ուշք դարձնելու մուսայիս բարձրացուցած սոսկալի փոթորիկներուն: Ալ դավաճա՛ն, ալ անհավատարի՛մ, ալ վա՛տ, ալ ի՛նչ ըսես չնետեց երեսիս. ինծի Անվերսին հետացնելեն վերջը՝ խեղճը ալ համոզված էր, որ վերջացավ, որ ինքը հաղթանակած էր վերջնականապես. խե՛ղճ մուսաս. լաց, աղմուկ, իրար մեղադրել երկու կողմեն: Ես բացի «Վտակը» ու քու մուսայիդ կռիվը դրի իր առջևը[2], բայց որո՞ւ կըսես, ի՞նչ երկարեմ, խնդիրը հասավ ապահարզանի... գրեթե: Կռվեցանք ու բաժնվեցանք: Այս երեք ամիս է՝ զատված ենք իրարմե ու մնացի միայնա՛կ, բոլորովին միայնա՛կ. անկե ի վեր մեկ-երկու անգամ միայն թատրոնը հանդիպեցանք իրարու, բայց ո՞ն ալ, ե՛ս ալ իրար չի տեսնել կը ձևացնենք, թեև քանի գաղտուկ աչքս կը բարձրացնեմ իր մեկամազոտ, կիզիչ ու անժամ հայացքին կը հանդըպիմ, որ իզուր վախցնել կը ջանա. ա՛, այդ վայրկյաններուն եթե գիտնաս ի՛նչ սոսկալի խայթ կ'ըզգամ մեջս, խայթ ու ամոթ ու ստորնացում. ինծի կը թվի, թե իրավ որ դավաճան մըն եմ, թեթևամիտ մը, որ իզուր ու օտար աշխատութեյան մեջ կը վատնիմ ուժերս ու երիտասարդութեյունս, մեկ կողմ դրած կռչումս ու մուսայիս ներշնչումները: Հիմա ալ անով ինծի կը խաբեմ, որ չատը գնաց, քիչը մնաց. արդեն գիտես, որ Հոկտեմբերին, գուցե նույնիսկ քիչ մը ավելի չուտ, կը լինիմ հուտ, մեր Վերնատունը, ուր պատիվ կ'ունենամ վավերացման ներկայացնելու երկրորդ տրամաս[3]: Եթե գիտնաս ի՛նչպես սիրտս դեպի ետ կը ցանկա, դեպի... տուն պիտի ըսեի, որ գրիչս կանգ առավ. տո՛ւն ու կը ժպտիմ տեսակ մը ինծի հեգնելու, կարծես, կատակելու համար, բայց լեղի է այդ ժպիտը ու կը նախանձիմ անոնց, որոնք «տուն» մը ունին, ուր կրնան դառնար: Վերջապես, ինչպես կը տեսնեմ, այսօր սաստիկ սանտիմենթալ եմ տրամադրված. պետք է թոնը փոխել: Սակայն այսքանը ճի՛շտ է, որ կարոտով կը հիշեմ մե՛ր կյանքը, մե՛ր շրջապատը, մե՛ր տեղերը, մե՛ր բնությունը, մե՛ր ժողովուրդը: Հիմա սկսեր եմ մինչև անգամ ազգային դառնալու. սիրելու համար պետք է հեռանալ, երևի՛: Նիկոլի ականջը խոսի: Գալով արդի կյանքիս՝ մեկ բառով ամեն բան կրնամ ըսեր՝ չոփչոր: Բելժիկ ընտանիքի մեջ էի միշտ, հիմա այն ալ չունիմ: Կապրեմ հյուրանոցը, կուտեմ բեստորանը[4], ֆրանսացիներու հետ կապեր չի կան, հայերու ու ռուներու հետ ես գլուխ չունիմ և արդեն չարունակ

կ'աշխատիմ, տեսակ մը լարված աշխատանքով չանդրադառնալու, չի մտածելու ու հնար եղածին չափ չուտ ժամանակը սպաննելու համար: Քու երազումդ տեսած ու պորտոսիտիկ[5] նամակիդ մեջ վերստեղծած «փափուկ» ու «ճերմակ»-ներեն իրավ որ դեմս ու կողքս չատ կան, միայն ո՛չ հետս: Շատ-շատ ուրիշ բաներու հետ (յաղագս քսան ու չորս պատճառանաց) պետք է երկու բան՝ վոզ և ժամանակ, որ իսկապես ըսած միևնույն բանն են. Փարիզ զվարճութեան քաղաք է՝ ըսեր են, միայն պետք չէ մոռնալ ավելցնելու՝ վոզավորներո՛ւ համար. Փարիզ ամենասիրուն սալոններու և ընկերական ամենասքանչելի շրջանակներու քաղաքն ալ է, միայն... նորեն վոզավորներու համար. իսկ անվոզներուն բաց է միայն վոզոցը՝ իր վարի խավի հաճույքներովը: Իսկ ե՛ս, հոգի՛ս, եթե վերինը ունենալ չեմ կրնար, վարինով ալ գոհանալ չեմ կրնար. և կը կարծեմ, որ ինծի նմաններու ամենամեծ դժբաղդութիւնն ալ հոտ է արդեն. վերցո՛ւր՝ ինչ որ կա ձեռքիդ տակը. ատոնք են խելացին. իսկ թե մենք իսկապե՛ս ապուշ ենք, այդ նորութիւն չէ կարծեմ. ապուշ չեղողը, ան ալ մեզի պես ժողովուրդի մեջ, գրագե՞տ կը դառնա: Կեցցե՛ Վերնատունը:

Վերնատո՛ւնը. ուրեմն նորեն սկսեր է կենդանանալ, ինչպես որ կը դրես. ուրախ եմ. երևի այդ ալ մեր Վերնատան ճակատագիրն է, միշտ երկը-երկը. սիրուն թիվ է, համենայն դեպս: Նիկոլին ու Ավետին ջերմ համբույրներս. ի՞նչ կընեք, ինչի՞ մասին կը խոսիք, ի՞նչ կը ծրագրեք. Նիկոլը աշխատանք ունի՞ դոնե: Ավետի մասին պիտեմ որ հարցնելն ալ ավելորդ է. ամառը ջրազաց, ձմեռը հողմաղաց: Անոր ջրաղացը հիմա դուն ալ եղար ուրեմն. այնպես որ միակ չմկրտված հեթանոսը ես եմ այժմ. վերադարձիս առաջին պարտքս: Իսկ դո՞ւն, ի՞նքդ... Քու բանաստեղծական նամակդ իր երազային ու ծովյալ թոնին հակառակ՝ չատ ծանր տպավորութիւն ըրավ վրաս: Ուրեմն դուն նորեն հիվանդ ես, կամ էի՛ր և այդպես երկա՛ր. ի՞նչ է տկարութիւնդ, մինթե ամառը չօգնի՞ց. այնքան անչնորհք ես, որ ոչինչ չես գրած դեռ: Եվ նյութականդ ի՞նչ օրի է. է՛, ի՞նչ հիմար հարց, կարծես չգիտեմ. գուցե ամենեն ազնիվն է խնդրի այդ հիվանդոտ կողմը չի շոշափեմ: Ուրեմն դառնամ նորեն գրականին. ինչ նորութիւններ կան հրապարակին վրա որևէ ուշադրութեան արժանի. դուն առենոք-ժամանակոք խմբագրական մեծ փոփոխութիւններու մասին գրելու ինծի սպառնացեր էիր: Է՛, սիրելի՛ս, մեր խմբագիրները բոլորն էլ անդամալույծ են, այնպես

հեշտությամբ տեղերնուն չեն չարժվիր: Գարակյոզյանի սիրուն դռնքիչոտությունը լսած եմ, բայց անոր «Տարազի» մեջ գրածները չեմ կարդացած[6]. եթե երբեմն-երբեմն «Տարազի» հետաքրքիր թիվերեն մեկ-մեկ ուղարկես, շատ ուրախ կը լինեմ: Լսած էի, որ Ալայանի հոբելյանին կը պատրաստվին[7]. մոտեն ոչինչ չգիտեմ, իհարկե կը գրես: Դերենիկի հետ կապ ունի՞ք հոտ. ես բացարձակապես ո՛չ մեկ լուր չունիմ. հասցեն ալ չգիտեմ, որ գոնե մեկ- երկու տող վոխանակեմ, հետաքրքիր է՝ գո՞հ է իր նոր վիճակեն, բան դուրս գալո՞ւ է, թե ոչ:

Դե՛, հոգի՛ս, ուշ գիշեր է արդեն, վաղ առտու կանուխ ելնելու եմ աշխատելու, ու նամակիս թուղթն ալ հասեր է իր ծայրին, պետք է վերջ դնել: Տո՛ւր հատուկ բարև կնոջդ: Շուտով պատասխանե ինձի, նորեն ամիսներով սպասցնել մի՛ տար. և վերցո՛ւր ջերմ ու պինդ համբույրներս:

Լևոնդ

42. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Ապրիլի 15, Փարիզ>

Օրիորդ Հեղինեեն[1] իմացա, որ առտղջ ես արդեն ու շուտով գնալու ես գյուղ՝ բոլորովին կազդուրվելու. հաջողությո՛ւն. այս նարինջ աղջկան[2] ինձոր այտերուն առողջությունը կը մաղթեմ քեզի, իսկ ինձի՝ մեկ-երկու տող գիր քեզմե:

43. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Ապրիլի 28, Փարիզ>

«Արարատի» բանաստեղծին.

Կը չնորհավորեմ «Արարատի» մեջ տպած սիրուն ոտանավորդ[1]: Անձամբ ո՛չ «Արարատն» եմ տեսած, ո՛չ ալ քու ոտանավորդ կարդացած. միայն կասկած չունիմ, որ սիրուն բան պետք է լինի, որովհետև... որովհետև «Մշակը» անվաներ էր «տափակ»[2]:

Լևոնդ

44. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Մայիսի 18, Փարիզ>

Մեր Վերնատան նահապետի[1] կենա՛ցը[2]:

Լևոն

45. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հունիսի 3, Փարիզ>

Պարոննե՛ր:

Պատիվ ունիմ հայտնելու Վերնատան մեծապատիվ անդամներուդ, որ ձեր մոլորյալ Փարիզի վերնականը իր գործերն արդեն ավարտած, տոպրակները կը կապկպե հիմա Զվիցերիա անցնելու ու հոն լեռնային օդին մեջ առևտրական փոչիներեն մաքրվելու համար, որովհետև իր երազները դեպի Պառնաս ու դեպի Վերնատուն կը ձգտեն նորեն: Պարոննե՛ր, իմ կանացի պերճախոսութիյանս բավանդակ անտրամաբանութիյամբը կը բարեխոսեմ ձեզի[1], որ ներող ըլլաք ձեր բուխկալաներ-տրամատուրկի հիմար «խելածութիյուններուն». դուք <1 անընթ.>...

46. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հունիսի 9, Փարիզ>

Սիրելի՛ս, ուղարկե ինծի՛ անմիջապես «Հնութիյունք Ակնա» գիրքը[1], միայն կը խնդրեմ անմիջապես. ուրիշի համար է և այդ ուրիշը միայն շուտ ստանալու համար է, որ իմ միջնորդութիյանս է դիմած: Գրքի գինն ու միջնորդ չեքը, իհարկե, իր կարգին: Կ'ըսպասեմ նամակիդ[2] շարունակութիյանը: Հատաջիկա չարթու ես ինքս ալ կը գրեմ քեզի:

Համբույրներով՝ Լևոնդ

47. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հունիսի 23, Փարիզ>

Իմ անգին Հաննես, երևի զարմացած ես լռությանս. պարզապես ծուլություն. այս երեք չաբաթ է պարապ-սարապ կը թափառիմ Փարիզ. ոչ կը կարդամ, ո՛չ կ'ըզբաղիմ, ո՛չ ալ նամակ. քեզի ամեն օր գրել կ'ուզեմ ու ամեն օր ետ կը մնա: Սակայն չեմ ուզեր Փարիզեն Հեռանամ առանց նամակիդ պատասխանը գրելու: Կիրակի գիշեր է հիմա, Փարիզի վերջին կիրակիս: Առանձնացեր եմ սենյակս ու կը կարդամ անգամ մը ևս քու զույգ նամակներդ[1] պատասխանելես առաջ. կը կարդամ ու կը մտածեմ: Չի զարմանաս, եթե ըսեմ, որ մտածումս տխուր չէ, թեև նամակներուդ մեջ տխրեցնող տարրերը չեն, որ կը պակսին: Չգիտեմ, իմ տրամադրությո՞ւնս է, քու նամակիդ թո՞ղը, թե ի՞նչ, բայց ես ակամա կը խնդամ: Կ'ըզգամ չա՛տ խոր, որ ձմեռը խիստ դառն վայրկյաններ ես անցուցեր. նրբազգաց մարդու համար անտանելի տանջանք մըն է քու նկարագրած՝ մանրամասնություններդ, գիտեմ, բայց ամեն առավելություն իր հետ իր տանջանքը ունի, Հոգի՛ս: Քեզի նման, կյանքին չատ բարձրերեն նայող, հպարտ, մաքուր ու նրբազգաց հոգին բացառիկ է: Ու ճիշտ իր բացառիկ ըլլալուն համար ալ պիտի տուժե: Սովորական մարդիկը ամեն բան կը ներեն, բայց իրենցմե տարբերվիլը, իրենցմե բարձր թռչիլը չեն ներեր: Ու ամեն կերպ կը ջանան, ըլլա գիտակից, թե բնազդաբար, իրենց վրեժը լուծելու... տանջելով. իրավունք չունիս սպասելու, որ անոնք քեզի հասկընան: Դուն պետք է, որ անոնց հոգին հասկընաս, եթե հասկընաս՝ կը ներես և հոտ ալ կը զտնիս, գուցե, անոնց քեզի պատճառած «կյանքիդ թունավորման» հակաթույնը: Կը տեսնե՞ս, չեմ ըսեր, որ չի տանջվիս չրջապատիդ պզտիկ խայթոցներեն, որովհետև նրբազգաց մարդու համար աւիկա անկարելի է: Չե՛մ ալ ըսեր, որ արհամարհես անոնց ծաղրն ու կոպտությունը. կոպիտ սրտերու բաժինն է, իրոք, արհամարհել կարողանալը: Ճիշտ, եթե կ'ուզես, բայց համենայն դեպս համոզված եղիր, որ քու տանջվելուդ իսկական աղբյուրը քու մեջդ է. քո՛ւ առավելություններդ: Եվ եթե բնական օրենքով մը դուն ալ կուզես քո վրեժդ լուծես անոնցմե՝ ավելի որո՛շ ու ավելի խո՛ր դարձուր քու ու անոնց մեջ եղած զանազանությունը: Այս բարոյական դատողություն-

ներեն պատ՝ պիտեմ ես նաև ուրիշ բան մը, որ կրնաս քու հոգուդ առջևը վահան բռներ, անթափանց վահան մը, որուն դարնվելիս բոլոր գծուծ նետերը գետին կը թափին. գրե՛: Գրե՛. և այն ժամանակ դուն կը բարձրանաս քու աչքիդ ու այնքան քեզի վերը կ'ըզգաս, որ այդ մանր ցավիկները ծիծաղելի կը դառնան: Գրե՛ ու առով լուվին փոխանակած կըլլաս քու փոքրաթիվ ճշմարիտ բարեկամներուդ թե՛ զոհողությունը, թե՛ ակնկալությունը: Ինծի կը թվի, որ առանք են քու պարտատերերդ ամենեն դյուսավորները, որոնց հաշիվը ամենեն առաջ պիտի մաքրվի, եթե քու բարեկամներուդ մոտ գլուխդ բարձր պահիլ կ'ուզես: Գրե՛, հոտ է քու վրեժդ ալ, քու պարտքերուդ վճարումն ալ, քու կյանքիդ խորհուրդն ալ ու, եթե կ'ուզես, քու երջանկությունն ալ: Շատ լավ գիտեմ, որ նորություններ չեն քեզի գրածներս, գիտեմ նաև քու բոլոր առարկություններդ, որոնց մեծագույն մասը բացարձակապես իրավացի են: Գիտեմ, բայց և կը պնդեմ իմ ըսածս: Եվ ավելի մեծ անակնկալ, ավելի մեծ ուրախություն չես կրնար պատճառեր ինծի իմ վերադարձիս, քան եթե արժեքավոր որևէ մը թուղթ դնես առաջիս քու գրածջնջած խոշոր տողերովդ: Իսկ իմ վերադարձիս հապիվ երեք-չորս ամիս է մնացեր, պետք է չտապել: Եվ ինչպես դյուրավ կրնաս ենթադրեր, այս տողերս ու կոչս միայն քեզի չէ, որ կ'ուղղեմ, այլև ինքս ինծի. ես ալ կ'ուզեմ նոր բան մը բերեմ հետս, բայց հինեն, որու մասին արդեն քանի-քանի հեղ գրեր եմ քեզի: Լոզան երթալուս պվիսավոր պատճառն ալ այդ է. հանգիստ, սիրուն քաղաք մը, բնության մեջ: Հույս ունիմ տրամադրվիմ ու գրեմ, տեսնեինք: Իմ հաշվովս դուն ալ հիմա արդեն ամարանոցը պետք է ըլլաս: Սաստիկ կը հետաքրքրվեմ, թե ի՞նչ-կ'ընես, ի՞նչ հալի ես, «Ա՛խ, Վառյա»-դ ի՞նչ հալի[2] է. սքանչելի՛ կատակ: Վիպակիդ չարունակությանը կ'ըսպասեմ արդեն այս քանի առեն է, որ չի գար, հակառակ ուված խոստումիդ. փիս թերթոն-ռոմանիստի պես ինչո՞ւ կեսին լսեցիր[3], գրե՛ չոտով. կրնաս երևակայեր, որ հետաքրքիր եմ հետևանքն իմանալու, այսինքն հանգուցյն ու լուծումը, գրականորեն խոսելով: Այնքան անշնորհք ես, որ Ապայանի Հոբելյանի համար անպամ տող մը չի գրեցիր ինծի: Միակ շնորհակալությունդ, միակ ճշտապահությունդ «Ակնա Հնությունքն» էին, որը առացած վայրկյանիս կատարելապես ապչեցա, այն աստիճան վստահ էի, որ առանալիք չունիմ և գրած էի քեզի միայն պարտքս կատարած ըլլալու համար՝ խնդրողին ալ այս ամենը նախապես հայտնելես հետո. այնպես որ անոր

առջևն ալ ինծի ամոթով ձգեցիր: «Վա՜հ, ասկե ավելի ճիշտ ու չնորհքով ազա՜», – բացականչեց, երբ գիրքը ձեռքը դրի: Բայց իհարկե դուն կ'երևակայես իմ կասկածոտ ու բազմախորհուրդ գլխու չարժումս: Ես այդ գրքի փոխարեն անկե ուրիշ գրքեր ատացա, այնպես որ քեզի կը մնա բավականանալ իմ... չնորհակալութեամբս:– Ի՞նչ վիճակի է Վերնատունը, վերնականներն ու իրենց վերնահարկերը. մի՞թե ձմեռը ո՛չ մի աշխատութիւն, հավաքում և այլն չունեցաք: Իսկ ես հոս արդեն հոգ կը պատրաստիմ ուրիշներու առջև, հոգ պատկառանքի դեպի մեր Վերնատունը: Թե՞ «անունը կա, ամանումը չկա», խայտառակնե՛ր:

Ես այսօր կ'երթամ Chambre-ի նիստին[4] ներկա ըլլալու, արդեն ատոր համար է, որ այս քանի մը օրը հոս ուշացա, իսկ վաղը՝ մնաս բարով, Փարիզ. այնպես որ հաջորդ նամակս՝ Լեմանի «գեղազվարճ ափերեն»[5]: Միայն երթե կ'ուզես, որ նամակս ալ Լեմանի նման գեղազվարճ ըլլա, պետք է նախապես ինծի մարդավարի պատասխանես: Կը տեսնա՞ս, հասեր եմ վերջին միջոցիս, պետք է սպառնամ՞ քեզմե լուր մը ստանալու համար: Դի՛, քեզի տեսնեմ, ամարանոցեդ ինծի այս անգամ ալ ամոթահար ձգե «Հնութիւնքի» նման. ա՛յդ պայմանով ես միշտ պիրով պատրաստ եմ ամոթահար ըլլալու: Հարվածներ կան, որ քաղցր է ստանալը, քնքուշ թաթիկներն նետված վարդի ապտակիկներու նման. ա՛, քանի որ այսպես աննկատելի կերպով «քնքուշ թաթիկներու» ու «վարդերու» սահմանեն ներս եմ մտեր, պա՛սթա, հոս ալ կանգ կառնեմ: Իսկ իմ անթիվ համբույրներս ուղարկած եմ քեզի «օ՛, Վատյայի» հասցեով, ատացի՛ր անկե:

Լևոն

48. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հուլիսի 8, Փարիզ>

Վերջին համբույրներս քեզի Փարիզեն: Նամակս ատացար անշուշտ[1]: Վերջին բարևներս քեզի Փարիզեն: Նամակիդ կ'ըսպասեմ.

Լևոն

49. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հուլիսի 27, Լոզան>

Շատ-շատ բարևներ իմ Օհաննեսին,
Ծարավ՝ լուրերուդ, կարոտ՝ քու տեսին:

Լևոն

50. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Օգոստոսի 5, Լոզան>

Շա՛տ-շատ բարևներ
Ձերմակ Ալպերեն,
Բարձր մարգերեն,
Գիրուվ կովերեն[1],
Համբո՛ւյր ու բա՛րև
Եվ քու Լևոնեն:

51. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Օգոստոսի 25, Լոզան>

Գրական անգործություն,
Աննպատակ բազմաչխատություն,
Ընելիքի հոծություն,
Ժամանակի սղություն:

Թեթև պաչառնի մ'առաջարկություն[1]
'Ի լհարկե, իսկույն համաձայնություն,
Օրն երկու ժամ թղթակցություն,
Հաջողությո՛ւն...

Ամիսե մը ճամբորդություն,

Եվ ի Կովկաս հաստատուիլ,
Իսկ մանրամասնութիւն
Յգրուիլ:

52. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Օգոստոսի 25>

Լոզանեն չա՛տ-չատ բարևներ իմ սիրելի Ստեփանիս: Քենիվիդ գրած նամակդ մոտս է[1]. Օկաննեսով եղբայրներեն ալ ստացած եմ նամակ մը[2] ամիսեն ավելի է և իսկույն պատասխանած. հոկտեմբերի սկիզբեն առաջ չեմ կրնար վերադառնար. փողի խնդիր է պարզապես: Ավելի մանրամասն կը գրեմ քեզի չուտով: Իսկ դուք կարծեմ վերադարձած եք արդեն ամառանոցին: Տիկնոջ հարգանքս ու սրտագին բարևներս. համբույրներս փոքրիկներուդ ու քեզի: Յգրուի՛ւն ու ցտեսուի՛ւն:

Լևոն

53. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հանե՛ս ջան: Երևի այս վերջին նամակն է, որ կը գրեմ քեզի արտասահմանեն. հավանորեն ամսե մը ճամբա կ'ելլեմ, ուրեմն նամակիս ձեռքդ հասնելեն ամիս մը վերջը կը հասնեմ և ես: Չես կրնար երևակայեր, թե ի՛նչպես անհամբեր ու բոլոր սրտովս չո՛ւտ ետ դառնալ կը տենչամ. «ընչի՞» պիտի հարցնես քու սիրուն ընչիովդ, «ընչի՞ կ'ըշտապես»: Ինչուն ես ինքս ալ չգիտեմ, միայն սաստի՛կ, սաստիկ կարոտեր եմ մե՛ր օդը, մե՛ր կյանքը, մե՛ր շրջանը: Հոս ես մա՛րդ մըն եմ միայն, թի՛վ մը. հոս ես ո՛ւժ մըն եմ, գործո՛ն մը: Հոս ես օտար մըն եմ, օտա՛ր մը, ինչքան ալ որ ապրիմ, հոս ես իմ տանս եմ, տո՛ւն մը որ չունիմ, բայց որ իմս է: Եվ այլն, շարունակութիւնը բերանացի: Իսկ առայժմ քանի մը տող իմ արդի կյանքիս մասին, այսինքն աշխատանքիս, որովհետև իմ կյանքս աշխատանք է միայն, մինչև հիմա այդպես է եղեր և երևի միշտ ալ այդպես է ըլլալու, և այլն, աւտր շարունակութիւնն ալ բերանացի: Գալով արդի աշխատանքիս՝ այն-

քան էլ զոհ չեմ: Քեզի գրեր էի ամառվան ծրագիրներուս մասին, և երևի բերնիդ ջուրերը վազեցին, երբ կարդացիր, որ երկու ամսվան մէջ բոլոր տրամաները իրար եմ խառնելու. է՛, սիրելի՛ս, մի՛ վախնար, բոլոր տրամաներն ալ ձեռքերես ազատված քնած են Հանգիստ: Արդեն գրվածները անդունդ խորքը, իսկ դեռ չի գրվածները ուղեղիս խորքը. միակ բացառությունը նորին անցած տարվան գրած անտեր է[1], որ դուրս հանեցի քիչ մը կարդի բերելու, քիչ մը ուղեցի վերջնական ձևին բերեմ ու ճշմարիտ որ բոլորովին «իրար խառնեցի»: Ժամանակ չունիմ, հոգի՛ս, մարդավարի աշխատելու, իսկ հապճեպ աշխատանքով չնորհքով գործ տեսնելու հնար չի կա: Միայն կ'ըսկսիս գրածդ քննադատելու, ջնջելու, իսկ ուղղել, ավելացնել չես կրնար. ու վախենալով, որ ունքը չինելու տեղ աչքն ալ չի հանեմ, նորեն փաթթեցի ու դրի իր տեղը: Իսկ պետք է ավարտել, որ կարելի ըլլա մարդու երես հանել, ամենեն առաջ մեր Վերնատան, վերջը՝ ընկերության[2]: Պե՛տք է, այո՛, բայց... բայց և պետք է չատ մը ուրիշ առևտրա-թղթակցական աշխատանքներ. գիտեմ, որ այս վերոգային բառը չատ անհարկի ներս սպրդեցավ վերի գրական տողերուս մեջը, բայց ի՞նչ ընեմ, քանի որ մենք ինքներս այսպես անհարկի ներս ենք սպրդեր անգամ մը առևտուրի աշխարհը: Որպեսզի այս հետաքրքրական երկարաբանությունես բան մը հասկընալ կարողանաս, չատպես քեզի հայտնելու, որ կարծես թե արդեն պաշտոն մը ունիմ գրիքե: Իհարկե, վերջին նախադասությանս երկու ծայրի կարատավոյները[3] քեզի պիտի խրտնեցնեն քիչիկ մը: Վնաս չունի, սիրտդ պինդ պահե: Խնդիրն այն է, որ ասկե երկու ամիս առաջ Կովկաս հանքային արտածությամբ զբաղվող առևտրական տուն մը (որոնց երկու եղբայրները արտաստահման հանդիպելու առիթը ունեցած եմ) առաջս չատ սիրալիր առաջարկ մը՝ իրենց տան մեջ արտաստահմանյան թղթագրի պաշտոնը ընդունելու[4]: Օրական մեկ կամ երկու ժամ աշխատանք, կրնաս հասկընալ, թե ի՞նչ աստիճան մուզային կու գա. խնդրի բայց-ը միայն հոն է, որ գրեր էին չուտով վերադառնամ: Իսկույն պատասխանեցի, թե իսկույն դառնալ չեմ կրնար, պարզապես փոքի պատճառով: Ես ձեռքս փոշ պիտի ունենամ միայն սեպտեմբերի վերջերը և ահա՛ ամիս ու կես է, որ իզուր պատասխանի կ'ըսպասեմ, և ահա՛ քեզի բանալին այդ վերին գրեթեներուն: Միայն այսքանը ավելցնեմ, որ ես մեծ հույս ունիմ գործի հաջողելուն, և այլն, ասոր մնացածն ալ բերանացի: Միայն այս պատմության

անմիջական արդյունքը այն եղավ, որ իմ ծրագրիս հակառակ, այս ամառն ալ ստիպվեցա առևտրական աշխատանքի գոհելու. մոտակա պաշտոնս բնականաբար իր պահանջները ունի: Այնպես որ, ուրեմն, ինծի սպասե՛, համբերութեյամբ կամ անհամբեր, թողնում եմ քու ընտրութեյանդ. իսկ ինչ կը վերաբերի տրամաներուս սպասելուդ, առաջվընե քեզի նախազգուշացնեմ, որ համբերութեյանդ պաշարին տոպրակը մեծ տեսակեն ընտրես: Իմ այս գրական-առևտրական գոտեմարտութեյանը ներկա եղած միջոցիս, դուն ալ հոտկե կը դրես, թե դուն ալ ոչինչ չես արտադրեր, չգիտեմ ինչու ինծի, կարծես, չափ մը ավելի ցավ կը պատճառե. ափսո՛ս, ճշմարի՛տ, ափսո՛ս ինծի ալ, քեզի ալ. ափսո՛ս և ամո՛թ ինծի՛ ալ, քեզի՛ ալ: Եվ այլն, մնացածը բերանացի: – Հանձնարարեր էիր, որ չատ գրեմ ու չատ հարցնեմ քու Վառյայիդ մասին[5]. բայց ես մինչև հիմա չնարհքով բան չի կրցա հասկընամ քու այդ ուհի վարդիդ պատմութենեն, որ ինչպես կ'երևի, չատ փչոտ տեսակեն է ըլլալու: Ինչո՞ւ Իսակի[6] «դնդատոմսովը» չես գործը սկսեր. «Վարդ մի՛ սիրե, փուշ ունի». ա՛յ, օրինակ՝ Մանիշակ մը, Շուշան մը, Նունուֆար մը, կամ այդ կարգի անվնաս բան մը ընտրեիր: Ըսենք ինքը Շուշաններեն չատ խելր չի տեսավ, բայց գոնե Մանիշակի ու Նունուֆարի մասին դեռ ո՛չ ոք վատ խոսած չունի, մինչև անգամ բանաստեղծները, ո՛չ: Ի դեպ, ո՞ւր է Ավետիքը հիմա և ի՞նչ բանի է. հույս ունիմ, որ առաջիկա ձմեռ գոնե բոլորս միասին կըլլանք և մեր Վերնատունը հավիտենապես դատապարտված չի մնար միշտ հայր-որդի ու հոգին սուրբ մը բաղկացած ըլլալու[7]: Շատ-շատ կը ցանկայի, որ հավաքվեինք, սեղմվեինք իրար, իրար սիրող, իրար հասկըցող մեր խումբը ու քիչիկ մը կենդանացնեինք, տաքցնեինք Վերնատունը: Նիկոլը գիտեմ, որ հոտ է, իսկ Դերենին, ինչպես կ'երևի, ջուխակը ջիղերուն է դիպեր. ինծի գրեր էին, որ վերադարձեր է արդեն Կովկաս և որ ջիղերը քիչ մը դրգռված են[8]: Ձմեռը ան ալ հավանորեն Թիֆլիս կը լինի, գուցե մեկերկու նորերն ալ ձեռնադրենք, արդեն նորընծայացու մեկ թե՛ երկու հատ ունիմ աչքիս տակ, բայց և այլն, մնացածն ալ բերանացի: Ինծի նայե՛, ես այնպես ծուլութեյուն-մուլութեյուն բան չեմ հասկընար, ո՛չ ալ այնպես հիմա՛ր տողեր «թե ես ծուլած, խանգարված մարդ եմ», չգիտեմ ինչ. կ'ուզես ծուլի, կ'ուզես չտկվի, ես վերադարձիս քեզմե նյութ կ'ուզեմ. մեր Վերնատունը արժեք ունեցող բան մը պիտի ներկայացնես. անպատճա՛ռ: Նախ գրե՛, վերջը նորեն որչափ կ'ուզես խանգար-

*ված մարդ եղիր. մեկը մյուսին չի խանգարեր. իսկական խանգարված, կամ խանգարող, մարդ կը դառնաս միայն այն ժամանակ, երբ մեր Վերնատան ընթերցանութեան նյութերդ ցամաքեցնես: Դիտես որ ամեն բանեն առաջ և ամեն բաններն վեր մեր Վերնատան ընթերցումներն են, ուրեմն, երեսդ խաչ հանեն և չոտ ըրեն, վերջացուր ինչ որ սկսեր ես: Վա՜հ, այսպես էլ խայտառակութիւն. ես հյուսիսեն հարավ, արևելքեն արևմուտք Եվրոպան չափչփեմ ու ամեն տեղ «էզան»[9] կարդամ, թե՝ քանաստեղծ-քանաստեղծ դուն ես, որ միայն կաս և թե՛ չոտով օժտելու ես մեր գրականութիւնը աննման փոեմով մը[10], թե՛ այս, թե՛ այն, թե՛ չգիտեմ ինչ և ահա՜ ամենախայտառակորեն կը նստես ինծի գրելու, որ խանգարվեր ես, որ ...ես քեզի այնպես խանգարվել մը ցույց կու տամ, որ ճշմարիտ որ կը խանգարվիս: Դարտակ բառեր գլուխս չի մտներ, նստե աշխատե քեզի: Ընտանիք, ծանրութիւն, զոքանչեք, պարտքեր, երեխաների ճղճոց, այդ բոլորը չա՜տ լավ, հասկըցա, բայց ի՞նչ, կը կարծես միայն դո՞ւն ես այդպես: Գրողներու կեսեն ավելին քեզի պես են եղած, և վերջապես քու քաջութիւնդ ալ հոն պիտի ըլլա, որ այդ փրոզաներուն մեջեն կարողանաս «փոեզիի լույսը ծագեցնես»: Դուն փոխանակ քու խանգարվելուդ մասին մտածելու ու գրելու, քիչ մըն ալ քու խանգարված փոեմիդ մասին մտածե՛ ու գրե՛. դուն կ'ուզես տակառներով արդարացում դիր մեջտեղը և կողովներով դժվարութիւններ, ո՛չ ոքի համոզել չես կրնար, որ քեզմե չի պահանջեն, և իրավունք ունին, իհարկե, պահանջելու, որովհետև քու մեջդ չնորհք կա: Իսկ ես, իրրև պահանջող, ամենեն առաջ, որովհետև ամենքեն ավելի խոր կը հասկընամ քեզի, կը ճանչնամ հոգիդ, ընդունակութիւններդ, դժվարութիւններդ ու արգելքներդ: Եղի՛ր հիվանդ, եղի՛ր ծույլ, եղի՛ր խանգարված, եղի՛ր տանտեր և փեսա, վերջապես եղի՛ր ինչ որ սիրտդ կուզե կամ չուզեր, միայն մեջեմեջ դռնե, դռնե երբեմն, այնպես սխալմամբ, եղի՛ր և ա՛յն, ինչ որ քու մեջը տեսնել կուզեն քեզի սրտանց սիրողները: Նո՛ւ, սիրելի՛ս, այս ահագին ճառես վերջը, կարծեմ իրավունք ունիմ այլևս քիչ մը հանգստանալու, մանավանդ որ կես-գիշերը իր լեն-լեն փեշերը արդեն փռեր է չորս դիս, դե՛, գիշեր բարի:

Եթե այս նամակս առնելուդ պես անմիջապես ինծի պատասխանես, հոսկե մեկնելու օրերս քեզմե թարմ լուր մը առնելու մեծ հաճույքը կը պատճառես ինծի. իսկ իմ մասին քեզի լուրեր կու տամ միշտ,

Թե՛ Հոսկե և Թե՛ տեղես չարժվելես ալ վերջը: Աղայանին բարևներս, բարևներս և տիկնոջդ: Քանի մը օր առաջ գրած եմ նամակ մը Ֆիլիպին. վատահ եմ, որ արդեն ստացած ըլլալու է: Երևի արդեն վերադարձած ես Թիֆլիս, տո՛ւր ուրեմն բարևս իրեն: Բարեւե՛ և մեր տղայքը, ով որ Հոտ կա. և դուն ինքդ ալ ա՛ռ պինդ ու ջերմ համբույր մը՝ քու Լևոնեդ:

Հասցես միշտ նույնը՝ poste restante, Lausanne
1902 սեպտ. 6, Լոզան

Հ. Գ. Եթե ինծի նամակ գրես, հասցեի հակառակ կողմը գրե և քու հասցեդ. բան է, եթե քիչ ավելի չուտ մեկնեցա, նամակդ ետ կը դառնա քեզի:

54. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս:

Երեսդ պարզ. ահա՛ այս վերջին նամակս է, որ կը գրեմ քեզի Եվրոպայեն, և դեռ մինչև հիմա քեզմե տող մը չեմ ստացած: Ատոր փոխարեն հիմա ձեռքս է իմ մասին քենիիդ գրած նամակդ, որը ինծի թե՛ կ'ուրախացնե, և թե՛ ոչ. ուրախ եմ իհարկե և չնորհակալ քու իմ վրաս ունեցած հոգածութենեդ, միայն կը ցավիմ, որ իմ մասին կը մտածես լոկ երբ՝ այս կամ այն ձևով՝ ինծի օգնելու խնդիր կա: Աչեն - ձախեն կտոր-փրդուճ լուրեր կ'ըստանամ քու և քու գործերուդ մասին, և տեսակ մը կը վիրավորվիմ. չգիտեմ ինչու՝ ինծի այնպես կը թվի, որ այդ բոլորը ես ամենեն առաջ պիտի գիտնայի. վե՛րջապես, այս բոլորի մասին գրելս այլևս չատ ո՛ւշ է իհարկե. կը մնա, որ հետաքրքրությունս վերադարձիս հազեցնեմ հոտ:

Երկու խոսք իմ պաշտոնի խնդրի մասին. ասկե մոտ երկու ամիս առաջ, հազիվ Լոզան հասած, Օկաննեզուխերեն ստացա չա՛տ սիրալիր նամակ մը, որով իրենց տան մեջ ինծի կ'առաջարկեին քեզի արդեն ծանոթ պաշտոնը: Ես իհարկե հայտնեցի իսկույն իմ սիրով համաձայնությունս. եղբայրներեն երկուքին Անվերս հանդիպած եմ արդեն, քեզի ալ ծանոթ են, Մելիք-Հայկազյաններուն ալ, իրենց գործին ալ առիթ ունեցեր եմ քիչ մը ծանոթանալու, և վերջապես օրական մեկ կամ երկու ժամ աշխատանք միայն, որ ինծի համար անփոխարինելի

առավելութիւն մըն է: Գործի միակ բայց-ը հոն էր, որ ես անմիջապես վերադառնալ չէի կրնար, պարզապես այն պատճառով, որ միայն այս ամսի վերջերը իմ ձեռքս փող պիտի անցնի թէ՛ այս վերջին ամիսներու ծախքերս փակելու և թէ՛ ճամբու համար, այդպես ալ դրեցի իրենց. ա՛յս՝ալ ավելցնեմ, որ իրենց նամակին մէջ չուտ վերադառնալս այնպես էական պայման չէին դրած, թեև իհարկե չնշուած էին: Մինչև հիմա այլևս ո՛չ մեկ լուր չունիմ իրենցմէ. և կը մտածեմ, որ պարզապես՝ երևի՝ վերադարձիս կ՝ըսպասեն այդ մասին խոսելու համար, իսկ ես հենվելով իրենց նամակի տոնին՝ գրեթե վստահ եմ, որ իմ ակամա ուշանալս դժվար թե գործը խանգարե[1]. մանավանդ որ ինծի անպատճառ կը հայտնեին, թե որևէ կերպով իրենց դիտաւորութիւնը փոխած ըլլային, այսինքն գոնե պարտական էին հայտնելու: Վերջապես տեսնենք: Ես մինչև ամիս մը անշուշտ կը մեկնիմ հոսկե, այնպես որ այս նամակս առանալեդ ա՛յնպես չորս շաբաթ մը վերջը սեղանիդ անկյունը արդեն բաժինս դնել տա՛ւր: Տեսնենք այս անգամ Կովկասն ի՞նչ է տալու ինծի: Գալով գրական մարդուն, շատ խեղճ եմ առայժմ. այդ պաշտոնի խնդիրը որ մէջ եկաւ, ատիպվեցայ այս ամառս առևտրական աշխատանքի հատկացնելու, բայց գոնե հասուն ծրագիրներ կը բերեմ հետս գլխուս մէջ. ու գրեթե պատրաստ տրամա մըն ալ, արդեն գիտես, անուռվիս մէջ:

Դե՛, սիրելի՛ս, ուրեմն ցտեսութիւն, ջերմ բարևներս սիրնոջ ու ձերիններուն. զգվանքս փոքրիկներուդ ու սիրտդ համբույր մըն ալ քեզի՝ Լևոնից

Լոզան
1902 սեպտեմբեր 7

55. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Սեպտեմբերի 6, Վեյթաուբս>

Մե՛ծ Բայրոնի «մե՛ծ Թադմանչին»[1]
Շերուվ Շիլոնի այս քաղաքը չնչին[2].
Ու այս քաղաքիս հետ բարև ու կարոտ
Սիրուն Լեմանի ափեն անձրևոտ[3]:

Լևոն

56. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

I

Դուն բան չունիս, սպասե՛
Լճերն ի վար կապուտակ,
Գետերն ի վար կերպասե,
Լեռներուն տակ ձյուն գդակ
Մինչ մեր սերը ման կու տանք,
Դուն բան չունիս, սպասե՛:

II

Ահա՛ քեզի մի այուրբրիզ,
Որի քնքուշ բանալին
Գուցե տամ քեզ իմ դարձիս[1].
Ձեն թողնում մարդն իր հալին
Սե՛ր, սի՛րտ ու վա՛րս մետաքսե.
Դուն բա՛ն չունիս, սպասե՛:

Լևոնդ

1902, սեպտ. 27,
Թուն

57. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Սեպտեմբերի վերջ, Վիեննա>[1]

Wien - նայեն վերջին եվրոպացի բարևս իմ Հանեսին:
Համբույր ու կարոտ, ցտեսութի՛ւն: Լևոնդ

58. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Սեպտեմբերի վերջ, Վիեննա>

Սիրե՛լի Ստեփանս, Եվրոպայի դռան մեջեն կ՚ուղարկեմ տիկնոջդ ու քեզի իմ սիրալիր բարևներս: Հոկտեմբերի մեկին կամ երկուքին կը լինեմ Թիֆլիս, հավանորեն[1]: Համբույրս քեզի ու փոքրիկներուդ:

Լևոն

59. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Հոկտ. սկիզբ, Վարշավա>

Սիրելի՛ Ստեփանիս վերջին բարև մըն ալ իր սիրած քաղաքի սիրած համալսարանին դեմեն[1]. բա՛րև ու համբո՛ւյր. ու ցտեսութի՛ւն և այս անգամ արդեն հաստա՛տ:

Լևոն

60. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հոկտեմբերի 2-3, Թիֆլիս>[1]

Հանե՛ս չան:

Օր մըն է, որ Թիֆլիս եմ: Բալաջարիեն[2] քեզի հեռագրեր էի զալս և կայարանը քեզի չի հանդիպելուս զարմացա. և երբ կինդ պատմեց քու Աբասթումանի մեկնիլդ[3] այդպես շտապ ու ստիպողաբար, թեև աչխատեցա ոչինչ ցույց չի տամ, բայց ճշմարիտ շատ վախեցա, որ հետդ որևիցե լուրջ բան է պատահած լինելու, մանավանդ կնոջդ խոսվածքն ալ շատ կակուղ էր ու մի տեսակ և առանց ինքը դիտենալու, ինծի ավելի կասկածի մեջ ձգեց: Միայն իրիկունը Ծիլխի հետ տեսնվելես վերջը հանգստացա, երբ վիճակիդ մասին պատմեց մանրամասն, և հասկըցա, որ կնոջդ այնպես ինքն է քիչիկ մը վախ տված: Մի խոսքով՝ թեև մեկ կողմեն խիստ սառն ջուր լեցրիր իմ վրաս եկա թե չէ քու

բացակայությամբդ, որ երևի դեռ չատ երկար է տևելու, բայց մյուս կողմեն բոլոր սրտովս անչափ ուրախ եմ, որ վերջապես քանի մը ամիսներ, հավանորեն գուցե դեռ ավելի երկար, պիտի ապրիս քիչ մը հեռու ու առանձին, և վերջապես ապահով եմ, որ պիտի վերադառնաս կազդուրված ու առողջ. և կասկած չունիմ թևիդ տակն ալ քանի մը նոր աշխատանք: Թե՛ արդի քու հիվանդությունդ՝ ուժասպառում, ունեցած եմ ես ինքս ալ ժամանակին, թե՛ ուրիշ կերպ առիթ ունեցած եմ մոտեն ճանչնալու, այնպես որ մեկ-երկու խորհուրդներ կրնամ քեզի տար մասնավորապես աշխատելու վերաբերմամբ. բժիշկիդ ասածներուն մոտիկը դի՛ր. հիմա առայժմ զբաղվե որքան կրնաս քիչ, այսինքն արդեն ուրիշ կերպ ալ չես կրնար: Օրկանիզմդ ինքն է քեզի ստիպելու, բայց հենց քիչ որ ուժերդ եռ գալ սկսեն, գրելուդ պահանջը սաստկանա պիտի, մանավանդ որ բոլորովին առանձին ես ու բնության մեջ: Արդեն իշխանուհիին ու Ֆիլիպին գրած նամակներուդ մեջ նկատելի է քու այդ տրամադրության ծլումը[4]. իհարկե չատ ուրախ եմ, միայն թե՛ հիմա, թե՛ վերջը, որքան ալ որ մեջդ ցանկություն զգաս, չատ մի՛ աշխատիր, **մանավանդ քանի մը ժամ իրար եռևե մի՛ աշխատիր.** դա ամենասպառիչ բանն է. չատ-չատ մի անգամեն ժամուկես, ո՛չ ավելի, ընդհատե՛ անպատճառ, գնա շրջե, խոսե, բոլորովին ուրիշ բանով զբաղվե, ժամ-ժամուկես վերջը պարապե նորեն ժամ մը-ժամուկես, եթե կուզես. և ընդհանրապես օրական 5-6 ժամեն ավելի լուրջ մի՛ զբաղվիր. և աշխատե՛ կանոնավոր, մեքենական կանոնավորությամբ օրվա որոշ ժամերը, որոշ կերպով բաժանած: Մի՛ ծիծաղիր, հոգի՛ս, անկարգությունը, ոգևորությունը, չգիտեմ ինչը, բոլորը դարտակ խոսքեր են միայն: **Ամեն բան սովորություն է և ամեն բան կախված է կենդրոնացումե:** Եթե անգամ մը սովորություն դարձնես առտուն կամ իրիկունը նստելու ու մտքերդ կենդրոնացնելու՝ կը դառնա վարժություն և այդ համբավավոր «ոգևորությունդ» կը տեսնիս, որ կը գա: **Լավ է օրական երկու ժամ աշխատիս, բայց կանոնավոր կերպով ամեն օր,** քան անկարգ կերպով օրական չգիտեմ քանի ժամ. թե՛ առողջության, թե՛ գրական արդյունքի և թե՛ անձնական հաճույքի եռակի տեսակետներով: Այս գրածներս ականջի եռևե մի՛ նետիր քու սովորական անփութությամբդ, փորձե ու պիտի գոհ մնաս. հավատա՛, որ մեծ և տևական աշխատանքի գաղտնիքը **կանոնավորության և չափավորության մեջն է:** Կը տեսնի՞ս, սիրելի՛ս, քեզի կերպ մը օգնել ուզելու

ցանկութիւնս ինծի մինչև բժշկական ու փիլիսոփայական սահմանները ուսնձգութիւններ ընելու վտանգին էլ ենթարկեց: Երեկ Ֆիլիպի հետ այնչափ ծիծաղեր ենք, առաջ ան, վերջն ալ ես: Բանիկ դուրս է գալիս, որ առանց պիտանալու ձեզի հիանալի ենթադրութիւններու օվկիանոսն եմ նետեր. դուք ինծի արդեն նշաններ, կարգեր, տեղավորեր եք[5], մինչ ես անդին բոլորովին մի ուրիշ աղջկա հետ Զվիցերիական լճերու շուրջը կը պտտցնեի իմ սերս: Ընկերուհիս դուն չես ճանչնար, բայց ան կը ճանչնա քեզի, իհարկե, լսուի և կը սիրե քեզի չատ հենց ինքդ քեզ համար և երկրորդ էլ, որ իմ մտերիմս ես: Մեր գրեթե ամեն ընթրիքին քու կենացդ կը խմեինք, մի՞թե չէիր իմանար. և առաջարկողն էլ միշտ ան էր, որ, իհարկե, քեզի համար ավելի չոգոբորթիչ է: Անոնը առայժմ քեզի դիտմամբ չեմ տար՝ իմանալով, որ բերանդ լոբի չի հալիր և ընդհանրապես դեռ ոչ ոքի ոչինչ մի՛ խոսի այդ մասին, իսկ մանրամասնութիւնները բերանացի: Ես քեզի արդեն սաստիկ տեսնել կ'ուզեմ: Կ'աշխատիմ հաջողցնեմ օր մը-երկու գամ քեզի. ո՛չ անմիջապես, իհարկե, հիմա չատ եմ խառն ու չատ աղքատ: Բոլոր հարստութիւնս Զվիցերիական լճերուս չուրջը հալեցավ: Հապա, հիմա սիրել անգամ կարելի չէ առանց փողի: Շատ դժգոհ ու անհամ ու ճնշված տարի մը անցուցի Եվրոպա: Միայն այդ վերջին երկու չաբաթը եկավ ամեն բան փրկեց և Եվրոպային հաշտ սրտով կը վերադառնամ հիմա: Թե հոս ինչ պիտի դուրս գա, այն էլ տեսնենք: Առայժմ հյուրանոցն եմ և այս տողերս[6] ոտի վրա կանգնած կը գրեմ քեզի: Դեռ բոլոր ընելիքս անորոշ, տուն չի կա, փող չի կա, գործ չի կա, գլուխս կը դառնա բայց չուտով, երևի, կը հաջողիմ կյանքիս գնացքը իր սովորական ընթացքուն վրա դնելու: Կը վառեմ լոգոմոթիվը և հայդա՛: Կը տեսնի՞ս, Հանե՞ս ջան, ես նույն երեխան եմ դեռ, նույն լավատես, անհոգ ու տեսակ մը ապագային ապաստղ ու վստահացող երեխան: Եթե այս գիծն ալ որ մենք չըլլար, չգիտեմ ինչի պիտի նմանեի: Եվ գիտե՞ս այդ աղջիկը ինչո՞ւ սիրեցի. ան ալ ինծի պես մեծ երեխա մըն է, պարզ, հասարակ, մաքուր ու սիրող «ձկուն» աղջիկ մը[7], վա՛յ, վա՛յ, վա՛յ, ես ճամբես դուրս եկա: Շուտով անցնիմ ավելի լուրջ հարցի մը, թե չէ հանկարծ երեսներ կը լցվին առանց իմ նկատելուս գնչուհիին հասցեին: Եվ ի՞նչ ավելի լուրջ, քան քու բանաստեղծութիւններուդ հրատարակութիւնը: Երեկ գիշեր իշխանուհու մոտ էինք: Համբավավոր չորեքշաբթի գիշերներեն էր, չորս հոգի՝ Ֆիլիպն ու բժիշկը[8], բացի ինծմե: Հոն

տեղեկացա իրենց ծրագիրներու մասին քու վերաբերմամբ. և հենց իսկույն ըսեմ, որ ուրախ եմ բոլոր սրտովս: Խնդիրը երկու կողմ ունի՝ գրական ու վաճառական: Երկրորդ կետը այսպես է մտածված՝ բոլոր մինչև հիմա գրածներդ Հատորի մը մեջ (սիրուն ու գեղեցիկ) ամփոփել և բանալ բաժանորդագրություն լավ թղթի վրա երեք րուբլի արժեքով: Հրատարակության վերջը գիրքդ ծախվելու է սովորական թղթի վրա, երևի մեկ րուբլի: Բաժանորդագրության հետ ընդունելու են և նվերներ քու բանաստեղծություններդ հրատարակելու իբրև նպաստ: Գիրքը կը տպվի երևի 1000-1500 օրինակ: Ջուտ արդյունք կը հուսան ունենալ վերջիվերջո քանի մը հազար: Խնդրի այս կողմը կը գրեմ քեզի, որ գիտնաս միայն. երևի անոնք այսպես պարզ կերպով չեն դրի քեզի, այն պարզ պատճառով, դուն մեջ խառնվելու բնավ տեղիք չունիս, այնպես որ խնդրի այս կողմի մասին թող բոլորը քու բարեկամներուդ և բնավ ո՛չ ոչինչ գրե, ո՛չ ալ միջամտե: Եվ երեխա ես, եթե որևէ կերպով քեզի անհանգստացնես, մտածես, սրտիդ կպչի, վերջապես այլ կարգի բաներ. դուն նայե՛ միայն, որ գրես, եթե առողջությունդ ներե և եթե բնականորեն մեջդ ոգեշնչություն կ'ըզգաս, ուրիշ ոչինչ: Բարոյական առնելիքներ կան, որ ո՛չ մեկ նյութականով փոխարինել կարելի չէ: Այսպես թե այնպես, դուն ալ հիմա առնելիքավոր մըն ես, միայն այնպես ըրե՛, որ որչափ կարելի է շատ տակոս պահանջելու իրավունք ունենաս, բարոյական իրավունք: Կը տեսնի՞ս, սիրելի՛ս, արդեն վաճառականի լեզվով սկսած եմ խոսելու: Այսչա՛փը միայն ի գիտություն: Գալով երկրորդ կետին՝ գրական-խմբագրական մասին, դուն խի՛ստ ընկճլական ես, և անոնք ալ սաստի՛կ շատ-երեսական: Ես իսկապես այնքան երեսներու շատությանը չեմ նայեր (թեև անշուշտ անոնք ալ իրավունք ունին իրենց հաշվին մեջ), բայց բոլորովին այլ կողմով անոնց, այսինքն քու թշնամիներուդ կողմն եմ: Խնդիրն այն է, ինչ որ մեկ անգամ գրած ես, գրած ես. հիմա նոր հրատարակության մեջ առնելովդ կամ չառնելովդ ոչինչ չես փոխեր. կան և կը մնան. և պետք է մնան: Դուն այնպես ես եղած մի ժամանակ և քու այն վիճակիդ մեջ քեզի հասկացողներ ու սիրողներ էլ կան. ինչ գիտես, որ ասկե տասը տարի վերջը քու արդի գրվածներուդ շատ պիտի հավնիս, ուրեմն երբեք ոչինչ չը տպենք կամ գոնե ոչինչ չարտատպենք: Մտածումդ ճիշտ չէ. այդ մասին ժամանակին մեր մեջ վեճ ալ է եղած, եթե կը հիշես. պետք է հանել, ինչ որ անպայման հակագեղարվեստական է, ինչ որ արդեն շատ է

երեխայական. դրանց թիվը չատ է քիչ: Մնացածները կը մնան և սրբագրել, փոխել էլ պետք չէ: Հիմար, կարկատան բան է դա, ինչ որ 10 տարի առաջ գրեր ես, հիմա չես կրնար սրբագրել. Թո՛ղ ինչպես որ կա, չատ-չատ հաջող նոր հանգ մը, արտահայտիչ նոր բառ մը, ուրիշ ոչինչ. տեղ-տեղ դուցե տուն մը ջնջել, բայց ավելի ոչինչ: Թող ինչպես որ կա. նայե՛ որ նորը գրես, նոր բան. նայե՛ որ անտիպները լավ մշակես, մանավանդ փոեմներդ: Գոնե «ժողովը» այսպես է «վճռեր» Հոս. դուն կ'ուզարկես քու ընտրությունը. ինչ որ բաց ես թողած, հոս չորս Հոգի (որոնց մեջը իմ անունս ալ դնելու պատիվ են ըրած) պիտի կարդան և իրենց այո-ն ու ոչ-ը պիտի ըսեն և պիտի միացնեն նորեն քու ընտրությանդ, այնպես որ լավն էն է՝ ինքդ արդեն այնպես ընտրես, որ հոս նոր փոփոխություններու գրեթե տեղիք չի մնա: Ուրիշ երկրորդական մանրամասնություններ կը գրեմ այլ անգամ, դուն ալ գրե, տեսնեմ ինչ հալի ես: Հիմա չատ գործ ունիմ, ուժի վրա էլ կանգնած Հոգնեցա և նամակս էլ արդեն չատ երկարեց: Համբույրներս ջերմ ու ջերմ.

Լևոնդ

61. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 10 Հոկտ. 02

Հանե՛ս ջան, գիտե՞ս ուր տեղից կը գրեմ քեզ այս տողերս. մեր Համբավավոր Վերնատունեն, ուր սակայն միայն անունն է մնացեր. կապտած ու կողոպտված իր մուզաններեն, իր բանաստեղծներեն, իր չենք ու չնորհքեն: Սա Վերնատուն չէ այլևս, այլ իմ բնակարանս. ախր ես հիմա քու կնոջդ нахлебник-ն եմ. Հասկանո՞ւմ ես, այսպես թե այնպես գրավեր եմ հիմա տունդ ու տեղդ: Առաջ քիչ մը դժվարացա այս քայլը ընելու. ա՛յնպես ավելորդ սկրյուպուլ դուցե, միայն հիմա ճշմարիտը չատ ուրախ եմ, ինձ բոլորովին իմ տանս եմ զգում, ցավն էն է, որ դուն այստեղ չես: Վերջապես, ուզեր էիր Հասցես, կարծեմ այլևս Հասցեի կարիք չունիս: Գրե՛ չստով, տեսնեմ ի՞նչ Հալի ես, ի՞նչ բանի: Իսկ ես, ահա՛ երկու խոսքով՝ առաջինը, որ «անգործ» եմ. իմ պաշտոնը ջուրը ընկավ[2]. և չգիտեմ դեռ մինչև երբ չարունակվելու է այսպես: Հավանորեն երկար, և քեզի բան մը խոստովանիմ՝ իմ այս ամբողջ

տարվան մը պատրաստութիւնես չգիտեմ ինչես վերջը հիմա, դուցե իբրև հակազդեցութիւն, բնաւ սիրտ չունիմ առաջի մեջ մտնելու: Դեռ իհարկե հետամուտ եմ, կ'ուզեի պաշտոն մը ունենամ, մանաւանդ գիտեմ, որ անհրաժեշտ է, միայն... միայն ամենևին տրամադրութիւն չունիմ. ուրիշ խոսքով տարիս դարձավ ու եկա նորեն այն կետին, ուր որ էի՝ հոսկե մեկնելիս: Դե՛, հիմա եթե կ'ուզես խնդա՛ վրաս: Միայն չեզրակացնես, թե զղջացած եմ գնալուս, ամենևի՛ն. ուրիշ շատ պատճառներեն դուրս՝ բավական է միայն հիշեմ տրամաս[3] և մանաւանդ բոմանս՝ ո՛չ գրած, այլ ապրա՛ծ[4]: Սրտիս մեջ ջերմ սեր, դլխիս մեջ հիանալի հիշատակներ, պայուսակիս մեջ տրամա մը և հեռո՛ւն-հեռո՛ւն աղջիկ մը, որ ինծմով կապրի: Քի՞չ է, մի՞թե այսքանը չարժեր, որ մարդ տարի մը Եվրոպայի քունջ ու պուճախը չափչփեր: Քու գրած վերջին քարտդ ստացեր է գնչուհիս ու պահեր է իրեն. արդեն այդ քարտը նրան շատ էր դուր եկած: Դուն ինծի հատ մըն ալ ես ղրկած, կը հիշե՞ս: Նամակ չանցնիր, որ քու մասին չի հիշեն. դուն հիմա անոր ալ այնքան սիրելի ես, որքան և ինծի: Կը տեսնե՞ս, անչնո՛րհք, ինչպես քեզի սիրողներուն թիվը ավելցնելու հետևե եմ: Հոգիս դուրս եկավ Եվրոպայի բոլոր ծայրերը քեզի համար փրովիանտ ընելեն, և ահա՛ ո՛վ ապերախտութիւն, կ'ելնեմ կու գամ քեզի, իսկ դուն տունդ, տեղդ թողեր ես ու փախեր, քաշվեր ես սարերը ճգնելու, ո՛վ դու սուրբդ Օհան անապատական: Իսկ ինծի հոս արդեն բոլորովին արամատուրկ ևք հռչակեր, խայտառակնե՛ր. որու որ հանդրպիմ, իսկույն տրամայիցս կը բռնացնեն: Եկ ու տես, որ տրամաս էլ դեռ բռնվելիք զատ չէ. որ տեղից որ բռնես՝ թևրթը ձեռդդ կը մնա: Այս առտու սկսա «մշակու-մը» տեխնիկ բառով. դուցե մինչև ամիս մը չնորհքի բերեմ[5]: Տրամադիր եմ կանոնավոր աշխատելու, մանաւանդ այս Վերնատան մեջ: Վերջապես ինչ էլ որ լինի, զգալի է կրկին, որ մուզաները այս տեղով անց ու դարձ են արեր: Ֆիլիպն էլ հիմա շատ զոռ «մշակելու» վրա է իր վոտրվիլը[6]: Ա՛խր, հիմա միայն ե՛ս չեմ, որ թատրերգութեամբ եմ զբաղված: Շիրվանի խաղը անցած գիշեր ներկայացրին[7]. ես դժգոհ չեմ, թեև քննադատելի կողմեր շատ կան, իհարկե: Բայց «խալխին» դուր չեկավ. իսկ որ գրվածքը անտարակույս գեղարվեստական արժանիք ունի, ոչ մեկ կասկած չի վերցներ. և ըսածիս ապացույցն էլ ա՛յն, որ «Մշակը» սկսավ հայհոյելու[8]: Վերջացնում եմ՝ չոտպելու համար

իշխանուհու մոտ, ուր ժողով է այս իրիկուն: Ինձ է հատկացված քու վականդ թողած աթոռդ:

Համբույրս. Լևոնդ

62. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հոկտեմբերի 12, Թիֆլիս>

Հանե՛ս ջան, այս անգամ զուտ պաշտոնական. վիատոնիդ կոճակները կոճկե՛: Թումանյանցի բանաստեղծութիւնները հրատարակող սիրողներու... (վա՛յ կը ներես, գրիչը սխալեցավ) համակրողներու խումբը իր երեկվա նիստին մեջ կայացրած վճիռներեն երկուսը հանձնեց ինծի, որ անհապաղ քեզի տեղեկացնեմ, և որ ահա՛ կը կատարեմ:

Առաջին. անմիջապես կազմե՛ մի ցուցակ զանազան քաղաքներում ապրող քու ծանոթներեդ ու բարեկամներեդ, որոնց վրա անպայման կարող ես վստահիլ, որպեսզի և այդ անձերուն ուղարկվի բաժանորդագրութեան բլանկները՝ ծախելու, իհարկե հրատարակող խումբի կողմեն ու այդ խումբի անունով: Եվ այդ կազմած ցուցակդ ուղարկե մեզի որքան կրնաս չուտ. այսպես վճռեց ժողովը. քեզ կը մնա հնազանդիլ:

Երկրորդ. ամենից առաջ ընտրե՛ ու սրբագրե՛ քու արդեն տպված բանաստեղծութիւններդ, որպեսզի երբ վերջը դուն քու անտիպ կտորներու վրա պրպտված կը լինես, ժողովը այս միջոցին քրտինք թափե քու դուրս նետածներդ նորեն ներս առնելու: Վա՜հ, ախր, ըսե՛նց ժողով ու ըսե՛նց հրատարակիչներ ո՛չ թե լապտերով, այլ աշխարհի բոլոր էլեքտրական լամպերը եթե մկացնես, նորեն չես կրնար գտնել:

Գրե՛ նաև՝ մոտավորապես քանի երես (քու տպված բանաստեղծութիւններուդ երեսներովը) կը լինի քո անտիպ գրածներդ, կամ «Անուշի» պես բոլորովին փոփոխածներդ: Գիտե՞ս, որ արձակներդ ալ ժողվելու ես, միայն գրական կտորները, իհարկե:

Դե՛, այլևս պաշտոնական վերարկուս կրնամ հանել ուսերես: Եվ առաջին բառը, որ պիտի ըսեմ, ա՛յն է, որ սոսկալի անչնորհքն ես. ես անհամբեր քեզմե լուրի կ'ըսպասեմ, իսկ դուն կը շարունակես քու պատմական անդորը լռութիւնը: Հա՛, երեկ չզիտեմ. ինչպես խոսք

դարձավ, կ'ինդ ըսավ, որ մի օր տասն անգամ նկարեր ես մի աղջկան և պիտավորութիւն ես ունեցել ինձ ուղարկելու: Թե ինչ աղջիկ է, հասկընալը դժվար չեղավ[1]. բայց որ նկարը չես ուղարկած, կը ցավիմ, թեև արդեն քիչ մը ուշ, իհարկե. որ կըսեմ անչնորհք ես:

Ես դեռ միշտ այն միամիտ Հույսումն եմ, որ այսօր կամ վաղը քեզմե նամակ եմ առանալու և այդ ողորմելի Հույսով ալ կը բարևեմ ու կը համբուրեմ քեզի:

Լևոնդ

63. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հոկտեմբերի 16-18, Թիֆլիս>

Հանե՛ս չան, մի վոքրիկ թյուրիմացութիւն կա մեր մեջ, այսինքն ժողովի ու քու: Դու նորեն բռնել ես քու հին երգը. «Սպասեցե՛ք մինչև նոր ու ավարտած գործ ունենամ հրապարակ հանելու»: Մինչդեռ հիմա խնդիրը քու արդեն իսկ ունեցած ու ամենամեծ մասով արդեն իսկ հրատարակված երկրորդ ամփոփ ու վերստին տպագրութեան մասին է, մեկ կողմեն ավելի լայն շրջանի մեջ քեզ ծանոթացնելու, և երկրորդ ու մանավանդ, այդ առիթով քեզ մի որևէ նյութական ապահովագրութիւն ձեռք բերելու համար: Կից նամակը քեզ խնդիրը երևի ավելի կը պարզե. թե՛ այդ կերպով և թե՛ իշխանուհու և այլ մեկ-երկու միջամտութեամբ դրեթե հաստատ հույս կա, որ այդ անունով՝ «գրքերուդ հրապարակութեան ի նպաստ», մի բավական խոշոր գումար գոյանա: Մի 2-3 ամսից, և հավանորեն դեռ ավելի, հազիվ բաժանորդների թիվը հայտնի լինի, ուրեմն դեռ առնվազն երեք ամիս ունիս մինչև հրատարակութեան սկսիլը: Ինքը հրատարակութիւնն ալ նորեն մեկ-երկու ամիս. այնպես որ դեռ տրամադրութեանդ տակ 6 ամիս ժամանակ կա: Այլևս ինչ բծախնդրութիւն է դա՝ «Նախ պատրաստ լինի, վերջը կը հրատարակենք». իհարկե, պատրաստ չեղած բանը չի հրատարակվիլ. առայժմ միայն գործի արտաքին՝ առևտրական մասն է, որ սկսիլ կ'ուզենք. և դրա համար է, որ քու վստահելի բարեկամներուդ ցանկը խնդրած էինք քեզնից. և խնդրում ենք հիմա էլ. ուղարկե՛ չուտով: Թե՞ կարծում ես, որ 5-6 ամսվան մեջ էլ պիտի չի կրնաս արդեն հրատարակած երկերդ կարգի բերես և անոնցպներդ էլ վերջ-

նական ձևի: Կը կրկնեմ, նույնիսկ իբրև գրագետ, որ հին ուսանավորները չատ ընչել ու ընչոտելը անարժեք բան է: Բոեմների խնդիրը, իհարկե, այլ է, բայց նրանք էլ, միևնույն է, երբեք չի կարելի ավարտած համարել քու այդ աշխատելու եղանակը աչքի առաջ ունենալով. տասն անգամ էլ որ տպվի, դու նորից ընչես ու ընչոտես պիտի, «Սաքո»-դ ու «Անուշը» քեզի օրինակ: Հետևապես երկրորդ թե երրորդ վարիանտդ է մտնելու այս հավաքածուին մեջ՝ բոլորովին նույնն է: Եվ վերջապես նորութիւն տալու քո սկրյուբյուլն էլ ավելորդ է. մեկ-երկու բոեմ գրեթե բոլորովին փոխած ես և իմ գիտցածովս երեք թե չորսն էլ նորը ունես. մինչև անգամ, ինչպես ըսին, սկսեր ես նոր մանր ուսանավորներ էլ գրելու: Այս անգամվան համար հերիք է. ավելի երկար աշխատանք պահանջող գործերդ թող մնա ուրիշ անգամի: Բոլոր խալմաղալն էն է, որ չուտով գործը գլուխ գա, քիչ ձեռքդ փող անցնի, քիչ քեզ ավելի անկախ ու ապահով զգաս, մտածես քու վերջնական ապաքինմանդ մասին ու հանգիստ քու աշխատանքդ չարունակելու: Հա՛, ապաքինում ասի, միտս եկավ: Իշխանուհին նեղացել է քեզնից և ուղղակի պահանջում է, որ Շևյաննների մոտ այլևս ել ու մուտ չանես[1]: Ա՛խր, այդ աստիճանի էլ հիմար կարելի՞ է լինել, տղա՛. գիտես, որ կուրծքդ նեղ է, ու թոքերիդ վերին մասերը բոլորովին թույլ. ուրիշ խոսքով՝ պատրաստ հող պացիենների հյուրընկալութեյան: Քու բոլոր ջանքդ լինելու է մնունդով, հանգիստով ու մաքուր օդով ավելացնես ու թարմացնես կենսական ուժերդ առողջութեյունդ վերջնապես ապահովվելու համար: Իսկ դուն գնում ես այն տեսակ տներ, ուր ամբողջ ընտանիքը հիվանդ է, նրանց հետ նստում ես սեղան, ուտում ես այն գդալով ու այն բաժակից, որ երեկ ով գիտե որու չրթունքին էր. ա՛խր, մարդ ուղղակի անխելք պիտի լինի: Եվ դեռ անցած օր երկար-բարակ քարոզներ էիր գրել Ֆիլիպի նամակին մեջ երեխաներիդ կարոտի ու սիրո մասին[2]. դարտակ բառեր են: Եթե դու իրոք կը սիրես քու երեխաները, մի քիչ ավելի կը մտածեիր քու սեփական առողջութեյանդ մասին: Փոխանակ չեղած տեղից քեզ հոգ ու մտածմունք ավելացնելու, գիշերը անքուն անցընելու ու չգիտեմ ուրիշ ինչ հիմարութեյուններ անելու՝ նայե՛ որ ուտես, քնես ու կաղդուրվես չատ չավասար աշխատանքով: Հոգ ու մտածմունքի բնավ կարիք չկա: Հիմա, վա՛ռք աստծու, քու տանդ համ. երեխաներդ բոլորն էլ բողկի պես. տանդ պակաս չի կա: Կինդ էլ չի երևում, որ խիստ դժգոհ լինի, մի դինջացի՛ր, էլի:

Նո՛ւ, հիմա որ հայհոյեցի սրծա ու սիրտս քիչ հանգստացավ, հիմա համբուրում եմ քեզ ու սպասում նամակիդ: Ես ինձ շատ լավ եմ զգում քու տանը, դու հեչ դարդ մի՛ արա: Աչխատում եմ տրամայիս վրա, որ այս տարի երևի բեմի լամպերու լույսին կ'արժանանա[3]: Նյութականս առայժմ բանաստեղծավարի, բայց հույս ունիմ չոստով առևտրական ոտքիս վրա անցնելու: Իսկ գնչուհուս մասին ինչ գրեմ քեզ, հոգի՛ս. գրելու ոչինչ չունիմ, բայց պատմելու չա՛տ, չա՛տ-շատ. իշտահդ պահե մեր հանդիպումին: Ամեն նամակին մեջ քու մասին կը հարցնե, իհարկե, թեև անձամբ քեզ չի ճանչնար, ինչպես որ արդեն գրած եմ կարծեմ: Պատասխանդ մի՛ ուշացներ, նմանապես ցուցակը, որ հաջորդ ժողովին ներկայացնեմ: Ահա՛ և այն նամակի օրինակը, որ ցրվելու ենք «մոտիկ» մարդոց.

«Հարգելի՛ պարոն, մենք, Հ. Թ. գրական տաղանդը գնահատողներս, ձեռնարկում ենք նրա տպված ու դեռ անտիպ երկերի հրատարակութիւնը, հուսալով, որ արդյունքովը կարողանանք մի քիչ ապահովել ահագին ընտանիքով ծանրաբեռնված, այժմ էլ հիվանդ մեր համակրելի գրագետի ապրուստը և միջոց տալու նրան, որ կարողանա արտադրել ու աշխատել իր կյանքի այս ամենահասուն տարիների մեջ: Թե՛ մեր հայ գրականութեան, թե՛ բանաստեղծի և թե՛ նրա համակրողների տեսակետից մենք չա՛տ ավելի խելացի ու բնական ենք համարում ա՛յժմ, նրա ուժերի հասուն ու թարմ ժամանակը, նրան ձեռք տալու ու միջոց, քան սպասելու, որ նրա ծերութեան ու այլևս արտադրելու ապարդյուն օրերի մեջ միայն հասարակութիւնը գա իր համակրանքն ու օգնութիւնը մատուցանելու:

Մենք մեր այս ձեռնարկին մեջ մեր հույսը բնականաբար դրած ենք Հ. Թ. հարգողների ու բարեկամների վրա, որոնց թիվը, ինչպես մենք վստահ ենք, փոքր չէ: Ձեզ էլ, հարգելի՛ պարոն, համարելով մեր բանաստեղծով մասնավորապես հետաքրքրվողների թվում, ահա՛ դիմում ենք Ձեզ, խնդրելով՝ ամեն կերպ աշխատիլ հնար եղածին չափ բաժանորդների թիվը ավելացնելու: Աչքի առաջ ունեցե՛ք, որ «հրատարակութեան ի նպաստ» կարող եք նաև բացիկ նվերներ ընդունիլ: Այդ նվերները որքան խոշոր լինին և որքան շատ, այնքան մեծ կը լինի բնականաբար և՛ հեղինակին հասանելիք զուտ արդյունքը: Այս երկրորդ կետը մենք մասնավորապես հանձնարարում ենք Ձեր ուշադրութեյանը: Գիտեք անշուշտ, որ այս տեսակ դեպքերում ինչ մեծ դեր ունի

մոտիկ մարդոց մատնավոր ջանքն ու տակտը. և ճիշտ դրա համար է, որ մենք դիմում ենք Ձեզ, վստահ լինելով, որ չեք զլանա Ձեր աջակցությունը ամեն կերպ նվիրելու այս գործին, որ մենք Ձեր սրտին այնչափ մոտ ենք կարծում, որչափ և մեր:

Ամեն տեսակ թյուրիմացության առաջն առնելու համար ավելացնենք, որ հրատարակիչները ո՛չ մի դրամական շահ չունեն գործին մեջ. հրատարակության անմիջական ծախքերից դուրս՝ բոլոր մնացած գումարը հեղինակի սեփականությունն է:

Գրվածները կը հրատարակվի բոլորը միասին ամփոփված մեկ հատորի մեջ, որու բաժանորդագինն է՝ գեղեցիկ թղթի վրա ու փատակազմ՝ տասը րուբլի. սա կը լինի շատ սակավաթիվ և ամեն օրինակը թվագրված: Իսկ անկազմ ու լավ թղթի վրա՝ բաժանորդագինը երեք րուբլի:

Թե՛ տպագրության և թե՛ արտաքինին մասնավոր խնամք կը տարվի:

Տպագրությունը կ'ըսկսի երկու-երեք ամսից. դա կախված է, թե երբ հայտնի կը լինի մեզ բաժանորդների (մոտավոր) թիվը: Եվ հենց դրա համար էլ կրկնակի խնդրում ենք Ձեզ՝ չարժիք որքան կարելի է չո՛ւտ և ուղարկեք մեզ Ձեր ջանքերի արդյունքն ու հաշիվները որքան կարելի է չուտ: Ընդունեցեք և այլն...:

64. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, Հոկտ. 23, 02

Հոգի՛ չան, այս անդամ ո՛չ իբրև «ադյուծիկդ» եմ գրում, ո՛չ էլ իբրև ժողովի անդամ, այլ գրում եմ իբրև քու Լևոնդ.: Նամակդ նոր առացա և պատասխանում եմ անմիջապես. գնչուհուս էի գրելու, Թոզի ու գրում եմ քեզ: Կրնաս, ուրեմն, եզրակացնել, թե որչափ սրտիս կպավ քու դրածդ[1]: Ցավն այն է, որ ես քեզ Հասկանում եմ Հիանալի կերպով, զգում եմ քու Հոգեկան ճնշումդ, վայրույթդ ու վիրավորանքդ և քու պատասխանդ գիտեի գրելուցդ առաջ: Սրտիս խորքը ընդՀանրապես առած չեմ կարող քեզ իրավունք չի տալ, թեև երկրորդական կետերի մեջ ես քիչ ա՛յլ կերպ եմ մտածում: Բայց որքան որ

քեզ եմ հասկանում, այնքան էլ հասկանում եմ «նրանց», որոնք քեզ բոլոր սրտով օգնել են ուզում, քեզ համար մի բան անել են ուզում: Խնդիրը իր բոլոր մերկությամբը սա՛ է. դու տաղանդ ունես, արտադրել կարող ես, ուրիշ «գործի» անպետք ես, այժմ էլ հիվանդ. քեզ ապրուստ պետք է, քեզ փող է պետք, որ ընտանիքդ քիչ ապահովես, որ ապրես ինքդ, կապդուրվես վերջնականապես և կարողանաս աշխատիլ: Թողնել, որ ապրես ու քարշ գաս այնպես, ինչպես մինչև հիմի, այդ կը նշանակե ձեռք վերցնել թե՛ քու առողջությունեդ և թե՛ քու գրական չնորհքեդ: Ուրեմն մի ելք պիտի գտնել և քու «բարեկամներդ» մտածեր են ահա այդ հրատարակությունը, որ ամենից ավելի գրական վերարկու է տալիս փող խնդրելուն. որովհետև վերջապես «փող պիտի խնդրվի», որովհետև երեխա չես և շատ լավ պիտի հասկանաս, որ պրքերդ, եթե իրենց հալին թողնեն որ ծախվի, կամ հենց եթե զոռով էլ որ տարածեն, հաղիվ կարող են իրենց հրատարակության ծախքը վակել: Այդ և մենք հաշված ենք, քեզ համար էլ դժվար չէ հաշվելը: Ուրեմն կա՛մ ոչինչ չի պիտի անել, կա՛մ «փող պիտի խնդրվի». խնդիրը ինչպեսին մեջն է: Եթե ինքդ ավելի լավ միջոց մը գիտես՝ հայտնե: Ես ճչմարիտ չգիտեմ և երևի «նրանք» էլ չգիտեն, որ եկեր ու կանգ են առեր հրատարակության վերարկուին տակ: Պարզ է, հոգի՛ս, որ այս բիլյուվնները հեչտ չէ քու գլայուն հոգուդ համար կով տալը. բայց ի՞նչ կարող ես անել: Չէ՞ որ, դժբաղդաբար, մինչև հիմի էլ արդեն այդ դրության մեջ ես գտնված: Մի՞թե չարունակ ստիպված չե՞ս եղած ալ ու ձախից «փող խնդրելու». մեր ճակատագրի դառնությունն է այդ, ի՞նչ կարող ենք անել: Եվ վերջապես մի քիչ էլ փիլիսոփայաբար մտածե. չատ ես կարևորություն տալիս մանրիկ որդերու տալիք դատողությանն ու նրանց չարությանը: Վերջապես մի քիչ լուրջ մտածե՛ ու գրե՛ ինձ, թե դու ինքդ ինչպես ես ուզում, ես էլ դրա համեմատ դիրք բռնեմ այստեղ: Ես հիմա մի տեսակ քու ներկայացուցիչդ եմ դարձեր, առանց իմ ուզելուս. հենց նրա համար երևի, որ բնազդորեն զգում են, թե ինչպես ես եմ քեզ հասկանում, իրենք չեն կրնար հասկընար: Միայն խընդիրը իր բոլոր մերկությամբը դի՛ր քու դեմդ. ուզո՞ւմ ես, որ քեզ թողնեն այնպես, ինչպես մինչև հիմա էիր, ու չի մտածեն քեզ համար փող ճարելու: Եթե դու կարուվ կերպով այսպես ես վճռած՝ դո՛ւն գիտես, բայց ես սաստիկ պիտի ցավիմ, որովհետև դա ասել է քու առողջությունիցդ ու չնորհքիցդ ձեռք վերցնել, ինչպես որ ըսի: Թե՞ դուն հա-

մաճայն ես, որ քեզ համար մի բան ընեն, ուրիշ խոսքով՝ «փող ճարեն». որովհետև, սիրելի՛ս, քու բարեկամներդ ուզում են «փող ճարել». ես իրավունք չունիմ մեջ մտնելու այդ տեսակ հարցերի, թե այլևս «շատ երկար ես ծանրացեր նրանց վրա», թե «ուզում են քիչ թեթևանալ» և այլն: Ես այդ չգիտեմ և դրա մասին չեմ էլ ուզում խոսել: Գիտեմ միայն, որ նրանք ուզում են քեզ համար «փող ճարել» և եթե համաձայնես, մի 3-4 հազար կրնան ճարել, իրենց խոսքով[2]: Ես ինքս անձամբ քեզ համար վիրավորական ոչինչ չեմ գտնում, այլ նույնիսկ մի տեսակ ընդհակառակը, միայն իհարկե, եթե դուն վարժվես մանր մարդոց մանր ակնարկներին մի քիչ ավելի բարձրից նայելու: Գրե՛ ինձ պարզ. խնդրի էականը սա՛ է. թե՛ հրատարակչական, թե՛ խմբագրական, թե՛ ժամանակի, թե՛ վռազելու խնդիրները երկրորդական են և կարգադրելը դժվար չէ: Ես կ'ուզենամ գիտենամ քու կամքդ, որ հանկարծ քեզ մտերմությունն անելու ցանկությամբ քու սրտիդ հակառակ եղող մի ապուշ դիրք չբռնեմ:

Համբույրներով՝ քու Լևոնդ

65. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

02, նոյեմբեր կարծեմ 7

Հանե՛ս ջան, երբեք պատահե՞լ է քեզ, որ սիրած աղջիկդ կամ կինդ մի խոշոր հիմարություն կատարած լինի և երբ դու քու դժկամությունդ արտահայտելու պատրաստվելու վրա լինես ունքերդ կիտած, պատահե՞լ է քեզ, որ հանկարծ չարաճիճի կատակ մը չրթունքին նետվել է նա քու վիզդ անվո՛ւթ, ազա՛ռ և ուրա՛խ և դու հանկարծ նկատել ես, որ քու չրթունքներդ իրենց գայլի քարոզները բոլորովի՛ն մոռցած, բոլորովի՛ն տարբեր մի գործով են զբաղված արդեն: Ահա՛, նույն հոգեկան զգացումն ունեցա, երբ վերջին զվարթ նամակդ առի[1]: Նո՛ւ, վերջապես, մի քանի պայծառ տող գրեցիր ինձի: Քեֆդ նայե՛, սիրելի՛ս, բոլորը դատարկ բաներ է. կը կարգադրվի ամեն բան իր կարգովը: Քու «գործերիդ» մասին կը խոսենք մանրամասն, երբ դուն գաս, եթե չուտով գալու ես. իսկ եթե ավելի երկար մնաս հոս, որ ես սաստիկ կը ցանկամ, այն ատեն հավանորեն մեկ-երկու օրով ես կու

գամ քեզ[2]: Նամակով իրար բան հասկըցնելը չատ է դժվար. կա՛մ ծուռ է հասկացվում, կա՛մ չատ տրաժիկ: Իսկ հիմա ասըե՛ք ու քեֆիդ, ո՛չ մի բանի մասին մի՛ մոածիը, բացի քու կազդուլումդ. քիչից-միչից աչխատե՛, եթե ախորժ ունիս, ուրիշ ոչինչ: Որ մոտատ սկսել է քեզ հաճախել, իհարկե, անչափ ուրախ եմ. մաղթում եմ ավելի հաճախակի վիզիտներ: Իսկ ես քու տանդ թագավորում եմ հիմա. ամբողջ Վերնատունը իմ գայիսոնիա տակն է, մոտաներն էլ ծակերից ու ծուկերից երբեմն ներս են նայում: Բայց որովհետև քամիներն էլ մոտաներից ո՛չ պակաս աներես են, կնոջդ հետ այսօր բոլոր ծակերն ու ծուկերը բամբակ կոխեցինք. և երևի այդ է պատճառը, որ խեղճ մոտաներս այսօր չեն կարողանում ներս գալ. որչափ ուզեցի աչխատեմ՝ բան դուրս չեկավ: Բայց ընդհանրապես դժգոհ չեմ աչխատանքես. աչխատում եմ ավարտեմ տրամաս[3], խաթա-բալա դարձավ: Արդեն ամեն կողմ չավ են արել, մարդու հետ չեմ կարող հանդիպել, իսկույն տրամայից են հարցնում ու զահլաս տանում են. կանգնիր ու ամեն մեկի տափակ դատողությունները լսիր: Ես երևակայում եմ, թե դեռ ինչ աքանչելիքներ եմ լսելու, երբ խեղճ գրվածքս «բևմի լույսերուն» ներկայանալու արժանանա: Մեկ խոսքով չատ զոռ տեսակից ինձ տրամատուրկ են չինել արդեն, թեև ոչ ոք ո՛չ կարդացած է, ո՛չ տեսած: Տեսնո՞ւմ ես, ինչ հեչտ բան է հայոց ազգի տրամատուրկ դառնալը: Երբեմն մտածում եմ մի լավ օյին խաղամ խալխի գլխին. իմ սրբագրությունը դառնա անվերջ, բան չունին, թող սպասեն: Ինձնից ոչ պակաս տքնում է և Ֆիլիպը իր վոտըվիլի վերա. ամեն չորեքչաբթի մեզ ներկայացնում է մի նոր վարիանտ, և դեռ ոչինչով չի կարելի ապահովված համարել, որ հասած ենք վերջին վարիանտին: Մեր չորեքչաբթիի «նիատերին», չգիտեմ զգում ես թե ոչ, բայց միշտ ներկա ես և դուն: Ամեն մեկը բերում է քեզնից ստացած նամակները և կարդում է խորին լռության մեջ, խորին երկյուղածությամբ և քիչ է մնացեր «Հոտնկայս»: Կարդում ենք նաև դրսից ուղարկած տրամանները: Ամեն չեչիտը կա՝ գավառից, քաղքից a la[4] Շեքսպիր, a la՝ Իբսեն և a la ոչինչ: Ամեն բան կա մեջը ու ամեն տեսակը, միայն մեկ բան չի կա. գեթ մի քանի կոպեկի գրական արժանիք: Խեղճ բրիկաչչիկներ ու չգիտեմ ուրիշ ինչեր, որոնք հաջորդ օրը ով գիտե ինչ սրտի տրոփումներով գալիս են իշխանուհու մոտ իրենց «դատավճիռը» լսելու. ակամա մարդու ծիծաղն է գալիս, բայց մի ծիծաղ, որի տակը դառնություն կա

պահ մտած. և երբ մտածում եմ, թե ինչքան-ինչքան մարդիկ կան, որոնք կաչվից դուրս են գալիս, որ գրագետ դառնան, կամ դերասան, կամ երաժիշտ, ու այս մտածումը մի տեսակ եսական հաճույք է պատճառում ինձ: Ուրեմն միայն փողն ու հանգիստը չէ, որ քաշում է մարդուց, նույնիսկ շատ «խելացի» համարված մարդուց, ուրեմն մենք էլ մեր բոլոր տանջանքների հետ նախանձելի ենք դեռ չա՛տ շատերի համար: Դա էլ վերջապես մի բան է, թեև իհարկե վայրկյաններ են գալիս, որ բոլոր սրտովս կը ցանկայի, որ վոխանակ նախանձելիի՝ գրպանս լի լիներ: Նո՛ւ, կարծեմ, սրա վրա էլ կարելի է վերջակետը դնել:

Ջերմ համբույրներով՝ Լևոնդ

66. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Դեկտեմբերի 2, Թիֆլիս>

Հանե՛ս ջան, շատ եմ ցավում հիվանդանալուդ: Գալիս զգուշ եղի՛ր և եթե լինճ կը լսես, Ախալցխա կամ մի ուրիշ տեղ մի՛ մնա, ե՛կ ուղղակի և զգուշ եղիր՝ չը մրսես: Ինչ վերաբերում է իմ քու տանդ մնալուս, դու ամենևին փույթ մի՛ արա, սիրելի՛ս. նախ՝ ես լինճ շատ լավ եմ զգում և ոչ մի բանի էլ պակաս չունիմ: Երկրորդ՝ իհարկե որ ես իմ մոտիկ բնկերոջս մոտն եմ, ո՛չ թե օտարի: Ես չհասկացա այդ բոլորը ինչ առթիվ ես գրած, համենայն դեպս դարտակ բան է. կը գաս, կը խոսենք: Նույնը և սենյակների մասին: Տո՛, ո՞վ է այդ բոլորի մասին դարդ անում, է՛, և վերջապես քեզ ո՞վ ասավ, թե ես տեղավորված չեմ: Ես քու մասին եմ միայն մտածում, վախենում եմ քեզ ու ձերոնց նեղվածք դառնա: Համենայն դեպս կը գաս, կը խոսենք ու կը տեսնենք: Երկրորդական բաներ են. էականն է, որ գաս և որ առողջ լինես: Շահագիպի պատմությունը ես գիտեի, դա էլ է դարտակ բան[1]: Մի խոսքով ամեն բան դարտակ բան է. լիքը միայն էն է, որ քեզ կարոտել եմ, ուզում եմ գաս: Համբուրում եմ քեզ պինդ-պինդ, չո՛ւտ արա, առողջացի՛ր ու ե՛կ:

Քու Լևոնդ

67. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Դեկտեմբեր 1902, Թիֆլիս>[1]

Հանե՛ս ջան, ուրեմն վերադառնում ես, բարով գաս, անչափ կարոտով անհամբեր սպասում եմ ժամանելուդ: Գրի՛ր նախօրոք որոշ կերպով հասնելուդ օրը: Եվ անկեղծորեն խնդրում եմ, որ առանց քաշվելու ուղղակի մեզ մոտ չնորհ բերես. ես մեր տանը քեզ համար հատկացնել կը տամ մի սենյակ: Կը լինես ինչպես քու սեփական տանդ մեջ, բնավ դարդ մի՛ արա:

Ներփակ ուղարկում եմ քեզ Նիկոլի նամակը[2]. ա՛յ տղա, տեսնում ես մարդը ինչքան ցանկեր է չինում[3], զարմանում եմ և հիանում: Ես մի օր անգամ չեմ կարող ինձ երևակայել այդչափ ցանկերի մեջ նստած: Մարդ կարզին կը ցանկապատվի, բայց զոչաղ տղա է ու աշխատասեր: Ա՛յ, այդ տեսակ մարդիկ կյանքի մեջ գործ կը տեսնեն ու արդյունք կը տան:

Իսկ մենք... փառավորեսցուք... և այլն: Արդեն միտքս էլ չի գալիս, ինչպե՞ս է այդ հանգանակի վերջը:

Գնչուհիս պինդ-պինդ քո մասին է հարցնում. և երբ իմանա, որ չոտով վերադառնալու ես, ինձնից ավելի նա պիտի ուրախանա: Իսկ քու բոմաններդ թե՛ հին, թե՛ նոր, թե՛ վերջին ֆրանսուհին[4] և թե՛ Тячкин-ի Դեզդեմոնան[5], ըստ երևույթին բնավ կնոջդ ճաշակովը չէ: Այստեղ պոլ քու մասին խոսում ենք կնոջդ հետ, պատմել եմ տալիս ու ծիծաղում վերադ: Եվ լրջորեն մտածում ենք արդեն այն միջոցների վրա, որով պիտի կարողանանք քու բազմաթիվ ու բազմազան հյուրերիդ առջևը առնենք, որ սխալ հասցեով «իմ» սենյակս չի մտնեն:

Ա՛յ, մի չո՛ւտ արա, է՛, չաո օյինբազ բան է լինելու մեր միասին ապրելը: Արդեն կինդ վճռել է, որ մի չաբաթ «անճախ» «Հալա» մի քիչ խոսանք իրար հետ. իսկ ես պնդում եմ, որ սխալվում է, որ դրանս վրա ընդունելությյան որոշ ժամեր եմ նշանակելու, նրանից դուրս «մի քիչ խոսալ» կարելի չէ: Ի՞նչ սոսկալի թերահավատն է կինդ. չի հավատում , Հալա ծիծաղում էլ է վրաս:

Հա՛, մեկ էլ այդտեղ լավ առաս ներս ծծիր դուրսի մաքուր օդը: Այստեղ քեզ երեք ամիս սենյակից դուրս թողնելու չենք, ւր «նստես ու գրես»՝ բարեկամներիդ ասելովը, որ «սանդուղքները չելնես ու չիջ-

նես»՝ բժշկի խոսքերով, որ «հօգուտ ազգի ամեն տեսակ գաղափարի ժողովներով ու ձրի աշխատանքներով ուժերդ չի վատնես»՝ ընդհանուրի կարծիքով:

Համբույրներս՝ Լևոնդ

1903

68. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հուլիսի 27-28, Թիֆլիս>

Սիրելի՛ Հաննես:

Գուցե զարմացել ես, որ մինչև հիմա դեռ քեզ ոչինչ չգրեցի: Մասամբ սպասում էի, որ նախ քեզնից մի մարդավարի լուր ստանամ, մասամբ էլ կարծես մի տեսակ քաշվում եմ գրելու: Քաշվում եմ, որովհետև գրելու եմ նորից ա՛յն, ինչ որ ձմեռը կրկնել եմ քեզ արդեն այնքա՜ն անգամ, իսկ դու գիտեմ, որ չես ախորժում: Հետևանքը լինում է ա՛յն, որ դառնանում ես ու ծաղրում, մի բան, որ ե՛ս չեմ սիրում բոլոր հոգովս: Ջնայելով այս բոլորին՝ գրելու եմ քեզ նորից, որովհետև դա իմ աչքում ամենաէական հարցն է: Իմ հաստատ համոզումս է, որ դու երբեք չես առողջանա, եթե ինքդ քեզ քու ձեռքդ չառնես: Դեղերը դարմանակ բաներ են, ամառանոցը հիանալի է, բայց միայն օժանդակ և ամբողջ ամիսներով ձեռք բերածը մի գիշերվա մեջ կարելի է վատնել: Գլխավորը այն է, որ ամենախիստ կերպով ինքդ կանոնավորես ու հարդարես քու կյանքդ. կանուխ քնել, կանուխ ելնել, կանոնավոր պտույտ անպատճառ, վեճե ու տաք խոսակցություններե խուսափում բացարձակապես, նույնը՝ ժողովներե, խմբումներե, երեկույթներե, ո՛չ իսկ բացառապես: Պիտի ասես, թե էլ ինչի՞ կը նմանի կյանքը. չատ ես սխալ, պարզապես վարժության խնդիր է: Հանգիստ, մաքուր ու կանոնավոր կյանք ու աշխատանք: Սա մի դեղատոմս է ամեն երկաթից չշինված մարդոց համար, բայց մանավանդ նրանց, որոնք հիվանդ են և այն էլ հիվանդ թոքերի թուղութքյունից: Համոզվիր, որ քեզ ամենից ավելի վնասողները այն մանր-մունր կամ «բացառիկ» անվանած բաներն են, որոնց դու արհամարհում ես՝ չարաչար սխալվելով: Հենց որ քիչ ուժերդ գալիս են, դու արդեն վատնում ես, վիճում, երգում, վազվզում, ինչպես սրանից տաս տարի առաջ. դու այլևս երբեք ո՛չ

վիճելու ես, ո՛չ վազելու, ո՛չ էլ երգելու, եթե ուզում ես, որ առաջ լինիս ու առաջ մնաս, եթե ուզում ես մի բան արտադրես, եթե ուզում ես մի բանի պետք գաս: Դու չափազանց ես անփույթ դեպի քեզ, ինչպես ընդհանրապես դեպի ամեն բան: Դի՛, մի՛ բարկանա, վերջացրի. և էլ այս մասին երբեք բերանս չեմ բանա, ուրեմն վերջակետ: Գալով ինձ՝ չոգերը լավ նեղացնում են, թուլլ եմ ու բացարձակապես ոչինչ չեմ չինում. անկարող եմ աշխատելու, թափառում եմ ձանձրույթի հետ թևթևի: Քիչ-շատ մոտիկ մարդիկ ցրված են բոլորը: Մենակ Ֆիլիպն է, որի մոտ լինում եմ չաբաթը մի կամ երկու անգամ. մի անգամ էլ գնացինք միասին Կոճոր՝ նրանց[1]: Այս է ահա իմ ամառս. ուղղակի անտանելի կը լիներ, եթե չունենայի մուսակա մեծ Հույս. խոսքս Ջավոյի դարձի մասին է, ինչպես անշուշտ գուշակում ես: Այսպես մի չաբաթից այստեղ կը լինի, ուրեմն կարող ես Հասկանալ, որ ամեն բան անցնում երկրորդ բլանը. և հիմա այլևս ո՛չ չոգն է աչքիս գալի, ո՛չ էլ պարապ լինելս: Քու գնալուցդ մի ութ-տաս օր վերջը գնաց և Դերենիկը[2]. դեռ նրան էլ ոչինչ չեմ գրել, հենց Հասնելուն պես արդեն օրերն է սկսել հաշվելու, թե երբ հետ պիտի դառնա Թիֆլիս: Նիկոլը անառես է դարձել բառի բուն նշանակությամբ: Իշխանուհուց նոր նամակ առի. նա էլ է դժգոհ ու գանգատվում. մխիթարվում է ծովով և ես նախանձում եմ. ա՛խ, ծո՛վը: Երևակայի՛ր, չուտով ես էլ եմ տեսնելու ծովը, թեև իհարկե ոչ երկար, գուցե մի-երկու օր. գուշակո՞ւմ ես, թե ինչպես, հապա՞:

Գրական մեռելություն, եկեղեցական սպանություն, հասարակական անշնչություն: Վա՛հ, ի՞նչպես թե անշնչություն. Թիֆլիս այնպես կենդանություն է որ. ամեն փողոցի գլուխ, ամեն թրամվայի մեջ, ամեն չինքի առաջ, էլ խազախ կուզես, էլ ոստիկան, էլ կարադավոյ, էլ տավորնիկ, հաչվելով խոմ չի հատնիր: Այնպես կենդանի, աշխուժ, կարծես ПОХОД[3] գնացող բանակի մեջ ապրելիս լինինք[4]. այնպես ուրախ է որ, երբ խեղճ տավորնիկները իրենց փայտերի գլխին քնում են, ու խեղճ ոստիկանները արևի տակ հորանջում են մեծափառ: Իսկ Բաքու ասում են չոգերը հերիք չեն անում, տաքանալու համար ասում են ֆանտանները են կրակ տալիս: Ինչ ցուրտ չոգերի ենք հասել, աստված իմ:

Բարևներս ջերմ-ջերմ:

Լևոնդ

69. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Օգոստոսի 1-2, Թիֆլիս>

Հաննե՛ս ջան:

Փոթի հանդիպեցանք իրար չոգենավին մեջ[1], միասին անցանք Բաթում, երկու օր այնտեղ, երկու օր էլ այստեղ՝ մոտս: Հիմա Ղարաքիլիսա է «հանգստանալու»: Քու բարեդ անձամբ կը տանիմ ինքս այս կիրակի: Կարոտով համբուրում եմ քեզ. վստահ եմ, որ կազդուրումդ լավ է գնում և որ արամադրությունդ տեղն է: Գրիր ավելի երկար: Օր. Մելիք-Հայկազյանը վերադարձա՞լ[2]. բարևներս տուր նրանց:

Լևոնդ

Այստեղ փոսաը քու հասցեիդ ապահովագրած նամակ կա, պահանջի՛ր[3]:

1904

70. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, Հուլիս 22, 1904
Հասցես՝ Фрейлинская 7, кв. 6

Սիրելի՛ տիկին[1]:

Ամենից առաջ սրտանց ուրախ եմ, որ ձեր Կոճորի զովության ու 23 երեխաների ազմուկի մեջն[2] էլ չեք մոռացել մեզ՝ Թիֆլիսի հավատարիմ բնակիչներիս: Ձեր երեխաների ազմուկին համաը չա՛տ եմ ցավում, դրա փոխարեն շատ եմ նախանձում ձեր լեռների զովությանը: Մի շաբաթ առաջ ես էլ Ջավոյի հետ երկու օրով գնացել էինք լեռները՝ Սանահին, այնքան կարոտել էինք բնությունը, որ երևի պես չէինք իմանում ինչպես արտահայտենք մեր ուրախությունը, երբ առավոտյան թարմ զովության միջով սարի լանջը սկսանք բարձրանալ: Ջավոն լավ է, դեռ ոչինչ չկա, երևի ժամանակը սեպտեմբերի սկիզբներին է

գալու[3]. աշխատում է, շոգերից երբեմն ուրտնջում, իսկ հիմա էլ շատ ու շատ բարևում է ձեզ: Անցյալ երեկուն Ցիլիպի մոտն էինք. Օհաննեսի երկերը քննադատելով է զբաղված կամ քնելով. այս ճաշերից վերջը. ճաշից առաջ արդեն գիտեք: Գալով Օհաննեսին՝ արդեն երկու շաբաթ կա, որ անհայտացել է մեր հին քաղաքի հորիզոնից. երևի իրանց գյուղը[4], գոնե այդպես էր ասում. ինձ էլ ոչինչ գրած չէ, իսկ գյուղ գնալուց առաջ մերթ այստեղ էր, մերթ Շուլավեր, կամ դես ու դեն: -Վերջապես երկու խոսք էլ իմ մասին. տեսնում եք որչափ համեստ եմ, իմ մասին ամենից վերջը թողեցի, եթե իհարկե դա մի քաղաքականություն չէ ավելի երկար դրելու համար: Մի քիչ ծուլություն, մի քիչ ընթերցում, մի չա՛տ քիչ կանոր[5], մի չա՛տ քիչ էլ «գրական լվացք», ահա՛ բոլորը. վերջին դարձվածքը ձեզ ավելի հասկանալի դարձնելու համար ըսեմ, որ Ստ. Լիսիցյանի հրատարակությամբ տպվում են իմ հին մեղքերս, այսինքն «Երգերս» ու «Լեռան աղջիկը» առանձին գրքույկներով[6]. ահա՛ դրանց սրբագրության ու տպագրության մասին է խոսքս, որ Աղայանը լվացքի հետ է համեմատած ժամանակով: Տեսնում եք որչափ համեստ եմ նորից, գրական գողություններիս հեղինակին ես ինքս եմ մատնանիշ անում. դա շատ բացառիկ հատկություն է մեր արդի և ընդհանրապես մեր ամբողջ գրականության մեջ: Իսկ ինչ վերաբերում է դրամայիս, դրամային, որ դուք «մրցանակաբաշխության մասնաժողովին» հասցնել ու ներկայացնել եք ստիպում, կարծեմ գլուխ գալու չէ: Դրաման պատրաստ է[7]. պետք է մի վերջին աչք ձգել ու արտագրել. բայց առայժմ հակում չունիմ կարծես. մյուս կողմից էլ կարծես մի տեսակ բնական հակակրանք ներկայացնելու. հենց առաջին անգամից այնպես բոլոր գրողները վրա են թափած, որ մի տեսակ անախորժ կը դա ես էլ նրանց խառնվելու: Մանավանդ ինձ մասնավորապես հետաքրքրողը գործի գրական կողմն է. ես կը վերջացնեմ ու կը տպեմ. եթե թատրոնական ընկերության[8] ժողովը հարմար համարեց, թող վերցնե ու խաղա. այդ հարցը համեմատաբար ինձ քիչ է հետաքրքրում: Իսկ մրցանակի կը ներկայացնեմ արդեն տպվածը գալ տարի. թե՞ տպված կարելի չէ. է՛, կը ներկայացնեմ մի ուրիշ բան, եթե ունեցա: Սեպտեմբերին կամ հոկտեմբերին կը կարդամ ձեզ տպվելեն առաջ, եթե կը կամենաք: Ցիլիպն էլ խոստացել է իր քննադատությունը, Հանեսն էլ գուցե մի բան ունենա. այնպես որ մեր գրական երևկոներին բավական

նյութ ունինք, ինչպես որ կը տեսնեք: - Կը վերջացնեմ սրտագին բարևներով իմ ու Ջավոյի կողմեն ու ջերմ սեղմելով ձեռքերնիդ:

Ձեր Շանթ

71. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Օգոստոսի 7, Թիֆլիս>

Վերջապես ձայնդ առինք. ամբողջ Թիֆլիսը գլուխը կորցրած քեզ կը փնտրեր և չիմանալով տեղդ հուսահատ կը նայեինք իրար, մինչդեռ դու թթենիներուդ տակ ոտերդ պարզած քուն ես մտեր եղած Նիկոլի ընթերցումներու օրորին մեջեն[1]: Աչունը այդտեղ անցընելու որոշմանդ սրտանց ուրախ եմ, իհարկե եթե միայն որոշում չմնա[2]: Մեր քեղի գալը առայժմ հազիվ թե դյուխ գա, թեև ես ալ, Ջավոն ալ սաստիկ ծարավել ենք բնության ու ծուխության: Դերենիկը դեռ այստեղ է իր նորագույն մուսաներուն հետ: Եկավ և Նիկոլը քու սիրալիր հրավերներովը ծանրաբեռնված: Եթե կարողանաս ծուխությանդ հաղթես, նորեն քարտ մը գրե մեզի, իսկ առայժմ ընդունե Ջավոյի և իմ սիրալիր բարևները, որոնց կեսը տիկնոջն է:

72. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Օգոստոսի 16, Թիֆլիս>[1]

Սիրելի՛ տիկին:

Ջերմ շնորհակալությունս ձեր խորհրդավոր բացդրին ու թանկագին շնորհավորանքին փոխարեն[2]: Ե՛ս էլ եմ շատ ուրախ, որ ամառը մոտենում է իր վերջին և որ չուտով կը տեսնեմ վերստին իմ սիրելի ու բարեկամ դեմքերը: Ցավում եմ միայն, որ դուք այնքան էլ գոհ չեք, ըստ երևույթին, ձեր ամառվանից, բայց Համենայն դեպս հույս ունիմ, որ անշուշտ լավ կազդուրված եք լինելու ու թարմացած. չէ՞ որ այնքա՜ն-այնքա՜ն ժողովներ ու մասնաժողովներ կան ձեր առա՛ջ[3]. Ֆիլիպը

դեռ նոր-նոր ժողովներ էլ է ուզում հնարել ձեզ համար. միթե չարամտավթյուն չէ՞, դուք ասեք խնդրեմ: Ջերմ ու սրտագին բարևներ ինձնից ու «Նրանից»[4]:

Լևոն Շանթ

1905

73. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 1905 օգոստոս 4

Սիրելի՛ տիկին:

Իմացա, որ Կոջոր եք այս ամառ, և ահա՛ գալիս եմ երկտողովս ձեզ բարևներ բերելու ու ձեր բարին հարցնելու: Հուսով եմ, որ առողջ եք բոլորովին ու կազդուրված. ինչպես դուք, այնպես էլ ձեր փոքրիկ չիկահերը[1]:

Մենք լավ ենք, ոչինչ. գուցե լսած եք, որ Լոռի ենք այս ամառ, Օհաննեսին դրացի. մեզ իրարից բաժանողը Օհաննեսի չատ սիրած ու չատ գոված Դեբեդն է իր ձորովը: Ջնայելով իրար մոտ լինելնուս՝ դեռ մինչև այժմ չենք տեսնված. լսում եմ, որ չատ է զբաղված քեֆով ու գործով[2]: Սանահին կայարանի պլխին է մեր գյուղը՝ Օձուն. լայն սիրուն սարահարթ, զեղեցիկ տեսարան, թարմ օդ ու պաղ ջուր, ահա՛ մեր բոլոր չիքը. մնացածը գյուղ է ու գյուղավարի. ցանկանում էի մի անգամ հայ գյուղը մոտեն տեսնելու՝ ա՛յ, առիթը եկավ: Սուրիկը առողջ է և արդեն ճիգեր է անում ոտի կանգնելու[3]: Ջավոն բարևում է ձեզ սարերից, որ և ահա՛ ուղարկում եմ ձեզ այստեղից: Ես ամիսը 2-3 անգամ մի-երկու օրով գալիս եմ գործերս տեսնում ու գնում: Մի չարաթից գալու եմ նորից և չատ ուրախ պիտի լինիմ, եթե վերադարձիս ձեզնից մի լուր ունենամ. մանավանդ որ մի պաչառնական հարց էլ ունիմ ձեզ անելու: Իմ «Համբավավոր» դրամաս ավարտած եմ արդեն[4], արտագրած ու բոլորովին պատրաստ: Ուզում եմ ներկայացնեմ մրցմանը: Մտածում եմ, որ երբ ամառանոցից քաղաք վերադառնաք՝ այստեղ հանձնեմ ձե՛զ, որ դցեք ստացված ձեռագիրների չարքը: Միայն չգիտեմ, կարելի է որոշ ձևականութիւններ կան կամ գուցե անհրաժեշտ է, որ ավելի վաղ հասնի ձեր ձեռքը: Այն ժամանակ, խնդրեմ, հայտնեցե՛ք ինձ, որ անմիջապես ուղարկեմ. փոստով հարմա՞ր է:

Ջմոռանամ չնորհավորելու ձեզ՝ մեր մեծ նորութիւնը[5]: Այնքան վարժվել եմ միշտ ձախորդ ու անհաջող բաներ միայն լսելու մեր վերաբերմամբ, որ հիմա մի տեսակ խորթ է թվում ինձ մեր արդի հաջողութիւնը. դեռ չեմ կարողանում հավատամ, որ աշնան ունենալու ենք մեր դպրոցները, մեր լեզվով, մեր ոգով: Զարմանալի՛ է. ինչպե՛ս ամենահասարակ նախնական բաներն անգամ երբեմն դառնում են բացառիկ երկնքից ընկած մի բաղդ:

Շատ հետաքրքիր է իմանալը, թե դուք հիմա ի՞նչ նոր ծրագիրներով եք զբաղված: Որ նոր ծրագիրներ ունեք, կասկած անգամ չի կարող լինել: Ես երբ ձեզ հիշում եմ, հիշում եմ մի՛շտ էլեքտրական լամպի տակ ու միշտ նոր ծրագրով. այդ երեքը շատ են սինդ իրար կապված գլխիս մեջ:

Ա՛յ, Ֆիլիպը, նա ծրագիրներ չի սիրում, նրանը հանկարծ, մեկ էլ տեսար Զվիցերիայի մի անկյունից է ձայնը գալիս[6]. ասենք հեչ չի էլ գալիս. գոնե ես լուր չունիմ, դուք անշուշտ կ'ունենաք, ուրախ եմ լինելու, եթե մի բան էլ ինձ հաղորդեք: Ասել են, որ մի քարտ ունեմ նրանից, թեև դեռ ձեռքս չէ հասել. և երևի երբեք էլ ձեռքս չի հասնի... Օհաննեսին են տվել, որ ինձ հանձնի:

Վերջացնում եմ սրտագին ջերմ բարևներովս ու սեղմում եմ սինդ ձեր ձեռքը:

Լևոն Շանթ

Հասցես՝ Л. Шанту
Тифлис, ком. нефто. О-ва
Ериванская пл., Х. Харазовой

1907

74. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ տիկին, այս ամբողջ մի ամիս է՝ ամեն օր ուզում եմ ձեզ գրեմ և օր-օրի չեմ կարողանում. այս տարի տոկալի բևեռավորված եմ: Անչափ ուրախ եմ ձեր նամակից, շատ եք չարչարվել, բայց ես հույս ունիմ, որ այժմ Ձե՛ր ձեզ ավելի լավ եք զգում և Ձե՛ր հոգևոցս ավելի լավ եք սրամադրված. ի՞նչ հուսահատության մասին եք խոսում, դա ձեր գլխին իսկի սազ չի գալիս. թեև ես ձեզ շատ լավ եմ հասկանում,

մանավանդ օտարության մեջ ու մենակ[1]. ուրախ եմ, որ այդ օրերը արդեն ձեր ետևն եք թողել: Ես ու Ջավոն ձեզ հաճախ ենք հիշում. վերջերս էլ լսեցի, որ աչնան վերադառնալ եք ուզում. մի՛ չոտապեք, հեռվից, ճիշտ է, հայրենիքը քաղցրանում է, բայց առայժմ դեռ մի լավ հանգստացե՛ք, մի արմատապես կազդուրվեցե՛ք, թե չէ՝ ինչի՞ էր նման այստեղ ձեր կյանքը. անվերջ ժողովներ ու ժողովներ դեղի սրվակը շաբունակ ձեր ձեռքին: Ուզում եք, որ ձեզ պատմեմ իմ մասին. պատմե՛մ, թեև պատմելիքս միշտ նույնն է լինելու. գրագետի կյանքը, դոնե հայ գրագետի կյանքը միշտ նույնն է, մի անվերջ ու հավիտենական տրտունջ: Ես հիմա Գայանյան գպրոցի տեսուչն եմ[2], Ներսեսյան գպրոցում էլ գրականության դասեր ունեմ. և այնքան աշխատանք կա վրաս, որ բոլորովին խեղդվել եմ թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես. այսինքն ճիշտն ասած ինձ նեղացնողը այնքան աշխատանքի չատությունը չէ, որքան սրտովս չլինելը. ես մանկավարժությամբ հետաքրքրվել եմ ու բավական բան էլ հասկանում եմ և այժմ էլ չեմ կարող ասել, որ մեր գպրոցը վատ է գնում, բայց քանի գնում, ես այդ բոլորից ավելի ու ավելի սառչում եմ, դեռ ավելին՝ սկսել եմ ատել. ես հիմա ատում եմ ամեն մի աշխատանք, որ ինձ կտրում է գրականությունից. զգում եմ, մեջս ուժ ունեմ ու չնորհք, ինչ կարիք կա կեղծելու, զգում եմ ահագին պահանջ գրական կյանքով ապրելու, կեդրոնանալու, մտածելու, ստեղծելու, և ահա՛ գնա դաս տուր, գպրոց վարի կամ տետրակներ սրբագրի. ա՛, չգիտեք ինչքան ծանր է ու դժվար, երբ մտածում եմ, որ սա իմ ամենից հատուն տաբիներս են, որ այս ուժերս էլ ետ չեն դառնա: Եվ, ես հիմա միայն մի ցանկություն ունիմ. ինչ գնով էլ լինի թափ տամ վրայիցս ամեն կողմնակի աշխատանք, նորից մի-երկու տարով գամ Եվրոպա գրական հոսանքին մեջ ընկնելու ու դրելու. գրելու ինչ որ մեջս արդեն հասունացել է ու արտահայտվելու է ձգտում. երևի փորձ կանեմ ունեցած դրամներիս իրավունքը մեկին ծախելու, կամ մի այլ հնար ճարելու մի կերպ ինձ իմ սիրած գործիս նվիրելու: Ջավոն էլ ուզում է չարունակի իր փրանսերենը արդեն իբրև մասնագիտություն, որ վերջը կարողանա գպրոցներում դասավանդելու իրավունքը ստանա: Ինչպես տեսնում եք, մեր երազները դեպի այդ կողմն են քոչում, ահա՛ ձեզ մեր կյանքը: Գալով դրամաներիս՝ վերջինը՝ «Ճամբուն վրա» խաղացին Թիֆլիսում[3], և ինչպես ամեն բան, սաստիկ անփույթ ու անպատրաստ. սաստիկ անշնորհ է թե՛ վարչական կազմը, թե՛ դերա-

սանական խոմբը. Հիմա որ քիչ ավելի մոտ եմ չիվիլ, ավելի խորն եմ տեսնում: Եթե դատենք թատրոնի տրամադրությունից ու ցույցերից, խաղի տպավորությունը լավ էր. քննադատություններ իհարկե պակաս չէին ո՛չ թատրոնում, ո՛չ էլ լրագրություն մեջ[4]. Մեր արդի մոմենտը սաստիկ կոսակցական է. և մարդիկ գովում են միայն ա՛յն, ինչ որ իրանց կոսակցությունից է. իսկ ես որ կոսակցականությունը ատելով ատում եմ, բնական կերպով շատ բարեկամների չեմ կարող սպասել Հրապարակի վրա: Իմ մյուս երկու խաղերն էլ՝ «Եսի մարդը» և «Ուրիշի համար» խաղացին Բագու[5]. Ես ներկա չեմ եղած, կարծեմ վատ չէ անցել, բայց այդ առթիվ իմ Հասցեին Баку-ի մեջ բավական խոշոր դատեստներ եղան[6] և ես հանկարծ բոլորովին անսպասելի կերպով «Հայտնի» դրամատուրգ դարձա... Բազմում, հասկանո՞ւմ եք. մի բան, որ իսկի երևակայել անգամ չէի կարող: Մի խոսքով այս ամենը դարտակ բաներ են, գլխավորն այն է, որ հնար ունենամ գրելու, որ չկորցնեմ կյանքիս լավագույն տարիները, կարողանամ ստեղծագործել. այդ է հիմա իմ միակ տենչս, միակ ձգտումս ու միակ երազս ու պահանջս, ա՛յ իսկական դրաման սա է, Հայ արվեստագետի հոգու դրաման:

Դե՛, հերիք է, ձեզ չձանձրացնեմ:

Հարցնում եք Օհաննեսի մասին. անցած տարի գյուղն էր ու գներալ նահանգապետություն էր անում[7], կատակ չկարծեք, լուրջ եմ խոսում: Իսկ այս ձմեռ Թիֆլիս է և անում է այն, ինչ՝ արել է միշտ: Նրա էլ ամբողջ ուժը կորչում է ծրարի-պրարի բաների վրա, ինքն էլ շատ լավ գիտե ու տրանջում է չարունակ, բայց կախարդական չրջանակի պես ընկել է մի անգամ մեջը ու էլ դուրս գալ չի կարողանում: Նա էլ սաստիկ ծարավ է գրական աշխատանքի ու ստեղծագործության: Ինչ որ տրտունջի առիթ չի տալիս, դա նրա որդիների հարստությունն է. վաղը-մյուս օր սպասում է իր տասներորդ ժառանգին[8]: Ձեր նամակը Հանեսին ցույց եմ տվել. նա էլ ուզում է ձեզ չարունակ գրի ու գրի, բայց Թե երբ կը գրի, ճշմարիտ չգիտեմ, գիտեք էլի մեր Օհաննեսը:

Վերջացնում եմ նամակս, սրտագին սեղմելով ձեր ձեռքը և ուղարկելով ձեզ Ջավոյի ու իմ ջերմ բարևները.

Լևոն Շանթ

1907 մայիս 6 Թիֆլիս

Հասցես. Ул. Паскевича N 13

75. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ա՛խ, դու խայտառակ Օհաննես, նստել ես էդտեղ ու դասախոսություններ ես կարդում[1], փոխանակ էստեղ գալու ու դասագրությամբ պարապվելու[2]: Նախ մեր խիստ հանդիմանությունը քեզ, որ բանաստեղծիդ կոչումը «խուրդում» ես ու դասախոսությունների ետևից ես ընկել, աննելելի հանցանք:

Հանդիմանությունից անցնեմ հանձնարարության. ականջներդ լա՛վ սրի:

1. Հետդ բերելու չմոռնաս ազգագրական գրքերը, Նավասարդյանի[3], Էմինյանի հավաքածուները[4], Սրվանձտյանցի բոլոր երկերը[5] (ինչ որ ձեռքդ չկա՝ վերցրու Տեր Գյուտի մոտից, կ'ուզես Ստեփանի անունով), Ազգագրական Հանդեսի[6] այն հատորները, ուր նյութ կա, այլև ուրիշ, ինչ որ կարծում ես պետքի դալ կարող է:

2. Հետդ բե՛ր քո ֆրանսերեն մի գիրքը, ուր թռչունների նկարներ կան. այլև մի տեղից գոի դպրոցական կենդանաբանական ու բուսաբանական ալբոմներ, բայց անպատճառ, մանավանդ դպրոցները կ'ունենան. կարող ես խնդրել տիկին Սոֆիա Արղությանից (օրինակ Շուբերտի և Շումանի ալբոմները), այլև մի ալբոմ արհեստանոցներու ու գործերի. Հարցրու «Живое слово»[7].

3. Մոի <1 անընթ.> N 23 Իվան Խատիսյանի մոտ և վերցրու Լինչի երկու հատոր Արմենիան[8], չմոռանա՛ս:

4. Հետդ բե՛ր առաձեռն բառգիրքեր:

5. Անմիջապես երկու տող գրի. Քաջազնունուց լուր ունի՞ս[9]:

6. Բե՛ր քեզ և հնար եղածին չափ չուտ:

Նկարիչը արդեն մի շաբաթ է այստեղ է[10]. մենք առաջին մասի մեր գործը ավարտել ենք և երկրորդ մասից էլ բավական բան ձևել ենք. քո չուտափույթ ներկայությունդ անհրաժեշտ է: Եթե մի քիչ էլ քաշքշես, գիրքը էս տարի չի հասնի, արդեն ամեն բան չուտ ծայրը ծայրին է ու հազիվհազ:

Էստեղ մինչև երեկ անվերջ քամիներ էին ու անձրև, զահլա տաբալ: Երկու օր է եղանակը լավ է՝ քո ներկայությանդ է տենչում, դե՛, չուտ արա ու մեր Մանգիսը մի գլխի քո քաղցր ներկայությունից. մեր

Մանգլիան ու մեզ: Այդ հույսերով էլ բարևո[ւմ են քեզ][11] Ստեփանը, Լևոնն ու Ջավոն:

Հասցես. <1 անընթ.>
Дача Як. Шейкина
Манглис

1907 Հունիս 12
Մանգլիս

76. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻՆ

Հարգելի Ղազարոս:

Մեր դասապիրքը կազմելիս[1] իբրև սկզբունք ընդունել ենք օգտվել մեր գրականության մեջ ամեն արժեքավոր գրվածքից և վարձատրել հեղինակին:

Ձեզանից վերցրել ենք «Գյուլնազ սատի հեքիաթը», «Միտը ծառին ծլվլում է» և «Հոտաղի անկողինը»:

Ուզում էինք դիմել Ձեզ և հարցնել, թե որքան եք գնահատում այդ երեք կտորը, բայց Օհաննեսը անհարմար գտավ ու չստորագրեց նամակին՝ ասելով թե՝ «Դա կը նշանակի, որ ես էլ նրանից վարձատրություն եմ պահանջում նրա իմ գրվածներից վերցրած կտորների համար, մի բան, որ մեր մտերիմ ընկերական հարաբերության մեջ տեղի ունենալ չի կարող»:

Այս ամենը աչքի առաջ ունենալով՝ որոշեցինք, որ Դուք ու մենք օգտվինք իրարից փոխադարձաբար, ինչ չափով որ Ձեզ հաճելի կը լինի, բնականաբար առանց դրամական վարձատրության: Հուսով ենք, որ մեր որոշումը Ձեր կողմից էլ ընդունելություն կը գտնի[2]:

Սպասում ենք Ձեր շուտափույթ պատասխանին, որքան շուտ, այնքան շնորհակալ կը լինենք:

Սրտագին բարևներով՝
Ձեր Ստ. Լիսիցյան
Լ.Շանթ

1907 Հուլիս 28
Մանգլիս

77. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհ. Մալխասյան:

Իմ վերջին դրամաս, որի մասին գրում եք, դժբախտաբար մոտս չէ. ձեռագիրն ուղարկել եմ Բագու[1]: Այնպես որ հիմա Բագու ստիպված եմ կարզադրություն անելու, որ շուտով արտագրեն և ուղարկեն, այդ պատճառով էլ գուցե մի քիչ ուշանա:

Ձեզ չատ չնորհակալ կլինեի, եթե բարի լինեիք ինձ տեղեկացնելու, թե ո՞րն է Թատերասիրաց ընկերության հեղինակները վարձատրելու սովորական պայմանը:

Ընդունեցե՛ք, հարգելի՛ պարոն, հարգանքս:

Լևոն Շանթ

1907 սեպտ. 28
Թիֆլիս

78. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ

Թիֆլիս, Հոկտ. 25

Հարգելի՛ պարոն:

Ներեցեք, որ մինչև այժմ ուշացրի Ձեր նամակի պատասխանը, սպասում էի Բագվից պիեսայի արտագրությանը, որ չգիտեմ ինչու մինչև հիմա դեռ չեն ուղարկել: Հույս ունիմ, որ մինչև մի շաբաթ կատարյալ կը լինիմ Ձեր հասցեին պատ դցելու:

Ստացել եմ Ձեր երկրորդ նամակը և հայտնում եմ իմ համաձայնություն ընկերության պայմաններին:

Ընդունեցե՛ք հարգանքս ու բարևներս:

Լևոն Շանթ

79. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն:

«Ճամբուն վրան» ստացա երեկ, թեթև աչքն անցրի ու այսօր կցնցի պատ Ձեր հասցեին: Ցավում եմ, որ կամքիս հակառակ այսչափ ուշացավ:

Եթե ներկայացնելու լինիք, երևի ինձ համար կը տաք[1]:
Արտադրության ծախք եղած է երկու րուբլի յոթանասուն:
Ընդունեցե՛ք խորին հարգանքս ու սրտագին բարևներս:

Լևոն Շանթ

1907 նոյ. 15
Թիֆլիս *Հասցես՝* ул. Паскевича *13*

80. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ բարեկամ:
Ստացա Ձեր նամակը և Ձեր ցանկության համաձայն ահա ուղարկում եմ գրաքննիչի վկայագիրը: Երբ Ձեր գործը վերջացնեք՝ վերադարձրեք նորից ինձ, կարելի է ուրիշ տող էլ պետք եկան:
Ընդունեցե՛ք սրտագին բարևներս ու խորին հարգանքս:

Լևոն Շանթ

1907 նոյ. 28
Թիֆլիս

1908

81. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1908 Հուլիս 11
Լոզան

Սիրելի՛ Մարիա Մարկովնա:
Երևի զարմացած կը լինեք, որ մինչև այժմ ինձնից լուր չստացաք. ձեզ գրելս օր օրի հետաձգում էի, որ կարողանամ մի որոշ հասցե տամ: Փարիզ մնացի երկու շաբաթ, ո՛չ մի տեղ չեմ եղած և ոչինչով էլ չեմ հետաքրքրված, երկար չէինք խմանում՝ ուր գնանք ամառը, վերջը որոշեցինք Լոզան. թե՛ հարմար է, թե՛ կապդուրիչ, թե՛ աժան: Բավական որոնելուց հետո վերջապես գտանք մի փոքրիկ հարմար բնակարան, տեղափոխվեցինք և ահա՛ իսկույն նստել եմ ձեզ գրելու:

Նախ Ջավոյի հիվանդությունը՝ ճիշտ ձեր ասածի պես. այժմ շատ ավելի լավ է, միայն շատ շուտ հոգնում է. հույս ունիմ այս մի-երկու ամսում բոլորովին կազդուրվի: Գալով դրամական վիճակիս, ինչպես որ գիտեք, մուտավորապես մինչև սեպտեմբեր կը դիմանամ[1], իսկ նրանից հետո ինքս էլ չգիտեմ ինչ եմ անելու, եթե Բագվից ունեցած հույսս չիրականանա[2]. մինչև այժմ նրանցից ո՛չ մի լուր չունիմ. հենց որ մի պատասխան ստանամ, ձեզ իսկույն կը տեղեկացնեմ: Շատ հիմար դրության մեջ եմ ընկնելու, եթե պատասխանը բացասական լինի. թե՛ վերադարձի ծախս և թե՛ այդքան ուշ. այլևս դպրոցում դաս ունենալու մասին չեմ էլ կարողանալու մուածեմ: Ջավոյին առանձին ո՛չ մի պայմանով էլ ես չեմ թողնի այստեղ. նա էլ ո՛չ մի կերպ չի ուզում հաշտվի վերադառնալու գաղափարի հետ, քանի որ իր նպատակին դեռ չի հասել. ուզում է անպատճառ Սորբոնի[3] քննությունը տա. իմ բոլոր արգելքներիս հակառակ, հիվանդ ու դեռ կարգին չպատրաստված գնացել էր այս տարի քննության և իհարկե կտրվել էր. գնացել էր մի տեսակ հույսը դրած բազդի վրա, վախենալով որ հապիվ թե այս տարի էլ եվրոպա մնալ կարողանա. և այժմ վերադարձի մասին լսել չի ուզում, ուզում է նույնպես մանկապարտեզին ու նախնական կրթության մոտիկ ծանոթանա, եթե ուժերն ու ժամանակը ներեն: Նա պնդում է, իսկ ես ժպտում. ժպտում ու մուածում: Ես, արդեն գիտեք, որ նրանից ավելի եմ ցանկանում, թե՛ նրա համար և թե՛ ինձ ու իմ գրականության. բայց միայն ցանկությամբ չատ հետու չես գնա, պետք է, որ «պայմանները նպաստեն». էդ անիծած «պայմանները»: Կարճ ասած՝ դեռ հույսերս չեմ կտրած, իհարկե, դեռ հաջողության հույսեր ունիմ, բայց վախկոտ ու վարանոտ հույսեր: Ես այժմ մի ուրիշ բան էլ եմ մուածում. արդյոք չէ՞ր կարելի, մի-երկու տղա կամ աղջիկ պահեինք մեզ մոտ, մեր երեխաների հետ[4], և կրթվեին այստեղի դպրոցներում. տեղական կրթական հաստատությունները համբավ ունեն, մենք էլ տանը կ'առաջնորդեինք ու կ'օգնեինք. կարելի է ցանկացող գտնվի թուրքահայերից, պարսկահայերից, գուցե նույնիսկ Կովկասից. եթե ուրիշ կողմից, այսինքն Բագվից, եթե քիչ-միչ մի բան հաջողվի, իսկույն հայտարարություն կը տամ լրագիրների մեջ: Մի խոսքով՝ բոլորը օդի մեջ բաներ են դեռ, և էականը Բագվի պատասխանն է: Տեսնո՞ւմ եք՝ որչափ դյաղեցրի ձեզ ինձնով. վոխադարձը ապասում եմ, որ դուք էլ գրեք ինձ մանրամասն ձեր կյանքից ու ձեր մուածումներից:

Սպասելով ձեր լուրերին՝ բարևում եմ ձեզ ու ձերայիններդը ու ջերմ ու սրտանց սեղմում եմ ձեռքերնիդ:

Լևոն Սեղբոսյան

Հասցես.
Route de Morge, Clos Ouest. B
Lausanne

82. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1908 Հուլիս 16
Լոզան

Սիրելի՛ Մարիա Մարկովնա:

*Մի չաբաթ առաջ ձեզ մի ուրիշ նամակ էլ եմ գրած, բայց առանց պատասխանին սպասելու գրում եմ ահա՛ և երկրորդը: Բազմի հույսերս իզուր դուրս եկան: Ես այստեղ երազում էի արդեն, որ մի ամբողջ տարի ազատ ժամանակ եմ ունենալու գրական կյանքովս ապրելու, և երևակայեցե՛ք, արդեն սկսել էի աշխատելու, դե՛, հիմի նորից ծալլի ու դիր նորից պայուսակը: Վերջապես, չի լինում: Ինչքան ինձ համար ծանր լինի այդ հուսախաբությունը, ինչքան էլ ծանր լինի Ջավոյի համար ամեն բան կիսատ թողնելը այսքան ծախսերից, պարտքերից ու հոգսերից հետո, բայց և այնպես ստիպված ենք հաշտվելու, ուրիշ ի՛նչ կարող ենք անել: Այժմ ինձ տանջողը այնքան վերադառնալս չէ, որքան ինչպես վերադառնալս: Մինչև 4-5 չաբաթ պետք է, որ այստեղից դուրս գանք թե՛ ինձ և թե՛ Ջավոյի համար այդտեղ գաներ գտնել կարողանալու համար, որպեսզի հասնենք դպրոցների սեզոնին, թեև այդ էլ իսկապես շատ ուշ է. եթե ձեռքիս փողը հերիքեր, ես կը մեկնեի հենց հիմա: Իսկ մինչև մեկնելս հազիվ ձեռքիս 50 րուբլու չափ մնա. այնպես որ դոնե նորից մի 200 րուբլի անհրաժեշտ պետք է. հաշվել եմ 250 րուբլուց պակաս անհնար է երեխաների հետ: Ոչ ոքի պիտելու էլ ո՛չ հույս ունիմ, ո՛չ ուրիս. երևաս նորից ձեզ է բանում, տիկին, որովհետև գիտեմ, որ ինձ հասկանում եք: Մեկ էլ ինձ քիչ սիրտ է տալիս այն միտքը, որ այդ պարտքը վրաս երկար մնալու չէ. գամ թե չէ, կ՝ըսկսիմ մաս-մաս վճարելու. ինչ էլ որ լինի ստանալիք ամսականս, մի

մասը կը հատկացնեմ դրան. մինչև որ վերջնականապես հանգցնեմ: Ես գիտեմ ձեր դրությունը, ձեր պայմանները, չեմ մոռացել ձեր արածը, գիտեմ, որ մեծ նեղության եմ պատճառում ձեզ, մանավանդ այդտեղ՝ ամարանոցում, բայց այս բոլորի հակառակ, եթե նորից դիմում եմ ձեզ ու այդ 200 րուբլի պարտքն էլ եմ խնդրում, կարող եք երևակայել, թե ինչպես անել դրության մեջ եմ գտնվում: Ասենք այդ բոլորը ձեզ լավ հայտնի է. կյանքիս մեջ այս երկրորդ անգամն է, որ խախտած հույսերի վրա հենված գործ եմ բռնում ու հետո չարաչար տուժում. չգիտեմ սրանից հետո պիտի խելոքանա՞մ, թե չէ:

Ներեցե՛ք, սիրելի՛ն, ձեզ տված այս անախորժություններս, ընդունեցեք խորին հարգանքս ու ջերմ ու սրտագին բարևներս: Այսպես ուրեմն մի 2 ամսից կը լինեմ արդեն այդտեղ. ես կարծում էի ավելի երկար է տևելու այս բացակայությունս:

Լևոն Շանթ

Հասցես.

Leon Segbossian
Route de Morges, Clos Ouest B.[1]
Lausanne

83. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Մարիա Մարկովնա:

Ձեր պատասխանը ստացա և արդեն առաջուց էլ գիտեի, այնպես ցավում եմ, որ ձեզ իզուր մտահոգություն պատճառեցի[1]: Հիմի գրել եմ Վսեվոլոյանին[2] և սպասում եմ իր պատասխանին, թեև չգիտեմ ինչպես պիտի կարողանա ուղարկել, քանի որ «Լուսաբերի» պատճառով առանց դրան էլ պարտքի մեջ է լինելու հիմա: Իմ այս անձնական անախորժությունների դեմ Թուրքիայի չարժման մեծ ուրախությունը ունիմ բարեբաղդաբար[3]. անկարելի համարվածն է; որ իրականություն է դառնում. և ինչ ապագա, ինչ նոր օրեր է բերում իր հետ: Ես մեկ մտածեցի անմիջապես Պոլիս անց կենամ և եթե ձեռքիս մի քանի հարյուր րուբլի ունենայի, գուցե և դնայինք. վերջը մտածեցի, դեռ շատ չտապելու կարիք չկա, իսկական գրական-կրթական աշխատանքի ժամանակը դեռ այսօր չէ, ավելի լավ է այս ամեռ էլ Կովկաս մնամ այդտեղ

սկսած գործերս ավարտելու համար, և ահա՛ նստել եմ, կարդում եմ լրագիրները և սպասում Ստեփանի «Հրամանին»:

Ճիլիպը ժընևև չէ, այլ Ot-Croir ֆրանսական սահմանի վրա. իրեն գրել եմ և երևի շուտով կը գնամ տեսնելու. բայց վող ո՛չ մի պայմանով ես նրանից չեմ խնդրի, ինձ համար խիստ ծանր է:

Անշուշտ շատ պիտի ծիծաղիք, եթե հայտնեմ, որ սրանից երկու շաբաթի չափ առաջ մենք լրջորեն այստեղ սպասում էինք Փարիզից... Օհաննեսին: ժընևև լուր էր ընկել, որ նա, Լեոն ու Ահարոնյանը Վիեննա են, շուտով գնալու են Փարիզ և այնտեղից էլ Սյուիս[4]: Օհաննե՛ս ու Փարիզ, ասում են քսաներորդ դարում հրաչք չի կատարվում. բոլորովին ապշել էինք ես էլ, Զավոն էլ, Դերենիկն էլ ու անհամբեր սպասում, երբ հանկարծ Օհաննեսի փոխարեն եկավ մի ավելի աներևակայելի հրաչք՝ ... օսմանյան սահմանադրությունը: ժընևից եկած վերջին լուրերը հայտնեցին, որ մի «փոքրիկ» սխալ է եղել, որ «Օհաննեսը ցանկություն է ունեցել գալու, բայց...» և այլն, մնացածը արդեն շատ է հասկանալի: Եվ հիմա իմ այս հուսախաբության վայրկյաններին նորից մխիթարություն եմ գտնում այն մտածման մեջ, որ բոլոր լավ բանները միասին չեն գալիս. Օհաննեսը եթե չեկավ, օսմանյան սահմանադրությունը եկավ գոնե. մեկ էլ մտածում եմ, որ Օհաննեսի Եվրոպա գալը ուրեմն ավելի մեծ հրաչքների չարքը պիտի դնել, քան Թուրքիայի ազատությունը: Այո՛, շատ զարմանալի բաներ են պատահում աշխարհքիս երեսին. Օհաննեսը Թիֆլիսից Եվրոպա չի կարողանում գա, ես էլ չեմ կարողանում Եվրոպայից Թիֆլիս գամ. բայց ոչինչ, շատ որ նեղը ընկնենք, իրար կը հանդիպենք... Պոլսում:

Իսկ դուք երևի շուտով կը դառնաք ամարանոցից, հույս ունիմ առողջ եք, կազդուրված ու թարմ. չէ՞ որ նորից ձեր բազմաթիվ ծրագիրները կ'ունենաք առաջիկա ձմեռվա համար, պետք է թարմ ուժ:

Սրտանց ու ջերմ բարևում եմ ձեզ և շուտով ձեզ տեսնելու հույսով՝ սիրով սեղմում եմ ձեռքերնիդ:

Լևոն Շանթ

1908 օգոստ. 14
Լոզան

84. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հանե՛ս ջան:

Եկա թե չէ խրվեցի. օրական չորս ժամ դաս ունիմ[1], պատմութիւն ու գրականութիւն, բոլոր ուժս խլում է: Տեսուչն է Տիգրան Ազամալյան, գուցե ճանաչես, վրաս շատ լավ տպավորութիւն է անում. ուսուցիչների մեջ թարմ ուժեր շատ կան, այնպես որ կազմը ընդհանուր առումով վատ չէ. ինքը դպրոցը՝ բոլորովին նույն Ներսեսյան դպրոցը, թե՛ նիստ ու կաց, թե՛ աշակերտ, թե՛ մթնոլորտ, թե՛ չենք և թե՛ ուսուցչական մարմին:

Երևանը մի խեղճ գավառական քաղաք [է] շատ անհարմարութիւններով ու կիսավեր, մանավանդ Լոզանից անմիջապես հետո: Բայց այսպես էլ երևակայում էի ու մեծ հիասթափութիւններ չունիմ. ինչ որ սակայն չէի երևակայում՝ կյանքի թանկութիւնն է, գրեթե ճիշտ Թիֆլիսի նման:

Դեռ ապրում եմ հյուրանոցում, ո՛չ տուն ունիմ, ո՛չ տեղ. էս մի երկու օրը երևի կը կարգադրեմ: Ամեն բան նորից պետք է առնեմ ու սարքեմ, մի խոսքով գլխացավանք բան: Դու իսկույն հանձնի մեկին, ինչպես որ Օլյան[2] ասում էր, որ գնա վերցնի տիկին Հայկանուշի[3] մոտից մի անդուվը, իսկ տիկին Մանանդյանի[4] մոտից էլ մյուս անդուվը, այլև էն մի սեղանն ու աթոռները, բոլորն էլ կապի ինչպես հարկն է, տանի կայարան ու հանձնի երկաթուղուն իմ անունովս մինչև Երևանի կայարանը: Էդ մարդու արած ծախքերը դու տո՛ւր. Ջավոն որ Թիֆլիս գա[5], կը վճարի: Իսկ նակլադնոյի թուղթը ինքդ ուղարկի ինձ ապահովված նամակով. Հասցես՝ Леон Сегбосян, гостиница «Ориент»[6]*:*

Իսկ դո՞ւ ինչ բանի ես. փոխեցի՞ր բնակարանդ, թե՞ վճռեցիր մնաս[7]: Ես Համենայն դեպս Ստեփանի հասցեով եմ ուղարկում նամակս, որ հաստատ լինի և վերջապես չէ՞ որ նրան էլ տալու ես, որ կարդա:

Ստեփա՛ն, քո փողը չուղարկեցի[8], որովհետև դպրոցից դեռ ամսականները չեն տվել. ստանալուն պես կուղարկեմ, Համենայն դեպս գոնե կեսը: Կհոն եմ ասում, քանի որ այս ամիս շատ կոմմնակի ծախքեր ունիմ ու ձեռքիս փողը քիչ է գալիս: Եթե դու էլ անհրաժեշտ կարիք ունես, գրի՛, կուղարկեմ բոլորը ինչպես որ լինի: Ներսեսյանից ստացա՞ր[9], ինչքա՞ն եղավ:

«Լուսաբերով» դեռ իհարկե բնավ չեմ զբաղվել[10], բայց հույս ունիմ մինչև մի-երկու շաբաթ աշխատանքս կարգի դնեմ ու կ'ըսկսեմ գործի: Ինձ համար խիստ պարզ է, և դուք էլ չմոռանաք, որ այս տարի 4 գիրքն էլ պետք է որ ավարտենք, ինչ էլ որ լինի:

Դե՛, սիրելի՛ս, բարևներս երկուսիդ էլ, ձեր օղլուշային էլ (էս տեղի ոճ է):

Համբուրում եմ քեզ և հիշեցնում մեր նամակագրության պայմանը: Ծուլություն չանես, Հանե՛ս ջան, և չմողնես, որ նամակս գրասենյակիդ ձախ բաժնումը փոշոտի:

Լևոն

1908, սեպ. 28 (կարծեմ)
Երևան

85. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հանե՛ս ջան:

Ներփակ կը գտնես Դերենիկի նամակը. բացատրությունները ավելորդ են, պետք է անմիջապես մի կերպ օգնել[1]: Ես չուտով կ'աշխատեմ մի բան ուղարկեմ, դուք էլ այդտեղ մի գումար հարեցնեք իսկույն, դուն ու Ավոն և ուղարկեցեք առանց հետաձգելու. այո՛ մի՛կ: Մնկ էլ իսկույն գրի՛ Քաջազնունուն կամ քո մյուս «ապդեցիկ» բարեկամներիդ, հասկացրո՛ւ բանի էությունը, որ չուտով օգնեն խնդճ տղուն, քանի որ արդեն վճռել են տպագրելը[2]: Գովելն ու դնահատելը լավ բան է, բայց ի՞նչ օգուտ, երբ ամիսներով չնորհքով անունդի երես չի տեսնում խեղճ տղան: Առայժմ այսքանը Դերենիկի վերաբերմամբ, նորից մյուսին կը խոսենք, երբ Նոր տարուն Թիֆլիս գամ:

Դո՞ւ ինչ բանի ես. դեռ միշտ բնակարան փնտրելու վրա՞ ես, թե՞ վերջապես «մարդու որդին իր գլուխը դնելու մի տեղ» գտա[3]. եթե գլխիդ տեղ արել ես, իսկույն Հայտնի Հասցեդ. մեջեմեջ մարդու գլխումն անցնում է մի-երկու տող նամի, գրի, բայց ո՛չ Հասցեդ է Հայտնի, ո՛չ տեղդ:

Անցյալ օր էլ մի նամակ եմ գրել Մաղաքիին, բայց կարծեմ Հասցեն նորից ճիշտ չէր. գրել եմ дом Калантарова[4]. *եթե պատահես, ասա՛, եթե չի ստացել, փոստում թող հարցնի:*

:

Ուրախ եմ իհարկե այս տարվա «Լուսաբերի» հաջողության. հրապարակը ամեն տեսակետից անտարակույս մերն է, միայն ինչ գնով էլ որ լինի, պետք է վերջնական ձևը տանք այս տարի Բ. դրքին, այլև կազմենք Գ.-ն ու Դ.-ը. դա է հաջողության գրավականը: Գալով իմ պարտքի հարցին, 100 րուբլին վերցրո՛ւ և վճարի՛, եթե Ստեփանը առանց դժվարանալու այդ փողը հիմա քեզ տալ կարող է, որովհետև դանազան հաշիվներով մոտ 100 րուբլու չափ Ստեփանը ինձ տվել է արդեն:

«Շուն ու կատվիդ» այս վերջին հայթայթումը տանում եմ քեզ հետ[5]: Ինչ կուզես ասա, աշխարհքս շուն ու կատուներինն է, ավելի ազնիվ տեսակի անասուններդը բանի պետք չեն գալի. ինչ երջանիկ օր է եղել այն օրը, երբ պլուխդ հղացել է շուն ու կատվի այդ նշանավոր մենամարտը. դա քեզ շատ ավելի վոգ է բերելու, քան քո մյուս ապերջանիկ հղացումներդ: Հոու կատվի կռվին մարդիկ միշտ պիտի վճարեն, ապահով եղիր. ախր, շատ է մեր խալխի հոգուցն ու էությունիցը: Կեցցե՜ն մեր շուներն ու կատուները և նրանց գրպաններդը թող միշտ բաց լինի դեպի քո «Շունն ու կատուդ»: Թեև Նոր տարվան դեռ բավական ժամանակ կա, բայց ինչպես տեսնում ես, ես իմ բարեմաղթությունս արի արդեն. այդ վեպդ գուցե Երևանի օդից է. ախր, գավառում ամեն բան չափազանց է արագ շարժվում...

Հուսալով, որ մինչև մեր տեսությունը կ'արժանանամ քո խոշոր գրիդ տեսության, ուղարկում եմ քեզ, Օլյային ու տատնյակիդ[6] ջերմ ու սիրալիր համբույրներս թե՛ իմ, թե՛ Զավոյի և թե՛ փոքրիկներիս կողմից: Ողջ լեր ի Վերնատան, ամեն:

Լևոն

Հասցես՝ Царская 84

1908 նոյ. 23
Երևան

86. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան:

Ձեր նախորդ նամակը ստանալուս պես՝ կարգադրել էի, որ ուղարկեն ձեր ցանկացած գրքերը իմ հաշվիս: Եվ ինձ արդեն հայտնել էն, որ գրքերը ուղարկված է և 55 րուբլի մտցրած իմ հաշիվը. այնպես որ՝ ինչ որ իմ պարտքիս է վերաբերում՝ սրանով արդեն փակվում է վերջնապես[1]. և մի վերջին անգամ էլ հայտնում եմ ձեզ իմ խորին չնորհակալությունս:

Գալով հոգաբարձության Ձեր հետ ունեցած տոկոսի հարցին՝ դժբաղդաբար ոչինչ անել չեմ կարող. նախ որ գրքերը ուղարկել են արդեն, մեկ էլ որ պ. Կանդարալյանը, որից անմիջապես կախված է գրքերի վաճառման գործը, հիմա այստեղ չէ. եկած է Թիֆլիս. գուցե ինքներդ պատահեք այդտեղ և ինքներդ էլ կարգադրեք: Եթե չպատահեք՝ գրեցեք ինձ և ես կը հայտնեմ իրեն ձեր ցանկությունն ու առաջարկը, այլև ինչ որ նոր ասելիք կ'ունենաք:

Հայտնելով ձեզ խորին հարգանքս՝

Լևոն Շանթ

Երևան
1909 մարտ 18

87. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Ապրիլ>[1]

Սիրելի՛ Մարիա Մարկովնա:

Չէի ուզում ձեզ նամակ գրեմ մինչև մի քանի րուբլի ուղարկել կարողանալս: Հենց որ Ստեփանիից քիչ փող ստացա, իսկույն փոխադրեցի ձեզ հիսուն րուբլի, որ անշուշտ արդեն ստացած կը լինիք իմ խորին ու սրտանց շնորհակալություններիս հետ: Օհաննեսի գրքերը[2] *այստեղ տվել էի 3 գրավաճառի, երկուսին 20% զեղջով, իսկ Օհաննեսյանը 25 %-ից պակաս ոչ մի կերպ չի համաձայնեց, ասելով, որ ձեզ հետ պայմանավորված է այդ տոկոսով, այնպես որ գրքերի ընդհանուր*

արժեքը եղավ 29 րուբլի ու մի քանի կոպեկ: Այդ գումարն էլ հուսով եմ արդեն ստացած կը լինիք իր ժամանակին: Օհաննեսի գրքերից ուղարկեցնեք նորից ինձ հետևյալ հաշվով. «Շունն ու կատուն» և «Այծիկը» տատնական օրինակ, մնացած բոլոր թվերից 20-ական օրինակ, բացի «Անբաղդ վաճառականներից», որից առայժմ պետք չկա: Լավ կը լինի ուղարկեք շուտ, որ Զատկին հասնի. Լիսիցյանը տոներին գալու է ինձ, իմ հաշվովս Ծաղկազարդին այստեղ է լինելու. եթե ուշանալու չէ, ուղարկեցեք նրա հետ:

Ես ձեզ էի կատակում, որ ենթակա եք մանկական հիվանդություններին, հիմա իհարկե կատակի հերթը ձերն է: Բայց կատակներից ամենանշանավորը գիտե՞ք որն է. դիվտիրիտը[3] տվավ ինձ այն, ինչի համար որ այնչափ աշխատում էի Եվրոպա գնամ նորից մի տարով[4]. տվավ ինձ ազատ ու անհոգ...

88. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Երևան, մայիս 7

Սիրելի՛ Մարիա Մարկովնա:

Ստացա ձեր բացգիրը և անմիջապես պատասխանում եմ. եթե մինչև հիմա չեմ չտապել հաշիվը ձեզ ուղարկելու՝ պատճառն այն է, որ վերջին ամիսը մեր կյանքը այստեղ շատ խառնակ է եղած թե՛ ընտանեկան, թե՛ դպրոցական և թե՛ հանրային. մեկ էլ որ կարծում էի, թե հաշիվը ձեզ համար բավական պարզ է լինելու: Ահա՛ այդ հաշիվը:

ա/ Դուք ուղարկել եք անմիջապես Օհանջանյանի գրավաճառանոցին

20 օրինակ Շունն ու կատու - 5 րուբլի
20 -------Անբաղդ վաճառ. – 7 -----
20 ------ Ուլիկ----------3-----

Գումարը 15 րուբլի

որից հանած 25% զեղչը (ասում էր ձեզ հետ այդ գրքերի համար իր պայմանը այդպես է) 3, 75, մնացած 11 րուբլի 25 կոպեկը հանձնեց ինձ:

բ/ Ինձ ուղարկել էիք Ստեփանի ձեռքով՝
10 օրինակ Շունն ու կատու – 2,50

10 ------- Ուլիկ ---------- 1,50
20 ------- Միսը ---------- 3 ---
20 ------- Աղվեսը ------- 3 ---
20 ----Անհաղթ աքլորը - 3 ---

Բոլորը ծախված է կանխիկ 13 րուբլի

գ/ Իսկ 50 օրինակ «Գառնիկ ախպերից» կանխիկ ծախվել է միայն 20 օրինակը, ուրեմն 10 րուբլու:

Ուրեմն ծախվածների արժեքն է 23 րուբլի, որից հանելով 20 % դրավաճառների զեղչը 4 րուբլի 60 կոպեկ՝ ես ստացել եմ 18 ր. 40, որը վերի 11 րուբլի 25 կոպեկի հետ միասին կանի 29, 65:

Ձեռքս մնացած 30 օրինակ «Գառնիկ ախպերից» հանձնել եմ Օհանջանյանի գրավաճառանոցին 29 օրինակ կոմիսիոնով ծախելու 15% զեղջով, ինչպես որ կարգադրել էիք. իսկ 1 օրինակը ծախել եմ ձեռքից, որի 50 կոպեկը միացնելով վերի գումարին՝ կ'ըստացվի 30 րուբլի 15 կոպեկ, որ իր ժամանակին Ստեփանը անշուշտ հանձնել է ձեզ:

Այսպեսով ապառիկ մնում է միայն 29 օրինակ «Գառնիկ ախպեր» 15% զեղջով Ս. Օհանջանյանի գրախանութում:

Դրել էիք, որ մայիսի կեսին արդեն գնում եք ամարանոց մանկական հիվանդությունների պատճառով, միայն չհասկացա, քաղաքում տարածված է և դուք հեռանո՞ւմ եք, թե՞ ձերոնք արդեն հիվանդացել են. մաղթում եմ սրտանց բոլորիդ առողջություն ու թաքմուքյուն: Իմ Սուրիկն ու Վիգենն էլ կսկսյուշ ստացան ու այս ամսից ավելի է չեն ազատվում, մենք էլ չատպում ենք ամարանոց գնալու. հիմի էլ կարմրուկ է մեր հարևանի տանը ու ստատիկ վախենում ենք. ամբողջ տարին հանգիստ չտվինք:

Օհաննեսի մասին ոչինչ չեք գրում, երևի մխիթարական ոչինչ չունեք գրելու. իրոք դժբաղդ եղավ, իրոք դժբաղդ ու իրոք անիմաստ. խե՜ղճ Օհաննես. դռնեն ամառը գլուխը ազատեր[1]. անշուշտ լսած եք, որ այժմ էլ այստեղ բանտառում են ամեն կոզմից. ոմանց նորից բաց են թողնում, ոմանց պահում. անմիտ ու անիմաստ խաոտություններ: Սրտանց բարևում եմ ձեզ և սեղմում ձեր ձեռքը;

Լ. Շանթ

89. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, ահա՛ այս մի տասը օր է Լո՞զան եմ արդեն, հազիվ կարողացա հարմար բնակարան գտնեմ ու տեղավորվեմ. դեռ կարդի չենք ընկած, ո՛չ էլ սկսած ենք մեր աշխատանքը. Սուրիկս է միայն մեզնից ղոչաղը, որ այսօրվանից սկսած գնում է դպրոց: Ճանապարհը շատ հանգիստ անցանք, և բարեբախտաբար առանց փոթորկի. Պոլսեն գրած կարտս անշուշտ ստացել ես: Ինչ եղավ Լևոնը[1]. արդեն գնա՞ց, ո՞ւր է, ինչ ճամփով: Թեև արդեն ուշ է իհարկե, բայց քեզ սխալեցրած չլինելու համար հիշեմ, որ ինչպես այստեղ ստուգեցի՝ Պոլսեն Վիեննա կարելի է 50 ֆրանկով անց կենալ, միայն Բելկրադում պետք է գնացքը փոխվի, որտեղից մինչև Վիեննա օմնիբուս գնացք է. ուրիշ խոսքով՝ Պոլսեն Վիեննա 60-65 ֆրանկի ճամփա է երրորդ կարգով: Այս հարցը ինձ համար էլ կարևորություն ունի, ես շատ ավելի թանկ գիտեի: Պոլիս, ինչպես գիտես, շատ քիչ մնացի, բայց ինչ որ տեսա, շատ ծանր տպավորություն արավ վրաս. հիասթափություն չունիմ, որովհետև «ճանաչեմ պիմսն» և այդպես էլ երևակայում էի, բայց և այնպես: Գալով «Լուսաբերին»՝ անպայման հող ունի. կա պահանջը ու ժամանակն է: Տպագրությունը Պոլիս ենք անելու[2]. դուրսեն եկած պրքերը մաքս ունին իրենց վրա. տպագրությունը աժան է, համենայն դեպս ամենաշատը այնքան պիտի հաշվել, ինչպես Թիֆլիս (մի թերթի շարվածքն ու տիպը 150 ղուրուշ, մի թուփ = 500 թերթ թուղթը 30-45 ղրշ. մի ըուբլին 12 ղուրուշից քիչ պակաս է). բացի դրանից ուսումնական խորհուրդի վավերացումը ունենալ պետք է հենց ձեռագրի վրա. այլևս կա տպարան, որի տերը ընկերս է ու վստահելի մարդ. մի խոսքով՝ ամեն կողմից Պոլիս տպելը կարևոր է, որը արդեն փակված հարց պետք է համարել: Կլիշեները երևի պատրաստել կը տանք Վիեննա և առաջին անգամ կը տպագրենք 5-6000-ից ո՛չ ավելի, դեռ շատ ժամանակ ունինք այդ բոլորի մասին մտածելու. գրում եմ ինչ որ ինձ անմիջական տպավորության տակ հավանական է թվում:

Իսկ գրքիչ բաներն ինչպե՞ս են. որևէ կարծիք կամ քննադատություն երևա՞ց մեր գրքերի մասին[3]. քիչ-շատ հետաքրքիր թվերը ուղարկեցեք ինձ, իհարկե եթե գրող գտնվի: Ծախվելու հետ ինչպե՞ս է. պատկերը արդեն պարզվա՞ծ է, թե դեռ անորոշ է: Գալով իմ վոլին՝

նախ խնդրեմ կարելիին չափ շուտ ուղարկիլ առաջին առաքումը[4], ձեռքս ուղիղ հարյուր ֆրանկ է մնացել: Մեկ էլ թրքական առածն ասում է՝ տան սակարկությունը չովկայում չի հարմարի. որոշել էինք մինչև «առաւտուվթյան տարինները», այսինքն մինչև հունվար՝ երեք անգամ 50 րուբլի ուղարկես, դա նշանակում է ինձ բացարձակապես սնանկացնես. ուղարկի գոնե 75-ական, իսկ ավելին դու գիտես. մի կերպ ծայրը ծայրին քաշ տալ կարողանամ մինչև հունվար՝ ավելի լայն օրերի հույսով: Իսկ Հանեսը ի՞նչ բանի է. տունը վոխե՞ց, կարողանո՞ւմ է իր հրատարակչական բազմակողմանի ծրագիրների իրագործմանը քիչ մոտենա, թե դեռ «բավ է ավուրն չար յուր»[5]: Իսկ գլխու մասին էլ ինչ խոսեմ, գիտեմ որ մեծ հեղափոխությունները այդպես շուտով չեն կատարվում. «Հասկերը»[6] հույս ունեմ այս մի-երկու օրը կ'ըստանամ: Իսկ իմ գլուխս դեռ ուշքի չէ եկել ճամփի ու տնարարական տակնուվրայությունից: Տիկին Կատարինեին, մայրիկին ու Սուրբիկին սրտագին մեր բարևները, քեզ էլ համբույրս.

Լևոն

1909 Հոկտ. 9
Լոզան

Հասցես՝ Lausanne
Avenue d'Echallens, 78, IV

90. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Լոզան, նոյեմբեր 1, 1909

Սիրելի Ստեփանին ու Հանեսին

Նամակդ, Ստեփան, ինձ բոլորովին գծես Հանեց: Վաճառման մեջ որոշ եվէնչներ ինձ բնավ չէր զարմացնի, բայց որ Ա. տարին 5000-ի էլ չհասնի, իսկ Բ. տարին հազիվ 1500. օրինակ, էս մեկը իհարկե շատ էր անսպասելի: Մեր բարոյական ու վերջնական հաղթանակին ես բնավ չեմ տարակուսում, բայց որ մենք երեքս էլ կեչեփոփ մարդ չենք և ընդհակառակը ամեն հատկություններն ունենք մեր գործի նյութականը փճացնելու, այդ պարզ է. մեր կազմվածքի խորքումն է սրա պատճառը և ոչինչով փոխել չենք կարող. և ճիշտն ասած՝ իսկի չեմ էլ ցանկանում,

որ փոխվի. և եթե ուզում ես՝ դեռ ես հպարտ էլ եմ դրանով. բայց մի հպարտություն, որ մեզ միշտ չատ թանկ է նստել և թանկ է նստելու: Ա՛յ, օրինակ, հիմա իչի դրություն է իմ վիճակս. թե՛ այդտեղ, թե՛ Պոլիս մերժեցի չատ ձեռնտու պաշտոններ՝ վստահ, որ գոնե մի տարվան նյութականս ապահովված է, և որ ինձ կարող եմ ամբողջովին իմ գրական աշխատանքներիս ու «Լուսաբերի» փոխադրությանը նվիրել այս մեկ տարին. իսկ քու նամակի հաշվից երևում է, որ մեր զուտ արդյունքը գրքերից ընդամենը 1000 րուբլի է միայն. և ես հիմա չգիտեմ ինչ մտածեմ: Մինչև այս նամակիս պատասխանելը վաճառման հարցը պարզված կլինի արդեն վերջնապես, և խնդրեմ ինձ պարզ գրեցեք՝ մնո՞ւմ եք մեր նախորդ պայմանի մեջ, այսինքն ուղարկեք ինձ 1500 րուբլի մինչև սեպտեմբեր, թե՞ ես գլխիս ճարը տեսնեմ. թեև իսկի չգիտեմ, թե ինչ ճար պիտի տեսնեմ. Ջավոյի հոր թղթերը, որ հիմա արդեն ստիպված գրավ եմ դրել, կորցնել չեմ կարող[1], Ստեփան, դա ինձ համար անկարելիություն է:

Գալով այս ձմեռվա ձեր անելիքին, կարծեմ պարզ է: Ա. և Բ. տարիներով բնավ մի՛ զբաղվեք. մինչև եղածը չծախվի՝ ավելորդ ժամավաճառություն է. Ա. տարվա հիմնական փոփոխությունը կը մնա գալ տարվա, երբ իմ փոխադրությունն էլ կ՚ունենաս ձեռքի տակ[2], որ իմ բացակայությունս գուցե մասամբ փոխանակե: Սրբագրեցե՛ք Գ. ու Դ. տարիները, բայց իմ կարծիքովս միայն տպագրական ու լեզվական տեսակետից. մի՛ փոխեք ո՛չ հոդվածները, ո՛չ էլ նույնիսկ դասավորությունը. նյութը, երեսներն ու համարները չուտ-չուտ փոփոխելը մեծ անհարմարություն ունի դասարանի մեջ. Գ.-ն էլ, բայց մանավանդ Դ-ը մեծ փոփոխությունների կարիք ունի, կանե՛ք գալ կամ հաջորդ տարիները, երբ նոր դիտողություններ ու նոր նյութ հավաքված կը լինի: Կարծեմ ամենից գործնականն է կազմեք հաջորդ երկու գրքերը, որից գոնե Ե-ը այս տարի անպատճառ տպվի, եթե դուք էլ նույն կարծիքի եք՝ արևմտյան բաժնի կազմելը բնականաբար ընկնում է ինձ վրա[3]. աչքի առաջ ունեցեք, որ անհրաժեշտ է դառնում մի ամսվա չափ իմ Վենետիկ գնալը, որ արդեն անհրաժեշտ էր նախորդ մասերի համար էլ, միայն ոչ անմիջապես այս տարի: Շուտով հայտնեցեք ինձ ձեր վճիռը, որ ես էլ այստեղ այդ ուղղությամբ մտածեմ, գրքեր կը փնտրեմ գրավաճառների մոտ և այլուր, բայց մեծ գյուտեր անելու հույսը չունիմ. բուտին չատ կա այս դպրոցներում: Իսկ այս բոլորից ավելի գործնա-

կանը և տեսականորեն էլ կարևորը «Ուղղեցույցի» պատրաստելն է. «Լուսաբերի ուղեցույցը», ուր պարզված լինին թե՛ մեզ առաջնորդող սկզբունքները և թե՛ գործնական դեկավարություն մեր դիրքերը զբաղեցնողներին: Եթե կարող ես, Սահակա՛ն, դրանով զբաղվի՛[4]. ուզարկի՛ ինձ, ես էլ կ՛ավելցնեմ իմ գիտցածն ու իմ դիտողությունները:

Գալով արևմտյանի փոխադրելու խնդրին, իմ կարծիքս է, որ այս տարի անպատճառ սպենք գոնե Այբբենարանը[5], դիցո՛ւք միայն հող պատրաստելու համար, ուրիշները կարող են կանխել. օգուտ չսբասենք, հերիք է, որ ծախսերը հանե, կը սպենք քիչ, մի 5-6 հազար: Այս բոլորը գրում եմ, որովհետև վստահություն չունիմ իմ մերկանդիլ ընդունակությունների վրա, թեև ամեն ձեռքիցս եկածը անելու պատրաստ եմ տեղի ճաշակը, հասկացողությունները և առանձնահատկությունները պետք եղածից ավելի չվիրավորելու և մյուս կողմից օգտվելու այն ամենից, ինչից որ կարելի է օգտվել, լինի բեկլամ թե կապեր: Ինչպես գրել եմ տեղում լինելս անհրաժեշտ է:

Վերը ընդծեցի «Այբբենարանը», բացատրեմ: Թյուրքիայում դպրոցները ձևված են ֆրանսականի վրա. և ինչպես այստեղ, այնտեղ էլ կարդալ-գրել սովորում են մանկապարտեզում կամ դպրոցին կցված մի մանկական դասարանում, որին հաջորդում են մեր 6 տարիներին համապատասխան 6 դասարանները ծրագրով շատ մոտիկ մեր «Կազմական կանոնագրին»[6]: Սա ինձ ստիպեց մտածելու, որ մեր այբբենարանը չորեմ իսկական 6 գրքերից: Այնպես որ կունենանք մի «Լուսաբեր այբբենարան» և հետո «Լուսաբեր ընթերցարան Ա. տարի; Բ. տարի և այլն: Իմ կազմելիք այբբենարանը կունենա մոտավորապես նույն նյութը, ինչ որ արդի Լուսաբերի այբբենարանն է, այլև բյուր Ա. տարվա երկրորդ մասից վերցրած (գլուխ և դուրսից) ամենահեշտ ընթերցման նյութերը. այստեղ կը դնենք տակը կապակցված գրության անցումը, այստեղ կը դնենք ուղղագրական մի քանի շատ կարևոր օրենքները, տոլտապարձը, վանկը, ձայնավորները և այլն: Լուսաբերի ընթերցարան Ա. տարին համապատասխանելու է մեր արդի Ա. տարվա երկրորդ մասին լրացրած արդի Բ. տարվա հեշտ կտորներովը. այս կարգով և հաջորդները: Իմ հաշվով այբբենարանը կը լինի 4-5 տպագրական թուղթ. Ա. տարին 5-6, մյուսը 7-ը, ինչպես որ կա: Ուրիշ խոսքով՝ մեր ունեցած առաջին գրքի 6 տպագրական թերթը դառնում է մոտ 10-ը, միայն երեսները բավականաչափ ավելի փոքր: Ես մտադիր

էի այս տարի թե՛ այբբենարանը ավարտելու և թե՛ Ա. տարին. հիմա վճիռը ձեզնից է կախված, ինչպես որ կ'ուզեք, բայց իմ կարծիքովս դոնե այբբենարանը (4-5 տպագրական թերթի ծախս) պետք է տպագրել անպատճառ, մանավանդ որ այս տարի այդտեղ Ա. և Բ. տարվա տպագրություն չկա, ուժերնիս կարող ենք կենդրոնացնել, մանավանդ ինչ որ վերաբերում է նկարների ու ձեռագիրների պատրաստության: Այբբենարանի կազմելը ես արդեն սկսած եմ. առաջի 20-22 երեսը պատրաստ է, ուրիշ խոսքով՝ աշխատանքիս ամենից դժվար մասը, որից վախենում էի: Վերջին ամբողջ մի ամիսը զբաղված էի զբաղված և աշխատում էի սիրով և ինձ թվում է, թե աշխատանքս չատ տեսակետներից անհաջող չէ. և ահա՛ երեկվա չարաբաստիկ նամակը եկավ վրաս սառն ջուր ածելու: Ես աշխատանքս չեմ ընդհատում և սպասում եմ ձեր նոր նամակին: Նկարներն ու ձեռագիր օրինակները այդտեղ է պատրաստվելու, կլիշեները վճռենա, տպագրությունը Պոլիս. ընդհանուր ծախսը այդտեղի գներով հաշվեցեք, թեև իրապես մի զգալի տոկոս ավելի աժան է լինելու:

Դեռ ինչ որ բաներ ունեի գրելու, բայց ուշանում եմ, պետք է վերջացնեմ. հա՛, Դերենիկը չատ աննախանձելի դրության մեջ է, ինչ որ Լուսաբերի հաշվին նրան ընկնում է՝ ուզարկեցեք խնդրեմ (եթե հնար է քիչ լայն-լայն հաշված), ինչ էլ որ ուզարկեք՝ նրա համար հաշիվ է: Նույնպես սիրտ ավի նրան, որ գրի՛ «Հասկերի» համար, ձեր կողմից խոստանալով, որ կ'ըստանա «Հասկերի» սովորական վարձատրությունը:

Դե՛, երկուսիդ էլ համբուրում եմ ջերմ ու սրտագին ու բարևում տիկիններին ու ճըժերին:

[Լևոն]

1910

91. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, այս մի ամսվան չափ է, որ վերջացրել եմ «Լուսաբերի» այբբենարանի սևը և սպասելով ձեր պատասխանին՝ սկսել էի գրական աշխատանքի: Սակայն ձեր նամակները, որոնց պատասխանը մինչև հիմա օր օրի ուշացավ, չէի ուզում մոքերիս ընթաց-

քը ընդհատեմ. հիմա վերջացրել եմ և նորից ամբողջովին ձեր ու «Լուսաբերի» տրամադրության տակն եմ: Մինչև ամիս մը վերջնապես կը սրբագրեմ, կ'արտագրեմ ու կ'ուղարկեմ ձեզի այբբենարանը ի սրբագրություն և ի հաստատություն: Առայժմ այսչափը «ի տեղեկություն». գիրքը հինգ մաս ունի, առաջինը, որ մեր ունեցածի ձեռագիր վեց երեսին է համապատասխան, ներկայացնում է բառեր ու նախադասություններ, մոտ 13 դաս է այդպես, ամեն մեկ դասին ուղում եմ հատկացնեմ մի երես ու մի նկար. խոչոր ձեռագիր առանց գծերու (գծերու մասին պետք է խոսել ուսուցչի ուղեցույցի մեջ. ինչպես և մտածում եմ 13 կտոր պատմություն տրվի նույն ուղեցույցի մեջ ամեն մեկ դասի մեջ գործածվող բառերն ու նախադասությունները տեսակ մը իրար զողդղ. բայց դիտավորությունս դեռ հասուն չէ պխտմս): 13-րդ երեսից սկսած այլևս անընդհատ ամբողջական ու կապակցված պատմություններ են. ո՛չ մեկ անկապ բառ կամ նախադասություն. նույնիսկ ձեռագրի օրինակները, որոնք տակն են դրվելու, աշխատել եմ որևէ ամբողջական միտք ներկայացնեն, ինչքան հնար է. ամեն մեկ դասին մեկ կամ երկու ամբողջություն եմ տված՝ արձակ կամ ոտանավոր, չահագործելով բոլոր մեր արդեն ունեցած նյութերը, փոփոխելով, ընդլայնելով, կան և նոր նյութեր: Երկրորդ մասը գխադիրներն են՝ նորեն ձեռագիրը միայն, ավելանում են ի, է, չ, խ, ո. (ո-ն առաջին մասում չատ անկենդան տառ է, մեկ էլ ու-ն իբրև ամբողջություն ըմբռնել տալու համար լավ է նրա մասը՝ սկիզբը կազմող մասը վերջը տալ). չ ու խ առաջ եմ քաշեր թե՛ տեսական և թե՛ գործնական նպատակներով, եւ = և ետ եմ քշեր մեկ անգամից բարդ բաներ չի տալու համար. մեկ էլ լավ է, որ աշակերտը վարժվի և-ը եւ գրելու, նախքան և գրելը (ուրիշ խոսքով՝ նույն ը սխթեմն է, որ գործ եմ դրել): Այս մասում տրվում է բոլոր սորված տառերու գխադրերը, բացառությամբ ե և ը: Իմ հաշվով այս մասը բռնելու է 11-12 երես, ուրեմն 25-26-րդ երեսներն է, որ սկսվում է տպագիրը, բայց երեսները գդալի կարճ են և պատկերները չատ տեղ են բռնելու, ուրեմն մոտ մի ամսվան չափ տպագիր չի կա. ինձ թվում է, որ սա ոսկի միջոցն է. ավելի երկար ուշացնելը ո՛չ կարելի է, ո՛չ պետք կա. ավելի չատն էլ բարդություն ու խառնություն է առաջացնում: Գլխագիրը տպագրից առաջ անցկացնելու մեկ դյուրավոր դրդիչն էլ եղած է որքան հնար է չուտ ամբողջական պատմության անցնելու հնար ունենալը: Գ. և Դ. մասերը

ամբողջովին տպագիր է, տակը ձեռագիր օրինակներով, երբեմն ամբողջ երեսը ձեռագիր (ուռանավոր, նամակներ) միշտ առանց գծերու: Տառերու դասավորութիւնը շատ է փոփոխած ավելի գործնական, բայց հաճախ և սկզբունքի տեսակետով. դլխագիրները տալու սիսթեմը նույնն է՝ նման խմբերով՝ միայն աշխատեր եմ շատ չուշացնեմ. սովորական ընթացքն է 3 նոր տառ իրար ետևից և վերջը առանձին նկարով և պատմութիւնմբ այդ 3-ի միասին դլխագիրները: Պեդանտ կերպով հետևեր եմ մեկ ամբողջութեան մեջ միայն մե՛կ նորութեան վրա կենդրոնանամ: Ուրիշ խոսքով՝ աշխատեր եմ այն բոլոր սկզբունքները, որ մեր տպագրի մեջ արդեն անց ենք կացրել, այլև այն բոլորը, որու մասին մեր մեջ խոսել ենք, գործադրեմ: Գ. մասի մեջ ավելի դյուրին տառերն են մոտ 20 երես. Դ.–ի մեջ ավելի դժվար տառերն են, կամ հնչման տարբեր ձևերը. Դ.–ի մեջն է որ կ'ըսկսիմ ը-ը չգրելու, այդտեղ եմ բերեր ο տառը, ոյ (կոյս), ու (նուվեր), յ սկիզբն ու վերջը, իւ (հիւթ) և այլն. ուրիշ խոսքով մեր գրքի այբբենական մասի վերջի սեղմած 5-6 երեսները, որ մեր նոր այբբենարանի մեջ դառնալու է մոտ 20-22 երես: Այսպես բոլորն իրար վրա հաշված մոտ 70 երես. 22-24 երես էլ կը մնա Ե. մասին, որ մեր առաջին ընթերցարանի ամենամանկական հոդվածներու հավաքածուն է լինելու, ջոկած եմ հետևյալները. 1/ Լուսացավ, լուսացավ, 2/ Ուլիկը, 3/ Աշխարհի կործանումը, 4/ Բադիկը, 5/ Ձեռքի մատները, 6/ Գրիչ, 7/ Արևն ու լուսինը, 8/ Մկան տունը, 9/ Ջալ Հավի պատմութիւնը, 10/ Պոչատ աղվես, 11/ Կռունկներ, 12/ Մեղու, 13/ Ժամացույց, 14/ Քեռին մեռել է, 15/ Նպաստակի բարին, այլև նոր մտադիր եմ դնելու Հանեսի ուղարկելիք A-Акула-ն[1], ձեռագիր նամակ մը, գուցե և թվերու խաղ մը: Մեր առաջին ընթերցարանից արդեն շահագործել եմ Գ. և Դ. մասերու մեջ 1/ Ծովի գուլպանները, 2/ Շունը՝ փոփոխած, 3/ Մարգոյի հարստութիւնը, 4/ Դժվար հանելուկ, 5/ Կճուճը, 6/ Բնի մեջ՝ քիչ փոխած, 7/ Կատու: Իսկ թիվ 8, 22, 35 և 49 ջնջում եմ բոլորովին: 22-ը փոխադրված շատ անհամ է, մեր Հայցականը նման է ուղղականին և երաժշտականութիւնը կորչում է, նաև մանկավարժական արժեքի բավական մեծ մասը (այստեղ հավաքված են սեռականը ան ունեցող ամենեն գործածական բառերը). իհարկի նորեն մի անգամ կը փորձեմ: Ե–րդ մասի հոդվածներու տակ հարցեր չեմ դնելու. կը դնեմ ձեռագիր օրինակներ՝ հավանորեն կապակցված տառերով: Այլև տողադարձի ու քանի մը խիստ անհրաժեշտ քերականական-

ուղղագրական օրենքները, բայց ո՛չ այբբենարանի մեջ, այլ ուսուցչական ուղեցույցի: Արդեն համոզված եմ, որ առանց ուղեցույցի, մանավանդ Թյուրքիա, ուղղակի անհնար է. ուսուցիչները սաստիկ են խեղճ ու անպատրաստ. եղած կարգերն ու «մեթոդներն» չատ տարբեր. առանց ուղեցույցի ունքը չինելու տեղ աչքն էլ կը հանենք: Եվ հիմա լրջորեն մտածում եմ նստեմ ու կազմեմ և ուղեցույցը. ինձ համար չատ էլ հրապուրիչ գործ չէ, չհատկն ըսած, բայց որ մեջը խրվել եմ ուրիշ ճար չկա. համենայն դեպս քու կարդոնի մեջ ձեռագիր մը որ ունիմ՝ անմիջապես ուղարկեմ ինձ՝ գուցե մեջը որևէ միտք կամ օրինակ պետքի գա: Մտածում եմ այսպես մի տպագրական թերթ մի փոքրիկ տետրակ, ուր բացատրեմ բոլոր մեր սկզբունքները, այլև մեր գիրքը գործածելու գործնական ուղեցույց. հոտ կը դնեմ նաև վերը հիշած պատմությունները, քերականական օրենքները, ձեռագրի գծերու հարցը և այլն: Ինձ ուղարկի 1/ մի օրինակ «Դասընկեր»[2], 2/ Մանկինյանի նոր այբբենարանը՝ իհարկե ուսուցչի բաժինը և 3/ կարծեմ Տեր-Ղևոնդյանը ինչ-որ մի ուղեցույց ունի. քունջից-պուճախից ալ միչտ կարելի է որևէ պիտանի միտք մը, նկատողություն մը կարող է դուրս գալ: Անշուշտ ըսելս ալ ավելորդ է, որ առանց քու նկատողությունները լսելու և առանց քու համաձայնությունը առնելու չեմ տպագրեր ոչինչ. և ինչ ալ որ տպագրեմ՝ մի՛չտ ընդհանուր փիլմայի տակ: -Այսչափը ասացի մեր արևմտյան այբբենարանի համար. գալով լեզվին ու բավանդակությանը՝ մինչև ամիս մը հույս ունիմ կը դնեմ ձեր տրամադրության տակ: - Դո՞ւք ինչ բանի եք. Ե.-լը ոտքի ելա՞ծ է. ոչինչ չեք գրած Ե-ի արևմտյան բաժնի մասին. գուցե հույս ունիք, որ այդտեղ եղած նյութով կերպ մը տակեն դուրս կու գաք: Ես բավական գրքեր բերել տվի, մանավանդ այբբենարանի համար՝ սաստիկ անհամ ու չոր: Գ.-ի երկրորդ տպագրությունից բան ծախվե՞ց. և ի՞նչն էր առաջին 2 գրքերու անհաջողության գլխավոր պատճառը, հիմա արդեն պարզած է քեզի համար:

«Հասկերպ» ժամանակին կ'ըստնամ, փոքրիկներուս սիրած ու փնտրած նորություննն է, կը ցանկամ քեզի սրտանց հաջողություն. որ այդպես կպկեր է սրտիդ՝ չարունակե անպատճառ. ինչ որ սրտեն կու գա՝ ամենեն աղեկը ան է. հաջողություն ու հարատևություն. մինչև մարտ 1000 բաժանորդ. հերի՞ք է. կը ցավիմ որ գործնական կերպով քեզի ձեռք տալ չեմ կրնար. այսինքն ո՛չ լեցնելու, ո՛չ տարածելու. Պոլիս որ

:

երթամ՝ գուցե տարածվելուն նպաստել կարողանամ, թեև լեզուն ու ոգին մեծ արգելք է անշուշտ:

- Գալով դրամական հաշիվներուն. նախ՝ ի՞նչ պիտի ընենք իմ դրաված արժեթուղթը. հունվարի 1-ին պայմանաժամն է, կա՛մ պետք է հանվի, կա՛մ նորոգվի. ես չա՛տ կը ցանկայի, որ հանվեր. եթե ձեռքդ այդքան դժամար կա, եթե հնար է, հանե՛ և պոստով ղրկե՛ ինծի. եթե հիմա թափել չհաջողենք, մարտին ուղղակի անկարելի է, ես պիտեմ: Հույս ունիմ, որ «Լուսաբերի» ընդհանուր պարտքերը վակված են արդեն: Հույս ունիմ, որ նորեն ժողով մը կ'ընենք հոտ և իմ ամսականս կը բարձրացնեք, թեև չէ այդ հիսուն րուբլին գուրկ է ամեն ղիմադիր ուժե, ո՛չ գալը կվմանամ, ո՛չ երթալը: Ուրեմն առաջին՝ արժեթուղթս ազատագրել, որով հոս նոր վարկ կրնամ բանար, երկրորդ ալ՝ հոտ «հավելում մը ամսականիս», ինչպես կ'ըսեն հաշվապահական լեզվով. ահա՛ իմ ակնկալութիւններուս արդի աստիճանը, եթե այդչափն ալ չիրականանա՝ իմ բանս բուրդ է. գիտես որ բառնցքս սեղմած կերպ մը անցըի այս երեք ամիսը: Լավագույն հույսերով, հույսին ի՞նչ վնաս, կը փակեմ նամակս ու կը բանամ չնորհավորութիւններուս տոպրակը: Ուրախ ու բազդավոր Նոր տարի քեզի ու բոլորիդ. հաջողութիւն «Հասկերուտ» 1000 բաժանորդով. հաջողութիւն մեր «Լուսաբերին» իր արևելյան և արևմտյան բաժիններով. հաջողութի՛ւն բոլորիս ձգտումներուն ու աշխատանքին: Կը համբուրեմ տիկին Կատարինեի ու մայրիկի ձեռքը, քոյր չրթունքներդ ու բոլորիդ ջերմ-ջերմ բարևներ թե՛ իմ կողմեն, թե՛ Ջավոյի:

Լևոն

1910 հունվար 4

Նոր նկատեցի, որ լեզուս խառներ եմ. սկսա ձեր լեզվով, բայց այլևս առանց ճիգի կը դժվարանամ, ինչպես կերևա, ալ պետք է ձեռք քաշեմ:

Գիտցած լինիս, որ Դերենիկը քոյր ղրկած տասը րուբլին չէ ստացած. առայժմ փոխադրված է Լոզան. կ'ուզե դառնա Կովկաս[3]:

92. ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Մարիա Մարկովնա:

Քանի եկել եմ Եվրոպա, չարունակ մտադիր եմ եղել ձեզ գրելու և չարունակ էլ հետաձգել եմ՝ միշտ հույս ունենալով, որ չուտով կարող պիտի լինիմ նամակիս մեջը դնելու մնացած պարտքիս գոնե մի մասը: Բայց «Լուսաբերից» ստացած լուրերս մեր կարծածից անհամեմատ ավելի ձախորդ եղան, այնպես որ հիմա կը գրեմ ձեզ, որ գոնե անիուլթ ու անքաղաքավարի չհամարիք ինձ: Ամառը գնում եմ Պոլիս, հույս ունիմ այնտեղից կարողանամ կատարել ինչ որ պարտքս է:

Շատ եմ ցավում, որ Կովկասից մեկնելուցս առաջ ձեզ տեսնել չկարողացա, ամառանոցից դուռ չէիք դարձել: Գիտեք, որ մեկ կամ երկու տարով ցանկանում էի Եվրոպա գամ թե՛ Ջավոյի համալսարանական աշխատանքի և թե՛ իմ գրական ծրագիրներիս համար: Ահա՛ երեք ամիս է, որ Լոզան ենք ու աշխատում ենք: Ես փոխադրում եմ «Լուսաբերը» արևմտյան բարբառի, որ ամառը Պոլիս տպել տանք, մյուս կողմից էլ աշխատում եմ իմ գրական երկերիս վրա: Նոր դրամաս, որի մասին կարծեմ գրել եմ ձեզ, արդեն ավարտած եմ վերջնապես[1], բայց իմ սովորության համեմատ դուռ չեմ չուպրում տպագրելու, ըսենք իսկի տպագրելու կարգին տեղ էլ չկա: Դրամաս բեմի համար չէ, մանավանդ եթե մե՛ր բեմը աչքի առաջ ունենանք. գրական արժանիքների ձգտող երկ է: Եթե թիֆլիզ լինեի՝ սիրով պիտի կարդայի իմ բարեկամներիս փոքրիկ շրջանակին մեջ՝ ձեր այն «Զորեքշաբթիները»: Երևակայության առաջ արդեն պատկերացավ ձեր փոքրիկ սեղանը, և չուրջն էլ Ծիլիպը, բժիշկը, Հանեսը. դուք՝ ձեր անվերջ նոր ծրագիրներով, նրանք էլ՝ անվերջ իրենց նոր քննադատությունները:

Հուսով եմ, որ առողջ եք ու լավ տրամադրված, անշուշտ որքան հնար է արդի պայմանների մեջ լավ տրամադրված լինելը: Կը ցանկայի ձեր մասին ավելի մանրամասն տեղեկություն ունենամ. և եթե ձեղնից մի-երկու տող առանամ՝ շատ ուրախ ու շատ չնորհակալ պիտի լինիմ: Հանեսը ծույլ է. գրած ժամանակն էլ ոչինչ կարգին չի՛ գրի, ոթ մարդ բան հասկանա:

Ցանկանալով ձեզ Նոր տարվա հետ նոր հույսեր ու նոր ուրախություն, կը համբուրեմ ձեր ձեռքը հարգանքով ու ջերմ կը բարևեմ

ձեզ թե՛ իմ և թե՛ Ջավոյի կողմից:

Լևոն Սեղբոսյան

1910 Հունվար 5
Լոզան
Հասցես՝
Lausanne
Av. d' Echallens, 78

93. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Լոզան 1910 փետր. 10

Սիրելի՛ Հաննես, մեր վազեմի սովորութեամբ նորին նամակի կ'ըսպասեմ քեզմե և անշուշտ իգուր: Ինքս կ'ուզեի գրեմ քեզի երկար և երևի կը գրեմ ալ, բայց այսօր սիրտ չունիմ և ինծի գրիչ վերցնել ավողը Դերենիկի վատ վիճակն է: Վերջերս թեթև հիվանդացեր էր և բարեկամ բժիշկ մը նայեր էր ու ըսեր, որ արդեն առաջացած թոքախտ ունի: Կրնաս երևակայեր, թե ինչ տպավորութիւն ըրավ մեր վրա: Իսկույն գնաց երկու հայտնի բժիշկներու և բարեբաղդաբար Հայտնվեցավ, որ թոքախտ չկա առայժմ, բայց ուժերու սպառում. պատվիրեր են առատ անուռդ ու հոգեկան հանգիստ: Դերենիկը վերջին տարիները անցուցեր է կես անօթի, կես կուշտ, իսկ այս քանի ամիս է ապրուստի ո՛չ մի միջոց չէ ունեցեր: Տեսնելուս պես ըսի, որ ինչքան հնար է շուտ թողնե ու վերադառնա Կովկաս[1] մտածելով, որ կերպ մը կը կատավարվի մինչև սեպտեմբեր, իսկ սեպտեմբերին իրեն պաշտոն կը գտնե գալրոցներուն մեջ: Ինքն ալ համակարծիք էր. աչնանը արդեն ուզեր է գալ, խոստացեր են ընկերները պաշտոն, բայց եկեր են Կովկաս ու մոռացեր: Սա ալ անոնց վրա հույսը դրած սպասեր է և մնացեր է բացը: Անցած տարի հոս համալսարանը ինչ-որ քննութիւն է տվեր և ստացեր է մանկավարժական վկայական մը: Եվ ճշմարտութիւնը սա է, որ ուսուցչութիւնեն դուրս ուրիշ ոչինչ ընելու ո՛չ հակում ունի, ո՛չ կարողութիւն: Բայց հիմա բժիշկներու այս հայտարարութեան վրա քիչ մը ուրիշ կերպ կը մտածիմ. եթե հիմա անմիջապես վերադառնա Կովկաս, ոչ թե պիտի հանգստանա ու կարգին անվի այս քանի մը ամիսը մինչև

նոր աչուն, այլ ամենեն հիմար դրութեան մէջ է իյնալու. փող չունի, տուն չունի (իր տունը իրմե է, որ կ'ակնկալեն) և հոտ գալեն վերջը անոր. համար կերպ մը փող հարելն ալ կը դառնա ավելի դժվար, եթե ոչ անկարելի: Լավ կ'ըլլար, եթե 4-5 ամիս մըն ալ հոս մնալ կարողանար, բայց անշուշտ քիչ մը ավելի տանելի պայմաններու մեջ, որ կարգին մնունդ ունենա ու հոգեկան հանգիստ: Ամսական 30-35 րուբլու պատմութիւն է, 4-5 ամիս մը, ուրեմն՝ ընդամենը 120-150 րուբլու հարց է սա, որը սակայն տղու համար կենսական հարց է այժմ: Քիչ մը կազդուրվի, հանգստանա ու ամառը գա իրեն համար տեղ մը ճարե. թե չէ վերադառնա ուժասպառ, մանե գարոց ուժասպառ, ի՞նչ է ըլլալու վերջը: Ժընևի ուսանողութիւնը տվավ 75 րուբլի, որով հիմա կ'ապրի և մինչև ամիս մը կրնա իրեն խնամեր, բայց անկե անդին բաց է: Մի՞թե անհնար էր հոտ կերպ մը այդ 150 րուբլին ալ ճարել կարողանայիր: Ես գիտեմ քու պայմաններդ, բայց ուրիշ որո՞ն գրեմ, որ սրտին մոտ առնե ու բան մը ընե: Նորեն դուն գուցե կարող ըլլաս, ասդին-անդին դիմելով՝ բան մը գլուխ բերես: Բագու Քաջազնունին Դևրնիվիլի մասնավոր հարգողներեն է, ան ալ կրնար գուցե օգնութիւն մը հասցներ: Կը գրեի ինքս անոր ալ, բայց մտածեցի, որ քու խոսքդ կրնա ավելի ազդեցութիւն ըներ վրան: Անո՛ր ալ գրե: Այսպես է, սիրելի՛ս, մինչև վտանգը մեր սեմին չհասի, չենք մտածեր: Ինչևէ, գրե՛, ինչ որ կրնաս. և չոտով ալ ինծի տեղեկութիւն տուր: Այդ գումարը ան կրնա գուցե և մասմաս վերադարձներ. չէ՞ որ սեպտեմբերին պաշտոնի է ըլլալու: Դե՛, հաջողութի՛ւն. միայն չո՛ւտ, ինչ որ կրնաս գրե՛ չուտ. և անմիջապես գրե՛ ինծի:

Կը համբուրեմ քեզի ջերմ կարոտով, կը բարևեմ ձերոնց: Ինչպես ըսի, չուտով կը գրեմ քեզի նորեն, որովհետև սիրտս կ'ուզե անգամ մը քեզի հետ ըլլալ նորեն: Կրկին համբույրներով՝

Լևոնդ

94. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Փետր. 20, Լոզան>

Իմ սիրելի Ստեփանին ու Հանեսին. անչափ ուրախ եմ, որ խոսքս կրցա պահել ու պարտքիս տակեն դուրս եկա: Ձեզի խոստացեր էի

ամենաուշը մինչև մարտ ամբողջովին պատրաստ ձեռագիրը հասցնեմ ձեր ձեռքը, այսօր ձեր հաշվով փետրվարի 7-ն[1] է և ահա՛ վերջնապես պատրաստ ձեռագիրը սեղանիս վրա է. վազը առաուն այս նամակիս հետ միասին փոստ կը ձգեմ և ամենաուշը մինչև տասը օր կ՚ըլլա ձեր ձեռքը: Ես հույս ունեի 10-15 օր մը ավելի չուտ ուղարկելու, բայց արտագրությունը չատ ժամանակ խլեց, մանավանդ այդ անիծած նկարներու ու ձեռագիրներու չափչփելը: Ատոր վոխարեն հիմա վստահ եմ, որ թյուրիմացություններ չեն առաջանար. արտագրած եմ այնպես, ինչպես որ տպագիրը ըլլալու է, երես-երես, ձեռագիրները նաև տող-տող:

Հիմա ատանալնուդ պես, խնդրեմ, չուտով աչքե անցընեք, թե՛ առանձին-առանձին, նաև գեչ չէր ըլլար անգամ մըն ալ երկուքովը միատեղ և նշանակեք ձեր նկատողությունները: Ձեռագիր մասերունը ամենեն ավելի ստիպողական է, որովհետև մինչև ինծի գրեք, մինչև սրբագրեմ փոխեմ ու նորը ձեզի ուղարկեմ՝ ահագին ժամանակ է կոր-չելու. որքան ալ որ չնչին ըլլա սրբագրությունը՝ ինքներդ մի՛ ընեք, շատ հեչտ կրնա պատահիր, որ սխալ մը ուղղելով նոր սխալ մը ընեք, որովհետև տառերու հաջորդականությունը և այն մանր-մունր մյուս պայմանները ձեր գլխուն մեջ այնպես պարզ չէ, ինչպես ինծի համար: Բայց հենց այդ ձեռագիրներուն վրա ավելի բծախնդիր եղեք, որով-հետև կլլիչե պիտի պատրաստվի և վերջը փոխելը թե՛ դլխու ցավ է, թե՛ ծախք: Ես իմ կողմես ըրեր եմ խելքս հասածը. արտագրեր եմ ու սրբա-գրեր չորս անգամ. և ինչքան ալ որ սրբագրես՝ կը սրբագրվի, միշտ նոր պյուտ մը կընես, նոր միտք մը ծայր կու տա, բայց առիկա վերջ չունի: Մնկ մասն ալ թող մնա հաջորդ բարեփոխություններուն, այսպես վճռեցի վերջապես:

Սիսթեմի-միսթեմի մասին խոսիլը ալ ավելորդ է ըսլորովին, քանի որ ձեռագիրս ձեր ձեռքն է այլևս ու ամեն բան ձեզի համար պարզ: Այսքանը ըսեմ, որ այբբենարանի վրա ալ ես հիմա այն աչքովը կը նայիմ, ինչ մյուս մասերուն վրա. առիկա ինծի համար ընթերցարան է պարզապես: Այբուբենը ուսուցիչը պիտի սորվեցնե (ըստ պասագրքի), կենդանի ուսուցիչը. վիրքը միայն սորվածը կրկնելու, վարժելու ու յու-րացնելու ընթերցման նյութ պիտի տա. հաճելի ու գլուխիչ նյութ: Սխալ է ընթերցարանը և ուսուցչին ուղեցույցը իրար խառնելը: Մենք արդեն այդ ուղղությամբ ալ մտածեր ենք տպածը կազմելիս, ես հիմա

հասցրի ծայրահեղության և չեմ կարծեր, որ հասած ըլլամ վատ հետևանքի: Ձեռք վերցուցի բոլորովին նկարին նայելով տակը դրած բառի ընթերցումեն: Նկարները պարզ իլյուստրասիոն է, ավելի գրավիչ ու հետաքրքիր դարձնելու կարդացած նյութը, բայց ոչ տառ ճանաչելու նպաստող միջոց. ուր որ բնական կերպով վերնագիրը և նկարը իրար բռնեցին, բնականաբար ավելի գոհ եղա:

Միակ բացառությունը առաջին 4-5 տառերն են, ուր մեր ընդունած սկզբունքին հակառակ, տվեր եմ անմիտ վանկեր. ես այդ քայլը ըրի երկար ու ամեն կողմեն մտածելես վերջը: Ուրիշ կերպ վարվիլ կարելի չէ, իմ համոզումովս: Կա՛մ գիրքը պիտի սկսվի 7-րդ երեսեն՝ ենթադրելով որ երեխաները արդեն քանի մը տառ սորված են ուսուցչի բերնեն ու ձեռքեն և կա՛մ դասագիրքը պիտի կրկնե անհրաժեշտորեն ուսուցչի ըրածը կամ ընելիքը: Զորս ու նվազ տառերով ի՞նչ գոմբինեզոն կարելի է ընել, որ կենդանի բառ դուրս գա: Մյուս կողմեն չէ՞ որ ուսուցիչը անդադար պետք է բառի այս ու այն մասը փակելով անմիտ վանկեր կարդացնե տղոց. պետք է ընե, ալեկ ու հիմնական սորվեցնելու համար, մանավանդ մենք, որ վանկով կարդալը տեսակ մը հիմք ենք ընդուներ այբուբենը սորվելու (առանց ը-ի միջամտության): Այդ հիմնական վանկերը պետք է թարմ ու պինդ դրոշմված ըլլան երեխայի գլխուն մեջ. պետք է դասարանը պատեն կախված մնան ահագին տառերով՝ այդ անմիտ հիմնական վանկերը (պա, ապ, կա, ակ և այլն), այնպես ալ դասագրքին մեջ միշտ անոնց ձեռքին ու աչքին տակը: Այդ վանկերը չատ ավելի կարևոր են, քան նույնիսկ իմաստ ունեցող պապ-ն ու կարապ-ը: Այդ հիմնական վանկերը ես դրեր եմ մինչև առաջին մասին վերջը, միայն առանց վրան ծանրանալու, մնացածը ուսուցչի գործն է: Ավելի ճիշտ է ըսեմ՝ ուղեցույցի գործն է: Ես հիմա անմիջապես նստելու եմ այդ մանկավարժական մասը կազմելու, քանի որ գլխուս մեջ ամեն բան դեռ թարմ է ու կենդանի: Շատ ժամանակ է կորզելու նորեն, բայց համոզվեր եմ, որ անհրաժեշտ է. ու պիտի ընեմ: Կը վերջացնեմ երևի մեկ-երկու շաբաթեն. կը պահեմ, ամառը կը սրբագրեմ, կը ղրկեմ ձեզի ու կ'ըստանամ Պոլիս եղած միջոցիս. տպագրելը դյուրին է:


Գամ ձեռագրին. նախ՝ ավելի փոքրագրեր եմ, երկրորդ՝ ինչքան հնար է բարակ գրել ուզը (ա և ոչ թե ա), հատ ու բարակ գծերու տարբերություն չի ուզեր, ձեռագրի մեջ այդ տարբերությունը ավե-

լորդ է, իզուր դժվար կը դարձնե փոքրիկներուն գրելը, որոնք գրելու ժամանակ սաստիկ ուժ կու տան ձեռքին. բարակը ավելի թեթև է ու գեղեցիկ. և վերջապես բնական, նայե՛ քու, իմ և կամ որու ձեռագրին որ կ'ուզես. բացի քանի մը անհատական հաստուքյուններե գիրը միշտ հաստ ու բարակ չգիտե: Նույնպես կարելիին չափ թեքուքյունը քիչ: Տառերը կլորի մոտեցնել, խույս տալ անկյունավոր ըլլալե: Տառերը հատիկ-հատիկ առաջին չորս մասերուն մեջ առանց միացնելու: Ե. մասի մեջ միացած. միայն կը խնդրեմ չթողնես, որ պետանդ կերպով միացվի, օրինակ ւ և ո տառերը տգեղ կ'ըլլա միացածը, այլև 4-րդ գծիկեն մինչև 1-ին, նույնիսկ 2-րդ գծիկը թել քաշելը. այսպես  , աա, <u>առու</u>. միացումը բնական հնչտացում պիտի ըլլա, ո՛չ թե ավելորդ դժվարացում: Իմ գրածներս օրինակ թող չծառայե, ես գրելուս բոլոր այդ նըբուքյունները չեմ հարգած. դա արդեն դուն խորհրդակցե գլուխին հետ: Տառերուն մեջ քանի մը փոփոխուքյուն եմ մտցրած, հետևելով պոլսական օրինակներուն կամ որովհետև մերը կա՛մ տգեղ եմ համարած, կա՛մ անհարմար.

1. ի, է, ւ, ս, ր, գ, դ, ասոնց թևերը <u>ալիքաձև չլինի</u>. այլ <u>ուղիղ</u> պարզ: Ալիքաձևը պահեր եմ միայն գլխատառերու համար. (ուրեմն ի և ո՛չ ɦ, ս և ո՛չ ա): Եվ այդ թևերն ալ չատ երկար թող չըլլան (ւ և ո՛չ ւ):

2. Հասարակ տառերուն մեջ փոփոխած եմ  և ո՛չ գ (ւ մը և վրան ⎫ մը). մեր կողմը ամենքը անխտիր կլոր չեն գրեր, խորթ պիտի թվի:

3.  ո՛չ թե . այսինքն վերին երեք տողին մեջ, գլուխը քիչ մը ցած, բայց ոչ 4 տողի մեջ, որ սաստիկ տգեղ է ու անհարմար,



4. Գլխագիրներուն մեջ փոխած եմ Գ, Դ. մեր կողմը չատ ավելի սովորական է ու իմ կարծիքովս ալ ավելի սիրուն թևը ցած. ես գրեր եմ Գ, Դ. կապակցելու համար ալ ավելի հարմար է:

5. Զ. գրած եմ Զ =  . ավելի հնչտ է, երբ երկու կողմը հավասար հեռու գտնի է:

6. Գլխատառ հ. պոլսական օրինակի մը հետևելով կառաջարկեմ հ հ պարզ տառեն ավելի դյուրին ջոկելու համար. թե չէ մերը ավելի սիրուն է:

7. Մեր գլխատառ Ճ-են չատ ավելի պարզ ու լավ է Ճ:

8. Մեր Շ-ն 2-4 տողերու վրա չատ տպել է. առնվազն պետք է բարձրացնել 1-3 տողերու մէջ. բայց ավելի լավ է պոլսականը՝ Շ Շ Շ - Շ:

9. Վատ է Ռ-ի թևը, գոնե Ղ. ավելի լավ է Ռ:

10. Շատ բարդ ու անպրելի է գլխագիրը Ց. կառաջարկեմ  պոլսականը.  Հասարակ:

Դուք ալ դիտեցեք, գրողի հետ ալ խորհրդակցելեն վերջը ավելք ձեր որոշումը:

Ջմռռնամ հիշելու, որ խուլա եմ ուսած տողագարձն. եթե գրողը աչքի հավասարութեյան համար պետք համարե իմ նշանակած տողերես չեղելու՝ ամբողջ բառը պիտի տեղափոխե. տողադարձ մի՛ թողնիք: Թեև երեսներուս լայնքը 11 սանտիմետր ու $8^1/_2$ միլլիմետր է, բայց բացառիկ դեպքերուն կարելի է ավելի լայն բռնել քանի մը միլլիմետր, միայն աստր համեմատ պիտի ըլլա նախորդ ու հաջորդ տողերը, բայց լա՛վ է չափը միշտ հաստատ պահվի: Տողաչար ունի միայն 75-րդ երեսի այբուբենը, մնացածը բացարձակապես անտող: Ինչպես տառը, տառի ձևը, այնպես էլ չորս տողերուն մէջ իր բռնած դիրքը ուսուցիչը պետք է սորվեցնե դասարանը: Դիրքը ընթերցման համար է և իբրև գրելու գեղեցիկ օրինակ. լավ է, որ տղան ինքը մտածե միշտ տողերուն դիրքը: Գծերը տատիկ տպեղացնող են, անտրաչյնող տառի ձևը: Գլխավորը տառի գեղեցիկ ձևն է, որ պետք է դասագիրքը ղրկմի տղուն գլուխը. թուղթը գեղեցիկ, տիպը գեղեցիկ, նկարը գեղեցիկ, տառերը գեղեցիկ, դասավորութեյունը գեղեցիկ և վերջապես բովանդակութեյունը գեղեցիկ, ա՛ս է մեր գրքերու նշանաբանը կարծեմ: Գոնե նշանաբաններեն մեկը, առանց կարծեմի:

Ձեռագիր կլիշեներու թիվը 70 է: Նկարներուն թիվը 90 է, որոնցմե 18 հատը ձեռագիրներու կլիշեներուն հետ միասին են ըլլալու, ուրեմն 72 հատ զուտ նկարներու կլիշե. ընդամենը 142 կլիշե: Նկարները բոլորը նոր նկարել տուր. գուցե 5-6 հատը միայն եղած օրինակովը օգտվել կարողանաս. կա՛մ դիրքն է փոխված, կա՛մ մեկը մանրամասնութեյուն մը: Նկարել տուր Ախիկյանին. Տաճկաստանի հազուստին ու տիպերուն ան է միայն ծանոթ, և ճաշակ ունի. Ռոտոները չատ է կպիտ, այնպես ալ մյուս կովկասյանները:

Նկարներուն բովանդակութեյունը ինչ որ խնդրես կարելի է, գրեր եմ ինքս իր նոմերին տակը իր տեղը: Բայց դուն ավելի վարժ ես. ըստ բո-

վանդակութեան փոխե՛, լրացրո՛ւ, ինչպես որ պիտես և քո հրահանգներդ տո՛ւր Ախիկյանին. բայց լավ է, որ կարևոր փոփոխությունները ինձի իմացնես: Ախիկյանին ղրկե իմ հասցես, անոր հասցեն ալ ինձի, ղրկե՛ անոր «Լոտաբերի» հին և նոր տպագրության առաջին տարիները, եթե չունի: Դուն ալ պնդե, ես ալ եմ պնդելու, որ մինչև ամիս-ամիսուկես բոլոր նկարները ղրկի քեզի, կամ ուղղակի ինձի, եթե վերատին տեսնելը քեզի համար կարևորություն չունի. իմ կարծիքովս ինքդ տես և հավնածդ ինձի ղրկե վերջնապես: Այն նկարները, որոնք ձեռագրի հետ միասին մեկ կլլիշե են կազմելու, հատուկ գրե՛, որ նշանակած չափերը ունենան անշուշտ, մնացածները կարելի է $1^1/_2$ կամ 2 անգամ մեծ:

Ձեռագիրներուն օրինակներն ալ հոս պատրաստել տուր անմիջապես. այնպես որ մինչև 2 ամիս, ծայրահեղ դեպքին մինչև $2^1/_2$ ամիս թե՛ նկարներու, թե՛ ձեռագիրներու հիմնականները հոս ձեռքս ըլլան: Որպեսզի գոնե մայիսի վերջերը անցնիմ Վիեննա, երևի 2-3 շաբաթ ալ հոն կը քաշքշվի կլիշեներու պատրաստությունը. հավիվ տպագրության ձեռնարկել կարողանամ հուլիսին, որ արդեն ուշ է. կ'ուզեի մինչև հունիսի վերջերը արդեն պատրաստ ըլլային: Ինչքան չոտ՝ այնքան լավ: Իմ պոլիս երթալս անհրաժեշտ է, թե՛ խնամոտ տպագրության, թե՛ անձնական ազդեցության, թե՛ կապերու և թե՛ հաջորդ տարիներու նյութի ու լեզվի համար: Անձնապես պետք է տեսնիմ ու խոսիմ գրավաճառներու հետ ալ, Աստված գիտե ինչ տեսակ մարդիկ են. այլև պետք է ծանոթանալ անոնց սովորություններուն, չուկային, պահանջին: Թե քանի օրինակ տպելու ենք, ինձի ալ դեռ պարզ չէ բոլորովին. մեկ կը մտածեմ քիչ տպենք, որ վատահ ըլլանք այս տարվա ապառմանը, մյուս կողմեն ալ կը խորհիմ՝ լավ է շատ տպենք, թող երթա մնա գալ տարվա, քանի որ ամեն տպագրություն երկար-բարակ պատմություն է, քանի որ իմ ուր ըլլալս դեռ անորոշ է: Կախված է հարցը և իհարկե ծախքի մեծությենեն և մեր ունեցած միջոցներեն. դեռ ժամանակ ունինք մտածելու, դուք ալ հայտնեցեք ձեր կարծիքը:

Դե՛, կարծեմ, ըսի ինչ որ անմիջապես պետք էր որ գրեի. բայց այն զգացումը ունիմ, որ շատ բաներ մոռցեր եմ. գիրքը արտագրելու միջոցիս շատ բաներ կար պլուխս, շարունակ կը մտածեի՝ «ա՛յ, սա ալ պետք է գրեմ մերոնց». վերջապես, եթե մոռցեր եմ՝ կ'ըստանաս հա-

վերջած նամակ մըն ալ: Հիմա ալ ես եմ սպասելու ձեր կարծիքին, ձեր քննադատութեանն ու սրբագրութիւններուն:

Գիրքի դիրքը, ինչպես պիտի նկատեք, ամէնի նմանցրեր եմ անգլիականին, թեև ոչ անոնց չափ լայն, մոտեցրեր եմ միայն. փրանսերեն լավ դիրք մըն ալ կա ձեռքս, ան ալ նույն չափերը ունի գրեթե. մերը քիչ մը ավելի լայնկեկ է: Ընտրեր եմ միջին ճամբան:

Ջերմ համբույրներս ձեզ, երկուքիդ ալ, կարոտով բարևներս: Շտապեցեք. թե՛ կարդալը, թե՛ սրբագրելը, թե՛ նկարել տալը, թե՛ տառերը գրել տալը և թե՛ այդ բոլորը իմ ձեռագրին հետ նորեն ինձ ուղարկելը:

Լևոն

95. «ԳԱՐՈՒՆ»–Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Լոզան, 1910 փետր. 10/23

«Գարուն»–ի խմբագրութեան[1]

Հարգելի՛ պարոններ:

Նոր ստացա ձեր ուղարկած նամակը և կ'ըշտապեմ պատասխանելու: Ձեռքս վերջնապես պատրաստ ունիմ միայն «Ճամբուն վրա» դրամաս, որ դեռ տպված չէ ոչ մեկ տեղ: Զուղարկեցի, մտածելով որ արդեն ուշ է գուցե: Եթե ուշ չէ և եթե կը կամենաք, հայտնեցեք ինծի դիւցուք հեռագրով և անմիջապես ղրկեմ[2]*: Ծավալը կը կարծեմ 20-25 մեծադիր երես:*

Կը ցանկամ հաջողութիւն ձեր սկսած գրական այդ ձեռնարկին, որ մեր արդի գրական-գեղարվեստական անապատին մեջ կրնա լուրջ դեր մը խաղալ, եթե մանավանդ կարողանաք ալմանախը իսկական պարբերականի մը վերածեք:

Կը ցանկայի, որ հայտնեք ինծի խմբագրութեան ինչ անձերե բաղկացած ըլլալը: Անշուշտ բնական կը գտնեք այս հարցս, քանի որ իմ աշխատակցութիւնս ունենալ եք ցանկացած:

Հաջորդ թիվերուն համար կրնամ ձեզի վիպակ մը խոստանալ, որ ավարտ է արդեն, բայց վերջնական սրբագրութեան ենթարկված չէ դեռ[3]*:*

Ընդունեցե՛ք, պարոննե՛ր, խորին հարգանքս ձեզի և համակրանքս ձեր սկսած գործին:

Լևոն Շանթ

Հասցես.
Léon Segbossian
Avenue d'Echallens,78
Lausanne, Suisse

96. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, լուր եք և հիմնապես. դուն ալ, Հանեան ալ: Անկե նամակ կ'ըսպասեմ, քեզմե նամակ կ'ըսպասեմ, կ'ըսպասեմ գոնե լուր մը, որ «Լուսաբերն» ու նամակս ստացեր ես, կ'ըսպասեմ փող... և կ'ըսպասեմ: Տեղն էր, որ ես ալ լռեի, բայց ինչ ընեմ, Լևոնդ որ եկավ[1], ալ մեղք ես, հայրիկ ես վերջապես: Առողջ է, ուրախ, հանգի՛ստ եղիր: Աս մոտ չաբաթ մըն է՝ իր նոր պանսիոնն է, չա՛տ գոհ է ամեն տեսակետե. մինչև անգամ մտադիր է ավելի երկար մնալու: Առաջ կ'ուզեր «զալմազալ» տեղ մը իյնա. ես, իհարկե, ոչինչ չըսի, պատանութիւնը իր պահանջներն ունի. բավական երկար որոնումներե վերջը ինկավ ընտանիք մը, որ թեև «զալմազալ» չէ, բայց ընտանիք է և լեզվի տեսակետեն բացառիկ հարմար: Մանրամասնութիւնները երևի ինքը կը գրե, այնպես որ, ըսել կ'ուզեմ, հանգի՛ստ եղիր:

Գալով մեզի՝ հիմա համալսարանական արձակուրդներն են, նաև դպրոցական և գարնան ալ սկիզբը, երբ չգիտես պատուհաններդ բայ պահես, թե վակ. ճիշտ այդպես ալ հոգիդ, անհանգիստ դրութիւն մը: Մանավանդ որ նոր վերջացուցի իմ անմիջական պարտավորութիւններս և առայժմ պարապ եմ. «Լուսաբերը» պոստը նետելուս պես նստեցի «Ուղղեցույցի» վրա, որ ահա նոր ավարտեցի, ահագին գիրք դուրս եկավ, որ վերջը ինչքան ալ որ կրճատեմ ու սեղմեմ, նորեն 8-9 տպագրական թերթ բան է դառնալու: Փորձանքը ան է, որ այդ ահագին գիրքը արտագրելն ու քեզի ղրկելը անկարելի բան է, բարձրագույն դրաքննութեանդ ենթարկելու համար: Հիմա ես այլևս ո՛չ սիրտ, ո՛չ ցանկութիւն ունեմ նորեն Լուսաբերով ըլլալու, ամառն ալ Պոլսեն հազիվ թե հասցնել կարողանամ: Այնպես որ ես հիմա կը

մտածեմ, գուցե ավելի կարճ ճամբան ընտրած կ'ըլլանք, եթե դուն ելնես ու «Ուղեցույցիս» դաս, քան թե «Ուղեցույցս» ելնի ու քեզի գա: Համենայն դեպս առաջարկս մտածելու բան է, Ստեփան, այսպե՛ս հունիսի մեջերուն, երբ ես արդեն տպագրության վրա եմ ըլլալու, պզտիկ-ախորժելի տուրնե մը Ոսկորի եղերքներով, հաճելին ու օգտակարը կարելի է իրար խառնել բավական հավասարաչափ խառնուրդով: Վերջապես, մտածե՛, հարցո՛ւր քու բազմաթարդ ու բազմակողմանի կանսաներուդ խորհուրդը[2]: Գլխավոր արգելքը արևելյան «Լուսաբեր»-ներու տպագրությունն է իհարկե. բայց կարելի էր ավելի չուտ սկսել ու վերջացնել:

Ներփակ գտնելու ես Լուսաբերի 16-րդ երեսը սրբագրած, կպցո՛ւր իր տեղը, եղածին տեղը: Ուղղեցույցը կազմելու առնն անհրաժեշտ եղավ այս փոփոխությունը մտցնելը: Ուրեմն այդ երեսի վրա եղած 7 մանր նկարներն ալ ջնջված են, նկարել տալու պետք չի կա: Իսկ Կատու ոտանավորի (Ե. մասի մեջ) վերջին երկու տողը, որ ես փոխել էի Դ-րդ մասի մեջ ու տառի տակը դնելու համար, հիմա կը կարծեմ ավելի աղեկ պիտի ըլլա բնագրին մոտիկ մնալը, սրբագրե հետևյալ կերպով.

Ինչո՞ւ, կատո՛ւ, այսպես տրտում.
Թե՞ մուկերն են այսօր արթուն:

Որով և մնամ ձեր լուրերուն սպասող՝ Լևոն
Լոզան, 26 մարտ 1910

97. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, Հարյուր րուբլին առացեր եմ երեկ, այսօր ալ «Հասկերուդ» առաջին համարը, երկրորդը առացված է իր ժամանակին: Ինչպե՞ս է բաժանորդագրությունը. ոչինչ չես գրեր, համենայն դեպս կը ցանկամ կատարյալ հաջողություն: Կը չնորհավորեմ Հրատ. ընկերության վերատացումը[1], չանքերուդ պսակվիլը, տախտերուդ տակերը մաքրվիլը, այլև նախատահություններդ: Գլխու ցավ գործ է, բայց անտարակույս լուրջ ու ազնիվ գործ է. և գուցե միակ հանրային խո՛ր գործն է մեր արդի պայմաններուն մեջ: Իմ խոր համոզումս է՝ դրե՛ք

հրապարակի վրա արժեք ունեցող լուրջ երկեր թե՛ գիտական, թե՛ գեղարվեստական, ըլլա թարգմանական, ըլլա ինքնագիր, և ընթերցողներ դուրս կու գան, ընթերցող կը դառնան: Ուժն է, որ կը հաղթե. ուժն է, որ կը քաշե. գրե՛ք ուժը մեջտեղ. իսկ ուժը արժեքավոր, տագնապավոր երկն է, և այլն: Ջավոն ու Լևոնդ այս երրորդ օրն է գացեր են ժընևե. երևի այսօր-վաղը կը վերադառնան: Սրտագին բարևներս քեզի ու ձերոնց: Կ'ըսպասեմ լուրերուդ. Լևոն

1910 մարտ 30, Լոզան
(Բացիկի դարձերեսին՝ Exp: L. Segbossian
Av. d'Echallens, 78)

98. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան:

Լևոնի նամակին մեջեն ինծի ուղղված քանի մը տողերդ[1] չափազանց ծանր տպավորություն ըրավ վրաս: «Լուսաբերի» վրա այսքան աշխատելե, այսքան ծրագիրներե ու այսքան հաջողությենե վերջը, երբ մանավանդ հիմա ալ ամբողջ նոր արևմտյան չարքի մը ծայրը բանալու վրա ենք, այս տեսակ վայրկյանի մը խիստ է անախորժ գրած տողերդ կարդալը: Հանեսը մեկ-երկու հոդված ուրիշին տվեր է լմե ոչ, այդ եղելությունը ինծի համար այնքան կարևորություն չունի, որքան այն վիտակցությունը, որ քու ու Հանեսի մեջ ներքին ու վոխադարձ դժգոհություն մը կա: Ատիկա ցավալի է ու չի պիտի ըլլար մեր այս ընկերական-մտերիմ կապերով օղակված գործին մեջը: Բայց քանի որ կա, իմ խորին համոզումովս, միակ ուղիղ ճամբան եղելության աչքերուն մեջը չիտակ նայելն է: Եթե գործը մտերմական հողի վրա չենք կարող պահել, պե՛տք է անցնենք գործնական հողի վրա. այսինքն պարզ, երեսերեսի խոսեցենք ու ճչտեցնենք մեր վոխադարձ պարտավորություններն ու իրավունքները, եթե կ'ուզենք նույնիսկ գրավոր: Եվ այս բոլորի մեջ ոչինչ վիրավորիչ չի կա. վիրավորիչը և միևնույն ժամանակ գործը խախտողն ու սպաննողը կեղծ դրությունն է, խավ դժգոհությունն է. ինչո՞ւ դուն պիտի մտածես, որ քու համբերությունդ է որ կը չահագործվի, ինչո՞ւ ան պիտի մտածե, որ իր տագնդն է որ կը չահագործվի: Թե՛ անձնական և թե՛ հանրային տեսակետեն եթե չենք ուզեր,

որ մեր սկսած գործը մեռնի, միակ ուղիղ ու բնական ճամբան առիկա է: Կանչե՛ Հանեսը, այս նամակս կարդացեք անգամ մը միասին, քիչ մը հեգնեցեք ինծի ու երես երեսի, մեկ կողմ թողած վայրկյան մը ընկերութիւնը, խոսեցեք իբրև կեչնֆուի մարդիկ ու ճշտեցե՛ք մեզմե ամեն մեկի իրավունքն ու պարտքը, այսինքն ճիշտ այն բանը, ուրկե սկսելու էինք գործը, եթե չատ բանաստեղծորեն սկսած չըլլայինք այս ահագին ու բարդ ու մեր ամբողջ կյանքը այլևս մեզի հետ քաշ գալիք աշխատութիւնը:

Գալով բուն եղելութեանը, քու արդի տրտունջիդ, թե Հանեսը խոստացեր է նյութ տա նաև «Դասընկերին»[2], ինչպես որ քեզի ըսեր են, իմ համոզումովս տակը անպատճառ թյուրիմացություն կա: Այս տեսակ հարցերու մեջ երբեք ուրիշներու ըսածին ականջ կախելու չէ, ով ալ որ ըլլա այդ ըսողը և ինչ աստիճան ալ որ հավանական թվի: Պետք է խոսիլ երես-երեսի ու պարզ, առանց քաշվելու: Ինչպես քեզի, այնպես ալ Հանեսի հետ չատ հաճախ խոսեր ենք Լուսաբերի մասին, և ինծի քանի-քանի անգամ պարզ ըսած է, թե ինքը անով է «Լուսաբերի» հավասար աշխատակից, որ իր բոլոր գրածն ու գրելիքները գրած է «Լուսաբերի» տրամադրության տակը և միայն «Լուսաբերի»: Ուրեմն անիկա ինչպե՞ս կարող է ուրիշ դասագրքերու ալ տալ «Լուսաբերի» վերցրած կամ վերցնելու որոշած հոդվածները; ալ ինչի՞ մեջ պիտի կայանա Հանեսի Լուսաբերին տեր լինելը, եթե բոլոր դասագրքերուն ալ նույն հոդվածները վերցնելու թույլ տա: Այդ բոլորի տակը, կը կրկնեմ, սխալ բան կա, որովհետև ճիշտ այդ հարցի առիթով էր, որ նույնիսկ Աղայանի հետ քանի-քանի անգամ խոսակցություններ է ունեցեր, որ Աղայանը խոստացեր է հաջորդ տպագրություններու ժամանակ Հանելու իր գրքերեն Հանեսի հոդվածները[3]. այս ամենը Հանեսը ինքն է պատմեր ինծի. ալ ի՞նչպես կրնա պատահեր, որ հիմա ելնե ու «Դասընկերին» տալ ուզենա նույն հոդվածները, որ Աղայանին անգամ Հանել տալու կ'աշխատի: Այլևս մեկ կողմ թողնելով այն հարցը, թե ընդհանրապես ի՞նչ չահ կամ ինչ իմաստ կրնա ունենար Հանեսի համար «Դասընկերին» հոդված տալը:

Ո՛չ, անմիտ թյուրիմացություն է: Բայց քանի որ հարցը անգամ մը եկեր է առաջ, ըսե՛մ ինչ որ ինքս այդ մասին կը մտածեմ:

Այն հոդվածները, որ վերցրեր ենք «Լուսաբերի» մեջ կամ պետք է վերցնենք Հանեսի գրություններեն, ինչպես և քու գրածներեդ,

նույնը և իմ վոխադրութիւններես կամ կազմածես, այդ բոլոր հոդվածներու իրավունքը, ինչպես և Հայտարարեր ենք «Լուսաբերներուս» ճակտին, վերապահված է միայն Լուսաբերին. ոչ մեկուն տալու իրավունք չունինք և ամեն կերպ պարտական ենք դիմադրելու, որ ոչ մեկ դասագիրք չի համարձակվի վերցնելուս: Այս հաւիցը ասկե ետքը ավելի սուր կերպարանք է ստանալու, եթե Պոլիս մեր գրքերը հրապարակ հանենք. կողոպտելու ախորժակ ունեցողներ շատ են գտնվելու. և եթե ես իմ բարեկամիս զիջեմ, դուն քու լայնսրտութեանդ, երրորդը չգիտեմ ինչի, ալ ի՞նչպես կարելի է ընդհանուր գործ առաջացնել, իսկույն կը քայքայվի գործը: Կը կրկնեմ լա՛վ է գրավոր պայման կապվի մեր մեջը. այդ պայմանը մեծ դյուրութիւն կու տա մեզմե ամեն մեկին շատ ավելի կարճ ու կտրուկ մերժելու ամեն դիմում, և մանավանդ Հանեսին, որ իր թուլիկ ու նահապետական քաղաքավարութեամբը ոչ ոքին մերժելու սիրտ չըներ ու նույնիսկ իր ակնհայտի թշնամին իր սեղանին հյուր կը նատեցնե:

Իսկ այն հոդվածները, որ «Լուսաբերը» չէ վերցրած, ի՞նչ իրավունք ունիմ պահանջելու քեզմե կամ Օհանեսեն, որ ուրիշին չի տաք. ձեր գիտնալու բանն է, ձեր անձնական հաշիվը: Միայն կա կետ մը, որ կ'ուզեի չեչտեմ: Մեզմե ամեն մեկի անվան երևումը ուրիշ դասագրքի մը մեջ Լուսաբերի համար այս կամ այն աստիճանի մինուս է: Ուրիշ բան է, օրինակ, երբ ամենքը իմանան, որ Հանեսը միայն մե՛կ դասագրքի մեջ է և այդ դասագիրքը «Լուսաբերն է» և ուրիշ բա՛ն է անշուշտ, երբ այն զգացումը ըլլա, որ որ դասագիրքը կ'ուզես բաց, Հանեսը մեջը կա. առաջինի առեն Հանեսի Լուսաբերին տված աշխատակցութիւնը չա՛տ ավելի մեծ է, մինչդեռ երկրորդ պարագային մեջ անհամեմատ ավելի նվազ, բոլորովին անկախ ընտրված հոդվածներու ներքին արժանիքեն: Այնպես որ եթե «Լուսաբերի» բարոյական հաջողութիւնը Հանեսի սրտի մոտիկ է, եթե «Լուսաբերի» նյութական հաջողութիւնը ցանկալի է իրեն, արդեն ինքնին իր կամքովը մինուսներ պետք չէ տա Լուսաբերին և պլյուսներ մեր մրցակից դասագրքերուն: Իր չահն ալ ատիկա կը պահանջե, Լուսաբերի չահն ալ: Այնպես որ Հանեսը մեր դեմ բարոյապես ունի և այդ պարտքը ուրիշ դասագրքերու ոչինչ չի տալու, բայց մենք իրավունքո՛վ պահանջել չենք կրնար: Ինքը պիտի հասկընա կամ ուզենա: Այդ միևնույն է, թե դուն կամ ես հիմա վեր կենանք ու աշխատակից դառնանք ուրիշ (լեզ-

վի) դասագրքի մը, օրինակ, անոր ուղղեցույցը կազմելով, կամ հատորաբան մը գրելով կամ հենց ուղղակի մեր անունը ուրիշ, Լուսաբերին համարժեք դասագրքի մըն ալ ճակտին դնելով: Իրավապես «Լուսաբերը» ինծի արգելք դառնալ չի կրնար. հո՛, ես իմ գրելու չնորհքս չեմ ծախած «Լուսաբերին». բայց կ'ըզգամ, որ առիկա խելոք քայլ չէր ըլլար իմ չահիս տեսակետեն և բարոյական սխալ մը կը դառնար «Լուսաբերի» հանդեպ: Առնվազն առիկա կը նշանակե. «է՛, Լուսաբերը եղած-չեղած ինծի համար միևնույն է». «Լուսաբերին» ալ ան, ինչ որ «Բուսաբերը» կամ չգիտեմ ինչաբերը»: Մինչդեռ ես այդ աչքովը չեմ կրնար նայիլ «Լուսաբերին» և չեք նայիր դո՛ւք ալ. և քնավ չենք ալ կրնար նայիլ, թե չէ այլևս ի՞նչ ընկերակցություն, ինչո՞ւ այսքան հուզում, հոգ ու աշխատանք: Կը խնդրեմ, որ չուտով խոսիք ու այս անախորժ հարցը մեջտեղեն հանեք, երբ ամենեն ավելի պետք ունինք կեզրոնացած աշխատանքի ու վոխադարձ ոգևորության:

Անցնիմ մյուս երկու հարցերուն:

Ես Պոլիս ոչ մեկ հայատարարություն չեմ տպեր, մինչև որ քեզմե նամակ չըստանամ, մինչև որ չիմանամ ուղարկած ձեռագրիս ձեզմե վավերացված լինելը և նկարներու վիճակը. տարատամ լուրերով հրապարակ իջնելը խելոք բան չէ: Երբ վճռապես գրեք ինծի, որ այս ամառ տպագրելը որոշված է, իսկույն կը հայտարարեմ և կորոշ: Ձևի համար կարելի է խմբագրական «կը լսենք որ»-ի նման լուրով մը սկսիլ, բայց մեզի համար արդեն վճռված պիտի ըլլա:

Ես հիմա կ'ուզեմ ավելի կրճատեմ քեզի ուղարկած ձեռագիրս, կրճատեմ ամբողջ ե-րդ մասը: Ուղղեցույցը կազմելու ժամանակ, երբ դասավանդման գործնականին անցա և ժամերու հաշիվը պարզ եղավ, տեսա որ մեծ մասով ժամանակ մնալու չէ ե. մասին, պետք է անցնեն վայրիվերո. բայց նյութերը ընտիր են և մեզք. և ի՞նչ կարիք ունինք ավելորդ չտայլության: Եկա այն եզրակացության, որ ավելի լավ է հանել ամբողջ տպագրական թերթ մը: Օգտտները գործնական ալ, տեսական ալ շատ են. նախ՝ գինը կրնանք քան մը ավելի աժան նշանակել, որ արդի Տաճկաստանի պայմաններուն համար շատ մեծ բյուտ է. երկրորդ՝ ծախսերնիս զգալի կը պակսի անմիջապես, երեւի 1-2 հարյուր ռուբլի. երրորդ՝ ավելի ամբողջական ու միաձույլ կը դառնա այբբենարանը. ե-րդ մասի աշխատանքը զգալի տարբեր է նախորդ 4-էն և ուղղեցույցին մեջն ալ ավելի բարդություններ կը մտցնե, կազատվինք

և այդ բարդութիւններեն. և չորրորդ՝ հաջորդ տարիներու պատրաստութեան գործը ավելի դիւրութիւն կ'ըստանայ 10-12 հարուստ նյութերու հավելումով: Այդ հնքիսթներեն երեքը-չորսը ես կը դնեմ ուղղեցույցի մեջ, որ գրքի առաջին մասը անցնելու ժամանակ բանավոր-մտավոր աշխատանքի քանի մը պատրաստ նյութ ունենա ուսուցիչը, ինչպես ուղղեցույցի մեջ մշակեր եմ: Այդ միևնույն հնքիսթները վերջը կը դնեմ Ա. տարվան առաջին մասին մեջ իբրև ընթերցման վարժութիւն, իբրև ծանոթ նյութ, որ մեծ հարմարութիւն կու տա:

Այնպես որ նոր առաջարկովս գիրքը կ'ունենա ուղիղ 80 երես: 73-րդ երեսը 30-րդ հոդվածն է Դ. մասի - «Դեպի լուսին». 31-րդ հոդված կը դառնա «Պոչատ ազվեսը» մասերու տրոհած և չնորհքով նկարով մը 74-77 երեսներուն վրա. 32-րդ = «Գրիչս» ոտանավորը 78-ի վրա. 33-րդ հոդվածը = այբուբենի կարգը և «ձայնավոր են» = 79-րդ երես. իսկ վերջին 80-ի վրա ալ շատ հարմար ու գործնական ձեռագիր այբուբենը: Յուցականները ավելորդ են, որովհետև արտաքին հեղինակն ոչինչ չունինք: Այդ յուցակը գուցե ուղղեցույցի մեջ դնեմ, թեև հոն ալ մասնավոր կարիք չի կա: Այս ծրագրով այլևս ավելորդ է Ե-րդ մասի նշանակած ոտանավորներուս ձեռագիրը պատրաստել տալը, ո՛չ ալ «Գրիչս», որ տպագիր պիտի ըլլա: Այնպես որ ո՛չ մեկ կապակցած ձեռագիր: Իսկ նկարները այդ Ե-րդ մասի համար եթե պատվիրեր ես՝ վնաս չունի, Ա. տարվան համար պետք է նորեն:

Ուղղեցույցը հիմա քեզի դրկելու ո՛չ մեկ հնարավորութիւն չունիմ. խառն, անկազմ, ահագին ձեռագիր է: Ռու կարդալը անշուշտ անհրաժեշտ է՝ լուրջ հակասութիւններ չենք ունենար ես ու դուն. բայց նույնիսկ մանր տարբերութիւններն խուսափելու է. պետք է որ կարդաս, կը ջանամ Պոլսեն դրկեմ քեզի, թեև առիկա շատ բարդ ու մանր աշխատանք է ըլլալու ինծի համար:

Գալով քու այս տարի ուղղեցույց կազմելուդ՝ իմ կարծիքովս սխալ է. գործնականը ինծի բերալ մեր հին եղրակացութիւնը, մենք չա՛տ խելոք բան ենք ըրեր, որ մինչև հիմա ոչինչ չենք գրած, և ոչինչ ալ գրելու չկա, մինչև որ արևելյան Առաջին տարին չըստանա իր վերջնական ձևը. դասագրքի վերջնական ձևը չա՛տ մեծ կարևորութիւն ունի ուղղեցույցի համար. ուրիշ բան է, իհարկե, եթե քու միտքդ պարզ սկզբունքային գրվածք մըն է անկախ Լուսաբերին. իմ կարծիքովս այդ ուղղութիւնը ռուսերեն գրվածք մը գտնել դեշ չըլլար, բայց

Հայերեն միայն գործնականը և սերտ Լուսաբերի հետ կապվածը արժեք ունի, ուսուցչին ատիկա է հասկանալի ու ատիկա է պետք. սկզբունքը գործադրած թե՛ անհամեմատ ավելի համոզիչ է և թե՛ ավելի ուժեղ ու պարզ. ես այդ ճամբով աշխատեցա: Այնպես որ իմ խելքովս, դուք ավելի լավ կ'ընեք հիմա, Հանեսի հետ միասին, կազմեք Ե. տարին: Եթե դժբաղդաբար ատիկա անհնարին ըլլա, կազմեցե՛ք Ա. տարվա վերջնական խմբագրումը, որու համեմատ ալ կը գրես և ուղղեցույցը. բայց թե՛ այդ նոր խմբագրումը և թե՛ ուղղեցույցը միայն գալ տարի ամառը կրնանք հրատարակեր: Այս ամառ կարծեմ Ա. տարվան համար հինը 2–3 հազար օրինակ նորեն տպելեն ավելի ուրիշ ոչ մեկ ելք չունինք: Հրապարակի վրայեն պետք է սպառել հին հրատարակությունը, իհարկե աշխատելով որ գնորդ չի կորցնենք:

Ե. տարվա համար մինթե ոչի՞նչ չեք ըրած, իզո՛ւր: Համոզված եղե՛ք, որ այս տարվա մեր ընդհատումը այդ երկու տարիներու համար նոր մրցակից մը առաջացնել ըսել է. վերջապես դուք պիտեք:

Նամակս շատ երկարեց, բայց վերջացնելես առաջ ստիպված եմ մեկ-երկու տող ալ Դերենիկի մասին քեզի գրելու, Ստեփան: Այդ խեղճ տղան ամբողջ տարի մըն է կ'ուզե Կովկաս վերադառնա, բայց 100-130 ռուբլի մը ճարել չի կրնար, որ դառնա, այս տարվա սկիզբն ալ ծանր հիվանդացավ, ինչպես բժիշկները կ'ըսեին, բարեբաղդաբար դուրս եկավ, որ առայժմ ծանր ոչինչ չի կա: Հիմա առողջ է և կուզե վերադառնա, որ աշնան համար իրեն ուսուցչի տեղ փնտրե. երաժշտության, հայերենի ու գրականության դասերն են, որ կը ցանկա պլխավորապես. երկու ամսեն ալ կը լրանա իր անցագրի ժամանակը, ինկած է շատ անել վիճակի մեջ: Քեզի ավելի օտար նկատելով՝ գրեր էի Հանեսին[4], բայց ան նույնիսկ պատասխան մը չուզեց ինծի գրե: Հիմա կը գրեմ և քեզի, Ստեփան. եթե անձամբ կամ միջնորդությամբ բան մը ընել կարող ես՝ ըրե՛, չե՛ս զղջար: Ազնիվ, խելոք ու տաղանդավոր տղա է. դուն անիկա իբրև երեխա ես տեսած և ձախորդ պարագաներու մեջ, և երկուքիդ մեջն ալ փոխադարձ նախապաշարումներ կան իրարու դեմ: Անիկա քեզի համար լավ աշխատակից կրնա ըլլալ, խոր ու վստահելի բնավորություն է, եթե մեկուն հետ անգամ մը կապվեցավ՝ ալ կապվեցավ: Ես անձամբ շատ կը ցանկայի, որ դուն ու ան իրար բարեկամ ըլլայիք, իհա՛րկե բոլորովին անկախ այս իմ առաջարկած փողի հարցես. բայց իհարկե բնավորության հարց է, կու գա, կը չփվիք ու կը տեսնաս:

Անցած չաբթու ստացա ուղարկած 80 ռուբլիդ. Լևոնի հետ խորհուրդ ընելով՝ հասանք այն եզրակացության, որ իրեն համար է ըլլալու այդ աննամակ, անորոշ ու անժամանակ գումարը: Լևոնը լավ է. հիմա ուշ-ուշ կուգա մեզի, խրվեր է իր պանսիոնին մեջը և որ պլխավորն է՝ շատ գոհ է:

Կը համբուրեմ քեզի. և շատ-շատ բարևներով քեզի ու քովինները-րուդ՝ Լևոն

Լոզան

1910 ապրիլ 18

99. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, նախ և առաջ շատ կը ցավիմ, որ իմ աչխատանքս այդ աստիճան թերի ու անպետք է դուրս եկեր ձեզի համար, մանավանդ որ ես ինքս այդ աչքով չեմ նայիր իմ գործիս վրա: Կը ցավիմ նույնպես ձեր անփույթ վերաբերմունքին. իմ խորին համոզումովս այս հեռագիրը դուք երկու ամիս առաջ ալ կրնայիք տար: Եվ վերջապես կը ցավիմ ձեր այդ տարօրինակ հեռագրին. վեր կա՛ց ու եկո՛ւր. հրաչալի՛, բայց ինչպե՞ս, ինչո՞վ, ինչո՞ւ, կարծես Ավչալային եմ գալու[1]: Ո՛չ. չհոգը ըսելով ես հիմա բնավ տրամադիր չեմ Կովկաս գալու, եթե գալս բացարձակ անհրաժեշտություն չէ: Ես հիմա կ՝ըշտապեմ Պոլիս երթամ, որ կերպ մը պլխուս ճարը տեսնեմ: Եվ վերջապես աղեկ մը չեմ հասկընար, ի՞նչն է որ իմ ներկայությունս այդ աստիճան անհրաժեշտ կը դարձնե: Եթե ձեր նկատողությունները ոճին ու բովանդակությանը կը վերաբերին, ես այնքան ալ անհասկացողը չեմ, բավական է երեսը նշանակիք և երկու բառով հայտնիք ձեր կարծիքը, և ես կ՝իմանամ արդեն ընելիքս՝ ջնջեմ, փոխեմ, թե ինչ: Եթե նկատողությունները ավելի սկզբունքներուն ու դասավորությանը կը վերաբերին, այսինքն սխեմային, անշուշտ ավելի վիճելի պիտի ըլլան ու բնականորեն քիչ մը երկար: Բայց համենայն դեպս ինչ և ինչքան ալ «անհաչիվ» ըլլան այդ նկատողությունները՝ մեկ կամ երկու գիշերվան գործ է, ո՛չ ավելի: Կ՝ընդունիմ, ախորժելի աչխատանք չէ, բայց ի՞նչ կրնանք ընել, վերջին 2-3 ամիսը մոտ 20 նամակի թուղթ նկատո-

դուքյուններ գրած կ'ըլլամ քեզի այդ չարաբաստիկ ձեռագրիս վերաբերմամբ, կը կարծեք ինծի համար շա՞տ հաճելի է:

Եվ վերջապես եթե այդքան անթիվ են փոփոխելի ու վիճելի տեղերը, միթե զարմ արժե՞, չէ՞ որ միևնույն է. այս տարի այլևս հավիվ թե կարողանամ այնպես ուղղել և սրբագրել, որ ձեզի ընդունելի դառնա, վերջն ալ նկարներն ու կլիչեները հասնին, որ տանիմ ու տպել տամ այս տարի[2]: Իմ կարծիքովս ձեռագրիս էջերուն մեջը մաքուր թղթեր ավելցուցեք, երբ ազատ ժամանակ կ'ունենաք քիչ-քիչ ձեր նկատողությունները կ'ընեք մեջը, վերջը օր մըն ալ կ'ուղարկեք ինծի, ամեուր կ'աշխատիմ ուղղեմ, ինչ որ ուղղել կամ փոխել կարող եմ. ինչ ալ որ խելքս չի կարեց կամ համակարծիք չեղա, ժամանակ կ'ունենամ ձեզի գրելու: Գործը դյուրացնելու համար այս ալ ըսեմ, որ ձեր անմիջական ուշադրությունը ավելի առաջին երեք մասերուն դարձուցեք. որովհետև Ե.-րդ մասը հանելես եռքը հիմա կարգը եկած է Դ.-րդ մասին: Ջավոյի պատմություններու պատճառովը ես ալ հիմա ստիպված եմ մանկապարտեզի հետ մոտեն ծանոթանալու և եկած եմ այն եզրակացության, որ առաջին երեք մասերեն ավելին պետք չէ անցնիլ փոքրիկներուն հետ. այնպես որ 4-րդ մասը կ'անցնի առաջին տարվան սկիզբը, և իմ կարծիքովս երրորդ մասն ալ պիտի ըլլա ձեռագիրը ամբողջովին, միայն նյութը քիչ մը ավելի թեթևցած, քանի որ հիմա եղած տակի փոքրիկ ձեռագիրները կը ջնջվին, այլև դանազան տեսակետներե պետք եմ համարեր ո, և, ս, Ո-ՈՒ-Ր չորս հոդվածները տանիլ 4-րդ մասը: Ես հիմա այս փոփոխություններովն էի զբաղված, որ ստացա Հեռագիրը:

Իսկ եթե իմ կարծիքիս հակառակ, դուք նորեն լրջորեն կը ցանկաք գալս և անհրաժեշտ կը համարեք, խնդրե՛մ, գրեցե՛ք գամ: Միայն գիտցած եղեք, որ 2-3 չաբաթեն ավելի մնալ չեմ կրնար, այլև ճամբու համար գրամ փոխադրեցեք, անշուշտ բոլորովին անկախ այն հաշվեն, որ մինչև հիմա ուղարկեր ես և ուղարկելու ես գոնե մինչև սեպտեմբեր-հոկտեմբեր, մինչև մերոնց կարող ըլլամ Պոլիս փոխադրեմ:

Ուրեմն կ'ըսպասեմ ձեր նոր կարգադրությանը, և հույս ունիմ, որ չեմ սպասելու նորեն երկուք ու կես ամիս:

Սրտագին բարևներով՝ Լևոն

1910 մայիս 8

Լոզան

100. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, ամբողջ ձմեռը ես զբաղված էի «Լուսաբերով» և այբուբենի ու առաջին տարիներու լեզվի դասավանդումը ա՛յն աստիճան արդեն ինծի հետաքրքիր է, ա՛յն աստիճան մտածելի եմ ու մշակեր նյութս ներսով-դուրսով, ուրիշ խոսքով՝ արդեն այն աստիճան մտեր եմ գործին մեջը, որ նույնիսկ կամքիս հակառակ, նույնիսկ ձեր նառն ու ձախ ձեռքով վերարերմունքին դեմ անպամ ինծի անկարող կ'ըզգամ նույն հանդիսատ անփութությամբը գործին վերաբերվելու: Կը փորձեմ քանի մը խոսքով պարզելու ձեզի իմ նոր տեսակետներս, որ դուցե թեթևություն ու արագություն մտցնեն մեր աշխատանքին մեջ և հնար տան գոնե մինչև հոկտեմբեր-նոյեմբեր գործը հրապարակի վրա դնելու:

Ես նախ «Լուսաբերը» կազմեցի և բոլորովին հակառակ էի Ուղեցույցին, բայց որքան նյութի մեջը խրվիլ սկսա, այնքան ավելի զգացի Ուղեցույցի հիմնական կարևորությունը, զգացի, որ մեր հիմնական ընելիքը, գոնե կարդալ-գրել սորվեցնելու համար Ուղեցույցն է, դասագրքեն անհամեմատ ավելի անհրաժեշտ: Եվ նատեցա Ուղեցույցը պատրաստելու: Ինչքան մշակել սկսա հարցերը, թե՛ տեսականորեն և գործնականապես դասելը, այնքան ավելի ու ավելի դժգոհ ու անբավական սկսա զտնել դեպի մեր «Այբբենարանը»՝ թե՛ հինը և թե՛ իմ ձեզի ուղարկածս, որը իր բոլոր էական կողմերովը հիմնված է հինի վրա. միակ ջանքս եղեր էր արտաքին պարզություն տալ, ավելի սիրեմը պարզ դարձնել և որքան հնար է չուտ ամբողջական պատմություններու անցնիլ, կրցածիս չափ կենդանի: Ուղեցույցի վրա աշխատած ժամանակս հետզհետե գիտակցիլ սկսա, որ այդչափը հերիք չէ և որ մեր «Այբբենարանը» հիմնապես պետք է փոխվի: Մինչդեռ «Լուսաբերը» արդեն կազմեր էին, ուղարկեր ձեզի և իմ միամիտ համոզումովս սրբագրվելու և տպագրության պատրաստվելու վրա էր, այնպես որ ո՛չ ժամանակ, ո՛չ ալ հնար ունեի նորեն հիմնական փոփոխության ենթարկելու և կը մտածեի հաջորդ տպագրությանը լրացնեմ, իհարկե, նախապես քեզի հետ համաձայնության գալես ետքը: Առայժմ միայն ծավալը փոքրացնելով զրեցի, որ Ե-րդ մասը թողնեք, որովհետև դեռ հին րուբինայի ազդեցության տակ չէի համարձակեր «Այբբե-

նարան» հրապարակ հանել «կիսատ», բայց թե՛ տեսական և թե՛ գործնական ավելի հասուն ու կտրուկ մտածումով, այլև մանկապարտեզի կազմի և մյուս առարկաներու աստիճանն ու կապակցումը աչքի առաջ ունենալով՝ արդեն վճռեր էի Դ-րդ մասն ալ հաջորդ տարվան թողնելու, որ եկավ նշանավոր հետազիրդ: Դուրս եկավ, որ դեռ ոչինչ ըրված չէ և դեռ ամեն բան նոր պիտի չինվի: Սկիզբը չատ սրտիս դիպավ ձեր այդ անտարբերությունը, բայց վերջը հանկարծ ուրախացա. ամեն չարի տակ բարիք մը կա: Վճռեցի՝ անմիջապես ընեմ, ինչ մտադիր էի զալ տարի ընելու: Կը նշանակե «Լուսաբերը» տեսակ մը նորեն կազմել, բայց ոչինչ, աշխատանքը ինծի չի վախցներ, մանավանդ որ հիմնական նյութերը քիչ փոփոխություններով կարելի է նորեն չահագործել: Միայն, անշո՛ւշտ, եթե առաջարկած փոփոխություններս ձեր ալ համոզումն են և եթե դուն ալ համաձայն ես նո՛ւյն հիմքի վրա կազմելու արևելյան «Լուսաբերի» նո՛ր «Այբբենարանը»:

Մենք «Լուսաբերի» հատակագիծը կազմելուատեն չատ կը խարխաբեինք ու կ'աշխատեինք հետևինք լավագույն օրինակներուն: Իսկ այն ամենը, ինչ որ մեզմե ենք մեջը դրած, ինչ որ մեր սիսթեմի էականն է եղեր, նո՛րը, թա՛րմը, իսկապես վերաբերեր է դասավանդության եղանակին և ո՛չ դասագրքին, բան մը, որ դասագրքի մեջ կա՛մ բնավ չէր արտահայտված, կա՛մ չատ քիչ ու սքողված, գլխավորապես տատերու հաջորդականությունը. որ մեր գրքի ամենամեծ առավելություններեն մեկն է, մանավանդ եթե քիչ մը ավելի պարզ ու խոր զարձնենք նոր մշակումներու ժամանակ: Իսկ այն, որ փոխանակ հնչյունի տառը հիմք զարձնելով ազատված ենք երկար ու չոր նախապատրաստություններեն, որ բոլոր զգայարաններու մասնակցությամբ և անմիջապես կարդալ-գրելու դիմելով անչափ դյուրացած, խորացուցած, բնական ու կենդանի ենք զարձուցած այբուբենի սորվիլը, այդ բոլորը միայն մեր գլխուն մեջն է եղած և նույնիսկ մեր գլխուն մեջը ո՛չ այն պարզությամբն ու այն մե՛ծ կարևորությամբը, որ ան իսկապես ունի: Հնչականի դեմ բոլորը և մեր սիսթեմին մոտիկ բան մը հիմա հո՛ս ալ սկսած է ծայր տալու, վիպյուլը հակադրելով փոնետիկին: Այսպես ալ գրության տարրերուն մեջ մեր հաջորդականությունը մոցընելը, տատերու քանի մը գործածությունները իրարմե զատելը, բաղաձայնը երբեք առանձին չի հնչելը և ուրիշ բազմաթիվ մանր ու խոշոր կետեր մեր գլխուն մեջն են եղեր միայն, և ատոնք են իսկական արժեք

ունեցողը կարդալ-գրել սորվեցնելու համար: Այբուբենը սորվեցնելու համար միակ կարևորը, էականը, անխուսափելի գործնական պահանջը մեթոտիկան է. դասագիրքը երկրորդական է մինչև վերջը, իսկ սկիզբները գործնականապես բո՛լորովին ավելորդ: Երբ այբուբենը սորվելու համար տպագիրքն կ՝ըսկսեին՝ «Այբբենարանը» իմաստ ուներ, իմաստ ունեին և նորմալ բառերը, և նորմալ բառերու նկարները և բառերու շարքերը և անկապ նախադասութիւններուն շարքերը, մեկ խոսքով՝ այն ամենը, ինչ որ կը ներկայացնեն այս վայրկյանիս, այս կամ այն տարբերութիւններով, բոլոր աշխարհներուն «Այբբենարանները», թեև շատ-շատերը արդեն կ՝ըսկսեն ձեռագիրեն. ամեն բանի մեջ ալ շատ ծանր կը կատարվի հին ձևերու մահը, ատոնց ընդօրինակումովը և մեր «Լուսաբերի» այբբենարանը: Եվ ինչքան ալ գլխունուս զոռ տանք, շատ ավելի հեռուն երթալ չենք կրնար, որովհետև այս ճամբով հեռուն երթալ չի կարելի. նոր գինին հին տիկի մեջ չի կարելի լեցնել[1]: Հենց որ տպագիրեն սկսելը մեկ կողմ թողինք, **մեկ կողմ պիտի թողնինք** և «Այբբենարանը», որովհետև կը դառնա այլևս ապսուրտ: Պետք է սորվեցնինք գրելով, պիտի սորվեցնինք խոսքով, պիտի սորվեցնինք կենդանի խոսքով, պիտի սորվեցնինք **անե՛լ տալով, իրեն, դասարանի՛ մեջ,** կապելով իր մյուս դասերու ժամանակ լսած, դիտած կամ նկարած նյութերուն, բառերուն: Հոս արդեն բառի կամ նախադասության իմաստի ու անիմաստի հարց ըլլալ չի կրնար, կը դառնա իր ամբողջ աշխատանքի մեկ նոր կողմը և անմիտ վանկերն անգամ իրենց հետաքրքրութիւնն ու գրավչութիւնը կ՝ըստանան: Ինչպես կը տեսնաս, դասագիրքը հոս ո՛չ մեկ գործ չունի. որովհետև այն մեկերկու անկապ ու բռնազբոսիկ նախադասութիւնները, որ տղուն կարելի է կարդացնել տառերը անոր կենդանի ճամբով սորվեցնելեն և կատարելապես յուրացնելեն ետքը, այն աստիճան խեղճ ու անպետք բան է, որ ես Գայանյան դպրոցը դաս տալու ժամանակ[2], առանց այս հարցերու վրա մտածելու անգամ, շատ պարզ կը տեսնեի. ձևական և շատ տեսակետներեն ալ բավական անհարմար բան մըն էր գիրքը բանալ ու այդ ձեռագիրները կարդացնել տալը. հետաքրքրութիւնը կ՝ըսկսի հոն, ուր պատմութիւնները կ՝ըսկսին, հետաքրքրութիւն **պատմութիւնը կարդալու,** բայց երբեք **տառը սորվելու:** Այնքան ժամանակ, որ դեռ քիչ-քիչ կենդանի ամբողջութիւն մը տալ չենք կրնար, քանի դեռ երեխան գոնե այբուբենի տառերուն կեսը չգիտե, անոր ձեռքը

գիրք դնելը անմիտ բան է, առնվազն ձեւական բան է, իրական ոչ մեկ արժեք չունեցող. բայց հաճախ շատ վնասակար, որովհետեւ ծույլ և անպատրաստ ուսուցիչը կը վերադառնա հին ու մեքենական կարգալ տալով սորվեցնելուն «Այբբենարանին» վրա, որովհետեւ ո՛չ մտքի լարում, ո՛չ նախապատրաստութեան և մտնաւորոր ջանքի պետք կա: Ո՛չ. սկզբի համար ո՛չ մեկ դասագիրք. աւտոր վոխարեն մանրամասն լրիվ Ուղեցոյց մը ուսուցչին ձեռքը, ուր բացատրված ըլլան նախ մեր սկզբունքները և վերջն ալ դասերը գործնականապես մշակված ամբողջ այբուբենի համար, մանաւոր մանրամասնութեամբ առաջին մասը: Իմ Ուղեցոյցս պտնե այս ձեւով եմ ես կազմեր և այս ձեւով է, որ հիմա մշակելու վրա եմ:

Երբ 20 տարի մը չափ արդեն գրել-կարդալ պիտի, արդեն բավական վարժութիւն ունի, և տարի, հնչյունի մեջ եղած կապը կատարելապես յուրացուցած է, կարելի է անցնել գլխատառերուն նորեն դասարանական կենդանի ճամբով, ամեն ինչ իրեն, փոքրերին գրել ու կարդալ տալով կամ անոր գիմացը գրելով: - Գլխատառի հետ կրնա գար և «Ընթերցարանը», որուն նպատակը այբուբեն սորվեցնելը չէ. Այբբենարան չէ, այլ փոքրիկ, դրավիչ, կենդանի նյութերով փոքրիկ պատմվածքներ ու ուսանավորներ, որոնք նոր հետաքրքրութիւն պիտի բերեն իր աշխատանքին, տեսակ մը կրկնութիւն ու նոր ձեւի վարժութիւն արդեն սորվածի, այլև հետզհետե նոր սորվելիք տառերուն ու գլխագրերուն համար իր արդեն ստացածը լավ յուրացնելու միջոցներեն մեկը: Մինչեւ հիմա միայն ի՛ր կամ իր ներկայութեան, իր մասնակցութեամբ գրվածը կը կարդար, այժմ աստիճան մը ավելի կը բարդանա՝ պիտի կարդա ուղղակի. ուրեմն ընթերցման ճկունութիւն և նախապատրաստութիւն տպագրին անցնելու: Իմ ծրագրովս երկու տպագրական երեսի չափ է ըլլալու այս ձեռագիր մասը, իր մեջ ունենալով բացի գլխատառերեն տասը Հատի չափ կրկնակ հնչյունները (այսինքն արդեն սորված հնչյունի մը նման հնչյուն մը, կամ նույն հնչյունի մը նոր տառը), ուր արևմտյան հնչական առանձնահատկութիւնները աչքի առաջ առնելով ստիպված պետք է չեղիմ արևելյանեն և թավ բազաձայնները պիտի դնեմ նուրբերուն տեղը (փ՝ ք, թ փոխանակ բ, գ, դ): Այս բոլորը իհարկե երկրորդական է առայժմ սկզբունքի տեսակետեն, կը գրեմ, որ ավելի պարզ պատկերացնես գրքի առանձնահատուկ նոր ձեւը: Այս 32 երեսն է, որ պիտի տպվի այս տարի իբրև «պատրաս-

տական տարի» առանձին ծալկոցներու ու մանկապարտեզներու համար, բոլորը իհարկե ձեռագիր, այլև ապագային անպատճառ գոնավոր նկարներով: Իսկ արևելյան «Լուսաբերի» մեջ այս պիտի դառնա գրքի առաջին մասը, որուն պիտի հաջորդե երկրորդ մասը՝ արդեն տպագիր, ուր խմբված պիտի ըլլան լեզվի մնացած բաղաձայնները, երկբարբառները և տառերու երկրորդ գործածությունը, և-ը, ո-ն (իբրև վո) և կրճատվող ը-ն ալ պիտի գան հոս: Մինչ մեր արդի «առաջին ընթերցարանը» կը դառնա գրքի երրորդ մասը, անշուշտ որոշ փոփոխություններով, որոնցմե գլխավորը իմ կարծիքովս ձեռագիր հոդվածներու մուցնելը պիտի ըլլա, տակի ավելորդ հարցերու վերցվիլը. նաև ուրիշներ: Իսկ նույն այդ երկու մասերը, իհարկե որոշ հարմարեցումներով, ուրեմն սկսելով տպագրեն, կը դառնա արևմտյան Լուսաբերի «առաջին տարին»: Ուրիշ խոսքով՝ արևմտյանն ու արևելյանը կը դառնան ձևով ալ, էապես ալ միևնույն բանը, միայն Հոտ մեկ կազմի մեջ, իսկ Պոլսի համար երկու ուրույն չապիկի մեջ: Այս արտաքին նմանությունը իմ կարծիքովս պետք է ձգտենք, որ ունենանք, ամբողջական տպավորության համար: Վերջապես սա ալ երկրորդական հարցեր են առայժմ:

Ուրեմն ամփոփելով՝ ամենեն առաջ **Ուղեցույցը**. տոիկա է հիմքը: Իսկ «Լուսաբերը» կը դառնա սիրուն ու աշխուժ **ընթերցարան** մը, ամեն արտաքին մեթոտիկ բեռներե ազատ և ներքուստ ալ ո՛չ մեկ հակասություն ուսույչի պաշտոնը խլելու, ո՛չ մեկ ձգտում **նոր տառ**[3] **սորվեցնելու**, այլ պարզ ու կենդանի ընթերցանության գիրք մը ծանոթ տառերու[4] սահմանին մեջ և նոր ավելցող տառերու ընթացքով, ուրիշ խոսքով՝ մեր «Լուսաբերի» Ա. տարվա երկրորդ մասի փիզիոնոմիայով ու ոգով, եթե մանավանդ հոն ալ ավելցնենք ձեռագիր հոդվածներ, ինչպես որ ըսի:

Իսկ այբուբենի դասավանդումը այս ծրագրով կը դառնա երեք աստիճան: Առաջին աստիճանը, առանց որևէ գրքի, մեր մեթոտով ուսուցումն մոտ 20 տառի (մեկ տառին մեկ հնչյուն, մեկ հնչյունին մեկ տառ. երկաստիճան կամ եռաստիճան հնչյուններեն միայն մեկը): Ուղեցույցի մեջ մանրամասն մշակված պիտի ըլլա, առաջ որ տառը, ետքը որը, ինչ ճամբով, ինչ եղանակով, ինչ բառերե և նախադասություններե կրնա օգտվիր և ինչպես: Իսկ «Ընթերցարանի» մեջ՝ «Լուսաբերի» մեջ կարելի է սկիզբը դնել այդ արդեն սորված տառե-

բուն ցուցակը և ավելացնել տակը՝ «Տե՛ս այս տառերու ուսուցման մանրամասն ու գործնական եղանակը մեր Ուղեցույցի մեջ»: Ես այդ ցանկն ալ ավելորդ կը համարեմ, բավական է չատ մանր տառերով дозволено цензурою-*ի*[5] *տեղը գրել միայն վերի մակագրությունը, թե «անցած տառերու համար տե՛ս Ուղեցույցը»:*

Այբուբենի դասավանդման երկրորդ աստիճանը կ'ըսկսվի գլխատառերով. բացի գլխատառերեն բաղաձայններու երկրորդ աստիճանը, ամեն լեզվական բարդութենե խուսափելով, և-ի տեղ եւ, ը-ը միչտ կը գրվի: Ուսուցումը նորեն բոլորովին ուսուցչի վրա, դասարանը, մեր Ուղեցույցի առաջնորդությամբ: «Լուսաբերի» մեջ այս աստիճանին ընթերցարանը կը ներկայացնե առաջին ձեռագիր մասը. ամբողջական, մանրիկ, մանկական խաղեր, ոտանավորներ, կատակներ և պատմություններ:

Այբուբենի դասավանդման երրորդ աստիճանը կ'ըսկսվի տպագիրով, որը իմ խոր համոզումովս բնավ չի պիտի չտապենք չուտ տալու, ինչպես ըրեր ենք տպված «Լուսաբերի» մեջ, ավելորդ բարդություն և խառնակություն մտցնելով դեռ բանի էությունը կարգին չըմբռնած երեխայի գլխուն մեջ: Այս աստիճանի վրա է, որ կը տանք բոլոր դժվար տառերը և հնչական բարդությունները: Այս աստիճանի ընթերցարանը կը դառնա «Լուսաբերի» երկրորդ՝ տպագիր մասը հյուսված ձեռագիրով ալ: Այս աստիճանի վրա երեխաները այն աստիճան վարժված են հնչյուններու ու տառերու մեխանիզմին, որ դասարանական աշխատանքը, որ նորեն հիմքն է սակայն, կարելի է՝ բավական սեղմել, արագացնել և հաճախ ընթերցարանի հոդվածներով ալ կարելի է բավականանալ նոր օրենքը կամ տառը սորվեցնելու համար: Չէ՞ որ այս աստիճանի վրա մենք արդեն եկած հասած ենք հին սխեմին և երկու ճամբով էլ կրնանք տաներ մեր աշխատանքը թե՛ տպագիրեն ձեռագիր, թե՛ ձեռագիրեն տպագիր: Ես մինչև անգամ կը նախընտրեմ թե՛ արագության և թե՛ պարապելու եղանակը փոխելու համար անցնիլ գրքով, տպագրի՛ վրա. արդեն աշակերտները հոս հասած ժամանակ իրենք ալ կ'ընտրեն տպագրի վրայով. միայն ամեն անգամ, որ դժվարության հանդիպինք, դառնալով մեր հիմնական մեթոտին: Ահա՛ խոչոր գծերով իմ արդի ըմբռնումս:

Հիմա չգիտեմ, դուն ալ ինծի համակարծիք ես, թե ոչ: Եթե այո՛, խնդիրը չատ կը դյուրանա:

1/ Անմիջապես տետրակս ինձի կը վերադարձնեք՝ վրան նշանակելով Բ-Դ մասերուն մեջ եղած հոդվածներուն ո՛րը հաջողած կը համարեք, որ՛ը կը կարծեք փոփոխութեան պիտի ենթարկվի և ինչ ուղղութեամբ և որը պետք է բոլորովին անդին նետվի. աչքի առաջ ունենալով ներքինը, էականը միայն, որովհետև նոր դասավորութեան ազդեցութեան տակ նոր խմբագրոմով նորեն ձեզի են գալու վերջը, և ընդհանրապես ոճի և լեզվի մասին ինչ նկատողութիւն որ ունիք:

2/ Ես ալ քեզի կ'ուղարկեմ, եթե կ'ուզես, ամեն մեկ աստիճանի մեջ ինչ տառ դնելս և ինչ հաջորդականութեամբ, տեղ-տեղ և ինչուն. որպեսզի վերջը սիսթեմի մասին այլևս խնդիր չի մնա մեջտեղը:

3/ Մեկ-երկու չաբաթեն երթամ պիտի Պոլիս պաշտոն գտնելու: Ամառը հոն ես կ'աշխատիմ և կը կազմեմ այս նոր ծրագրով, հին ու նոր նյութերով «Նախապատրաստական տարին», այսինքն 32 երես ձեռագիր ընթերցարանը: Այլև կարգի կը դնեմ վերջնապես Ուղեցույցը:

4/ Ամենուշը մինչև հուլիսի վերջերը կ'ուղարկեմ քեզի, հավանորեն Ուղեցույցին հետ:

5/ Եթե օգոստոսին ձեռագրի արտագրութիւնը և նկարները պատրաստվին, որոնք թվով հազիվ 50 ըլլան և որոնց կլիշեները այլևս կա՛մ Մոսկվա պիտի պատրաստել տանք, կա՛մ գուցե Պոլիս, կ'երթամ, մոտեն կը տեղեկանամ:

6/ Այնպես որ՝ տպելը շատ դարոտակ բան է՝ սեպտեմբերի վերջերը. դիւցուք հոկտեմբերին կարելի կ'ըլլա հրապարակ հանելը, որ այնքան ալ ուշ չէ. փոքրիկ դպրոցները դեռ շատ ավելի ուշ կը մտնեն կարգի. և շատ ավելի ուշ ալ կ'ըսկսին կարդալ-գրելու: Եվ վերջապես Ուղեցույցը կարելի է և ավելի շուտ տպել, որ ավելի կարևորն է և անմիջապես պետքին. ընթերցարանը միայն Նոր տարվա մոտերը կրնան գործածել: Բայց մինչև «Լուսաբերը» վերջնական վավերացում չըստանա, ես ո՛չ Ուղեցույց կը տպեմ, ո՛չ ալ որևէ ձայն կը հանեմ:

7/ Շատ լավ կ'ընես, եթե դուն ալ այս ամառ նստիս և կազմես արևելյան Առաջին տարվան առաջին մասը իր Ուղեցույցին հետ: Եթե կարող ըլլաս ավարտես ու ինձի ուղարկես գոնե ձեռագիր եղող մասը, որուն համապատասխանը այս տարի տպագրելու եմ, տպագրելես առաջ կրնամ վերջին սրբագրութեան ու լրացման ենթարկել քու գյուտերովդ, քու նոր նյութերովդ, որով թե՛ բանով մը ավելի կը հարըս-

տանա գրքույկը և թե՛ մանավանդ ավելի կը մոտենան իրար արևելյանն ու արևմտյանը:

8/ Ինչ կը վերաբերի արևելյանի նոր հրատարակությանը, դուցե կը տպիք Հունվարին, բայց կը կարծեմ գալ տարի, առաջիկա ձմեռ վերջնական սրբագրության և մշակման ենթարկելեզ եղբը:

Այս բոլորը, իհարկե, միայն այն ժամանակ, եթե իմ մտածելու եղանակիս ու առաջարկած հիմնական փոփոխություններուս հետ էապես համաձայն ես: Եթե ոչ, ինչքան ալ ցավիմ, այս տարի այլևս հասցնել չենք կրնար, որովհետև անհրաժեշտ է, որ նախապես ընդհանուր եզրակացության հասնինք: Գալ տարի կա՛մ դուք կու գաք Պոլիս, կա՛մ ես կու գամ Թիֆլիս, այլևս չգիտեմ:

Շուտով պատասխան տուր այս նամակիս և համենայն դեպս ձեռագիրս ուղարկե չուտով ինծի հիշած նկատողություններովս:

Ջերմ ու սիրալիր բարևներով՝

Լևոն

1910 մայիս 10 Լոզան

101. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<Հունիս-Հուլիս, Լոզան>[1]

Ա՛խ տղա, այդ աստիճանի ալ անշնորհք: Հեքիաթներդ[2]*, վիպատառաններդ*[3] *ու քեֆերդ մի՞թե արդեն բոլորովին մոռացնել են ոտքեր քեզի Վերնատան անդամները, որոնք արևելքեն ու արևմուտքեն չատ կսպասեն քեզմե լուրերու:*

Ի՞նչ բանի ես, ի՞նչ կ'ընես, ի՞նչ կը մտածես, ի՞նչ կը գրես: Քու մասին լուրեր կը հասնին հոս համբավի թևերուն վրա: Տարվա սկիզբը լրջորեն կը պնդեին, որ ամսագիր ես հրատարակելու, ան ալ խաժակի հետ միասին[4]*: Խաժակը, դուն ու ամսագիր. ի՞նչ իրար բռնող բաներ. չատ ուզեցինք Դերենիկի հետ արժանանանք այդ «մազազու» ամսագրին, բայց ավա՛ղ, իզուր. ան ալ մեզի դավաճանեց: Հույսերնիս կոտրած ապաստանեցանք «Հորիզոնի» էջերուն, ավա՛ղ, Լեոյի «Հորիզոնը»*[5]*. Վերնատան աստղը Լեոյի «Հորիզոնի» վրա, բաբե՛, ինչ անփառունակ երևում: Ո՛վ ժամանակներ, ո՛վ մարդիկ: Ի՞նչ կրնայինք*

ըներ, երբ քու ձայնդ լսելու ուրիշ հնար չունեինք, ապատանեցանք Լեոյի «Հորիզոնի» էջերուն. և լսեցինք քու ձայնդ[6]. Է՛, չէ՛, ատիկա քու ձայնդ չէր. իհնչ վերնական ձայն դուն կրնայիր հնչեցներ Լեոյի Հորիզոններուն վրա: Զգիտեմ, դուցե «ցոցխալ» ուտելու համար պիտանի են լեռները վերնականիդ, համենայն դեպս անոնց Հորիզոնները իսպառ անպետք են քեզի: Այս ճշմարտությանը այն աստիճան համոզված է Դերենիկը անվիճելի(որեն), որ պատրաստ է ինքը կատարյալ անձնուրացությամբ վերնական ամսագրի մը ծանրությունները իր ուսերուն առնելու, միայն թե քեզի ու ինծի համար փայլելու պատչաճ Հորիզոն մը բանալու կարողանա. կը լսե՞ս, ո՛վ վերնականդ: Գալուն պես այդ հարցը դրվելու է կարմիր սեղանիդ վրա, այնպես որ ժամանակին հավաքե՛, խնդրեմ, բոլոր քու փաստաբանական և չգիտեմ ինչական «ժուռնալներդ» (որ թարգմանի դիվլադ) սեղանիդ վրայեն: Երկու կետ միայն թեթև մտահոգություն կը պատճառե Վերնատան «լոզանական բաժանմունքին». ուրկե՞ պիտի ճարվի այդ ամսագրի վողը և ընթերցողը. բայց այդ կարգի երկրորդական հարցերու վրա իհարկե կանդ առնելը չարժեր, երբ խնդիրը մեր վերնական Հորիզոններու բացման մասին է:

Եվ քանի որ այդ Հորիզոնները դեռ չեն բացվեր, ես կ'աշխատեմ առայժմ մեր «Լուսաբերի» ցոլքերուն տակը և այդ այգածին լույսի ցոլքերեն զուրկ չի պահելու համար համայն Թյուրքիո մատաղ սերունդն ու անոնց դաստիարակիչները, նաեւ գրեր եմ... ամբողջ Հասոր մը[7]: Ես, բնա՛վ, երևակայել անգամ չէի կրնար, որ ընդունակ եմ այդ աստիճանի երկար տրակտատ մը չարադրելու: Բոլորը Ստեփանի մեղքն է. ինծի ու քեզի այն տեսակ գործի մը լծեց, որուն տակը մտնելը կա, դուրս ելնելը չի կա: Վերջապես ինծի՞ ինչ. տուժողը Հայոց ազգը: Այդ երանելի ազգը չատ այս ու այլ կարգի բարբարոսություններու ենթարկվեր է արդեն և «ողջամբ» տակեն դուրս եկեր, իմ տրակտատիս տակեն ալ կերպով մը դուրս կու գա:

Բեզմե քանի մը տող առանալու միամիտ հույսերով և ջերմ համբույրներով՝ մնամ խոնարհ ծառա՝

Լևոն

102. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<1911 թ. սկիզբ>[1]

Սիրելի՛ Ստեփան, այս ձեռագիրները ուղղակի Հոգիս Հանեցին. երկու ամիս է ինծի ալ չարչարեցին, խեղճ արտագրողներն ալ: Ծայրեն ծայր ստիպված եմ երկրորդ անգամ արտագրելու. կտորներ կան, որ երրորդ ու չորրորդ արտագրությունն է. այնքան տարի-բերի, զահլաս գնաց. վերջին վայրկյանին նորեն երկու ը-ի սխալ եմ նկատած, իսկ տառերու անճոռնիությունները անչափ, բայց ալ հերիք է. ասկե աղեկը հոս գլուխ չի գար: Ահա՛ կը ղրկեմ քեզի, չուտով չինել տուր կլիշեները և կը ղրկես մաս-մաս. Արծիվին[2] *կը հարցնեմ ղրկելու ձևի մասին ու քեզի կը գրեմ: Այժմ կլիշեներու մասին երկու խոսք: Նախ՝ ամեն մեկ նոմեր մեկ կլիշե պիտի ըլլա, երես-երես միտք չունի, այսպես ավելի ազատ է. իսկ ինչ որ դրամական չահ գուցե ըլլա, ան ալ կը կորչի, որովհետև շատ պարապ տեղեր են ըլլալու: Բացի տակե ես կը ցանկայի, որ հնար եղածին չափ ձեռագիրներն ու նկարները առանձին-առանձին կլիշե ըլլային, ոչ միասին ձույլ: Առջևի 5-6 կտորներու համար շատ դյուրին է և մինչև անգամ շատ ավելի հարմար, մ տառեն սկսած ավելի դժվար է, նկարի ու ձեռագրի տարածությունները շատ են քիչ. եթե արժե և եթե կարելի է՝ առանձինը միշտ գերադասելի է. ապագա փոփոխություններու ժամանակ կը չահինք և նույն բանը հազար անգամ չինել չենք տար: Համենայն դեպս կը պատվիրես, որ բոլոր կլիշեները խիստ կտրված ըլլան, ավելորդ պարապ մասեր չանին իրենց քովերը: Երեսներուն երկայնքը կը հիշես $17^1/_2$ սանտիմետր է, իսկ լայնքը 12,4 սանտիմետր: Ձեռագիրները բոլորը չափով են և իրենց իսկական մեծությունը: Մնացածը դուն ինծմե աղեկ գիտես:*

Ա. տարին կազմած եմ գրեթե. մեր գրականությենեն ավել առնել կարելի չէ առաջին տարվան համար, ինչպես որ աբևեյանին ալ ոչինչ առնել չի կրցանք. այն 8– 10 կտոր մանր ժողովրդական կտորներեն զատ, որ մտցուցած եմ արդեն մեջը, 80 երեսը լրացնելու համար հանած ու բերած եմ Բ. տարվա նյութերեն. ատիկա շատ ալ բնական եղավ, չէ՞ որ $^1/_2$ տարի հոս միշտ առաջ է: Գործնական հարմարություն

մըն ալ ունի, որ նկարները պատրաստ են: Իսկույն գրե՛ տուն[3] և բերել տուր Լուսաբեր Բ. տարվա հետևյալ հոդվածներուդ բնագիր նկարները և նոր կլիշե չինել կու տաս:

1/ Աստծու սեղանը (ավելի փոքրացնել նկարը)

2/ Ճամփորդներ

3/ Բրդոտ խաղընկերը (լայնքը ըլլա 12 սանտիմ.)

4/ Շալիկները

5/ Խաղը

6/ Մանուշակները (ավելի փոքրացուցած)

7/ Ո՞ւր է իմ արևը (եղածի $^{3}/_{4}$ մեծութեան)

8/ Զախչախ թագավորը (ճակտի մեծ պատկերը փոքրացուցած իր $^{3}/_{4}$ մեծութեան)

Ասոնցմե զատ աչքի առաջ ունիմ նաև հետևյալ հոդվածները, որոնք նկար չունին.

1/ Դպրոցի ճամբան, 2/Դասին, 3/ Եկեղեցին կորել է, 4/ Գարնան կարոտ. նեղը որ իյնամ՝ կը վերցնեմ նաև Փոքրիկ խանութպանը, թեև չեմ կարծեր, անոր պատկերն ալ համենայն դեպս բերել ու պատրաստել տուր (չատ քիչ մը փոքրացուցած): Հանեսը Այբբենարանը վերադարձուց մեկ-երկու մանր սրբագրութիւններով, որոնցմե օգտվիլ չէի կրնար. չեղած տառեր է գործածեր: Դեռ իրեն չեմ կրցած պատասխանեմ: Թիֆլիզեն ուրիշ լուր չունիմ, ոչ ալ դրամ: Խոստացած նամակիդ կ'ըսպասեմ, նկարներուս հարցը ինչպե՞ս ըրիր: Ջերմ համբույրներով՝ Լևոն

103. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ս, այս երեք-չորս օր է Ախիկյանեն ստացեր եմ նկարները, բայց այնպես սիրտս կոտրած է ու այնպես գլուխս խառն, որ մինչև հիմա ժամանակ չի գտա՝ բունեմ քեզի ղրկեմ: Վիգուչիկիս[1] ականջի պատմութիւնը չատ լուրջ բան դուրս եկավ. անհրաժեշտ էր անմիջական օպերացիայի ենթարկել. չաբաթ մըն է արդեն. դեռ հիվանդանոցն է մորը հետ, դեռ միչտ տաքութիւն ունի և անդադար վախի մեջ ենք, որ ավելի չբարդվի: Է՛, մեկ խոսքով՝ Պոլիսը մեզի չեկավ: Իսկ դո՞ւն ինչպես ես, սիրելի՛ս, սանաթորիական ճգնութիւնդ լրացա՞վ, առո՞ղջ

ես, ի՞նչ կ՚ընես: Գալով Լուսաբերին՝ միայն առաջիկա երկուշաբթի պիտի սկսի տպագրությունը. պատճառը մենք չենք, այլ թղթի ուշացումը. կը հետևիմ ճիշտ ու սիրուն տպագրությանը, ինչքան որ խելքս և ուժս պատեց: Առաջին տարին արդեն խմբագրած են չատոնց, վերջնական հղկումն ու սրբագրությունն է մնացած, որ հիմա անկարող եմ իմ այս հոգեկան վիճակովս: Ուրիշներուն կարդալ կ՚ուզեի, բայց երբ գործնապես սկսա մարդիկը փնտրել՝ տեսա որ անմիտ բան է. մեր ուզած գավառական ականջը և նրբազգացությունը հոս չի կա. բոլորն ալ հոհոտացած են, ամենեն թունդ գավառացիներն անգամ: Ամենեն լուրջ ճամբան՝ ինքս անձամբ գավառաբարբառներուն մեջ պրպտել ու ստուգելն է, ինչ որ կասկածելի կը գտնեմ, բայց անիկա ալ մեկ-երկու չաթաթիման մեջ ընելու գործ չէ: Կը մնա երթալ հոսանքով, ուզենք-չուզենք. կը տպենք այս տարի ինչպես որ խելքս կարեց, կ՚աշխատիմ գդուշ ըլլամ հնար եղածին չափ. հաշակս և սկզբունքներս դուն գիտես, ես ալ գիտեմ, ինչ որ դուք կը կամենաք, կ՚ընեմ ինչ որ կրնամ: Առաջին տպագրությունը թե՛ դուն, թե՛ Հովհաննեսը և թե՛ ինքս մանրամասն ուսումնասիրության կ՚ենթարկենք հաջորդ տպագրություններու ատեն. բնական և գործնական ճամբան ասիկա է. այս բոլորը մեզի՛ համար, մեր սկզբունքներուն, թե չէ դրսի խալխի համար, հանգիստ նկիր, հասա ու բարակ մեկ գին է, մինչև անգամ՝ վա՛յ չատ բարակ մանողին: Ինծի համար դեռ ամենեն անկերպարան և դժվարը վարժությունները վիճակն է. նախ՝ խմբագրելու համար պետք է սպասեմ Ա. տարվա Լուսաբերի վերջնական ձևին. երկրորդ՝ ձեռագիրներու հարցը չգիտեմ ինչպես պիտի ընենք. հոս գրել տալ չարժեր, կորած աշխատանք է. իսկ հոս հնա՞ր է: Ես ալ համաձայն եմ քեզի, որ ձեռագիրներով թե՛ ավելի մեր ծրագիրը լրիվ կ՚ըլլա և թե՛ ավելի գրավիչ, բայց եթե նեղը մնանք՝ դուցե այս տարի կարելի ըլլա առանց ձեռագրի ալ յոլա տանինք: Դամ պատկերներու հարցին: Նախ՝ եվրոպական օրինակներուն արատնկարել ալի՞ր, ինչ որ ընարեր էիր, թե՞ նպածը այն է, ինչ որ Ավետիքյանը հիմա.խրկեր է ինծի. թե այդ է՝ չատ քիչ է: Ավետիքյանի գրկածներեն՝ 1 և 2 նշանակածներդ չգիտեմ ինչա՞ր են. 3 և 4 ալվոր չէ՝ սարսափելի կատուներ են, այդ մարդը սիրուն կատու չէ տեսած իր կյանքի մեջ. շուներն ալ չնորհքով չեն: 5-ի մեջ մայրը շատ կոպիտ է և ընդհանրապես իր մեծության համեմատ նկարը շատ աղքատ է. մտածե հարցեր տաս, պիտի տեսնես, որ հետևն երթալ

չես կրնար: Ավելի գնչ ու տգեղ է երեխան լողացնելու նկարը, կարծես երեխի կռնակին արյուն առնելու վրա ըլլա. և այդ իրնչ սարսափելի մայր է: Մնացած նկարներուն ես հավան եմ, բոլորն ալ արդեն ծանոթ արտադրություններ են, մեկ քանի հատը չատ սիրուն և չատ հաջող: Այս նամակիս հետ քեզի կը ղրկեմ այն լեբուանները, որոնց պատկերները պետք է գծվին. անհաջողներուն հետ կը ղրկես իրեն, որ նկարե: Ախիկյանը իրեն հատնելիքի վերջին 50 րուբլին ուզեր է ինծմեն. չգիտեմ քու խորհրդատվությա՞մբ է, թե՞ ինքը իր կողմեն. դուցե ինծի ղրկած վերջին 50 րուբլիին հաշիվը այդ կերպով կարգադրել ես ուզեր. գնչ չես մտածած, միայն ցավն այն է, որ ես հիմա անկարող եմ. իմ այս տարվա ծակ գրպանս արդեն բոլորովին պատռվեցավ պզտիկիս հիվանդությամբը. 20-25 ռանլի չավ նոր պարտք եմ ըրած. գոնե Թիֆլիսեն ինծի հատնելիք 450 րուբլին ստանայի: Եթե «Գիրի»[2] հետ քու ունեցած թղթակցություններդ քեզի հայտնի է, որ այդ դրամը ինծի արդեն համբա է հանված, ազե՛կ, ստանալուս պես իսկույն 50 րուբլին կը ղրկեմ Ախիկյանին. իսկ եթե Գիրը ոչինչ ղրկած չէ, ինչպես ես համոզված եմ, և չոտով ալ ղրկելիք չունի, այն ատեն, սիրելի՛ս, Ախիկյանի դրամի վերջին 50 րուբլին ալ դուն հոտկե կարգադրե, թե չէ մարդը մեղք է, պիտի սպասե, մինչև Գիրը ինծի ղրկելու բարեհաճի: Դեռ ես ինքս ոչինչ ղրկած չեմ Գիրին՝ միշտ աշխատելով խուսափել կռնմնակի կարգադրություններեն. կ'ուզեի, որ քու կարգադրությամբ ըլլար այդ բոլոր հաշիվները Թիֆլիս. բայց ես հիմա այն տեսակ պայմաններու մեջ եմ խրված, որ երևի պիտի ստիպվիմ ինքս ալ գրելու, որ չտապեն, դուցե նույնիսկ հեռագրով, թե չէ պոռոը 3-4 չաբաթեն միայն կու գա: Դե՛, սիրելի՛ս, այս փարայի հաշիվները քու գահլան ալ տարին, իմս ալ, բայց ինչպես կը տեսնեմ երբեք ալ վերջ պիտի չունենան. օրը նոր, պետքերն ու հաշիվները նոր:

Միշտ լավագույն օրերու ակնկալու և ավելի ուրախ լուրեր տալու և առնելու ջերմ հույսերով կը համբուրեմ քեզի կարոտով.

Լևոն Սեղբոսյան

19 ապրիլ 1911
Կ.Պոլիս

Հ.Գ. Պատկերազիրներու նկարներուն բարձրությունը կարծեմ $1^1/_2$ սանտիմետրեն ավելի ըլլալու չէ, իսկ երկարությունը՝ $1^1/_2$-3

սանտիմետր: Բոլոր այս փոքրիկ նկարներու բարձրությունը նույն պետք է ըլլա: Քանի մը հատը հոգնակի ալ կարելի է նկարել, եզակի ալ. լեզվական տեսակետեն հոգնակին է ցանկալի (երի գործածություն), բայց այդքան պզտիկ նկարներու մեջ չեմ կարծեր, որ գործնական ըլլա: Ջնջի ինքդ ցուցակին եր-երը, եթե հարմար չես գտներ:

104. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Ապրիլի 21>

Սիրելի՛ Ստեփան, անհոգ եղիր, ստացեր եմ բոլոր կլիշեները, ստուգեր եմ՝ բոլորը կարգին է. երկու հատը թեթև արատ են ստացեր ճամբին. չգիտեմ զգալի պիտի ըլլա թե ոչ տպածի վրա: Ստացեր եմ նաև 50 րուբլիդ, չա՛տ-չատ չնորհակալ եմ. վերջապես եկավ և Թիֆլիզի 100 րուբլին (ո՛չ 150): Շուտով դրելու եմ Թիֆլիզ և ուզելու 450 րուբլին, ինչպես որ դրել ես: Քու ղրկած 50 րուբլու հաշիվը դիտմամբ չեմ խառներ այդ հաշվին մեջ, որ քու գրած թիվիդ և իմինի մեջ տարբերություն չմտնե «Գրի» համար:

Ջատիկեն անմիջապես ետքը կ՝ըսկսվի Այբբենարանի տպագրությունը. ամեն բան պատրաստ է: Դժվարը հիմա մնաց վարժությունները. նկարներն ալ, և մանավանդ ձեռագիրը. մինչև վերջնապես չկազմվի Առաջին տարին, անկարելի է վարժություններու տեքստը որոշել. խիստ մեծ կապ ունի. և վերջապես նորեն հո՞ս արտագրել տամ, թե <2 անընթ.>. հո՞տ: Դու մինչև ե՞րբ ես Վիեննա մնալու, առողջությունդ ինչպե՞ս է: Մարտ ամիսը մեզի համար ալ շատ ծանր անցավ. Վիզուչս հիվանդ էր ծայրե ծայր. առաջ չատ վախցանք՝ բժիշկները մինինժիտի մասին կը խոսեին. հիմա տևական աստիճան մը տաքություն ունի և պարբերական ականջի ցավ. իհարկե միշտ անկողին. շատ կոտրված ենք, հոգնած ու ցրիվ. մանավանդ դասերս ալ չատցեր են հիմա: Մեր ջերմ ու սրտագին բարևները քեզի. կը ցանկամ ավելի ուրախ լուրեր գրեմ քեզի ու քեզմե ալ առողջության լուրը առնեմ.

Լևոն

105. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ուսումնական խորհրդի
մեծ. պարոն ատենապետին

Հարգելի՛ պարոն:

Ներկայացնելով պատվարժան Ուսումնական խորհուրդիդ կնոջս՝ Ջավահիր Սեղբոսյանի Օսմանլիեն և անոր Լոզանի համալսարանեն ստացած մանկավարժության մասնավոր վկայականը, կը խնդրեմ հաճիք տալ կնոջս դաստիարակ-ուսուցչուհիի վկայականը, որով կինս իրավունք ունենա ազգային վարժարաններուն մեջ պաշտոնավարելու[1]: Ընդունեցե՛ք, մեծապատիվ պարոն, խորին հարգանքս:

Լևոն Սեղբոսյան

1911 ապրիլ 29
Ղալաթա

106. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս:

Վերջին բացգիրդ ստացեր եմ այն սարսափելի անունով բուժարանեդ[1], անկե եռքը ոչ մեկ լուր. ըսենք չեմ ալ զարմանար, չարունակ ճամբան ես եղած, բազմաթիվ հոգերով ու զբաղումներով. հիմա ալ նոր վերադարձած, բոլոր գործերդ իճճված ու տակնուվրա: Եվ որպեսզի Եվրոպայեն նոր վերադարձող գլխուդ թափող այդ դուշեն ոչինչ պակաս չմնա, ահա՛ կուգամ և ես իմ տրտունջներովս: «Գիրը» այս տարի իմ գլխուս գրողի խաղը խաղաց. ուղիղ վեց ամիս է հանեց հոգիս. ինծի ուղղակի կ'ապշեցնեն Ավետյանի այդ քար լռությունը իմ ամեն տեսակի բաց ու գոց, հասարակ ու ապահովագրած նամակներուս ու հեռագրիս հանդեպ, իմ ամենաճանր վայրկյաններուս: Իր պատճառովը ես դեռ պարտք եմ բժիշկներու և կը ճնշվիմ, պարտք եմ ընկերներու, որոնց վիճակը գիտես, որոնց առջև հանցավորի պես եմ. մեկ-երկու չաբաթով վերցուցած գումարներս անկարող եմ եղած հինգ-վեց ամսվան մեջ վերադարձնելու: Կարճ խոսքով՝ ինչ գլուխդ ցավցնեմ, ա՛ռ այդ անիծած գումարը «Գիրեն», հարյուր ռուբլին հանձնե Ֆիլիպ Վարդա-

զարյանին, որուն հնուց մնացած պարտք ունիմ, իսկ մնացածը, որ քու գրելովդ 350 ռուբլի պետք է ըլլա, անմիջապես ղրկե՛ ինծի: Բայց այդ հերիք չէ, սիրելի՛ս, տակավին ամբողջովին ծախսված գումար է, պետք է իսկույն պարտքերուս տամ. տակե զատ կը խնդրեմ իմ արդի անմիջական պետքերուս համար 150 ռուբլի մը գոնե ղրկեք ինծի: Հատուկ կը խնդրեմ, ճարեցե՛ք կերպ մը այդ հինգ հարիւր ռուբլին և վոխադրե՛ ինծի անմիջապես հեռագրով: Կը հետապրես «Արծիվի» հասցեով որ է. Librairie "Ardzive, Marpoudjilar, Constantinople: Նամակներդ ալ այդ հասցեով գրե՛ առայժմ, մինչև քեզի նոր հասցե տամ. տուն վոխելու վրա ենք. անցնինք պիտի Գասը-գյուղ[2]: Մերոնք դեռ Պարտիզակ[3] են: Վիզենս աղեկնալու վրա է. այլևս տաքութիւն չկա. վերքը չատ վոքրացած է, բայց դեռ կը բանի:

Լուսաբերները տարածվել սկսած են. այս ամիս ավելի զգալի կ'ըլլա. դպրոցները, որ ընդհանրապես սեպտեմբերի սկիզբները կը կազմակերպվին, տեսուչ և ուսուցիչ կ'ըսասնան, խոլերայի պատճառով այս տարի ավելի ետ մնաց: Գրքերեն ամեն մեկին 3000 օրինակ ցրված է արդեն առանց մասնավոր ջանքի. մնացածն ալ կը ցրվի, կասկած չունիմ: Գիրքերը կը բանան կամաց-կամաց իրենց ճամբան, կը բանան ու կը տիրեն: Գրե՛ ինծի մանրամասն քու նկատողութիւններդ գրավոր վարժութիւններու մասին. համենայն դեպս բոլորովին նոր ու օրիժինալ բան դուրս եկավ: Հիմա կը տպվի «Ուղեցույցը» այբբենարանի, որ չատ փոխեր եմ ու ավելի հասունցուցեր. մեկ կողմեն կը գրեմ, մեկ կողմեն կը տպվի, ավելի չուտ անկարելի եղավ, որչափ ալ որ կը ցանկայի. հոգնած եմ սաստիկ, իսկ չաբաթե մըն ալ երևի դասերը կ'ըսկսին:

Դե՛, սիրելի՛ս, բարևներս տիկին Կատարինեին, կը հուսամ Եվրոպայի պատւյտը թարմացուցած է տիկինն ալ, քեզի ալ: Կը ցանկամ հաջողութիւն ձեր գործերուն ու նոր տարեշրջանին: Ջերմ կը համբուրեմ: Եթե Ջավոն քովս ըլլար, կրնաս վստահիր, որ ամենասրտագին բարևներ պիտի ղրկեր քեզի:

Լևոնդ

1911 սեպտ. 7, կ. Պոլիս, Փերա

Հ.Գ. Կը խնդրեմ կա՛մ ղրկես, կա՛մ ղրկել տաս կարծեմ Խալաթյան էր, խմորատիպ «Հայոց պատմութիւնը»[1], այլև եթե ուրիշ գիրք

մը կրնաս ինծի հանձնարարել Հայերեն, ռուսերեն ու գերմաներեն: Հայոց պատմութիւնը ընդհանուրի հետ հիւսած[4] եմ տանելու կեդրոնականի մէջ[5]. և կարգին աղբիւրներ կ'ուզեի ունենամ ձեռքիս տակը:

107. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանա, Ջավոն ամեն օր իր հանդիմանութիւններովը հոգիս կը հանի, թէև ինչու քանի մը տող քեզի չեմ գրեր, իսկ ես ճի՛շտ ատոր համար գրելու չեմ հաջողիր, որովհետև երկու տող գրել չեմ ուզեր, մեյ մըն ալ, որ կը ցանկայի նախ ավարտեմ Ուղեցույցի տպագրութիւնը, որ մինչև հիմա չարունակվեցավ չա՛տ ավելի ուժ ու ժամանակ խլելով ինծմե, քան ես նախապես կ'ենթադրեի: Ստացած եմ նամակներդ, Լևոնեդ բացգիր մը, ինչպես նաև 300 և 200 ռուբլիները: Եվ ամեն անգամ քու բոլոր կարգադրութիւններդ գործադրած եմ անմիջապես. երկու անգամ ղրկված է քեզի հոս տպված գրքերեն երեքեն ալ հինգական օրինակ, անգամ մը օգոստոսին, անգամ մը սեպտեմբերին, պրկոցը Արծիվն է եղած. չատ կը զարմանամ, որ չես ստանար, պրաքնիչը ինչո՞ւ պիտի պահեր, մնջը ինչ կա, որ ինչ պահեն, ավելի հավանականը. գուցե, պարզապես պոստային դողութիւն է: Այս անգամ ես ինքս անձամբ ղրկեմ պիտի քեզի ավստրիական պոստով. կը ղրկեմ երկու կամ երեք օրեն արդեն ավարտած Ուղեցույցին հետ: Գալով վարժութիւններու քու ձեռագրին, ղրկած եմ քեզի ի՛նքս, ավստրիական պոստով, ապահովագրա՛ծ, կարծեմ արդեն երկու ամիս պիտի ըլլա. մի՞թե նորեն չես ստացած:

Իհարկե ամենեն առաջ քեզի հետաքրքրողը «Լուսաբերներու» նյութական ու բարոյական հաջողութիւնն է, հոտկե ալ սկսիմ: Այբբենարանը լույս տեսավ Հունիսին, Առաջին տարին՝ Հուլիսին, իսկ վարժութիւնները՝ օգոստոսի սկիզբները: Ամեն մեկեն տպված է 7000 օրինակ, այսինքն մեր պայմանեն 500-ական օրինակ ավելի, այդ հավելումը կատարած է Արծիվը առանց ինծի ոչինչ հարցնելու, բայց վերջն ալ մեզմե չէ ծածկած. նորեն բոլորովին ինքնագլուխ Ա. տարվա գնին վրա 20 փարա հավելում է ըրած: Ես մինչև հիմա դիտմամբ դեռ ոչինչ ըսած չեմ՝ նախապես քու կարծիքդ ստանալու համար: Ատոնցմե այբբենարանները ծախված են բոլորը, կա ձեռքի տակ ընդամենը քանի

մը հարյուր օրինակ: Առաջին տարին ծախված է արդեն 4000 օրինակեն ավելի: Ամենեն կաղլիկը վարժուհյուններն են, ընդամենը ծախված է 2000 օրինակ: Այս հաշիվը առիր եմ ես Արծիվեն ասկե ամիս մը առաջ, բայց աչքի իյնող տարբերություն մը չկարծեմ, որ հիմա ալ ներկայացնե: Առաջին տարվա սուղ ըլլալը չատ բնական է. դպրոցներուն մեջ արդեն եղած գրքերը մեկ անգամեն չեն վերնար. մանավանդ որ Միացյալի նման կապեր և մեծաքանակ սպառում ունեցող ընկերություն[1] 70 տոկոս զեղչով ուրիշ գրքեր է գնած «աղքատ» դպրոցներու համար: Գալով վարժուհյուններուն՝ իր անհաջողությունը սկիզբը ինձի չատ զարմացուց, բայց քիչ մը լուրջ խորհելեն ետքը նորեն չատ բնական կը գտնեմ: Մասամբ ատիկա արդյունք է տպագրության ուշ մնալուն և չատ քիչ ու գիշ հայտարարության. բայց գլխավոր պատճառը գործի բոլորովին նոր ըլլալն է. մարդիկ տեսած են ընթերցանության գիրք ու գիտեն ինչ բան է, տեսած են քերականություն ու գիտեն ինչ բան է. բայց ո՛չ տեսած, ո՛չ ալ լսած են գրավոր աշխատանքի մասին դասագիրք և չգիտեն ինչ ընեն: Ես ատիկա նախատեսած ըլլալով՝ հակառակ մեր սովորություններուն հարկ զգացի «Երկու խոսք» մը դնել գրքին սկիզբը, բայց այդ երկու խոսքեն իհարկե գլուխը խելք ունեցող մարդիկը միայն կրնան բան հասկնար, իսկ մեր ուսուցիչներու, մանավանդ այդ «վարի կարգերու» ուսուցիչներու մտավոր խեղճության մասին, ինչքան ալ որ երևակայությանդ ուժ տաս, նորեն երևակայել չես կրնար. այն տեսակ բաներ պատմեցին ինձի, որ մարդ պարզապես կը հուսահատի. օրինակ՝ ի՞նչ կ'ըսես, եթե ուսուցիչ մը մեր վարժուհյունները առնե ու դասարանին մեջ գործածե իբրև ընթերցանության գիրք առանց որևէ ուշ դարձնելու հարցականներուն, փակագիծներուն, նյութին ու հառաջաբանին: Իմ համոզումս ան է, որ վարժուհյունները մեծ ապագա ունին, բայց պետք է, որ նոր սերունդը մտնե մեր դպրոցները իբրև ուսուցիչ, որը արդեն կատարվելու վրա է և մինչև 4-5 տարի չատ ավելի դժալի կերպով կատարվի պիտի: Որ գալ տարի չատ ավելի պիտի տարածվի՝ կասկած չունիմ, մանավանդ եթե կարողանամ Առաջին տարվա Ուղեցույցը ժամանակին հասցնելու. Ուղեցույցներու պահանջը մեծ է. պահանջողը ուսուցիչներու նոր սերունդն է, որը ցանկություն ունի լավը ընելու, բայց ճամբան չգիտե, կարողությունը չունի. այսինքն ճի՛շտ անոնք, որոնց համար մենք հարկ զգացինք Ուղեցույցներու հրատարակությունը:

Հետաքրքիր է չատ՝ այբբենարանի Ուղեցույցը, որ Հատաջիկա չաբաթ հրապարակ է ելնելու, ի՞նչ տպավորություն ու արդյունք պիտի ունենա: Ամառվա դասախոսություններս, օրինակ, դիտեմ որ գործին բավական նպաստեց:

Գալով գործի բարոյական ընդունելությանը՝ թե՛ «Ազատամարտի»[2], թե՛ «ժամանակի»[3], այնպես ալ կարծեմ մյուսներու մեջ մեկերկու ընդհանուր գովասանական խոսքերեն զատ լուրջ ոչ մեկ քննադատություն չէ եղած դեռ: Իսկ բանավոր քննադատությունը թե՛ խոսակցության միջոցին, թե՛ հրատարակչին ղրկված նամակներուն մեջ կը վերաբերվի միայն լեզվին. «Ամեն բան չատ է աղեկ, միայն լեզուն կովկասյան է»՝ աս է երկու խոսքով եզրակացությունը: Ասիկա նույն հարցն է, ինչ որ առաջ եկավ, երբ հոտ առաջին հատորները լույս տեսան առաջին անգամ. կը հիշես, որ ամեն կողմեն լեզուն կը գտնեին չատ «գավառաբարբառ». ինչ որ հոտ կը հասկնային և անշուշտ մինչև հիմա ալ կը հասկնան «բարբառ» ըսելով, նույնը կը հասկնան հիմա հոս «կովկասյան» ըսելով: Մարդիկ, վարժված լրագրության ու տիրող գրականության չինծու լեզվին, խորթ կ'ըզգան գավառական-ժողովրդական կենդանի ասույթներն ու ձևերը: Դուն արդեն գիտես որ մեր Փարիզի դպրոցներեն դուրս եկած երիտասարդները ի՞նչ պետանդ ու արվեստական հասկացողություն ունին լեզվի մասին, մասնավորապես պոլսեցին: Հիմա անոր վրա ավելցո՛ւր, որ ի՛րապես մեր տարբեր գավառներու ու տեղերու ժողովուրդը չատ զգալի լեզվական տարբերություններ ունին իրարմե, որով նո՛ւյն ձևերը ամեն տեղի համար նո՛ւյն հարազատությունը չունին: Ավելցո՛ւր նույնպես, որ ես դիտմամբ քանի մը դարձվածներ ու ասույթներ, որոնք մասնավոր գեղեցկություն ու կենդանություն ունին, պահեր եմ արևելյանեն փոխադրելու ժամանակս, ինչպես օրինակ՝ «փուլ տալ», «հարու տալ», «զույգ, կենտ» և այլն, որը նորություն է բոլորովին տեղացու համար:

Հիմա այս երեք պատճառներեն առաջինը Լուսաբերի հիմքն է՝ մոտենալ ժողովրդին. հոտ մենք ո՛չ մեկ քննադատության տեղի չենք կրնար տար. անոնք պետք է մեր աջկը տեղի տան: Երկրորդ պատճառը, իրա՛վ է, մտածելու բան է և պետք է զգուշ ըլլալ, որ կարելիին չափ չատ չրջանակներու համար նվազ խորթություններ ըլլան, բայց գործնականին մեջ չատ դյուրին խնդիր չէ, տեղ-տեղ հաճախ ստիպված ես հակառակը ընելու գեղեցկության ու այլ տեսակետներե:

Այնպես որ հոս ալ վերջվերջո քիչ բան կրնանք փոփոխութեան ենթարկել: Նույնը նաև արևելյան բարբառներեն առնված բառերու նկատմամբ, լեզվի կենդանացումը, հարստացումը կը պահանջե ասիկա. թուրքերեն ու ֆրանսերեն հարյուրավոր ոճեր ու դարձվածներ կ'առնենք ու առեր ենք լեզվի մեջ, ինչո՞ւ մեր արևելյան դավառներու հարազատ բարբառներեն քանի մը ասույթներ չառնենք: Այնպես որ, սիրելի՛ս, եզրակացութիւնս հետևյալն է: Կը լսեմ ուշադիր ամեն նկատողութիւն, կ'աշխատեմ հարմարվիմ, եթե մեր սկզբունքներուն ու ըմբռնումներուն հակառակ չէ, բայց սկիզբեն դիտեմ, որ հիմնապես ու էապես մնալու ենք այն, ինչ որ էինք՝ ինչպես մեր նյութերովն ու մեթոտովը, այնպես ալ մեր լեզվովը՝ առանձնահատուկ: Ավելի ուրիշները պիտի գան մեզի, քան մենք պիտի երթանք ուրիշներուն: - Կարծեմ ըսի ամեն բան, ինչ որ Լուսաբերի հետ կապ ունի: Իսկ դրամ դեռ չեմ ստացած Արծիվեն. նախ խնդրեց ամիս մը ուշացնե, եառքը 15 օր, հիմա քանի մը օրեն պայմանաժամն է, հույս ունիմ որ ստանամ առաջին վճարը տպագրութենեն եառքը: Այս ուշացումները եթե չը հաշվենք՝ ես անձամբ մտանոտոր գանգատ մը չունիմ առայժմ Արծիվեն, բայց պիտեմ որ շուրջս շատերը կան, որ դրամական հաշիվներու մեջ շատ դժգոհ են Արծիվեն, մասնավորապես Լևոնեն[4]: Կը կարծեմ, որ մեզի հետ ավելի զգուշ կ'ըլլա:

Մենք նորեն Շիշլի[5] մնացինք, նոր բնակարան ապրարդըման, բարձր չորրորդ հարկ: Հոս հիմա կյանքը խիստ սխած է և մթնոլորտը ծանր թե՛ պատերազմի[6] և թե՛ ներքին դեռ խուլ, բայց սպառնալից խլրտումներու պատճառով: Մենք զլրոց բանալու մեր ծրագրին վրա վերջնապես խաչ դրինք: Ջավոն կ'ըզբաղվի փոքրիկներուն հետ այս տարի ալ. իսկ զարնանը հավանորեն կը խրկեմ նորեն Եվրոպա. Ջավոն հոս մնալ չի կրնար, պզտիկներուն համար ալ ցանկալի չէ. իսկ ես... ես ալ չգիտեմ ինչ պիտի ընեմ. այնպե՛ս խեղդող մթնոլորտ է հոս, այնպե՛ս ցած քաշող, ամեն շնորհք, ամեն տպավոր կը մեռնի. մնալ չըլլար, երթալ չըլլար: Իսկ դուն նորեն խրվիր ես աշխատանքի մեջ ոտովդխով ըստ երևույթին: Դպրոցիդ հաջողութիւն բոլոր սրտովս: Իսկ «Հասկերը» այս անգամ լուրջ վտանգի տակ կ'երևա. «Հասկերուն» համար մե՛ղք պիտի ըլլա, բայց քեզի համար անձնապես բարիք մըն է անոր դադարումը, իմ կարծիքովս: Շատ մի՛ հոգնեցներ քեզի, անմիտ բան է, վաղը-մյուս օրը մնքենան կը կտրվի և մեղք կըլլա և՛ քեզի, և՛

քու կարողություններուդ: Խնայե՛ քեզի, խնայե առողջությունդ, միևնույն է՝ ամեն գործի չես հասնիր, ամեն բան ընել չես կրնար: Շինե՛ Հայոց պատմության գրքերդ[7], տո՛ւր օրական երեք-չորս ժամ քու դասերդ և վերջակետ: Ավելին սատանայեն է: Հա՛, Հայոց պատմության մասին հայերեն ու ռուսերեն (նույնպես և ուրիշ լեզվով եթե ամփոփ ալվոր գիրք մը կա՝ ան ալ ինծի ըսե) չնորհքով ինչ որ գիտես, ղրկե՛ ինծի Գրի միջոցով իմ հաշվիս, մի՛ ուշացներ: Եվ քանի որ խնդիրը հանձնարարություններուն եկավ՝ Արաքս տպարանին կողմեն կը խնդրեմ, որ Մատերի ցուցակեն[8] 221, 215 և 297 նոմերները կրող տառերեն մեյ-մեկ կոմպլեկս կարելիին չափ չուտով ղրկես Արաքսի հասցեին, որի կարտը կը գտնես ներփակ: Գրե՛ ինծի ըրած ծախքերդ:

Եվ բոլորի փոխարեն ընդունե՛ իմ ջերմ ու սրտագին բարևներս: Նույնը և Ջավոյի կողմեն: Մեծ հույս ունիմ, որ տիկին Կատարինեն ավելի առողջ պիտի ըլլա և իր գործն ալ ավելի ու ավելի հաջող:

Կը սեղմեմ ձեռքդ ու պինդ կը համբուրեմ քեզի. Լևոն

1911 նոյեմ. 27, Պոլիս, Շիշլի

Հրատարակչականի հանձնարարությունը[9] կատարելու վրա եմ: Հասցես ծրարի վրա[10]:

108. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, Լուսաբերի այբբենարանը սպառած է բոլորովին և Արծիվը կ'առաջարկե անմիջապես կատարենք երկրորդ տպագրությունը: Ես հայտնեցի մեր Համագայնությունը և առաջարկեցի հետևյալ պայմանները. կա՛մ տպեն 10,000 օրինակ և տան մեզի 500 ռուբլի և կամ տպեն 13,000 օրինակ ու տան մեզի 700 ռուբլի: Իսկ իրենք կը խնդրեն, որ այս տարի որևէ հավելում չպահանջենք և նախորդ տարվա հաշվով տպեն 13,000 օրինակ և վճարեն 600 ռուբլի, կը հիշես, որ անցած տարի 6500 օրինակ էր և 300 ռուբլի: Ըսի՝ որ կը ղրեմ քեզի ու հեռագրով պատասխանիդ կ'ըսպասեմ: Ես կը կարծեմ, որ պետք է այս տարի ալ հարմարվինք և անոնց առաջարկը ընդունինք: Եթե դուն ալ կ'ընդունիս՝ հեռագրե ինծի անմիջապես, որ պայ-

ման կապեմ, ու իսկույն տպագրությունը սկսվի: Հեռագրե՛ հետևյալ հասցեով. Constantinople, Pangalti, Bekdji 43, Le'on Segbossian.

Ես մինչև հիմա Արծիվին ստացած եմ 1000 ղրշ, ուրիշ խոսքով՝ մեկ ամսվա վճարը, չատ խնդրեց, որ ավելի չատ չպահանջեմ, որով-հետև դեռ գավառներեն չէ ստացած, և այլն, և այլն: Ստիպված եմ հարմարվելու, ինչ կրնանք ընել: Բայց մյուս կողմեն դժբաղդ պայմաններս նորեն անմիջական դրամի կարիքն են դրած առջևս. հարկ եղավ Վիգենս երկրորդ անգամ ենթարկել օպերասիոնի. այս չաբաթ մըն է մայր ու տղա նորեն հիվանդանոցն են, իսկ հոս թե՛ բժիշկ, թե՛ հիվանդանոց սարսափելի գումարներ են. հույս ունինք, որ այս անգամ վերջինն է ըլլալու գոնե. բացի իր ականջի վերքեն երեխան թարմ [է] ու առողջ. այս օպերասիոնեն ետքը մեծ հույս ունինք, որ վերքը գոցվի: Այնպես որ ստիպված եմ քեզմե նորեն դրամ ուղելու և անմի՛ջապես, կը խնդրեմ 200 րուբլի, եթե անկարելի է՝ գոնե 150 րուբլի:

Ուղեցույցը և Լուսաբերի երեք գրքույկները կը հուսամ ստացած ես այս անգամ. գրկեցի ես ինքս մեյ-մեկ օրինակ Լևոնի[1] միջոցով Վիեննայեն. մեյ-մեկ օրինակ ուղղակի քու հասցեիդ ավստրիական պոստով: Ստացած պետք է ըլլաս նաև ասկե ամիս-ամիս ու կես առաջ գրած երկար մեկ նամակս[2]:

Ինչպես է տիկին Կատարինեն, գրեր էիր հիվանդ է. այս տարի Ջավոն ալ աղեկ չէ. մանչուվներս քուրիկի մը սպասումը ունին, որուն ձեռքեն սակայն չատ կը նեղվի Ջավոն: Դո՞ւն ինչ կ'ընես, ինչպե՞ս ես, տրամադրությունդ: Խեղճ Հանեսի գործը ինչ վիճակի է. ուրեմն տանին պիտի Պետերբո՞ւրգ[3]: Է՛, ո՛ր կողմ դառնաս՝ հոգ, վիշտ ու անհամություն:

Կը չնորհավորեմ նոր տարիդ, կը ցանկամ թե՛ տիկին Կատարինեին և թե՛ քեզի երջանիկ ու հաջող օրեր Ջավոյի ու իմ կողմես: Մեր վիճակն է հավիտյան հաջողության ու երջանկության սպասելն ու մաղթելը, իսկ ամենեն մեծ երջանկությունն ու հաջողությունն ան է դուցե, որ մարդ դեռ դադրած չէ երջանկության ու հաջողության սպասումեն ու մաղթանքեն:

Կը համբուրեմ քեզի ջերմ կարոտով՝ *Լևոնդ*

1911 դեկտ. 20
Կ. Պոլիս

109. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, ներփակ կը խրկեմ քեզի Բ. տարվան ընթերցարանի նկարները, չոտով կը հասցնեմ ետևեն նաև Բ. տարվա վարժուհյուններուն նկարները: Նկարել տո՛ւր, ինքդ ստացի՛ր և եթե հավնիս, առանց ինծի ուղարկելու ուղղակի կլիշեները պատրաստել տուր: Կը կարծեմ Վիեննա պիտի պատրաստել տաս նորեն և Լևոնի միջոցով: Այնպես ըլլա, որ մինչև մայիս ձեռքս ըլլան կլիշեները պատրաստ: - Արծիվը ընդունեց քու հեռագրած պայմանդ. արդեն սկսած ենք Այբբենարանի երկրորդ տպագրությունը, 13.000 օրինակ պիտի տպվի: Պայմանագրությունը դեռ չենք ստորագրած, բոլոր գրքերու մասին մեկ անգամեն պետք է գրվի, իսկ իր ընկերը Կարին է հիմա, կ'ըսպասե պատասխանին: Ես հիմք ընդունած եմ մեր անցած տարվան պայմանաթուղթը չնչին փոփոխություններով՝ մեր օգտին: Խոստացեր է ամսե ամիս 1000 ղրչ վճարե ինծի, մինչև մեր անցյալ տարվան պայմանաթուղթի հաշիվը գոցվի, ուրիչ խոսքով՝ մինչև հոմնիս այդ հաշիվը կը վերջանա. և կ'աշխատիմ, որ վերջանա: Իսկ ձեզի հետ միասին հաշիվները պարզ ըլլալու համար գրե՛ ինծի, ինչ որ դուն ծախսեր ես արևելյան մեր սնդուկեն արևմտյան գրքերու՝ անցած հրատարակության վրա: Այդ քու ծախսած բոլոր գումարներդ հոտ անցուր իմ հաշվիս, այսինքն քու ծախսած դրամը իբրև թե վճարեր ես ինծի արևելյան Լուսաբերներեն ինծի հասանելիքին ի հաշիվ: Այդպիսով արևմտյան Լուսաբերներու վրա քու ծախսած գումարները ես ստացած կ'ըլլամ. և անկե հետը արևմտյան Լուսաբերներու վրա կատարված բոլոր ծախսերն ալ ես ըրած կ'ըլլամ. և այդ հիման վրա ալ քեզի հաշիվ կը ներկայացնեմ. այս կերպով հաշիվ պահելը ավելի պարզ կ'ըլլա: Այսինքն հաշվապահորեն խոսած՝ քու տետրակիդ ինծի հատկացված երեսի մուտքին կողմը կը գրես՝ «Արևմտյան Լուսաբերի 1911 տարվա հրատարակության համար մեր այս սնդուկեն ըրած այսքան րուբլի ծախսերս կ'անցընեմ Լևոնի հաշվին, իբրև անոր վճարված». և դեմը կը դնես գումարը իմ իսկապես ստացածներուս չարքին: Ասով քու ընթիւդ կը վերջանա: Իսկ ես Արծիվեն մեր անցած պայմանագրության գումարի ստացումը լրացնելուս պես կը ներկայացնեմ ձեզի մուտքն ու

բոլոր ծախքը. և երկուքիդ ամեն մեկուն հասնելիք բաժինը, որը դուք հետ կը վերցնեք քու անդուվեդ ու կը գրեք նորեն իմ հաշվին, իբրև ես առացած, որով և բոլոր հաշիվները կը գոցվին:

Իսկ քեզմն ոչ մեկ լուր չունիմ, եթե չհաշվեմ հեռագիրդ: Ինչպե՞ս է Լուսարիններու վաճառատունը այս տարի: Կազմեցի՞ր, կամ բնավ ժամանակ ունի՞ս կազմելու վարժութիւններն ու տեսական մասը: Ես բնավ չգիտեմ ալ՝ իմ ըրածս գո՞հ ես, թե ոչ: Քու նկատողութիւններդ կ'ուզեի անպատճառ ունենալ, քանի որ շուտով սկսելու եմ Բ. տարվա կազմութիւնը: Այնպես ալ չատ հետաքրքիր եմ գիտնալու՝ ինչ եղավ «Հասկեր»-ուն վիճակը, պիտի չարունակե՞ս, թե՞ դադրի պիտի: Հա՛, անցած տարվա Հասկերուն 8-րդ և 9-րդ թիվերը չեմ առացած. կա՛մ կորած է (ամառանոցն էինք), կա՛մ գողցված. վերջապես ղրկե ինծի շուտով այդ երկու թիվը, որ կազմել պիտի տամ վերջին տարին: Նույնպես Հայոց պատմութեան վերաբերող քանի մը գիրքեր էի խնդրած, մինչև հիմա չեմ առացած, առանց վրա այս անգամ կ'ավելցնեմ և Լեոյի «Ս. Մնարոքը», ուրիշի համար է, չատ են խնդրած: Գիտեմ, դուն պրպտված ես, բայց չեմ հասկնար «Գիր» -ի գործն ինչ է, եթե այսքան պզտիկ գործերն ալ չէ կարգադրելու: Այն ժամանակ հանճնարարե Գուտենբերգին[2]: «Գիրը» ինծի անցած տարի չատ վնասեց: Քանի-քանի նամակներ եմ գրած ու խնդրած, որ 100 րուբլի վճարե Ֆիլիպ Վարդազարյանին իմ հաշվես, այն հաշվեն՝ ինչ որ ինծի պետք է վաղուց-վաղուց ղրկած ըլլար: Եվ ահա ճիշտ այսօր նամակ կ'ըստանամ և հանդիմանութիւն Ֆիլիպեն, որ իրեն տված խոստումս չեմ հարգած: Ես անոր հին պարտք ունիմ 400 րուբլու չափ և խոստացեր եմ տարեկան 100 րուբլի վճարելով մաս-մաս վերջացնեմ: Այնպես որ հիմա ստիպված եմ քեզի գրելու երկրորդ անգամ, կը կարծեի, որ դուն արդեն կարգազրեր ես. գոնե նամակով ես այնպես հասկցա. ամեն բանե առաջ կը խնդրեմ վճարե՛ անոր այդ 100 րուբլին, որ ճիշտ տարի մը առաջ պետք է վճարված ըլլար, իսկ 1-2 ամիսեն, երբ իմ հաշիվներս գոցելու ըլլաս՝ նորեն 100 ռուբլի մը կը վճարես իրեն և վերջը կը ղրկես ինծի, ինչ որ ղրկելու ես: Նախորդ նամակովս խնդրած էի, որ ինծի ալ ղրամ ղրկես, մինչև հիմա ուշացուցիր, ըսել է կը դժվարանաս: Եթե թե՛ Ֆիլիպին վճարելը, թե՛ ինծի ղրկելը անկարելի ըլլա, կը գերադասեմ, որ չղրկես ինծի, բայց Ֆիլիպինը վճարես անպատճառ: Հոս նորեն պարտքով-մարտքով կը քաշքշվիմ մեկ-երկու ամիս ալ:

Բ. տարվան Լուսաբերներն ալ մեծ տարբերություն մը եղածեն չեն ունենալու, այդ տարիներու համար շատ չնչին բան կա արևմտյան գրականության մեջ: Մեկ-երկու կտոր բան կ'աշխատիմ ճարեմ: Պոեմներու փոխադրությունն է շատ գլխու ցավ[3]. Թե՛ պիտի փոխես, թե՛ համը պիտի պահես. չգիտեմ՝ որ աստիճան պիտի հաջողիմ: Ես ինքս, օրինակ, արդեն այնքան վարժված եմ Շունն ու կատվի նույնիսկ անկանոն ու անախորժ ձևերուն, որ ուրիշ ձևով տարօրինակ կու գա ինծի: Վերջապես պիտի փորձեմ, տեսնենք ինչ պիտի դուրս գա: Մեր գրքերու մասին մեկ թե երկու թեթև քննադատական բան դուրս եկավ. կը խոսեն միայն լեզվի մասին, կը մեղադրեն, թե կովկասյան ձևեր կը մտցնենք. երկրորդ մեղադրանքն ալ ան է, որ գյուղը կը տիրե գրքին մեջ, Հապա քաղաքացի մանուկնե՞րն ինչ ընեն: Ուրիշ խոսքով՝ մեր հին գիտցած բաները:

Շատ-շատ բարևներով ու համբույրներով կ'ըսպասեմ լուրերուդ.

Լևոն

1912 փետր. 3
Կ. Պոլիս

110. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, Զատկի արձակուրդիս վերջին օրն է, վերջապես կը նստիմ քեզի գրելու. այնքան շատ գործ ունիմ և այնպես ցրված կյանք մը ունիմ հիմա, որ ուղղակի ժամանակ չունիմ, ժամանակ չեմ գտներ քեզի գրելու, իսկ գրելը անհրաժեշտ է: Արդեն ամիս մըն է տունով-տեղով փոխադրված ենք Մեծ կղզին բժիշկներու հրամանով ու վայրկյանը վայրկյանին. Վիգենը ստացավ երկարատև ու համառ գլխացավեր. բժիշկները որոշեցին, որ արյան անուժություն է, որ մինչև հիմա եղած բոլոր հիվանդություններու պատճառնատ է և որ ասկե ետքն ալ ամեն տեսակ հիվանդություններու բաց դուռ կը ներկայացնե, որ մարմնին մեջ բավական խուզեր ունի, կարճ ու պաշտոնական խոսքով՝ ոյուպերկյուլոզ տը կլան[1]: Պետք է լավ սնունդ և չոր, մաքուր օդ. և ահա՛ քչեցին մեզի Իչխաններու կղզիները[2]. Հրաշալի տեղ է, ծով, սար, անտառ, պարտեզ և անուշ օդ. գլխու ցավերը անհամեմատ քչացան, բայց դեռ բավական երևի պետք է

անկողին մնա, մանավանդ որ մարտ-ապրիլի ամենեն ավելի վտանգական եղանակներն են իրենց չատ խիստ ու անհավատարակշիռ ոստյուններովը: Կրնաս հասկնալ, թե ինչ ծախքերու մեջ եմ խրած: Ժամանակիս մեկ խոշոր մասը ճամբորդութեան վրա կը կորչի, օրական մոտ երեք ժամ չոգենավով: Շատ դժվար պիտի ըլլա ձմեռը մանավանդ: Քանի Պոլիս ենք՝ մեզի ուրիշ տեղ ապրելու հրաման չը կա, այսինքն՝ կատարյալ արիստոկրատավարի: Զգիտեմ ինչ պիտի ընենք. չատ դժվար է պզտիկներուս կրթութեան հարցը: Վերջապե՛ս: Ասկե առաջ գրած եմ քեզի մե՞կ թե երկու նամակ դեկտեմբերին-Հունվարին[3], պատասխան չունիմ: Երկու հարյուր րուբլին ստացա, չատ շնորհակալ եմ, ինչպես և «Գրի» ղրկած երկու դրքերը: Ֆելիպի ղրամը վճարելդ նորեն պիտի խնդրեմ. հարյուր րուբլին կարելիին չափ շուտ, իսկ այս մեր հառաջիկա հաշիվները փակելու ժամանակ ալ նորեն հարյուր ռուբլի: Անցնիմ Լուսաբերներուն:

Արծիվի հետ նոր պայմանը կնքեցինք, այս տարի պիտի հրատարակե

1/ Այբբենարան 13.000 օրինակ 650 րուբլի (տպված է արդեն)
2/ Ընթերց. Ա. տարի 5000 - 250 -
3/ Վարժ. Բ. տարի 6000 - 200 -
4/ Ընթերց. Բ. տարի 5000 - 250 -

Բ. ընթերցարանը յոթ տպագրական թերթ, գինը 5 ղրչ, Բ. վարժութիւնները երկու տպագրական թերթ, գինը 2 ղրչ: Անցած տարվան դրքերեն՝ Ա. ընթերցարանեն կա 1500 օրինակի չափ, Ա. վարժութիւններեն 3000 օրինակի չափ. իսկ ուղեցույցեն հազիվ ծախված է քանի մը տասնյակ. տպվեցավ չատ ուշ, գինը բարձր է և մանավանդ մեր ուսուցիչներուն մեջ գործին լուրջ վերաբերվողները չատ են քիչ: Ես ձեռք վերցուցի ամեն տարվան Ուղեցույց մը կազմելու դիտավորութենես. թե՛ ահագին ժամանակ կը խլե ինձմե և թե՛ չի ծախվիր. ինչ իմաստ: Կը մտածեմ վերջը, երբ չորս տարիներն ալ հրատարակած ըլլանք ու ավարտած՝ մայրենի լեզվի դասավանդման տեսական ու գործնական Ուղեցույց մը հրատարակեմ, ինչպես որ ես կը հասկնամ, եթե իհարկե պայմանները ներեցին, և եթե ժամանակ ու տրամադրութիւն ունենամ: Գալով վարժութիւններուն՝ անտարակույս ապագա ունին ծախվելու տեսակետեն և խիստ կարևոր բան է մանկավարժական տեսակետեն, թեև հիմա իհարկե հոս հասկցող չկա: Այս տարի

կը կազմեմ Բ. տարին ալ. իսկ անկե անդին ճչմարիտ չգիտեմ. դեռ ամբողջ տարի մը ունինք, կը մտածեմ: Հունիսի մեկին խոստացած եմ հանձնիմ Բ. տարվա ընթերցարանին նյութն ու կլիչեները: Կլիչեները անշուշտ արդեն կարգադրած ես, չտապեցո՛ւր, որ մինչև մայիսի կեսերը անշուշտ ձեռքս ըլլան: Կլիչները ղրկել տո՛ւր անցած տարվան ձևովը, բայց Արծիվի Հասցեին, ինծի հանձնելի: Նախորդ ցուցակիս վրան ավելցո՛ւր և հետևյալ նկարները, որ կը վերաբերին Կովկասյան Հրատարակութեյան Գ. տարվան նյութերուն.

*1. «Փոքրիկ ճիավորի» վերջին նկարը, միայն առանց շրջանակի, **նույն մեծութեյան.***

*2. «Կոշիկ սրբող Թոմասը». անգլխարկ կամ ֆեսով, **նույն մեծութեյան.** միայն պետք է նորեն նկարվի. դեմքը շատ աղվոր է, բայց կարծես անհամաչափ է մարմնին, գաճաճի տպավորութեյուն կ'ընե.*

3. «Աղվեսը»՝ նույն պատկերը, նույն մեծութեյան:

Թող ձեռքիս տակը գտնվին, կարելի է կը դնեմ Բ. տարվան մեջը, եթե տեղ եղավ, այդ տարվան նյութը քիչիկ մը ավելի լրջացնելու համար, Հոստեղի պայմանները աչքի առաջ ունենալով: Բ. տարվան համար ալ Հոստեղի գրականութեյան մեջ մեզի պիտանի ոչինչ չը կա: Հաջորդ տարիներու համար կարելի է: Ես հիմա Բ. տարին կազմելու վրա եմ, այսինքն փոխադրելու. սկսած եմ ամենեն դժվարեն՝ Հանեսի ու Խնկոյանի պռեմիկները, թե՛ համը պետք է պահվի, թե՛ ոգին և թե՛ Հոստեղի համար խորթ պետք չէ հնչե. ինչքան պետք է հաջողին՝ չգիտեմ, իմ կարծիքովս արդեն փոխադրած 5-6 կտորներս այնքան ալ անհաջող չեն: Բաց եմ թողնելու «Զարի վերջը», այդ տարիքի համար շատ է տխուր ու փիլիսոփայական, և մանավանդ մեջը դժվարամարս բան մը կա, ինչս ալ չգիտեմ որոշ՝ թե ինչ: Զարժեր որ վրան չարչարվիմ, թեև քանի մը կտորները շատ են աղվոր: Նույնպես երևի բաց եմ թողնելու «Գառնիկ աղբարը». բայց ատ մեկը արդեն տեղի հարց է. որ ստիպվիմ կրճատելու՝ կը գերադասեմ այդ երկար հեքիաթը, քան թե քանի մը ավելի մանր ամբողջութեյուններ: Համենայն դեպս երկուքի ալ կլիչեները դրած եմ նախորդ ցուցակիս մեջը, թող գտնվի ձեռքիս տակը. միշտ բանի մը պետքը կու գա:

Արծիվը ինծի կը վճարե միջին հաշվով ամիսը 1.000 ղրչ, որով մինչև հունիս անցած տարվան հաշիվը կը գոցվի: Ղրկե՛ ինծի քու ծախսած գումարիդ թիվը, որ ձեզի հաշիվ ներկայացնեմ: Հունիսի

մեկեն սկսած Արծիվը պետք է վճարի ինծի ամսեամսիս 1300 դրչ, որը եթէ բազմապատկես 12-ով ու 250 ալ ավելցնես՝ կ'ըստանաս նախորդ Թերթիկի վրայի նոր հաշվին գումարը: Միանվագ վճարել չի կրնար, ո՛չ սկիզբը, ո՛չ մեջը. միակ հնարավորը ամսական վճարի ձևն է: Արծիվը եկող տարվընե կ'ուզե մեզի հետ քանի մը տարով պայմանավորվի, «քանի որ, կ'ըսե, ինծի ուրիշ նմանօրինակ գործեր տալագրելու իրավունք չեք տար. չեմ ուզեր, կ'ըսե, մշտական վախի տակ մնալ»: Մտածե՛ ու գրե՛ ինծի՝ ի՞նչ տևական պայման կրնանք առաջարկել. արդեն պիտի, որ գալ տարվընե հասը 5 կոպեկով չենք բավականանալու:

Է՛, կարծեմ, ինչ որ անմիջապես գրել պետք էր քեզի, արդեն գրեցի: Հա՛, Արծիվը կը խնդրե լուսանկարդ. ազնիկ է որ ղրկես, թէև չէ՝ մեկ ալ տեսար տեղե մը հիմար նկար մը կը ճարե ու կը տպե. ըսի որ՝ այդ տեսակ բան չընես, բայց ասոնք, ինչպես որ գիտես, հոսհոս են, երբ մտնավանդ տակը չահ ունին:

Տիկին Կաւաբինեն ու տղաքդ[4] վատահ եմ ազնիկ են: Ամիկա կը ցանկամ բոլոր սրտանց, առողջությունը ամեն՝ բանեն առաջ, անկե ետքն ալ հաջողություն ձեր աշխատանքին: «Հասկերը» լուե՞ց, թէ՞ զաղաբ մըն է միայն: Ինքս ալ չգիտեմ այդ երկուքեն որը մպրեմ: Բեզի սլինդ-սլինդ կը համբուրեմ.

1912 մարտ 27
Պրինկիպո

Լևոն

Հասցես՝ Le'on Segbossian
maison d'Eftalik Kabarisa
Nisam, Prinkipo (ile)
Constantinople

111. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Մայիսի 13, Կ.Պոլիս>

Սիրելի՛ Ստեփանս, չորս-հինգ ամիս է ոչ մեկ լուր չունիմ քեզմե: Բանի մը նամակներ եմ գրած, չգիտեմ՝ Բ. տարվա նկարներու պատրաստությունը կարգագրե՞ր ես. հունիսի մեկին խոստացեր եմ Բ.

տարվա կլիչեներն ու նյութերը հանձնեմ հրատարակչին: Կլիչեները շատ առանալես է կախված նաև Բ. տարվա վարժություններու պատրաստելը. ոչ մեկ լուր չունիմ ու անհանգիստ եմ. միզուցե քեզի ղրկած նկարներու ցանկը ու նամակները առած չըլլաս, օր օրի անհամբեր լուրերուդ կ'ըսպասեմ: Հետագրով «Հո երթասի» հոստեղի թարգմանությունն էիր ուզեր. ուրկե՞ ալ ականջիդ հասեր է: Հոս շատ փնտրեցի. գրավաճառներու մոտ չը կա, երկուքը խոստացան գտնել, բան դուրս չեկավ, ըսին՝ «Շողեր»[1] անունով թերթի մը իրրև հավելված մեկ թիվ երկու պրակ բան դուրս եկած պիտի ըլլա. բայց այդ տեսակ թերթ երեսը չեմ տեսած, երևի դադրած պիտի ըլլա: Եթե այդ անտեսանելի թարգմանությունը ձեռք ձգելու հաջողիմ՝ կը ղրկեմ իսկույն: «Հասկները» իրենչ եղավ. մի՞թե դադրեցավ. զզալի է պակասը: Ինչպե՞ս ես դուն, իրենչ կընես, ինչո՞վ ես զբաղված, Լուսաբերները իրենչ հալի են. քանի Կովկաս վերադարձեր ես՝ ինծի չնորհքով նամակ մը չունիս: Ընդունե իմ բոլոքներս ու համբույրներս. Լևոն

Հասցես. Le'on Seghossian, Prinkipo (ile)
Nisam, maison de Kabarisa

112. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, ձեռագիրներն ու կլիչեները Արծիվին հանձնելու պայմանաժամիս մնացեր է ընդամենը երկու շաբաթ, իսկ քեզմե ոչ մեկ լուր չունիմ. քար լռություն: Սկսած եմ անհանգստանալու, չըլլա՞ թե տկար ես կամ որևէ ուրիշ դժբաղդություն մըն է պատահեր. կամ դուցե նամակներս չես առած. բայց մի՞թե 5-6 նամակ իրարու հետևե կրնան կորչել: Կարտ մը գրի՛ գոնե ինծի անմիջապես: Եվ ընդունե իմ ու մերոնց ջերմ ու սրտագին բարևները: Համբույրներով՝

Լևոնդ

1912 մայիս 14
Կ.Պոլիս

113. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանա, չգիտեմ ինչպես բացատրեմ քու այս տարօրինակ լռութիւնդ. երևի անփութութիւն. չեմ մեղադրեր քեզի, բայց պիտի խոստովանիմ, որ չատ կը զարմանամ: Ընթերցարանի կլիշեները սատայա, մեկ-երկու հատը անհարմար են, մյուսները աղեկ են. զալ շաբթու կ'ըսկսինք Բ. տարվան տպագրութիւնը, նյութը ամբողջ փոխադրված է ու խմբագրված՝ պատրաստ, բայց եմ թողած «Գառնիկ աղբարին» ու «Զարի վերջը», ավելցուցած եմ քանի մը մանր կտորներ ժողովրդականեն կամ Հասկևրևն, մնացածը հինն է, որ փոխադրեր եմ հնար եղածին չափ հարազատ: Այս շաբթու կ'ավարտի Ա. տարվան երկրորդ տպագրութիւնը, իսկ այբբենարանը տպված է արդեն վաղուց: Մեր այս տարվան պայմանը հետևյալն է Արծիվի հետ.

13.000 օրինակ Այբբենարան - 650 րուբլի
5.000 ,, Ա. տարի (Բ. տիպ)- 250 ,,
5.000 ,, Բ. տարի - 250 ,,
6.000 ,, Բ. վարժութիւնները - 200 ,,

այսինքն ընդամենը 16250 ղրշ, որ պետք է վճարե ամսե ամիս 1300-ական ղրշով. բայց ասիկա թեորին է, իրականին մեջ 5-6-8 ոսկի ամսական հավիվ կը վճարե. նախորդ տարվան վճարը նոր լրացավ, հին հաշիվը այս ամիս փակեցինք. չատ անհամ ու անհարմար բան է այդ ամսե ամսի գլխու ցավը, բայց կը տեսնեմ, որ ուրիշ ճար չը կա և պետք է համակերպիմ. ավելին չի կրնար և ուրիշ որու հետն ալ որ կապվելու ըլլանք՝ նույն պիտի ըլլա արդյունքը, եթե ոչ ավելի գիչ. աղքատ ու խարտպես աշխարհք է հոս: - Վարժութիւններու կլիշեները դեռ չեն ղրկած. արդեն չատ ուշ է. մանավանդ նյութերն ալ չեմ կրնար մշակեր, մինչև նկարներդ ձեռքի տակ չունենամ. կը հուսամ հնար եղածը կարգադրած կ'ըլլաս արդեն: Գալով հատաջիկա տարվա գրքերու ծախվելուն՝ կը կարծեմ նախորդեն մեծ տարբերութիւն մը ունենալու չէ, թեև քաղաքական մթնոլորտը սաստիկ խառնակ է, որ նորմալ դպրոցական կյանքին վրա ալ անշուշտ իր ազդեցութիւնը ունենա պիտի. մյուս կողմեն ալ այս տարի հոս ալ մրցակից մը ունինք մեզի՝ հոստեղի «Դասընկեր» մը. Ռուբեն Զարդարյանը սկսած է հրատարակել Մեղրագետա անունով ընթերցարաններ, Ա. և Բ. տարիները այս տարի դուրս

եկան, մեր հետևողությամբ, անսխալեմ ու ընդհանրապես տափակ նյութերով զբաղույկներ, բայց ճի՛շտ այդ տափակությունը հոս հավանորեն ավելի պիտի հասկնան, քան մեր նյութերը, մեջը լեցուցած հաջող ու անհաջող, նյութին կապված և նյութին հետ ոչ մեկ կապ չունեցող նկարները, այլև մանավանդ հեղինակի խմբագրական և ուրիշ տեսակի կապերը անչուշտ ճամբա մը բանան պիտի իր գրքերուն. բայց իմ խորին համոզումս ան է, ինչ որ հաճախ կրկներ եմ «Դասընկերի» համար ալ. ասոնք և ասոնց նման դեռ շատ ուրիշները կու գան ու կ'ապրին. ամեն գիրք իր ճաշակի տերը, իրեն կապվածը կամ համակրողը կը գտնե: Մեր Լուսաբերները միշտ կը մնան ընտրելին հասկըցող ուսուցիչներուն համար. այնպես որ անոնց համակրողներու թիվը հետզհետե ավելնա պիտի անհրաժեշտորեն տարի մը քիչ մը ավելի, տարի մը քիչիկ մը պակաս, ատիկա ոչինչ չի փոխեր ընդհանուր պատկերին մեջ: Ասիկա նյութականի տեսակետեն. գալով բարոյականին՝ մենք արդեն իսկ հաղթած ենք. այդ Դասընկերներն ու Մեղրագետերը, Միածաններն[1] ու Դայլայլիկները[2] (վերջին երկուքը այբբենարան) առավել կամ նվազ ճարպիկությամբ Լուսաբերին հետևելու ճիգեր են: Այդ գրքերեն մեյ-մեկ օրինակ կը ղրկեմ քեզի մեր նոր հրատարակություններուն հետ:

Ահա՛ տարին լրացավ և չուտով սկսելու է նոր տարեշրջանը, իսկ ես դեռ բառի բուն իմաստովը ոչինչ չգիտեմ արևելյան Լուսաբերներու մասին. ի՞նչ վիճակի են, ինչպե՞ս կը գնահատվին, ինչպե՞ս կը ծախվին. ի՞նչ եղավ Վարժություններու հարցը. Ուղեցույց գրեցի՞ր, կամ գրելո՞ւ ես. ի՞նչ կը մտածեք Ե. ու Զ. տարիներու մասին: Ես մտադիր եմ այս ձմեռ վերջացնեմ անպատճառ Գ. և Դ. տարիներու փոխադրությունը, ուրկե եռքը հերթական կը դառնա վերջին 2 տարիներու կազմելու հարցն ալ:

Գամ դրամական հաշվին. արդեն ինչպես գրած եմ նախորդ նամակներուս մեջ, հաշիվներու պարզության համար լավագույնն է արևմտյան հրատարակություններուն համար արևելյան սնդուկի ըրած ծախքերը չմտցնեք արևմտյան սնդուկի հաշվին մեջը, այլ իմ հաշվիս, իբրև ինձի վճարված, այն աոեն հոսկե պարզ հաշիվ մը կը ներկայացնեմ ձեզի և իսկույն կը կարգադրվի: Իսկ եթե մեկ սնդուկով կ'ուզես հաշիվ պահես՝ առայժմ քեզի այսքանը ըսեմ, որ 600 րուբլի մուտ-

քի դեմ մինչև այսօր 272 րուբլի ծախք եմ ըրած (վարժուհյուններու 200 րուբլին ալ իհարկե առանձին):

Իսկ արևելյան նպատակին ատացել եմ թե քու, թե Գիրի միջոցով ձեռքե կամ պոստով

1910 օգոստոսեն - 1911 ապրիլ - 653.07 րուբլի

1911 օգոստ. - 1912 մարտ - 700 -

Խնդրած եմ, որ վճարեք Ֆիլիպին - 200 -

Ուրեմն երկու տպագրական շրջանի համար ընդամենը 1553 րուբլի: (Այս հաշվին մեջը չը կա ինծի պրկված գրքերուն արժեքը):

Կը խնդրեմ, Աստվա՛ծ, որ այս թիվերը գրքերուդ վրա անգամ մը ատուգես և կարգադրես, որ իսկույն ինծի գրամ հասցնեն. ես հույս ունիմ, որ գոնե 3-4 հարյուր րուբլի մը դեռ հասնելու է ինծի հին հաշիվները փակելու համար, մանավանդ որ այդ 3-4 հարյուր րուբլիին ես հիմա չափազանց պետք ունիմ, իսկ պետքը, ինչպես գիտես, հույսեր կը ծնի:

Ժամանակով Թիֆլիս Օհաննես անունով տղա մը կար, որու բարեմտիվ չեզոքի պարապմունքներեն մեկն ալ մեզի հետ միասին Լուսարեր չինելն էր, հիմա կա՞, չի կա՞ այդ տղան, բնավ տեսած ունի՞ս. ես իրմեն, ճիշտ ինչպես և քեզմե, ոչ մեկ լուր չունիմ: Եթե հանկարծ պատահի, որ հետս հեռագրով խոսելեն կշտանաս և մտքերու փոխանակության քիչ մը ավելի նահապետական ձև մը ընտրես՝ իր մասին ալ ինծի տեղեկություն մը տուր:

Իսկ քո՞ւ մասին ինչ ըսեմ քեզի: Ինծի չատ կը հետաքրքրե քու «Պատմության» վիճակը[3], քու «պլրոցիդ» վիճակը[4], քու «Հրատարակչականիդ» վիճակը[5], քու դադրած թե դադարած «Հասկերուդ» վիճակը և վերջապես քո՛ւ վիճակը: Ամեն նամակիս կը կրկնեմ նույնը և իզուր կ'ըսպասեմ պատասխանիդ: Իսկ Ջավոն արդեն հեգնոտ խոսքեր կը նետե քու և իմ հասցեիս:

Մենք կ'ապրինք Իշխաններու կղզին ծակ-գրպան իշխաններու պես. մեր դեմի բնությունը գոնե իշխանական է անպայման. և երախտապարտ ենք իր տեղին ու օդին, որովհետև Վիզենս սկսավ աղեկնալ: Բժիշկի պատվերով ձմեռն ալ հոս ենք մնալու, թեև ինծի համար մեծ անհարմարություն է և ծանր ծախքեր. օրը երեք ժամ չոգենավի վրա. բնավ չզարմանաս, եթե օր մըն ալ գործը նավապետությամբ վերջանա. առնվազն երևակայական նավապետությամբ մը վեպի մը կամ դրա-

մայի մը մեկ անկյունը: Այս երկու օրս կ'ըստանայա վերջին դրամաս՝ «Հին Աստվածները», որ ինչպես կ'ըսեն, նոր դուրս եկավ մամուլին տակին:

Շնորհակալ եմ ղրկած պատմության տետրակներուդ համար. հույս ունիմ կը ղրկես և չարունակությունը, եթե կա: Այլև կը խնդրեմ Հանձնարարես Գիրին, որ ուղարկե իմ հասցեիս Ահարոնի նոր աշխատությունը զավառաբարբառներու մասին Էմինյան հատորներու վերջինը[6]:

Տիկին Կատարինեին սիրով ու հարգանքով բարևներս. կը կարծեմ ուսանողներդ մոտդ են ըլլալու հիմա[7]. համբույրներս նոր սերունդին. համբույր մըն ալ քեզի: *Լևոն*

1912 հուլիս 24
Պրինկիպո

Հասցե՝ L. Segbossian
maison d'Eftalik Kabarisa
Nisam, Prinkipo
Constantinople

114. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս:

Երկու ամսվան չափ է ստացած եմ քու Ծավկիսեն[1] դրած նամակդ, ինչպես և «Գրի» փոխադրած գումարն ու գրքերը: Հոս իմ աշխատություններս այնքան իրարու վրա են և չուրջիս կյանքը այնքան օրը օրին տակնուվրա, որ մինչև հիմա քեզի պատասխանել չը կրցա: Այս կիրակին վճռեցի նվիրեմ քեզի և լուսաբերյան հաչվական պարտականություններուս:

Նախ և առաջ քու ներկայացուցած բոլոր հաչիվներդ ճիշտ են ու կանոնավոր: Համաձայն եմ, որ հուլիսի հուլիս երկու կողմեն հաչիվները ներկայացնենք, ստուգենք ու փակենք: Նամակիս մեջ կը գտնես արևմտյան 1911-ի հրատարակության իմ հաչիվս, ստուգեցեք ու փակեցեք:

Ձեզի համար ավելի հետաքրքիրը հիմա անշուշտ առաջիկա տարվան հարցն է, ինչպես և ինծի համար: Լուսաբեր Այբբենարանը 13.000 օրինակ տպվեցավ ամառւան սկիզբը: Ամառը վերջնապես փոխադրեցի Լուսաբեր ընթերցարան Բ. տարին, որ տպվեցավ օգոստոսին 5.000 օրինակ: Իսկ անկե առաջ ընթերցարան Ա տարին. նորեն 5.000 օրինակ: Ուրեմն մեր երեքի հաշվին ընդամենը 23.000 օրինակ գիրք, որ 5-ական կոպեկեն կ'ընե 1.150 րուբլի: Պատրաստեր եմ նաև գրավոր վարժութիւններու Բ. տարին, որ տպվեր պիտի սեպտեմբերի վերջերը. վրա հասնող պատերազմը խանգարեց[2]. եթե մինչև նոր տարի քիչիկ մը ավելի հանգարտ պայմաններ վերահաստատվին մեր չուրջը՝ նորեն տպել կու տամ: Բոլոր ծախքերը և աշխատանքը ընելես ետքը ինծի համար իհարկե չատ անախորժ է, որ այս տարի անտիպ մնա:

Հայ գավառներու անհանգիստ վիճակը և հիմա ալ վրան ավելցած պատերազմը տնտեսական սմեն չարժուամ ու կյանք կասեցուցած է: Տարիքի մեջ եղողները պինվոր կ'երթան ու չատ-չատերն ալ արտաստհման. հարաբերութեան գլխավոր ճամբաներու վրա կեցած է ապրանքներու ու մասնավորներու երթևեկը, պինվոր կը փոխադրվի, խանութները կը գոցվեն, բայց մնացողներն ալ անգործ են. և բնականաբար ոչ ոք չի կրնար իր հանճնառութիւնները կատարել: Աւտոնց վրա ավելցուր իրավացի ու ավելորդ վախերն ու հուզումը, ապագայի անորոշութիւնը, և պարզ կ'ըլլա քեզի, որ գրքի ժամանակ չէ հիմա:

Բայց իսկույն ավելցնեմ, որ պատերազմի այս խառնակութենեն առաջ ալ, դեռ սեպտեմբերի վերջերը Արծիվը չատ կոտրված էր. մեր գրքերու տարածումը այս տարի չատ էր խեղճ. Արծիվի ըսելովը սեպտեմբերի վերջը 3.000-ի չափ այբբենարան էր ծախված ընդամենը, կարծեմ, 1000-1500-ի չափ Ա. տարի, իսկ նոր հրատարակած Բ. տարին հազիվ 7-800 օրինակ:

Պատճա՞ռը: Ամենեն առաջ լեզվի խնդիրն է. ամեն կողմե կը քննադատեն մեր լեզուն, չեն հավնիր. «Մեր լեզուն չէ, կ'ըսեն, կովկասյան լեզվի թարգմանութիւնն է, կ'ըսեն»: Նախ անոր համար, որ պիտեն, թե կովկասյանի վոխադրութիւն է, ուրեմն apriori[3]: Երկրորդ՝ մեր լեզուն իրա՛վ որ սովորական հրապարակին լեզուն չէ՝ ո՛չ իր քերականական կազմով, ո՛չ ալ բառամթերքով. մեր ժողովրդականին մոտենալու ջանքը, մեր պարզութեան ու հասկութեան ձգտումը անոնց համար օտար է ու խորթ. ատիկա իբրև կովկասցիութեան

կ'ըզգան, գուցե և իրավունք ունին: Եվ վերջապես ես ալ հանցանք ունիմ հոտ. քանի մը աստղյուններ, որ գիտեի, թե հոս չը կա՝ դիտմամբ պահեցի վոխադրութեանս միջոցին, դեռ մանուկ տարիքեն մեր փոքրիկներուն համար հարազատ դարձնելու մտածումով, այսպես օրինակ՝ «ման գալ», «փուլ գալ», «հարու տալ», «կենտ». ուրիշ քանի մը տեղ ալ պահեցի ժողովրդականի համն ու հոտը պահած ըլլալու համար, օրինակ՝ «արոտ ընել», «կաթ ընել», «պաղ» (սառույցի տեղ) և քանի մը ուրիշներ: Գեչ ըրի թե աղեկ, հիմա ճշմարիտ ինքս ալ չգիտեմ. բայց իրողութիւնը ան է, որ արևմտյան արվեստական լեզվով սնված և անով հալարտ մերիններուն համար չատ խորթ կը հնչեն այս նորութիւնները. արդեն գիտես, թե ի՞նչ աստիճան պահպանողական են մեզմնք լեզվական հարցի մեջ, գուցե և ընդհանրապես, ամեն հարցի մեջ: Եվ վերջապես, անշուշտ, բան մը կա մեր Լուսաբերներուն մեջը, մեր նյութերուն մեջը, մեր գրելուն ու խմբագրելուն մեջը, մե՛ր մեջը և ի՛մ մեջս, մեզի հատուկ, որ մենք չենք կրնար փոխել և որ պետք չէ փոխենք, որը կ'ըզգան իբրև տարբեր. իբրև ուրիշ. իբրև «կովկասյան»:

Մեր գրքերու ա՛յս «թերութեյան» դեմ մենք մեծ բան մը չենք կրնար ըներ, իմ կարծիքովս, նոր հրատարակութեյան առեն քանի մը թեթև փոփոխում, քանի մը թեթև սրբագրութեյուն չրջապատի ճաշակը չափազանց չվիրավորելու չանքով. ահա՛ բոլորը. ասկե հետուն երթալ չենք կրնար. պիտի թողնենք ժամանակին, որ նոր սերունդները կամաց-կամաց մեր ետևեն բերե:

Երկրորդ պատճառը մեր ուսուցիչներու չափազանց ողորմելի, աշխատելու անսովոր ու միտքը չարժելու անընդունակ ըլլալն է: Մեր նյութերը, թե՛ ժողովրդականները և թե՛ մյուսները, խիստ են տարօրինակ անոնց համար. չգիտեն՝ ինչ ընեն: կը դժվարանան մեր նյութերով. և չիտակ է, որ ավելի պատրաստութեյուն և ըմբռնում է պետք մեր գրքերով դասավանդելու համար:

Մեր գրքերու ա՛յս «թերութեյան» դեմ կը մտածեմ ամեն տարվան ետևը քանի մը երեսով ուղեցույց մը դնենք ուսուցիչներուն համար գործնական կարելիին չափ ու պարզ: Առանձին գրքով մանրամասն ու ավելի խոր աշխատանքը ավելորդ բան է առայժմ մերիններուն համար, նախ՝ չեն գներ. երկրորդ՝ չեն հասկնար. ասիկա այսպես է, ա՛յո. իմ «Գրել-կարդալ սորվեցնելու եղանակը» երբ ինձի ծանոթ տեսուչներ

ուզեր են իրենց դասատուին ձեռքը դնեն, պատասխանը եղեր է՝ «չեմ հասկնար, ինչ կը գրե»:

Այս երկու պատճառները առաջ հիշեցի, որովհետև անոնց դեմ այսպես թե այնպես կրնանք բան մը ընել: Հաջորդ երկուքին դեմ մենք ոչինչ չենք կրնար ընել. և այդ երկուքը տարածման տեսակետեն շատ ավելի կարևոր են:

Առաջին՝ մեկը մյուսի ետևե դուրս եկան ու դեռ դուրս գալու վրա են ուրիշ մրցակիցներ, որոնք եթե մեր արժեքը չունին, ունին գործնական ըլլալու մեծ արժեքը, իրենց միջավայրի ծնունդ են, միջավայրը ապեկ հասկցող և ըստ այնմ գործ տեսնող. և իրենց միակ հոգն ու նպատակն ալ վարպ վաստակիլն է. կը տեսնես, որ մեզմե անհամեմատ ավելի ուժեղ են: Երկու-երեք այբբենարան կա նոր, բոլորն ալ մեր Լուսարերի վրա ձեված, իհարկե շատ աշնորհք կերպով. քանի մը պատկեր մեր ժանրով, քանի մը ձեռագիր, քանի մը պատմութիւններ նորեն մեր ժանրով, մնացածը կևրպ մը լկցուցած ու վերջացավ-գնաց: Իսկ ընթերցարաններ բացի եղածներեն ավելցավ Զարդարյան Ռուբենի Հրատարակած «Մկրտագեղը». նորեն սմեն տեսակետե խեղճ բան մը, կոպնակի նկարներով հրապուրիչ, և կարծեմ մեծ հաջողութիւն է ունեցած ըլլալու: Մրցակիցներու չատութիւնը չէ սակայն ինքնին Լուսարերի տարածման վնասողը, այլ մրցող դասագրքերու հրատարակիչներու ոչ ըլլալը: Ասիկա է իմ կարծիքովս վերջին և ամենեն կարևոր պատճառը Լուսարերներու նվազ տարածման: Բոլորը զանազան պրսխանութիներ են, որ заказ[4]-ով չինել կուտան այդ գիրքերը, հեղինակին բան մը կը վճարեն և վերջը իրենք մեծ գեղջերով կը քշեն. մանավանդ սմեն կողմ մեծ կապեր ունեն և զանազան տեսակի հաշիվներ. սաղ վրա ավելցնեմ, որ անոնք են ուսուցիչները տեղավորելու պաշտոններ ճարելու մեջեն աշխատող մարդիկը: Ամեն տեսակ խոստումներով անոնց սիրտը կ'առնեն, ձրի գրքեր կը խրկեն և կարիք եղած տեղն ալ ուղղակի կը կաշառեն, որ իրենց գրքերը գործածվեն անոնց գպրոցին մեջ: Մեր միջավայրին մեջ, ուր մարդիկ տաս-տասնհինգ գուրուշի համար իրար ալ կը ծախեն, ինքզինքնին ալ, անշուշտ շատ դժվար է անոնց դեմ մաքառիլը:

Այս բոլորը կը գրեմ ձեզի, որ իրերու վիճակին ընթացիկ պահեմ, թե չէ անձնապես իմ վրաս մասնավոր տպավորութիւն մը չըներ: Ես միշտ ալ այն համոզման եմ, որ մենք գործնական մարդիկ չենք, մենք

աշխատանքի մարդիկ ենք, խորքը գացող մարդիկ ենք. իսկ արտաքին հաջողութեան համար պետք է երեսանց երթաս և ստեղծել, փոխել, նորոգել չպետք է ուզես: Մյուս կողմեն ալ ես գիտեմ, որ Լուսաբերները տարվե տարի ամեն մեկուս մեկ-երկու հարյուր բուբլի կը բերե. ատկե ավելին պետք չէ որ սպասենք, գոնե քանի մը տարիներու համար, գոնե ես չեմ սպասած, և մանավանդ հիմա, քանի խորը կը նայիմ չուրջս, այնքան չեմ սպասեր: Արծիվը կրնա կուտրվեր, որովհետև անոր համար մեծ չահն է միայն, որ կ'ակնկալեր: Անոր կուտրված ըլլալուն ուրիշ պատճառ ալ կա՝ մրցակից հրատարակիչներու առաջ գալը, մանավանդ իր գույնի մարզոցմե: Հիմա կ'ըսպասե իր ընկերոջը գալուն, որ Կարին էր ձմեռը, նոքը հույսը դրեր է քու գալուդ վրա, ամառը, որ միասին խորհրդակցինք, ինչպես ինքը կ'ըսե: Այս բոլորի վրա հիմա ալ ինքը պահեստի մեջն է կարծեմ, իբրև պինդոր, ու վախի ու վարանման մեջ, թե տակեն ինչպես ելնե, եթե հանկարծ կանչեն:

Իսկ մենք՝ Հովհաննեսը, դուն ու ես, իհարկե աղեկ է, որ անգամ մը իրարու գանք նախ՝ արդեն մեջտեղ եղած գրքերը թե՛ լեզվի և թե՛ նյութի և թե՛ ուղեցույցի տեսակետեն անգամ մը աչքե անցընելու, լրացնելու, ճշտելու և սրբագրելու. երկրորդ ալ՝ Հինգերորդ ու Վեցերորդ տարիներու կազմութեան մասին լրջորեն խորհելու, եթե ոչ անմիջապես կազմելու: Կարծեմ ամենեն հարմարը ձեր Պոլիս գալը պիտի ըլլա. կզգին հիանալի է, դուն ալ գոհ կմնաս, Հովհաննեսն ալ. Հովհաննեսի համար անգամ մը հոս գալը բացարձակ անհրաժեշտ է, թո՛ղ տեսնն մեր աշխարհն ալ ու իր պայմանները[5]: Բայց այնպես խառնակ ժամանակներու մեջ կապրինք, որ մարդ չգիտե ինչ է ըլլալու վաղը. այնպես որ դեռ չատ ժամանակ ունինք մինչև ամառ մեր ընելիքը որոշելու:

Անցածները քեզմե քանի մը տող ստացա Սահակ քահանայի գրքերու մասին. ես անցած տարի եղած գրքերը 40% զեղչի հաշվով հանձնեցի Արծիվին, տեր Հորն ալ, Արծիվին ալ հայտնելով, որ անմիջապես իրարու հետ հարաբերութեան մտնեն: Նամակդ իհարկե ցույց տվի Արծիվին. պատասխանեց՝ «Այո՛, ես արդեն իրեն գրելու եմ. առաջարկ ունիմ ընելու»: Հիմա ինչ է գրելու կամ ինչ է գրեր՝ չգիտեմ. չեմ կարծեր, որ չատ բան ծախած ըլլա. այդ գրքերը հոս հազիվ թե ծախվին. հոս միայն տեղացի գրավաճառներու հրատարակած դասա-

դրքերն են, որ կրնան ծախվիլ, ըլլան անպետք թե պիտանի, ասիկա բոլորովին նշանակութիւն չունեցող հարց է արդեն:

Կարինի ազգային վարժարաններու տեսուչը[6], որ ամենուս հարգելի անձնաւորութիւն մըն է, ինձմե խնդրեց ռուսերեն լեզուով նշանաւոր մանկավարժական դրքերու պզտիկ ցանկ մը, մանաւանդ մեթոտիկի (դաստիարակութեան առարկաներու դասաւանդումը) վերաբերմամբ. խոստացա, որ դիմեմ քեզի. այդ ցուցակը, իհարկե իրենց արժեքն ալ քովը նշանակելով, եթե հնար է կը ղրկես Կարին, հայ դպրոցի հսացեով, պարոն Ռոստոմյանին[7]:

Հիմա ալ իմ հանձնարարութիւններս՝ նախ՝ ըսե՛ Գրին, որ ղրկե ինծի իրմեն խնդրած Էմինյանի հրատարակութեամբ Հատորը՝ Ագաթանի «Հայ բարբառներու ուսումնասիրութիւնը»: Երկրորդ՝ տեղեկացիր խնդրեմ «Գիր»-են արդյոք ստացեր է իր հասցեին ղրկված չգիտեմ քանի հարյուր հատ «Հին Ատաւածները»: Եթե այո՛, խնդրե իմ կողմես, որ մեյ-մեկ օրինակ ղրկե հայ թերթերուն և ուրիշ որուն որ դուն խորհուրդ կու տաս: Իր ժամանակին քեզի ղրկած եմ «Հին Աստվածներս», կը հուսամ ստացեր ես:

Եվ ամենեն վերջն ալ ամենեն կարևորը, ստացած գումարս բոլորը ծախեր եմ պարտքի՝ վստահ ըլլալով այս տարվան բյուտճեիս վրա. բայց պատերազմը ամեն բանի հետ իմ բյուտճես ալ տակնուվրա ըրավ. Արծիվը ըստ պայմանի ամսե ամիս 1.300 ղրուշ էր տալու, ատիկա իհարկե թուղթի վրա էր միայն, բայց ամսական 5-6 ոսկի մը կ'ըստանայի անպայման, երեք ամիս է այս ոչինչ չեմ ստացած և մեկերկու ամիս ալ հազիվ թե կարողանամ ստանալ արդի պայմաններուն մեջ. իսկ իմ բոլոր ծախքերս հոս նաղդ դրամով է, ո՛չ վարկ ունիմ, ո՛չ կապ. կյանքը ավելի սուղցած է. դրամը նվազած, և չատ ու ծանր սպասնալից օրեր մեր առջևը: Կը խնդրեմ, որ այս նամակս ստանալուդ պես ինծի դնեն 150 րուբլի մը փոխադրել տաս: Միայն խնդրեմ չտատով, Գրի վրա չթողնես, ռուսական պոստի ճամբան բաց է դեռ. կը վախնամ վաղը մյուս օր այդ ճամբան ալ կրնա գոցվիր: Փոխադրել տուր չեքով ապահովագրած նամակի մեջ հետևյալ հասցեին. Constantinople, Prinkipo, Nizam և անունս:

Հա՛, «Հո երթասի» թարգմանութիւնը անցած օր հանկարծ ձեռքս ինկավ. ըստ երևույթին Ֆրանսերեն կրճատ հրատարակութենե

Թարգմանութիւն մըն է: Շուտով կը ճարեմ ու կը ղրկեմ քեզի Լուսաբերներու նոր Հրատարակութեանը հետ:

Տիկին Կատարինեին ջերմ ու սրտագին բարեւներ Զավոյի և իմ կողմես. ջերմ բարեւներ և քեզի Զավոյեն, իսկ ես կարոտով կը համբուրեմ չրթունքներդ:

Լեւոն

1912 Հոկտ. 7
Պրինկիպո

1913

115. ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1913 Հունվար 7

Սիրելի՛ Լեւոնս, ես չատ ուրախ եմ քու բաց նամակներուդ համար, որոնք երկտասարդութիւն, թարմութիւն ու կտոր մը Եվրոպա կը բերեն միշտ ինծի[1]: Իմ չպատասխանելուս դուն մի՛ նայիր, Հոգի՛ս, այնքա՜ն խառնակ է չրջապատս, այնքա՜ն խառնակ է գլուխս: Հայրիկիդ ալ երկար ժամանակ է չեմ գրած, թեև գրելս անհրաժեշտ է ու կարևոր, այս քանի մը օրը կը ջանամ: Գրե՛ ինծի քու կյանքեդ, քու ուսումեդ, քու ծրագիրներեդ ու քու տպավորութիւններեդ: Հույս ունիմ, որ ամառը Հայրիկդ ու մայրիկդ կ'ըլլան Հոս մեզի՝ կղզին, նույնպես և Հովհաննեսը. նորեն Լուսաբեր կա սեղանին վրա: Իմ «Կինը» առանձին տպված չէ, հավանորեն չուտով կը տպեմ[2]: Առանձին տպված է «Հին աստվածները», որ և այս կարտիս հետ կը հանձնեմ պոստին քու Հասցեիդ: Ջավոն ու ես ջերմ ու սրտագին կը համբուրենք քեզի ու Նոր տարիին հետ նոր օրեր ու նոր ուրախութիւններ կը ցանկանք քեզի:

Լեւոն Սեղբոսյան

(Բացիկի դարձերեսին՝ Exp. Leon Segbossian
Nisam, Prinkipo (ile) Cons/le)

116. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, ամենեն առաջ ընդունէք իմ ջերմ շնորհակալութիւնս քու հետաքրքիդ, շնորհավորանքիդ ու հոգածութիւնդ փոխարէն[1]: Լրագիրներուն խմացած էի, որ «Ասավածներս» իրենց վրա ուշադրութիւն են դրաւեր Թիֆլիսի երկնքին տակ[2]. Հիմա ալ կը լսեմ, որ ենթարկեր եք դատի[3]. խե՛ղճ աստվածներս... Հետաքրքիր եմ դիտնալու ձեր հանած վճիռը: Գալով ուզած լրագրութիւնդ՝ պատես պիտի նամակիս կից[4]. բավական դլուխ հոդնեցուցի, մինչև խմբագրեցի. ձրի ներկայացնելու թուղթ չի տաս ոչ ոքի. մնացածը կարգադրե ինչպես ինքդ հարմար դատես: Իսկ ես անցնիմ մեր Լուսաբերին: Նախ այսքանը լսեմ՝ որ հակառակ բոլոր անպատեհութիւններուն՝ վաճառատեղը այնքան ալ պէշ չէ, որչափ որ կ'ենթադրեր «Արծիվը» տարվան սկիզբը հուսահատորեն. գրեթե ճիշտ նույնը, ինչ անցած տարի: «Այբբենարան» ծախված էր 6500 օրինակ դեկտեմբերին վերջը. «Առաջին տարի»-են ծախված էր 3500 օրինակ (1000-ի չափը նախորդ տիպեն էր մնացած) նույնպես դեկտեմբերին վերջը. նույն միջոցին երկրորդ տարիեն ծախված էր 2000 օրինակեն ավելի: Մինչև հիմա այդ թիվերը կրնան թեթև փոփոխութիւններ կրած ըլլալ, բայց չեմ կարծեր մեծ բան մը: Վարժութիւններու Բ. տարին, ինչպես արդեն գիտես, պատրաստ է տպարանին, բայց «Արծիվը» ուշացավ հրատարակելու, վերջն ալ խնդրեց, որ հրատարակենք առաջիկա տարվան համար, համաձայնեցա: Մեր պայմանի համեմատ ամեն ամիս առանալու էի տասերեք ոսկիի չափ, սակայն իրապես առացեր՝ եմ մինչև հիմա ընդամենը 355 րուբլի, ուրկե 115 րուբլի ըրած ծախքերս են ընթերցարաններուն համար, մնքը հաշված կլիշեները, ուրեմն իմ հաշվիս անցեր է մինչև հիմա ընդամենը 240 րուբլի:

Այս տարի տպելու չենք այբբենարան, ո՛չ առաջին տարի և ո՛չ երկրորդ տարի. պիտի տպվի Գ. և Դ. տարիները (այլև վարժութիւնները՝ Ա. և Բ. տարի): Իմչ պիտի ըլլա այդ հատորներու գինը. և մենք իմչ պիտի առանանք ամեն մեկ օրինակի փոխարեն. դուն այդ հաշիվներեն ազեկ կը հասկընաս. անգամ մը հաշվե՛ և գրե ինծի, որ հայտնեմ «Արծիվին» ու համաձայնութեան զանք: Ես կլոր հաշվով կը մտածեմ Գ. տարվան գինը ըլլա վեց ղուրուշ, իսկ Դ.-ինը յոթը ղուրուշ, իսկ ամեն մեկ օրինակի համար Գ. և Դ. տարիներու համար առանանք

10 կոպեկ, այբբենարանի առաջին և երկրորդ տարիներու համար պահելով հին սակը՝ օրինակը 5 կոպեկ: Ասիկա ավելի պարզ հաշիվ է, թե չէ կրնանք առաջարկեր այբբենարանի համար օրինակը 5 կոպեկ, I տարին՝ 6 կոպեկ, II տարին՝ 7 կոպեկ, III տարին՝ 8 կոպեկ, IV տարին՝ 9 կոպեկ (որը մոտավորապես վերի հաշվին կուգա):

Կա երկրորդ կետ մըն ալ՝ «Արծիվը» կ'ուզե քանի մը տարվա ապահովութիւն առնել, այսինքն քանի մը տարվա համար պայմանագրվինք. կարծեմ կը վախնա, որ արևմտյան լուսաբերներու տպագրութիւնն ալ փոխադրենք Կովկաս, մանավանդ եթե քաղաքական դեպքերը հարմարութիւն ստեղծեն այդ ուղղութեամբ. իրենք ալ հիմա լրջորեն կը մտածեն փոխադրվին Կարին. բայց այս բոլորը դեռ օդի մեջ բաներ են: Մտածե՛, անտեղութիւն մը կա՞, որ, օրինակ, երեք տարիով կապվինք և ամբողջ գործը մեկ-անգամով հանձնենք անոնց, բնականաբար և կլիշեները, և ի՞նչ պայմաններ պետք է դրվին, որ փոխադարձաբար վստահութեան զեղծումն երկյուղ չը մնա մեջտեղը: Աս ալ աչքի առաջ ունեցիր, որ ես այլևս ոչ մեկ պայմանով Պոլիս մնալ չեմ ուզեր, խելոքվեցանք հոս ու ժանգոտեցանք. քաղաքական պայմանները ցավագար, չրջապատը զզվելի, պլրոցներն ու ամեն հանրային գործ ողորմելի, և այս բոլորի վրա ալ օրական ուղիղ հինգ ժամ համբորդութիւն պիտի ընեմ, որ զավակներուս համար առողջ օդ ունենամ: Դուն պիտես արդեն, որ իմ Պոլիս ձգտելուս գլխավոր պատճառներեն մեկը Լուսաբերն էր. ըրի՛ ինչ որ հանձն էի առեր, կը լրացնեմ հինգ գրքերու հրատարակութիւնը և կ'ուզեմ այլևս օձիքս ազատեմ: Սիրով պատրաստ եմ մեկ-երկու տարին անգամ մը քանի մը շաբաթով գալու ու նոր հրատարակութիւններուն հսկելու, սրբագրելու, նայելու և ընելու ինչ որ հարկ համարենք: Եվ այդչափը կը կարծեմ կատարելապես հերիք է: Եթե մեր հրատարակիչներեն գոհ մնանք՝ ատոր ալ բնավ կարիք չմնար. այդ բոլորը կարելի է ընել և հեռվեն:

Ես հիմա ամբողջովին պրաղված եմ Գ. և Դ. տարիներու համար տեղական նյութեր փնտրելով. եղած ամբողջ գրականութիւնը նորեն աչքե կ'անցընեմ ու կը նշանակեմ. խլամ սաստիկ շատ, պետքի բան սաստիկ քիչ: Նյութերու հիմնական մասը իհարկե կը մնա նորեն նույնը՝ արևելյանի մեջ եղածը. թուլլ կտարները ջնջած եմ. շատ երկարները պետք է սեղմեմ քիչ մը ավելի, իսկ երկրորդական արժեք ունեցողները աշխատելու եմ փոխարինեմ արևմտյան գրականութենեն առնված

նման կտորներով: Եղածի փոխադրության ժամանակ պլսաւոր դժվարությունը Հանեսի պոեմներն են. Բ. տարվան մեջ ըրած փոխադրություններուս մասին ոչինչ չգրեցիք՝ գո՞հ եք, դժգո՞հ եք և ինչե՞ն. այնպես որ նորեն ստիպված եմ ընելու խնդրիս կտրածը: Գալով ձեր ամառը հոս գալուն՝ եթե քաղաքական պայմանները քիչ մը ավելի չը պարզվին՝ իհարկե չեք գար. բայց եթե պատերազմը վերջացավ[5] ու քիչիկ մը գործերը իրենց սովորական ընթացքը առին՝ ձեր գալը հրաշալի բան կ'ըլլա. թե՛ եղած չորս տարիները աչքե կ'անցընենք նորեն անգամ մը, թե՛ հաջորդ երկու տարիները կարելի է հաստատ ծրագրել, եթե ոչ վերջնապես կազմել. այլև Հոստեղի Հրատարակության խնդիրը Արծիվի հետ կարելի է վերջնապես կարգադրել չատ ավելի հաստատ հիմերու վրա, քան եթե միայն ես ըլլամ կնքվելիք պայմանագրությունը ստորագրողը: Երկու-երեք չաբաթեն կը ղրկեմ ձեզի Գ. և Դ. տարիներու նկարներուն ցանկը, որ նկարել տաս ու կլիշե պատրաստվի. Հունիսի 1-ին պետք է սկսվի անպատճառ տպագրությունը, որ մինչև օգոստոսի կեսերը կարելի ըլլա ավարտել:

Տարի մը առաջ Հրատարակչական ընկերությունը դիմեր էր ինծի թուրքերենի կտորներ ընտրելու թարգմանության համար. ես ալ մատնանիշ ըրի լուրջ ու աշխատող տղա մը՝ Սարգիս Սրենց. և հիմա մարդը ընական կերպով կը հետաքրքրվի դիտնալու՝ արդյոք այդ հարցը որևէ պատճառով վերցա՞ծ է ընկերության օրակարգեն և կամ ընկերությունը ի՞նչ դիտավորություն ունի այդ մասին: Գրե՛ ինծի՝ ի՞նչ պատասխանեմ իրեն, ըլլա պաշտոնապես թե անպաշտոն, միևնույն է:

Հրատարակչականին հետ կապված ուրիշ հարց մըն ալ տամ քեզի և արդեն իմ մասին: Կը ցանկայի առանձին-առանձին կամ հատորով մը հրատարակեմ իմ նախորդ երեք դրամաներս, որոնք մինչև այժմ ամսագիրներու մեջ են միայն տպված («Եսի մարդը», «Ուրիշի համար» և «Ճամբուն վրա»[6], երեքը միասին միջին հեսներով երևի 200-240 երեսի չափ): Նույնպես և վերջին վիպակս՝ «Կինը», որ անցած տարի տպվեցավ Հոս Ազատամարտի Հավելվածին մեջը[7], 80 երեսի չափ է իր ծավալը: Արդ կ'ուզեի դիտնամ, արդյոք ընկերությունը հրատարակել կ'ուզե՞ր այդ երկերը, և մասնավորապես դուն հարմար կը գտնե՞ս, որևէ անպատեհություն չկա՞: Եվ եթե հարմար է՝ որո՞նք են ընկերության պայմանները. ձեռքս զգալի գումար մը կը հասնի՞, և վերջապես ի՞նչ խորհուրդ կու տաս՝ ես ի՞նքս դիմեմ, թե ինչպես:

Այլև կը խնդրեմ քեզմե, որ չմոռնաս ու դրես ինծի Զոհրաբյանի ու Ղամբարյանի[8] հասցեները. մինչև հիմա առանձին գրքով ինչ որ ունիմ գրկեր եմ. գրկեմ նաև «Հին Աստվածները» երախտագիտութեյանս հետ:

Թերթերու մեջ աչքովս ինկավ, որ քու մանկական-պիեսներդ առանձին հրատարակեր ես[9]. չատ սիրուն բան ես մտածեր. ես քեզի կը պնդեմ, որ Հասկերեն հանես և հատոր մը չինես Սատալյանի պատմվածքներեն[10], կամ գոնե երկու կամ երեք գրքույկ՝ նայելով տարիքին: Հրատարակածներեդ գոնե մեկ-երկու տասնյակ օրինակ գրկե Պոլիս, հոս ալ մեծ պահանջ կա մանկական գրականութեյան, մանկական թատրոնի. լեզուն անշուշտ արգելք է, բայց և այնպես փնտրող կը ճարվի:

Ես քանի կ'երթամ այնքան ավելի կը համոզվիմ, թե ինչ լուրջ գործ ես տեսեր դուն քու Հասկերովդ. 4-5 տարի է արդեն, որ Հասկերը ամեն օր երեխաներուս ձեռքն է եղած, հիմա ալ այդ սիրուն վեց հատորները իրենց սեղանին վրա է միշտ ու գրեթե ամեն իրիկուն բան մը կը կարդացվի հոնկե՝ կամ Ջավոն, կամ Սուրիկը ինքը, և եթե գիտնաս ինչ ահագին տեղ կը բռնեն այդ հատորները երեխաներուս հոգեկան աշխարհին մեջ. իրենց խոսակցութեյունը, խաղերը, երևակայութեյունը չարունակ հյուսված են Հասկերեն իշխող դեմքերով, դեպքերով, անուններով, ոճերով ու կատակներով, այնպես հարազատ են այդ հատորները մեր տան մեջ, որ ես բնավ չեմ կրնար երևակայեր, թե ինչպես պիտի ըլլար՝ եթե ատոնք չըլլային. արդեն Ջավոն բացարձակ անքաղաքավարութեյամբ կը մերժե ուզողներուն ու տունեն դուրս ոչ ոքի չի տար երբեք:

Կը համբուրեմ քեզի ու կը ցանկամ քու բազմաթիվ ձեռնարկութեյուններուդ ու աշխատութեյուններուդ սրտանց հաջողութեյուն. ջերմ բարևներս տիկին Կատարինեին. սեղմելով ձեռքդ՝ Լևոն Սեղբոսյան

1913 փետր. 10
Պրինկիպո

117. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանա:

Ահկ տասը օրվան չափ առաջ քեզի նամակ մըն ևս գրած, ուր գրած էի նաև գրամանիերուս լիազորութեյան թուղթը, անշուշտ արդեն առացած կ՚ըլլաս:

Անցած չարթու ալ Բագու Աբրահամեն (Ջավոյի եղբայրը) լիազորութեյան իրավունք խնդրող հեռագիր մը առացա. բնականաբար իւրայն պատասխանեցի, որ այդ իրավունքը արդեն տված եմ քեզի. վրայեն երկրորդ հեռագիր մը առացա, ուր կը խնդրե միայն այս տեղուն համար և միայն Բագվի համար առամ իրեն այդ լիազորութեյունը. մտածելով, որ անշուշտ անհրաժեշտութեյուն մը կա մեջտեղը, երեկ իրեն հեռագրեցի համաձայնութեյանս, ավելցնելով, որ քեզի իմաց առ: Բայց և այնպես ևս ալ իմ կողմես ահա՛ կ՚ընտրափիմ քեզի զրելու, վախնալով որ միգուցե իրարմե անտեղյակ տարբեր կարգադրութեյուններ ընենք և իմ պատճառով դուն ալ, ան ալ անհամ դրութեյան մեջ իյնաք: Աս մեկ:

Երկրորդ ալ՝ նորեն հանձնարարութեյուններ ունիմ քեզմե խնդրելիք: Երբ գրամատիկական ընկերութիւնեն գրամը առանաս[1], կը խնդրեմ որ Հարյուր րուբլին նորեն հասցնես Ֆիլիպ Վարդազարյանին, իսկ հիսուն րուբլի ալ կը խնդրեմ որ ինքդ հանձնես իշխանուհի Մ. Թումանյանին: Մնացած գումարն ալ երբ ինձի գրկելու ըլլաս՝ գրկե չեքով մը իմ անունիս (Լևոն Սեդրոսյան) և ապահովագրած նամակով չեքը գրկե իմ հասցեիս՝ Constantinople, Prinkipo, L.S.:

Ընդհանրապես ամեն բան՝ հեռագիր, նամակ, գրամ, ինչ ալ ըլլաս, սակն եաքը այդ հասցեով գրկե՛ միայն. պարզ ու կանոնավոր հասցե է: Միայն կլիշեները լավ է գրկել տաս նորեն Արծիվի հասցեով:

Եվ քանի որ հիմա այսպեսով գրեթե իմ բոլոր բյուտճես քու ձեռքդ է, խնդրեմ բարի եղի՛ր Հանդիպել՛ անգամ մը Գալուստեբերի գրախանութը Գալայանին. ես Հոն փոքր հաշիվ մը ունիմ իմ Հոտ եղած առնենս. եթե ծախված են արդեն մոտը եղած գրքերս՝ կարգադրե՛ այդ հաշիվն ալ ու վճարե:

Նամակիս մեջ կը դնեմ Գ. տարվան ընթերցարանի նկարներուն ցանկը. եթե ապատեմ բոլոր նկարներու խմբագրութեյանս՝ նկարները շատ կ՚ուշանան. վնաս չունի, այդ 50 նկարն ալ առաջին ապագրութեյան համար հերիք է: Շուտով նկարել տո՛ւր և այնպես կարգադրե՛, որ

մայիսի 1-ին անպատճառ ձեռքս ըլլան պատրաստ կլիշեները, որպեսզի Դ. տարվան տպագրությունը մինչև օդոստոսի կեսերը անպատճառ ավարտի և որ ինքս անձամբ կարող ըլլամ երկու գրքերու ալ տպագրությունը ծայրեն ծայր հսկելու: Ես հիմա ամբողջովին կ'աշխատիմ լուսաբերներու վոխադրության, կազմության ու խմբագրության գործովը. մեկ-երկու շաբաթեն կը ղրկեմ նաև Դ. տարվան նկարներուն ցանկը, որ ամենաուշը մինչև հունիսի կեսերը անոնք ալ ձեռքս ըլլան:

Նկարները նորեն նկարել տո՛ւր, տպածեն չինված կլիշեները աղտոտ են ու թույլ, քանի մը հատը նույնիսկ չատ դեշ, թղթատե՛ հոս տպված Բ. տարին այդ աչքով ու պիտի տեսնես:

Կ'ըսպասեմ նախորդ նամակիս պատասխանին. և պինդ-պինդ համբուրելով քեզի՝ կը սեղմեմ ձեռքդ:

Լևոն

1913 փետր. 23, Պրինկիպո

118. ԱԲՐԱՀԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

...«Հին Աստվածները» հոս անմիջապես նորեն հրատարակել տաս[1]. եթե վնաս եղավ՝ քեզի՛, եթե օգուտ եղավ՝ ինձի: Է՛, այս տեսակ պայմանը աչխարհիս երեսին կարելի՞ է մերժել: Խնդրեմ: Բայց նախ գիտցի՛ր, որ 300 օրինակ «Հին Աստվածներ» արդեն ղրկված է երկու չաբաթե իվեր քու հասցեիդ, հոս անցած տարի տպեր էի 1500 օրինակ, ուրկե մինչև հիմա հազիվ 4-500 օրինակի չափ Կովկաս եկած ըլլա. մեկ-երկու հարյուր օրինակի չափ հոս հազիվ է մնացած, հոս ալ նոր հրատարակության պետք կա. բայց մեկը մյուսին չխանգարեր. արդեն ես ինքս ալ կը մտածեի հոս ալ միաժամանակ հրատարակություն մը ընեմ և համաձայն եմ, որ պետք չէ ուշացնել, գուցե արդեն իսկ քիչիկ մը ուշ է:

Եթե ղրկած 300 օրինակն առայժմ հերիք չես դտներ և եթե ըրած առաջարկիդ վրա դեռ չես զղջացեր՝ սկսե՛ հրատարակությունը որչափ կարելի է շուտ ու արագ տեմպով. և ատոր համար կը խնդրեմ՝

Առաջին, վերցո՛ւր ինձի ղրկելիք դրամեդ հրատարակության համար անհրաժեշտ եղող ծախքը, կարծեմ 150 րուբլիեն ավելի ըլլալու չէ. հոս 1500 օրինակը վրաս նստած է 130 րուբլի: Իսկ եթե արդեն

պրկած ես պրամը՝ կը մնա, որ 300 օրինակի վաճառումեն օգտվիս. հույս ունիմ 60-70 րուբլի մը անմիջապես կարող պիտի ըլլաս գանձել, հրատարակութեյան մեկ մասն ալ ընդհանրապես կրետիով կ'ըլլա արդեն, մնացածն ալ, պետք որ եղավ, գրպանեդ պիտի դնես, իբրև պատիժ:

Երկրորդ, հրատարակութեյան գիրքն ու ձևը և երեսներու մեծութեյունը կարծեմ դեչ չըլլար, որ պահես եղածը, բայց եթե բան մը փոխել ուզես՝ ապատ ես. ես վստահ եմ քու հաշակիդ: Կը խնդրեմ, որ չթողնես մեջը ավելորդ նկարներ, անթեթներ, վինիետներ[2] մտցնեն. ինչքան պարզ՝ այնքան աղեկ. ամեն տեսարանե ետքը պարզ ու ոչ-չապլոն վինիետ մը, մնացածը ավելորդ է: Զանազան տեսակի գրերուա գործածութեյունը անպատճառ հարկավ տուր, ճիշտ այնպես, ինչպես որ առաջին տպագրութեյան մեջն է:

Երրորդ, ես կը նախընտրեմ հաստ ու թեթև, մաթ թուղթ, որ Պոլիս չգտաս. կը թողնեմ հաշակիդ, միայն չատ սուղ չըլլա, որ այդ բոլոր պատմութենեն ձեռքս քանի մը փարա հասնի, քանի որ գինը 50 կոպեկին բարձրացնելը անհարմար է, ինչքան ալ որ ավելի ծախքեր վրան ընելու ըլլանք:

Միայն եթե հարմար կը գտնես, ես իմ կարծիքս կուտամ, հարուստ բաները կը սիրե ձեր Բազուն, կրնաս 50 օրինակի մը չափ, կամ գուցե ավելին, տպել տալ ավելի չքնաղ թղթի վրա, լայն-պարապ եզերքներով, աստղ Համապատասխան ալ պետք կ'ըլլա առանձին չապիկ մը և այդ օրինակներու գինը կրնանք նշանակեր գտնե մեկ րուբլի:

Գալով չապիկներու թուղթին ու տիպին՝ կը թողնեմ նորեն քու հաշակիդ, ինչքան պարզ՝ այնքան աղեկ ինձի համար:

Չորրորդ, մասնավորապես կը խնդրեմ, որ թերթերու սրբագրութեյունը՝ կորրեկտուրը, Հանձնվի արևմտյան Հայերենին չատ վարժ մարդու մը, թե չէ չափազանց չատ տառասխալներ կը սպրդեն (այսպես օրինակ՝ բայերու ի ձայնավորը միշտ կը փոխեն ե-ի. աշխատիլ-ի փոխարեն կը տպեն միշտ աշխատել. և այսպես ուրիշ չատեր). գրքե արտատպելը միշտ անհամեմատ դյուրին է և աստղ համար կը հանձնեն սովորաբար անվարժ գրաշարներուն. պահանջի՛ որ վարժ մարդու հանձնեն. եթե վատ գրաշար է և եթե սրբագրիչը մեր լեզվին չատ լավ ընտելացած չէ՝ գիրքը կը դառնա անընթեռնելի, գիտցած ըլլաս. պլսուս եկած է, գիտեմ:

Գրքին ետևը, սկիզբը, շապիկին վրա կազմարարը, տպարանատերը, գրավաճառը չատ կը սիրեն հայտարարութիւններ ու ռեկլամներ սպրդեցնեն, կամ գոնե անուննին. ո՛չ մեկ ավելորդ բառ չես թողներ. գինը կը դնես միայն կոպեկով (զուրուշի կարևորութիւն չկա): Եվ ետևը չես դներ ո՛չ մեկ վրիպակ, ինչքան ալ որ սխալներ մեջը աչքե փախած ըլլան. տգեղ է ու անօգուտ:

Հինգերորդ, տալել կու տաս կարծեմ 1500 օրինակ, համենայն դեպս 2000-են ոչ ավելի: Թե՛ տպագրութիւնը, թե՛ վերջը ցրվելը կը հանձնես վստահելի գրավաճառի մը, որ հնար եղածին չափ քիչ բեռ ըլլա քեզի ու ժամանակդ չխլե: Եվ տալել կու տաս այն օրինակեն, որ այս նամակիս հետ միասին կը ձգեմ պոստը ապահովագրած, մանրմունր բավական սրբագրութիւններ կան մեջը. էական ոչ մեկ փոփոխութիւն չեմ մտցուցած. եթե երբևիցե որևէ բան փոխելու ալ ըլլամ, համենայն դեպս հիմա չատ է կանուխ, ու դեռ ժամանակը չէ:

Դե՛, սիրելիս, ուշ պիշեր է և կ'ըշտապեմ վերջացնելու: Ջավոն քեզի առանձին գրած չունի, որովհետև չատ հարմար հաշվապահութեամբ մը իմ քեզի գրած նամակներս իր հաշվին կ'անցընե. բայց և այնպես այսօր առանձին ալ քեզի գրելու ծրագրին վրա էր, սակայն անչուշտ ատիկա դեռ ծրագիր է, որուն իրականացնելը ընավ իր կամքեն ալ չէ կախված, այլ մեր սուրբ երրորդութեան բարեհաճ թույլտվութենեն, մանավանդ մեր պզտիկ Հոգին-սուրբը[3], որ իր պահանջներեն ու պետքերեն ո՛չ մեկը զոհելու տեսակեն չէ նույնիսկ Աբրահամի նման մորեղբոր մը սիրուն: Այնպես որ կարծեմ դեռ բավական ատեն իմ նամակներուս միջնորդութեանը պետք պիտի ունենաս քուրիկեդ կարոտդ առնելու համար:

Ուրեմն Եվնիկին հետ միասին ընդունեցեք խնդրեմ Ջավոյի ու իմ ջերմ ու սրտագին համբույրները, սիրո՛վ, սիրո՛վ ու կարոտով:

Լևոն

1913 մարտ 14
Պրինկիպո

Կ'օգտվիմ բաց մնացած տեղեն հարցնելու համար՝ ո՞ւր է Ս.Այվազովը[4]: Ասկե քանի մը ամիս առաջ նամակ մըն եմ գրեր, ղրկեր եմ դրամաս. ո՛չ մեկ պատասխան. լրագիրներուն մեջ ալ անունին չեմ հանդիպիր, ո՛չ ալ քու նամակներուդ. արդյոք հասցեն է փոխած

(գրած եմ Биржа[5]*), թէ՞ գործը կամ գուցե քաղաքը. Ջաւոն անգամ մը «Բագուէ»-ին մէջ անոր կնոջ անունն էր պատահեր կարծեմ: «Բագուէ» խմբագրատունեն տուն կը բերեմ երբեմն, բայց ո՛չ կանոնաւոր:*

119. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, անհամբեր կ՚ըսպասեի քեզմէ նամակի մը և հիմա խորապես ուրախ եմ առացած նամակիս համար: Ջու գնահատութիւնդ, քու համակրանդ, քու այդ տաք վերաբերմունքդ[1], գիտես անշուշտ, որ ինծի համար շատ թանկ արժէ: Շատ գոհ եմ, որ «Հին Ատոմածնորդաց» տիւթով երեան եկաւ մեր հասարակութեան գրական տրամադրութիւններուն մէջ կատարվող Հեղաշրջումը[2]: Արդեն անձնապես ալ ինծի ամենեն ավելի բավականութիւն պատճառողը այդ ընդհանուր հետաքրքրութիւնն է ու այդ լայն հասարակական շարժումը. թէև չէ՝ այդ լրագրական հոդվածները, այդ իրար կապկող դատաստաններն ու թատերական գրախոսութիւնները իրենց ըսածովը ինծի համար շատ քիչ բան ունին գրավիչ ու ազդու. ատոնք մեծ մասով խնդճ ու տափակ դատողութիւններ են, հաճախ տգետ. ամենեն լաւերին անգամ դեռ չըսին բան մը, որ ինծի համար իսո՛ր ըլլար, որու մասին ես դեռ մտածած չըլլայի, որը ինծմէ բարձր զգայի, ըլլա գրական, ըլլա բարոյական տեսակետե: Այնպես որ քու գրկած կարուկնեւուդ[3] առատութեանն ու բազմազիմութեանը հակառակ՝ դեռ ստիպված եմ սպասելու իմ քննադատիս: Անչափ չնորհակալ եմ քեզմե, սիրելի՛ս, այդ բոլորը այդպես սիրալիր կերպով հավաքելուդ և ինծի գրկել մտածելուդ համար: Ատոնցմե մեկ մասը հոս ու հոն արդեն կարդացեր էի, բայց մեծ մասը՝ ոչ: Ընդհանրապես շատ տարօրինակ է հիմա իմ ու Ջաւոյի դրութիւնը, երբ մեր կղզիի այս մենութեան մեջ կը կարդանք այդ աղմուկի ու իրարանցումի մասին, որ բարձրացեր է անունիս շուրջը և որու հեռավոր խուլ արձագանգները միայն կը հասնին մեզի և ան ալ միշտ շատ ուշացած: Եվ գիտե՞ս, ինչքան լավ է, որ այդպես է. թէ՛ ավելի հանգիստ եմ ու ազատ ավելորդ հուզումներե և թէ՛ ամեն բան անհամեմատ ավելի պարզ ու սառն կը տեսնեմ: Առաջին լուրերը միայն մեզի շատ զարմանք պատճառեցին, այնքան անսպասելի էր այդ բոլորը և այնքան անսովոր եմ եղած ես «ժողովրդա-

կանութեան», հիմա անգամ այդ մակարդը չատ խորթ կու դա ինծի, բայց ինչպես որ պիտես՝ մարդս չատ հարմարվող կենդանի է: Հիմա ինչ որ մեջս պարզ ու խոր կերպով կ'ըզգամ՝ իմ միշտ հին ու միշտ նոր ծարավս է, ծարավս գրական աշխատանքի: Ահա՛ այս երրորդ անգամ վճռեր ենք Զավոյի հետ թողնինք ամեն կոզմնակի աշխատանք, և ամենեն առաջ ինծի ուտող ուտուցչութիւնը մեր այս խեղճ պայմաններուն մեջ, մեր այս խեղճ միջավայրին մեջ. թողնինք ու երթանք, որ անգամ մըն ալ փորձեմ գրագետի կյանքովը ապրելու ամբողջապես ու գրական աշխատութեան նվիրելու իմ բոլոր ուժերս. երկու անգամ ըրինք այդ փորձը ու չը հաջողեցա. կ'ուզենք փորձենք հիմա երրորդ անգամ. կ'ըսեն սուրբ թիվ է երեքը, տեսնինք:

Վեց հարյուր րուբլիի չեքը առացած եմ ու անչափ չնորհակալ քեզմե: Շատ կը ցավիմ եղած թյուրիմացութիւններուն համար[4], կը հուսամ ասկե ետքը չի կրկնվիր, քանի որ ինքդ անմիջական հարաբերութեան մեջ կ'ըլլաս Աբրահամին հետ. բայց իսկապես ես ալ հանցավոր չեմ, քանի որ երկուստողանի հեռագիրներու հիման վրա ստիպված էի կարգադրութիւններ ընելու. այս բոլորի մեջ իսկական հանցավորը գեպքերու անակնկալ ու արագ ընթացքն էր, որուն, պետք է հասնինք այս կամ այն կերպով:

«Մեր իրականութեան մեջ սովորական եղող ավազակային հարուածներու»[5] մասին ինծի գրեր էին նաև Բագվեն. նույնիսկ մտածեր են, որ ես ֆիկտիվ կերպով դրամս ծախեմ Տ. Բեգզատյանին[6]. բայց ես կը կարծեմ, որ առայժմ ավելորդ է դեռ. հազիվ թե այս վայրկյանիս ինծի պրկել ուզենան. այսինքն ուզենալը գուցե ուզենան, բայց կը քաշվին, գոնե առայժմ. մյուս կողմեն ալ ծախելով-մախելով կարծեմ ոչինչ չի փոխվիր. ինծի ըսին հոս, որ գրքի առաջին անգամ ուր տպված ըլլալն է կարևոր օրենքի տեսակետեն. այդ օրենքներուն մասնագիտորեն ծանոթ մեկուն հարցո՛ւր անգամ մը, սիրելի՛ս, և ինծի գրե՛: Ուրիշ հանձնարարութիւն մըն ալ. այս տողերս ցույց տուր Ավետյանին, իր ծախած «Հին Աստվածներու» արժեքը թող հանձնե քեզի, «Արծիվի» միջոցով համբան չատ է ոլորուն, ես արդեն խոսած եմ «Արծիվի» հետ և արդեն «Արծիվը» իմ պատվերովս է պրկած «Գիրքին» այդ գրքերը: «Արծիվի» ինծի տված հաշիվը հետևյալն է. գիրք պրկված է առաջին անգամ 192 օրինակ, երկրորդ անգամ 120 օրինակ, համբու ծախք եղած է (61 և 42 պր. =) 8 րուբլի. Գիրին զեղչ 25%:

Ուրեմն 312 անգամ 50 կոպեկեն հանած 39 րուբլի և ավելցուցած 8 րուբլի համվու ծախքը, այսինքն 125 րուբլի: Միայն գրեր էի «Գիբլին», որ մեկ-մեկ օրինակ ղրկե տեղական լրագիրներուն. չգիտեմ ինչ ըրավ. բնականաբար ատ ալ կը հաշվվի:

Գրեր էիր, որ հետագրիմ և անմիջապես նոր հրատարակութիւն սկսվի հոս Թիֆլիս[7]. բայց այս անգամ ալ եղավ նույնը, ինչ որ եղեր էր լիազորութեան հարցի ժամանակ, միայն այս անգամ առաջնութիւնը Աբրահամինն է. ճիշտ քու առաջարկդ ըրեր էր ան և ես ալ իրեն նոր էի հայտներ համաձայնութիւնս, որ ատացա նամակդ: Չգիտեմ ինչպե՞ս չնորհակալ ըլլամ քե՛զի ալ, անո՛ր ալ կենդանի ու մտերիմ հոգատարութեան վրնաբեն: Ես տպեր էի 1500 օրինակ, որ սպառված է արդեն. երևի չուտով Բագու կ'ըսկսվի նոր հրատարակութիւնը[8], գուցե նաև հոս[9]:

Նամակիս մեջ կը դնեմ Դ. տարվա Լուսաբերի նկարները, չուտով պատրաստել ատւր, որ հունիսի սկիզբները ձեռքս հասնի: Կ'ըսպասեմ նամակիդ Լուսաբերի Գ. և Դ. տարիներու մասին Արծիվի հետ պայման կապելու համար: Բ. տարին կը ղրկեմ չուտով:

Տիկին Կատարինեին իմ սրտագին բարևներս. իր քանի մը տողին համար անչափ ուրախ եմ. կը հուսամ լավ կը բոլորդ ալ: Ինծմե ու Զավոյեն չատ-չատ բարևներ: Համբույրներով՝ Լևոնդ

1913 մարտ 26
Պրինկիպո

120. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Ա՛յ ազգեր, սա ինչ լռեցիր նորեն, է՛, օր-օրի նամակ կ'ըսպասեմ քեզմե. պիտես, որ ոչինչ ընել չեմ կրնար հոս առանց ձեզմե լուրի. III տարվան կլիշեները ե՞րբ պիտի հասնի, չատ ուշ կը մնանք այսպեսով. IV տարվան տպագրելը անկարելի կը դառնա. և ինչ պայմաններով պետք է որ կապվիմ Արծիվի հետ. ոչինչ չես պատասխաներ տված հարցերուս: Գ. տարին խմբագրված պատրաստ է բոլորովին, ամիսեն ավելի է. նույն արևելյան նյութերն են տեղ-տեղ քիչ մը կրճատած, քանի մը հատը փոխած և նորերով փոխանակած: Գրեթե պատրաստ է

և Դ. տարին, բայց այսպես որ չարունակվի՝ խելքս չի կտրեր, որ այս տարեշրջանին տպագրությունը հասցնել կարողանանք: Դուն գալո՞ւ ես, թե ոչ. լավ կ'ըլլար, որ Եվրոպա անցնելես առաջ մեկ-երկու ամիս միասին ըլլայինք քեզի հետ. նախ ընդհանրապես իբրև ընկեր ու մտավոր չփոում, վերջը Լուսաբերն ալ կ'օգտվեր անշուշտ թե՛ արևմտյանը, թե՛ արևելյանը. եթե բացարձակ անկարելիություն չը կա դեմդ, եկո՛ւր, կը հանգստանաս, կը թարմանաս, մեր կղզին աղվոր է. ալ ով գիտե՝ ուրիշատեն առիթ ունենալո՞ւ ես. օգտվե[1]: Համենայն դեպս երկու տող գրե ինծի անմիջապես՝ ընելիքս գիտնամ:

Ղրկե՛ ինծի անմիջապես ձեր «Գիր» ընկերակցության կազմական կանոնագիրը[2]. հոս կը մտածեմ «Արաքս» տպարանի և մեկ-երկու գիրք դասագիրք ունեցողներու հետ նույն տեսակ հրատարակչական-գրավաճառական ընկերակցության մը սկիզբ դնենք, եթե հնար է ու խելքի մոտ. գրե՛ հոս «Գիրը» ինչ առավելություններ ու մանավանդ անտեղություններ ունի, որուն վրա հոս կ'ավելցնենք մերը ու կշռենք. ղրկե՛ անպատճառ և չուտով, որ մինչև օգոստոս կարելի ըլլա մարմին տալ հառաջիկա (հաջորդ) տարվան համար: Մենք օգոստոսի կեսերուն որոշած ենք հեռանալ Պոլսեն:

Աբրահամը գրեր էր, որ «Հին Աստվածները» որոշեր եք Թիֆլիս տպեք. և որ արդեն իբրև թե տպված է ըլլալու. գրե՛ ինծի ինչ վիճակի է գործը և տպվելուն պես մեկ-երկու օրինակ ղրկե ինծի անմիջապես: Նույնպես քու ղրկած կտրոններեդ ետքը, եթե ունիս թերթերեն հանած նոր կտորներ, անոնք ալ որ ձեռքս հասցնես՝ չատ չնորհակալ կ'ըլլամ քեզի. մասնավորաբար Տարագի մեջ հոդված մը կա եղեր Տիկին Խանազատի կողմե[3], կ'ուզեի տեսնիմ:

Անկե ետքն ալ նորեն քեզի երկու հանձնարարություն. կը խնդրեմ Նիկոլ Աղբալյանին լսես, որ ինծի «Նոր Հոսանքը»[4] ղրկե. ինչո՞ւ մինչև հիմա չեն ղրկած, կը զարմանամ: Երկրորդ ալ՝ խոսե Աղբալյանին և «Հորիզոնի» մյուս վարիչներուն հետ՝ արդյոք չէին ուզեր Պոլսեն թուրքական ու կառավարական, ինչպես և ազգային կյանքին ծանոթ խելացի ու փորձված թղթակից մը ունենան. խոսքս Տիգրան Զավենի մասին է. որ թուրքական նոր հոսանքներուն մոտիկ ծանոթ դեմք մըն է, այս 4-5 տարի է տեղական ֆրանսական, երբեմն և հայ թերթերուն մեջ կ'աշխատակցի. կարող տղա է, նոր ու հետաքրքիր նյութ կը հասցնե ձեզի և թերթին համար հատուկ էնտերվյուներ: Եթե

կ'ուզեն, թող Հայտնեն ինծի իրենց առաջարկելիք պայմանները և ես Հարաբերության մեջ դնեմ թերթին ու թղթակիցը. վստահ եմ որ գոհ կը մնան, և վերջապես քանի մը թղթակցությամբ կրնան փորձեր:

Կը հուսամ, որ այս նամակիս պատասխանն ալ չես հեռաձգեր նորեն մինչև չեքավոր նամակ մը ղրկել կարողանալդ. չեքավոր նամակը, անշուշտ, շատ ազվոր սկզբունք է, բայց քիչիկ մը կարծեմ անհարմար, եթե այդ պատճառով ուղիղ կես տարի պետք է սպասեմ նամակներուս պատասխանին:

Սիրալիր բարևներով ու համբույրով՝
Լևոն

Մայիս 18, 1913
Ղալաթիա[5]

121. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, առաջին բարև քեզի Լեմանի ափերեն. արդեն ամիս մըն է, որ հոս ենք, խառնակ օրեր, հյուրանոց ու պանսիոն, նոր եղանք վերջապես տուն ու տեղ ու քիչ մը գլխուս տերն եմ: Մեր ճամբորդությունը շատ արագ եղավ ու թեթև, հիմա երազի պես կը հիշեմ միայն: Իսկ Լոզանը մեզի համար նորություն չէ, միայն շատ մնծցած գտանք, ավազ կերպով կ'ածի քաղաքն ալ, բնակչությունն ալ, առար համեմատ ալ իհարկե և կյանքը: -Սուրենը դպրոց ղրինք. արդեն դարձավ ecolier[1]*, թեև հոտեղի դպրոցներն ալ բնա՛վ այն չեն, ինչ որ կը ցանկայինք որ ըլլան: Վիգենը այս տարի դեռ դպրոց չենք դնելու, Ջավոն կ'ըզբաղվի հետը տանը: Հա՛, շուտով «Հասկեր» հասցուբ անոնց, մենք ունինք միայն մինչև Հունիս ամիսը, այսինքն 6 թիվ: Հիմա պրպտված եմ հավելվածներուդ*[2] *ընթերցումովը: Դալով ինծի՝ դեռ գրական աշխատանքի մտածելու չեմ կրնար. հիմա ամբողջովին Լուսաբերի Դ. տարիումն եմ [պրպտված]. առաջին տպագրական թերթերը արդեն արտագրած խրկած եմ. հաջորդներն ալ ղրկելու վրա: Բովանդակությունը ըստ էության արևելյանին կը համապատասխանե. դուրս եմ նետած քանի մը շատ երկար ու անհարմար հոդվածները,*

ինչպես «Քինաքինա», «Ղարա խանում», բայց եմ թողած, այսինքն ավելի ճիշտը՝ պահած եմ հաջորդ տարվան, քանի մը ուռանավորներ, որոնց վոխադրելը նորեն գրել ըսել է, նորեն թարգմանել, ինչպես օրինակ Պուշկինի «Ջրահեղձը»: Այլև Խնկոյանի առակները, որոնք շատ երկրորդական արժեք ունին. ատոնց վոխարեն դրած եմ Քռիլովի առակներեն Այվազովսկիի թարգմանութեամբ, իհարկե կոկած, այսինքն «սիրունցուցած» Օհաննեսի ոճով: Իսկ մնացած հոդվածներն ալ աշխատեր եմ սեղմեմ ու կրճատեմ ինչքան որ հնար է, որով հույս ունիմ Արևելյան նոր հրատարակութեյան ատեն ալ աշխատանքս բանի մը պետք գա: - Ինչպես գրած եմ, գարնան կու գամ ձեզի թե՛ նախորդ տարիները անգամ մը սրբագրելու և թե՛ Ե. ու Զ. տարիները կազմելու[3]: Ազեկ կ'ըլլա, որ Օհաննեսի հետ անգամ մը խորհրդակցիք, թե ինչ նախապատրաստական աշխատանք կարելի է կատարել մինչև դալս: Ես իմ կողմես, ինչպես գրեր եմ, կ'երթամ Վիեննա ամբողջ արևմտյան գրականութենեն հանելու, ինչ որ կրնա պետքը գար մեզի Ե. և Զ. տարիներու արևմտյան բաժնին համար: Նմանապես, սիրելի՛ս, շատ կարևորություն ունեցող խնդիր է, որ մենք մանրամասն կերպով հրապարակ դնենք մեր այբուբենը սորվեցնելու եղանակը. մեր համբան, որ անպայման ամենեն բնականն ու շիտակն է, ինչպես կը վկայեն բոլոր անձամբ գործադրողները, ատոնց թվին և ես, իբրև գործադրող. Սուրենն ու Վիդենը այնպես բնական կերպով բառերը կարդալ սորվեցան, ուրկե ավելին պահանջել կարելի չէ: Ետքը ի՞նչ եղավ արևելյան վարժություններու հարցը, թողի՞ր, անհրաժե՛շտ է մեր ընթերցարաններու ամբողջությանը համար: Պոլիս նորեն գրեցի, որ ղրկեն քեզի մինչև հիմա հրատարակված լուսաբերներն ու վարժությունները: Նոր ատացա Ա. տարվան երրորդ հրատարակությունը, որ Պոլսեն մեկնելես առաջ ենթարկեր էի սրբագրության, այլև ավելցուցեր եմ բառարան մը. կյանքը ատիպեց. ուսուցիչները իրենք չը պիտեն այդ բառերուն իմաստը, այդ համբան ընտրեցի թե՛ ամեն կողմեն «չենք հասկընարի» տրտունջը մեջտեղեն վերցնելու և թե՛ մեր սկզբունքը առաջ քշելու համար: Երկու օրինակ կը ղրկեմ այսօր քեզի նամակիս հետ:

Երկու հարյուր րուբլիի երկրորդ չեքը դեռ չեմ ատացած «Գիբեռն»: Լևոնը[4] նորեն Վիեննա՞ է, հասցեն ղրկե՛ մեզի: Իսկ Սրբուհին[5], նորեն Մոսկվա, թե՞ արդեն մորը հետ. տարիները այնպես կը թռչին,

որ մարդ հաշիվը կը կորնչնեն: Կատարյալ հաջողություն տիկին Կատարինեի դպրոցին ու սրտագին բավականություն իրեն ու քեզի: Ջերմ բարևներով կը համբուրեմ քեզի.

Լևոն

1913 հոկտ. 2
Լոզան *Հասցես՝ Montagibert, 6, Lausanne*

122. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հանե՛ս ջան, չէ՛, մեր բոլոր վերնատնական բարքերուն ու ավանդություններուն հակառակ՝ այս անգամ չը գրել չեմ կրնար: Երբ երեկ իրիկուն հանկարծ, բոլորովին անակնկալ կերպով Աչխենը[1] մտավ դռնես ներս, երբ գրկվեցանք ու սկսանք խոսիլ՝ մեկեն այնպես տա՛ք, այնպես հարազա՛տ, այնպես անո՛ւշ զգացում մը անցավ մեջես, որ, չէ՛, այս անգամ լռել չեմ կրնար: Սրտագին կարոտով ես ալ, Ջավոն ալ կը համբուրենք քեզի, Օլյան, մանչերդ, աղջիկներդ. այնպես կենդանի աչքիս դեմն ես դուն հիմա քու ճիժ ու բիժով, քու տուն ու տեղով: Աչխենը բոլորը պատմեց երեկ իրիկուն ու դեռ պատմելու վրա է:

Լրագիրներու մեջ կը հետևեի քու հոդվածներուդ, ժողովներուդ, նախագահություններուդ, վեճերուդ[2], մեկ խոսքով դուրսի Օհաննեսը: Աչխենդ ինծի բերավ ներսի Օհաննեսը, էնտիմը, ի՛մ Օհաննեսս, որուն խորապես կարոտեր եմ:

Պատմեց նույնպես, որ հարուստ եք տվեր մեր Վերնատանը. շատ ուրախ եմ, սակայն ինծի անչափ ավելի կը հետաքրքրե, քան պրական ընկերության ձեր խայտաբղետ նիստերը: Իմ ջերմ ողջույններս չը մոռնաս մատուցանելու մեր Վերնատանը: Քիչ է մնացեր, որ Վերնատան մեկ ֆիլիալը բանանք հոս ես ու Ավոն Լեմանի հանդիպակաց ափերեն[3]:

Շատ կը ցավիմ, որ ինչպես բանեն կերևա, անցած տարի օգոստոսին Թիֆլիս ղրկած «Հին աստվածներես» ոչ մեկը իր հասցեին չէ եկեր, ո՛չ քոմվինդ, ո՛չ Դերենիկինը, ո՛չ Ֆիլիպինը, ո՛չ իշխանուհունը, ո՛չ Ստեփանինը:

Իշխանուհուն հայտնե՛ հարգանքս ու սրտագին բարևները, Ֆիլիպին տո՛ւր համբույրս, իսկ Դերենիկին ըսե, որ հոս նամակատանը գողեր չը կան, այնպես որ վստահորեն կրնա ղրկեր իմ հասցեիս իր բանաստեղծութիւններու նոր ժողովածուն[4]: Այս կեսը դուն ալ կրնաս աչքի առաջ ունենալ, որովհետև քու հատորդ գրքերուս մեջեն անհայտացած է, չը պիտեմ ով է տարել: Ղրկե՛ ինծի ամենեն վակատար հրատարակութիւնդ որը որ է: Պահանջ կ'ըզգամ մեջեմեջ թղթատելու:

Դեռ Դերենիկին չնորհավորանքներ ալ ունիմ ընելիք, որոնք իր այրութեյանն ու հայրութեյանը հետ մտերիկ առնչութեյուն ունին[5], բայց ատոնք կը վերապահեմ իրեն գրվելիք նամակի մը: Ընդհանրապես Աչխենը չա՛տ անակնկալ նորութեյուններ ուներ ինծի համար իր պատյտաականերուն մեջ:

Հիմա որ նամակիս վերջն եմ հասեր, չը կարծես թե քեզմե պատասխան մը ստանալու միամտութեյունը կը սնուցանեմ մեջս. չէ՛, պիտեմ, որ Աչխենի վերադառնալեն եառքը քեզմե նոր լուրեր առնելու համար պետք է սպասեմ Նվարդի[6] ամուսնանալուն ու Եվրոպա համբորդութեյան մը ելնելուն: Այս կերպով տասը տարի հանդակ ունիս սրտմադրելի[7], որը կարծեմ հերիք կու գա մեր ամբողջ կյանքին:

Այս աղվոր ծրագրովը հոտաալիս՝ կը գրկեմ քեզի սլինդ-սլինդ ու կը համբուրեմ չրթունքներդ:

Լևոն

1913 հոկտ. 8
Լոզան

123. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Լոզան, 24 նոյեմբեր 1913

Սիրելի՛ Ստեփանս:

Լոզան գալես մեկ-երկու չաբաթ եառքը քեզի նամակ մըն եմ գրած[1]. մինչև հիմա ոչ մեկ պատասխան չունիմ քեզմե. եթե միայն քու լռութեյունդ ըլլար՝ չէի կասկածեր, արդեն վարժվեր եմ. բայց չեմ ստանար նաև «Հասկերը», որ արդեն քանի մը թիվ հրատարակված պետք է որ ըլլա, և ակամա կը մտածեմ, որ նամակս ձեռքդ չէ հասած. երկար

նամակ մըն ալ գրած եմ քեզի Պոլսեն մեկնելու օրերս[2] քու Ուրավելի[3] հասցեովդ. կը հուսամ՝ դուն ան ատացած ըլլաս, որուն մեջը 1912/13-ի հաշիվն եմ ուած, նամակը ապահովագրած է:

Ըսա՛յր, ի՞նչ կ՚ընես, ինչպե՞ս ես. եթե մեջեմեջ «Հորիզոնի» մեջ անունիդ չը պատահիմ, բոլորովին թեւս պիտի կորսնցնեմ: Այնքան ժամանակ է քու մտածումներուդ, քու զգացումներուդ, քու զբաղումներուդ մասին ոչինչ չես գրած ինծի, որ ես ալ հիմա ակամա տեսակ մը կը քաշվիմ իմ մասին ու իմ հոգեկան աշխարհին քեզի գրելու: Համենայն դեպս կը ցանկամ բոլոր սրտովս, որ մարմնապես առողջ ըլլաս ու հոգեպես լեցուն: Տիկին Կատարինեն անշուշտ ամբողջովին կլանված [է] իր զբաղումով և ինծի կը թվի դո՛ւն ալ բավականաչափ: Հաջողությո՛ւն:

Ես չատոնց վերջացուցած եմ Լուսաբերի Դ. տարին. տպված առաջին տպագրական թերթը ստացա Պոլսեն քանի մը շաբաթ առաջ, անկե ետքը լուր չունիմ. իմ հաշվովս արդեն պետք է ավարտած ըլլար ամբողջի տպագրությունը. այս օրերս լուրի կ՚ըսպասեմ: 1912-ին տպած Ա. ընթերցարանի երկրորդ տիպը (5000 օրինակ) այս սեպտեմբերին սպառեր էր բոլորովին և տպագրեցին երրորդ տիպը՝ 10000 օրինակ, երկու տարվա ընթացքին վճարելի. ասկե ամսվան մը չափ առաջ գրված եմ քեզի երկու օրինակ այդ նոր տպագրութենեն: Վերջերս ալ գրած էին ինծի, որ սպառեր է այբբենարանը (տպված էր 1912-ին, 13000 օրինակ, երկրորդ տիպ) և կը խնդրեին անմիջապես ձեռնարկեն երրորդ տպագրության 20000 օրինակի, իսկույն սրբագրեցի Բ. տպագրության մեկ օրինակը և գրկեցի իրենց տպագրելու, նորեն երկու տարիեն վճարելի. գրեր էին, որ Բ. ընթերցարանն ալ անմիջապես տպագրելու պետքը կա, ինչպես և Ա. տարի վարժություններըը. բայց դեռ վերջնական լուր չունիմ: Ինչպես կը տեսնես, այս տարի քիչ մը ավելի կենդանի է մեր չուխան, որը մասամբ վերապրելի է Տաճկաստանի հասարակական խաղաղությանը այս տարվան, մասամբ ալ անշուշտ մեր գրքի հետզհետե արմատ բռնելուն: - Ի՞նչ պետք է ընենք հիմա Ե. և Զ. տարիներուն համար, ըստ երևույթին առաջին չորս տարիները դուք այս ամառ արդեն կարգի բերեր եք[4]: Կը խնդրեմ, որ Օհաննեսի հետ վերջնապես որոշեք՝ առաջիկա տարի այդ երկու գրքերը պե՞տք է կազմենք թե չէ, իմ Թիֆլիզ գալս անհրաժե՞շտ է, թե գուցե հեռվեն ալ կարելի ըլլա աշխատիլ. և եթե գալս պետք է, ձեզի համար ո՞ր երկու

ամիսն է ամենեն ավելի Հարմարը կարելիին չափ կեղրոնացած աշխատելու համար. ամառվան մի՛ ձգեք, շատ կ'ուշանանք և իմ կարծիքովս ավելի հարմար է Թիֆլիս աշխատիլը, քան որևէ ամարանոց:

Սիրելի՛ս, մինչև հիմա դեռ չեմ առացեր 200 րուբլիի այն համբավաւոր երկրորդ չեքը, թեև երկու անգամ գրած եմ «Գիլդին». կը խնդրեմ, ինքդ տեսիլս, որ չուտով ղրկե: Այլև կը խնդրեմ «Հին Աստվածներուս» երկրորդ տիպեն, եթե ծախված կա, կարգ գումար մը մնացնե այն 200 րուբլիին: Գալով ներկայացումներուն, գիտեմ որ անախորժ գլխու ցաւ մըն է տիկա քեզի համար, բայց ուրիշ հնար չունիմ, Սաւիփահն, ու կը խնդրեմ, որ հետևես ու տեր մնաս իմ իրաւունքիս, ինչպես մինչև հիմա:

Կը հուսամ, որ չուտով քանի մը տող գրես ինծի: Ես ու Ջավոն սիրով ու կարոտով կը բարևինք քեզի, տիկին Կատարինեին ու քու արդեն մեծ «պզտիկներդ»: Գիտե՞ս, որ Արուսյակը (Փանոսյան) հոս է, Համալսարանը կը հետևի բնագիտութեան և հաճախ մեզի է իհարկե, քույրը՝ Գոհարիկը, ամառը ամուսնացավ ու իր բժիշկ ամուսնուն հետ Բերլին է հիմա. Արուսյակն ալ նշանված է, նշանածը Պոլիս՝ Գերմանիա ավարտած փիլիսոփայութեյան տոքտոր մըն է, մեր ընկերներեն: Բարևներ քեզի Արուսյակեն:

Ջերմ համբույրներով՝ Լևոն

1914

124. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ս, ամենեն առաջ ուրիշի մը խնդիրն է, որ կը ներկայացնեմ քեզի: Հոս է Հովհաննես Յուսուֆյանը[1], ինքը ակար ու նյութական նեղ պայմաններու մեջ: Ռուլրը, որ Թիֆլիզ է, ջղային հիվանդ է. թե՛ հիվանդը պահողը և թե՛ եղբորը օգնողը պիտի ըլլար մյուս եղբայրը, որը սակայն երկար ժամանակի իվեր անգործ է՝ հակառակ իր բոլոր ջանքերուն: Արդ՝ կը խնդրեմ քեզմե ու Օհաննեսեն թե՛ իր և թե՛ իմ կողմես, ի՛ր իսկ խնդրանքով, որ ձեր կապերու ու խոսքի օգնու-

թյամբը աջակցիք իր եղբորը գործ մը, պաշտոն մը ճարելու: Հարկ եղած մանրամասնությունները կ'իմանաք իր եղբորմեն իսկ՝ Սմբատեն, որը ինքը անձամբ դիմելու է ձեզի այս քանի մը օրը:

Ա՛ն այսպես, Հիմա գանք մեզի:

Վեց ամիսեն ավելի է, որ գրեր եմ քեզի ու հարցուցեր, թե ի՞նչ եք մտադիր Լուսաբերի Ե. և Զ. տարիներու կազմության մասին և թե հարկ կ'ըզգա՞ք իմ Կովկաս գալուս[2]: Պատասխան տալու ժամանակ չունեցար, ուրկե կ'ենթադրեմ, թե մասնավոր պետք մը չկա իմ գալուս, սակայն համեմատ ալ կարգադրեցի իմ ժամանակս ու ընելիքս: Ձեռքիս գրական աշխատանքս ավարտած եմ և մինչև ամառ դեռ ունեցած մեկ-երկու ամիսս կ'ուզեմ հատկացնեմ Լուսաբերին: Ուրբ-տասը օրեն կ'երթամ Վիեննա Մխիթարյաններուն գրադարանի օգնությամբը կազմելու Ե. և Զ. տարիներու արևմտյան բաժինները, արևելյան բաժնի համար ալ պատրաստ եմ ընելու այն ամենը, ինչ որ ինծի հանձնարարեք: Եթե ժամանակ մնաց՝ կը կազմեմ նաև վարժությունները (պրավոր) երրորդ, գ-ւցն և չորրորդ տարին: Գրքերն ու թերթերը քրքրելու առենս ես կը նշանակեմ նաև այն նյութերը, որոնք հարմար են Ե. և Ը. տարիներու համար. կարելի է որ վերջը մեզի պետք գան: Այսօր-վաղը գրելու եմ նաև Լևոնիդ[3], որ Մխիթարյաններուն հետ խոսի անգամ մը նախապես, այլև որ օգնի ինծի Վիեննա առաջին օրերը:

Գալով արևմտյան հրատարակություններուն՝ արդեն գիտեք, որ անցած տարի, այսինքն 1913-ին տպվեցավ երկու գիրք՝ ընթերցարան Գ. տարի և Դ. տարի, 5000-ական օրինակ, 10-ական կոպեկեն՝ 1000 րուբլի արժեքով. ժամանակին կարգադրած եմ, որ ղրկեն քեզի 5-ական օրինակ. հույս ունիմ ստացած ես: Գ. տարին տպված է իմ ձեռքիս տակը, որով արտաքինը բնականաբար ավելի կոկ է: Դ. տարին հրատարակությունը ղեկավարած եմ հեռվեն, որով շատ խիտ ու սեղմած է արտաքինով. հաջորդ տպագրությանը կարգի կու գա: Գալով ներքինին՝ շատ ուրախ սիրտի ըլլամ ձեր դիտողությունները եթե երբևէ ունենամ. մասնավորապես կը ցանկայի ձեր կարծիքը 1) Հանեսի ու Խնկոյանի ոտանավորներու վոկադրության վերաբերմամբ, ինչպես և ժողովրդականներու, 2) իմ նոր մտցուցած հոդվածներու և 3) ուշադրություն կը հրավիրեմ իմ կատարած շատ մը սեղմումներուն ու կրճատումներուն վրա երկար հոդվածներուն մեջ: Կ'ուզեմ ձեր վավերացումը կամ մեր-

ժումը՝ սրբագրումը հաջորդ հրատարակութիւններու ատեն ուղղելու համար:

Իսկ հառաջիկա 1914 տարվա հաշվին արդեն տպված է՝

Այբբենարան, 20.000 օրինակ (Գ. տիպ) -1000

Ընթերցարան Ա. տարի, 10.000 - (Գ. տիպ) - 500

Մամուլի տակ Ընթերցարան Բ. տարի, 5.000 -(Բ. տիպ) - 250

Մինչև հիմա եղածին վրա հաշվելով՝ տարեկան սպառման միջին հաշիվն է.

Այբբենարան՝ 8.000, Ա. տարի՝ 5.000-ի չափ, Բ. տարի՝ 3.000-ի չափ (բայց կը կարծեմ Բ-րդ տարին շատ ավելի է իրականին մեջ):

Ես մտադիր եմ գալ տարի անցնիմ քանի մը ամսով Վան ու Կարին գրական պտույտի մը[4]. և մեծ հույս ունիմ, որ Լուսաբերի համար ալ առիկա շատ օգտակար պիտի ըլլա թե՛ նյութի ընտրութեան և թե՛ լեզվի ու այլ տեսակետներեն: Չէի՞ր միանար ինծի, գուցե և Օհաննեսը. մտածեցեք անգամ մը լրջորեն, դեռ ժամանակ շատ կա. կարելի է մանրամասն ծրագրել ու բազմակողմանի օգտվիլ:

Գալով դրամական խնդիրներուն՝ «Արծիվը» կը վճարե ամսականներով և իբրև թե մինչև օգոստոս վաղե պիտի նախորդ տարվան բոլոր հաշիվները, ըստ մեր պայմանի: Բոլոր հնարավոր պնդումները ըրած եմ իրենց, բոլոր կարելի դյուրութիւնները տված, միայն որ կանոնավոր կերպով ղրկեն, ինչ որ խոստացեր են. բայց և այնպես կը ղրկեն շատ անկարգ և մեծ ուշացումներով: Այնպես որ գործնականապես հազիվ 100-150 ֆրանկ կ'ըստանամ ամսական՝ մինչը հաշվելով և՛ հին իրենց պարտքը, և՛ իմ մասնավոր հաշիվներս, և՛ «Հին Աստվածներու» արդեն տարի մը առաջ սպառված օրինակներու հաշիվը. չգիտեմ ինչ ընեմ. շատ դժվար բան է այդ գրավաճառներուն հետ գործ ունենալը, ուրիշ ճամբա ալ չկա. «Արծիվը» գոնե այն առավելութիւնը ունի, որ առուվոփ վախը չկա, բայց չահագործում ամեն տեսակի՝ անչու՛շտ:

Իսկ ի՞նչ վիճակի են արևելյան Լուսաբերները: Հառաջիկա տարվան պյուտճես կազմելու համար շատ հետաքրքիր եմ գիտնալու՝ կլոր հաշվով մը ի՞նչ է հասնելու ամեն մեկին: Իսկ «Հին Աստվածներու» ներկայացումներեն բան մը գոյացա՞վ. արդյոք կը հետևի՞ս, թե՞ արդեն

ձանձրացար. Զարիփյան խումբը հիմա ալ Պոլիս կը խաղա[5]*, անշուշտ իրավունք առած են քեզմե:*

Պիտի հալցնեմ քեզմե, մեջեդ ու շուրջեդ, բայց գրիչս առաջ չերթար. պիտեմ՝ պարապ բան է. ժամանակ պիտի չունենաս: Էջմիածնեն խրկած բացիկդ առացա, քիչ էր մնում, որ ուրախանայի. ասոր համար ալ չնորհակալ եմ: Ես կը հետևիմ քեզի լրագրական այս ընկերուն միջով ու բան մը, նախապատրաստեցեր մը կը ջանամ բան հասկնամ կյանքիդ, մտքիդ, գործիդ ու տանդ վրա:

Բոլոր սրտովս կը ցանկամ քեզի ու քովիններուդ հաջողություն և առողջություն: Սրտագին բարևներս տիկին Կատարինեին ու Սուրբիկին. Լևոնը շուտով ինքս կը տեսնեմ: Ջերմ ու կարոտով կը համբուրեմ քեզի.

Լևոն Սեդրոսյան

1914 ապրիլ 18
Լոզան

Հասցես՝ (Հասկերուն վրա սխալ կը գրվի)
Montagibert 6
Lausanne

125. ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Լևոն, շաբաթե մը գալու եմ Վիեննա[1]*. Միսիթարյաններուս գրադարանը աշխատիլ կ՚ուզեմ, կ՚ուզեմ աչքե անցընեմ ամբողջ արևմտյան գրականությունը, վստահ եմ, որ անոնք կ՚ունենան, ինչ որ վերջին 50-ամյակին մեջ տպված է, համենայն դեպս կարևորները անշուշտ: Ուրախ պիտի ըլլամ, եթե տուգես այս կետը և ինծի անմիջապես տեղեկացնես: Հույս ունիմ նույնպես, որ որևէ ձևականության կամ դժվարության չեմ հանդիպելու իրենց գրադարանեն օգտվելու համար: Իսկ եթե բարի ըլլաս և ինծի համար աչքի առաջ ունենաս սենյակ մը մեկ ամսվան համար պարզ, բայց կոկ ու մաքուր, ո՛չ հեռու Միսիթարյաններեն ու քաղաքի կեդրոնեն, որ չիտակ հոն իջնեմ, առանց կողմնակի ծախքերու՝ չափազանց չնորհակալ կ՚ըլլամ քեզի: Մնացածը*

կը խոսինք, երբ միասին ըլլանք, առայժմ սրտանց ու կարոտով կը համբուրեմ քեզի:

Լևոն Սեղբոսյան

1914 ապրիլ 24
Լոզան
(Բացիկի դարձերեսին՝ Exp: Le'on Segbossian
Montagibert, 6
Lausanne)

126. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, հեռագիրդ որ առի՝ Վիեննա մեկնելու վրա էի. ապասեցի և գիտեի, որ կանչելու ես. և որովհետև իմ անմիջապես գալս հիմա անձնապես անհարմար էր ինծի, միտքս դրեր էի առաջարկեմ աշնան գալ: Բայց նամակդ վրաս ազդեց, շատ կուրված կ'երևաս, պետք չէ, հոգի՛ս. մյուս կողմեն ալ կը տեսնեմ, որ շատ մը պատճառներով հիմա գալս ավելի արդյունավետ է: Այս շաբթու հոս գործերս կարգի կը բերեմ հիմա, որ շաբաթ օրը (մայիս '3/16-ին) ճամբա ելնիմ. ճիշտ մայիսի կեսին, ձեր որոշման համեմատ, կ'ըլլամ Թիֆլիս:

Վիեննա անշուշտ կը հանդիպիմ Լևոնիդ. անոր գրած էի արդեն Վիեննա երթալս. իրմեն ալ նամակ եմ առացած ու հեռագիր: Հիմա անոր ալ գրելու եմ, որ Կովկաս եմ գալու, կարելի է հանձնարարելիք մը ունենա:

«Արծիվին» ալ գրելու եմ և գալ տարվան պայմանագրությունը ուղելու, որ հոս եղած տեղս ձեր վավերացմանը ենթարկեմ, անոր բոլոր հին հաշիվներուն հետ միասին:

Մնի-երկու օր կը մնամ Բակու, եթե անհրաժեշտ գրելու բան մը ունենաս, գրե՛ Աբրահամի հասցեով: Կրնաս նաև գրել Բաստով poste restante իմ անունիս, ցերեկ մը կը մնամ երևի:

Դե՛, առայժմ իմ ու Ջավոյի ջերմ բարևները քեզի և տիկին Կատարինեին ու ցտեսությո՛ւն: Կարոտի համբույրով՝ Լևոն

1914 մայիս 13
Լոզան

127. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հանե՛ս ջան, կը պատրաստվեի Ստեփանի ու Սաթենիկի[1] հետ միասին քանի մը օրով ձեզի գալու[2], որ «նենգ» Ավստրիան իր թնդանոթները ուղղեց «Լուսաբերի» վրա[3] և վախնալով, որ Հանկարծ Գերմանիան ալ անոր օրինակին հետևելով իր դռները չը գոցե առջևս, կ՛ըսատալիմ ինքզինքս նետեմ սահմանեն անդին, եթե արդեն ուշ չէ: Այնպես որ, սիրելի՛ս, դժբաղդաբար քեզի ու քովինները նորեն տեսնելու հաճույքեն սուիպված եմ ձեռք վերցնելու: Կը բարևեմ ու կը համբուրեմ բոլորդ, կը ցանկամ բոլորիդ առողջություն ու հաջողություն: Կը հուսամ, որ ասկե ետքը մեր հին ավանդություններեն քիչ մը չեղելով մեջտեղ կը գրենք իրարու, որպեսզի բոլորովին չը վայրենանանք իրարմե: Կը մնկնիմ այս իրիկուն: Կրկին ու կրկին կը համբուրեմ քեզի ալ, մեծ ու պզտիկդ ալ:

Լևոն

1914 Հուլիս 18
Թիֆլիզ

128. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Օգոստոսի 9, Նոր Նախիջևան>

Սիրելի՛ Ստեփան, ահա՛ երկու չաբաթ է նստած եմ Նախիջևան և չգիտեմ ծայրը ուր պիտի երթա: Դեռ գնացքի մեջ էի, որ Գերմանիան պատերազմի հայտարարություն ըրավ[1]. ուզեցի Բալտիկ ծովով անցնիմ, արդեն գոց էր, ուզեցի Սև ծովով Օդեսսա ու Հունկե Պոլսի վրայով Իտալիա անցնիմ, եվրոպական ընկերությունները ընդհատեցին երթևեկը, և Դարդանելը փակվեցավ: Հիմա կ՛ըսպասեմ ֆրանսական զենքի հաղթանակին, որ Շվետի վրայով, Անգլիայով անցնիմ Փարիզ ու Լոզան: Տունեն իհարկե ոչ մեկ լուր չունիմ և ունենալու ալ հույս չունիմ, թեև հոս մնալս հասկնալուս պես հասցե տվի ու քանի-քանի անգամ գրած եմ արդեն: Հիմար հոգեկան դրություն է, պարապ ժամանակ և աշխատելու, կեդրոնանալու անկարելիություն, կը կարդամ ժամանակս

սպասննելու համար և արդեն ձեռքս առի անգլիերենը: Հոս կ'ապրիմ ուսուցիչ Հակոբ Խաչատրյանի[2] մոտ, որու հետ ամեռը եղած ես Էջմիածին, և որը հիմա քեզ կը բարևե: - Ջնայելով պատերազմին ու խառնակ ժամանակին՝ հոս հասնելուս Ռոստովի թատրոնը պատրաստութեան վրա գտա. սեպտեմբերի սկիզբները կ'ըսկսի սեզոնը, դնելու են «Հին Աստվածներս» Զուբարի թարգմանութեամբ[3]. րեժիսորն է Մարջանով՝ Մոսկվայի «Ազատ թատրոնի» նախորդ տարիներու վարիչը. իսկ դերձատերը ինչ-որ Կրուչին[4]. հիմա դեկորասիոնները նկարելու վրա են. և եթե պատերազմը այսպես չարունակվի, կամա-ակամա ներկա պիտի ըլլամ առաջին ներկայացմանը[5]. ահագին ծախքեր կ'ընեն, և Մարջանովը մեծ հավչտակութեամբ կպած է գործին, հետաքրքիր է՝ ինչ պիտի դուրս գա: - Ինչ վիճակի է Քափանակյանի թարգմանութիւնը[6]. կը խնդրեմ՝ որ անոր քովը եղած երկու օրինակ թարգմանութիւնները[7] առնես ու ինքդ քու քովդ պահես մինչև իմ կարգադրութիւնս: - Կ'ենթադրեի ու արդեն տեղեկացա, որ տիկին Կատարինեն ու աղջիկներդ վերադարձած են քեզի, թեև անշուշտ ճամբան նեղված պիտի ըլլան՝ դասելով իմ ճամբորդութիւնես: Իսկ դո՞ւն ինչ կ'ընես, կը հուսամ վերջացուցած ես արդեն «Լուսաբերի» աշխատանքներդ. շատ ուրախ կ'ըլլամ եթե արդեն տալված թերթերը ղրկես ինծի հոս, տեսնեմ՝ ինչ դուրս եկավ: Օհաննեսին գացի՞ր: Լևոնեն լուր ունի՞ս. անհանգիստ չըլլաս. հոս շատ-շատերն են քու վիճակիդ. Լևոնը խելոք տղա է և հարկ եղած ժամանակ Մխիթարյանները կ'օգնին նրան, ինչպես և իր ինստիտուտը, թե՛ փողով և թե՛ այլ ամեն կերպով, հավանորեն հիմա Զվիցերիա է, և շատ ուրախ պիտի ըլլամ եթե խելք ըրած ու Ջավոյի մոտ գացած ըլլա: Սրտագին ու ջերմ բարևներս մայրիկին, Կատարինեին, Սուրբիկին, որուն տեսքին կարոտ մնացի, Նազիկին[8] ու քեզի. շատ-շատ համբույրներով՝ Լևոն

Հասցես. Нахичеван н/д Вторая
Софовская, 12, Якову Хачатрянцу.
Շանթին

129. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, երկու օրեն կը մեկնիմ Հռոմէ. ուղիղ շաբաթ մը առաջ էի մեկնելու, որ Հիվանդացա. հիմա քիչ լաւ եմ, կը մեկնիմ Պետրոկրադ, հոնկէ Ստոքհոլմ անցնելու համար: Դիմելու եմ գերմանական այնտեղի դեսպանութեան և փորձելու եմ Դանիայով ու Գերմանիայով Չվիցերիա անցնելու՝ չհետաքրքրելով թրքահպատակ ըլլալս. մեծ հուսս չունիմ հաջողութեանս, կարծեմ սահմանները երկաթուղային հաղորդակցութիւնը ընդհատածի պես է, հազիւ թե ներս մարդ թողնին: Եթէ հաջողիմ Նորվեկիայով անցնելու եմ Լոնտոն. և նայելով պատերազմի իրար հաջորդող դեպքերու ելքին՝ տեսնեմ ինչպես պիտի հաջողիմ Յրանսայի վրայեն անցնելու, գուցե ստիպվիմ աւելի կամ նուազ երկար ժամանակով Լոնտոն մնալու: Թէ՛ ուղիղ և թէ՛ կողմնակի ճամբաներով աշխատեր եմ մեր տունը նամակ գրելու. բայց չեմ հաւատար, որ առացած ըլլան և իհարկէ ոչ մեկ լուր լրենցմէ. Ստոքհոլմեն կը հեռագրեմ մեր տունը, իսկ քու հեռագիրդ կը հաւատամ առացած պիտի ըլլան անշուշտ: Գալով 300 լուբլուն՝ փոխադրէ՛ անմիջապես Ջաւոյի հասցեին (Lausanne, Montagibert 6, Djavo Segbossian) վստահելի բանկի մը միջոցով. պիտեմ, որ 100-120 լուբլու չափ կորանցնելու եմ, բայց հիմա այդ տեսակ բարակ հաշիւներու ժամանակ չէ. կը վախնամ, որ Ջաւոն առանց դրամի չի մնա. փոխադրէ՛ անմիջապես: «Եվ նրանից հետո»[1], Ստեփա՛ն, խնդրեմ աչքի առաջ ունենաս, որ այս տարի ես ստիպված եմ միայն կովկասյան ապրյուրով ապրելու և ան ալ, ըստ Հանեսի արտահայտութեան, «արտս կանանչ հնձելով»: Պոլսեն նախորդ տարւան առանալիքս ալ դեռ չեմ առացած, իսկ ասկե ետքը, ալ ինչ ըսելու բան է, մինչև զարուն գոնե ո՛չ մեկ վարա առանալու հնարաւորութիւն չկա: Թատրոններուն, զբօքերս ինչ հնար է գանձե՛, այլև Լուսաբերներու հաշիւները այնպես կարգադրե՛, որ առնե առիս գոնե 400 ֆրանկ ղրկել կարողանաս մեզի, մինչև այս արյունոտ օրերն անցնին և տեսնենք ինչ օր է լուսնալու և ինչ եմ ընելու: Շատ ուրախ եմ, որ ամբողջ ընտանիքդ չուրջդ է, այս տեսակ վայրկյաններուս չատ մեծ բաղդ է աուիկա: Մնծիլ ու փոքրիդ չա՛ս, չա՛ս սրտանց բարևներ ու համբոյր: Եթէ ողջ-առողջ Բալտիկ ծովը անցա՝ քեզի կը գրեմ երկու տող: Իսկ եթէ Գերման ծովի[2] մինաներն ալ որ անցա՝ Լոնտոնեն կը

պրեմ քեզի երկար նամակ մը: Հանեսին ու իրեններուն համբույրներս, նույնը և Սաթենիկին: Կը պրկեմ քեզի՝ Լևոն

1914 օգոստ. 25
Նախիջևան

130. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1914, օգոստոս 27,
Նախիջևան

Ստեփան, նախորդ նամակս, որ գրած եմ 3-4 օր առաջ, անշուշտ ստացած ես. կը պատրաստվեի հյուսիս մեկնելու, երբ տեղեկացա, թե Օդեսա ֆրանսական նավ կա. իսկույն հեռագրով դիմեցի Մյուսա-ժըրիի[1] գրասենյակը, պատասխան եկավ, որ նավը մեկնելու է սեպտեմբերի 2-ին, և որ տոմսակ պահված է ինձի համար. ժամեմ մը ճամբա կ'իյնամ Օդեսա. Հոնկե քեզի կը գրեմ նորեն: Ասիկա գործի հաջող կողմը, թեև միշտ սիրտս վախ է, որ վերջի վայրկյանին Թուրքիան կռիվ կը հայտարարե[2], ու նեղուցները կը գոցվեն, կամ որևէ ուրիշ արգելք դուրս կու գա: Գամ գործի ձախորդ կողմին, Աբրահամեն նամակ առի Բազվեն. դուրս եկավ, որ Լոզան մեր բանկը գոցեր է իր վարկը Ջավոյի առջև[3] պատերազմը հայտարարելուն պես. Ջավոն հազիվ կրցեր է կերպ մը հիսուն ֆրանկ առանալ. և ասիկա դեռ 1 ամիս առաջ. չգիտեմ՝ ինչ մտածեմ, ինչեր ըսես մտքես կ'անցնին. ո՞վ գիտե՝ ինչ դրության մեջ են հիմա, այս պայմաններուն մեջ պարապ դրպաններով տեղ հասնել չեմ կարող, իսկ չոգենավս չփախցնելու համար ալ ժամանակ չունիմ, որ քեզի գրեմ ու դրամ առանամ, ստիպվեցա հոս ուրիշի օգնությանն ու միջնորդությանը դիմելու. Ալեքսանդր Հարությունովիչ Աբելյանին վերցրի երկու հարյուր րուբլի՝ խոստանալով, որ մինչև երկու շաբաթ Թիֆլիզեն քեզմե կ'ըստանա այդ գումարը: Արդ՝ Ստեփան, կը խընդրեմ, որ այս նամակս առնալուն պես՝ երկու հարյուր րուբլի պոստին հանձնես Նախիջևան Ալեքսանդր Հարությունովիչ Աբելյանի հասցեին (երևի կը ճանչնաս դերասանի եղբայրը)[4]: Եվ չատ կխնդրեմ, որ այդ երկու հարյուր րուբլին չհանես ձեռքդ եղած երեք հարյուրեն. չէ՞ որ

անցած տարվան հաշվին ես դեռ 200 րուբլի ունիմ ստանալիք արևելյան գանձարանեն, ատոր դեմը հաշվե. իսկ այն երեք հարյուր րուբլին, ինչպես խնդրած եմ նախորդ նամակիս մեջն ալ, անմիջապես ղանա՛ փոխադրես Լոզան Ջավոյի հասցեին. ձեռքեդ եկած բոլոր միջոցներուն դիմե, որ հաջողցնես. իմ ճամբորդութիւնս ամենեն լավ պայմաններու մեջ դեռ երեք շաբաթ է տևելու. դեռ հարց է՝ պիտի հաջողիմ ողջ-առողջ տեղ հասնելու. կյանք է, ով գիտե. և վերջապես եթե հասնիմ ալ, երկու հարյուր րուբլիով ինչ կ'ըլլա, ան ալ հիմակվան կոտրված կուրսովը: Ստեփան, կը խնդրեմ չո՛տ չարժվե, դիմե՛ ամեն միջոցի, միայն փող հասնի Ջավոյի ձեռքը. Աբրահամն ալ Բագու փորձեր կ'ընե, գոնե հարյուր րուբլի մը իսկույն փոխադրել կարողանալու: Դե՛, սիրելի՛ս, կը վերջացնեմ և իսկույն պիտի ճամբա իյնամ. ինքս ալ չգիտեմ ուրախանամ, թե ոչ. դեռ չեմ հավատար, որ նավը հաջողի պիտի:

Համբույրներով՝ Լևոնդ

131. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1914, օգոստոս 31, Օդեսա

Սիրելի՛ Ստեփան, պատասխան-հեռագիրդ ստացա. չնորհակալ եմ: Շոգենավը, որով ես կ'ուզեմ մեկնիմ, արդեն հասած է, Միսաժըրի ընկերութեան «Ներա» շոգենավը, իհարկե գները կրկնակի բարձրացուցած, բայց արդի պայմաններուն մեջ չատ բարակը փնտրելու չի դար: Վաղը առտու կը վերցնեմ տոմսակս, կը տեսնեմ վերջին պատրաստութիւններս ու մնաս-բարով կ'ըսեմ ռուսական հողին. կարծեմ վաղը՝ երկուշաբթի՝ իրիկուն շոգենավը կը մեկնի: Եթե թուրքական մինաներուն ու պատերազմի սպառնալիքներուն մեջեն ողջ-առողջ Դարդանելեն դուրս ելնինք՝ կրնամ արդեն խորը չունչ մը քաշել և հուսալ, որ տաս-տասներկու օրեն վերջապես կ'ըլլամ մեր տանը այս չատ տարօրինակ ու չատ ալ ծանր ոդիսականես եռքը:

Առայժմ մեծիդ ու փոքրիդ սրտագին բարևներս. տեղ հասնելուս պես քեզի կը գրեմ, թեև պիտեմ՝ իզուր, հապիվ թե ձեռքդ հասնի:

Օդեսան հրաշալի քաղաք է. չատ հավնեցա, թեև դժբաղդաբար վայելել չկրցա, դեռ երևի հիվանդութենես բոլորովին կազդուրված չէի,

Նորեն թեթեւ տկար կ'ըզգամ ինծի և վախնալով, որ կը լրջանա՝ հյուրանոցես չատ քիչ դուրս կու գամ, մանավանդ որ անպիտան ալ քամի է: Այն ու մաքուր, ճաշակով, սրտաբաց քաղաք է. կը հիշեցնի Մարսյելը[1], բայց ավելի գեղեցիկ: Գրեթե անընդհատ լրագիր կը կարդամ. այդ բոլոր наступленіе[2]*-ներն ու* отступленіе[3]*-ները գլխուս մեջ կատարյալ չախմատ է դարձեր. քիչ է մնացեր՝ որ զորավար դառնամ, բանի մը պետք եկած կ'ըլլամ գոնե իմ պետութեյանս համար, որուն մինչև օրս ոչ մեկ խեր չեմ տված: Է՛, Ստեփա՛ն ջան, դեռ չատ դժբաղդ զատ է մարդ ըսվածը, դեռ չա՛տ է անասուն, և դեռ չա՛տ պետք է արյուն թափե ու արցունք, որ վերջապես մարդ դառնա: Երբ քիչ մը վերեն կը նայիմ հոգիս խորապես կը տխրի: Դե՛, սիրելի՛ս, առայժմ մնաս-բարով, հաջողութիւն քեզի, հաջողութիւն և ինծի. Լևոն*

132. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, երկու չաբաթվան չափ է՝ հասած եմ տուն. ճամփորդութեյունս անցավ չա՛տ հանդիստ ու հարմար. կարծես հատուկ մեզի համար բացին Դարդանելն ու նորեն գոցեցին: Քանի եկած եմ՝ զբաղված եմ տան գործերով, փոխեցինք և բնակարանը, դեռ աշխատութեյան ձեռք տված չունիմ, դեռ ինքզինքս չեմ գտած, ուրեմն և դեռ չեմ գտած Հոգեկան Հավասարակշռութեյունս: -Դուն ի՞նչ ըրիր. չատ հետաքրքիր եմ՝ ավարտեցի՞ր «Ուղեցույցը», արդեն տպվա՞ծ է. ի՞նչ կերպարանք ստացավ Ե. տարին, օրինակ մը հանձնե պոստին, դուցե Հասնի. Ռուսաստանեն նամակ դեռ չենք ստացած, բայց «Հորիզոնները» գրեթե կանոնավոր կ'ըստանանք: Վստահ չեմ, որ այս նամակս ստանալու ես, և ատոր համար ալ կարճ կը կապեմ, ստանալուդ պես իսկույն պատասխանե: Աբրահամը 300 րուբլին հեռագրեր է, որ ղրկած է. բայց մինչև հիմա դեռ չենք ստացած: Ատոր փոխարեն Պետրոկրատի ու Ժընևի միջոցով ստացած ենք 200 ֆրանկ. այլև ռուսական լիկասիոնի[1] միջոցով 304 ֆրանկ 50 սանտիմ. այդ երկու գումարներն ալ չգիտեմ ով է ղրկողը, կ'ենթադրեմ, որ դուն ես, թեև չատ տարօրինակ գումարներ են, և ո՛չ մեկ կերպով հաշվի բերել չեմ կրնար: Իսկ Աբելյանի 200 րուբլին տարակույս չունիմ, որ արդեն ճամբած ես

իր ժամանակին: - Դե՛, սիրելիս՛, առայժմ բարև ու համբույր: Եթե այս նամակիս պատասխանը դա՝ կը գրեմ արդեն մանրամասն: Լևոն

1914 հոկտ. 11
Լոզան

Նոր հասցես՝ Avenue Druey
24a, Lausanne

133. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, երկու չաբաթ առաջ քեզի գրած եմ նամակ մը[1], բայց պիտեմ՝ կա՛մ չես առացած, կա՛մ չուտ ուշ ես ստանալու. Լոզանեն Թիֆլիս գացող կա, կ'օգտվիմ առիթեն քեզի գրելու: Եվ գրելիքս ալ շատ ախորժելի բաներ չեն անշուշտ. այս դաժան միջնադարյան պատերազմը շատ երկար է տևելու՝ քայքայելով կյանքեր ու պետութիւններ, տնտեսութիւն ու ստեղծագործութիւն: Ես խոսիմ քեզի իմ տնտեսութենեն. «Արծիվը» մայիսեն իվեր, այսինքն իմ Լոզանեն հետանալես իվեր, ոչինչ ղրկած չէ. Պոլիս եկան չոգենավ ու կրցանք քանի մը խոսք փոխանակել. հիմա գուր է հոնկե որևէ հույս, իսկ ապագան իմ կարծիքովս ավելի վատթար է ըլլալու, քան հիմա: Հոս բանկան, ուր Ջավոյի 2000 րուբլու բանտերը գրավ էի դրած ու գեմը պարտք կ'ըստանայի, պատերազմի առաջին օրեն դադարեցուցած է ամեն վճարում բացարձակապես: Ջավոն մինչև իմ գալս նեղվելով ու պարտքով քաշ էր տվեր կերպ մը. ես հետս բերած ու Կովկասեն առացած քանի մը հարյուր ֆրանկներով տվի պարտքերը, ու հիմա կ'ապրինք ու դեռ ամիս մը կրնանք ապրիր: Հույս այն 300 րուբլին էր, որ դուն փոխադրեր ես Աբրահամին, ան ալ, ինչպես հետագրած է, ամիսեն ավելի է, ղրկած է արդեն. բայց չենք առացած և կը վախնամ որ չառանանք. մեջը անճշտութիւն մը, բան մը ըլլալու է, անշուշտ. գրեր եմ արդեն Աբրահամին. հիմա այս նամակիս կից կը գտնես իրեն նամակ մը, որ իսկույն ղրկե իր հասցեին, և ուր խնդրած եմ, որ ան առուպի այդ գումարին ինչ եղած ըլլալը: Հիմա քեզմե ալ կը խնդրեմ, որ այս նամակս առանալուդ պես ինծի դրամ հասցնես իմ հառաջիկա տարվան առանալիքիս հաշվին, ինչքան որ կարող ես. դրամ հոս կ'ըստացվին Պետրոկրատի վրայով ռուսական լիկառնի միջոցով, լսած եմ որ «Credit Lyonnais»-ն ալ կը փոխադրե կարծեմ: Հոս գտնե մեկ-երկու

ամսվան Հենարան ունենամ ձեռքս. կը վախնամ, որ Հանկարծ արդի եղած թուլլ կապը Ռուսաստանի ու Զվիցերիայի մէջ կրնա դյուրաւ կտրվիր, և կը մնամ բոլորովին բացը: Ա՛հ, անցներ անգամ մը այս ծանր ձմեռը, ու տեսնինք՝ ինչ ենք դառնալու: - Գրե՛ ինծի, թեև ուշ, բայց կու գան նամակներն ու լրագիրները, այնպես որ ղրկե՛ և «Հասկերուս» մեր չունեցած թիվերը, ինչպես և նոր տպված «Լուսաբերը» և «Ուղեցույցդ»: Ինչ կ'ընեք դուք. դպրոցդ կարգի՞ն է. Հանեսը հիմա ալ պբաղված է իր Հողերովը[2]. ինչպես կը տեսնեմ, գիշ չէր ըլլար, եթե ես ալ կամաց-կամաց Հող ձեռք բերելու մասին մտածեի. հիմա ամբողջ աշխարհքը Հողի կռիվ է. և իրավունքը՝ Հանեսինը: Իսկ ինչ եղավ «Հիվանդանոցի» քու նշանավոր ծրագիրդ[3]. պատերազմը Հո՞տ ալ Հասավ, ափսո՛ս: Եղեք առողջ, մնացածը դարտակ բաներ են այս բարբարոս և հիմար դարուս մեջ: Փա՛ռք Աստծու, առողջ ենք մենք ալ. բայց աշխատութիւնս չատ կաղնիկաղ կը քալե[4]. թևեր չկան, սիրտ չըկա. մարդ չգիտե՝ ինչ ընե, ինչո՞ւ ընե: Հասցես փոխված է. փոխանակ Montagibert 6-ի, ասկե եւքը՝ Av. Druey 24a: Ջերմ բարևներս տիկին Կատարինեին, զավակներուդ ու քեզի:

Համբույրով՝ Լևոն

1914, Հոկտ. 10/23[5], Լոզան

134. ԱԲՐԱՀԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Սիրելի՛ Աբրահամ, չգիտեմ նախորդ նամակս առի՞ր, թե՞ ոչ[1]: Կովկաս եկող կա, առիթեն կ'օգտվիմ այս երկու տողով կրկնելու նախորդ նամակիս «կարևոր» մասը: Հեռագրեր էիր դեռ իմ Լոզան Հասնելես ալ առաջ, թե ղրկած ես 100 րուբլի և վերջն ալ 300 րուբլի: Ռուսական լիկասիոնի միջոցով ստացված է 249 ֆր. 50, որ կ'ենթադրեմ քու ղրկած 100 րուբլին ըլլալու է: Իսկ 300 րուբլուն Համապատասխանող ոչ մեկ դումար դեռ չենք ստացած. Հասցեի կամ մեկ ուրիշ անճշտութիւն գուցե ըլլա մեջը, չէ՞ որ քանի-քանի ձեռքերե է անցնելու. խնդրեմ, դիմեիր և ստուգեիր: Ասոր փոխարեն Պետրոկրատի ու Ժընևի վրայով ստացած ենք 200 ֆրանկ, այլև 304 ֆրանկ ռուսական լիկասիոնի միջոցով. չգիտեմ՝ ղրկողը դո՞ւն ես, թե՞ Ստե-

փանը: Եթե քու չաո որոշ հետագիրդ չըլլար, պետք է մտածեի, որ որևէ պատճառով սոխալվեցար 300 րուբլին այդպես կտոր-կտոր ղրկելու: Ինչևէ. ղրե՛ մեզի. քու բոլոր նամակներդ միասին ստացանք նոր. Հա՛, չմոռնամ գրելու, որ Ջավոն ո՛չ Գյուլմսերյաններեն և ո՛չ ալ Վաչյաններեն[2] ոչ մի ղրամ չէ ստացած: Ես ալ, դուն ալ այս ամառ հրաչալի ժամանակ ընտրեցինք ճամբորդելու. ինչպես կ'ենթադրեմ իր առևնին Ջավոյին գրած բացիկներեդ, դուք ալ շաո սիրուն ճամբորդություն մըն ևք ըրեր Եվնիկի հետ Լոզանեն Բակու. բան չի կա, կը հիշենք ու կը խնդաք. իսկ ձեր չարաբաստիկ անգլիական մնաոմնները ուրեմն կորան ու կորան. ճակատագիր է, սիրելիս, ձեր անգլիական գնումներու ճակտին ալ երևի այդ է գրած, որ երբեք տեղ չհասնին. եզրակացություն՝ ուրեմն ձեռք վերուցեք անգլիական գնումներեն: Ինծմե ավելի Ջավոն կը գնահատե ձեր այդ կորուստին մեծությունը. «Խե՛ղճ Եվնիկ, այդ բոլո՛րը նորեն պիտի չինե» կ'ըսեր անցած օր իորին հուսահատ շեշտով մը, ուրկե կ'ենթադրեմ, որ «այդ բոլորը» շաո բավմատեսակ և շաո լուրջ տեսակի բան եղած պիտի ըլլա: Այնպես որ ինծի ալ կը մնա բացականչության իմ բաժինս՝ «Խե՛ղճ Աբրահամ, այդ բոլո՛րը նորեն պիտի վճարես»: Մենք մեծով-պզտիկով ողջ և առողջ ենք, այսինքն մեր այս քսաներորդ դարու ամենեն մեծ բաղդավորությունը: «Նոր Հոռմո»[3] հաներ եմ գլրոցես, կը դարձնեմ սաղին ու անդին ու ակամա կը մտածեմ. «Հիմա ամբողջ Եվրոպան Նոր Հռոմ խաղալու վրա է, հիմա ինչ ժամանակ է Նոր Հռոմ գրելու»: Բայց և այնպես կը գրեմ ու պիտի գրեմ: Պիտի գրեմ մոռնալու համար չորս կողմիս իրականը, պիտի գրեմ վրայես նետելու համար այդ նյութը, որ երթամ նոր աշխատանքի: Շուրջս կատարվող դեպքերուն ու իմ դրամայիս ներքին ոգուն մեջ զուգահեռականություն մը կա, որը վար ձգեց իմ աչքիս դրամայիս գրավչությունը. գրականությունը կը սիրե հոսանքին դեմ, հոսանքին հետ իսկույն կը կորսնցնե իր հպարտությունը: Հասցես փոխված է՝ Av. Druey 24a. մնծիդ ու փոքրիդ ու քեզի բարև ու համբույր ինծմե ու Ջավոյեն:

Լևոն

1914 Հոկտ. 10/23,
Լոզան

135. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, այս երկու տողը կը գրեմ քեզի նորեն Յուսուֆյանի[1] խնդրանքով ու իր եղբորը համար: Ինչպես կ'երևա եղբորը նամակեն՝ քրոջ վիճակը ավելի ծանրացած է և առանձին թողնելը անկարելի. այնպես որ գիշեր-ցերեկ խեղճ տղան անկարող է կիսախելագար կնոջ մոտեն հեռանալու: Հոտ հիվանդանոցը տեղ չկա, Քիև կամ այլուր փոխադրելու համար ահագին ծախք է պետք: Եթե Յուսուֆյանը ինքը հոտ լիներ՝ գուցե կերպ մը հարմարցներ, Հեովեն իր նամակներուն կարևորություն տվող չկա, մանավանդ արդի խառնակ վիճակին: Հույս ունի գարնան կարողանա Կովկաս գալ, համենայն դեպս դիմել այս ու այն կողմ ու կերպ մը տեղավորել. իսկ մինչ այդ՝ այս քանի մը ամիսը պետք է օգնել անոր եղբորը, որը բացի իր հոգեկան անտանելի վիճակեն՝ հիմա նյութապես ալ սաստիկ նեղն է: Ինքը Յուսուֆյանը ոչինչ օգնել չի կրնար, ինքն է կարոտ օգնության՝ հիվանդ ու աղքատ: Կը խնդրեմ, Ստեփա՛ն, քու մոտիկ շրջանիդ մեջ հավաքե ամսական քանի մը րուբլի ու հասցո՛ւր եղբորը ձեռքը. իմ հաշվիս վճարե՛ ամսական տասը րուբլի: Գիտե՛մ, որ արդի պայմաններուն մեջ հանձնարարածս մասնավոր ախորժանք մը չունի իր մեջը, բայց չգրել չեմ կրնար, շատ դժբաղդ վիճակ է. և վերջապես Յուսուֆյանը մարդ մըն է, որ այդպես երեսի վրա թողնելու իրավունք չունեին իր ընկերները:

Իմ նախորդ երկու նամակներս հույս ունիմ, որ ստացած ես. շատ կ'ուզեի լուր մը առնեմ քեզմե. միակ կապս Կովկասի հետ «Հորիզոնն» է, որ գրեթե կանոնավոր կերպով կ'ընտանեմ. և շատ կը ցավիմ, որ այս հուզման ու հույսի օրերուն[2] հեռու կ'ապրիմ Կովկասեն:

Ողջ եղի՛ր ու առողջ բոլորդ մեծով-փոքրով. մենք ալ մեծ ու փոքրով կը բարևենք ձեզի ու կ'ըսպասենք քսաներորդ դարու այս մեծ երկունքի ծնունդին[3]:

Ջերմ համբույրներով՝ Լևոն Սեղբոսյան

1914 նոյեմբեր 18
Լոզան

Հասցես՝ Av. Druey 24 a

136. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

*Սիրելի՛ Ստեփան, այս վայրկյանիս տեղեկացա, որ Աբելյանը Նախիջևան դեռ իր երկու հարյուր րուբլին չէ ստացած քեզմե. այնպե՜ս ինծի անհարմար ու ճնշված կ'ըզգամ. Հաստատ խոսք էի տված ու այնպես վստահ էի. չէ՞ որ դեռ երկու հարյուր րուբլի ունիմ անցած տարվան լուսաբերներուն վրա, որ անմիջապես եահես ղրկեիր պիտի. կը հասկընամ, որ վճարումները անշուշտ դժվարացած են և Կովկաս, բայց մի՞թե բոլորովին ընդհատեցան: Ինչևէ. անշուշտ հեռագիրս առած ես արդեն, և հույս ունիմ, որ կարգադրած ալ ես. կը խնդրե՛մ, Ստեփա՛ն, ամոթ է. այնպե՜ս նեղ վայրկյանիս ու այնպե՜ս վստահորեն օգներ է մարդը ինծի: - Միծագելին ան է, որ հիմա ինծի համար ալ ղրամ եմ խնդրելու. սա ինչպե՞ս պիտի ընենք: Հին ներկայացումեն, նոր ներկայացումեն, երկու զրավաճառներեն, իմ մասնավոր հաշվիս դեմ, եթե «տիպլոմատիկ» դիմում մը ընեիր, կարելի է հարյուր հիսուն րուբլի մը գտնե կարողանայիր իրարու վրա բերել: Է՛, ամեն տեսակետեն չատ անհարմար բան դուրս եկավ արդի պայմաններուն մեջ իմ հոս գտնվելս: Հոս հիմա այնպե՜ս իրարանցում է, այնպե՜ս ոգևորություն[1]. չատ կ'ուզեի մոտեն ապրիմ այդ բոլորը[2]. ու չա՜տ կը ցավիմ, որ այսպես հետ՛ւ կապված մնացինք այս ձմեռը: Աբրահամը կը գրե, որ անմիջապես ելլենք ու գանք Կովկաս: Տղա է: Դեռ թողնենք մի կողմ երեք փոքր երեխաներով, ձմեռով, հինգ-վեց պետուքյան սահմաններով ու այս տակնուվրա խառնակուքյան միջով չաբաթներով ճամբորդելու հեռանկարը. բայց ո՞րտեղեն պիտի գտնեմ այդ ճամբորդության համար անհրաժեշտ եղող ահագին ղրամը, ան ալ արդի կրկնապատկած տարիֆներով. և հոս ալ ինչո՞վ և ինչպե՞ս ապրինք ամբողջ ընտանիք մը, այսպես տարվան կեսին: Նորեն ամենեն խելացին տեղս ծանր նստելն է. աշխատինք կերպ մը ծայրը ծայրին բերելու, մինչև բացվին տաք օրերը և, ով գիտե, տաք օրերու հետ ալ գուցե տաք պայմաններ, թեև այս բոլորը բնա՛վ երևույքը չունին շուտով վերջանալու: Իսկ դո՞ւք ինչ բանի եք. եղա՛յր, մեջեմեջ մեկ-երկու տող գրե գոնե, կարոտ ենք մնացեր նամակի, որ մոտիկ մարդու խոսք լսենք: Հիմա Կովկասի հետ մեր միակ կապը «Հորիզոնն» է, չես կրնար երևակայեր, թե ինչ անհամբերությամբ կ'ըսպասինք գալուն: Հա՛, լավ միտս բնկավ, նորեն վոզի պատմություն քեզի. կը խնդրեմ, որ «Հորիզոնին»

վճարես կես տարվան բաժնեգինը, որ չըլլա թե հանկարծ դադրեցնեն առաքումը, կը մնանք բոլորովին անլուր: Բոլորիդ ջերմ ու սրտագին բարևներ ինծմե ու Ջավոյեն. կարոտով կը համբուրեմ քեզի. Լևոն

1914 դեկտ. 16, Լոզան *Նոր Հասցես գիտես՝*
Av. Druey 24 a.

1915

137. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1915, մարտ 11

Սիրելի՛ Ստեփանս, այս վայրկյանիս ստացանք «Հասկերու» թիվը. մեծով- պզտիկով չես կրնար երևակայեր՝ ինչպես ուրախացեր ենք. վերջապես գտնե գիրդ տեսա. քանի հեռացեր եմ Կովկասեն, ասիկա առաջին կյանքի նշանն է քեզմե. իհարկե եթե չհաշվինք երկուերեք դրամատան մ'ինջոցով ձեռքս հասած յոթը հարյուր ֆրանկը. Աբելյանն էլ դրած էր, որ ստացեր է քեզմե իր երկու հարյուրը. չատ ու չատ չնորհակալ եմ: Հիմա օր-օրի կ'ըսպասինք Դարդանելի բացումին, որը հայերուս տեսակետեն ամենեն կարևոր կետն է այս ամբողջ պատերազմի ընթացքին. ատիկա ըսել է Թուրքիայի սանձումը. ուրեմն Կովկասի հանգստացումը, այլև Հավանորեն Թուրքահայերու համեմատական կյանքի ապահովումը, որու դեմ եղած սպառնալիքը ամենեն մեծ վտանգն է այս վայրկյանիս մեզի դեմ: Բացի ատկե Պոլսի գրավումը կասկած չկա, որ վերջի սկիզբն է անշուշտ այս համաշխարհային աղետին. վերջանա՜ր, ալ ջիղ չմնաց: Միակ հետաքրքրությունս, ինչ ըսել կուզե, լրագիրներն են. իսկ միակ մոտացումս պատմության ընթերցումը. հիմա մտեն կը ծանոթանամ խաչակիրներու և արաբներու պատմության: Իսկ Կովկասեն կտրված ենք բոլորովին. առաջ գոնե «Հորիզոնները» կ'ըստանայինք, որը նոր տարիեն սկսած դադրեցուցին. թեև գրած եմ իրենց, որ դիմեն քեզի և ստանան իրենց բաժնեդինը. գրած եմ և քեզի երկու անգամ նույն խնդիրքով. մի՞թե նամակներես ոչ մեկը չէ ստացված. հոսկե դրամ փոխադրելու հարմարություն չկա այդպես փոքր գումարի համար: Կը խնդրեմ ինքդ անձամբ կարգադրես, որ ղրկեն թերթերը, օրինակ, սկսած մարտի կեսեն: Իսկ քեզի

ալ չեմ ըսեր, որ պատասխանես ինծի, երևի կը գրես օր մը, երբ պատերազմը վերջանա և կամ, ո՛վ գիտե, երբ աշխարհքը վերջանա:

Ջավոն, ես, պզտիկներս բոլորս սիրով ու կարոտով կը համբուրենք ու կը բարևենք քեզի ու քովինները, առո՛ղջ ըլլանք, քա՛ջ ըլլանք, կու գան ավելի ազատ օրեր. լավագույնի հույսն է նորեն միակ արևը, որ այս ցուրտ ու դաժան օրերուն կը տաքցնե մեր սառած հոգին գոնե քիչիկ մը: Կը գրկեմ քեզի. Լևոն Սեղբոսյան

138. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1915, Հունիս 3, Լոզան

*Սիրելի՛ Ստեփանս, լուր չունիմ քեզմե, բայց հազար Ֆրանկը ստացա այս վայրկյանիս. չնորհակալ եմ: Կ'ըսպասեմ Դարդանելի բացվելուն, որ ինչ ընելիքս պիտնամ, մնացեր ենք առկախ օդի մեջ: Կը չնորհավորեմ Վանի գրավումը[1], գուցե և Բիթլիսի մինչև այս տողերս քեզի հասնին: Նույն բաղդը չուտով Մուշին ու Սասունին. տեսնենք ի՛նչ է դուրս գալու այս սարսափելի արյունահեղութենեն: Միայն թե չո՛ւտ: Կը չնորհավորեմ նույնպես և քու կիմնազիոնդ ու բոլոր սրտովս հաջողություն կը ցանկամ. ուրեմն ըրիր վերջապես այդ կտրական քայլը, որը վերջիվերջո պետք է ընեիր[2]. վստա՛հ եմ, որ դպրոցդ ըլլալու է առաջնակարգ հաստատություն մը: Ջերմ ու սրտագին բարևներս տիկին Կատարինեին, մայրիկին, Լևոնին, Սուրբիկին, բոլորի՛դ բոլո՛ր սրտով: Ի՞նչ կ'ընեք հիմա, ո՞ւր եք ըլլալու ամառը, կրնա՞մ հուսալ, որ գոնե քու «տարեկան» նամակը ստանամ պիտի չուտով: Եթե պատերազմը չարունակվի մինչև աշուն, ինչ որ ավելի քան հավանական կ'երևա, ես երևի ստիպված պիտի ըլլամ գալու նորեն Կովկաս առանձին, ամբողջ ընտանիքով բոլորովին անկարելի բան է: Խելքդ կը կտրե՞, որ քիչ-շատ ձեռնտու հարմար պաշտոն մը կարող ըլլամ գտնել արդի խառնակ պայմաններուն մեջ: Համենայն դեպս աչքի առաջ ունեցիր: Ի՞նչ բանի է Հանեսը, իրմեն ալ ոչ մեկ լուր, եթե չհաշվենք «Հորիզոնի» պոեմը[3]: Պինդ-պինդ կը համբուրեմ քեզի ու կը ցանկամ բոլորիս առողջություն, հաջողություն ու լավագույն օրեր.

Լևոնդ

139. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1915, սեպտեմբեր 17

Սիրելի՛ Ստեփանս, առած եմ երկու երկար նամակներդ ալ, հազար ֆրանկն ալ. բոլորի համար ընդունե՛ իմ ջերմ շնորհակալութիւնս: Կը հուսամ Լևոնդ կազդուրված է արդէն բոլորովին: Այս պատասխանս դիտմամբ կ'ուշացնեի, ավելի որոշ բան մը գրել կարող ըլլալու համար քեզի, բայց կը տեսնեմ, որ չատ երկարեցավ: Լոզանի ու Ժընևի թուրքահայ ուսանողներու խմբի մը հետ միասին դիմած ենք Զվիցերիայի ռուս դեսպանին, խնդրելով, որ մեզի դյուրութիւններ տրվին Կովկաս անցնելու, իբրև հայ կամավոր: Դեսպանը մեծ սիրով ու խոստումներով դեմ եկավ մեր խնդիրքին, հեռագիրներ փոխանակվեցան, մասամբ դրական պատասխան մը առած ենք արդէն. բայց վերջնական որոշումը դեռ կը քաշքշվի այս երկու ամսե ի վեր: Կը հուսամ, որ մինչև 8-10 օր ստացվի պատասխանը, և անմիջապես ճամբա իյնանք: Ես իհարկե հրացանը ուսս զարնելու դիտավորութիւն չունիմ. բայց վստահ եմ, որ հոտ բանի մը պետք գալ կրնամ: Իմ առաջին դիտավորութիւնս չիտակ Վան երթալն էր[1], բայց վերջին գաղթն ու ավերը ամեն ինչ տակն ու վրա ըրավ: Կու գամ՝ կը տեսնեմ: Եթե մեր խմբական խնդիրը մերժվի, հս պետք է չանամ անհատապես գոնե անցաթուղթ մը ստանալու ռուսական դեսպանատունեն. եթե հարկ եղավ, կը հեռագրեմ նաև քեզի, որ հոտ աշխատեք արագացնելու ու հաջողցնելու: Բայց չատ ուրախ պիտի ըլլամ անշուշտ, եթե այդ երկար-բարակ պատմութեան պետք չմնա: Եթե հաջողիմ՝ հոսկե մեկնելու օրերս քեզի նորեն կը գրեմ բացիկ մը: Առայժմ ջերմ ու սրտագին բարևներս ձեզի բոլորիդ՝ թե՛ իմ կողմես, թե՛ Զավոյի և թե՛ պզտիկներու: Հիմա ընտանիքով գալ բացարձակապես անկարելի է. ուրիշ ամեն հարց մեկ կողմ թողած՝ միայն ճամբու ծախքը արժե գոտ հազար ըուբլի: Անոնք կու գան գալ գարնան, եթե կովի պայմանները հնարավորութիւն տվին: Ջերմ կը համբուրեմ քեզի. Լևոն

Exp: L. Segbossian, Av.Druey 24a,
Lausanne

140. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, դեռ մինչև հիմա պատասխան չեկավ ռուսական դեսպանատունեն. ալ ձանձրացանք սպասելեն, այս վարանոտ սպասողական վիճակը հոգիս հանեց. ամեն օր, ամեն օր հույս ունինք, որ վերջապես կ'ըսատանանք հեռագիրը ու ճամբա կ'ելնինք. բայց ահա՛ օրերը կ'անցնին իրարու ետևե, ցուրտերը սկսան արդեն հոս, այս տարի խիստ վաղաժամ ու դեռ նստած ենք ու տեղերնուս երեսալ չենք կրնար: Թյուրքերը մեզի ալ անցագիր չեն տար, և ալ ինչերնո՞ւս է պետք իրենց անցագիրը, գլխնուն դպչի. ռուսական թուլլատրությունն ալ ահա այսպես կը քաշքշվի ամիսներով: Ներքին գործոց նախարարությունը հեռագրած է արդեն դեսպանին, որ Թյուրքիայի հայերուն սկզբունքով արգելք չկա Ռուսաստան մտնելու. այդ հեռագրի վրա էր, որ դեսպանը բոլոր խնդրատուներուս անունները հեռագրած է Պետրոգրատ ու խնդրած մեզի համար անցագիր: Ալ հույսս կորնցնել սկսա: Առաջ կը մտածեի, որ ուսանողական խմբին հետ միասին և իրեև կամավորներու ավելի դյուրին ու ավելի արագ կ'ըսատանամ Ռուսաստանի մուտքը: Հիմա կը մտածեմ անհաստապես դիմում ընեմ: Նորեն դեսպանը պիտի դիմե Ներքին գործոց նախարարության. և եթե հոտկե Թիֆլիզի առաջնորդի կամ քաղաքապետի կամ ուրիշ կարևոր անձի մը կողմե մանավոր դիմում ըլլա, կամ ավելի ևս եթե Պետրոգրատի մեջ չանցագրվ մը ըլլա՝ գուցե համեմատաբար ավելի չուտ ստացվի ինձի անցագիրը տալու թուլլտվությունը: Կամ գուցե հոս նորեն անհաստապես դեսպանին դիմելս ավելորդ է և ավելի հարմար է ուղղակի հոտկե ըլլա դիմումը. չգիտեմ ինչպես վարվիմ: Մինչև ամիս մը այս նամակս անպատճառ հասած կ'ըլլա արդեն ձեռքդ, եթե չկորսվի: Եթե մինչև այդ ժամանակ մեր խմբական դիմումին պատասխան չեկավ, և եթե քեզմե ալ որևէ հեռագիր չստանամ, պիտի դիմեմ դեսպանին անձնապես, առանձին, և ինձի համար անցագիրը խնդրեմ: Բնզի ալ իսկույն կը հեռագրեմ դիմած ըլլալս, որ հոս ընես ձեռքեդ եկածը, ենթադրելով, որ այս նամակս կրնա ձեռքդ հասած չըլլալ: Իսկ եթե հանկարծ մեր խմբական դիմումին դրական պատասխանը գա՝ բնականաբար իսկույն ճամբա կ'իյնանք, և քեզի ալ իսկույն նախօրոք իմաց կու տամ: Կը խնդրեմ, որ ինձի վոխադրես նորեն յոթը հարյուր

Փրանկի չափ, նույն ճամբով, ինչ ճամբով որ՝ վոխադրած ես մինչև հիմա: Այդ դրամը անհրաժեշտ է ինձի, միևնույնն է՝ հոս ըլլամ, թե արդեն ճամբա ելած: Այլև ծուլություն մի՛ ըներ ու քանի մը տողով պատասխանեն նամակներուս. մոնղոլաթաթարական դարերու այս վերադարձին ու ժողովրդական ընդհանուր մղձավանջի այս ծանր օրերուն՝ մարդ եռակի պահանջ ունի մտրիկ մարդու երկու խոսքին: Իսկ եթե ես մեկնած ըլլամ՝ ավելի ևս. չէ՞ որ Ջավոն հոս մնենակ է ըլլալու: Կը հուսամ առողջ եք բոլորդ, և որ Լևոնը արդեն ապաքինված է վերջնապես: Ջերմ բարևներս քեզի ու քուկիններուդ, այլև Օհաննեսին ու իրեններուն: Կը ցանկամ առողջություն բոլորիդ ու չուտով տեսություն: Համբույրներով՝ Լևոն

1915 Հոկտ. 6
Լոզան

141. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1915, Հոկտ. 8, Լոզան

Ստեփան, քանի մը օր առաջ քեզի գրած նամակիս հակառակ՝ համբերել չկրցա: Երեկ վերջնապես հույսս կտրեցի մեր խմբական դիմումեն, գնացի Բերն դեսպանին[1] և խնդրեցի ինձի համար անցաթուղթ: Նախ պատասխանը եղավ նույնը, ինչ որ ամռանը ես արդեն մեկ անգամ առացեր էի ժընևի դեսպանեն՝ «Պետք է դիմել ներքին գործոց նախարարություն»: Բայց իմ տված բացատրություններուս վրա՝ խոստացավ տա ինձի անցաթուղթ, եթե Թիֆլիզի նահանգապետը տա իր համաձայնությունը: Եվ ինքը հեռագրեց նահանգապետին, հայտնելով, որ հոտ կը ճանչնան ինձի՝ Լևոն Սեդրոսյան Շանթին՝ Մեսրոպ եպիսկոպոսի[2] ու քաղաքագլուխ Խատիսյանը[3]: Ես մեծ հույս ունիմ, որ մինչև 8-10 օր իմ անցագրի այս չարաբաստիկ հարցը կը լուծվի. բայց ո՞վ գիտե՝ նահանգապետը կրնա և կարևորություն չտալ, ու հեռագիրը հավիտյան կը քնե: Արդ՝ եթե մինչև այս բացիկս ձեռքդ հասնելը ո՛չ քաղաքագլխին, ո՛չ ալ առաջնորդին որևէ դիմում կամ հարցում եղած չէ հոտ, կը նշանակե գործը ընթացք չէ

առած, ուրեմն և կը խնդրեմ բարեկամներես ընեն ինչ որ կարելի է, որպեսզի նահանգապետը նպաստավոր պատասխան մը տա Բերնի դեսպանին: Ձեռքս մնացեր է քանի մը հարյուր ֆրանկ, եթե ամիսամիս ու կես ալ որ ձգձգվի, ալ անկարող կ'ըլլամ հետանալու մինչև նոր դրամ չստանամ: Այնպես որ, սիրելի՛ս, խնդրեմ 700 ֆրանկի չափ վոխադրելու ինձի նորեն, ինչպես գրած եմ և նախորդ նամակիս մեջ, միևնույն է՝ դեռ հոս ըլլամ, թե մեկնած: Ուրեմն նորեն ցտեսություն և այս անգամ ավելի մեծ հույսերով, եթե նորեն չխաբվիմ: Բոլորիդ սրտագին բարև: Պինդ կը համբուրեմ քեզի. Լևոն

Exp: Le'on Seghossian, Av. Druey 24a,
Lausanne

142. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, կը կրկնեմ նախորդ բացիկիս բովանդակությունը, վախնալով, որ կրնա ձեռքդ հասած չըլլալ: Հոկտեմբերի 8-ին Բերնի ռուս դեսպանը հեռագրած է Թիֆլիզի նահանգապետին, թե Լևոն Սեղբոսյան Շանթը կ'ուզե Թիֆլիզ գալ, ճանչցված է առաջնորդին ու քաղաքապետին և ուզած է նահանգապետի համաձայնությունը՝ արգելք չունենալը: Արդ՝ եթե մինչև հիմա որևէ հարցում եղած չէ մեր առաջնորդին կամ Խատիսյանին, կը նշանակե ուշադրության չէ առնված, ուստի և կը խնդրեմ քեզմե ու բարեկամներես ընեք ինչ որ հնար է խնդրին ընթացք տալու համար, որպեսզի չուտով պատասխան ստանա Բերնի դեսպանությունը նահանգապետեն: Երբ այս ճամբով գործը որևէ ձևականության դեմ առնե ու կարելի չըլլա, այն ատեն կը խնդրեմ Մեսրոբ եպիսկոպոսեն, որ ռուսերեն լեզվով և պաշտոնական բոլոր վավերացումներով օժտված վկայական մը տա ինձի՝ անձամբ ինձի ճանչնալուն և իմ ինքնությունս երաշխավորող:

[Ծնված եմ 1871[1]-ին Պոլիս. երկար ժամանակ ապրած եմ Թիֆլիզ. ուսուցիչ եմ ու գրագետ, ամուսնացած եմ Թիֆլիզ. հիմա ընտանիքով կ'ապրիմ Լոզան][2]: Այս վկայականը դուն ղրկե ինձի, կարելի է ատոր վրա հենված դեսպանը անցաթուղթ տա, պզտիկ հույս մը ունիմ: Թեև այսպեսով խնդիրը չափազանց պիտի ուշանա. բայց դեսպա-

նատուները ինծի սորվեցուցին արդեն ժամանակի ավելի երկար չափերու գործածութիւնը: Սարսափելի խիստ են հիմա ամեն կողմ ու սարսափելի մանրազնին ու խստապահանջ:

Ջերմ բարևներս բոլորիդ ու կարոտի համբույրներս քեզի. Լևոն

1915 Հոկտ. 18
Լոզան

Exp: L. Segbossian, Av.Druey 24a,
Lausanne

143. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

*Սիրելի՛ Ստեփանս, քու երկար նամակիդ չպատասխանեցի, կը կարծեի քանի մը շաբաթեն մոտդ ըլլամ, ահա՛ կանցնին ամիսները ամիսներու ետևեն և արդեն կտրած եմ հույս փետրվարեն առաջ Թիֆլիզ հասնելուս, թեև միշտ անհամբեր կ'ըսպասեմ քեզմե լուրի մը իբրև պատասխան նախորդ նամակներուս: Սխալ ես, եթե կը կարծես, թե մենք հոս եկանք տղոցս լավագույն կրթութեյան մը տալու ցանկութեյամբ. ես բնավ հիացած չեմ հոստեղի դպրոցներով, դեռ ընդհակառակը: Սաստիկ հոգնած էի ու զզված Պոլսեն, կ'ուզեի մեկ-երկու տարի ինքզինքս ամբողջովին նվիրեմ գրականութեյան և մանավանդ Վիզենս արմատապես բժշկեմ. բուվկարական պատերազմեն անմիջապես ետքը[1] կ'ուզեինք հեռանանք Պոլսեն, նյութապես անկարող էի, ու մնացինք. «Հին Աստվածներուս» հաջողութեյունը կարելի դարձուց իմ ու Ջավոյի ցանկութեյունը և երեք տարվան ծրագրով եկանք Լոզան: Այս պատմութենեն պիտի տեսնես, որ հիմա դեռ կենդանի ըլլալս պարզապես կը պարտիմ «Հին Աստվածներուս». առանց անոր բերած 3-4 հազար րուբլիին ես տեղս երբեմ չէի կրնար և հիմա իմ բոլոր Պոլսի ընկերներուս ու ծանոթներուս հետ միասին ո՛վ գիտե որ լեռան գլխուն մորթված կ'ըլլայի. զարմանալի խաղեր ունի բաղդը: - Կը մտածեի այս ամառ ընտանիքով վերադառնամ Կովկաս և հույս դրեր էի ուրիշ չա՛տ- չատերուն հետ միասին Դարդանելի բացման վրա: Ջեղա՛վ, այդ միջոցին ռուսները գրավեցին Վանը. վճռեցի անմիջապես ես երթամ Վան, թե՛ կրթական լուրջ գործ մը կրնայի գլուխ բերել հոն և թե՛ ինքս կը տեղավորվեի, և մինչև տարի մը, կը մտածեի, կու գան Ջավոն ու տղաքս: Վերջին դժբաղդ նահանջն ու գաղթը հազարավորներու կյան-

քին ու ծրագրին հետ միասին կոտրեց և իմ ծրագիրս: Մտածեցի անմիջապես գամ զայրացին այդ չարժման մէջոցին բանի մը պիտանի ըլլալու հույսով, պիտեցի ժընև ուղ կոնսուլին անցագրի, ըսին պետք է դիմել ներքին գործոց նախարարին: Ժամանակ չկորնցնելու համար միացա ուսանող կամավորներու խմբին, որու անմիջական մեկնումին ամեն տեսակ դյուրություն խոստացեր էր Բերնի դեսպանը. չաքաթներ չաքաթներու հետև լրված ու անհամբեր սպասում, ամեն պատրաստություն տեսնված «հատաջիկա չոզենավով» մեկնելու, «հաջորդ չոզենավով», ո՛չ մեկ պատասխան. Բալկաններու ճամբան գոցվեցավ: Ալ հույս կտրած դիմեցի ինքս անձամբ անհատապես Բերն դեսպանին, որը վերջապես համաձայնեցավ տալ անցագիր, եթե Թիֆլիզի նահանգապետեն համաձայնություն ստանա, ինչպես որ նախորդ նամակներուս մեջ մանրամասն գրած եմ քեզի: Ահա՛ հիմա նստեր եմ ու կ'ըսպասեմ հոս ձեր օգնությանը, որ նահանգապետեն նպաստավոր հետագիր մը գա Բերնի դեսպանին: Եթե ատիկա չի հաջողեցավ, կը խնդրեմ Մեսրոբ եպիսկոպոսը պաշտոնական թուղթ մը գրկե ինծի, վկայող ու տեսակ մը երաշխավորող իմ ով ըլլալս: Դեսպանի հետ խոսակցությանս միջոցին բերնեն թռավ, թե «գոնե, ա՛յ, եպիսկոպոսեն թուղթ մը ունենայիք». ըսի որ անմիջապես հետագրենք ե՛ս կամ ինքը. կմկմաց, թե ավելորդ է, քանի որ հիմա նահանգապետին է հետագրելու արդեն: Այնպես որ Մեսրոբ սրբազանի թուղթը թեև կը խնդրեմ. բայց մեծ հույս չունիմ, փորձ մըն է. հիմա շատ է խոստացած հոս անցագրային, ճամբորդական ու սահմանե սահման անցնելու խնդիրները: Այնպես որ պետք է ավելի լուրջ միջամտություն, և կը կարծեմ, ամենեն ուղիղ ճամբան Պետերբուրգ է, ներքին գործոց նախարարություն. Պ. Բաբաջանյանը[2] թեև անձամբ չեմ ճանչնար, բայց գրելու ու խնդրելու եմ իր միջամտությունն ու օժանդակությունը. դժվար թե մերժե. բայց նախապես կ'ուզեի գիտնամ, թե դուք ինչ ճամբով կ'ուզեիք չարժվիք, դուք հոտտեղի պայմաններն ու կապերը ունիք աչքի առաջ, այնպես որ կը ցանկամ ձեր հրահանգովը չարժվիմ. օրինակ՝ Բաբաջանյանին գուցե ավելի հարմար է ձեր կողմեն դիմում մը, կամ գուցե ուրիշ անձի մը. վերջապես ինչ որ իմ ձեռքես կու գար, ես ըրեր եմ, հիմա հույս արդեն բոլորովին ձեր վրա է, Կովկասի իմ բարեկամներուս: Այսքանը միայն քեզի ըսեմ, որ իմ Կովկաս գալս բացարձակապես անհրաժեշտ է, որովհետև պարզապես ապրուստի միջոց չունիմ: Անցած

տարի դիմացանք չնորհիվ Ջավոյի մեկ-երկու թղթերուն, որոնց դեմ կրետի ունինք հոս բանկը. պատերազմի առաջին ամիսներուն կրետին ընդհատեր էին, բայց վերջը բարեբաղդաբար բացին նորեն. 2000 ֆրանկի չափ ստացեր եմ հոնկե, մնացածն ալ ղրկեր ես դուն. ապրեր ենք աւով: Հիմա բոլոր թղթերը դրավ են բանկը և 4000 ֆրանկ պարտք կա վրաս, ուրեմն ցամքած է վերջնապես այդ աղբյուրը: Կը մնա միայն քեզմե ստանալիքս, որը քու հաշվի համեմատ հազիվ կը հասնի 1500 րուբլու, դեռ կեսեն ավելին ալ վերցնելով մեր դրամատվխեն իբրև պարտք, այդ գումարին 300-ի չափ արդեն ղրկած ես (վերջին հազար ֆրանկին մեջը), 300 րուբլու չափ ալ պետք է մեկդի դնեմ իբրև իմ դալուս ճամբու ծախք. մնացածը հազիվ հերիք կ'ընե մեր տանը ապրուստի մինչև մայիս: Ինչքան ալ ամեն ավելորդ ծախք կրճատած ենք, բայց և այնպես ամսական 400 ֆրանկեն պակաս ապրիլ անկարելի է, հոս ալ սղված է հիմա ամեն բան. 400 ֆրանկը նորմալ պայմաններու մեջ 150 րուբլի ըսել է. իսկ հիմակվան կուրսով 200 րուբլիեն քիչ մը ավելի: Եզրակացությունս՝ 1/կը խնդրեմ անմիջապես ինձի ղրամ փոխադրես, եթե մինչև այս նամակս ստանալդ արդեն փոխադրած չես. փոխադրի 1000 ֆրանկ. եթե կրնաս, եթե ոչ՝ դոնե 700: Հիմա իմ ձեռքս 500 ֆրանկ ղրամ կա ընդամենը՝ իմ բոլոր հարստությունս, որով կը դիմանամ մինչև դեկտեմբերի կեսերը ամենեն շատը, բայց կրնաս երևակայեր, թե ինչ անախորժ դրություն է աշխարհքի մեկ ծայրը մինակ ինկած ընտանիքով արդի խախուտ քաղաքական պայմաններու մեջ մեկ ամսվան ապահովություն միայն ձեռքիդ: Այս ալ ըսեմ, որ Թուրքիան այլևս չի նորոգեր հայերու անցագիրները, իր գլխովը դպչի, որով ես հիմա զվիցերական պետության հանդեպ անհայրենիք եմ, և արդեն ինծմե երաշխավորություն կը պահանջեն. 1500 ֆրանկ պետք է դնել բանկը՝ բնակության թուղթ ստանալու համար. ինծի 3 ամիս ժամանակ ավին, որ կը լրանա հունվարին, և նորեն դլխուս ցավ եմ ունենալու: Անշուշտ ինծի փողոցը չեն նետեր, եթե այդ չունեցած 1500-ը իրենց չհանձնեմ, բայց կ'ըսեղծվի մանր-մանր անվերջ անհամություններ, ինչպես ըսի հոս ալ հիմա սաստիկ խիստ են ու մանրակրկիտ. չորս կողմեն ամեն տեսակի մարդեն թափվեր են Զվիցերիա, և պարզ է, որ կառավարությունը անհանգիստ է ու կը վախնա իր մեջեն ավելորդ բեռե: 2/ Կը խնդրեմ անմիջապես դիմեք զորեղ միջամտության հնար եղածին չափ շուտ ներքին գործոց

նախապարտուճենեն իմ մուտքիս թույլտվությունը ստանալու համար. և հայտնեցեք ինձի՝ ինչ որ պետք է ես ընեմ հոսկե:

Կ'ըսես Սուրբիկը թարգմաներ է «Հին Աստվածները». չա՛տ ուրախ եմ. հոս վինտրեցի «Рус. мысль»-ները՝ մեջը չկար[3]. միայն մեկ թիվ էր պակաս. մի՞թե հենց այդ թվին մեջն է ըլլալու, թե՞ գուցե չտպվեցավ դեռ: Կ'ուզես, որ ղրկեմ քեզի և նոր դրամաս[4]: Նոր դրամաս պատրաստ է բոլորովին, անունը «Օհան Գուրգին» (փոխեցի հին վերնագիրը)[5]. բայց հիմա ի՞նչ ժամանակ է գրական երկ հրապարակ հանելու. ո՞վ գլուխ ունի. իրա՛վ է որ մոմենտի հետ քանի մը առնչություն ունի, բայց չէ՞ որ էականը զուտ գրական աշխատություն է. հիմա բեմի վրա ուրիշ տեսակ երկերու պահանջը կա. հիմա դեռ ո՛չ տպելը արժե, ո՛չ թարգմանելը, ո՛չ ալ ներկայացնելը. թող անցնի այս ցավն ու պատիժը մեր աշխարհի վրայեն՝ վերջը: Սուրբիկի թարգմանութեան վրա իզուր ես գրեր «մի՛կ» հեղինակե ընդունված թարգմանություն. օրինական տեսակետե ոչ մեկ կարևորություն չունի. եթե թարգմանություն մը տպված է՝ օրենքի առաջ կը նկատվի արդեն իսկ հեղինակի կողմեն ընդունված, թե չէ ենթարկված կ'ըլլար դատաստանի ու գրավված: Իսկ բարոյական տեսակետեն չատ գոհ կ'ըլլայի այդպես ընդգծելուդ արդեն հրապարակ հանված թարգմանություններուն հանդեպ, միայն կը վախնամ, որ դեռ չհրատարակած թարգմանիչներս վիրավորվին և տեսակ մը կողմնակի արդելք նկատեն իրենց դեմ իմ կողմես: Եթե գրած ըլլայիր «առաջին», փոխանակ «միակի», մեջտեղը հարց չէր մնար: Ինչևէ, հուսանք, որ ավելորդ ըլլա վախս: Իսկ իմ սիրելի թարգմանչուհիիս ջերմ ու պինդ համբույրս: Գալով լուսաբերներուս հարցին, վստահ եմ, որ քանի մը ամսվան մեջը կրնանք լրացներ ու սրբագրեր բոլոր տարիներն ալ իրենց հավելվածներով, եթե նույնիսկ ես թիֆլիզ ալ չմնամ. բավական է մեկ-երկու չաբաթ միասին ըլլանք աշխատանքին սկիզբն ու վերջը. ունիմ բավական մտածած բաներ և թեթև փոփոխումով չա՛տ ավելի կարելի է կենդանացնել այդ գրքերը, պետք է մեկ-երկու ամիս վրան թուխս նստիլ, ուրիշ ոչինչ, եթե միայն այս անիծած պատերազմը ինձի կովկաս մտնելու թող տա և մարդու մեջ ալ խելք ու տրամադրություն թողնե: Առո՛ղջ եղեք: Անհամբեր սպասելու եմ քեզմե լուրի.

Լևոն

1915 նոյեմբեր 1
Լոզան

144. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփանս, երկու օր առաջ ստացեր եմ դրկած 700 ֆրանկդ. երեկ ալ եկավ Կովկաս վերադառնալու թույլտվությունս. Հավանորեն ամսուս 17-ին ճամբա կ'իյնամ Լոզանեն և եթե ճամբին ավելորդ անախորժություններու կամ ուշացումներու չենթարկվիմ, 8-10 օրեն կ'ըլլամ Պետրոկրատ, այսինքն արևելյան ստիլով նոյեմբերի 4-5-ին: Ես իմ կամքովս մնալ չեմ ուզեր ո՛չ Փարիզ, ո՛չ Լոնտոն և ո՛չ ալ որևէ ուրիշ քաղաք: Եթե չատ ցուրտ չըլլա, կարելի է օր մը - երկու մնամ Պետրոկրատ կամ ավելի Հավանորեն Մոսկվա: Ո՞ւր է հիմա Սրբուհին, Թիֆլի՞զ թե Մոսկվա. եթե Մոսկվա է՝ հեռագրե իմ անունիս poste-restante Մոսկվա իր հասցեն (եթե այս բացիկս նոյեմբեր 3-4-են առաջ հասնի քու ձեռքդ): Բնականաբար ինքս ալ կը հարցնեմ ու կը փնտրեմ, դժբաղդաբար ո՛չ մեկ ծանոթի հասցե չունիմ ձեռքս: Այսօր քու անունիդ պոստին կը հանձնեմ նոր դրամաս՝ «Հասկերու» հաս-ցեով. միասին վերցնել կարելի չէ. անծանոթ լեզվով ամեն թուղթ ու գիրք վար կը դնեն սահմաններուն վրա: Կը խնդրեմ, որ ո՛չ մեկուն ձեռքը չտաս. պահե՛ քեզի: Դե՛, սիրելի՛ս, Հույս ունիմ 2-3 չաբաթեն կ'ըլլամ մոտդ. բայց բան է, եթե չատ ուշացա կամ որևէ դժբաղ-դություն պատահի Հետս, ո՛վ գիտե, պատերազմի տարի է, կը խնդրեմ, որ անմիջապես հարաբերություն մտնես Ջավոյի հետ, և վստահ եմ, որ կը հոգաս իր ու տղոցս մասին, ինչպես քու հարազատ քրոջդ ու զա-վակներուդ մասին: Ջերմ ու կարոտով կը համբուրեմ քեզի ու քուվին-ներուդ ու կ'ըսեմ՝ ցտեսություն՛ն: *Լևոն*

1915 նոյեմբեր 12
Լոզան

Exp: L. Segbossian, Av. Druey 24a, Lousanne

145. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Նոյեմբերի 26, Լոզան>

Սիրելի՛ Ստեփանս, ահա՛ վերջապես ձեռքս է իմ նշանավոր ան-ցագիրս, և բոլոր ձևականությունները կատարված. վաղը չէ մյուս օրը (նոյ. 28) ճամբա կ'ելնեմ, եթե նոր անակնկալներու չպատահիմ, երկու օրեն կ'ըլլամ Լոնտոն, ուր պետք է մնամ քանի մը օր, գուցե և ավելի,

երկու անդիմահպատակ պետք է երաշխավորեն, փորմյուլարները պետք է լեցնել ու օրեր պետք է սպասել, որ իրավունք առանաս Հյուսիսային ծովը անցնելու. անկե անդին ալ կ'ըսկսի ցուրտի թագավորութիւնը: Բայց հույս ունիմ, որ պատերազմի ու բոմբյուրի[1] բոլոր արգելքներուն վրայեն և Հյուսիսի բոլոր մայրաքաղաքներուն մեջեն պանակով մինչև ամիս մը հասնիմ Թիֆլիզ: Բարև կամ որևէ հանձնարարութիւն չունի՞ս Հյուսիսային բևեռին: Իսկ իմ սիրտ ու կարոտի բարևներս թէ՛ քեզի, թէ՛ տիկին Կատարինեին. համբույրս Լևոնին, Սրբուհիին ու Նապիկին: Կը հուսամ հանդիպիմ բոլորիդ առողջ ու լավ տրամադրութեամբ: Ուրեմն, Ստեփանս, ցանութիւն. ջերմ համբույրով՝ Լևոնդ

Exp: L. Seghossian, Av. Druey 24a,
Lousanne

146. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Դեկտեմբերի 10, Լոնդոն>

Սիրելի՛ Ստեփանս, ահա՛ չաբաթ մըն է՝ Լոնտոն եմ, ամբողջ օրը կը թափառիմ ու ձեռքիս դրամր կը հալեցնիմ. այս մարդիկը ինծի Անգլիա մտնիլ թողեցին. բայց Անգլիայեն ելնել թույլ չեն տար. առանց պատերազմական նախարարութենեն permit[1] առանալու ոչ ոք նավ մտնիլ չի կրնար, իսկ այդ permit-ը մերժեցին ինծի, Զվիցերիայեն եկողներուն դեմ մտանավոր խստութիւն կա. բնականաբար իսկույն պիտեցի ռուսական դեսպանատանը, անոնք ալ նորեն հասցնեին ուզեցին ինծմե ինքնութիւնս ապացուցող, հեռագրեցին Թիֆլիզ, դեռ պատասխանները պետք է գան, որ տեսնենք ինչով պիտի վերջանա այս հետաքրքիր պատմութիւնը: Ես կը հաշվեի, որ ձեր ատիլով դեկտեմբերի առաջին կեսերուն հոս ըլլամ, այսպես որ չարունակվի՝ դեկտեմբերի վերջերը հազիվ հասնիմ. գլուխը քարը՝ ես հոս դեռ չաբաթ մը երկու կրնամ պիտանար ձեռքիս դրամովը, բայց ինծի անհանգստացնողը մեր տունն է. ես Ջավոյի ձեռքը քիչ դրամ եմ թողած և Կովկաս հասնելուս պես առաջին գործս դրամ պիտի փոխադրեի. բայց հիմա որ այսպես կը ձգձգվի իմ գալս՝ ստիպված եմ նորեն քեզի գրելու: Կը խնդրեմ, Ստեփան, ինչքան որ կրնաս փոխադրե՛ իսկույն, փոխադրե՛

նույն ճամբովը, ինչպես մինչև հիմա վոխադրած ես, միայն բնականաբար Լևոն-ի վոխարեն կը դրես Ջավո: Ու դամ տեսնեմ մինչև ուր է հասեր իմ պարտքս և ինչպես պիտի դուրս գամ այդ պարտքերուն տակեն: Ճամբով, Լոնտոնի ու մյուս տպավորութիւններուս մասին բերանացի: Ջերմ համբույրներս բոլորիդ. Լևոն

147. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1915 դեկտ. 26, Պետրոկրատ-կայարան

Սիրելի՛ Ստեփանս, ցուրտ ու գիշեր, ձյուն ու գիշեր, և անիվնե՛ր, անիվնե՛ր, որ կը դառնան ու կը դառնան, և սենյակ մը՝ տարօրինակ լույսերով, բազմութիւյամբ ու ծխախոտի ծուխով լեցուն, որ այդ բոլոր աղմուկին, գիշերին ու ձյունոտ եղևնիներուն մեջեն կը վազե ու կը վազե. ինքն ալ չգիտե ո՞ւր, ինչո՞ւ, ինչպե՞ս... ահա՛ քեզի իմ այս վերջին չաբաթս: Պատութիւննե՛ր, սահմաննե՛ր, դրամնե՛ր, մայրաքաղքնե՛ր, և՛ խուզարկութիւն, և՛ մաքսատուններ, նորեն քննութիւն, նորեն խուզարկում. ալ զովեցանք, մաքրվեցանք զարճանք 95 աստիճանի քաղաքական մաքուր ալքոհոլ, դոնե պայուսակներս ու թղթերս: Աւայժմ այսքան. մնացածը բերանացի, գլուխս հիմա այնպես կը դառնա, որ առանց մեծ դժվարութիւյան կարելի է գործածել իբրև վակոնի անիվ: Օր մը մնալու եմ Ռոստով, քանի մը օր Աբրահամին[1], հոնկե ալ քեզի կը գրեմ ու կ'իմացնեմ գալու օրս: Համբույր ու բարև բոլորիդ.

Լևոն

1916

148. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<Փետրվարի 15, Բաքու>

Ստեփա՛ն ջան, քեննիներեդ իմացա, որ Լևոնը[1] մեկներ է մայրաքաղաք, ուրեմն այդպե՛ս վճռեցիք. զինվորագրութիյան հարցը անշուշտ ստուգած ես նախապես: Կը չնորհավորեմ Էրզրումի գրավումը[2], որու կարևորութիյունը մեզի համար անչափ է. միայն նախորդ դեպքերը տարօրինակ վախ մըն են դրած մեջերնիս, որ կը խանգարե սրտանց

ուրախանալու[3]: Թուղթ հոս չկա, եկած օրս իսկ պացինք հարցնելու, արդեն անշուշտ հասկցեր ես, որ ըլլար՝ իսկույն կ'իմացնեի: Կարգադրե՛ հոս, ինչ ձևով որ կարելի է, հետևներու վրա հույս մի՛ դնիր: - Իսկ ես Ջավոյեն նորեն լուր չունիմ, երևի այդպե՛ս է ըլլալու շարունակ: Դրամ փոխադրեցի՞ր և ինչքա՞ն: Կը խնդրեմ, որ «Դիրը» ղրկե ինծի իմ հաշիվս. այլև հետևյալ գրքերեն որը որ ունի 1/ Խաչատրյանի История Арменіи[4]*. այլև կարծեմ ունի ուրիշ գիրք մը Արշակունիներու մասին. 2/ Նազաչ Հովնաթան, 3/ Զոպանյանի հրատարակած միջնադարյան էջերը, 4/ Վարուժանի Հեթանոս երգերը: Թող ղրկե իմ հաշվիս և Աբրահամի հասցեով (*Романовск. *20 III). իսկ դուն ինչ ուրիշ գիրք մը կրնաս խորհուրդ տալ Հայոց պատմության մասին ամփոփ ու գիտական արժեքով. եթե բան մը գիտես՝ ան ալ ղրկել տո՛ւր: - Տիկին Կատարինեին ու Նազիկին իմ սրտագին բարևներս. կ'երևակայեմ հիմա ձեր աշխատանքը, որ բոլորովին միևնակ մնացիք: Ինայեցե՛ք ձեր առողջությունը և եղե՛ք ուրախ: Սրբուհու նամակը, իհարկե, դեռ գրեմ պիտի[5]: Ջերմ համբույրներով՝ Լևոն*

149. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1916, մայիս 5, Բագու

Սիրելի՛ Ստեփան, քու տված հանձնարարությունները, ինչ ըսել կ'ուզեմ, մոռցած չեմ, և եթե մինչև հիմա չեմ պատասխանած՝ պատճառը տալիք պատասխանիս անորոշությունն է. կ'ուզեի կարող ըլլար ասելիքս, որ չեղավ: Նախ՝ քու հողիդ պատմությունը. Վաչյանցը ինքը իր մասը չի ծախեր. «Ինչ իմաստ ունի ծախելը, քանի որ հողը բարձրացնելու է իր արժեքը». գալով Առաքելովներին՝ կենդանի է կինը, և ունի զավակներ. խնդրած եմ մեկ-երկու հոգիե, որ իմանան՝ ո՞վ է անոնց իրավատուն և ինչ վիճակի մեջ են հիմա անոնց գործերը. խոստացեր են, ըսեր են՝ դյուրին բան է. բայց մինչև հիմա պատասխան մը տալ չեն կրցած: Իսկ Թորոմանյանին[1] մինչև հիմա դրամ ղրկված չէ. մենք ուղարկելու էինք Զատկին[2], երբ Տիգրան Հովհաննեսյանը հեռախոսով դիմեց ինծի, հարցուց Թորոմանյանի մասին և հայտնեց, որ Գրասիրաց ընկերությունը ցանկանում է նրան հարյուր րուբլի փո-

խաղրել անմիջապես[3]: Բնականաբար չատ ուրախացա, խոսեցա պետք եղածը, ավելի քաջալերեցի և տվի Թորոմանյանի հասցեն, որ «Հայկորդ օրը դրամը փոխադրվի»: Այդ կողմեն ապահով՝ խոսեցինք Տիգրանի[4] հետ, որ մենք ալ կ'ուղարկենք մեկ-երկու չաբաթ վերջը ամառվան ամիսներուն համար. հաչվեր ենք՝ երեք ամիսը երկու հարյուր րուբլի մեկ տարվան խոստումով: Եվ ահա՛ նոր կխմանամ, որ Գրասիրաց ընկերութիւնը դեռ ոչինչ չէ ուղարկած. իբրև թե ուղեցել է կապե դասախոսութեան մը հետ, որ «ցանկալի էր կարդար Թորոմանյանը Բագու». հա՛րց, որու մասին ես երկար բացատրութիւններ արդեն տվեր էի Հովհաննեսյանին, և որ առայժմ մեկ կողմ էր թողված. ինչևէ. հիմա Տիգրան Հովհաննեսյանը ըսավ, որ իսկույն կը փոխադրե առանց որևէ պայմանի: Կը փոխադրենք և մենք չուտով. ես արդեն փոխադրել տված կլինեի մինչև հիմա, բայց Տիգրանը հիվանդ էր երկու չաբաթ, հիմա ալ հեղինեն է հիվանդ երկու չաբաթե իվեր: Պետրոկրատեն վերադարձիս կ'աշխատիմ անպատճառ հասցնեմ այդ դրամը, եթե մինչև գալս Տիգրանը ղրկած չըլլա: Ես բնականաբար մեր Բյուրոյի[5] ընտրած ներկայացուցիչներեն մեկն եմ, և վաղը երեկ կը մեկնինք. կը տեսնեմ Լևոնդ, դարձիս այս անգամ անշուշտ կը մտնեմ Մոսկվա Սուբրիկը համբուրելու: Վճռե՞ր եք ձեր ամարանոցի հարցը. չատ լավ կ'ըլլար, որ քանի մը չաբաթ միասին ըլլայինք և լուսաբերները մեջտեղեն վերցըննեինք վերջնապես. դեռ տեսնեմ, չգիտեմ ինչպես պիտի ըլլա իմ բանս: Գիտես, որ հոս ամսագրի մը հարցը կար. համոզվեցա, որ այդ տեսակ խառնակ կազմի մեջ ես աշխատել չեմ կրնար. չե՛մ համաձայնելու. և դեռ հենց գործը ինքն ալ վերջնապես կազմակերպված չէ. մեկ խոսքով՝ դատարկ բան է, սրտակցութիւն ու գործի սերը չկա մեջը: Այնպես որ աշնանը չգիտեմ ինչ եմ անելու. խոսե անգամ մը լուրջ Հանեսի հետ. չա՛տ կը կրկներ, թե դրամագլուխ կրնա գտներ ամսագրի համար. եթե երկու տարվա ընթացքին 20000 մը ապահովվեր՝ երկու տարով կըրնանք կապվեր, ես ու Նիկոլը կ'անցնինք գլուխը, կը խմբվինք և սիրուն գործ կարելի է ստեղծել: Բայց Հանեսի պարանովը հոր իջնել կարելի՞ է: Իսկ ուսուցչութիւնը, կը մտածեմ, ի՞նչ պիտի տա ինծի. գոնե ամիսը 250 րուբլի պետք է ստանամ, որ մյուսների հետ միասին ծայրը ծայրին բերել կարողանամ: Մեկ խոսքով՝ օդի մեջ եմ նորեն, ինչպես միշտ եղեր եմ: Կը հուսամ առաջ է Կատարինեն, նրան նույնպես բարևներս ու համբույրս.

Լևոն

Ջավոյեն նոր նամակ առի, լավ են: Լավ է և Վիգենը, բայց հոգ կպահանջի և խնամք. պիտի ջանամ ամառը ղրկել տամ սարը:

150. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1916 մայիս 29. Բազու

*Սիրելի՛ Ստեփանս, չատ-չատ բարև ու համբույր քեզի Լևոնեդ ու Սրբուհիդ. չաբաթ մը Պետրոկրատ էի, չաբաթվան մը չափ Մոսկվա: Լևոնի արամադրությունը սկիզբը շատ լավ էր, պատմեց ինծի իր առաջիկա ամառվան ծրագիրը, մտադիր էր մնա իր տեղը ու աշխատի. եկավ գործակոչի նոր կարգադրությունը ուսանողների վերաբերմամբ, ու ամեն ինչ դարձավ տակնուվրա: Իսկույն դիմեց պրոֆ. Մարին և փորձեց մտնե անոր կազմակերպած Անիի արշավախմբին մեջ, որ քանի մը ամիս ժամանակ չահվի. կամ կը մտածեր քաղաքներու միության կողմից երթա նոր գրավված հայկական վայրերը, դեռ պատասխան չուներ, որ ես մեկնեցա Պետրոկրատեն. վերջը գրեց Մոսկվա, որ Անիի պատմության համար արդեն ուշ էր, և որ ինքը վճռեր է մայիսի վերջը ճամբա ելնել Կովկաս զինվորական վարժարան մտնելու: Սրբուհիդ դարձեր է խելացի ու հասուն աղջիկ. երբ իրեն հետ երկար-երկար կը խոսեինք, զարմանալի կերպով ինծի իմ պատանության կը հիշեցներ, կյանքիս թարմ տարիները. նո՛ւյն կանուխ հասունությունը գիտական աշխարհին մեջ, նո՛ւյն փիլիսոփայական հակումը կյանքին հետ չփվելու առեն, նո՛ւյն գեղարվեստի հափշտակությունը իր ձգտումներուն մեջ ու նո՛ւյն կյանքի ծարավը իր սրտին խորքը: Գուցե ինքը իր վերջին քննություններուն վրա. Մոսկվային մեկնելու օրս տալու էր վերջնական քննությունը, իսկ մայիսի 26-ին վերջինը, երևի այսօր կամ վաղը Լևոնի հետ միասին ճամբա կ'իյնան. թեև ինքը կը ցանկար չաբաթ մը ավել մնա իր պարի ուսուցչուհու պատճառով, որը երկու չաբաթե իվեր տակաը է թոքերի բորբոքումով. չէր ուզեր ձգե այդպես հիվանդ ու մինակ: Շատ լավ տպավորություն ըրավ իմ վրաս այդ անպայման տաղանդավոր կինը. Սրբուհու հոգին ունի այդ կինը, միայն ավելի չփված ու ավելի բացված. չէ՞ որ 27 տարեկան է արդեն ու կին, թեև բոլորովին աղջիկ կը նմանի, այդ հոգեկան խոր ու ներքին քաղաքության վրա է հիմնված արդեն անոր ու Սրբուհու մեջ եղած հարաբերու-

թյունը, որը իսկապես երկու ընկերուհու մեջ եղած կապ է: Գալով իրենց պարին, անտարակույս որ խիստ հետաքրքիր ու խիստ ազնիվ ճիգ մըն է բուն դեղարվեստի աշխարհին մեջ. թե տակի ինչ պիտի դուրս գա Սրբուհու համար, ճշմարիտ չգիտեմ և անկեղծ խոսելով չե՛մ ալ ուզեր, որ բան դուրս գա. միայն պիտի խոստովանիմ, որ այդ բոլորը հրաշալի մարզանք է թե՛ մարմնի և թե՛ հոգու ճկունութեան, առողջութեան, այլև ճաշակի[1]:

Հիմա անցնեմ իմ պարիս: Կարծեմ արդեն ժամանակ է «Կայսրը» աշխարհ հանելու: Եվ ասոր համար նախ երկու հարց կա վճռելու: Ամենեն առաջ դրամականը. ես դրամ չունիմ պատկեցնելու, իմ ձեռքս անցածը վազող դրամ է, նատելու համար անգամ ժամանակ չունի, ուր մնաց պատկելու, այնպես որ Կայսրս սոխակած է արդեն քու ձեռքդ համբուրելու պարտքով ու վարկով մամուլի տակեն անցնելու համար[2]. ծավալը բանաստեղծական ու անտեսագիտական բոլոր միջոցներս գործ դնելով հույս ունիմ «Հին Աստվածներու» 96 երեսին հավասարցնելու[3] կամ չատ-չատ 104. քանի օրինակ տպելը կը հանձնեմ քու փորձառութեանը. պրքի դիրքը «Հին Աստվածներունը». թուղթը կը ցանկայի, որ փայլուն չըլլար, հաստ ու թեթև, ավելի ծծուն թղթի նմանող. իսկ եթե պատերազմը չի համակերպի իմ թղթիս, կը մնա, որ իմ թուղթս համակերպի պատերազմին, այս սկզբունքներով առաջնորդված գնե՛ հարկ եղած թուղթը: Ես վազվզին սկսած կ'ըսկսիմ սրբագրել նորեն ավելի խնամքով, հնար եղածին չափ տառասխալներն խուսափելու համար չարագի կողմեն: Երկրորդ հարցը քու ամառանոցիդ հարցն է: Ե՞րբ եք երթալու և ո՞ւր. հնար պիտի ունենա՞ս հովանիիդ տակը պահելու ապագրութիւնը. գործի սմենեն տաք ժամանակը դուցե հաջողեմ 10-15 օրով գալու թիֆլիզ, բայց ավելին հույս չունիմ: Լուսաբերներուն համար ալ հարկ է, որ գոնե երկու չաբաթ մը միասին ըլլանք: Երբ իմանամ ամառը ուր ըլլալդ, մնացածը ես կը հաշվեմ ու կը ջանամ կերպ մը հարմարցնեմ, աչքի առաջ ունենալով և քու ցանկութիւնդ: Գալով առաջիկա տարվան՝ դեռ ոչինչ չգիտեմ. արդեն գրեր եմ քեզի, որ ուսուցչութենեն, մանավանդ տեսչութենեն կը խուսափիմ, կը վախենամ, որ կ'ուտե բոլոր ուժերս. օրական մեկ կամ երկու ժամ դաս իբրև հավելյալ աշխատանք անկարելի չէ, բայց պետք է նախ հիմնական աշխատանքը ճարվի. ինչպես գրեր եմ, մնա՛կ այդ տեսակ գործը, որ թե՛ գրական ըլլա, թե՛ ժամանակին պետք և թե՛ ինձի ամբողջապես

չուտե՝ ամսագիրն է. Համազտամարին[4] խոսեցա Նիկոլի հետ, ամեն բան լավ է, պակաս է՝ նորեն փողը. տարեկան 15000 բաց պետք է հաշվել, որը չի գոցվիր բարի ցանկութիւններով. Բազմի վրա ալ հույս դնել չեմ կրնար. տեղական– ազգասիրութիւնը դրա ամենեն մեծ թշնամին է. թերթը եթե Բագու հրատարակեինք՝ գուցե և անկարելի չըլլար այդ գումարը ճարելը: Մեկ խոսքով նորեն օդի մեջ է ամեն ինչ: Երբ Թիֆլիզ գամ, գուցե բան մը պարզվի ենթադրելով, որ Թիֆլիզ մարդ գտնվի այդ մեջոցին: «Կայսերը» Սրբուհին ցանկացավ ինքը թարգմանե[5], բայց թե ինչպես պետք է տպենք, այդ մասին դեռ կը մտածենք. չուտով տպել պետք է հայերենը և ռուսերենի թարգմանութեանը համար. թեև ինծի կը թվի, որ երկու բնագիրները միասին հրապարակ հանելը անպատճառ՝ գուցեև կարևոր չէ: Թող կոչվի թարգմանութիւն. ավելի լավ. անախորժ ձևական կեղծիքը չըլլար, և Սրբուհու անունով ալ կը տպվի: Վերջապես դեռ կը խոսինք: Ջերմ բարևներս տիկին Կատարինեին ու քեզի. սրտագին համբույրով՝ Լևոն

151. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, նախ ինչպե՞ս է առողջութիւնդ, կը հուսամ կապրուրված ես: Երկրորդ՝ ինչպե՞ս է իմ «Կայսերս» առողջութիւնը: Կը խնդրեմ, որ կարգադրես և մեկ–երկու տասնյակ ուղարկեն ինծի անմիջապես. ավելի լավ է, եթե հարմարի ու մեկու ձեռքով: Ուղարկել տուր մի-մի օրինակ պլխավոր հայ և ռուս լրագիրներուն, այլև հայտարարութիւնը. բոլորովին պարզ՝ «Լույս տեսավ Լևոն Շանթի նոր դրաման՝ «Կայսր». կը ծախվի այսինչ տեղը, գինը»: Եվ Ավետյանին[1] ըսե, որ հոգա գիրքը չուտով ցրվելու գավառները, նորից թեթու չդնե. այդ առիթով գուցե կարողանա և լույս աշխարհ հանել նկուղներեն նաև «Ուրիշի համարը»[2]: Իսկ Բագու կ'ուզե ուղղակի ինքը ուղարկե գրավաճառներուն, կ'ուզե թող ինծի ուղարկե մի երեք հարյուր հատի չափ, ես այստեղ կը հանձնեմ գրավաճառներին, ինչպես որ իրեն համար ավելի հարմար է, միայն թե չուտ: Եվ բոլորի համար ընդունե՛ իմ ջերմ չնորհակալութիւնս: Բարև ու համբույր բոլորիդ:

Լևոն Շանթ

1916 սեպտ. 13, Բագու

152. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1916 Հոկտ. 12, Բագու

Սիրելի՛ Ստեփան, նախորդ օրը Լևոնդ անցավ Հոսկե, իսկ երեկ գիշեր ալ Սրբուհին ճամբու դրինք: Երկու օր միասին էինք կա՛մ ձնրոնց մոտ, կա՛մ մեզի, երեկ ճաշին Բեզազյաններին էինք: Թարգմանութիւնը ամբողջովին կարդացինք միասին[1]. ես կը գտնեմ շատ լավ, կը մնա որ ռուսներն ալ նույն կարծիքի ըլլան: Սա իրոք երկար պատմութիւն դարձավ Լևոնի ուսխականը. կ'երևակայեմ ինչպես մտահոգ ես, նույնպես և Կատարինեն. մանավանդ որ Սրբուհու ասելով՝ դեռ լավ ալ չես կազդուրված, «հոգնած է» կ'ըսեր: Ես միտքս դրեր էի նոր տարվան արձակուրդին գամ ձեզի, որ միասին վերջնապես ավարտենք ու սրբագրենք մեր լուսաբերները, որոնց մասին ես բավական խորհեր եմ ու աշխատեր դիպուա մեջ, բայց քանի որ այդպես հոգնած ես, սիրտ չեմ ըներ առաջարկելու. մանավանդ քեզնիներդ ըսին ինծի, որ տոնեցուն մտադիր են ձեզի «Սև-քաղաքի[2] սանատորիումը» հրավիրելու: Շատ լավ միտք է. մինջավայրի փոփոխում, դպրոցեն, տաննեն ու «ծնողներեն»[3] հեռու անշուշտ ավելի կը հանգստանաք երկուքդ ալ: Լուսաբերը այսչափ համբերեր է, թող քիչ մըն ալ համբերեն. թեև իհարկե շատ լավ կըլլար, եթե կարողանայինք ավարտել: Գանի պատերազմը կ'երկարի, իմ այս բաժան ընտանեկան վիճակը ավելի ու ավելի ծանր կը դառնա, և ես չգիտեմ ինչ եմ անելու առաջիկա տարի: Իսկի հիմիկվան ընելիքս չգիտեմ, ինչպե՞ս պիտնամ ապագան: Գիտես, որ «պաշտոնս» կը ճնշեր ինծի[4]. հիմա գրեթե թողած եմ, անորոշ վիճակ է. ունեմ դասեր, ամսական 120 րուբլի, մնացածը օրի մեջ. գուցե ստիպված ըլլամ «Արևի» մեջ աշխատելու իբրև սեկրետար[5]. կը մտածեմ նաև իրիկվան գրական դասախոսութիւններու շարք մը. այս 8-10 օրվան մեջ պետք է որոշեմ: Գանի կ'երթա կյանքը կը սղե նաև Զվիցերիա և ուշարկածս հետզհետե կը դառնա շատ ծայրը ծայրին: Թեև ամիս մը առաջ 500 րուբլի փոխադրած եմ, բայց նորեն պետք կա դրամ փոխադրելու: Նոր մեկ-երկու անգամ խաղացին այս տարի «Հին Աստվածները». եթե կարողանաս գանձել այդ գումարները և քիչ մըն ալ վրան ավելացնելով երեք հարյուր րուբլի փոխադրես Ջավրյին՝ շատ ու շատ չնորհակալ կը մնամ. եթե չես կարող՝ խնդրեմ խնդրեմ ուղեւ-

կացո՛ւր ինծի, որ հոս կերպ մը ճարել կարողանամ. հոս բանկը փոխադրեց 100 ֆրանկը 57 րուբլի 60 կոպեկի հաշվով (հոս վճարել եմ 513 րուբլի 54, հոն Ջավոյին հանձնած է 869 ֆրանկ): Հասցես գիտես՝ Avenue Druey 24:

Գալով «Կայսեր» բնմապրութեան[6], արդեն գիտես, որ ես չեմ ցանկար այս կամ այն խմբի հետ մասնավոր պայման ունենալ: Ով կուզի թող խաղա. առաջին ներկայացման 20 տոկոսը, հաջորդների 15 տոկոսը, ահա՛ իմ միակ պայմանս: Կ'ըսես՝ տեկորներու համար շատ ծախք են ընելու. դա իմ ամենեն ավելի ջիղերուս դիպած տեղն է. փոխանակ տեկորներու վրա ծախսելու՝ թող դերասաններու վրա ծախսին, թող մեկ-երկու վարձ ավելի ընեն. դա ինծի համար շատ ավելի հետաքրքիր է. կարելի է խաղալ և եղած տեկորներով, կարելի է խաղալ և չեղած տեկորներով: Իսկ եթե իրենք հասարակութիւն հրավիրելու համար ավելի տեկորներն են կարևոր համարում, դրանով են ուզում հաճախորդ քաշել, խնդրեմ, իրենց ճաշակը, իրենց հասարակութիւնը, միայն թող չվախթեն իմ վիզս: Մնիժե՛ միայն տղայական, անլուրջ մարդկանց ներկայացնելու առաջարկը. քիչ-շատ դիրք ու անուն ունեցող դերասանական խմբին ես մնիժել չեմ կարող և չեմ ուզեր: Մանավանդ այս տարի, որ քանի կտոր են եղած մեր դերասանները, ինչո՞ւ պիտի տամ այս մեկ խմբին և ո՛չ այն մյուս: Միակ արդարացումը իմ անձնական դրամական շահս կարող էր լինել. եթե որևէ մասնավոր հավկյալ չահ ունենայի այս կամ այն խմբին մենաշնորհ տալես, այն ժամանակ ինչպես կը վճռեի, չգիտեմ, բայց համենայն դեպս, արժեր որ մտածեի: Ինչո՞ւ համար ողջ գլուխս պետք է դնեմ դերասանական աղմուկներու մեջ. ո՛չ, սիրելի՛ս, քնա՛լ ախորժակ չունիմ: Ո՛չ մեկ կապ, ո՛չ մեկ միջամտութիւն, որ խումբը կ'ուզե թող խաղա, ինչպես կ'ուզե. կ'ուզե ոսկի տեկորներու մեջ, կ'ուզե Շեկսպիրի տախտակով՝ մեկ երեսը «անտառ» գրած, մյուսը «պալատ», դա իմ գործս չէ. ինծի հետաքրքրողը միայն դերասանի կենդանի խոսքն ու կենդանի մտածված խաղն է. եթե դերասանները այդ կենդանութիւն ու մտածումը կը դնեն իրենց խաղի մեջ՝ կ'ըլլամ շատ ուրախ ու շնորհակալ, եթե չեն բերեր կամ չեն կարող, ան ալ արդեն Հայոց ազգի բաղդը: - Դե՛, սիրելի՛ս, կը համբուրեմ քեզի պինդ ու սրտանց ու կը կրկնեմ՝ խնայե՛ ուժերդ: Եթե տոներուն գալերնիդ վճռեք, հիանալի բան կը դառնա, շատ լավ կը լինի: Կատարինեի հետ լուրջ մտածեցեք ու կարճ կտրեցեք. ավելի լավն

է՝ իսկի չմտածեք ու վեր կենաք գաք: Բայց մինչև այն ժամանակ հույս ունիմ անլուր չես թողներ ինծի քու բարի սովորութիւնդ. Լևոն

153. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1916 նոյ. 2, Բագու

Ստեփան, չգիտեմ ճշմարիտ ինչպես անվանեմ տպարանի վարմունքը. ես պարտքով, հազար դժվարութիւնով մնացի ամառը թիփլիզ ու տպեցի գիրքը[1]. Հիմա երեք ամսվա ընթացքում չեն կարողանում 1000 օրինակը կտրել տալ: Հավատո՞մ, որ կարելի չէ: Ամեն կողմից պահանջում են գիրքը. վաղը, երբ կը սաւի պահանջը, նոր կու գան գրքերը դրավաճառի դարակների վրա քնելու համար: Ասա՛, խնդրեմ, մի անգամ տեր Հորը հետ[2] և եթե արդյունքի հասնես, հայտնի՛ «Գրին», որ անմիջապես չորս հարյուր օրինակ ուղարկե Բագու Посредник[3]-ի հասցեով: Մեկ-երկու շաբաթ առաջ քեզ նամակ եմ գրած, ուր խնդրած էի 300 րուբլի փոխադրես Ջավոյին, չգիտեմ ստացե՞լ ես նամակս: Իսկ ինչպե՞ս ես դուն, քու առողջութիւնը, նաև Կատարինեի: Միշտ հույս ունիմ, որ տոները միասին կը լինինք. Ջերմ բարևներս ու համբույր. *Լևոն*

1917

154. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Ստեփան ջան, հին պատմութիւն, փարա պիտի ըլլա ինծի ղրկելիք, որ քեզմե նամակ առանամ: Թեև կը խոստանաս «այս շաբաթ» երկար նամակ գրելու, բայց գիտնալով, որ քու շաբաթը հաճախ 50-60 օր ունի, չեմ սպասեր քու նամակիդ: Շատ մեծ ցավով իմացա, որ արձակուրդին չես գացած Բաթում. չէ՛, սիրելիս, դուն քեզի խնայելը չսորվեցար և իզուր, խելոք չէ ըրածդ: Ինչպե՞ս է հիմա առողջութիւնդ, Լևոնդ ալ չպատասխանեց նամակիս, որ գոնե անկե լուր մը առնեի: Եվ ինչպես է Կատարինեի՞ առողջութիւնը, Սրբուհին կ'ըսեր,

որ ան ալ տկար է. ո՛չ մեկ լուր չունիմ նույնպես Սրբուհիին: Գալով ինծի՝ ինչ ըսեմ՝ վարժապետուհյուն կ՚ընեմ, դասախոսուհյուն կ՚ընեմ, ժողովականուհյուն կ՚ընեմ, միայն չեմ ըներ ան, ինչ որ պետք է ընեմ: Ես ալ քեզի պես. չա՛տ դժգոհ եմ ինծմե և միայն մեկ մտածում մը ունիմ՝ փոխեմ նորեն կյանքիս պայմանները, որ գրել կարողանամ: Իհարկե առաջին մտածումս նորեն ձգել ու երթալն է, քաշվել Զվիցերիա մեր տունը ու լուրջ աշխատանքի նստիլ. դրամական դժվարուհյուններ ունիմ առջևս, որը միշտ հույս ունիմ սակայն կերպով մը հարթելու. կը մնա անցագրի ու սուզանավի արգելքը[1]. ան ալ տեսնենք՝ պետ ամիսներ ունիմ առջևս: Այս պայմաններուս մեջ լավ կ՚ըլլար, որ «Լուսաբերի» գոնե ամենաէական գործը ընեինք ու վերցընեինք մեջտեղեն, եթե միայն հնարավոր է, թեև ինքս ալ չգիտեմ ճշմարիտ ե՞րբ և ինչպե՞ս: Ջատկի ուրբ-տասը օրվան մեջ ի՞նչ կարելի է ընել, նույնիսկ տկարուհյունդ եթե արգելք ալ չըլլա: Նախորդ չաբաթները շատ անհանգիստ էի մերոնց մասին. վախ կար Զվիցերիայի չեզոքուհյան խախտումին. հիմա կարծես նվազ հավանական է այդ վտրհանքը. փոխարենը ուտելիքի ներմուծման դժվարուհյունն է հիմա. ատ ալ ուրիշ ցավ. նամակ կ՚ըստանամ, թեև ո՛չ շատ հաճախ. ձեռքես ոչինչ չի գար. կը ջանամ վող հասցնելու: - Ներփակ գոնելու ես «Գուրգենն» խումբի հասցեին նամակը[2], եթե ոչ մեկ առարկուհյուն չունիս քու կողմեդ, հանձնե Աբելյանին և պահանջե իրավունքս. ես կը հիշեմ, որ անցած տարի գավառական իր տուրնեի համար ալ շատ չնչին բան վճարեց. պետք չէ սովորուհյուն դարձնե. ամենեն կարճը. եթե համաձայն չէ իմ պայմաններուս՝ արգելե իմ խազերուս ներկայացումը. չեն ուզեր վճարել՝ թող չխաղան: Հետո՝ կը խնդրեմ քեզնից հայտնե «Գիլրին», որ ինծի լրիվ հաշիվ մը տա վերջապես. երկու տարի առաջ 15-20 կտոր զանազան գրքեր տվի իրեն ծախելու, իմ գրքերս կա իր մոտը, այլև նորը՝ «Կայսրը». ի՞նչ է ծախված, ի՞նչ է մնացեր, ինչքա՞ն առնելիք ունիմ իրենցմե, վերջապես գիտնամ հաշիվս. և եթե լուրջ գումար մը կա մեջտեղը՝ կարգադրեմ, որ փոխադրվի Ջավոյին: Մարդ չգիտե՝ ինչ կը պատահի վաղը, կը ջանամ գոնե մի քանի ամիսներու ապահովուհյուն ունենան տունը, ով գիտե, հանկարծ կրնա հարաբերուհյունը կտրվի: Այս վերջին երկու չաբաթը հոս էր, անշուշտ ինչպես գիտես, Բրյուսովը. առաջին ու վերջին դասախոսուհյունները մինչև, բայց շատ սիրուն էր «Ուսուցիչներու ուսուցիչները». իհարկե

հոս ամբողջ ժամանակը ձեռքե ձեռք. ճաշե ճաշ. սրտապին ու համակրալից վերաբերում երկու կողմեն[3]. տարօրինակ ոտա է, այսինքն ավելի ճիշտ՝ եվրոպացի ոտա է, հոտ է բոլոր գաղտնիքը: Կարծեմ նորեն չատ դժ հեռացան Բազվեն. այս առտու պետք է մեկնելին, չգիտեմ մեկնած են, թե ոչ: Եթե մինչև այս նամակս քու մուգալ դեռ չէ եկած, նստե՛ գրելու առանց մուզայի, միայն թե գրե՛ ինծի անպատճառ. տեսնեմ՝ ինչ բանի ես, ինչ կ'ընես, տրամադրությունդ ինչպե՞ս է: Իսկ Հանե՞սը. նորեն իր գրողներու ընկերությա՞մբ՝ ամբողջ ժամանակը. գրողը տանի այդ գրողներն ալ, իրենց ընկերությունն ալ. ափսո՜ս Հանես: Դե՛, սիրելի՛ս, բարևներս բոլորիդ ջերմ ու ջերմ. չատ համբույրներով՝ Լևոնդ

1917 փետր. 5

Բազու

155. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, ամառը Երևան արևմտահայ ուսուցիչներու ներկայացուցիչները կը խնդրեին ինծմե[1], որ մեր լուսաբերներու արևմտյան հրատարակությունը հասցնինք 1916-17 տարեշրջանի համար. ըսի իրենց, որ անկարելի է գլխավորապես կլիշեներու պատճառով և գրեթե խոստացեր էի առաջիկա տարվա համար: Ահա՛ նորեն դիմած են մեզի, ինչպես պիտի տեսնես ներփակ նամակեն: Իմ խորին համոզումս է, որ թե՛ գործի և թե՛ մեր շահը կը պահանջե, որ անպատճառ մինչև հուլիս-օգոստոս ամիսները հրատարակած ըլլանք այդ չորս գրքերը: Գլխավոր դժվարությունը թուղթն է և նոր կլիշեներ պատրաստելու անհրաժեշտությունը մանավանդ ձեռագիրներու համար այբբենարանի և առաջին ու երկրորդ տարվան համար (հոդվածներու տակը մեկ-երկու տող արտագրության համար, ավելի փոքր ու կապակցված գրությամբ. այդ ափթով դեռ կը խոսինք, ուրիշ քանի մը կարևոր փոփոխություններ ալ ունիմ աչքի առաջ): Եթե ընդհանրապես համաձայն ես ինծի սկզբունքով և եթե թուղթը ապահովվիլ կրնաս, ինչպես և չնորհքով գեղապիր մը ու կլիշեներ պատրաստելու հնարավորությունը, այն ժամանակ ներփակ իմ Երևանի նամակս ուղարկիր իր հասցեին ապահովագրված: Կը կարծեմ, որ առաջին

տարին (այբբենարանի հետ միասին մեկ հատորի մեջ ամենաշատը 112 երես) առնվազն պետք է տպել 7000 օրինակ, երկրորդ տարին 5-6 հազար, երրորդը 2-3 հազար, հազար օրինակ ալ չորրորդ տարին: Անշուշտ բոլորը նախապես պետք է նորեն խմբագրել, կարգի բերել, մանավանդ այբբենարանը, առաջին և երկրորդ տարիները, չարադրական նյութերու, հարցերու ու ձեռագիրներու հավելումով (առանձին գրքույկով «Գրավորի» փոխարեն, աս մասին ալ դեռ կը խոսինք իհարկե): Պոլսի հրատարակության առաջին տարու նյութերու թեթև հարմարները կ'երթան այբբենարանին կցվելու, իսկ մյուս մասը կը միանա երկրորդ տարվան: Այդ բոլորի վրա ես դեռևս լուրջ կը խորհիմ, կը որոշեմ, կը կատարեմ բոլորը, ինչ որ խելքովս անհրաժեշտ է, ինչպես և քիչ մը կը սեղմեմ ու կ'արագացնեմ այբբենարանը և այդ բոլոր նյութը հույս ունիմ Զատկի տոնին կը ներկայացնեմ քեզի, վերջնական վավերացման ենթարկելու և ձեռագիրները պատրաստել տալու համար, որ կլլիշենները չինվին. կա՛մ դուն պիտի գաս Բազու, կա՛մ ես Թիֆլիս, ինչպես հարմար կը գտնես. թեև հարկ եղավ, ինչպես որ կը կարծեմ, պատրաստ եմ տպագրության գլխուն կայնելու մայիսի վերջերեն սկսած ամսական մը չափ, այդ միջոցին կրնանք և արևելյանի վերջնական խմբագրումը կատարեր, միայն կը վախնամ նա՛խ քու առողջութենդ և երկրորդ՝ քու դպրոցիդ զբաղմաններեն, քննություններուդ խառնակ ատենն է. վերջապես գրե՛ ինծի քու կարծիքը, ամեն կերպով կը համակերպիմ այդ «լուսաբերներուս» հոգը վերջնապես ուսերես անկին նետելու համար, գոնե հինգ-վեց տարով: – Քանի մը օր առաջ քեզի նամակ եմ գրած, կը հուսամ առած ես: Կը խնդրեմ, որ ինծի հայտնես իմ բարեկար Զուրաբովի[2] անունն ու հայրանունը, հիմա Լոզան է, կ'ուզեմ իրեն «Կայսր» ուղարկեմ և չեմ գիտեր անունը. իսկ ո՞ւր է Ղամբարյանը[3] հիմա, անոր ալ դուն բարի եղիր ու իմ կողմես ուղարկե՛, եթե անհարմար չես գտներ քեզի համար: Կ'ըսպասեմ լուրերուդ ու պատասխանիդ, բարև ու համբույր. *Լևոնդ*

1917 փետր. 9

Բազու

Երևանի նամակը կ'ուղարկես «Աշխատանք» թերթի[4] հասցեով հանձնելի արևմտահայ ուսուցչության ներկայացուցիչ մարմնին: Ուղարկե նամակը ապահովված:

156. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

1917 մարտ 22, Բագու

Ստեփան ջան, կը խնդրեմ, որ Ջավոյին հեռագրով փոխադրես վեց հարիւր րուբլի. եթե այդչափը անմիջապես անկարելի է, գոնե որչափ որ կարող ես. ես ալ հոսկե փոխադրած եմ այդչափ մը. կը վախնամ, որ միգուցե փոխադրութեան արդի դժուարութիւնները խանգարվին շուտով. եթե հնար է փոխադրե մինչև Զաւիկ: Արտաստականեն չեմ ստացած «Կայսեր» երրորդ ներկայացման վճարը. «Գիլոն» ալ ունի բավական գումար վճարելու «Կայսեր» և մյուս գրքերուս վաճառումեն, մնացածն ալ լրացուր «Լուսաբերներուս» իմ հաշվեն: Ջավոյի հասցեն գիտես՝ Djavo Segbossian Avenue Druey 24, Lausanne: – Իմ երկու նամակներուս մինչև հիմա դեռ պատասխանը չի տվիր, ամիսը շուտով պիտի լրանա. մեկի մեջ գրած էի նամակ մը Արելյանի համար, ինչպես որ խնդի հանձնարարած էիր. երկրորդին մեջ գրկած էի քեզի Երևանի արևմտահայ ուսուցչական մարմնի կոչմեն եղած դիմում մը մեզի՝ Լուսաբերները շուտով արևմտահայ լեզվով տպելու, նամակին մեջ գրեր էի նաև իմ պատասխանս մեր կոչմեն, որ ուղարկելու էիր Երևան, եթե քեզի գրած նամակիս պարունակութիւնը համաձայն էիր. չգիտեմ, նամակները ստացած ես, թե ոչ: Նմանապես պետք է վճռել՝ ի՞նչ ենք ընելու «Լուսաբերներուս» վերջնական խմբագրութեան վերաբերմամբ. մայիսի կեսերուն ես հոս կ'ազատվիմ, գամ անմիջապես Թիֆլի՞զ, թե ինչպես, գրե, որ ատոր համեմատ կարգադրեմ ժամանակս. կը մտածեմ, որ քու դալըոդ ալ այս գարնան երևի շուտ կը փակվի և քննութեան արարողութիւնները այս տարի ծանր ու շատ հոգնեցուցիչ չեն ըլլար բարեբազդաբար: Կը հուսամ, որ ատոզ-ջութիւնդ ավելի լավ է հիմա, և այս ամառ պետք է լուրջ քեզի խնամելու մասին մտածես: Կը չնորհավորեմ քեզի՝ «ուսս քաղաքացիդ» քու բոլոր նոր «ազատութիւններուդ»[1] ու սրտագին կը համբուրեմ: Ջերմ բարևներս տիկին Կատարինեին ու Լևոնիդ.

Լևոն Շանթ

157. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Ստեփան, գիտեմ, որ զարմացան ես քիչիկ մը լռութեանս վրա կամ նամակս կորած կը կարծես: Ո՛չ. չգրեցի, որովհետև սկիզբը ամեն ինչ չափազանց էր խառնակ, իսկ վերջերս ալ, որ օրն օր ճամբա իյնալու վրա եմ և զանազան թուլլտվութիւններու ու վիզաներու հետ կը մաքառիմ, ուզեցի վիճակս վերջնապես որոշվի, որ գրեմ: Վաղը առաւոտ Պետրոկրատեն կը մեկնիմ վերջապես և Սկանտինավեն մեկերկու տող կը գրեմ քեզի նորեն:

Մոսկվա էի հեղափոխութեան տաք օրերուն[1], Ամիրյանի տանն էի, Առոնցի հետ. մեր հեռանալուն պես՝ հաջորդ օրը սկսավ պատերազմը. մեզի չէին ուզեր թողնին, ըսելով, որ Պետրոկրատը անապահով է: Հոս «պատերազմ» չունեցանք փողոցներու մէջ, բայց հրացաններու որոտ-որոտոցը այս ու այն անկյունեն, ըլլա պիշեր թե ցերեկ, շատ հավատալի բան չէ, զանազան պատճառներով, իսկ վերջերս կապված գինիի մառաններու թալանի և հարբեցողութեան հետ. բայց մարդ անասունը, ինչպես որ գիտես, կը վարժվի ամեն բանի: Մեկ կողմեն իհարկե շատ գժգոհ եմ, որ այսքան ատիպվեցա հոս մնալու, բայց մյուս կողմեն ալ անշուշտ չափազանց հետաքրքիր օրեր ու դեպքեր են, որ մարդ ուզե-չուզե կ՝ապրի միասին: Այս չորս-հինգ շաբաթվան մեջ աչքիս առջևեն ամբողջ պատմութիւն մըն է անցած, և ես, որ ոչ մեկ համալսարան ո՛չ մեկ քննութիւն չեմ տված, հիմա ինծի կը թվի, որ հոս մարդկային պատմութեան քննութիւնն է, որ կու տամ, և քանի որ դիբլոմս երեկ ու առաջի օրը ստացա չվետական, անգլիական, ֆրանսական, իրանական[2] և Սմոլնյան դեսպանատուներեն՝ ալ հանգիստ խղճով կրնամ մեկնիլ:

Իսկ Կովկասը հիմա ինծի քիչ մը դժվար կը պատկերացնեմ, չէ՞ որ հոս ալ շատ բան է փոխված. «Պետերբուրգցիներուս» համար դուք դարձեր եք արտասահման. երեք պետութիւն, չգիտեմ քանի հասարակապետութիւն պետք է անցնիլ տեղ հասնելու համար. իհարկե չհաշվելով լեռնցիներու հարձակումը, Ռոստովի ճակատամարտները և վագոններու մեջ կատարվող վանտալութիւնները հարձակվող ու պաշտպանվող, ցրվող ու վախչող զինվորութիւններու կողմեն: Կատարյալ միջնադար. ուզելնայա սիստեմա[3]. և կարծեմ արդեն հասեր ենք վարյակները կանչելու վայրկյանին[4]: Այս բոլոր հեղափոխութեան-

ներուն և կոտորածներուն անմասն չմնաց իհարկե և իմ դրպանս. բուբլին եվրոպական դրամի վերածելիս կ'արժեր 10-15 կոպեկ, այս քանի օրը 5-10 կոպեկ ավելի բարձրացեր է, դժբաղդաբար քիչիկ մը ուշ: Հիմա անհամբեր կ'ըշտապեմ սահմանը անցնելու, որ Ջավոյին լուր հասցնեմ ու դրամ. հույս չունիմ, որ նամակներս ստացած ըլլա և հիմա չափազանց անհանգիստ վիճակի մեջ է երևի թե՛ իմ մասին[5], թե՛ իր մասին: Երկու օր առաջ Ռոստոմը եկավ Ստոքհոլմեն. Ջավոն երկու ամսվան չափ առաջ անոր նամակ է գրեր՝ հայտնելով, որ կ'ըսպասե ինծի և որ ձեռքը դրամ չունի:

Դե՛, սիրելի՛ս, մնաս բարով, վերջին բարև քեզի ու քովինններուդ ռուսական հողեն: Տեսնենք ի՞նչ պայմաններու մեջ ու ի՞նչ հույսերով կամ բեկումով նորեն այդ հողին վրա ոտք եմ դնելու՝ անցնելու համար մե՛ր հողին:

Կը ցանկամ հաջողություն ու առողջություն քեզի ու Կատարինեին. ու կարոտով կը համբուրեմ Լևոնը, Սրբուհին ու Նապիկը, հաճախ ու սիրով կը հիշեմ մեր միասին անցուցած ամառը. իրա՛վ որ սիրուն անկյուն էր Յակվերին[6]:

Ջերմ համբույրով՝ Լևոն

1917 դեկտեմբեր 7

Պետրոգրատ

1918

158. ԱՐՏԱՎԱԶԴ ՀԱՆԸՄՅԱՆԻՆ

1918 Հունիս 30, Լոզան

Սիրելի՛ Արտավազդ[1], ղրկած եմ քեզի նամակ մը ու բացիկ մը[2]: Այսօր կը ղրկեմ քեզի Բաքվի դեպքերու մասին հետաքրքրիր մանրամասնություններ, որոնք մինչև հիմա մեր գիտցածը կը լուսաբանեն և հայ ժողովուրդի թիկունքի վիճակը չատ ավելի մեզի նպաստավոր կը ներկայացնին, քան կ'ենթադրեինք. դոնե մինչև հիմա: Հաջորդ տողերը քաղվածք մըն է «Թանին»[3]-ի մայիսի 31 թիվի մեջ հրատարակված հոդվածե մը: Հոդվածն ալ էնտերվյու մըն է Ռուշեն Բեյի՝ «Կովկասի

թուրք երևելիներեն մեկը, ժողովրդական ներկայացուցիչ», որ քանի մը ընկերներով նոր Հասած է Պոլիս կառավարութեան գինվորական օգնութեյունը խնդրելու հայերու դեմ «թուրք նահատակ ժողովուրդին համար, որ անհամբեր կ'ըսպասե օսմանյան դրոշակի երևալուն»: Հարավային Կովկասի (այսինքն Անդրկովկասի) թուրքերու թիվը կը դնե 4 1/2 [միլիոն] հայրենասիրական առատաձեռնութեյամբ:

«Բոլշևիկյան անվան տակ ինքզինքին ծածկող հայերը զանազան ծրագրով մը սկսան թուրքերը չարդելու: Ցարական կառավարութեյունը բոլոր գենքերը առեր էր թուրքերուն ձեռքեն, մենք ամենևին գենք չունեինք, մինչդեռ նույն կառավարութեյունը գինած ու կազմակերպած էր ամեն կողմե հավաքած հայերը: Ցրվող բոլշևիկյան բանակը իր բոլոր ռազմամթերքը ձգեց հայերուն: Եվ հիմա Կովկասի թուրքերուն ձեռքով չենցած սիրելի հողերը կարմիր ներկվեցան: Մասնավորապես Կովկասի տնտեսական կեդրոնը եղող և թուրք միլիոնատերերու բնակավայր Բաքու քաղաքին տերը դառնալու կ'աշխատին: Հիմա մեզի համար մահու և կենաց վայրկյան է:

«Մինչև ապրիլի 8-ը Կովկասյան Հանրապետութեյան նախագահն էր Կեկեչկորի[4], որ բանակցութեյան էր մտած Թուրքիայի հետ Տրապիզոնի մեջ: Օսմանյան կառավարութեյունը ըստ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պահանջած էր Բաթումը, Կարսն ու Արդահանը իրեն վերադարձնելու. և կը պնդեր: Այդ միջոցին Կովկասի սեյմը[5] արտասովոր նիստի հրավիրվեցավ կառավարութեյան կողմե: Նիստի օրակարգն էր՝ «1876-ին իբրև տուգանք գրաված երեք սանճագները պե՞տք էր վերադարձնել, թե՞ ոչ»: Սեյմը կազմված էր թուրք, վրացի, հայ, ռուս և հրեա երեսփոխաններե, որոնց թիվերն էին 44, 33, 14, 1 և 1: (Կովկասյան սեյմի կազմը, ըստ պրոֆ. Բերնշտայնի հայտարարութեյան Vos. Zeit. մեջ, հետևյալն է. 37 մենշևիկ[6] (այսինքն վրացի), 33 մուսաֆաթ[7] (այսինքն մյուսլիման), 31 դաշնակ (այսինքն հայ), 2 ֆեդերալիստ[8] (վրացի), 1 նասիոնալ-դեմոկրատ (?)[9], 1 ռուս կադետ[10], 4 սոցիալ-ռևոլյուցիոներ[11] (երևի հրեա կամ ռուս) և 6 դեմոկրատ մյուսլիման: Բերնշտայնը կովկասյան գերման գաղութի ներկայացուցիչն է և գերման կառավարութեյան աժանը[12]: Բաթումի խաղաղութեյան ժողովին մեջ[13] մատ ուներ, վերջը կարծես Պոլիս էր, իսկ հիմա Գերմանիա): (Ուրիշ խոսք հետաքրքիր նկատողութեյուն մըն ալ: Բերնշտայնը մուսաֆաթները, այսինքն թուրքերը, կըսաժնե երկուքի.

մեկ մասը «պան-թյուրքեր», մյուս մասը «գերմանոֆիլներ»[14]): Բնականաբար իսլամները օսմանյան կառավարության պահանջներու կողմն էին: Մինչդեռ վրացիք, հայերը, ռուսները ու հրեաները իրենց ձայները միացուցին և 3-4 ձայնի առավելությամբ անցավ նախագահ Կեկեչկորու տեսակետը, այն է՝ ետ չտալ: Բայց չենթադրենք, թե վրացիները թուրքերուն դեմ են, քանի որ այդ 34 վրացին ճշմարիտ Վրաստանը չեն ներկայացներ, այլ բոլշևիկյան ճնշման տակ ընտրված մարդիկ են:

«Ուրեմն մերժում և պատերազմի չարունակություն: Հեռագրով Տրապիզոնի պատվիրակությունը ետ կանչվեց: Ջխենկելին, որը այդ Տրապիզոնի ժողովի պատվիրակ էր և վրաց ազգային ժողովի նախագահը, Թիֆլիզ դարձին ազգային ժողովը նիստի հրավիրեց, պարզեց կացությունը և հաջողեցավ համոզելու ժողովի մեծամասնությունը, որ Թյուրքիայի հետ համաձայնության գան: Վրաց մամուլն ալ սկսավ նույն քաղաքականությունը ջատագովել և Կեկեչկորին քննադատել, մասնավորապես «Վոզրոժդենիե» թերթը: «Մենք կռիվ չենք ըներ Թյուրքիայի հետ, կ'ըսեր, զենք չունինք, ռազմամթերք չունինք, զորքի մեջ բոլշևիզմը ծավալած է»: («Վոզրոժդենիե»-ն հայանի թուրքոֆիլ[15] թերթ էր, կաշառված, ռուս լեզվով: Վրացիք մեջը դեր ունին): Կեկեչկորու գաբինետը սոխալվեցավ ետ քաշվելու: Նախ հինգ թուրք անդամները հրաժարեցան: Այս պարագաներու տակ Կովկասի երեսփոխանական ժողովը (սեյմը) նիստի հրավիրվեցավ: Դահլիճը, լոժերը և դուրսը ամբողջ պալատի չուրջը ահագին բազմություն կ'ըսպասեր տրվելիք որոշման: Ապրիլ 9-ին կեսօրե ետքը սկսան վեճերը մինչև գիշերվան ժամը 2-ը: Առավոտյան դեմ 3 ձեռնպահներու դեմ 80 քվեով Բրեստ-Լիտովսկյան դաշնագիրը ընդունվեց և հռչակվեց Կովկասի անկախությունը, որը մինչև այդ ժամանակ պաշտոնապես իր կապը Ռուսաստանի հետ կտրած չէր[16]: Հաշտության կոմսակից Ջխենկելիին պաշտոն հանձնվեց կազմելու նոր գաբինետը, ուր մտան նախկինի հինգ իսլամ անդամները, երեք հայ դաշնակցական[17] և չորս հոգի վրացիներուն կողմե, որուն մեկը սակայն հայ էր[18]: Իսլամ նախարարներն են՝ Խան-Խոյսկի՝ արդարադատության նախարար, Նեսիպ Բեյ Յոսուֆ՝ լուսավորության, Մելիք Բեյ Ալպանով՝ ճանապարհներու, Հայտարով՝ կոնտրոլի և Հաջինսկի՝ պոստ ու տելեգրաֆի: Իսկ Բաթումի մեջ խաղաղության խորհրդաժողովը չարունակելու

համար ուղարկվեցավ երկու թուրք, երկու վրացի և երկու հայ անդամե կազմված պատվիրակութիւն մը: Հայերն են Խատիսյան և Քաջազ-նունի: Այս պատվիրակութիւնը մայիսի 6-ին մեկնած է Թիֆլիզեն դեպի Բաթում:

Ռուշեն Բեյ Բաթումի մեջ եղածի մասին այլևս ոչինչ չունի ըսելիք: Կովկասեն հեռացած է: Բաթումի խորհրդաժողովի մասին գրած իմ յուշին[19] ուղղած վերջին նամակիս մեջ, կարդա՛ Հոն: Իսկ հոս կը դնեմ նույն մարդու պատմածները Բաքվի մասին:

«Գերման ճակատի քայքայումեն ետքը Հոն եղող ռուսահայ պլնովորները սկսան հասնիլ Բաքու իրենց հայրենիքը երթալու համար, ինչպես և Պարսկական ճակատեն ծովու ճամբով: Բայց Բաքվեն Թիֆ-լիզ անցնիլ չկրցան, «որովհետև գծին երկու կողմը գտնվող իսլամ ժողովուրդի վրեժխնդրութիւնեն կը վախնային: Բաքու եղող ռուս զորքն ալ չկրցավ Ռուսաստան երթալ, որովհետև Հյուսիսային Կովկա-սը չէր թույլատրեր անոնց անցը: Ռուս զորքերուն թիվը չատ քիչ էր, իսկ հայերունը 10.000-են ավելի: Ասոնք սկսան իսլամներուն վրա հարձակիլ: Շահումյան անունով հայ բոլշևիկ մըն ալ Լենինի կողմեն Հարավային Կովկասի վրա բոլշևիկյան նախագահ նշանակված էր: Ար-տաքուստ կը ձևացներ, թե Կովկասյան կառավարութիւնը բոլշևիկ-ներուն հպատակեցնելու կ'աշխատի, բայց իր բուն նպատակը Կովկասի մեջ հայ կառավարութիւն մը հիմնելն էր: Շահումյան Թիֆլիզ եկավ և տեղի թերթերուն մեջ հայտարարեց, թե ժողովրդեն փափագողները կրնան իրեն դիմել: Կառավարութիւնը հրամայեց անոր ձերբակա-լումը, բայց ան Թիֆլիզեցի հայերու օգնութիւնեմբ փախավ Բաքու և Հոն հայ զորքի օժանդակութիւնեմբ իսլամներու դեմ ընդհանուր ջարդ մը կազմակերպելու ձեռնարկեց, որոնց հետևանքովը Բաքվի մեջ չփոթու-թիւններ առաջ եկան: Հայերը իսլամ ժողովուրդեն չատերը նահատա-կեցին. ասիկա բացեիբաց իսլամներու դեմ նյութված դավ մըն էր. արդեն հայերու և հրեաներու տներուն վրա դրոշակներ տնկած էին, իբրև նշան պաշտպանութեյան: Երբ հայերն ու բոլշևիկները Բաքվին տիրացան՝ իսլամ ժողովուրդեն 50 միլիոն րուբլի պատերազմական տուգանք հավաքեցին: Իսլամ թաղերը և Իսմայիլե անունով իսլամ հաստատութեյունը, որուն համար միլիոններ ծախսված էր, հրո ճարակ ըրին: Մենշահարուստ Զեյնալաբեոին էֆ-ին, ինչպես և ուրիշ իսլամ երևելիները ձերբակալելով բանտ ղրկին. իսլամներուն զարդերը, դրամը

և ինչքը թալանեցին. իսլամներու դրամները, որոնք բանկաներուն մէջն էին, Հանուն բոլշևիկյան կառավարութեյան գրավեցին և մնջերնին բաժնեցին. բոլոր կազի տեբոներն ալ իրենց ձեռքը անցուցին:

«Բոլշևիկները և Հայերը Բաքվի չփոթութեյուններեն երկու օր առաջ թնդանոթներով, մետրայոզներով զինված երկու հազար շորք Շիրվանի (Նովխի) վրա ղրկեցին: Ինչպես գիտեք, Շիրվանը իսլամ է, Հայերը սակավաթիվ են. երբ իսլամները տեսան, որ իրենց վրա զորք կու գա՝ անմիջապես սկսան դիմադրել: Հայերը ըստ իրենց սովորութեյան խաբեբայորեն ճերմակ դրոշակ բարձրացուցին. երկու կողմեն պատվիրակութեյուններ ղրկվեցան և Հայերը հայտարարեցին, թե իսլամ ժողովրդին դեմ որևէ թշնամական դիրք չունին, և իրենց նպատակն է քաղաք մտնելով քիչ մը հանգստանալ. այդպիսով իսլամ ժողովուրդը խաբեցին և այս անգութները գիշերանց հանկարծակի իսլամ տուները պաշարեցին, դռները կոտրտեցին և տուները մտնելով՝ ձեռքերնին ինկած իսլամները ջարդեցին և թալանել սկսան: Այս հանկարծական հարձակումին հետևանքով իսլամներուն մեկ մասը նահատակվեցավ, մյուս մասն ալ փախչելու ստիպվեցավ: Շրջակա իսլամ գյուղերը իմանալով սկսան չարժիլ Հայերու դեմ և ջախջախեցին և Շիրվանը ազատեցին, սակայն Հայերը Բաքվեն օգնական ուժ առնելով՝ նորեն Շիրվան մտան և այս անգամ իսլամ թաղերը հողի հետ հավասարցուցին. իսլամները մոտակա լեռները ապաստանեցան և կը շարունակեն մաքառիլ Հայերուն դեմ, որպեսզի անոնք ավելի հեռու չառաջանան: Իսկ Դեմիրբխան-Շուրայի իսլամները լեռներեն դեպի Բաքու կանոնավոր ուժ մը ղրկած են, և այս ուժն է, որ ամիսուկեսե ի վեր Բաքվի մոտերը Հայերու և բոլշևիկներու դեմ պատերազմ կը մղե: Ահա՛ Կովկասի այսօրվան վիճակը»:

Այսինքն մայիսի սկիզբը, իսկ չարունակութեյունը արդեն մենք գիտենք լրագիրներեն. անդրկասպյան բոլշևիկներու օգնութեյան և թուրքերու կրած հարվածը:

Հունիս 1-ի «Թանին»-ի մեջն ալ կոչ մը կա նորեն նույն ոգով, ուր ի միջի այլոց ըսված է. «Հայ հրոսախմբերը ռուսներեն ժառանգած անսպառ ռազմանյութերու չնորհիվ թուրքերուն պաշտպանը եղող օսմանյան կառավարութեյան զորքերուն հետ կը մաքառին: Ինչպես և Երևանի, Գանձակի, Բաքվի, Շիրվանի և Սալյանի նահանգները կը շրջագային և ձեռքերնին գտնված պատվական թնդանոթներով,

մեռայողներով և ավիններով ոտաներու կոզմեն պինաթափ եղած թուրքերը զարհուրելի գազանութեամբ կը ջարդեն և անոնց անմեղ արյունը անոնց սիրելի հայրենիքին մեջ հեղեղին պես կը վազցնեն, ինչքերնին կը վառեն, կը թալանեն և պատիվնին կը բռնաբարեն»:

Իմ կոզմես ոչինչ չեմ ավելցներ, սիրելիս. սուտն ու իրավը ինքդ դյուրավ կրնաս մաղեր այս բոլորին մեջեն. մանավանդ որ այս բոլոր պատմածին նախորդը եղող շատ բան ծանոթ է քեզի Թիֆլիսի թերթերու կողը-ըրդուճ այն քաղվածքներեն, որ դուն ձեռքի տակ ես ունեցած և մչակած ես:

Այս տողերը կարդալեն ետք ավելի դյուրին կարելի է հասկընալ, թե ինչպես է, որ օսմանյան կառավարությունը հիմա կը բարեհաճի «Հայ կառավարության» մը գոյությունը ընդունելու իր պանթյուրքական ծրագիրներուն ճիշդ մեջտեղը:

Ջերմորեն կը շնորհավորեմ քեզի ու տիկին Ռոզը մեր նորանկախ կառավարության Հայոտարարությունը[20]: Վերջապես ծնավ մեր բանաստեղծներու այնչափ երգած «Մանուկն Հայաստանը». ծնավ արյան ծովերու մեջ. բայց մարդկային ճակատագիրն է ատ. ինչպես ամեն մարդ, այնպես ալ ամեն ժողովուրդ իր անհատականությունը կ'ըստանա ծննդյան ցավերով և արյան միջոցով: Ես կը հավատամ մեր նորածինի մե՛ծ ապագային:

Համբույրներով՝ Լևոն Շանթ

159. ՀՅԴ ԱՄՆ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Հ.Յ.Դ. Ամերիկայի կեդրոնական կոմիտեին

Հարգելի՛ ընկերներ:

Ռուսաստանին մեկնելու ատենս, աչքի առաջ ունենալով Եվրոպայի ու Ռուսաստանի մեջ եղած այն ատենվան դրամական փոխադրություններու մեծ դժվարությունը, պայմանավորվեր էի մեր ընկերներուն հետ, որ Կովկասեն ստանալիք իմ գումարներս հոն ուղղակի վճարվեր Արևելյան Բյուրոյին իմ տալիք հեռագիրներուս համեմատ. փոխարենը Ամերիկայի ձեր կեդրոնական կոմիտեն փոխադրեր ինծի

այդ գումարներուն փոխարժեքը Արևելյան Բյուրոյեն ձեր ստանալիք հեռագրին վրա:

Բայց հիմա, որ ամեն հարաբերություն խզված է բացարձակապես, ո՛չ ես կրնամ հեռագրել Թիֆլիս, ո՛չ ալ դուք կրնաք ստանալ Բյուրոյի հեռագիրը: Այնպես որ նորեն ինքս անձամբ պետք է դիմեմ ձեզի ու պիտի խնդրեմ, որ փոխադրեք ինծի հազար տոլար, կ՝ուզեք միանվագ, կ՝ուզեք մաս-մաս, ինչպես որ ձեզի կը հարմարի: Այդ հազար տոլարի փոխարժեքը կը կարգադրեմ, որ Թիֆլիս վճարվի Արևելյան Բյուրոյին, հենց որ հարաբերության մտնելու միջոց մը ունենամ Կովկասի հետ:

Մինչև այս նամակիս ձեզի հասնիլն ու մինչև դրամի դալը արդեն ինքնին ամիսներ է անցնելու. այնպես որ շատ կը խնդրեմ չուշացնեք. ձեռքս եղած վերջին դրամներս սպառվելու վրա են: Մեկ-երկու ամսվան ապրուստի համար հույս դրած էի Բոստոնի Պերպերյան գրավաճառատան վրա, որը սակայն առանց այլևայլությեան կը գրե հիմա ինծի, թե պատերազմին պատճառով անկարող է հարգելու իր պայմանագրությունը[1]. ես կը կարծեի, որ գոնե Ամերիկան քիչ մը պետք է փոխած ըլլար մեր բարքերը:

Դրամը, եթե հնար է, փոխադրեցեք Զվիցերիա ուղղակի իմ անունիս, որովհետև Փարիզի միջոցով ավելի ևս ուշացման է ենթարկվելու. դեպի չեզոք երկիրները կարծեմ մինչև որոշ գումար մը թույլտվություն կա: Իսկ եթե հնար չէ, կամ ձեզի համար անհարմար, այն ժամանակ փոխադրեցեք արդեն Փարիզի միջոցով, միայն ձեր քաշած չեքը պետք է ըլլա Հանըմյանի անունին, ո՛չ թե իմ, որպեզի ան հոն գանձել կարողանա ու ինծի փոխադրել:

Կը խնդրեմ, որ ընդունեք իմ խորին չնորհակալությունս և ընկերաբար ներող ըլլաք տված ձանձրույթիս: Շատ կը ցանկայի, որ ես ալ իմ կողմես բանի մը պետքի գայի ձեզի համար, բայց չգիտեմ ճշմարիտ ինչո՞վ կրնամ օգտակար ըլալ:

Սրտագին բարևներով կը սեղմեմ ձեր ձեռքը.

Լևոն Շանթ

1918 Հուլիս 26
Լոզան
Հասցես. Le'on Segbossian
Avenue Druey 24

Lausanne

Suisse

Հ. Գ. Ձեր ուղարկած նախորդ գումարները ստացած ըլլալուս նամակը գրած եմ ձեզի Լոզան հասնելուս պես, սակայն մոտ երկու ամիս առաջ: Կը հուսամ առած եք ժամանակին:

1919

160. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ բարեկամ:

Եթէ ձեզի համար անհարմար չէ, հանդըպինք իրար La Voix de l'Armenia[1]-ի խմբագրատանը ամսուս վեցին երկուշաբթի օրը ճիշտ կես-օրին, կերթանք տեղ մը միասին ճաշելու ու կը խոսակցինք. իրիկուններս իմս չէ, իսկ առավոտները թէ՛ դուք և թէ՛ ես զբաղված կ'ըլլանք:

Եթէ առաջարկս անհարմար է ձեզի, դուք իմաց տվեք՝ ե՞րբ հանդըպինք և ո՞ւր:

Սրտագին բարևներս՝ Լևոն Շանթ

1919 Հունվար 2

Փարիզ

Հասցես՝ Rue Jacob 50

Hotel d'Orle'an

1921

161. Ա.ՄԱՔՍԱՊԵՏՅԱՆԻՆ և ՍԱՄՎԵԼ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Ընկերնե՛ր:

Գիտնալով, որ մեր վանեցի ընկերներեն չատերուն մեջ տրամադրութիւն կա անցնիլ Պարսկաստան ու երթալ միանալ Բագրատայի[1] իրենց հայրենակիցներուն՝ կ'ըշտապեմ հայտնելու, որ Բագրատայի մեջ այլևս ոչ ոք չկա. հոն եղած գաղութը անպիտացիք փոխադրած են Բաս-

րա[2], հոնկե ալ նավերով Բաթում ու Հայաստան ճամբելու դիտավորութ-
թյամբ: Բոլշևիկյան չարժումները ընդհատած է այդ ուղևորությունը և
անոնք մնացած են Բասրա. նոր մի քանի հոգի են ուղարկած Թեհրանի
մեր ներկայացուցիչի մոտ՝ խնդրելով ինչ գնով ալ որ ըլլա՝ իրենց հե-
ռացնեն Բասրայեն: Եթե ամառը իրենք մնան հոն՝ մեծ մասը կը
փչանա:

Մեր տաճկահայաստանցի, մասնավորապես վանեցի տարրի վի-
ճակը չատ մտածել կու տա մեզի. եթե անոնք անցնին Պարսկաստան,
նախ՝ պետք է պինաթափվին, երկրորդ՝ ո՞ւր պետք է երթան, ինչպե՞ս
տեղավորվին: Բոլորովին ուրիշ կ'ըլլար պատկերը, եթե հնար ըլլար
Սալմաստի չրջանը[3] քաշվիլը. գիտեք որ անհնար է. մեկ-երկու տասն-
յակ կրնան ցրվիլ քաղաքները և իրենց միջոցներով իրենց գլուխը պա-
հել. իսկ մնացա՞ծը: Եվ վերջապես, ինչ ալ կ'ուզե ըլլա, ես խորապես
համոզված եմ, որ չատ չանցած մեր Երևանն ու մեր հայրենիքը մերն է
ըլլալու նորեն, և վանեցիներու նման աշխատող, ընդունակ և հուր ու
սուրե անցած տարրի մը ցրվիլը լուրջ կորուստ կը համարեմ մեր վերա-
կազմվելիք պետության համար: Այս բոլորը, գիտեմ որ, կը մտածեք
դուք ալ և չատ ավելի մոտիկ մեր ժողովրդի այդ հատվածին ու իր պայ-
մաններուն ու հոգեբանությանը, կ'ընեք ինչ որ կարելի է: Ես իմ կող-
մես այս երկու տողը ձեզի գրելը պարտքս համարեցի, համենայն դեպս
Բագուպայի վրա ուրեմն հույս պիտի չի գրվի:

Ընկերական ջերմ բարևներով՝ Լ. Շանթ

1921 մայիս 7
Թավրիզ

1922

162. ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ

Սիրելի՛ Վահան[1], Բեգզատյանի[2] նամակեն տեղեկացա, որ իմ
մինչև հիմա քեզի չի գրելս կասկած է տվեր քեզի, թե միգուցն վշտա-
ցած լինիմ: Ա՛յ խելոք, ես ի՞նչ պատճառ կրնամ ունենար քեզմե վշտա-
ցած լինելու, ընդհակառակը, ես միշտ սիրով կը հիշեմ քեզի, և ահա՛
ընկերական ջերմ բարևներս կ'ուղարկեմ քեզի ու տիկին Հեղուշին:

Եթե մինչև հիմա դեռ քեզի ոչինչ գրած չեմ՝ պատճառն այն է պարզապես, որ դեռ հերթը հասած չէ ընկերական նամակներուս: Քանի եկած եմ՝ զբաղված եմ գործնական նամակներով, կը ջանամ գործ մը, աշխատանք մը, բան մը ճարելու, որ կերպ մը հնար լինի գլուխ պահելը. բայց ինչպես կը տեսնես, դեռն մինչև օգոստոս- սեպտեմբեր չատ քիչ հույս կա, իսկ իմ արդի նյութական վիճակս չափազանց նեղ: Այնպես որ ինքս ալ չգիտեմ՝ ինչ եմ ընելու:

Գրի՛ ինծի, դո՞ւն ինչ բանի ես, ի՞նչ տրամադրության, ի՞նչ կը մտածես, նոր ի՞նչ բան կա չուրջդ: Հիմա իմ բոլոր գիացածս լրագիրներուս սահմանեն անդին չանցնիր. իհարկե, խոսքս մեր քաղաքական հույսերուս մասին է, մոտակա հավանականություններուս: Կ'ուզեի գիտնամ՝ դուք հոս ինչ կը մտածեք ընդհանուր առումով: Մեր երկար ու սարսռելնակ ուխտականի մասին Երևանեն մինչև Ֆրանսա երևի Սիմոնը և ուրիշները պատմած են ձեզի[3]. երբ օր մը իրարու հանդիպինք՝ այդ բոլորի մասին կը խոսինք երկար. հետաքրքիր ու բացառիկ բան էր: Առայժմ առողջություն և հաջողություն կը մաղթեմ քեզի և հարսությունս մեր զժբաղդ հայրենիքին: Սրտագին համբույրով՝ Լևոն Շանթ

1922 ապրիլ 17
Մոնպելիե

163. ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ

Սիրելի՛ տիկին:

Խոսքս չնորհակալ եմ ձեր սիրալիր նամակին և անչափ ուրախ ձեր ժպտուն ու գրական տրամադրութենեն: Ես ալ բարեբաղդաբար մուրոզ չեմ եղած և հիմա ալ չեմ, տնտեսական անապահովության կարծես տեսակ մը վարժվեցինք ամենքս ալ, հայրենիքի ցավերուն դեմ գրեր ենք փիլիսոփայությունը, իսկ գրիչը ձեռքես վար ձգելու միտք չունիմ, եթե նույնիսկ ստիպվիմ խանութպան դառնալու. կը գրեի ճամբուն, կը գրեմ և հիմա. ինչ ըսել կ'ուզե, ուրիշ կը լինի մարդու տրամադրությունն ու աշխատանքը, երբ վաղվան հոգը չի ճնշե ուսին, բայց այդ չտայլությունը չէ տված հայ արվեստագետին, ան ալ իր աքսորված օրերուն մանավորապես:

Առայժմ Փարիզ գալու հավանականություն չունիմ, գուցե մեկերկու ամիսեն հարկադրվիմ անցնելու Պոլիս, թեև ամենևին հրապույր չունի ինծի համար այդ միջավայրը: Պոլսեն առաջ տոմսակ մը, որով ինծի թղթակից անդամ կ'ընտրին Արվեստի տան[1], նամակ-հրավեր մըն ալ Փարիզեն, ուր կար և ձեր առաջարկությունը: Թերթերեն գիտեմ Արվեստի տան գոյությունն ու դասախոսությունները, բայց պարզ չէ ինծի ո՛չ իր նպատակը և ո՛չ ծրագիրը. ժողովրդական համալսարանի նման բան մը կը թվի, այն առեն ինչ է լինելու Փարիզի հյուղի դերը, և ինչ է մանավորապես թղթակից անդամի պարտականությունը, քանի որ իրավունքներու մասին կարծեմ խոսելն ալ ավելորդ է:

Իմ ու Ջավոյի հարգանքն ու բարևները ձեղի:

1922 մայիս 8

Մոնպելիե

164. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմոն ջան, նամակդ ինծի մեծ ուրախություն պատճառեց, թեև գրածներուդ մեջ ուրախ բան չկա: Քո այդ թուլցած ազնվի տրամադրությունդ չատ հասկանալի է և արդյունք ակամա անգործության. հասուն տարիքի գերագույն հաճույքը աշխատանքն է, մանավանդ սիրած աշխատանքը: Երբ այդ աշխատանքը չունիս, կամ ավելի՛ վատ, ունիս ու կը կորսնցնես, կարծես կը կորսնցնես կյանքի իմաստը, կյանքի դրդիչը: Ոչինչ, սիրելի՛ս, տեղը կը հանենք, քիչ մըն ալ համբերև, տեղը կը հանենք. մանավանդ դուն, որ ավելի երիտասարդ ես և ավելի ալ հանրային գործունեության ջիղ ունիս: Գրածներուդ մեջ ինծի համար ամենեն անմիջական մտահոգիչը Պարսկաստանի մեր ընկերներու վիճակն է. ես հույս ունեի, որ Ամերիկային ու Բալկաններեն արդեն օգնության հասած ելք, գոնե մասնակի. մեթե իրա՞վ այդ ծայրահեղության է հասած, որ մերոնք կը ցանկան Երևանն վերադառնան, ինչպես գրված էր «Ճակատամարտի»[1] մեջ: Այդ վերադարձը դեռ չատ է վաղաժամ. կ'աքսորվին բոլորը Ռուսաստանի ներսերը սովի ու անհուսության կեր դառնալու: Հաշտության ու համերաշխության քարոզները չատ լավ են, իհարկե, մեր բոլշևիկներու հետ, բայց սիրուն քարոզներ են միայն, ինչքան առեն որ ամուր է բոլշևիկներու գիրքը

Ռուսաստանին մեջ: Մինչեւ որ հողը չի չարժվի իրենց ոտքին տակը, մե՛ր մեծապատիվ товарищ[2]-ները խելքի չեն գար. այդպես է այս աշխարհքի օրենքը: Գալով քո Ամերիկա երթալուդ՝ ես ալ այն կարծիքի եմ, որ առայժմ լավ է հետաձգես. Արտաշեան ու Օզանը նոր են հասած, թող ընեն ինչ որ ձեռքերնուն կու գա: Դուն դնա միայն այն ժամանակ, երբ ավելի խոշոր հաջողության մը հնարավորությունը կա թե՛ պրոպականտի տեսակետեն և թե՛ դրամական: Կը հարցնես իմ տրամադրութեանս ու վիճակիս մասին. տրամադրությունս՝ ինչպես մեր բոլոր աքսորյալներու տրամադրությունը. կարո՞տ ու ծարավ հայրենի հողին, ջուրին ու աշխատանքին. փիլիսոփայություն մեր ձախողանքներուն և քաղաքական աշխարհի խեղկատակութիւններուն դեմ. իբրև մոռացում քիչիկ մը ընթերցում ու գրական աշխատանք, բայց ո՛չ լուրջ տեսակի. լուրջ աշխատելու համար չունիմ հոգեկան պետք եղած անդորրը, մանավանդ որ անտեսական հոգերս ալ մյուս կողմեն ինծի հուպ կու տան: Մինչեւ հիմա կ՝ապրինք Գարոյին ստացած ամսական հազար ֆրանկով, որը բացարձակապես անբավական է ամբողջ տան մը բարդ ծախքերուն, ինչքան ալ որ համեստ ապրինք: Հիմա ալ Գարոն հիվանդ է ու մեկնած է Քալիֆորնիա. հառաջիկա ամիս ոչինչ չեմ ստանալու, իսկ վերջն ալ պիտի կարողանա՞ խեղճ տղան, թե ոչ, գոնե նորեն մեկերկու ամիս: Աչ ու ձախ կատարած բոլոր դիմումներես իհարկե ոչինչ դուրս չեկավ ո՛չ անմիջական իբրև օգնություն, պարտք, ո՛չ ալ գործ մը, աշխատանք մը ինծի համար. միա՛կ հավանականությունը, ան ալ շատ թույլ, նորեն Պոլիս երթալու ու վարժապետություն ընելու ծրագիրն է. այսինքն բան մը, որ չգիտեմ՝ հաջողվելուն ուրախանամ, թե չհաջողվելուն. շատ է հոգիիս դեմ Պոլիս երթալը, մանավանդ նորեն առանց ընտանիքի և կրկնակի ծախսով. տղաքս մեկ ու երկու տարիեն ավարտելու են այստեղ լիսեն, անոնց դպրոցեն հանելու իրավունք չունիմ: Այս պայմաններուն մեջ ի՞նչ հեռանկար կ՝ուզես դուն ինծմե: Իմ բոլոր երազս է, ինչպես արդեն գիտես, հնար ունենամ մնալու տանը և բոլոր ուժերս կեդրոնացնեմ գրական աշխատանքի վրա. աղոտ և հեռավոր հույսեր կու տան ինծի մեկ-երկու բարեկամ մարդիկ, բայց իրական ու դրական մեջտեղը ոչինչ չկա: Սակայն բանաստեղծ մարդու համար այդ տարտամ հույսերն ալ բան մը կ՝արժեն և ես առայժմ առոնցմով կը սնանիմ. ուրիշ խոսքով՝ այսօրվան հաշիվներս բաց են, իսկ վաղվան հեռավորն ալ գոց: Տևեճիեն ստացած եմ նամակ մը, ուր

սակայն ավելի իմ մասին կը խոսի, քան իր, այնպես որ չգիտեմ ինչ հալի է. չոտով գրելու եմ իրեն: Մալխասեն լուր ես ալ չունիմ, Հավանորեն հիմա Գարոյի հետ կը լինի Քալիֆորնիա, գուցե և միասին գրեն ինձի: Մեր տանը բնականաբար հաճախ խոսք կը դառնա մեր նշանավոր միասին ճամբորդության շուրջը, տղաքս արդեն կը ճանչնան քեզի իմ խոսքերես ու քու լուսանկարեդ, իսկ ես ու Ջավոն մշուշոտ հույսեր ունինք, որ գոնե մեկ-երկու շաբաթ մեր մոտը ունենանք քեզի. և իբրև վարպետ վիպասան այստեղ ալ կը դնեմ վերջակետը:

Ջավոյի ու երեխաներուս սրտագին բարևները քեզի. ջերմ համբույրով՝ Լևոն Շանթ

1922 մայիս 10
Մոնպելիե

Հասցես՝
L.Segbossian Chanth
53, B. des Arceaut, 53
Montpellier

165. ՎԱՀԱՆ ՓՓՓԱՋՅԱՆԻՆ

Սիրելի՛ Վահան, բոլոր սրտովս կը շնորհավորեմ տիկին Հեղուշն ու քեզի, երկա՛ր ու բաղդավոր կյանք մանչուկին. վերջապես մոտաք մարդավարի մարդոց շարքը: Իսկ ձեր ինձի ըրած մասնավոր պատիվը կ՝ընդունիմ սիրով[1], մինչ պատրաստ Վաչիկը հայության ավազանը կոխելու՝ հուսալով որ արտաքին պայմանները դժվարություն չհանեն:

Շնորհակալությամբ կը կարդամ քաղաքական վիճակի մասին գրած տողերդ, թեև ինքս կը խուսափիմ այդ մասին գրելե. կը խոսինք երկար, երբ միասին գանք, դժվար բան է քանի մը տողով այդ աստիճան բարդ երևույթները ձևակերպելը: Ըսեմ միայն այսքանը. եթե մեր անկախության հասնելու համար հույսդ կտրեր ես Եվրոպային, ռուսներու միջոցով այդ անկախության հասնելու հույսը բնավ պետք չէ, որ մտքեդ անցնի. մեր անկախության արգելքը ռուսներն են, քեզի մի՛ խաբիր: Եթե հույսդ կտրեր ես արդեն անկախութենեն ու կը կարծես, որ ստիպված սլիտի ըլլանք բավականանալու առավել կամ նվազ ջրիկ տեղական ինքնավարությամբ մը ռուսական տիրապետության տակ, նորեն վնաս է մեզի ամեն հեռում Ռուսաստանի վրա. ընդհակառակը,

այդ «ինքնավարությունը» իրականին կը մոտենա միայն ա՛յն չափով, ինչ չափով որ անպլիական չահերու կողմեն ճնշում ըլլա, գուցե և ազդեցու լիկայի[2] կողմեն միջամտություն և մեր կողմեն բացարձակ պահանջ. ամեներքը հաշվի կառնին միայն ուժը, ուժն ու պահանջը: Ռուսներն ալ միայն այն չափով բանի տեղ կը դնեին մեզի, ինչ չափով որ ուժեղ ըլլա մեր կամքն ու պահանջը. չան հետ բարեկամ ըլլալու համար փայտը ձեռքեդ չի պիտի թողնես: Իսկ այդ «փայտը» մեր հարցի եվրոպական սեղանի վրա դրված ըլլալն է, մեր ինքնավարության պահանջն է մարդկության առաջ դրված: Իսկ եթե հավտանք, որ այս բոլորը դատարկ բաներ են, և չորս-հինգ տարի չանցած ռուսական նահանգ են դառնալու Վանն ու Էրզրումը արդի դժբաղդ Հայաստանին հետ, այլևս խոսելու բան չի մնար, ո՛չ ալ հենվելու կամ չհենվելու, այդ բոլորը կը կատարվի առանց մեզի, մեր կամքեն անկախ. մեր ուժասպառ ժողովուրդին կը մնա ճկիլ փոթորկի առաջ ու հպատակիլ: Մնացածը կը մնա հաջորդ սերունդին, ուրեմն և թողնենք հաջորդ սերունդին, այսինքն Վաչիկիդ:

Շատ չնորհակալ եմ քեզի հազար փրանկին համար, որ ստացած եմ, և այն հույսին համար, որ կուտաս «մոտիկ ապագային»: Հեռավո՛ր ապագային մեջ հույսեր ունիմ և ուրիշ կողմերե, դժբաղդաբար բաներս վատ են մոտիկին մեջ:

Տիկին Հեղուշին սրտագին բարևներս, համբույրս սանիկիս. ու պինդ կը սեղմեմ ձեռքդ. Լևոն Շանթ

1922 Հունիս 10

Մոնպելիե

Եթե կարող ես, խնդրեմ, հայտնե ինծի Օհաննես խան Մասեհյանի ուր ըլլալն ու հասցեն:

166. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմո՛ն ջան, կարոտով, կարոտով համբուրում եմ քեզ. նամակդ հապիով էի ստացել, որ անկողին մտա. երկար-երկար հիվանդ էի. դուրս եկավ անիմի, ջղայնութիւն և այդ հիմքի վրա մարսողական խանգարմունք: Բժշկի ասելով՝ տաք երկիրներու ազդեցությունը, ինչպես և հոգնածություն: Հիմա սկսած եմ կազդուրվելու, ուժեղացնող դեղեր ու սրսկում և պարապություն. արգիլված է ամեն մտավոր աշխատանք.

արդեն արդիւված էլ որ չլինի՝ ինքս չեմ կարողանում. և այս տեսակն պարապութիւնը ինձ ավելի է ուտում. ես միշտ վարժված եմ եղած իմ հոգիովս ինձ զբաղեցնելու. մեկ էլ որ պարապութիւնը ավելի է սրում կյանքն և աշխատանքն կտրված լինելու զգացումս և այն խո՛ր, խո՛ր կարոտը դեպի մեր դժբաղդ հայրենիքը: Հիմա իմ աչքիս ուրիշ ոչինչ չի գալիս. կ՚ուզեի լինիմ ու աշխատիմ մեր ավեր աշխարհում. երբևէ այսպես ուժեղ չէի զգացած հայրենի միջավայրի ու հայրենի հողի պահանջը: Կը հիշեմ մեր ծրագիրները ընկերական ուժերով միասին մի տնտեսութիւն սկսելու: Եվ հեգնութիւն լինի կարծես ինչ որ հիմա կը գրես կես լուրջ, կես կատակ. օտարութեան մեջ, հայրենիքդեղ դուրս փորձել այդ նույն աշխատանքը հավաքական: Իհարկե եթե արդի քաղաքական պայմանները տևելու լինին մեր սպասածեն ու կարծվածեն ավելի՝ պետք է կպչինք աշխատանքի և բաղդավոր կը լինեի, եթե քեզ ու մեկ-երկու մտերիկ ընկերներու հետ լծվեինք գործի. բայց չեմ կարծեր որ այդ գործը տնտեսական և մասնավորապես գյուղատնտեսական հիմք ունենա, թեև եթե հարկ եղավ՝ պատրաստ եմ ես ամեն քայլի, այնպես որ համենայն դեպս աչքի առաջ ունեցիր ինձ էլ ձեր կազմած կամ կազմելիք ծրագիրների մեջ: Եվ շատ ուրախ պիտի լինիմ, եթե գրես ինձի, որ քու վիճակիդ մասին մոտավոր ապագային բան մը կը մտածե՞ս, թե առայժմ կանգ ես առած «Հայաստանի ձայնին»[1] վրա, որին աշխատակցելու հիմա կրկնակի հնար չունիմ. թե՛ չնորհքի պակաս, թե՛ առղջութեան: Զիլինգարյանը Ամերիկայեն կը գրե, որ «Հայրենիքը[2]» չոտով ամսագիր էլ է ունենալու և ուզած է աշխատակցութիւնս. խոստացա ուղարկեմ գրական ու գրագիտական նյութեր, բայց իհարկե կազդուրվելես ետքը միայն: Գալով ապրուստիս՝ քաշ եմ գալիս այստեղից ու այնտեղից. և այս կերպով էլ անց կը կացնեմ ձմեռը, վերջը... վերջն էլ կը տեսնենք: Գրե՛ ինձի Տևեճյանի հասցեն, Զավոն լրագրի մեջ կարդացել էր իմ հիվանդ միջոցիս, որ ամուսնացել է. գրա՞ծ է քեզ: Կը հուսամ կլինդ արդեն առողջ է բոլորովին ու կպդուրված, իսկ փոքրի՞կդ: Ես միշտ համառ ու պնդապլուխ կը հավատամ գալիք լավ օրերուն, հաջողութեան, մեր աշխատանքին Հայրենիքում և իմ ու քու կենդանի գործակցութեան: Այդ լավ հույսերով էլ կը համբուրեմ քեզի նորեն կարոտով: Տիկնոջդ խորին հարգանքս ու բարևներս.

Լևոն

1922 օգոստոս 27

167. ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ

Սիրելի՛ Վահան, վերջապես ձայն եկավ քեզմե. ուրախ եմ, որ առողջ ևք բոլորդ հին ու նոր սերունդով: Ես ամառը չատ երկար հիվանդ էի, բայց հիմա ինչևէ՝ կ'ապրինք: Շնորհակալ եմ Լաքայի առթիվ գրածներուդ[1] և ինծի օգնելու պատրաստակամութենեդ, ուրկե կուզեմ անմիջապես օգտվիմ: Կը խնդրեի քեզմե, որ կա՛մ անձամբ, կա՛մ ընկերներու միջոցով տեղեկանայիր կարելիին չափ հանգամանորեն հեղինակի մը երկը սինեմայի էկրանին վրա հասնելու համար ո՞րն է Գերմանիայի մեջ[2] հեղինակին իրավունքը պաշտպանող օրենքը և ո՞րն է սովորական վճարի չափը լավագույն համարված երկերու համար և ի՞նչ կը վճարեն ավելի երկրորդական գործերուն, և վերջապես ո՞րն է վճարման սովորական եղանակը, եթե ըստ ներկայացման և ըստ որոշ տոկոսի է վճարումը:

Ինչի համար այս չափազանց հետաքրքիր և չափազանց չահեկան տեղեկութիւնները ձեռք բերելեդ ետքը բարի եղիր և ինծի հաղորդակից ընելու, որու փոխարեն ինծմե կ'ըստանաս բոլոր Հին աստվածներու երկնային օրհնութիւնը:

Ես հիմա գեղարվեստը դրեր եմ ծոցս և սկսեր եմ ժուռնալիստութեան, բայց այդ նոր ասպարեզս ալ չատ կը գոնե ինծի համար ահա՛ Լաքան և կ'առաջարկե սինեմա. և բնավ չզարմանաս, եթե չատ չանցած ժուռնալիստութենեն սինեմատճութեան անց կենամ: Բայց Կոկլովի առակին պես, մինչևնույն է, ինչպես ալ որ կը նայեմ, չեմ առանար պետք եղած եղանակը[3]: Բայց կը նվագեմ, որովհետև չեմ կրնար չի նվագեր: Աստված որ ճպուռը ստեղծեր է, ճռռոցն ալ հետն է ստեղծեր:

Մաղթելով ականջներուդ կարողութիւն կյանքի բոլոր ճպուռներու նվագածութեան հանդեպ և սինեմայի հեղինակներու հոնորարին վերաբերող հարցերուն՝ մնամ «խորին հարգանոք» ու սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1922 դեկտեմբեր 28
Մոնպելիե

Հասցես՝ Leon S. Chanth
Boul. des Arceaut 28
Montpellier

1923

168. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմո՛ն ջան, քու սիրելի երկար նամակդ ստացած եմ վաղուց-վաղո՛ւց, միշտ սեղանիս վրա է, միշտ ալ կ՚ուզեմ պատասխանեմ, բայց մինչև հիմա, ինչպես գիտես, չեմ պատասխանած: Ի՞նչ գրեմ քեզի. խոսելու բան ունիմ չատ, և ճիշդ չատ ըլլալուն համար ո՛չ կարելի է, ո՛չ ալ արժե գրի առնել: Գալով տեղեկութիւններուն ու տրամադրութիւններուն քաղաքական հարցերուն չուրջը՝ ե՛ս եմ, որ քեզմե կ՚ըսպասեմ բնականորեն, քան թե դուն ինծմե. ես իմ այս դավառական անկիւնես ոչինչ չունիմ, որ քեզի հայտնի չըլլա չատ ավելի մերձավոր աղբիւրե: Իսկ անձնական կեանքս նույնն է, ինչպես գիտես: Կ՚աշխատիմ. «Հայրենիքի» համար գրկած եմ Հոդվածներու շարք մը[1], որ արդեն աչքովդ ինկած է անշուշտ, հիմա ալ կը պատրաստեմ ուրիշ շարք մը[2]. մեկ կողմեն ներքին պահանջ ունիմ մեջս եղած մտածումներս ու համոզումներս պարզ ձևի մը վերածելու թե՛ ինծի համար և թե՛ ուրիշներուն, մյուս կողմեն ալ աշխատանքը ապրուստի պզտիկ միջոց մըն է, քանի որ «Հայրենիքը» խոստացած է վարձատրել: «Հայրենիքի» մեջ տարօրինակ զգացումով է, որ կը կարդամ մեր «անցյալի» այդ էջերը, ինչպես քու «Հանրապետութիւնդ» է[3]. ինչքան ուրախութիւն և ինչքան վիշտ կա այդ բոլոր հուշերուն մեջ:

Եվ այսօր, նոր տարվա գլխին, Սիմո՛ն ջան, երբ վերստին եմ գրիչս քեզի երկու սիրուն խոսք գրելու, միայն մեկ բան մըն է, որ կու գա գրչիս ծայրը ցանկալու, մաղթելու և՛ քեզի, և՛ ինծի, և՛ բոլորիս. դառնանք մեր Հայրենիքը քանի դեռ ուժ ունինք, քանի դեռ կրնանք աշխատիլ, քանի դեռ կրնանք պետքի գար մեր Հայրենիքին:

Բարևա ու հարգանքս տիկնոջ ու սրտագին համբույրներս քեզի.

Լևոն

1923 Հունվար 1
Մոնպելիե

169. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, նամակդ ինծի խոր ախորժյուն պատճառեց. ո՛չ Լոզանի պատճառով[1], ուրկե մեզի համար լուրջ բան մը երբեք չեմ սպասած. մեր անկախութիւնը դեռ ուշ է գալու, և չատ կատր-կատր, և ուրիշ ճամբաներով. ինչքան ժամանակ որ մեր հողին վրա հայ ժողովուրդ կա՝ ո՛չ մեր հայրենիքի, ո՛չ ալ անկախութեան պահանջն ու ձգտումը մեռնիլ չի կրնար հայութեան մեջ: Մեր մեծ ցավը Հոնկե կ՛առաջանա՛, որ մենք վայրկյան մը իրականացած տեսանք մեր հայրենիքի ու մեր անկախութեան ձգտումը պայմաններու տարօրինակ դասավորութեամբ և վայրկյան մը միայն ունենալնուս եռքը կորսնցուցինք[2]. Մենֆիստոֆելը ցույց տվավ Ֆաուստին Կրեոխենի պատկերը և խելոք Ֆաուստը ալ հանգիստ չունի: Ինծի ախորեցնողը քու հոգեկան վիճակդ է, սիրելի՛ս, որ և իմս է և մեր բոլոր ընկերներուն, որոնք «ճաչակեցին»: Բայց մի՛ ախորիր, սիրելի՛ս, պետք է չարունակել կռիվը, պետք է չարունակվի համառ ձգտումը, կռվի մեջն է մեր միակ մխիթարութիւնը: Հնարավո՛ր դառնար, որ մեր ցրված ուժերն ու ընկերները վերապահանային հայրենիք, որ նորեն խմբվեինք ու նորեն մեր ժողովուրդի հետ. ասա է հիմա ամենեն կարևորը. ուրիշ խոսքով՝ նորեն մեր առջևն է բոլշևիզմի անեծքը, ե՞րբ է լուծվելու՝ ես ալ չգիտեմ: Աչխատե՛ և ետևդ մի՛ նայիր, ասա է միակ դեղը մեր կարոտի հիվանդութեան, քիչ մըն ալ փիլիսոփայութիւն խառնե՛ հուշերուդ ու մտածումներուդ, բրոմի պես է, ջղեր կը հանգստացնե:

Գրած էիր, որ տեղդ փոխելու ես, դեպի ո՞ւր, գրե՛ ինծի ավելի որոշ, եթե կրնաս, որովհետև հիմա ես ալ այդ մտքերուն ու ցավերուն վրան եմ, ես ալ պետք է բույնս փոխեմ: Նախ ըսեմ, որ նյութական պայմաններս չատ ծանր են, այս վերջին չաբաթները քանի-քանի անգամ մտածեր եմ նորեն մեր տելեկասիոնին դիմեմ[3] քիչ մը դրամ խնդրելով, բայց սիրտս չեմ ըրած, կ՛ենթադրեմ որ ամեն կողմեն այնքան դիմողներ կան: Այսպես չարունակելը անկարելի է. միակ հաստատ դրամս ամսական 500 ֆրանկ երեք ամիսեն կը վերջանա և ես կը մնամ բոլորովին օդի մեջ. «Հայրենիքի» աշխատակցութիւնը չատ լավ է իրեւ հավելված, բայց ի՞նչ կարելի է միայն ատով: Եվ ես հիմա բացի օրվան կարիքեն, հարկադրված եմ մտածելու և հառաջիկային համար: Եգիպտոս երթալ չեմ կրնար, հիվանդութեանս ալքյուրը տաք երկիրն

է, հոն երթալ կը նշանակե բոլորովին անպետքանալ: Եվ ակամա կը մտածեմ Ամերիկայի մասին. որոշեր եմ գրեմ Արտաշեսին, արդյոք կարելի՞ է ինծի համար հոն որևէ աշխատանք մը, Ամերիկան հարմար է և տղոցս համար, չուտով համալսարանի հարց կա առջևս. և վերջապես հոս չա՛տ ենք մինակ, պահանջ ունինք ընկերներու ու քանի մը ընտանիքի հետ ըլլալու: Դուն որ Ամերիկա եղած ես, կը կարծե՞ս որ բան դուրս գա, հարմա՞ր է. գրե՛ ինծի առանց այլևայլութեյան ինչ որ կը մտածես: Կարելի է դուն ալ անցնիս Ամերիկա, ի՞նչ հրաշալի բան կ'ըլլար, եթե կարողանայինք իրարու մոտիկ ապրիլ: Թեև գրածիդ թոնեն ինծի այնպես կը թվի, որ դուն ավելի Գերմանիայի կամ Բալքաններու մասին կը մտածես:

Առողջութեյուն և ուրախութեյուն բոլորիդ, բարևներս ու հարգանքս տիկնոջդ ու համբույրներս քեզի. Լևոն Շանթ

1923 Հունվար 15

Մոնպելիե

170. ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ

Սիրելի՛ Վահան, չատ չնորհակալ եմ քեզի նամակիդ և Լաքայի առաջարկի մասին գրածներուդ համար[1]: Հավանորեն իրեն արդեն հանդիպած կ'ըլլաս և ծանոթ ես մեր մեջ եղած նամակագրութեյան: Իբրև հեղինակի վարձատրութեյուն «Հույս ունի» հինգ հազար ֆրանկ, որը իհարկե խղճուկ գումար մըն է, մանավանդ Գերմանիայեն դուրս ապրողի մը համար: Բայց ես ատոր ալ տվի համաձայնութեյունս իր ձեռնարկութեյունը խանգարած չըլլալու համար: Փորձե թող, տեսնենք՝ ինչ է դուրս գալու, թեև մեծ «Հույս մը չունիմ», որ բան պիտի դուրս գա:

Ինչպես կ'երևա Բերլինը չատ ես հավներ[2], որ ինծի ալ կը կանչես: Իմ տնտեսական պայմաններս այնպես են, որ ոչ թե Բերլին, այլ աշխարհի մյուս ծայրն ալ կրնամ նետվիր հանկարծ, եթե հարկը ստիպեց: Այնպես որ գէչ չըլլար նախապես որոշ ծանոթություններ ձեռք բերեմ ձեր գներու ու պայմաններու մասին: Այնպես որ, սիրելի՛ս, բարի եղիր ինծի հաղորդելու բնակարանի, ապրուստի ու հագուստի կարևոր գիները և թե մոտավորապես ամսական ի՞նչքան է անհրաժեշտ

հինգ հոգինոց ընտանիքի մը համեստ ու մարզավարի ապրուստին համար: Այլև տեղեկացիր կարելի՞ է մտնել համալսարան ֆրանսական լիսեի առաջին դասարանը ավարտելեն ետքը: Առաջին դասարանը լիսեի վերջնաթեր տարին է, պաշտպանեի քննութիւններուն կեսը տված. որից հետո կա նաև տարի մը՝ փիլիսոփայական դասարան՝ պաշտպանեի վկայական ստանալու համար: Առանց այդ փիլիսոփայութեան դասարանը անցնելու կարելի՞ է հոտ համալսարան մտնել: Այլև քանի մը խոսք կլիմայի մասին՝ հենված քու փորձառութեյան վրա. մենք շատ արևասեր մարդիկ ենք. թեև ինչքան կը հիշեմ, մոտավորապես Փարիզի կլիման է ըլլալու, Փարիզի նման ալ առատ քամիներով:

Եվ այսքան տեղեկութիւններու ու սիրալիրութիւններու փոխարեն ընդունե իմ սրտագին բարևներս, ուրկե բաժին հանելու չմոռնաս տիկին Հեղուշին և փոքրիկ օրիորդիդ[*] *:*

Համբույրներով՝ Լևոն Շանթ

1923 փետրվար 15

Մոնպելիե

[*] *Կը ներես, որ Վաչիկիդ չփոթեցի Վրացյանի աղջկան հետ. ախր, ձեզի ո՞վ ըսավ բոլորդ մեկ անպամեն երեխի տեր դառնաք ու մեր պլովնները խառնեք:*

171. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմո՛ն ջան, Ամերիկայի մասին քու գրածներդ և ի՛մ մտածումներս էին, բայց և այնպես գրեր էի Արտաշեսին դիտավորութեյանս մասին, որովհետև կերպ մը այս վիճակեն դուրս գալը անհրաժեշտ էր և է: Նամակիդ մինչև հիմա չի պատասխանեցի. կ՚ուզեի նախապես ստանամ նաև Արտաշեսի պատասխանը: Եկավ այդ պատասխանը, որով և հարցը վերջնապես լուծված է: Կ՚ըսես, որ հինգ հոգինոց ընտանիքի մը ապրուստին համար 250-300 տոլար անհրաժեշտ է ամսական, առանց հաշվելու դպրոցական ծախքերը, ուրիշ խոսքով՝ փակված են Ամերիկայի դռները մեր առջևը, գուցե բարեբաղդաբար: Իսկ թե ինչ եմ ընելու, դեռ ոչինչ չգիտեմ, կը խոսինք: Որովհետև նոր ստացեր եմ Պատասխանատու Մարմնի[1] *հրավերը խորհրդակցական ձայնով մաս-*

նակցելու համար մարտ 15-ի կոնֆերանսին[2]: Զգիտեմ վերջնապես տեղը արդեն որոշվա՞ծ է, թե ոչ: Եվ դուք ե՞րբ եք այդ տեղեն մեկնելու: Անմիջապես իմա՛ց տուր ինծի, որ մեկ-երկու օր առաջ գամ Փարիզ, որ ճամբորդինք միասին: Իմ անցագրիս ժամանակը լրացած է, կը խնդրեմ որ մեր տելեկասիոնը նոր անցագիր պատրաստե ինծի համար ալ, ինչպես անշուշտ պատրաստելու է և քեզի համար. կը ղրկեմ ներփակ երկու լուսանկար և իմ կարծիքով գլխավոր բնորոշումները. հանձնե՛ որու որ հարկ է և ո՛ւշ դիր, խնդրեմ, որ ժամանակին հոգածվին նաև վիզաները: Այլև կը խնդրեի, եթե կարելի է, որ ինծի անմիջապես քիչ մը դրամ ուղարկվի առ հաշիվ, որ հնար ունենամ նախնական քանի մը վոքրիկ պատրաստութիւններու և տեղես չարժվելու, որովհետև ո՛չ թե ճամբորդելու, այլև տանը թողնելու համար ձեռքս պետք եղած անհրաժեշտ գումարը չկա: Երկտողով մը իսկույն պատասխանե ինծի, որ ապահով ըլլամ. կը մտածեմ՝ միգուցե արդեն վաղօրոք մեկնած ըլլաս:

Կարոտի ջերմ համբույրներով՝ Լևոն Շանթ
1923 փետր. 23
Մոնպելիե

172. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, քու նամակներդ ինծի համար միշտ ուրախութիւն են, կարոտ ու մխիթարանք: Մխիթարութիւն եղավ ինծի համար նաև Մասուրյանի հրատարակած նամակները[1]. իրա՛վ որ, առաջին իսկական երկրի ձայնն էր, որ սրտիս հասավ այս երկու տարվան անապատին մեջ: - Գիտեմ, որ կը հետաքրքրվիս առողջութեամբս՝ այդ կողմեն փառք Աստծու: Փարիզեն վերադարձիս դիմեցի մասնագետի, քննեց ու հայտնեց, որ տկարութիւնս պարզապես ջղային հողի վրա է. վերցուց ուտելիքի արգելքներուն ամենեն դժվար մասը և պատվիրեց լվացում ու չփում ամեն առտու. հիմա արդեն մեծ թեթևացում ունիմ և կարելի է ըսել, որ վիճակս նորմալ է: Այդ կողմեն չատ ուրախ եմ, որովհետև հնար կու տա ինծի աշխատելու, այլև տոկալու տնտեսական վիճակիս պատճառած հոգեկան ճնշումին: Ինչպես է քո՞ւ ստամոքսիդ ապստամբութիւնը, բուժումեդ օգտա՞ր: Գրած էիր, որ մինչև

ամսու վերջն ես մնալու դյուզը, և ես հիմա չիմացա ինչ հասցեով գրեմ քեզի, մոռածեցի գրեմ ժըննև: Քու նամակդ ստանալես առաջ ես արդեն տված էի իմ համաձայնութիւնս Ալեքսանդրիա երթալու՝ հայտնելով որ ընտանիքս հիմա Եգիպտոս փոխադրելու անկարող եմ, որով կ'ակնկալեմ այնքան գումար մը, որ հերիք ընե ընտանիքիս ու իմ ապրուստին: Երկար լուռթենն վերջը պատասխանեցին, որ նամակս ուշ են ստացած և հրավիրված է Ազբալյանը[2]: Իմ արդի պայմաններուս մեջ այս անհաջողութիւնը չատ ծանր պիտի գար սրտիս, եթե չըլլար մեջը Ազբալյանի հրավիրված ըլլալու իրողութիւնը. որովհետև խորապես ուրախ եմ Նիկոլի համար. ան ալ անշուշտ չատ նեղ դրութեան մեջ է ըլլալու: Այնպես որ հիմա մնացեր եմ նորեն «Հայրենիքի» հուսով, որը ինչքան ալ որ աշխատիմ անկարող է իմ ամենաանհրաժեշտ պետքերս ծածկելու. մեջտեղ կը ըրկեն գումար մը, և ամիսներով կը մնամ առանց դրամի, ինչպես օրինակ հիմա: Այն աստիճան կարիքի մեջ եմ, որ իմ բոլոր կամքիս հակառակ քանի մը օր առաջ ստիպված եղա գրելու Խաչիայանին և քանի մը հարյուր ֆրանկ խնդրելու երկու չաբաթով, մինչև Ամերիկայեն դրամ ստանամ. չատ կորրեկտ կերպով պատասխանեց ինծի Վիեննայի ձեր որոշած ֆորմուլայով[3]: Իհարկե ես ո՛չ ցանկութիւն, ո՛չ ալ իրավունք ունիմ նեղանալու, ո՛չ ալ մեղադրելու, բայց... Բայցը կը մնա բայց: - Այս կերպով չարունակել այլևս անկարելի է: Ինչ գնով ալ ըլլա այս վիճակես պետք է որ ելք մը գտնեմ, պետք է որ ճարեմ ինծի համար որևէ ուրիշ աշխատանք մը: Կը նայիմ չորս կողմս, թե ո՛ւր կրնամ երթալ, ինչ կրնամ ընել. ամեն տեղ երթալու պատրաստ եմ, բավական է, որ քիչ-չատ հարմար գործ մը ճարվի և որ հնար տա ինծի ընտանիքիս ապրուստը ծայրը ծայրին բերելու:

Ես հիմա ալ, սիրելիս, այս բոլոր անհամութիւնները, որ կը գրեմ քեզի, միտումնաւոր է. կը մոռածեմ, որ դուն ամեն կողմ հարաբերութեան մեջ ես, ո՞վ գիտե, կարելի է որևէ առիթ ներկայանա, գիտցա՛ծ ըլլաս և աչքի առաջ ունենաս:

Ներե՛ ինծի և գրե՛ ինծի: Սրտագին բարևներս տիկնոջդ, կը գրկեմ Սեդիկդ ու ջերմ կը համբուրեմ քեզի. Լևոն Շանթ

1923 օգոստոս 9
Մոնպելիե

173. ԱՐՏԱՇԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

Մոնպելիե, 1923, սեպտ. 26

Սիրելի՛ Արտաշես[1]:

Անչափ չնորհակալ եմ թե՛ քու համակրական տողերուդ համար և թե՛ քննադատութիւնդ, և ուրախ եմ չատ, որ գրածներս ընդհանուր առումով լավ կը գտնես:

«Անհավասարութեան»[2] և «Մտավորականութեան»[3] օրաթերթի համար չատ հարմար չըլլալը ես ալ գիտեմ, ինչպես ընդհանրապես իմ բոլոր մինչև հիմա քեզի ղրկած նյութերս: Ես դժգոհ չեմ, իհարկե, որ վճռեր ես այդ երկուքն ալ ամսագրին մեջ տպելու: Միայն ցավը հոն է, որ ես կարծելով, թե ատոնք տպվելու են օրաթերթին մեջ, վերջին չաբաթները չտապ ամսագրին համար նյութ պատրաստելու վրա էի, ըստ քու նախորդ նամակի տված խորհուրդին: Այնպես որ, հիմա «Մտավորականութեան» չարունակութիւնը քեզի հասցնելու անկարող եմ նոյեմբերի թվին համար: Ներփակ կ'ուղարկեմ պատրաստած նյութս՝ «Կրթութեան էութիւնն ու տեսակները» նոյեմբեր ամսվան համար[4]: Ղրկածս ամբողջ նյութիս կեսն է. հաջորդ կեսը կը չանամ հասցնելու դեկտեմբերի թվին համար, եթե ղրկածս տպվի ամբողջովին:

«Մտավորականութեան» ձեռքդ եղած կտորները պահե՛, մինչև լրացնեմ մնացած մասերու սրբագրութիւնը և կը տպես վերջը «Կրթութենեն» եռքը: Իսկ օրաթերթի համար փորձելու եմ փոքր պատկերներ ու տպավորութիւններ, կենսագրական, կիսաբանասիրական գրվածներ, գուցե և մեկ-երկու զուտ լրագրական գրութիւններ[5]: Թե ի՞նչքան պիտի հաջողիմ՝ չգիտեմ, փորձե՛մ, քանի որ ստիպված եմ փորձելու:

Ամսագիրդ քանի կ'երթա՝ կը գեղեցկանա և կը հարստանա և, իմ խորին համոզումով, չատ մեծ դեր է, որ կը կատարե ու պիտի կատարե: Ես միչտ նոր սերունդները ունիմ աչքի առաջ, և բոլոր հույս անոնց վրա է, իսկ այդ սերունդներուն պետք է գիտական ու ազգային կրթութիւն, այսինքն՝ հայ բարձրագույն վարժարան և գիտական ու գեղարվեստական հայ գրականութիւն: Միևնույն է, թե՛ բուն երկրին համար և թե՛ գաղութներուն մեջ:

Բոլոր գլխավոր պաղուքներուն մեջ պետք է հիմնել գոնե մեկ-մեկ հատ բարձր հայ վարժարան, կանգնած պետական նման հաստատութիւններուն հավասար և դեռ բան մըն ալ ավելի, բայց հայ լեզվով և հայ հոգվով. և նորին միայն Դաշնակցութիւնն է, որ արդեն կը ջանա և կրնա ընել: Երկրորդ գինքը գրականութեյան ճամբան է, որով կ'երթա ամսագիրը: Չգիտեմ ուրիշները, բայց գոնե մինք, մեր տանը, մեծովպզտիկով անհամբեր կը սպասենք ամսագրի թիվերուն և գիրքը ձեռքե ձեռք կը խլվի: Ավելի ազդող, ավելի կրթող, ավելի ազգային ոգի ներշնչող և Դաշնակցութեյան համար ալ ամենեն արդար ու ազնիվ պրոպագանդ մղող գրվածներ դժվար է ենթադրել, քան Դաշնակցութեյան անցյալը պատմող այդ պարզ ու շիտակ հուշերը[6]: Գոնե իմ տղոցս վրա կը տեսնեմ անոնց թողած հետաքրքրութիւնն ու տպավորութիւնը: Անցած օրը քովի սենյակեն ականջիս հասավ նախադասութեյան կտոր մը, որ ինծի երկար մտածել տվավ.

«Եվ մենք որ ոչինչ չգիտեի՞նք այդ բոլորի մասին»:

Եվ ասիկա ըսողը իմ տղաս է իմ տանս մեջ, ուր, իհարկե, անհամեմատ ավելի առիթներ է ունեցեր շատ բան լսելու, և տուն մը, ուր հայ գիրք ու հայու մասին գիրք կա:

Մեր երիտասարդութիւնը չգիտե կատարվածը, չգիտե իրականութիւնը, չէ զգացած մեծութիւնը, խորութիւնը, ազնվութիւնը և կարևորութիւնը մեր մոտակա անցյալի. ինչքան մոտիկ ճանչնա, այնքան խորը կը սիրե, այնքան խորը կը նվիրվի: Օրինակը վարակիչ է և այսօրը կրնա հիմնվեր միայն երեկվան վրա:

Բայց վերջացնե՛մ. կը վախնամ նամակս հանկարծ հոդվածի վերածվի:

Բեզի ու Նատիային սրտագին բարևներ:

Լևոն Շանթ

174. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, նամակդ ստացեր եմ վաղուց, բայց պատասխանը դիտմամբ կ'ուշացնեի, որ քիչ մը ավելի հանգիստ ժամանակ ու հանգիստ տրամադրութիւն ունենամ քեզի ավելի երկար գրելու համար. չեղա՛վ. և հիմա ալ որ կը գրեմ, կը գրեմ միայն դրամ խնդրելու համար:

Շատ հիմար դրուժյան մէջ եմ, եթէ հնար ունիս փոխադրե ինծի անմիջապես հինգ-վեց հարիւր ֆրանսական ֆրանկ: Մինչև երկու շաբաթ «Հայրենիքեն» հուսս ունիմ դրամ ստանալու, իսկույն կը վերադարձնեմ քու ղրկած դրամիդ կեսը, մյուս կեսն ալ կը վերադարձնեմ քեզի հաջորդ ամսին. դիտեմ, որ քու ապրուստդ ալ ծայրը ծայրին է: Ամերիկայեն ստացածս արդեն անբավարար է իմ ամենահամեստ ծախքերուս, բայց երբ այսպես ղրկելիքնին կ'ուշացնին չաբաթներով, ինծի կը դնին բոլորովին խայտառակ դրուժյան մէջ:

Ջերմ կարոտով կը համբուրեմ քեզի և կ'ըսպասեմ նամակիդ, որ կը հուսամ իմինիս պես երկու տող չըլլար: *Լևոն Շանթ*

1923 Հոկտ. 31

Մոնպելիե

Ո՞ւր է հիմա Բարսեղյանը, գրած էիր, որ գալու է ժընև:

175. ԱՐՏԱՇԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

Մոնպելիե, 1923, նոյեմբեր 8

Սիրելի՛ Արտաշես:

Ինչքան չնորհակալ եմ քեզմե քու «կամքիդ ու ճիգերուդ» համար, այնքան ցաված եմ «Հայրենիքեն» «այս անգամ ալ 60 տողերեն ավելի ղրկել չկրնալուն» համար: Հարցը հոն է, որ բացի ավելի ղրկել չկրնալե, նաև չա՛տ ուշ կը ղրկվի: Իսկ ես ուրիշ կողմե միջոց չունիմ, որ այդպես երեք չաբաթ ուշացմանը դիմանալ կարողանամ: Այս վերջին տասնհինգ օրը ձեռքս բնա՛վ դրամ չունեի, նույնիսկ առօրյա սնունդի պետքերուն համար: Չէ՞ որ ամոթ է և՛ ինծի համար, և՛ «Հայրենիք»-ի: Կը խնդրեմ, այս նամակս ստանալուդ պես ինծի իսկույն դրամ փոխադրել տաս, արդեն լրացած կ'ըլլա ղրկածիդ ամիսը, և կը խնդրեմ կարելիին չափ խոշոր գումար մը, որ չուրջս դիզված և անհետաձգելի ղպրոցական և այլ պահանջներուն բավարարել կարողանամ: Վերջապես, բավականին նյութ ղրկած եմ արդեն և չարունակ ալ ղրկելու վրա եմ, ավելի լուրջ գումարի մը սպասելու իրավունքը ունենալու համար:

Ներփակ կը ղրկեմ օրաթերթի համար 5 հոդված[1]: Ջանացի, որ ամեն մեկը ինքն իր մեջ ամբողջություն մը կազմե առանձին վերնա-

պրով. բայց բոլորը միասին կը պատնան այն հիմնական հարցին շուրջը՝ «Հայերեն գիրք»: Հարցը իմ աչքիս շատ մեծ կարևորություն և սոխզոզականություն ունի, սաոր Համար ալ պարտք զգացի մեջտեղ դնելու: Անչա՛փ ուրախ պիտի ըլլամ, եթե ուրիշներ ալ ձայն բարձրացնեն, և մանավանդ եթե Հայրապետի գործնական ճամբու մը վրա դնելու:

«Կրթության» երկրորդ մասը քեզի ղրկած եմ արդեն վաղուց և, երևի, հիմա չարվելու վրա է: Հիմա մտադիր եմ ամսագրի հաջորդ համարին հասցնելու «Մտավորականության» չարունակությունը, այլև քանի մը մանր հոդվածներ օրաթերթին համար, որը չարունակ խորհուրդ կու տաս ինծի:

Մանր հոդվածներու դժվարությունը նյութն է, սիրելի՛ս:

Բազաքական դրության մասին կարելի է գրել կարճ ու օրը օրին, բան մը, որ դուք հոս կ'ընենք ամեն օր և իմ հոսկե ղրկելիք հոդվածներուն պետքը չունիք: Կարելի է գրել մանր գրական, փիլիսոփայական, գրախոսական, գիտական տեսության հարցերուն շուրջը, որը, սակայն, շատ բնական կերպով տանիս պիտի ամսագրի, և գրական փոնով գրվածքներու չեմ հանդիպիր օրաթերթին մեջ: Թղթակցություններու ես ինքս հակում չունիմ, մանավանդ որ կենդրոնե և հայ շրջանակե հեռու կ'ապրիմ: Այնպես որ, իմ սիրելի խմբագի՛ր, շատ ուրախ կ'ըլլամ, եթե մտասևոր կերպով մատնանիշ ընես ինծի, թե ինչ տեսակի և ինչ հարցերու և ինչ ուղղությամբ գրություններու մասնավոր կերպով պետք ու պակաս կըզգա «Հայրենիքը»: Գուցե այդ հիշածներուդ մեջը իմ չնորհքիս ու տրամադրություններուս հարմար բաներ գտնեմ և օգտվիլ ու օգնել կարողանամ:

Ինչ կը վերաբերի այդ ձեր Բոսթընի անամոթ Պերպերյանին, ես անոր ո՛չ միայն որևէ իրավունք տված չեմ իմ պիեսներու ներկայացման գործին մեջը մատ խառնելու, այլ իր հետը որևէ հարաբերություն ունենալն պարզապես կը զզվիմ: Ասկե 7-8 տարի առաջ, երբ ես Բազու էի, ղիմած էր ինծի «Հին Աստվածները» հրատարակելու շատ կորրեկտ խնդիրքով մը և խնդրած էր պայմաններս: Իրեն պատասխանեցի, որ համաձայն եմ իր հրատարակության, եթե հրատարակության անվանական արժեքի մեկ երրորդը ինծի վճարվի, և նախապե՛ս, գիրքը լույս տեսած օրեն վեց ամսվա ընթացքին: Խնդրելով որ, եթե համաձայն է ղրած պայմաններուս, ինծի անմիջապես

տեղեկացնե, այլև Հայտնե քանի՞ օրինակ տպած ըլլալը: Ո՛չ մեկ պատասխան չտվավ: Գրքերը տպեր է[2], կնոջս ուղարկեր է երկու հարյուր Ֆրանկ, և վերջացավ: Իսկ գրքիս ճակատը ամենախայտառակ կերպով տպագրեր է իր չարչիի ու մուրացկանի հոգեբանությամբ, թե արդյունքի մեկ երրորդը հատկացված է հեղինակին: Եվ այս բոլորեն ետքը ինծի ոչինչ չէ ղրկած, և վերջերս իրեն գրած ապահովագրած նամակիս ալ պատասխան անգամ չէ տված: Ու հիմա ալ ահա՛ այդ նո՛ր պատմությունը: Մարդը իսկապես որ բավական հաստ երեսի կաշի է ունենալու:

Ես մեծ սիրով կ'ուզեի, որ մեր ընկերներեն մեկը դիմումով, դատարանով կամ ուրիշ միջոցով առնել կարողանար այդ անպիտան մարդուն ձեռքեն իմ իրավունքս. և կորսված դրամս չէ այնքան չարացնող, որքան իր ցած ու աներես վարմունքը: Այս բոլորի մասին մինչև հիմա ես ոչինչ չգրեցի քեզի, որովհետև առանց այդ ալ շատ եմ զբաղեցուցած քեզի իմ անձնական հարցերովս: Բայց քանի որ հիմա խնդիրը ինքնին հրապարակ է ինկած, ահա՛ կը խնդրեմ քեզմե, որ ցույց տաս մեր ընկերներեն մեկը, չիտակ բնավորության տեր, գրքի գործե հասկցող և գործնական ջիղ ունեցող, որուն հանձնեմ և՛ այդ Պերպերյանի հետ իմ իրավունքիս խնդիրը կարգադրելու հարցը, ինչպես և՛ թատերականներս ներկայացնելու լիազորությունը, այնպես և «Շղթայվածը» ցրվելու ու ծախելու մասին հոգ քաշելը[3] գուցե և մեկ-երկու գրքերս տպագրելու գործը, ինչպես են «Լեռան աղջիկը», «Կինը», «Կայսրը» և ուրիշներ: Եվ միասին կը պայմանավորվինք, որ իր միջոցով ինծի հասանելիք գումարներեն որոշ տոկոսը պահե իրեն:

Անչա՛փ չնորհակալ կ'ըլլամ, եթե այդ տեսակ հարմար անձի հետ ինծի հարաբերության դնել կարողանաս:

Սրտագին բարևներս քեզի ու Նատիային. ջերմ համբույրներով՝

Լևոն

176. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմո՛ն ջան, երևի զարմացած ես լռությանս վրա, գուցե և կը մեղադրես, որ դրամը ստացա և քեզի տող մը անգամ չի գրեցի. պատճառը, երևակայե՛, որ նորեն այդ անիծած դրամն է. ուզեցի ան-

պատճառ խոսքս պահեմ և քո ուղարկած չորս հարյուր ֆրանկիդ գոնե կեսը վերադարձնեմ քեզի առաջին նամակովս. այդ նպատակով դիմեցի Ամերիկա՝ իմդրելով, որ այս անգամ քիչ մը ավելի ուղարկեն և մանավանդ չուշացնեն: Բայց ստացա նորեն մեծ ուշացումով և պոչը կարճ. այնպես որ կը վերադարձնեմ քեզի միայն հարյուր ֆրանկ այս նամակիս մեջը. մնացածը ամսեամսիս. ուրիշ կերպ անկարող եմ. թեև շատ կը ցավիմ, մանավանդ որ ինքդ ալ պարտք ես վերուցեր ուրիշեն: Այսչափին ալ ուղարկելու անկարող պիտի ըլլայի, եթե Բեկզատյանի ջանքերով նորեն Ծատուրյանը խոստացած չըլլար վեց ամսվան համար ամսական երկու հարյուր հիսուն ֆրանկ: Ուրիշ խոսքով՝ հազիվհազ ծայրը ծայրին կը բերեմ ողորմությամբ: Իսկ վաղվան մասին նորեն նույն անորոշությունը: - Մալխասի մասին գրածդ ինծի համար չափազանց ծանր էր ու անսպասելի. ես ինքը «ջենտլմեն» մարդ եմ համարած, մանավանդ դրամական գործերու մեջ. և շատ կը զարմանամ, որ նամակներուդ չի պատասխաններ, ինծի հետ ալ հարաբերության մտնելու ոչ մեկ փորձ չէ ըրած. բայց արդար ըլլալու համար ավելցնեմ, որ ես ալ իրեն ոչինչ չեմ գրած: - Սաստիկ անախորժ հարց է նաև Քաջազնունիի եփած ապուրը[1]. այդ մարդուն հանդեպ քիչ մը մոտեն շփված օրես ունեցեր եմ մեջս անախորժ զգացում մը. բայց միշտ բնազդս արդարացուցեր եմ իր բնավորության չորությամբը, իր ցից ու ետ մղող էությամբը, բայց հիմա կը տեսնեմ, որ զգացումիս հիմքը շատ ավելի խորն է, քան ես բացատրեր եմ. որովհետև Քաջազնունիի այս վարմունքը ոչ միայն բնավորության արտաքին թերություն է, այլ ուղղակի ներքին վատություն: Քաջազնունին իհարկե որ խորը մտածող ու խորը զգացող մարդ չէ. բայց այն աստիճանի հիմար չէ չհասկընալու համար, որ կուսակցությունները չեն ծնում ու չեն մեռնում մեր հրամանովը, որ Դաշնակցությունը հայ ժողովուրդի ու մտավորականության ուղիղ զարու մը հարատև ջանքերուն ու աչխատանքին արդյունքն է և միակ խոշոր համայնական ստեղծագործությունը վերջին հազար տարիներու ընթացքին, և վերջապես ան շատ լավ գիտե, որ իր գրությամբը ո՛չ Դաշնակցությունը սպաննել կրնա, ո՛չ ալ որևէ մեկուն զգացումը փոխել: Եվ անոր հարվածը ուղղված չէ՛ Դաշնակցության դեմ, ատիկա երևույթն է միայն, անոր չարությունը դաշնակցականներուն դեմ է, ղեկավարության, մեր աչքի ընկնող ընկերներուն, բոլորը միասին առած. անիկա զգացեր է միշտ,

որ իր ընկերներուն մեջ սեր ու զգացում չկա դեպի ինքը, զգացեր է միշտ իր ընկերներու կես-հեգնոտ ու կես- բացասական վերաբերումը իր անձին ու բարքին դեմ, իր բնավորության՝ չնայելով արտաքին հարգանքին: Քանի դեր և ուժ ունեինք՝ այդ բոլորը կը տաներ, կը հարմարվեր, գուցե և այնքան ալ զգալի չէր. մեր պարտությունը այլևս ավելորդ դարձուց իր լռությունն ու համակերպումը, և ահա՛ զարկավ քացին իրեն անախորժ եղող մարդոց, որոնց հետ արդեն կապ չուներ հոգեկան, մենք օտարներ էինք իրեն համար և որոշ աստիճանի հակառակորդներ: Իր հեռացումը ես կը հասկընամ և կ'ըմբռնեմ նաև, որ դաշնակցական ընկերներու չրջանակին մեջ ինքզինքը խորթ կ'զգար. վատությունը հոն է, որ փոխանակ կտրվելու ու քաշվելու, զարնել ուզեց, իր «ուժը» և իր «խելացիությունն» ու «բացառիկությունը» դրավ հրապարակ ի ցույց. ազնիվ հոգիի գծեր չեն ասոնք, ո՛չ ալ նուրբ հոգիի վարմունք: Եզրակացությունը՝ բոլորովին անիմաստ ազմուկ. և իր քացին օդին տված քացի է, բացի ինքզինքը ծիծաղելի և անարժեք դարձնելե ուրիշ ոչինչի չի ծառայեր: - Կը հուսամ նոր նամակիդ մեջ ավելի ախորժելի և ավելի կարևոր նորություններ ունենաս ինծի հաղորդելու. երկրեն եկած ինչ լուրեր կան. Դրո՞ն ինչու համար է Եվրոպա[2]. և վերջապես դո՞ւն ինչ բանի ես: Քեզի, տիկնոջդ ու փոքրիկիդ ամենաջերմ չնորհավորանքներ նոր տարվան առիթով. նույնպես տո՛ւր բարևներս հոտ եղող մեր ընկերներուն: Սիրով ու կարոտով կը համբուրեմ քեզի ջերմորեն. *Լևոն Շանթ*

1923 դեկտ. 27

Մոնպելիե

Արդարությանը միշտ Բերլի՞ն է. վաղուց է իրմեն լուր չունիմ. նամակս թողեց անպատասխան. գուցե հասցեն սխալ էի գրած կամ հին էր. հայտնե ինծի իր հասցեն, եթե գիտես:

1924

177. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմո՛ն ջան, Արմենի նամակեն կ'իմանաս մանրամասնությունը. իմ միակ հենարանս «Հայրենիքն» էր մինչև հիմա. այժմ մնացեր եմ անգործ ու անապրուստ: Գիտե՛մ, սիրելի՛ս, որ խորհուրդ մը եթե տալ

կարողանայիր, չէիր սպասեր իմ նամակիս. բայց և այնպես կը գրեմ քեզի նորեն այս տողերը, որ հարցնես ու հետաքրքրվիս, քանի որ Փարիզ ես հիմա և զանազան տեսակի մարդոց ես հանդիպելու, գուցե որևէ գործ մը մատնանիշ ընել կարողանա մեկը: Գիտցած եղիր, որ ընտրության ո՛չ ժամանակ ունիմ և ո՛չ հնար և սիրով պատրաստ եմ հանձն առնելու ամեն աշխատանք, որ իմ կարողութենես վեր չէ. խնդիրը ճարելն է:

Կը հասկընաս, որ հոգեկան ծանր տրամադրության տակ եմ և ուրախ խոսք մը չունիմ սիրտդ քիչ մը բանալու: Բայց միշտ սիրով ու կարոտով կը համբուրեմ քեզի.

Լևոն Շանթ

1924 հունվար 18
Մոնպելիե

178. ԱՐՏԱՇԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

Մոնպելիե, 1924, փետր. 13

Սիրելի՛ Արտաշես:

Անչափ չնորհակալ եմ քու հոգածութենեդ ու չանքերեդ. և ինծի համար կրկնակի քաղցր է, որ դուն այդ բոլորը մտածեր ես և վճռեր առանց իմ նամակս ստացած ըլլալու:

Նմանապես չատ ուրախ եմ, որ մտադիր ես «Մեր անկախությունն» ու «Կեդրոնացումները» միասին առանձին հատորով մը հրատարակելու: Նախ ես այն համեստ համոզումին եմ, որ այդ գիրքը կրնա ծառայություն մը մատուցանել մեր պաշտպանած դատի պրոպագանդին, երկրորդ՝ գուցե բերե ինծի մեկ-երկու հարյուր տոլարի հավելվածական եկամուտ մը, որ կը դառնա ինծի համար մեծ թեթևություն: Ուրախ եմ, որ կը խոստանաս չարունակելու դոնե այդ ամսական 50 տոլարը: Ես քու նախորդ նամակիդ վրա անմիջապես դիմեցի իմ մեկ-երկու ծանոթներուն՝ խնդրելով որևէ աշխատանք: Մինչև հիմա ո՛չ մեկ դրական պատասխան չունիմ և այդ դրական պատասխանը ստանալու ալ հույս չունիմ. ինչ ըսել կ'ուզե, որ այս տարիքիս ու իմ այս տրամադրություններես մեծ հրապույր մը չունի

ինծի համար կողմնակի գործերով պարապիլը, բայց ինչպես գրած եմ, պատրաստ եմ հանձն առնելու ամեն գործ, ինչ որ հարկի: Եվ ահա՛ ինծի նորեն հույս կու տաս հին աշխատանքս շարունակելու:

Այս ամիսեն ավելի է, ես ոչինչ գրած չեմ, շատ խառնակ հոգեկան վիճակի մեջ էի. հիմա ալ քիչ մը տկար եմ և ջղայնոտ: Կը հուսամ մինչև շաբաթ մը կարդի մտնեմ նորեն և վերսկսիմ աշխատութիւններս «Հայրենիք»-ի համար: Գրական պատրաստ ոչինչ չունիմ և գրելն ալ դժվար է, որովհետև ավելի ազատ սրամտրութիւն և ավելի ժամանակի կորուստ կը պահանջե. չգիտես՝ մտածածդեդ ի՞նչ պիտի գրես կամ բան պիտի գրես գա՞: Համենայն դեպս աշխատելու եմ և այդ ուղղութեամբ: Ծրագրիս մեջ կան նաև հոդվածներ թե՛ գրականութեան չուրջը և թե՛ կրթութեան[2]: Ինծի մասնավորապես կը հետաքրքրե ժողովուրդի կրթութեան հարցը: Նմանապես կը մտածեմ մե՛ր կուսակցութիւններու մասին մեկ-երկու հոդված առաջնորդվելով զգալիարներեն, որ արծարծած եմ իմ «Ժողովուրդ ու մտավորականութիւն» գրվածքի վերջին գլխուն մեջ: Մեկ խոսքով՝ ծրագիրներ շատ, բայց մեջտեղը գրական դեռ ոչինչ չկա:

Շատ դժբախտ ժողովուրդ ենք, եղբա՛յր. աշխատող մարդիկ ընդհանրապես քիչ ունինք, իսկ աշխատիլ ուզողներն ալ աշխատելու հնարավորութիւն չունին:

Ֆրաձնունիի մասին գրքույկը սատցած եմ[3] ու չնորհակալ, արդեն կարդացած էի, իհարկե, «Հայրենիք»-ներուն մեջ: Գրածդ շատ լավն է ու շատ ճիշտ: Բայց հետզհետե ինծի այնպես կը թվի, որ մենք այդ մարդու թե՛ ազնվութեան և թե՛ խելացիութեան մասին ավելի բարձր համարում ենք ունեցած, և դեռ շատերը ունին, քան իսկապես ինքը կ'արժե: Ինծի համար անիկա եղած է միշտ չոր մարդ և շատ անհրապույր բնավորութիւն. իսկ իր վերջին վարմունքը ցույց կու տա, որ ան ո՛չ միայն չոր, այլև չար մարդ է. և իր գրվիչները շատ ավելի տգեղ են, քան դուն և մեր մյուս ընկերները կը ներկայացնեք: Վերջապես, «Աստված իր հետ», ինչպես կ'ըսե ռուսը: Մեր մեծեն ու փոքրեն քեզի սրտագին բարևներ՝

Լևոն Շանթ

179. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, քու նամակդ ամիսեն ավելի է դրված է սեղանիս վրա, կը նայիմ հաճախ կարոտով, բայց պատասխանելու չէի չտապեր. իմ առողջությունս առայժմ ոչինչ, բայց չաբաթներե ի վեր հիվանդ է Ջավոն. հիմա կիսովին ոտի է արդեն, թեև դեռ առողջ չէ. այնպես որ թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես հոգնած եմ սաստիկ: Գալով դրամական վիճակիս՝ Արտաշեսը ուղարկած հոդվածներուս հաշվին երկու անգամ ղրկած է ինծի հիսունական տոլար, նաև խոստացած է ասկե ետքն ալ «ընել ամեն իր ձեռքեն եկածը», բայց ցավն այն է, որ հիմա ե՛ս եմ առայժմ աշխատելու անկարող վիճակի մեջ: Վերջին երկու ամիսը ոչինչ չեմ գրած և դեռ հիմա ալ չեմ կրցած վերսկսիլ կանոնավոր աշխատանքի. առաջիկա ամիսներու համար հույս ղրեր եմ Փարիզի ներկայացման վրա[1]*, թեև ճշմարիտ չգիտեմ ինչ է դուրս գալու: Գրած էիր Կիպրոսի որբանոցի տեսչության մասին. ըսելն ալ ավելորդ է, որ մեծ սիրով հանձն կ'առնեմ, եթե ինծի այդ ուղղությամբ որևէ առաջարկ ըլլա. միայն կը վախնամ, որ կրկնվի անցյալ տարվան Եգիպտոսի պատմությունը*[2]*. Համենայն դեպս մինչև հիմա բացի քու գրած երկու տողեդ ուրիշ ոչ մեկ տեղե լուր ու տեղեկություն չունիմ: Ես հիմա մեծ կարոտ ու պահանջ ունիմ կենդանի գործի մը և ընկերական շրջանի. Կիպրոսի ու իր կազմվող որբանոցի մասին թեև կարգին տեղեկություն չունիմ, բայց ինծի կը թվի, որ եթե քանի մը զաղափարակից մարդիկ հավաքվինք՝ ամեն տեսակետե չատ լուրջ գործ կարելի է ստեղծել. բայց մի՞թե կը կարծես, որ Համաճայնին այդ դպրոցն ու որբանոցը դաշնակցականներու ձեռքը թողվելու. խելքիս մոտիկ չէ:*

Ինծի մտահոգություն պատճառեց քու գլխուդ ցավերը. ըստ երևույթին հիմա ավելի առողջ ես և բոլոր հոգովս կը մաղթեմ, որ այդպես ըլլա: Բայց պետք չէ, որ ուժերդ չարաչար գործածես և պետք է զգուշ ըլլաս միշտ, դուն ստամոքսի տկարություն ալ ունեիր, չգիտեմ ինչպես ես հիմա այդ կողմեն: Թեթև ու անփույթ մի վերաբերվիր, ամեն բան կարելի է տանել, երբ մարդ առողջ է, իսկ առանց առողջության անպետք ենք ամեն բանի: Տևեճիին կու տաս իմ սրտագին ու կարոտագին բարևներս. ազատ վայրկյանիդ եթե կարող ըլլաս ինծի

քանի մը տող գրելու՝ անչափ ուրախ կ'ըլլամ: Քեզի բարի ճանապարհ, սիրելի՛ս, հաջողություն և առողջություն:

Ջերմ կարոտով՝ Լևոն Շանթ

1924 ապրիլ 14

Մոնպելիե

180. ԱՐՏԱՇԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

Մարսիլիա, 1924, նոյեմբեր 3

Սիրելի՛ Արտաշես:

Կը չտապեմ պատասխանելու, որ վաղը չէ մյուս օրը կը բացվի մեր դպրոցը[1]. Նախնական պատրաստությունները ավարտած են և ուսուցչական կազմը պատրաստ: Գալով առաջարկածդ տղան ընտանիքիս մեջ պահելու և կրթությանն ու դաստիարակությանը հետևելու խնդրին՝ կը հայտնեմ, որ այդ առաջարկդ ալ սիրով կ'ընդունիմ, մանավանդ որ կը համապատասխանե իմ դիտավորությանս և վաղվան ծրագիրներուս: Կը մտածեմ ո՛չ թե հատ մը, այլ քանի մը տղա վերցնեմ հիմա իմ մոտս, իմ հսկողությանս տակ, որոնք սորվին մեր դպրոցին մեջ: Իսկ մոտ ապագային հաւմար ծրագիրս է մեկ-երկու կարող ընկերներու հետ բանալ հոս բարձրագույն հայ վարժարան մը 16-20 տարեկաններու համար երեք տարվա դասընթացքով և երեք ճյուղով՝ գիտական-առևտրական, գիտական-գյուղացիական և գրական-մանկավարժական: Դպրոցը պիտի ըլլա գիշերօթիկ, որպեսզի ամեն կողմե գալ կարողանան:

Այս բոլորը կը գրեմ միայն քեզի համար, սիրելի՛ս, չըլլա թե մամուլի մեջ ակնարկություն ընես. չեզած բանի մասին խոսվիլը անախորժ է:

Քու առաջարկած 50 տոլարի պայմանը բավարար է. իսկ իմ երկրորդ պայմանս է, որ եկող տղան աչքի, քթի, սեռական կամ այլ որևէ հիվանդություն չունենա: Եկողը պիտի ապրի տանս մեջ, իմ տղաքներուս հետ և կրնաս հասկընալ իմ մտահոգությունս այդ մասին: Անշուշտ կը հայտնես ինծի անմիջապես, եթե տղուն հայրը իր որոշումը տա: Եվ ընդհանրապես աչքի առաջ ունեցի՛ր իմ դիտավորությունս: Հոսկե գրած նախորդ նամակս անշուշտ ստացած ես արդեն:

Սրտագին բարևներս քեզի ու Նատիային: Համբույրներով՝
Լևոն Շանթ

Հ. Գ. Կը կարծե՞ս, որ իմ այդ հայ բարձրագույն վարժարանի ծրագիրս հաջողություն ունենա ձեր ամերիկյան հայության պահանջներուն ու պայմաններուն տեսակետեն: Մասնավորապես, ի՞նչ կը կարծես, քանի՞ աշակերտի վրա հույս կրնամ դնել, որոնք Ամերիկայեն են գալու, կամ որոնց ծնողքը Ամերիկա են, կամ որոնց ծախքերը Ամերիկայեն են հոգացվելու: Ահա՛ քեզի թվաբանական խնդիր մը, վայրկյան մը վրան մտածե: Եվ արժե՛, որ վրան մտածես, որովհետև ծրագիրս ազգային ու հանրայինն խոշոր կարևորություն ունեցող նպատակի մը կը ձգտի: Հարցը ունի նաև իր ներքին խորը կուսակցական արժեքը: Ջու կարծիքդ, որ հավանորեն իր մեջը խտացած ունենալու է նաև մեր քիչ մը ավելի խորը տեսնող ընկերներու կարծիքը, ինծի համար մասնավորապես գնահատելի է:

1925

181. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Պարոն Արշակ Զոպանյանին

Հարգելի՛ բարեկամ, պարոն Սահաթճյանը հայտնեց ինծի, որ զարմացած եք Ձեր Հոբելյանի առիթով[1] իմ մեջտեղ չերևնալես: Ճշմարիտն այն է, որ Ձեր հանդեսի կատարվելու գիշերը միայն իմացա, թե այդ օրն է, որ կը տոնվի Ձեր հոբելյանը և անկարող եղա անմիջական մասնակցության: Իսկ վերջն ալ քիչ մը անհարմար զգացի ուշացած կերպով ասպարեզ գալու, մանավանդ որ կը մտածեի, թե Ձեր գրական հանդեսի հարուստ շքախումբին մեջ դուք հազիվ թե նչմարեիք իմ բացակայությունս: Բայց հիմա որ բռնվեր եմ հանցանքիս մեջ՝ կը մնա, որ պարզապես խոստովանիմ անչնորհքությունս և սրտանց չնորհավորեմ Ձեր գրական տոնն ու հաջողությունը:

Դուք և ես նույն սերունդին կը պատկանինք. և Ձեր ու իմ աստղերը, թեև տարբեր համաստեղություններու մեջ, բայց միշտ թափա-

ած են նո՛ւյն երկնքին տակ. և այդ երկնքի կապույտը չաղաղված է «գեղարվեստ» և «Հայուհիյուն» գաղափարներու ձուլումեն: Ձեր տղա օրերու առաջին փորձերեն մինչև հիմա ես հետաքրքրուհիյամբ կարդացած եմ Ձեր ստորագրուհիյունը կրող ամեն երկ, ինչ որ ձեռքս հասեր է մեր այս ցրիվ ու աստանդական կյանքին մեջ. կը ճանչնամ Ձեր հարատև ու արդյունավոր աշխատանքը գրական-գեղարվեստական-քննադատական մարզերուն մեջ և հատկապես անփոխարինելի կը համարեմ Ձեր ազնիվ ջանքերը, երբ հայ ժողովուրդի հոգիին բարձր ու իսկական արտահայտուհիյունը եղող ստեղծագործուհիյունները օտարներուն ծանոթացնելու կը ճգնիք և ի՜նչ հաջող ու պատվավոր կերպով:

Կը սեղմեմ Ձեր ձեռքը, կը ցանկամ Ձեզի առողջ ու երկար կյանք և բոլոր սրտովս կը մաղթեմ, որ գտնե ասկե ետքը հնար ունենաք Ձեր բոլոր ուժերը նվիրելու ամբողջովին Ձեր գրական-գեղարվեստական աշխատուհիյուններուն, ուր այնքա՜ն բեղմնավոր է Ձեր գրիչը և արդյունքը մնայուն:

Ձեր հոբելյանին առիթով Ձեզի հղած չնորհավորուհիյուններու հետ կը խնդրեմ որ ընդունիք նաև հարգանքս ու բարևներս:

Լևոն Շանթ

1925 հունվար 23
Մարսեյլ

182. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, նամակդ ստացա ուրբաթ իրիկուն. անկարելի էր, որ շաբաթ օրը պատասխանս հասներ ձեռքդ. վրան ավելցո՛ւր, որ թե՛ ես և թե՛ Ջավոն հիվանդ էինք. այնպես որ այսօր միայն հնար ունեցա քեզի գրելու:

Ուզած գրքերեդ միայն «Լուսաբերի» Դ. տարիեն հատ մը ունիմ ձեռքս, արևմտյան բարբառով. եթե գործիդ կուզա՝ գրե՛ իսկույն ըրկեմ քեզի: Իսկ արևելյան բարբառով բոլոր տարինները պարոն Շամլիի որդու մոտ պիտի գտնվի, ես երկու տարի առաջ ղրկած եմ Համլիկին[1] այդ նպատակով: «Հայ գրողները»[2] մեր դպրոցի համար մենք ալ կը փնտրենք, բայց չատ դժվար ճարելու բան է: «Հայոց պատմուհիյունը»

ամենեն լավն ու հարմարը Վենետիկի հրատարակածն է Մովսեսյանի (թե՞ Տեր-Մովսեսյանի)[3], բերե՛լ տուր: Թվաբանութիւնը փրանսերեն գրքով պետք է անցնիս, որովհետև կարևորը խնդիրներն են, իսկ Պոլսի հրատարակութիւնները բոլորը օխայի ու ղուրուչի հաշիվով է. իսկ աշխարհագրութիւն ու պատմութիւն մենք ստիպված ենք բանավոր անցնելու՝ հարմարվելով մեր արդի պայմաններուն և օգտվելով փրանսերեն գրքերե: Այնպես որ դժբաղդաբար քու պետքիդ օգնութիւն գալու անկարող եմ:

Քու «լծվելուդ» մասին ես արդեն վաղուց գիտեի, գիտեի նույնիսկ ամառնենե, թեև կ'ըսեիր, թե պետք է քաշվիս: Դուն ու Ռուբենը խոտաափել չէիք կրնար[4]. և արդեն պետք ալ չէ որ խոտաափեք, ինչքան ալ որ անձնական-ընտանեկան պայմանները իրենց հարկադրանքը դնին: Ես կը չնորհավորեմ քու լծվիլդ: Ուրեմն տեղավորվիք պիտի Փարիզ. ինչքա՜ն լավ կ'ըլլար, որ ես ալ հիմա Փարիզ ըլլայի: Կը հարցնես իմ արդի պայմաններս. ի՞նչ ըսեմ, ի՞նչ կրնա ըլլար մարդու մը պայմանը, երբ եկամուտը բոլոր չիտակ ու ծուռ աղբյուրները միասին հաշված հազար ֆրանկ է ընդամենը, իսկ ծախքը գրեթե ատոր կրկնապատիկը. հոս ծախքերնիս չատ ավելի է՝ ծախքերու բոլոր ճյուղերուն մեջ: Այս պայմաններուն մեջ ծայրը ծայրին բերելը բավական դժվար արվեստ է, նույնիսկ պարտքերու ամեն տեսակներն ալ եթե օգնութեան կանչելու ըլլաս: Դպրոցը ոտքի հանած ենք արդեն ու կը քալե, բայց դրամական միջոցները չա՛տ են վերացական ու խախուտ. ամեն ամսու գլուխ չգիտես՝ հաջորդ ամիս կա՞, թե ոչ. գնչ-աղեկ քանի մը ամիս պիտի քաչքշվինք, իսկ անկե անդին ճշմարիտ որ չգիտեմ: Հավանորեն նոր գաղութային ընտրութիւններ են ըլլալու, մարդիկներ պիտի երթան, մարդիկներ պիտի գան, բայց իրերու վիճակը այդ բոլոր իրարանցումեն հազիվ թե փոխվի. դպրոցը որ անգամ մը բացված է, իհարկե կերպ մը պիտի չարունակե ապրիլը, բայց միշտ երերուն ու օրը օրին, ինչպես որ է ընդհանրապես ամեն տեղ մեր գաղութային-ազգային դպրոցներուն պատկերը:

Գործը լուրջ կը դառնա միայն անհատական ձեռնարկութեամբ, լուրջ ու առողջ, որը սակայն խոշոր դրամագլուխ կը պահանջե, ինչպես որ ծրագրած ենք քեզի հետ. բայց դուն որ հիմա վերջնապես կապված ես, և որ պետք եղած հոս հազարներն ալ չկան, իհարկե այդ մասին մտածելը այլևս իմաստ չունի: Հոս կարելի է չատ հաջող կերպով

բանալ մասնավոր վարժարան մը փոքրերու համար, մեծ պահանջ կա, շատ օգտակար գործ է և աշխատանքն ալ կը վարձատրե, ինչքան ալ համեստ ըլլա այդ վարձատրությունը: Ես հաշվեցի ամեն ուղղությամբ համեստ ձեռնարկի մասին, բայց նորեն պետք կա դրամագլխի. ինքնին մեծ գումար չէ, բայց ինծի համար հիմա անկարելի է. պետք է գոնե 12-15.000 ֆրանք մը բնակարանի, կահերու և նախապատրաստական նման ծախքերու համար: Մեր արդի ազգային դպրոցը հեռու է բուն հայ բնակչության կեդրոնեն և միայն չորս դասարան ունի՝ միջին տարիները, որով մանկապարտեզին և փոքր դասարաններու քանի մը հարյուր աշակերտուհյուն չի կրնար օգտվիր մեր դպրոցեն, իսկ ծնողները շատ կը ցանկային դուրս դրկեն երեխաները իրենց նեղ սենյակներեն ու անհարմար բնակարաններեն, մանավանդ իրենց աշխատանքի ժամերուն. արդեն ծնողներեն շատերն ալ գործարան կ'երթան: Պիտանի գործ է, կը հասկնամ, բայց ձեռնարկել չեմ կրնար: Մոտածելի դիմեմ ամենեն երկրորդական ու ամենեն նվազ հանրային միջոցի մը, որ կրնամ փորձեր առանց մասնավոր դրամագլխի օգնության իմ անդամալույծ բյուտճես քիչիկ մը ոտքի հանել կարողանալու համար գոնե վայտե նեցուկներու վրա. լրագիրներու մեջ դրկած եմ հայտարարելու, որ քանի մը տղա կ'առնեմ տունս իմ պավակներուս հետ անոնց կրթության հոգը քաշելու. մեծ հավատք մը չունիմ և այս ձեռնարկիս հաջողության, բայց պիտի փորձեմ գոնե խիղճս հանգստացնելու համար:

Այս պայմաններուն մեջ իհարկե ո՛չ դեղարվեստական, ո՛չ ալ հրապարակախոսական աշխատանքներու հնարավորություն չունիմ. գրականությունը կարծես կամաց-կամաց կը դառնա ինծի համար արգիլված աշխատանք. պետք է մտածել միայն հացի մասին: Ես մինչև հիմա նույնիսկ չեմ գրած այն նամակները, որ ես հանձն էի առել գրելու Դաշնակցության երեսունհինգ-ամյակի ժողովածուին նյութ հավաքելու համար. այս դանդաղկոտության պատճառներեն մեկն ալ անշուշտ մեր ընդհանուր ժողովի եզրակացությանը սպասելս էր: Գրե՛ ինծի, ի՞նչ որոշում եղավ այդ մասին, ընթացք տալո՞ւ ենք մեր ծրագրին, ի՞նչ ծավալով և ո՞ր ժամանակվան[5] համար. ամեն ինչ մնացած է մեր ծրագրած սահմանին մե՞ջը, թե որևէ տեսակետեն վիճելության է ենթարկված: Գրե՛, որ ես ալ առոր համեմատ գրեմ վերջապես և կատարեմ ուշացած պարտավորությունս: Երբ վճռված ըլլա լրջորեն ու եռանդով այդ գործին մղում տալը, պիտի առաջարկեի քեզի, որ անգամ

մը քանի մը օրով գայիր Մարսեյլ. քու ներկայությունը հոս չատ կողմերով կրնա օգտակար ըլլար, բայց հիմա ինծի դրդողը այդ հրատարակության գործն է, եթէ իրավ որ գործը ուզքի հանել կ'ուզենք: Այս քանի մը նամակները իհարկե կարելի է գրել և հեռվեն իրարմե զատ. բայց ամեն գործ կենդանի հետաքրքրություն և կենդանի բոց առնելու համար հոգիներու անմիջական կենդանի շփումի կը կարոտի. այսպես անկատ կը մարի և՛ հետաքրքրությունը, և՛ կարևորությունը, և՛ համառությունը, որ անհրաժեշտ է ղնել գործին մեջ: Եվ իհարկե մահացու մեղք չէ, երբ մարդ այդ առիթով քանի մը օր միասին անցընելու հետին ծրագիրները ունենա գլխուն մեկ անկյունը:

Մեր մեծ ու փոքրին սրտագին բարևները քեզի, տիկնոջդ ու «օրիորդիդ». ջերմ համբույրով՝ Լևոն Շանթ

1925 փետր. 24

Մարսեյլ *Հասցես.*

Rue Paradise 492

183. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիմո՛ն ջան, ահա՛ քանի օր է ուշացուցի նամակիդ պատասխանը՝ հուսալով որ կերպ մը տրամադրեմ ինծի և դոնե համառոտ բան մը գրեմ քեզի քու ուզած հարցի մասին. բայց վերջապես եկա այն տխուր եզրակացության, որ անկարող եմ. այս վայրկյանին պոլշևիկներով ու պոլշևիկյան տխմարություններով զբաղվելու բնավ գլուխ չունիմ. հիմա ես իմ գլխիս մեջ ունիմ իմ սեփական պոլշևիզմը. այնպես խրվեր եմ պարտքերու, անփողության, վիճակի անորոշության և օրվա ապրուստի դժվարություններու մեջ, որ չգիտեմ ինչպես եմ տակեն դուրս գալու. մեր դպրոցի վիճակը խախուտ է, վճարածը չնչին ու անկանոն. իսկ իմ բոլոր ձեռնարկներես ու ծրագիրներես ոչինչ դուրս չեկավ, տված հայտարարությունս իմ անպետք աշխատանքներուս վրա նոր անպետք աշխատանք մը ավելցուց՝ տեղեկատու և խորհրդատու Բյուրո: Երբ օր մը գալու ըլլա այն երջանիկ ժամանակը, երբ հնար ունենամ քիչիկ մը ազատ գլուխ ունենալու և ուտելու հացեն ու դպրոցի վճարեն դուրս ուրիշ բաներու մասին ալ մտածելու, կը նստիմ ու կը գրեմ մեր դեպի Մոսկվա առաքելությունը և իմ տպավորու-

թյուններս, իհարկե ո՛չ իբրև պատասխան ստախոս ու ցած Ջիչերինիներու ու Ջիչերինիկներու, այլ անկախ աշխատանք մը ինքն իրեն համար, իբրև հուշեր:

Հիմա քու հարցերուդ պատասխանեմ մեյ-մեկ նախադասութեամբ: 1) Մեր պատվիրակութիւնը[1] ուղարկվեցավ, որովհետև պոլշևիկները արդեն տեր էին Ադրբեջանին և անոնց հետ լեզու մը գտնելը դարձեր էր անհրաժեշտ թե՛ վրացիներուն համար և թե՛ մեզի, *ռուսը նորեն եկեր էր Կովկաս:* 2) Մենք Մոսկվա հասանք այն ժամանակվա հաղորդակցութեան միջոցներու հնարավոր արագութեամբ: 3) Քարախանի հետ համաձայնութեան եկանք բոլոր կետերու վրա. դաշինքը չստորագրվեցավ, որովհետև Բագվի հայ, վրացի և թաթար կոմունիստները բոլոր միջոցներով սկսան ճնշում բանեցնել Մոսկվայի վրա, պահանջելով որ Ղարապաղը, Զանգեզուրը և Նախիջևանը թուրքական հողեր են, անվիճելի թուրքական և Հայաստանի հետ միացնելու խոսք անգամ լինել չի կրնար: Մոսկվան $1^1/_2$ ամիս ժամանակ գործ դրավ իր Բագվի ընկերներու հետ համաձայնութեան մը գալու և տեսնելով, որ անկարելի է, որոշեց բանակցութիւնները տեղափոխել Կովկաս և ուղարկեց Լենինը Բաքու և Հոնկի Երևան: Մենք ո՛չ թե ուշացուցած կամ խանգարած ենք, այլ շարունակ դիմած ու պահանջած ենք, որ չտապեն, որ վերջապես պատասխան մը տան, որ մենք գործ ունինք և այդքան երկար Մոսկվա նստիլ չենք կրնար: 4) Այդ է մեր ուշացման պատճառը. մեր ետ գալն ալ կատարված է այն ժամանակվա հնարավոր արագութեամբ. կրնայինք Բագվով շատ ավելի արագ տեղ հասնիլ, բայց մենք չուզեցանք[2]: 5) Լենինը անձնապես ոչ մեկ դեր չունի, հոն ներսը իրենց մեջ չզիտեմ, թեև ներսն ալ կարծեմ կարևորութիւն ունեցող դեմք մը չէր. մեզի հանդեպ խողովակ մըն էր, որ կը կատարեր կենդրոնեն եկած հրահանգները. հարցերու ըմբռնման մեջ նույն դիրքը ուներ, ինչ որ ուներ Մոսկվան մեզի դեմ. համաձայնութեան գալու չանք մը, Հայաստանեն Թուրքիա անցքը բանալու չանք մը: 6) Լենինի հետ բանակցողը եղեր է մեր պատվիրակութիւնը, որը սակայն միշտ խորհրդակցութիւններ է ունեցեր կառավարութեան հետ, իսկ հիմնական պայմանները ստորագրվելնես առաջ կառավարական խորհուրդին ներկա են եղած և իրենց հավանութիւնն են տված բոլոր կոչակցութիւններու ներկայացուցիչները: Սխա՛լ է, թե համաձայնութեան չեկանք: Լենինի հետ լրիվ համաձայնութիւն գոյացած է. և

երկու կողմեն բոլոր ձևականութիւններով ստորագրված է և՛ հիմնական համաձայնագիրը, և՛ երկու գաղտնի հավելվածները. դեռ քեֆ ալ ենք կատարեր երկու պատվիրակութիւններս միասին մեր աշխատանքներու հաջող ավարտման առիթով: Լրկրանը առավ մեր համաձայնագիրը և գնաց Բագու, «ամեն ջանք ի գործ դնելու», որ ընդունիլ տա իրենց Բագվի ընկերներուն մեր փոխադարձաբար ընդունած կետերը. ուրկե ետքը մեր դաշնագրութիւնը պետք է ստանար մեր կառավարութիւններու վավերացումը և պետք է հայտարարվեր: Եվ այդ բոլորը դարձավ ավելորդ Կարսի անկումով: 7) Ո՞վ է այդ Ա. Կարինյանը. դրական հետաքրքրութիւններով և «Հարուստ» Մոսկվայի մոտերը ապրող երիտասա՞րդ մըն էր. եթե ան է, բարեկամ էր մեզի, իր կողմեն վատ ոչինչ չեմ նկատած. արդեն վատ ի՞նչ կրնար ըներ. խոսք տանի՞լ-բերել. մենք դիտմամբ մեր բոլոր քարտերը բաց էինք պահած. իսկ այն քարտերը, որ բանալ չէինք կրնար, չէինք բացած և ոչ մեկուն: Այդ անունը կա հիշողութեանս մեջ, բայց չեմ հիշեր, թե ով է: Եթե Բագվի խումբին կը պատկաներ՝ կրնա իրենց ժողովներուն մեջ իր դերը ունեցած ըլլալ: Ահա՛ սիրելի՛ս, քու հարցարանիդ կարճ պատասխանները, չգիտեմ բանի մը պիտի ծառայեն թե ոչ այդ հում վիճակին մեջ. ապահով եմ սակայն, որ մնացածը դուն կ՝եփես:

Մեջընդմեջ գրե՛ ինծի. ի՞նչ աստիճանի լրջութիւն ունի Փարիզի մեջ օրաթերթ մը հրատարակելու Բյուրոյի մտադրութիւնը[3], քանի մը կողմերե լսեցի:

Այլև պիտի խնդրեի քեզմե անգամ մը Խատիսյանեն տեղեկանայիր ի՞նչ եղավ Մարկոսյանի կտակի հարցը, արժե՞ որ դեռ հույս կապեմ այդ խնդրին, թե ապարդյուն աշխատանք է, կա՞ այդ կտակի գործադրութիւնը, որևէ մեկը մինչև հիմա ուսե՞ր է այդ հաշվով. 1924-25 թվին որևէ մեկը ընդունվե՞ր է, իբրև նոր սան. և վերջապես առաջիկա տարվան համար ընդունելութիւն կա՞. խելքի մոտի՞կ է, որ իմ տղաս ընդունին, ըլլա Սուրբենը (բժշկութիւն), ըլլա Վիգենը (էլեքտրական էնժինիոր): Խոսե՛ անգամ մը Խատիսյանի հետ և գրե՛ ինծի քու մտածումը: Ես արդեն հույսս կտրեր էի մեր անցած տարվան ըրած դիմումեն, երբ Խատիսյանը Մարսեյլ եղած միջոցին նորեն հույս ճգեց մեջս. և հիմա չգիտեմ ինչ մտածեմ:

Շատ ու շատ բարևներ քեզի, տիկնոջդ ու մեր ընկերներուն. համբույրներով՝ Լևոն Շանթ

1925 մայիս 20, Մարսեյլ

Հ. Գ. Աչոտը[4] հոսկե անցնելու ժամանակ ըսեր է, որ դուն մեզի ուղարկելու ես իր լուսանկարը. եթե ունիս ձեռքդ՝ ղրկե՛. տղաքս կը խնդրեն:

Հասցես է՝ ո՛ւշ դարձուր.

Rue Paradise 492, Marseille

184. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, ամենեն առաջ կետ-կետ պատասխանեմ ուղած հարցերուդ, թեև ատոնցմե մեկ քանիին կարծեմ անցած նամակիս մեջ պատասխանած էի:

1. Մենք Վլադիկավկաս հասանք թե չէ, ներկայացանք տեղի բոլշևիկյան բարձր իշխանութեյան, հասկցուցինք մեր ով և ինչացու ըլլալը և խնդրեցինք, որ մեզի վագոն տրամադրվի. որովհետև այդ երջանիկ օրերուն բոլշևիկյան թագավորութեյան մեջ մեր արդի իմաստով ո՛չ գնացքներ կային կանոնավոր երթևեկով, ո՛չ ճամբորդ իր ազատ կամքի, ո՛չ ալ գնովի տոմսակ, ո՛չ ալ երթևեկող գնացքներուն մեջ տեղ ու վագոն. տեղ ունենալու համար կառավարութենեն պետք էր հատուկ իրավունք և կարգադրություն. մինչև Մոսկվա հեռագրվեց, մինչև պատասխան եկավ, մինչև վագոնի կարգադրություն եղավ, անցան քանի մը օրեր. եթե մենք ալ մեր քեֆի համար կլրակի օր մը ավելի մնացինք կամ պակաս, ան ալ արդեն չեմ հիշեր: Նույն պատմութեյունը նաև Րոստով. հոն մեկ-երկու օր դուցե կարողանայինք ավելի արագ շարժվիլ. Տերտերյանի եղբայրը նոր մեռեր էր թիֆեն և ընկերս պետք է անգամ մը իրենց դյուղը երթար ու գար: Բայց այդպես օր մը ավելի շուտ կամ օր մը ավելի ուշի հարցը չկար մեր առջևը դրած. մենք ո՛չ վայրկյան մը ավելի շուտ հասնելու տենդն ենք ունեցեր, ո՛չ ալ ավելորդ ժամանակ ենք վատներ, և ընդհանուր առումով մեր դանդաղ կամ արագ շարժվիլը մեզմե կախված չէ եղեր, այլ բոլշևիկյան կարգերեն: Պետք չէ մոռնաս, որ Հյուսիսային Կովկասը այդ օրերուն Մոսկվայի հետ սոլիտ կերպով կապված երկրամաս մը չէր:

Այս բոլորը ես դրեցի քեզի՛ համար. իմ կարծիքովս բոլշևիկյան այդ կարգի «ամբաստանութիւններուն» պատասխանելը զուր ժամավաճառութիւն է: Ի՞նչ կարևորութիւն ունի դիցուք չաբաթ մը ավելի շուտ հասած ըլլայինք. ի՞նչ էր փոխվելու. չէ՞ որ մեր հասնելեն ետքը ամբողջ երկու ամիս պարապ նստեցուցին մեզի այդ մեծապատիվ բոլշևիկները իրենց ավերակ Մոսկվային մեջ. չաբաթ մը ավելի պիտի նստած ըլլայինք՝ ահա՛ բոլոր տարբերութիւնը:

2. Մեր կառավարութիւնը մեզի իբրև դիրեկտիվ տված էր երեք որոշում. ա) ռուսները պետք է ճանչնան մեր անկախութիւնը և գտնե սկզբունքով հակառակ ոչինչ չունենան թուրքական մասերու միացմանը մեր հողին. բ) բացարձակապես պետք է հարգեն մեր ազատութիւնը և մեր ներքին գործերուն չի պիտի խառնվին, ուրիշ խոսքով՝ կոմունիզմի պահանջ պետք չէ ըլլա և գ) Զանգեզուրն ու Ղարապաղը պետք է մտնե հայկական սահմաններուն մեջ. ծայրագույն պարագային համաձայնիլ Ղարապաղի խնդիրը հանրահարցի միջոցով վճռելուն: Այս երեք կետերն ալ ռուսները անմիջապես ընդունեցին շատ թեթև առարկութիւններով. անոնց համար թուղթն ու ստորագրութիւնը երբեք կարևորութիւն չէ ունեցած. նոր էին ստորագրեր վրացիներու հետ դաշինքը և մեր իսկ ներկայութեան կը խնդային այդ դաշինքին վրա, «այո՛, ամսվան մը համար», ինչպես կ'ըսեին կես կատակ, կես լուրջ: Եվ մենք արդեն գիտեինք, որ 9-րդ թե՛ 11-րդ (լավ չեմ հիշեր) բանակը չարժման մեջ էր դեպի Վրաստան. լեհական պատերազմն էր, որ հետաձգեց Վրաստանի վրա հարձակումը:

3, Ռուսներու կողմեն մեզի առաջարկ չէ եղած Լըկրանի հետ համբորդելու մասին: Եթե ըլլար ալ՝ մենք չէինք ընդուներ. մենք միշտ պահեր ենք մեզի իբրև անկախ երկրի մը անկախ դեսպանութիւն և ո՛չ մեկ պայմանով Լըկրանի մը թևաբկութեան տակը չէինք մտներ: Իսկ ետ դառնալու որևէ հապճեպ չունեինք այդ աստիճանի. մենք մեր դերը արդեն ավարտած կը համարեինք, բոլոր էական խնդիրներու շուրջ մանրամասն զեկուցումներ ղրկած էինք մեր կառավարութեան և կը կարծեինք, որ Լըկրանի հետ մեր կառավարութիւնը ինքը կը խոսի Հայաստանի մեջ՝ մեր արտաքին գործերու նախարարը կամ անոր փոխանորդը: Ատկե զատ Նախիջևանով անցնիլ կը ցանկայինք՝ մեր կառավարության համար քանի մը մեքենա բերելու հաշիվներ ունեինք, այլև ընկերներ ունեինք սահմանը անցընելու. կային նույնպես ուրիշ

մանր հարցեր: Նորեն այս բոլորը կը գրեմ միայն քեզի՛ համար. թե չէ՝ դեպի դուրս տալիք պատասխանս մեկ է. ոտա կատավարութ֊յան կողմե մեզի առաջարկ եղած չէ, և եթե այդ առաջարկը եղած ալ ըլլար՝ չէինք ընդունելու, պետք չունեինք ենթարկելու ինքզինքնիս այդ կարգի դիպ֊լոմատիկ խաղերու: Իբրև ի՞նչ պիտի մտնեինք Լըկրանի վագոնները, իբրև դաշնակի՞ց՝ չէինք, իբրև գերի՞, իբրև պատա՞նդ: Սիրելի՛ս, այս «նրբութ֊յունները» իհարկե չեն կրնար հասկնալ մեր բոլշևիկ ազ֊բարները, որոնք անկախութ֊յունը ո՛չ ճաշակած են և ո՛չ ցանկացած. բայց մեր մեջ շատ ուժեղ էր այդ գիտակցութ֊յունը և այդ քաղա֊քացիական հպարտութ֊յունն ու քաղաքականութ֊յունը:

4. Թիֆլիսեն մինչև Մոսկվա մեզի հետ էին Երզնկյանն ու Փիրումյանը, մեր «դելեկացիոնն» վագոնին մեջ[1], ընկերներու նման, քանի մը դաշնակցական շատ մեղմացուցած քննադատութ֊յուններե դուրս իբրև մեզի գաղափարակից. կու գային հատկապես Ղարսպաղը Հայաստանին կցելու համար աշխատելու. իբրև թե. պարզ էր, որ կու գային բոլշևիկներու հետ լեզու գտնելու, այն ժամանակ կը մտածեի իրենց ղրկող մարմիններու կողմեն. իսկ հիմա կը մտածեմ պարզապես իրենց անձնական կաչին [փրկելու]: Մոսկվա հասնելնուս պես իրարմե զատվեցանք. սկիզբները մեկ֊երկու անգամ կու գային մեր դեսպա֊նատունը և կը հաղորդեին մեզի <1 բառ>[2] «բոլշևիկյան» տրամա֊դրութ֊յունները, շատ երկրորդական ու անմեղ հաղորդագրութ֊յուններ, քիչ֊քիչ ատ ալ կտրվեցավ. և անոնք սկեցան վերջնականապես բոլ֊շևիկյան ծովին մեջ. ձուկը գտեր էր իր տարրը. և մեզի հետ այլևս ոչ մեկ կապ. վերադարձեր են չգիտեմ երբ և ինչպես:

5. Ես Լըկրանի հետ ո՛չ մեկ կապ չեմ ունեցած Մոսկվայի մեջ, երեսն ալ չեմ տեսած. անգամ մը միայն Տերտերյանը գնաց մանավոր տան մը մեջ մասնավոր կերպով հանդիպելու, իբրև պատահական տե֊սակցութ֊յուն, գաղափարները չոչափելու համար: Մեզի հետ խոսողը արտաքին գործերու նախարարութ֊յունն էր, և անիկա մեզի Լըկրանի հետ բնավ հարաբերութ֊յան մեջ չէ դրած պաշտոնապես, ուրեմն պաշ֊տոնապես մենք չէինք ճանչնար Լըկրանը. մեր վերջին կամ վերջնեթեր տեսակցութ֊յուններու միջոցին էր, որ Քարախանը հայտնեց մեզի պաշ֊տոնապես, որ իրենք Լըկրանը ուղարկած են Հայաստան հոն չարու֊նակելու մեր «ընդհատած» խորհրդակցութ֊յունը: Նպատակն էր ան֊դամ մը մուտք ունենալ Հայաստան, հետները «ցրվելու» ապրանք

էին տարած ժողովուրդը գրավելու համար, ինչպես և ահագին «գրականություն» և պերսոնել. այսինքն ներսեն քայքայելու ծրագիրը: Երբ մենք Թիֆլիս հասանք, Լրկրանը անգամ մը Թիֆլիս եկած և վերադարձած էր. ես հոն ալ իրեն չեմ հանդիպած. և եթե Թիֆլիս ալ ըլլար՝ իհարկե իրեն չէի հանդիպելու, առանց մեր կառավարության նոր հրահանգին այլևս իրավունք ալ չունեինք: Ես Լրկրանին առաջին անգամ տեսած ու խոսած եմ Երևանի մեջ արտաքին գործերու նախարարության հարկին տակ, երբ մեր կառավարությունը որոշեց, որ Մոսկվա եղող կազմը չարունակե բանակցությունը Լրկրանի հետ:

6 և 7 հարցերուդ պատասխանելը դժվար է առանց մեր ընդարձակ համաձայնագրերը աչքի տակ ունենալու, մանավանդ որ ես մեծ վստահություն չունիմ իմ հիշողությանս վրա: Կրնամ պատասխանել միայն խոշոր գծերով: Լրկրանի պահանջներն էին. ա) բացարձակ հրաժարիլ Վերսայլեն[3], Եվրոպայեն. բ) ազատ անցք տալ մեր Հողերուն վրայով զորք ու ռազմամթերք անցընելու Ադրբեջանեն Թուրքիա և գ) թե՛ մեկի, թե՛ մյուսի և թե՛ վրացիներու հետ մեր ունեցած վեճերը հարթել իրավարարության ռուսներու արբիտրաժին տակ: Այլև քանի մը մանր պահանջներ, ինչպես օրինակ Կարսի մեջ գտնվող նեղ-գիծ երկաթուղային վագոնները հանձնել իրենց, որպեսզի տան Թուրքերուն, Ադրբեջանի և Թուրքիայի մեջ մեր հարավով երկաթուղային կապ հաստատելու համար:

Մենք ա. կետը կտրուկ մերժեցինք. անոնք քանի մը անգամ փոխեցին, փոփոխեցին և մնաց տակը անորոշ ու վերացական ոչինչ չըսող հայտարարություն մը: Բ. կետի դեմ առարկեցինք, որ կվախնանք ռուսներեն ստացած զենքերը մեր դեմ գործածեն Թուրքերը, ինչպես և Թուրք բազմությունները մեր Հողերուն վրա գտնվիլը: Վերջ ի վերջո համաձայնեցանք մեր զինվորական մարմիններու քննությունն ու վավերացումն ստանալե ետքը, որ 1) զորք կրնան անցըներ երկաթուղով որոշ ճոկված պայմաններու տակ, անզեն և փոքր-փոքր քանակությամբ. 2) իսկ գալով զենքին ռուսները ընդունեցին, որ ինչքան զենք որ անցնի մեր Հողերուն վրայեն, անոր (լավ չեմ հիշեր) 25 թե՛ 30 տոկոսը պետք է մնա մեզի, իբրև ինքնապաշտպանության միջոց: Այդ երկու թիվերուն վրա գիտեմ որ սակարկություն եղավ, վերջը որը մնաց՝ չգիտեմ, կարծեմ 30-ը: Գ. կետը, այսինքն մեր 3 դրացիներուն հետ վեճերը կարգադրելու համար ռուսներու արբիտրաժը ընդունեցինք:

Փոխարենը անոնք կ'ընդունեին մեր անկախութիւնը, մեր ներքին գործերուն չխառնվել, արևելյան սահմանի մեջ պետք է մտներ Զանգեզուրը, իսկ Ղարապաղի համար իրավարարութիւն, ինչպես և Նախիջևանի համար, իբրև լալանս: Իսկույն պետք է միջամտեին թուրքերու հետ մեր պատերազմը կասեցնելու և իբրև առաջին պահանջ պետք է ստեղծեին չեզոք գոտի մը մեր ու թուրքերուն մեջ ռուսական սահմանին վրա. և այս բոլորը, իբրև մեր ու թուրքերու ընդհանուր բարեկամ: Մեզի անմիջապես պետք է վճարեին $2^1/_2$ միլիոն ոսկի, Բագվի նավթային ճամբան սլիտի բացվեր, պետք է տային երկրագործական գործիքներ, պետք է հանձնեին Մոսկվայի մեջ մեր էջմիածնական և այլ ինչքերը, դյուրութիւններ պիտի տային ռուսական քանի մը կեդրոններու մեջ հավաքված հայ գրենական և գեղարվեստական երկերը Հայաստան փոխադրելու: Ահա՛ խոշոր գծերով և ինչ որ հիմա կրնամ հիշեր, ինչ որ երկու կոզմեն ստորագրած ենք:

8. Լրկրանը սաստիկ կ'ըշտապեր մեր բանակցութիւններու միջոցին, մենք քիչ մը ծանր կը չարժեինք, ականջնիս Կարսի կողմը: Ստորագրվելուն պես Լրկրանը գնաց ինքը, մեր կոզմեն ո՛չ մեկ առաջարկ, համոզելու Բագվի ընկերները, որ ընդունին մեր եկած համաձայնաթյունը. նույնը նաև պիտի աշխատեր թուրքերուն հետ: Բայց թե՛ մեր կառավարութիւնը, թե՛ մեր պինլորականները, թե՛ անգլիական ներկայացուցիչը կը զարմանային բոլշևիկներու այդ տեսակ պայմաններ ստորագրած ըլլալուն. կա՛մ թուրքերը չէին ճանչնար ինչպես հարկ է, կա՛մ մեզի օրորել կ'ուզեին, կա՛մ վստահ էին, որ անդամ մը Հայաստանի մեջ ոտքերնին դնելեն ետքը, ամեն ինչ կը պայթեցնեին. գուցե և այս երեքը միասին: Եվ վերջապես եղածը թուղթի կտոր մըն էր և դատարկ ստորագրութիւն մը, ի՞նչ կարևորութիւն:

9. Լրգրանի դիրքը երկդիմի էր. մեզի, այսինքն մեր կառավարութեան հանդեպ լիազոր բանագնաց մըն էր, մոտավորապես ինչպես մենք էինք Մոսկվա. բայց անտարակույս է, որ բոլշևիկյան մարմիններու հանդեպ անիկա ուներ մասնավոր իրավունքներ ու հրահանգներ թե՛ Հայաստանի մեջ և թե՛ Հայաստանեն դուրս Հայաստանի հետ կապված գործերու վերաբերմամբ, որ ըսել է գրեթե ամեն հարցի վերաբերմամբ Կովկասի մեջ:

10. Իր թուրքերու հետ ունեցած կապի մասին ոչինչ ըսել չեմ կրնար, կը հիշեմ, որ Երևանի մեջ չատերը (կամ գոնե քիչերը) կային, որ

անոր վրա կը նայեին իբրև պատերազմական լրտեսի վրա մեր թուրքերու հետ ունեցած կռվի միջոցին նստած մեր զորքերու թիկունքին: Ես բոլշևիկ մարդոց խոսքին ու կեցվածքին մեծ հավատք ունեցող մարդ չեմ. և վերջապես քաղաքականութիւնը սուտի ու խաբեութեան հյուսվածք մըն է. չեմ զարմանար, որ Լրկրանը թուրքերու առաջխաղացումը դյուրացնելու և մեզի ճգմել տալու քաղաքականութիւնը վարած ըլլա կա՛մ իր, կա՛մ Բագվի, կա՛մ Մոսկվայի թելադրանքով. բայց անկեղծ ըլլալու համար պետք է ըսեմ, որ ես այդ աչքով չեմ նայած անոր վրա. կարելի է իմ դիպլոմատիկ հոտառութիւնս թույլ է եղած՝ մանավանդ կեղտոտ գործերու մեջ. իմ տպավորութիւնս այն էր, որ ան կը ջանար իրոք որ Հաշտութեան բերեր մեզի ու Բաքուն, մեզի ու թուրքերը: Ինծի կը թվի, որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նույնիսկ ո՛չ բոլշևիկյան, ինծի կը թվի, որ Կարախանը նմանապես այդ ուղղութեամբ կ'աշխատեր. ինծի կը թվի, որ ներքին կապ կար Լրկրանի ու Կարախանի մեջ: Լենին-Կարախան-Լրկրանյան քաղաքականութեանը պարտվեցավ մեր Կարսի առջև ունեցած պարտութեամբ. հաղթանակեց բաքվյան քաղաքականութիւնը, «բոլշևիկ Հայաստան անմիջապես» զենքով, և Հայաստանի կառավարութիւնը իրեն ձեռքը հայ բոլշևիկներու: Ինծի կը թվի, որ Աչ. Հովհաննեսյան ու Սահակ Տեր-Գաբրիելյանը Կարախան-Լրգրանյան խելքի մարդիկներեն էին և ճիշդ ատոր համար ալ դրված էին Լրգրանին հետ: Վերջը ատոնք բնականաբար բոլորն ալ փոխվեցան, երբ Բաքվի բոլշևիզմը տարավ հաղթանակը: Ատոնք կա՛մ պետք է սկեին ջուրին տակ, կա՛մ պետք է բաքվեցիներու հանկերգը պոռային: Մեկ-երկուքը, որ ավելի խոր հոգի ունեին, լռեցին ու անցան երկրորդական չարքերը. մյուսները նետվեցան առաջ, Ա. Հովհաննեսյանին պես, խոչոր պատառներ խածնելու համար: Մեր Կարսի կռիվներուն ժամանակը գիտեմ որ (բոլորովին կողմնակի ու մանավոր ճամբով) թե՛ Աչոտը և թե՛ Սահակը կը ցանկային Կարսի առաջ մեր զինական հաջողութեանը. դեռ հայ էին:

Եթե Կարինյանը Փափազյանի քեռորդին է, իմ անցած օրվան գրածներս անոր չի վերաբերիր: Ան ուրիշ մարդ է: Փափազյանի քեռորդին գիտեմ, թեև դեմքը չեմ հիշեր. ոչ ալ հոգին կը ճանչնամ:

Սիմոն ջան, վերջացնելես առաջ երկու խոսք ալ իմ մասին: Գիտցած եղի՛ր, որ Մարսիլիա մնալու չեմ: Ո՛չ մարդ կա հոս մարդավարի,

ո՛չ ալ դրամ. եթե մեկը ըլլար՝ կ'ըլլար և մյուսը. այնպես որ ո՛չ իմ ծրագիրներս, ո՛չ ալ իմ ապրուստս ոտքի հանել չեմ կրնար հոս: Վերջին ամիսները շատ դժվար կը վճարին և շատ ողորմելի մարդիկ են. չգիտեմ ամառվան ամիսներու վճարը ինչ պիտի ընին. կրնաս երևակայեր դրամական վիճակս: Մտադիր եմ Եգիպտոս անցնելու, դեռ պաշտոնական հրավեր չունիմ, բայց մտնավոր նամակներու հենված հույս ունիմ, որ հաջողվի: Ընտանիքս պետք է փոխադրեմ Փարիզ. այդ մասին արդեն գրած եմ Տիգրանին, որ բնակարանի հոգ քաշե: Եթե հնար ունենա և եթե չուտով բնակարան ճարվի՝ մեկ-երկու շաբաթ ես ալ կու գամ Փարիզ Եգիպտոս մեկնելես առաջ. և այն ժամանակ կը խոսինք մանրամասն, եթե գալ չկարողանամ, քեզի իրազեկ կը պահեմ:

Սրտագին բարևներով ու ջերմ համբույրներով՝ Լևոն Շանթ

1925 հունիս 18,
Մարսեյլ

185. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

<1925>[1]

Նիկո՛լ ջան, օրիորդ Հերմինեին տեղեկացա Հետևյալը: Շաբաթ մը առաջ Պոլսեն եկած է օրիորդ Տիգրանյան մը, որ ծանոթ է եղած քու քենիիդ: Այդ եկող օրիորդը հայտներ է, որ Հրաստունը կ'ըսպասան անհամբեր քրոջը գալուն: Ան նամակ ունի կնոջմեդ և պիտե, որ մեկնելու իրավունք ստացված է արդեն[2]*. մինչև անդամ Պոլսի ոստիկանութիւնեն եկեր հարցուցեր են Հրաստունին, որ «քույրդ գալու է, դուն պատասխանատո՞ւ ես իրենց համար»: Կնոջդ ուշանալուն պատճառը «ուրիշ կին մըն է, որ միասին գալ կ'ուզե». զուցե նորեն Թագուհիի պատմութիւնը ըլլա*[3]*: Հրաստունը նամակ ստացած է նաև իր մորմեն, որ հայտնած է, թե՛ կ'երթայ Ձերոնց համբա դնելուն օգնելու:*

Այս բոլորեն բացահայտ է, որ մեկնելու թույլտվութիւն ունին արդեն Ձերոնք և շատ չանցած լուր կ'ըստանանա: Համենայն դեպս ինչ որ լսեցի՝ կը հայտնեմ քեզի: Կը հուսամ, որ այս ծանր պատմութիւնը կը մոռնանա իր վերջին և սիրտդ ալ վերջապես կը թեթևնա:

Բարև ու համբույր՝ Լևոն

186. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, կ'ըշտապեմ պատասխանելու տված հարցիդ: Նախ, սիրելի՛ս, բոլորովին ավելորդ է Նիմ, Մոնպելիե կամ այդ կարգի ուրիշ քաղաքներու մասին մտածելը, որովհետև ձերոնք կը մնան բոլորովին առանձին ու կտրված Հայ ու Հարազատ չունչէ, քանի որ այս կողմերը Հայ չկա. մյուս կողմեն ալ ֆրանսերեն չգիտեն և կրկնակի ծանր կը դառնա այդ առանձնությունը. այնպես որ կա՛մ Մարսեյլ պիտի գան, կա՛մ Փարիզ: Մարսեյլ խորհուրդ չեմ տար. կովկասյան հոգիով մարդոց համար չատ խորթ միջավայր է հոս. դուն եթե իրենց հետը ըլլայիր՝ պայմանը քիչ մը կը փոխվեր. Մարսեյլի միակ առավելությունը Փարիզեն՝ արևի առատությունն է և ուրիշ ոչինչ: Եթե որևէ ուրիշ գրավչություն որ ունենար, ես ալ ընտանիքս կը թողնեի հոս. մենք սեպտեմբեր 1-ին փոխադրվելու ենք Փարիզ, ավելի ճիշտը Փարիզի մոտիկ գյուղ մը[1], հոն ուր է հիմա Կոմսը, Վրացյանը, Իշխանը և ուրիշներ. կը կարծեմ, որ Հրարփիի ու զավակներուդ համար ամենեն աղեկը հոտ մեզի մոտ գալն է. կինս ու տղաքներս, որոնք արդեն մեծ մարդիկ են, ամեն կերպով կօգնեն ձերոնց, և մեր ու վերը հիշած ծանոթ ընկերական շրջանակին մեջ անհամեմատ դյուրին ու հաճելի կ'ըլլա օտարության հացը, քան ուրիշ որևէ տեղ: Եթե վճռած ես ընտանիքդ Եվրոպա փոխադրելու, կը կարծեմ ամենեն ավելի հարմար տեղը Փարիզն է մեզի մոտիկ: Դրամական տեսակետեն միևնույնն է ուր ալ որ ղրկես. որոշ բաներու ծախքը քիչ մը ավելի է, ուրիշ բաներունը քիչ մը ավելի պակաս և ընդհանուր եզրակացությունը կու գա ճիշտ միևնույն տեղը: Կնոջդ, Թագուհիին ու երեք երեխաներուդ ամսական ծախքը պետք է հաշվես առնվազն 1300 ֆրանկ, որ արդի կուրսով ըսել է 13 անգլիական ոսկի. ես մեր տան համար ապրուստի նույն համեստ պայմաններով կը հաշվեմ ամսական 1500 ֆրանկ, բայց իմ տղաքս մեծ են և թե՛ կյանքի և թե՛ կրթական ծախքերը ավելի խոշոր: Ուրեմն՝ ամսական հաշվե 13-14 անգլիական ոսկի, ատկե պակասով տակեն չես դուրս գար, կը դառնա ղրկանք. երբ կյանքը ստիպե, իհարկե ամիս մը երկու կարելի է «ակռաները սեղմել», բայց տևականորեն կարելի չէ:

Ես երևի Մարսեյլեն չոգենավ կը նստիմ սեպտեմբերի կեսերուն, մերոնք Փարիզ տեղավորելես ետքը: Եթե որևէ բանի համար ինծի դրել

ուզես մինչև այդ թիվը՝ գրե Փարիզի հասցեովս, որը ներքև կու տամ: Ցրանսան մանկավարժական նորութիւններու տեսակետեն չատ խեղճ է, թեև Փարիզ կը մտնեմ ու կը հարցնեմ: Մեր դպրոցի մասին[2] կը խոսինք տեղին վրա, երբ միասին դանք, ինչպես և հարակից մյուս հարցերու: Առայժմ ընդունե իմ սրտագին բարևներս ու ջերմ համբույրս:

Լևոն Շանթ

1925 օգոստ. 9, Մարսէյլ
Հասցես. Le'on Chanth
Rue Trois Champtiers, 10 bis
Chaville (S. ot O.)
France

1926

187. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

17-ին մարտի, 1926
Ժընև

3. Av. Beau-Sejour
Geneve

Սիրելի՛ Նիկոլ:

Նամակդ յուր ժամանակին ստացել եմ, վասդ այլահին-վերջապես ձենդ լսեցի, թեկուզ գործի առթիվ գրված լինի, այնուամենայնիվ ուրախացա, որ ձենդ լսեցի:- Հիմա հարցերիդ պատասխանեմ.

- Ժընևում, Լոզանում ու Ցյուրիխում հաստատապես գիտենք, որ չը կան հայ աղջկերք կամ տիկիններ, որ ուսումնասիրած լինին մանկապարտեզի գործ, բացի տիկին Մարիա Լիսիցյանը, որ այս հունվարիցյ մտել է Ժընևի Ժ.Ժ. Ռուսոյի ինստիտուտը հատկապես մանկապարտեզի գործը ուսումնասիրելու համար: Բայց սա քո ուզած վարժուհիներից չէ. նախ, որովհետև Ալեքսանդրիա չի գալ, որովհետև ամուսինը (գուցե և ճանաչես Թիֆլիսից-ջրանցքներ կառուցանող ինժինիոր է - Սահակ Դանիլևիչ Լիսիցյան) գնացել է Հայաստան. տիկինը մնում է այստեղ, մինչև որ իր երկու որդիները ավարտեն իրենց ուսումը, որից հետո ինքն էլ մտադիր է գնալ Հայաստան, ուր և կ'օգտագործի յուր

մասնագիտությունը, երկրորդ՝ հասակավոր կին է, բավականին ջղային և շատ ալ երեխասեր չէ:

Բերն, Նևշատել և այլ քաղաքներում կա՞ն քո ասած մարդկանցից թե ոչ - դեռ չը գիտեմ, խոստացել են տալ տեղեկություններ, բայց առանց այդ տեղեկությունների էլ՝ սկզբից կարելի է ասել, որ ոչ ոք չի լինի: Պետք է ասեմ, որ այժմ առհասարակ Զվիցերիայում հայ ուսանողություն չը կա, չնորհիվ կյանքի թանկության ամենքը քաշվել-հեռացել են:

Ի միջի այլոց ասեմ, որ տիկ. Լիսիցյանը և պ. Դիլանյանը (որ անցած տարի է ավարտել Ժ.Ժ. Ռուսսոյի ինստիտուտը, անգործ է, որովհետև թոքախտով հիվանդ է) հայտնեցին, որ Ֆրոբելյան չկոլան[1] այժմ համարվում է հնացած և Զվիցերիայում կամաց-կամաց թողնում են. հիմա սկսել են նախապատվություն տալ Montessorie[2]-ի ուղղությյան. ինչ բան է այս վերջինը - ես գաղափար չունիմ:

Հաղորդեմ քեզ - դարձյալ ի միջի այլոց - այն, որ իսկ քո ուզած մի օրիորդ, ինքն էլ արևմտահայ, անցյալ տարի ավարտել է Ժ.Ժ. Ռուսսոն և գնացել է Հունաստան, ուր այժմ պաշտոնավարում է այնտեղի հայ որբանոցներից մեկում, ազգանունը, կարծեմ, Բոտուրյան ասացին: Ես չը հետաքրքրվեցի այս անձնավորությամբ, քանի որ արդեն զբաղված է, բայց եթե ուզես, կարող եմ հարկավոր տեղեկություններ առնել:

- Մի քանի օր առաջ ուղարկեցի քեզ Ժընևի բոլոր հայտնի գրավաճառանոցների բոլոր գրացուցակները: Կը տեսնես, որ ընդհանրապես մանկավարժության վերաբերյալ գրացուցակները շատ հարուստ չեն: Դիլանյանը ասաց, որ ավելի լրիվ գրացուցակ կարելի է ձեռք բերել Ժ.Ժ. Ռուսսոյի ինստիտուտից, ուր աշխարհի երեսին լույս տեսած բոլոր նոր գրքերը (մանկավարժության վերաբերյալ) բոլոր լեզուներով ունին. իհարկե պատրաստի կատալոգ հազիվ թե՛ ունենան, հարկավոր կը լինի արտագրել: Ես խնդրեցի նրան փորձել ձեռք բերելու. միայն ասաց, որ այժմ դա հնարավոր չէ, որովհետև հիմա արձակուրդ է. կարելի է ապրիլ ամսում, երբ ամենքը վերադարձած կը լինին: Կարծեմ այս էր բոլոր ուզածդ: - Ուրեմն ինչ որ իմանամ կամ կարողանամ ձեռք բերել խնդրածներիդ առթիվ - իսկույն կը տեղեկացնեմ կամ կ'ուղարկեմ: Նման խնդիրներիդ ուրախությամբ կ'աշխատիմ դոհացում տալ. եթե ձեռքիցս գա, ուստի, խնդրեմ, շատ էլ փափկանկատություն

չը բանեցնես իմ վերաբերութիւնդ:

- Հիմա իմ հերթն է քեզնից մի բան խնդրելու. ձեր ուսուցիչները, այսինքն դուք (որովհետև դուս էլ միջներնիս ես անշուշտ) սկսել եք հրատարակել մանկավարժական թերթ (փակագծի մէջ ասեմ, որ շատ խելացի, գովելի և այժմեականութիւն ունեցող մի ձեռնարկ է, որ գալիս է մի աղաղակող պահանջի որոշ չափով բավարարութիւն տալու): Եթե հրատարակողները դաշնակցականներ են, ուրեմն, անշուշտ պիտեն, որ ըստ ընդունված ավանդութեան պետք է մի օրինակ ուղարկեն ժրընեւ «Դրոշակի» գրադարանի համար. եթե չեզոք մարդիկ են, այն ժամանակ խնդրի՛ր Ալեքսանդրիոյ Դաշնակից. կոմիտեին, որ մի օրինակ նվիրեն Դրոշակի գրադարանին ու սկսին ուղարկել առաջին համարից - լրիվ հավաքածու ունենալու համար:

- Տիար Անտոնը[3] հիշում է քեզ. չնորհակալ եղավ քո բարևից և խնդրեց փոխադարձաբար ուղարկել քեզ իր բարևը: Խեղճ ծերուկը շատ է տառապում յուր հին հիվանդութիւնների ձեռքից (ռևմատիզմ, երիկամունքների <մեկ բառ>): Այժմ էլ հիվանդ է և ապրում է առանձին պանսիոնում ժամանակավորապես:

- Ես էլ լավ եմ, էլի. մի կերպ քարշ եմ տալիս գոյութիւնս: - Ի՞նչ տեղեկութիւն ունիս տիկնոջիդ ու երեխաներից, լա՞վ են, առո՞ղջ են:

Համբուրներով՝ քո Լևոն

188. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, շատ կը ցավիմ, որ ակամա անճչտապահ պիտի գտնվիմ մեր դպրոցական վերաբացին[1]. ամիսներ առաջ դրեցի մեր հոգաբարձութեան՝ խնդրելով, որ վաղօրոք դրամ հասցնեն ինծի, երևի անկարելի եղավ, որովհետև խնդրած դրամս ստացա միայն չորս օր առաջ և հազիվ կրցա տոմսակ մը գտնել Հոկտեմբեր 5-ին Մարսեյլեն մեկնող շոգենավի մը համար, տոմսակները կը վաճառվին ու կ'ըսպառին չաբաթներ առաջ, մանավանդ երրորդ կարգի տոմսակները մեր գծին վրա: Զափազանց անախորժ է ինծի այս պատմութիւնը, և գիտեմ նաև քեզի, բայց գժբաղդաբար ոչինչ փոխել չեմ կրնար: Կը հասնիմ Ալեքսանդրիա 9-ին կամ 10-ին:

Մաթեմաթիկի ու բնական գիտութիւններու իբրև ուսուցիչ մեր

դպրոցին համար ամենեն ավելի հարմարը ես կը համարեմ Օ. Փափազյանը, որու մասին գրած եմ Հոգաբարձութեան և որուն արդեն տեղյակ ես անշուշտ: Կը հուսամ, սիրելի՛ս, որ դժգոհ չես մնալու ընտրութենես. այդպես կը կարծեմ, մնացածը կյանքն ու աշխատանքը ցույց կու տա:

Զգիտեմ ինչ վիճակի է կնոջդ ու զավակներուդ գալուն հարցը, գուցե նույնիսկ արդեն եկած են. և չատ ուրախ պիտի ըլլամ, եթե հասնելուա քեզի արդեն ընտանիքիդ մեջը տեսնեմ:

Հավանորեն իմ չոգենավիս մեջն է ըլլալու նաև Եսայանը ընտանիքով: Շոգենավին անունը Providence է, կը պատկանի Ցամբ-լայն ընկերութեան:

Ուրեմն ցտեսութիւն, սրտագին բարևներս մեր ընկերներուն ու պաշտոնակիցներուն. և համբույրս քեզի:

Լևոն Շանթ 1926 սեպտեմբերի 24
Շավիլ

1927

189. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, քու ուզած գրքերդ գտնելը չատ անհույս հարց է, դիմած եմ բոլորի հրատարակիչներուն, այլև անոնց տված խորհուրդով ուրիշ գրավաճառներու. ամեն տեղ միևնույն պատասխանը՝ «Սպառած է»: Սպառած են բոլոր քու երկու գծով ընդգծածներդ, ինչպես և միայն մեկ գծով մը ընդգծածներդ: Բացի այն հատորեն, որ Սիրանի հասցեով[1] ղրկած եմ քեզի ասկե ամիս ու կես առաջ, կրցա գտնել միայն V. Henry[2]-ի համեմատական քերականութիւնը, բայց 1888 թվի հրատարակութիւնը, քիչ մը շուտ ու մուտ տվի և սիրտ չըրի գնելու, քառասուն տարի առաջվան հին հրատարակութիւնը հազիվ թե բանի պետք գա քեզի: Ուզեր էիր Boisarg[3]-ի բառարանին գինը. մեկ հատոր է և 250 ֆրանկ, բայց արդեն մեջտեղ չկա. մեկ-երկու տեղ հարցուցի: Broogmann-ի համառոտ համեմատական քերականութիւնը վեց հատոր է և գերմաներենը միայն տեղ մը կար: Այս բոլոր գրքերը, ինչպես որ կը տեսնես, գրադարանային բարիքներ են, չատ փոքր ու որոշ քանակով կը տպվին և չատ չուտով կ'ըսպառվին, մեզի պես մարդոց պետքն ու քսակը հաշվի առնված չեն: Այնպես որ, սիրելի՛ս, հիմա իմ

տրամադրութեան տակ ունիս 200 ֆրանկ. երկու եգիպտական ոսկիդ փոխած եմ ուղիղ 250 ֆրանկի: Ասիկա քու գրքերուդ պատմութիւնը:

Գալով ի՛մ գրքերուս, ամիս մըն է սկսած է տպագրութիւնը[4], մինչև օգոստոսի վերջը կը հատամ աւարտի առաջին հատորը. աշխատանքը իմ կարծածես չատ աւելի դանդաղ կ՝երթայ. չարվածքը առաջին գիրքը ավարտած է ամբողջ և հիմա կը չարվի երկրորդ գիրքը: Մանր կը շարժվի երեսներու կապելը, ամեն ճիգ կ՝ընեմ մինչև գալս երկու գիրքն ալ ավարտելու, չգիտեմ՝ հաջողելու եմ, թե ոչ: Երկու գրքի տպագրութիւնը պայմանաւորված եմ 10000 ֆրանկի. Սաչային ստացած դրամներս, այսինքն առաջին գրքի վարկս սպառված է արդեն և ես հիմա օր-օրի կ՝ըսպասեմ Ալեքսանդրիայեն երկրորդ գրքի վճարին: Խոստացած են օգոստոսին ղրկելու: Առաջին գիրքը ավարտելուն պես քեզի օրինակ մը կը ղրկեմ: Գահկիրեի պատրաստած ձեռագիրներու քլիշեները չատ անմաքուր աշխատանք դուրս եկան: Եթե ձեռքս դրամ ըլլար, գոնե մեկ մասը հոս նորեն քլիշե չինել կու տայի: Վերջապես, ինչ որ եղավ՝ եղավ: Մնացածն ալ կը չտկեմ հաջորդ տպագրութիւններուն, Աստուծմով:

Ես հոս ամբողջ օրս պբաղված եմ այդ գրքերու արտագրութեամբն ու սրբագրութեամբը. ուրիշ ոչինչ ըրած չունիմ և սարսափելի եղանակներ են՝ չարունակ հով ու անձրև, քանի եկած եմ, կատարյալ ձմեռ: Դուն երևի հիմա Լիբանանի արևուն տակը քիչ մը տարօրինակ պիտի գտնես իմ այս ձմեռվան գանգատս: Ո՞ւր ես, լե՞ռը, քաղա՞քը: Անշուշտ հաճախ կը տեսնվես Սաչային ու Սիրանին հետ, երկուքին ալ իմ չատ սրտագին բարևներս: Նույնը և մեր մյուս ընկերներուն, մասնաւորապես Հովհաննեսյանին ու Թյուրյունճյանին:

Իսկ տունե՞ն ինչ լուր ունիս. միշտ նո՞ւյնը, գալու հույսերնին՝ կտրա՞ծ է ուրեմն: Հայաստանի ու Ռուսաստանի մասին եղած տեղեկութիւններն ու սպասումները հոս ալ մեծ տարբերութիւն մը չունին մեր եգիպտական ըմբռնումներեն ու զգացումներեն:

Շատ ու չատ բարևներս քեզի. համբույրով՝ Լևոն Շանթ

1927 օգոստոս 21
Շավիլ

190. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, հոկտեմբեր մեկն է այսօր և ես դեռ դրամի կ'ըսպասեմ մեր դպրոցական վարչութենեն. օգոստոսին անպատճառ պետք է հասցնեին ձեռքս: Հեռագրեր էին վերջին վայրկյանին, որ կը վճարեն եգիպտոս վերադարձիս. ես ալ հեռագրեցի, որ գոնե 3000 ֆրանկը հասցնին ինծի հեռագրով: Շոգենավ կա հոկտեմբեր 4-ին և 11-ին. այս պայմաններուն մեջ անկարելի է չորսի նավին հասնիլը, ուրեմն ես կու գամ 11-ին Մարսեյլեն մեկնող չոգենավով, Միսաժըրի ընկերութեան: Ջափազանց ծանր ու անախորժ է ինծի այսչափ երկար ուշանալս, մանավանդ որ բոլորովին ապարդյուն, առանց դրամի երկրորդ գրքի տպագրութիւնը այնքան քաշքշվեցավ, որ վերջին սրբագրութեան մեկ մասը եգիպտոսեն պետք է կատարվի: Առաջին գրքեն 150 օրինակ կը բերեմ հետս, մնացածը կը ղրկվի դպրոցի հասցեին Տեռպետեռեանի[1] միջոցով:

Այս բոլոր անախորժութիւններուն մեջ միակ հաճելին այն է, որ վերադարձիս Սուրենի[2] հետ միասին ենք ըլլալու: Սիրանի հասցեով Սյուրիա քեզի գրած նամակս անշուշտ ժամանակին ստացած ես, ինչպես և միակ գիրքը քու ուղածներեդ, որ գտնել կարելի եղավ:

Վերջացնելես առաջ կը խնդրեմ, որ խոսիս պարոն Ամատունիի հետ, որ քառասուն ոսկիին մնացած մասը պատրաստ պահե. տպարանին խոստացած եմ տեղ հասնելուս պես ուղարկեմ:

Ուրեմն առայժմ չատ ու չատ բարևներ քեզի և ընկերներուս.
Համբույրով՝

Լևոն Շանթ
1927 հոկտեմբեր 1
Շավիլ

191. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԻՆ

<1926-1928>[1]

Նիկո՛լ Ջան, տիկ. Պալեանը այս իրիկուն քեզի անուշ-ապուր ուտելու կը հրավիրե, եթե պարահանդես երթալու չես, ուշ ու կանուխը մի՛ նայիր, եկուր երբ որ կ՛ուզես:

Եթե այսօր գալ չի կարողանաս, գիտցած եղիր, որ վաղը կիրակի ժամը 6-ին պիտի երթանք Իփեկյանին, Գասպարն[2] *ալ հոս է եղբորը մոտը: Վաղը ճաշին եկուր Նորաւունկյաններուն*[3]*, տիկին Նորաւունկյաններուն ըսած եմ արդէն. հոնկէ ալ ժամը 6-ի մոտերը կ՛երթանք Իփեկյաններուն:*

Սրտագին բարեւներով՝ Լեւոն Շանթ

Շաբաթ

192. ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համօ, ներփակ կը ղրկեմ կանոնագրի[1] *վերջին կտորի սրբագրութիւնը, որ երեկ ստացա. ղրկե Վահանին*[2]*:*

Ինչ եղաւ ընկերութեան վաւերացման խնդիրը[3]*. կ՛ըսեին կարճ ձեւակերպութիւն մըն էր. չատ լաւ կ՛ըլլար, որ կանոնագրին եռւը հիմա տպել կարողանայինք, որ արդէն ընկերութիւնը օրինապես ճանաչված է. չտապե՛ք հասցնելու:*

Նախորդ նամակիս դէմ պատասխան չստացա ձեզմէ. կը վախնամ, որ անկարող ըլլամ Հուլիս 7-ի չոգենաւին հասնելու, հաջորդ չոգենաւերը 14-ին են ու 19-ին, որ շատ ուշ է: Մենք հոս դպրոցին կ՛ազատուինք Հունիս 30-ին. մեկ-երկու օր վերջը կու գանք Գահիրե վերջին խորհրդակցութեան մը. անշուշտ նախապես կ՛իմացնենք քեզի երբ գալ կարողանալնիս, որ վարչական ժողով հրավիրես. դժվարը Նիկոլն է, իր վերջին տեսչական պարտավորութեաններով:

Հոս Տելական մասնախումբը արդէն կազմված է[4]*. հինգ հոգի, բոլորն ալ մեր ընկերները. պիտավորութիւն ունինք երկու հոգի ալ չե-*

զոքներ առնել միասին, բայց երկար ընտրելեն ու մաղելեն ետքը՝ լավ համարեցինք այս սկզբնական ամիսները մեր ճիգովը բավականանալ. աչնան կարելի է երկու չեզոք վրան ավելացնել:

Նախագահը Մինասն է, գանձապետը՝ Սարգիսը, իսկ անդամները՝ Նորատունկյան, Սուրեն և Գոնճալյան:

Սրտագին բարևներս քեզի, քուկիններուդ և ընկերներուն.

Լևոն Շանթ

1928 Հունիս 25
Ալեքսանդրիա

193. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1928, օգոստոս, 2, Փարիզ

Սիրելի՛ Համո, այս տասը օր է մչտական չփման մեջ եմ մեր Բյուրոյի անդամներուն հետ թե՛ անհատապես, թե՛ հավաքաբար: Վրացյանը բացակա է, մեր ժողովներուն եղած են Ռուբենը, Արշակը, Շավարշը, Սասունին, բժիշկ Տեր-Դավթյանը, անգամ մըն ալ Հանըմյանը: Մեր ընկերության հանդեպ իրենց պաշտոնապես բռնելիք դիրքի վերաբերմամբ ձայները բաժնված են: Վարանք առաջացնող հիմնական պատճառը դրամականն է. կը վախնան, որ մեր ընկերության փոելիք ցանցը[1] դաշնակցական դրամներ ծծե մեր ընկերներուն գրպանեն. անոնք կ'ուզեն, որ գործը դուրս գա ոչ-դաշնակցական դրամով: Երկրորդ պատճառը, որ ավելի նվազ կը պնդվի, դաշնակցական ընկերներու բարոյական ուժերուն չեղումն է բուն հեղափոխական գործունեութենեն: Երրորդ պատճառը, չա՛տ ավելի թույլ ընդգծումով, մեր ընկերության ոչ-դեմոկրատիկ կազմակերպությունն է. տեսականորեն անցանկալի կը նկատվի, թեև գործնականապես իրենք ալ նույն ձևի վրա են կանգ առած, երբ հոս վերջին երկու տարիներու ընթացքին նման ծրագիրներ կը չինեին:

Ամենեն չեշտված տարակարծությունը Ռուբենի կողմեն է, որուն կարծիքներուն ամփոփումը, ի՛ր իսկ գրի առածը, ներփակ կը ղրկեմ վարչությանդ. ան կ'ուզե, որ նախ գտնենք Հարուստ մը, որ ընկերության դրամագլուխը ապահովվի, անկե ետքը մնացածը կարելի է

հարմարցնել. և իհարկե աչքի առաջ ունի Կյուլպենկյանի «միլիոնները»: Բժիշկը թեև կը բաժնե Ռուբենի վախերը, բայց այն կարծիքի է, որ մեր ժողովուրդի արդի վիճակին ու մեր այս դաղութային պայմաններուն մեջ անխուսափելի անհրաժեշտություն մըն է մեր կուսակցական ընկերներու ուժերուն և դրամին որոշ աստիճանի չեղումը. ուրիշ խոսքով՝ կ'ուզե, որ մեր ընկերությունը հնար եղածին չափ քիչ դպչի մեր ընկերներու գրպանին: Նույնն է նաև Շավարշի ու Սասունիի ըսածը, միայն չատ ավելի մեղմ ձևով և ավելի զիջող. Չամալյանը կողմնակից է առանց այլևայլության ամեն աջակցություն տալու, որ մեր ընկերությունը մարմին առնե. ներփակ կը դնեմ ի՛ր բանաձևումը:

Թեև մեր ընկերությունը ոչ մեկ պաշտոնական կապ ու կախում չէ ունենալու Դաշնակցական տեղական ու կենդրոնական մարմիններեն, և հենց Բյուրոյի պահանջն ալ այդ է, բայց և այնպես թե՛ մեզի համար և թե՛ Բյուրոյի անդամներուն համար պարզ է, որ Բյուրոյի բռնելիք դիրքը մեր ընկերության հանդեպ չատ կարևոր է գործի հաջողության տեսակետեն: Ավելի միաձայն որոշում մը ստանալ կարողանալու համար ամենքս կ'ըզգանք, որ նախ մեջտեղեն պետք է վերնա գայթակղության քարը, այսինքն Կյուլպենկյանի միլիոններուն ակնկալությունը: Եվ մեր այս խորհրդակցությունները եկան այն եզրակացության, որ հետևինք գործնական ճամբուն. նախ ջանանք Կյուլպենկյանի հետ չվման ու գործակցության գալու, մնացածը կը որոշվի ստացված արդյունքին համեմատ, այսինքն ճի՛շդ մեր վարչության տված որոշումը իմ Գահիրեեն մեկնելես առաջ:

Այնպես որ առայժմ մեր գործի առանցքը Կյուլպենկյանի մասնակցության հարցն է: Իսկ այդ հարցը իր պատմությունը ունի արդեն, որուն մեծագույն մասին ծանոթ է մեր վարչությունը: Իրա՛վ է, որ ինքը դիմած է մեր կոալակցության Աճեմյանի միջոցով. դիմումին դրդապատճառները հավանորեն բարդ են: Ճի՛շդ մեզի պես կը մտածին նաև հոստեղի մեր ընկերները. կա՛ Դաշնակցությունը սիրաշահելու ցանկություն մը, կա՛ Թյուրքիայի մեջ իր ծրագրած դրամական ձեռնարկներուն իբրև հակակշիռ վոխարինություն մը ընելու ջանքը, կա՛ և իսկապես ազգային օգտակար ու տևական ուրույն գործ մը հիմնադրելու ցանկությունը: Ըստ երևույթին իր մտածումը միջնակարգ հայ վարժարանի մը հաստատումն է: Ահարոնյանը, Խատիսյանը և Աճեմյանը այդ հարցով ունեցած են խորհրդակցություններ Կյուլպենկյանի

Հանձնարարութիւնամբ: Բայց արդիւնք չէ ստացված, որովհետև Կիւլպենկեանը կ'ուզե իր դրամներն ու գործը կապե այն տեսակ իրաւական անձնավորութեան մը, որ արդեն անուն ու դիրք ունենա և իրեն վստահութիւն ներշնչե. և կը մտածե կա՛մ երուսաղեմի պատրիարքութեան հետ կապե, կա՛մ Վիեննայի Մխիթարեաններուն: Իսկ նոր հոգաբարձական մարմնի մը կազմելը իր իսկ ընտրութեամբ, ինչպես թելադրած են մեր ընկերները, չէ ընդունած:

Ուրիշներուն տալիք իր նվերներն ու գումարները բնականաբար իր գիտնալիք բանն է. բայց Դաշնակցութեան հետ սկսած իր խորհրդակցութիւններուն իբրև չարունակութիւն և մեզի եղած ավանսներուն իբրև պատասխան, մեր ընկերութիւնը հիմա կրնա ներկայանար անոր գործակցութեան առաջարկով, և մեր ընկերներու կարծիքով հաջողելու չանսեր կան: Դուն անձամբ ծանոթ ես Կիւլպենկեանին և կարծեմ մեր չարքերուն մեջ այն բացառիկ անհատներեն ես, որոնց խոսքին Կիւլպենկեանը կրնա կարևորութիւն տալ: Ահեմեանին թե՛ դուն կապեր ունիս և թե՛ Աղբալեանը անձնապես, ինչպես և հոս մեր ընկերները: Այնպես որ նոր անուններու մեջտեղ գալը Ահարոնեանի ու Խատիսեանի կողքին և նոր չանքերու հավելումը կրնա ազդեցութիւն ընել, մանավանդ եթե գիտնանք իբրև պահանջ, իբրև իրավունք արժեցնել մեր առաջարկը. չէ՞ որ ինքն է մեզի դիմած, չէ՞ որ արգելք մըն է ինքը մեր առջևը մեր դիմումներու մէջոցին իր բացառիկ հարստութեամբը և նույն կուլտուրական նպատակներուն ձգտելու իր հայտարարութեամբը:

Եվ կարծեմ մեր ընելիքը բռնելու է հետևյալ ճամբան: Նախ դուն կը գրես նամակ մը Կիւլպենկեանին, իբրև նախագահ մեր ընկերութեան և իբրև բարեկամ, ներկայացնելով մեր նպատակն ու կազմը և հայտնելով, որ ընկերութիւնս կը ցանկա, որ ինքն ալ մտնե մեր իրավատեր անդամներուն չարքը և բերե իր դրամական օժանդակութիւնը, ինչպես ինքը նման ցանկութիւն մը հայտնած է իր դիմումովը մեր Փարիզի ընկերներուն[2]: Երկրորդ՝ կը գրես նամակ մը նաև Ահեմեանին, նորեն իբրև նախագահ մեր նոր ընկերութեան. մեր ընկերներու կարծիքով պետք է ան ալ հրավիրել իրավատեր ընկերներու չարքը. հույս հայտնելով, որ պիտի բերե իր աջակցութիւնը այս կուլտուրական կարևոր գործին անձնապես, ինչպես և աղդելով Կիւլպենկեանին վրա: Մենք ալ հոս նույն ուղղութեամբ կ'աշխատինք, երբ անոնք ամարա-

նոցներեն վերադառնան և Աղբայանն ալ Փարիզ հասնի: Մինչ այդ կը փորձեմ կապ հաստատելու մեկ-երկու անձնավորութիւններու հետ, որոնք ազդեցութիւն ունին, կ'ըսեն, Կյուլպենկյանի որոշումներուն վրա հայ կյանքին վերաբերող հարցերուն մէջ:

Խորասանճյանի հետ հարաբերութեան կը մտնինք եաքը, երբ Կյուլպենկյանի հետ մեր դիրքն ու հարաբերութիւնը պարզվի: Ան ալ մեզի ակնարկներ է տված, բայց եաքը ետ է քաշված. նորեն կարծեմ դեմը վստահութիւն ներշնչող իրավական մարմին մը չգտնելուն համար. մասամբ ալ, կ'ըսեն, այս վայրկյանիս քիչ մը խառն են իր անձնական գործերը:

Ա՛յս ճամբան իմ զգացումիս համար չատ է դանդաղ, քանի որ, գիտեմ, Կյուլպենկյանի որոշ պատասխանը չուտով ստանալու չենք. բավական ձգձգե պիտի. բայց կը տեսնեմ, որ ուրիշ ճար չկա. չնայելով որ ամբողջ տարի մը հուսախաբութիւններ են ունեցած, բայց մեր հոստեղի ընկերները նորեն հույսեր ունին այդ մեծահարուստին վրա, մասամբ ալ հարկադրել կ'ուզեն մեր միջոցով: Համենայն դեպս մինչև այդ արգելքը մեջտեղեն չվերնա, մինչև այդ մարդեն հույսերնին չկտրեն, դժվար պիտի ըլլա մեր բոլոր ընկերներուն ձգտումը ընդհանուր Հայտարարի բերելը մեր ընկերութեան շուրջը, իսկ այդ միահամուռ ու վճռական կեցվածքը անհրաժեշտ է գործի հաջողութեան համար:

Ես ինքս անձամբ չատ ավելի կարևորութիւն կու տամ քանի մը տասնյակ ունևորներու օժանդակութեամբ և քանի մը հարյուր ավելի միջին քսակներու նվերներովը կազմված դրամագլխի մը միջոցով ոտքի եկող ընկերութեան մը, քան թե միայն մեկ խոշոր դրամատիրոջ մը քմայքներովն ու պայմաններովը աղճատված ընկերութեան մը: Բայց մեր մտածածը հետզհետե և տարիներու ընթացքին կը կազմվի և մանավանդ մեր առաջին գործունեութիւնը հրապարակ դնելեն եաքը. դուրսի, ոչ- դաշնակցական օժանդակութիւնները այնքան ավելի չատ կու գան, և անխուսափելի կերպով կու գան, որքան որ չատ գործ ու արդյունք դնենք հրապարակի վրա. չեզած գործի մը համար չափազանց դժվար է դրամ հանելը չափազանց կասկածոտ դարձած «դուրսի» մարդիկներեն, մանավանդ երբ գործին վրա կա Դաշնակցական կնիք: Առաջին մեկ-երկու տարին մեր ընկերութիւնը չի կրնար առանց մեր ընկերներու որոշ զոհաբերութեան. դուրսեն եկածը հերիք չըներ:

Բայց անտարակուսս եմ, որ տարվե տարի պիտի պակսի «ընկերներու» դրամական մասնակցումը և ավելնա «համակիրներու» մասնակցումը, և հետզհետե ավելի խոշոր գումարներով: Նույնն է հարցը նաև ամսավճարներու վերաբերմամբ. մեր հրատարակությունները չա՛տ-չատերը պիտի քաշին դեպի մեր ընկերությունը. և մեր լայնախոհ վերաբերմունքը մեկ-երկու տարվա ընթացքին շատ բան կը մեղմացնե կուսակցական նախապաշարումին հանդեպ: Իսկ Կյուլպենկյանը ասոր հակառակ հույս կը ներշնչե մեր ընկերներեն ոմանց, որ առաջին իսկ վայրկյանեն կարող պիտի ըլլան ապահովագրել կուսակցական գրպանները, այլև մեկ անգամեն խոշոր սկսել գործը:

Այս բոլորը դնելով մեր վարչության սեղանին վրա՝ կարոտով կը բարևեմ բոլորդ. *Լևոն Շանթ*

194. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, ուղիղ երկու ամիս է բաժնված եմ քեզմե և ո՛չ մեկ լուր չունիմ, կը հուսամ առողջ ես ու տրամադրությունդ ալ ավելի բաց, ինչպես ամեն անգամ եղեր է Լիբանանեն դարձիդ: Հոս ես անհամբեր կ'ըսպասեմ քու գալուդ: Ես գալուս պես մեր Բյուրոյի հետ հարցը քրքրեցինք մանրամասն. Գահիրե ու Գասպարին գրած եմ այդ մասին երկար ամիս-ամիս ու կես առաջ, չգիտեմ քեզի ոչինչ գրած են, թե ոչ: Երկու խոսքով վիճակը հետևյալն է. մեր ընկերներեն մեկ մասը վախ ունին, որ մեր ընկերությունը[1] պիտի ծանրանա մե՛ր ընկերներուն վրա. ուժ, ուշադրություն և մանավանդ դրամ պիտի քաշե մեր ընկերներեն. անոնք կ'ուզեն, որ գործը գլուխ գա հարուստ մարդու մը աջակցությամբ ու դրամով. պարզ ըսած՝ հիմար ու համառ հույսեր ունին Կյուլպենկյանի վրա: Հետևապես ամեն բանե առաջ նախ հարկադրված ենք Կյուլպենկյանի հետ հարաբերության մտնելու, կամ ավելի ճիշդը՝ նախորդ հարաբերությունը չարունակելու, մինչև որ մերոնք հասկրնան իրենց ակնկալության անիմաստ ըլլալը. որովհետև ես անձամբ ոչ մեկ խոշոր հույս չունիմ այդ մարդուն վրա. այո՛, երբ մեր ընկերությունը կազմակերպվի, շատ կարելի է գումար մըն ալ ինքը տա՝ ահա՛ բոլորը: Ինչպես ես ու դուն շատ ճիշդ ըմբռներ էինք, այդ մարդու միլիոններուն համյքը մեզի բավական գլխացավանք պիտի

տա, առանց որևէ լուրջ օգուտ տալու: Այսպես թե այնպես՝ թե՛ Գահիրե և թե՛ Հոս եզրակացութիւնը եղաւ նախ Կիւլպենկեանի հետ չփում ունենալ: Ամառը ամենքը ցրված էին, հիմա պետք է սկսիլ. և որևէ լուրջ քայլ առնելե առաջ կ'ըսպասեմ քու գալուդ, որ միասին խորհրդակցենք ու միասին նախաձեռնենք: Երկուքով մեր ընկերներուն վրա ալ ավելի ազդեցութիւն կը ըանեցնենք: - Որ մեր ձեռնարկը անհրաժեշտ ու կենսունակ գործ մըն է՝ ոչ ոք կ'ուրանա, ընդհակառակը. որ դուն ու ես մասնավոր կերպով հարմար ենք այդ գործին լծվելու՝ ատիկա ալ չատերը կը շեշտեն. անմիտ ու ավելորդ վախ մը ունին, որ հեղափոխական դրամարկղին[2] վնաս կու տանք. բոլորովին իզուր վախ: Իսկ ես օր օրի ավելի խոր կը համոզվիմ այս գործի բազմակողմանի օգուտներուն ու կարևորութեանը: Ես ինչպես միշտ կրկներ եմ, Նիկո՛լ ջան, բոլոր գործի հաջողութիւնը կախված է իմ ու քու վճռականութենեն: Ինչքան ալ որ «վախեր» ունենան՝ իհարկե մեր ընկերները մեր այս ձեռնարկը արդելողը չեն, քանի որ վերջապես գործը հենց իրենց սրտովն ալ է. կարևորը այն է, որ անգամ մը հիմքը դնենք, որ անգամ մը գործունեութիւն սկսինք. գալդոց մը միջնակա՞րգ թե՛ գրքերու շարք մը, երբ կ'ըլլա հրապարակի վրա, գործը այլևս ինքը կը քալե:

Եկո՛ւր, կը խոսինք թե՛ իրար հետ, թե՛ մեր ընկերներուն, կ'ընենք Կիւլպենկեան անհրաժեշտ բոլոր ձեռնարկները, և կը շարունակենք մեր գործը ու վստահ եմ, որ գլուխ կը բերենք: Կը կարծեմ, որ մինչև այս ամսու վերջը պիտի անցնես Եգիպտոս և կը հաշվեմ, որ մինչև Հոկտեմբեր 10-12 հոս կ'ըլլաս. եթե կարողանաս ավելի շուտ՝ ավելի աղեկ:

Ամեն պարագայի երկու տող գրե՛ ինծի, որ ծանոթ ըլլամ վիճակիդ ու տրամադրութեանդ: Բարևներ մեր ընկերներուն: Ու սրտագին ջերմ համբույր մը քեզի:

Լևոն Շանթ

1928 սեպտ. 19, Շավիլ

Հասցէս՝ Leon Chanth

11. Ave Ed. Bravly, 11

Chaville (S.ot O.)

France

195. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, այս նամակիս հետ միաժամանակ կը կարծեմ Գահիրե պիտի հասնի Նիկոլը և դուք խորհրդակցելու եք. այդ պատճառով ալ կը գրեմ քեզի այս երկու տողը, որ գիտնաք, թե նախորդ նամակես մինչև հիմա ոչինչ չէ փոխված: Նախ՝ ինչպես գրած էի, ամենքը ցրված են Փարիզեն, երկրորդ՝ կ'ըսպասեմ Նիկոլին ամեն ինչ համախորհուրդ ընելու անոր հետ և երրորդ՝ այս ամիս մըն է հիվանդ էի: Նույն ջղային-աղիքային տկարություններս, որ Հանկարծ ուժովցավ և ինծի շատ թուղցուց. սրսկումներ դրինք, առտուները դող կ'ընեմ և հիմա ավելի աղեկ եմ. բայց պարտադրված է վրաս ուտելիքի խիստ զգուշություն և մտավոր աշխատանքի մեծ սահմանափակում: Այս վերջինը մանավանդ ինծի սաստիկ ծանր է, քանի որ թե՛ իմ ապրուստս և թե՛ իմ արժեքս մտավոր լարման վրա է հենված:

Ինչ կը վերաբերի իմ ու Նիկոլի վրա դրված պատրաստուության, կը տեսնեմ, որ բաժնվելու է երկու մասի: Նիկոլը գալուն պես կ'ըսկըսինք հոս մեր կապն ու հարաբերությունը Կյուպենկյանի հարցի չուրջը, այլև ուրիչ աչքի իյնող քանի մը անձերու հետ հոս, ինչպես և Բելգիա ու Անգլիա: Հունվարին տեղի է ունենալու Դաշնակցության ընդհանուր ժողովը[1]. այդ միջոցին պաշտոնական և անպաշտոն ճամբաներով պետք է ջանք գործ դրվի ստեղծելու համար կուսակցական համակամ ու գործոն տրամադրություն մը մեր ընկերության ձգտումներուն ու կազմության հանդեպ. ատկե ետքն է միայն, որ Ամերիկայեն եկած մեր ընկերներուն հետ համախորհուրդ կը վճռենք մեր Ամերիկա անցնելու խնդիրը:

Ես այսպես կը չեշտեմ համակամ տրամադրության մը ստեղծելու պետքը, որովհետև թե՛ հոս և թե՛ Ամերիկա մեր ընկերներուն մեկ մասը կը վախնա մեր ձեռնարկեն, իբրև կուսակցական ուժերու չեղում, մանավանդ դրամական տեսակետեն. համենայն դեպս այն պարզ ու խոր գիտակցությունը չունի մեր ընկերության կարևորությանը հանդեպ հենց զուտ կուսակցական տեսակետեն: Մեկ ուրիչ մասն ալ, որ համամիտ է մեզի, չի հավատար, որ կրնանք անհրաժեշտ եղող դրամագլուխը ձեռք բերել՝ աչքի առաջ ունենալով մանավանդ մեր Ամերիկայի կենդրոնական կոմիտեի բացահայտ ձգտումը, որ է որոշ կու-

սակցական դանձումներեն դուրս մեր ընկերներուն վրա կազմակի կերպով դրամապես չծանրանալ: Անհրաժեշտ է մեր կուսակցական բարձրագույն մարմնի ավելի տաք ու կտրուկ դիրքը, որ այդ մարդիկը չուտով դան այն եզրակացութեան, որ մեր ընկերութիւնը կազմնակի գործ չէ, այլ շնչառակի, մեր ընկերութիւնը կը հաջողի միայն այն ժամանակ, երբ մեր ընկերներու կամքերը արթընանան, երբ մեր կուսակցութիւնը միակամ որոշե այդ գործը գլուխ բերել: Այս պատճառով ալ՝ կը տեսնեմ, որ Հարցի արմատական որոշումը ուղղակի թե անուղղակի կերպով կայանալու է ընդհանուր ժողովի միջոցին: Ըսել կ'ուզեմ՝ հո՞ն է, որ պետք է վճռվի՝ մեր ընկերութիւնը իսկապես համազգային կազմակերպութի՞ւն մը պիտի դառնա, թե՞ քանի մը ընկերներու ձեռնարկած ավելի ամփոփ ու ավելի համեստ գործ մը, թեև իր կարևորութեամբն ու հետևանքներովը նորեն չափազանց արժեքավոր:

Մեր ուզած միջնակարգ դպրոցը և մեր հրատարակչական ընկերութիւնը գլուխ պիտի գա՛. հարցը ծավալին, արագութեան ու առատութեան մեջն է. իրենչ սահմաններու մեջ, իրենչ չափով և ինչքա՞ն ժամանակի ընթացքին՝ վեճը ասոր չուրջն է. գոնե ես այդպես կ'ըմբռնեմ:

Ջերմ ու սրտագին բարևներս քեզի, ընտանիքիդ ու ընկերներուն: Անհամբեր կ'ըսպասեմ Նիկոլի դալուն: Ու կարոտով կը համբուրեմ քեզի. *Լևոն Շանթ*

1928 սեպտեմբեր 24, Շավիլ

196. ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1928 հոկտ. 26, Շավիլ

Սիրելի՛ Համո, Կյուլպենկյանի պատասխանը ինծի չզարմացուց[1]. ընդհակառակը, բոլորովին համապատասխան գտա իր մասին քաղած տեղեկութիւններուս. մասնավորապես Հատուկ խոսած եմ Խատիսյանի հետ. և ինծի կը թվի որ 1/ Կյուլպենկյանը մեծ տրամադրութիւն մը չունի, գոնե առայժմ, խոշոր գումարներ տրամադրելու մշակութային ծրագիրներու վրա, 2/ ինչ ալ որ ընե՝ պիտի նմանի Վենեսուելին ու Վիեննային տված օգնութիւնը, պիտի կապե հին անուն ունեցող ու կրոնական հաստատութիւններու հետ, 3/ իր գլխուն մեջ ունի ըստ

երևույթին բարի ցանկություն մը, բայց ո՛չ ինքը ատոր ինչ ըլլալը գիտե, ո՛չ ուրիշներուն կը վստահի, ո՛չ ալ աճապարանքը ունի. իրեն համար առայժմ հերիք է, որ այդ բարի ցանկությունը իր գլխուն մեջը ունի, քիչ մըն ալ իր լեզվին ծայրը և 4/ մեր ընկերության նման դեռ անգործ, անանցյալ, անձև և անփող միության մը համար անիկա ո՛չ հավատք կրնա ունենար, ո՛չ ալ օժանդակելու ցանկություն: Ես եկած եմ այն եզրակացության, որ մեր ընկերությունը անոր պետք է դիմե, երբ արդեն վերջնապես ձև առած կ'ըլլա, գործի ձեռնարկած և քիչ մըն ալ իր մասին խոսեցուցած. և պետք է դիմե ո՛չ թե ընդհանուր կերպով, այլ որոշ և մասնավոր առաջարկով մը, օրինակի համար՝ այսինչ տեղը այսինչ տիպի վարժարան մը հիմնել իր անունով, կամ այսինչ տեսակի երկերու հրատարակությունը ստանձնել բոլոր այդ երկերուն ճակատը իր անունը, կամ այսքան թվով սաներ պահել այսինչ հաստատություններուն մեջ:

Իսկ իր տված արդի բացասական պատասխանը ես մեզի համար չատ օգտակար կը համարեմ: Դյուրին կերպով, պատրաստ միջոցներով և «օտար» դրամով գործ տեսնելու ցանկություն ունեցողներուն քիչիկ մը սթափում կը բերե: Քիչ-քիչ բոլորս ալ պետք է համոզվինք, որ կաթիլ-կաթիլ, մեծ ջանքերով և մեր ընկերական գրպաններու լուրջ աջակցությամբը միայն մեր ընկերությունը ոտքի պիտի կանգնի:

Երբ Կյուլպենկյանի հետ մեր բռնելիք դիրքը գոնե ինծի համար պարզվեցավ, ես իսկույն ձեռնարկեցի Խորասանջյանի հետ հարաբերության մտնելու, որու մասին ունեցած տեղեկություններս բոլորովին այլ կերպ կը պատկերացնեին իր դեմքը: Արդեն գիտեք, որ Բյուրոյի ներկայացուցիչները և այդ պարոնը երկու տարի է չփման մեջ են իրարու հետ, նույնիսկ մշակած են ընդարձակ ծրագիր մը մեր ընկերության ծրագրին չատ նման, բայց գործը ընթացք չէ առած: Ես գիտեի նույնպես, որ պարոն Խորասանջյանը տեսակ մը վիրավորված էր ու չատ դժգոհ մեր ընկերության կազմության լուրը առնելով և հակառակ էր տրամադրված, իբրև իր գաղափարն ու ծրագիրը գողցող ձեռնարկ մը: Ես նախ Խատիսյանի միջոցով, վերջն ալ Հանըմյանի, իր այդ գեչ տրամադրությունը մեղմել տալու ջանացի և տեսակցություն մը խնդրեցի:

Մեր տեսակցությունը չատ լավ անցավ. ներկա էին նաև Խատիսյանն ու Հանըմյանը: Իր ուզածը աղեկ հասկընալու և իրար մոտե-

նալու լայն հնարավորություն տալու համար հենց սկզբեն իրեն հայտնեցի, որ մեր ընկերության արդի կազմն ու վիճակը վերջնական չէ, ձեռնարկողներու միակ նպատակը եղած է գործին ծայրը տալը և որ պատրաստ ենք ամեն փոփոխության ու հարմարեցման, ինչ որ իրապես կրնա նպաստել մեր նպատակներու իրագործմանը:

Իր առարկությունը երեք կետերու շուրջը կը դառնա: Նախ՝ կը ցանկար, որ մեր կազմը չեղյալ նկատվի, տեսակ մը նորեն սկսինք: Երկրորդ՝ անհրաժեշտ կը գտնե, որ իրեն նմանող երկու-երեք հատ ունևոր մարդիկ գտնվին իրավատեր անդամներուն մեջ: Եվ երրորդ՝ ընկերության կենդրոնը Եվրոպա ըլլա, ո՛չ թե Եգիպտոս:

Այս երեք կետերեն առաջինի վրայեն ես միշտ զգուշությամբ սահեցա՝ հուսալով, որ ինչքան հարցը խորքեն նայինք ու իրարու չվիվինք և իրարու հանդեպ վստահություն ձեռք բերենք՝ այնքան դյուրին կ'ըլլա հաշտության համբա մը գտնելը:

Երկրորդ կետի դեմ ես ո՛չ միայն առարկելիք չունեի, այլ ընդհակառակը, մեր փնտրածն ալ ատիկա է: Սկսա քրքրել, թե ո՞վ կը ցանկար ինքը. տրվեցան անուններ, բայց բոլորն ալ «թեև»-ով ու «սակայն»-ներով:

Երրորդ կետը այն չարաբաստիկ հարցն է, որ ես հենց սկիզբեն գիտեի, թե դվսավոր առարկությունը պիտի դառնա, երբ Համազգայինն ընկերության մը առաջարկը անցընենք Եվրոպայի ու Ամերիկայի հողը: Պարզ է, որ խնդրին մեջ կան անշուշտ անձնական գործոն մասնակցության, ազդեցության, վստահության և նման զգայումներ, և միշտ ալ պիտի ըլլան: Բայց կա նաև խնդրի գործնական կողմը և իրավաբանական կողմը, որուն հանդեպ պետք է, որ մենք մեր դիրքը ճշդենք:

Պարոն Խորասանջյանը կենդրոնը Եվրոպա դարձնելու հարցը կը կապեր ընկերությանս իրավաբանական ճանաչմանը հետ. ան հույս ունի, որ իր անձնական կապերու շնորհիվ, բացառիկ ձևով մը, կը հաջողի մեր ընկերությունը վավերացնել տալու բելճիական կառավարությանը, ասիկա կ'ըլլար անշուշտ մեծ առավելություն մը մեր ընկերներուն համար, բայց իր մինչև հիմա ըսած ձևերուն վրա հենվելով՝ ես դեռ հավանականության վստահությունը ձեռք չբերի:

Համենայն դեպս բոլոր դռները բաց պահեցի, ընդգծեցի, որ մինչև գալ տարի այս ժամանակ իրականացման հողի վրա պետք է

դրված ըլլան մեր ծրագիրները. ինքը խոստացավ ուշադրութեամբ կարդալ մեր ծրագիրը և լրջորեն մտածել իրեն հետը բերելիք ընկերուհիներու մասին: Եվ բաժնվելե առաջ որոշեցինք նորեն չոտով պատահինք իրարու, հենց որ ինքը Անգլիայեն վերադառնա, կամ նորեն հոս, եթե ինքը գա, կամ իմաց տա ինծի, որ ես երթամ Բրյուսել, որ «մեկ-երկու օր հանգիստ աշխատինք միասին», մեկ հայտարարի բերենք երկու ծրագիրները և վերջնական համաձայնութեան մը գանք էական կետերուն վրա, որպեսզի այդ մեր ընդհանուր եզրակացութիւնները պաշտոնապես տեղեկացնեմ Եգիպտոս ձեզի:

Ինքը անձամբ իմ վրաս նպաստավոր տպավորութիւն ըրավ. խելքը գլխին մարդ մըն է, որ սրտանց կ'ուզե ազգային-մշակութային գործ մը գլուխ բերե և որ արդեն վարժված է մեր խելքի մարդոց հետ լրջորեն խոսակցելու. կը մնա վարժեցնենք նաև գործակցելու, եթե հնար է:

Մեր ընկերութեան արդեն կազմված ըլլալու կամ չըլլալու հարցը մեջտեղեն վերցընելու համար, մեր ընկերութեան եկող այդ նոր հիմնադիր անդամներուն վրայեն նորեկի, վերջին եկողի տպավորութիւնը ջնջելու համար և իրենց անծանոթ ու հեռավոր մարդոց հետ կապված ըլլալու անախորժ զգացումը թուլցնելու համար, մասամբ ալ գործնական կողմեն ավելի հարմար ինծի թվելուն համար, կը մտածեմ հետևյալ ձևը տանք.

1. ընկերութիւնը կ'ունենա երեք հատված, երեք ճյուղ՝ Եգիպտոս, Եվրոպա և Ամերիկա: 2. Յուրաքանչյուր ճյուղ ինքը պիտի ընտրե իր իրավական անդամները, օրինակ՝ յուրաքանչյուր ճյուղը յոթնական հոգի, և ինքը պիտի լրացնե իրմեն պակսածները՝ նոր մը առաջարկելով ընդհանուր ժողովի վավերացման: 3. Ամեն ճյուղ ինքը կ'ընտրե իր ճյուղի վարչութիւնը՝ առաջարկելով իր ընտրութիւնը կենդրոնական վարչութեան վավերացմանը. ճյուղային վարչութիւններն են, որ կը վարեն տեղական բոլոր գործերը, միայն ընդհանուր ժողովի գծած սահմաններուն մեջ և ընդհանուր ժողովի քվեարկած բյուտճեով: 4. Ընկերութեան բոլոր գործերուն հակակշիռը, վերին վարչութիւնը և ցանցը կենդրոնացած պահելով կենդրոնական վարչութեան ձեռքը, իսկ ընկերութեան բոլոր իրավունքները պահելով միշտ բոլոր իրավատեր անդամներու ընդհանուր ժողովին ձեռքը: 5. Ընկերութեան իրավական կենդրոնը դիցուք ըլլա Բելճիքան, եթե այդ իրավունքը իրավ որ ձեռք

բերելը հնարավոր ըլլա, իսկ իրական կենդրոնը որը ըլլալը որոշվի առաջին ընդհանուր ժողովին մեջ: 6. Այդ երեք հյուպերու իրավական անդամներուն կազմը այնպես տանիլ, որ մեր կոտակցութ/ան 2/3-ի մեծամասնութիւնը մնա ապահով, երբ բոլոր իրավատեր անդամներու ընդհանուր թիվը առնելու ըլլանք:

Գալով նորեն պարոն Խորասանջյանին՝ անոր պայմաններուն և նախորդ խոսակցութիւններուն ավելի մոտիկեն ծանոթ մեր ընկերներու կարծիքով իր բերելիք նյութական օժանդակութիւնը հազիվ թե անցնի հարյուր կամ հարյուր հիսուն հազար ֆրանկեն. չատ-չատ այդչափ մըն ալ կազմե իր հետը բերելիք ընկերներուն օժանդակութիւնը. բայց անտարակույս կշռին մեջ պետք է հաշվել և իր անունին բերելիք բարոյական աջակցութիւնը, ինչպես և իր սրտագին մասնակցութիւնը մեր գործին ու նպատակներուն:

Այս բոլորը ձեզի տեղեկացնելով՝ հիմա կ'ըսպասեմ իր հրավերին նոր տեսակցութ/ան մը համար[2]: Ուրիշներու հետ առայժմ պիտմամբ խոսիլ չեմ ուզեր խնդրի այս կողմը վերջնապես պարզելու համար: Այս ձևով քիչ մը ավելի դանդաղ կը շարժինք, բայց արագ շարժելու համար ամեն ինչ իրար խառնելեն, գուցե և խաչաձևելեն մեզի օգուտ չկա:

Կազմակերպութ/ան հաջորդ քայլերու մասին ես ալ հիմա ձեզի հետ համաձայն եմ, որ իմաստ չկա Դաշնակ. ընդհ. ժողովին սպասելու. ես այդ միտքը ունեցա, որովհետև Բյուրոյեն ինծի հավաստած էին, որ հունվարին ժողով է ըլլալու. հիմա նորեն քիչ մը հետաձգած են, որով սպասել չենք ալ կրնար, նույնիսկ եթե ուզենք:

Վերջացնելես առաջ պետք կ'ըղդամ ըսելու, որ մինչև նոյեմբերի վերջերը իմ ձեռքս ընավ դրամ չի մնար, թե՛ ընտանիքիս և թե՛ իմ շարժումներուս համար:

Ղրկած նամակներդ կը վերադարձնեմ հաջորդ նամակովս, որ հնար ունենամ Բյուրոյին կարդալու:

Ջեզի ու ընկերներուս սրտագին ու ջերմ բարևներս. Լևոն Շանթ

197. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, չաբթե չաբաթ կ'ըսպասեմ Նիկոլին, որ չի գար, չաբթե չաբաթ կ'ըսպասեմ մեր վարչութենեն լուրի ու դրամի, որոնք նորեն չեն գար:

Այս երկու տողը կը գրեմ պարզապես հարցնելու համար, թե ինչ եղաք և դրամ խնդրելու: Մնացած եմ բոլորովին անդրամ և չատ հիմար դրության մեջ: Եթե մինչև այս նամակս ձեր ձեռքը հասնիլը ինծի դրամ ղրկած չեք, պիտի խնդրեի վարչութենեդ, որ հեռագրով գումար մը փոխադրեք:

Ներփակ կը վերադարձնեմ վարչության երկու նամակները, որ ղրկեր էիք ինծի կարդալու:

Սրտագին բարևներս բոլորիդ. Լևոն Շանթ

1928 դեկտեմբեր 23
Շավիլ

1929

198. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, մայիս 2-ին փակվեցավ ընդհանուր ժողովը[1], բայց մինչև հիմա դեռ խրված ենք ժողովի չարունակությունը կազմող աշխատանքներուն մեջ:

Կ'ըլտապեմ հայտնելու Համազգայինի վարչությանդ մեր գործի առած ընթացքը: Ամբողջ օր մը, այսինքն երկու նիստ, զբաղվեցավ ընդհանուր ժողովը այդ հարցով. գրեթե ամենքը խոսք առին, նպատակին և անհրաժեշտությանը համաձայն են ամենքը, մանավանդ ինչ կը վերաբերի կեդրոնական բարձրագույն հայ վարժարանի մը պետքին. մտահոգություններն ու վարանումները գործնական կարելիության չուրջն էր դրամական տեսակետեն:

Եգիպտոսի գործերուն չորս կողմը եղած ամեն տեսակի նախապաշարումներեն ու անհասկացողություններեն մտքերը ազատ պահելու համար՝ մենք դիտմամբ հարցը մեջտեղ ղրինք ընդհանուր կերպով: Եվ անցավ հետևյալ բանաձևը, կարծեմ միաձայն.

«Քննելով կուսակցական նոր մտավորականություն հասցնելու խնդիրը և այս առիթով ծանոթանալով ընկերներ Աղբալյանի և Շանթի կողմից ծրագրված Համազգային կրթական և հրատարակչական ընկերության նպատակներուն, որոնք ըստ ամենայնի կը համապատաս-

խանեն կուսակցական նոր մտավորականություն հասցնելու պահանջին, ընդհանուր ժողովը կ'որոշէ.

1. կուսակցական մամուլի և հրապարակային ժողովներու միջոցով պրոպագանդ մղել Համազգային կրթական և հրատարակչական ընկերության նպատակները ժողովրդականացնելու համար:

2. Կազմել կազմակերպական շրջաններու մէջ կուսակցական և առավելապես չեզոք անհատներէ մարմիններ Համազգային կրթական և հրատարակչական ընկերության նյութապես և բարոյապես օժանդակելու համար:

3. Աշխատիլ, որ Հայրենակցական միութիւններն ու Հայ կարմիր խաչերն ալ իրենց նյութական և բարոյական օժանդակութիւնը բերեն Համազգային կրթական և հրատարակչական ընկերության առաջադրութիւնները իրագործելու համար»:

Ընդունվեցաւ այսպեսով Համազգայինի սկզբունքը, բայց խոսողներեն չ'ու-չատերը կ'ընդգծեին, որ գործը պետք չէ սկսիլ ընկերութիւն կազմելեն: Գործը հաջողելու շատ աւելի մեծ հավանականութիւններ ունի, եթե սկսվի իբրև անհատական ձեռնարկութիւն, իբրև մասնավոր դպրոց մը կապված միայն իմ ու Նիկոլի անունին: Երբ մեկերկու տարիներու ընթացքին դպրոցը հաստատվի և քանի մը գրքերու հրատարակութեան հիմքը դրվի՝ ունենալով մեկ-երկու տեղ իրեն նպաստող մարմիններ և անհատներ, վերջը շատ աւելի մեծ դյուրութեամբ այդ կապակցութիւնը կարելի է լայնացնել և վերածել ընդհանուր ընկերութեան մը:

Ես ու Նիկոլն ալ արդեն հետզհետե եկած էինք նույն եզրակացութեան: «Ընկերութիւն» բառը չատերը կը խրտնեցնեն, ան ալ «համազգային». թե՛ մեր համախոհները, որոնք տարտամ վախ մը ունին կուսակցութեան կողն ի վեր նոր մրցակից հաստատութեան մը բուսնելեն, և թե՛ մեր հակառակորդները, որոնք իսկույն աղմուկ պիտի բարձրացնին հակառամկավար և հակաբարեգործական չարժում մը ներկայացնելով մեր կատարած գործը և պիտի խրտնեցնեն այն տարրերը, որոնք կրնան մեզի նպաստեր և կը համակրեն մեր նպատակներուն:

Մյուս կողմեն ալ հետզհետե պարզ կը դառնա ինձի համար, որ նախ անհրաժեշտ է մեջտեղը գործ մը դնել: Եղած դպրոցի մը համար ունևոր տարրերեն օժանդակութիւն գտնելը գրեթե ապահով է,

մանավանդ երբ ներկայացվի իբրև անհատական-մասնավոր գործ. ընկերության մը անունը ավելորդ բարդություններ կ'առաջացնէ, բացի կուսակցական գունավորումե ու վախե, այլև զանազան տեսակի պատվախնդրություններ և հնոտի հաշիվներ, չէ՞ որ ունինք իրավատեր և ոչ-իրավատեր. մեկը այսինչին հետ ըլլալ չուզեր, մյուսը պատվին չկերցներ, որ դրամ տա ու մեջը չըլլա, երրորդը ընդհանրապես անվստահություն ունի այս կարգի «կազմակերպություններու» հանդեպ. հարցը շատ կը պարզվի, երբ որոշ անհատ մըն է դիմողը, որոշ գործի մը համար, ամենուն համար սովորական հին ձևն է, պարզ ու կարճ: Հետզհետե ավելի խորեն կ'ըմբռնեմ, որ միայն սկսված և գոյություն ունեցող գործը կրնա տևական կապեր ապահովել և կենսունակ հետաքրքրություն:

Ամենեն առաջ պետք է ստեղծել գործունեության կենդանի բույն մը և դեպի այդ բույնը պիտի քաշել սիրտ ու դրամ ունեցող անհատներուն և կազմակերպություններուն ուշադրությունը: Նիկոլն ու ես եկած ենք այն եզրակացության, որ Պեյրութի մեջ այս սեպտեմբերին ինչ գնով ըլլա պետք է հիմքը դնել կեդրոնական հայ բարձրագույն գիչերօթիկ վարժարանի մը: Տեղը պետք է ըլլա Պեյրութը, որովհետև թե՛ Եվրոպա և թե՛ Ամերիկա մեծ ու կենդանի հետաքրքրություն կա Սյուրիայի հանդեպ[2]: Դուրսեն ոչ մեկ լուրջ օժանդակության հույսը ունենալ չենք կրնար, եթե Եգիպտոսի մեջ հիմնել մտածենք:

Այդ դպրոցը առայժմ կը բանանք իմ ու Նիկոլի անունով, արտաքին աշխարհին համար իբրև մասնավոր ձեռնարկ մը, որը հենված է մեկ-երկու մարմիններու տևական օժանդակության վրա: Այդ մարմիններեն առաջինն է Եգիպտոսի մեր Համազգայինը, որուն անդամն ենք մենք և որուն համարատու ենք մենք մեր ամբողջ գործին համար, ինչ կերպարանք ալ որ առնե այդ ընկերությունը: Մեր երկրորդ հենարանը հավանորեն դառնալու է Ամերիկայի Հայ կարմիր խաչը: Օժանդակող երրորդ աղբյուր մըն ալ ջանալու ենք հաստատենք հոս Եվրոպայի մեջ:

Մեր հին որոշումն էր, որ ընդհանուր ժողովեն անմիջապես ետքը մեզմե մեկը, հավանորեն Նիկոլը, անցներ Ամերիկա անմիջական օժանդակության մը հիմքը դնելու և կազմակերպություն առաջացնելու, երկուքնուս երթալու մասին չէինք մտածեր, որովհետև ահագին ծախքերու հետ է կապված. մեկ հոգու երթալ-գալը չորս-հինգ ամսով

հազար տոլարի կը նայի: Այս բոլորի մասին առանձին խորհրդակցութիւն ունեցանք Ամերիկայեն եկած մեր չորս ընկերներուն հետ, որոնք են Դարբինեանը, Թաշճեանը, Թանդրճեանը և Խաչեանը: Ջորան ալ խորհուրդ չի տվին մեր հիմա Ամերիկա անցնիլը, ըլլա միասին թե առանձին: Եվ հետևյալ գլխավոր պատճառաբանութեամբ.

1/ Նիկոլի և իմ անունս կապված ըլլալով Եգիպտոսի դեպքերուն հետ[3], ոտքերնիս Ամերիկա դնելնուս պես հակառակորդ թերթերը խլկույն պետք է սկսին սուտն ու իրավը իրար խառնել, մտքերը պղտորել և բուռն պայքար մղել, որ անկարելի պիտի դարձնեն ոչ-գաղնակցական անհատներուն մուտենալը, որը մեր գլխավոր նպատակն է:

2/ Ամերիկա պիտի փոխադրե «ձեր Եգիպտոսի ազմուկները», որ բնավ ցանկալի չէ: Համերաշխութեան և համագործակցութեան ընդգծված չեզո մը ունենին ընդհանուր ժողովին մեջ ընդհանրապես ամենուն և մասնավորապես Ամերիկայի պատգամավորներուն ճառերը և շատ կը մեղադրեին մեզի և Եգիպտոսը, թեև իհարկե լրջորեն իրենք ալ չեն հավատար այդ համագործակցութեան: Բայց կը ձգտին:

3/ Մեր Ամերիկա երթալը շատ ավելի հարմար կը համարեին, երբ արդեն հաստատված կ'ըլլանք Սյուրիա և Հոնկե է, որ կ'անցնինք Ամերիկա, արդեն Եգիպտոսեն և անցած դեպքերեն բոլորովին «մաքըրված»: Լավ կը համարեին մանավանդ երթանք Ամերիկա գործին հիմքը դնելեն ետքը. Հանուն սկսված և ձեռնարկված գործի մը մեր հաջողութիւնը անհամեմատ մեծ կ'ըլլա թե՛ ընկերներու և թե՛ մանավանդ ոչ-ընկերներու շրջանակին մեջ:

4/ Համենայն դեպս մարդոց հետ չվիվելու, տեսակցելու, խմբվելու և նման ձեռնարկներ գլուխ բերելու տեսակետեն ամառը չափազանց անհարմար ժամանակ է. այս կարգի «դրամական գործառնութիւններու» համար հատուկ ժամանակը հոկտեմբերեն ապրիլ է:

Եվ խորհուրդ տալով մեզի, որ հիմա չերթանք մենք Ամերիկա, մեզի խոստացան, որ ամեն կերպ կ'աշխատին իրենք և հունիսին կամ հուլիսին տեղի ունենալիք Հայ կարմիր խաչի ընդհանուր ժողովին մեջ մեր գալոցին ի նպաստ տարեկան խոշոր գումար մը քվեարկել կուտան: Ամերիկայի Կարմիր խաչը արդեն նման գալոցական նպատակներու կ'օժանդակե Հունաստանի և Սյուրիայի մեջ՝ ավելի վոքր չափերով: Մեր գործի խոշոր կարևորութիւնը և մասամբ ալ մեր անունը աչքի առաջ ունենալով՝ մեզի վստահացուցին, որ տարեկան

5000 տոլար մը կը տրամադրվի մեզի: Այս մասին խոսք եղած էր նաև ընդհանուր ժողովին մեջ, հիմա կրկին և ավելի որոշակի հավաստեցին և խոստացան հաջողցնել:

Խնդրի առած այս ձևը արդի պարագաներուն մեջ մեզի համար նպաստավոր է: Նախ՝ հուլիսեն սկսած անմիջապես մեր տրամադրութեյան տակ կը դնե հաստատ գումար մը և իսկույն գործը ձեռնարկելու սկզբնական հնարավորութեյունը կու տա. երկրորդ՝ մեր արդի նեղ պայմաններուն մեջ կը կրճատե Ամերիկա երթ ու դարձի համար ծախսվելիք գումարը, որ Համազգայինը դրկեր պիտի մեզի և որ հիմա կը գործադրվի բուն գործի հիմնադրութեյանը վրա. և երրորդ՝ կարմիր խաչի տևական աջակցութեյունը գործնականին մեջ նաև ապագային կրնա փոխարինել Ամերիկայի մեջ մեր փռել ուզած ցանցը. մանր դրամահավաքութեյան կարիք չի մնար, որ մեր ընկերութեյան ամենեն բարդ ու դժվար մասն է գործնականորեն: Կը մնա ավելի խոշոր և անհատական աղբյուրներու դիմելու խնդիրը, ինչպես և Հայրենակցական միութեյուններու[4] օժանդակութեյունները փնտրելը, որ սաներ պահեն մեր դպրոցին մեջ: Այս վերջիններեն մեկ-երկուքը հույս ունինք հեռվեն ալ հետաքրքրել կարողանանք զանազան կապերու միջոցով. բայց կարևորը անշուշտ կ'ըլլա, որ գուցե հաջորդ տարի Նիկոլը կամ ես անցնինք Ամերիկա աշնանը:

Այնպես որ այս բոլորեն ետքը մեր անմիջական ընելիքը մեր աչքին հետևյալ ձևով կը պատկերանա.

ա. Նիկոլը այս ամսու վերջերը կը վերադառնա Եգիպտոս ձեզի մանրամասն զեկուցում տալու ընդհանուր ժողովի մասին և ձեզի հետ միասին աշխատելու, որ Համազգայինի մեքենան լարվի և բանիլ սկսի առայժմ միայն Եգիպտոսի մեջ, իբրև հիմքը ապագա ավելի լայն Համազգայինի և իբրև գլխավոր հենարանը մեր ձեռնարկութեյան:

բ. Ես հոս կը չանամ նոր գումար մը ապահովելու մեկ-երկու ունևորներու դիմելով, գլխավորապես աչքի առաջ ունիմ Խորասանջյանն ու Ղուվասյանը: Եթե հարմար ըլլա՝ կ'անցնիմ ինքս Պելճիկա: Եթե Գասպարը ամառը Եվրոպա գալու ըլլա, ինչպես որ մտադիր էր, անոր հետ համախորհուրդ կարելի է ես ալ կ'անցնիմ Անգլիա և գուցե հոն կարողանանք օժանդակ խումբի պես բան մը հիմնելու ոչ-դաշնակցական շրջանակի մեջ: Բայց ասոնք բոլորը եթե-ներ են, որովհետև այս ամենը անհամեմատ մեծ հավանականութեյուն ունին հաջողանքի,

երբ գործ մը ըլլա մեջտեղը դրած: Համենայն դեպս, եթե Գասպարը գալու ըլլա, բան մը կը փորձենք:

գ. Ամերիկայի Կարմիր խաչի օժանդակութիւնը վճռվելուն պես, այսինքն օդոստոսին, կ'անցնիմ Պեյրութ, ուր կու գա և Նիկոլը, անմիջապես գործի ձեռնարկելու համար: Հառաջիկա տարեշրջանին համար կը բանանք միայն մեր կեդրոնական վարժարանի նախապատրաստական երկու կամ երեք կարգերը զիշերօթիկ կամ երթևեկ, այսինքն ոսման յոթներորդ և ութերորդ տարիները, եթե պահանջ եղավ նաև ոսման վեցերորդ տարին, իսկ հիմնական երեք դասարանները հետզհետե կը բացվին հաջորդ տարիները: Երեսուն հոգի աշակերտ ունենալը այդ երկու կամ երեք կարգերուն մեջ հաջողութիւն կը նկատենք սկզբի համար:

Մեր ծրագիրն է ընկեր-ուսուցիչներու, ուսուցչական ժողովներու, գուցե և որոշ նյութական օժանդակութեամբ և մանկավարժական ղեկավարութեամբ կամաց-կամաց մեր դպրոցին շուրջը ցանց մը փուել մանկապարտեզներու և նախակրթարանի վարին կարգերու՝ կապված մեզի հետ, ուրկե ապագային կ'ընտրվին և մեր դպրոցը անցնելիք-ներուն մեկ հատվածը:

Նմանապես մեր ծրագիրն է անմիջապես սկսիլ նաև հրատարակչական գործը՝ ծայր տալով դասագրքերեն, եթե հարմար անձը գտնենք՝ կը ձեռնարկենք մանկական ամսաթերթի մը հրատարակութեան. քիչ մը ավելի ուշ նաև բաժանորդագրութեամբ ամսե ամիս լույս տեսնելիք մատենաշարի մը: Իհարկե ամեն ինչ կախված է մեր դրամական և ընկերական տրամադրելի ուժերու չափեն:

Արդ՝ կը խնդրինք մեր Համազգայինի ընկերներեն ու վարչութենեն, որ չուտով պատասխանեք մեզի, թե այս բոլորի մասին ինչ կը մտածեք դուք, կը վավերացնե՞ք մեր եղրակացութիւնները և ինչ չափով:

Գիտեմ, որ մեր Եգիպտոսի ընկերները կը ցանկան, որ գործի կեդրոնը դառնա Գահիրեն իրենց անմիջական հսկողութեամբ ու գործակցութեամբ: Մեզի համար ալ անշուշտ շատ ցանկալի է ձեզի հետ ըլլալը և մե՛ծ թեթևացում է մեզի համար ձեր անմիջական գործակցութիւնը, բայց պայմաններն այնպես են դասավորված, որ կը կարծենք հարկադրված սիրտ ըլլանք կանգ առնելու Պեյրութի վրա: Բայց եթե դուք նորեն վճռեք, որ դպրոցը բացվի Գահիրե, գուցե լայն

օժանդակութեան վրա հույս պետք չէ դնեք. նյութական ամբողջ բեռը պիտի ծանրանա Եգիպտոսի վրա, մանավանդ սկզբնական դժվար տարիներուն:

Ուրեմն կ'ըսպասինք ձեր պատասխանին, և ձեր պատասխանին հետ անշուշտ չեք մոռնար նաև Փանջունիի[5] նշանավոր հանգերգը՝ դրամը, որպեսզի, բացի ապրուստի հարցեն, թե՛ Նիկոլը տեղեն չարժվիլ կարողանա և թե՛ ես:

Ընկերական ջերմ ու սրտագին բարևներս մեր ընկերներուն, համբույրներս ալ վարչութեանդ. *Լևոն Շանթ*

1929 մայիս 10, Շավիլ

199. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, մինչև հիմա լռած էի, որովհետև ամիսեն ավելի է օրը օրին սպասած ենք Ամերիկայի Կարմիր խաչի պատասխանին: Այդ պատասխանը, որ գրված է օգոստոս 14-ին, ստացա երեկ. պատճենը կը ղրկեմ վարչութեանդ այս նամակիս հետ:

Այդ պատասխանեն պիտի տեսնեք, որ այս տարվան համար առնվազն երեք հազար տոլլար մեր տրամադրութեան տակ է, միայն նախապես կ'ուզեն վստահ ըլլալ, որ գործը արդեն սկսված է և որ մյուս շրջաններեն ակնկալված գումարները հաստատ են: Այդ «մյուս շրջանները» իհարկե ամենեն առաջ Եգիպտոսի Համազգայինն է, որու մասին ես իմ դիմում-նամակիս մեջ հատուկ ու հստակ գրած եմ: Ուրիշ խոսքով՝ Ամերիկայեն դրամ ղրկելու համար կուզեն նախապես վստահանալ Համազգայինի պաշտոնական հանձնառութեան, ինչպես և իմ ու Նիկոլի Պեյրութ անցնելուն:

Նիկոլն ու ես հույս ունեինք գործի սկզբնավորութիւնը կատարենք միայն Ամերիկայի միջոցով՝ առանց Եգիպտոսի մեր ընկերներուն դրամական նեղութիւն տալու գոնե մինչև Նոր տարի. ահա՛ Ամերիկայի պատասխանը կը հարկադրե մեզի նորեն անմիջապես Համազգայինին դիմելու, որ մայրն ու տերն է այս գործի:

Նախ՝ կը խնդրինք, որ Համազգայինի մեր ընկերները խորհրդակցելով որոշեին, թե ինչ գումարի է հասնելու այս տարի մեր ղպրոցին հասցնելիք ձեր օժանդակութիւնը. և ձեր որոշումը պաշտոնական

գրութեամբ մը հաղորդեիք ինծի, որ ես ալ պատճենը ուղարկեմ Ամերիկա, իբրև վստահացում: Դուցե մեր ընկերներն ալ հարմար դտնեն, Ամերիկայի պես, իրենց տալիք դումարին մեկ մասը հաստատ նշանակել, մյուս մասը եթե-ի մը կապել: Դումարի որոշումը անշուշտ մեր ընկերներու գիտնալու բանն է. միայն պարտք կը համարեմ հայտնելու, որ թե՛ Կարմիր խաչի վերաբերմունքին համար և թե՛ դպրոցը բացված հայտարարելեն անմիջապես ետքը մեր հետզհետե կատարելիք հաջորդ զանազան դիմումներուն համար շատ մեծ կարևորութիւն ունի, որ Համազգայինի հանձնառութիւնը զգալի դումար մը ըլլա: Այս առաջին տարվան համար անհրաժեշտութիւն մըն է ասիկա. պետք է վստահութիւն ներշնչենք, թե սկսվող գործը կռնակ ունի, այդ վստահութիւնը կը վերածվի կապիտալի:

Երկրորդ՝ կը խնդրեմ Համազգայինեն, որ փոխադրեք ինծի հարյուր ոսկի. և գործի օգտին համար կը խնդրեմ՝ կարելի եղածին չափ շուտ. արդեն ամիս մը կորսնցուցինք Ամերիկայի պատասխանին սպասելով: Սեպտեմբեր 23-ին չոգենավ կա Մարսիլիայեն մեկնող. հիանալի կ'ըլլա՝ եթե մինչև այդ օրերը հնար ունենանք դրամը հասցնելու. հաջորդ չոգենավը հոկտեմբեր 1-ին է, որ ըսել է՝ Պէյրութ կ'ըլլամ հոկտեմբերի կեսերուն: Այդ հարյուր ոսկիին մեկ մասը թողնելու եմ տունը, մեկ մասը ճամբու համար է, իսկ մնացածն ալ Պէյրութ հասնելուս ձեռքս ունենամ, մինչև Ամերիկայի դրամը հասնիլը, որու մասին առաջվընե կը հոգամ: Ամեն թյուրիմացութեան առջևն առնելու համար հայտնեմ, որ այդ հարյուր ոսկին Համազգայինի հանձնառութեան ի հաշիվ է ըլլալու և ծախսվելու է ի հաշիվ դպրոցի բացման. այսինքն իմ ծախսած դումարներս անցնելու են իմ ռոճիկիս հաշվին, բացի իհարկե ճամբու ծախքեն:

Թե՛ հոս գործեն հասկըցող մարդոց դասաղութեամբ, թե՛ Սյուրիայեն գրող մեր ընկերներու համոզումով և թե՛ իմ ու Նիկոլի ըմբռնումով գործը հաջողութեան կը խոստանա, միայն թե՛ անգամ մը սկսինք, անգամ մը հիմքը դնենք:

Բոլոր մարդիկը, որոնց հետ որ այդ մասին խոսք եմ ունեցած, որոնց օգնութեան ու խորհուրդին դիմեր եմ՝ մեջը հաշվելով նաև Կարմիր խաչը, ինչպես որ կը տեսնեք, բոլորը միաբերան նույնը կը կրկնեին. «Սկսեցե՛ք»: Սկսած գործին օգնելը թե՛ ընդհանրապես

ամենուն համար և թե՛ մասնավորապես արևմտահայ մտայնութեան համար անհամեմատ ավելի ըմբռնելի է:

Հաշված ենք, որ միմիայն Համազգայինի և Կարմիր խաչի օգնութեամբ մեր դպրոցը այս տարին կրնա բոլորել, եթե սաներ պահող ուրիշ օժանդակութիւններ չունենանք իսկ. անշուշտ որոշ սեղմումներով և գգալի պակասներով. բայց ինչպես արդեն գրեր եմ Ձեզի՝ Նիկոլն ու ես վճռած ենք սկսինք. Համազգայինի անունով մենք հայտարարեցինք, որ այս աշնան դպրոցը պիտի բացվի. և պիտի՛ բացվի: Բայց իսկույն ավելցնեմ, որ մենք հույսեր ունինք ավելի լայն օժանդակութեան: Ամենեն առաջ քանի մը Հայրենակցական միութիւններ, որ սաներ պահեն մեր դպրոցը իրենց հայրենակիցներեն: Այդ միութիւններեն մեկը արդեն իսկ 2000 տոլարի հանձնառութեան պատրաստ է ինը կամ տասը գիշերօթիկի փոխարեն, և հանցավորը մենք ենք, եթե կորսնցնենք այդ տղաքը մեր այս չափազանց ուշացումներովը, գոնե այս տարվան համար: Ամերիկայի այդ միութիւններեն զատ՝ հոս Եվրոպայի մեջն ալ նույն ձևով սաներ պահելու պայմանով անհատական օժանդակութիւններու հավանականութիւնը կա, երբ անգամ մը դպրոցը աշխատիլ սկսի:

Քեզի և բոլոր ընկերներուս սրտագին բարև ու ջերմ համբույրներ: Նիկոլը սեպտեմբեր 10-ի չոգենավով ճամբա կ'իյնա դեպի Եգիպտոս:

Լևոն Շանթ

1929 օգոստոս 26
Շավիլ

200. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային կրթական և հրատարակչական ընկերութեան վարչութեան հարգո նախագահին

Սիրելի՛ Համո, ստացած եմ քու իրար ետևէ գրած երկու նամակներդ ու հեռագիրը, որոնց ամփոփումը հետևյալն է. «Նոր Հույսեր դնել Եգիպտոսի մեր ընկերներուն վրա սխալ կը լինի. այլևս նախկին ոգևորութիւնը և խանդավառութիւնը չկա, այլևս տրամադրութիւն չկա նոր զոհաբերութիւններ անելու, որովհետև մյուս գաղութներում

ոչ մի տեղ գործ չկատարվեցավ». խորհուրդ կու տաս մի կերպ այստեղ ապհովվեմ սկզբնական ծախքերը, երթամ Սյուրիա գործը հիմնեմ, և վերջը «կարելի է առանձին ջանքերով այստեղ ևս հնարավոր լինի ամսավճարներով մի խումբ ընկերներից ապահովվել 15-20 ոսկի ամսականի»:

Համո՛ջան, ապշեր մնացեր եմ, այն աստիճան անհասկանալի և լուսինեն ինկած խոսքեր են ասոնք ինծի համար: Ես միայն մե՛կ բան մը գիտեմ և հաստա՛տ գիտեմ: Տարի մը առաջ խումբ մը ընկերներ փոխադարձ համաձայնությամբ և փոխադարձ հանձնառություններով վճռեցինք միջնակարգ վարժարան մը հիմնել մեր գաղափարներով տոգորված երիտասարդության մը հասցնելու համար. այդ նպատակով հիմնեցինք ընկերություն մը, վավերացուցինք ու հայտարարեցինք. և գործի ավելի լայն հաջողության համար Նիկոլն ու ինծի ընկերության ծախքով ղրկեցիք, որ նաև ուրիշ գաղութներու մեջ մեր ձեռնարկը համակրող ու օժանդակող մարդիկ ճարենք: Այս բոլոր փոխադարձ հանձնառություններեն ու կատարված ջանքերեն ետքը՝ քու վերի գրած տողերդ ես ուղղակի չեմ հասկընա. ատիկա ինծի համար չինարեն է:

Շատ աղեկ կ'ըմբռնեմ, որ մեր այս կամ այն ընկերոջ կյանքի պայմանները կրնան ավելի դժվարացած ըլլալ, շատ աղեկ կ'ըմբռնեմ, որ իրավացի կամ անիրավ դժգոհություններով մեր ընկերներեն մեկուն կամ մյուսին ոգևորությունը կրնա սառչել կամ պակսել. ընդունեմ վայրկյան մը նույնիսկ, որ «գաղութներից ոչ մեկի մեջ ոչ մի գործ կատարված չըլլա». Է՛, աղեկ, ի՞նչ ընենք, ասիկա մի՞թե իրավո՞ւնք կու տա մեր որևէ մեկ ընկերին, որ լքե ծրագրված գործն ու հանձնառությունը ու ետ քաշվի: Ո՛չ: Այս ձմեռ մեկ-երկու ամիս ես գտնվեր եմ նյութական չափազանց ծանր պայմաններու մեջ մինչև Նիկոլի գալն ու դրամ բերելը. այդ նույն միջոցին, այսինքն մեր ընդհանուր ժողովեն առաջ, ընկերական-կուսակցական խեղդող մթնոլորտ մըն էր չորս կողմս, մասնավորապես Եգիպտոսի դեմ բողոք ու քննադատություն կար միայն մեջտեղը, իսկ մեր Համազգայինի դեմ շատ սպաղ վերաբերում: Հոս քանի մը ունևտրներու հետ բան մը հաջողցնելու փորձերս միշտ կը հանդիպեին պարապ ֆրազներու կամ «իրեն հաց կը փնտրվի»-ի քողարկված երգին. իսկ Ամերիկայի մեր կեղրոնական կոմիտեն պաշտոնապես կ'ըսպառնար ինծի ու Նիկոլին հակառակ

պրոպագանտա սկսելու մեր չարքերուն մէջ, եթէ ոտքերնիս Ամերիկա դնենք: Արդ՝ այդ պայմաններուն տակ էի, որ Ֆրաֆտ-Բոննարը եկաւ ու առաջարկեց ինծի ժընևի իր ֆուայեին ու դպրոցին տեսչութիւնը. ես բնականաբար հրաժարվեցա՝ հայտնելով որ կապված եմ Եգիպտոսի մեր ձեռնարկին: Հիմա խնդրեմ, ըսե՛ ինծի, Համո՛ ջան, դուն երբևիցե կրնայի՞ր ներել ինծի, եթէ ես մեր ձեռնարկեն քաշվեի ու հանձն առնեի Բոննարի առաջարկը, ինչքան ալ թեկուզ վշտացած ըլլայի, «խանդավառութիւնս պաղած» և ներկայացող պատեհութիւնն ալ բոլորովին բացառիկ: Ըսե՛ խնդրեմ, մեր ընկերներեն ո՞ր մեկը կը ներեր ինծի. և ինչ զզվելի անուն կը փակցնեիք դուք իմ վարմունքիս: Հիմա սա ինչե՛ր կը գրեք դուք ինծի: Փոխադարձ ընկերական վստահութեամբ և փոխադարձ համաձայնութեամբ երբ ընկեր մարդիկ իրարու կը կապվին որոշ գաղափարական նպատակի մը իրագործմանը համար՝ այլևս անհատապես ետ քաշվիլ չկա. գործը կրնանք լքեր միայն ընդհանուր համաձայնութեամբ:

Ասիկա իբրև սկզբունք: Գամ ավելի գործնականին: Ինչ ժամանակ եք պտեր հուսահատելու և խանդավառութիւն պաղեցնելու: Մարդս կը պաղե, երբ գործը ձախ կերթա. ինչ պատճառ կա կոտրվելու, երբ գործը իրականացման ճամբան է բռնած: Մեր սիրտը կոտրած ընկերներու հոգեբանութիւնը անչուշտ արդյունք է ամբողջ տարի մը իրարմե կտրված ըլլալնուս և շատ երկար ժամանակ գործը անորոշ մնալուն: Առաջին անգամ ես զգացի մեր ընկերներու անտեղի հոռետեսութիւնը, երբ Գասպարը Փարիզ բերավ ձեր գաղնան խորհրդակցութեան պատկերը: Այն ժամանակ դուցե նորեն որոշ չափով մը իրավունք ունենայիք. բայց հիմա՞: Կը տեսնեմ, մեծ տպավորութիւն է ըրեր մեր ընկերներուն վրա, որ Համազգայինի սեփական ցանց փռել չի կրցանք: Բայց ատիկա չի նշանակեր, թե մյուս գաղութները մեր գործին համար ոչինչ չեն ըներ: Ինչպե՞ս թե մյուս գաղութները ոչինչ չեն ըներ, երբ ես ինքս ղրկեցի ձեզի Ամերիկայի Կարմիր խաչին տարեկան առնվազն երեք հազար տոլլարի հանձնառութեան նամակը, և ատոր կից նամակիս մեջ գրեր եմ ձեզի, որ այդչափ գումար մըն ալ կրնանք հուսալ ուրիշ աղբյուրներե, միայն պայմանով մը, որ գործին հիմնարկումը այսպես իզուր չի ձգձգվի: Համազգային ընկերութեան հատուկ ցանց մը փռելը բոլոր գաղութներու մեջ՝ ձև մըն էր միայն, ճամբա մը մեր նպատակի իրագործման: Ինչ կը պահանջեիք դուք ձեր երկու ներկա-

յացուցիչներեն. Նիկոլն ու ես երբ տեսանք, որ այդ ձևը մեր արդի իրականութեան մեջ գլուխ գալու բան չէ, ի՞նչ ընեինք, պատի՞ն զարնեինք մեր գլուխը, թե՞ լքեինք մեր բուն նպատակը: Չէ՞ որ վերջապես մեր բոլոր ընկերներու հատակ նպատակն էր, և է, հիմնել միջնակարգ վարժարան մը, հրատարակել գրքեր, մանաւորապես դասագիրք և առոր համար Եգիպտոսեն գատ գտնել նաև ուրիշ տեղ դրամական աղբիւրներ: Ահաւասիկ դպրոցը բանալու վրա ենք, լուրջ օժանդակ աղբիւր մը արդեն գտած ենք և ուրիշ աղբիւրներու բացումն ալ կապված է գործի սկզբնաւորութեան հետ: Հիմա մեր Եգիպտոսի ընկերները ո՛չ թե ձեռնթափ ըլլալու մասին պիտի մտածեն, այլ կրկնապատիկ եռանդով աշխատանքի լծվելու և մեր Համազգայինի ցանցը գոնե Եգիպտոսի ու իր հարակից երկիրներուն մեջ իրականացնելու. առայժմ միայն հոս, իբրև սկիզբ, տարվե տարի կը լայննա օղակը, երբ մանաւանդ գործը մեջտեղ երևան գա:

Այո՛, գիտեմ, կրնա ըլլար ծանր է մեր ընկերներուն համար իրենց հանձնառութիւնը, այո՛, ինծի համար ալ ծանր է այս հասակիս մեջ իմ այս խախուտ առողջութեամբս աշխարհիս մեկ ծայրեն մյուսը երկարող այս տեսակ բարդ գործի մը տակ մտնելը. գուցե բոլորս ալ սխալ ըրինք, որ լծվեցանք. բայց անգամ մը հանձն ենք առեր ու պիտի կատարինք. կես ճամբուն վրա կենալ չկա. և պիտի քալինք բոլորս միասին, ընկերովի. մենք կապված ենք իրարու: Վերջապես մեր Եգիպտոսի ընկերներն էին, որ ծնան այս գաղափարը և ձևակերպեցին գործը. իրենք եղան ծնողը և բնականաբար իրենց վրա կ'իյնա ծնողական պատասխանատուութիւնները, որոնք, ինչպես ամենքս ալ գիտենք, միշտ ծանր են. տալը կա, ստանալը չկա:

Աս ալ պետք է աչքի առաջ ունենանք, որ ես ու Նիկոլը ամբողջ տարի մըն է ձեր հրահանգով և ձեր անունով ենք խոսեր, ներկայացուցեր ենք Եգիպտոսի Համազգայինը իբրև տեր և դրամական հաստատ հենարան մեր սկսելիք ձեռնարկին. և առիկա կարևոր ուժ է եղեր մեր ձեռքը ամենուն վրա աղդելու: Հիմա, խնդրեմ, երևակայեցեք այն վատ զգացումն ու հիասթափութիւնը, որ ունենան պիտի թե՛ մեր կուսակցական կեդրոնները, թե՛ անհատ ընկերները, որոնք ձեռքի տակե կ'աշխատին մեր գործի հաջողութեան համար, թե՛ Կարմիր խաչը և թե՛ ուրիշները, որոնց հետ կապ ձգել կ'ուզենք. չէ՞ որ մեր ամբողջ խոսքն ու գործը ամենուն աչքին իբրև պլըֆ պիտի ներկայանա:

Ասիկա ո՛չ միայն մեր գործը լքել կ՚ըլլա, այլ ուղղակի հիմնովին վարկաբեկել ու քայքայել, բա՜ն մը, որ անշուշտ մեր ընկերներեն և ոչ մեկը ո՛չ կը մտածե, ո՛չ կը ցանկա:

Այնպես որ՝ նամակիս այս առաջին բոլորովին ավելորդ մասեն ետքը, որ բնավ պետք չէր գրելու հարկադրված ըլլայի, ես կու գամ նորեն իմ նախորդ նամակիս մեջ մեր վարչութեան ներկայացուցած երկու գլխավոր կետերուն:

Առաջին, կը խնդրեմ վարչութենեդ Նիկոլը Եգիպտոս հասնելուն պես Համազգայինի ընդհանուր ժողով գումարեք. այդ ժողովին մեջ ինծի ու Նիկոլը լավ մը գզելեն ետքը՝ որոշե՛ք, թե այս տարի որչափ գումար կը հատկացնեք Պեյրութի ձեր կեդրոնական վարժարանին. և այդ ձեր որոշումը պաշտոնապես հայտնեք ինծի, որպեսզի պատճենը ղրկեմ անմիջապես Ամերիկայի Կարմիր խաչին, ինչպես որ խոստացած եմ: Եվ հակառակ ձեր բոլոր չինարենին՝ նորեն կը հանձնեմ ընկերներուս ուշադրութեյանը, որ Հանուն մեր ձեռնարկած գործի հաջողութեյան ձեր որոշելիքը ներկայելի գումար մը ըլլա, ինչպես որ այդ մասին նախորդ նամակիս մեջ գրած եմ:

Եվ երկրորդ, կը խնդրեմ, որ առանց Նիկոլի գալուն սպասելու ինծի անմիջապես հարյուր ոսկի փոխադրեք. չաբաթները կը թռչին չաբաթներու ետևեն: Ձեր տված հեռագրին վրա Նիկոլը հարկադրված եղավ իր նավուն տոմսակը ետ տալու. և հիմա ստիպված է մեկնելու Հոկտեմբերի 1-ին, այսինքն երկու չաբաթվան նոր կորուստ մը:

Իրենց պայմանները հարգելու մեր խոստումին ու պահանջին վրա Կարմիր խաչը հեռագրով փոխադրեց ինծի հազար տոլլար, որ հիմա ղրամատանն է իմ անունովս, որուն սակայն ես ձեռք տալ չեմ կրնար. խոստացած եմ գործադրեմ միայն չենքի, կահավորման ու հարակից ծախքերուն՝ բուն տեղին վրա: Ատոր համար անհրաժեշտ է, որ անմիջապես փոխադրեք ինծի այդ հարյուր ոսկին, որ տեղես չարժվիլ կարողանամ. արդեն իսկ չատ ենք ուշացած, որ անշուշտ իր ազդեցութեյունը պիտի ընե աշակերտներու թիվին վրա:

Բացարձակապես վստահ մեր ընկերներու տալիք միակ հնարավոր պատասխանին՝ կը ղրկեմ քեզի ու մեր բոլոր ընկերներուն սրտագին բարևներս ու կը սեղմեմ կարոտով բոլորիդ ձեռքը. *Լևոն Շանթ*

1929 սեպտեմբեր 16,
Շավիլ

201. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

Սիրելի՛ Վահան, կ՚ըշտապեմ հայտնելու, որ ստացած եմ Համազգայինի չեքը 8882 ֆրանքի, ստացա նաև վիզաս և իսկույն կը մեկնիմ Պեյրութ. չոգենավը 15-ին է, «Միսաժըրի» ընկերութեան «Շամպոլեոն» նավը: Ալեքսանդրիա ելլելու գործ ու դիտավորութիւն չունիմ, բայց չատ ուրախ պիտի ըլլամ, եթե ձեզմե քանի մը տող թարմ լուր ունենամ:

Հայտնեցե՛ք նաև չնորհքով հյուրանոցի մը անունը Պեյրութի մեջ, եթե մեր ընկերներուն մեջ պիտցող կամ հիշող կա. մտադիր էի ուղղակի Պեյրութ գրելու, որ ինծի դիմավորելու գա մեկը, բայց այլևս ժամանակ չկա. նամակս ինծի հետ կը հասնի:

Փարիզի ու անցյալի մասին Նիկոլը կը պատմե քեզի լիուլի. Պեյրութի ու ապագայի մասին ալ կը գրեմ հոնկե, հենց որ չուրջիս պայմաններուն հետ քիչ մը ծանոթանամ:

Քեզի ու մեր բոլոր ընկերներուն կարոտալից բարևներով՝

Լևոն Շանթ

1929 Հոկտեմբեր 8, Շավիլ

202. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1929 Հոկտ. 19
Ալեքսանդրիա

Սիրելի՛ Համո, ձեզի գալ իհարկե չեմ կրնար, ինչքան ալ սրտովս ցանկայի. պիտի բավականանամ չոգենավեն այս երկու տողս քեզի ղրկելով:

Սիրելի՛ս, մինչև հիմա մեր ուղածն ու մեր ըրածը լոկ գաղափար մըն էր. երկու օրեն ես ու Նիկոլը ուռք կը դնենք Լիբանանի հողը և այդ վայրկյանեն ալ կ՚ըսկսի մեր գաղափարի իրականացման փորձը: Ես հոգիիս խորքը վստահ եմ մեր այս ընկերովի ու խմբական ջանքով կատարվող գործի հաջողութեանը. գիտեմ, որ չատ գժվար է ըլլալու այս տարի. գուցե գալ տարի ալ մասնավոր ճիգեր պահանջվի մեզմե, բայց հավատացած եմ, որ անկե ետքը ջուրը ճամբան կը գտնե:

Պաշտոնապես կը գրեմ քեզի ամեն ինչ, երբ իրերու վիճակն ու ընթացքը պարզվի: Առայժմ քեզի և մեր ընկերներուն ջերմ ու սրտագին բարևներս Եգիպտոսի ափերեն: Նույնը մասնավորապես Ռուբինային ու Էլիային, որու հիվանդության լուրը շատ ուշ իմացա և անչափ ուրախ եմ, որ արդեն ապաքինած է:

Կարոտի համբույրով՝ Լևոն Շանթ

203. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, բնակարանի հարցը մեզի շատ կը նեղե. սկիզբը կը փնտրեինք դպրոցավայել խոշոր չենք մը, բայց ընտրելու հնարավորությունն իս փոքր է, քանի որ չենքը որոշ թաղերու մեջ պիտի ըլլա անպատճառ և պարտեզով. հետզհետե երեք չենքի վրա կանգ առինք, գեշ-աղեկ, բայց կա՛մ գնի շատ բարձր պահանջը, կա՛մ մեկ– երկու տարվանը մեկ անգամեն վճարելու պահանջը և մանավանդ տեղացի տերերու արևելյան հոգեբանությունը, որ կտրուկ պատասխան մը չեն տար, օրե օր ու շաբթե շաբաթ կը քաշքշեն, մինչև հիմա անկարելի դարձուցին ելքի մը հանգիլը: Հիմա սկսեր ենք նաև ավելի փոքր բնակարանի նայելու, այսինքն երկու հարկանի 8-10 սենյակներով առանձին տուն մը, պարտեզով, իհարկե, և՛ միջնորդներ ենք մեջ ձգած, և՛ տեղացի ընկերներեն ունինք մեզի օգնող, բայց պետք եղած բնակարանը դեռ չունինք: Դպրոցի համար ըլլալն ալ անշուշտ տերերու վարմունքին վրա կ'ազդե. մենք ալ հարկադրված ենք ավելի զգուշ ըլլալու, քանի որ 2-3 տարվան պայմանագրություն պիտի կնքենք և բավական խոշոր ծախք պահանջող նորոգություններ ունինք կատարելու դպրոցի պետքերուն հարմարցնելու համար: Թեթև վերաբերվիլ չենք կրնար, ինչքան ալ որ շուտ վերջացնելու կը ջանանք, բայց կրնաս երևակայեր, թե՛ ես և թե՛ Նիկոլը ինչպես սրտնեղած ենք այս ուշացումեն, որովհետև բնակարանը հիմքն է մեր աշխատանքին, մեր բոլոր հաջորդ քայլերը կապված են ատոր: Միշտ հույս ունինք, որ հառաջիկա երկու շաբաթվան ընթացքին կարգադրենք, բայց այդպես ընելով ահա՛ ամիսը արդեն լրացավ ու անցավ: Համենայն դեպս այսքանը մեզի համար հիմա պարզ է, որ անմիջապես շատ ավելի դրամի պետք ունինք, քան կը կարծեինք: Մեր հաշվով տան մեկ եռամսյակն էինք հիմա վճարելու

անմիջապես, բայց ինչպես կը տեսնենք՝ պետք է հարկադրվինք իսկույն վճարելու եթե ո՛չ ամբողջ տարեկանը, գոնե կեսը անպատճառ, ատոր վրա կու գա նորոգութեան ծախքերը, կահավորման ծախքերը: Մեր ձեռքի դրամը հերիք չէ այս բոլորին. գրեցի Ամերիկա և դրամ ուզեցի, բայց հունվարեն առաջ չեմ հուսար, որ պատասխան ունենանք, և շատ կը վախնամ, որ տունը վարձելեն ետքն ալ դրամի սպասելով նորեն չաբաթներ չկորսնցնենք. ատոր համար պիտի խնդրեմ Համազգայինեն, որ նորեն գումար մը հասցնեն մեզի անմիջապես և ինչքան որ կրնան: Թե՛ մեզի հիմա դրամ փոխադրելը և թե՛ անմիջապես դրքերու տպագրութեան սկսիլը եթե կը դժվարանաք, տպագրությունը թող քանի մը չաբաթով ուշանա: Բայց ես համենայն դեպս կը ղրկեմ քեզի ներփակ տպվելիք դասագրքիս առաջին երեք տպագրական թերթերու նյութը, քանի որ որոշեր եք հոտ տպագրել և քանի որ ուզած էիր: Մենք Փարիզ «Նավար» տպարանին հետ (Ջավրև) խոսած էինք պայմաններու մասին. մեկ տպագրական թերթի տպագրությունը, 2000 օրինակի համար, լավ թուղթի վրա, խնամված լինոտիպ[1] տպագրությամբ և ամեն ծախքերը մեջը համաձայնած է 500 ֆրանքի, դեռ պզտիկ բան մըն ալ պակաս, բայց ատոր փոխարեն կա բավական ղպալի ծախք մը տպված գրքերը Փարիզեն Եգիպտոս փոխադրելու, քանի որ Փարիզ կեղրոն ու պահեստ չունինք:

Իմ գիրքս 10 տպագրական թերթ է ըլլալու, ուրեմն Փարիզի հաշվով 5000 ֆրանք տպագրությունը: Հեղինակի իրավունք ես ու Նիկոլը մեր Փարիզ մշակած ծրագիրներուն մեջ հաշված էինք իմինիս նման գրքերու համար 15 սանտիմ ամեն մեկ տպագրական թերթին, ուրեմն 1,5 ֆրանք յուրաքանչյուր գրքին, իսկ երկու հազար օրինակին համար 3000 ֆրանք հեղինակին: Պահեստի ու ճամբու ծախքի, իրարու վրա հաշված, պետք է դնել 10 սանտիմ ամեն մեկ տպագրական թերթին, ուրեմն 1 ֆրանք ամեն գրքին, երկու հազար օրինակը՝ 2000 ֆրանք պահեստի ու ճամբու: Մենք մտածած ենք, որ գրքերու տարածմանը չահակից պետք է դարձնել տարածողները մեր տեղական մարմիններու հսկողության ու պատասխանատվության տակ: Ամեն աշակերտ, ամեն անձ, որ երկու գրքի լրիվ գինը կը վճարե, երրորդ գիրք մը իրավունք ունի ձրի ստանալու. ուրիշ խոսքով՝ $^1/_3$-ի դեղչ մը անվանական արժեքին վրա տարածողներուն: Այս հաշվով եթե իմ այս դասագրքիս գինը նշանակեք յոթ ու կես ($7^1/_2$) ֆրանք (7 ղուրուշ

Եգիպտոս, ½ տոլար Ամերիկա)՝ կ'ըստանանք 15.000 ֆրանք անվանական արժեք երկու հազար օրինակեն, որուն 5000-ը զեղչն է ցրողներուն, իսկ 10.000-ը՝ բոլոր ծախքերուն գումարը: Ուրիշ խոսքով՝ Համազգայինը քանի մը տարիներուն ընթացքին ետ կ'ըստանա իր դրած դրամագլուխը առանց որևէ չահի: Իսկ 160 երես ունեցող գրքի մը համար 7,50 ֆրանք գինը չատ աժան է. այդ ծավալով և այդ բովանդակութիւնամբ նման գրքերու գինը մեր արդի հրապարակին վրա 12-14 ֆրանքի սահմաններուն մեջն է:

«Հայրենի Աչխարհի» տիպը

1. Գիրքը պիտի չարվի 10 պունտո տառերով, այն տառերը, որով չարված են «Հուսաբերի» մեջ Հանգույցի Դաշնակցութիւնյան մասին գրած Հոդվածները կամ Շուշանյանի գրական Հոդվածները. միայն թե նոր ու չմաչված տառերով:

2. Հոդվածներու տակի Հրահանգներուն մեջ ընդգծված բառերը պետք է ըլյան չեղագիր:

3. Վերնագիրներուն առաջին տառերը պետք է ավելի մեծ ըլյան (գլխագրերուն իբրև գլխագիր). նույնպես նաև Հոդվածներուն տակի ստորագրութիւններին անվան և ազգանվան առաջին տառերը:

4. Հոդվածին և իր Հրահանգներուն մեջ պետք է միշտ բաց թողնել տող մը: Նմանապես նոր Հոդված մը սկսելեն առաջ բացութիւն մը կամ զարդ մը պետք է դնել, իբրև անջատում:

5. Էջերու չարվածքին լայնքը պիտի ըլյա 10,4 սանտիմետր (այսինքն գրեթե տասնուվես սանտիմետր), իսկ չարվածքին բարձրութիւնը 14,5 սանտիմետր (տասնչորս ու կես):

6. Մեկ էջի վրա 31 տող, որպեսզի տողերը սխմված չըլյան. տեղ-տեղ կրնան 32 տող, բայց ո՛չ ավելի:

7. Երեսներուն թվահամարները պետք է տրվին տակը. անզույգ թիվերը աջ երեսի աջ անկյունը, զույգ երեսներունը ձախ երեսի ձախ անկյունը, այսինքն էջերուն տակի ամենեն դուրսի անկյունները:

8. Կը խնդրեմ սրբագրողեն մասնավոր ուշադրութիւն դասագրքի ուղղագրութիւյան, օրինակ՝ ամեն (և ոչ թե՛ ամէն), կ'ըզգամ (և ո՛չ թե կը զգամ):

9. Ոտանավորներուն ամեն տողը գլխագրով սկսելու կարիք չկա. գլխագիր միայն վերջակետեն ետքը: Սովորաբար տակը ընդգծած եմ:

10. Դասագրքին բուն նյութը՝ հոդվածները, կ'ըսկսին 5-րդ երեսեն գրքի, 3-րդ երեսի վրա գրքի անունն է, իսկ անոր դեմ ու դեմը 2-րդ երեսի վրա Համազգայինի հիշատակումը: 5-րդ երեսի ճակատը կարելի է դնել ճաշակավոր զարդ մը:

Մեր ընկերուհյան նպատակը ըլլալով շատ տարածելը հնարավոր աժան գներով՝ իմ դասագրքիս գինը պետք չէ 7,50 ֆրանքեն ավելի ըլլա, իսկ տակե ավելի պակասն ալ խելացի հաշիվ չէ, քանի որ կ'ուզենք տևական գործի մը հիմքը դնենք: Այս բոլորը կը գրեմ քեզի, որովհետև Նիկոլի հետ այդ բոլորի մասին երկար-բարակ խորհած ենք Փարիզ, և հիմա լավ է, որ ձեր հաշիվներու և որոշումներու ժամանակ աչքի առաջ ունենաք նաև մեր տեսակետը:

Քանի որ որոշած եք հոտ տպագրել Համազգայինի գրքերը՝ շատ պիտի խնդրեմ, որ մեծ խնամք տանիք մաքուր ու գեղեցիկ տպագրության ու հաճելի արտաքինին. ընդհանրապես կարծվածեն շատ ու շատ ավելի մեծ չափերով կարևորություն ունի տուիկա գրքերու տարածման տեսակետեն, ինչպես և մեր ընկերության մասին հետևները իր ընելիք տպավորության տեսակետեն: Պարզ ու լավ թուղթ ընտրեցեք. դասագրքի համար կարծեմ թե՛ աժան և թե՛ հարմար է մոտավորապես «Դրոշակի» թուղթը: Նոր ու չմաշված տառերով տպեցեք, մուրին լավը և մեքենային վրա ալ հաակըցող մարդ:

Ինչ կը վերաբերի իմ այս դասագրքիս մանրամասնություններուն՝ կը նշանակեմ այս թուղթին կտնակը առանձին: Առաջին սրբագրությունը բնականաբար հոտ կը կատարվի. ինծի կը ղրկեք արդեն երես կապած և բոլորովին գրքի ձև ունեցող երկրորդ սրբագրությունը: Երրորդ սրբագրությունը իմինիս հետ համեմատելով կը կատարվի հոտ մեքենայի տակ մտնելեն առաջ: Իհարկե դասագրքի մը համար այսքանը բավական չէ, բայց ուրիշ հնար չկա:

Մեղի և ընկերներուս սրտագին բարևներս՝ Լևոն Շանթ
1929 նոյեմբեր 29, Պեյրութ

Նամակ և դրամ կը ղրկե՛ք Խոսրովի հասցեով.
Mr. Khosrov Tutundjian
Avocat a la Cour
Khan Antoun bey
Beyrouth (Շանթին)

204. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, վերջապես չենքի մը տեր ենք. շատ լավ թաղի մէջ, քաղաքի կեդրոններուն մոտիկ, բարձրադիր ու առողջապահիկ չենք մը. պարզ վիլլա մըն է պարտեզով շրջափակված: Պարտեզը անչուշտ մեր ցանկացածին չափ ընդարձակ չէ, բայց վերջապես կը մտածենք աչնան ազատ հող մը վարձենք, իբրև հատուկ խաղատեղի: Տունը ինքը երկու հարկ է, տասը սենյակ, երկու սրահ և լավ պատշգամ մը. երկու սենյակ ալ կա դուրսը՝ պարտեզի դռան մոտ, դռնապանի համար, մեկ խոսքով՝ առաջին երկու տարիներուն համար հերիք է մեզի: Վարձած ենք $2^1/_2$ տարով մինչև 1932 Հուլիս 1, տարեկան 207 օսմանյան ոսկի: Շատ հոգնեցուց մեզի այդ բնակարանի հարցը, մինչև պայմանագիրը ստորագրեցինք. պայմանագրին վրա երաշխավոր է եղած տեղիս լավ դիրք ունեցող առևտրականներեն մեկը՝ մեզի ընկեր ու բարեկամ: Հիմա տան հատակագիծը պատրաստել տալու վրա ենք, որ մյուս թղթերուն հետ պետք է հանձնվի կառավարության ճանաչվելու ու վավերացվելու համար, ուրկե հետո միայն կրնանք դպրոցը բացված հայտարարել. մեկ-երկու շաբաթ ալ աս պիտի ուտե բավական զգալի ծախքերու հետ: Մյուս կողմեն պետք է անմիջապես կահավորել դռնե մեկ-երկու դասարան ու սերտարան մը, ինչպես նաև ընդունարան մը, այլև հոգալ պաշտոնեության մասին. դրամական տեսակետեն ամենեն դժվարը ֆրանսացի ուսուցիչն է: Այս բոլորը, ինչպես նաև բազմաթիվ ավելի մանր նախատեսված ու չնախատեսված ծախքեր, անմիջական դրամ կը պահանջեն, իսկ մեր ձեռքը մնացած է հարյուր սյուրիականի չափ, այսինքն ոչինչ: Այս վիճակին չհասնելու համար էր, որ ժամանակին գրած եմ և՛ քեզի, և՛ Ամերիկա. Ամերիկայեն խնդրած էի հեռագրով փոխադրեն դրամը. դեռ ո՛չ հեռագիր կա, ո՛չ նամակ. իսկ Եգիպտոսի պատասխանը դուն ինքդ ես գրած ու գիտես: Երբեմն շատ դառն մտածումներ կ'ունենանք ես ալ, Նիկոլն ալ. բայց վերջապես գիտենք մեր պայմանները, գիտենք նաև, որ առանց դառնության գործ գլուխ չի գար. սակայն դժբաղդաբար առանց դրամի ալ գլուխ չի գար:

Եթե այս տաս-տասնհինգ օրվան ընթացքին գոնե 100 ոսկի մը չանցնի մեր ձեռքը, ամեն չարժում կանգ կ'առնե և ոչինչ ընել չենք կրնար, իսկ ամենեն ուշը մինչև փետրվար կարելի է հետաձգել դպրոցին բացումը. անկե անդին այլևս ծիծաղելի կը դառնա ու անիմաստ

այս տարի բացված Հայաստարարելը: Ես իհարկե ինչպես հիմա քեզի, այնպես ալ նորին գրելու եմ նույնպես Ամերիկա Կարմիր խաչին. բայց Ամերիկան հեռու ճամբա է և հոնտեղի հոգեբանությունն ալ դժբաղդաբար բավական հեռու է և մեզի քիչ ծանոթ: Կրնան նորին ուշացնել և մեր գործի սկզբին նոր դժվարություն դնել մեր առջևը. այս ամառ հունիսի վերջերը կատարված որոշումը օգոստոսի կեսեն ետքը հայտնեցին մեզի. երկու ամիս այդ պատճառով ետ ինկանք, որուն հետևանքները կը քաղենք մինչև հիմա: Այս բոլորը ես հիմա չեմ գրեր մեղադրանքի կամ դանդաոտի համար. ի՞նչ դանգաոտիմ, որո՞ւ և ի՞նչ իրավունքով. անոնք ալ ունին իրենց տրամաբանությունը, իրենց պայմանները: Այլ կը գրեմ գործնական եզրակացության հասնելու համար: Գործնական միակ ելքը այն է այս վիճակին, որ բացի քու «խոստացած» երեսուն ոսկիեն, ավելի ճիշդը՝ քու «Հոստացած» երեսուն ոսկիեն, որ ղրկելու ես այս երկու օրը, հոս տեղի մը պարտք մը գտնենք հարյուր ոսկիի չափ. այդ գումարը կա՛մ ամբողջովին, կա՛մ ինչ չափով որ կը կարգադրեք, վերադարձնենք ձեզի Հենց որ Ամերիկայեն դրամ ստանանք, այսինքն կ՝ուռաջարկեմ ներքին կամ արտաքին փոխառություն Ամերիկայի դրամին դեմ, նույնիսկ որոշ տոկոսով, եթե տարիկա գործը դյուրացնել կրնա: Ամենևին ձեր մտքեն չանցընիք, թե մենք հոս ալ կրնանք կերպ մը պարտք ընել. հոստեղի մեր ընկերները կրնան օգտակար ըլլար, նույնիսկ նյութապես, բայց ուրիշ ձևերով. հնչուն դրամը տրամադրել ո՛չ անոնք կրնան, ո՛չ ալ մենք կը ցանկանք: Մեր հոս ունեցած դիրքը և ազդեցությունը երկու բանի վրա է հաստատված. մեյ մը՝ մեր անունը, մեյ մըն ալ մեր դրամական անկախությունը. գործի հաջողության համար այս երկրորդ կետն ալ բացարձակ անհրաժեշտություն մըն է, գոնե հիմա, գոնե սկիզբը, մինչև որ ոտքերնիս ամուր մը գետին դնինք:

Այս բոլորը հարկադրված ենք և՛ մտածելու, և՛ ձեզի գրելու, քանի որ մեր վրա է դրված գործը ղլուխ բերելու պատասխանատվությունը: Քեզի և մեր ընկերներուն սրտագին բարևներս և չնուհավոր Նոր տարի:

Լևոն Շանթ

1929 դեկտ. 30,
Պեյրութ

Դրամի նամակը կ՝ուղահովադրեք Ս. Թյուֆյունճյանի հասցեով:

205. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, կը տեսնեմ, որ քիչվիկ մը նեղացած ես ինծմե մինչև հիմա վերջին նամակիդ պատասխանած չըլլալուս համար. ես կը հասկընամ դժգոհութիւնդ և մեղադրանք չունիմ: Բայց հույս ունիմ, որ դուն ալ իմ այս ուշացնելս ո՛չ անփութութեան կը վերագրես, ո՛չ ալ անճշդապահութեան: Դիտմամբ չեմ գրած, սիրելի՛ս, որովհետև չատ աղեկ գիտեմ՝ թե ինչ նամակի կ՝ըսպասեն ընկերներս ինծմե. վճռական տողեր կ՝ուզեի գրեմ ձեզի. «կը կուսամ», «չուտով», «կը կարծենք» ու նման խոսքերը արդեն սրտնեղութիւն կը պատճառին և՛ գրողին, և՛ կարդացողին: Այնպես որ՝ դեռ քանի մը օր ալ պիտի լռեի, եթե չհասներ քու փափուկ հանդիմանութիւնդ:

Շատ համակրելի ու պետական վերին շրջաններուն մեջ լավ կապեր ունեցող տեղացի փաստաբանի մը միջոցով մենք մեր դպրոցի արտոնութեան խնդիրը բոլոր պահանջված բազմատեսակ թղթերուն հետ միասին ուղղակի ներկայացուցինք Լիբանանի կառավարութեան վարչապետին՝ հնար եղածին չափ կարճ ու արագ ճամբով տեղ հասնելու համար: Վարչապետը սիրով ու համակրանքով է դեմ եկած միջնակարգ հայ վարժարանի մը հիմնարկութեան մեր ձեռնարկին և խոստացած է գործին ընթացք տալ: Լուսավորութեան նախարարեն երկու օր առաջ նամակ ստացանք, որ նոր մանրամասնութիւններ կը պահանջեր արաբերեն լեզվի դասավանդման ծրագրին ու ժամերուն վերաբերմամբ. անմիջապես ներկայացուցինք պահանջված ծրագիրը, և նախարարութեան այդ գործերուն վարիչն ալ հայտնած է իր համակրանքը ընդհանրապես հայերուն հանդեպ և մասնավորապես մեր ձեռնարկած գործին և ներկայացուցած արաբական ծրագրին, խոստացած է երկուշաբթի օրը, այսինքն այսօր, մեր տոսսիեն փոխանցել Բարձր կոմիսարութեան իր avis favorable[1]-ի հետ միասին: Բարձր կոմիսարութիւնը վերջին կայարանն է մեր թղթերու ոտիսականին և «կը հուսանք» այս չաբթվան վերջերը ստանանք վավերացումը, եթե իհարկե նորեն որևէ նոր թուղթի պահանջով նոր նամակ մըն ալ չ՝ըստանանք Ֆրանսական ճակատեն:

Վավերացումը ստանալնուս պես կը հայտարարենք դպրոցին բացումը և ընդունելութեան հրավերը. և իհարկե անմիջապես կը տեղե-

կացնենք ձեզի: Հիմա զբաղված ենք տուն ու տեղ ու գալոց դառնալով. մեծ ու փոքր անվերջ հոգսեր, գնումներ, մաքրել տալ, ջուր, էլեքտրականություն, խոհանոցային, ննջարանային, դասարանային, ո՛ր մեկը ըսեմ. և բոլորը միասին, մեկը մյուսին կապված չղթա է: Վաղը կը փոխադրվինք մեր «թագավորությունը», թեև դեռ քիչիկ մը խոնավ է ու պաղ մեր նոր չինված հարկը:

Ստացած ենք քու գրկած 50 եզ. ոսկին, որու մասին արդեն գրած եմ քեզի, այլև վերջին 80 ոսկիի չեքը, որը մեզի մեծ թեթևացում բերավ. 500 տոլար ալ ստացանք Ամերիկայեն, որով մինչև մարտի կեսերը կը հուսամ դիմանանք: Կոպիտ հաշվեառվություն մը կը նկարագրեինք ձեզի, հենց որ մեր գնումներու ամենեն անհրաժեշտ մասը լրանա և մեր անմիջական աշակերտներուն թիվը պարզվի, որովհետև ատոր համեմատ կ'ըլլան և ուսուցչական ծախքերը, այսինքն կը գրենք հավանորեն երկու-երեք չաբաթեն: Իսկ կանոնավոր հաշվեառվությունը կը կատարվի հուլիս ամսին, երբ լավ է որ տեղի ունենան Համազգայինի ընդհանուր ժողովները ասկե հետը՝ Համազգայինի տարին հաշվելով հուլիսե հուլիս. բայց վաղաժամ է դեռ այդ մասին խոսիլը:

Գալով գրքերու հրատարակության՝ մենք հոսկե ոչինչ չգրեցինք՝ մտածելով ձեր դրամական նեղությունը. եթե հիմա ծայրը ծայրին բերել կրնաք՝ լավագույնը անմիջապես հրատարակության ձեռնարկն է: Մեկ գրքի հրատարակությունը տպարանի հաշվով ըլլալու է 5000 ֆրանք (մեկ տպագրական թերթը 500 ֆրանք 2000 օրինակի համար): Ես անձնապես այդ տպարանին պարտք եմ մեկ-երկու հազար. մինչև դոնե հազար ֆրանք մը չի վճարեմ, հետերնին խոսելու երես չեմ ունենար: Ուրեմն հազար ֆրանք մը պիտի հաշվեք իմ հոգինակի իրավունքիս ի հաշիվ. երեք հազար ֆրանք մըն ալ լավ է որ անմիջապես վճարենք վստահության ու արագության համար. մնացածը կը լրացնենք, երբ գիրքը ամբողջովին տպված ըլլա: Եթե համաձայն եք գրածիս՝ ղրկեցե՛ք ինծի հիմա չեք մը 4000 ֆրանքի, Փարիզի վրա և իմ անունիս. ես կը փոխանցեմ Զավրևին և կը կատարեմ բոլոր հարկ եղած կարգադրությունները Նիկոլի հետ համախորհուրդ: Նիկոլն ալ, ես ալ շատ կը ցանկանք, որ մինչև հուլիս երկու գրքերին[2] ալ տպված ըլլան և վարչությունս նաև այս կողմեն իր վրա գրված պարտականությունը գլուխ հանած ըլլա. և պրոպականոի ալ նոր գենք մըն է ասիկա և շատ ավելի մոտիկեն շոշափելի:

Մենք մեր դպրոցին վրա կատարելիք ծախքերուն մէջ ո՛չ մեկ կերպ դուրս չենք գար Համազգայինի և Ամերիկայի Կ. խաչի քվեարկած պյուտճեներուն սահմաններեն, ինչքան ալ որ անշուշտ նեղ են այդ սահմանները:

Ջերմ ու սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1930 Հունվար 27,
Բեյրութ

206. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, ահա՛ վերջապես մեծ ուրախությունը ունիմ քեզի ու մյուս ընկերներուս հայտնելու, որ մեր ճեմարանի պետական վավերացումը ստացած ենք և Համազգայինը արդեն ունի իր առաջին միջնակարգ ու կեդրոնական վարժարանը. դյուրին կրնաս երևակայել, թե ի՛նչ ծանր քար մը ինկած է իմ ու Նիկոլի կրծքեն:

Մենք երկու չաբաթ է՝ փոխադրված ենք մեր դպրոցին վերին հարկը և մեկ կողմեն դպրոցը, մյուս կողմեն մեր բնակարանը կարգի բերելու վրա ենք: Շենքը, պարտեզը, կահերը, ամեն ինչ, մանր թե խոշոր, կը ջանանք Համազգայինին վայել դարձնելու, ինչքան որ մեր պյուտճեին նեղ սահմանները կը ներեն:

Առաջիկա չաբաթը պաշտոնական այցելություններու և ընդունելության չաբաթ է ըլլալու. իսկ փետրվար 23-ին տալու ենք թեյասեղան մը Պեյրութի ազգային աչքի ինկնող դեմքերուն, առանց կրոնական ու կուսակցական խտրանքի, մեր դպրոցը պաշտոնապես չվման մեջ դնելու համար տեղական հասարակության հետ:

Մեր դպրոցին իրավունքը առնված է բժիշկ Վահրամ Փոթուկյանի անունով, որ մեր տեղացի ու լավ ընկերներեն է և տեղական ֆրանսական բժշկական համալսարանին ավարտական: Միջնակարգ վարժարանի մը իրավատերը պետք է Լիբանանի քաղաքացի ըլլա և վկայյալ համալսարանական:

Ղրկեցե՛ք մեկ-երկու տասնյակ Համազգայինի կանոնագրեն. մեր դպրոցի մեքենան լարելնուս պես՝ անցնելու ենք թե՛ քաղաքիս և թե՛

ամբողջ Սյուրիայի համար Համազգայինի կեդրոնական մարմնի մը կազմութեան ու գործունեութեան:

Կը խնդրեմ նաև, որ ղրկեք Պերպերյան վարժարանի[1] ծրագիրն ու կանոնագիրը: Առանձին գրքույկով պատրաստելու ենք մեր ծրագիրն ու կանոնագիրը դեպի արևելք ամեն կողմ ղրկելու համար, և նախապես կ'ուզենք եղածները աչքե անցընել: Մեր այս ներփակ հայտարարութիւնն ալ ղրկած ենք ու ղրկելու ենք և՛ սյուրիական բոլոր հայկական կեդրոնները, և՛ Պաղեստին, Իրաք ու Պարսկաստան: Տվե՛ք մեզի Հապեշիստանի հարմար ընկերոջ մը հասցեն: Հայտարարութենեն տպած ենք հազար օրինակ և ամեն տեղ կը ղրկենք տասնյակներով, տեղ-տեղ հարյուր, իբրև նախնական ծանոթացում, իբրև փորձականութի միջոց մը:

Եվ իբրև վարձատրություն մեր տված լավ լուրին, կը խնդրենք քեզմե ու մեր սիրելի Վահանեն[2], որ «Հուսաբերը» դարձնեք առաջին թերթը, որ ստացվի պիտի մեր դպրոցի հասցեով:

Առայժմ այսքան. թե՛ հոգնած եմ և թե՛ չատ է գլուխս խառն:

Ջերմ ու սրտագին բարևներով՝ կը համբուրեմ քեզի ու քովինները ուդ. *Լևոն Շանթ*

1930 փետրվար 14, Պեյրութ

Մեր դպրոցի հասցեն.
College Armenien
30, rue Kantari
Beyrouth, Liban

207. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, երկու շաբաթե ի վեր կանոնավոր կերպով սկսված են Հայ ճեմարանին դասերը: Ունինք 14 աշակերտ, ինը՝ տղա, հինգը՝ աղջիկ. մեր միակ դասարանը կը ներկայացնե լիսեի IV և III կարգերուն մեջտեղը միջին վիճակ մը. ինչպես կ'ենթադրեինք՝ տկար է մասնավորապես ֆրանսերենը, որուն կը ջանանք հիմա ուժ տալու: Բացի ֆրանսերենի ֆրանսացի ուսուցչեն, որ արդեն ունինք, կը վնտրինք նաև հարմար ֆրանսացի վարժուհի մը մասնավորապես լեզվի գործնական

կողմը մշակել տալու համար: Դեռ ուզածնիս գտնել չկրցանք, հավանորեն կը կարգադրենք այս քանի մը օրը. պակաս է նույնպես նկարչության ուսուցիչը, որուն մենք լուրջ կարևորություն կու տանք, բայց դեռ գտնելու չհաջողեցանք: Մնացած բոլոր դասերը լրիվ բռնված են. ես՝ հայերեն և ընդհանուր պատմություն, Նիկոլը՝ Հայոց պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն և թվաբանություն, արաբը, ֆրանսացին, մարմնամարզի մասնագետ մը և ձեռագործի ուսուցիչը: Ձեռագործի ուսուցչուհին տիկին Փափազյանն է՝ Հեղուշը, որ հրաժարեցավ ռոճիկ ստանալե, իր ռոճիկով երկու աշակերտ կը պահե մեր վարժարանին մեջ: Մնացած աշակերտներեն երեքը իրենք կը վճարեն, իսկ ինը հոգի՝ տղա ու աղջիկ, սաները են մեր դպրոցին, այսինքն ընդունված են մեր ընտրությամբ և կրթվելու են դպրոցի հաշվին:

Ներվակ կը ղրկեմ վարչությանդ մեր վեց ամսվան հաշիվները մինչև մարտի 1-ը, այսինքն մինչև դպրոցին բացումը: Ծախքերուն մեջ նշանակված «Բնակարանի կահավորում» ասվածը մեր անկողիններու, սեղանատան կազմի ու սարքի և խոհանոցային պիտույքներու, ամանեղեններու, պնակներու վրա ծախսված գումարներն են, որոնք առայժմ մեր անձնականը կը նկատենք, բայց ատոնց մեծ մասը աշնան պիտի անցնին դպրոցի հաշվին, երբ գիշերօթիկներու տնտեսությունը սկսի:

Գալով նախահաշվին՝ ներկայացուցած ենք մինչև հուլիս մեկը, որ մենք կը նկատենք դպրոցական տարվան վերջը. հուլիսե հուլիս հաշվելը գործնական մեծ հարմարություններ ունի. արդեն Կարմիր խաչի ընդհանուր ժողովներն ալ հուլիսե հուլիս կը գումարվին. և կը կարծենք, որ շատ աղեկ կ'ըլլա, որ ասկե ետքը «Համազգային»-ի ընդհանուր ժողովներն ալ հուլիսի սկիզբը գումարվին, ատով հնար կ'ունենանք արձակուրդներու սկզբին մեր որոշումները, առաջարկները և բյուտճեն քննելու ու հաստատելու և ամառվան ամիսներուն հնար կ'ունենանք մեր այդ որոշումներու գործադրությունը նախապատրաստելու, և արդեն աշնան մենք անկարող ենք հոսկե հեռանալու: Եթե Գահիրեն ալ համաձայն է մեր այս առաջարկին, կը խնդրենք որ ատոր համեմատ տեսնեք ձեր նախապատրաստությունը և հայտնեք մեզի, որ մենք ալ գալու պատրաստություն տեսնինք, քանի որ անցագրի հարցը նախօրոք պետք է հոգալ: Եվ ինչպե՞ս պիտի ընենք. երկուքո՞վ գանք, թե միայն մեզմե մեկը հերիք է, որովհետև բավական խոշոր ծախքի հետ է կապված:

Ինչպես հաշիվներեն կը տեսնեք՝ մարտեն Հուլիս դեռ ծախք ունինք 435 օսմանյան ոսկի, որուն 107 ոսկին սակայն եկող տարվան հաշվեն է, թեև պետք է վճարենք հիմա: Այդ 435 ոսկի ելքին դեմ ունինք 1500 տոլար Ամերիկայեն ստանալիք մինչև Հուլիս, 220 ոսկի Եգիպտոսեն մինչև սեպտեմբեր, այլև հիմա մեր ձեռքը 666 սիրիական թղթադրամ, որուն մեկ մասը արդեն ծախսված է իհարկե մարտի հաշվին. ուրիշ խոսքով՝ չարժած ենք ու կը չարժինք միշտ ընդհանուր ժողովի գծած բյուտճեի սահմաններուն մեջ:

Իսկ ի՞նչ եղավ դասագրքերու հրատարակության հարցը. մեր դպրոցին համար չատ լուրջ հարց է ատիկա. աշնան հայերենի դիրք չենք ունենալու վերի կարգերուն համար:

Ներփակ կը ղրկեմ մեր դպրոցին լուսանկարը:

Սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1930 մարտ 13
Պեյրութ

208. ՀԱՍՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1930 ապրիլ 24, Պեյրութ

Սիրելի՛ Համո, քու վոխադրած 8000 ֆրանքի չեքը այսօր վոխանցեցի Ջավրևի անվանը և ուղարկեցի Փարիզ իմ ձեռագրիս և հարկ եղած բացատրություններուն հետ: Կը հուսամ չաբաթե մը տպագրությունը սկսի և մինչև ամիս մը ավարտի առաջին դիրքը: Վերջին սրբադրությունները պետք է ղրկվի ինծի:

Մենք ալ հիմա հոս տպագրության վրա ենք. կը տպենք ճեմարանի ուսումնական ծրագիրը, որ 5-6 տպագրական թերթի ծավալով դիրք մը զարձավ արդեն. ժամանակը քիչ ըլլալուն Փարիզ ուղարկելու հնար չկա: Հոս բոլոր Հայ տպարանները զբաղ են, մանչած տառեր և անմաքուր տիպ. ճիզվիթներուն[1] տպարանը հանձն չառավ. մենք ալ վճռեցինք ինքներս տպենք: Մեր ընկերներեն Վարդան Գևորգյանը հին տառեր ունի ու տպարանական կազմած. եղածը վոխադրեցինք վարժարան, հարմարցուցինք գրաչարանոց մը, զտանք չարող ընկեր մը, որ հիմա գրքի առաջին թերթը չարելու վրա է տառերուն լավերը ընտ-

ըելով. չարվածքը պիտի տպենք ամերիկյան տպարանին մեջ: Մեր այս ինքնահնար գրաշարանոցը հավանորեն պիտի դառնա առաջին քայլը մեր «Հայ ճեմարանի տպարանին», որովհետև մտադիր ենք Պոլսեն նոր տառեր բերել տալու, որպեսզի մեր դպրոցի և մեր ընկերութեյան պետքերուն ու երկերուն մեկ մասը չարենք ու տպենք հոս: Համազգայինի վրա նոր ծախք չենք բանար, մի՛ վախնաք. գրքերու տպագրութեյան համար ձեր հատկացնելիք գումարով կը կարգադրենք այդ հաշիվը, այսինքն գրքերու մեկ մասը մենք կը տպենք փարիզյան դներով և կը ղանանք փարիզյան հաստակութեյամբ: Տեսնենք այս առաջին փորձը ինչ արդյունք կու տա: Մրագիրը պետք է հասցնենք անպատճառ այս քանի մը շաբաթներու ընթացքին, թեև սաստիկ հոգնած ենք երկուքս ալ. ես ալ վերջին օրերս տկար եմ քիչ մը և գլուխս աղվոր չաշխատիր: Մրագիրը ամեն կողմե կը պահանջեն. այլև անհրաժեշտ է, որ մեր տարեկան հաչվետվութեյան և գալ տարվան նախահաշվին հետ դնել կարողանանք մեր ծրագիրը թե՛ Համազգայինի ընդհանուր ժողովի սեղանին վրա և թե՛ կարմիր խաչի ընդհանուր ժողովին:

Երեկ իրիկուն վերջապես ստացանք Ամերիկայեն դրամ ու նամակ. քիչ էր մնացեր, որ նորեն քեզի նամակ գրեի և քիչ մը դրամ խնդրեի, հասած էինք մեր միջոցներու բոլորովին ծայրին, իսկ առջևնիս անխուսափելի ընթացիկ ծախքեր: Անչափ ուրախ եմ, որ քեզի այս անախորժ նամակը գրելեն ազատեցա. մարդիկը ղրկեր են հազար տոլար և շատ տաք ու սրտագին նամակ մըն ալ հետը:

Ընդհանրապես չատ կողմերե և երբեմն բոլորովին անսպասելի անձերե կ'ըստանանք նամակներ ջերմ մաղթանքներով և մեծ ակնկալութեյուններով, այն աստիճան, որ սկսեր է մեզի ճնշել: Բայց որ Համազգայինը եկած է իրական օրվա պետքի մը պատասխանելու և որ ան անմիջապես կը խոսի ժողովուրդի սրտին ու որոնումներուն, ալ այդ մասին կասկած չկա: Մեր ճեմարանը, մանավանդ կիրակի օրերը, ուխտատեղիի պես բան մըն է. կու գան ամեն տեսակի մարդիկ, բայց մանավանդ երիտասարդութեյունը ամեն աստիճանի և ամեն «Հնարավորութեյան» ու կրթութեյան «ճեմարանը պտտելու». և տեսնելու ես անոնց ժպտուն, գոհ ու տեսակ մը հպարտ նայվածքը դռան ցուցանակեն սկսած մինչև չենքին ներսերը ու մինչև մեր տված բացատրութեյունները: Այդ վայրկյաններուն ես այն զգացումը կ'ունենամ, որ ո՛չ թե Համազգայինն է ու մենք, որ այս գործն ու ծրագիրը կը վարենք,

այլ մեր չուրջը մեզմե անտես կա ավելի մեծ ուժ մը, ավելի լայն հոսանք մը, որ կը վարե և՛ մեր Համազգայինը, և՛ Համազգայինի ձեռնարկները, և՛ մեզի:

Դպրոցը կանոնավոր կը բանի, աշակերտները լուրջ են և կ'աշխատին պիտակցորեն և ազնիւ մը կը հասկընան, թե ինչ բանի վրա ենք: Բացի երկեցողութեան ու նկարչութեան ուսուցիչներեն, որ դժբաղդաբար անկարելի եղաւ գտնել, ամենքս մեր գործին գլուխն ենք: Օտար ուսուցիչներեն մասնավորապես հաջող եղաւ մեր ընտրութիւնը արաբերենի ու ֆրանսերենի գործնական մասին համար: Արաբը՝ Էմիր Շահապ, մտաւնագիր մըն է, լրագրութեան մէջ ալ շատ աշխատած և հոս պետական վարժարաններուն մէջ երկարամյա ուսուցիչ. ֆրանսուհին երիտասարդ կին մըն է խոսուն և իր գործին նվիրված. երկուքն ալ որոշ համակրանքով մը դեպի հայ տարրը: Ֆրանսերենի ծրագրային ուսուցիչը, որ համալսարանական վկայյալ մըն է և որ իր պարտավորութիւնը կանոնավոր կը կատարե, նվիրված մը չէ ուսուցչական պաշտոնին. կը պակսի տաք ոգին: Մենք նախապես հրավիրած էինք անոր փոխարեն La Syrie թերթի գլխավոր աշխատակիցներեն մեկը, տաղանդավոր մարդ մը, և արդեն համաձայնած էինք, երբ վերջին վայրկյանին ամբողջ օրով պաշտոնի հրավիրվելուցավ և անկարող էր այլևս մեզի ժամեր տրամադրել: Եվ մենք արագ պետք է գտնեինք ուրիշ մը դպրոցի բացման այդ խառն օրերուն:

Հարցուցած էիր աշակերտներու վճարի մասին: Ծրագրի տպագրութենեն ետքը, որ պիտի ղրկվի միայն պահանջողներուն, մենք տպագրելու ենք մեկ-երկու երեսնոց հայտագիր մը հազարներով ամեն կողմ ցրվելու համար. առոր մեջը կ'ըլլա բնականաբար բոլոր հարկ եղած բացատրութիւնները: Աշակերտի մը տարեկան ուսման վճարն է տասը օսմանյան հնչուն ոսկի, իսկ պիշերօթիկի մը ամբողջական վճարը ինը ամսվան համար 45 ոսկի: Գրքերն ու հագուստը, նվագի և այլ մասնավոր դասերը, ինչպես և լուրջ հիվանդութիւններուն ծախքերը ծնողքին վրա կը մնան: Այուրիայի մեջ համայնական ջանքերով պահվող տաներուն համար կը վերցնենք 40 օսմանյան ոսկի:

Ուրեմն Համազգային ընդհանուր ժողովը որոշված է հուլիսի սկիզբը. հոս թե հոս մենք ձեր տրամադրութեան տակն ենք, ինչպես որ մեր ընկերները կը ցանկան: Եթե Եգիպտոսի վրա վերջնապես կանգ

առնելու ըլլաք՝ կարելիին չափ չուտ հայտնեցեք մեզի, որ կա՛մ Նիկոլը, կա՛մ ես անցագրի հոգը քաշենք վաղօրոք:

Ներփակ կը դնեմ մեր աշակերտներեն մեկ-երկուքին նկարները, որոնք պատահմամբ կան ձեռքիս տակը:

Քեզի ու քուկիններուդ և բոլոր մեր ընկերներուն կարոտով ու սիրով չատ-չատ բարևներ. *Լևոն Շանթ*

209. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո:

Մեր Հոստեղի ընկեր Մհհրան Թուրիկյանի խորհրդով Միացյալ Նահանգներու Դիտրոյթ քաղաքին մեջ իր կեդրոնը ունեցող «Քղիի[1] Խուբա գյուղի Հայրենաշինական միության» վերջին ընդհանուր ժողովը կ՚որոշե դպրոց մը բանալ Սուետիայի ու Քեսապի չրջանին մեջ[2] հայաշատ գյուղ մը. պատրաստ է դպրոցին հատկացնելու տարեկան մինչև 400 տոլլար, դպրոցը կրելու է իրենց գյուղի դպրոցին անունը և գտնվելու է Համազգայինի բացարձակ տնօրինության տակ:

Նիկոլը, Գասպարը և ես կը կարծենք, որ անմիջապես պետք է հայտնել անոնց վարչությանդ սկզբունքային պատրաստակամությունը՝ գործնական ձևակերպումը թողնելով հուլիսի հառաջիկա մեր ընդհանուր ժողովին: Մինչև այդ ժամանակ մենք հոս կը ժողվինք անհրաժեշտ եղող տեղեկությունները տեղի ընտրության, գործի կազմության մասին ու կը կազմինք նախահաշիվ մը ընդհանուր ժողովին ներկայացնելու համար: Ջորս հարյուր տոլլարը անշուշտ հերիք պիտի չընե. հավանորեն Համազգայինը 50-60 ոսկիի մը չափ ավելցնելու է իր գանձեն:

Մեր դպրոցական աշխատանքները կանոնավոր կը չարունակվին. չաբաթե մը կ՚ավարտի ճեմարանի ծրագրին տպագրությունը, որ և անմիջապես կը ղրկենք ձեզի: Սրտագին բարևներով՝ *Լևոն Շանթ*

1930 մայիս 12

Պեյրութ

210. ՍԻՄՈՆ ՎՐԱՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, բացիկդ ստացանք մայիս 28-ին, մեր դպրոցական-աշակերտական Հանդեսի ժամին և կրնաս երևակայել ինչքա՜ն ուրախություն պատճառեց մեզի:

Տարակույս չունեինք, որ պրոպականտ կ'ընես մեզի համար. բայց այդ պաշտոնեդ զատ ճեմարանը կու տա քեզի նաև խորհրդականի տիտղոսը և կը խնդրե, որ իրեն մատնանիշ ընես Հեռվեն կամ մոտեն, և եթե կրնաս, Հայերենի համար ուսուցիչ մը, ֆրանսերենի հայ ուսուցիչ մը և մաթեմատիկի ու բնական պիտուքյուններու ուսուցիչ մը:

Մեզի պետք եղածը տևականորեն ու սրտանց մեր հաստատուքյան կապվիլ ուզող երիտասարդ ընկերներ գտնիլն է, հոգիով հայ, բնավորուքյամբ չիտակ և զաղափարներով կիւց: Կը տեսնես, որ դյուրին ապրանք չէ քեզի պատվիրածս: Հայերենի համար մենք հրավիրած ենք Համաստեղը. եթե ընդունի՝ այդ մեկ հարցը կը գոցվի[1]:

Մոռածե՛ ու գրե՛. և ընդունե Նիկոլի ու իմ սրտագին բարևները. Հաջողուքյո՛ւն:

Լևոն Շանթ

1930 Հունիս 3, Պեյրութ

211. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, մեր աշխատանքները կանոնավոր կշարունակվին. դասերը կը դադրեցնինք Հունիսի վերջը: Հիմա կը ցրվինք ամեն կողմ մեր ծրագիրն ու Հայտագիրը. ամսու վերջերն ալ կը ցրվինք հոս քաղաքին մեջ: Միևնույն ժամանակ դիմում կը կատարենք Ամերիկայի պետական Հայրենակցական միուքյուններուն, որ մեր ճեմարանին մեջ սաներ պահին. միևնույն ժամանակ մեր ընկերներու միջոցով կը ջանանք Հայրենակցական միուքյուններու և Հայ ճեմարանի մեջ եղած ձգտումներու և նպատակի նույնուքյունը անոնց բացահայտ դարձնել: Երեք կարևոր Հայրենակցականներու դիմած ենք արդեն, մյուսներուն ալ կը դիմենք Հառաջիկային, երբ Ամերիկայի մեր ընկերներեն ստանանք Հարկ եղած տեղեկուքյունները:

Ուրիշ խոսքով՝ կը պատրաստվինք աչնան համար. պատրաստել կու տանք նրեք նոր դասարանի համար նստարաններ, դրատախտակ ու պահարան. ծրագրի տպագրութիւնն ալ մեզի բավական դումար նստեցավ, որ չէինք մտցուցած մեր վերջին հաշվին մեջ: Այս ամսվան վերջն ալ ունինք պաշտոնեութեան ամսական մը վճարելի և մանավանդ 107 օսմանյան ոսկի մեր բնակարանի երկրորդ կեսը. ըսել կ'ուզեմ, որ մեր ձեռքի դրամը հերիք չէ: Ամերիկայեն մինչև հուլիս ամսին վերջերը դրամ ստանալու հույս չունինք, քանի որ վերջին անգամ 1000 տոլլար փոխադրեցին. այնպես որ նորեն հարկադրված ենք եգիպտոսեն դրամ խնդրելու, թե չէ 2-3 շաբաթ վերջը բացը կը մնանք. մանավանդ որ հիմա հոս ծանր դրամական մթնոլորտ մը կա, սնանկութիւն սնանկութեան վրա, բոլորովին պակսած է վստահութիւնը և բնավ հույս չկա նույնիսկ կարճ ժամանակով պարտք ճարելու մեր ընկերներեն: Ղրկեցե՛ք ինչ որ կրնաք, բայց անպատճառ ղրկեցեք և հնար եղածին չափ շուտ:

Վերջին 8000 ֆրանքի չեքը ձեռմե ստացանք թե չէ՝ փոխադրեցինք Նավար տպարանին վրա՝ հետն ալ ղրկելով ձեռագիրս և բոլոր հարկ եղած բացատրութիւններն ու պայմանները. բայց մինչև հիմա ո՛չ որևէ պատասխան ենք ստացած և ո՛չ սրբագրութիւն. կը չարանամ, բայց ի՞նչ կրնամ ընել: Օր օրի կ'ըսպասինք լուրի. համենայն դեպս գրեցի Զավոյին, որ տեսնվի Զավրևի հետ, թե ի՞նչ է այս ուշացման ու լռութեան պատճառը. կ'ենթադրեմ տպարանի հայկական աշխատանքը դիզված է և հերթի կ'ըսպասի. սակայն իսկական պատճառը այն է, որ հետու ենք և գործի դլխուն կեցած չեմ. հեռվեն հետու գործը այսպես կ'ըլլա:

Գասպարը սաստիկ զբաղված է. վերջերս հազիվ շաբաթը անգամ մը իրար կը տեսնինք. մեկ ոտքը Դամասկոս է, մյուսը՝ Հալեպ. հոս եղած ժամանակն ալ չրջապատված է երևակայելի ու աներևակայելի «գործի մարդիկներով»: Մեր ընդհանուր ժողովի տեղի խնդիրը հիմա ավելի բարդվեցավ Գասպարի հոս մնալովը: Ինչ կերպով կարգադրել կը մտածեք:

Շատ ու չատ սրտագին բարևներ քեզի ու մեր բոլոր ընկերներուն.

Լևոն Շանթ

1930 Հունիս 5
Պեյրութ

212. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, ներփակ կը ղրկեմ քեզի Լաթաքիեի[1] նորակազմ ժամանակավոր վարչութեան նամակը Համազգայինի ճյուղ մը հիմնած ըլլալու մասին: Ես անմիջապես ղրկեցի իրենց մեր ընդհանուր կանոնագիրը:

Քանի մը օր առաջ գրած եմ քեզի ընդարձակ նամակ մը[2], մեջը ղրած եմ մեր նախորդ տարվան հաշվեկշիռը և հառաջիկա տարվան նախահաշիվը. հուսով եմ ստացած ես արդեն:

Ջերմ բարևներով՝ Լևոն Շանթ

1930 Հուլիս 3
Պեյրութ

213. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, կը ղրկեմ քեզի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը գյուղին. երբ քալաք իջնեմ՝ կը ղրկեմ նաև մնացած թղթերը արխիվիդ համար: Շաբաթ մը առաջ գրած եմ քեզի արդեն էականը[1]:

Ամերիկայեն հեռագրիս պատասխանը ստացա, որ կարմիր խաչի «պատգամավորական ժողովը քվեարկած է 2000 տոլար աշակերտներ պահելու համար ճեմարանին մեջ»:

Այսպեսով մեր կազմած բյուտճեի հավաստարակչութիւնը բոլորովին խախտված է: Հիմա կ'ըսպասեմ Հայրենակցական միութիւններուն գրած դիմումներուս արդյունքին. գուցե անոնց հանձնառութեամբ գոցվի մեր բյուտճեին վրա հառաջացած ճեղքը: Բայց եթե հոտ ալ մեր հույսերը չարդարանան, կամ լիովին չարդարանան, կը հարմարցնենք ուրիշ կերպով. այսինքն կարմիր խաչի գումարով կը պահենք երթևեկ աշակերտներ, ո՛չ գիշերօթիկ, գոնե 2000-ի մեծագույն մասով, քիչ մը մեր բյուտճեն կը սեղմենք, մանավանդ գիշերօթիկի բաժինեն, թեև իմ համոզումիս հակառակ է: Եվ վերջապես նոր դիմումներ կը կատարինք. վերջապես կերպով մը պետք է որ ծայրը ծայրին բերենք: Մինչև հոկտեմբեր վիճակը շատ ավելի կը պարզվի և

աւոր համեմատ ալ կը չարժինք, իհարկէ միչտ կեդրոնական վարչութեանդ հետ համախորհուրդ:

Ամերիկայեն չենք ստացած նաև վերջին 500 տոլլարը անցած տարվան 2000-ի հաչվին: Իհարկէ գրած եմ, հասկացուցած անմիջական պահանջը. կարելի է մինչև օգոստոսի վերջերը ստանանք: Եթե ստացվի՝ աղեկ, եթե ոչ՝ կ'իյնանք չատ հիմար դրութեան մեջ: Հիմա գրասեղաններ կը չինվին երեք դասարանի համար, պետք է իսկույն վճարել. սպասելու կարող մարդ չէ աստղաձագործը: Եվ տարեմուտեն առաջ պետք է անպատճառ պատրաստ ըլլան պետքարանները, ուրիչ խոսքով՝ չիտակ 100 եգ. ոսկի: Եթե մինչև օգոստոսի վերջերը այդ 500 տոլլարը չստանամ՝ հարկադրված պիտի ըլլանք ձեզի դիմելու:

Նամակներդ կրնաս ղրկեր միչտ ճեմարանի հասցեով, համենայն դեպս գիտցի՛ր նաև ամառվան հասցես. Hotel Cherif, Bhamdoun, Liban.

Սրտագին բարևներով քեզի, քովիններուդ և ընկերներուա՝

Լևոն Շանթ

1930 Հուլիս 29
Պհամտուն[2]

214. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, օգոստոսի 20-ն է այսօր և Ամերիկայեն դրամ չկա: Վերջին անգամ Հուլիս 7-ին նորեն հատուվ գրած և ուզած եմ այդ անցած տարվան մնացորդը՝ 500 տոլլարը. բայց կը տեսնեմ, որ սեպտեմբերի վերջերեն առաջ պատասխան ստանալու չեմ:

Իսկ հոս այլևս սպասել և ուշացնել կարելի չէ ոչ նստարաններուն չինուելյունը և ոչ պետքարաններուն չենքը: Նստարաններուն մոտելը և պետքարաններուն հատակագիծը պատրաստված է և աչխատանքը կանգ է առած: Պետք է իսկույն պատվիրել, թե չէ դասերու սկզբին չենք հասցներ. ամիսե մը հազիվ կը չինեն:

Ինչպես արդեն գրած եմ՝ պետք եղածը հարյուր ոսկի է. հիմա անմիջապես պետք է դրնե կեսը սկսելու համար, մինչև ավարտելն ալ՝ երկրորդ կեսը:

Ընդհանուր ժողովեն ետքը դրած եմ քեզի երկու նամակ և ղրկած եմ արձանագրութիւնը:

Շատ ու չատ բարևներ քեզի, քովիններուդ և մեր ընկերներուն.

Լևոն Շանթ

1930 օգոստոս 20
Պեյրութ

215. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, անշուշտ վարչութեան կողմե հայտնված է արդեն Ամերիկա Խուբա պյուղի Հայրենակցական միութեանը Համազգայինի ընդհանուր ժողովի որոշման մասին. մենք կ'ըսպասենք անոնց ղրկելիք դրամին պյուղական վարժարանը անմիջապես բանալու համար: Այդ պյուղական վարժարանի ավագ ուսուցչի պաշտոնը կ'ուզե հանձն առնել մեր ընկեր Շեմսը:

Հայ կարմիր խաչեն ստացա նախորդ տարվան վերջին 500 տոլլարը, որով և կը չինվին հիմա նստարաններն ու պետքարանները: Կ'ըսես թե կարմիր խաչը իրավունք չուներ յուբացնելու պարոնի մը կողմեն Համազգայինին նվիրված 500 տոլլարը. ես լավ տեղյակ չեմ գործին: Եթե ատիկա վարչութեանդ ընդհանուր համոզումն է՝ կրնաք դրեր Կ. խաչի կեդրոնական վարչութեան և ուղել այդ դրամը. միայն կը խնդրեմ, որ ճեմարանի անունը մեջ չխառնեք և անոնց ճեմարանին արդեն վճարած կամ վճարելիքի մասին որևէ խոսք ու զանգատ չընեք:

Կարմիր խաչի 3000-ը 2000-ի իջնելուն պատճառը այսպես է ձևակերպած Վրացյանը իր հուվիս 6 թվակիր նամակին մեջ. «Բացի նյութական աննպաստ պայմաններից, որոշ աննպաստ տրամադրութիւն է ստեղծում և այն անվերջ ռեկլամը «Հուսաբեր»-ում, որ ճեմարանը եգիպտացիների - «Համազգայինի» գործն է. «Մենք ղրամ տանք, եգիպտացի՞ք վայելեն»,- այս մտայնութիւնը չատ տեղ եմ նկատել, տեսա և պատգ. ժողովում: Դեպի նման բաները չատ դյուրազգաց են այստեղ: Կ'ուզեի, որ դուք այս պարագան աչքի առաջ ունենաք. եթե թերթի մեջ 10 անգամ գրվում է Համազգայինի մասին, թո՛ղ մի անգամ էլ Կ. խաչի մասին գրվի. ղրանից վնաս չկա»:

Մեր այս տարվան պյուտճեն կարմիր խաչի վրա 4000 տոլլար էր

Հուսադրած, որով 2000 գոտ բաց մը կա. մնացած 2000-ն ալ առաջ-վան պես ուղղակի մեր սրամադրութեան տակ դրված չէ, այլ պայ-մանավորված է 10 գիշերօթիկի իբրև վճար. ասով մեր պյոտռճեն իրապես 3000-ի բաց մը կ'ըստանա: Այդ բացը գոցելու միայն մեկ միջոց կա. գտնել ուրիշ որդեգիր պահող անհատներ ու հաստատու-թյուններ Կարմիր խաչի նման: Այդ ուղղութեամբ է, որ կ'աշխատինք վերջին երկու ամիսը. դիմումներ կատարած եմ Ամերիկայի 8 կարևոր Հայրենակցական միութեուններուն Ամերիկայի պայմաններուն ծանոթ մեր մոտիկ ընկերներու խորհուրդը առնելեն ետքը: Այդ դիմումներուն կեսեն լուրջ հույս մը չունիմ. երկու Հայրենակցական միութեան վրա մասնավոր կերպով հույս եմ դրած: Դիմումներեն մեկ մասը կատար-ված է հունիս ամսին, մեկ մասն ալ վերջերս. նոյեմբերեն առաջ պա-տասխան ունենալ չենք կրնար. սովորաբար սեպտեմբերին է, որ անոնք կ'ունենան իրենց ընդհանուր ժողովները, ուր և կը կայանան վերջ-նական որոշումները: Դիմած եմ նաև Հատուկ նամակով Խորասանջ-յանին[1]: Դիմելու եմ նույնպես ավելի փոքր քանի մը Հայր, միություն-ներու, մեկ-երկու անձամբ ծանոթ անձերու, այլև Կարմիր խաչին, որ անհատներ գտնեն որդեգիրներ պահող, ինչպես Հույս մը տվեր էին իրենց վերջընթեր նամակին մեջ, ընդգծելով իրենց հանկարծական զեղջեն առաջացուցած քրիզը:

Այս բոլոր դիմումները չեմ կարծեր որ բոլորովին ապարդյուն անցնին և կը հուսանք, որ գտնե մեր բացը կը գոցեն: Ամեն պարագայի մեջ «Համազգայինի» վրա իր հանձնառութենեն ավելի ծանրություն չենք ըլլար: Այո՛, Համազգայինը այս տարի մասնավոր ջանքով պետք է աշխատի, եթե կը ցանկա կենսունակ ու տևական մարմին մը դառնալ. արդի իր[2] ոգին ու էությունը մշտական աշխատանք կը պահանջե ու զոհողություն, գիտենք ամենքս ալ, և ճիշդ ատո՛ր մեջն է իր արժեքն ու կարևորությունը. ատով պիտի ստանա ան դիրք ու ազդեցություն: Հոկտեմբերին կ'ըսկսին հոս Լիբանանի խնամակալության աշխա-տանքները, երբ ամենքը լեռներեն իջնան:

Ղրկած 35 ոսկիդ ստացած եմ. ղրկե՛ նորեն անմիջապես ինչ որ ղրկել կրնաս, որովհետև այս շրջանը մեր ամենեն անդրամ շրջանն է, մինչև աշակերտական վճարները սկսին: Իսկ անհրաժեշտ ծախքերը անհետաձգելի են. Ֆրանսայեն կանչված երկու ուսուցիչներուն պետք է ճամբու ծախք, թեև վերջը կը հաշվինք իրենց ռոճիկեն, բայց հիմա

անմիջապես պետք է ղրկվի, որ ժամանակին հասնին. այնպես ալ վիշտ-րօթիկներուն կահավորման անխուսափելի պետքեր կան և նման ավելի մանրուք ծախքեր:

Հարցուցած էիր Սիրունիի մասին, իբրև մնայուն գործիչ Համազգայինի: Իմ համոզումովս մնայուն գործիչի ո՛չ մարդը կա, ո՛չ դրամը, ո՛չ ալ պետքը: Գործի հաջողութեան և կանոյի տարածման համար կրնան նպաստաւոր միայն մեր այն մտաւոր ընկերները, որոնք ընդհանուր հեղինակութեան և ակնածանք կը վայլին, խոսքի ուժ ունին և խորը հավատք «Համազգայինի» նշանակութեան. Վահան[3] ու Նիկոլ. մնացածը աննպաստ ճիգ է, որ հապիվ իր ծախքերը կը գոցե: Մնայուն գործիչը ես ավելորդ կը գտնիմ. խոսքս մեր գործունեութեան արդի վիճակի մասին է. ապագան ապագային:

Ջերմ ու սրտագին բարևներս բոլորիդ. Լևոն Շանթ

1930 սեպտեմբեր 13, Պհամտուն

216. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո:

Այսօր ստացա 25 եզ. ոսկիի արժեքով չեքն ու ստացագիրը, ինչպես ստացած եմ երկու շաբաթ առաջ առաջինն առաքումդ 25 եզ. ոսկի:

Սեպտեմբեր 13-ին գրած եմ քեզի նամակ մը, ուր մանրամասն խոսած եմ ճեմարանի կողմեն կատարած մեր պիմոամներու մասին:

Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը գրված Բաբախյանի ձեռքով և իմ կողմես ստորագրված ես ղրկած եմ քեզի Հուլիս 29-ին: Նամակներես նյութը քեզի ծանոթ ըլլալով՝ կարելի է գրած ես թղթերուդ մեջը ու մոռցած. այսպես կ'ըսեմ, որովհետև մինչև հիմա պոստի մեջ ոչինչ կորած չէ: Ստուգի՛ր. եթե չես ստացած՝ նորեն արտագրեմ իմ սևագրութենես և ղրկեմ: Կարևոր է, որովհետև ստոր վրա հիմնված կեդրոնական վարչութիւնը արդեն որոշ քայլեր առած պիտի ըլլար, մասնավորապես Խուբա պյուզի վարժարանի հետ կապված:

Քաղաք վերադառնալուս սիա կը ղրկեմ նաև այն վավերաթղթերը, որ ժողովի առիթով ղրկած էիր հոս և որ պետք է ըլլա Կեդրոնի արխիվին մեջ:

Շատ ու չատ բարևներով՝ Լևոն Շանթ
1930 սեպտ. 20, Պհամտուն

217. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, սեպտեմբեր 29-ին իջանք գյուղեն. և այդ օրեն ալ բացված են աշակերտական արձանագրությունները. աշակերտներուն թիվը կենալու է կարծեմ հիսուն-վաթսունին մեջտեղը, ինչպես որ կը նախատեսեինք: Շատ-չատերը դեռ չեն իջած ամարանոցներեն. տաքը մեծ չէ, բայց խոնավությունը իրիկունները չատ է ճնշող: Հոս ընդհանրապես միջնակարգ վարժարանները կ՝ըսկսին հոկտեմբերի կեսերուն. մենք ալ դասատվությունը կ՝ըսկսինք հոկտեմբեր 12-ին:

Ուսուցիչներու, աշակերտներու և գիշերօթիկներու մասին կը գրեմ վարչության երկու չաբաթեն, երբ մեր աշխատանքը մտած կ՝ըլլա արդեն իր հունին մեջ:

Յուրաքանչյուր աշակերտե միջին հաշվով ինը ոսկի կ՝ըստանա մեր վարժարանը, միևնույն է՝ ինքնավճար ըլլան անոնք թե՛ ուրիշներե նպաստավորված: Գիշերօթիկներու թիվը եթե 15-ը չանցնի, ամեն գիշերօթիկ միայն տասը ոսկի կը թողնե դպրոցին իբրև ուտման վճար. մնացածը կը ծախսվի իր գիշերօթիկության վրան: Եթե 15-ը անցնի իրենց թիվը՝ ամեն մեկը 4-5 ոսկիի հավել չահ մը կը թողնե դպրոցին: Եթե իրենց թիվը 25-ը անցնի, այդ հավել եկամուտը մինչև 7-8 ոսկիի կրնա հասնիլ: Ուրեմն ամեն երեքևկե 8-10 ոսկի, ամեն գիշերօթիկե 10-17 ոսկի. այս է իրողությունը, գիշերօթիկներու ավելնալեն վախնալու բան մը չունինք, ընդհակառակը:

Հիմա գիշերօթիկներու համար հարմար բնակարան կը փնտրինք և կ՝ուզենք այնպես դասավորինք, որ այդ բնակարանի վարձին մեծագույն մասը մեր պյուտճեին վրա չծանրանա. ես, Նիկոլը և երրորդ ուսուցիչ մը դպրոցական չենքին մեջ մեյ-մեկ սենյակ կը պահենք և փոխարենը վճարելիք մեր գումարներով կը գոցվի չենքի վարձքի մեկ խոշոր մասը:

Մեր դիմումներեն դեռ միայն մեկ պատասխան մըն եմ ստացած. Փարիզեն պարոն Վահան Խորասանճյանեն ստացած ենք համակրական նամակ մը և 5000 ֆրանքի չեք մը, «իբրև իր կողմեն դույզն նվեր

մը ճեմարանին», իբրև իր համակրանքին «մեկ չոչափելի ապացույցը», և կը ցավի, որ այս վայրկյանիս ավելին ընել չի կրնար:

Ես քեզմե ստացած եմ վերջին ամսվա ընթացքին 60 եվիպ. ոսկի (35 + 23 + 2) և հույս ունիմ ստանալու նաև 40 ոսկի. անմիջական չատ գնումներ կան կատարելու, մանավանդ գիշերօթիկներուն համար: Իսկ Ամերիկայեն առաջին վճարը ստանալու ենք չատ ուշ, մինչև իրենց սաներու ընտրությունը լրացնենք, իրենց տեղեկացնենք և մինչև հոնկե պատասխանը առնենք. ճամբան չատ է երկար, երևի կ'ըստանանք դեկտեմբերին:

Շեմսի խնդիրը փակված է. միևնույն բաները կը պատմեին Ալեքսանդրիայեն եկող մեր ընկերները: Կը ցավիմ չատ, բայց իր անունը ջնջված է այլևս մեր աշխատակիցներու ցանկեն[1]:

Շատ ու չատ ջերմագին բարևներ քեզի, քուվիններուդ ու մեր ընկերներուն.

Լևոն Շանթ

1930 հոկտ. 3,
Պեյրութ

218. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, ներփակ կը վերադարձնեմ քեզի այն բոլոր գրություննները, որ դուն ղրկած ես ինծի ընդհանուր ժողովին ներկայացնելու համար, ընդամենը 11 կտոր էր. առաջին թիվը քու նամակդ էր ինծի, որ բնականաբար կը պահեմ:

Լևոն Շանթ

1930 հոկտ. 3,
Պեյրութ

219. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, հինգ օր է դպրոցը սկսանք. Փրանսերենի երկու ուսուցիչները դեռ չեն հասած Փարիզեն և աշխատանքի բեռը կրկնակի կերպով ինկած է մնացած ուսուցիչներուս վրա, բայց բոլորս ալ կ'աշխատինք մեծ եռանդով: Ուրախ եմ հայտնելու Եպիսկոպոսի մեր ըն-

կերներուն, որ իրենց ջանքերն ու զոհողությունները իզուր չանցան. այլևս կրնամ ըսեր ասիկա. Համազգայինը հիմա լիսեի չորս կարգերով կանոնավոր վարժարան մը ունի Պեյրութի մեջ իր գիշերօթիկ բաժինով:

Ճեմարանի աշակերտներուն թիվը այս վայրկյանիս 59 հոգի է. և ընտիր աշակերտություն մը, 34-ը տղա, 25-ը աղջիկ, 14-18 տարիքի մեջ: Ասոնցմե 27-ը ինքնավճար են (14-ը տղա, 13-ը աղջիկ), 27 հոգի Հայ կարմիր խաչի որդեգիրներն են (17-ը[1] տղա. 10 աղջիկ), մնացած հինգ հոգին ալ Համազգայինի որդեգիր (3-ը տղա. 2-ը աղջիկ):

Ասոնցմե գիշերօթիկ են 10 տղա. 2 հատը «Համազգայինի» որդեգիր Հալեպեն, 3 հատը ինքնավճար Պաղտատեն, Ճունիեն և Զահլեեն[2]. վերջինս Ներսես Կյուլպենկյանի որդեգիրը: Մնացած 5-ը Հայ կարմիր խաչի որդեգիրներեն են՝ Լաթաքիայեն, Սուետիայեն, Հալեպեն, Դամասկոսեն ու Քեսապեն (Քեսապի ընտրելին դեռ մեզի հայտնված չէ):

Հայ կարմիր խաչի որդեգիրներուն ընտրությունը և ընտրվածներու ամեն տեսակի հոգածությունը կը կատարվի հանձնախումբի մը ձեռքով, որ Հայ կարմիր խաչի կեդրոնական վարչության որոշումով կազմված է 3 հոգիե. տիկին Հեղուշ Փափազյան (նշանակված Ամերիկայեն), բժիշկ Բենիամին Գուլագյան (Հայ կարմիր խաչի տեղիս մասնաճյուղի ընտրելին) և Լ. Շանթ իբրև նախագահ: Գիշերօթիկները ընտրված են գավառներեն և տեղական մեր լավագույն ընկերներու օգնությամբ, որոնք լավատեղյակ են իրենց տեղի տնտեսական, ընտանեկան և այլ պայմաններուն:

Գիշերօթիկներու համար վարձված է առանձին բնակարան 90 օսմանյան ոսկիով, որուն կեսը ես ու Նիկոլն ենք վճարելու, իբրև վարձ դպրոցական չենքին մեջ մեր ունեցած սենյակներուն: Գիշերօթիկներուն բնակարանը 6 սենյակ ունի, առաջին հարկի վրա, ամեն կողմեն բաց, բոլորովին նոր չենք, օդավետ և առողջ: [Բարձր, ոգևորիչ և գեղեցկորեն մխիթարական բան մը կա կրթական այս նոր հաստատության մեջ: Անկասկած է, որ Հայ ճեմարանին մեծ դեր վերապահված է գաղութահայության կյանքին մեջ][3]: Հիմա ննջարաններու, ճաշարանի և խոհանոցի կահավորման վրան ենք. այս իրիկուն արդեն եկած տղաքը կ'անցնին հոն և կ'ըսկսին իրենց կյանքն ու տնտեսությունը Մաթեոս Փափազյանի անմիջական վարչության տակ, մեր ղեկավարությամբ ու հսկողությամբ:

Ինչքան կ'ուզեի, որ Եպիսկոպոսի մեր ընկերները հիմա հոս ըլլային իրենց աչքովը տեսնելու համար իրենց ձեռակերտը. խալի ու գասերու առեն տեսնին երկաթե աշակերտութեան ուրախ և ուշիմ դեմքերը և դպրոցի տաք ու գրավիչ մթնոլորտը. ինծի ու Նիկոլին համար ասիկա անփոխարինելի մխիթարութիւն մըն է մեր այս հոգնութեան և դրամական ճնշկռտուքներուն մեջ:

Գալով այդ դրամական հաշիւներուն՝ նախ մեր վավերացված պյուտճեին վրա մոտ 700 ոսկիի կրճատում մըն ենք մտցուցած չենքի ու գնումներու վրայեն՝ 20-ի տեղ 10 դիշերօթիկի վրա ծախսելով և այլ մանր տնտեսութեամբ: Աշակերտական առաջին վճարներով, Ամերիկայի հին 500 տոլարով, ձեր ղրկած 60 ոսկիով և Խորասանճյանի 45 ոսկիով չինվեցան տղոց և աղջիկներու զատ-զատ պետքարանները, աշակերտական 24 հատ գեղեցիկ երկու հոգինոց նստարաններ, դիշերօթիկներու համար 12 մահճակալ, ներքնակ և երկուական բրդի ծածկոց ու բարձ, ինչպես և սեղանատան կազմած և խոհանոցային անվերջանալի իրեր: Ձեռքս հիմա կա 200 սիրիական թղթադրամ, որուն վրա կը դողամ, իբրև դիշերօթիկներու առօրյա ապրուստի ծախք:

Ամերիկայեն մինչև դեկտեմբերի վերջերը դրամ ստանալու չենք, քանի որ անոնց ալ այսօր կամ վաղը հայտնեմ պիտի իրենց հանձնաժողովին կատարած աշխատանքի արդյունքը. իսկ 2-3 չաթաթեն արդեն պետք է վճարվի դպրոցական պաշտոնեութեան առաջին ամսականը 130 օսմանյան ոսկի: Այդ դումարն է, որ կը խնդրենք կեդրոնական վարչութենեդ, ինչ կ'ուզե ըլլա, այս մեկ-երկու չաթաթներուն մեջ մեր ձեռքը հասցնեք: Ձեմարանի վարկի բարձրացման, շրջապատի հարգանքի ու պատկառանքի զգացումին և մեր ամբողջ գործի լրջութեան վրա վստահութիւն ներշնչողը, բացի քանի մը բարոյական կողմերե, շատ կարևոր դեր ունի նաև դպրոցիս դրամական վճարումներուն մինչև հիմա ունեցած կանոնավոր ու ճշդապահ դիրքը: Եթե կ'ուզենք, որ մեր գործը ամրանա, ինչ գնով կ'ուզե ըլլա պետք է օրը օրին պաշտոնեութեան ամսականները վճարվին. մեր կարծածեն շատ ավելի մեծ է այդ ճշդապահութեան կարևորութիւնը:

Եվ որպեսզի ամեն անգամ դրամ չուզեմ ձեզմե ու նամակներս ձանձրալի ու անախորժ չդարձնեմ ձեզի, և մենք ալ հոս մինչև վերջին վայրկյանը անորոշութեան մեջ չտարուբերինք, որ չավատանց մաշոց կերպով կ'ապրե և՛ իմ, և՛ Նիկոլի հոգեկան կյանքին վրա, լավ կ'ըլլա, որ

կանոնավոր ամսական կամ երկամսյա վճարումներու ձևը տաք ձեր դրամական առաքումներուն: Պյուտճեով հուլիս մեկեն սկսած մեկ տարվան համար վճարելու եք 684 օսմանյան ոսկի, 80 ոսկի ալ Հալեպի երկու գիչերօթիկներուն վճարը, ընդամենը 764 ոսկի, ուրեմն ամսական 60-63 օսմանյան ոսկի: Այս հաշվով մինչև հոկտեմբերի վերջը չորս ամսվան համար ստանալիք ունինք 250 ոսկի, որու դեմ ստացած ենք վաթսուն ոսկի և կարծեմ 30 ոսկի ալ փոխադրած եք Նիկոլի ընտանիքին, որով կ'ունենանք 160 ոսկի անմիջական ստանալիք:

Իհարկե, չատ լավ գիտենք մեր կեդրոնի վիճակն ու պայմանները, բայց մյուս կողմե ամենքս ալ պետք չէ մոռնանք, որ սա խոշոր ու հոսուն գործ մըն է և որ սպասել չի կրնար. մանավանդ այս առաջին երկու տարիներու ընթացքին, երբ մեր հաստատության դիրքն ու անունը ամեն կերպ կը ջանանք ամրացնելու: Ինչպես մենք հոս, այնպես ալ հոտ մեր Եգիպտոսի ընկերները բոլորս միասին հարկադրված ենք լարելու մեր բոլոր ուժերը. ուրիշ ելք չկա: Եզրակացությունն - կ'ըսպասինք դրամի: Մեր այստեղի ցրված ընկերներու քաղաք դարձին կ'ըսպասինք Համազգայինի տեղական մարմինը չարժման մեջ դնելու համար. կը հուսամ հառաջիկա կիրակի կ'ըսկսի խնամակալ հանձնախումբը իր գործունեությունը: Կարծեմ կնիք և պաշտոնաթղթեր պետք է կեդրոնեն ղրկեք. ղրկեցե՛ք ինչ որ պետք է, որ ատիկա ալ վերջը նոր ուշացումներու առիթ չտա: Արդեն Լաթաքիայեն կը պահանջեն ու կը մեղադրեն մեզի:

Ինչպես կը տեսնես, սիրելի՛ս, հոգերով, հուզումներով, հոգնութեյամբ, ոգևորութեյամբ ու հավատքով չաղաղված օրեր կ'անցընենք հիմա. իսկապես գործի կազմակերպութեյան օրերն են ասոնք. անցած տարվանը նախապատրաստական աշխատանք մըն էր միայն: Եվ այս բոլորին մեջ ամենեն պայծառ գիծը սա է, որ մեր ձեռնարկը հաջողված է արդեն. իր աճումն ու զարգացումը կախված է մեր հարատևութենեն ու մեր կամքեն:

Իմ և Նիկոլի ջերմ ու սրտագին բարևները քեզի և մեր ընկերներուն.

Լևոն Շանթ

1930 Հոկտեմբեր 19,
Պեյրութ

220. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, Հոկտեմբեր 21-ին ղրկած նամակդ և Հիսուն եպիսկոպական ոսկիի չեքը ստացած եմ: Նախորդ նամակիս մէջ մեր դրամական կողմի մասին մանրամասն գրած եմ. այս 8-10 օրվա ընթացքին ձեզմե նորեն դրամի կ'ըսպասինք:

Ծրանսերենի երկու ուսուցիչները չաբաթ մըն է հասած են Փարիզեն և ճեմարանը առած է արդեն իր կանոնավոր ընթացքը օրական հինգ ժամվան աշխատանքով: Դպրոցը կը տևե ժամը 8-են մինչև մեկը. սկիզբը մեր այս նորութիւնն ալ խորթ թվեցավ լսողներուն, բայց հիմա իրենք ծնողներն են, որ զոհունակութիւն կը հայտնեն:

Խորապես ուրախ եմ հայտնելու, որ մեր ուսուցիչները բոլորն ալ կ'աշխատին սրտով ու ոգևորութիւնմբ. աշակերտութիւնն ալ կ'աշխատի եռանդով ու գիտակցութիւնմբ, որով և կ'առաջանա դպրոցին մէջ ջերմ ու մտերիմ մթնոլորտ մը:

Մեր ուսուցչական կազմը հետևյալն է. 1/ Աղբալյանը՝ հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն, 2/ Սուրեն Բաբախյանը՝ հայերեն, թվաբանութիւն և ալճեպրա, այլև դեկավարութիւնը տղոց խաղերուն, 3/ Մաթեոս Փափազյան՝ անգլերեն և ընդհանուր վարիչ պիշիօթիկներուն, 4/ Գոհար Հովհաննեսյան՝ բնական պատմութիւն, թվաբանութիւն և ընդհանուր հսկիչ, 5/ Եղուարդ Տարոնյան՝ ֆրանսերեն, 6/ Մաննիկ Մնծատուրյան՝ ֆրանսերեն և վարելու է աղջիկներուն խաղերը, 7/ Ատոմ Գարագաշ՝ բնագիտութիւն, 8/ Հեղուշ Փափազյան՝ ձեռագործ ու կարուձև, 9/ Էմիր Ամին Շեհապ՝ արաբերեն, 10/ Կովաննօ՝ մարմնամարզ, 11/ ես՝ հայերեն և ընդհանուր պատմութիւն. Գասպար Իփեկյանը չուտով սկսելու է վերին կարգին «Բազաքացիական ուսմունք»: Բաց է մինչև հիմա մեր բոլոր ճիգերուն հակառակ նկարչութեան և երաժշտութեան դասերը. երկուքին ալ լուրջ կարևորութիւն կու տանք մենք և ճիշդ ատոր համար ալ երկրորդական մարդիկ կանչել չենք ուզեր: Այս չաբաթ ունեցանք մեր առաջին մանկավարժական ժողովը:

Այս չաբթու նիստ ունեցավ նաև Համազգայինի այուբիական խնամակալ մարմինը, կազմեց իր դիվանը և ձեռնարկեց կազմակերպչական աշխատանքի: Հալեպն ալ պետք է միանա իր խակ համա-

ձայնուվթյամբ հոստեղի մարմնին մեկ ամբողջուվթյուն մը առաջացնելու համար: Բոլոր քիչ-շատ կարևոր հայկական վայրերու մեջ մարմիններ պիտի կազմվին, այսպես 8-10 տեղ: Հիմա աշխատանք կը թափվի Պեյրութի տեղական հանձնախումբը կյանքի կանչելու, որ վարելու է բոլոր տեղական գործերը կեդրոնական մարմնի հետ համախորհուրդ և մշակելու անմիջական գործունեուվթյան ծրագիրը: Վարչուվթյունդ չուտով կ'ըստանա անշուշտ խնամակալուվթյան կողմե պաշտոնական գրուվթյունը:

Գասպարը ըսավ, որ իր մոտը ոչ ֆրանսերեն և ոչ ալ արաբերեն թարգմանուվթյուն չկա մեր ծրագրի. ժամանակին սևագրուվթյան նման բան մը եղեր է, որ չէ պահված, պատռվեր է:

Ամենուդ սրտագին բարևներ. Լևոն Շանթ

1930 նոյեմբեր 3
Պեյրութ

221. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1930 նոյեմբեր 29, Պեյրութ

Սիրելի՛ Համո, ստացած եմ նամակդ և հիսուն եգիպտական ոսկիի չեքը, որը անմիջապես հանձնեցի Գասպարին. երկու շաբաթ առաջ տեսնելով, որ ձեր դրամը կ'ուշանա՝ քանի մը օրով փոխ վերցուցի Գասպարեն 60 եգիպտական և վճարեցի մեր ուսուցիչներու առաջին ամսականը: Մենք կը վճարենք տասնհինգ տասնհինգ:

Աշակերտական առաջին կիսամյա վճարումները կատարված են արդեն և այդ կողմեն մինչև փետրվարի կեսերը սպասելիք չունինք: Ամերիկայեն ալ, ինչպես արդեն գրած եմ, հավանորեն ստանալու ենք հունվարի սկիզբները: Դուն ալ հիմա ղրկեր ես հազիվ մեր սպասածին կեսը: Այս վայրկյանիս իմ ձեռքս կա հարյուր սիրիական ոսկիի չափ, ուրիշ-տասը օրեն այլևս ոչինչ չենք ունենար նույնիսկ ընթացիկ ծախքերու համար. իսկ երկու շաբաթեն պետք է վճարենք մեր ուսուցիչներուն ռոճիկը 125 օսմանյան ոսկի, եթե մեզի ալ մեջը հաշվենք:

Դիցուք նորեն Գասպարեն պարտք խնդրեմ 50-60 ռակի մը, բայց չեմ կրնար վերջապես այդ ամբողջ գումարը անկե խնդրել:

Մենք ակռանիս սեղմեր ենք ու կը ջանանք կեդրոնական վարչութիւնդ զահլեն չտանինք նուիրատուին նամակներով. բայց գործին պատասխանատուութիւնը պարտք կը դնէ մեր վրա զրելու այս բոլորը ձեզի և խնդրելու, որ հաւաջիկա չաբաթվա ընթացքին որևէ կերպով նորեն դրամ հասցնեք մեզի:

Այստեղի մեր տեղական կազմակերպութիւնը թեև ոտքի ելած է արդեն, բայց դեռ լրջորեն բանիլ չէ սկսած: Դանդաղութեան պատճառներեն մեկն ալ եղավ Գասպարի կոկորդին օպերասիոնը: Բայց եթե ամբողջ մեքենան բանիլ ալ սկսի՝ մեր դպրոցը հոսկե ոչ մեկ թեթևացում ունենալ չի կրնար անմիջապես, որովհետև խնամակալութեան կողմե որոշված է ու հայտարարված, որ այս շրջաններուն մեջ հաւաքված գումարները կեդրոնացնելու են հրատարակչական գործին վրա. Պոլսեն տառեր պիտի բերվին անմիջապես, պիտի բացվի դրաշարանոց ճեմարանին կից և պիտի սկսվի «Համազգայինի» գրքերուն հրատարակութիւնը: Ասիկա անհրաժեշտ է «Համազգայինի» երկրորդ նպատակն ալ կենդանի գործ դարձնելու համար, մեր ընկերութեան անունը ժողովրդականացնելու համար, որը դուն ալ շեշտեր էիր նամակիդ մեջ, ինչպես և մեր այս շրջանը ավելի ջերմ կերպով գործին կապելու համար, այլև մեր ճեմարանի անկախ ու բարձր դիրքը պահել կարողանալու համար. մեր ճեմարանի հմայքին ու հաջողութեան պայմաններեն մեկն ալ ան է, որ իր ծախքերը կեդրոնեն կու գան, դուրսեն կու գան. տեղային ու տեղական դրամը մեզի հետ անմիջական չվում չունի: Մյուս կողմեն ալ Փարիզի մեր տպագրական փորձը ցույց տավավ, որ հեռվեն հետու անկարելի է այս տեսակ պատասխանատու ու տևական գործ կատարելը: Փոփոխութիւն է կատարված տպարանի վարչական կազմին մեջ. ոտա մըն է հիմա վարիչը և դեռ նոր մամուլի տակ են դրեր վաղուց սրբագրված առաջին հատորը: Այս ամենը կը հարկադրեն մեզի իսկույն մեր դրաշարանոցը ունենալ, եթե կենդանի գործ տեսնել կ'ուզենք:

Գրեր էիր, որ մտաղիր եք զանազան մասնաւոր անձերու գլխուն կատարեք նոր օժանդակութիւն ապահովվելու համար մեր հաստատութեան: Նիկոլի և իմ համոզումն այն է, որ գլխուն կատարելու և՛ ամենեն պատշաճ, և՛ ամենեն նպատակահարմար ձևը ճեմարանի մեջ

գիշերօթիկ որդեգիրներ պահելու առաջարկն է. ատիկա է նաև մեր դպրոցի ինքնապահ դառնալու միակ ճամբան: Փորձը ցույց կու տա, որ 12-13 գիշերօթիկը կը ծածկե գիշերօթիկներու համար ըլլալիք ծախքերուն մեծագույն մասը. այնպես որ անկե անդին ամեն նոր գիշերօթիկ լուրջ չահ մը կը թողնե դպրոցին, այսինքն եթե գիշերօթիկներու թիվը 30-35-ի հասնի՝ դեռ ինքնապահ չենք դառնար իհարկե, բայց շատ կը փոքրանա լրացուցիչ օժանդակութեան չափը, իսկ մոտավորապես ատոր կրկնակի թվով գիշերօթիկները մեր ճեմարանը կը դարձնեն իր եկամուտներովը ապրող անկախ հաստատութիւն մը: Այդ ուղղութեամբ պետք է տարվեն մեր ջանքերը, որը և կը համապատասխանե մեր հաստատութեան վերջնական ու հիմնական նպատակներուն. վերջապես գիշերօթիկ լսարանցիներ ունենալու համար է այս գործը: Ջերմ բարևներով՝ Լևոն Շանթ

1931

222. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1931, Հունվար 2, Պեյրութ

Սիրելի՛ Համո, ստացած եմ փոխադրած 30 և 25 եզիպ. ոսկիի չեքերը և անմիջապես հանձնած եմ Գասպարին, ուրկե նորեն դրամ էի վերուցած դեկտեմբեր 15-ին պաշտոնեութեան ռոճիկը վճարել կարողանալու համար: Իրեն պարտք եմ դեռ մեկ-երկու հարյուր սիրիական, դուրսն ալ 100-150 սիրիական պարտք ունիմ չուրջս, իսկ ձեռքս ոչինչ չունիմ. Հունվար 15-ին բացի պաշտոնեութեյան ընթացիկ վճարներեն պետք է վճարվի անպատճառ և մեր չենքի 104 օսմանյան ոսկին: Ամերիկայեն դեռ ոչ մեկ լուր. այլևս սպասելու անկարող՝ վաղը պիտի հեռագրեմ Ամերիկա, որ հեռագրով փոխադրեն առաջին հազարը: Ասիկա է մեր դրամական վիճակը, որ մեզի չափազանց կը ճնշե: Հիմա անցնիմ ավելի մխիթարիչ կողմին. ատիկա մեր դպրոցն է, որ կը սահի կանոնավոր և արդյունավետ աշխատանքով, բոլոր ուսուցիչներու միահամուռ աշխատանքով: Դեկտեմբեր 30-ին դասերը ընդհատեցինք. այդ իրիկունը մեր աշակերտներուն համար միայն՝ ունեինք տոնածառ, գրական-երաժշտական հանդես և թեյ ու պտուղի սեղան. հրավիրված

էին Համազգայինի կեդրոնական ու տեղական մարմինները. չատ տաք և ուրախ անցավ: Իսկ 31-ի իրիկունը մեր դիչերօթիկներու հետ էինք ընթրիքին, եկան և Գասպարն ու Հռիփսիկը, բերին տղոց քանի մը խաղի նվերներ. խմեցինք Համազգայինի հիմնադիր ընկերներու կենացը, ճեմարանի կենացը և աշակերտուհյան կենացը. և թողինք տղաքը իրենց պարին ու երգին և իրենց Կաղանդի սեղանին հետ: Թեև ամեն բան ընել չենք կրնար, ինչ որ կ'ուզինք ու կը հասկընանք, քանի որ դրամական վիճակնիս մեր ձեռքերը կը կապե, բայց և այնպես կը ջանանք ընելու ինչ որ հնար է, որ ուրախ ու առատ ապրին մեր տղաքը և սրտով ու ոգևորուհյամբ ալ աշխատին:

Համազգայինի վարչուհյունը հառաջիկա կիրակի օրվան համար կազմակերպած է ճեմարանի վերին սրահին մեջ հանդիպում մը մինչև տասը տարեկան փոքրիկներու համար տոնածառին չուրջը: Իսկ Ծնունդի առավոտը տեղի է ունենալու հանդիպում մը մեր ճեմարանին մեջ մեր ընկերներու ու համակիրներու. հկողները նվեր մը տալով Համազգայինին կ'ազատվին տունե տուն այցելուհյուններ տալու պարտավորուհյենեն:

Գալով Համազգայինի անդամագրուհյան՝ ընդունվեցավ տեսակ մը կտրոնի սիսթեմ, որով կազատվինք ամեն տեսակ ընկալագիրներն և ստուգումը կ'ըլլա չատ դյուրին. նաև հարմարուհյուն ունի ոչ-անդամներուն ալ սպառել ամեն հարմար պարագայի: Անդամագրվելու նվազագույն չափը ընդունվեցավ երեք սիրիական ոսկի տարեկան. գործնականապես ամենքն ալ ատ են վճարելու. 100 անդամ մը կարծեմ անմիջապես կ'ունենանք:

Նախորդ նամակիդ մեջ հյուրիմացուհյուն մը կար. մենք ընտավ մտադրուհյուն չունինք ընդհանուր ժողովի որոշած սահմաններեն դուրս որևէ քայլ առնելու. ես գրած էի քեզի, թե բոլոր եկամուտը խնամակալ մարմինը որոշած է գրքերու հրատարակուհյանը հատկացնելու, որովհետև պայմաններուն մոտիկ ըլլալով՝ պիտեի, թե տարեկան եկամուտը հավանորեն ինչ է ըլլալու: Գիտեք, որ Հալեպը երկու որդեզիր կը պահե և անկե անդին հազիվ թե ավելի բան մը մեղի տա. Դամասկոս մեր ընկերներու նախաձեռնուհյամբ և տեղացի քանի մը ոչ-ընկերներու օժանդակուհյամբ հոն կը պահեն միջնակարգ վարժարան մը. անոնց գործը չխանգարելու համար Դամասկոսեն դրամ պահվելու չէ Համազգայինի համար: Լաթաքիան տարին 70-80 ոսկի ամենեն չատը,

իսկ մյուս մեկ-երկու կետերը չատ ավելի համեստ: Արդ միակ տեղը, որ գումար մը պիտի հայթայթե, Պեյրութն է. և աչքի առաջ ունենալով սիրիական դրամի խղճուկ արժեքը և մեր հասարակութեան խիստ համեստ տնտեսական վիճակը՝ չենք կարծեր, որ 100-150 եգիպտական ոսկիեն անդին անցնի մեր եկամուտը: Ուրիշ բան է, եթե հաջողենք մեր ընկերութիւնը օրինականացնելու[1], որու համար որ հիմա կ'աշխատվի, և անկե ետքը եթե ապահովվել կարողանանք նաև օտար հասարակութեան աջակցութիւնը որևէ կերպով մը, որու վրա Գասպարը հույսեր ունի:

Տառեր բերել տալը անհրաժեշտութիւն մըն է. մենք Փարիզի հետ կապեցինք, անիմաստ է. մինչև հիմա հազիվ տպեր են մեկ գիրք մը[2]. երկրորդ գիրքը ետ պահանջեցինք. Զավրևը վարիչ չէ. թե՛ ավելի սուղ կ'ուզին հաշվին և թե՛ չափազանց անհարմար հսկելն ու վարելը սրբագրութեան: Իսկ հոս մեր բոլորիս համոզումը այն է, որ հրատարակչական գործը նույնքան կարևոր է, ինչպես դպրոցը, իսկ պրոպականտի համար անհամեմատ ավելի ուժեղ զենք մը:

Բոլոր սրտովս կը չնորհավորեմ Նոր տարին լավագույն հույսերով թե՛ մեր հայրենիքի, թե՛ մեր Համազգայինի, թե՛ մեր ընկերներու համար: Կարոտի բարևներս քեզի ու քուկիններուդ. Լևոն Շանթ

Հ.Գ. Համագգայինի կանոնագրեն ղրկեցեք մեզի քանի մը տասնյակ:

223. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, ստացած եմ իր ժամանակին Կարմիր խաչի Գահիրեի ճյուղին ըրած քսան անգլիական ոսկիի նվերը և իսկույն ալ գրած եմ իրենց մեր խորին ուրախութիւնն ու չնորհակալութիւնը: Քեզի անմիջապես չպատասխանեցի, որովհետև Գասպարը գալու էր Եգիպտոս և գիտեի, որ տեսակցիք պիտի:

Գասպարը վերադարձավ չատ աղվոր տրամադրութեամբ և իհարկե մեզի ալ վարակեց: Հանձնեց մեզի ձեր ղրկած հիսուն եգիպտական ոսկին, որով վճարելու ենք պիշերօթիկներու բնակարանին երկրորդ կիսամյակը. պայմանը փետրվար 13-ին է: Ամերիկայեն հետագրով փոխադրեցին միայն 500 տոլլար, որով անմիջապես վճարեցինք

դպրոցական չենքին առաջին կիսամյակը. դռնե քոնդրակտավոր այս երկու մշձավանջները վերցան մեր վրայեն: Բայց է առայժմ պաչտոնեութ֊յան հառաջիկա վճարը. Գասպարը ըսավ, որ այս քանի մը օրը դրամ եք փոխադրելու և հիմա առով կը մխիթարվինք: Գասպարին պարտք ենք հարյուր ոսկի հնչուն, որով նոր դրամ խնդրել իրմեն չենք կրնար:

Երբ մեկ կողմեն մեր ճեմարանը հիմք կը բռնե, անուն ու հմայք կ'ըստանա և մենք իր աստիճանական զարգացումովը ուրախանալ կ'ուզինք ու ձեզի ուրախացնել, չատ կասեցնող, խանգարող ու նեղիչ դեր կը խաղա մեր այս անվերջ դրամական տագնապը:

Փետրվարի կեսին մեր մանկավարժական ժողովը կ'ընե իր գնահատանքը աշակերտութ֊յան առաջին կիսամյակի աշխատանքին և ուսման. ուրեմն փետրվարի վերջերը ես ալ կը հայտնեմ քեզի ընդհանուր արդյունքն ու պատկերը:

Փարիզեն Գերասիմը կը գրե, որ առևտրական տան մը հանձնված է մեր ճեմարանի հասցեով «Համազգայինի» առաջին հրատարակութ֊յան բոլոր օրինակները. մեր դպրոցի գործածութ֊յան համար պետք եղածները արդեն ստացած ենք պոստով: Ձեզի մեկ-երկու օրինակ դիտմամբ չեմ ղրկած՝ վախնալով, որ իսկույն կը հայտարարեք, մինչդեռ գրքերը դեռ չեն հասած: Կը հուսամ մեկ-երկու շաբաթեն հասնին: Իսկ հաջորդ գրքերը, ինչպես արդեն գրած եմ քեզի, վճռած ենք հոս տպել: Գրքերը պատրաստ են բոլորովին տպագրութ֊յան. հոս հարյուր հնչուն ոսկիի չափ կազմակերպեցինք թե չէ՝ բերել ենք տալու տառերը Պոլսեն:

Ձգիտեմ Գասպարը ձեզի բացատրե՞ց. կը վորձենք անդամական կտրոն-գրքույկներու եղանակ մը Համազգայինի անդամավճարներն ու նվերները գանձելու համար: Նոր հանեցինք հրապարակ, տեսնենք ինչ արդյունք է տալու. մեկ-երկու ամիսեն հետևանքի մասին կը տեղեկացնեմ քեզի:

Սրտագին բարևներս ընկերներուդ, քովիններուդ ու քեզի: Ջերմ համբույրով՝ Լևոն Շանթ

1931 փետրվար 1,
Պեյրութ

224. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, ներփակ կը ղրկեմ Համազգայինի վարչութեանդ երեք գրութիւն. 1/ Հայ ճեմարանի այս տարվան առաջին կիսամեակի ընդհանուր պատկերը՝ հիմնված մեր մանկավարժական ժողովներու եզրակացութիւններուն վրա, 2/ ճեմարանի վարչութեան եւ ու մուտքի հաշվեկշիռը 1930 հուլիս մեկեն մինչև 1931 փետրվար 20-ը և 3/ ճեմարանի ունենալիք ելքերու և մուտքերու նախահաշիվը փետրվարեն մինչև հառաջիկա հուլիս մեկը, այսինքն մինչև Համազգայինի ընդհանուր ժողովը:

Ձեր ուշադրութեան կը հանձնեմ հուլիս 1-ին ունենալիք մեր բացը 191 օսմանյան ոսկի, եթե բոլոր հանճնառութիւնները լիովին գործադրվին. բայց մենք հույս չունինք, որ Ամերիկան կարողանա վճարել մինչև հուլիս մնացած 1500 տոլլարը. գոնե 500 տոլլարը քաշքշե պիտի մինչև սեպտեմբեր-հոկտեմբեր՝ մեզի չատ նեղ կացութեան մատնելով:

Այլև աչքի առաջ պետք է ունենաք, որ թեև գալ տարվան պյուտճեին կը պատկանի, բայց ամառը անհրաժեշտորեն վճարելիք ունինք երեք ամսվա ռոճիկ, այսինքն 372 օսմանյան ոսկի. և 50-60 ոսկիի չափ ալ տարեմուտի նախապատրաստական ծախքեր՝ սեղաններու ու զրքերու համար:

Լիբանանի խնամակալ մարմինը հիմա ճիգեր կ'ընե և հույս ունինք, որ 191 ոսկիի բացը կերպ մը հաջողի գոցել Համազգայինի տեղական միջոցներով, իսկ ամառվան մասին ալ կարգադրութիւն կ'ընե անշուշտ հառաջիկա ընդհանուր ժողովը: Որով կացութիւնը դժվարացնողը Ամերիկան է առայժմ:

Նոր ստացանք վերջին նամակդ. կը գրես՝ Ամերիկայեն 1000 տոլլար ղրկած ըլլալնին կը հեռագրեն: Հավանորեն նամակով ղրկելու են նորեն 500 տոլլար, թեև ես բացատրած ու խնդրած եմ, որ գոնե այս անգամ 1000 ղրկեն: Բայց այդ դրամը ամենեն չուտը մարտի վերջերեն առաջ մեր ձեռքը չի հասնիր. «ղրկված է»-ն դուք կարդացեք «ղրկելու ենք»: Իսկ հոս մինչև մարտի 10-ը անհրաժեշտ պետք ունինք դրամի. Իփեկյանեն նոր դրամ խնդրել ես այլևս չեմ կրնար, մինչև որ մեր հին պարտքերը չվճարենք, մանավանդ գիտեմ, որ ընտանեկան պատճառ-

ներով բացեն մեծ ծախքեր է ըրած վերջերս: Եթե Ամերիկայի վրա հույս դրած նստինք՝ երկու շաբաթ չեղած մենք այստեղ խայտառակ դրութեան մեջ կը մնանք: Հոս մեր ընկերներեն քու ըրած պարագիդ վճարումը եթե կարելի է ուշացուր մինչև Ամերիկայի դրամի հասնիլը և այդ դրամը ղրկե՛ մեզի: Այլև գրած էիր, որ ամսավճարներեն ամեն ամիս երկու քաղաքներուն մեջ կը դոյանա 30-33 եգ. ոսկի. գոնե այդ գումարը կանոնավոր կերպով մեր ձեռքը գար անմիջական ծախքերը հոգալու համար:

Գրքերը վաղը կը հանվին մաքսեն. գիտես, որ մեր չրջապատին մեջ ամեն չնչին գործ օրեր կը պահանջի և մեկ ըսելով, մեկ կարպատրելով չի վերջանար: Գրքերուն հետ կը ղրկեմ նաև ուղած ծրագիրներդ և լրագրական հայտարարութիւնը:

Սիրելի՛ս, ամեն կերպ պետք է ջանալ անհատներու, հաստատութիւններու և միութիւններու օժանդակութեամբ պիչերօթիկները պահել Հայ ճեմարանին մեջ. ատիկա պետք է նկատել տեսակ մը «կոլաակցական» կամ «համակրական» պարտավորութիւն: Ասիկա է մեր գործի անկախացման և տևականորեն ամրացման ամենեն բնական ու չիտակ ճամբան. պետք է մտածել ու ջանալ այս ուղղութեամբ: Ատ ըլլալեն ետքն է, որ Համազգայինի անմիջական օժանդակութիւնը կը դառնա իրոք բեղմնավոր: Մի՛ մոռնաք, որ Հայ ճեմարանը այս տարի զուրկ է բոլորովին նվարչութենե, երաժշտութենե, ընթերցանութեան միջոցներե, ֆիզիկական ու քիմիական աշխատանքներե, խաղի հարմարութիւններե ու գործիքներե: Ասոնք բոլորն ալ կրթական մեծ, շատ մեծ պակասներ են. և այս բոլորի մասին հոգալ չի կրնար «Համազգայինը», եթե ամսե ամիս վճարելիք ուսուցչական ռոճիկներու հոգն ալ իր վրա պիտի ծանրանա:

Ճեմարանը իր կարևոր դերը ունի, հիմք ու համակրանք ունի իր ոտքերուն տակը և մեծ ապագա իր առջևը. պետք է ուժ տալ պիչերօթիկներուն:

Ջերմ ու սրտագին բարևներս մեր բոլոր ընկերներուն և քույրիներուդ. համբույրով՝ Լևոն Շանթ

1931 փետրվար 27,
Պեյրութ

225. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, երեկ ղրկեցի հասցեիդ քսան օրինակ «Հայրենի Աչխարհ»: Ներփակ կը ղրկեմ հայտարարութիւն մը «Հուսաբերի» մէջ պարբերաբար տպվելու համար:

Բայց կը կարծեմ համազգայինը պետք չէ սպասե ընթերցողներու ու գնորդներու իրենց կամքով գալուն. ատիկա իր կարգին: Պետք է որոշ համեմատական թիվով ղրկվին գրքերը մեր ամեն տեղի մասնաճիւղերուն, ուր անոնք տունէ տուն ձեռքե կամ հավաքատեղիներու դռանը կամ ուրիշ ուր որ հարմար դատեն, կարելիին չափ չուտ ծախեն ու սպառեն: Ամեն ընտանիքի մէջ 10-15 տարեկան տղա մը կամ աղջիկ մը կա սովորաբար, ինչ դպրոցի մէջ ալ կ'ուզե ըլլա, որուն համար պիտանի ընթերցում մըն է այդ գիրքը մեր ոգիով ու ճաշակով:

Շատ սպառելը չատ կարդացնել ընել է, մեր ընկերութեան պրոպականտը ընել է և հաջորդ գրքերու հրատարակութիւնը արագացնել ու դիւրացնել ընել է: Մենք հոս ալ նույն կերպով ենք վարվելու: «Հայրենի Աչխարհի» հաջորդ հատորները, որոնք բոլորովին պատրաստ են, ավելի կա հարմար են լայն չերտերու և ընտանեկան ընթերցման՝ ըլլալով ավելի հասուն տարիքի համար չարված ընտիր նյութեր մեր քաղաքական ու գրական կյանքեն:

Հայտնեցեք ինծի, ի՞նչ հասցեով և քանի օրինակ որո՛ւ ղրկեմ և փոխադրութեան ի՞նչ ձևով, փոստային կապոցով գրքի վրա 4 սյուրիական դահեկանի ավելորդ բեռ մըն է, որ կ'ավելնա: Գուցե ավելի հարմար ճամբա գիտնաք:

Գինը ես գրեր եմ 7 եգ. դահեկան՝ համապատասխան 7 ֆրանքի. բայց ճամբու և այլ ծախքերու հավելումով մը կարելի է և 8 նշանակել: Ձեր տեղի պայմաններուն հարմար վարվեցեք, բայց մեր ընկերութեան համար լավագույնն է միշտ ընտրել ավելի աժան գինը:

Շատ-չատ սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1931 մարտ 11,
Պեյրութ

226. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

«Համազգային» ընկերության կեդրոնական վարչության

Սիրելի՛ Համո, մարտ 24-ի նամակիդ մեջ հայտնած էիր ղրկած գրքերուս ստացումը, իսկ անկե առաջ փետրվար 27-ին ապահովագրած նամակով ղրկած գեկուցմանս, մինչև փետ. 28 հաշվեկշռի և մինչև հուլիս 1 նախահաշվի ստացման մասին ոչինչ հիշած չէիր: Կը հուսամ ստացված է:

Նույն նամակին մեջ նաև բացատրած էի մեր տնտեսական դրությունը և դրամ էի խնդրած: Ահա՛ անցած է ամիս մը, ո՛չ իսկ պատասխան ունիմ: Ամերիկայեն ստացանք 500 տոլլար, ինչպես կ'ենթադրեինք, որով վճարեցինք ուսուցիչներուս փետրվար ամսականը, պարտքերնիս նորեն մնաց մեզ վրա պարտք և ձեռքերնիս անդրամ:

Ներփակ կը ղրկեմ ձեզի Տիգրան Խոյյանի շատ հետաքրքիր նամակը[1]. իրեն իսկույն պատասխանեցի, որ ճեմարանի վարչությունը մեծ սիրով դեմ կու գա իրենց առաջարկին և վստահ է, որ «Համազգայինի» կեդրոնական մարմինն ալ նույնպես համակրանքով պետք է վերաբերվի: Հիմա հոս չորս կողմերնուս վրա հարմար հող կը փնտրենք, որ իրենց գներուն հետ միասին տեղեկացնենք Ամերիկա, որ հաստատ հողի վրա հաշիվ տեսնել կարողանան: Խոյյանի նամակը վերջը նորեն կը խնդրեմ, որ ինծի վերադարձնես: Եվ գործի հաջողության տեսակետեն կը կարծեմ, որ առայժմ վաղաժամ կ'ըլլա այդ մասին լրագրության մեջ որևէ բան գրելը:

Ջերմ ու սրտագին բարևներով կը սեղմեմ ձեռքդ. Լևոն Շանթ

1931 մարտ 27,
Պեյրութ

Հ.Գ. Նամակս կարդացի Նիկոլին. ըսավ որ՝ վողի մասին շատ թույլ եմ գրած. «չուտով կը դառնա ամսի 15-ը և ուրիշ տեղի դրամի հույս չկա»:

227. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, Ատլանտյանի վրա նավեն գրած նամակդ չեմ ստացած, չեմ ստացած նաև Խոյյանի սեպտեմբերին գրած նամակը. ասկե երեք շաբաթ առաջ ստացանք Խոյյանին երկրորդ նամակը, եղելությեան նոր ծանոթացանք և իհարկե շատ ուրախ ենք: Հիմա Հարմար հողեր կը փնտրենք իրենց գրած պայմաններով, որ գներու մասին ավելի որոշ գաղափար մը տալ կարողանանք իրենց և ծրագիրը մտնե իր գործնականացման շրջանը:

Նամակիդ մեջ քու թելադրած միջոցներուդ մասին մենք քեզի հետ խոսած ենք այդ բոլորը դեռ իմ Փարիզ եղած միջոցիս և արդեն ուղիղ տարի մըն է, որ գործադրված են: Անցած տարի ճեմարանի վավերացումեն և մեր ծրագիրը պատրաստելեն ու տպագրելեն անմիջապես ետքը ես կատարած եմ քու ըսած դիմումներդ, որ և չարունակված է ամառն ու աշունը. մեկ մասը քու, մյուս մասը Սասունիի, մաս մըն ալ Ամերիկայեն տված ցուցումներով մանրամասն նամակներ եմ գրած և մեր ծրագրին ու Հայտագրին հետ ղրկած եմ 16-են ավելի մեծ ու փոքր Հայրենակցական միություններու: Մինչև հիմա միայն Տարոն-Տուրուբերանն է, որ վերջերս հայտնեց մեզի իր մտադրությունը հառաջիկա տարվընե երեք գիշերօթիկ պահելու, մեկը Հոնաստանեն, մյուսը Ֆրանսայեն, երրորդն ալ Սիրիայեն: Միություններու մեծ մասեն ո՛չ մեկ պատասխան չենք ստացած, մեկ-երկու հատն ալ զանազան պատճառներով «դժբաղդաբար» չենն կրնար: Մենք ասկե ետքն ալ կը չարունակինք նույն ուղղությամբ և հարկ եղած պարագային կրկնելով մեր դիմումը. մենք ալ քեզի հետ այն համոզումին ենք, որ այս տեսակ գործերը գրելով, խոսելով, կրկնելով գլուխ կու գան և ժամանակ կը պահանջեն:

Ինչ կը վերաբերի «Համազգայինն»-ի պիտակին, նախ ես բոլոր դիմումները գրած եմ իմ ու Նիկոլի անունով՝ միշտ ավելցնելով, որ մեր գործի գլխավոր հենարաններն են «Համազգայինն» ու Ամերիկայի Հայ կարմիր խաչը: Իսկ թերթերուն մեջ գրվածները մեզմե չեն բղխիր թեև, բայց կ'ըմբռնենք, որ անխուսափելի են. եպիսկոպոսը ամենեն մեծ օժանդակությունը կ'ընե երեք տարիե ի վեր և բնականաբար գործը իրը կը նկատե ու ճիգեր կ'ընե: Կարմիր խաչը նմանապես ինչ որ կու տա՝ բնականաբար կ'օգտագործե և՛ իր վարկի, և՛ իր գործունեության մեկ

մասը նկատելով և չանալով առկե օգովիլ նոր դրամներ հավաքելու ժամանակ: Ասոնք բնական բաներ են: Եվ ինծի կը թվի, որ հետու ըլլալուդ պատճառովը քիչ մը կ'ըստորագնահատես «Համազգայինը». անշուշտ նոր կազմակերպություն է, դեռ արմատները խոր չեն և ուժը փոքր, շատ կարելի է որ Արևելյան սահմաններեն դուրս շատ տարածվիլ չկարողանա, ինչպես որ կ'ըսես: Բայց այդ բոլորի հակառակ՝ կազմակերպություն մըն է և զարգացման նպաստավոր տվյալներով. մեկ-երկու տարիեն, եթե լավ աշխատվի, կը դառնա նյութական ու բարոյական կարևոր ուժ մը հենած Դաշնակցության և հենակ Դաշնակցության, իբրև քաղաքական դաստիարակիչ: Սիրելի՛ս, մեր կուսակցության նախաձեռնությամբ եղած բոլոր գործերը կը հայթղեն այն չափով, ինչ չափով որ մեր վարիչ մարմիններն ու ընկերները տոգորվին այդ ձեռնարկի կարևորության զաղափարովը: «Համազգայինի» կարևոր կամ անկարևոր դառնալը կախված է իմ, քու և մեզպեսներու վերաբերմունեն. եթե մեր ընկերներն ու մարմինները համոզվին, ուզեն ու աշխատին՝ «Համազգայինը» կրնա խազար շատ բացառիկ դեր մը մեր ազգային ու քաղաքական ոգորումներուն մեջ:

Խոսքս մասնավորելով առայժմ մեր ճեմարանին վրա՝ այսքանը ըսեմ քեզի, որ գործը արդեն ելած է ոտքի, Հայ ճեմարանը արդեն լուրջ իրողություն մըն է և սուր զենք մը, եթե մեր ընկերները ցանկան կատարելագործել և օգտագործել: Եթե միայն իմ «անունիս» ու Նիկոլի վրա ուզենք թողնիլ գործը՝ հետու չենք երթար: Մեր անունն ալ իր դերը ունի, մեր ըրած ու ընելիք զիմումներն ալ իրենց օգուտը ունին. «Համազգայինն» ու Կարմիր խաչն ալ իրենց խոշոր բաժինը ունին, մեր կուսակցության գիտակից ու ակտիվ վերաբերումն ալ իր լուրջ կարևորությունն ունի և վերջապես մեր մտավոր ընկերներու անձնական եռանդն ու լծակից դառնալը իր մեծ ազդեցությունը ունի հաջողության վրա. գործը իր թափն ու կարևորությունը կ'ըստանա, երբ այս բոլոր լծակները միասին գործեն:

Ճեմարանը այսօր 63 աշակերտ ունի տղա ու աղջիկ, հառաջիկա տարի կը հասնինք 90-ի և 100-ի սահմանները, հիմա միայն 12 գիշերօթիկ ունինք, գալ տարի կ'ըսպասենք, որ գոնե կրկնապատկված կ'ըլլա այդ թիվը: Եվ արդեն իսկ իր շուրջը ստեղծված է համակրանքի, պատկառանքի ու հարգանքի մթնոլորտ մը, որ շատ կը նպաստե Դաշնակցական վարկին ու Հմայքին բարձրացմանը դեպի դուրս և Դաշ-

նակցության ինքնագիտակցությանն ու Հպարտության զարգացմանը դեպի ներս: Սիմոն չան, այս բոլորը կրնամ գրեր քեզի իբրև մոտիկ ընկերոջս, առանց ավելորդ Համեստության վերարկուներու: Եվ եթե սկսված թափովը չարունակել չկարողանանք, եթե Ամերիկայեն կամ Եգիպտոսեն ճիշդ ու սխալ հաշիվներով մեր միջոցները կտրեն, մեր թևերը կոտրտեն, գիտցած եղիր, որ մեծ հարված կը հասցնեն ոչ միայն կրթական կարևոր ձեռնարկի մը և չատ հետևները ձգտող ծրագրի մը, այլև ուժեղ ապտակ մը տված կ'ըլլան Եգիպտոսի ու Սիրիայի Դաշնակցական Հոգեբանության ու Հպարտության: Հայ ճեմարանի, կամ ինչպես մեր չուրջի ժողովուրդը կ'ըսե՝ «Դաշնակցության ճեմարանի» անսայթաք բարձրացումն ու տարվե տարի բարելավումը դարձած է արդեն տեսակ մը կուսակցական պարտավորություն, դրոշակի պես բան մը. և ամեն չանք պետք է թափվի, որ ավելորդ էջքեր, բաղխումներ ու չեղումներ չըլլան ճեմարանի դեպի վեր ընթացքին մեջ. և մասնավորապես կարևորը այս առաջին երկու-երեք տարիներն են, երբ վստահությունը պիտի ամրանա և ճեմարանի իր սեփական ուժերը պիտի կազմակերպվին:

Հիմա գամ, թե դուն անձնապես ինչ կրնաս ըներ և ինչ պիտի ընես մեզի համար: Ամենեն առաջ օգտվելով Ամերիկայի մեջ քու անձնական կապերեդ ու ազդեցութենեդ՝ ամեն կերպ պետք է աշխատիս, որ չըլլա թե այդ աստիճան վատ գործ մը կատարվի, որ ես մտածել ու երևակայել անգամ չեմ կրնար և որու Հնարավորության մասին դուն ինծի կը գրես: Դպրոցի բացմանը այս աստիճան օժանդակելեն, այսքան գիշերօթիկ ու երթևեկ որդեգրելե տարի մը ետքը Կարմիր խաչը Հանկարծ լքե մեզի ու ետ քաշվի՝ մեր գործը ենթարկելով կործանումի Հավասարող ուժեղ ցնցումի մը, ես ընդունել ու Հավկնալ չեմ կրնար. ատիկա կը դառնար դժվար երկունքով զավակ մը ծնիլ ու գլխուն զարնել ու սատկեցնել: Մեր արդի պայմաններուն մեջ, երբ դեռ չեն բացված ճեմարանի բոլոր դասարանները լրիվ, երբ դեռ Հաստատ կեցած չենք մեր սեփական ոտքերուն վրա, երբ մեր գիշերօթիկներուն թիվը այսքան փոքր է՝ Կարմիր խաչի ետ քաշվիլը առանց չափազանցության գործի գլխուն զարնել ըսել է: Դուն քու ձեռքեդ եկած ամեն միջոց գործ պիտի դնես, թե՛ անձնապես և թե՛, եթե Հարկ է, նաև մեր կեդրոնական մարմնի միջոցով, որ այդ աստիճանի վատ վարմունք մը չկատարվի: Ընդհակառակը, պետք է դուն ալ Հոտկե ուժ տաս մեզի, որ Կարմիր

խաչի օժանդակութիւնը նորեն 3000 բարձրացնեն գոնե մեկ-երկու տարուան համար: Մեկ-երկու տարուան համար Հայ կարմիր խաչի օժանդակութիւնը այդ բարձրութեան պահելը չափազանց կարևոր հենարան մըն է մեր գործի տևական հաջողութեան. այս առնչի մասին մենք հոսկե կը գրենք իհարկե վարչութեան և ընդհանուր ժողովին ու կը բացատրենք, բայց դուն ինքդ չատ աղեկ գիտես, որ անձնապես ծանոթ ու բարեկամ մարդու դրդումն ու խորհուրդը բոլորովին ուրիշ ազդեցութիւն ունի: Այս մե՛կ:

Երկրորդ՝ Նիկոլի ու իմ անունս կը խնդրեմ քեզմե, որ Կարս Սահակին և ընկեր Տերպետերյանը հետդ առնելով և երեքիդ համաձայնութեամբը մեկ-երկու հոգի ալ ձեզի միացնելով, ով որ հարմար կը դատեք, Փարիզի մեջ կազմեք Հայ ճեմարանին խնամակալ մարմին մը, պաշտոնական կամ անպաշտոն, և աշխատիք նաև Ցրանսային մեր ճեռնարկին օժանդակելու: Օժանդակելու ամենեն բնական ու պարզ ձևն է գտնել անհատներ, միութիւններ, խումբեր, որոշ դրամներ կամ քաղաքներ, որոնք կամենան հանձն առնել չքավոր տղաք պահել մեր ճեմարանին մեջ իբրև պիշերօթիկ: Ամեն նոր պիշերօթիկ նոր հավելված մըն է մեր գործի ամրացման, և երբ մեր պիշերօթիկներու թիվը 40-ը անցնի, մենք ստույգ կը մոտենանք ինքնապահովութեան սահմաններուն. մեր գործի անկախացումը, մեր գործի տևականացումը պիշերօթիկներու թիվը ավելցնելուն մեջն է:

Տերպետերյանը խոստացած էր ինծի օգնել ամեն կերպ, հենց որ գործը իրական հողի վրա դրվեր. ես մինչև հիմա իրեն չդիմեցի. ուզեցի, որ ճեմարանը դառնա 5-6 դասարանով իրականութիւն մը նախքան իր խոստումը իրեն հիշեցնելու. հիմա ժամանակն է: Ես ու Նիկոլը կասկած չունինք ո՛չ Կարոյի, ո՛չ Տերպետերյանի և ո՛չ ալ քու պատրաստակամութեան վրա. և վստահ ենք, որ կ'ընենք ձեր ձեռքեն եկած հնարավորը: Այլև խորապես համոզված եմ, որ քիչ մը սիստեմատիկ խորհելով ու աշխատելով դուք կրնաք մեծ օգնութիւն հասցնել մեր այս ճեռնարկի հաջողութեանը:

Այս վստահութեամբ ալ կը ղրկեմ քեզի, Տերպետերյանին ու Սահակին իմ ու Նիկոլի ջերմ ու սրտագին բարևները և կ'ընպասեմ ձեր սրտապնդող նամակին: Կարոտի համբույրով՝ Լևոն Շանթ

1931 ապրիլ 3,
Պեյրութ

Հ.Գ. կը խնդրեմ հարցնես Ատոնցին ասկե 2-3 ամիս առաջ իրեն նամակ [գրած] եմ, ստացա՞ծ է. և որևէ պատասխան չունի՞ ինծի գրելիք:

228. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

<Ապրիլի վերջ-մայիսի սկիզբ>

Սիրելի՛ Համո, ստացած ենք ապրիլ 4 և 19 թվակիր նամակներդ, 50-ական ոսկիի երկու չեքերուն հետ:

«Համազգայինի» տեղեկատու մը հրատարակելու դիտավորութեամբ տեղեկագիր, հաշիվ ու, նկարներ ուզած էր վարչութիւնդ մեզմե: Կիսամյա տեղեկագիրն ու հաշվետվութիւնը ձեր ձեռքն է արդեն, իսկ տարեկան տեղեկագիրը, հաշվեկշիռը և գալիքի նախահաշիվը հուլիսի սկիզբեն առաջ կազմել ու ղրկել անկարելի է. լուսանկարները սկսեր ենք քաշել տալու և հետզհետե կը ղրկենք: Կը կարծեմ ավելի աղեկ կ'ըլլար, որ «Համազգայինի» տեղեկատուն հրատարակվեր հառաջիկա մեր ընդհանուր ժողովեն ետքը, որպեսզի ավելի հարուստ բովանդակութիւն ունենար, ավելի լրիվ պատկեր տար և պարունակեր ժողովեն վավերացված վերջին հաշվեկշիռներն ու վճիռները. կը կարծեմ ավելի տպավորիչ կ'ըլլա, պայմանավ որ ժողովեն անմիջապես հետո տպագրվի, թե չէ, իրա՛վ որ, շատ կ'ուշանա: Եվ լավ կ'ըլլար, որ սովորութիւն դարձնենք ամեն տարի ընդհանուր ժողովեն անմիջապես ետքը տպագրութեան տանք «Համազգայինի» տարեկան տեղեկագիրները:

Ես պիտի խնդրեի կեդրոնական վարչութենեդ այն տեսակ կարգադրութեան մը մասին մտածեիք, որ անցած տարվան նման «երկու կեսը ամբողջ մը կ'ընե»-ի ձևով ընդհանուր ժողով չունենանք այս տարի, այլ իրական ու ամբողջական ընդհանուր ժողով մը, որը ինծի կը թվի միայն Եգիպտոսի մէջ կրնա տեղի ունենար. փուլթ չէ թե մեզմե մեկը կամ մյուսը ներկա ըլլալ չկարողանա. ատիկա շատ ավելի նվազ չարիք մըն է, քան ընդհանուր չվման պակասը:

Ամերիկայի Կարմիր խաչն ալ ուզած էր մեզմե լուսանկարներ և 50 օրինակ ճեմարանի ծրագիրը. մտաղիր են մասնավոր անհատներու

դիմում կատարին ճեմարանի մէջ տաներ պահել տալու համար: Դիշերօթիկներու թիվը չաւցնելը չափազանց կարևոր հարց է մեր ճեմարկի անկախացման, թեթևացման ու ամրացման տեսակետեն: Դիմումներ կատարելու ժամանակ աչքի առաջ ունեցեք, որ կարելի է՝ նախ՝ 2-3 հոգիով մեկ դիշերօթիկ որդեզիր պահել, այսինքն միացած ուժով՝ խմբակով. և երկրորդ՝ կարելի է հանձն առնել դիշերօթիկի մը միայն ուսման վճարը (10 օսմանյան ոսկի) կամ միայն հաւատուկ դիշերօթիկի հավելվածը (35 ոսկի). 35 ոսկի եղած պարագային չաւ ավելի դյուրին է, նույնիսկ մեր կողմեն, 10 ոսկի վճարող մը ճարելը:

Եվ ընդհանրապես ուրախութեամբ կը հայտնեմ ձեզի, որ 3-4 հայրենակցական միութիւններու կողմե կա՛մ հանձնաժողով, կա՛մ մոտավոր հանձնաժողովի խոստում ունինք արդեն 8-10 հոգի դիշերօթիկի համար: Վրան ավելցնելով կարմիր խաչի ճիզը (որը չանալու ենք 10-ի բարձրացնել տանք), այլև համազգայինի երեք հոգին, 7-8 հոգի ալ հաշվելով ինքնավճար, որոնց մասին խոսք ու հավանականութիւն կա արդեն, մեր հաւաջիկա տարվան դիշերօթիկներուն թիվը կ'ըլլա կրկնապատկված, այսինքն 25 հոգի: Այս թվի վրա ալ մենք բանելու ենք մեր գալ տարվան բյուտճեն ու պատրաստութիւնները (դիշերօթիկի բնակարան և կահեր): Բայց վաւահ ենք, որ քիչ մը ավելի ճիդով կրնանք երեսունը անցնիլ. և ինչքան երեսունը անցնինք, այնքան ավելի հանգիստ չունչ կը քաշենք մենք ալ, դուք ալ: Ճեմարանի անունը թե՛ մոտը և թե՛ հետեն հետզհետե հիմք բռնելու վրա է և սկսած է վաւահութիւն ու հարգանք ներշնչել. մեր պարտքն է քալել հաստատ ու կոնոնավոր, և ամեն բանի մեջ: Ասիկա է հաջողելու հիմնական պայմանը:

Մենք մեզի սեղմած ենք ու կ'ընենք մեր ձեռքեն եկածը, հաւաջիկա տարվան համար ալ պատրաստած ենք նախահաշիվ մը, որուն ընդհանուր դումարը չանցնի մեր արդի գոյութիւն ունեցող բյուտճեի գումարեն, թեև ամբողջ նոր դասարան մը՝ Դ. դասարանը, պետք է ավելնա գալ տարի մեր հիմնական ունեցածին, դուցե նույնիսկ դասարան մըն ալ վարեն, իբրև Բ. պատրաստական. վերջինի մասին կը մտածենք, բայց դեռ վերջնական որոշում չունինք: Կա և մանկապարտեզի հարց մը, որ մեր շրջապատեն մեզի կը պարտադրեն. կ'ընենք, եթե մեր ունեցած բյուտճեին հավելում չբերելու ճամբան գտնինք:

Սրտագին բարևներ բոլորիդ. *Լևոն Շանթ*

229. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգայինի կեդրոնական վարչության

Սիրելի՛ Համո, ամենեն առաջ ուրախությամբ հայտնեմ քեզի, որ Համազգային ընկերությունը Լիբանանի մեջ ճանչցված ու վավերացված ընկերություն մըն է այլևս Ներքին գործերու նախարարին մայիս 2 թվակիր հատուկ դեկրետով: Բնականաբար մեր դիմումին մեջ չէ ըսված, որ մենք ճյուղ ենք օտարերկրյա ավելի ընդարձակ ընկերության մը, տեղական օրենքներուն հանդեպ մենք անկախ ընկերություն մըն ենք: Մեր անունը նույն մեր ընդհանուր անունն է, մեր ներկայացուցած կանոնագիրը մեր ընդհանուր կանոնագրի ամփոփումն է. ընկերության մշտական խնամակալ մարմինը կազմված է ինը հոգիե. անցած տարի մեր ընդհանուր ժողովին կողմե ընտրված խնամակալ մարմնի յոթը անդամները, Նիկոլը և ես: Պաշտոնաթղթին վրա ընկերության նպատակը նշանակված է շատ լայն ու ազատ բացատրությամբ մը՝ «fondation des e'coles et propagation de l'instruction»[1]: Կրնաս ըմբռնել, թե ինչպես գոհ ենք ամենքս այս հաջողութենեն, որը մեր չարժումներուն ազատություն կու տա ու դյուրություն: Հիմա կը կարծեմ, որ մեր հառաջիկա ընդհանուր ժողովին մեջ լավ կ'ըլլա պտնինք եղանակ մը, որով մեր ճյուղերու ու կեդրոնիդ կապը օրինական ձևով մըն ալ ամրապնդվի, որ ապագա որևէ անտեղության առջև դուռ բաց չմնա:

Այսօր նամակ գրեցինք Ամերիկա կարմիր խաչի ժա ընդհանուր ժողովին, ուր չեչտած ենք գիչերօթիկներու թվին չատցնելու անհրաժեշտությունը և առաջարկած ենք, որ Հայ կարմիր խաչը կա՛մ զանազան դիմումներով անհատներու և խմբակցություններու, կա՛մ իր անմիջական զանձեն ճեմարանի մեջ իր պահած գիչերօթիկ որդեգիրներու թիվը հասցնե գոնե 15 հոգիի՝ 11 հոգիի չափ ալ երթևեկ պահելով. ասիկա ըսել է, որ կը խնդրինք ընդհանուր ժողովեն քվեարկությունը 3500 տոլլարի հանձնառության մը հառաջիկա տարվան համար: Հայտնած ենք, որ աշակերտներու թվին հետզհետե ավելացումովը, մեր բոլոր դասարաններու բացումովը և գիչերօթիկներու չատնալովը կամաց-կամաց պիտի նվազի թե՛ Կարմիր խաչի և թե՛ Համազգայինի հանձն առած թիվը, բայց դեռ տարի մը-երկու անհրաժեշտ է լրջորեն

օժանդակել, որ Հայ ճեմարանը ոտքի կանգնի ու մոտենա ինքնաբաւ վիճակի: Լաւ կ'ըլլա, որ Համազգայինի կեդրոնական վարչութիւնդ ալ իր կողմեն դիմում կատարե ուր որ ամենեն ավելի Հարմար կը դատե՝ Հայ կարմիր խաչի ժա պատգամավորական ժողովին մեջ ուժ տալու Համար մեր առաջարկին:

Երկու-երեք օրեն կը ղրկեմ 10-15 կտոր լուսանկարներ, որոնք մեր Հաստատութեյան ներսն ու դուրսը կը պատկերեն. ինչպես դուք, այնպես ալ Ամերիկայեն պահանջած էին քլիշե պատրաստելու Համար:

Այսօր ամսու 15-ն է. ձեռքս 250 սիրիական թուղթ ունիմ ընդամենը, որով վճարելու եմ օտար ուսուցիչներու և մեկ-երկու մեր ուսուցիչներու ապրիլի ամսականները. մնացածի Համար դրամ չկա. օր օրի դրամ կ'ըսպասեմ և՛ քեզմե, և՛ Ամերիկայեն: Պետք ունինք ամենքս. իսկ Հոս, ինչպես գրած եմ քեզի, նոր դրամ փոխ առնելու այլևս Հնար չունիմ, որով և կը խնդրեմ կեդրոնական վարչութենեդ որևէ կերպով դրամ Հանձնեք մեզի:

Ջերմ և սրտագին բարևներս մեր բոլոր ընկերներուն. Համբույրներով՝ Լևոն Շանթ

1931 մայիս 15,

Պեյրութ

230. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Հավելված

Սիրելի՛ Համո, նամակս գրված պատրաստ էր, որ ստացա քու ապրիլ 12 թվակիրդ 30 եգիպտական ոսկիի չեքին Հետ. չեքդ ճիշդ ժամանակին Հասավ, ինչպես կը տեսնես նամակիս վերջին տողերեն. և խորին չնորհակալութիւն կը Հայտնեմ քեզի քու Հոգածութեյանդ Համար: Միայն չափազանց մտահոգիչ է, ինչ որ մնացած դումարի մասին կը գրես, մինչև Հուլիս մեկ եգիպտոսեն ունինք ստանալիք դեռ 120 եգիպտական ոսկի, և այդ դումարն է Հաստջիկա ամսական Համար մեր միակ Հենարանը: Ամերիկայեն կը Հուսանք մինչև ամիս մը 500 տոլար ղրկեն, բայց այդ դումարով պետք է վճարվի անմիջապես մեր դպրոցի չենքին երկրորդ կիսամյակը: Իրավ է, որ այդ դումարը զալ տարվա պյուտճեի Հաշվին է, բայց ինչ կարևորութիւն ունի մեզի Համար, երբ

Հարկադրված ենք լրիվ ու անմիջապես վճարելու: Աշակերտներու վճարումներն ալ գրեթե լրացած է արդեն և ուրիշ աղբյուր չունինք, ո՛չ ալ պարտք վերցնելու հնարավորություն:

Իսկ մեր առջևը ոչ միայն Հունիս 15-ին մեր պաշտոնեության մայիս ամիսը ունինք վճարելիք, այլև Հուլիս 15-ի փոխարեն Հուլիս 1-ին պետք է վճարվի մեր ուսուցիչներեն չատերուն, քանի որ պիտի մեկնին արձակուրդի: Այս ամենուն պատասխան տալ պետք է. և մենք կրնանք պատասխան տալ միայն կեդրոնական վարչությանդ օգնությամբը: Անշուշտ շատ շողոքորթիչ է մեր ընկերներուն այն համոզումը, թե «գործերը իրենց բնական ճամբուն վրա են ու կ'երթան», բայց այդ բնական ճամբան դրամի ժամանակին հասնիլն է: Եթե ամիս մը իր ժամանակին մեր վճարումները կատարել չկարողանանք՝ այդ բնական ճամբան կը դառնա ծանր տակնուվրայություն մը, որ կը սարսե ո՛չ միայն մեր ուսուցչական մարմնի անդամներուն օրը օրին սպրոտտը, այլև ծանրապես կը հարվածե մեր ճեմարանի վարկին ու անվան շուրջ հետզհետե ստեղծվող վստահությունը, իսկ ատիկա մեծ կարևորություն ունի Հառաջիկա տարեշրջանին մեր ստանալիք դիրքին համար:

Կը խնդրեմ քեզմե ու բոլոր մեր ընկերներեն խորհիք ու կարգադրեք հարկ եղածը, որ Հունիս 15-ին և Հուլիս 1-ին, այսինքն ուսուցչի մը համար սմենեն ավելի դրամի պետք ունեցած վայրկյանին, մենք հոս դատարկ ձեռքով չմնանք մեր պաշտոնեության Հանդեպ:

Լավագույն Հույսերով կը սեղմեմ ձեռքդ. Լևոն Շանթ

1931 մայիս 15,

Պեյրութ

231. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերության
կեդրոնական վարչության
Հարգո նախագահին

Սիրելի՛ Համո, կը խնդրեմ, որ անմիջապես Համազգայինի արտակարգ նիստ գումարիս խորհելու համար մեր այս անկարելի վիճակի

մասին: Շուտով հունիսի վերջն է, իսկ մեր բոլոր ուսուցիչները ստացած են միայն իրենց ապրիլ ամսականը, իսկ ես ու Նիկոլը ավելի ևս վատ: Շաբաթե մը պլրոցական պարապմունքները կ'ավարտին, ուսուցիչները ցրվին պիտի և ամառվան հաչիվին դրամ կ'ակնկալին, ոչինչ չունիմ իրենց վճարելու: Երկու շաբաթեն պետք է վճարվի մեր դպրոցի չենքին կիսամյա վճարը, ըստ քոնդրաքտի, դրամ չունիմ: Իր ժամանակին կրկնակի ու եռակի նամակներով գրած եմ Ամերիկա, բացատրած ու դրամ խնդրած, իրենք ալ խոստացած են «շուտով այս տարեշրջանի հաչիվը փակեն», բայց ո՛չ մեկ դրամ, երկու շաբաթ առաջ հարկադրվեցանք ու նորեն հեռագրեցինք, որ պրկին մնացած հազար ոսկլորը. ո՛չ դրամ, ո՛չ պատասխան: Այս բոլորը նախատեսելով՝ նախորդ ընդարձակ նամակով գրած եմ և կեդրոնական վարչությանդ և խնդրած եմ, որ օգնության հասնիք. ձեզմե ալ ո՛չ դրամ, ո՛չ պատասխան:

Արդ՝ կը խնդրեմ մեր ընկերներեն, որ ինչ միջոցով ըլլա 150 ոսկի մը հասցնեք մեզի, դիցուք և մեկ մասը իբրև փոխառություն, որ մեր առաջին անհրժեշտ պետքերը գոնե բավարարել կարողանանք. և որ անկե ետքը մտածել կարողանանք մեր ընելիքի մասին:

Եվ այդ մտածողը պիտի ըլլա իհարկե մեր ընդհանուր ժողովը: Կը խնդրեմ, որ ձեր այդ արտակարգ նիստին մեջ որոշեք մեր ընդհանուր ժողովի տեղն ու ժամանակը: Աչքի առաջ ունեցեք, որ Գասպարը իր գործերի բերումով հնար չունի այդ միջոցներուն Եգիպտոս գալու. ես ալ երևի հիմա գալ չեմ կարողանալու, հույս չունիմ, որ դուք ալ գոնե մեծամասնությամբ հոս գալ կարողանաք: Ինչքան որ գլխուս մեջ կը դարձնեմ՝ կը վախնամ, որ նորեն պիտի չհաջողինք ամբողջական կանոնավոր ժողով մը գլուխ բերել: Վերջապես եղած իրականությունը աչքի առաջ ունենալով՝ որոշեցե՛ք հնարավորը. ժողովը լավ է տեղի ունենա հուլիսի սկիզբը: Իմ կամ Նիկոլի Եգիպտոս գալը ես չատ կարևոր կը նկատեմ ավելի մանրամասն ու անմիջական հաղորդակցություն ստեղծելու համար, մեր փոխադարձ կապը ավելի կենդանացնելու համար, բայց ատիկա հնարավոր է նաև աշնան, գուցե մինչև անգամ ավելի գերադասելի է աշնան:

Համենայն դեպս կը խնդրեմ մեր ընկերներեն չա՛տ շուտով հավաքվիլ, շուտով օգնության հասնիլ մեզի և շուտով ալ որոշել մեր ընդհանուր ժողովի տեղը, ժամանակը և ձևը:

Ես ալ, Նիկոլն ալ ճնշված ենք սաստիկ ու անչափ հոգնած, ավելի բարոյապես, քան մարմնով: Շատ ու սրտագին բարևներով՝

Լևոն Շանթ

1931 Հունիս 20,
Պեյրութ

232. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, երեկ ավարտեցինք մեր դպրոցական առաջին կիսամյակը. այս առտու մեր աղջիկներու ձեռագործներուն ցուցադրումն էր: Այդ ձեռագործներեն կը խորհինք ղրկենք Եգիպտոս ձեզի ծախելու համար. չնորհքով աշխատանք է, չեք ամչնար. և շատ բան չէ, որովհետև մեծ մասը կա՛մ իրենց են պահելու աղջիկները, կա՛մ պահելու ենք հոս մեր դպրոցի գործածութեյան:

Հառաջիկա տարի Հայ ճեմարանը ունենալու է չորս կարգ. պատրաստական մը և երեք առաջին դասարանները: Կը հաշվենք մոտավորապես 50 աշակերտ, քսան հոգի մը գիշերօթիկ կա՛մ ինքնավճար, կա՛մ ուրիշ հաստատութեյուններու կողմե վճարված, իբրև սան. քսան հոգի մը ինքնավճար երթևեկ. մնացածն ալ ուրիշներու վճարով երթևեկ. ճեմարանը ձրի աշակերտներ չունի:

Այս թվերը ենթադրական են և շատ խախուտ, և ինքներս ալ չգիտենք, թե աչնան ինչ իրական պատկեր է ստացվելու: Գիշերօթիկ ցանկացողներ շատ կան, բայց 45 ոսկին կը վախցնե ու կը փախցնե շատերուն: Երթևեկ շատ ավելի. շատերը կը ծրագրեն ու կը հայտնեն, թե գալու են. եթե ամենու ըսածին հավատալու ըլլանք, ո՛չ թե քսան, քառասունն ալ կ'անցնի անոնց թիվը: Բայց մենք քիչ մը զգուշ ու սառն կը նայինք և մեր հաշիվները համեստ բռնել կ'ուզենք: Քսան գիշերօթիկ կը հաշվինք օժանդակ հաստատութեյուններու պահելիքն ալ մեջը դնելով:

Կարմիր խաչը վերջին նամակին մեջ հայտնած էր, որ կը մտածեն իրենց օժանդակութեյունը որոշ թվով աշակերտ պահելու ձևին վերածեն. բան մը, որ շատ առտղջ է, հարմար մեզի ու պատվավոր և հենց մեր առաջարկն ալ այդ ձևով էր կատարված անցած տարի: Բայց այդ ձևի փոփոխութեյունը այս տարի մեզի շատ պիտի նեղե, քանի որ ծախ-

քերնիս չատ է և աշակերտներու թիվը փոքր, իսկ աշակերտական վճարներն ալ մենք հաշված ենք ծայրը ծայրին: Մենք մեր կողմեն խնդրած ենք Կարմիր խաչի Ժ. ընդհանուր ժողովեն, որ կայանալու է հուլիս 7-ին, 4.000 տոլլար. կը հուսանք, որ վավերացնեն այդ դումարը, ձևը կը հարմարցնինք կերպ մը պյուտճեի հավասարակշռությունը պահել ճգնելով:

Կարմիր խաչեն ստացած ենք ընդամենը 2.500 տոլլար, 500 տոլլար դեռ առնելիք ունինք և չատ կը վախնանք, որ ուշացնեն նորեն մինչև սեպտեմբեր: Նոր վարչություն է ընտրվելու, նոր ընդհանուր կանոնագիր է մշակվելու, իսկ ժողովեն եառքն ալ ամեն մարդ ամբաստնոց է վազելու, իսկ մեղի ամառը դրամ է պետք: Պետք է չինվին աղջիկներու ու տղոց պետքարաններ, ճարտարապետի ներկայացուցած նախահաշվով նստելու է 60 ոսկի չափ. պետք է երեսուն աշակերտական նստարաններ, գրատախտակներ, ուսուցչական սեղաններ, պահարաններ, որոնց գումարը 70 ոսկիեն անցնելու է. պետք է ամառվընե պատվիրվին դասագրքերը, որոնք փրանսերեն են ինչպես գիտեք և վերջապես մեր ամառվան ապրուստը: Արդ՝ այս բոլորը կը ծածկվի, եթե Ամերիկան ու Եգիպտոսը իրենց «պարտքերը» վճարեն մինչև օգոստոս. իսկ դուն քու վերջին նամակիդ ձեր հաշիվը գոցված կը նկատես մինչև հոկտեմբեր՝ Նիկոլի ընտանիքին 30 ոսկի փոխադրելեդ եառքը: Իսկ մեր պյուտճեն դեռ 60 ոսկի ալ կ'ըսպասե ձեզմե նախորդ ընդհանուր ժողովի մեր դպրոցին հատկացուցած 480 ոսկին լրացնելու համար. գրքերու հրատարակության հատկացուցած հարյուր ոսկին առանձին հաշիվ է: Անշուշտ հառաջիկա ընդհանուր ժողովը կարգադրություն մը կ'ընե:

Ընդհանուր ժողովի օրակարգին մեջ մտնելու են կարծեմ հետևյալ յոթը կետերը. 1/ Համազգայինի կազմակերպությունը ամրացնելու և տարածելու միջոցները, 2/ Լիբանանի ու Սիրիայի համար խնամակալ մարմնի մը ստեղծումը և պետականապես օրինականացնելու հնարը, 3/ Խուբս գյուղի անունով Իտաեր կեդրոնական գյուղին մեջ Համազգայինի հիմնելիք վարժարանին կազմն ու պյուտճեն և հսկողության եղանակը, 4/ Համազգայինի հրատարակչական գործունեությունը հառաջիկա տարեշրջանին և սեփական տուներ գտնելու հարցը առանց ընկերության պյուտճեն ծանրաբեռնելու, 5/ Հայ ճեմարանի անցած տարվան հաշվեկշռի քննություն ու վավերացումը,

6/ Հայ ճեմարանի ծրագրին վավերացումը և վերջապես 7/ Հառաջիկա տարվա մեր վարժարանի նախահաշվին վավերացումը: Եվ այս բոլորեն առաջ իհարկե վարչության ընդհանուր զեկուցումն ու հաշվետվությունը: Յանկալի էր նաև մեր 15 թվի լրացմանը անցնիլ ընկերությունը ավելի ևս ուժեղցնելու համար, բայց այդ մասին մեր ընկերներու մեջ նախապատրաստական կարծիքներու փոխանակություն դեռ տեղի ունեցած չէ և պատրաստ չենք. չգիտեմ դուք ինչ կը խորհիք այդ մասին:

Ուրեմն հուլիս 10-ի համար մենք կը պատրաստվինք ընդհանուր ժողովի. բայց 5 հոգիով ընդհանուր ժողով չըլլար. չանացե՛ք, որ գոնե յոթը ըլլանք, ինչպես որ վերջին նամակիդ մեջ հույս ես տված:

Հետևյալ անձերեն նվերներ ենք ստացած Հայ ճեմարանին համար. մենք միշտ ըսած ենք, որ այդ գումարները կ'ընդունինք կեղրոնական վարչության փոխանցելու համար: Նախ՝ այդ նվերներուն ընդհանուր գումարը՝ 29,5 սիրիական ոսկի, մտցուցե՛ք ձեր հաշիվներուն մեջ, իբրև Համազգայինի կեղրոնեն մեզի վճարված. այլև ամեն մեկու անունով ղրկեցե՛ք պաշտոնական ստացագիրները մեզի, որ հանձնենք տիրոջը, իհարկե բացի Պալըքճյանեն, որուն հոտ կը հանձնեք ինքներդ: Նվերներն են՝

1/ Գրիգոր Պողոսյանեն	550	սիրիական	դահեկանի
2/ Մկրտիչ Մսրլյանեն	300	-	-
3/ Բարսեղ Պայրքճյանեն	1.000	-	-
4/ Սուքիասյան եղբայրներեն	1.100	-	-

Գումար՝ 29.50 սիրիական ոսկի:

Գումար մըն ալ ունինք վճարելի նորեն մեր Հաշվին Վահանին, ուրկե դպրոցի համար խնդրած և անմիջապես ստացած եմ քանի մը տասնյակ եգիպտական պատմական արժեք ունեցող բացիկներ:

Ներփակ պիտի գտնես Հայ ճեմարանի անցած տարվան հաշվեկշռին օրինակը, այլև հառաջիկա տարվան մեր ճեմարանին նախահաշիվը:

Ընկերական ջերմ ու սրտագին բարևներս բոլոր ընկերներուս, քեզի ու քուվիններուդ. Լևոն Շանթ

1931 Հունիս 29
Պեյրութ

233. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1931 Հուլիս 13, Պեյրութ

Սիրելի՛ Համո, Հունիս 28-ին ճեմարանի երկրորդ տարեշրջանը փակեցինք Հանդեսով մը ճեմարանի բակին մեջ, որուն ներկա եղան նաև Ռուբինան ու ընկերը Պալըքճյանը՝ ջերմ ոգևորութիւն առաջացնելով: Հանդեսին հատուկ հրավիրատոմսերով հրավիրված էին Համազգայինի տեղիս բոլոր անդամները, այլև աշակերտներուն ծնողները կամ ծնողը փոխարինող անձերը: Իփեկյանը խոսեցավ Համազգայինի այս տարվան գործունեութեան մասին, ես ալ կարդացի Հայ ճեմարանի երկրորդ տարեշրջանի տեղեկագիրը, այն ինչ որ ներկայացնելու էի կեդրոնական վարչութեանդ՝ ընականաբար տեղի ու պարագայի պահանջած քանի մը աննշան փոփոխութիւններով:

Այս տասը օրն ալ Նիկոլն ու ես կը քրտնինք մեր հաշիվները վերջնապես կարգի բերելու. և ահա՛ ներփակ կը ղրկեմ քեզի գալոցին տեղեկագիրը տարեկան, տարեկան հաշվեկշիռը և հատաջիկա տարվան նախահաշիվը:

Քանի որ մեր արդի պայմաններուն մեջ իրական ընդհանուր ժողով մը գումարել սկսած չկարողանանք հիմա, կը մտածեմ միջին ձև մը ընտրելը ամենեն խելացին է: Այսինքն քանի մը օրեն ընկերը Պալըքճյանը գալու է Պեյրութ Եգիպտոս վերադառնալու համար: Հոս չորսով խորհրդակցութիւն մը կ'ունենանք գլխավորապես մեր անմիջական կարիքներուն չուրջը և մեր նախահաշիվը:

Երբ Պալըքճյանը հասնի Գահիրե, դուն ալ հոս մեր ընկերներուն հետ խորհրդակցութիւն մը կազմե պաշտոնական կամ անպաշտոն և տեսակ մը վավերացման ենթարկեն մեր հաշիվն ու նախահաշիվը, ուրիշ խնդիրներու պաշտոնապես չենք մտնենար առայժմ: Իսկ աշնան՝ հոկտեմբեր ամսին, եթե հարկը ստիպե՝ ավելի ուշ, այնպես պետք է կարգադրել, որ քանի մը օրով Գասպարն ու Նիկոլը գան Գահիրե և հոս կ'ունենանք լրիվ ու բազմակողմանի ընդհանուր ժողով մը, որուն օրակարգը առաջվընեն հայտնած կ'ըլլաս մեզի: Նիկոլը 8-10 օր մը կրնաք պահեր և օգտագործել Եգիպտոսի երեք մեր կեդրոններուն մեջ խոսեցնել տալով:

Մինչև հոկտեմբեր կրնաս տպել տալ նաև Համազգայինի առաջին տեղեկատուն պատկերազարդ: Ղրկած նկարները աշխատեցեք, որ գեղեցիկ ըլլան քլիշեի վրա և անպատճառ ավելի փոքր դիրքով՝ նկարներու կեսին չափը: Քլիշեները գործածելեդ ետքը կը ղրկես մեզի, որ մենք ալ հոս օգտագործենք, հայտագիր ու ալպոմի ձևով: Տեղեկագիրը եթե տպել որոշեք, տպվելիք հոդվածներուն ու նյութերուն ցանկը նախապես մեզի տեղեկացո՛ւր, գուցե վրան մենք ալ բան մը ավելցնենք:

Իսկ հիմա նստած ենք հոս ու քեզմե օրե օր դրամ կ'ըսպասինք, որ վճարենք մեր ուսուցիչներու գոնե մինչև հուլիս ստանալիքը և ինքներս ալ մեր տեղեն չարժվիլ կարողանանք: Գրած ենք իհարկե կրկին ու կրկին Ամերիկա, հոնկե ստանալիքիս 108 ոսկին դպրոցի տան վճարն է. մնացածով ալ կերպ մը գլուխ պիտի պահենք մինչև հոկտեմբեր, պայմանով որ ղրկեն: Այս երկու ամսվա ընթացքին նաև պետք է վարձենք գիշերօթիկներու համար ավելի ընդարձակ չենք մը, որուն վարձին կեսը անմիջապես պետք է վճարվի, թե ինչ դրամով՝ ինքս ալ չգիտեմ, նմանապես պետք է պատվիրել քսան նոր նստարան և այլն, և այլն: Ջերմ ու սրտագին կը սեղմեմ ձեռքդ. *Լևոն Շանթ*

234. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, չեքը հանձնած էի Գասպարին, որ գանձվի. բանքան սկիզբը վճարելու տրամադիր կերևար մեկ-երկու օրեն, հիմա մերժած է: Այնպես որ կ'ըշտապեմ քեզի վերադարձնելու, որ դուք հոտ գերմանական բանքային ողջացնելու աշխատիք: Մուկը ծակը չէր մտներ, ցախավելն ալ պոչեն կապեցին: Ալ չգիտեմ ինչ գրեմ: Ջերմ ու սրտագին բարևներս քեզի. *Լևոն Շանթ*

1931 հուլիս 23,
Պեյրութ

235. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, մեր վիճակը հետևյալն է. 1/ ուսուցչուհյան հունիս ամիսը մասամբ հաջողած եմ վճարել Համազգայինի գանձեն վերցնելով այն գումարը, որով պետք է վճարվեին Պոլսեն եկած տառերը և

Հանվեին մաքսեն. տառերը երկու ամիս մնացին գերի, երեկ տեղեկացա, որ մեր ընկերները նախորդ օրը վերջապես տառերը ազատեր են մաքսեն: Ճիշդը չգիտեմ ինչ դրամով. 2/ մեր ուսուցչական մարմինը երեք ամսական ստանալիք ունի և դրամ չկա, որ վճարեմ. 3/ դպրոցի չենքին կիսամյակը վճարեց նորեն Գասպարը, որուն հիմա 200 եգիպտականն ավելի պարտք ենք և Գասպարը կ'ըսե ինքն ալ դրամի պետք ունի. 4/ ամենեն ուշը երեք չաբաթեն պետք է պիշերօթիկներու բնակարանը վճարվի կիսամյակը 60-70 ոսկի. 5/ դպրոցական պրասեղաններու, դասագրքերու, գործիքներու և մահճակալներու համար արդեն 60– 70 ոսկիի մը անմիջական պահանջը կա:

Ամերիկայի Կարմիր խաչը մեզի հետ շատ անպիտան խաղ է սկսած. ամբողջ տարին մեզի չարչրկելեն ետքը նոր ղրկեր են 500 տոլար՝ ըսելով, որ այս նոր տարեշրջանի հաշվին է ասիկա, անցած տարվան 1000 տոլարը որոշեր են իբրև հետնյալ պարտք ջնջել ու չի վճարել: Իրենց նամակներն ու ընդհանուր ժողովին մեջ եղած հայտարարութիւնները լեցուն են հակասութիւններով և մեջը խարդախութիւն կա. օրինակ՝ գրեր են, որ մեզի վճարած են լրիվ 2000-ը, մինչդեռ վճարած են միայն 1000-ը: Աչխարհքի առաջ արդեն իբրև վճարված հայտարարված այդ 1000-ն է, որ հիմա որոշեր են մեզի չի վճարեն: Ես իհարկե աղմուկ բարձրացուցի, ղրկած 500-ը անցուցի հին պարտքի հաշվին և պահանջեցի, որ իսկույն լրացնեն մնացած 500-ը, այլև 500 տոլար ալ ղրկեն նոր տարեշրջանի հաշվին, որովհետև Հայ ճեմարանի վճարումները կանխիկ են: Հակառակ պարագային Հայ կարմիր խաչի սաներուն հետն ալ այնպես կը վարվինք, ինչպես որ կը վարվինք այն աշակերտներուն հետ, որոնց ծնողներն ու խնամակալները իրենց հանձնառութիւնը չեն կատարեր. և մեր ասած այդ խիստ քայլը բնականաբար ստիպված կ'ըլլանք հանրութեան առջև արդարացնելու: Որովհետև շատ ծուռտումուռ և անպարկեշտ է իրենց վարմունքն ու հաշիվները՝ ես կը հուսամ, որ հարկադրված պիտի ըլլան սրբագրելու իրենց սխալ որոշումը և անկե ետքը ես անոնց սանձերը քաշած կը պահեմ, որ Հայ ճեմարանին հետ արդեն խաղի չելլեն: Սակայն ամեն պարագայի պետք է հաշուվինք այն գաղափարին հետ, որ Հայ կ. խաչը մեզի համար չիտակ ու վստահ հենարան մը չէ ասկե ետքը. հոն իրենց մեքենային մեջը անմաքուր ճեռք մը կա, որ ամեն ինչ դիտմամբ կը խառնակե պղտոր ջրերուն մեջ իր ձուկը որսալու համար: Ասկե ետքը

աղմուկով, սիրտհատնումով և պահանջ-սպառնալիքով պետք է տիրանանք մեր իրավունքին. ահա՛ քեզի իսկական թարգմանութիւնը Հայ ճեմարանին հանդեպ իրենց ունեցած և միաձայնութեամբ քվեարկած գուրգուրանքին: Հասած է ժամանակը, որ մեզմե մեկը երթա Ամերիկա և կազմակերպե Համազգայինի իրեն հատուկ ցանցը՝ ո՛չ ոքի վրա ուշ չդարձնելով:

Ասիկա մեր վիճակն էր: Հիմա մեր ընելիքը, անհրաժեշտութիւնը.

1. Հոկտեմբերի առաջին շաբաթը մեզի դրամ պիտի հասցնե Եգիպտոսը, ինչ գնով կ'ուզե ըլլա, Հուլիս-օգոստոս և սեպտեմբեր ամիսներու հաշվին 180 եգիպտական ոսկի ունինք ձեզմե ստանալիք, գոնե 120 եգիպտական ոսկիի չափ պետք է ստանանք, որ կարողանանք գործ դարձնել:

2. Հոկտեմբերի մեջ պետք է նշանակեք «Համազգայինի» օրինական ընդհանուր ժողով, որուն կու գա Նիկոլը մանրամասն հաշիվ և բացատրութիւն տալու: Լավ է, որ նախապես թղթակցիս Գասպարի հետ և գոնե օր մը ան ալ ներկա ըլլա ընդհանուր ժողովին: Բոլոր հարցերու մշակումը ձեր վրա, ինչպես որ հարմար դատե կեդրոնական վարչութիւնդ: Ես հոս իմ կողմես երկու հարցի որոշումը անհրաժեշտորեն կը խնդրեմ մեր ընդհանուր ժողովեն: Առաջին՝ որևէ ձևով կարգադրութիւն մը ըրեք հոտ Գահիրեի մեջ, որ Եգիպտոսեն մեզի ղրկվող դրամները ղրկվին կանոնավոր կերպով ամսե ամիս կամ երկու ամիսը անգամ մը առանց ամեն անգամ սպասելու, որ ես եռակի հավար բարձրացնեմ, խնդրեմ ու աղաչեմ ու մեր ծանր պայմանները մանրամասն նկարագրելու հարկադրվիմ. բան մը, որ վերջիվերջո ղրկվին պիտի, գոնե մինչև հիմա Եգիպտոսը լրիվ կատարեր է իր հանձնառութիւնը: Մի՞թե կարելի չէ կարգադրութիւն մը ընել, որ առանց ողբ ու լացի և իր ժամանակին կատարվին վճարումները, առանց մեր կողմեն հիշեցումներու ու պահանջներու. ես արդեն ձանձրացած եմ այդ հիմար նամակները խմբագրելեն. և վերջապես հնարավորութիւն տվեք մեզի, որ օրվան նեղութիւններեն դուրս քիչ մը ավելի պիտանի բաներու մասին սիրտ ու տրամադրութիւն ունենանք:

Երկրորդ խնդիրը մեզմե մեկը Ամերիկա ղրկելն է, որ նախ քիչ մը դրամ հավաքել կարողանա անմիջորեն և մանավանդ հիմքը դնե տևական կազմակերպութեան մը: Այդ անձը կա՛մ դուն պիտի ըլլաս, կա՛մ

Նիկոլը իմ կարծիքովս. վճռողը կ'ըլլա ընդհանուր ժողովը: Բայց մեկուն երթալը անհրաժեշտ է, ամենեն հարմար ժամանակն է. Հայ ճեմարանը հետզհետե կ'ամրանա, կը մեծնա, վարկ ու հարպ ձեռք կը բերե, այլև հիմք ու հող. պետք է երթալ, խոսիլ, բացատրել, եղածը հաստկըցնել, ապագան նկարել, ոգևորել ու կազմակերպել:

3. Նիկոլը հոկտեմբերին ընդհանուր ժողովեն առաջ ու հետո կրնա մնար եգիպտոս մեկ-երկու շաբաթ և ձեր երեք պլխավոր կեդրոններուն մեջ թե՛ լայն և թե՛ նեղ դասախոսութիւններ ընել, բացատրել մեր ըրածը, գործին վիճակը, մեր հեռանկարները, որ պատած որդիները քիչ մը ավելի տաքնան, իսկ տաք որդերն ալ բոլորովին չերմանան: Գուցե այս առիթով հոտ կը խորհրդակցիք և կազմակերպական թերիներուն վրա և մեր ցանցը ավելի տարածելուն կը նպաստեք: Մնկ խոսքով՝ Համազգային շարժումը ավելի կեդրոնացնելու կը ջանաք: Նիկոլը հոտկե ալ կ'անցնի Ամերիկա, եթե ընդհանուր ժողովը այդպես վճռե:

4. Մենք ալ հոս այս աշնան մասնավոր ճիգ ենք գործ դնելու մեր կազմակերպութիւնը ավելի ուժեղցնելու և տարածելու. նոր ձեռնարկներու մասին ենք խորհելու, սկսելու ենք Հավանորեն Էշրեֆիեի[1] տարրական վարժարանին չենքը, գուցե և ձեռնամուխ ըլլանք ճեմարանի բուն չենքին օտար ընկերութեան մը աջակցութեամբ և տարեկան որոշ վճարումներով, արդեն մեզի կտակված գումարը Ամերիկայեն կը մտածենք հողի և չենքի վրա պահեցնենք: Կը հրատարակենք նաև Համազգայինի առաջին տեղեկագիրը, ինչպես որ դուն ուզած էիր, այլև մեկ-երկու դասագիրք մեր «տպարանեն»:

Ուրեմն, սիրելի՛ Համո, անմիջապես քու նախագահութիւնեդ սպասածս է 1/ 120 եգիպտական ոսկի մինչև հոկտեմբեր 10-ը և 2/ Համազգային ընդհանուր ժողովին կոչը հոկտեմբերի առաջին կեսին: Եվ այս բոլորի փոխարեն ջերմ ու սրտագին բարևներս քեզի. կարոտի համբույրով՝ Լևոն Շանթ

1931 սեպտեմբեր 20
Սալիմե պյուզ

236. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1931, նոյեմբեր 3 Պեյրութ

Սիրելի Համո, Նիկոլը չի գրեր ոչինչ, թէ ի՞նչ որոշումներու հանգաւ մեր ընդհանուր ժողովը և ի՞նչ միջոցներ ձեռք առաւ անմիջական դրամի հայթայթման համար, մինչ ես օր օրի ձեզմե լուրի կ'ըսպասեմ անհամբեր: Իմ պարտքս է հիշեցնելը ձեզի, որ ուղիղ երկու շաբաթ վերջը Հարյուր քսան օսմանյան ոսկի ունիմ վճարելիք մեր ուսուցչուհյան, մեծ մասով հուվիս կամ օգոստոս ամիսներու ռոճիկը, և մեր ուսուցիչները արդեն հիմակվընե ձեռքերնին դրամ չունին. և այդ 120 ոսկին Եգիպտոսեն պետք է, որ գա: Աշակերտական վճարներեն եկած գումարներով կը հոգամ գիշերօթիկներու ծախքերը, գրքերու, գուլքերու և այլ բազմատեսակ մանր ու խոշոր անհետաձգելի պետքերը: Իսկ Ամերիկայեն ո՛չ նամակ, ո՛չ դրամ:

Ինչ որ կ'ուզեք ըրեք, բայց անմիջապես դրամ հասցուցեք: Այս հոգեկան անհանգիստ ու անկայուն վիճակս, գործ տեսնելը հետզհետե կ'ըսկսի արդեն անկարելի դառնալ[1]:

Հաջողություն ձեր աշխատանքին ու ջերմ բարևներս քեզի ու մեր ընկերներուն. *Լևոն Շանթ*

237. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համո՛ ջան, խորին ցավով իմացա ծնողիդ հետ պատահած դժբաղդությունը[1]. Գասպարը, Մաթեոսը, Սուրենը, բոլորս սաստիկ ազդված ենք. ճիշդ հենց աս էր պակաս: Գոնե թեթև ու արագ անցնի. կը մաղթեմ բոլոր սրտովս:

Նիկոլի համար ոստիկանատան մեջ կատարած ենք հարկ եղած դիմումը և գրավոր թույլտվությունը արդեն մեր ձեռքն է. այսօր ժամը 5-ին քոնսուլայի կողմեն կը հեռագրվի և երկուշաբթի առտու կարծեմ կրնանք վիզան ստանալ: Անհամբեր կ'ըսպասինք Նիկոլի գալուն, բառի բուն նշանակությամբ նստած ենք առանց դրամի: Մնացած ամեն ինչի մասին կը խորհինք ու կը գրեմ քեզի Նիկոլի գալեն ետքը:

Ջերմ ու սրտագին բարևներս քեզի, Ռուբինային, Էլիային ու ամենուդ. *Լևոն Շանթ*

1931 նոյեմբեր 14,
Պեյրութ

1932

238. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, Եգիպտոսը մեզի բոլորովին լքեց՝ ձգելով մեզի ամենածանր դրության մեջ: Ուսուցիչներս երեք-չորս ամիսով Թոշակ չենք ստացած, մինչև հիմա գոնե արաբերենի ուսուցչին կը ջանայի ամսե ամիս վճարելու, հիմա աս ալ անկարող եմ: Գիշերօթիկներու ապրուստին դրամը ստիպված եմ մուրալու առկե-անկե օրը օրին՝ խոստանալով, որ քանի մը օրեն Եգիպտոսեն դրամ է գալու: Ինծի պատվիրած եք, որ ղրկեմ քսան օրինակ ծրագիրը ճեմարանի և քսան օրինակ ալ «Հայրենի Աշխարհ». ղրկել չեմ կրնար, պոստայի դրամ չունիմ: Անցած օրը երեսս պնդացնելով ստիպված եղա նորեն Գասպարին դիմելու քսան եգիպտական մը խնդրելով քանի մը օրվան համար և մերժում ստացա: Աշակերտներեն ստացած ենք արդեն, ինչ որ մինչև հիմա ստանալու իրավունք ունինք. դեռ չվճարողներեն ալ հույս չկա: Ամերիկայեն մարտի վերջերեն առաջ դրամ սպասել չենք կարող: Մեր բոլոր հույսը Եգիպտոսն է, որ ամսական 60 ոսկիի հաշվով խոշոր գումար ունի մեզի վճարելիք, ակռանիս սեղմած քեզմե նամակի կ'ըսպասինք: Այսօր Նիկոլի անունով եկավ նամակ մը և մեջը դրամի մասին խոսք անգամ չկա: Զգիտենք ի՞նչ մտածենք և ի՞նչ ըսենք: Դրա՛մ հասցուցեք: Առայժմ ուրիշ բաներու մասին գրելու սիրտ չկա:

Սրտագին բարևներս. *Լևոն Շանթ*

1932 փետրվար 17
Պեյրութ

239. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, ներփակ կը ղրկեմ քեզի. 1) ճեմարանի հաշվեկշիռը 1931 հուլիս մեկեն մինչև 1932 ապրիլ հինգը, 2) մեր նախա-

Հաշիվը 1932 ապրիլ 5-են մինչև Հուլիս մեկը, 3) մեր ճեմարանի իսկական բացը և այս 5-6 ամիսներու ընթացքին Համազգայինի կեդրոնական մարմնեն մեր անհրաժեշտ ակնկալութիւնը և 4) 1932 Հոկտեմբեր մեկեն մինչև 1933 Հոկտեմբեր մեկը ճեմարանի տարվան մը ճմլված ու կրճատված նախահաշիվը:

Այդ չորս հաշվեթղթերը դնելով տրամադրութեանդ տակ՝ կը խնդրեմ կարելիին չափ շուտ կեդրոնական վարչութեան խորհրդակցութեան նյութ դարձնես և հայտնես մեզի ձեր պատասխաններն ու որոշումները, որ մենք ալ գիտնանք ընելիքնիս և կարողանանք նորեն պայմանագրվիլ թե՛ մեր ուսուցչական մարմնին հետ և թե՛ դպրոցի չենքին տիրոջը հետ:

Այս հաշիվներեն պարզ է, որ ճեմարանի ամբողջ թիվը այլևս ինկած է իր աշակերտական վճարներուն և Համազգային ընկերութեան վրա: Կարմիր խաչը կամ ուրիշ օժանդակութիւնները պիտի ծառայեն միայն մեր պարտքերու թեթևացմանը:

Մնացած պարտքը ի՞նչ միջոցներով պետք է գոցվի և ի՞նչ եղանակով, հիմա ի՞նչ պատասխան պիտի տանք մեր ուսուցիչներուն:

Մայիսեն մինչև օգոստոս մեր կեդրոնական վարչութիւնը պիտի կարողանա՞ հասցնել այդ անհետաձգելի 350 օսմանյան ոսկիի դումարը: Եթե չեք կարողանալու, ի՞նչ է ձեր կարգադրութիւնը մեր դպրոցական չենքի ու գալ տարվան ուսուցչական մարմնի վերաբերմամբ:

Գալ տարվան համար ալ 12 ամսվան միջոցին ձեր վրա կ՝իյնա 600 օսմանյան ոսկիի Հանձնառութիւն մը հաստատ, այլև 250 ոսկիի չափ բացի մը հոգը, որ պետք է խցկվի ձեր ու մեր ընդհանուր ջանքերովը. միակ առավելութիւնն այն է, որ դեռ հեռու է և կարելի է զանազան անորոշ հույսեր ունենալ:

Ահա՛, սիրելի՛ս, մեր ճեմարանի վիճակը, որ պարտական եմ կեդրոնական վարչութեան սեղանին վրա դնելու: Եվ կ՝ըսպասինք անհամբեր վարչութեանդ տալիք որոշումներուն:

Սրտագին բարևներով՝ *Լևոն Շանթ*

1932 ապրիլ 12
Պեյրութ

240. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

1932 ապրիլ 16
Պեյրութ

Սիրելի՛ Համո, Համազգայինի Զակազիկի[1] ճյուղի կոմիտեն ստացած ենք նամակ մը, որուն մեջ կը պրկեն մեզի իրենց պատկանող 72 գրքերուն ցանկը և կը հայտնեն, որ այդ գրքերը եթե օգտակար կրնան ըլլար ճեմարանին, գրենք ձեզի՝ կեդրոնական վարչութիւնդ, որ կարգադրեն հարկ եղածը: Այդ գրքերը այժմ կը գտնվին Կամսարական տան պաշտ. միութեան գրադարանին մեջ:

Ամբողջ ցանկը բոլորն ալ շատ պիտանի գրքեր են ճեմարանի համար, մեկ մասը ուղղակի անհրաժեշտ: Եվ շատ կը խնդրեմ ճեմարանի կոմիտեն իակուշն ընես հարկ եղած կարգադրութիւնը, որ գրքերը ղրկվին ճեմարան:

Երեք օր առաջ ղրկած եմ կեդրոնական վարչութեանդ անունին մեր արդի ու հառաջիկայի բոլոր հաշիվները:

Ջերմ ու սրտագին բարևներս քեզի ու մեր մյուս ընկերներուն.

Լևոն Շանթ

1933

241. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

1933 Հուլիս 8
Պեյրութ

Համազգային ընկերութեյան
կենդրոնական վարչութեյան
Գահիրե
Մեծարգո տիարք:

Լսելով ճեմարանի տնօրենութեյան վեկուցումը վարժարանի արևմտեան կացութեյան մասին և նկատելով, որ հիմնարկութեյունը փակման լուրջ վտանգի տակ է, ճեմարանի հինգ մնայուն դասատուները և

երկու տնօրենները միակցուվթյամբ որոշեցին Հայ ճեմարանի նյութական և բարոյական պատասխանատվության գործն առնել իրենց վրա՝ խնայելու համար Համազգային ընկերուվթյան՝ իր հիմնարկած ճեմարանը իր իսկ ձեռքով փակելու տխուր հարկադրանքը:

Այս ծանր պարտականուվթյունը նորանոր զոհողուվթյանց գնով և գիտակցաբար առնելով մեզ վրա՝ մենք մեր հույսը դրած ենք Համազգային ընկերուվթյան կենդրոնական վարչուվթյան և Սյուրիո խնամակալ մարմնի, Ամերիկայի Կարմիր խաչի, հանրային այլ մարմինների և համակիր ունևորների աջակցուվթյան վրա: Վստահ ենք, որ թեև անկարող ճեմարանի բովանդակ հոգսն առնել ձեզ վրա՝ դուք պիտի չզլանաք ձեր կարելի աջակցուվթյունը բերել այս գործին: Առաջիկա ուսումնական տարվան համար կենդրոնական վարչուվթենեդ կ'ըսպասինք 275 եգ. ոսկու նպաստ, որի 60 ոսկին կը խնդրենք հասցնել մեզ մինչև հոկտ. 1-ը, որ հնար ունենանք գեթ մասամբ հոգալու դասատուներու ամրան ամսականները:

Հույս ունինք, որ ձեր գործոն աջակցուվթյամբ պիտի քաջալերեք այս ձեռնարկը, որով միասնական ճիգերով փրկած կը լինինք Համազգային ընկերուվթյան պատիվն ու հռչակը հանրուվթյան աչքին:

Ի դիմաց մանկավարժական խորհուրդի՝
Տնօրեն՝

Հ.Գ. Գրուվթյանս կցված է մանկավարժական խորհուրդի յոթ անդամներու համաձայնագրի պատճենը:

Համաձայնագիր

Համազգային ընկերուվթյան Պեյրութի Հայ ճեմարանի երկու վարիչներս՝ Լևոն Շանթ և Նիկոլ Աղբալյան, այլև նույն հաստատուվթյան հինգ մնայուն ուսուցիչներս՝ Աթիկյան Հակոբ, Բաբախյան Սուրեն, Գյուզալյան Գառնիկ, Հովհաննեսյան տիկին Գոհար և Տարոնյան Եղուարդ, մենք յոթը հոգի ընդհանուր համաձայնուվթյամբ կայացուցինք հետևյալ որոշումները 1933 թվի հուլիս ամսի երեքին Հայ ճեմարանի չենքին մեջ:

1. Աչքի առաջ ունենալով ընդհանուր քրիզը, Համազգային ընկերուվթյան կեդրոնի տնտեսական արդի անճոռ վիճակը և Հայ կարմիր խաչի վճարումներուն հավանական կրճատումը՝ Հայ ճեմարանի գոյու-

թյունը չվտանգելու համար մենք մեր ստանալիք ռոճիկները տարվան մը համար կը հարմարցնինք այդ տարվան ըլլալիք իրական մուտքին:

2. Մենք հավաքաբար մեր վրա կ'առնինք, բոլորս իրարու հավասար ձայնի իրավունքով, Հայ ճեմարանի տնտեսական, կրթական և ուսումնական բոլոր գործերուն վերին վարչությունը մեկ տարվան համար 1933 Հոկտեմբեր մեկեն մինչև 1934 Հոկտեմբեր մեկը: Եվ տարվան վերջը մեր գործունեության արդյունքը և հաշիվները կը ներկայացնինք համազգային ընկերության կեդրոնական վարչությանը Գահիրե:

3. Հայ ճեմարանի տեսուչը կը մնա Լևոն Շանթ, իբրև մեր որոշումներուն գործադիրն ու հսկիչը: Մեր վարչական ժողովները տեղի կ'ունենան 15 օրը անգամ մը տեսչի հրավերով:

4. Մեր այս համաձայնագիրին պատճենը անմիջապես կը ղրկվի Համազգային ընկերության կեդրոնական վարչության Գահիրե:Ստորագրություններ

242. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Համո, Նիկոլն ու Գասպարը Դոուր-Շվիր[1] են ամարանոց, ես տարբեր դյուղի մեջ եմ և Գասպարը չաս քիչ կը բարձրանա դյուղ, առաջին անգամ որ միասին գանք՝ կը խորհրդակցինք ընդհանուր ժողովի մասին: Մեր այս ցրվածությունն է պատճառ նաև օրը օրին քեզի պատասխան չտալուս. նամակը ձեռքե ձեռք կ'անցնի, չեքը նույնպես և մեկ-երկու չաթթ կ'անցնի, մինչև դրամը ձեռքս կը հասնի: Շնորհակալությամբ ստացած ենք ղրկած երկու չեքերդ հուվիս և օգոստոս ամիսներուն համար, ընդամենը քառասուն անգլիական ոսկի:

Կը մեղադրես, որ հաշիվ ու տեղեկություն չենք տար ձեզի. չաս արդար չես, բայց քու մեղադրանքդ ալ սիրելի է, վնաս չունի: Մինչև այս տարի ես եմ ղրկեր քեզի միշտ կանոնավոր կերպով բոլոր տեղեկություններն ու բոլոր հաշվեկշիռները, այս տարի քիչ մը ամեն բան խառնակվեցավ. մեր նոր վարչական մարմնի կողմեն ձեզի նամակներ էին գրված և պատասխանի կ'ըսպասեինք: Մյուս կողմեն իմ կարդացած տեղեկագիրս գրեթե ամբողջությամբ խակուլն տպվեցավ լրագիրներուն մեջ. հաշիվներն ալ որոշվեցավ, որ Նիկոլը պիտի ղրկե ձեզի.

բայց երևի ես եմ եղած թյուրիմացության մեջ, որովհետև դուրս եկավ, որ միայն Համազգայինի հաշիվներն է ղրկած ձեզի: Ներփակ կը ղրկեմ մեր անցած տարեշրջանի ել ու մուտքին հաշվեկշիռը, որ բարեբաղդաբար մուտ է. իսկ տեղեկագրին բնագիրը քաղաքն է, կը ղրկեմ հոկտեմբերին, եթե չափազանց ուշացած չգտնես: Հուլիս մեկեն ասդին մեր բոլոր եկամուտը քու ղրկած քառասուն ոսկին է, այլև երեկ ստացանք Ահարոնյանեն հին խոստումը՝ 5000 ֆրանք: 25 տոլլարի նվեր մըն ալ կա չգիտեմ ինչ կտակե մը մեզի բաժին, բայց չեքը դեռ չէ գանձված:

Կը հուսամ, որ գործերուդ տակնուվրայությունը քիչ մը կանոնավորած ես արդեն և ամբողջ ընտանիքով առողջ եք. գոհ և ուրախ ըլլալու մասին չեմ խոսեր, որովհետև արդի պայմաններուն մեջ ամեն տեղ ալ չատ քիչ բան կա բավականության և ուրախության: Քեզի ու քուվիններուդ ջերմ ու սրտագին բարևներս. *Լևոն Շանթ*

1933 օգոստոս 21
Պհարսաֆ[2]

1934

243. . ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն:

Ամենեն առաջ պարտք կա վրաս հայտնելու քեզի ուրախությունս և չնորհակալությունս «Վեմ»-իդ համար[1]*, որ կանոնավոր կ'ըստանամ ու մեծ հետաքրքրությամբ կը հետևիմ. և բոլոր սրտովս հաջողություն կը մաղթեմ քեզի: Դուցե քիչ մը նեղացած ըլլաս վրաս, որ մինչև հիմա տող մը անգամ չգրեցի քեզի. մի՛ մեղադրիր, սիրելի՛ս. մանր-մունր բաներով այնքան զբաղված է գլուխս և գրիչս, որ առօրյա գործերե դուրս բան գրելու ժամանակ չի մնար, ո՛չ ալ տրամադրություն: Եվ հիմա ալ որ կը գրեմ՝ նորեն առօրյա գործս է, որ կը դրդե:*

Տարոնյանը թողուց ճեմարանը. հիմա մեզի համար սեւեռք է ֆրանսերենի ուսուցիչ մը վերին կարգերուն համար, որ լիսեի III, II, I կլասներուն կը համապատասխանե. ֆրանսերենը լավ գիտնալե ու

խոսելե զատ անհրաժեշտ է նաև լուրջ ծանոթութիւն ֆրանսական գրականութեան չուրջ. բնավորութիւնն ու մտայնութիւնն ալ իհարկե շատ կարևորութիւն ունեցող հարց է ճեմարանի համար: Այս բոլորի փոխարեն վճարելու ենք ամսական 30 սիրիական ոսկի (600 ֆրանկ), 12 ամիս: Մեր ճեմարանի բոլոր ուսուցիչները Հառաջիկա տարի այդպես պիտի ստանան, 24 դասի փոխարեն:

Սրտագին բարևներս տիկնոջդ, համբույրս զավկիդ և ջերմորեն կը սեղմեմ իմ սիրելի Սիմոնին ձեռքը և պիտի ապասեմ պատասխանիդ, եթե ունիս հանձնարարելի անուն մը: Կարոտով ու համբույրով՝

Լևոն Շանթ

1934 Հունիս 28,
Պեյրութ

Քու հասցեովդ նամակ մըն ալ պիտի ստանաս ասոր հետ. կը խնդրեմ, որ հանձնես Համազգային ընկերութեան Ֆրանսայի ճյուղի կեդրոնական վարչութեան: Դիմած եմ նույն խնդիրքով:

Պետք ունինք նաև մաթեմատիկի ու չիմի-ֆիզիքի համար ալ ուսուցչի մը. աս ալ աչքի առաջ ունեցի՛ր:

1935

244. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, ներփակ կը ղրկեմ քու սեպտեմբերի ամսականը, այսօր ղրկեցի նաև Գառնիկին[1], որով բոլոր ուսուցիչներու վճարները լրացած են մինչև Հոկտեմբերի 1:

Պերպերյանի նամակը, որ նույնպես ներփակ պիտի գտնես, ի՞նչ պետք է պատասխանել. Համազգայինի հաշիվն է:

Ղազար Զարըգը քանի մը շաբաթ առաջ այցելեց ինծի և հայտնեց, որ Հ. կ. խաչը որոշած է իր ճյուղերու միջոցով աշխատիլ ճեմարանին համար աշակերտուհիներ բերել տալու դուբսերեն պլխավորապես վարժուհիներ պատրաստելու դիտավորութեամբ. ուսման վճարները ճեմարանին կվճարվին. Հարցուց, թե կարելի՞ է, որ ճեմարանի մեջ

ընեն իրենց ճաշն ու ընթրիքը. ըսի, որ կրնանք հարմարցնել, որու համար յուրաքանչյուրի վճարելիքը հաստատ չեմ կրնար ըսել մինչև ընկերներս գան: Հարցուց, թե առարկություն ունի՞մ. ի՞նչ առարկություն կրնայի ունենալ. ընդգծեցի, որ անոնք կ'ըլլան մեզի համար երթևեկի հաշվին, որ մեր վրա չենք կրնար առնել ո՛չ մեկ հսկողություն և պատասխանատվություն: Եղած հայտարարությունը «Ազդակ»-ի[2] մեջ ինծի զարմանք պատճառեց. եթե տեղական ճյուղերը աչխատին՝ գուցե կարողանան իրեն ժողված գումարներով մեկ-երկու աղջիկ պահել, բայց եթե ծնողներուն կը դիմեն՝ ո՞ր ծնողքը իր աղջիկը կը ղրկե ուրիշ քաղաք Կարմիր խաչի փոփոխական և անկայուն հսկողության տակ. տեսնենք:

Ամերիկայեն Մեզրեի Հայր. միությունը ղրկած է մեզի 500 տոլար իբր երկու տարվան վճար մեզրեցի տղա մը գիշերօթիկ պահելու համար. դրամը դրած եմ պանքը և խարբերդի Հայր. միության հետ հարաբերության մեջ եմ տղու ընտրության համար:

Կարոտով բարևներս քեզի, Հռիփսիկին, Հուրիկին, Նանիկին[3], կը հուսամ, որ բոլորդ ալ առողջ եք և լավ տրամադրված:

Լևոն Շանթ

1935 օգոստոս 30
Պիքվայա[1]

245. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

Սիրելի՛ Նիկոլ, նամակդ ինծի ուրախացուց, Մեյրուպայի[1] մերիններուն պատկերը աչքիս դեմն է հիմա: - Պերպերյանի 15 սիրիականը ուղարկեցի: Տիկին Գոհարին դուն տո՛ւր խնդրած դրամը, քանի որ այդքան դժվար է Մեյրուպա դրամ հասցնելը. եթե չես կրնար՝ հայտնե, որ ղրկեմ: - Պարսկաստանեն բժիշկ Տերտերյանը գրած է, որ շուտով աղջիկը բերելու է ճեմարան: - Ամերիկայեն Վասպուրականի ընդհանուր միությունը Խրիմյան Հայրիկի անվան երկու գիշերօթիկ է պահելու ճեմարանի մեջ, հարցուցած է պայմանները և խնդրած, որ մենք կատարենք տղոց ընտրությունը... Խոսրովեն իմացա, որ Շաղոյանը այս կողմերն է, խնդրեցի հանդիպում մը. եթե մեկնած է՝ գրելու եմ, որ իր

միջոցով ըլլա այդ ընտրութիւնը. Խոսրովն ալ խոստացավ օգնել: Ներփակ կը խնդրեմ քու անվանդ եղած նամակները: - Ամառը կ'անցնի սաստիկ արագ, ես կ'աշխատիմ գլխավորապես մանկավարժութեան վրա: Շատ ու շատ բարևներս Իփեկյաններուն և Հովհաննեսյաններուն և տղոց: - Առողջ եղի՛ր: Կը սեղմեմ ձեռքդ. Լևոն Շանթ

1935 սեպտ. 12

Պիքվայա

1938

246. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերութեյան կեդրոնական վարչութեյան

Սիրելի՛ Համո, ստացած եմ ճեմարանի տնօրենութեյան ուղղած նամակդ և տված եմ ընկերներուս, որ կարդան: Ստացած եմ նմանապես ներփակ երկու չեքերը: Որով մինչև հիմա ճեմարանը ստացած կ'ըլլա կեդրոնական վարչութեյանդ հաշվին և այս տարեշրջանին համար հետևյալ գումարները. 1/ դեկտեմբերին 100 տոլարի չեք մը, 2/ Հունվարին 20 եգիպտականի չեք մը, 3/ փետրվարին 61 սիրիական և 32 դահեկան տեղիս Համազգայինի ճյուղեն ձեր հաշվին, 4/ մարտին 30 անգլիականի չեք մը, 5/ օրացույցներու վաճառումեն, ընկեր Աղբալյանեն 90 սիրիական և 80 դահեկան, 6/ ձեր վերջին նամակով չեք մը 24 անգլիականի և 6 շիլին, 7/ ձեր վերջին նամակով չեք մը 500 եգիպտական դահեկանի և 8/ Միլանեն ընկեր Իփեկյանի ձեռքով և ձեր հաշվին 9 անգլիական և 110 լիրեթ իտալական, ընդամենը 10 անգլիական ոսկիի հաշվով, այս գումարի համար կեդրոնական վարչութեյունդ ստացական մը պետք է ղրկե Միլանի Համազգայինի կազմին. ես տված եմ հոս ժամանակավոր ստացական մը ընկեր Գասպարին: Այս բոլորի համար մեր խորին շնորհակալութեյունը:

Սոֆիա Բարդեն Սյունիի եղբոր թողած 12 հազար լևայի դանձման համար կը հետևիմ քու ցույց տված ճամբուդ և չոտով կը ղրեմ Կարմիր խաչի կեդրոնին:

Օրացույցներու հաշիվը ընկեր Աղբալյանը նոր ղրկած է ձեզի և երևի ստացած կ'ըլլաս արդեն:

Գալով մեր Բյուրոյի հեղինակութիւնը բարձր պահելու հարցին՝ իրաւ որ չափազանց վնասակար և շատ անախորժ պատմութիւն է ատիկա. միայն չեմ հասկընար, թէ ճեմարանը ինչ գործ ունի ատոր մէջ: Մեր կուսակցութեան բարձրագոյն մարմնի ղեկավար ընկերները այս վերջին քանի մը տարիներու ընթացքին մեր շրջանին հետ այն ձևով են վարվեր, որ հոս տեղիս ամբողջ կազմակերպութեան մէջ այն դժբաղդ և ամենուն հոգիին մէջ ամուր նստած համոզումն է գոյացեր, թէ մեր բարձրագոյն մարմինը իր առած քայլերուն մէջ ընկերներու հանդեպ երկու չափ ունի և երկու կշիռ և թէ կամայականութեամբ կ'առաջնորդվի մեր շրջանին մէջ, ո՛չ թէ օրենքի տրամադրութեամբ և արդարութեամբ, որով և թայֆայութիւն կ'ըստեղծվի կուսակցութեան մէջ: Այս ընդհանուր համոզումը և հոսկե առաջացող դժգոհանքը անշուշտ որ աղետաբեր է և կը քանդե մեր բարձր մարմնին հանդեպ եղած հարգանքն ու պատկառանքը: Ա՛ս է հարցին ծուծը, ասո՛ր վրա պետք է խորհին հոս ամենեն առաջ: Ծառայողները մեղադրելով կամ հիմնական սխալին հետևանքները հանցավոր բռնելով՝ սխալները չեն սրբագրվիր:

Կ'ըսես նաև, որ հոս բոլորը կը մեղադրին մեզի, որ ճեմարանի վարչութիւնը, ուսուցիչները, աշակերտները և ալ չգիտեմ ով նետված ենք տեղիս կուսակցական պայքարներուն մէջ: Նորեն բոլորովին անհիմն ու խորը չմտածված մեղադրանք մը ճեմարանի հանդեպ: Նախ՝ անձամբ ես ո՛չ ղբաղված եմ և ո՛չ ալ մասնավորապես կը հետաքրքրվիմ այդ տեղական աղմուկներով, և ասիկա ես ընել կրնամ այն պարզ պատճառով, որ մասնակցութիւն չունիմ կուսակցութեան գործնական ղեկավարութեան մէջ մասամբ խառնվածքիս պատճառով, մասամբ ալ գործիս պատճառով: Բայց ինծի նման ըլլալ չեն կրնար ո՛չ ընկերներս, ո՛չ ալ մեր բոլոր ավարտականները: Ընկերներուս կուսակցական կշիռը այնքան մեծ է, որ ընտրութիւններու ատեն բռնի կը քաշեն մեջ, իսկ երիտասարդներուն ալ կուսակցական թարմ եռանդը առաջ կը մղե. և բոլորը կ'աշխատին մեծ անձնվիրութեամբ և մեծ արդյունքով: Եվ ինչքան խելքս կը հասնի՝ անոնք արժանի են թէ՛ եպիսկոպոսի և թէ՛ ամեն տեղույի մեր կուսակցական ընկերներու գնահատանքին ու համակրանքին և ո՛չ թէ անոնց մեղադրանքին: Արդ ո՞ր ժամանակեն սկսած կուսակցական սրտանց ու բարեխիղճ աշխատանքը հանցանք կը նկատվի, դուք մեզի ինչի՞ համար ղրկեցիք հոս: Իսկ երբ

անգամ մը կը մտնես մարմնի մը մէջ՝ ուզես-չուզես պետք է զբաղվիս տեղական ամեն չար ու բարիով, ինչքան ալ աւտոնք մանր-մունր անձնական, անչահ ու անհաճո ըլլան. պետք է վիճես, հակաճառես, պաշտպանես օրենքը և բարձր պահես կոլտակցութեյան դրոշը ինչքան որ և ինչպես որ խիղճդ կը թելադրե. հապա ուրիշ ի՞նչպես կ'ուզեք որ ըլլա:

Հարցի իսկութեյունը հոն է, և հոս արդեն իրավունք ունիս, որ եգիպտոսի մեր մտաւիկ ընկերները «պզտած են» դեպի ճեմարանը: Բայց ասիկա նորութեյուն մը չէ կարծեմ, քանի մը տարիներու պատմութեյուն ունի այդ պզտութեյունը և որուն պատճառները դուն ինծմե չատ ավելի աղեկ գիտես, քանի որ դուն ես եղած այդ տարիներուն, որ փչելով-փչելով համակրանքի քանի մը կայծեր վառ ես պահեր դեպի ճեմարանը:

Ինչ կը վերաբերի մեր եգիպտացի ընկերներու ճեմարանին տված պատժին, թե գալ տարվընն այլևս պետք է կտրվի ամսական քսան եգիպտականը, այլև քու սրտնեղած առաջարկիդ, որ Համազգայինի կեդրոնը փոխադրվի հոս, աւտոնք հարցեր են, որոնց պատասխանը տալ կրնա միայն Համազգայինի ընդհանուր ժողովը: Տարբեր խնդիր է անշուշտ, եթե դուք մնալի Համազգայինի ընդհանուր ժողովին համար ալ արդեն կախակայած եք: Այդ պարագային մնալի կ'իմացնեք, երևի: Իսկ ժողովի համար հարմար ժամանակը հունիսի վերջին շաբաթն է կամ հուլիսի առաջին շաբաթը, եթե մենք պիտի գանք ձեզի: Եթե դուք ուզենաք գալ մեզի, որ անհամեմատ ավելի լավ կ'ըլլա, կրնաք գալ երբ որ ուզենաք:

Սրտանց կը բարևեմ քեզի, քուկիններուդ և մեր Համազգայինի ընկերները: Ու կը մաղթեմ, որ չուտով վերջ գտնեն այս հիվանդոտ հարաբերութեյունները և կենդանի գործ մը աւտոջութեյուն ու նոր կորով ներշնչէ մեր կոլտակցութեյան. *Լևոն Շանթ*

1938 ապրիլ 15
Պեյրութ

1939

247. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Հայ Համազգային կրթական և հրատարակչական ընկերության կեդրոնական վարչության

Սիրելի՛ Համո, ճեմարանի տնօրենությունը ստացած է կեդրոնական վարչությանդ մարտ 30 թվակիր նամակը, ինչպես նաև ներփակ 80 եգիպտական ոսկիի չեքը. կը հայտնեմ մեր խորին շնորհակալությունը:

Օրացույցներուն հաշիվները պատրաստ են բոլորովին և շուտով ընկերներս առանձին նամակով կը գրեն ձեզի: Նոր օրացույցը Գասպարը կազմելու վրա է:

Համազգայինի ընդհանուր ժողովին համար մենք միշտ պատրաստ ենք. միայն տեղը որոշելու ատեն աչքի առաջ ունեցեք, որ եգիպտական կառավարությունը մեզմե ո՛չ մեկուն վիզա չէ տալու Եգիպտոս անցնելու համար:

Պիտի խնդրեմ, որ Գայայանի «Բառարան-գանձարանեն», կազմած, վեց օրինակ պատվիրել տաք, որ ղրկեն իմ հասցեիս: Շնորհակալ կ՚ըլլանք, եթե դուք հոտ վճարեք արժեքը ձեր մեզի ղրկելիք գումարի հաշվին. եթե ատիկա որևէ անհարմարություն ունի, թող հաշիվը ղրկեն մեզի, որ իսկույն արժեքը փոխադրենք:

Կը ցանկամ քեզի ու ընկերներուն առողջություն և հաջողություն: Սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1939 ապրիլ 20

[Պեյրութ]

248. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, կարդացի Արշակին[1] գրած նամակդ և խոսեցա Նիկոլի հետ: Ես ալ, Նիկոլն ալ սրտանց ուրախ կ՚ըլլանք քու ներկայութենեն ու աշխատակցութենեն: Հայ ճեմարանի վարչության անունով կը հրավիրեմ քեզի ճեմարան. կ՚ըլլաս հոս տեսչի օգնականի պես

բան մը, որուն կարիքը արդէն կ'ըզգամ. երբ որ գաս՝ միասին կ'որոշենք, թէ ինչով կրնաս ինծի օգնել: Մնացեալ կ'ըստանաս պիչերօթիկներուն հետ, կը պառկիս պիչերօթիկներու բաժնին մէջ, որուն վարիչը Գյուզալեանն է, որով և տեսակ մը բարոյական չվտում կ'ունենաս մեր պիչերօթիկներու հետ. քեզի համար կը վինջեմ նաև չաբաթական 10-12 ժամ գաս մեր պետքերը և քու հարմարութիւններդ աչքի առաջ ունենալով, իբրև գրամ կ'ըստանաս ամսական 25 սիրիական ոսկի, 12 ամիս: Համեմատութեան համար հայտնեմ, որ Ազբալեանը կ'ըստանայ 45 սիրիական առանց մնունդի ու սենեակի:

Եկո՛ւր. մնացածը հոս կը ձևավորի հետզհետե: Եվ որոշումդ անմիջապես հայտնե՛ մեզի. հայտնե՛ նմանապես, թէ ինչ անցագիր ունիս և քու հոտտեղի հասցեն (ո՛չ «Հայրենիք»-ի), որ դիմում կատարվի մեր կողմեն վիզայի համար. եթէ ամերիկյան անցագիր ունիս՝ կարծեմ բնավ դժվարութիւն չես ունենար. տեղեկացի՛ր, ատուքե՛ ու գրե՛ մեզի:

Մեր կոատակցութեան վերջին ընդհանուր ժողովը որոշած է, որ ճեմարանի ուսուցչական մարմնի վերին վավերացումը պիտի դտնվի Համազգայինի կեդրոնական մարմնին ձեռքը. այնպես որ այս տարեշրջանին վերջը մեր կազմը պիտի տեղեկացնենք մեր կեդրոնին վավերացնելու համար. և չեմ կարծեր, որ մեր կեդրոնը քու ընտրութեանդ համար որևէ առարկութիւն ունենա:

Գիտցած եղիր, որ քու գրական և այլ աշխատութիւններուդ համար ալ բավական ազատ ժամանակ կ'ունենաս: Կարոտով կը համբուրեմ քեզի ու կ'ըսպասեմ պատասխանիդ:

Լևոն Շանթ

1939 Հունիս
[Պեյրութ]

249. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային կրթ. և հրատ. ընկերութեան
կեդրոնական մեծարգո վարչութեան
Հարգելի նախագահին

Սիրելի՛ Համո, ստացած եմ Հունիս 14 թվակիր զույգ ու բոլորովին համանման խմբագրված նամակներդ «Հայրենիք» ընկերակցու-

թյան կողմե հայ մտավորականութեյան եղած օժանդակութեյան մասին: Դեռ ոչ ոքի կողմե ինձի հարցուած եղած չէ: Միայն թե երկու նամակներուդ թիվերը ինձի համար պարզ չեն. 1938 թվականի համար ստացված է ըստ մեկ նամակի 627, ըստ կից նամակի՝ 3000 նույն թվականին համար: Թվականի՞ սխալ կա, թե պիտի ըսվի 3627 նույն տարվան համար:

Կը գրեմ քեզի պյուղեն, քաղաքեն գրել անկարող եղա, այն աստիճան հոգնած էի և ուժասպառ վերջին չաբաթներու դիզված աչխատանքեն ու տաքեն: Մեկնելես առաջ ղրկած եմ քեզի ճեմարանի տասնամյա տեղեկագիրը ապահովագրած:

Այս ընթացիկ տարեշրջանի հաչիվը կը ղրկեմ քեզի հոկտեմբերին, երբ բոլոր հաչիվները կը փակվին և կը կազմինք վերջնական կշիռը:

Հառաջիկա 1939-1940 ուսումնական տարեշրջանին համար կը նախատեսինք հետևյալ մուտքերն ու ելքերը, որոնք հենված են անցած տարեշրջանի իրականութեյան վրա և հնար եղածին չափ մոտիկ հավանականութեյան:

Կյանքի աստիճանական սղացումը մեզի նորեն ստիպեց մնայուն ուսուցիչներու ռոճիկներուն վրա նորեն ամսական հինգ սիրիական հավելում ընել առանց մեր պյուտճեն որևէ վտանգի ենթարկելուն:

Իբրև մուտք կը նախատեսինք.

1. Աչակերտական վճարներ

կը հաչվինք 106 ուսման վճար և 20 դիշերօթիկի վճար.

ա/ ինքնավճար	1700 սիրիական ոսկի	
բ/ հանրային օժանդակութեյուն	3500 տոլար	
գ/ Հայ կարմիր խաչ	2500 տոլար	
որ միասին կ'ընե գրեթե		13.000 սիրիական

2. Համազգային ընկերութեյան նպաստը

կեդրոնի ձեր հանձնառութեյունը	100 եգ. ոսկի	
օրացույցներեն կ'ակնկալինք	100 - -	1.800

3. Նվեր ու հանդեսներե	*700*
	ընդամենը՝ 15.500
Իբրև եկք կը նախատեսինք.	
1. ռոճիկ ուսուցչական և. տնտեսուհի	*7.850*
2. ճեմարանի չենքին վճարը	*1.050*
3. գույք ու պիրք, գործիք, քիմիական պիտույք	*350*
4. գիշերօթիկ բաժնին վրա *գիշերօթիկի չենքը 400* *խոհանոց, սպասարկութիւն,* *մաքրութիւն 9×425=3825* *նորոգութիւն, չնախատեսված 150*	*4.375*
5. ջուր, լույս և այլ մանր կամ ընդհանուր ծախքեր	*325*
	13.950
Հին պարտքի հատուցման	*500*
դասագրքերու հրատարակութ.	*700*
	ընդամենը՝ 15.200

Այս վայրկյանիս մեր ուսուցչական մարմինը կը կազմեն իբրև մնայուն ուսուցիչ.

1. Նիկոլ Աղբալյան, տնօրեն, կ'ավանդէ Հայերեն գրաբար, Հայ գրականութեան պատմութիւն և կը վարե գրական գործնական աշխատանքները:

2. Գառնիկ Գյուզալյան, վարիչ գիշերօթիկ բաժնի, կ'ավանդէ ընդհանուր և Հայոց պատմութիւն և կը վարե պատմական գործնական աշխատանքները:

3. Տիկին Գոհար Հովհաննեսյան, ընդհանուր Հսկիչ, գիշերօթիկ աղջիկներու վարիչ և ուսուցիչ թվաբանութեան:

4. Լևոն Շանթ, տնօրեն-տեսուչ, ուսուցիչ Հայերենի, Հոգեբանութեան, մանկավարժութեան և կը վարե մանկավարժական գործնական աշխատանքները:

5. Սուրեն Շանթ, ուսուցիչ կենդանաբանութեան, բնախոսութեան և ֆրանսերէն լեզուի:

6. Գառնիկ Բանեան, ընդհանուր հսկող պատրաստականներու և ուսուցիչ հայերէնի ու հայոց պատմութեան:

7. Գառնիկ Թոփալեան, ուսուցիչ բնական պատմութեան, աշխարհագրութեան և թուաբանութեան:

8. Բարսեղ Զթոյան[1], ուսուցիչ արաբերէնի:

9. Քնար Սիսլեան, ուսուցիչ ֆրանսերէնի և իրագիտութեան պատրաստականներու մէջ և հսկող:

10. Մանուկ Ասլանեան, նոր հրաւիրուած իբրև ֆիզիքի ուսուցիչ Գ. և Դ. դասարաններու մէջ:

Իբրև երթեւեկ ուսուցիչ հինեն ունինք կամ նոր հրաւիրած ենք.

1. Ֆրանսացի մը՝ Chorbonies Գ. և Դ. կարգերուն մէջ ֆրանսերենի ուսուցիչ:

2. Նոր հրաւիրած ենք Mr. Viuriggueerra[2] ֆրանսերէն լեզուի ու գրականութեան Զ և Է կարգերուն համար:

3. Mr Coq, պատրաստականներու մէջ ֆրանսերենի:

4. Նուպար Սերոբեան[3], չիմիի ու ֆիզիքի՝ վերին կարգերուն, նոր հրաւիրուած:

5. Հ. Փանոսեան, նմանապես նոր հրաւիրուած, գեղագրութեան, նկարչութեան ու մարզանքի:

6. Բ. Կանաչեան, մեր երաժշտութեան ուսուցիչը և խմբական երգի:

7. Տիկին Մարի Փեչտմալճեան[4], ձեռագործի ուսուցչուհի:

8. Մեր այս տարվան ավարտականներեն լավագույնը՝ Արմինե Մանուկեան պիտի ավանդե հայերեն և հայոց պատմութեան դլխավոր դեմքերն ու դեպքերը պատրաստականներուն մէջ և հսկող. միևնոյն ժամանակ ինքը հետևելու է քանի մը դասախոսութիւններու:

Բաց է այս վայրկեանիս

1. մաթեմատիկի ուսուցիչը, հինը հրաժարեցավ վերջին վայրկեանին.

2. անգլերենի ուսուցիչը. կը մտածենք Գ և Դ կարգերուն համար նորեն հրաւիրենք հայ մը և աչքի առաջ ունինք մեկը, իսկ վերջին երեք կարգերուն համար չանալու ենք անգլուհի մը գտնելու.

3. Ամերիկայեն Սիմոն Վրացեանը ցանկութեան էր հայտնած գալ

ճեմարան մեզի աշխատակցելու: Աչքի առաջ ունենալով, որ մենք ալ մեծ կարիք կ'ըզգանք ավելի երիտասարդ ու թարմ և հայրենի չունչով լուրջ ու փորձված ընկերոջ մը ներկայությունը ճեմարանի մեջ՝ հրապիրեցինք: Կ'ըլլա տեսչի օգնականի պես բան մը, կ'ունենա պատմության ու աշխարհագրության դասեր հավանորեն, կ'ապրի գիշերօթիկ բաժինը և հոն կ'ըստանա իր սնունդը, իբրև դրամ առայժմ առաջարկած ենք 25 սիրիական ամսական: Դեռ իրմեն պատասխան չունինք:

4. Այս բոլոր բաց ուսուցիչներուն հարցը կը կարգադրվի հոկտեմբերի առաջին կեսին և այն ատեն բնականաբար կը տեղեկացնեմ արդյունքը կեդրոնական վարչությանդ:

5. Առայժմ սիրով կը բարևեմ քեզի, քուվիննևրուդ և գործակից ընկերները. *Լևոն Շանթ*

1939 Հուլիս 18
[Պեյրութ]

1942

250. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերության կեդրոնական վարչության Հարպեզի նախագահին, Գահիրե

Սիրելի՛ Համո, տեղիս ներկա տնտեսական պայմաններու ճնշման տակ, ուր կյանքը քանի մը պատիկ սղած է, և Ամերիկային մեզի օժանդակող ընկերություններուն հանձնառությունները մեր ձեռքը չատ դժվար և միայն մասամբ հասնելուն հետևանքով Հայ ճեմարանը կեցած է հիմա անելի մը առջև:

Այս տարի մենք Ամերիկայեն ստանալիք ունեինք նախորդ տարվան մնացորդն ալ միասին հաշված, Հայ կ. խաչի այս տարվան հանձնառությունն ալ մեջը, 7825 տոլար: Հետագրով մեր բոլոր առնելիքները փոխանցած ենք Հայ կ. խաչին, որ ինքը գանձե և փոխադրե մեզի իր գումարներուն հետ: Հայ կ. խաչեն ամբողջ տարվան ընթացքին կրցած ենք ստանալ ընդամենը 2900 տոլար:

Հոս տեղական դպրոցները ամենքն ալ, նույնիսկ մեր ազգային վարժարանները ըրած են բոլորն ալ Հարյուրին 50, 75, 80 տոկոս հա-

վելում իրենց ուսուցիչներու ռոճիկին վրա: Գիտեք, որ մեր ամենեն շատ ստացող ուսուցչի ռոճիկը 45 սիրիական թուղթ է. տարվան սկիզբը խոստացած էինք մեր ուսուցիչներուն 10-15 տոկոսի հավելում մը ընել, հենց որ մեր պյուտճեն ծայրը ծայրին բերել կարողանանք: Այդ խեղճ հավելումն անգամ իրագործել չկրցանք մինչև հիմա. մեր բոլոր սեղմումներուն և խնայողութիւններուն հակառակ մեր այս տարվան պյուտճեն 2000 սիրիական բաց ունի, որ ըսել է մեր ուսուցիչներու ամառվան ապրուստը. նորեն հեռագրած ենք Ամերիկա. չգիտեմ ինչ արդյունք պիտի ունենա:

Այս պայմաններուն մեջ հարկադրված որոշեցինք փակել գիշերօթիկ բաժինը սովորականեն երկու–երեք չաբաթ առաջ. Համբարձման տոնի օրը[1] գիշերօթիկները կը ցրվին. իսկ դպրոցն ու դասերը կը շարունակվին մինչև Հունիս 7:

Հառաջիկա տարեշրջանին համար, ինչպես նախարարութիւնը մեզի կը հաղորդե պաշտոնապես, նաև մասնավոր դպրոցներու համար մշակելու վրա է ուսուցչական պարտադիր վճար, որ անշուշտ մեր արդի վճարեն շատ ավելի պիտի ըլլա: Արդեն մենք ինքներս ալ կը հասկըննանք, որ մեր ռոճիկներու կրկնակիումն անգամ հիմա դժվար է պլովս պահելը:

Մյուս կողմեն ալ դժվար է ենթադրել, որ գալ շրջանին Ամերիկայեն մեր ստանալ կրցածը այս տարվան մեր ստացածեն ավելի ըլլա, ուրեմն ամենեն լավատես պայմաններով մոտ 3000 տոլար: Իսկ Ամերիկայեն դուրս մեր ունեցածը աշակերտական վճարներն են և նվերներ, որոնց ընդհանուր գումարը 2000 սիրիականը չանցնիր:

Արդ՝ ճեմարանի վարչութիւնը երեքով երկար խորհրդակցած է և եկած է այն եզրակացութեյան, որ այսքան խախուտ ու փոքր դրամական միջոցներով և հետզհետե ավելի ու ավելի սուղցող կյանքի, պայմաններուն մեջ գալ տարի հնարավորութիւն չունինք գիշերօթիկ պահելու, հնարավորութիւն չունինք նաև ճեմարանի վերին 2-3 կարգերը բանալու. այդ դասարաններուն հիմքը գիշերօթիկներն են և ամենեն ավելի ծախք պահանջող դասարաններն են:

Այդ կրճատումները ընելենետքն ալ, ռոճիկներու կրելիք նոր հավելումներու պատճառով, գալ տարի ալ առնվազն այնքան ծախք պիտի ըլլա, որչափ որ է մեր այս տարվան պյուտճեն, այսինքն տարեկան 12.000 սիրիական թուղթ, որուն դեմ, ինչպես ըսինք, 3000 տո-

լարի հույս կրնանք ունենալ միայն Ամերիկայեն: Հոս մեր բոլոր ծախքերը անմիջական են և հնչուն, միայն հույսով համբա կլլելու չենք համարձակիր:

Այս բոլորը տեղեկացնելով Համազգային ընկերության կեդրոնական մարմինին՝ կը խնդրինք, որ գրեք մեզի, թե կեդրոնական մարմինը ի՞նչ կը խորհի, ինչպե՞ս պետք է վարվի Հայ ճեմարանի վարչության:

Եվ չատ կը խնդրինք, որ պատասխանեք կարելի եղածին չափ շուտով, որ մենք մեր դպրոցական տարեշրջանը լրանալեն առաջ հնար ունենանք իր վերջնական ձևով հարցը մեր ուսուցիչ ընկերներուն առջևը դնելու:

Ստացած ենք չնորհակալությամբ ձեր փոխադրած տասերկու և կես եգիպտական ոսկին, գործադրած ենք ձեր կարգադրության համաձայն:

Հայ ճեմարանի վարչության փոխարեն՝
տեսուչ ճեմարանի՝ Լևոն Շանթ

1942 մայիս 12
Պեյրութ

1943

251. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերության կեդրոնական
մնծարգո վարչության

Սիրելի՛ Համո, տարին իր վերջին կը թևքի և հարկ կ'ըզգանք նախօրոք հառաջիկա տարեշրջանի մասին խորհելու:

Այս տարին կը սահի իր բնականոն ընթացքով: Մեր աշակերտության թիվն է 189 հետևյալ կազմով.

1/ վարժոցի մեկ կարգին մեջ կա 10 աղջիկ և 14 տղա = 24
2/ տարրական նախակրթարանի
չորս պատրաստականներուն մեջ 30 - 56 - =86
3/ բարձր նախակրթարանի
չորս կարգերուն մեջ 16 - 36 - =52
4/ վերի երեք լսարանական

կարգերուն մեջ 15 - 12 - =27

Տարվան վերջը քանի մը հոգի պակսեցավ մեծերեն. կ'երթան ցավով գործի մտնելու հացի համար:

Անցած դեկտեմբերին Ամերիկայեն Հայ կ. խաչի կեդրոնեն սիրիական պետական պանքայի միջոցով ստացանք 3000 տոլար: Այդ գումարով մենք կը փակինք մեր այս տարվան բոլոր ծախքերը մինչև հոկտեմբեր մեկը: Եվ ձեռքերնիս գրեթե բան չի մնար:

Որպեսզի գալ տարեշրջանի մասին հոգալ և հունիսին պայմանավորվիլ կարողանանք և որ մեր ուսուցիչներն ալ ամառը հոգեկան հանգիստ ունենան՝ շատ կը խնդրինք ձեզմե.

1/ անմիջապես ղրկեք մեզի ձեր այս տարվան համար խոստացած 500 եգիպտականը, որու համար նույնիսկ ըսվեցավ, թե արդեն ղրկած եք. մենք դեռ ոչինչ չենք ստացած:

2/ Գրե՛ք մեզի ինչքան կարելի է շուտ, թե հառաջիկա 1943-1944 տարեշրջանի համար եգիպտոսի վրա դեռ ո՞րչափ հույս կրնանք ունենալ:

3/ Գրե՛ք Ամերիկա և ապահովվեք Հայ կարմիր խաչի կեդրոնին նոր քվեարկութիւնը և կարելիին չափ սովորական քվեարկածեն ավելի, որովհետև Ամերիկայի մեր մյուս օժանդակող ընկերութիւններուն նպաստը կանգ է առած, չենք ստանար: Քու ձեռքովդ մեր ղրկած հաշիվներուն համեմատ դեռ 2700 տոլարեն ավելի առնելիք ունինք Հայ կ. խաչի միջոցով, որ ըստ երևույթին անհարմարութիւն ունին կա՛մ գանձելու, կա՛մ ղրկելու:

Մենք մեր գալ տարվան պյուտճեն ալ ձևած ենք մեր այս տարվան իրականութեան վրա. գիտես, որ մեր բոլոր ելքերուն գումարը 18.000 սիրիական էր: Գալ տարվան համար պիտի հաշվել 20.000, որովհետև բացարձակ անհրաժեշտութիւն մըն է ուսուցիչներու ռոճիկին վրա որոշ տոկոս մը նոր հավելում ընելը. արդի պայմաններուն մեջ միայն ճեմարանով ապրող ուսուցիչները անկարող են ծայրը ծայրին բերելու. կանխավճարներով կ'ապրին:

Այդ 20.000-ի դեմ մեր տեղական միջոցներով մենք կրնանք ապահովվել միայն քառորդը, մնացած 15.000-ը կ'ըսպասինք Ամերիկայեն ու Եգիպտոսեն: Եթե այդքանը ապահովվել կարելի չ'ըլլա՝ հարկ կը դառնա մեկ կամ երկու կարգ չբանալ հառաջիկա տարի, որ ծախքերը թեթևին:

Շատ կը խնդրինք, որ շուտով պատասխան մը հասցնեք մեզի, որ մինչև վերջին վայրկյանը անորոշ ու տատանյալ վիճակի մեջ չմնանք:

Ջերմ ու սրտագին բարևներով, Հայ ճեմարանի վարչական մարմնի փոխարեն, տեսուչ ճեմարանի՝ Լևոն Շանթ

1943 ապրիլ 15,
Պեյրութ

252. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերութիւն
մեծարգո պարոն նախագահին

Սիրելի՛ Համո, չնորհակալութեամբ ստացանք նամակդ ու ներփակ 4507 սիրիականի չեքը ճիշդ ժամանակին: Այդ դրամը գրածիդ համաձայն մտցուցինք մեր Հատաջիկա տարվան պյուտճեին մեջ. մեր այս տարվան բոլոր ծախքերը գոցված են, ինչպես արդեն հայտնած եմ քեզի:

Հատաջիկա շրջանի համար ուսուցիչներու հետ բոլոր համաձայնութիւնները տեսնված են արդեն. ուսուցչական ռոճիկները գալի հաւելումի են կրած, ինչպես արդեն ձեզի նախապես գրած էինք: Անշուշտ ամեն ինչ կարգադրած ենք մեր ու ձեր կողմեն գծված 20.000 սիրիականի սահմանին մեջ:

Հունիս 18-ին դասերը դադրեցան. այս տարի ունեցանք հինգ ավարտական: Հիմա նստած ամսավերջի անհրաժեշտ նամակները կը գրեմ: Ամերիկա ղրկելիք նամակիս պատճենը ներփակ կը ղրկեմ քեզի՝ խնդրելով, որ հոտկե ձեր նամակներուն հետ ղրկես Ամերիկա. բան է՝ եթե իմ ղրկած նախագիծս չտանան, գոնե ձեր մէջօդով ղրկվածը ձեռքերնին հասնի, որ մեր հաշիւները չի խճճվին:

Քեզի ու քովիններուդ սրտագին բարևներս, կը սեղմեմ ձեռքդ.
Լևոն Շանթ

1943 Հունիս 30
Պեյրութ

253. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերութ֊յան կեդրոնական վարչութ֊յան, Գահիրե

Սիրելի՛ Համո, Հայ ճեմարանի աշխատանքները սկսած են հոկտեմբերի կեսեն ի վեր: Նոր աշակերտներու խուժումը այս տարի չատ մեծ էր բոլոր դպրոցական հաստատութ֊յուններու վրա. մենք ունինք հիմա 197 աշակերտ, դյուրավ կրնայինք հասնիլ մինչև 250-ի, եթե տեղ ու հարմարութ֊յուն ունենայինք. ստիպված էինք դիմումները ետ տալու:

Ամերիկայեն դեռ ո՛չ լուր ունինք, ո՛չ ալ դրամ. չգիտենք՝ մեր նամակները ստացա՞ծ են, թե ոչ: Հիմա նորեն հեռագրեցինք, դուք ալ դիմեցեք, որ դրամի առաքումը չտապեցնեն:

Ասկե չորս տարի առաջ տեղեկացուցած էին մեզի, որ Քասապլանկայի մեջ նոր մեռած Ավետիք Զաքըրյանը կտակ մըն է ըրած, ուր լուրջ բաժին մը թողած է Հայ ճեմարանին: Իսկույն հետաքրքրվեցանք, կտակին պատճենը ձեռք բերինք և մտադիր էինք Գասպարը Քասապլանկա ղրկելու, բայց քաղաքական դեպքերուն ընթացքը ամեն ինչ տակնուվրա ըրավ[1] և մենք հարմար դատեցինք մեր իրավունքներու պաշտպանութ֊յան լիազորութ֊յունը հանձնել մարոքահայ համայնքի ազգային վարչական մարմնին: Ուրկե ետքը հարաբերութ֊յունները բոլորովին խզվեցան հյուսիսային Աֆրիկեի հետ և մենք իհարկե հույսերնիս կտրած էինք, որ գոնե մոտ ատենին որևէ լուրջ արդյունքի մը հասնիլ կարողանանք:

Եվ ահա՛ հանկարծ նոր ստացանք երկու նամակ՝ մեկը Մարոքի հայ համայնքի նախագահեն և երկրորդը Քասապլանկայի դատական ատյանի փաստաբանեն, որ այդ կտակի մեկ որոշ մասին հարցերը կարգադրված են և մեզի փոխադրված է 300.000 մարոքյան ֆրանք: Դեռ կա հող ու կալված, որոնք պիտի ծախվին և ուր նմանապես մեր բաժինը ունինք:

Տեղին վրա կատարվածն ու կատարվելիքը ստուգելու անչուշտ հնարավորութ֊յուն չունինք հոսկե, թեև խնդրած ենք, որ մանրամասն

տեղեկութիւն տան մեզի և առանց մեր գիտութեան ոչինչ չկատարեն: Իրողութիւնն այն է, որ երկինքեն ինկավ 13.220 սիրիական լիրա և նոր դրամարի մըն ալ հույսը:

Արդ՝ ճեմարանիս վարչութիւնը որոշեց այդ դրամարը պահել առանձին, տեղեկացնել ձեզի իրողութիւնը և մտածենք միասին, թե ինչի՞ վրա և ի՞նչ ձևով գործադրենք այդ դրամարը, ինչպես և եւեւեն գալիքը: Մեր մտածումն է Հայ ճեմարանի չենքին ու հողին հիմնադրամ հայտարարենք այդ կտակը, վրան ավելցնենք հոս և Ամերիկա գտնվող 4-5 հազարը, որ հատկացված է նույն նպատակին և դուցե ձեռնարկենք մնացած մասի հանգանակութեան, եթե քաղաքական պայմանները ներեն:

Միայն թե այսպես վարվիլ կարողանալու համար անհրաժեշտ է, որ Ամերիկայեն մեր հին ու նոր սպասումները ժամանակին հասնին մեր ձեռքը: Եվ երկրորդ, որ Համազգային կեդրոնական վարչութիւնը հանձն առնե, մեր այս տարվան 20.000 սիրիական ոսկիի պյուտճեեն դուրս, մեզի չորս հարյուր եղիպտական ոսկի հասցնել, որ կարողանանք մեր հիմնական ուսուցիչներու ռոճիկներուն վրա անմիջական ու լուրջ հավելում մը կատարել: Անկարելի բան է մեր ձեռքը եղած դրամարը անձեռմխելի մնկ կողմ դնել ապագայի համար, երբ հիմա մեր ուսուցիչներու ծանր դրութիւնը մեր դեմն է: Մեր հիմնական ուսուցիչները գրեթե բոլորն ալ զանձած են արդեն իրենց ստանալիք ռոճիկները մինչև հունվար, իսկ մեր երիտասարդ ուսուցիչներուն աչքը արդեն դուրան է. երեք հոգի դուրան ալ դասեր են հանձն առած ուրիշ դպրոցներու մեջ, բան մը, որ անչուշտ մեր դպրոցական աշխատանքներուն վրա պետք է անդրադառնա, բայց արգելել չենք կրնար մեր արդի վճարած ամսականներով, որուն հետ հիմա կը մրցին թաղականազգային նախակրթարաններուն վճարած ամսականները:

Այս բոլորը տեղեկացնելով Համազգայինի կեդրոնական մարմնիդ՝ կը խնդրինք, որ հայտնենք մեզի, և կարելիին չափ շուտ, թե, ի՞նչ կը խորհիք, հնարավո՞ր է ձեզի համար այս նոր հանձնառութիւնը այս տարեշրջանի համար և թե ինչպե՞ս պետք է վարվիլ այս կտակով մեր ձեռքը հասած գումարին հետ: Մինչև կեդրոնիդ պատասխանը գալը մենք հոս ո՛չ մեկուն չենք հայտնելու այդ կտակ գումարի ներկայութիւնը: Գումարն ու իր գործադրութիւնը կը հայտարարինք հանրութեան միասին:

Ջերմ ու սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1943, նոյեմբեր 10,
Պեյրութ

1944

254. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերության կեդրոնական
վարչության մեծապատիվ նախագահին

Սիրելի՛ Համո, կարգադրած ես, որ ձեր խոստացած երեք հարյուր եգիպտականի արժեքը մենք հոս հանինք փոխառաբար և ձեր հաշվին Հայ ճեմարանի Հող ու չենքին հատկացված դրամեն: Կը կատարինք կարգադրությանդ համաձայն:

Այլև հայտնած ես, որ 1943 հունիսին Գասպարի միջոցով մեզի ղրկած 500 եգիպտականդ Ամերիկայեն մեր հաշվին ստացված 2525 տոլարի արժեքն է: Ո՛չ Գասպարին և ո՛չ ալ նամակով մեզի այդ մասին բան մը ըսած չէիր և մենք ալ բնականաբար այդ գումարը անցուցած ենք մեր գրքերուն մեջ իբրև ձեր 1942-43 և 1943-44 տարեշրջաններու Եգիպտոսի բերած բաժինը, մանավանդ գիտեինք, որ հատուվ հանգանակությամբ ճեմարանի բացառիկ կարիքներուն համար հոտ 5–600 եգիպտականի չափ դրամ պետք է ունենայիք ձեր տրամադրության տակ: Գրքերուն մեջ սրբագրելը դժվար չէ, բայց իրականության մեջ ղրկված ենք հանկարծ 4500 սիրիականե, որ մեր հաշիվներուն մեջ շատ կարևոր տեղ ուներ:

Այս ընթացիկ տարվան համար մեր կազմած նախահաշվին մեջ նախատեսած էինք 21.200 սիրիական ելք. մեր նախատեսության վրա ավելցավ 1800 սիրիական, իբրև տան վճարի օրինական հավելում, նոր նստարաններու ծախքը, տնտեսուհիի ռոճկին շատ զգալի բարձրացումը և քանի մը ավելի մանր հավելումներ. 2500 սիրիական ալ ավելցավ իբրև հիմնական ուսուցիչներուն վճարվելիք երկու ամսական, որով մեր այս տարվան պյուտճեն եղավ իսկապես 25.500 սիրիական:

Այս 4300 ոսկիի հավելումը մեզի վախ չէ պատճառած, քանի որ ուսուցիչներու ռոճիկին հավելումները դուք հանձն առիք 300 եղիպտականի չափով, իսկ մնացած 1500 ոսկիի դեմն ալ մենք ունեինք Ամերիկայեն մեր ստանալիքը, որով ո՛չ միայն այդ բացը կը գոցվեր, այլև 3000 ոսկիի չափ կը մնար մեր հառաջիկա տարվան պյուտճեին համար: Հիմա զրկված ենք ահա՛ գալ տարվան այդ հենարանեն և առնվազն 1500 սիրիականի բացy ունինք այս տարվան պյուտճեին վրա:

Մենք մտադիր էինք հառաջիկա տարվան համար ուսուցչական ռոճիկներուն վրա նորեն հավելում մը ընել՝ Հայ կարմիր խաչին խնդրելով, որ իր 3000-ը վերածե 5000-ի: Հիմա այս նոր վիճակի առջև հարկադրված ենք հրաժարիլ նոր հավելումի մտածումեն, որ անհրաժեշտ էր սակայն, և մեր գալ տարվան պյուտճեն կազմել գոնե մեր այս տարվան եղածին վրա մնալով, միայն 1500 սիրիականի չափ պետք է նոր հավելում մը կատարվի ֆրանսերեն ու արաբերեն լեզուներու համար:

Ուրեմն գալ տարվան պյուտճեին ընդհանուր ելքն է 27.000 սիրիական. այս տարվընե մնացած 1500 պարտքն ալ վրան բարդելով՝ գալ տարի ճեմարանի անհրաժեշտ եղող գումարը կը դառնա 28.500 սիրիական, որուն դեմ սնդուկը ոչինչ չունինք:

Արդ՝ այդ գումարի 11.500 սիրիականը պիտի ջանանք հանել աշակերտավճենեն երրորդ անգամ մըն ալ բարձրացնելով վճարները, ինչպես և նվերներով: 10.000 սիրիական կ'ըսպասինք Հայ կարմիր խաչի կեդրոնեն, որուն հետագրած ենք՝ խնդրելով, որ իրենց 3000 տոլարի հանձնառությունը բարձրացնեն 5000-ի: Մնացած 7000 սիրիականն ալ կ'ըսպասինք Եգիպտոսեն՝ Համազգայինի կեդրոնեն:

1943 սեպտեմբերին քու բերած 300 եղիպտականով վճարած ենք անկե առաջ եղած ձեր բոլոր հաշիվները, իսկ անկե ետքը այլևս Եգիպտոսեն դրամ չենք ստացած: Կ. խաչը իր հանձնառությունները, ինչպես և մյուս հին ընկերություններեն պահածներուն հաշիվները արդեն փակած է: Իսկ այստեղի հասարակական օժանդակության վրա բնա՛վ հույս չունինք:

Այս է վիճակը: Եթե Կ. խաչը և դուք հանձն առնել չկարողանաք մեր խնդրած գումարները՝ անկարելի է նորմալ պյուտճե կազմել հառաջիկա տարվան համար: Անհամբեր կ'ըսպասինք Ամերիկայեն ու ձեզմե

լուրի, որ մեր ուսուցիչներուն հետ խոսիլ կարողանանք. ամենքն ալ նեղ դրութեան մեջ են:

Կը խնդրեմ կարելիին չափ չուտ տեղեկացնես մեզի ձեր հնարավորութիւնը և ձեր որոշումը:

Ջերմ ու սրտագին բարևներով՝ Լևոն Շանթ

1944 մայիս 3
Պեյրութ

Հ.Գ. Ա.Արփիարյանի «Գրականութեան պատմութիւնը» համազգայինի հրատարակած մենք դեռ չունինք: Կը խնդրեմ օրինակ մը ղրկեք:

255. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերութեան կեդրոնական վարչութեան Հարգելի նախագահին

Սիրելի՛ Համո, այս նամակը քիչ մը ուշացուցի, որ ամեն ինչ իր վերջնական ձևը ստացած ըլլա ճեմարանի մեջ ընթացիկ չրջանին համար:

Նախ այս ամառվան ընթացքին հարկադրված եղանք բավական նորոգութիւններ ընելու ճեմարանի չենքին վրա. թե՛ վերի և թե՛ վարի պետքարանները վնասված էին լրջորեն, խոստափել չէինք կրնար: Մեր պզտիկ բակը, որ հող էր, անտանելի փոշի կը բարձրանար պըտսանքներու ատեն և դպրոցը հողով կը լեցներ, հարկ էր խիճով և ձյութով ամբացնել տալ. կեղտոտված էին բոլոր պատերը և կտուրեն չատ տեղեր կը կաթեր. տան տերերը սկզբունքով ոչինչ հանձն չեն առեր: Մյուս կողմեն գիտեինք, որ այս տարի ալ նոր աշակերտներու խուժում է ըլլալու ճեմարանի վրա և ըլլալիք նորոգութիւններեն օգտվելով ուզեցանք անցքերեն մեկը և պատշգամին տակը եղած հարմար անկյունը վերածել երկու դասարաններու: Մեր նախագծով ընդհանուր ծախքը 2500-ը պետք չէ անցներ, որ և կը ծածկվեր ավելցող աշակերտներու բերելիք թոշակովը: Գործնականին մեջ ծախքը կրկնապատկվեցավ, նյութերը օրե օր կը սղին, դժվար կը ճարվին, կը խաբեն, կ՚ուշացնեն.

այդ գումարին մէջն է նաև նոր աշակերտներուն համար անհրաժեշտ եղող նոր նստարաններուն արժէքը:

Մեր աշակերտութեան թիվն է այս վայրկեանիս 235, որուն մոտ մեկ երրորդը աղջիկ է, երկու երրորդը՝ տղա: Եվ արդեն հարյուր հոգիի մը չափ չենք կրցած ընդունիլ տեղ չըլլալու պատճառով: Այս խուժուժը դպրոցներու վրա ընդհանուր է, միայն մերը չէ, բայց անշուշտ զգալի է համակրանքի որոշ հոսանք մը դեպի ճեմարանը:

Նոր հարմարցված երկու սենյակներով՝ մենք հիմա ունինք 14 դասարան. III և IV պատրաստականները ղուշընթացներ ունին. ծրագրային տեսակետեն որևէ փոփոխութիւն չկա. ճեմարանը լրիվ միսեական ընթացք է հայագիտական ու մանկավարժական հավելումներով. տարի մը վարժոց, չորս տարի տարրական նախակրթարան, չորս տարի բարձր նախակրթարան և երեք տարի լսարան. մեր երեք լսարաններու աշակերտներուն թիվը 23 է, տասը աղջիկ և 13-ը տղա:

Ուսուցիչներին թիվն է 23, ես ալ մեջը: Արաբերենի դասերը չատցած են այս տարի և գալ տարի չատ ավելի պիտի չատնան: Կառավարութիւնը կը ծրագրե, որ անխտիր բոլոր լիբանահայատակ դպրոցները ըլլան արաբերեն լեզվով. օտար լեզուները իբրև մասնավոր երկրորդական դասեր: Բարդ խնդիրներ են մեր առջևը, բայց կը հուսանք, որ Հայութեան բացառիկ պայմանները աչքի առաջ ունենալով թույլատրվի մեզի, որ մեր դպրոցները հայերեն լեզվով տանինք: Առայժմ մեր խնդիրքին վրա կառավարութեան կողմե դրկված է միայն մեկ ուսուցիչ մը արաբերենի, որ և կառավարութեան կողմեն կը վճարվի:

Մեր այս տարվան պյուտճեն, մեջը հաշվելով 5000-ի նորոգութիւնները, հասած է 36.000 սիրիականի, մոտ 27.000-ը ուսուցչական վճար է. ես կ'ըսեմ տարեկան 2700 սիրիական, լսարանական ուսուցիչները՝ 1800: Ունինք լրիվ ուսուցիչ, որ 1300-են պակաս ստանա, նույն համեմատութեամբ նաև այցելուները, որոնցմե երկուքը մեր հին ավարտականներն են, հիմա համալսարանավարտ: Մեր ավարտականներն են նաև մեր նախակրթարանական ուսուցիչներեն ինը հոգի:

Աշակերտական թոշակները բարձրացուցած ենք հարյուր ոսկիի անխտիր ամեն աշակերտի համար. լսարաններուն մեջ վճարողները քիչ են, որ ըսել է հանրային օժանդակութեամբ կ'ապրին մեր վերին

կարգերը: Վճարող աշակերտներուն թիվը 176 է, մեկ-երկու հոգի զեղջեր ունին, և քույր-եղբայրները 10% զիջում: Մեր նախահաշվով դանձելու ենք 17.000 աշակերտներեն, 1800 ֆրանսական պետական նպաստն է, 1000 ոսկիի չափ ալ նվեր ու հանդես հաշվելով՝ մենք մեր ջանքերով կը հոսանք 19.000-ը գոցինք. մնացածը խնդրած ենք Համազգայինեն ու Կարմիր խաչեն:

Ամառը շատ սիրալիր նամակով մը Կ. խաչի կեդրոնը հայտնած էր, որ մեր խնդիրքը դժվար թե չընդունվի և խոստացեր էին հնար եղածին չափ շուտով դրամը հասցնեն մեզի, բայց մինչև հիմա ո՛չ լուր ունինք, ո՛չ դրամ ու կը նեղվինք: Ջենք ուզեր ձեռք տալ հող ու շենքի ֆոնդին, որ ինչպես գիտեք ձեր կարգադրութեամբ արդեն 3000 պակսած է. բայց միայն թոշակներու կտորտանքով ծայրը ծայրին բերել չենք կրնար. ամսական 3000 է պետք:

Ասոր համար ալ շատ կը խնդրեմ քեզմե, որ կատարեք ստիպողական կերպով հարկ եղած դիմումները և թուլլատրութիւն ստանաք ձեր կառավարութենեն մեզի դրամ փոխադրելու: Ջեմ կարծեր, որ դպրոցական աշակերտներու ուսման համար ղրկվելիք քանի մը հազարին համար ձեր կառավարութիւնը լուրջ դժվարութիւն մը հանե: Կամ գուցե կարողանայիք հոտկե կարգադրութիւն մը ընել, որ հոս մեզի տեղե մը փոխադրութիւն ըլլար, մինչև որ հոտ թուլլտվութիւնը ստանայիք: Շատ կը խնդրեմ, որ այս մասին հուգա մեր կեդրոնական վարչութեանը և կարելիին չափ շուտ դրամ հասնի մեր ձեռքը:

Ահա՜, սիրելի՛ս, մեր վիճակի ընդհանուր պատկերը: Կը հուսամ, որ առողջութենդ լիովին վերստացած ես: Սիրով կը բարևեմ քեզի և քովիններդ.

Լևոն Շանթ

1944 դեկտ. 8,
Պեյրութ

256. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն:

Կը փութացնեմ այս երկտողը, քեզի իմացնելու համար, որ 1945 փետրվար 28 թվակիր նամակդ առացած ենք. չենք առացած անկե առաջ գրածդ:

Սան-Ֆրանցիսկոյի բարեկամիդ համար ոլբ սան մը ընտրելու առաջարկդ ղրի բնականաբար ճեմարանի վարչության սեղանին վրա. կա՛մ մեր արդի աշակերտներեն, կա՛մ հառաջիկա հոկտեմբերին ըլլալիք դիմումներեն, կ՛ընտրինք արժանի տղա մը: Հիմա անմիջապես ընտրության չանցնանք ավելի հաջող ընտրություն մը ընել կարողանալու համար: Աչնան անմիջապես կը տեղեկացնեմ քեզի մեր որոնումներուն արդյունքը, կը ղրկեմ լուսանկարը և հարկ եղած տեղեկությունները:

Աչքի առաջ ունինք նմանապես քու մյուս թելադրությունդ. Ամերիկայի մեջ մշտական հոգածու մարմին մը ստեղծելու մասին Հայ ճեմարանի համար. արդեն մենք ալ միևնույն դիտավորությունն ու որոշումը ունինք. որոշած ենք մեր վարչության անդամներեն մեկը կատարյալ լիազորությամբ ուղարկինք Ամերիկա այդտեղ Հայ կարմիր խաչի հետ միասին հարկ եղածը տնօրինելու համար. մեզմե մեկուն գալը անհրաժեշտ է, որպեսզի մեր տեղական պայմաններուն, մեր վիճակին ու ապագային կատարյալ ծանոթությամբ այդտեղ տալ կարողանաք ամեն որոշում. և կը կարծենք նաև գործի ավելի լայն հաջողության տեսակետեն: Արդեն երկու տարի առաջ իրագործած կ՛ըլլայինք մեր որոշումը, եթե պատերազմը գոցած չըլլար երթևեկի հնարավորությունները: Հույս ունինք, որ չատ չուտով ճամբա և հնարավորություն պիտի ունենանք մեր ուզածը իրականացնելու:

Կը հուսամ առողջ ես և իհարկե միշտ խրված գործերու մեջ. մենք ալ կ՛երթանք ծուռ ու շիտակ, կ՛ընենք ինչ որ հնար է ընելը մեր անբնական պայմաններուն մեջ: Կը ցանկամ քեզի հաջողություն և առողջություն:

Լևոն Շանթ

1945 Հունիս 4,
Պեյրութ

1946

257. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, խորապես չնորհակալ եմ քեզի քու ցավակցական ու սրտագին տողերուդ համար[1]: Կը տոկամ, սիրելիս, որ չտոկամ ի՞նչ պիտի ընեմ. մի՛ մոռնար, որ ես ինքս ալ 75 տարեկան եմ. և ասիկա մեծ մխիթարութիւն է ինքնին:

Անցնիմ կեանքի ու գործի խնդիրներուն:

Քու գրած տիկին Գարակյոզյանին նման, տիկին Վարդանյան մըն ալ ուզած է փոքր որբ մը որդեգրել և՛ ներկայի, և՛ ապագայի համար: Ճեմարանի վարչութեան համար դժվար է այդ տեսակի հանճնարարութիւններ կատարելը. նախ՝ գտնելը շատ է դժվար, որ հարմար ըլլա ու ցանկացված հատկութիւններով. և երկրորդ ալ՝ շատ ավելի դժվար է պատասխանատուութիւն հանճն առնելը: Խելացի բան չէ հանճնարարել փոքրիկ մը ապագաներու համար, երբ չգիտես, թե երկու-երեք տարի ետքը քու հանճնարարած տղադ ինչ պիտի դառնա: Մենք կրնանք կարծիք մը հայտնել միայն քանի մը տարի մեր հաստատութեան մեջ ուսած ու մեծցած տղոց համար: Եվ այդ չափով միայն կրնանք օգտակար ըլլալ և՛ քու ըսած, և՛ մյուս տիկնոջ: Կրնանք անմիջապես ուշիմ ու չնորհքով աղջիկ՝ մը կամ տղա մը դուրսեն իբրև սան վերցնել ճեմարան տիկնոջ անունով ու տիկնոջ հաշվին. եթե որբ ըլլալը պայման չդրվի՝ կրնանք նաև մեր լավագույն աշակերտներեն մեկը ընտրել: Քանի մը տարի ետքը՝ եթե տիկնոջ սանիկը բնավորութեամբ և կանասիրութեամբ հաջող դեմք մը դուրս եկավ և եթե տիկինը այն ժամանակ ցանկութիւն ունեցավ իր սանը Ամերիկա փոխադրելու, իր բարի կամքը: Գիտեմ, որ ուրիշ հաստատութիւնները այսքան բարակը չեն մաներ և դրամապես ալ ավելի կ'օգտվին, բայց մենք դժբաղդաբար թե բարեբաղդաբար այդ դործին մարդը չենք: Աս է ճշմարտութիւնը, սիրելի՛ս, մեջը անփութութիւն կամ դանդաղկոտութիւն չկա:

Ասոր պես բան մըն է նաև քու հիշած կտակին հարցը: Կտակ մըն է ընդհանուր խոսքերով, ուր չէ նշանակված կտակված արժեքները,

ստացվածքը, ուր քանի մը վիճելի հարցեր կան և չիլ կեցվածք մը իր երկու աղջիկներու հանդեպ: Առանց եղելության քիչ-շատ վերահասու ըլլալու չենք կրնար լիազորություն տալ մեկուն, որ մեր անունով համաձայնություններ կնքե: Մեր վարչության երրորդ անդամը՝ Գասպար Իփեկյան չոստով կը հասնի Ամերիկա. իրեն տված ենք լիազորություն նաև այդ հարցին ընթացք տալու:

Կը մեղադրես մեզի նաև, որ քու տված խորհուրդը Ամերիկայի մեջ մնայուն մարմին մը կազմելու մասին ուշադրության չենք առած: Ինչպե՞ս կրնայինք ուշադրության չառնել, երբ մենք ինքներս միևնույն ուղղությամբ կը մտածեինք: Ո՛չ միայն ուշադրության առած ենք, այլև գործի ավելի հաջողության համար հարկ ենք համարած մեր երեքեն մեկը հոտ ղրկել, որ տեղական բոլոր արտաքին պայմաններուն մոտիկեն ծանոթ, ճեմարանի գոյության ու ձեռնարկներուն անձնապես կապված, ինչպես և մեր մտածումներուն ու ձգտումներուն խորապես տեղյակ, հոտ Կարմիր խաչի կեդրոնական վարչության և մեր գործին համակիր բարեկամներուն հետ համախորհուրդ՝ գլուխ բերեն մնայուն մարմին մը և մշակեն Հայ ճեմարանի նպատակները ավելի լավ վերջով իրագործելու ձգտող ծրագիր մը և աւսոր նյութական հնարավորությունները:

Պարոն Մարտիկյանին չնորհակալության նամակ մը Հայ ճեմարանի վարչության կողմեն անշուշտ որ պետք է գրվի, երբ խոստումները իրագործված ըլլան և մենք գոնվինք պաշտոնապես կատարված իրողության հանդեպ: Հակառակ պարագային հիմա անմիջապես գրելը տեսակ մը իր վիզը փաթթվելու ձև կառնե. բան մը, ուրկե մենք միշտ զգուշացած ենք մինչև հիմա: Ես կ՚ըմբռնեմ, սիրելի՛ս, ամերիկյան իրականությունը և քու տված խորհուրդիդ իմաստը, բայց դժվար չէ ըմբռնելը նաև մեր ավելի արևելյան հոգեբանության քիչիկ մը ավելի զգուշավոր չարժուձևին պատճառը:

Քու հանձնարարություններդ կը կատարեմ. «Հասկել»[2]-ուն կը բաժանորդագրեմ քեզի. մինչև հիմա հրատարակածեն ինչ որ ունին՝ ղրկել կու տամ: Ճեմարանի հրատարակությունները մեծ մասով զատագրքեր են, որ հազիվ թե քեզի համար հետաքրքիր ըլլան. իրեւ գիրք, ինչ որ ունինք, ղրկել կու տամ. արձանագրել կու տամ քեզի բաժանորդ «Ակոս»[3] պարբերականին: Նիկոլի «Գրականության պատմությունը»[4] դեռ ո՛չ լրացած է, ո՛չ արտատպված, կարելի է չոստով մեկ մասը ար-

տատպեն, իսկույն քեզի ղրկել կու տամ: Եթե գրքերը ուշանան՝ գիտցիր որ հանցավորը ես չեմ. բայց տեղեկացո՛ւր ինծի, որ պակասները հոգամ:

Եվ ընդունե՛ իմ ջերմ ու սրտագին բարևներս. ամուր կը սեղմեմ ձեռքդ կարոտով. *Լևոն Շանթ*

1946 Հունվար 25
Պեյրութ

1947

258. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն:

Ուղիղ վեց ամիս առաջ քեզի գրած նամակս[1] իր երկար ճամբորդութենեն ետքը նորեն ինծի վերադարձավ. հասցեիդ թիվը սխալ եմ կարդացեր՝ 8-ի տեղը 4: Նամակս մասնավոր կարևորություն ունեցող բան մը չէր, բայց և այնպես կը ցավիմ, որ ժամանակին ձեռքդ չէ հասած. հիմա արդեն հինցած է: Բայց նույն հասցեով ղրկած եմ քեզի երկերուա առաջին երկու հատորները[2]. մեթե անոնք ալ ձեռքդ չեն հասած. դեռ ետ չեկան ինծի: Իմա՛ց տուր, որ նորեն ղրկեմ, եթե կորսված են:

Ուզած գրքերուդ մասին հարկ եղած կարգադրությունը ըրած եմ իր ժամանակին և Բանյանը քեզի գրած պիտի ըլլա արդեն: Ինչպե՞ս ես, ի՞նչ կ՚ընես, ես հեռվեն հետու միշտ սիրով կը հետևիմ քեզի: Իսկ ես առայժմ ամբողջությամբ զբաղված եմ իմ ճեմարանով և գրքերուա հրատարակության գործով:

Ջերմ ու սրտագին բարևներով կը սեղմեմ ձեռքդ. Լևոն Շանթ

1947 Հունվար 29
Պեյրութ

259. ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ

Համազգային ընկերության կեդրոնական վարչության հարգելի նախագահին

Սիրելի՛ Համո, ասկե երկու շաբաթ առաջ քեզի նամակ մըն եմ ղրկած Փարիզ «Հառաջ»[1]-ի հասցեով. հավանորեն կ'ուզարկեն ետեվեդ: Հարցը ճեմարանի շինութեան համար անհրաժեշտ եղող փոնդը գոյացնելու մասին էր: Բայց խնդիրը դեռ բարի ցանկութիւններու սահմաններուն մէջն էր. ես պարտք համարեցի տեղեկացնեմ քեզի ու քու կարծիքդ ունենամ:

Սակայն այս չաբաթվան դէպքերը ամեն ինչ տակնուվրա ըրին և հարցին տվին սուր ու ստիպողական կերպարանք: Ասկե մոտ ամիս մը առաջ հոս տուն մը վրավ բազմաթիվ մարդկային զոհերով: Մեծ տագնավորութիւն ըրավ ամբողջ քաղաքին վրա և քաղաքապետարանը սկսավ բացառիկ խստութեամբ քաղաքի բոլոր շենքերը քննութենե անցընել տալ և կասկածի ենթակա շենքերը անմիջապես վար առնել տալ:

Շաբաթ մը առաջ մեր տիրոջ և մեր հասցեին հրահանգ եկավ, որ շաբաթվան մը ընթացքին մեր ճեմարանի շենքը պետք է քանդվի. կրնաս երևակայել մեր հուզումը: Անմիջապես վաստաբան, դատարան, վերստին քննութեան պահանջ, հեղինակավոր անձերու դիմում, և ծայրը ծայրին հաջողեցանք վերջին վայրկյանին արդեն սկիզբ առած գործադրութիւնը ընդհատել տալու առժամապես: Քաղաքապետարանը իր վերջնական որոշումը դեռ չէ հայտնած. հավանական է, իրենց արտահայտութիւններեն դատելով, որ երկու-երեք ամիս ժամանակ տան դատական քննիչի տված ավելի մեղմ վկայութեան վրա հենված, մինչև այս դպրոցական տարեշրջանին վերջը:

Ինչպես ալ որ դառնան պայմանները՝ հառաջիկա տարի այլևս այդ շենքը չի կա մեզի համար, մանավանդ որ դրամ ու կապեր ունեցող մեր տան տերը չափազանց շահագրգռված է, որ կարելիին չափ շուտ դուրս պանք և դիմելու վրա է անշուշտ ամեն միջոցի այս հրաշալի առիթեն օգտվելու համար: Հարցը հոն է ասկայն, որ հիմա հոս քաղաքի մէջ ճեմարանի համար քիչ-շատ հարմար շենք մը գտնելը չափազանց դժվար բան է. և եթե գիշ ու աղեկ շենք մը ճարելու ալ ըլլանք՝ պետք է վճարենք մեր արդի վճարածեն չորս-հինգ անգամը ավելի: Տարի մը

կերպ մը կը դիմանանք մեր ձեռքը եղած չենք ու Հողի դրամով, բայց ո՛չ ավելի: Ուրիշ խոսքով՝ կեցած ենք հիմա կա՛մ ճեմարանը ընդհատելու, կա՛մ ճեմարանը փակելու հարկադրանքին դեմ, եթե անմիջապես չդիմենք վճռական միջոցներու և եթե հայ հասարակութիւնը չգա անմիջական օգնութեան:

Հոս մեր պետութեան առաջ իրավատեր եղող և վավերացված խնամակալ մարմինը Համազգային ընկերութեան, որուն մասը կը կազմենք ճեմարանի երեք վարիչներս՝ Նիկոլը, Մովսեսը և ես, ինչպես և մեր իրավական տնօրենը՝ բժիշկ Սամվել Սեմերճյան և որուն մյուս երկու ներկա եղող անդամներն են ընկերներ Հակոբ Տեր-Մելքոնյան և Խոսրով Թյութիւնճյան, աչքի առաջ ունենալով ստեղծված ծանր վիճակը՝ հանեց հետևյալ որոշումը.

Նախ՝ անմիջապես ամեն կողմ փնտրել չենք մը Հառաջիկա տարեշրջանին համար, որ ճեմարանի շարունակութիւնը չընդհատի. պետք է գրենք անխուսափելի հավելում ծախքերը: Երկրորդ՝ այս ամառվան ընթացքին պետք է մարդ ղրկել Եգիպտոս, Ամերիկա, գուցե և Ցրանսա և այլուր Հողի գնման և դպրոցական սեփական չենքի կառուցման համար եղող գումարը գոյացնելու համար, և իսկույն ալ պետք է բարձրացնել չենքը ու մեջը մտնել: Ամերիկա երթալու պարտավորութիւնը նորեն դրվեցավ իմ վրաս, ուրկե խուսափելու հնարավորութիւնը այլևս բնավ չունիմ. պիտի ընեմ ինչ որ կրնամ՞:

Այս մասին խնամակալ մարմինը իսկույն գրելու է Ամերիկայի մեր ղեկավար ընկերութեան՝ անոնց աջակցութիւնը խնդրելով: Իսկ Համազգային կեդրոնին եղած վիճակը տեղեկացնելու պարտավորութիւնը դրվեցավ իմ վրաս, ինչ որ ահա՛ կը կատարեմ: Ճեմարանի խնամակալ մարմինը իր այս որոշումները առնելուատեն մեծապես կը հուսա ու վստահ է, որ Համազգայինի մեր կեդրոնական մարմինը պիտի ընե թե՛ Եգիպտոս և թե՛ այլուր իր հնարավորը, որ կարելի եղածին չափ չոտ ու լուրջ արդյունքի մը հասնիլ կարողանանք և այսքան տարիներե ի վեր մեր ուզած և ընել չկրցածը վերջապես դլուխ բերենք, երբ դանակը հասած է արդեն ոսկորին:

Մեզի ու մեր մյուս ընկերներուն, ինչպես և Ռուբինայինի սրտագին բարևներս. *Լևոն Շանթ*

1947 փետրվար 12
Պեյրութ

1948

260. ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Ընկեր Լևոն Տեր - Մաթևոսյանին

Սիրելի՛ ընկեր, կը խնդրիմ բարի ըլլաք ու ներփակ նամակը հանձնեք Ձեր ձեռքովը տիկին Էժենի Նշանյանին:

Դուք որ այսքան սրտանց ու ազնվորեն ջանացիք տիկինն ու մեզի անձնական ծանոթության մեջ դնել և տիկնոջ նվիրատվության դյուրություն ընծայել[1], վստահ եմ, որ սիրով պիտի կատարեք նաև այս փոքրիկ հանձնարարությունս:

Ուրախությամբ կը հայտնեմ Ձեզի չնորհակալությունս այդ բոլորի փոխարեն և ջերմորեն կը սեղմեմ Ձեր ձեռքը:

Լևոն Շանթ

1948, նոյեմբեր 14
Պոսթըն

1949

261. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սիմոն, Լոս Անճելեսի մեջ Հայ ճեմարանի նպաստին արարողությունը կատարվելու է փետրվար 20-ին, Ցրեկնոյի մեջ փետրվար 27-ին. մարտ 2-ին կու գամ Սան-Ֆրանցիսկո և հոս ալ երեք նույն արարողությունը պիտի կատարինք մարտի 6- ին: Ահա այս է իմ օրացույցս, իսկ թե հոս եղած միջոցիս ի՞նչ եմ ընելու. և ինչպես՝ ատիկա դուն և մեր այդտեղի ընկերները ամենեն աղնիվ պիտիք. հասած ես կը խորհրդակցինք:

Ես հիմա քեզմե ուրիշ խորհուրդ մը պիտի հարցնեմ: Պիլրութենն ընկերներս կը ցանկան, որ ատիթեն և ընդհանուր տրամադրութենեն օգտվելով անցնիմ նաև Հարավային Ամերիկա[1]: Դուն այդ կողմերը

եղած ես ու անձամբ կը ճանչենաս մարդիկն ու պայմանները[2]: Արդ՝ կը խնդրեմ, որ գրես ինծի ամենեն առաջ քու կարծիքդ՝ արժե՞ որ երթամ. և անկե ետքը տաս ինծի հետևյալ տեղեկութիւնները:

Ո՞ր քաղաքները պետք է երթալ. կա՞ն այդ քաղաքներուն մեջ կոտակցական և Հայ օգնութեյան կազմակերպութիւններ: Այդ քաղաքներուն մեջ մեր ո՞ր ընկերներու աչխատակցութեյան վրա հենվիլ խորհուրդ կու տաս ինծի:

Մեր մարմիններեն որո՞նց հասցեները ունիս, որ ինծի տալ կարողանաս: Ի՞նչքան ժամանակ բացարձակապես անհրաժեչտ է, որ ես թափառիմ այդ կողմերը. կլիմայական տեսակետեն մայիսի կեսերեն հունիսի կեսերը հարմա՞ր ժամանակ է: Եվ վերջապես քու հաչիվներովդ հաջող ու անհաջող պարագաներուն ո՞րչափ դումար կը կարծես, որ գոյացնել կարողանամ:

Ահա՛, Սիմո՛ն ջան, գիտեմ, որ սաստիկ պարապ մարդ ես, քիչ մը գբաղվե՛ այս հարցերով ու գրե՛ ինծի:

Իսկ եթե քու կարծիքդ երթալուա համար դրական ըլլա՝ մոտդ եղած ատենս չատ ավելի մանրամասն կերպով կը խնդրեմ քու օգնութեյունդ:

Առայժմ ջերմ ու սրտագին բարևներս. Լևոն Շանթ

1949 փետրվար 7
Ֆրեզնո
Կը պատասխանիս «Ասպարեզ»[3]-ի հասցեով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՍԵՎԱԳԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ

1. ՋԱՒՐԻԵԻՆ

1930 ապրիլ 23

Յարգելի բարեկամս Պարոն Զաւրիեւ,

Ներփակ պիտի գտնէք 8000 ֆրանքի չէք մը որ փոխադրած եմ ձեր անունին: Այդ գումարէն 2000 ֆրանքը ձեր տպարանին[1] ունեցած պարտքիս կէսն է. անցուցէք իմ հաշուին. ես անձնապէս ձեր տպարանին դեռ վճարելիք կը մնամ 2000 ֆրանք:

Չէքի մնացած 6000 ֆրանքը կը փոխադրեմ ձեզի Համազգային ընկերութեան կողմէ ձեր տպարանին մէջ երկու գրքի տպագրութեան ի հաշիւ: Գրքերէն ամէն մէկը 8 տպագրուած թերթ է ըլլալու, ուրեմն ընդամէնը 16 տպագրական թերթ. պէտք է տպագրուի չնորհքով թղթի վրայ իւրաքանչիւր գրքէն 2000 օրինակ. չարուածքի լայնքը $11^3/_4$, երկարութիւնը $15^1/_2$, 10 պունտօ տառերով, այսինքն իմ «գրաւոր դասերու» չափովը եւ տառերովը:

Այս պայմաններով գրքի մը հրատարակութեան համար՝ բոլոր ծախքերը մէջ հաշուած՝ դուք նշանակած եք ինծմէ եւ Վրացեանէն 2000 պենի [?] 500 ֆրանք իւրաքանչիւր տպագրական թերթի: Ես իմ հաշիւներուս մէջ ձեր այդ պահանջումն եմ առաջնորդուած. բայց եթէ հիմա դուք հնար ունիք բան մը աւելի զեղչելու Համազգային ընկերութեան իբրեւ նուէր, որը ասկէ ետքը յաճախ գրքեր է տպագրելու ձեզ մօտ, բնականաբար ընկերութիւնը չնորհակալ կը մնայ ձեզի:

Ուրեմն թերթը 500-ի հաշուով, 16 տպագրական թերթի համար Համազգայինը վճարելու է 8000 ֆրանք, որուն 6000 ը ահա՛ ղրկած եմ ձեզի, իսկ մնացած 2000ի չափ գումարն ալ տպարանդ կ'ըստանայ Համազգայինի գրքին տպագրութիւնը աւարտելուն պէս:

Յուլիսի սկիզբները Համազգայինը ընդհանուր ժողով ունի եւ չատ կը ցանկայինք, որ գրքերու տպագրութիւնը արդէն աւարտած ըլլար մինչեւ այդ ժամանակ եւ ընկերութեան հրաւիրած [ժողովին] առջեւ այդ 2 հատորները մեր սեղանին վրայ ըլլար: Ես գիտեմ, որ եթէ կամիք, հասցնելը անկարելի չէ:

Վստահ եմ, որ թուղթի, չապիկի, վերնագիրներու ընտրութեան եւայլնի համար ոչինչ չէք խնայեր հրատարակութիւնը գեղեցիկ ու

գրաւիչ դարձնելու համար. թէ մեր ընկերութեան եւ թէ ձեր տպարանին անունը կը պահանջէ ասիկա:

Շարաւածքին առաջին սրբագրութիւնը կատարել տուէք ձեր մօտ, միայն ուշադրութիւն [?] հայերէնին ծանօթի եւ ուշադիր մէկու մը ձեռքով. երեսները կապելէ եառք երկրորդ սրբագրութիւնը ուղարկեցէք ինծի եւ մինչեւ իմ ստորագրութիւնս չունենաք մամուլին մի՛ յանձնէք: Գործը արագացնելու համար սրբագրութեան փորձերը կրնաք ուղարկել օդային պոստով. ես իմ մօտս չեմ ուշացներ եւ նոյն համբով կը վերադարձնեմ ձեզի:

Այս նամակիս հետ առանձին ծրարով պոստին կը յանձնեմ ձեր հասցէին առաջին գրքին ձեռագիրի մէկ մասը. գրկածս մօտաւորապէս մէկ երրորդ մասն է գրքին:

Հեղինակի անունէն եառքը, տակի հրահանգներուն անցնելէն առաջ միշտ տող մը բաց ձգուի (ես գրած եմ = երկու գիծ):

Հրահանգներուն եառեւը, նոր թերթ սկսելէ առաջ նորէն բաց տեղ թողնուի, տող մը կամ երկու. եւ կամ վոքրիկ զարդագիծ մը (հանգիստ ու յստակ տպատրութիւն ընէ):

Թէ օրինակներու եւ թէ տակի հրահանգներու տողերը խիտ չըլլան եւ երեսներուն թուահամարը դրուի էջերուն տակը՝ աջ ու ձախ անկիւնները, այնպէս ինչպէս գրաւոր դասերուն մէջն է:

Ընդունեցէ՛ք, յարգելի բարեկամս, իմ ջերմ եւ սրտագին բարեւներս:

1. Խնդրոյ առարկայ տպարանը կը գտնուէր Փարիզ (Ե.Փ.): Միայն այս սեագիր նամակում է Շանթը տպարանի տնօրենի (իր բառով՝ վարիչի) ազգանունը գրել Ջաւրիեւ ձեւով, որը ճիշտ ձեւն է: Մնացած բոլոր դեպքերում օգտագործված է Ջաւրեւ ձեւը (Ա.Մ.):

2. ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻՒՆ

1930 մայիս 26

Սիրելի Կարօ,

Ես մինչեւ հիմա քեզի ոչինչ չգրեցի մեր անցած տարուան խորհրդակցութիւններու մասին, որովհետեւ ամբողջապէս կլանուած

էինք գործը ուռքի հանելու աշխատանքներով: Հիմա, սիրելի՛ս, մեր Հայ Ճեմարանը իրականութիւն մըն է եւ երեք ամիսէ ի վեր կանոնաւոր կը բանի: Մենք մէկ կողմէն օրը օրին կ'աշխատինք, միւս կողմէն ալ կը պատրաստուինք յառաջիկայ տարեշրջանին համար, որ իսկապէս ըլլալու է մեր դպրոցի առաջին տարին: Այսօրուան պոստով կը ղրկեմ քեզի Հայ Ճեմարանի ծրագիրն ու յայտագիրը: Յառաջիկայ տարի ունենալու ենք չորս դասարան՝ պատրաստական կարգը եւ երեք առաջին դասարանները:

Եւ քեզմէ կ'ըսպասենք, սիրելի՛ս, երկու տեսակի օգնութիւն: Նախ ինչ կը վերաբերի ուսուցչական կազմը ամբողջացնելուն. մեզի պէտք է հայերէնի ուսուցիչ մը, ֆրանսերէնի Հայ ուսուցիչ մը եւ մաթեմաթիկի ու բնագիտութեան ուսուցիչ մը. այդ երեքն ալ օրական 3-4 ժամ դասով, տարեկան 180 ոսկի վճարով. այդ մասին գրած եմ նաեւ Շաւարչին[1]. կը գրեմ քեզի ալ եւ եթէ հետաքրքրուին եւ մօտէն անուն մը կրնաս մատնանիշ ընել, գրէ՛: Միայն դրամ ստանալու համար, լոկ իբրեւ հացի խնդիր եկող չենք ուզեր. եկողը պիտի ուզէ մեզի հետ միասին լծուելու Հայ Ճեմարան մը բարձրացնելու գաղափարին, տեւականօրէն կապուելու եւ սրտի տէր մարդիկ կը փնտռենք, վստահելի:

Հայերէնի համար մենք վճռած ենք դիմել Համաստեղին. այսօր գրելու եմ իրեն ամեն բան պարզ դնելով եւ հրաւիր[րե]լով այս աշունէն մեզի աշխատակցելու. դուն ալ քու կողմէդ գրէ՛. խօսէ՛ նաեւ այդ մասին մեր սիրելի նկարչին հետ: Եթէ Համաստեղը յանձն առնէ՝ շատ աղուտր ուժ մը կ'ըլլայ մեր դպրոցին համար, սիրելի ընկեր մը անձնապէս մեզի եւ կը կարծեմ իրեն համար ալ կ'ըլլայ գրական բացառիկ նպաստաւոր միջավայր մը: Ներփակ նամակով, ինչպէս խօսած ենք մենք մեր մէջը անցած տարի, կը հրաւիրեմ Եղիա Գասպարեանը նկարչութեան իբրեւ ուսուցիչ:

Քեզմէ սպասած օգնութիւնս սակայն գլխաւորապէս հայրենակցական միութիւններու կողմէն Ճեմարանին սաներ ուղարկելուն կամ այլ կերպով օժանդակութեան կը վերաբերի: Մինչեւ հիմա պիտած չենք ոչ-ոքի. կ'ուզէի դպրոցին ծրագիրը նախ աւարտած ըլլար եւ միասին ղրկէի: Հիմա արդէն ժամանակն է:

1- Ես այսօր-վաղը նամակ եմ գրելու պաշտօնական Նիւ-Եորք՝ Տիգրանակերտի հայրենակցական միութեան, այլ եւ նամակ մը ընկ.

Յով. Երէցեանին. կը խնդրեմ որ դուն ալ Հոակէ գրես իրեն ուժ տալու համար ինծի:

2- Գրես քու կողմէդ Ամերիկա Տարօնի Հայրենակցական միութեան, ինչ ձեւով որ յարմար կը գտնես եւ ինչպէս ինքդ ըսած ես ինծի. այլ եւ յայտնես ինծի, թէ պաշտօնապէս ես որո՞ւ գրեմ եւ ի՞նչ ձեւով:

3- Այդ երկու Հայրենակցական միութիւններէն զատ, դուն ուրիշ որո՞ն քով անձամբ կրնաս օգտակար ըլլալ. (Մասնաւորապէս Մալաթիայի Հայրենակց. միութիւնը աչքի առաջ): Ես գրելու եմ Ամերիկա Օգանեանին, այդ ուղղութեամբ իր օժանդակութիւնը եւ հասցէները ուզելով. գուցէ դուն ուրիշ օժանդակ մըն ալ կրնաս մատնանիշ ընես կամ ուրիշ ճամբայ մը: Այս մասին գրելու եմ նաեւ Սիմոն Վրացեանին:

Կը խնդրեմ, սիրելի՛ս, չարժուելու առանց ժամանակ կորսնցնելու եւ ինծի ըրածէդ տեղեակ պահես:

Ազբալեանի եւ իմ սրտագին բարեւները քեզի եւ քովիններուդ:

1. Շաւարշ Միսաքեանին

3. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԷՑԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Յովհաննէս Երէցեան,

Ձեզի կը ճանչնամ ընկեր Կարօ Սասունիի միջոցով: Եւ կը գրեմ ձեզի իր յանձնարարութեամբ:

Անցած տարի, երբ նոր կը ձեռնարկէինք Հայ Ճեմարանի մը բանալու ծրագրին, Տիգրանակերտի Միութեան կողմէն տասը աշակերտ Ճեմարան դնելու հարցը կար մէջտեղը:

Ես ձեզի գրել չուզեցի քանի որ Ճեմարանը դրուած չէր հաստատ եւ օրինական հիմքերու վրայ: Հիմա արդէն հաստած է ժամանակը: Այս նամակին հետ միաժամանակ ըրած ենք պաշտօնական դիմում Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան կեդրոնական վարչութեան անունով. եւ խորապէս համոզուած ենք, որ դուք եւ թէ՛ ձեր պաշտօնակից ընկերները չէք խնայելու ձեր աջակցութիւնը մեզի ու մեր առաջարկին:

Արդիօք կ'ըլլան այն տասը աշակերտները, թէ ձեր կողմէն նշանակուած ուրիշները, թէ ձեր ընտրանքով նորերը, անշուշտ ձեր գիտ-

նալիք բանն է: Ճեմարանի ղեկավարներու ուշադրութեան արժանի կէտերէն մին ալ ասիկա է, որ ձեր եւ ձերինի նման քանի մը հայրենակցական միութիւններու հետ մշտական կապի ու գործակցութեան մէջ ըլլանք, քանի որ դուք ալ, մենք ալ նոյն նպատակին կը ձգտինք. դուք ձեր դրամական միջոցներովը հասնիլ կ'ուզէք այն նպատակին, որուն համար մենք եկեր ենք հոս ու կ'աշխատինք. բնական կերպով գործակիցներ ենք իրարու եւ ինչքան խորը ըմբռնենք այս ճշմարտութիւնը երկու կողմէն, այնքան գործը կը չահի:

Ընդունեցեք, յարգելի պարոն, սրտագին բարեւներս:

1930 յունիս 3

4. ՀԱՄԱՍՏԵՂԻՆ

Սիրելի՛ Համաստեղ,

Կը ցաւիմ որ անկարող եղաք գալու եւ աւելի մօտէն տեսակցելու [?]: Եւ հիմա ինծի կը հարցնեք, թէ գոնէ հեռուէն ինչ ձեւով կրնաք օգտակար ըլլալ Հայ Ճեմարանին: Այդչափ հեռուէն Ճեմարանին օգտակար ըլլալու միայն մէկ ձեւ կայ. ձեր շրջանին մէջ, որու վրայ որ ձեր խօսքն ու խորհուրդը ազդեցութիւն ունի, գտէք անձեր, որոնք ցանկան Հայ Ճեմարանին մէջ որդեդիրներ պահել:

Լիբանանէն, Սիրիայէն, Կիպրոսէն, նոյնիսկ Հեռաւոր Ծրանսայէն նամակներ կ'ընտանեք ուսման ծարաւ պատանիներէն, որոնք կը խնդրեն կ'աղաչեն Ճեմարան ընդունուիլ առանց վճարի, ապագային փոխարինելու, կամ ուղղակի հայ ժողովուրդին կամ հայ գրականութեան նուիրուելու խոստումներով: Ճեմարանն ո՛չ ոքի անվճար ընդունիլ կարող չէ, բայց կողմնակի մարդիկ եւ հաստատութիւններ կրնան մեծ դիւրութեամբ հոգալ անոնց վճարը: Տեղի երթեւեկ աշակերտի մը ուսման վճարն է 44 ոսկի տարեկան, իսկ գիշերօթիկ աշակերտի մը ինը ամսուան լրիւ ապրուստի եւ ուսման վճարն է տարեկան մօտ 200 ոսկի: Յանձնառու եղողը բնականաբար յանձն է առնելու մինչեւ տղուն կամ աղջկան աւարտելը, այսինքն միջին հաշուով 5 տարի:

Ահա՛, սիրելի՛ս, եթէ կարողանաք գտնել քանի մը անձ, որոնցմէ ամէն մէկը ուզեց այդ տեսակ մէկ-երկու պատանիներու ծախքը հոգալ, ըլլա՛յ իբրեւ երթեւեկ, ըլլայ իբրեւ գիշերօթիկ, կատարած կ'ըլլաք չատ

թանկագին գործ մը անձնապէս այդ պատանիներուն եւ անոնց ապագային համար, օժտած կ'ըլլաք Հայ ժողովուրդին քանի մը Հայ Հոգի ու լաւ զարբնուած մտաւորականներով, ուրիշ խօսքով՝ չատ գնահատելի չափով մը գործակցած եւ աջակցած կ'ըլլաք գոնէ հեռուէն մեր կատած աշխատանքին:

«Այս տարի» ինչպէ՞ս ընդգծած էիք, թող այս ըլլայ ձեր աշխատակցութիւնը, ինչ չափով որ կրնաք:

Ընդունեցէք սրտագին բարեւներս:

Օգ. 6, 1930

Պհամտուն

5. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

Օգոստ. 27 1930

Յարգելի պարոն Խորասանճեան[1]*,*

Անշուշտ անտեղեակ չէք, որ Եգիպտոսի Համազգային կրթական եւ հրատարակչական ընկերութեան ձեռնարկութեան եւ Ամերիկայի Հայ կարմիր խաչի օժանդակութեամբ այս Փետրուարին հիմնուած է Պէյրութի մէջ Հայ Ճեմարան մը պարոն Նիկոլ Ագպալեանի եւ իմ վերակառուցման տակ:

Հայ Ճեմարանի առաջին ընդհանուր նպատակն է հասցնել ամէն ասպարէզներու համար նոր սերունդ մը միջնակարգ լուրջ կրթութեամբ, հայ լեզուով եւ Հայ Հոգիով: Իր երկրորդ մասնաւոր նպատակն է հասցնել հայագիտական ու մանկավարժական լուրջ պաշարով հայ ուսուցիչներ ամէն կողմ ցրուած գաղութներուն մէջ հայ ոգին, հայ լեզուն եւ հայ քաղաքակրթութիւնը պահպանելու համար:

Այս նամակիս հետ թղթատարին կը յանձնեմ ձեր հասցէով Հայ Ճեմարանի ուսման ծրագիրն ու յայտագիրը:

Անցած կիսամեակին տարուան կէսն էր արդէն եւ միայն մէկ դասարան մը բացինք, որ լրիւ ծրագրով ու կանոնաւոր կերպով աշխատեցաւ մինչեւ վերջնական տարուան վերջը: Յառաջիկայ Հոկտեմբերին պիտի բացուի չորս դասարան, այսինքն Ֆրանսական լիսէներուն առաջին կէսը. եւ անկէ հետը տարուէ տարի յաջորդ կարգերը: Մեր

դպրոցը երկյարկանի գեղեցիկ ու առողջ չէնք մըն է, քաղաքի լաւագոյն թաղին մէջ. եւ տեղական կառավարութեան եւ ֆրանսական բարձր կոմիսարութեան կողմէն ճանչցուած ու վաւերացուած:

Դպրոցին յառաջիկայ տարուան պիտճէն 300.000 ֆրանք. այդ ահագին գումարը մենք ծայրը - ծայրին հաղիւ կրնանք գոցել, եթէ Համազգայինի տուած օժանդակութեան կից գիշերօթիկներուն թիւը 26-ը անցնի եւ բոլոր աշակերտները անխտիր ըլլան վճարովի:

Բայց Սիւրիայէ, Պաղեստինէ, եւ Իրաքի այլ կողմերէն շատ մը պատանիներ, մեծ մասով որբեր, կամ գրեթէ որբեր, չքաւոր ծնողներու զաւակներ, կը դիմեն մեզի խնդրելով որ ընդունինք ձեմարանը ձրիաբար: Ճեմարանը առայժմ, ինչպէս ըսի, անկարող է ձրի աշակերտ պահելու, մանաւանդ գիշերօթիկ, միւս կողմէն սակայն ճիշդ այդ ուսումնածարաւ ու հաւատալից, որբ ու զուրկ պատանիներն են, որոնց մասին պէտք է ամենէն աւելի մտածուի, որոնք ամէն տեսակէտէ արժանի են եւ իրաւունք ունին Հանրային Հոգածութեան եւ որոնցմէ նաեւ հեռզհետէ ընտրուելու են գլխաւորապէս մեր հասցընել ուզած հայագէտ ուսուցիչները: Այս մտածումով է, որ մենք ինքներս կը ջանանք գտնելու անոնց փոխարէնը վճարող անձեր կամ հաստատութիւններ, որոնք այդ տղաքը որդեգիր վերցնեն: Խումբ մը վերցուցած է արդէն Ամերիկայի Հայ կարմիր խաչը: Բայց պահանջը շատ աւելի մեծ է: Ինչ ըսել կ'ուզէ, որ խումբ մը կամ նոյնիսկ հատ մը՝ աշակերտին վճարին 4-5 տարով ապահովուիլը, միեւնոյն ժամանակ ուղղակի օժանդակութիւն մըն է Հայ Ճեմարանի ամրացմանն ու բարգաւաճմանը նպաստող:

Ես գիտեմ, պարոն Խորասանճեան, թէ միջնակարգ վարժարաններ բանալու Հարցը որքա՜ն զբաղեցուցած է ձեր միտքը. գիտեմ նաեւ թէ որքան մօտիկ է ձեր սրտին Հայ լեզուի ու քաղաքակրթութեան պահպանումը մեր գաղութներուն մէջ, եւ ատոր Համար ալ չի պիտի զարմանաք անշուշտ, որ դպրոցական վարչութեան անունով ամենէն առաջ կը դիմեմ ձեզի, իբրեւ անհատի, վստահ որ ձեր օժանդակութիւնը չի պիտի խնայէք այդ պատանիներուն: Ես խորապես կը հաւատամ, որ պիտի ցանկաք օգնել մեզի մեր այդ Հանրային ձեռնարկի տեւականութիւնը եւ յաջողութիւնը ապահովելու Համար, ձեր յարմար դատած ուրիշ ամէն միջոցներով:

1. Շանօթ մեծահարուստ եւ բարերար անձնատրութիւն:

6.ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻՆ

Սիրելի Կարօ,

Տաք նամակիդ համար չատ ուրախ եմ. չնորհակալ եմ քեզի, Հայ Ճեմարանի վարչութեան կողմէ նաեւ քու յօդուածներուդ համար «Յառաջին» մէջ:

Դուն ինչպէ՞ս պիտես ես յոյս դրած եմ քու օժանդակութեանդ վրայ Ամերիկայի Հայրենակցական միութիւններուն կողմէ աշակերտներ որդեգրել տալու խնդրին մէջ: Ուրախ եմ, որ դրած ես Տարօնի Հայրենակցական միութեան: Ես դիմած եմ Տիգրանակերտի, Խարբերդի եւ Մալաթիոյ Հայրենակցական միութիւններուն: Սեբաստիային որո՞ւ անունով կամ մի՞ջնորդութեամբ դիմեմ, կրնա՞ս վստահելի անուն մը տալ: Բայի Տարօնի Հայրենակցական միութենէն, դուն ուրիշ միութեան դիմա՞ծ ես, որո՞ւ կամ կրնա՞ս դիմել, որո՞ւ. մի՛ ուշացներ, դիմէ՛: Եւ ինծի ալ յայտնես, որ ես ալ իմ կողմէն պաշտօնապէս դիմեմ, եթէ խորհուրդ կուտաս: Եթէ պէտք է որ Տարօնի Հայրենակցական միութեան դիմեմ, պրէ՞ ինծի:

Ներփակ Ահարոնեանի նամակս. կը խնդրեմ հնար եղածին չափ չուտ հասցնես հասցեին. ես իր հասցէն չգիտեմ. կ'ըսեն Նիս է: Հոս անշուշտ գիտցող կ'ըլլայ: Օհան Կարոն անշուշտ գիտէ:

Իրեն յանձնէ եւ Եղիշի նամակը. եւ ընդունէ իմ ջերմ ու սրտագին բարեւներս քեզի ու քովիններուդ:

1930 օգոստոս

Պհամտուն

7. ՄԻՐԻՃԱՆ ՕՋԱՆԵԱՆԻՆ

1930 Սեպտ. 10, Պհամտուն

Սիրելի ընկեր Մ. Օզանեան,

Խորին շնորհակալութիւնս ձեր նամակին ու խորհուրդներուն համար, ուրիէ կը տեսնեք, որ անմիջապես կ'օգտուիմ:

Կը խնդրեմ որ ներփակ չորս դիմումները հասցընէք իրենց հասցէին, ինչպէս եւ մէկ-երկու օրէն ձեր անունով ղրկելիք Հայ Ճեմարանին ծրագիրները:

Կը գրեմ չուտով նաեւ ձեր յիշած միւս հայրենակցական միութիւններուն: Անճամբ Ամերիկա անցնելու ծրագիրը անշուշտ ունինք նաեւ մենք, բայց հիմա անմիջապէս ատիկա անկարելի է. այլեւ կը ցանկանք, որ գործը ինքզինքը անգամ մը ցոյց տայ եւ վստահութիւն պարտադրէ:

Սրտագին բարեւներով կը սեղմեմ ձեր ձեռքը:

8. ՉԱԻՐԵԻՆ

Սիրելի Պարոն Չաւրեւ,

Կը վերադարձընեմ ձեզի ա. գրքի սրբագրութիւնները. արդէն երկրորդ անգամ ինծի ղրկելու կարիք չկայ. միայն կը խնդրեմ, որ ըրած սրբագրութիւններուս մասնատոր ուշ դարձնէ սրբագրիչը:

Նիւթէն զեղչած եմ վերջին յօդուածը, որով գիրքը կը դառնայ ուղիղ 144 երես, այսինքն ինը տպագրական թերթ:

Շապիկի վրայ կը տպագրեք ներփակ թղթի համեմատ, ուրիշ ոչինչ:

*Կը խնդրեմ իսկոյն տպագրել տաք, եւ **անմիջապես** պոստային կապոցներով ուղարկել մեզի 100 օրինակ, մնացածը կրնաք ղրկել իբրեւ ապրանք, նորէն դպրոցի հասցեով իմ անուն[ի]ս:*

Վաղը կ'ուղարկեմ ձեզի բ. գիրքի նոր նիւթը, եւ չատ կը խնդրեմ անմիջապես տպել տաք, որ գոնէ առաջին մէկ-երկու թերթերը կարենանք դպրոցին մէջ օգտագործել:

Ջերմ ու սրտագին բարեւներով

Հոկտ. 2 1930, Պէյրութ

9. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՏՈՆՑԻՆ

Սիրելի՛ Ատոնց,

Քեզի մինչեւ հիմա չեմ գրած, բայց կը յիշենք քեզի Աղբալեանի հետ չատ յաճախ եւ չատ առիթներով:

Մեր գործը արդէն ոտքի ելաւ. Հայ Ճեմարանը արդէն լուրջ իրականութիւն մըն է այլեւս. Պէյրութի ամենէն լաւ թաղին մէջ, օդասուն երկյարկանի շէնք մըն է մեր պարտցը. այս տարի ունինք վեցի առաջին չորս կարգերը. 60 աշակերտ ունինք այս վայրկեանին՝ աղջիկ ու տղայ կէսսուկէս եւ 12 հոգինոց ուսուցչական ընտիր մարմին մը. առանձին շէնքի մէջ են եւ առանձին վարիչի եւ իր կնոջ խնամքին տակ գիշերօթիկի բաժինն է. 11 հոգի է գիշերօթիկներուն թիւը: Բոլոր նշաններէն զգալի է, որ գործը մեծնալու է տարուէ տարի եւ Հասարակութեան Համակրանքին արժանանալու օրէ օր աւելի. այդ յոյսով ալ ամեն զոհաբերութեան կը դիմադրենք Նիկոլն ու ես. բոլոր արժէքաւոր գործերը հիմք կը բռնեն ու կ'արգասաւորին պրկանքներու եւ յարատեւութեան գնով:

Յոյսերնիս ալ դրած ենք մեր գիտակից եւ օգնելու կարող ընկերներու ձեռնտուութեան եւ օժանդակութեան վրայ, որոնցմէ մէկը դուն ես, միւսը Աբրահամը: Քեզմէ սպասածնիս, դու գիտես, մէկ քու սրտագին համակրանքն է ու բարոյական աջակցութիւնը: Աբրահամէն սպասածնիս թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական:

Աբրահամի հասցէն չգիտեմ. իր նամակը կը ղրկեմ քեզի, ինչպէս եւ մեր պարոցի ուսման ծրագիրը. կը յանձնես իրեն, եւ կը բացատրես իրեն մեր ձեռնարկի ոգին եւ նպատակը քիչ մը աւելի մանրամասն, ինչ որ արդէն քեզի քաջ ծանօթ է, եթէ հարկ ըլլայ:

Կը յուսամ գոնե այս առիթով կ'ըստանամ քեզմէ քանի տող: Յաջողութիւն աշխատանքներուդ եւ առողջութիւն. բարեւներս տիկնոջ եւ քեզի:

1930, Նոյ. 9

10. ԱԲՐԱՀԱՄԻՆ

Սիրելի՛ Աբրահամ,

Լսած ես անշուշտ, որ Գահիրէի «Համազգայինի» ընկերութեան նախաձեռնութեամբ հիմնուած է Հայ Ճեմարան մը Պէյրութի մէջ Նիկոլ Ադպալեանի եւ իմ անօրէնութեամբ. նպատակն է տալ մեր հասնող սերունդին լուրջ եւրոպական կրթութիւն մը հայ հոգիով եւ հայ լեզուով:

Ճեմարանը այս տարի բացած է լիսէի առաջին չորս դասարանները. տարուէ տարի լրանալու է ամբողջ լիսէի դասընթացքը. այս նամակիս հետ կը ղրկեմ ձեզի նաեւ Ճեմարանի ուսումնական ծրագիրը:

Այս վայրկեանիս Ճեմարանը ունի 60 աշակերտ, 25 աղջիկ եւ 35 տղայ, որոնցմէ 11-ը գիշերօթիկ, ընդհանրապես 14-18 տարիքին մէջ: Մեր դպրոցի այս տարուան պիւտճէն է մօտ 300.000 ֆրանք. այդ ծախքի մեծ մասը կը գոցէ Գահիրէի «Համազգայինը», մէկ մասը կը գոցուի Ամերիկայի Հայ կարմիր խաչի օժանդակութեամբ, որոնք որդեգիրներ կը պահեն Ճեմարանի մէջ, խոշոր մաս մը կը գոցուի երթեւեկ եւ գիշերօթիկ ինքնավճար աշակերտ-աշակերտուհիներու վճարով, որոնց թիւը ինչքան որ չատնայ բնականաբար այդքանով ալ կը թեթեւի մեր հաստատութեան նիւթական վիճակը, որը ծայրը ծայրին բերել արդի վիճակով դժուար կը գոցենք մեծ պակասով եւ ղրկանքով:

Երբ այս հաստատութեան հիմնարկութեան ձեռնամուխ կ'ըլլայինք, գործի յաջողութեան հասնելու [համար] ես անհրաժեշտ կը համարեի քանի մը հաստատութիւններու եւ քանի մը անհատներու համակրանքն ու աջակցութիւնը: Կը յուսամ, բնական պիտի գտնես, եթէ խոստովանիմ քեզի, որ առաջին իսկ օրէն քու անունդ իմ ցանկիս վրան էր: Անցած տարի ես դիտմամբ չգրեցի քեզի. կ'ուզեի նախ գործը դնենք աւելի կանգուն հիմերու վրայ եւ աւելի արժանի քու ուշադրութեանդ: Հիմա կը կարծեմ հասած է ժամանակը եւ ահա կը գրեմ քեզի եւ կը խնդրեմ քու աջակցութիւնդ:

Կրնաս օժանդակել մեր այս ձեռնարկութեան քու անունովդ գիշերօթիկներ պահելով, կրնաս եւ ընտրեր օժանդակութեան ուրիշ ամէն ձեւ, որ քեզի աւելի յարմար կը թուի: Եւ ես ինչպես միշտ քու տրամադրութեանդ տակն եմ՝ տալու քեզի ամէն բնոյթի [տեղեկութիւն], տնտեսական եւ հաշուական, ինչ որ քեզի կը հետաքրքրէ:

Ինչքան հաւատքով որ խօսելու է քու սրտիդ մեր այս հանրային ձեռնարկը ես վստահ եմ բարեացակամ վերաբերմունքիդ, կը ղրկեմ քեզի իմ ջերմ ու սրտագին բարեւներս ու կը սեղմեմ ձեռքդ:

1930 Նոյեմբեր 9

[անթուակիր]

11.

Հախնազարեանին
Պրահա

Յարգելի՛ ընկեր,

Սիրով կու տամ ձեզի իմ համաձայնութիւնս չեխերէն թարգմանելու եւ հրատարակելու իմ «Հին Աստուածներ»ս[1]:

Գրաբար կտորները առնուած են մեծ մասով սաղմոսներէն բայց գրուած են յիշողութեամբ ու յղիւ կտորներով, այնպես որ հիմա տեղերը մատնանշելու հնարաւորութիւն չունիմ: Կրնաք լաւիներէն դնել, կրնաք եւ չեխերէն, ինչպես ինքներդ յարմար կը տեսնէք:

Հայ Ճեմարանը այս տարի կը բանայ միայն պատրաստական դասարան մը եւ իր հիմնական երեք դասարանները միայն: Ցորդորդ դասարանը եւ երեք լսարանները չունինք դեռ, բացուելու են հետզհետէ, որով ձեր ըսած առարկաները դեռ չունինք. իսկ ընդհանուր պատմութիւնը քանի մը ժամուան համար առանձին հիմնելու կարող չենք: Ձեր սիրալիր պատրաստակամութիւնը աչքի առաջ կ'ունենանք յաջորդ տարիներու ընթացքին եթէ յարմարուի:

Ընդունեցէք

1.«Հին աստուածներ» ղրամայի չեխերէն թարգմանված լինելու և հրատարակվելու վերաբերյալ ուրիշ որևէ տեղ որևէ հիշատակություն չկա (Ա.Մ.):

12. ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆԻՆ

[Անթուակիր]

Սիրելի բարեկամս պարոն Տիգրան Խոյեան[1],

Անչափ ուրախ եմ որ իմ հին աշակերտիս զգացումներուն մէջ այդպէս տաք անկիւն մը ունիմ. կրկնակի ուրախ եմ որ այդ հին աշակերտը այդպէս տաք սիրտ մը ունի մեր այս նոր Ճեմարանին հանդէպ: Եւ չատ աւելի պիտի ըլլայ ուրախութիւնս, եթէ ձեր առաջարկը իրականութեան վերածուի եւ մենք դառնանք իրարու գործակիցներ:

Ձեր աղուոր ու սրտագին առաջարկը, որ իր ետեւը մեծ կարեւորութիւններ կը թաքցընէ, Աղբալեանն ու ես կ'ընդունինք մեծ սիրով եւ կասկած չունինք, որ Համազգայինի վարչութեան կողմէն ալ ընդունուելու է նոյն ուրախութեամբ եւ համակրանքով: Մարզավայրին տարաբախտ Վահան Ջերազի անուան նուիրուած ըլլալուն դէմ որեւէ առարկութիւն չունինք, ընդհակառակը մենք սիրով կը միացնենք մեր ձայնը:

Ինչպէս ճիշդ ենթադրած էք, ձեր առաջին նամակը չեմ ստացած: Եւ հիմա ալ շտապ այս երկտողը կը գրեմ ձեզի ապահովցնելու համար, որ երկրորդն ստացած եմ: Անմիջապէս ձեռնարկած ենք յարմար հողերու ու գնելու մասին նախնական որոնում մը, որ ձեզի որոշ ու դրական գաղափար մը տալ կարողանանք, եւ որու համեմատ կարողանաք ձեր հաշիւները տեսնել:

Մեր ճեմարանը վարձու չէնք մըն է. չոր եւ անկիւն դիրքի մը մէջ է գիշերօթիկներու բնակարանը, նորէն վարձքով, երկուքն ալ քաղաքին մէջ. առողջապահական տեսակէտէն բարձր դիրքի վրայ, ծովէն քառորդ ժամ մը վեր: Խաղավայրը քաղաքէն հեռու պիտի ըլլայ անտարակոյս: Ան մեզի հետ գալ չի կրնար, մենք պետք է ձգտինք իրեն մօտենալու:

Կը յայտնեմ ձեզի Աղբալեանի եւ իմ սրտագին բարեւները եւ ջերմապէս կը սեղմեմ ձեր ձեռքը:

1.Տիգրան Խոյեան, հինգերորդներէն 1918-ին Հայ Մարմնակրթական ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.), յետագային քահանայ ձեռնադրուած:

13.

Ապրիլ 6, 1931

Օրիորդ Ռոլա Ամիրխանեանին, Թեհրան

Սիրելի՛ Օրիորդ, լսած էք Հայ Ճեմարանի մասին, որ անցած տարի հիմնեցինք Պէյրութի մէջ Աղբալեանն ու ես «Համազգային» ընկերութեան եւ Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի աջակցութեամբ:

Այս տարի մեր դպրոցը չորս դասարան ունէր, մէկ նախապատրաստական եւ երեք դասարան, համապատասխան ֆրանսական լիսէ-

ներու IV, V եւ VI կարգերուն. Յառաջիկայ տարի բանալու ենք նաեւ III կարգը, եւ տարուէ տարի բանալու ենք բարձր կարգերը լիսէի, քիչ մը աւելի մեր պայմաններուն յարմարացուցած բաժանումով, որուն կրնաք աւելի մօտէն ծանօթանալ մեր ծրագրէին, որը կը պրկենք ձեր հասցէին:

Մեր աշակերտութիւնը աղջիկ ու մանչ միասին է. տղոց մէկ մասը պիշերօթիկ է. աղջիկներու պիշերօթիկ առայժմ չունինք:

Արդ, սիրելի՛ Օրիորդ, մենք յառաջիկայ տարուան համար պէտք ունինք ֆիզիքի, չմիի եւ մաթեմատիկի ուսուցչի մը: Ազբալեանն ու ես, ինչպէս Հռիփսիկ Իփէկեանը այն կարծիքին ենք, որ դուք շատ լաւ ընկեր ու պաշտօնակից մը կրնաք ըլլար մեզի մեր ճեմարանին մէջ, եթէ կամիք հոս գալ եւ եթէ մեր պայմանները ձեզի բաւարարել կրնան:

Մինչեւ յարան մեր ուսուցիչներու վճարները հաշուած են շաբաթական 24 դասի համար տարեկան 180 օսմանլեան ոսկիի, որ մօտ 780 տոլար կ'ընէ, այսինքն ամսական 65 տոլար: Շեայլ գումար մը չէ անշուշտ, բայց այդ ամսականով հոս հանգիստ ապրիլը կարելի է:

Արդ, սիրելի օրիորդ Ռոլա, բարի եղէք մտածելու, ուսոի [?] եւ կարելիին չափ շուտ ինծի պատասխանելու կը կամի՞ք ընդունիլ իմ առաջարկս, որպէսզի պաշտօնապէս գրեմ ձեզի եւ այլեւս ուրիշ կողմ դիմումներ չընեմ:

14. ՃՕՆ ՉԻՔԵԹԵԱՆԻՆ

1931 ապրիլ 6, Պէյրութ

Յարգելի՛ ընկեր Չիքեթեան [?] Ճոն,

Մօտ երկու տարի առաջ ինծի նամակ մըն էիք գրած, ձեր նամակը ստացած եմ թէեւ շատ ուշ. չպատասխանեցի, որովհետեւ միջնակարգ վարժարանի մը հիմնարկութեան հետեւին էի եւ կ'ուզէի նախ այդ գործը հաստատ հիմքերու վրայ դնեմ:

Ձեր նամակէն կը տեսնեմ, որ հայ հոգիով մեծցած նոյն հայ երիտասարդութեան մը կարիքը դուք ալ մեզի պէս խորապէս կ'ըզգաք եւ պատրաստ էք ձեր ձեռքէն եկածը ընելու այդ տեսակ ձեռնարկի մը

յաջողութեան համար: Այդ վստահութիւնն է, որ հիմա ինձի գրել [կուտայ] այս տողերը ձեզի:

Թերթերէն անշուշտ լսած էք, որ Նիկոլ Աղբալեանն ու ես հիմնած ենք Հայ Ճեմարան մը Պէյրութի մէջ. արդէն չորս միջնակարգ կրթութեան դասարաններ բացած ենք անցած սեպտեմբերին, իսկ յառաջիկայ սեպտեմբերին բացուած կ'ըլլան վեց դասարանները, անկէ ետքն ալ տարուէ տարի կը բացուին երեք լսարանները, նամակիս հետ կը ղրկեմ մեր մանրամասն ծրագիրն ու յայտագիրները, որ աւելի մօտիկ կարողանաք ծանօթանալ:

Մեր գործին կ'օգնէ Եգիպտոսի Համազգային ընկերութիւնը անմիջական օժանդակութեամբ, այլեւ Ամերիկայի Հայ կարմիր խաչը գիշերօթիկ ու երթեւեկ աշակերտներ պահելով մեր Հաստատութեան մէջ: Բայց մերինի նման մեծ ձեռնարկ մը շատ աւելի բազմակողմանի աջակցութեան պէտք ունի Հաստատուն հիմքերու վրայ դրուելու համար եւ ժամանակակից գիտութեան բարձրութեանը վրայ մնալ կարողանալու համար:

Արդ՝ եթէ իրաւ ինչպէս կ'ըզգամ կը խօսի ձեր սրտին նոր Հաստատուած Ճեմարանը, աւելի վստահօրէն կը դիմեմ ձեզի եւ կը խնդրեմ ձեր օժանդակութիւնը. հոտ ձեր հետն առնելով ձեր եղբայրը, եթէ կը հաւանի, այլ եւ ուրիշ մէկ կամ երկու անձ, կազմեցէք Կալկաթայի մէջ խնամակալ մարմին մը Հայ Ճեմարանին օժանդակելու դիտաւորութեամբ [?]: Խնամակալութեանդ գործը ըլլալու է 1) գտնել մարդիկ, որոնք ցանկան մեծ ու փոքր ձեւով կամ պարբերական անմիջական [?] նուէրներով կենդանի պահել այս ձեռնարկը. 2) գտնել ծնողներ, որոնք իրենց զաւակները ղրկեն մեր Ճեմարանը կրթուելու. 3) գտնել ունեւոր անհատներ կամ խմբեր կամ միաւնաբար, որոնք ցանկան որդեգիրներ պահեն մեր Ճեմարանին մէջ կա՛մ իրենք ընտրելով իրենց որդեգիրը կամ հոս ընտրել տալով մեր չրջապատի որբ ու չքաւոր պատանիներէն, որոնք ուսման սէր ունին, արժանի են ամէն օժանդակութեան եւ միջոց չունին, եւ 4) մատնանիշ ընեն մեզի թէ Հնդկաստանի միւս քաղաքներուն մէջ որու խորհուրդ կու տան որ դիմենք այս կամ այն ձեւով մեր ձեռնարկին օժանդակելու համար:

Արդ յարգելի բարեկամս, առ այժմ աւելին չեմ խնդրեր, կ'ուզեմ գիտնամ նախապէս ձեր տալիք պատասխանը. եթէ դուք անձամբ կամ այդ տեսակ խնամակալ փոքրիկ մարմին մը ստեղծելով ցանկանաք

օգնել մեր գործին, որ մեր խորին համոզումով մեր պաղումներու ամենէն կարեւոր մէկ պահանջն է այս վայրկեանին, եթէ ցանկաք այս կամ այն ձեւով ձեռք երկարել մեզի ես պատրաստ եմ տալու ձեզի ձեր ցանկացած բոլոր մանրամասն տեղեկութիւնները, յայտնելու ձեզի ինչ որ կրնբռնենք ու կը ծրագրենք, ինչպէս եւ պարբերաբար կը պրկեմ ձեզի մանրամասն հաշիւ ե՛ւ գործունէութեան ե՛ւ ծախքերու:

Կ'ըսպասեմ ձեր դրական պատասխանին, եւ կը ցանկամ, յարգելի ընկեր, իմ ջերմ ու սրտագին բարեւներս ձեզի:

15. ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆԻՆ

Սիրելի՛ բարեկամս Եղիա Գասպարեան,

Արդէն սկսած ենք խորհիլ մեր յառաջիկայ շրջանի ուսուցչական կազմը լրացնելու մասին: Անցած տարի նկարչութեան ուսուցիչ չունեցանք, որովհետեւ ամսական չորս ոսկիով ես ոչ ոք չեմ կրնար հրապուրել դուրսէն, իսկ տեղական ուժեր չկան, օտար ալ մենք չենք ուզեր: Երբ յաջորդ տարիներ հետզհետէ լրացած ըլլան մեր բացած դասարանները, երբ վարի փոքրերու կարգերն ալ որ բանանք, անշուշտ նկարչութեան դասերը հետզհետէ այնքան կը չատնան որ մեր պայմաններն ալ հիմնական կը փոխուին: Եւ դրամի հարցէն զատ դուք գիտէք, որ արուեստը խորապէս սիրող, հոգիով երիտասարդ եւ մեզի սրտակից մարդու մը հետ կ'ուզենք կապուիլ եւ կապել մեր հաստատութեան գեղարուեստի մասը:

Ուրիշ որեւէ մէկու մասին մտածելէ ու գիմելէ առաջ ես պարտք համարեցի, սիրելի՛ բարեկամս, դրեմ նորէն ձեզի եւ հարցնեմ՝ արդեօք յառաջիկայ տարեշրջանին համար կ'ուզէ՞ք կամ կրնա՞ք գալ Պէյրութ: Եթէ դրամական, ընտանեկան կամ այլ որեւէ դժուարութիւն կամ անյարմարութիւն ունիք, դրեցէք ուղղակի, նոյնիսկ եթէ պարզապէս վոխուած է ձեր տրամադրութիւնը. անշուշտ ինծի համար սիրելի է ձեր աշխատակցութիւնը, բայց ես չեմ ուզեր որ այս տողերու տակը դուք որեւէ բարոյական ճնշում զգաք ձեզ համար, այլ կ'ուզեմ միայն ունենամ ձեր վերջնական պատասխանը:

Սիրով կը սեղմեմ ձեռքդ ու կ'ըսպասեմ պատասխանիդ:

1931 ապրիլ 21

16. ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆԻՆ

Սիրելի՛ բարեկամս Պարոն Տիգրան Խոյեան,

Երկու-երեք չաբաթ առաջ գրած նամակս ստացած էք անշուշտ: Այդ միջոցին մենք հոս գործէն հասկցող մարդոց միջոցով ամէն կողմ հարցուցինք, այդ տեղերը անճամբ այցելեցինք, եւ եղրակացութիւնը հետեւեալն է:

Քաղաքին մէջ այդպէս ընդարձակ հող միայն մէկ տեղ կայ եւ չատ յարմար, հոն ուր Հին Հայ քեմբն է, ծովուն եզերքը ընդարձակ հարթ տարածութիւն, մեր ուզածէն երկու-երեք անգամ աւելի ընդարձակ, չատ յարմար տեղ, օդասուն եւ հայկական բոլոր կեդրոններուն մօտիկ: Միայն այդ բոլոր Հողը միասին կը ծախուի. եւ եթէ ցանկանք հոտ գնել Հողը, պէտք է գտնել Հայեր ալ, որ մնացած մասերը գնել ցանկան. թէեւ հիմա կրկնակի աւելի սուղ է գինը համեմատելով մէկ տարի [առաջ] Հողերու [գինին] բայց չենքին սկսելուն պէս արագ գինը կը բարձրանայ:

Տեղ մըն ալ ընդարձակ [Հող] կայ, քաղաքի ամենէն բարձր մասերուն վրաւ, օդասուն եւ տեսարան [?], միայն երթեւեկի յարմարութիւն չունի, Հանրակառքով կապուած չէ:

Այնպէս որ թէ՛ համեմատաբար աժան եւ թէ երթեւեկի դիւրութիւն ունենալու համար, պէտք է ընտրուի քաղաքի սահմաններուն վրայ, ուր կը վերջանան Հանրա[կառք]ի գծերը. այդ տեսակ տեղեր կան քանի մը Հատ: Ծովուն կողմը եղածները միչտ աւելի սուղ են կրկնակի եւ եռակի, դէպի քաղաքի ետեւի լեռները տանող Հարթութեան վրայ եղած մասերն են ամենէն աւելի յարմար ու մատչելի, եւ քաղաքն ալ հետզհետէ դէպի Հոն կը սահի. այդ ճամբուն [?] վրայ են Բարձր-կոմիսարութեան պալատը եւ Ֆրանսական Համալսարանը:

Հոս Հողը փիքով կը Հաշուեն, որ 60 սանթիմեթր է մօտաւորապես. եղած Հողերուն Համար քառակուսի փիքը մէկէն մինչեւ մէկուկէս տոլլար պէտք է Հաշուէք. գուցէ, երբ դրականապէս գնելու ելլենք եւ Հնչուն դրամը տեսնեն, քիչ մը աւելի զեղչ ըլլայ, բայց ընդՀանուր գները ասոնք են, ինչպես որ տեղեկացած ենք գործեն Հասկցող մարդոց միջոցով: Քաղաքին մէջ, բնականաբար, անՀամեմատ սուղ է. ամենէն աժանը քաղաքի մէջ քեմբի տեղն է դեռ կառուցումներ չըլլալուն

պատճառով: Եւ ընդհանրապէս հոս ամէն տեղ, թէ՛ ներսը եւ թէ՛ դուրսը, հողերուն գինը արագ բարձրանալու վրայ է, որովհետեւ բաւական ալ չատ արագ չինուելու եւ տարածուելու վրայ է: 2-3 տարի առաջ ոչինչ գներով գնուած հողերը այսօր փիքը 2-3-4 ոսկի է:

Ահա՛ ինչ որ կ'ըշտապեմ ձեզի հաղորդելու, որ հաշիւները բռնելու հիմ մը ունենաք եւ անհամբեր կ'ըսպասեմ ձեզմէ առանալիք պատասխանին: Մենք հոս բնականաբար ամէն կողմ կը չարունակենք հետաքրքրուիլ եւ փնտռել յարմար հողի կտորներ ընտրութեան աւելի չատ կետեր ունենալու համար:

Խալադաչը ձեմարանին մօտիկ տեղ ընտրելու մասին չենք կրնար մտածել, քանի որ ձեմարանը քաղաքին մէջն է. աւելի խելքի մօտիկ է մտածելը, որ ձեմարանը հաքը մօտեցնենք խալադաչին, քանի որ մեր արդի բնակարանները վարձով են եւ քանի որ մեր դպրոցին եւ պիշերօթիկին մօտ [?]ալ հող եւ չէնք ունենալու հարցը դրուած է մեր առջեւը եւ այս կամ այն ձեւով պետք է գլուխ բերուի յառաջիկայ քանի մը տարիներու ընթացքին:

Ես ձեր նամակէն այն տպաւորութիւնը կրեցի, որ խալադաչի գնումը ապահովելէն ետք, ինքներդ կը ցանկաք գալ հոս, կապուիլ մեր ձեմարանին եւ կազմակերպել միեւնոյն ժամանակ մէջնակարգի, խաղի, մարզանքի ու արիներու գործը աւելի լայն չափերով:

Եթէ սխալ չէ ենթադրութիւնս՝ չափազանց ուրախ պիտի ըլլամ, որովհետեւ ձեմարանի վարչութիւնս ալ խաղ ու մարզանքի եւ արիական կեանքի եւ արշաւի գործը չատ բարձր կը գնահատէ թէ՛ մանկավարժական ընդհանուր տեսակէտներով եւ թէ՛ մանաւանդ ցեղային նկարագրի զօրացման եւ առողջացման հեռանկարով:

Մենք այս կողմէն մեր դպրոցին մէջ այդ ուղղութեամբ լուրջ գործ մը տեսած չենք, որովհետեւ հարկ եղած մարդը չունինք: Մեր ձեմարանը դեռ իր լրիւ դասարանները բացած չէ, ո՛չ ալ դեռ վարի կարգերը ունինք. այս պայմաններուն մէջ յատուկ ուսուցիչ մը հրաւիրել չենք կրնար, իսկ հոս գտնուած ուժերով ալ ուզածնիս ընել չենք կրնար: Եւ մեր ուզած մարդը գտնելն ալ դիւրին չէ, որ ուզէ կամ կարողանայ գալ հոս:

Բայց մեր դիտաւորութիւններուն մէջ ինչպէս մարմնամարզի, այնպէս ալ գեղարուեստի մասը հնար եղածին չափ բարձրացնելու ջանքը միշտ մեծ տեղ կը բռնէ. եւ անշուշտ ամէն ջանք պիտի ընենք

կամաց-կամաց հոտ հասնելու, քանի որ համեստ դրամական միջոցները ամէն բան մէկ անգամէն ընելու հնար չի տար:

Ամենէն կարեւորը այդ գործին նուիրուած մարդը գտնելն է սակայն, ինչպէս ըսի, մնացածը այս կամ այն ձեւով կը կարգադրուի: Շատ պիտի ուրախանանք, եթէ ձեր ծրագիրները յաջողին: Եթէ գալ ուզէք եւ կարողանաք, մենք ալ ի հարկէ մեր ձեռքէն եկածը կ'ընենք ձեր քայլերը դիւրացնելու համար:

Սրտագին բարեւներով՝

1931, ապրիլ 21

17.

Գերասիմ Բալայեանին

Սիրելի՛ Գերասիմ,

Գրքերը վերջապէս ստացուեցան եւ Հանուեցան մաքսէն, անչափ չնորհակալ եմ քեզի Համազգայինի վարչութեան կողմէն քու հոգածութեանդ, չանքիդ եւ նամակներուդ համար:

Ինչքան չնորհակալ եմ քեզմէ, նոյնքան դժգոհ եմ տպարանէն. 1930 յունիսին տալիք երկու տպուած գրքերու փոխարէն, 1931 մարտին կ'ընդունինք միայն մէկ գրքի տպագրութիւնը, ամբողջ տարի մը կորցնելով, վնաս մը [Համազգային] ընկերութեան թէ՛ վարկին եւ թէ գրպանին: Իմ գրած 2-3 նամակներէն ոչ մէկուն չէ պատասխանած: Ես թէ անձնական խօսակցութեամբ պարոն Զաւրեւի հետ եւ թէ իմ պաշտօնական նամակիս մէջ որոշած ենք տպագրական թերթը 2000 պիտի հանէ ամէն ծախք մէջը [պրակը] 500 ֆրանք.

Ընկերութեան կողմէ ես գրած եմ պարոն Զաւրեւին՝ քանի որ տեւական գործ է ըլլալու եւ Համազգային [?] ընկերութեան մը հետ նոյնիսկ 4500-էն պակաս հաշուէն եթէ հնար է: Հիմա վարչութիւնը փոխուեր է եւ փոխանակ աւելի պակաս հաշուելու կ'ուզեն հաշուել 6000: Ես գիտեմ միայն այն ինչ որ պայմանաւորուած ենք. Ընկերութեան կողմէն անցած տարի նոյնին փոխադրած 8000 ֆրանքէն մնացածը, այսինքն 3.500-ը կը հաշուեմ իմ անձնական 4000 ֆրանք պարտքին դէմ, որով կը մնամ .....ես անձնապէս 500 ֆրանք պարտք, որ կը չանամ յառաջիկայ աշուն փակեմ: .....չտպուիլը ինծի

ալ անձնապէս մեծ վնաս եղաւ, քանի որ Համազգայինի ընկ.եան գանձէն չեմ կրնար ստանալ [?] իմ հեղինակի իրաւունքս:

Իմ եւ ընկերներու կողմէն կը յայտնեմ քեզի մեր ջերմ բարեւները, ու սրտագին կը սեղմեմ ձեռքդ:

1931 Մայիս 14

18.

Ռոլա Ամիրխանեանին

Սիրելի՛ օրիորդ Ռոլա,

Պէյրութի կեանքի պայմաններուն մասին տեղեկութիւն կ'ուզէք, մեր ֆրանսերէնի ուսուցչուհիին որ կ'ապրի առանձին, սենեակին համար, կահաւորուած, կը վճարէ 2.5 օսմանեան ոսկի, ցերեկուան ճաշին հայ ճաշարանի մը մէջ կը վճարէ ամսական մօտ 2 օսմանեան. առաւուն, իրիկուն ինքը կը պատրաստէ իր սենեակին մէջ իր թէյն ու ուտելիքը՝ ամսական մօտ 3 օսմանեան. ուրեմն ապրուստի ամսական ընդհանուր ծախքը 7-8 օսմանեան ոսկիին չուրջն է. բնականաբար աւելի աժան կու գայ եթէ ընտանեկան պայմաններու մէջ ապրուի. առաջին տարին հաւանական չէ, բայց յաջորդ տարիները շատ կարելի է, որ յարմարեցնէք, երբ տեղական կեանքին եւ շրջանակին կը ծանօթանաք: Կլիման ձմեռները տաք է, տուները վառարան չունին, յունուարին ու փետրուարին թեթեւ վառարան մը կը վառէք խոնաւութիւնը կտրելու համար, որովհետեւ անձրեւներ կու գան, բայց ո՛չ անտանելի եւ շատ չոտով ալ կը չորնայ: Հայ շրջանակին չփումը տարուէ տարի բարձրանալու եւ կենդանանալու վրայ է եւ քաղաքը ինքը արեւելքէն եկողներու վրայ նկատած եմ, որ քիչիկ մը արեւմուտքի տպաւորութիւնը կ'ընէ. սկսած է արագ չինուիլ ու կարգի մտնել:

Գալով Ճեմարանի կեանքին, մասնաւոր հաստատութիւն մըն է. ո՛չ թագաւական, ո՛չ հոգաբարձութիւն, ո՛չ այդ կողմէ արտաքին աղմուկներ. ուսուցիչները ընտրանքով կը հրաւիրենք ու կը ձգտինք տեւականօրէն Ճեմարանին կապուած առանձին մարմին մը առաջացնել..... անցած տարի 63 աշակերտ ունէինք, որոնցմէ 12-ը գիշերօթիկ, յառաջիկայ տարի 85 աշակերտ կ'ենթադրենք, որոնցմէ 30-ի չափը գիշերօթիկ: Առաջին տարի ունեցած ենք մեր 4 հիմնական դասարանները,

լիսէական 6-րդ, 5-րդ, 4-րդ եւ 3-րդ տարիները, որը կը համապատասխանէ միեւնոյն ժամանակ Ecole primaire superieure-ներու վերջին տարիներուն: Տարի մը եւս կ'ունենանք բոլ[որ] լսարանները: Մնացածի մասին ինչ խօսիմ, սիրելի օրիորդ, կամ գովասանքի ձեւ պիտի առնէ կամ ձեզի համոզելու, ես ո՛չ մէկը կ'ուզեմ եւ ո՛չ միւսը. կու գաք ու կը տեսնէք: Դուք ձեր դասերէն զատ ուրիշ ոչինչ չէք առնելու, եւ եթէ բան մը փոխել տաք փոխադարձ համամտութիւն [?]:

Շիմիի դաս ունենալու ենք մեր վերջին դասարաններուն մէջ շաբաթական մէյ-մէկ ժամ. դուրսէն առանձին ուսուցիչ գտնելու կարելիութիւն չկայ. այնպէս որ մենք չատ ուրախ պիտի ըլլանք, եթէ շիմիի աւանդումն ալ յանձն առնէք, ես ձեր սկրիպթիվը կը հասկնամ, բայց կը կարծեմ որ ի զուր է. չատ տարրական դասընթացք է. չատ լաւ մշակած դասագրքեր կան, չատ հիմնական եւ պարզ փորձեր են կատարուելիք. կը կարծեմ, որ պիտի համոզուիք. բայց եթէ նոյնիսկ բացարձակ կերպով յանձն առնել չուզենաք, նորէն կերպ մը կը կարգադրենք, ծայրագոյն պարագային այս տարի կը զեղչենք շիմիի դասերը, բարձր տարիներու լսարանին մէջ մասնագէտ ֆրանսացի ուսուցչէն կ'առնեն այդ բաց թողած դասը չաբաթական մէկ-երկու ժամով. բայց կը յուսամ, որ երբ ծրագրին եւ նիւթին մօտէն ծանօթանաք, պէտք չենք ունենար մեր ծրագրէն չեղում կատարելու:

Ձեր արեւելեան բարբառը արգելք չէ. մերոնք Ալքալեանի ներկայութենէն արդէն վարժ են. այլ եւ մեր ուսուցման մէջ արեւելեան բարբառը կայ. ամենքը կը կարդան, վերջապէս դուք ալ կամայ-ակամայ պիտի սկսիք չուտով երկուքը իրարու խառնել, մէկ խօսքով աւելկա հարց չէ: Մենք կը ցանկանք որ մաթեմատիկի եւ գիտութեան դասերը մտնէ [?] մէջ, տեսակ մը իբրեւ կրկնութիւններ, իբրեւ լրացում ֆրանսերէն կ'աւանդուի դասախօսութիւնը, արդէն սորված նիւթերն ու մասերը, գիտութեան ֆրանսական արտայայտութիւններուն վարժուելու համար, իբրեւ նախապատրաստութիւն լսարաններու գիտական աշխատանքին: Բայց այս բոլորը յարմարութեան եւ երկրորդական [?] հարցեր են. միասին կը խօսինք, երբ հոս ըլլաք:

Կը կարծեմ պատասխանեցի ձեր բոլոր հարցերուն, եւ կ'ըսպասեմ ուրեմն ձեր վերջնական պատասխանին: Եթէ գալու ըլլաք լաւ է սեպտեմբերի վերջերը հոս ըլլաք, թէեւ դասերը հոկտեմբեր 7-ծ-էն առաջ չեն սկսիր: Նախ՝ աղուոր լեռներ ունինք, քիչ մը կը վայլէք.

երկրորդ՝ կը խորհրդակցինք եւ կը պատուիրենք պէտք եղած ֆիզիքական եւ քիմիի գործիքներն ու պարագաները՝ հնար եղածին չափ խոր ու կենդանի դարձնելու համար մեր ձեմարանին մէջ վիճակագրութեան դասատանդումը:

Ձեր բարեւը կը դրեմ Ջաւոյին եւ տղային, եւ կը պրկեմ ձեզի մեր բոլորին սրտագին բարեւները:

Մայիս 21, 1931

19. ՌՈԼԱ ԱՄԻՐԽԱՆԵԱՆԻՆ

Սիրելի՛ օրիորդ Ռոլա,

Ձեմարանի յառաջիկայ տարեշրջանի դասերուն բաշխումը այն ձեւը ստացաւ, որ ես հնարաւորութիւն չունիմ այլեւս նոր ուսուցիչ մըն ալ հրաւիրելու: Այնպէս որ ձեզի հրաւիրելու մտադրութիւնս անկարող եմ իրագործել գոնէ այս տարի: Կը ցաւիմ եւ շատ ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ աւելորդ մտահոգութիւն պատճառած ըլլալուս համար:

Ընդունեցէք, յարգելի օրիորդ, սրտագին բարեւներս եւ յարգանքս:

1931 յունիս 14

20. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

1931 յուլիս 19

Յարգելի՛ Պարոն Վահան Խորասանճեան.

Կը հաստատեմ իմ հոկտ. 15 թուակիր նամակս, որով չնորհակալութիւն կը յայտնէի ձեր սիրալիր պատասխանի եւ 5000 ֆրանքի նուէրին համար:

Յունիս 28-ին վախճան հանդիսով մը լրացաւ մեր ձեմարանի երկրորդ տարեշրջանը եւ ես պարտք կ'ըզգամ քանի մը տողով այս տարուան պատկերը ձեզի փոխանցելու: Համազգային ընկերութիւնը մտադիր է մանրամասն հաշիւներն ու տեղեկագիրը տպագրելու եւ երբ տպագրուի՝ ձեզի բնականաբար կուղարկեմ անմիջապէս, բայց ատիկա կրնայ դեռ եւս երկար քաշել:

Մենք այս անցած տարեշրջանին ունէինք 64 աշակերտ, 38 տղայ եւ 26 աղջիկ, ասոնցմէ 12 տղայ գիշերօթիկ են: Ունէինք չորս դասարան, համապատասխան ֆրանսական լիսէներու 7-էն 4 դասարաններուն, եւ 12 հոգիէ բաղկացած ուսուցչական մարմին մը, բոլորն ալ համալսարանական կրթութեամբ, երկու հոգին օտար: Մեր դպրոցի ծրագիրը ձեզի յայտնի է արդէն, աշխատանքները կատարուած են ըստ այդ ծրագրի բարձր կանոնաւորութեամբ եւ խորապէս ուրախ եմ յայտնելու նաեւ արդիւնաւէտ: Տկար աշակերտներու թիւը 7 հոգի է միայն, քսան հոգիի մը չափ՝ միջակ կարողութեան տէր են, մնացածները, այսինքն կէսէն աւելին ուժեղ աշակերտութիւն է, գիտակից եւ աշխատող:

Մեր անցած տարուան իսկական բիւճէն եղած է 237.600 ֆրանսական ֆրանք, որուն սակայն 1000 տոլարը Հայ կարմիր խաչէն, Ամերիկայի տնտեսական տագնապին պատճառովը դեռ չենք գանձած եւ այդ մեզի դրած է պարտքի ու նեղութեան մէջ: Յաւելուածական նեղութիւն:

Յառաջիկայ տարի ունենալու ենք 6 դասարան, կ'ենթադրենք 90-ի չափ աշակերտութիւն. կը յուսանք, աւելի լաւ է ըսենք կը ցանկանք, որ գիշերօթիկներուն թիւը կրկնապատկուի: Գալ տարուան մեր նախահաշիւն է 294.800 ֆրանսական ֆրանք:

Գործի ընթացքը ձեզի պարզ դարձնելու համար ըսեմ, որ անցած տարի Հայ Կարմիր խաչը իր վրայ առած է 63.580 ֆրանքի վճարը անկարող աշակերտներու վոխնարէն, իսկ ինքնավճար, այսինքն ծնողներու կողմէն վճարուած եղած է 49.720 ոսկի: Յառաջիկայ տարի Հայ Կարմիր խաչի յանձնառութիւնը նոյնը ենթադրելով, մենք կ'ըսպասենք իբրեւ ինքնավճար 120.000 ֆրանքի դրամ մը: Ինչքան ալ մեր հաշիւներուն մէջ սխալինք՝ անտարակոյս է որ ինքնավճար աշակերտութիւնը կրկնապատկուելու է. եւ անոր մէջն է մեր գործին առողջութիւնը: Կը յուսանք յառաջիկայ երեք տարիներու ընթացքին մեր երեք լսարաններու բացման զուգընթաց՝ հետզհետէ մօտենանք դրամական ինքնաբաւ վիճակի մը. այսինքն մեր Հաստատութեան ամենէն կարեւոր ծախքերը գոցուին աշակերտներու բերած թոշակներովը: Ճեմարանի հանդէպ վստահութիւնն ու գնահատանքը սկսած է բարձրանալ. յաջողելու համար պետք է պարզապէս յամառութեամբ տոկալ ամէն զրկանքի ու չարունակել գործը. ինչ որ մենք ալ վճռած ենք ընել՝ յոյ-

սերնիս դրած մեր գաղափարակիցներու եւ Համակիրներու աջակցութեան վրայ:

Ինչ որ կը վերաբերի ձեր աջակցութեանը, սիրելի՛ Պարոն Խորասանճեան, անշուշտ ամէն որոշում կախուած է ձեր կամքէն ու ձեր զգացումներէն, բայց ինչո՞ւ ծածկեմ, ես անչափ ուրախ պիտի ըլլամ, եթէ Հայ Ճեմարանին մէջ պիչերօթիկ որդեդիրներ գտնուէին ձեր անունով, որովհետեւ ես չատ կ'ուզէի ձեր անունն ու Համակրանքը տեւականօրէն հիւսուած ըլլար Հայ Ճեմարանին ու մեր աչխատանքներուն, որովհետեւ փորձը ցոյց կու տայ, որ չունեւոր աշակերտներուն կրթութեան վրայ ազդելու ամենէն չիտակ ճամբան պիչերօթիկ վերցնելն է. մեծ է առաւելութիւնը թէ՛ բարոյական տեսակէտէ, թէ՛ առողջապահական եւ թէ՛ ուսումնական:

Այս բոլորը յանձնելով ձեր Համակիր ուշադրութեան՝ կը մնամ ձեռքերնիդ եւ կը խնդրեմ որ ընդունիք խորին յարգանքս ու սրտագին բարեւներս:

21. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՏՈՆՅԻՆ

1931 յուլիս 19

Սիրելի Ատոնց,

Նոյեմբեր ամսին նամակ մըն եմ գրեր քեզի, մէջն ալ գրած էի Աբրահամին յանձնելու ուրիշ նամակ մը, ես այդ երկուքին մէջն ալ խնդրած էի քու եւ իր օժանդակութիւնը Հայ Ճեմարանի ամրապնդման համար: Մինչեւ հիմա ո՛չ իրմէն եւ ո՛չ ալ քեզմէ ո՛չ մէկ պատասխան. մեղադրելու չեմ համարձակիր, բայց անշուշտ ինծի քիչիկ մը ցաւ կը պատճառէ:

Այս երկու տողերովս կը խնդրեմ քեզմէ, որ յայտնես ինծի՝ ստացած ե՞ս այդ նամակս, Աբրահամի հետ այդ առթիւ որեւէ խօսակցութիւն ունեցա՞ծ ես. կամ գուցէ որեւէ պատճառով անկարելի [?] կամ անյարմար է քեզի իր հետ այդ մասին խօսիլը: Այն աստեն տուր ինծի քու խորհուրդը՝ ինչպէս վարուիմ, գրե՞մ իրեն նորէն. եւ կը խնդրեմ որ յայտնես ինծի իր հասցէն:

Մեր գործը լաւ ճամբու վրայ է. սկսած է գնահատանք ու համակրանք վայլել, կը յուսանք այս տարի մեր աշակերտութեան թիւը 90-ի

Հասնի, գիշերօթիկներուն ալ կրկնապատկուի: Յառաջիկայ տարի ունենալու ենք վեց դասարան, այսինքն մինչեւ լսարան:

Մեր յաջողութեան համար մասնաւորապէս կարեւոր է եւ հիմնական գիշերօթիկներու թիւի յաւելումը, եւ մեր բարեկամները մեծ օժանդակութիւն մը բերած կ'ըլլան մեր աշխատանքին եթէ անհատական կամ խմբական մէկ-երկու գիշերօթիկի տարեվճարը ապահովեն: Այդ էր արդէն որ խնդրած էի Աբրահամէն:

Կը յուսամ, սիրելի՛ս, գոնէ այս անգամ երկտող մը ստանամ քեզմէ: Յարգանք կը յայտնեմ տիկնոջդ եւ սրտագին բարեւներով կը սեղմեմ ձեռքդ:

22. ՕՆՆԻԿ ԹՈՓՈՒԶԵԱՆԻՆ

[Անթուակիր][1]

Տղա՛ս,

Հայ Ճեմարանին մէջ [Լիբանանի] կ[արմիր] խաչը այս տարի գիշերօթիկ նոր սանի համար բաց տեղ չունի, բայց երթեւեկներու համար ուժը տրամադրելի տեղ կայ եւ ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ մրցումով:

Քեզի համար Հ. Կ. խաչի կեդրոնական վարչութեան կողմէն յատուկ յանձնարարութիւն ունինք նախապատուութիւն տալու, իբրեւ Զաւարեան վարժարանի յաջող շրջանաւարտներէն մէկը: Ուրեմն քու ընտրութիւնդ կը կատարուի կարգէ դուրս, եթէ գալու ըլլաս:

Յայտնէ ինծի անմիջապէս 1) Հոս Պէյրութի քաղաքին մէջ քու ապրուստիդ ու պէտքերուդ դրամը հոգացող մը ունի՞ս, ո՞վ է եւ առնուազն ինչքա՞ն է ղրկելու, կը խնդրեմ, որ ինքը իր ձեռքով այդ յանձնառութիւնը գրէ դէմ երկու տողով: 2) Քանի՞ տարի ֆրանսերէն ես սորված եւ ֆրանսերէն դասագրքերը ազատ օգտագործելու չափ ֆրանսերէն գիտե՞ս արդէն: 3) Ի՞նչ անցագիր կամ պաշտօնական թուղթ ունիս ձեռքդ Հպատակութեան, այդ պաշտօնական թուղթիդ վրան ո՞րն է քու ծննդեան թուականը, տեղը եւ անուանդ ֆրանսերէն գրութիւնը:

Եթէ տալիք պատասխաններդ բաւարար ըլլան, հոս պիտի կը կատարենք քու Լիբանան մուտք դիւրացնելու ջանքով, որ հոկտեմբերի սկիզբները Պէյրութ ըլլաս:

1. Օննիկ Թոփուզեան ձեմարանաւարտ է 1939 թուականին: Հաւանական է որ Լ. Շանթի այս նամակը գրուած է 1931-32 ուսումնական տարեշրջանի նախօրեակին:

23. ՍԱՐԳԻՍ ՄԱՀՏԵՍԵԱՆԻՆ

Տղա՛ս, դուն պիտես, որ տարիքդ չատ յառաջացած է, որ գոլրոցական պատրաստութիւնդ չատ է քիչ եւ երկար ժամանակ գոլրոցը թողած ըլլալուդ դժուար է քեզի համար աշակերտ դառնալը: Այս բոլորը ըսի քեզի հոս եղած ատենդ. բայց ուզելով վերջին հնարաւորութիւն մը քեզ տալ, որ գուցէ յաջողիս 4-5 ամսուայ ընթացքին թերիդ կերպով մը լեցընես, ըսի որ պատրաստուիս:

Հիմա կը գրես, որ ոչինչ ըրած չես. ես չեմ մեղադրեր քեզի, կը հասկնամ պայմաններդ, բայց դուն ալ պէտք է հասկընաս, որ այլեւս ձեմարան ընդունիլ դժբաղդաբար չեմ կրնար: Աշխատէ՛ ինքնաչխատութեամբ լեցընես ուսմանդ պակասը:

Այս իմաստով կը գրեմ ես նաեւ Նիւ Եորք, Բալուի Սագրադ պիւզի Ուսումնասիրաց մխիթեան: Ես անոնցմէ վեր ոչ մէկ գրաւ չեմ ստացած, ստանալու ալ որ ըլլամ կը վերադարձընեմ:

Կը ցանկամ քեզի ու գործերուդ յաջողութիւն:

[19]31 Օգոստոս 19
Սալիմա

24. ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻՆ

1931 Սեպտ. 18
Սալիմա

Սիրելի՛ Վահան[1]*,*

Ինծի գրկած բացիկդ եւ Աղբալեանին գրած նամակդ ստացած եմ. Նիկոլը հիմա ժողովի է եւ ես պիտը, նամակդ իակոյն իր ձեռքը հասցընելու հնարաւորութիւն չունիմ. եթէ նամակդ ժողովին կը վերա-

բերի՝ պիտիր որ չէ ստացած:

Ներփակ պիտի գտնես մեր դպրոցին երրորդ տարեշրջանի յայտարարութիւնը, որ կը խնդրեմ քանի մը անգամ «Յուսաբերի» մէջ յայտարարես:

Ամերիկայի կեդրոնը Հայ Կարմիր խաչի մեզի հետ խաղեր կը խաղայ. որոշեր են անցած տարուան դեռ մեզի մինչեւ հիմա չվճարուած 1000 տոլլարը, իբրեւ յետնեալ պարտք ընդհեն. ես ի հարկէ ուժգին բողոքեցի Հայ Ճեմարանի իրաւունքներու այդ պահանջքին վրայ եւ կը յուսամ կը պարտադրեմ վճարումը այդ գումարի, բայց պարզ է, որ ասկէ ետքը յարաբերութիւնները աւելի ձգտուելու են. հոն բոլոր հաշիւներուն մէջ անմաքուր ձեռք մը կայ. ամէն պարագայի պէտք է աշխատուի, որ Հայ Կարմիր խաչի կեդրոնի այդ խաղերէն Հայ Ճեմարանը կատարելապես ազատագրուի. այդ ուղղութեամբ ամէն կողմ գիշերօթիկ պահող հաստատութիւններ կը փնտռեմ. իմ մտածումներուս ամենէն առաջիններէն մէկը Գահիրէի ճիւղն է Հայ Կարմիր ճիւղի[2], որուն տիկին Հերսիլիան[3] է կարծեմ նախագահը. անցած տարի ինքնաբերաբար (ի հարկէ քու ազդեցութիւնդ չհաշուելով) մեր Ճեմարանին նուիրեց 10 եգիպտական եւ մեծ հատանականութիւն կայ, որ այս տարի ալ նոյն ժեստը ընէ նորէն: Բայց ես կ'ուզեմ քիչ մը աւելի հաստատ եւ օրինական հողի վրայ դնեմ այդ օժանդակութիւնը. ես կ'առաջարկեմ մեր Հայ Ճեմարանին մէջ երկու գիշերօթիկ որդեգիր ունենայ Հայ Կարմիր խաչի Գահիրէի ճիւղը. եթէ այդ պահանջը՝ որ 80 եգիպ. ոսկի ըսել է, չափազանց կը գտնեն, կանգ առնենք 60 ոսկիի վրայ, այսինքն մէկ լրիւ գիշերօթիկի մը եւ մէկ կէս գիշերօթիկ մը, կամ երեք հատ կէս որդեգիր: Բացատրեմ. շատ ծնողներ պատրաստ են իրենց զաւկին համար գիշերօթիկի վճարին կէսը տալու, բայց ամբողջը չեն կրնար, ահա՛ ատոնց օժանդակելը շատ մը տեսակէտէ շատ կարեւոր գործ է, բայց ամենէն առաջ վճարող ծնողներու թիւը կ'աւելցնէ, փոխանակ ամբողջովին հանրային օժանդակութեան վրայ բեռ ըլլալու: Արդ կը խնդրեմ քեզմէ՝ խօսիս, ազդես եւ տեղեկանաս, նախ այդ թիւերէն որուն վրայ յոյս ունենամ, երկրորդ ես դիմե՞մ իրենց, թէ իրենցմէ բղխի առաջարկը. եւ ընդհանրապես ինչ կը մտածես ու կը թելադրես այս հարցի մասին:

Գիտեմ նոյնպէս որ Գահիրէի մէջ կայ տիկիններու առանձին միութիւն մը, անունը հաստատ չգիտեմ, բայց նպատակը աղջիկներու

կրթութիւնն է, եւ Փարիզի մօտերը եղող տիկնանց վարժարանին մէջ աղջիկները կը պահեն եւ եթէ չեմ սխալիր Մխիթեան նախագահն ալ տիկին Պալըքճեանն է: Արդ՝ կարելի եւ յարմար չէ արդեօք՝ որ այդ միութիւնդ նաեւ մեր վարժարանին մէջ աղջիկներու կրթութեանը նպաստէր, քանի մը աղջկան ուսման եւ սպրուստի հոգերը առանձնելով: Ես իմ առաջարկը շատ արդար, բնական ու գործնական կը նկատեմ, կը մնայ որ դուն ալ նոյն կարծիքի ըլլաս, եւ մանաւանդ յարկելի տիկիններըը իրենք. քանի որ իրենք չեն խորհած, պետք է յիշեցնել. յիշեցնելու ձեւը դուն խորհուրդ տուր ինծի: Եթէ յարմար դատես որ ուղղակի ես գրեմ, կը խնդրեմ որ իրենց ընկերութեան իսկական անունը եւ գործունեութեան իսկական պատկերը քանի մը տողով ինծի յայտնես:

Քու բազմապատիկ գրչիդ վրայ կը ցաւիմ նոր աշխատանք մը բարդած ըլլալուս համար՝ բայց վերջապես Հայ Ճեմարանն ալ քու չալակիդ բեռներեն մէկն է, որ քաշես պիտի:

Բոլոր սրտով յաջողութիւն կը մաղթեմ աշխատանքներուդ, ամրութիւն առողջութեանդ, կը ղրկեմ սրտագին բարեւներս տիկնոջդ եւ զաւկիդ եւ ջերմ համբոյր մըն ալ քեզի:

1) Վահան Նաւասարդեան, խմբագրապետ Գահիրէի «Յուսարեր» օրաթերթին:

2) Պետք է ըլլայ ՝ Խաչի:

3) Վ. Նաւասարդեանի կինը:

25. ԱՒ. ԻՆՃԵՃԻԿԵԱՆԻՆ

Սեպտ. 15

1) Բժ. Ինճեճիկեան, Քեսապ

2) Պ. Զաւրբճեան, Լաթաքիա

3) Մովսէս Տէր Գալուստեան

Յարգելի բժիշկ,

Հայ Ճեմարանի վարչութեան տրամադրութեան տակ դրած են գումարներ, որով կրնանք մէկ-երկու նոյնիսկ երեք ընդունիլ Ճեմարան

իբրեւ սան ուսման [առանց] վճարի եւ քանի մը հատ ալ իբրեւ պիչերօ-թիկներու:

Վարչութիւնս կը ցանկայ հնար եղածին չափ տարբեր կողմերէ ընտրելիներ ունենալ. Քեսապն ալ ցանկալի է, որ օգտուիլ կարողանայ այդ առաւելութենէն:

Արդ կը խնդրեմ ձեզմէ, որ մէկ-երկու տեղեակ ընկերներու հետ խորհրդակցելով մատնանիշ ընէք մեզի երկու-երեք մանչերու անուն պիչերօթիկի համար, մինչեւ վեց անուն ալ այն տեսակ տղոց կամ աղջիկներու, որոնք իրենք կրնան իրենց ապրուստը հոգալ եւ ապրիլ դուրսը Պէյրութի մէջ. իրենց ուսման վճարը կը հոգանք մենք: Ձեր ղրկած անունները ուրիշ կողմերէ ստացած անուններուն հետ կը դնենք քննութեան եւ կը ջանանք գոնէ հատ մը պիչերօթիկ եւ մէկ-երկու երթեւեկ ընտրուին Քեսապէն:

Ամէն անուան դէմը կը նշանակէք իր տարիքը եւ իր ընտանիքին կազմը եւ ընտանիքին աշխատողները եւ տնտեսական վիճակը, իր մինչեւ հիմա ուր ուսած ըլլալը եւ ուսման աստիճանը եւ ըստ մեր ծրագրի ո՞ր դասարանը մտնելու կարողանալը,- պատրաստական, առաջին, երկրորդ թէ՞ երրորդ, այս տարի Ճեմարանը այդ կարգերը միայն ունի, ֆրանսերէն գիտէ՞ եւ իրենչ չափով, տղան պիտի ըլլայ անպայման առողջ, ուշիմ եւ ազնիւ վարքով:

Ընտրուած աշակերտի աշխատասիրութենէն, ընդունակութենէն եւ վարքէն կախում կ'ունենայ յաջորդ տարիներուն ալ անվճար մնալը մինչեւ իր աւարտելը:

Ամէն մէկուն դէմը ձեր անձնական կարծիքն ու խորհուրդն ալ եթէ աւելցնելու ըլլաք՝ վարչութիւնս շատ չնորհակալ կը մնայ ձեզի իրեն ցոյց տուած այդ թանկագին օժանդակութեան համար: Ջանացէք դուք ալ մեզի պէս, հնար եղածին չափ իրապէս արժանաւորները, իրապէս վճարելու անկարողները առաջ քաշելու, պիչերօթիկի համար նախընտրելի է, որ տղան մտնէ Ճեմարան իր թարմ տարիքէն:

Նամակիս հետ կը ղրկեմ ձեզի Հայ Ճեմարանի ծրագիրը:

Սրտագին բարեւներով՝

26.

Բժիշկ Աւ. Ինճեճիկեանին
Քեսապ

Յարգելի՛ ընկեր,

Կը ցաւիմ, որ ձեր երկու ընտրելիներն ալ ընդունիլ չենք կրնար: Ձեր առաջին նամակը չենք առացած, իսկ երբ երկրորդը եկաւ, արդէն մեր յանձնաժողովի ընտրութիւնները կատարուած էին, եւ ազատ երթեւեկի տեղ չէր մնացած: Գիշերօթիկի մը համար Քեսապին համար յատուկ տեղ մը պահած էինք եւ հիմա ալ պահած ենք: Միայն մեր ուզածը թարմ տղայ մըն է, 12-13 տարեկան, 4-5 տարուան ուսում առած, որ կարողանանք մեր առաջին կամ պատրաստական դասարանը դնել եւ մեր դպրոցի ամբողջ շրջանը ընել տալ: Իսկ ծնողք ունեցող եւ քիչ-շատ բարեկեցիկ մէկը նմանապէս անյարմար է անվճար ընդունիլը:

Արդ, կը խնդրենք ձեզմէ, եթէ աւելի դեռատի տղայ մը ընտրել կրնաք, բարի ըլլաք մատնանիշ ընել մեզի, շատ բան պիտանի չի հետաքրքրեր մեզի, այլ ուշիմ, խելացի ու ագնիւ ըլլալը, նմանապէս առտղջ եւ իր միջոցներով ուսում առնելու անկարող:

Իսկ եթէ այդ տեսակ տղայ մը անմիջապես գտնելու յարմարութիւնը չկայ, պիտի խնդրեմ բարի ըլլաք շատ շուտով տեղեկացնելու մեզի, որ ուրիշ վայրէ մը կատարենք մեր ընտրութիւնը:

Ջերմ ու արտաքին բարեւներով
Հոկ. 30

27.

Պարոն Գալուստ Կիւլպէնկեանին
Փարիզ

Յարգո՛յ Պարոն Գալուստ Կիւլպէնկեան,

Տեղեակ էք անշուշտ, որ երկու տարիէ ի վեր հիմնուած է Պէյրութի մէջ Հայ Ճեմարան մը, այսինքն ֆրանսական պետական լիսէներու համապատասխան ծրագրով միջնակարգ վարժարան՝ վրան աւելցուցած Հայ լեզուն, Հայ Հոգին եւ Հայ ուսումները: Թղթատարին կը յանձնենք ձեր անունին մեր ծրագիրը:

Առաջին տարին սկսանք մէկ դասարանով, հիմա ունինք լիսէի կանոնաւոր առաջին հինգ կարգերը, 78 աշակերտով, որոնցմէ 12-ը պիչերօթիկ. տարուէ տարի բացուելու են լիսէի վերջին երեք տարիներն ալ, երեք ճիւղով՝ գիտական, գրական եւ առեւտրական: Այժմ արդէն տարեկան պիւտճէն է 250.000 ֆրանք: Մէկ մասը կը հոգայ եւ մեծ դժուարութեամբ նոր հաստատուած Համազգային կրթական ընկերութիւնը, մէկ մասը կ'օգնէ Հայ կարմիր խաչը պահելով Հայ Ճեմարանին մէջ պիչերօթիկ ու երթեւեկի աշակերտներ, մնացեալն ալ կը գոցուի աշակերտներու վճարներով:

Անշուշտ մեծ դժուարութիւն կը քաշենք. նախ չունինք դեռ մեր սեփական հողն ու շէնքը. մեր նեղ պիւտճէի մէկ խոշոր մասը ստիպուած ենք իբրեւ վարձ վճարելու դպրոցին համար..... շէնքերուն. գրադարանը, ֆիզիքի եւ չիմիի, բնագիտական աշխատանոցը, նախնական հիմքը միայն դրած ենք, եւ ընդհանրապես միջնակարգ վարժարանի մը բազմատեսակ նիւթական պահանջներուն չատ..... եւ թերի կերպով կրնանք բաւարարել: Մեզի աւելի եւս կը դժուարացնէ մանաւանդ ամէն կողմէ ձրի ընդունուելու բազմաթիւ խնդրանքները. ամենքն ալ ուսման սիրով վառուած երիտասարդ հոգիներ..... ծնողքներ չունին, կամ ուղղակի որբ ու անտէր: Այս ամէնուն..... առանց օգնող ձեռքերու չենք կրնար. ատիկա պարզ էր մեզի՝ մեր գործը դեռ չըսկսուած. եւ նոյնիսկ մենք կը մտածեինք դիմում ընել մէկ-երկու կարող կարեւոր դէմքերու, որոնց մէջն էր ամենէն առաջ բնականաբար ձեր անունը, բայց ձեզի մօտէն ճանչցող եւ ձեր կարծիքը իմացող բարեկամները խորհուրդ տուին, որ չդիմենք ձեզի քանի դեռ գործը մարմին առած չէր. նախ հիմնենք եւ ոտքի կանգնեցնենք գործը եւ յետոյ միայն յոյս դնենք ձեր օժանդակութեան վրայ: .....կը դիմենք ձեզի եւ բախտաւոր պիտի ըլլանք, եթէ այս մեր ձեռնարկը գրաւել կարողանայ ձեր համակրանքը եւ դուք ցանկանաք ձեզի հաճելի եղող եղանակով մը ձեր անունը տեւականօրէն կապել այս կրթական հաստատութեան. մենք խորապէս համոզուած ենք, որ օրուան պահանջած եւ հայ իրականութեան անհրաժեշտ պէտքի մըն է որ կը պատասխանենք եւ մեր այս գործը օրէ օր ..... եւ թէ մեծ դեր ունի կատարելու արեւելեան այս երկիրներու մէջ ցրուած հայութեան կեանքին մէջ: Եւ այս գործը ..... չատ աւելի կը շեշտուի եւ .....եթէ ձեզի նման լուրջ օժանդակութիւն եւ իրեն թիկունք ունենայ:

Խնդրելով որ ընդունիք մեր խորին յարգանքը, կ'ըսպասենք ձեր բարեացակամ պատասխանին:

1931 դեկտ. 27

28. Մ. ԵՂԻԿԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Մ. Եղիկեան,

Խորին շնորհակալութիւն ձեր սիրալիր նամակին համար: Շատ ցաւալի է, որ քիչերը կ'ըմբռնեն օրուան անհրաժեշտ պահանջները. անմիտ եւ անօգուտ բան մըն է հազարներով տոլար պատկեցնելը անորոշ պարագաներու մէջ «մեռեալ» նպատակներու. կ'ըսեմ «մեռեալ», որովհետեւ չատ եմ տեսեր այդ տեսակ հարստութեան ու անշարժացած գումարներու ոչնչացումը. աւտնք մեռած ծրագիրներ են. ով կենդանի գործ տեսնել կ'ուզէ կը մտածէ այսօրը:

Ձեր կարծիքին վրայ Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն կը դիմեմ ձեր ցոյց տուած հաւատներուն: Զափազանց ուրախ պիտի ըլլամ, եթէ այդ միութիւնները ուզեն գործակից եւ աշխատակից դառնան մեզի մեր այս անհրաժեշտ, բայց եւ բազմածախս գործին մէջ:

Ընդունեցէք

1931 Դեկտ. 30

29. ԱՐԱՄ ՏԷՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻՆ

Յարգելի ընկեր Արամ Տէր Մանուէլեան,

Ամերիկայի մեր կեդրոնական կոմիտէէն ստացած ենք ձեր ղրկած վաւերաթուղթերը, որով ընկեր Արտաշէս Պօղոսեանը կը դառնայ իմ ու Աղբալեանի ներկայացուցիչը Ամերիկայի մէջ հանգուցեալ Սահակ Յովհաննէսեանի կտակի գործին մէջ:

Ներփակ կը ղրկեմ բոլոր օգտակար եւ վաւերացուած չորս թղթերը:

Յայտնեցէք մեր սիրալիր բարեւները անձնապէս անձամբ մեր ընկերոջ, որ ասկէ առքը մեր ներկայացուցիչն է:

Կը խնդրենք իրմէն, ինչպես եւ ձեզմէ, որ բարի ըլլաք կտակի իսկական արժէքին (չէնք, գործ), վիճակին, պայմաններուն մասին աւելի մանրամասն տեղեկութիւն տալու մեզի, ինչպես եւ ձեր խորհուրդը, որ մենք ալ կարողանանք մեր ուզածն ու որոշումը յայտնել մեր ներկայացուցիչ ընկերոջը:

Ընդունեցէք, սիրելի ընկեր, սրտագին բարեւներս:

1932 Յունուար 18

30

Մեծապատիւ
Պարոն Գալուստ Կիւլպէնկեանին
Փարիզ

Յարգելի՛ Պարոն,

Պէյրութի Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ ձեզի, որ ստացած ենք պարոն Աւետիք Ահարոնեանի միջոցով մեզի ղրկուած եօթը հազար հինգ հարիւր ֆրանքի գումարը, որուն համար եւ կը յայտնենք ձեզի մեր խորին շնորհակալութիւնը:

Ձեռնարկած ենք գործի մը, որ շատ վեր է մեր նիւթական կարողութիւններէն եւ առանց ձեզի նման անձերու ձեռնտուութեան առաջ տանիլ չենք կրնար, մանաւանդ արդի համաստարած ֆինանսական ծանր ճգնաժամին մէջ: Բայց այդ գործը այնքան կարեւոր է եւ արժէքաւոր, եւ մեր այս երեք տարուան ջանքերովը այնքան հիմնուած ու յաջողած, որ կը յուսանք արժանի պիտի ըլլայ ձեր աւելի խոր ուշադրութեանն ու աջակցութեանը նաեւ ապկէ ետքը:

Կը խնդրեմ որ ընդունիք խորին յարգանքս.

Լեւոն Շանթ

1932 մարտ 30
Պէյրութ

31. ՍԱԹԵՆԻԿ ԲԷԳԼԱՐԵԱՆԻՆ

1932 Մարտ 30

Յարգելի Տիկին Սաթենիկ Բէգլարեան,

Կը խնդրեմ, որ ներփակ նամակը բարի ըլլաք ձեր եղբօրը հասցնելու. իր ճիշդ հասցէն չունիմ եւ չեմ ուզեր տարակոյսի մէջ մնամ, որ նամակս ստացած չէ: Այլ եւ այս առիթէն օգտուելով կը խնդրեմ նաեւ ձեր օժանդակութիւնը: Պատիւը ունիմ ճանչնալու ձեր զգացումները եւ գիտեմ որ պիտի ուզեք օգնել Հայ Ճեմարանին նման Հաստատութեան մը ամրացմանը ինչ միջոցով որ ինքներդ աւելի յարմար կը դատէք:

Ջեռնարկ մըն է ասիկա, մեր նիւթական ուժերէն շատ վեր, որ ահա երեք տարիէ ի վեր սկսած ենք եւ բարեբաղդաբար յաջողութեամբ եւ որ հիմա համատարած քրիզի պատճառով շատ ծանր վիճակի մէջ ենք ինկած: Ինչով եւ ինչ չափով որ օգնել կարողանաք՝ շնորհակալութեամբ կ'ընդունի Ճեմարանի վարչութիւնը ձեր ձեռքէն եւ կրնաք վստահ ըլլալ, որ արժէքաւոր եւ բարձր գործի մը եղած կ'ըլլայ ձեր օժանդակութիւնը:

Ամէն տեղեկութիւն, հաշիւ, մանրամասնութիւն եւ ծրագիր պատրաստ եմ ձեր տրամադրութեան տակ դնելու, եթէ ուզելու ըլլաք:

Խորին յարգանքով կը բարեւեմ ձեզի եւ ձերինները ու կը մաղթեմ առողջ եւ ուրախ օրեր:

32. ԱԲՐԱՀԱՄԻՆ

[1932] Մարտ 30

Սիրելի՛ Աբրահամ,

Տարիէն աւելի, քեզի նամակ մըն եմ գրած Պէյրութի Հայ Ճեմարանի Հաստատման եւ վիճակի մասին խնդրելով քու թանկագին օժանդակութիւնը: Մինչեւ հիմա որեւէ պատասխան չունիմ. կը վերագրեմ քու բազմազբաղ ու միշտ չարժուն վիճակիդ: Եւ ահա՛ նորէն կու գամ քեզի յիշեցնելու մեր Հաստատութեան դոյութիւնը, մեր թաւալած յուսահատ ջանքերը հայ միջնակարգ ու արժէքաւոր վարժարան մը բարձրացնելու այս բազմահայ կեդրոնին մէջ: Մեր դպրոցը հիմա Ֆրանսական լիսէական առաջին կարգերը ունի արդէն եւ յառաջիկայ տարի

բանալու ենք առաջին լսարանը, որ կը համապատասխանէ լիսէներու Բ. կարգին:

Գործն ինքնին բարդ է եւ մեծածախս, մեր եկամուտներն ալ անհաստատ. հիմա ալ չրջապատող քրիզը զգալ կու տայ մեծ չափերով եւ Ամերիկայէն ու Եգիպտոսէն գալիք նպաստը չափազանց պակսեցնելով, որով հիմա ինկած ենք կրկնակի նեղուժեան մէջ: Այսքան գործը աշխատելէն իրականացնելու համար եւ այս աստիճանի յաջողուժեան ու բարձրացման հասցընելէ ետքը, մեղք է, որ այս ձեռնարկի յարաճուն ընթացքը խանգարուի: Մեծ կարիք ունինք աջակցուժեան, բայց դուն գիտե՛ս, որ մեր գաղուժահայ անհատները ո՛չ պէտք եղած լայն հայեացքը ունին այս տեսակ հարցերու վրայ, ո՛չ ալ ընդհանրապես լուրջ հետաքրքրուժիւն: Դուն այն սակաւաժիւ մարդիկներէն ես, որուն կը խօսիմ ոչ իբրեւ հարուստ անձի մը, այլ ամենէն առաջ իբրեւ հարցին գիտակցուժիւն եւ հետաքրքրուժիւն ունեցող վաղեմի ընկերոջ մը: Եւ կը խնդրեմ քու աջակցուժիւնդ Պէյրուժի Հայ Ճեմարանին համար:

Կը յուսամ անպատասխան չի մնար գոնէ այս նամակս: Բոլոր սրտովս կը ցանկամ կեանքիդ ու ձեռնարկներուդ կատարեալ յաջողուժիւն, եւ ջերմապէս կը սեղմեմ ձեռքդ:

33. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

Մեծապատիւ Պարոն Վահան Խորասանճեան,
Մեծայա՛րգ բարեկամս,

Մի մեղադրէք, եթէ մեր նեղ վայրկեանին նորէն ձեզի դիմեմ, ամառը անգամ մը գրած եմ ձեզի, բայց ձեր քարտուղարէն միայն երկու տող ստացայ ձեր երկարատեւ բացակայուժիւնը յայտնող. ահա՛ ձեզի կը գրեմ նորէն: Հայ Ճեմարանը իբրեւ միջնակարգ եւ լուրջ կրթական հաստատուժիւն մը օրէ օր կը յառաջդիմէ. հիմա ֆրանսական լիսէներու առաջին հինգ կարգերը ունինք արդէն եւ 82 հոգի երկսեռ աշակերտուժիւն. յառաջիկայ տարի բանալու ենք առաջին լսարանը, որ լիսէի երկրորդ դասարանին կը համապատասխանէ: Բայց այս յառաջդիմուժիւնը եւ յարատեւուժիւնը շատ ծանր գնով ձեռք կը բերենք, մանաւանդ այս վերջին տարին, համատարած ֆինանսական

ճգնաժամը ծանրօրէն կը ճնշէ եւ մեր վրայ. Եգիպտոս իր յանձնառութիւնը չի կրնար լրացնել, չատ թերի եւ դանդաղ կը ղրկէ իր օժանդակութիւնը. Ամերիկայի Կարմիր խաչը գործնականին մէջ անցած տարի ղրկեց միայն իր խոստման կէսը՝ 1000 տոլար, եւ այս տարի ալ նորէն կէսն է միայն ղրկած. կրնաք ըմբռներ, որ խրուած ենք պարտքի մէջ. մեր ուսուցչական մարմինը երեք ամիսներէ ի վեր ռոճիկ չէ ստացած: Բայց այս բոլորին հակառակ վճռած ենք ամէն գնով դիմանալ եւ այս աստիճան լուրջ եւ պէտքատր Հաստատութիւն մը այս աստիճան բարձրացման հասցընելէ ետքը ամէն գնով պահելու աշխատիլ եւ աւելի ալ առաջ մղել, եւ մեր յոյսը մեր այդ ճիգերուն մէջ դրած ենք. 1) մեր աշակերտութեան հետզհետէ բարձրացող աշակերտական թուականերուն վրայ, 2) մէկ-երկու հաստատութեան վրայ, 3) քանի մը գիտակից ու կարող անձերու համակրանքին եւ օժանդակութեան վրայ:

Առաջին օրէն, Պարոն Խորասանճեան, մենք մեր հոգին մէջը ձեզի նկատած ենք մեր այս ձեռնարկին մօտիկ բարեկամ եւ աշխատակից. անգամ մը միայն պատիւ եմ ունեցեր ձեզի հետ երկարատեւ եւ լրջօրէն խօսելու եւ ձեզմէ բաժնուած եմ այդ խոր համոզումով, եւ ատոր համար է, որ այսպէս առանց այլեւայլութեան սիրտ կ'ընեմ ձեզի այս բոլորը գիտակ եւ բաց գրելու:

Ես անշուշտ յոյս ունիմ, որ դուք անմիջական ձեր աջակցութիւնը հիմա ալ չէք խնայեր մեր Հաստատութեան եւ պիտի ցանկաք օգնել մեզի հիմա ալ ինչով եւ ինչ չափով որ յարմար գտնէք. եւ ատոր համար մեր Հաստատութիւնը միշտ ալ երախտապարտ է ձեզի:

Բայց ես կը ցանկամ ձեզմէ աւելին, ես ինծի բաղդատր պիտի համարեմ, եթէ մեր արդէն հիմք բռնած եւ բարձրացման ճամբան բռնած այս կարեւոր գործը աւելի լրջօրէն եւ աւելի խոր կերպով գրաւել կարողանար ձեր ուշադրութիւնը. որ դուք ո՛չ միայն իբրեւ գիտակից հայ հոգի մը, եւ իբրեւ ազնիւ օժանդակողի մը մօտենայիք մեր Հայ Ճեմարանին, այլ կամենայիք մօտէն իրաղեկ ըլլալ անոր կեանքին ու գոյութեան եւ արժանի համարէիք ձեր անձնական մօտիկ գործակցութեան եւ ձեր մասնակից աշխատակցութեան: Ես գիտեմ, որ լուրջ կրթական ձեռնարկ մը բարձրացնելը ձեր հոգին զբաղեցուցած է եւ կ'ըզբաղեցնէ. արդեօք մեր Հայ Ճեմարանը չէր կրնար ձեր այդ ցանկացած Հաստատութեան դերը խաղալ: Օրինակի համար, արդեօք կարելի՞ չէր, որ դուք ձեզի հետ կապելով ձեր մէկ-քանի բարեկամները,

ինչպէս ինծի խօսած էք այն ժամանակ, յանձն առնէիք ապահովել տարուէ տարի օրինակի համար Հայ Ճեմարանի չէնքերուն վճարը միայն, որ տարեկան մօտաւորապես 27.000 ֆրանք է, կազմելով տեսակ մը մշտական խնամակալ մարմին մը ձեր նախագահութեան տակ մեր Հայ Ճեմարանին վրայ: Կամ պահելով օրինակի համար նոյն խնամակալ հոգածութեամբ քանի մը գիշերօթիկ. մէկ գիշերօթիկի վճարը 5000 ֆրանք է: Կամ ապահովելով օրինակի համար Ճեմարանի մէջ աւանդուող գիտական եւ գրական առարկաներէն այս կամ այն ճիւղի մէկ քանի ուսուցիչներու տարեկան առնուազն ռոճիկ մը: Ասով ահագին թեթեւութիւն տուած կ'ըլլաք մեր գործին, նաեւ կը դառնաք տեսական նեցուկ մը մեր հաստատութեան: Մտածեցեք անգամ մը գրածիս վրայ:

Յամենայն դէպս գիտցած եղէք, որ Հայ Ճեմարանի վարչութիւնը մեծ ուրախութեամբ դէմ կու գայ ձեր ցանկութիւններուն եւ պահանջներուն՝ մեր միասին աշխատիլը հաստատ դարձնելու եւ մեր այդ ձեռնարկին հիմքերը վերջնականապէս ամրացնելու համար:

Ձեզի կը ղրկեմ այս նամակիս կից Համազգային ընկերութեան առաջին տեղեկագիրը, ուր կը գտնէք եւ Հայ Ճեմարանի տեղեկագիր եւ հաշիւները: Ես ինքս ալ միշտ պատրաստ եմ տալու ձեզի ամէն հաշիւ, բացատրութիւն եւ տեղեկութիւն, ինչ որ ունենալ ցանկանաք:

Ընդունեցէք, պարոն Խորասանճեան, իմ խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

Ապրիլ 2, 1932

34. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

Յարգելի Պարոն

Վահան Խորասանճեան,

Ստացած եմ ձեր ապրիլ 22 թուակիր նամակը եւ պէտք կ'ըզգամ իմ խորունկ շնորհակալութիւնս յայտնելու ձեր այդ ազնիւ ու սրտագին տողերուն համար:

Ճեմարանի վարչութիւնը երախտապարտ է ձեզի ե՛ւ ձեր ընծայած ուզած օգնութեան համար, եւ ձեր ուզած օգնութեան համար եւ ձեր ապագայի դիտաւորութիւններուն համար:

Ձեզ նման անձերու աշխատակցութիւնն ու համակրանքն է մեր ամենէն մեծ մխիթարիչն ու օժանդակը:

Կը խնդրեմ որ ընդունիք խորին յարգանքս ու սրտագին բարեւներս:

Ապրիլ 30, Պէյրութ 1932

35. ՄԱԹԷՈՍ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ

1932 յունիս 30

Սիրելի՛ Մաթէոս[1]*,*

Կիրակի օրը տեղի ունեցաւ մեր Ձեմարանի հաշուետուի փակման հանդէսը եւ երկուշաբթի օրը դպրոցը գոցուեցաւ: Անմիջապես մեր հիմնարկին ուսուցիչներուն հետ նստանք խորհրդակցութեան, որուն կը նախագահէր Դասպարը[2] *եւ մանրամասն զեկուցում տուաւ վերջին ընդհանուր ժողովի մասին:*

Ընդհանուր ժողովը մեր կրճատած բիւտճէն չատ աւելի եւս կրճատած է. եւ մենք բոլորս սարսափելի զեղջումներու անհրաժեշտութեան առջեւ կը գտնուինք մեր առնելիքներուն վրայ հաշուելով ..... 40, 50, 60: Որոշուեցաւ բոլոր պարտքերը դնել մէկ կողմ յառաջիկայ երկու տարուան ընթացքին կտոր-կտոր վճարելի, եւ յուլիս մէկէն սկսած նոր սակերով ամռան ամսականներուն հողը քաշել առայժմ:

Սիրելիս, այս պայմաններուն մէջ ես ու Նիկոլը կը դժուարանանք քեզի նորէն Ձեմարան կանչելու դռնէ այս տարի, մանաւանդ որ պիւրօթիկներուն թիւը վախ ունինք որ մէկ-երկու հոգի աւելի նստարի վճարողի եւ .....պատճառով, այնպէս որ դուն հոս աշխատանք մը փնտռէ եւ գլխիդ ճարը տես. մենք կը խօսինք ի հարկէ միայն այս տարուան մասին. ինչպէս ընդհանրապէս մեր բոլոր որոշումները քոնն ես մէկ տարուան համար է. գալ տարի տեսնելով պիւրօթիկի վիճակը եւ քու տրամադրութիւնը [?] նորէն կը խօսինք իրար հետ:

Ձեմարանը քեզի պարտ է մինչեւ հոկտեմբեր մէկը 5 ամսական, այսինքն 60 օսմանեան ոսկի, եւ դուն ալ ի հարկէ միւս առնելիքտր ուսուցիչներուն ցուցակին մէջն ես, եւ յառաջիկայ տարուան ընթացքին կտոր-կտոր կը վճարենք. այդ վճարումները ըլլալու են ամէն անգամ իրարու հաւասար գումարներով, առանց ուշ դարձնելու ամէն

նկատում [?] առնելիքին մեծութեանը կամ փոքրութեանը, որպէսզի փոքր գումարներով առնելիքատրները չուտով փակեն հաշիւնին. մինչեւ հոկտեմբեր մերկ ենք բոլորովին եւ բնաւ յոյս չունինք որ պարտք վճարելու հասնի գործը, բացի եթէ Ամերիկայէն կամ անսպասելի ուրիշ գումար մը անցնի մեր ձեռքը բնականաբար կը ջանանք կատարելու մեր առաջին պարտքի վճարումը:

Ղրկած Հոգեբանութեանդ համար չատ ու չատ չնորհակալ եմ, ճիշդ իմ ուզած ձեւիս կազմուած գիրք է. դեռ թղթատած եմ միայն, բայց կ'երեւայ: Յոգնած եմ սաստիկ, ամէն ինչ խառնափնթոր, տունը պէտք է փոխուի. եւ անորոշութիւն ինչ ընելիքիս եւ տունը արդէն անդրամ երկու ամիսէ ի վեր. մնացածը կրնաս երեւակայել:

Տիկնոջդ եւ քեզի սրտագին .....

1. Մ. Փափազեան, 1931-32 ուսումնական տարեշրջանին պաշտօնավարած Ճեմարանի մէջ իբրեւ անգլերենի ուսուցիչ:

2. Գասպար Իփէկեան, Համազգայինի ընկերութեան հիմնադիրներէն, որ այդ ժամանակամիջոցին կը գտնուէր Միացեալ Նահանգներ:

36. ԱՒԵՏԻՔ ԱՀԱՐՈՆԵԱՆԻՆ

Սիրելի՛ Աւետիք[1],

Քու խորհուրդիդ համեմատ ահա՛ կը ղրկեմ Ալեքսանի պատրաստած նամակս որ ընթացք տաս:

Ճեմարանի վարչութիւնը եւ ուսումնական մարմինը որոշած ենք յամառ ու չիտակ յառաջ տանիլ մեր վրայ առած մեր պարտականութիւնը. դիմանալ կարողանալու համար մեր այս տարուան ռոճիկները զեղչեցինք հարիւրին [?] ..... յիսուն: Նոր աւելի ընդարձակ չէնք վարձեցինք աշակերտութեան մեծցող թուին յարմարելով եւ հոկտեմբերին կը բանանք մեր առաջին լսարանը գիտական եւ գրական բաժիններով: Գիտական ճիւղը կը պատրաստէ պետական պաքալօրիայի համար:

Մնացած մեր վիճակը քեզի ծանօթ է արդէն: Բոլոր սրտովս կը ցանկամ եւ աչքերուդ եւ քեզի կատարեալ առողջութիւն:

Սրտագին բարեւներս ուիկնոջդ ու քեզի. կը սեղմեմ ձեռքդ:

1932 յուլիս 24
1. Հատնաքար Ա. Ահարոնեանին:

37. Ա. ՉԱՄԻՉԵԱՆԻՆ

Յարգելի օրիորդ Ա. Չամիչեան,

Մեր տեսակցութեան հիման վրայ ահա կը գրեմ եւ կը հրաւիրեմ ձեզի Հայ Ճեմարանը ուսուցչական պաշտօնի 1932-1933 դպրոցական տարեշրջանին համար եւ կը յուսամ ու կը ցանկամ որ մօտիկէն երբ իրար ճանչնանք՝ կը դառնաք տեւականօրէն մեր Ճեմարանի մնայուն մէկ անդամը:

Դուք դպրոցին կապուած էք առաւօտները՝ ժամը 8-$1^1/_2$. օրական չորս ժամ դաս կ'ունենաք, միայն մէկ կամ երկու օր դուցէ ըլլայ ձեր դասերը հինգ. հիմակուընէ ճշդել չեմ կրնար:

Ձեր գլխաւոր աշխատանքը պատրաստական դասարանին մէջն է, ֆրանսերէն .....առոնց հետ միշտ եւ դասարանին մէջ եւ դուրսը խօսելու էք բացառապես ֆրանսերէն:

Դուք էք աւանդելու ֆրանսերէն նաեւ յաջորդ Ա. դասարանին մէջ, նորէն միշտ ֆրանսերէն խօսելով:

Այլ եւ կը ցանկամ ձեզի յանձնեմ Գ. կամ Դ. դասարանի անգլերէն դասերը, Ճեմարանի մէջ անգլերէնը կ'սկսինք Գ. դասարանին մէջ: Կ'ուզեմ անգլերէնի համար երկու ուսուցիչ ունենանք, որովհետեւ աշխատանքը ըլլալու է խմբական ձեւով, ոչ դասարանական:

Շաբաթը 2 անգամ ընդհանուր հսկիչի օգնական պիտի ըլլաք դաշարներու առեն, ձեր միւս ընկերներուն նման, ուր նորէն պէտք է խոսափիք հայերէն խօսելէ:

Իբրեւ վարձատրութիւն պիտի ստանաք նոյնը ինչ որ մեր բոլոր միւս հիմնական ուսուցիչները, այսինքն ամիսը 7 օսմանեան, տարին 84 ոսկի: Ինչպէս արդէն մեր տեսակցութեան առեն ըսի ձեզի այս տարուան համար ամբողջ ուսուցչական մարմնի ռոճիկները չատ խոշոր զեղչերու են ենթարկուած եւ հաւասարած են իրարու:

Նոր տարեշրջանի դասերը կ'ըսկսին Հաւանօրէն Հոկտեմբերի 12-ին. Հոկտեմբերի սկիզբները լաւ է հոս ըլլաք:

Կը խնդրեմ անմիջապես պատասխանէք այս նամակիս ապահովուած եւ որ այս հարցը փակուած նկատեմ:

Ընդունեցեք, յարգելի օրիորդ, բարեւ[ներս] եւ յարգանքս:

Տհուր Շուէր - 1932 Օգոստ. 15

38. ԱՐՄԻՆԷ ԽԱՉԱՏՐԵԱՆԻՆ

Յարգելի՛ Օրիորդ Արմինէ Խաչատրեան,

Ստացած եմ ձեր երկու նամակները ալ: Այն ուսուցիչը, որ յունիս ամսին կը պայմանատրուի, իսկ Հոկտեմբերի սկիզբները, փոխանակ իր պաշտօնին գալու, երկու տողով կ'իմացնէ որ ուրիշ գործի է երթալու, ինծի կը թուի որ շատ պահանջկոտ ըլլալու իրաւունք չունի, եթէ իր նամակներուն պատասխանները շատ ճշդապահ չեն ըլլար:

*Գալով ձեր պահանջքի հարցին, դուք արդէն գիտէք, որ անցեալ յունիսէն մեր բոլորին ամսականները ահագին զեղչեր կրեցին եւ մեր բոլորիս ալ մինչեւ յուլիս պահանջները իբրեւ պարտք մնացին: Այս տարուան հաշուեկշիռը կազմուած է այն պայմանով, որ բոլոր եկամուտներով նախ պէտք է գոցուին **այս տարուան** պահանջները. եւ եթէ այդ պահանջները գոցուելէն ետքը բան մը աւելնայ անիկա պէտք է բաժնուի բոլոր պահանջատէրերուն վրայ հաւասար չափով առանց խտիր դնելու պահանջի գումարներու տարբերութեան, դիտմամբ որպէսզի փոքր գումարներով առնելիք ունեցողները, ինչպէս որ դուք էք, չտուով հաշիւները գոցուին:*

Մինչեւ հիմա եկամուտներով հազիւ ծածկած ենք ընթացիկ ծախսերը եւ մեծ յոյս մըն ալ չունիմ, արդի չրջապատող պայմանները աչքի առաջ ունենալով, որ չուտով նպաստաւոր փոփոխութիւն մը տեսնի ունենայ եւ մենք հնար ունենանք մեր առնելիքներու հաշուին բան մը ստանալու: Ձեր վիճակի մէջն ենք մենք բոլորս ալ 13 հոգի, բոլորս ալ նեղուած պայմաններու մէջ եւ դպրոցն ալ չենք թողուցած, բայց եւ այնպէս մեր հին առնելիքներուն կարգ չի հասնիր: Կրնաք վստահ ըլլալ, որ երբ որեւէ գումար մը աւելցուի առաջնայ, ատիկա

բաժնուելու է իսկոյն 13-ի վրայ եւ ձեր բաժինը իսկոյն կը հասցընեմ ձեզի: Դժբաղդաբար ասկէ տարբեր կերպով ձեր պահանջքը վակելու ո՛չ իրաւունք ունիմ, ո՛չ կարողութիւն:

Ընդունեցէք, յարգելի օրիորդ, յարգանքս եւ բարեւներս:

1933 ապրիլ 15

39.

«Հայրենիք»ի յարգոյ վարչութեան
Պոսթոն

Յարգելի՛ ընկեր Մ. Այվազեան,

Ձեմարանիս վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է ձեր երկու նամակները ու փոխադրած երկու չեքերը: Առաջին չեքը 10 տոլարի, որ նուէր է Ձեմարանական օրիորդ Արաքսի Զորպաճեանի կողմէ: Երկրորդ չեքը 72 տոլարի, ընկեր Պետրոս Զաքարեանի մահուան առիթով հանգանակուած գումար մը՝ ի նպաստ Հայ Ձեմարանին:

Հայ Ձեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ մեր խորին չնորհակալութիւնը թէ՛ յարգելի նուիրատուներուն եւ թէ «Հայրենիք»ի յարգոյ վարչութեանդ: Պարոն Տեմիրճեանին կը գրեմ նաեւ անկախ, քանի որ բարի էք եղած հասցէն մեզի յայտնելու:

Ընդունեցէք ջերմ ու սրտագին բարեւներս:

1935 մայիս 6
Պէյրութ

40.

Թալասի եւ Շրջակայից Հայրենակցական միութեան
Յարգոյ Վարչութեան

Տարուան սկիզբը պարոն Թադէոս Սահակը յայտնեց ինծի, որ Թալասի եւ Շրջակայից Հայրենակցական միութիւնը իր վրայ կ'առնէ Նահապետ Զոլաքեանի ոտման վճարը, որու վրայ յինուած ընդունեցինք Նահապետը իբրեւ աշակերտ:

Տարուան ընթացքին քանի-քանի անգամ պարոն Թադէոս Սահակեանին դիմած են, որ կատարէ այդ վճարը, մինչեւ հիմա ստացած եմ միայն օսմանեան ոսկի մը: Մենք ամեն կերպով չուզեցինք ձեզի չաւ նեղել, աչքի առաջ ունենալով արդի պայմանները, բայց դուք ալ պետք է աչքի առաջ ունենաք Ճեմարանի պայմանները:

Յառաջիկայ տարուընէ սկսած պատրաստական եւ Ա. դասարանները վճարելու են հինգ օսման. ոսկի. ձեզի դիւրութիւն տուած ըլլալու համար Նահապետի անցած տարուան վճարն ալ կը հաշուենք հինգ օսման. ոսկի, որով դեռ չորս օսմանեան ոսկի ունիք վճարելիք: Շատ պիտի խնդրեմ, որ չուտով լրացընէք այդ գումարը եւ փակէք ձեր անցած տարուան յանձնառութիւնը:

Կը յայտնեմ խորին յարգանքս Թալասի Հայր. միութեան վարչութեանդ եւ կը խնդրեմ ընդունիք բարեւներս:

1935 յուլիս 12

41.

Մեզրէի Ուսումնասիրաց
ընկերութեան յարգելի վարչութեան

Մեծարգելի՛ պարոններ,

Հայ Կարմիր խաչի վարչութեան միջոցով մեզի ղրկած ձեր 500 տոլլարը ստացած ենք չնորհակալութեամբ: Անչափ ուրախ եմ, որ Մեզրէի Ուսումնասիրաց միութիւնդ որոշած է որդեգիր մը պահել Հայ Ճեմարանին մէջ, որով եւ ձե՛ր միութիւնը կը դառնայ Թանկագին աշխատակից մը մեր վարած գործին: Այդ աշխատակցութեան եւ այդ համակրանքին չաւ պետք ունինք:

Ուզած էք գիտնալ երթեւեկի եւ գիշերօթիկի աշակերտներուն վճարը: Հայ Ճեմարանին մէջ գիշերօթիկ տղայ մը ինը ամսուան համար կը վճարէ 220 սիրիական ոսկի, որ արդի սակով մօտաւորապէս 293 տոլլարի կը հաւասարի. այս գումարին մէջն է անշուշտ նաեւ ուսման վճարը: Բայց հագուստեղէն, ճերմակեղէն, գրենական պիտոյք, երթեւեկ, լուրջ հիւանդութեան մը պարագային ըլլալիք ծախքերը եւ ամառուան երեք ամիսներուն հոգը կը մնայ տղուն ու իր խնամա-

կալներուն վրայ: Երթեւեկ աշակերտի մը միայն ուսման վճարը տարբեր-տարբեր է նայելով դասարանի. միջին հաշուով կրնաք հաշուել տարեկան 50 տոլար: Մեկէն աւելի դիչերօթիկներ ունեցողը առաջին տղուն համար կը վճարէ լրիւ, միւսներէն ամէն մէկը հարիւրին տասը զեղչ կ'ունենայ:

Ձեր փոխադրած դրամը ստանալնուս պէս անմիջապէս յարաբերութեան մտանք տեղիս խարբերդցիներու հայրենակցական միութեան հետ իր օգնութեամբ ու ցուցմունքներով ընտրելու համար ձեր գիչերօթիկ սանը, որ հնար եղածին չափ ընտրուած տղան արժանի ըլլայ ձեր ըրած զոհողութեան եւ մեր ամենուն ջանքերուն:

Կը յուսամ մէկ-երկու չաբաթէն կարողանամ յայտնել ձեզի իր անունը եւ մանրամասնութիւնները:

Առայժմ կը խնդրեմ, որ ընդունիք խորին յարգանքս:

1935 սեպտ. 26

42.

Բժ. Ա. Քիլլիեանին
Ջիվաքօ

Յարգելի՛ պարոն բժիշկ,

Ձեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ մեր խորին չնորհակալութիւնը ձեզի եւ պարոն Արզուհալճեանին, որուն հասցէն դժբաղդաբար չունիմ:

«Հայրենիք» թերթէն եւ ընկեր Գասպար Իփէկեանի բերնէն տեղեկացանք, որ որոշած էք տպագրական պեղալ մը նուիրել Հայ Ճեմարանին: Շատ ուրախ ենք, որովհետեւ ձեր նուէրը իսկապէս որ մեծ պահանջի մը դէմ կու գայ: Հայ Ճեմարանին ուսուցիչները, մանաւանդ վերին կարգերուն մէջ հարկադրուած են իրենց դասապրքերը իրենք պատրաստելու այդ կարգի ու այդպիսի գործիքներու [?]..... մեր Հայ իրականութեան մէջ չգտնուելուն պատճառով:

Ձեռագիրներու վրայ դասաւանդելը չատ դժուար եւ ժամանակ խլող է. իսկ պեղալով այդ բոլոր դասապրքերը օրը օրին թերթ-թերթ կարելի է տպել, որով ո՛չ միայն մեր Ճեմարանական դասաւանդութեան մեծ դիւրութիւն մը տուած կ'ըլլաք, այլ եւ քանի մը տարիներու ըն-

թացքին հայ գրավարժուհեան մէջ կը մտնէ հայերէն դասագրքերու շատ կարեւոր չարք մը:

Անհամբեր կ'ըսպասենք ձեր թանկագին նուէրի գալուն, եւ ինչքան չոտ ստանանք, այնքան երախտապարտ կը մնանք ձեզի:

Ընդունեցեք մեր խորին յարգանքն ու սրտագին բարեւները:

1936 յունուար 8

43.

Տիկին Նուարդ Երկանեանին
Սէն-Լուի

Յարգելի՛ Տիկին,

Խորին շնորհակալութեամբ ստացանք պարոն Գասպար Իփէկեանէն յիսուն տոլարի գումարը, որ դուք նուիրած էք Հայ Ճեմարանի գրադարանին ձեր եղբօր Արսէն Էքմէքճեանի յիշատակին:

Յարգա՞նք ձեր եղբօր յիշատակին: Իսկ ձեզի կը յայտնենք մեր սրտագին ուրախութիւնը ձեր ցոյց տուած համակրանքին համար: Մեր մօտաւոր ու հեռաւոր բարեկամներու գիտակից համակրանքին վրայ է հաստատուած մեր այս ձեռնարկին յաջողութիւնը:

Ընդունեցէք, յարգելի տիկին, ջերմ յարգանք:

1936 յունուար 10

44.

Բժ. Ս. Քէշիշեանին
Տիթրոյիթ

Յարգելի՛ պարոն բժիշկ,

Ձեզի եւ ձեր քենիին, օրիորդ Զուարթին Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ մեր խորին շնորհակալութիւնը ձեր նուիրած գրի մեքենային համար:

Գրի մեքենան ստացած ենք ընկեր Գասպար Իփէկեանէն եւ մեքենան կը կատարէ արդէն իր պաշտօնը օգտակար կերպով: Այս վայրկեանին երկու հոգի կ'աշխատի վրան:

Դուք ալ, պարոն բժիշկ, օրիորդն ալ ընդունեցեք խորին յարգանքս ու սրտագին բարեւներս:

1936 յունուար 10

Պէյրութ

45.

1936 յունուար 10

Մամբրէեան ընտանիքին Տիթրոյիթ

Յարգելի տէր եւ տիկին Գ. Մամբրէեան,

Խորին չնորհակալութեամբ առացած ենք 25 տոլարի չէքը, որ դուք կը նուիրէք Հայ Ճեմարանին ձեր մանչ զաւակ մը ունենալուն առթիւ:

Ձեր նուէրը թանկ է մեզի համար, ձեր նուէրին ետեւի թանկագին է մեզի համար ձեր ունեցած ջերմ զգացումները դէպի մեր հաստատութիւնը: Ձեր նմաններուն համակրանքին վրայ է հաստատուած արդէն մեր ուժը եւ վստահութիւնը:

Բոլոր սրտով կը մաղթեմ բազդաւորութիւն ձեր առաջին զաւկին եւ բարգաւաճութիւն Մամբրէեան ընտանիքին

Ընդունեցեք յարգանքներս:

46.

Ս. Թափառականին
Պոսթոն

Յարգելի՛ ընկեր Ս. Թափառական,

Ճեմարանի վարչութեան կոմէն կը յայտնեմ ձեզի մեր խորին չնորհակալութիւնը ձեր ուղարկած միքրոֆոնին համար: Ճեմարանի տուած հանրային ..... դասախօսութիւններու եւ այլ հաւաքոյթներու առեն ձեր ղրկած գործիքը եղաւ մեր այս տարուան ընդհանուր հետաքրքրութեան առարկան:

Ձեր այդ խնամքով ընտրած ու կազմած գործիքին համար պատուիրած ենք ճաշակաւոր տուփ մը, որ ձեր նուէրը դառնայ Ճեմարանի

սրահին մէջ նաեւ հաճելի զարդ մը:

Կը ղրկեմ ձեզի յարգանքս եւ սրտագին բարեւս:

1936 յունուար 14

47. ՀԱՅԿ ՃԵՐԱՆԵԱՆԻՆ

Յարգելի՛ պարոն Հայկ Ճերանեան,

Խորին չնորհակալութեամբ ստացած ենք ընկեր Գասպար Իփէկեանի միջոցով ձեր ղրկած գրքերն ու անգլերէն լեզուի ուսուցման գործիքը:

Եւ ասիկա նոր յաւելուած մըն է ձեր ցոյց տուած համակրանքին Հայ Ճեմարանին հանդէպ: Կ'ուզէի ամէն կերպով աշխատակից մը եւ օժանդակող մը ըլլաք մեզի ինչով որ կրնաք: Մեծ ուրախութեամբ ու սրտագին կը սեղմեմ ձեր ձեռքը:

1936 յունուար 16

48. ՏԻԿԻՆ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆԻՆ

1936, 20 ապրիլ

Յարգելի՛ տիկին Արիստակէսեան,
Թորոնթօ, Քանատա

«Հայրենիք»ի խմբագրութեան միջոցով Հայ Ճեմարանի վարչութիւնը ստացած է 45.82 տոլարի գումար մը, որ ձեր հանգուցեալ ամուսնի ընկերներուն կողմէ նուիրուած է Հայ Ճեմարանին ծաղկեպսակի փոխարէն, հանգուցեալի վերջին օրերու փափաքին համեմատ:

Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ խորին վշտակցութիւնս եւ չնորհակալութիւնս ձեզի եւ ընկերներուն. եւ յատկապէս կը յայտնեմ խորին յարգանքս ձեր հանգուցեալ ամուսնոյ յիշատակին:

49. ԱՐՏԱՇԷՍ ԽՈՋԱՄԻՐԵԱՆԻՆ

Յարգելի՛ պարոն Արտաշէս Խոջամիրեան,

Ստացած եմ ձեր եւ տիկնոջ սիրալիր նամակները, չնորհակալ եմ:

Հասած է Banque Francaise-ի միջոցով ձեր ղրկած վաթսուն անգլիական ոսկին, որ ըրած է 6298 ֆրանսական ֆրանք եւ 80 սանթիմ:

Այդ գումարը նոյն պանքայէն ստացած չէքով մը փոխադրած եմ, ըստ ձեր գրութեան, պարոն Արմենակ Ղուկասեանին Neuilly, Փարիզ:

Ներփակ պիտի գտնէք պանքայի հաշիւը, ինչպէս եւ Ալեքսանի ձեր ուզած ստորագրութիւնը:

Դուք եւ տիկինը ընդունեցէք յարգանքս ու բարեւներս:

1936 Նոյ. 6

50.

Մեծապատիւ Պարոն Արմենակ Ղուկասեանին,

Պարոն Արտաշէս Խոջամիրեանի կարգադրութեամբ կը փոխադրեմ ձեզի չէք մը վեց հազար երկու հարիւր ինըսուն եւ ութը ֆրանսական ֆրանքի եւ ութսուն սանթիմի:

Cociété Générale-ի 6112 թիւ չէքը պիտի գտնէք ներփակ:

Կը խնդրեմ, որ իսկոյն տեղեկացնէք ինծի ստացած ըլլալնիդ, ինչպէս եւ անշուշտ կը յայտնէք պարոն Խոջամիրեանին:

Յարգանքով՝
Լեւոն Շանթ

1936 նոյեմբեր 6
Պէյրութ

51. ՄԿՐՏԻՉ ՃԱՆԻԿԵԱՆԻՆ

Յարգելի՛ ընկեր Մկրտիչ Ճանիկեան,

Հայ Ճեմարանի գրադարանին ըրած ձեր թանկագին նուէրը ստացուած է: Քանի եւ վեց հատոր կազմած «Հայրենիքներու Հաւաքածոն»:

Ձեր գրքերը մաքսատունէն ուշ հանուեցան, բայց արդէն հասած են եւ հիմա մաս կը կազմեն Հայ Ճեմարանի մատենադարանին, ուր եւ արձանագրուած են ձեր անունով:

Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ ձեզի մեր խորին շնորհակալութիւնը թէ՛ ձեր այդ արժէքաւոր նուէրին համար եւ թէ այն ջերմ վերաբերումին հանդէպ, որ դուք ցոյց կու տաք մեր հաստատութեան:

Ընդունեցէ՛ք, յարգելի ընկեր, խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

1936 դեկ. 10

52. ԼԻԻՍ ՓՈԹՈՒՔԵԱՆԻՆ

Մեծարգո՛յ տիկին Լիւսի Փոթուքեան,

Պատիւ ունիմ ձեզի յայտնելու, որ Հայ Ճեմարանին վարչութիւնը ձեր ամուսնուն մահուան դժբաղդ լուրը առնելուն պէս տուաւ հետեւեալ որոշումները.

Նախ՝ մշտապէս պահել Հայ Ճեմարանին մէջ սան մը Վահրամ Փոթուքեանի անունով:

Եւ երկրորդ՝ եթէ դուք կամենաք ձեր երկու զաւակներուն Հայ Ճեմարանին մէջ ուսում տալ՝ անոնք կ՛ըլլան մեզի համար մեր զաւկին պէս եւ ազատ ամէն ուսման վճարէ:

Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն կը յայտնեմ ձեզի, յարգելի տիկին, մեր խորին վշտակցութիւնը: Ընդունեցէք յարգանքս:

Յունուար 20, 1937

53. ԱԼԵՔՍԱՆ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ

Մեծապատիւ պարոն Ալեքսան Մելիքեան,

Ուրախութեամբ ստացած ենք ձեր սիրուն նուէրը՝ անգլերէն լեզուի երկու հատոր բառարանները գեղեցիկ կազմով:

Հայ Ճեմարանի վարչութեանս անունէն կը յայտնեմ ձեզի մեր խորին շնորհակալութիւնը ձեր այդ նուէրին համար, ինչպէս եւ ձեր ցոյց տուած ընկերական ջերմ վերաբերումին:

Խորին յարգանքով եւ սրտագին բարեւներով

Յունուար 20, [1937]

54. ԵՐՈՒԱՆԴ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻՆ

Մեծապատիւ պարոն Երուանդ Պաղտասարեան,

Ուրախութեամբ ստացած ենք ձեր սիրուն նուէրը՝ «Մուսա Տաղի քառասուն օրերը» անգլերէն լեզուով:

Խորապէս շնորհակալ ենք ե՛ւ ձեր նուէրին համար ե՛ւ ձեր այդ ուշադրութեանը մեր Հաստատութեան հանդէպ:

Ընդունեցէք, յարգելի՛ պարոն, խորին յարգանքս:

Յունուար 20, [19]37

55. ԱՐՏԱՇԷՍ ԽՈՃԱՄԻՐԵԱՆԻՆ

1937 փետրուար 22

Յարգելի՛ պարոն Արտաշէս Խոճամիրեան,

Ստացած եմ ձեր յունուար 30 թուակիր նամակը այսօր փետրուար 20-ին եւ չատ կը զարմանամ:

Ձեր հոկտեմբեր 24 նամակի համաձայն կատարած եմ անմիջապես ձեր խնդիրը եւ դրամը փոխադրած եմ ձեր ցոյց տուած հասցէին: Ահա՛ կը ղրկեմ ձեղի իմ երկու նամակներուս պատճէնը, որ կու տայ ձեր ուզած բոլոր տեղեկութիւնները: Ղուկասեանին ղրկած եւ չէքը պարունակող նամակս ի հարկէ ապահովագրած է. Պէյրութի փոստային տուած ստացականի կնիքը կը կրէ 1936 նոյեմբեր 6 թուականը եւ իր նումերն է 491: Չէքը հանել տուած եմ իմ անուանս եւ անտոսկ եմ ըրած Արմենակ Ղուկասեանին, որ ինծմէ ստացած ըլլալը ակընյայտնի դառնայ:

Մեծապատիւ պարոն Արմենակ Ղուկասեան

Պարոն Արտաշէս Խոջամիրեանի կարգադրութեամբ կը փոխանցեմ ձեզի չէք մը վեց հազար երկու հարիւր ինըսուն եւ ութը ֆրանսական ֆրանքի եւ ութսուն սանթիմի եւայլն (տես նախորդ նամակները):

Ես Ղուկասեանէն ո՛չ - մէկ պատասխան չեմ ստացած. կը կարծէի, որ անմիջապէս գրած է ձեզի եւ հաշիւները կարգադրուած: Երբ տեղեկութիւն ստանաք եւ այդ հաշիւը փակուի, խնդրեմ ինծի յայտնէք:

Ընդունեցեք յարգանքս եւ բարեւներս դուք եւ տիկինը. Ալեքսանը ամիս մը առաջ գրած է ինծի շատ սիրալիր եւ կարօտով նամակ մը, որուն համար սրտանց ուրախ եմ:

56.

Հայրենիքի վարչութեան

Սիրելի՛ ընկերներ,

Ստացած ենք ձեր յունուար 28 թուակիր նամակը ներփակ երկու չէքերուն հետ. առաջինը 18ուկէս տոլարի, որ հաւաքած է Պաղտասար Ֆիլեան Նոր-տարուան եւ Ծնունդի առթիւ Նիւ-Հեսըլի մեր ընկերներուն մէջ ի նպաստ Հայ Ճեմարանին:

Երկրորդը 94 տոլարի, որ հաւաքուած է ի յիշատակ հանգուցեալ ընկեր Նաճարեանի յատկացնելու համար Հայ Ճեմարանին:

Հայ Ճեմարանի տնօրէնութեան կողմէն կը յայտնեմ մեր խորին շնորհակալութիւնը ե՛ւ ձեռնարկող ընկերներուն ե՛ւ մասնակցող ընկերներուն ե՛ւ Հայրենիքի մեր ընկերներուն թէ՛ այդ նուէրներուն համար եւ թէ՛ ձեր բոլորի ջերմ վերաբերումին համար հանդէպ Հայ Ճեմարանին:

Այսօր գրեցի նաեւ տիկին Տիգ[րանուհի] Նաճարեանին մեր վշտակցութեան եւ շնորհակալութեան գիրը ինչպէս թելադրած էիք:

Ընկերական սրտագին բարեւներով

1937, 12 մարտ

57. ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՆԱՃԱՐԵԱՆԻՆ

Մեծարգոյ Տիկին Տիգրանուհի Նաճարեան,

«Հայրենիք»-ի խմբագրութեան միջոցով ստացած ենք ինքսուն եւ չորս տոլարի գումար մը, որ հանգանակուած է հանգուցեալ ընկերը Նաճարեանի յուղարկաւորութեան օրը՝ յատկացնելու համար Հայ Ճեմարանին ի յիշատակ հանգուցեալ ընկերոջ:

Հայ Ճեմարանի տնօրէնութեան անունով կը յայտնեմ ձեզի, տիկին, մեր խորին վշտակցութիւնը ամենէն առաջ, եւքն ալ մեր խորին չնորհակալութիւնը թէ՛ ձեզի եւ թէ՛ բոլոր մասնակցողներուն Հայ Ճեմարանին եղած այդ յատկացումին համար:

Ընդունեցեք, յարգելի տիկին, խորին յարգանքս ու բարեւներս:

1937 մարտ 12

58. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻՆ

Յարգելի՛ պարոն Գ. Կարապետեան,

Տիկնոջ մեկնելէն եւքը, երբ կարդացի ձեր նամակը, տեսայ իսկոյն որ ստացագիրը ճիշդ գրուած չէր եւ ինքս կ'ուզէի գրել ձեզի, որ ստացայ ձեր նոր նամակը: Ներփակ կը գտնէք սրբագրուած ստացագիրը:

Եւ այս առիթէն օգտուելով, Հայ Ճեմարանի վարչութեան կողմէն չնորհակալութիւն կը յայտնեմ նուիրատու պարոն Կարապետեանին, ինչպէս եւ ձեզի ձեր համակրանքին եւ ջանքերուն փոխարէն:

Մարգարիտն ու Մարին չատ լաւ են եւ լաւ ալ կ'աշխատին ու կը յառաջդիմեն. ապահով եղէք: Զախորդ է միայն այն, որ այդ երեխաներու վճարը թէ՛ Քերքուվի թաղականութեան եւ թէ՛ Մարիի ծնողքին կողմէն դեռ մինչեւ հիմա վճարուած չէ. Ճեմարանի տնտեսական պայմանները չատ սեղմ են եւ ամէն ուշացում ու անկարգութիւն մեղի չատ նեղ կը դնէ: Այս ամենը գրած եմ պարոն Կարպիսին [?], խոստացած էր Զատկէն անմիջապէս եւք ուղարկել Ճեմարանի դրամը,

բայց մինչեւ հիմա դեռ ոչինչ չենք ստացած: Քանի որ մեր երկու ապրիլեան վիճակով կը հետաքրքրուիք, այս տողերը ձեզի դրելու պարագայ համարեցի:

Ընդունեցէք, սիրելի պարոն, իմ խորին յարգանքս եւ ջերմ բարեւներս:

1937 ապրիլ 15

59. ՄԻՀՐԱՆ ԱՃԵՄԵԱՆԻՆ

Մեծարգոյ պարոն Միհրան Աճեմեան,

Ուրախութեամբ ստացած ենք ձեր նամակը, ուր կը յայտնէք ձեր պատրաստակամութիւնը նորէն օգնելու մեզի, որ ընդունակ եւ յարմար գիշերօթիկ մը ընտրուի իբրեւ սան Զմշկածագի Հայրենակցական միութեան: Վերջին երկու տիգրանակերտցիներու պարագաներու ընտրութիւնը կատարած էիք շատ ճիշդ եւ յաջող. ատոր համար շատ շնորհակալ ենք ձեզի: Եւ վստահ ենք, որ նոյն պիտակիչ ու սրտանց վերաբերումը դնելու էք նաեւ ձեր հայրենակցի ընտրութեան մէջ:

Ընտրելիի յատկութեան մասին նախորդ նամակիս մէջ գրած եմ արդէն. դուք ալ արդէն նախորդ վարձառուիչն մը ունիք եւ նոր բան չկայ աւելցնելու: Կը մնայ սպասենք ձեր եւ ձեր ընկերներու աշխատանքի արդիւնքին: Կը խնդրեմ որ շատ չուշանայ:

Ընդունեցեք խորին յարգանքս: Ջերմ բարեւներով կը սեղմեմ ձեր ձեռքը:

1937 յունիս 30

60. ՏԻԳՐԱՆ ԱՐԱՄԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Տիգրան Արամեան,

Նոր ստացանք Վեսըսթըր երկու հատոր բառարանները, որ ցանկացած էիք նուիրել Հայ Ճեմարանին:

Շատ չնորհակալ եմ սրտագին նուէրին համար, եւ անչափ ուրախ ենք այն ջերմ զգացումին համար, որ ձեզի ղրդեր է այդ նուէրը ընելու:

Այդ սրտակցութեան, այդ գաղափարակցութեան եւ այդ նեղբին համակրանքին վրայ է հիմնուած Հայ Ճեմարանը ամբողջապէս:

Ընդունեցէք, յարգելի պարոն, խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

1937 յուլիս 4

61. ՊԵՏՐՈՍ ԹԵԼԼԱԼԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Պետրոս Թելլալեան,

Ստացած ենք ձեր երկու նամակներն ալ. մինչեւ հիմա չենք պատասխանած, որովհետեւ գրած էիք թէ երկրէն դրամ հանելու իրատունք չկայ եւ մենք ալ չգիտէինք ինչպէս վարուինք, որ իրականանայ Բաբգէն Սիւնիի հանգուցեալ եղբօր կամքը:

Խորապէս շնորհակալ ենք ձեզի ձեր ուշադրութեան եւ հոգածութեան համար, եւ եթէ որեւէ կերպով կարելիութիւն կայ, որ այդ դրամը փոխադրէք մեզի, ինչպէս որ ձեր երկրորդ նամակէն կարելի է ենթադրել, շատ ուրախ կ'ըլլանք. առանալնուա պէս ստացագիրը բնականաբար կը ղրկուի ձեզի:

Խորին յարգանքով՝
1937 օգ. 14

62. ԱՐՄԵՆԱԿ ՂՈՒԿԱՍԵԱՆԻՆ

Սիրելի՛ Արմենակ,

Ուրախութեամբ ստացայ նամակդ եւ 62 տոլարի չեքը: 27 տոլարը կը յանձնեմ ընկեր Ազդալեանին, իսկ 35 տոլարը կ'արձանագրուի նուէր Ճեմարանին հանգուցեալ ընկեր Գասպար Սար-

գիսեանի կողմէ: Իսկ Հրանտ Ճուհարիկեանին կը յայտնես մեր խորին շնորհակալութիւնը:

Սրտագին բարեւներս քեզի, Արուսեակին ու աղջկանդ, առողջութիւն եւ յաջողութիւն բոլորիդ:

1937 օգ. 15

63. ՄԻՀՐԱՆ ԱՃԵՄԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Միհրան Աճեմեան, Hart Sissi N 5
Aley, Syrie

Ստացած եմ հոկտեմբեր 30 թուակիր ձեր նամակը, ինչպես եւ քննիչ յանձնաժողովի երեք անդամներուդ միաձայն որոշումը: Ձեր ընտրած Յակոբ Թորիկեանը ներկայացաւ Ճեմարան իր հօրը հետ եւ արդէն մեր գիշերօթիկ աշակերտն է իբրեւ սան Զմշկածագի հայրենակցական միութեան: Նստած է Ճեմարանի առաջին դասարանը:

Կը մնայ որ յայտնեմ ձեզի եւ ձեր երկու ընկերներուն Հայ Ճեմարանի վարչութեան անունով մեր խորին ու սրտագին շնորհակալութիւնը: Մենք ձեր եւ ձեր ընկերներուն վրայ կը նայինք իբրեւ մեր աշխատակից ընկերներուն վրայ:

Իմ խորին յարգանքս ու բարեւներս ձեր երեքին:

- Ներփակ նամակը բարի եղէք պարոն Ակվէճեանին [?] յանձնելու:

1937 Նոյ. 7

64.

Նիւքէսլի Հայ Տիկնանց միութեան

Յարգելի՛ տիկիններ,

Խորին շնորհակալութեամբ ստացած ենք ձեր նուէրը Հայ Ճեմարանին յիսուն տոլար: Ձեր ցոյց տուած ուշադրութիւնը եւ ձեր նա-

մակին ջերմ տողերը մեզի մեծ ուրախութիւն պատճառեցին:

Հայ Ճեմարանին վարչութեան կողմէն կը մաղթեմ Նիւքէսըլի տիկիններու միութեանդ յաջողութիւն եւ արդիւնաւէտ գործունէութիւն:

Խորին յարգանքով եւ սրտագին բարեւներով

1937 Նոյեմբեր 17

65. ՔԺ. ԽՈՐԷՆ ՍՈՂԻԿԵԱՆԻՆ

Սիրելի՛ բժիշկ,

Ինծի համար անչուշտ մեծ ուրախութիւն մըն է, որ իմ երբեմնի աշակերտիս հոգիին մէջ համակրանք եմ թողած, եւ որ դուք այս տակնուվրայ տարիներու ..... եւ պայմաններու մէջ ձեր ուսուցիչը բոլորովին չէք մոռցած եւ կը հետեւիք անոր գրական աշխատանքներուն: Ուրախ եմ, սիրելի բժիշկ, եւ շնորհակալ:

Ուրախ եմ նմանապէս, որ սիրայօժար աշխատակցութեան ձեր բաժինը բերել կ'ուզէք Հայ Ճեմարանի ամրացման եւ բարգաւաճման: Երթեւեկ աշակերտի մը միայն ուտման վճարն է տարեկան 50 տոլլար անխտիր բոլոր կարգերուն համար. 10 տոլլարի չափ ալ, եթէ կամիք կրնաք հաշուել, աշակերտի մը դրքերուն եւ գրենական պիտոյքներուն ծախքը:

Առայժմ ձեզի համար դնե ոչ-մէկ տղայ չեմ ընտրած դիտմամբ. փետրուարին կունենանք մեր կիսամեայ աշխատանքներու մանկավարժական ժողովը. այն ատեն կարօտ աշակերտներէ ամենէն լաւերէն, մեր ուսուցչական ժողովի կողմէն ամենէն աւելի գնահատուած երթեւեկ աշակերտներէն մէկը կարձանագրեմ իբրեւ ձեր այս տարեշրջանի սանիկը:

Կը յայտնեմ, սիրելի՛ բժիշկ, սրտագին բարեւներս եւ կը սեղմեմ ձեր ձեռքը:

1937 դեկ. 8

66. Վ. ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

1938 փետ. 22

Յարգելի պարոն Վ. Սարգսեան,

Ստացած եմ ձեր յունուար 16 թուակիր նամակը, ուր կը յայտնէք պարոն Վահան Խորասանճեանի քաղաքէդ բացակայ ըլլալը:

Նոր աւարտեցան Հայ Ճեմարանի աշակերտութեան քննութեան աշխատանքները գնահատող մեր մանկավարժական ժողովները, եւ այդ գնահատութիւններու հիման վրայ ալ Հայ Ճեմարանի վարչութեանը կատարած պարոն Վահան Խորասանճեանի գիշերօթիկ սանիկին ընտրութիւնը:

Ընտրած ենք Սահակ Սահակեանը, 10 տարեկան, ծնողքը տնտեսային ծանր պայմաններու մէջ. ինքը չատ համակրելի, ժիր եւ ուշիմ տղայ մը, հարցասէր, փայլուն կարողութիւններով եւ աշխատանքի բնատուր սիրով ..... ուսումնասէր է, ...ման .....իր առաջին կիսամեակին ստացած նիշերը, մեր բարձրագոյն թիւը 10-ն է:

Հայերէն՝ 9, ֆրանսերէն՝ 9, թուաբանութիւն՝ 9, իրապիտութիւն՝ 10, Հայոց պատմ.՝ 9, բարոյագիտութիւն՝ 10, գեղագրութիւն՝ 7 եւ մարզանք՝ 7:

Կը խնդրեմ որ այս բոլորը հաղորդէք պարոն Խորասանճեանին իր վերադարձին եւ ընդունիք իմ խորին յարգանքս:

67. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Համբարձում Յակոբեան,

Խորապես ուրախ եմ Հայ Ճեմարանի մասին ձեր կազմած գաղափարին համար եւ չնորհակալ եմ ձեր պարզ ու չիտակ գրուած տողերուն համար: Պարոն Աղբալեանն ու ես ձեր առաջարկը ամէն կողմէն ուշադրութեան առինք եւ հետեւեալ կերպով կրնանք ամփոփեր մեր կարծիքը:

Կրնանք Մայոր Ֆոնտին դիմում մը կատարել մեր կողմէն, որ միութիւնդ այդ գումարը յատկացնէ Պէյրութի մէջ կամ մօտերը Հայ Ճեմարանի համար սեփական հող գնելու համար: Հողը պիտի կոչուի

Մուրատի անունով, այդ հողի վրայ Հայ Ճեմարանի շինքը կառուցանելու համար կը դիմենք նոր գումարներու որոնումին: Երբ անհրաժեշտ գումարի մեծագոյն մասը դոյացած ըլլայ, կը ձեռնարկուի շինքի կառուցման եւ շինքի պատին վրայ աչքի իյնող տեղ մը ճաշակաւոր տախտակի մը վրայ կը գրուի, որ շինքը կառուցուած է Մուրատի նուիրած հողին վրայ: Մինչեւ շինքի կառուցումը հողը կրնայ ծառայել մեզի, իբրեւ Ճեմարանի աշակերտութեան խաղատեղ. կարելի է մինչեւ անգամ, ուրիշներուն ալ վարձու տալ տարեկան պզտիկ եկամուտ մը ապահովելով Ճեմարանին:

Հողին ու շէնքին միանգամայն Մուրատի անունը տալէ խուսափելու պատճառ մը չունինք. ընդհակառակը սիրով կը ցանկանք, բայց սկիզբէն այդ տեսակ յանձնառութեամբ մը դիմում կատարելէ կ'զգուշանանք, վախնալով որ յաջորդ նուիրատուներու կողմէ քննադատութեան ու խօսակցութեան առիթ չդառնայ, կամ արգելք չդառնայ, քանի որ Ճեմարանի հողին ու շէնքին համար հարկ եղած գումարը Մայոր Ծոնտի տրամադրել կրցած գումարէն չորս-հինգ անգամ աւելին պետք է:

Եթէ կը կարծէք, որ այս ձեւով կարելի առաջարկ մը հաւանականութիւն ունի ընդունուելու ընդհանուր ժողովին կողմէ՝ յայտնեցէք մեզի ձեր խորհուրդներուն հետ, որ դիմում կատարենք պաշտօնապէս Մայոր Ծոնտի վարչութեան: Մեզի գրելէն առաջ ալեկ է, որ դուք անձամբ այդ հարցի մասին առանձին ու մանրամասն խօսակցիք պարոն Գասպար Իփէկեանին հետ: Իփէկեանը Համազգային ընկերութեան սիրիական ճիւղին նախագահն է, այդ ընկերութեան հիմնադիրներէն եւ իրաւաւէրերէն մէկը, Ճեմարանի հաստատման ու կազմութեան [?] մէջ աշխատանքի մեծ բաժին ունի, շատ կը սիրէ մեր ձեռնարկած գործը եւ մեր ալ մօտիկ ու մտերիմ ընկերն է: Մենք հոսկէ կը գրենք իրեն, դուք ալ ուղղակի յարաբերութեան մտէք իրեն հետ անձնապէս: Թէ՛ ձեր առաջարկին գործնականացման կրնայ օգնել ձեզի եւ թէ՛ բոլոր այսպէս հեռուէն հեռու ըլլալիք խորհրդակցութիւններն ու թղթակցութիւնները սաստիկ համառօտել: Իր հասցէն՝ Պոսթոն «Հայրենիք»ի խմբագրութեան միջոցով:

Ընդունեցէք խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

1938 [?] մարտ 4

68.

1938 մարտ 8

Բժ. Խորէն Սողիկեանին

Սիրելի՛ բժիշկ,

Կը հաստատեմ 1937 դեկտեմբեր 8 թուակիր նամակս, ուր խոստացած էի յայտնեմ ձեզի առաջին կիսամեակին վերջը մեր մանկավարժական ժողովին կողմէ գնահատուած աշակերտի մը անունը, կարօտ եւ ընդունակ:

Ամենէն յարմարը իբրեւ ընդունակութիւն, իբրեւ բնաւորութիւն եւ իբրեւ կարօտ աղջիկ մըն է. այս տարի իրենց թաղային վարժարանը լրացուցած եկած է Ճեմարան, ընդունած ենք Ճեմարան անվճար՝ Հայ Կարմիր խաչին որդեգիրներու շարքը մտցընելու դիտաւորութեամբ. կը կարծեմ որ արժանի է ձեր համակրանքին ու նպաստին: Հայրը մեռած է, մայրը իր ձեռքի կարով կը պահէ զաւակը: Աղջկան անունն է Արշալոյս Տէրտէրեան[*]*. մէկ աչքին վրայ թեթեւ փառ մը ունի խեղճը, շատ ազնիւ, պարտաճանաչ ու խելացի աղջիկ մը. մեր առաջին դասարանի (ուման 6. տարի) աշակերտ է եւ ահա՛ իր առաջին կիսամեակին թիւերը. մեր բարձրագոյն թիւը 10-ն, 6-էն աւելին դասարանը կը փոխէ:*

Հայերէն՝ 9, գրականութիւն՝ 8, արաբերէն՝ 10, թուաբանութիւն՝ 8, բարոյագիտութիւն՝ 9, աշխարհագրութիւն՝ 10, ընդհ. պատմ.՝ 9, հայոց պատմ.՝ 9, երաժշտութիւն՝ 10, նկարչութիւն՝ 8, գծագրութիւն՝ 7, ձեռագործ՝ 10:

Կ՚ըսպասեմ ձեր համաձայնութեանը՝ աղջկան անունը արձանագրելու համար իբրեւ ձեր երեքեւեկ սանը:

Ջերմ համբոյրներով կը սեղմեմ ձեր ձեռքը:

---

[*] *Ինքը ծագումով էվերէկ[ցի] է, ծնած է Դամասկոս, 1924 յունիսին:*

Համազգային միութեան Ֆրանսա ճիւղին
Պարոն նախագահին

Յարգելի՛ պարոն Ճորճանեան,

Կը խնդրեմ որ Ճեմարանի վարչութեան կողմէն յայտնէք պարոն Ճ. Յարութիւնեանին մեր խորին շնորհակալութիւնը իր թանկագին նուէրին համար՝ Լինչի երկու հատորները, որ ընկեր Գասպար Իփէկեանը յանձնեց մեզի:

Կը յայտնեմ նաեւ մեր խորին շնորհակալութիւնը վարչութեանդ՝ իր հոգածութեան ու սրտագին վերաբերումին համար:

Ջերմ բարեւներով

1938 մարտ 29

70. ՏԻԳՐԱՆ ԱՐԱՄԵԱՆԻՆ

Յարգելի՛ պարոն ու սիրելի ընկեր Տիգրան Արամեան,

Խորին շնորհակալութեամբ ստացած ենք Հայ Ճեմարանի գրադարանին ձեր ղրկած նոր նուէրը՝ համաշխարհային աշխարհագրական ատլասը:

Նուէրին արժէքն ու վճարը չէ, որ նուէրին արժէքը կը բարձրացնէ, այլ տըտղին զգացումն ու տալու կերպը:

Սրտանց կը սեղմեմ ձեր ձեռքը:

Ջերմ բարեւներով

1938 մարտ 29

71. Պ. ՏԵՄԻՐճԵԱՆԻՆ

Յարգելի՛ ընկեր Պ. Տեմիրճեան,

«Հայրենիքի» վարչութիւնը վոխադրած է մեզի 72 տոլարի չէք մը, որ դուք հանգանակած էք Պետրոս Զանքոյեանի մահուան առթիւ ի

նպաստ Հայ Ճեմարանին:

Գումարը ստանալնուս պէս յայտնած ենք ձեզի Ճեմարանի վարչութեան խորին շնորհակալութիւնը «Հայրենիքի» վարչութեան միջոցով, բայց եւ այնպէս պարտք կ'ըզգամ նոյնը անձնական նամակով մը կրկնելու ձեզի:

Ճեմարանիս վարչութեան համար մեծ մխիթարութիւն մըն է, մեր հեռաւոր ընկերներու ցոյց տուած համակրանքն ու աջակցութիւնը:

Սրտագին կը սեղմեմ ձեր ձեռքը եւ կը յայտնեմ խորին յարգանք եւ բարեւներ թէ՛ ձեզի եւ թէ՛ մեր բոլոր բարեկամներուն:

1938 յունիս 29

72. ՄԿՐՏԻՉ ՃԱՆԻԿԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Մկրտիչ Ճանիկեան,

Շնորհակալութեամբ ստացած ենք ձեր այս տարի ուղարկած 4 կտոր կազմած «Հայրենիք» ամսագրերը, իբրեւ չարունակութիւնը ձեր անցած տարի ղրկած հատորներուն:

Բոլորի վրայ մակագրած եմ ձեր տոհմի յիշատակին նուիրուած ըլլալը ըստ ձեր ցանկութեան:

Կը յայտնեմ ձեզի խորին յարգանքս, յարգելի պարոն, եւ չատ չատ բարեւներ:

1938 յունիս 30

73.

Բժ. Խորէն Սողիկեանին

Յարգելի՛ բարեկամս.

Մեծ ուրախութեամբ ստացած եմ ձեր նամակը: Դուք ու ձեզ պեսները չատ մեծ յոյսեր կը դնէք մեր վրայ, որ մեզի կը ճնշէ: Իրողութիւնն այն է, որ Հայութեան այս խիստ ձախորդ պայմաններուն մէջ եւ նիւթական խիստ համեստ միջոցներովը կը ջանանք հայ մշակոյթի հնոց մը վառ պահելու, ինչքան որ կրնանք:

Շատ եւ չատ չնորհակալ ենք ես ալ, ընկերներս ալ ձեր այդ ջերմ

Համակրանքին համար, ինչպես եւ ձեր օժանդակութեան: Կը յայտնեմ որ ստացած ենք ձեր ուղարկած 60 տոլլարը:

Ջերմ ու սրտագին բարեւներով կը սեղմեմ ձեր ձեռքը:

1938 սեպտ. 25

74. ԽՈՐԷՆ ՍՈՂԻԿԵԱՆԻՆ

Յարգելի բժիշկ

Պարոն Խորէն Սողիկեան,

Անցած տարուան ձեր նամակով ցանկութիւն յայտնած էիք «կարօտ եւ ընդունակ գիշերօթիկ աշակերտի մը» ուսման ծախքերը հոգալ: Հարցուցած էիք պէտք եղած գումարը: Ես ձեր նամակին խոյն պատասխանեցի եւ երկրորդ նամակով մը յայտնած եմ ձեզի իմ կարծիքովս ձեր համակրանքին եւ օժանդակութեանը արժանի աշակերտուհիի մը անունը եւ մանրամասնութիւնները:

Ատկէ ետքը Ամերիկայի կեդրոնական մարմնի միջոցով ստացած ենք ձեր փոխանցած 60 տոլլարը եւ գրած ենք ձեր կողմէն իբրեւ նուէր: Ձեզմէ ուրիշ գրութիւն մը ստացած չըլլալով՝ ես հիմա վարան դրութեան մէջ եմ. չգիտեմ այդ 60 տոլլարը իբրեւ ձեր անիկի անցած տարուան վճարը համարեմ եւ չտալեմ ձեզի տեղեկութիւններ տալ ձեր անիկի մասին, թէ այդ 60 տոլլարը նկատեմ իբրեւ միանուագ նուէր մը ճեմարանին եւ այլեւս ձեզի աւելորդ անհանգստութիւն չպատճառեմ: Ամէն պարագայի լաւագոյն համարեցի գրեմ ձեզի այս նամակը եւ սպասեմ ձեր կարգադրութեան, եւ յամենայն դէպս իբրեւ յիշեցում տամ ձեզի մէկ-երկու տեղեկութիւն իբրեւ սան առաջարկուած աղջկան մասին:

Արշալոյս Տէրտէրեանը, որ հիմա 15 տարեկան է եւ ճեմարանի Բ. դասարանի աշակերտ, մեր մանկավարժական ժողովին կողմէ նկատուած է իբրեւ լուրջ ու ազնիւ աղջիկ մը, կամքի տէր ու վիրաւորուած, բայց ընդունակութեամբ եւ կանոնաւոր աշխատող, առաջին կիսամեակի իր թիւերն ալ շատ բարձր են, բոլորը կամ ութը կամ ինը:

Ընդունեցէք, սիրելի բարեկամս, խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

1939 փետր. 23

75. ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻՆ

Սիրելի՛ ընկեր Երուանդ Տէր-Մինասեան,

Ստացած ենք ձեր յունուար 15 թուակիր նամակը ուրախութեամբ: Ծովային միջնորդի կողմէ ալ ստացած ենք գրութիւն մը, որով կը յայտնէ ձեր ղրկած երկու արկղներու հասած ըլլալը: Բայց անկարելի է մաքսէն հանել մինչեւ որ չղրկէք մեզի ապրանքներու ցանկը, քանակը եւ արժէքը ներկայացնող պաշտօնական թուղթը (Export-Valutarth-Larung), որ փոխադրողը չէ ղրկած հաւանօրէն իրերու նուէր ըլլալուն համար: Ծովային միջնորդը գրած է արդէն այդ մասին իր թղթակցին, ես ալ ահա ձեզի կը գրեմ, որ տեղեակ ըլլաք:

Ստանալնուս պէս անշուշտ կը տեղակացընեմ ձեզի. առայժմ կը յայտնեմ ձեզի սրտագին բարեւներս:

1939 փետր. 24

76. ԱՍԱՏՈՒՐ ՃԻԿԵՐԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Աստուր Ճիկերեան,

Ուրախութեամբ ստացած ենք ձեր փետրուար 18 թուակիր նամակը:

Շիքակոյի եւ շրջանի սորաղցիներու անունով ղրկած 175 տոլլարը Ամերիկայի մեր կրթական մարմինը փոխադրած է մեզի իր 1937 թուականի Հոկտեմբեր 28 նամակին մէջ, որուն եւ անմիջապես յայտնած ենք ստացած ըլլալնիս եւ մեր շնորհակալութիւնները:

Նոյն մարմինը իր 1938 դեկտեմբեր 9 նամակով ղրկած է մեզի նորեն Շիքակոյի եւ շրջակայքի սորաղցիներու անունով 50 տոլլար:

Ձեր վերջին առաքումը 25 տոլլարի դեռ չենք ստացած. ..... Հաւաքած նամակները կը խմբէ ու միասին կը ղրկէ, հաւանօրէն մինչեւ ամիս-ամիսուկէս կ'ըստանանք նաեւ սորաղցիներու նուէրին այդ վերջին կտորը:

Այս գումարը ստանալու պէս «Հայրենիքի» միջոցով կը յայտնեմ նորէն եւ այդ առիթէն օգտուելով կը հետեւիմ ձեր խորհուրդին եւ կը

յիշեմ որ մինչեւ Հիմա սորագրիներու հաշուին ստացած ենք 250 տոլլար:

Հիմա ալ կ'օգտագործեմ այս առիթը ձեզի եւ Շիքակոյի մեր սորագրի հայրենակիցներուն մեր սրտագին շնորհակալութիւնը [յայտնելու] ձեմարանին հանդէպ ձեր բոլորիդ ցոյց տուած այս համակրանքին համար, ինչպէս եւ մեր խորին շնորհակալութիւնը ձեր վոխանցած 250 տոլլարին համար:

Ձեր բարեւները սիրով կը յայտնեմ ընկեր Արշակին եւ Իփէկեանին, եւ ինքս ջերմօրէն կը սեղմեմ ձեր ձեռքը:

1939 մարտ 17

77.

Մոնթեվիտէոյ-Ուրուկուայ
Կեդրոնական վարչական խորհուրդին

Յարգելի՛ պարոն առենապետ,

Շնորհակալութեամբ ստացած ենք Կեդր. վարչական խորհուրդիդ գրութիւնը, որով կը յայտնէք, թէ սեբաստացի Հանգուցեալ Հմայեակ Սերոբեանի ըրած կտակին համաձայն եւ Հանգուցեալի նիւեորքաբնակ եղբօր տղուն՝ Գաբրիէլի հրահանգով փոխադրած էք Պէյրութի Հայ Ճեմարանին 500 փէսօ Ուրուկուայի: Դրամը փոխադրած էք բժ. Բենիամին Գուլաքեանի անունը, Պէյրութ, չէքով մը 38 սթերլինի, 9 շիլինի եւ 10 բեննիի, օրուան սակացոյցին հետ:

Կը յայտնեմ Հայ Ճեմարանի վարչութեան անունով մեր երախտագիտութիւնը Հանգուցեալ Հմայեակ Սերոբեանի ազնիւ յիշատակին: Մեր խորին ցաւակցութիւնը Հանգուցեալի եղբօր՝ պարոն Գաբրիէլին եւ մեր շնորհակալութիւնը կեդրոնական վարչական խորհուրդիդ:

Կը յայտնեմ նմանապէս, որ այդ 38 սթերլինի, 9 շիլինի եւ 10 բեննիի չէքը Հայ Ճեմարանիս վարչութիւնը ստացած է արդէն բժիշկ Բենիամին Գուլաքեանէն:

Յարգելի՛ պարոն առենապետ, ընդունեցէք խորին յարգանքս:

1939 մայիս 4

78. Վ. ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Վ. Սարգսեան,

Սիրով ստացած եմ ձեր մարտ 2 եւ մարտ 14 թուակիր նամակները: Խորապես ուրախ եմ, որ պարոն Խորասանճեան գոհ է մնացած Ճեմարանի վարչութեան կատարած ընտրութենէն:

Պարոն Խորասանճեանի ցանկութեան համաձայն կը ղրկեմ ահա ներփակ իր սանի՝ Սահակ Սահակեանի՝ երկու լուսանկարները, որ բոլորովին նոր նկարել տուի:

Յարգելի պարոն Խորասանճեանին սրտագին բարեւներս. եւ ընդունեցեք յարգանքս:

1939

79. ԱԲՐԱՀԱՄԻՆ

1939 յունիս 27

Սիրելի՛ Աբրահամ,

Հայ Կ[արմիր] խաչի կեդրոնէն գրուած է մեզի, որ Կարպիս Ասեւոսեանը իրենց գիշերօթիկ սան կը վերցնեն:

Իր գրած նամակէն ալ կ'երեւայ որ մեր Գ., նոյնիսկ Դ. դասարանը մտնելու պատրաստութիւնը ունի:

Մենք 13-14 տարեկանէն վեր եղող տղաքը գիշերօթիկ ընդունելու կը դժուարանանք. փորձը ցոյց կու տայ որ անոնք դուրսը արդէն կազմուած կ'ըլլան եւ ո՛չ իրենց համար եւ ո՛չ ալ մեզի համար մեծ օգուտ չեն ունենար Ճեմարանին մէջ:

Բարեբաղդութիւն է, որ դուն անձամբ տղան կը ճանչնաս. եթէ առողջ տղայ է, եթէ ուսման սէր իրաւ որ ունի եւ եթէ իր բնատրութեամբ մաքուր եւ ազնիւ տղայ մըն է, տարիքին ուշադրութիւն չենք ըներ եւ կ'ընդունինք. գրէ ինծի քու կարծիքդ եւ տպատրութիւնդ, միայն շատ կը խնդրեմ, որ տղուն կամ տղու ծնողքին բարիք ընելու գաղափարով չառաջնորդուիս, այլ տղու ֆիզիքական եւ մտաւոր առողջութեամբը եւ բնատրութեան ուղղութեամբը:

Անոր Պէյրութ գալուն համար նախ պէտք է հոս դիմում կատարեն Ճեմարանի կողմէն վիզայի ստացումը դիւրացնելու համար, եւ այդ բոլոր պատմութիւնը ամիս մը, ամիս ու կէս ժամանակ կը խլէ անպատճառ, որով տղու հիմա անմիջապէս գալը խելքի մօտիկ չէ:

Քեզմէն՝ այս նամակին պատասխանը հասնելէն ետքը, եթէ ստացուած ըլլայ, օգոստոսի վերջերը կը կատարեմ դիմումը, եւ տղան բաւական է, որ Հոկտեմբերի 10-12-ին հոս ըլլայ:

Եթէ որեւէ կերպով աւելի շուտ Պէյրութ գալ կարող է, մենք բնականօրէն արգելք չունինք. բայց պիշերօթիկի բաժինի կազմուելէն առաջ, որ տեղի կ'ունենայ 10 Հոկտեմբերին, իր մասին որեւէ ծախք կամ խնամք յանձն առնել չենք կրնար:

80.

Բժիշկ Խորէն Սողիկեանին

Սիրելի՛ բժիշկ,

Ձեր նամակը ինծի մեծ ուրախութիւն պատճառեց. չատ թանկագին է մեզի համար ու անվոխարինելի հետաւոր բարեկամներու այդ սրտաբուխ համակրանքն ու աշխատակցութիւնը:

Ձեր նամակին հետ ստացած ենք նաեւ վաթսուն տոլարի չեքը, որով կը ծածկենք ձեր սանիկի այս տարուան հաշիւը. ու կը յայտնեմ ձեզի իմ խորին շնորհակալութիւնս:

Ճեմարանի ուսումնական տարեշրջանը լրացաւ եւ ես կը փութամ հաղորդելու ձեզի ձեր սանիկին երկրորդ կիսամեակին վիճակացոյցը:

Արշալոյս Տէրտէրեանը միշտ նոյն գիտակից ու խելացի աղջիկն է եւ աւտր համեմատ ալ իր նիշերը, հայերէն՝ 9, ֆրանսերէն՝ 8, արաբերէն՝ 8, թուաբանութիւն՝ 8, բնական պատմութիւն՝ 10, աշխարհագրութիւն՝ 9, ընդհանուր պատմութիւն՝ 8, Հայոց պատմ.՝ 9, երաժշտութիւն՝ 9, ձեռագործ՝ 10: Կը փոխադրուի Գ. դասարան:

Սիրով ու յարգանքով կը բարեւեմ ձեզի եւ ձեր տիկնոջը ու ջերմօրէն կը սեղմեմ ձեր ձեռքը:

1939 յուլիս 5

81. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

Մեծարգո՛յ պարոն Վահան Խորասանճեան,

Ուրախութեամբ ստացած եմ Նիսէն գրած ձեր նամակը եւ մեծ բաւականութիւն պատճառեց մեզի, որ վարչութեան կատարած ընտրութենէն գոհ էք:

Փետրուար 22 թուակիր նամակովս ղրկած եմ ձեզի ձեր սանիկի առաջին կիսամեայ աշխատանքներուն պատկերը: Հիմա որ դպրոցական տարին լրացաւ կը ղրկեմ ձեզի Սահակ Սահակեանի երկրորդ կիսամեայ վիճակացոյցը: Նոյն յաջողակ եւ արթուն մտքով փոքրիկն է միշտ, ատոր համեմատ ալ իր թիւերը. հայերէն՝ 9, ֆրանսերէն՝ 10, թուաբանութիւն՝ 10, աշխարհագրութիւն՝ 10, Հայոց պատմ.՝ 9, բարոյագիտական ընթերցում՝ 9, գեղագրութիւն՝ 7, մարզանք՝ 9: Պատրաստականէն կը վոխադրուի արդէն ճեմարանի բաժինը՝ Ա. դասարան:

Բոլոր սրտովս կը շնորհաւորեմ ձեր սանիկի յաջողութիւնը, կը յայտնեմ ձեզի, պարոն Խորասանճեան, խորին յարգանքս, եւ սրտագին բարեւներով կը սեղմեմ ձեր ձեռքը:

1939 յուլիս 5

82. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

Յարգելի պարոն Վ. Խորասանճեան,

Ստացած ենք ձեր յուլիս 8 թուակիր նամակը եւ չատ ուրախ ենք ձեր համակրական տողերուն համար:

Հարցուցած էիք ճեմարանի ընթացքին քանի տարի ըլլալը:

Հայ ճեմարանը ֆրանսական լիսէներու համապատասխան կազմ ունի եւ ծրագիր:

Ջորս տարի նախապատրաստական կարգեր են: Եւ եօթը տարի բուն ճեմարանական դասարաններ: Ուրեմն ընդամէնը 11 տարուան ուսում:

Ձեր սանիկը լրացուցած է պատրաստական չրջանը եւ վոխադրուած Ա. դասարան, ուրեմն եօթը տարի տեւելու է իր լրիւ ուսումը:

Հայ Ճեմարանի նպատակն է հայ չնչով եւ հայ լեզուով լրիւ միջնակարգ կրթութիւն մը տալ իր սաներուն, որը ուրախ եմ ամբողջովին կը համապատասխանէ ձեր վերջին նամակին մէջ արտայայտած ձեր ցանկութեան:

Ընդունեցեք, պարոն Խորասանճեան, խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

1939 օգոստոս 7

83.

Սիվրի-Հիսարի Հայրենակցական միութեան,

Մարսէյլ

.....առժամեայ դիւանին

Յարգելի նախագահ,

Ստացած ենք ձեր յունիս 15 թուակիր նամակը, եւ յունիս ամսու վերջերուն ալ հայ բարեսիրական ընկերութեան տեղիս մարմնի միջոցով ստացած ենք հինգ հարիւր ֆրանքը, որ մնծարգոյ առժամեայ դիւանդ բարի էր եղած բաժին հանելու Հայ Ճեմարանին:

Խորապես չնորհակալ ենք ձեր նուէրին համար եւ չատ ուրախ ենք ձեր ..... համար:

Ընդունեցէք խորին յարգանքս եւ սրտագին բարեւներս:

Օգոստ. 7 1939

84.

Կարապետ Աւետիսեանին

Տղա՛ս, այսօր ստացայ բարձր կոմիսարիայէն 9491 թուակիր թուղթը, որով կը յայտնեն, թէ արդէն գրուած է Avenyon-ի փրեֆէկին, որ կրնայ վիզա տալ Կարապետ Աւետիսեանին Պէյրութ գալու 1939-1940 ուսումնական տարուան համար:

Անմիջապես կրնաս դիմել եւ խակոյն ալ ճամբայ կ'ելլես:

Հետդ բերելու ես երկու ձեռք չապիկով հագուստ, վերարկու մը,

երկու զոյգ կօշիկ, մաշիկ մը, վեց ձեռք ներքին ճերմակեղէն, 6 անկողնի սաւան, 6 երեսսրբիչ եւ հատ մըն ալ մեծ ցամքիչ մը բաղնիքի համար:

Ճամբայ ելլելդ մեզի տեղեկացուր: Մարսէյլ հանդիպէ պարոն Յովհաննէս Պեննէեանին, որ գրած է ինծի, թէ իր տղան ալ այս օրերս ճամբայ պիտի իյնայ Ճեմարան վերադառնալու. ամառը գացած էր արձակուրդով. իսկ եթէ ոչ՝ կը բերես հօրմէն վերջնական պատասխան մը. Պեննէեանի հասցէն է Marseille, S՛ Mariel, Chateau Dalforelle.

Կը ցանկամ յաջող ճամբորդութիւն:

1939 Նոյ. 15

85. ԱՐՏԱՇԷՍ ԴԱՐԲԻՆԵԱՆԻՆ

Սիրելի՛ Արտաշէս,

Շատ չնորհակալ եմ 20 տոլլարի համար, որ իբրեւ «Օչին Պայլի» հաշուեփակ ղրկած ես «Հայրենիքի» կողմէն: Կը տեսնեմ, որ կ՛ընէք, ինչ որ կրնաք, որով եւ այդ մասին խօսիլը այլեւս աւելորդ կը դառնայ:

Ասկէ մէկ-երկու շաբաթ առաջ գրած եմ քեզի նամակ մը Հայրենիքի գրավաճառին ղրկած իմ դասագիրքերուս մասին. կը յուսամ, որ ըրած էք հարկ եղած կարգադրութիւնները:

Նիւ Եորքի մէջ Հայ Ճեմարանին ի նպաստ ըրած «Օչին Պայլ» ներկայացումէն ղրկած են մնացած արդիւնքը՝ 25 տոլլար. այլեւ ընկեր Խըմմէթեան եւ տոք. Գարակէօզեան նամակներ են գրած իրենց սիրալիր պատրաստական ըլլալը մեզի տեւական կերպով նպաստելու: Կը ղրկեմ Խըմմէթեանի նամակին այդ կտորը՝ .....:

Ամէն օժանդակութիւն մենք կ՛ընդունինք խորին երախտագիտութեամբ. եւ մեր ընկերներուս սիրալիր առաջարկին համար ալ բնականաբար միայն սրտագին շնորհակալութիւն ունինք: Բայց վախ ունինք, որ չըլլայ թէ գործերուն խաչաձեւում եւ երկուութիւն առաջանայ Հայ Կարմիր խաչին եւ այդ նոր կազմակերպութեան մէջ: Մեր ընկերներուն պատասխանելէ առաջ, այդ մասին գրեցինք Հայ Կարմիր խաչի կեդրոնական վարչութեան եւ ահա՛ քեզի ալ կը գրեմ: Կը խնդրեմ որ խօսիս կեդրոնականի մեր ընկերներուն հետ այդ մասին եւ

գրես մեզի ձեր կարծիքն ու խորհուրդը. ի՞նչ ձեւով կազմուի գործը, որ ո՛չ Հայ Կարմիր խաչի մեզի համար ըրած ձեռնարկները խաչաձեւուին եւ աւելորդ չփուռ ալ չառաջանայ, միեւնոյն ժամանակ մէկ-երկու ընկերներու այդքան սրտանց առաջարկէն լաւագոյն կերպով օգտուիլ կարողանանք:

Կը խնդրեմ որ հնար եղածին չափ շուտ պատասխան մը ղրկես:

Կարօտով կը համբուրեմ քեզի եւ սրտագին բարեւներ Նատիայինն:

10 ապրիլ

86.

Բժ. Մ. Գարակէօզեանին եւ
Եւ. Խըմէթեանին,

Նիւ Եորք,

Յարգելի ընկերներ, ներող եղէք որ ձեր երկու նամակներուն այսպէս միասին կը պատասխանեմ կրկնութիւններէ խուսափելու համար:

Ստացած ենք ձեր ղրկած 25 տոլարը. կը յայտնեմ Ճեմարանի վարչութեան կողմէն մեր խորին շնորհակալութիւնը ե՛ւ ղրկած դրամին համար ե՛ւ մանաւանդ ձեր ազնիւ դիտաւորութեան ե՛ւ ձեր թափած այնքան ջանքերուն համար. շատ է ցաւալի, որ այդքան աշխատանքի փոխարէն չէք կրցեր ունենալ լիովին յաջողած ըլլալու հոգեկան բաւարարութիւնը:

Մեզի մեծ ուրախութիւն պատճառեց մանաւանդ տեսակցօրէն Հայ Ճեմարանին օժանդակ մը դառնալու ձեր տրամադրութիւնը եւ առաջարկը: Մենք երախտագիտութեամբ կ'ընդունինք միշտ հաստատութեան ուղղուած ամէն աջակցութիւն եւ ամէն օժանդակութիւն նոյնիսկ պատահական անձերէ [?]. ո՛ւր մնայ յարգելի ընկերներու կողմէ եղած այդ տեսակ ազնիւ ու թանկագին գործակցութեան մը առաջարկը:

Մեզի միակ մտահոգութիւն պատճառող կէտն այն է, որ Հայ Կարմիր խաչի հոս մեզի համար ըրած ձեռնարկութիւններուն հետ

խաչաձեւում չըստացուի: Գիտէք որ մեր ձեմարանի բացման եւ այս աստիճան բարձրանալուն մէջ մեծ է Հայ Կարմիր խաչի դերը: Ինչ ձեւով եւ ինչ սահմանով եւ ինչ որոշ նպատակով մը գործը կազմակերպուի, որ չփոմներ եւ երկուտւթիւն չառաջանայ:

Մենք այս մասին գրեցինք նաեւ Հայ Կարմիր խաչի Կեդր. վարչութեան եւ ընկեր Դարբինեանին, ինչպէս խորհուրդ էիք տուած: Հիմա կ'ըսպասենք անոնց պատասխանին, որ մենք ալ մեր կողմէն յայտնենք ձեզի մեր կարծիքը: Եւ որովհետեւ դեռ շաբաթներ են անցնելու, կը փութամ առայժմ այս երկտողովս ձեզի իմ ուրախութիւնս յայտնելու:

Եւ կը խնդրեմ որ ընդունիք յարգանքս եւ սրտագին բարեւներս:

Ապրիլ 11

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԲԱՑԻԿՆԵՐ ԿՆՈՋԸ ԵՎ ՋԱՎԱԿՆԵՐԻՆ

1. ՍՈՒՐԵՆԻՍ[1]

<Ապրիլի 7, 1908>[2]

Սուրի՛կ ջան, իմ անո՛ւշ մանչուկս, մայրիկը գրում է, որ դու արդեն խոսում ես հայերեն ու ֆրանսերեն, որ օգնում ես նրան, սիրտ ես տալիս, մխիթարում, որ արդեն մի անգին տղա ես դարձել: Անգի՛ն մանչս, հիշո՞ւմ ես հայրիկիդ, որի ծնգան վրա նստած քանի՛-քանի՛ անգամ Փարիզ ես գնացել, մի քիչ էլ սպասի, հայրիկը կը գա, քեզ ծնգան վրա կը դնի ու նորից կը ճամբորդենք, բայց դեպի ո՞ւր... Կովկա՞ս, Պոլի՞ս, Եգիպտո՞ս, թե՞ Եվրոպայի մի ծայրից մյուսը: Իսկ հիմա մի անուշիկ համբույր.

Հայրիկդ[3]

2. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Հունվարի 23, 1914>[1]

Անգի՛ն Ջավիկս, շատ հանգիստ և ուրախ եկանք. տված ամբողջ պաշարդ ազահութիյամբ կերանք. և ընդհանրապես դեռ երկաթուղիեն սկսած «հայրիկ, անոթի եմ»: Երեկ իրիկուն ալ, այս առտու ալ միևնույն երգը: Իրիկունը ժամվան մը չափ ճյուներուն մեջը պտույտ. մանչուկս շատ սիրեց: Գիշերը սենյակը լավ տաք է, մանավանդ Տյուվեներու սարին տակը մարդ կը խաչի: Առտուն ալ շատ լավ կերանք «էլի՛, էլի՛»-ով: Ճիշդ 10-ին դուրս եկանք ու չիտակ պոստը քեզի գրելու. $^1/_2$ ժամեն ավելի չդիմացավ մանչս. «Ոտքերիս մատները կը մրսին». վերադարձանք տուն. $^1/_2$ ժամեն արդեն կ'ելնինք «սահնակ գնելու»: Քեզի ու զույգ մանչիկներս պինդ-պինդ համբուրելով՝ Լևոնդ[2]

3. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Հունվարի վերջ-փետր. սկիզբ, 1914>[1]

Իսկ հոս, անգի՛նս, այսօր աննման եղանակ է նորեն. անցած շաբաթ օր մը ձյուն եկավ, օր մը արև ըրավ, օր մը քամի ըրավ, բայց բոլորն ալ ընտիր և ուժեղ տեսակեն. այսօր ալ թիզ մը վսեմուկ ձյունը ծածկեր է ամեն բան. մինչև կեսօր բոլոր ճամբանները կը պատնան սահելու «փիստ»: Եվ այնպես սիրուս կը ձայնե այդ հակադրությունը. Հո՛տ բոլորդ քակված, պատռված, հոգնած, հիվանդ, Հո՛ս այսպես թարմ, բաց և հանգիստ, այսպես բա՛ն կ'ըլլա: Կը համբուրեմ բոլորդ կարոտո՛վ, կարոտո՛վ.

Լևոնդ

4. ՍՈՒՐԵՆ ՇԱՆԹԻՆ

<Հունվարի 28, 1914>[1]

Անգի՛ն մանչուկս, անչափ ուրախ եմ, որ այդպես լավն ես, որ մայրիկին այդպես կը սիրես, որ իր մասին կը հոգաս և որ այդպես լավ կ'աշխատիս: Ես ու աղբարիկդ մեծ-մեծ կարոտով կը համբուրինք քու քնքուշ ու խելացի աչուկներդ և անհամբեր կ'ըսպասինք, թե երբ պիտի գաք հոս մայրիկի ու Արմիկի հետ, որ ձյուներուն մեջ ազատ մը սահինք ու թավալինք: Քեզի շատ-շատ սիրող հայրիկդ՝ Լևոն

5. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Փետրվարի սկիզբ, 1914>[1]

Ջավի՛կս, Վիգենի համար անմիջապես գնե ու ղրկե հետևյալ իրերը, որոնք հոս սուղ են և մեծ ընտրություն չկա: Արևի համար լաթե թեթև գլխարկ մը, բայց չնորհքով բան ըլլա (հոս մոտ 3 ֆրանկ ըսին), զույգ մը բուրդե ձեռնոց, երեսներու բոլոր մատները արդեն ծակեր է. այլև գուլպաները պահող կուրտիկ մը. վրան եղածը շատ է

կեղտոտ. կը ղրկես ճերմակեղեններու հետ, եթե արդեն լվացված են. եթե ոչ՝ առանձին, ես նոր փոխնորդները չեմ ղրկեր, մինչև նախորդը չստանամ, մոտս միշտ երկու ձեռք ունենալու համար: Երեկ ու առջի օրը լուր չունիմ քեզմե, եթե չը հաշվեմ լրագիրները, և արդեն անհանգիստ նամակիդ կ'ըսպասեմ. համբույրներս՝ Լևոնդ

6. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Փետրվարի 1 կես, 1914>[1]

Ջավիկս, 200 ֆրանկը կը բերես հետդ ինծի, իսկ մնացած 300-ը քու ձեռքիդ ծախքը: Դուն պիտի գաս կամ գալ, կամ հաջորդ կիրակին, ես ալ կը ցանկամ, որ մինչև գալդ գործս զգալի կերպով առաջացած ըլլա, կրկնակի ուրախ կ'ըլլանք. կը վախնամ միայն, որ ձյունհալը սկսի. վերջին օրերը բավական սևցած են շուրջի անտառները. թեև կ'ըսին, որ մինչև ապրիլ հոս ձմեռ է: Ձմեռվան անուշությունը ես միայն հոս զգացի, այս առաջին անգամն է, որ կը ցավիմ ձյուներու հալքին. ի՞նչ ձմեռ, ճերմակ ամառ մըն է, մեղմ ու հանդարտ, թարմ ու մաքուր: Գիշերները քանի մը անգամ կը բանամ լուսամուտը և բավական երկար, այնպես ախորժելի է. և ես հոս ըմբռնեցի, որ մենք մեր մանչուկները հագվեցնել չգիտեինք. ոտքեն գլուխ փաթթե՛ բուրդի մեջ ու նետե՛ փողոց, անշուշտ պայմանով մը, որ Լոզանի անպիտան բիզը[2] *չխանգարե: Գալ տարի նոյեմբերին պետք է քոչել, դեռ կը խոսինք:*

Լևոնդ

7. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Փետրվարի 16, 1914>[1]

Անգին արևս, ձեր մեկնելեն ետքը ամբողջ իրիկունը հոգիով ձեզի էինք ձեր ամբողջ ճամբու ընթացքին. ոչինչով ո՛չ պարապիլ, ո՛չ կեդրոնանալ չկրցա, մինչև որ դուք տուն հասաք: Թեթև անուշ տրտմություն մը սրտիս: Սենյակը կարգի դրի, չոտով պառկեցանք, պատուհանը ամբողջ դիշեր 3-4 մատնաչափ թողեր եմ բաց. առտուն ժամանակին արթննալ չկրցա. թեև մեկ-երկու ժամ աշխատեր եմ, բայց

դեռ ճամբա չեմ ելած, այսօր ծրագրելու օր է: Հիմա այդպէն Սուրիկի <1 բառ>[2] մասին կը խոսինք. Սուրիկս լավ նայե՛ ու կարգի դի՛ր անպատճառ անոր պարապմունքներն ու առաջադիմութիւնը, լավ հագուեցո՛ւր, ոտքերը լավ պաշտպանե՛ ու ղրկե՛ դուրս ցերեկն ալ, իրիկունն ալ.

Լևոնդ

8. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Փետրվար-մարտ, 1914>[1]

Ջավի՛կս, Աբրահամի նամակը վրաս չատ տարօրինակ տպաւորութիւն մը ըրաւ. կարծես իմ երկիս համար չէ խոսքը, այլ օտար, խորթ ու տխուր բան մը կա այդ զգացումին մեջ. ինչպես կ'երևա՝ անաստված կերպով կ'աղճատին դրածս. ըսենք չիտակը ուրիշ բան ալ չէի սպասեր. դրամական կողմն ալ մխիթարական չէ, գոնե առայժմ: Այս բոլորը խառնվեցան իրարու ու այնպես խորին պահանջ մը զգացի մոտդ ըլլալու, գիրկդ ըլլալու. Վիգենը առի կրծքիս ու սկսանք խոսիլ, վերջն ալ կարգալ, և քիչ մը ետքը անցած էր անակնկալ զգացումը և երբ Վիգենս բարձր-բարձր կը կարդար գիրքս, ես արդեն իմ Ծովասումն[2] էի զբաղված գլխուս մեջը: Երեք տեսարանով վերջակետ դրի առաջին արարին[3], հիմա հաջորդներու վրա կը խորհիմ. հավանորեն վաղը սկսիմ երկրորդ արարը: Ջերմ գգվանքս իմ Հոգիիս ընկերոջը.

Լևոնդ

9. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Փետրվարի 28, 1914>[1]

Ջավի՛կս, երեկ տեղը հանել ուզեցինք Վիգենի հետ. չնայելով եղանակի հանգստութեան՝ գացինք ու փառավոր կերպով սահեցանք, այսօր նորեն միտքս նույն է, հրաժեշտի սահանքը[2]*: Գրելս ընդհատեցի, բայց գլուխս կ'աշխատի: Ուրեմն վաղը իրիկուն կ'ըլլամ Լոզան, մեր անփոխարինելի տունը, մանչուկներուս հետ, քու գիրկդ. սիրե՛մ ես մեր տունն ալ, մանչուկներս ալ, քեզի ալ ու քու գիրկդ ալ: Անչափ, անչափ*

Համբույր-սիրով ու գգվանքով՝ *Լևոնդ*

10. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

<Մայիս, 1914>[1]

Ջավիկիս ու անուշիկ մանչուկներուս ավստրիական հողեն կը ղրկեմ վերջին բարևս: Քանի մը ժամեն կ'ըլլամ ռուսական սահմանը: Մինչև հիմա վակոնները անհանգիստ, կեղտոտ ու անհարմար ու ձանձրալի. ես ալ հոգնած, օրվա լրագիրներեն զատ ուրիշ ոչինչ կարդացած չեմ: Դո՞ւք ինչ կ'ընեք արդյոք հիմա, ինչպե՞ս եք: Ջավիկս, կը ղրկեմ քեզի անչափ կարոտով, քեզի, Սուրիկս, Վիգենս ու Արմիկիս. ձեր արևը սիրեմ. Լևոն

11. ՋԱՎԱԿՆԵՐԻՆ

<Սեպտեմբեր, 1914>[1]

Սուրիկիս, Վիգենիս ու Արմիկիս չա՛տ-չատ համբույրներ կարոտած հայրիկեն:

Անուշի՛կ մանչիկներս, ստացա ձեր սիրունիկ նկարները, սիրե՛մ ես ձեր աչուկները, սիրեմ ես ձեր հասակն ու չարաճճի դեմքերը:

Մեկ-երկու չաբաթեն կու գամ ձեզի ղրկելու ու ձեզի հետ ըլլալու. *հայրիկ:*

Մանչիկնե՛ր, պինդ-պինդ համբուրեցեք մայրիկը իմ կողմես: Ձեր բոլորի ջանին մատաղ:

12. ՍՈՒՐԵՆ ՇԱՆԹԻՆ

<Մարտի 6, 1918>[1]

Անու՛շ զավակս, բացիկդ ստացա հոսկե հեռանալու նախորդ օրը. անչափ ուրախ եմ, որ լավ ես: Ես վաղը չոգենավ պիտի նստեմ Անգլիա անցնելու և հույս ունիմ, որ այս ամսվա վերջը արդեն Լոզան կը լինիմ իմ անգին մանչուկներս պինդ- պինդ ու կարոտով ղրկելու. Հայրիկդ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Լևոն Շանթի նամակագրական ժառանգությունը, ըստ պահպանվածի և մեզ հասածի, ինչ խոսք, շատ է հետաքրքրական՝ նորեն ամբողջական լինելուց, երբ, մանավանդ, նկատի ենք ունենում նրա երկար, թափառիկ ու փոթորկուն կյանքը և տարաբնույթ գործունեությամբ պայմանավորված բազմազան կապերը: Դրանք, անշուշտ, նամակագրության համար լայն հնարավորություններ են բացել և այն դարձրել մի քնազավառ, որը, հարազատ լինելով Շանթի մարդկային խառնվածքին, նա վարել է ամենայն բարեխղճությամբ:

Հատորում ներկայացվող ավելի քան 360 նամակներն ու բացիկները, որքան էլ ամբողջական լինելուց հետու (տարբեր պատճառներով պայմանավորված), այդուհանդերձ Շանթ գրագետի կյանքի ու գործի ճանաչողության համար մեծարժեք վաստանյութ են պարունակում և այս առումով անփոխարինելի արժեք ունեն: Դրանցից շատերում, միաժամանակ, ինքնաբուխ անմիջականությամբ արտահայտվել են մտավորականի առօրյան, նրա հոգու ելևէջները, անձնական հարաբերություններով պայմանավորված՝ մտքերի անկաշկանդ փոխանցումը: Հովհաննես Թումանյան և Ստեփան Լիսիցյան, Արշակ Զոպանյան և իշխանուհի Մարիամ Թումանյան, Ավետիք Իսահակյան և Նիկոլ Աղբալյան, Սիմոն Վրացյան և Համո Օհանջանյան, Զապել Եսայան և Գալուստ Գյուլբենկյան, Վահան Փափազյան, Ռուբեն Դարբինյան, Դերենիկ Դեմիրճյան, Ավետիս Ահարոնյան, Նիկողայոս Աղոնց՝ ահա ոչ ամբողջական ցանկը այն հայտնի մարդկանց, որոնց հետ նամակագրական կապ է ունեցել Լևոն Շանթը, և որոնց կողքին քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ ավելի քան 60 անուն՝ մարդիկ, որոնց Շանթը գրել է ամենատարբեր առիթներով՝ չզլանալով իր երախտապարտությունը հայտնել նույնիսկ ամենաչնչին օգնության և աջակցության համար: Իհարկե, շատերին, գործի հանգամանքներով պայմանավորված, Շանթը գրել է մեկ կամ երկու նամակ (գոնե այդ են վկայում մեզ հասած նամակները), բայց ոմանց հետ նա, կապված լինելով գործով և հոգու թելերով, երկար տարիներ հեռվից հետու հաղորդակցվել է ջերմ նամակներով ու բացիկներով, որոնք այսօր անհնար է կարդալ առանց սրտի թրթիռի:

Շանթ անհատին, գրողին, մշակույթի գործչին բնութագրող փաստերի հարստությամբ ու արժեքավորությամբ, առավել քան ուրիշների դեպքում, աչքի են ընկնում երկու՝ իրեն խիստ մերձավոր անհատներին՝ ականավոր մանկավարժ, ազգագրագետ, պատմաբան, գրականագետ, գրող Ստ. Լիսիցյանին և Ամենայն Հայոց բանաստեղծին՝ Հովհ. Թումանյանին գրված նամակները (77 և 41 նամակ ու բացիկ համապատասխանաբար): Հատկապես Լիսիցյանի հետ վարած նամակագրությունը, ամենից տևականը լինելով, ընդգրկում է գրողի կյանքի հետճեմարանական շրջանից մինչև 1917 թվականը՝ ավելի քան 20 տարի:

Ստեփան Լիսիցյանը հայ ժողովրդին մատուցած բազմաթիվ ու բազմազան մնայուն ծառայություններից բացի մեծ երախտագիտության է արժանի նաև նրա համար, որ դժվար մի ժամանակաշրջանում արիություն է ունեցել խնամքով պահելու «ժողովրդի ոխերիմ թշնամիներից» մեկի նամակները, որոնցից շատերը, ինչպես կտեսնենք, բացառիկ արժեք ունեն Շանթի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրելու և այլ առումներով:

Լևոն Շանթի և Ստ. Լիսիցյանի երկարատև բարեկամությունը սկզբնավորվել է Գևորգյան ճեմարանում: Երիտասարդ ուսուցչի և նրան գրեթե տարեկից աշակերտի միջև այդ կապը հետագայում վերաճել է փոխադարձ բացառիկ նվիրվածության:

*Մի կարևոր հանգամանք, որ կարծես ճակատագրով ընկած է Լիսիցյան-Թումանյան-Շանթ եռյակի աշխատանքային երկարատև համագործակցության հիմքում: Լիսիցյանի հուշերից տեղեկանում ենք, որ ինքն է ճեմարան տարել Թումանյանի առաջին գիրքը (Բանաստեղծություններ, հ.1, Մոսկվա, 1890), որը խանդավառությամբ է համակել ավագ տարիքի ճեմարանականներին: Հուշագրողը հենց այդտեղ «Թումանյանական» զանգվածից առանձնացնում է Լևոն Սեղբոսյան- Շանթին՝ իբրև առավել խանդավառի ու չարունակում. «Սիրում էր առանձնակի բարձրաձայն արտասանել իր գրածը Լևոն Սեղբոսյանը (ապագա Շանթը)» (**Թումանյանը ժամանակակիցների հուշերում**, Ե., 1969, էջ 347): Այստեղ արդեն կարելի է տեսնել մտավորական եռյակի ապագա կապվածության և երկարատև համագործակցության նախադրյալները:*

Ճեմարանական օրերից մոտ հինգ տարի անց՝ 1896-ին, Եվրոպայում ուսանող, արդեն բանաստեղծի ու արձակագրի ճանաչում ստացած Լևոն Սեղբոսյան-Շանթը իր առաջին նամակներն է գրում իր ուսուցիչ -բարեկամին: Հանդամանքները, որոնցում Շանթը դիմում է Ստ. Լիսիցյանին, նրա համար եղել են խորապես ճգնաժամային: Նույն 1896-ին Կ. Պոլսում սանձազերծված հայկական կոտորածների հետևանքով Շանթը զրկվել էր հարազատների օգնությունից, թաղվել պարտքերի մեջ և կանգնել ուսումը թողնելու հարկադրանքի առջև, մի բան, որի հետ ոչ մի կերպ չէր ուզում հաշտվել ապագա մեծ գրագետը. բարձրագույն կրթության անհրաժեշտությունը նա ապրել է որպես իր կյանքի պայման: Անելանելի այդ վիճակից դուրս գալու ելքը պիտի գտնվեր, և նա ծանր մի վճիռ է կայացնում՝ դիմել այնքան ոմմանալիորեն կապված ուսուցչին և բարեկամին: Ծայրաստիճան կաշկանդվածությունն ու ներքին լարվածությունը զգացվում են ճակատագրական նամակի յուրաքանչյուր տողից: Զգացվում է, թե ինչպիսի ճնշող հարկադրանքով է նա չարժում գրիչը, և ինչ ճիգերով են բառերը կապակցվում:

Ստ. Լիսիցյանը, կարելի է ասել, իր տաղանդավոր բարեկամին օգնելու իսկական արշավ է ծավալում: Շուտով երիտասարդ գրողը թեթև չունչ է քաշում և լծվում «աշխատության»: Երբեմնի ուսուցչի չնորհիվ Շանթի կենսագրության մեջ են մտնում հայ գրականությանը թանկ ծառայություն մատուցած բարերարների անունները՝ Զոհրաբյան, Եղիազարյան, Ղամբարյան...Չի ուշանում և Շանթի երախտապիտական խոսքը Լիսիցյանին. «Ես քու չնորհքովդ է, որ հիմա Եվրոպա եմ»: Արժե այնուհետև տեսնել, թե նամակ առ նամակ ինչպիսի անկաշկանդ, ընկերական մտերմությամբ է գրողը հաղորդակցվում իր բարեկամին՝ դրսևորելով իր անմիջական ու զվարթ խառնվածքին բնորոշ ոճ՝ հաճախ մտերմիկ հումորի ուղեկցումով: Միաժամանակ պարզվում է, որ Շանթը այցելել է Լիսիցյանին, հյուրընկալվել նրա ընտանեկան հարկի տակ, գիտի նրա ընտանիքի անդամներին, որոնց ամեն նամակում ջերմորեն բարևներ է հղում, և ընդհանրապես՝ Լիսիցյանն այն մարդն է, որի առջև Շանթը բացում է իր հոգու բոլոր փակ դռները:

Իսկապես, ավելի հուսալի բարեկամ, քան իր երբեմնի ուսուցիչը, Շանթը չէր էլ կարող պատկերացնել. Լիսիցյանի համար իր տաղան-

դավոր ընկերոջն ու բարեկամին օգնելը այնուհետև կարծես դառնում է ճակատագրի պես մի բան: Բացառիկ այդ փաստը վերին աստիճանի անկեղծությամբ ցուցադրում է հենց ինքը՝ Շանթը՝ նամակից նամակ անթաքույց արտահայտելով իրենց՝ ճակատագրով կապվածությունը և իր անսահման երախտագիտությունը: Ահա մի քանի առավել բնորոշ տողեր. «Դուն ես արդեն, ուրկե իմ հույսերս կը կախվին», «Սահման մը կա, ուրկե անդին չնորհակալություն բառը նույնիսկ ծիծաղելի կը հնչե», «Երևի իմ բաղդս է իմ դրամական հաշիվներովս քեզի անվերջ չարչարել»: Երախտագիտության զգացումը, վստահությունն ու մտերմությունը գրողին թույլ են տալիս անգամ հումորով խոսելու այնքան փափուկ հարցի մասին: «Խե՛ղճ Ստեփան,- գրում է նա,- քեզի ով ըսավ իմ մեջս այդպես վստահություն ներշնչես, թե դուն ամեն կողմեն ստակ ճարելը կրնաս. բավական է, որ ուզես ու ձեռնարկես»: Վերջապես այս ամենը ընդհանրացնելու քաջությունն էլ չի պակասում, և դա էլ՝ ոչ առանց հումորի. «....Որ իմ գրելիքս քեզի համար սպառնալիք է՝ կասկած չի կա. հավիտենական հանգերգ՝ փո՛ղ»:

Ցավոք, չեն պահպանվել Լիսիցյանի գրած նամակները, որոնցով անհամեմատ ավելի հարուստ կլինեին մեր պատկերացումները թե՛ այս և թե՛ չուշափված մյուս հարցերի վերաբերյալ:

Լ. Շանթի նամակները մեծ դրամատուրգի ուսանողական կյանքը բնութագրող տարաբնույթ փաստերի հետ արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև այս շրջանի նրա ստեղծագործությունների՝ «Վերժին», «Դերասանուհին» վեպերի և «Դարձը» վիպակի վերաբերյալ: Մասնավորապես, արժեքավոր են գրողի նամակագրական դատողությունները «Դարձը» վիպակի կապակցությամբ և այն էլ մի շարք առումներով: Առաջին իսկ հայացքով, թերևս, կարելի է երեք էական կողմ տեսնել՝ նյութ, կենսազգացողություն և գեղարվեստականություն:

«Դարձը» վիպակում գրողը առաջին անգամ է պատկերում հոգևորականությանը, այդ պատճառով էլ նյութը անվանում է իր «ժանրը չի համարվող» (տե՛ս թ. 9 նամակը): Պատկերվող մյուս կողմը Շանթը չի առանձնացնում, քանի որ այն ներկայացնում է առաջինի հետ հակադրության մեջ և միաժամանակ: Ստացվում է փոխադարձորեն իրար երևակող ու իրար ընդգծող կողմերի՝ հոգու կեղծիքը մարմնավորող կրոնականության և թրթռուն կյանքի մերկ, անկեղծ

հակադրություն: Վարդապետացուի զարձն էլ դեպի կյանք կայանում է այս հակադրության հանգուցալուծումով:

Արթնացող կյանքի թրթիռն է Շանթը պատկերում սարկավագի կույս հոգում, որ արդեն իր «ժանրն» է և որը աննկատ չի անցել մեր գրականագիտության մեջ՝ սկսած Լեոյից ու Ալբալյանից....

Ինչո՞ւ և ի՞նչ պատճառով է, ուրեմն, հոգևորականության թեման խորթ Շանթին: Միայն նրա՞ համար, որ իր կենսական հիմքով չինծու է եղել ու կեղծ: Պարզվում է՝ այո՛: Որպես արտահայտիչ փաստ՝ կարելի է դիտել հետագայում վարպետի գրչով ստեղծած «Հին աստվածների» մեջ (խորհրդապաշտ կեղևի տակ) արտահայտված քննադատական վերաբերմունքի յուրովի դրսևորումները:

Կրոնի և հոգևորականության խոր ճանաչողությունը ապագա գրողը ձեռք է բերել Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին, և նրա հայացքները հայտնի էին մտերիմներին: «Հա՛, իմ կրոնական հայացքներս գիտես,- գրում է նա ընկերոջը,- գիտես և կրոնավորներու առելությունս, զզվանքս դեպի վանքը և այն բոլորը, որ վանքին հետ կապված է»: Այս գրելուց ամիսներ առաջ նա ընկերոջը գրել էր Նոր Նախիջևանի հայ հոգևորականությունից ստացած թարմ տպավորությունների մասին. «Փա՜հ, վա՜հ այդ նոր տերտերները. ինծի համար այնպես տարօրինակ է տեսնել ընկերոջդ այդ երկար վերարկուներուն մեջ վաթթված, համրիչը ձեռքը....», «Մեկ-երկու ճեմարանցի ընկերոջ հանդիպեցա. ամեն մինի եռևեն մեկը կը բռանի. ամեն տեղ կան.... Հիմա անոնք գործ ունին. բոլորն ալ կա՛մ վարդապետ, կա՛մ տերտեր» (տե՛ս թ.5 նամակը): Նոր հանդիպումները, անշուշտ, է՛լ ավելի են ամրապնդել երիտասարդ գրողի համոզմունքները, և սրա ապացույցը վերը հիշված նամակի տողերն են. «Գուցե զարմանաս, որ ինչպես հանկարծ այդ չոր և իմ ժանրս չի համարվող նյութին վրա ինկա. ինծի ալ շատ որոշ չէ. ըստ երևույթին հին տպավորություններ մեջս դիզված էին, որոնք վերջին Կովկաս գալես ավելի զրգռված դուրս հորդեցին»: Ուրեմն նյութը իրենը չէ՝ չոր, անհրապույր լինելու պատճառով, բայց տարիների կուտակում լինելով և կյանքի հարկադրանքից ելք գտնելով՝ ստացել է լուծման գուտ չանթյան ձև, որն այնքան ներգաչնակ է նախորդ ստեղծագործություններին:

Այս ամենով հանդերձ, իհարկե, չենք անտեսում թեմայի զրական-ավանդույթային աղերսները, որի մասին արդեն հանգամանորեն

խոսվել է (Էդվարդ Ջրբաշյան, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, Ե., 1994, էջ 350-351):

Ինչ վերաբերում է մեր նկատած երրորդ կողմին՝ գեղարվեստականությանը, ապա կյանքում իր այնքան ատելի երևույթը կրքոտ դատապարտելիս Շանթը մնացել է բնականության ու գեղարվեստականության չրջանակներում՝ ինքն էլ պնդելով, որ չնայած իր երկի «վոլիմիկական գույն ստանալուն»՝ իր համար էականը եղել են երկի «գեղարվեստական ամբողջությունը, հոգեբանական վերլուծումը և անհատական տիպը»:

Իրենց բովանդակությամբ և իշխող տրամադրություններով առանձնանում են Շանթ գրողի համար աստեղային թվականի՝ 1913-ի նամակները, որոնց առանցքը «Հին աստվածներ» դրաման է, նրա գտած աղմկալից հաջողության օրերին գրողի արտահայտած մտքերն ու դատողությունները: Մեծ է Շանթի այս նամակների նշանակությունը ոչ միայն նրա կյանքն ու գործը, այլև հայ դրամատուրգիայի ու թատրոնի, հայ հոգևոր մշակույթի պատմությունը հետազոտելու առումով: Սրանցում, ի տարբերություն «Հայսմավուրքի ծավալ ընդունող» այն նամակների, ուր հանգամանորեն քննարկվում են «Լուսաբերի» կառուցվածքը, ընդգրկվող նյութերը և մեթոդա-մանկավարժական սկզբունքները, հիմնական թեման մնում է իր հռչակված երկը՝ «Հին աստվածները», նրա ներկայացման աննախադեպ և հետագայում էլ հայ բեմում նմանը չունեցած հաջողությունը, դրամատուրգին բերած հռչակն ու... եկամուտները: 1913-ի մարտի 26-ի նամակում բախտավոր և բախտորոշ դրամայի վերաբերյալ դատողությունները անհնար է կարդալ առանց խորապես ղգացվելու:

Սրտիդ խորքում համաձայնում ես գրողի հետ, որ, իրոք, «զարմանալի խաղեր ունի բաղդը», և միանգամայն բնական ես գտնում, որ նա իր կյանքում բախտի այդ ճակատագրական խաղը կապում է «Հին աստվածների» հետ:

Շանթի ստեղծագործությունը ուսումնասիրողներին անպայման հետաքրքրել է ու կհետաքրքրի այն, թե նա ինչպես է արձագանքել իր երկի հաջողությանը, ինչպես է հեռվից հեռու ընդունել, հասկացել ու գնահատել այդ ամենը, և բուռն իրադարձությունները ինչ ազդեցություն են գործել նրա գրական ծրագրերի վրա:

Պարզվում է՝ ընկերոջ ավետաբեր հեռագիրն ստանալուց առաջ Շանթն արդեն լրագրերից տեղեկացել է «Հին աստվածների» գտած ընդունելության մասին և ահա տեղեկանում է նաև, որ «գրական դատ» է կայացվել, ու հետաքրքրվում է հանված վճռով: Այս պահից մենք հաղորդակցվում ենք գրողի անհանգիստ ներաշխարհին և հետևում նրա արժեքավոր դատողություններին: Նույն նամակում անթաքույց է «Հին աստվածների» հաջողությամբ պայմանավորված ոգևորությունը, երբ գրողը ցանկություն է հայտնում «առանձին-առանձին կամ հատորով մը» հրատարակել ամսագրերի էջերում մնացած նախորդ դրամաները՝ «Եսի մարդը», «Ուրիշի համար», «Ճամբուն վրա», ինչպես նաև մամուլում տպագրված վերջին գործը՝ «Կինը» վիպակը:

Մի մանրուք, որը նույնպես զուրկ չէ հետաքրքրությունից. գրողը երկար չի սպասել ընկերոջ՝ մամուլում երևացած նյութերը հավաքելու և նամակով Պոլիս ուղարկելու խոստումը կատարելուն և անհանգստությունից մղված՝ նոր նամակ է ուղարկել Թիֆլիս՝ լուսարկե, պատշաճ լռությունն պահպանելով «Հին աստվածների» մասին:

Վերը նշված մարտի 26-ի նամակից ենք տեղեկանում, որ դրամատուրգն ստացել է անհամբեր սպասված նյութերը և բավարարված հարցասիրությամբ իր տպավորություններից ու վերաբերմունքից է խոսում:

Գրողի հոգին ամբողջապես բաց է իր ընկերոջ ու նաև՝ ընթերցողի առաջ:

Շատ կողմերով հետաքրքիր այդ նամակին բացառիկ տեղ է վիճակված չանթազիտության մեջ: Մեծ գրողի ստեղծագործությունը գնահատելու փորձ կատարող յուրաքանչյուր ոք հազիվ թե անտարբեր անցնի այն մտքերի ու դատողությունների կողքով, որոնք արտահայտվել են այս նամակում՝ իբրև իրազարձություններ անմիջական արձագանք: Մինչ այդ, իր արտահայտությամբ՝ «մատերու վրա համրվելիք մարդոց կողմե համակրանք ու գնահատություն» վայելած գրողը հանկարծ իրեն զգում է գրական կյանքի հորձանուտում:

Իր երկով պայմանավորված գրական-թատերական մթնոլորտը գնահատելով՝ Շանթը խորհրդատորեն տարբերակում է երկու հստակ արտահայտված կողմ՝ քանակական-ընդհանուրը՝ որպես հանրային երևույթ, և առանձին արտահայտությունները՝ իբրև գնահատման

*որակ: Երևույթին ամբողջությամբ հասարակական վերաբերմունքի ու պահանջի դրսևորում գնահատելով՝ գրողը նրանում մեծ իմաստ է տեսնում: Պարզվում է, որ Շանթը խորապես հավատացել է «մեր հասարակության գրական տրամադրություններուն մեջ» կատարվելիք հեղաշրջմանը և հոգեպես բավարարված է, որ այդ տրամադրությունները երևան են գալիս իր «Հին աստվածների» առիթով: Նա ընդգծում է երևույթի հանրային կողմը, այն, որ «իրեն ամենեն ավելի բավականություն պատճառողը այդ ընդհանուր հետաքրքրությունն է», ժողովրդի մտավոր խավի և ընդհանրապես հանրության գիտակցության տեղաշարժը, «**այդ լայն հասարակական շարժումը**» (ընդգծումը իմն է- Ի. Վ.): Իսկ ինչ վերաբերում է երևույթի երկրորդ կողմին՝ որակականին, ապա այդ իմաստով արժեքավոր չատ քիչ բան է նկատում:*

*Այժմ ավելի քան պարզ է երևում գրողի՝ իր ստեղծագործության գնահատության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության պատճառը. այստեղ ամենից առաջ խոսում են նրա՝ «Հին աստվածներով» պայմանավորված գեղագիտական հայացքների որոշությունն ու կայունությունը. «...Թե չէ՝ այդ լրագրական հոդվածները, այդ իրար կապկող դատաստաններն ու թատերական գրախոսությունները **իրենց ըսածովը** ինծի համար չատ քիչ բան ունին գրավիչ ու ազդու. ատոնք մեծ մասով խեղճ ու տափակ դատողություններ են, հաճախ տգետ. ամենեն լավերն անգամ դեռ չըսին բան մը, որ ինծի համար խո՛ր ըլլար, որու մասին ես դեռ մտածած չըլլայի, որը ինծմե բարձր զգայի, ըլլա դրական, ըլլա բացասական տեսակետե»: Այս ամենին հետևում է գրողի եզրակացությունը. «Այնպես որ...դեռ ստիպված եմ սպասելու իմ քննադատիս»:*

Շանթն սպասում էր հասուն, բանիմաց խոսքի և իրավունք ուներ ժամանակի քննադատական մտքից ավելին ակնկալելու: Նա Լիսիցյանից խնդրում է «Նոր Հոսանք» ամսագիրը, ուր իր «Կինը» վիպակի արտատպությունից բացի տեղ էր գտել նաև Ն.Աղբալյանի «Երազ և մեկնաբանում» հոդվածը՝ նվիրված «Հին աստվածներին »:

*Սակայն ի դեմս «վերնական» ընկերոջ նա գտա՞վ «իր քննադատին»՝ չենք կարող վստահ ասել, ինչպես որ չենք կարող ասել, թե հետագայում «**ուխտնամյա գրողը**» լիովին հա՞շտ էր «**յոթանասնամյա ընթերցողի**» համակարգող, ամփոփ վերլուծության*

եղրահանգտմներին (տե՛ս Ն. Ադբալյան, *Ամբողջական երկեր, հ. 1, Բեյրութ, 1959, էջ 78-84*): Այս հարցերը գեռևս մնում են Շանթի ստեղծագործությունները հետազոտողների սեղանին: Ավելացնենք միայն, որ «Հին աստվածների» տեքստում Շանթը ոչ մի էական փոփոխություն չի արել ո՛չ 1913 թ. Թիֆլիսյան և ո՛չ էլ հետագա հրատարակություններուի ժամանակ՝ բավարարվելով միայն «մանրամունր բավական սրբագրություններով» (տե՛ս 1913 թ. մարտի 14-ին Աբրահամ Ներսիսյանին և 1917-ի հունվարին Բոստոնի հրատարակչին գրված նամակները, ներկա հատորի 221 և 644 էջերը): Այս փաստն ինքնին բավականին պերճախոս է:

Մի կարևոր նկատառում ևս: Եղելությունների անմիջական ներգործությամբ գրողն իր ստեղծագործության հասարակական բնույթը, իր երկերի հանրայնանալու չափը գնահատելու առումով հետաքրքիր մտքեր է արծարծում: Նա անթաքույց տարակուսանքով է խոսում իր ստեղծագործության ժողովրդականության մասին և կատարվածն իր համար ամենից առաջ անսպասելի է համարում ա՛յդ իմաստով: Անգամ զանգվածային հետաքրքրության, հրապարակային քննարկումների պայմաններում նա զգում է, որ «այդ մակարդը (ժողովրդականություն- խ. Վ). շատ խորթ կու գա ինձի»:

Դատողությունների այս շարքը իր տրամաբանական ամփոփմանն է հանգում, երբ գրողն իր հայացքը ժողովրդից ու ժողովրդականությունից զարձնում է իրեն, նայում է իր հոգու խորքերը: «Զգիտես ինչպես հասարակության, ժողովուրդի շրջանի մեջ լինել կը ցանկամ, այսինքն մեր ժողովուրդի, և ինչպես գործ մը տեսնելու, չարժման մեջ լինելու, ներգործական դեր մը խաղալու պապակը կայրի սիրտս»,- երազել էր տարիներ առաջ: Եվ հիմա, երբ երազը կարծես իրականանում էր, նա, ինչպես ասում են, չէր նիրհում դափնիների վրա, այլ առաջվա պես կարող էր ասել, թե «չփոխմը...և ավելի լայն գործունեության մը փափագը»... «իմ սիրտս ալ կրծող որդերեն են»: Եվ ահա նրա սիրտը նորից բաց է ընդերոջ առաջ: «Հիմա,- գրում է նա,- ինչ որ մեջս պարզ ու խոր կերպով կ'ըզգամ՝ իմ միշտ հին ու միշտ նոր ծարավս է, ծարավս գրական աշխատանքի... Թողնինք ու երթանք, որ անգամ մըն ալ փորձեմ գրագետի կյանքովը ապրելու ամբողջապես ու գրական աշխատության նվիրելու իմ բոլոր ուժերս» (սա է Շանթի Եվրոպա ճգտելու հիմնական նպատակը): Գրողի համար

ներքին խոր համոզմունք էր, որ եկել էր հասարակությանը լավագույն գործերով ներկայանալու, հետևաբար և նյութական հայթայթելու բոլոր «չեղակի զբաղմունքներից» ձերբազատվելու ժամանակը;

Հաճախ մտամփոփ, ներփակ անհատի այս և մյուս ինքնարտահայտումները նրա եսը ճանաչելու դյուտեր են: Հայտնի է, որ Շանթի անձը անգամ իր մերձավոր ընկերներին էական չափով մնացել է անծանոթ: Իր բավականին կտրուկ միտքը՝ «...Չեմ կարծում, թե մեկը ճանաչել է նրան» (Շանթին- Խ. Վ), Ս. Վրացյանը փաստում է մի օրինակով, որ այս դեպքում առանձնակի կարևորություն ունի: «Նիկոլ Աղբալյանը,- նկատում է նա,- որ Շանթի ամենից մտերիմ ընկերներից էր, ասում էր՝ «Մեր Լևոնը կոճկված մարդ է»: Ուզում էր ասել, թե իր ներքին անձը դյուրությամբ բաց չէր անում արտաքին աշխարհի առջև» (Ս. Վրացյան, **Անձինք նվիրյալք** , էջ 148):

Մշտապես կարիքի մեջ գտնվող, իր թանկ ժամանակը դրամ հայթայթելուն զոհած մեծ գրողը «Հին աստվածների» չնորհիվ մի պահ հանգիստ չունչ է առնում: Դրամայի բերած եկամուտը ոչ միայն դյուրացնում է նրա կյանքը, այլև հնարավորություն է տալիս եվրոպական մի խաղաղ անկյունում բացառապես գրական աշխատանքով զբաղվելու, որը, ավա՛ղ, երկար չի տևում: 1914-ին սկսված Առաջին աշխարհամարտը ի չիք է դարձնում խաղաղ աշխատանքի ամեն հնարավորություն: Վառ հույսերով Եվրոպա տեղափոխված գրողը հայտնվում է նյութական ու հոգևոր դաժան աքցանի մեջ: «Կայսր» դրաման գրելու հոգեկան բռնադատումի օրինակը բավական է ստեղծված կացությունը հասկանալու համար:

Եվրոպան ընդամենը փրկելու էր մեծ հային մոտալուտ զարհուրելի սպանդից, ինչի մասին նա հետագայում պիտի գրեր իր թերևս ամենաազդեցիկ տողերը: «Սաստիկ հոգնած էի ու զզված Պոլսեն, կ'ուզեի մեկ-երկու տարի ինքզինքս ամբողջովին նվիրեմ գրականության և մանավանդ Վիգենս արմատապես բժշկեմ. բուկարական պատերազմեն անմիջապես ետքը կ'ուզեինք հեռանանք Պոլսեն, նյութապես անկարող էի, ու մնացինք. «Հին Աստվածներու» հաջողությունը կարելի դարձուց իմ ու Ջավոյի ցանկությունը և երեք տարվան ծրագրով եկանք Լոզան: Այս պատմութենեն պիտի տեսնես, որ հիմա դեռ կենդանի ըլլալս պարզապես կը պարտիմ «Հին Աստվածներուս». առանց անոր բերած 3-4 հազար րուբլիին ես տեղես երերալ չէի կրնար

և հիմա իմ բոլոր Պոլսի ընկերներուս ու ծանոթներուս հետ միասին ո՛վ դիտե որ լեռան գլխուն մորթված կ՝ըլլայի. զարմանալի խազեր ունի բաղդը»,- գրում է նա Լիսիցյանին 1915 թ. նոյեմբերի մեկի նամակում: Լիսիցյանին գրած այս ցնցող նամակից տասնամյակներ անց իր ինքնակենսագրականում Շանթը, վերհիշելով 1913-ին իրենց հեռանալը Պոլսից և վերապրելով դրան հաջորդած եղերական իրադարձությունները 1915-ին, վերստին անդրադարձել է «Հին աստվածների»՝ իր կյանքում կատարած ճակատագրական դերին՝ խոր դրամատիզմով հագեցած մտորումներով մեկ անգամ ևս ընդգծելով ակնառու փաստը. «Եվ ես հիմա ցավով կը մտածեմ, որ այդ մեկնումով ես ո՛չ միայն կը հեռանայի Պոլսեն, այլև՛ մահեն,- և իմ այնքան, այնքան ընկերներուս նահատակութեան մասնակից ըլլալեն...» («Հայրենիք» ամսագիր, 1960, թ. 4, էջ 28):

Շանթի նամակներում էական տեղ ունի նաև ընկերական մտերիմ կապերով օղակված գործը՝ «Լուսաբերը», հատկապես դասագրքերը արևմտահայերենի փոխադրելուն առնչվող այլևայլ հարցեր:Նրա ջանքերով կյանք են մտնում և հետզհետե արմատավորվում «Լուսաբերի» արևմտահայերեն «Այբբենարանը», Ա, Բ, Գ, Դ դասարանների ընթերցարանները, աշխատանք, որը գրողից հսկայական ժամանակ է խլել: Դասագրքերը արևմտահայերենի փոխադրելու ընթացքը, տեղական պայմաններին հարմարեցնելու անհրաժեշտությամբ, վեր է ածվում դրանք գրեթե նոր կազմելու: Այս կապակցությամբ Շանթը բնականաբար մասնավոր ուշադրություն է դարձրել արևմտահայ գրականության նմուշների ընտրությանը՝ դրանց տեսակարար կշիռը ընթերցարաններում մեծացնելու միտումով: Նամակներից տեղեկանում ենք, որ նա Ե և Զ դասարանների դասագրքերի արևմտահայ նյութերը համալրելու նպատակով անհրաժեշտություն է զգացել Վիեննայի Մխիթարյանների գրադարանում աչքի անցկացնելու վերջին հիանամյակի արևմտահայ «ողջ գրականությունը»:

Քիչ խոչընդոտներ չի հաղթահարել Շանթը արևելահայ գրականության նմուշները արևմտահայերեն փոխադրելիս: Գործը ընդհատել մտածել է նյութերի և դրանց փոխադրման նոր համակարգ ձևավորելուն: Այս կապակցությամբ նամակներում արծարծվող հարցերը կարևոր նշանակություն ունեն հայ գրոցի, մանկավարժության և մայրենի լեզվի դպրոցական դասագրքերի ստեղծման պատմության

համար: Այդ հարցերից չատերը այսօր էլ պահպանում են իրենց տեսական ու գործնական նշանակությունը:

Կենսագրական մի փաստ: Պոլսում եղած օրերին Շանթը «Լուսաբերի» հրատարակման գործը դյուրացնելու, ավելի եկամտաբեր դարձնելու, ինչպես նաև առհասարակ լրացուցիչ եկամտի ակնկալությամբ ծրագրում է «Արաքս» տպարանի և «մեկ-երկու դիրք դասագիրք ունեցողներու հետ հրատարակչական- գրավաճառական ընկերակցություն» հիմնել: Նա ընդհուպ դիմում է գործնական քայլերի, սակայն ձեռնարկը չի իրագործվում ամենից առաջ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

«Լուսաբերները» պատրաստելը, ինչպես ակնհայտորեն երևում է Շանթի՝ հատկապես Պրինկիպոյից գրած նամակներից, շատ ջանք ու եռանդ, ժամանակ, ֆիզիկական ու մտավոր ուժեր է խլել իրենից՝ Շանթից և Ստ. Լիսիցյանից. այն տպավորությունն է ստեղծվում, որ հիմնական չարչարվողները ինքն ու Լիսիցյանն են, իսկ Թումանյանն առավելապես իր գրական նյութով է մասնակցում: Բայց այս տպավորությունը խաբուսիկ է. Թումանյանը ևս ծանր աշխատանքի իր բաժինն ունի դասագրքի նյութերը ընտրելիս և մշակելիս: Այդ է վկայում, մասնավորապես, բանաստեղծի՝ իր նամակներից մեկում արտահայտած տրտունջը. «Արդեն սկսվել են իմ տառապանքները: Շանթը հավաքել է մեծ քանակությամբ գիրքիլ- այսինքն զանազան հոդվածներ ու ոտանավորներ, դարսել մի մեծ թղթի մեջ, վրեն գրել «Լուսաբեր V տարի»: Պետք է դրանից բան չինենք, դրանց փոխարեն բան չինենք, վերջապես լեզուն չինենք: Մի խոսքով, էս աշխարհքում ապրելը հեչտ բան չի» (ԵԼԺ, հ. 10, էջ 206): Կյանքը, դժբախտաբար, հեչտ չի եղել նաև ֆինանսական առումով. «Լուսաբերի» բազմաթիվ հրատարակություններն ու վերահրատարակությունները նրա հեղինակներին նյութական ապահովություն այդպես էլ չեն բերել:

Իր նամակներում Առաջին աշխարհամարտի մասին Շանթը խոսում է տարբեր չարժառիթներով: Ամենից առաջ, սակայն, նա պատերազմական իրադարձությունները գնահատում է արևմտահայության ճակատագրի տեսանկյունից: Այդ կապակցությամբ նրա խոհերն ու մտորումները երևան են բերում գրողի անհանգիստ ու տագնապալի աշխարհը: Արդեն պատերազմող Թուրքիային սանձելու հարցում կարևորելով Կ.Պոլսի գրավումը և Դարդանելի բացումը՝ Շանթը դրանց

հետ է կապում նաև «Թուրքահայերու համեմատական կյանքի ապահովումը»՝ այդ ուղղությամբ եղած սպառնալիքը «ամենեն մեծ վտանգը» համարելով հայության համար: Այս տագնապն արտահայտվել է 1915-ի մարտի 11-ին՝ Մեծ եղեռնի բուն իրագործումից օրեր առաջ:

100-ամյա վաղեմության վերքերի մրմունջը մեր մեջ նորոգվում է, երբ կարդում ենք Վանի և Կարինի գրավման կապակցությամբ գրողի մտորումները: «Կը չնորհավորեմ Վանի գրավումը,- գրում է նա Լիսիցյանին,- գուցե և Բիթլիսի մինչև այս տողերս քեզի հասնին: Նույն բաղդը չոտով Մուշին ու Սասունին. տեսնենք ի՞նչ է դուրս գալու այս սարսափելի արյունահեղությենեն»: Ավելի զգույշ ու տագնապալի է նրա ուրախությունը Կարինի գրավման առիթով. «Կը չնորհավորեմ Էրզրումի գրավումը, որու կարևորությունը մեզի համար անչափ է. միայն նախորդ դեպքերը տարօրինակ վախ մըն են դրած մեջերնիս, որ կը խանգարե սրտանց ուրախանալու»: Պարզ է՝ Շանթը նկատի է ունեցել Վանի «վերջին զարթն ու ավերը», որ նրա մեջ «ամեն ինչ տակն ու վրա» է արել: Հետագա իրադարձությունները, ցավոք, ցույց տվեցին, որ նա իր այդ «տարօրինակ վախով» դժոխային զարհուրանք էր կանխագուշակել (տե՛ս Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 1, էջ 632-633):

Շանթի խոհերը ազգային ողբերգությունից անցնում են պատերազմի՝ համաշխարհային այդ ազետի կործանարար հետևանքներին. «Այս դաժան միջնադարյան պատերազմը շատ երկար է տևելու՝ քայքայելով կյանքեր ու պետություններ, անտեսություն ու ստեղծագործություն»: Բնական ճանապարհով գրողի խոհը անցնում է մարդուն ու նրա գործին, խոհ, որն այնքան հոգեհարազատ էր իր մյուս սրտակից բարեկամին՝ Հովհ. Թումանյանին:

Շանթի նամակներում բազմաթիվ անմիջական փաստեր կան, որոնք ճշտում, ճշգրտում են նրա ստեղծագործական կյանքի հետ կապված ամենատարբեր հարցեր: Այս առումով բնորոշ են անդրադարձները «Կայսր» դրամայի գրության հանգամանքներին: Այսպես, օրինակ, «Կայսրի» գրության ժամանակը մինչև վերջերս ընդունված էր համարել 1914-ի մարտը, ինչպես և գրված է դրամայի առաջին հրատարակության վերջում (Թիֆլիս,1916): Մի շարք նամակներից պարզվում է, սակայն, որ դա ճիշտ է միայն դրամայի ստեղծմանը ձեռնամուխ լինելու առումով, և Շանթը դրամայի վրա աշխատել է (բառացիորեն գրել է) ընդհուպ մինչև 1916 թվականը (տե՛ս սույն հատորի

Հավելված 2-ի թ. 8 բայիկը և թթ. 132, 133, 134, 143 նամակները, որոնք կարևոր են նաև Շանթի արվեստագետի՝ իր գեղագիտական սկզբունքները լուսաբանելու առումով): Դրաման վերջնականապես պատրաստ է եղել տպագրության 1916 թ. մայիսին. «Կարծեմ արդեն ժամանակ է «Կայսրը» աշխարհ հանելու» (տե՛ս թ. 150 նամակը՝ գրված Ստ. Լիսիցյանին 1916 թ. մայիսի 29-ին):

Եվ վերջապես,Շանթի՝ Ստ. Լիսիցյանին գրած նամակներում հանդիպում ենք Հովհ. Թումանյանին վերաբերող տողերի, որոնք անչափ կարևոր են ինչպես նրանց մտերմական հարաբերությունների, այնպես էլ Ամենայն հայոց բանաստեղծի անձն ու գործունեությունը լուսաբանելու համար: Ահա Լոռուց ժառանգած հազվագյուտ կապիտալը «քոռ ու փուչ» անող ընկերոջ ստեղծագործական կյանքի յուրօրինակ ողբերգության համար ապրած ցավի մի ինքնաբուխ արտահայտություն. «Գրողը տանի այդ գրողներն ալ, իրենց ընկերությունն ալ. ափսո՛ս Հանես»,- գրում է Շանթը 1917-ի փետրվարի 5-ի նամակում՝ ենթադրելով, որ Թումանյանը, ինչպես միշտ, իր ամբողջ ժամանակը տրամադրում է Հայ գրողների կովկասյան ընկերության գործերին: Շանթն իրավացի էր. հայ հոգևոր կյանքի կազմակերպչական գործերում Թումանյանի զբաղվածությունը նրան, կարելի է ասել, դարձրել էր այդ ասպարեզի չինարար, և այդ աշխատանքից դուրս բանաստեղծին իր բուն կոչմանը ծառայելու համար շատ քիչ ժամանակ էր մնում: Մենք դեռ կտեսնենք, թե հենց բանաստեղծին գրված նամակներում նրա նկատմամբ Շանթի այս վերաբերմունքը ինչ անողոք պահանջկոտության, բուն իմաստով ինչ հետապնդման է վերաճում, որն զգալիորեն ծառայել է իր նպատակին: Առաջ անցնելով ավելացնենք, որ ընկերոջը հետապնդելու ալիքն իր ծայրահեղ լարմանն է հասել ոչ թե սովորական մի չրջանում, այլ հենց նշանավոր աբասթումանյան աշնան տարում՝ 1902-ին՝ գարնանից մինչև աշուն...Շա՛տ է պերճախոս:

Թվով 41 նամակ է հասել մեզ Թումանյանի հետ Շանթի նամակագրությունից, և ցավալի է, որ բանաստեղծի՝ Շանթին գրած նամակներից ոչինչ չի պահպանվել: Դրանց մոտավոր բովանդակությունը հասկանալի է դառնում միայն ընկերոջ բարեխիղճ և հաճախ հանգամանալից պատասխաններից: Կարծում ենք՝ չենք սխալվի, եթե պնդենք, որ Թումանյանի ստացած 1800 նամակների մեջ (Թումանյան.

Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Ե., 1985, էջ 259) իրենց փաստալից բնույթով և գրական արժեքով Շանթից ստացած նամակները լավագույններից են:

Շանթի նամակներից չատերը թումանյանագիտության համար բացառիկ արժեք ունեն: Շատ է ափսեցիկ նրա՝ 1902-ի ապրիլի 7-ին Փարիզից Թումանյանին գրած նամակը, որը Շանթն սկսում է արվեստի բարձր հանդիսարանից վերադարձածի անմիջական տպավորություններով. «Իմ անգիր Հանես, նոր վերադարձա նվագահանդեսեն. Պերլիոզի «Ֆաուստը» իր աչսուժ երաժշտությամբը դեռ ականջիս մեջն է, գրական բնազդներս արթընցած. ամենեն սիրուն ժամս գուցե քեզի գրելու»: Ապա խոսքը ինքնաբերաբար թեքվում է դեպի «Վերնատունը», որից բաժանվելը, ինչպես երևում է Շանթի այս և ուրիշ շատ նամակներից, նա շատ ծանր է տարել. «Համենայն դեպս ա՜ինքան բարձր եմ, որ չարունակ տրամադրությանս տակ են Փարիզի գեր, նիհար կզկըզված ու չիք, դեմոկրատ ու արիստոկրատ... ծխնելույզները, ա՜ինքան բարձր, որ ճակատս բաց կընամ ներկայանալ մեր Վերնատունը. վե՜ր, միչտ վե՜ր, այդ չէ՞ մեր Վերնատան ալվոր գևիզը: Օ՜, ես չատ վերերն եմ հիմա. վերերը ու միայնակ. այդ երկուքը անբաժան են իրարմե... Ա՜, չի կարծես տրտունջ են այս տողերս, ամենևին՜ն. ով վերերը կը տենչա, պետք է տրվի վերի միայնությանը» (որքան խորիմաստ խոսք, մանավանդ ապագա մեծ քառյակների, «Բարձրից»-ի և այլ գործերի հեղինակ Թումանյանի վերաբերյալ):

Ընդհանրապես, պետք է նշել, Շանթի՝ Թումանյանին գրած նամակներում այնքան չատ են անդրադարձները «Վերնատանը», և այնքան սեր, կարոտ ու ափսոսանք կա այդ անդրադարձներում, որ չատ հանգիստ կարելի է մի առանձին հոդված գրել «Վերնատունը» Շանթի՝ Թումանյանին գրած նամակներում» խորագրով: «Վերնատան» թեման Շանթին իջեցնում է իրական հողի վրա՝ անդրադառնալու իրական կյանքի ու ստեղծագործական խնդիրներին: «Վերնատնից» հեռանալով Անվերս և այնտեղից էլ Փարիզ՝ գարձյալ հաշվապահության, «հաշիվներու և տոմարներու մեջ խորանալու» համար՝ Շանթը, անկասկած, ընդառաջ էր գնում իրական կյանքի պահանջներին՝ դրանով իսկ միաժամանակ նրա չքեքելով իր մտապետից, քանի որ նա, ինչպես խոստովանում է, ցերեկները նվիրում է այդ մասնագիտությանը, իսկ գիշերները՝ մուսային: Այս հակասությունը՝ նյու-

թականի ապահովում և ազատ ստեղծագործելու հնարավորություն, Շանթին ուղեկցել է ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում և մեկ անգամ չէ, որ դառը խոհերի տեղիք է տվել: «...Եթե դիտնաս ինչ սոսկալի խայթ կ'ըզգամ մեջս, խայթ ու ամոթ ու ստորնացում. ինծի կը թվի, թե իրոք որ դավաճան մըն եմ, թեթևամիտ մը, որ իզուր և օտար աշխատության մեջ կը վատնիմ ուժերս ու երիտասարդությունս, մեկ կողմ դրած կոչումս ու մուսայիս ներշնչումները»,- կարդում ենք, օրինակ, վերը հիշված նամակում: Հանուն արդարության պետք է նշել նաև, որ Շանթը երբեք, ինչքան էլ ծանր նյութական պայմաններում է գտնվել, լիովին չի դավաճանել իր մուսային, իսկ կոնկրետ Բելգիայում և Փարիզում սովորելու տարիներին գրել է «Ուրիշի համար» և մտահղացել «Ճամբուն վրա» դրամաները, որոնց մասին մեկից ավելի հիշատակումներ կան նրա՝ Թումանյանին գրած նամակներում, և այս առումով դրանք սկզբնաղբյուրի արժեք ունեն:

Լևոն Շանթը Թումանյանի համար եղել է մտերիմ ու սրտակից ընկեր, անփոխարինելի մարդ, այն քչերից մեկը, որը շատ խորն է ճանաչել բանաստեղծին, բարձր գնահատել նրա անձը, ստեղծագործական հավակնությունները: Թումանյանի դժվարահաճ նամակներին նա պատասխանել է բարձր ոգևորությամբ ու նմանը չունեցող պատասխանատվությամբ: Նա բանաստեղծի մեջ երկու կողմ է տեսնում՝ հանրային ու մտերմիկ («Էնտիմ»), և ամբողջ էությամբ նվիրվում այս երկրորդ Թումանյանին՝ հեռվից հեռու անսահման կարոտ տածելով այդ «էնտիմ» Թումանյանի նկատմամբ: Ասվածի ուղղակի հավաստում կարող է դիտվել Շանթի՝ 1913 թ. հոկտեմբերի 8-ի նամակը, ուր անզուսպ հորդում է ընկերոջ նկատմամբ անսահման կարոտը. «Հանե՛ս ջան, չէ՞, մեր բոլոր վերնատնական բարքերուն ու ավանդություններուն հակառակ՝ այս անգամ չը գրել չեմ կրնար: Երբ երեկ իրիկուն հանկարծ, բոլորովին անակնկալ կերպով Աչխենը մտավ դռնես ներս, երբ գրկվեցանք ու սկսանք խոսիլ՝ մեկեն այնպես տա՛ք, այնպես հարազա՛տ, այնպես անո՛ւշ զգացում մը անցավ մեջես, որ, չէ՞, այս անգամ լռել չեմ կրնար: Սրտագին կարոտով ես ալ, Ջավոն ալ կը համբուրենք քեզի, Օլյան, մանչերդ, աղջիկներդ. այնպես կենդանի աչքիս դեմն ես դուն հիմա քու ճիժ ու բիժով, քու տուն ու տեղով: Աչխենը բոլորը պատմեց երեկ իրիկուն ու դեռ պատմելու վրա է:

Լրագիրներու մեջ կը հետևեի քու հոգվածներուդ, ժողովներուդ, նախագահութիւններուդ, վեճերուդ, մեկ խոսքով դուրսի Օհաննեսը: Աչքենդ ինծի բերավ ներսի Օհաննեսը, էնտիմը, ի՛մ Օհաննեսս, որուն խորապես կարոտեր եմ» (տե՛ս թ. 122 նամակը): Մեզ համար արժեքավորը, անշուշտ, բազմաթիվ ու հաճախ ծավալուն անդրադարձներն են հենց ա՛յս թուականներին. դրանք բացառիկ կարևոր նշանակութիւն ունեն բանաստեղծի կեանքի, հոգեվիճակի և ստեղծագործութեան ինչ-ինչ հարցեր լուսաբանելու համար, ինչպես, օրինակ, 1901-1903 թթ. Անվերսից գրած մի չարք նամակներ: Նման բնորոշ մի նամակում՝ գրված 1902-ի հոկտեմբերի 9-ին, Շանթը, առջևը դրած ընկերոջ երկու տխուր նամակները, զգայուն, սրտացավ ապրումներով հուսադրում, ոգևորում է նրան՝ հաղթահարելու կեանքի դժվարութիւնները, ամենից առաջ՝ չարակամ մարդկանց պատճառած դառնութիւնները. «Նրբազգաց մարդու համար անտանելի տանջանք մըն է քու նկարագրած մանրամասնութիւններդ, գիտեմ, բայց ամեն առավելութիւն իր հետ իր տանջանքը ունի, հոգի՛ս: Ինչի նման, կեանքին չատ բարձրերեն նայող, հպարտ, մաքուր ու նրբազգաց հոգին բացառիկ է: Ու ճիշտ իր բացառիկ ըլլալուն համար ալ պիտի տուժես: Սովորական մարդիկը ամեն բան կը ներեն, բայց իրենցմե տարբերվիլը, իրենցմե բարձր թռչիլը չեն ներեր»: «Ախտորոշման» հետ միասին Շանթը տալիս է նաև «դեղատոմսը». անվերապահորեն հավատալով իր ընկերոջ գրական տաղանդին՝ նա կոչ է անում գրել, ստեղծել արժեքավոր գործեր. այդ ճանապարհով միայն կկուծվեն բոլոր խնդիրները. «Այս բարոյական դատողութիւններեն զատ՝ գիտեմ ես նաև ուրիշ բան մը, որ կրնաս քու հոգուդ առջևը վահան բռներ, անթափանց վահան մը, որուն զարնվելիս բոլոր գծուծ նետերը գետին կը թափին. գրի՛...Գրի՛, հոս է քու վրեժդ ալ, քու պարտքերուդ վճարումն ալ, քու կյանքիդ խորհուրդն ալ ու, եթե կ'ուզես, քու երջանկութիւնն ալ» (ընդգծումն իմն է - Խ. Վ., տե՛ս թ. 47 նամակը): Մեկ այլ նամակում (թ. 53) Շանթի այս կոչը վեր է աճում անաքող պահանջի, որը, ճիշտ է, ներկայացվում է հոմորի քողի տակ, բայց ձևակերպված է հստակ, ազատիչ և համոզիչ. «Դարտակ բառեր գլուխս չի մտներ, նստե աշխատե քեզի: Ընտանիք, ծանրութիւն, զոքանչիք, պարտքեր, երեխաների ճղճղոց, այդ բոլորը չա՛տ լավ, հասկըցա, բայց ի՞նչ, կը կարծես միայն դո՞ւն ես այդպես: Գրողներու կեսեն ավելին քեզի պես են եղած, և

վերջապես քու քաջութիւնդ ալ Հոն պիտի ըլլա, որ այդ փրոզաներուն մեջէն կարողանաս «փոեզիի լոյսը ծագեցնես»: Դուն փոխանակ քու խանգարվելուդ մասին մտածելու ու գրելու, քիչ մըն ալ քու խանգարված փոեմիդ մասին մտածե՛ ու գրե՛. դուն կ'ուզես տակառներով արդարացում դիր մեջտեղը և կողովներով դժվարութիւններ, ո՛չ ոքի համոզել չես կրնար, որ քեզմե չի պահանջեն, և իրավունք ունին, իհարկե, պահանջելու, որովհետև քու մեջդ չնորհք կա: Իսկ ես, իբրև պահանջող, ամենեն առաջ, որովհետև ամենքեն ավելի խոր կը հասկընամ քեզի, կը ճանչնամ հոգիդ, ընդունակութիւններդ, դժվարութիւններդ ու արգելքներդ»: Ընկերոջ այս խորապես անողոք ու միաժամանակ իրավացի պահանջկոտութիւնը, ըստ էութեան, (գոնե 1902-1903 թթ.) լրջորեն ներգործել է Թումանյանի վրա: Կյանքի դժվարութիւնների դեմ ստոիկորեն մաքառող, կամային, աշխատասեր ու նվիրված ընկերոջ անկեղծ չահագրգռվածութիւնը չէր կարող անհետևանք անցնել: Հետապնդող այս պահանջկոտութիւնը խորունկ հիմքեր ուներ «Վերնատան» ազգաչեն-ապագայաչեն գործունեութեան մեջ:

Ընդհանրապես հումորն ու կատակը, որպես բացառիկ մտերմութեան դրսևորումներ, արտահայտվել են Շանթի՝ Թումանյանին գրած բազմաթիվ նամակներում և բացիկներում: Ամենատարբեր առիթներով ընկերոջը հումորի ենթարկելը կամ իրականութիւնը հումորով ներկայացնելը, ինչպես երևում է, եղել է Շանթի սիրած զբաղմունքներից մեկը: Նրա սրամտութեան փայլատակումները վերաբերում են հատկապես ընկերոջ համբավավոր ծուլութեանը, որը բազում կատակների նյութ է դարձել: «Բելժը աշխատանքի մարդն է. այնպես որ քեզի բնավ խորհուրդ չէի տար այս կողմերը ոտք դնես»,- գրում է Շանթը Թումանյանին Անվերսից 1901-ի նոյեմբերի մեկին: Այդ նույն երկար նամակում (թ. 31) նա մի առիթով խոստովանում է, որ ինքն էլ է հաճախ ծուլանալով տրվում իր երիտասարդութեանը հարազատ հեթանոս ապրելակերպին, և հումորով փիլիսոփայում է բանաստեղծների ծուլութեան մասին ընդհանրապես (այս տողերը նա խնդրում է ուրիշի ցույց չտալ). «Լեցուն էր արդեն պայուսակս այդ դրքերով, որոնք պիտի կարդայի գյուղը, բնութեան ու Հանգստութեան ծոցին մեջ: Ի՞նչպես չէ: Հինգ-վեց չաբաթ այնպիսի փառավոր ծուլութեամբ մը ծուլացա, որ մինչև անգամ քու հիացումը կրնայի չարժեր...»:

Շանթը բելգիական գյուղից վերադառնում է գրքերով լեցուն պայուսակը առանց բացելու...

Ընկերական մտերմիկ հումորով աչքի են ընկնում հատկապես Շանթի չափածո բացիկները Թումանյանին և իր «գրաված» «վերնատնից» նրան գրած նամակներից չատերը: Որպես ամփոփում ավելացնենք, որ բանաստեղծը միակ մարդն է, ով գարձել է Շանթի սրամտության թիրախը, և այս խոսուն փաստը ինքնին վկայում է նրանց բացառիկ հարաբերությունների մասին:

Շանթի՝ Թումանյանին գրած վերջին նամակը թվագրված է 1914 թ հուլիսի 18-ով: Թերևս գրանից հետո նրանք այլևս չեն գրել իրար, թեև, ո՞վ գիտի, հնարավոր է՝ ինչ-որ տեղից գեռ հայտնաբերվի որևէ նամակ: 1920-ի հոկտեմբերի սկզբներին Թումանյանը Երևանում պտնվող իր մի ընկերոջ և Աչխեն դատեր միջոցով գրամ է փոխանցել պետական բարձր դիրք ունեցող ընկերոջը. «Մի հինգ հազար ռ. եմ գրկում բոներով, կուաք Շանթին ու չատ բարով կանեք: Նամակ կգրեմ» (ԵԼԺ, հ. 10, էջ 360): Գրվե՞լ է այս նամակը, թե՞ ոչ՝ դժվար է ասել, բայց որ գրանից հետո նրանք հանդիպել են՝ կասկած չկա: 1921-ի երևի մարտի վերջին՝ Փետրվարյան պինդված ապստամբության պարտությունից և Շանթի ու Աղբալյանի՝ Պարսկաստան վտիչելուց քիչ առաջ, Թումանյանը առանձին-առանձին խոսել է բանտից ու կացնից հրաչքով փրկված երկու վերնականների հետ: Ահա Թումանյանի թանկ վկայությունը՝ զուսպ և զգուշավոր. «Խեղճ Նիկոլը հիվանդ էր, էնպես էլ գնաց: Շանթն էր մոտս. նա մի օր առաջ էր հեռացել» (ԵԼԺ, հ. 10, էջ 384): Ինչ են խոսել երբևիցե մտերիմ ընկերները և ինչ զգացումներով են բաժանվել (կամ ընդհանրապես զգացե՞լ են, որ դա իրենց վերջին հանդիպումն է)՝ կարող ենք լոկ ենթադրել: Երկու տարի չանցած՝ Թումանյանը պիտի կնքեր իր մահկանացուն, իսկ Շանթն ու Աղբալյանը երկար ու ձիգ տարիներ պիտի ապրեին ու ոքնեին օտար երկինքների տակ՝ հայրենիքից հետու, հայրենիք, ուր ոտք դնել նրանց այլևս բախտ չվիճակվեց:

Տարագրության ուղիները Շանթին, մասնավորապես, Պարսկաստանով ու Հնդկաստանով տարան Եվրոպա՝ Ֆրանսիա, ուր նա կարճ ժամանակով հաստատվեց նախ Մոնպելիեում, ապա Մարսելում, իսկ հետո՝ Ափրիկա՝ Եգիպտոս, ուր նա որոշ ժամանակ ապրեց ու աչխատեց Ալեքսանդրիայում, հետո՝ կրկին Ֆրանսիա՝ Փարիզի արվարձան՝

Շավիլ, և ի վերջո՝ Լիբանան՝ Բեյրութ, որը դարձավ նրա ու Աղբալյանի վերջին հանգրվանը: Տարագրության երեսուն տարիների ընթացքում Շանթը գրել է բազմաթիվ նամակներ՝ ուղղված ամենատարբեր մարդկանց և գրված, որպես կանոն, գործի բերումով: Դրանց մեջ, թերևս, կարելի է առանձնացնել երկու խոշոր գործիչներին՝ Սիմոն Վրացյանին և Համո Օհանջանյանին գրված նամակները: Առաջինին գրված նամակներում մեր առջև կանգնում է վտարանդի գրողը, մտավորականը, նախկին քաղաքական-պետական գործիչը, պարզապես հասարակ հայ մարդը՝ իր անորոշ ու դաժան ներկայով ու ապագայով, հոգեկան ու ֆիզիկական տվայտանքի անթաքույց դրսևորումներով: «Ես միչտ վարժված եմ եղած իմ հոգիովս ինձ զբաղեցնելու. մեկ էլ որ պարապուքյունը ավելի է սրում կյանքե և աչխատանքե կտրված լինելու զգացումս և այն խո՛ր, խո՛ր կարոտը դեպի մեր դժբախտ հայրենիքը: Հիմա իմ աչքիս ուրիչ ոչինչ չի գալիս. կ՝ուզեի լինիմ ու աչխատիմ մեր ավեր աչխարհում. երբևէ այսպես ուժեղ չէի զգացած հայրենի միջավայրի ու հայրենի հողի պահանջը»,- Վրացյանին ուղղված այս տողերը լավագույնս են բնութագրում Շանթի և (ոչ միայն նրա) հոգեվիճակը տարագրության գոնե առաջին տարիներին (տե՛ս թ.166 նամակը): Նրա, ապա և Աղբալյանի համար մտաևեռում է դառնում Սփյուռքում հայ երեխաների համար մի լավ միջնակարգ դպրոց հիմնելու գաղափարը: Ի վերջո, տարիների տառապանքից ու բազմաթիվ արգելքներ հաղթահարելուց հետո,1929-ին Բեյրութում բացվում է Հայ ազգային ճեմարանը, որը դառնում է Մերձավոր Արևելքում հայերի կրթության ու դաստիարակության ակութներից լավագույնը: Հենց այս ճեմարանի հիմնադրման ու գոյատևման համար պայքարի պատմությունն էլ ներկայացված է Շանթի՝ Համո Օհանջանյանին գրած նամակներում: Դրանք օր օրի ի պաշտոնե գրված վավերագրական գրություններ են՝ հաճախ խանդավառ ու ողբերգական տրամադրություններով լի, և այս առումով, անկասկած, որոշակի արժեք ունեն, մանավանդ որ հրապարակվում են առաջին անգամ:

Կարելի է, անշուշտ, հիշատակել տարբեր անձանց գրված բազմաթիվ ուրիչ նամակներ, որոնք այս կամ այն տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, բայց, կարծում ենք, արդեն ասվածն էլ բավական է՝ համոզվելու համար, որ Լևոն Շանթի նամա-

կանին վաղուց սպասված և բացառիկ կարևորություն ունեցող մի ժողովածու է, մի գիրք, որը կօգնի Շանթի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրողներին՝ տալու կամ ճշտելու շատ հարցերի պատասխաններ և ավելի ամբողջացնելու նրա գրական ու պարզապես մարդկային դիմանկարը: Եվ սովորական ընթերցողներին էլ, համոզված ենք, հետաքրքիր կլինի հետևել հիսուներեք տարի (մի ամբողջ կյանք) ձգվող այս բազմաբովանդակ ու հարուստ պատմության գոնե առանձին դրվագներին, որոնք այնքան շատ ուսանելի բան ունեն իրենց մեջ:

Շանթի նամակներին բնորոշ են պարզ, խոսակցական լեզուն, մտքերի ձևակերպման սահուն ընթացքը: Դրանցում չկան պերճախոսության հակում, բառաշարի ուրույնության ցուցադրում (թեև մեկ-մեկ օգտագործել է հազվագյուտ բառեր), այսպես կոչված «լեզվական փայլ», իսկ նյութի հստակ արտահայտում, ճշգրտություն ու կոնկրետություն, անկաշկանդություն ու կենսական ջերմություն՝ տոգորված խոր հուզականությամբ՝ ինչքան ուզեք, որի չնորհիվ էլ նրա նամակներում քիչ չեն գեղարվեստական հաճույք պատճառող տողերն ու պարբերությունները:

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լևոն Շանթի երկերի ժողովածուի վերջին՝ իններորդ հատորում զետեղված են մեծ մտավորականի, գրողի, մանկավարժի, քաղաքական-պետական գործչի նամակներն ու բացիկները՝ գրված 1896-1949 թվականներին: Լ. Շանթի նամակներից վեցը առաջին անգամ հրատարակել է Գոհար Ազնավուրյանը «Սովետական գրականություն» ամսագրում (1971, թ. 10, էջ 116-126), ևս մեկը՝ «Պատմա-բանասիրական հանդեսում» (1982, թ. 1, էջ 201-217): Այնուհետև 41 նամակ և բացիկ տպագրվել են «Թումանյան. Ուսումնասիրու-թյուններ և հրապարակումներ» գրքում (հ.4, Երևան, 1985, էջ 337-390, կազմողներ՝ Խ. Գյուլնազարյան և Ջ. Ավետյան): 1992-ին և 1996-ին Խաչատուր Վարդանյանը «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում հրապարակել է Շանթի՝ Ստ. Լիսիցյանին գրած 39 նամակ (1992, թ. 1, էջ 121-147,թ. 3, էջ 121-135 և 1996, թ. 2, էջ 135-148): Եվս 2 նամակ տպագրվել է մամուլում (կնշվեն իրենց տեղերում, ինչ-պես մնացած բոլոր տպագրվածների դեպքում). այսպիսով Շանթի տպագրված նամակների թիվը հասնում է 85-ի (վերը նշված 97 նամակից հանած 12 կրկնվողները՝ գրված Հովհ. Թումանյանին): Ցավով պետք է նշել, որ տպագրված գրեթե յուրաքանչյուր նամակում կան վրիպակներ, բացթողումներ և տարընթերցումներ, որոնք հնարա-վորինս լրացվել և ուղղվել են, թեև, որոշ դեպքերում, Շանթի ձեռագրի անընթեռնելիության պատճառով հնարավոր չի եղել կարդալ (ճիշտ կլինի ասել՝ վերծանել) որոշ բառեր, որոնք նշվել են եռանկյունաձև փակագծերի մեջ:

Ներկա ժողովածուն պարունակում է 273 մաքրագիր նամակ ու բացիկ (261+ Հավելված 2-ի 12 բացիկները) և 86 սևագիր նամակ, որոնք, բացառությամբ Ռ. Դարբինյանին գրված 4 նամակների, տպագրվում են կա՛մ ինքնագրերից, կա՛մ ինքնագրերի լուսապատ-ճեններից: Բազմաթիվ նամակների լուսապատճեններ մեզ է տրամադրել Երվանդ Փամբուկյանը Բեյրութից (տե՛ս էջ 680), ինչի համար խմբագրական կոլեգիան նրան հայտնում է իր խորին երախտագի-տություն: Այս ճանապարհով հաջողվել է լիովին հավաքել և տպագրության պատրաստել Շանթի մինչև այժմ հայտնի գրեթե բոլոր նամակները՝ ներկա ժողովածուն դարձնելով հնարավորինս ամբողջական, ինչը մեր հիմնական նպատակներից մեկն էր: Այսքանով հանդերձ համոզված

ենք, որ առայժմ մեզ անհայտ արխիվներում, փոնդերում և մատնավոր անձանց մոտ կարող են պահվել Շանթի նամակներից կամ բացիկներից, որոնց հայտնաբերումն ու հրապարակումը է՛լ ավելի ամբողջական կդարձնի Շանթի նամականին:

*Մեր երկրորդ նպատակը եղել է, որքան հնարավոր է, բնագրերին հարազատ մնալը: Սկզբունքորեն խուսափել ենք կետադրական և մատնավանդ ուղղագրական վոփոխութիւններից, բառերի գրութեան միօրինակացումից՝ նվազագույնի հասցնելով միջամտութիւնները, որոնք, իսկապես, չատ քիչ են, օրինակ՝ չատ նամակների սկզբում հասցեատիրոջից հետո, սովորականը փոխվել է վերջակետի, կամ որոշ բառերում բաց են թողնվել առանց դրելու էլ արտասանվող ը-երը (այն էլ ոչ միշտ) և վերջ: Շանթի լեզուն, երկու միջավայրերի՝ Կ. Պոլսի և Անդրկովկասի խոր ազդեցութիւնը իր վրա կրելով, արևմտահայերենի և արևելահայերենի խառնուրդ է, և այս իրողութիւնն առկա է ինչպես նրա գեղարվեստական գործերում (ճիշտ է, իր երկերի ժողովածուի Բեյրութի հրատարակութեան ժամանակ՝ 1946-ից մինչև իր մահը, Շանթը ձգտել է ազատվել արևելահայերենի տարրերից, բայց դա նրան վերջնականապես չի հաջողվել), այնպես էլ նամակներում: «Նոր նկատեցի, որ լեզուս խառներ եմ. սկսա ձեր լեզվով, բայց այլևս առանց ճիգի կը դժվարանամ, ինչպես կերևա, ալ պետք է ձեռք քաշեմ»,- գրել է Շանթը Ստ. Լիսիցյանին 1910 թ. հունվարի 4-ին (տե՛ս թ. 91 նամակի վերջը): Այս երևույթը հատուկ է նաև բազմաթիվ այլ նամակների, այդ պատճառով էլ Շանթը նույն բառը հաճախ գրում է մի քանի ձևով՝ **բանկա, բանքա, պանք, պանքա** (բանկ, դրամատուն) կամ **կարդ, կարտ, քարթ, քարտ** (բացիկ), նույնիսկ նույն նամակում՝ **խրկել** և **ղրկել**: Նման դեպքերի, ինչպես նաև արևմտահայերենն, բարբառային կամ օտար բառերի համար վերջում ավելացրել ենք առանձին բառարան, ուր այդ բոլոր ձևերը և բառերը բերված ու բացատրված են: Անձնանունների համար կազմվել է բառարան-անվանացանկ, առանձին դեպքերում դրանց անդրադարձել ենք նաև ծանոթագրութիւններում:*

1896

1.Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության նախագահին

Փետրվարի 8

Ինքնագիրը պահվում է Գրականության և արվեստի թանգարանում (այսուհետև՝ ԳԱԹ), Լևոն Շանթի ֆոնդ, թ. 3:

Տպագրվում է առաջին անգամ:

1. Գրությունն ուղղված է Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության նախագահ, անասնաբույժ, հանրային գործիչ Ալեքսանդր Քալանթարին (1855-1913):

Ընկերությունն ստեղծվել է 1880-ին Աբգար Հովհաննիսյանի նախաձեռնությամբ և սկզբում կոչվել է Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերություն: Առաջին նախագահն էր Ա. Հովհաննիսյանը: 1900-ին փակվել է ցարական կառավարության կողմից, վերաբացվել է 1910 թ. և գործել մինչև 1921 թ.:

2.Շանթի «Երազ օրեր» վիպակը առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում (1894, թ. 11-12, 1895, թ. 1, 2, 3-4), այնուհետև՝ առանձին գրքով (1896, արտատպված է «Մուրճ» ամսագրից): Հրատարակչական ընկերությունը վիպակը չի տպագրել:

2.Արշակ Չոպանյանին

Հուլիսի 21

Սփյուռքահայ անվանի մտավորական, բանասեր, գրող, հրապարակագիր, թարգմանիչ Արշակ Չոպանյանի և Լևոն Շանթի մտերիմ լինելու վերաբերյալ բավարար տեղեկություններ չկան. ներկա ծողովածուում տեղ է գտել Շանթի՝ Չոպանյանին գրած ընդամենը 4 նամակ: Հնարավոր է, որ այս նամակը գրելու ժամանակ նրանք անձամբ ծանոթ են եղել, և այդ ծանոթությունն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 1891-1895 թթ. Կ. Պոլսում Արփիար Արփիարյանի խմբագրապետությամբ լույս տեսած «Հայրենիք» օրաթերթի խմբագրատանը. Ա. Չոպանյանը այդ թերթի ամենաակտիվ աշխատակիցներից էր, և նույն այդ թերթում 1891-92 թթ. տպագրվել են Շանթի «Մնաք բարովի իրիկունը»

հուշերգրությունը, 13 բանաստեղծություն և թարգմանություններ Պուշկինից ու Լերմոնտովից: Բայց այդ տարիներին նրանք մտերիմ չեն եղել (տե՛ս թ. 15 նամակի վերջը), և հետագայում էլ, ամենայն հավանականությամբ, նրանց հարաբերությունները կրել են պաշտոնական բնույթ:

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Ա. Զոպանյանի ֆոնդ, թ. 5507:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Թերևս խոսքը գրող, հրապարակախոս, թարգմանիչ, խմբագիր Միքայել Նամատանճյանի մասին է, որի հետ Շանթը սովորել է Լայպցիգի համալսարանում: 1893 թ. նոյեմբերի 20-ին Ավ. Իսահակյանը Լայպցիգից գրել է իր և Շանթի ուսուցչին՝ Ստ. Լիսիցյանին. «Այստեղ է Լևոն Սեդրոսյանը և մի ուրիշ պոլսեցի (Նամատանճյան). նկել են ուսանելու» (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Երևան, 1979, էջ 19):

2.Ա.Զոպանյանը 1895 թ. աշնանից սկսել է Փարիզում և ծավալել գրական-հասարակական լայն գործունեություն (Կ. Դալլաքյան, Արշակ Զոպանյան, Ե., 1987, էջ 94):

3.Խոսքը 1896 թ. ամռանը Փարիզում հրատարակված «Հայերի ջարդերը» գրքի մասին է: Գիրքը վավերագրերի ժողովածու է 1894 - 96 թթ. հայերի ջարդերի մասին:

4.Գրող, հրապարակագիր, հաս. գործիչ Լևոն Բաշալյանը «80-ականների» նշանավոր դեմքերից էր և «Հայրենիք» օրաթերթի խմբագիրներից մեկը: 1896 թ. գարնանը՝ թերթի հրատարակման դադարեցումից և Ա. Արփիարյանի՝ արտասահման հեռանալուց հետո, նա նույնպես ստիպված է եղել փախչել Պոլսից Փարիզ:

5.Այս առիթով որևէ բան պարզել չհաջողվեց:

6.Խոսքն ակներևաբար «Դուրսեցիները» վիպակի մասին է, որը նախ լույս է տեսել «Մուրճ» ամսագրում (1895, թ. 11, 12, 1896, թ. 1, 2), իսկ հետո «Մուրճից» արտատպվել է առանձին գրքով:

3.Ստեփան Լիսիցյանին

Օգոստոսի 25

Գրող, մանկավարժ, թարգմանիչ, հրատարակիչ, հաս. գործիչ, ազգագրագետ Ստ. Լիսիցյանը երկար տարիներ եղել է Շանթի ամենամտերիմ մարդկանցից մեկը, և Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահպանվում են Շանթի՝ Լիսիցյանին գրած բազմաթիվ նամակներ, որոնցից չա-

տերը հրատարակվել են Խաչատուր Վարդանյանի կողմից (կնշվեն իրենց տեղերում):

Շանթի և Ստ. Լիսիցյանի երկարամյա բարեկամության սկիզբը դրվել է 1889 թ. սեպտեմբերին, երբ Վարշավայի համալսարանն ավարտելուց հետո Լիսիցյանը ռուս գրականության ուսուցչի պաշտոն է ստացել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր այդ ժամանակ ուսանում էր Շանթը: Պահպանված հատուկտոր տեղեկություններից պարզ է դառնում, որ երիտասարդ ուսուցչի և ուսանողների միջև հաստատվել են բավականին մտերմական հարաբերություններ: Մասնավորապես, բավական է հիշել այն, թե ինչ դեր է կատարել Ստ. Լիսիցյանը ճեմարանից հեռացած Լ. Շանթի և Օննիկ Դերձակյանի (նրա ճեմարանական ընկերը, Հայտնի Արշակ Վռամյան հեղափոխական անունով)՝ Պոլիս վերադառնալու գործում: Ինչպես վկայում է Ստ. Լիսիցյանի կինը՝ Կատարինե Լիսիցյանը. «Մի անգամ Ստեփանը և Լևոն Խոջայանը (Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, մաթեմատիկոս - Ա.Մ.) լճափ էին դուրս եկել զբոսնելու և այնտեղ հանդիպեցին երրորդ կուրսի ուսանողներ Դերձակյանին ու Լևոն Սեղբոսյանին (ապագայում գրող Լ. Շանթ): Երկուսն էլ Կոստանդնուպոլսից էին և վերադարձի համար միջոցներ չունեին: Լևոնը և Ստեփանը այդ ուսանողներին տուն հրավիրեցին:

Ստեփանը Իվան Սպենդիարյանին խնդրեց ստորագրությամբ փող հանգանակել, որպեսզի Դերձակյանը և Սեղբոսյանը կարողանան Կոստանդնուպոլիս մեկնել:

Այդ երկու ուսանողները մոտ երկու ամիս ապրեցին մեր տանը: Երեկոները թեյի սեղանի շուրջ Շանթը կարդում էր իր ստեղծագործությունները:

Ի վերջո, Իվան Սպենդիարյանը երկու հարյուր հիսուն ռուբլի ուղարկեց, և մենք ուսանողներին մեծ տխրությամբ ու ափսոսանքով ճանապարհեցինք» (Կ. Լիսիցյան, **Նվիրում**, Երևան, 1982, էջ 43):

Սա 1891-ին էր, իսկ 1896-ին կրկին ծանր վիճակում հայտնված Շանթը դիմել է իր նախկին ուսուցչին՝ խնդրելով նրա օգնությունը, ինչն էլ ի վերջո ցուցաբերվել է, և հենց այդ օգնության շնորհիվ էլ Շանթը կարողացել է ևս 3 տարի շարունակել իր կրթությունը Գերմանիայում:

Լ. Շանթի և Ստ. Լիսիցյանի նամակագրությունը շարունակվել է մինչև 1917 թ., իսկ հարաբերությունները խզվել են 1920 թ.՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Ստ. Լիսիցյանն ու Լ. Շանթը, որքան երևում է Շանթի՝ Լիսիցյանին գրած նամակներից, եղել են անկեղծ ու ազնիվ, սրտակից բարեկամներ, մտերիմներ ու գործակիցներ: Նման մտերմությամբ Շանթը կապված է

եղել նաև Հովհ. Թումանյանի և Նիկոլ Աղբալյանի, մասամբ՝ Դ. Դեմիրճյանի հետ:

Նամակի ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 184:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1996, թ. 6, էջ 137-138:

Տպագրվում է ինքնագրից:

1.Այդ նամակները չեն պահպանվել:

2.Նկատի ունի 1895-ի սեպտեմբերի 30-ին Հնչակյանների կազմակերպած Բաբը Ալիի ցույցը և դրան հաջորդած քաղաքական իրադարձությունները, մասնավորապես բռնությունները հայերի նկատմամբ:

3.«Մուրճ» հասարակական-քաղաքական, գրական ամսագիրը Ավետիք Արասխանյանի խմբագրությամբ Թիֆլիսում լույս է տեսել 1889-1907 թթ.: Այստեղ են տպագրվել Շանթի «Երազ օրեր», «Դաւրսեցիները», «Վերժին», «Դարձ» և «Դերասանուհին» փոքր վեպերը:

Շանթի՝ Ավ. Արասխանյանին գրած նամակները չեն պահպանվել:

4.Բծախնդրություն (ֆր.): Բառը նամակի նախորդ հրատարակության մեջ բացակայում է:

5.Իվան (Հովհաննես) Սպենդիարյանը՝ կոմպոզիտոր Ալիքսանդր Սպենդիարյանի եղբորորդին, եղել է Ստ. Լիսիցյանի համալսարանական ընկերը Վարշավայում (Կ. Լիսիցյան, Նվիրում, էջ 40):

6.Բառը նամակի նախորդ հրատարակության մեջ բացակայում է:

4.Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 19

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 184:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1996, թ. 6, էջ 138-139:

Տպագրվում է ինքնագրից:

1.Այս և նամակում հանդիպող մյուս նման բառերը թողել ենք Շանթի ուղղագրությամբ:

2.Ինչպես երևում է, Շանթը նույն խնդրանքով դիմել է նաև Իվան Սպենդիարյանին, որին գրած նամակը (կամ նամակները) չի պահպանվել:

3.Հարուստ տիկին, որին օգնության ակնկալիքով դիմել է Շանթը, բայց որևէ աջակցություն չի ստացել:

4.Ականավոր բանասեր, հայագետ, բառարանագիր Ստեփան Մալխասյանն է:

5.Այստեղ, ինչպես և մի քանի տող հետո, դարձյալ նկատի ունի արևմտահայերի դեմ բռնությունները և դրանց հետևանքով ստեղծված ծանր վիճակը, մասնավորապես գաղթականների վիճակը Թիֆլիսում և ռուսահպատակ այլ վայրերում (նրանց ծանր վիճակի նկարագրությունը տե՛ս, օրինակ, Ն. Աղբալյանի «Հայ գաղթականները Թիֆլիսում» հոդվածում, «Մուրճ», 1897, թ. 4, էջ 1277-1280):

1897

5.Ստեփան Լիսիցյանին

Ապրիլի 3

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 185:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1996, թ., 6, էջ 139-140:

Տպագրվում է ինքնագրից:

1.Կովկասյան լեռների գլխավոր լեռնանցքով անցնող ճանապարհ, որն Անդրկովկասը կապում է ռուսական հողերին:

2.Թերեք գետը:

3.Մովային քամի (ֆր.):

4.Բնակավայր Վրաստանում:

5.Չեխովի պատմվածքները: Անտոն Պավլովիչ Չեխով (1860-1904)՝ ռուս հայտնի գրող:

6.Շանթի Գերմանիա վերադարձի ճանապարհն անցնում էր Դոնի Ռոստովով, որին 1891 թ. պաշտոնապես կցված էր Նոր Նախիջևանը: Առիթից օգտվելով՝ Լիսիցյան ամուսինները խնդրել էին հանդիպել որոշ մարդկանց հետ և կարգավորել ինչ-ինչ գործեր:

7.Կատարինե Լիսիցյանը, ինչպես գրում է իր հուշերում, 1885 թ. հայկական դպրոցները փակվելուց հետո մի քանի տարի աշխատել է այս վարժարանում (իր բառերով՝ Դոդևյան ուսումնարանում, Նվիրում, էջ 40) և, ըստ երևույթին, Շանթի միջոցով նամակներ է ուղարկել տնօրենին և այլ անձանց:

8.Հավանաբար Շանթի ճեմարանական ընկերներից:

9.Կատարինե Լիսիցյանը ունեցել է 4 քույր՝ Լիզա կամ Եղիսաբեթ, Տանյա, Ռոզա և Մագդա (Նվիրում, էջ 36, 51): Թագուհի կարող էր լինել Տանյայի առաջին անունը, թեև նրա ամուսնացած լինելու մասին Կատարինե Լիսիցյանը ոչինչ չի գրում:

10.1885-89 թթ. Կատ. Լիսիցյանի քույրերը նրա հետ ապրել են Նոր Նախիջևանում (Նվիրում, էջ 40):

11.Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը կառուցվել է 17-րդ դարի վերջերին: 1834 թ. այստեղ անհայտ չարագործների կողմից սպանվել է բանաստեղծ, նշանավոր հոգևորական Հարություն Ալամդարյանը (1796-1834), որը վանքի վանահայրն էր:

6. Ստեփան Լիսիցյանին

<Ապրիլի կեսեր>

Նամակն անթվակիր է, նրա գրության ժամանակը որոշվել է՝ հիմնվելով բովանդակությունից: Առաջին նամակն է, որ Շանթը Լիսիցյանին գրել է Մյունխենից:

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Շանթի այս նամակը լի է գերմաներեն գրված անուններով և բառերով, որոնք դժվարըմբռնելի են: Դասախոսների ազգանունները ճշտելու և նրանց մասին տեղեկություններ ստանալու նպատակով դիմեցինք Մյունխենի համալսարան, բայց որևէ պատասխան այդպես էլ չստացանք:

2.Ըստ երևույթին նկատի ուն իր՝ Մյունխենում վարձած բնակարանը:

3.Այուժե, դիպաշար, ուր դեպքերը նկարագրված են ըստ ժամանակային հաջորդականության:

4.Այս նախադասությունը և նրան հաջորդող նկարագրությունը ապացուցում են, որ այս նամակը գրված է 1897 թ. ապրիլի 3-ին գրված նամակից անմիջապես հետո և իրոք Մյունխենից գրված առաջին նամակն է, թեև ՀԱԱ-ում պահվում է թ. 187 թղթապանակում, ուր ներառված են Շանթի՝ 1899-ին գրած 7 նամակներ:

5.Կիև-Պեչորյան մայրավանքը՝ Կիևյան Ռուսիայի հնագույն վանքը: Հիմնադրվել է Յարոսլավ Իմաստունի օրոք 1051-ին, XI-XII դդ. դարձել է մշակութային նշանավոր կենտրոն, XVI-XVII դդ. ստացել է մայրավանք

պատվանունը: Վանական համալիրը, որն իր վերջնական տեսքն ստացել է XVIII դարում, ընդգրկում է Վերին Լավրան և մոտակա ու հեռավոր քարայրների անսամբլները:

6.Քրիստոսի Հարության տոնին՝ Զատիկին նախորդող կիրակի օրը (Ավագ կիրակի) նշվող տոն, կոչվում է Ծառազարդար: Հայ առաքելական եկեղեցին Զատիկը նշում է մարտի 21-ից մինչև ապրիլի 26-ը ընկած ժամանակամիջոցում: Ըստ այդմ էլ Ծառազարդարը տոնվում է մարտի 14-ից ապրիլի 19-ը ընկած ժամանակահատվածում:

7.Ստ. Լիսիցյանը 1887-89 թթ. սովորել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական բաժանմունքում:

8.Սաքսոնիան երկրամաս է Գերմանիայում (գլխավոր քաղաքը՝ Լայպցիգ), ուր կարող էր եղած լինել Ստ. Լիսիցյանը 1884-87 թթ. Օդեսայի և հատկապես Վարշավայի համալսարանում սովորելու ժամանակ: Ո՛չ 1897-ից առաջ և ոչ էլ հետո՝ մինչև 1904 թ., Ստ. Լիսիցյանի՝ Գերմանիայում եղած լինելու վերաբերյալ որևէ տեղեկություն չկա (տե՛ս, օրինակ, Լ.Մ. Վարդանյան, Степан Лисициан и истоки армянской этнографии, *Երևան, 2005, էջ 57):*

9.Նուրբ, գեղեցիկ (գերմ.):

10.Վարշավաբնակ առևտրականներ, որոնք Ստ. Լիսիցյանի ջանքերի շնորհիվ համաձայնել էին դրամական աջակցություն ցուցաբերել Շանթին մինչև կրթությունն ավարտելը և կատարեցին իրենց հանձնառությունը մինչև վերջ: Առաջին ազգանունը Շանթի նամակներում հանդիպում է նաև Զուրաբով ռուսական ձևով: Նա եղել է տոհմիկ պատվավոր քաղաքացի, զբաղվել է ռուսական և արտասահմանյան գինիների և սեփական այգիների բերքից Վարշավայի իր գործարանում պատրաստվող «Կիզլյարկա» կոնյակի վաճառքով: Ստ. Լիսիցյանի ֆոնդում (ցուցակ 4, թղթ. 318) պահվում է Զոհրաբյանի նամակը Ստ. Լիսիցյանին (տե՛ս Լ.Մ. Վարդանյան, Степан Лисициан..., *էջ 72 և 369):*

11.Խոսքը 1848 թ. մասին է:

12.Ազգանունը Շանթի դժվարընթեռնելի ձեռագրի պատճառով գրեթե անհնար է ճիշտ կարդալ: Ստուգվել է հնարավոր բոլոր տարբերակներով, և չի գտնվել որևէ պատմաբան այս ազգանունով, որը գրած լինի Ալ. Մակեդոնացու մասին:

13.Թողնում ենք Շանթի գրած ձևով. խոսքը գերմանացի պատմաբան Յոհան Գուստավ Դրոյզենի (Droysen) մասին է: Նրա «Ալեքսանդր Մեծի պատմությունը» հայտնի աշխատությունը լույս է տեսել 1833 թ.:

14.Հրատարակություն (գերմ.):

7. Ստեփան Լիսիցյանին

Հունիսի 28

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 185:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1996, թ. 6, էջ 141-142:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ստ. Լիսիցյանը Շիրվանզադեի, Մ. Աբեղյանի, Ստ. Մալխասյանցի և բժիշկ Վահան Արծրունու հետ Թիֆլիսի «Դրամատիկական ակումբի» անդամ էր, ինչպես նաև ընտրվել էր Թիֆլիսի քաղաքային դումայի անդամ, պատգամավոր (ռուսերեն гласный *բառը, որն օգտագործվում է այդ պաշտոնի համար (տե՛ս Լ.Մ. Վարդանյան,* Степан Лисициан..., *էջ 61) թերևս հարմար է թարգմանել այս բառով, փոխանակ բառացի ձայնավոր բառի):*

2.Եղիգարյանը, որն ամենայն հավանականությամբ նույնպես ուսուցչական էր, Շանթի մանկննասներից էր: Նրա ազգանունը Շանթի նամակներում հաճախ է հանդիպում:

3.Օննիկ Դերձակյան, Շանթի հայրենակիցն ու ճեմարանական ընկերը:

4.Ստ. Լիսիցյանի որդին՝ Լևոնը, և դուստրը՝ Սրբուհին:

5.Խոսքը ապրիլի 3-ին Դոնի Ռոստովից գրած նամակի մասին է:

6.Այդ բացիկը չի պահպանվել:

7.Ապրիլի վերջերին Մյունխենից գրած (նախորդ) նամակը:

8.Այս բացիկը նույնպես մեզ չի հասել:

9.Մյունխենը Գերմանիայի Բավարիա երկրամասի գլխավոր քաղաքն է:

10.Խոսքը «Վերժինն» վեպի մասին է, որը ի անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում (1897, թթ. 9, 10, 11-12 և 1898, թ. 1), ապա առանձին գրքով արտատպվել «Մուրճից»:

8.Ստեփան Լիսիցյանին

Հուլիսի 28

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 185:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1996, թ. 6, էջ 142-143:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ստ. Լիսիցյանը մտադրություն է ունեցել աշխատություն գրել Ալ. Մակեդոնացու մասին և այդ նպատակով գրքեր է խնդրել Շանթից (տե՛ս թիվ 6 նամակը), բայց Շանթը չի կարողացել ուղարկել, և աշխատությունն էլ չի գրվել: Այս մասին Շանթը հիշատակում է հետագայում գրած նամակներում ևս (թիվ 9, 10 նամակները):

2.Տես թ. 6 նամակի 13 ծանոթագրությունը:

3. Խոսքը Օննիկ Դերձակյանի հեղափոխական գործունեության, մասնավորապես ՀՅԴ «Դրոշակ» թերթի հրատարակման գործին ուղղված ջանքերի մասին է: 1898-ին Դերձակյանը ստանձնել է ՀՅԴ Արևմտյան բյուրոյի գործավարությունը, իսկ 1899-ին խմբագրել է «Դրոշակը»:

4.Տե՛ս նախորդ նամակի 10 ծանոթագրությունը:

5.Այդ գլուխները Շանթը վերամշակել է՝ հաշվի առնելով Ստ. Լիսիցյանի դիտողություններն ու խորհուրդները:

6.Խոսքը «Դարձ» վիպակի մասին է, որը տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1898 թ. 10-11 և 12 համարներում:

9. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 18

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ, 1, թղթ. 185:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1996, թ. 6, էջ 143-146:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի հին հրեական 4 մեծ մարգարեներից մեկի՝ Երեմիայի (մ.թ.ա. VII-VI դդ.) ողբերը Իսրայելի կործանման առիթով:

2.Մարդը դժգոհ կենդանի է (ֆր.):

3.Նկատի ունի հասարակական գիտություններն ընդհանրապես, առանց հումանիտար գիտությունների:

4.Տե՛ս նախորդ նամակի 6 ծանոթագրությունը:

5.Խոսքը Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության մասին է, որը գործել է 1880-1900 և 1910-21 թթ.:

6.Տե՛ս թ. 2 նամակի 6 ծանոթագրությունը:

7.Շանթը նկատի ունի եկեղեցականների նկատմամբ իր հակակրանքը, որը մեկ անգամ չէ, որ բացեիբաց արտահայտվել է նրա նամակներում. «Դարձ» վիպակում և «Հին աստվածներ» դրամայում նույնպես դժվար չէ նկատել այն:

8.Առաջին անգամ լույս է տեսել Կ.Պոլսի «Մասիս» հանդեսում, 1898, թ. 1, 2, 1899, թ. 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11: Տպագրվել է նաև «Մուրճ»-ում, 1899, թ. 10, 11-12 և արտատպվել առանձին գրքով:

9.Տե՛ս թ. 7 նամակի 1 ծանոթագրությունը:

10.Խոսքը լեհ հայտնի գրող Հենրիկ Սենկևիչի «Յո՞ երթաս» նշանավոր վեպի թարգմանության մասին է: Լեհերենից կատարված այս թարգմանությունը առաջին անգամ լույս է տեսել 1898 թ. և հետագայում չնչին փոփոխություններով մի քանի անգամ վերահրատարակվել է:

11.Խաչ. Աբովյանին նվիրված աշխատությունը նույնպես չի գրվել (տե՛ս նախորդ նամակի 1 ծանոթագրությունը):

12.Շանթի հնարավոր ևս մեկ մեկնաս: Ըստ Խ. Վարպետյանի՝ Լիսիցյանների մասնավոր դպրոցի ուսուցիչ Աշոտ Թումանյանն է:

13.Բառացի՝ բավական է իր չար օրը, այսինքն՝ հերիք է թվարկվում դժվարություններս:

14.Խոսքն ամենևաբար իշխանուհի Մարիամ Թումանյանի մասին է, որը եղել է Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի մտերիմ բարեկամներից մեկը և հնարավորինս օգնել ու աջակցել է նրանց, հատկապես Հովհ. Թումանյանին, այդ թվում՝ նաև դրամով:

15.Կատարինե Լիսիցյանի քույրը՝ Լիզան:

1898

10.Ստեփան Լիսիցյանին

Հունվարի 4

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Դժվար է միանշանակ ասել, թե ինչ դիպքի հետ են կապված այդ վիշտն ու սուգը: Ժամանակային առումով Լիսիցյանների ընտանիքի հետ

կապված միակ դժբախտ դեպքը Կատարինե Լիսիցյանի եղբոր՝ զինվորական բժիշկ Գևորգի մահն է 1896 թ. սեպտեմբերին: Ըստ երևույթին, այս դեպքի հետ է կապված Շանթի նշած իրավիճակը (Կ. Լիսիցյան, Նվիրում, էջ 50-51):

2.Նախորդ՝ 1897 թ. նոյեմբերի 18-ի նամակը:

3.Տե՛ս թ. 4 նամակի 3 ծանոթագրությունը:

4.Այդ նամակը չի պահպանվել:

5.Խոսքը դարձյալ Շվեյցարիայում՝ ժնևում զոհվող Օննիկ Դերձակյանին այցելելու մասին է:

6.Տե՛ս նախորդ նամակի 14 ծանոթագրությունը:

7.Այս տողերը ենթադրել են տալիս, որ Շանթը, ըստ երևույթին, դրամական օգնություն է խնդրել նաև Օննիկ Դերձակյանից:

8.Նման այուժեով արձակ ստեղծագործություն Շանթը չի գրել, բայց մտահղացումը որոշակիորեն իրականացվել է նրա «Եսի մարդը» (1901) և «Ճամբուն վրա» (1904) դրամաներում:

9.Վերջնական վերամշակումից հետո Շանթի ասած հեղափոխականի այս տիպը անհետացել է՝ հավանաբար գրաքննությունից ունեցած վախի պատճառով:

11. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 23

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Տե՛ս թ. 6 նամակի 10 ծանոթագրությունը:

2.Նկատի ունի իր ուսանելը Լայպցիգի (1893-1896 թթ.) և Մյունխենի (1897-1899 թթ.) համալսարաններում:

3.Ամբողջ կյանք (գերմ.):

4.Ժամանակակից:

5.Այս երրորդ վեպը («Դարձ» և «Դերասանուհին» վեպերից հետո) ըստ երևույթին ամբողջությամբ չի գրվել այդ և հետագա տարիներին կամ էլ գրվել, բայց չի մշակվել: Հնարավոր է, որ խոսքը «Կինը» վեպի մասին է, որը վերջնականապես ավարտվել է 1908 թ. Լոզանում:

6.Նամակում գրված է կրճատ՝ ածուխյանս ձևով:

12. Ստեփան Լիսիցյանին

Հունիսի 7

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նկատի ունի Համիդյան բռնությունները և հայերի կոտորածները Թուրքիայում, մասնավորապես Կ. Պոլսում:

2.Ակնհայտ է, որ սա 1901-ին վերջնականապես ավարտված «Եսի մարդը» դրամայի այուժեն է: Այս նամակը, այսպիսով, հավաստում է այն իրողությունը, որ «Եսի մարդը» Շանթի առաջին դրաման է:

3.XIX դարի կեսերին եվրոպական բուրժուազիական գեղագիտության մեջ երևան եկած տեսություն, համաձայն որի՝ արվեստն ու գրականությունը կյանքում ոչ մի իրական նպատակ չեն հետապնդում, արվեստի նպատակը հենց ինքը՝ արվեստն է: Ժխտելով արվեստի կապը հասարակական կյանքի հետ և պաշտպանելով նրա «բացարձակ անկախության» ու «անչահախնդրության» սկզբունքը՝ այս տեսության կողմնակիցները պնդում էին, որ արվեստագետը պետք է ոգեշնչվի միայն «գեղեցիկ» իդեալով և ապրի իր հոգու «փղոսկրյա աշտարակում»:

4.Հասարակական, քաղաքական և գրական օրաթերթ, լույս է տեսել Թիֆլիսում 1872-1921 թթ.: Ազատամիտ (լիբերալ) ուղղության ամենանշանավոր օրգանն էր, հատկապես իր հիմնադիր և առաջին խմբագիր Գրիգոր Արծրունու (1845-1892) օրոք: Նրա մահից հետո թերթը կորցրեց նախկին փայլը՝ հաճախ տուրք տալով խմբագին չահերին: Դա է ակնարկում Շանթը այս նախատրտունյամբ:

5.Ձեռագիրը դժվարընթեռնելի է, կարող է կարդացվել նաև փրոզ, այն է՝ Շանթը նկատի ունի բողոքականներին:

6.«Տարազ» գեղարվեստական, գրական, երգիծական պատկերազարդ շաբաթաթերթը լույս է տեսել Թիֆլիսում 1890-1919 թթ., խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարյան:

7.«Մշակը» որոշ ժամանակ լույս չի տեսել 1892 թ.՝ Գր. Արծրունու մահից հետո: 1893-ին թերթը կրկին սկսել է լույս տեսնել նոր խմբագրի՝ Ալեքսանդր Խալանթարի գլխավորությամբ:

8.Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերությունը:
9.Էքսկուրսիա քաղաքից դուրս (գերմ.):
10.Լեռնային հավաքույթ, էքսկուրսիա (գերմ.):
11.Սիրաբանել (գերմ.):

13. Ստեփան Լիսիցյանին

<Սեպտեմբերի 9>

Նամակն անթվակիր է, փակագծերում նշվածը Թիֆլիսում ծրարին խփված ամսաթիվն է (հին տոմարով): Հաշվելով հին և նոր տոմարների տարբերությունը և այն ժամանակը, որի ընթացքում նամակը հասել է հասցեատիրոջը, կարելի է պնդել, որ նամակը գրված է սեպտեմբերի 16-ին կամ 17-ին (նոր տոմարով):

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այս նամակը մեզ չի հասել, քանի որ նախորդ՝ հունիսի 7-ի երկար նամակը գրված է ավելի քան 3 ամիս առաջ, և բացի այդ՝ այնտեղ որևէ հիշատակություն չկա Շանթի՝ Փարիզ մեկնելու դիտավորության մասին:

14. Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 7

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Տե՛ս թ. 8 նամակի 6 ծանոթագրությունը:

2.Ստ. Լիսիցյանը եղել է Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերության՝ տպագրության համար դրքեր ընտրող հանձնաժողովի անդամ:

3.«Մասիս» հանդեսը լույս է տեսել Կ. Պոլսում 1898-1899 թթ.: Նրա խմբագիր էր Շանթի լայպցիգյան շրջանի ուսանողական ընկերը՝ Միքայել Շամտանճյանը:

«Դերասանուհին» տպագրվել է «Մասիսի» 1898 թ. 1, 2 և 1899 թ. 3-11 համարներում:

4.Նկատի ունի Թուրքիան և Կ.Պոլիսը:

5.Նատուրալիզմը (բնապաշտություն) ուղղություն է գրականության և ընդհանրապես արվեստի մեջ, որը երևան է եկել Ֆրանսիայում 19-րդ դ. 60-70-ական թթ. և տարածվել այլ երկրներում: Ձգտել է իրականության օբյեկտիվ, ճշգրիտ և անաչառ վերարտադրման, մեծ ուշադրություն է դարձրել հատկապես մարդկային բնավորության վրա: Ըստ էության նատուրալիզմի առաջին մարդկային բնավորությունն էր՝ պայմանավորված ամենից առաջ նրա ֆիզիոլոգիական բնությամբ և նյութա-կենցաղային միջավայրով: Որպես գրական ուղղություն տեսականորեն վերջնակապես մշակվել է Էմիլ Զոլայի կողմից և կիրառվել նրա գեղարվեստական ստեղծագործության մեջ: 1860-1880-ական թթ. որոշակիորեն գրական դեր է խաղացել՝ նոր թեմաների յուրացում, իրականության նոր շերտերի վերհանում, մարդկային հոգեբանության մեջ ենթագիտակցական շերտի ընդգծում և այլն:

6.Վեդաներ (սանսկրիտ. վեդա նշ. է գիտելիք)՝ հնդկական բանահյուսության հնագույն հուշարձաններ՝ ստեղծված մ.թ.ա. II հազարամյակի վերջերին – I հազ. առաջին կեսին: Ունեն սինկրետիկ (խառը) բնույթ. ծիսային պատվիրանները զուգորդվում են փիլիսոփայական, բարոյագիտական, սոցիալական ուսմունքներին, մոգության տարրերը միահյուսվում են գիտության սաղմերին: Հարուստ տեղեկություններ կան հին հնդիկների պատմության, կենցաղի, սովորույթների և հոգեբանության մասին:

7.Պարսկական զրադաշտական կրոնի սուրբ գիրքը, անունը բառացի նշ. է հիմունքներ: Ստեղծվել է մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսում, և քանի որ Ալ. Մակեդոնացու արշավանքի ժամանակ այս տեքստը (գրված հին պարսկերեն) ոչնչացվել է, Սասանյանների օրոք (III-VII դդ.) ստեղծվել է Ավեստայի պահլավերեն (միջին պարսկերեն) տեքստը, ինչպես նաև նրա մեկնությունը՝ Զենդը, այստեղից էլ սխալ կերպով կոչվել է նաև Զենդ-Ավեստա: Ունի որոշակի գեղարվեստական և գիտական արժեք:

8.Դանիացի հայտնի քննադատ Գեորգ Բրանդեսը:

*9.Հայսմավուրք, ծիսամատյան, որը պարունակում է սրբերի կյանքի (վարքի) և նահատակության (վկայության) պատմությունները, որոնք հավաքվելով գրի են առնվել IV դարում Եվսեբիոս Կեսարացու կողմից: XIII դ. կիրառվող այս անվանումը ծագել է գրաբարյան «յայսմ աւուր»՝ **այս օրը** բառակապակցությունից, ինչով սկսվում էր սրբերի պատմությունը: Հայոց Հայսմավուրքը կազմավորվել է V-XV դդ. ընթացքում:*

10.Այս ազգանունը Շանթի նամակներում հանդիպում է մեկ անգամ, ու քանի որ ղրկած է Եղիազարյանի ազգանվան կողքը, և նրա օգնությունն էլ Թիֆլիսից է հասնելու Ստ. Լիսիցյանի միջոցով, պետք է կարծել, որ Շանթի թիֆլիսաբնակ ևս մեկ բարերար է:

15. Արշակ Չոպանյանին

Դեկտեմբերի 23

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Արշակ Չոպանյանի ֆոնդ, թ. 5508:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1971, թ. 10, էջ 118-119:

Տպագրվում է ինքնագրից:

1.Գրական, գեղարվեստական, քաղաքական և գիտական ամսագիր, լույս է տեսել Փարիզում 1898-1949 թթ. (ընդհատումներով՝ 1911-28 և 1941-45 թթ.): Ունեցել է հայրենասիրական-առաջադիմական ուղղություն: Ամսագրին աշխատակցել են Ավ. Իսահակյանը, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Գ. Զոհրապը, Շիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Ռ. Զարդարյանը, Կոմիտասը և այլք:

2.Իմպրեսիոնիզմ (ֆրանս. տպավորություն բառից), ուղղություն արվեստում XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Ծագել է ֆրանսիական գեղանկարչության մեջ 1860-ական թթ. վերջերին: Այս ուղղության ամենացայտուն կողմը հարաչարժ իրականության, տպավորությունների, տպրոմների կապակցված պահերի անմիջական արտացոլումն է՝ բացասելով ակադեմիզմը, սալոնային արվեստը և էպիգոնիզմը: Գրականության մեջ նույնպես իմպրեսիոնիստները ձգտել են իրենց անձնական տպավորությունների, տպրոմների և զգացումների անմիջական արտահայտմանը: Հայ գրականության մեջ ամենահայտնի իմպրեսիոնիստը Ինտրան է (Տիրան Զրաքյան)՝ և՛ իր տեսական հայացքներով, և՛ ստեղծագործությամբ:

3.Անկումային արվեստ, դեկադանս, դեկադենտություն (լատ. անկում բառից), XIX դ. վերջին տարածված անկումային հոսանքների ընդհանուր անվանումը: Պաշտպանելով «արվեստը արվեստի համար» տեսությունը (տե՛ս թ. 12 նամակի 3 ծանոթագրությունը)՝ անկումային արվեստի ներկայացուցիչները գաղափարայնությանը, ժողովրդայնությանը և ռեալիզմին հակադրում էին բուրժուական անհատապաշտությունը, սուբյեկտիվիստական կամայականությունը և միստիկան:

4.Նկատի ունի Հավանայի հայտնի սիգարները:
5.Տե՛ս թ. 14 նամակի 3 ծանոթագրությունը:

1899

16. Ստեփան Լիսիցյանին

Հունվարի 1

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը «Դերասանուհին» վեպի մասին է:

17. Ստեփան Լիսիցյանին

Հունվարի 5

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187: Գրված է բացիկի վրա:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը դարձյալ «Դերասանուհին» վեպի մասին է, որն ուշարկվել է Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությանը:

18. Ստեփան Լիսիցյանին

Փետրվարի 11

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այդ նամակը ըստ երևույթին չի պահպանվել:

2.Սարսափելի (գերմ.):

3.Խոսքն ակնհայտորեն «Եսի մարդը» պրոմայի մասին է:

19. Ավետիք Իսահակյանին

<Մինչև մարտի 25>

Լևոն Շանթի և Ավետիք Իսահակյանի ծանոթությունը ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 1889 թ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այդ տարի պատանի Ավետիքը ընդունվել է ճեմարանի երրորդ դասարան, իսկ Լևոն Սեղբոսյանը սովորում էր երկրորդ լսարանում: Հավաստի աղբյուրների բացակայությունը մեզ այսօր հնարավորություն չի տալիս վստահորեն ասել, թե կոնկրետ երբ են նրանք ծանոթացել և ինչքան մտերիմ են եղել ճեմարանում միասին անցկացրած մոտ մեկուկես տարիների ընթացքում, բայց պետք է նշել, որ երկուսն էլ եղել են 1891-ին հունվարին ճեմարանում սկսված ուսանողական խռովությունների մասնակից և այդ պատճառով հեռացվել են ճեմարանից:

Շանթի և Իսահակյանի երկրորդ հանդիպումը տեղի է ունեցել 1893-ին Լայպցիգում, ուր երկուսն էլ սովորում էին այդ քաղաքի հայանի համալսարանում: «Այստեղ է Լևոն Սեղբոսյանը»,- գրել է Ավ. Իսահակյանը իրենց ուսուցչին՝ Ստ. Լիսիցյանին 1893-ի նոյեմբերի 20-ին (տե՛ս թիվ 2 նամակի 1 ծանոթագրությունը): Թե ինչքան մտերիմ են եղել երկու նախկին ճեմարանցիները Լայպցիգում, դժվար է ասել. դարձյալ տեղեկություններ չունենք այդ մասին: Բայց որ մտերիմ են եղել, ոչ մի կասկած, որովհետև մի քանի տարի անց՝ 1899-ի գարնանը, Շանթը Իսահակյանին, որպես պատասխան նրա գրած նամակին, Մյունխենից գրել է մի երկար նամակ, որի վերջը թեև չի պահպանվել, բայց և այնպես այն հստակ պատկերացում է տալիս նրանց հարաբերությունների և հոգեկան մտերմության մասին: Ցավոք, այս նամակն առայժմ միակն է, որ պահպանվել է նրանց նամակագրությունից. ապագայում գուցե հայտնաբերվեն նորերը:

Նույն 1899-ին Շանթն ու Իսահակյանը Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ն. Աղբալյանի և Դ. Դեմիրճյանի հետ դարձել են «Վերնատան» անդամ և միասին վայելել հոգեկան մտերմության բազմաթիվ դեղեցիկ ժամեր: Այս մտերմությունը չարունակվել է երկար տարիներ, և ուր էլ որ նրանք գտնվել են, հետաքրքրվել են իրարով ու հեռվից հետու ողջունել իրար: Դժբախտաբար, նրանց ճանապարհները հաճախ են բաժանվել (Իսահակյան-Շանթ մտերմության մասին ավելի մանրամասն տե՛ս **Ավետիք Իսահակյան, Գիտական ընթերցումներ 2011**, Երևան, 2012, էջ 133-142, Ա. Մանուկյան, **Ավետիք Իսահակյան և Լևոն Շանթ**):

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Գարեգին Լևոնյանի ֆոնդ, թիվ 2871:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1971, թ. 10, էջ 117-118) Գ. Աղնավուրյանի կողմից: Ցավոք, Շանթի ձեռագրի դժվարընթեռնելի, երբեմն էլ պարզապես անընթեռնելի լինելու պատճառով հրատարակված տեքստում տեղ են գտել տարընթերցումներ, ինչպես նաև ճիշտ չեն որոշված նամակի գրության թվականը և վայրը:

Տպագրվում է ինքնագրից:

*1.Նամակի նախորդ հրատարակության մեջ որպես գրության թվական նշված է 1896-ը, գրության վայր՝ Լայպցիգը: Երկուսն էլ ճիշտ չեն: Ճիշտ է 1899-ը՝ որպես գրության թվական (Ավիկ Իսահակյան, **Ավետիք Իսահակյան: Գիտական կենսագրություն**, Երևան, 2000, էջ 491: **Ավ. Իսահակյան, Գիտական ընթերցումներ**, 2011, էջ 134): Սույն նամակում և այլ նամակներում տվյալ իրողություններից պարզ է դառնում, որ այս նամակը գրվել է 1899 թ. փետրվար-մարտին Մյունխենում: Մասնավորապես պետք է հիշել այս նամակում Շանթի գրածը. «Այս տարիս Վիսոն մեջ, որ ես հոս եմ...»: «Հոս եմ» ասելով՝ Շանթը նկատի ունի Մյունխենը և ոչ թե Լայպցիգը, ուր նա եղել է 1893-ի աշնանից, հետևաբար «տարիս Վիսոն» հետոն կլինի 1895-ի գարունը, երբ Իսահակյանը դեռ Գերմանիայում էր: Մյուս կողմից՝ թիվ 6 նամակից, որի գրության ժամանակը որոշվել է այդ և նույն թվականին գրված նախորդ և հաջորդ նամակներում նշված իրողությունների համադրումով և կասկած չի հարուցում, պարզ է դառնում, որ Շանթը Մյունխենում եղել է ամենաուշը 1897 թ. ապրիլի երկրորդ կեսին: Այսպես հաշվելով՝ կատացվի, որ նամակը գրվել է 1898 թ. հոկտեմբերին, բայց դա էլ հնարավոր չէ, քանի որ այդ ժամանակ Իսահակյանը գտնվում էր Օլեսայում, մինչդեռ այս նամակի բովանդակությունից պարզ է, որ Իսահակյանը գտնվում է Հայրենիքում (տե՛ս նամակի սկիզբը): Իսկ աքսորից Իսահակյանը վերադարձել է 1899 թ. հունվարի կեսերին (Ավ. Իսահակյան, **Ավետիք Իսահակյան, Գիտական կենսագրություն**, էջ 477): Միաժամանակ Շանթի վերջին նամակը (Ստ. Լիսիցյանին, թ. 20) Մյունխենից գրված է մարտի 25-ին: Համադրելով բոլոր փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ Շանթի նամակը Ավ. Իսահակյանին գրվել է 1899 թ. փետրվարին կամ մարտին՝ մինչև մարտի 25-ը: Շանթը «տարիս Վիսոն» ասելով, ըստ երևույթին, նկատի է ունեցել իր՝ անմիջականորեն հենց Մյունխենում եղած ժամանակը մոտավորապես:*

*2.«Մինչ այժմ հրատարակվել է Ավ. Իսահակյանի գրած նամակների մի փոքր մասը միայն» (Ավ. Իսահակյան, **Եժ 6 Հատորով**, հ. 6, Երևան, 1979, էջ 396): Շանթին ուղղված նամակ դրանց մեջ չկա: Գուցե Իսա-*

Հակյանի երկերի նոր՝ ակադեմիական հրատարակության մեջ տեղ գտնեն այստեղ հիշատակված կամ որևէ այլ նամակ:

*3.Գերմանիայում ուսանելու տարիներին Իսահակյանը տարվել է գերմանական փիլիսոփայությամբ, մասնավորապես Նիցշեի և Շոպենհաուերի գրվածքներով: Հետագայում էլ նա, հակառակ իր գրածին, թե փիլիսոփաներից ձեռք է քաշել, չարունակել է ուսումնասիրել գերմանական փիլիսոփայությունը և համարել գերմանացի փիլիսոփաներին ոգևորության աղբյուր (տե՛ս, օրինակ, **Ավ. Իսահակյանի նամակները Վ. Նավասարդյանին, Ռ. Դարբինյանին, Ե. Խաթիանասյանին, Վ. Ահարոնյանին**, Կահիրե, 1959, էջ 44): Իսահակյանը եղել է «Վերնատան» Նիցշեն (Ս. Հովհաննիսյան, **Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը**, Երևան, 2007, էջ 41 և այլն):*

4.Տեքստը դժվարընթեռնելի է, կարող է լինել նաև՝ այնքան են:

5.Նախորդ հրատարակության մեջ՝ Frandes, որը տարընթերցում է, նման հեղինակ չկա: Խոսքը դանիացի հայտնի գրականագետ, քննադատ և հրապարակախոս Գեորգ Բրանդեսի մասին է, որը բազմաթիվ բարձրարժեք աշխատությունների հեղինակ է, ինչպես, օրինակ, «XIX դ. եվրոպական գրականության գլխավոր հոսանքները» (հհ. 1-6, 1872-90), «Վիլյամ Շեքսպիր» (հհ. 1-3, 1895-96), «Վոլֆգանգ Գյոթե» (հհ. 1-2, 1914-15) և այլն:

6.Նախորդ հրատարակության մեջ՝ տարվա կիսուն մեջ, որը ակնհայտ տարընթերցում է:

7. Բանաստեղծներ (գերմ.):

8.Գերմանացի գրող Գերհարդ Հաուպտմանի «Ջրասույզ զանգը» հեքիաթ-դրաման հրատարակվել է 1896 թ.: 1902-ին թարգմանվել է հայերեն և ներկայացվել արևելահայ բեմում, 1922-ից բազմիցս խաղացվել է Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի բեմում:

9.Ժողովրդի մեծամասնության կողմից (գերմ.):

10.Խոսքը գերմանացի գրող, գերմանական նատուրալիզմի ականավոր ներկայացուցիչ Հերման Զուդերմանի «Հովհաննես Մկրտիչ» ողբերգության մասին է (հրատ. է 1898-ին):

11.Նկատի ունի ֆրանսիացի դրամատուրգ Վիկտորիեն Սարդուին: Նրա ոչ խոր, բայց էֆեկտիվ իրավիճակներով և սրամիտ երկխոսություններով հարուստ պիեսները մեծ հաջողություն են ունեցել քաղքենիների շրջանում:

12.Թերևս նկատի ունի իր «Երազ օրեր» և «Դուրսեցիները» վիպակները:

20. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 25

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Poste restante՝ ցպահանջ, փոստի ցպահանջ նամակների բաժինը (ֆր.), իսկ այդ բառերից առաջ գրված տեղանունը դժվարընթեռնելի է, կարող է լինել Փարիզի էառւալ հրապարակը:

2.Սիրելի (գերմ.):

3.Նկատի ունի Ստ. Լիսիցյանի «Պուշկին: Նրա կյանքն ու գործունեությունը» աշխատությունը (Թիֆլիս, 1899):

4.Ստ. Լիսիցյանը «Ազգագրական հանդեսում» հրապարակել է 2 գրախոսություն՝ առաջինը Մ. Տեր-Մովսիսյանի «Նկարագրութիւն հոգեւոր վարուց Յովասափու...» աշխատության մասին (1898, գիրք Գ, թ. 1, էջ 393-97), երկրորդը՝ Կարապետ Եղյանի (Эзов) «Պետրոս Մնձի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» գրքի (1898, գիրք Դ, թ. 2, էջ 293-313): Շանթը հավանաբար նկատի ունի այս երկրորդը:

«Ազգական հանդեսը» լույս է տեսել 1896-1919 թթ. Թիֆլիսում (գիրք 1) և Շուշիում (գիրք 2-26), խմբագիր՝ ազգագրագետ, բանահավաք և բանագետ Երվանդ Լալայան (1864-1931):

5.Ուրիշ, բացի գրանից (գերմ.):

21. Ստեփան Լիսիցյանին

Ապրիլի 16

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.«Հրեային» բառը Շանթը գրել է մեծատառով՝ հնարավոր է ակնարկելով ֆրանսիացի վիպասան Էժեն Սյուի (1804-1857) «Թափառական հրեան» վեպի գլխավոր հերոսին՝ Ագասֆերին: Վեպի լույս տեսնելուց հետո (1844-1845) «Թափառական հրեա» արտահայտությունը դարձել է համընդհանուր գործածության պատկերավոր խոսք՝ ընութագրելու անտուն, անհանգրվան, անհայրենիք մարդուն:

2.Այսինքն՝ Դրեյֆուսի պաշտպանությանը նվիրված ժողովի: Ֆրանսիացի զինվորական, ազգությամբ հրեա Ալֆրեդ Դրեյֆուսը մե-

ղաղրվում էր դավաճանության մեջ: Նրա դատը մեծ աղմուկ բարձրացրեց Ցրանսիայում և այլուր, հանիրավի դատապարտված Դրեյֆուսին պաշտպանեցին շատերը, այդ թվում՝ Էմիլ Զոլան և Գ. Զոհրապը: Դրեյֆուսի պաշտպանությունն այնպիսի մեծ թափ ստացավ, որ 1899-ին դատարանը նրան անմեղ ճանաչեց, և նա ազատ արձակվեց:

3.Շանթի և Լիսիցյանի թիֆլիսաբնակ ընդհանուր ծանոթներից:

22.Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 29

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Կամ Զարաբյանին, նույն Զոհրաբյանն է՝ Վարշավայում ապրող բարերարը:

23. Ստեփան Լիսիցյանին

<Հունիսի սկիզբ>

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Գրության ժամանակը որոշվել է ըստ Թիֆլիսում խփված փոստային կնիքի ամսաթվի՝ մայիսի 24: Սրան գումարում ենք 13 օր (նոր տոմարով) և հանում մի քանի օր «ճանապարհածախսը»:

2.Կենացդ (գերմ.): Բացիկի վրա պատկերված են լոանի նեղ մահիկի վրա նստած 3 աղջիկներ՝ լիքը բաժակները վեր պարզած:

3.Բացիկի վրա կա նաև Օննիկ Դերձակյանի գրությունը Ստ. Լիսիցյանին. «Եթե հրաչքներու դարն ըլլար, ես ալ մահիկին վրա կուզայի քեզի: Բայց... բայց ձգենք բայցը: Also տիկնոջդ և քուվինդ: Օննիկ»:

Also նչ. է նույնպես (անգլ.):

24. Ստեփան Լիսիցյանին

<Հուլիսի սկիզբ>

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 186:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Թիֆլիսում ստացվել է Հունիսի 29-ին (Հին տոմարով):

2.Բացիկի վրա պատկերված են 2 նավակ՝ մեծ ու փոքր, ժնևի լճի վրա:

3.Բացիկի վրայի նկարի 2 կողմերում և վերևում Օննիկ Դերձակյանը ավելացրել է. «Դաղարի մը պահուն Լևոնն իր մակույկով մոտեցավ նավիս... կամաց կ'օրորվինք միասին խաղաղիկ ծփանքներուն վրա: Գիտեմ, որ երկար չպիտի տևե այս կացութիւնը. պիտի հեռանա մակույկը... պիտի բարձրանա քամին, ալիքները պիտի ուժին՝ առագաստը լեցուն պիտի սուրա նավը. պիտի հանդպին օր մը նորեն նամն ու մակույկը... Է՛հ: Համբույրներ քեզի ու սրտապին բարևներ տիկնոջ և մայրիկին և... Օննիկ»:

25. Ստեփան Լիսիցյանին

Հուլիսի 29

Նամակի ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 187:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը դարձյալ «Եսի մարդը» դրամայի մասին է (տե՛ս թ. 12 նամակի 2 ծանոթագրությունը):

1901

26. Հովհաննես Թումանյանին

Հունիսի 12

Լևոն Շանթի և Հովհ. Թումանյանի մտերմությունը, որ տևել է մոտ երկու տասնամյակ, սկսվել է 1899-ին՝ Շանթի՝ Մյունխենից Թիֆլիս գալուց հետո: Իսկ մինչ այդ նրանք ամենայն հավանականությամբ արդեն ծանոթ են եղել: Շանթի վկայությամբ՝ «Հովհաննես Թումանյանի հետ իմ ծանոթությունը սկսված էր 1896-97 թվականներուն («Հայրենիք», Բոստոն, 1960, թ. 4, էջ 24, «Լևոն Շանթը իր մասին»): Նրանց մտերմությունը, սակայն, սկիզբ է առել «Վերնատան» հիմնադրումից հետո՝ 1899-1900 թթ., երբ գրական ջերմ երեկոները մոտեցրել են գրական այդ խմբակի անդամներին և նրանց դարձրել իրոք որ սրտակից բարեկամներ: Մինչև կյանքի վերջն էլ Շանթը սիրով և կարոտով է հիշել «Վերնատունը»՝

Թումանյանի հարկի տակ անցկացրած «այդ տաք իրիկունները», որոնք հաճախ վերածվել են խնջույքի և տևել մինչև լուսաբաց: Բնավորությամբ, խառնվածքով Շանթն ու Թումանյանը տարբեր մարդիկ էին, եթե չասենք հակոտնյաներ, սակայն գրականության և ընդհանրապես արվեստի նկատմամբ սերը և իսկական տաղանդը գնահատելու կարողությունը մտերմացրել է նրանց այն աստիճան, որ Թումանյանը դարձել է Շանթի համար ամենաթանկ, ամենագնահատելի և ամենահարազատ մարդը հայ գրողների մեջ, իսկ Շանթը՝ Թումանյանի «ազնիվ ընկերը» (Թումանյան, ԵԼԺ, հ. 9, էջ 336, կնոջը՝ Օլգա Թումանյանին 1902-ի հոկտեմբերի 13/14-ին գրած նամակից): Իսկ դրանից 2-3 օր առաջ դարձյալ կնոջն ուղղված նամակում նրա և ժամանակավորապես իր տանը, ավելի ճիշտ՝ «Վերնատունը» բնակվող (տե՛ս ներկա հատորի թ. 61 նամակը) Շանթի մասին Թումանյանը գրել է. «Համենայն դեպս, եթե երկուադ էլ գոհ լինեք, ես ձեզանից ավելի ուրախ կլինեմ: Եթե դու կարողանաս հարմարեցնել՝ ճաշ է, ընթրիք և այլն, և այլն, որ առանձին դժվարություն չունենաս՝ ինչ կա որ, գրեթե եղբայրս է և այդքան ազնիվ ու կրթված մի մարդ, ուրիշ ոչ մի ծանրություն չի կարող լինել» (հ. 9, էջ 332-333): Յավոք սրտի, Թումանյանի՝ Շանթին գրած նամակները չեն պահպանվել, բայց Շանթի՝ Թումանյանին գրած նամակներն ու բացիկներն էլ պերճախոս կերպով վկայում են, թե ինչ խորության է հասել նրանց մտերմությունը 1900-ական թթ.: Ամփոփենք այս ամենը քիչ հայտնի մեկ փաստով, որը ևս շատ խոսուն է. Թումանյանը 1906-ին դարձել է Շանթի երկրորդ որդու՝ նորածին Վիգենի կնքահայրը (համեմատության համար նշենք, որ Շանթի անդրանիկ որդու՝ Սուրենի կնքահայրը եղել է Արմեն Գարոն, իսկ երրորդ որդունը՝ Արմիկինը՝ Օննիկ Դերձակյանը): Տարիների ընթացքում Թումանյանի և Շանթի բարեկամությունը շարունակվել է, թեև, ինչ խոսք, տարբեր պատճառներով 1910-ական թթ. նրանց հանդիպումներն ու նամակները ավելի ու ավելի հազվադեպ են դարձել: Ըստ Թումանյանի՝ նրանց վերջին հանդիպումը տեղի է ունեցել Երևանում 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից (ապրիլի 2) հետո, երբ Շանթը, Աղբալյանը և շատ այլ հայանի գործիչներ պատրաստվում էին փախչել Զանգեզուր, այնտեղից էլ արտասահման՝ փրկվելու բոլշևիկյան արյունոտ հաշվեհարդարից (ԵԼԺ, հ. 10, էջ 384): Թումանյանի և Շանթի մտերմության մասին ավելի մանրամասն տե՛ս Լևոն Շանթ 140 (գիտաժողովի նյութեր) գրքում, Երևան, 2008, էջ 78-114, Ս. Հովհաննիսյան, «Դրվագներ Հովհաննես Թումանյանի և Լևոն Շանթի մտերմությունից»:

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆոնդ, թ. 1843 (65):

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1971, թ. 10, էջ 120-121, ապա «Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ» ժողում (ՈՒՀ), հ. 4, Երևան, 1985, էջ 338-340:

Տպագրվում է ինքնագրից:

1.Շանթը Կովկաս վերադարձել է 1899 թ. օգոստոսի վերջերին և զբաղվել է ուսուցչությամբ, մասնավոր դասեր է տվել Թիֆլիսի հարուստ ընտանիքներում:

2.Քաղաք Ռումինիայում, Դանուբ գետի վրա:

3.Նամակի առաջին հրատարակության մեջ՝ բանալներ, որը էջի ներքևում բացատրված է հասարակ բառով: Երկրորդ հրատարակության մեջ ճիշտ է վերծանված, բայց պետք է նշել, որ Շանթի՝ Թումանյանին գրած նամակների և բացիկների երկու հրատարակություններում էլ կան բավականին տարընթերցումներ, որոնք ճշտված են:

4.Այս նկարագրությունը հիշեցնում է «Հին աստվածներ» ժողովի I արարում նկարագրված վոլթորկի տեսարանը (II տեսարան, 1-2, 5), երբ Աբեղան գրված կղզի է հանում Սեղայինն:

5.Շանթի՝ Թիֆլիսից մեկնելու օրերին Թումանյանը մտածում էր որևէ ամսագրում հանդես գալու մասին և հունիսի 21-ին ժամանել է Ուրավել առողջարան, ուր մնացել է մինչև օգոստոսի 7-ը (Հովհ. Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869-1908), Երևան, 2010, էջ 372, 385 (այսուհետ Տ և էջը):

6.Իշխանուհի Մարիամ Թումանյանը, որը եղել է Հովհ. Թումանյանի և Շանթի մտերիմ բարեկամներից մեկը:

7.Ֆելիքս (Փելիքսոս) Վարդազարյանը Հովհ. Թումանյանի ամենամտերիմ մարդկանցից մեկն էր, ընկերը և հովանավորը: Մտերիմ է եղել նաև Շանթի հետ:

8.«Վերնատուն» գրական խմբակին իր անունն առացել է այն պատճառով, որ Թումանյանի բնակարանը, ուր տեղի էին ունենում գրական երեկոները, գտնվում էր Թիֆլիսի Բեհբության փողոցի թ. 50 տան 5-րդ հարկում (Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 14): Այս բնակարանը Թումանյանները վարձել են 1899 թ. աշնանը և վերանորոգումից հետո այնտեղ են տեղափոխվել 1900 թ. փետրվարին (տե՛ս Տ, էջ 342, 347): «Վերնատան» հիմնադիր անդամներն էին Հովհ. Թումանյանը, Ղ. Ալայանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը և Շանթը, երբեմն այս շարքում հիշվում է նաև Ն. Աղբալյանի անունը: «Վերնատան» հավաքներին, որ տեղի էին ունենում շաբաթը երկու անգամ, հաճախ մասնակցում էին գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, այլ մտավորականներ՝ Պ.

*Պռոշյան, Մուրացան, Վրթ. Փափազյան, Կոմիտաս, Գ. Բաշինջաղյան, Փ. Թերլեմեզյան և ուրիշներ: «Վերնատան» հավաքները կանոնավոր կերպով շարունակվել են մինչև 1906 թ., և հետո էլ, երբ նրա անդամներից մի քանիսը գոնվել են Թիֆլիսում, դարձյալ հավաքվել են Թումանյանի հյուրընկալ հարկի տակ: «Վերնատունը» հսկայական նշանակություն է ունեցել հայ գրական-հասարակական կյանքում, ինչպես նաև հենց իրենց՝ նրա անդամների և հյուրերի համար: Նրանք բոլորն էլ, հատկապես վերնականները, կարևորել են իրենց հանդիպումները, որոնք գրեթե միշտ, նույնիսկ թեժ քննարկումներից և վեճերից հետո ավարտվել են խնջույքով, և նույնիսկ տարիներ անց կարոտով են հիշել իրենց միասին անցկացրած երեկոները: Շանթը, օրինակ, տարիներ անց իր հուշերում ասում է. «Մինչև հիմա սիրով ու կարոտով կը հիշեմ իմ գրական ընկերներուս հետ անցուցած այդ տաք իրիկունները» («**Հայրենիք**» ամս., 1960, թ. 4, էջ 25, **Լևոն Շանթը իր մասին**): «Վերնատան» մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Ս. Հովհաննիսյանի «**Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը**» գրքում, էջ 34-53:*

27. Հովհաննես Թումանյանին

<Հուլիսի 16>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆոնդ, թ. 1844 (89):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 340-41, որտեղից էլ արտատպվել է Տ, էջ 375-76:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բացիկի վրա Թիֆլիսում խփված ամսաթիվն է՝ հին տոմարով: Նորով կլինի հուլիսի 23-26-ը:

2.Բացիկի վրա պատկերված է կլոր լուսինը՝ մարդկային կերպարանքով, որը նայում է ներքևում՝ տան տանիքին նստած երկար պոչով սև կատվին:

3.Ինքը՝ Լևոն Շանթն է:

4.Խոսքը Ուրավելում հանգստացող Հովհ. Թումանյանի մասին է:

5.Դերենիկ Դեմիրճյանն է:

6.Դեմ առ դեմ (ֆրանս.):

28. Հովհաննես Թումանյանին

<Սեպտեմբերի 7>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1845 (66):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 341:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բացիկի վրա պատկերված է մի գեղեցիկ արաբուհի:

29. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 21

Նամակի ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 189:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Անովերպեն, նույն Անվերս քաղաքն է:

2.Պանսիոնը նույն հյուրանոցն է, այն տարբերությամբ միայն, որ նրա կենվորները սնվում են միասին, ընդհանուր սեղանի շուրջ, ինչն ավելի քիչ ծախս է պահանջում:

3.Բելգիան կազմված է 2 մասից՝ Ֆլանդրիա՝ հյուսիսում, ուր խոսում են ֆլամաներեն, և Վալոնիա՝ հարավում, Ֆրանսիային կից, ուր խոսում են ֆրանսերեն: Լիեժը խոշոր քաղաք է Բելգիայում:

4.Խոսքը «Ուրիշի համար» դրամայի մասին է (տե՛ս թ. 31 նամակը):

5.Խոսքը Կատարինե և Ստեփան Լիսիցյանների՝ 1898-ին բացած հայկական տարրական դպրոցի մասին է:

30. Հովհաննես Թումանյանին

<Հոկտեմբերի 21>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆոնդ, թ. 1846 (67):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 341, որտեղից էլ արտատպվել է Տ, էջ 399:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի սեպտեմբերի 20-ին Թումանյանի գրած նամակը (չի պահպանվել):

2.Բացիկի վրա պատկերված է մի աղջիկ՝ վարդը ձեռքին:

31. Հովհաննես Թումանյանին

Նոյեմբերի 1

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆոնդ, թ. 1847:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1971, թ. 10, էջ 122-25: Երկրորդ անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 342-47, որտեղից էլ արտատպվել է Լևոն Հախվերդյանի կազմած «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, Երևան, 1999, էջ 19-24:

1.Այսինքն՝ սկզբից:

2.Ակնարկում է Թումանյանի բազմազավակ հայր լինելը:

3.Կատակը վերաբերում է հին հրեական օրենսգիր մարգարե Մովսեսին:

4.1900 թ. օգոստոսին Շանթն ու Դ. Դեմիրճյանը Թումանյանի հետ ճանապարհորդել են Լոռիում և հյուրընկալվել բանաստեղծի հայրական տանը:

5.Հույն զորավար և պատմաբան Քսենոֆոնը իր գրքում այսպես է նկարագրում Հայաստանում իրենց ապաստանած գյուղերից մեկը. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ավելի ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եղներ, հավեր և սրանց ձագերը» (Անաբասիս, գիրք IV, մ. IV, 23, Երևան, 1970, էջ 97):

6.Նկատի ունի հույն ողբերգակ Էսքիլոսի «Պրոմեթևսը չղթայված» ողբերգությունը:

7.Խոսքը իշխանուհի Մարիամ Թումանյանի և Ցիլիպ Վարդապարյանի մասին է, որոնց Շանթը, ինչպես երևում է, խոստացել էր գրել և գրական երեկոներին քննարկման ներկայացնել դրամաներ:

8.Այս դրաման Շանթը վերջնականապես ավարտել է 1903 թ.: Առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում (1905, թ. 11, 12 և 1906, 1), 1914-ին լույս է տեսել առանձին գրքույկով:

9.«Նոր դար» ազգային, գրական, քաղաքական օրաթերթը (սկզբում երկօրյա) լույս է տեսել Թիֆլիսում 1883-1916 թթ., խմբագիրը Սպանդար Սպանդարյան: Լրագիրն ազգային-պահպանողական հոսանքի դաղափարակիրն էր և անհաշտ պայքար է մղել «Մշակի» դեմ:

10.«Աղբյուր» պատկերազարդ մանկական ամսագիրը լույս է տեսել Թիֆլիսում 1883-1918 թթ., խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարյան:

11.Ակնարկում է Ավետիք Իսահակյանի սերը Շուշանիկ Մատակյանի նկատմամբ և նրա ծանր հոգեկան վիճակը աղջկա Հովհաննես Միրզոյանի հետ ամուսնանալուց հետո:

12.Խոսքը Դ. Դեմիրճյանի մասին է:

32. Հովհաննես Թումանյանին

<Նոյեմբերի 11>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1848 (69):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 347:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բացիկի վրա պատկերված է բաժակը ձեռքին աղջիկ:

2.Խոսքը «Ճամբուն վրա» դրամայի մասին է և ոչ թե «Եսի մարդը» դրամայի, ինչպես գրված է ՈՒՀ, հ. 4, էջ 386, նույնը՝ Տ, էջ 400 (տե՛ս թ. 36 նամակի 9 ծանոթագրությունը):

33. Հովհաննես Թումանյանին

<Նոյեմբերի 12>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1849 (70):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 347:

Տպագրվում է ինքնագրից:

34. Հովհաննես Թումանյանին

<Դեկտեմբերի 12>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1850 (71):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 347-348:

1.Բացիկի վրա պատկերված է ծովի ափին լուսանկարող մի չուն: Ակնարկում է այն, որ Թումանյանն ուներ լուսանկարչական սարք և սիրում էր լուսանկարել իր հյուրերին:

2.«Առվակ» գրական ժողովածուն, որը Շանթին էր ուղարկել Թումանյանը, լույս է տեսել Թիֆլիսում 1901 թ. Վրթ. Փափազյանի խմբագրությամբ:

35. Հովհաննես Թումանյանին

<Դեկտեմբերի 27>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1851 (74):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 348, որտեղից էլ՝ Տ, էջ 404:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բացիկի վրա պատկերված են երեք մոտաններ:

36. Հովհաննես Թումանյանին

Դեկտեմբերի 30

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1852 (72):

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1971, թ. 10, էջ 125-126: Երկրորդ անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 348-350, որտեղից էլ արտատպվել է Լ. Հախվերդյանի «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 24-26:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ինչպես երևում է, դրամական փոխանցումները բարերարի կողմից Շանթին կատարվել են Թումանյանի միջոցով:

2.Խոսքը Պ. Պռոշյանի «Հինգերորդ գինապիժը» ազգագրական պատկերի մասին է («Վտակ», էջ 122-144):

3.Փիլիսոփայության հիմնական ուղղություններից մեկը (մատերիալիզմի հետ միասին), որը փիլիսոփայության հիմնական հարցը լուծելիս, ի հակադրություն մատերիալիզմի, առաջնային է համարում հոգեկանը՝ մտածողությունը, գիտակցությունը, գաղափարը՝ նրանից ածանցելով բնությունը և մարդու նյութական կեցությունը:

4.Նատուրալիզմի մասին տե՛ս թ. 14 նամակի 5 ծանոթագրությունը: Այստեղ նատուրալիզմ ասելով Շանթը նկատի ունի նյութականը, այսինքն՝ ուզում է ասել, որ զգացմունքներն ու գաղափարները տեղի են տալիս նյութականի առաջ:

5.Խոսքը Ավ. Իսահակյանի «Սիրտ երգը» արձակ ստեղծագործության մասին է (էջ 10-19): Իսահակյանից տպագրվել է նաև «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ...» բանաստեղծությունը (էջ 33):

6. Խոսքը Վրթ. Փափազյանի «Ընթոստի երգեր» սիմվոլիկ ըրույցի մասին է (էջ 218-226): Ժողովածուում տպագրվել է նաև մի հատված Փափազյանի «Ավետյաց երկրում» անավարտ վեպից (էջ 23-32):

7.Խոսքը 1902-ին կազմավորված Թիֆլիսի դրամատիկական ընկերության մասին է:

8.«Ուրիշի համար» դրաման:

9.Ինչպես երևում է այս վերնագրին հաջորդող բացատրությունից, այստեղ (ինչպես և թ. 32 նամակում) Շանթը նկատի ունի իր «Ճամբուն վրա» դրաման և ոչ թե «Եսի մարդը» (ՈՒՀ, հ. 4, էջ 386) կամ «Ուրիշի համար»-ը («Սով. գրականություն», 1971, թ. 10, էջ 126):

10.Վերնատան այս նոր անդամը չի կարող Նիկոլ Աղբալյանը լինել (Տ, էջ 405), քանի որ 1901-ին Շանթը բավականաչափ ճանաչում էր Աղբալյանին, որը դրեթե «Վերնատան» հիմնադիր անդամ էր, երկրորդ՝ նոր անդամացուի բնութագիրը չի համապատասխանում Աղբալյանին, որը բանաստեղծ չէ (Պառնասի փեչերն ի վեր կմագլցի նախադասությունն այդ է նշանակում), և ի վերջո՝ մի քանի տող հետո Շանթը «սրտագին» բարևում է Նիկոլին ու Ավետիքին: Ուրեմն խոսքը ուրիշ մարդու մասին է, որի ով լինելը պարզել չհաջողվեց:

11.Խոսքը հույն փիլիսոփա Դիոգենես Սինոպացու կամ Կինիկի՝ չնական փիլիսոփայության (Կինիկյան դպրոց) հիմնադրի (մ.թ.ա. մոտ 404-323) մասին է, որը, ըստ ավանդության, լապտերը ձեռքին ցրկում էր Աթենքի փողոցներով և «մարդ էր փնտրում»:

12.Դ.Դեմիրճյանը 1901 թ. աշնանը մեկնել է Մոսկվա՝ ցուբաևի դասեր առնելու, բայց ցղերի հիվանդության, ինչպես նաև նյութական միջոցների բացակայության պատճառով 1902 թ. հուլիսին վերադարձել է Թիֆլիս: Դեմիրճյանը ցուբաևահար չդարձավ, բայց նեղ շրջանակներում (օր.՝ «Վերնատան» երեկոներին) երբեմն նվագում էր:

37. Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 31

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 189:

Տպագրվում է առաջին անգամ:

1.«Ուրիշի համար» դրաման:

2.«Ճամբուն վրա» դրաման: Այս թվարկումը՝ նոր, երրորդ, մեկ անգամ ևս ապացուցում է, որ ժամանակային առումով առաջինը «Եսի մարդը» դրաման է, երկրորդը՝ «Ուրիշի համար»-ը և երրորդը՝ «Ճամբուն վրա» դրաման:

1902

38. Հովհաննես Թումանյանին

<Մարտի 20>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1855 (76):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 350, որտեղից էլ արտատպվել է Լ. Հախվերդյանի «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 26-27:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բառը ենթադրել է տալիս, որ Շանթը կարող էր տեղեկություն ունենալ Թումանյանի՝ հունվար-փետրվարին պարբերաբար հիվանդ եղած լինելու մասին, թեև Շանթի ապրիլի 7-ի նամակից պարզվում է, համենայն դեպս, որ ինքը նոր է իմանում Թումանյանի հիվանդ լինելու կամ հիվանդ եղած լինելու մասին (տե՛ս նաև Տ, էջ 43): Ամեն դեպքում բառի գործածությունը ինչ-որ ենթատեքստ ունի:

2.Խոսքը Թումանյանի «Պոետն ու մուսան» պոեմի մի հատվածի («Վտակ» ժողովածու, էջ 64-80) վերաբերյալ Շանթի կարծիքի մասին է:

39. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 24

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 190:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը հավանաբար Կատարինե Լիսիցյանի Լիզա կամ Եղիսաբեթ քրոջ մասին է, որը ավարտել էր Մոսկվայի Փիլհարմոնիային կից դրամատիկական կուրսերը, որտեղ նրա ղեկավարն էր նշանավոր բեմադրիչ և դրամատուրգ Ալեքսանդր Յուժին-Սումբատովը: Նրա՝ Փարիզում սովորած լինելու մասին ոչ մի տեղեկություն չկա (Կ. Լիսիցյան, Նվիրում, էջ 51):

2.Ստ. Լիսիցյանի որդին և ավագ դուստրը:

3.Թիֆլիսաբնակ բժիշկ Բաբայանի դուստրերը, Շանթի և Լիսիցյանների ծանոթները:

4.Ըստ երևույթին, վիպասանուհի Մարիամ Խատիսյանն է, Հայաստանի ապագա վարչապետ Ալ. Խատիսյանի մայրը, իսկ հաջորդ տողում հիշատակվող տղան՝ նրա կրտսեր որդին՝ Գևորգ Խատիսյանը, Թումանյանի դուստր Աշխենի ապագա ամուսինը (1879-1935):

40. Հովհաննես Թումանյանին

<Ապրիլի 3>

Ինքնագիրը բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆոնդ, թ. 1857 (78):

Առաջին անգամ տպագրվել է Տ, էջ 413-414:

1.Թերևս խոսքը «Վերնատան» նոր անդամների մասին է, որոնց մեջ Ն. Աղբալյանը լինել չէր կարող (Տ, էջ 413: Տե՛ս թ. 36 նամակի 10 ծանոթագրությունը):

41. Հովհաննես Թումանյանին

Ապրիլի 7

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1858 (79):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում» 1982, թ. 1, էջ 201-203, երկրորդ անգամ ՈՒՀ, հ. 4, էջ 351-353, որտեղից էլ «Մնծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 27-30:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ֆրանսիացի կոմպոզիտոր Հեկտոր Բեռլիոզի «Faust-ի դատապարտումը» օրատորիան (1846):

2.Տե՛ս թ. 38 նամակի 2 ծանոթագրությունը:

3.«Ուրիշի համար» դրաման:

4.Այստեղից սկսվող հատվածը (մինչև միայն ոչ հետս բառերը նրբադյալ) առաջին հրատարակության մեջ բացակայում է:

5.Բառը նամակի նախորդ հրատարակություններում բացակայում է և փրանսերենի բառարաններում չկա: Ամենայն հավանականությամբ կազմված է փրանսերեն 2 բառերից՝ porte (հակված լինել) և suite (ան-

կապ), ըստ այդմ էլ նչ. է անկապ գրված, խառնիխուռն: Ճիշտ արտահանութիւնն է պողպըպուպիք:

6.Խոսքը հավանաբար Գ. Մելիք-Կարագյոզյանի «Իմ պատասխանը «Մշակի» խմբագրութեանը» հոդվածի մասին է («Տարազ», 1902, թ. 8), որին արձագանքել է Հովհ. Թումանյանը «Գրողի բողոքը (նամակ խմբագրութեան)» հոդվածով («Տարազ», 1902, թ. 10, մանրամասները՝ ԵԼԺ, հ. 6, էջ 131-132):

7.Ղ.Աղայանի գրական-մանկավարժական գործունեության 40-ամյա հոբելյանը տոնվել է 1902 թ. մայիսին:

42. Հովհաննես Թումանյանին

< Ապրիլի 15>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1859 (80):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 354, ապա Տ, էջ 415:

Տպագրվում է ինքնագրից:

1.Հեղինե Մելիք-Հայկազյան, ուսուցչուհի, մանկական գրող, Թումանյանի և Շանթի ընդհանուր բարեկամներից: 1901-ին Շանթը նրան Թիֆլիսում հայերենի մասնավոր դասեր է տվել:

2.Նկատի ունի բացիկի նկարը:

43. Հովհաննես Թումանյանին

Ապրիլի 28

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1860 (81):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 354, ապա Տ, էջ 416:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը Էջմիածնի «Արարատ» ամսագրում տպագրված «Աստծո սպառնալիքը» բանաստեղծության մասին է (1902, թ. 1, էջ 17): Հետագայում այն բանաստեղծի երկերի ժողովածուներում տպագրվել է «Մարգարեություն» վերնագրով:

2.«Արարատի» այս առաջին համարում միակ գրական գործը Հովհաննես Թումանյանցի մի բավական տափակ ոտանավորն է» («Մշակ», 1902, թ. 74, Մամուլ):

44. Հովհաննես Թումանյանին

Մայիսի 18

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1862 (82):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 354, ապա Տ, էջ 417:

Տպագրվում է ինքնագրից:

1.«Վերնատան» նահապետը Ղ. Աղայանն է, որի գրական-մանկավարժական գործունեության 40-ամյակը տոնվել է մայիսի 19-ին:

2.Բացիկի վրա պատկերված է մի աղջիկ՝ բաժակը ձեռքին:

45. Հովհաննես Թումանյանին

<Հունիսի 3>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1864 (83):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 354, ապա մասամբ նաև Տ, էջ 418:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բացիկի վրա պատկերված է մի խոսող կին:

46. Հովհաննես Թումանյանին

<Հունիսի 9>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1863 (86):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 355:

Տպագրվում է ինքնագրից:

1.Հովսեփ Ճանիկյանի կազմած «Հնությունք Անիա» գիրքը լույս է տեսել Թիֆլիսում 1895 թ.:

2.Նկատի ունի Թումանյանի՝ ապրիլի սկզբներին Շանթին գրած նամակը (Տ, էջ 414):

47. Հովհաննես Թումանյանին

<Հունիսի 23>

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1866 (84):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական» հանդեսում, 1982, թ. 1, էջ 204-205, այնուհետև ՈՒՀ, հ. 4, էջ 355-357, որտեղից էլ արտատպվել է «Մնծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 30-32:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի Թումանյանի՝ մարտի վերջերին և ապրիլի սկզբներին Շանթին գրած նամակները (Տ, էջ 413 և 414), որոնք չեն պահպանվել:

2.Նկատի ունի ուսուցչուհի Վարյա (Վարվառա) Խանդամիրյանին, որի հետ Թումանյանը մտերմիկ հարաբերությունների մեջ էր: Նրա անունը Շանթի նամակներում հաճախ է հանդիպում: Ըստ երևույթին, բանաստեղծի և ուսուցչուհու միջև եղել է հոգեկան ինչ-որ կապ, որը կարևոր էր Թումանյանի համար:

3.Դարձյալ ակնարկում է Թումանյանի և Վարյա Խանդամիրյանի «սիրավեպը»:

XIX դարավերջին և XX դարասկզբին շատ տարածված էր (մանավանդ արևածային) վեպերի հատվածաբար տպագրությունը թերթերում: Դա արվում էր ընթերցողների հետաքրքրությունը գրգռելու, թերթի նկատմամբ պահանջարկը մեծացնելու նպատակով: Թերթոն-վեպերը ժամանակին մեծ ժողովրդականություն են վայելել, մանավանդ արևմտահայ իրականության մեջ:

4.Chambre ֆրանս. բառացի նշ. է գրասենյակ, խորհրդասենյակ, ատյան: Ըստ երևույթին Շանթը նկատի ունի իր ոտման հետ կապված ինչ-որ նիստ:

5.Այսինքն՝ Շվեյցարիայից: Լեմանը նույն ժնևի լիճն է:

48. Հովհաննես Թումանյանին

<Հուլիսի 8>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1865 (93):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 357, ապա Տ, էջ 421:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի իր հունիսի 23-ին գրած նամակը:

49. Հովհաննես Թումանյանին

<Հուլիսի 27>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1869 (91):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 357, ապա Տ, էջ 423:

Տպագրվում է ինքնագրից:

50. Հովհաննես Թումանյանին

<Օգոստոսի 5>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1870 (92):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 358, ապա Տ, էջ 427:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բացիկի վրա պատկերված են մարգագետնում արածող կովեր:

51. Հովհաննես Թումանյանին

<Օգոստոսի 25>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1871 (94):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 358:

1.Այդ առաջարկի մասին Շանթը հետագայում բազմիցս գրել է:

52. Ստեփան Լիսիցյանին

Օգոստոսի 25

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 19:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը, ըստ երևույթին, Լիպայի կամ Եվիսաբեթի մասին է:

2.Խոսքը Բաքվում բնակվող առևտրական եղբայրներից ստացած աշխատանքի առաջարկի մասին է:

53. Հովհաննես Թումանյանին

Սեպտեմբերի 6

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1872 (95):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդես»-ում, 1982, թ. 1, էջ 206-208, երկրորդ անգամ ՈՒՀ, հ. 4, էջ 359-362, որտեղից էլ արտատպվել է «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 32-35:

Տպագրվում է ինքնագրից:

1.«Ուրիշի համար» դրաման:

2.Նկատի ունի Թիֆլիսի դերասանական (արտիստիկական) ընկերությունը, որն ստեղծվել է նույն 1902 թ.:

*3.Նկատի ունի **կարծես թե** և **գրեթե** բառերը:*

4.Խոսքը դարձյալ Օգանեզով եղբայրների կողմից ստացած առաջարկի մասին է:

5.Տե՛ս թ. 47 նամակի 2 ծանոթագրությունը:

6.Նկատի ունի Ալեքսիք Իսահակյանին:

7.«Վերնատան» մշտական անդամներից մի քանիսի ժամանակ առ ժամանակ կամ երկար ժամանակով Թիֆլիսից բացակայելու պատճառով գրական երեկոները շատ հաճախ անցել են թերի կազմով՝ երեք հոգով: Ընդհանրապես շատ քիչ է պատահել, որ «Վերնատունը» հավաքվի ամբողջ կազմով:

8.Տե՛ս թ. 36 նամակի 12 ծանոթագրությունը:

9.Ազան, այն կոչ-բացականչությունը, որով մահմեդական կրոնավորը (մուեզզինը) մինարեթի գլխից նախկինում նամազի էր կոչում հավատացյալներին: Այժմ այդ կոչը դարձյալ արձակվում է մինարեթի գլխից, բայց բարձրախոսով միացվում է ձայնագրությունը:

10.Խոսքը «Պոետն ու մուսան» պոեմի մասին է, որն ամբողջությամբ տպագրվել է 1903 թ. Թիֆլիսում լույս տեսած «Բանաստեղծություններ» ժողովածուում:

54. Ստեփան Լիսիցյանին

Սեպտեմբերի 7

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 190:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Շանթի այդ պաշտոնն այդպես էլ գլուխ չի եկել:

55. Հովհաննես Թումանյանին

<Սեպտեմբերի 6>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1873 (96):

Առաջին անգամ տպագրվել է ՈւՀ, հ. 4, 358, ապա Տ, էջ 434:

Ամսաթիվը հին ոճմարով է, գրվել է նախորդ նամակից հետո:

Տպագրվում է ինքնագրից:

1.Թումանյանը 1895-ին թարգմանել է Բայրոնի «Շիլլոնի կալանավորը», որը 1896-ին առանձին գրքույկով լույս է տեսել Թիֆլիսում:

2.Շիլլոնի ամրոցը, որ պատկերված է քարտի վրա, գտնվում է Լեման լճի ափին:

3.Բացիկի վրա կան հետևյալ հավելումները. «Միանում ենք մեր բարևներով. Հեղինե Մելիք-Հայկ., Վ. Մելիք-Հայկ.», «Կկցցե՛ Վերնատունը» (Վարվառա Մելիք-Հայկազյանը Հեղինեի մայրն է, գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանի կինը):

56. Հովհաննես Թումանյանին

Սեպտեմբերի 27

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1874 (97):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 362, ապա Տ, էջ 442:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ակնարկում է իր սիրավեպը Ջավահիր Ներսիսյանի հետ: Բացիկի վրա պատկերված է 2 կնոջ գլուխ:

57. Հովհաննես Թումանյանին

<Սեպտ. վերջ>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1876 (100):

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այս, ինչպես նաև Ստ. Լիսիցյանին ուղարկված հաջորդ 2 բացիկները անթվակիր են: Պարզ է, որ դրանք ուղարկվել են սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին (նոր տոմարով)՝ Թուլնից ուղարկված բացիկից մի քանի օր հետո: Ըստ թթ. 54-59 նամակների ու բացիկների՝ կարելի է գծել Շանթի վերադարձի երթուղին՝ Լոզան-Վեյթաուբա-Թուն-Վիեննա-Վարշավա և Ռուսաստանով Անդրկովկաս դարձյալ գնացքով:

58. Ստեփան Լիսիցյանին

<Սեպտեմբերի վերջ>

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 190:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Բացիկում նշված օրերը ամենայն հավանականությամբ Շանթը հաշվել է հին տոմարով, որով առաջնորդվել է Ռուսաստանը մինչև 1917 թ.: Շանթի ճանապարհորդությունը Վիեննայից Թիֆլիս տևել է մոտ երկու շաբաթ, և նա Թիֆլիս է հասել նոր տոմարով հոկտ. 12-16-ին, այսինքն՝ հին տոմարով սեպտ. 29-հոկտ. 3-ին: Շանթը դժվար թե այն ժամանակվա հաղորդակցության պայմաններում (գումարած նոր քաղաքներ տեսնելու իր հետաքրքրությունը) 3-4 օրում Թուն քաղաքից հասներ Թիֆլիս:

59. Ստեփան Լիսիցյանին

<Հոկտ. սկիզբ, Վարշավա>

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 190:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Բացիկի վրա պատկերված է Վարշավայի համալսարանը, որտեղ 1887-1889 թթ. սովորել է Ստ. Լիսիցյանը:

60. Հովհաննես Թումանյանին

<Հոկտեմբերի 2-3>

Նամակի ինքնագիր պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1887 (99) և 1888 (117):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», 1982, թ. 1, էջ 209-210 (տպագրվել է նամակի կեսը), ապա ՈՒՀ, հ. 4, էջ 363-366 (ամբողջությամբ):

Տպագրվում է ինքնագրից:

1.Նամակն անթվակիր է, նրա գրության ժամանակը որոշվել է մոտավորապես, նամակը երկրորդ անգամ տպագրության պատրաստողների՝ Խ. Գյուլնազարյանի և Ջ. Ավետյանի կողմից: Առաջին հրատարակության ժամանակ Գ. Ագնավուրյանը որպես գրության ժամանակ նշել է 1902-ի սեպտեմբերը (ճիշտ է, հարցական նշանով), ինչը նույնպես կարող է հավանական համարվել, եթե նկատի ունենանք սեպտեմբերի 29-30-ը (հին տոմարով):

2.Ավան Ադրբեջանում, փոստային մոտ է Բաքվի մոտ: Երկաթուղային խոշոր հանգույց էր Դոնի Ռոստով-Թիֆլիս ճանապարհին:

3.Թումանյանը Աբասթուման է հասել սեպտեմբերի 11-ին (հին տոմարով, Տ, էջ 435):

Աբասթումանը լեռնա-կլիմայական առողջարան է Վրաստանում, Ախալցխայից 28 կմ հեռավորության վրա: Հայտնի է իր տաք ջրերով, թոքերի հիվանդությունների բուժարան է: Թումանյանը հաճախ է հանգըստացել և կազդուրվել Աբասթումանում:

4.Նկատի ունի սեպտ. 20-22-ին և 25-ին Փիլ. Վարդազարյանին և ամսի 30-ին իշխանուհի Մարիամ Թումանյանին գրված նամակները:

5.Թումանյանը, հենվելով Շանթի բացիկների վրա հնարկա հատորի (թթ. 55 և 56), թյուրիմացաբար կարծել է, թե Շանթը նշանվել է Հելինե Մնձիք-Հայկազյանի հետ, և այդ «նորությունը» չտապել է հայտնել իր կնոջը, Մ. Թումանյանին և Փ. Վարդազարյանին, իսկ վերջինս խնդրել է «մի հեռագրով» իր անունից չնորհավորել Շանթին: Թյուրիմացությունը շուտով պարզվել է և ափեթ գարձել բազմաթիվ կատակների (Տ, էջ 441, 445, 446):

6.Այստեղ նամակի առաջին հրատարակության տեքստն ընդհատվում է:

7.Ջեռագիրը դժվարընթեռնելի է, բերված է ամենահավանական և ճիշտ ընթերցումը. ըստ երևույթին, ուզում է ասել ջրահարս՝ համեմատելով իր ապագա կնոջը Անդերսենի հայտնի հեքիաթի հերոսուհու հետ:

8.Բժիշկ Արիստակես Զաքարյանը՝ Փ. Վարդազարյանի մտերիմ ընկերը, արվեստասեր մարդ էր և Թումանյանի ու Շանթի լավ բարեկամը: Հաճախ էր մասնակցում իշխանուհի Մարիամ Թումանյանի տանը տեղի ունեցող գրական չորեքշաբթիներին կամ հինգշաբթիներին:

61. Հովհաննես Թումանյանին

Հոկտեմբերի 10

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1876՝ (101):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», 1982, թ. 1, էջ 210-211, երկրորդ անգամ ՈՒՀ, հ. 4, էջ 366-367, որտեղից էլ արտատպվել է «Մնծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 35-37:

Տպագրվում է ինքնագրից:

1.Իր գիշերակացի և սնունդի համար վճարող կենվոր (ռուս.): Շանթը «Վերնատանը» ապրել է 4-5 ամիս (Թ-Ժ, էջ 340, Օլգա Թումանյանի հուշերը): Նույնը հաստատում է բանաստեղծի դուստրը՝ Նվարդը (Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 16): Շանթի՝ այսքան երկար իր տանը ապրելուն Թումանյանը հաճախ է անդրադարձել կնոջը և այլոց գրած նամակներում, ինչպես, օրինակ, Փ. Վարդազարյանին հոկտեմբերի 23-ին գրած նամակում. «Շանթին բան չասես մեր տանը – իբրև нахлебник փող վճարելու համար: Ոչ գործ ունի, ոչ էլ ձեռին փող, ինչպես երևում է: Թող իբրև հյուր լինի մեր տանը, իմ կինն էլ քիչ նեղություն քաշի, բան չկա» (Տ, էջ 459):

2.Նկատի ունի Օգանեսով եղբայրների առևտրական պաշտոնը:

3.«Ուրիշի համար» դրաման:

4.Նկատի ունի իր սիրավեպը իր ապագա կնոջ՝ Ջավահիրի հետ: Այստեղ և այլ նամակներում նրան կոչում է գնչուհի:

5.«Ուրիշի համար» դրաման Շանթը վերջնականապես «չնորհքի է բերել» 1903 թ.:

6.Փ. Վարդազարյանը գրելու նկատմամբ սեր ուներ և փորձում էր հեղինակել բանաստեղծություններ ու դրամատիկական գործեր, բայց գրեթե միշտ անհաջող:

7.Խոսքը Շիրվանզադեի «Ունե՞ր իրավունք» դրամայի մասին է, որը ներկայացվել է Թիֆլիսում հոկտեմբերի 7-ին:

8.«Մշակի» հոկտեմբերի 9-ի թ. 223-ում Հ. Առաքելյանը հանդես է եկել «Մի նոր պիես» վերնագրով թատերախոսականով, ուր մասնավորապես կարդում ենք. «Եվ մենք կասենք. ո՛չ, պ. Շիրվանզադե, ձեր հերոսուհին չուներ իրավունք, իսկ պ. հեղինակը չուներ՝ նույնպես ոչ մի իրավունք. և բարոյական հիմք կերակրելու հասարակությունը դեկադենտական, բարոյական հիմունքներից և հասարակական իղեալներից զուրկ մի արվեստական հավակնոտ գրվածքով»:

62. Հովհաննես Թումանյանին

<Հոկտեմբերի 12>

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1891 (105):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», 1982, թ. 1, էջ 216-217, ապա ՈՒՀ, հ. 4, էջ 367-368:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը կրկին Վարյա Խանդամիրյանի մասին է:

63. Հովհաննես Թումանյանին

<Հոկտեմբերի 16-18>

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1890 (102): Նամակն անավարտ է և անստորագիր:

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», 1982, թ. 1, էջ 211-214, ապա ՈՒՀ, հ. 4, էջ 368-371, որտեղից էլ արտատպվել է «Մնծերը ամենամնծի մասին» ղրքում, էջ 37-40:

Տպագրվում է ինքնագրից:

1.Իրավաբան Արսեն Շիլյանի ընտանիքը (Շիլյաններ) նույնպես հանգստանում էր Աբաստումանում:

2.Նկատի ունի բանաստեղծի հոկտեմբերի 11-ին գրած նամակը (տ, էջ 462):

3.«Ուրիշի համար» դրամայի՝ ո՛չ այդ, ո՛չ էլ հաջորդ տարբիներին ներկայացված լինելու վերաբերյալ աղբյուրներում որևէ տվյալ չկա: Ամենայն հավանականությամբ այն ընդհանրապես չի ներկայացվել:

64. Հովհաննես Թումանյանին

Հոկտեմբերի 23

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1877 (103):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», 1982, թ. 1, էջ 214-215, ապա ՈՒՀ, հ. 4, էջ 371-372:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի հոկտեմբերի 23-ից մի քանի օր առաջ գրած նամակը, ուր բանաստեղծը իր զայրույթն է հայտնել «Բանաստեղծուհյուններ» 3-րդ հատորի բաժանորդագրության համար հրատարակչական խմբի կազմած չրջաբերական-դիմումի դեմ: Նամակը չի պահպանվել, բայց նրա բովանդակության մասին հստակ պատկերացում կարելի է կազմել ինչպես Շանթի այս նամակից, այնպես էլ Թումանյանի՝ Փ. Վարդազարյանին հոկտեմբերի 23-ին գրած նամակից, ուր մասնավորապես գրված է. «Ես արդեն գրել եմ Շանթին երկրորդ անգամ ժողովին հայտնելու, թե ինչու այժմևեթ սկսելուն հակառակ եմ: Իսկ այն դիմումը, որի պատճենը Շանթը գրել էր իր նամակում, ինձ այնքան վշտացրեց, որ ես պատրաստ էի թքել և՛ գրականության, և՛ կյանքի վրա: Դիմել հազար ու մի մարդու, գրել, թե Հ. Թումանյանը անապահով է, հիվանդ է, ընտանիք ունի, մի բան ավել ստորագրեցեք նրա բանաստեղծություններին...» (Տ, էջ 459, 460):

*2.Ըստ Մարիամ Թումանյանի վկայության՝ այս գիրքը տպագրվել է մեծ չարչարանքով, ընդամենը 1200 օրինակ, և բանաստեղծին մեծ գումար չի բերել (մանրամասները տե՛ս Թ-Հ, էջ 477-478: Նույնը՝ Մարիամ Թումանյան, **Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները**, Երևան, 2003, էջ 125 :)*

65. Հովհաննես Թումանյանին

Նոյեմբերի 7

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1878, (104):

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդեսում», 1982, թ. 1, էջ 215-216, ապա ՈՒՀ, հ. 4, էջ 373-374, որտեղից էլ արտատպվել է «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 40-41:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նոյեմբերի 1-ից հինգը Թումանյանը ճանապարհորդել է Աբասթումանից Ախալցխա և Բորժոմի, ինչը բարենպաստ ազդեցություն է թողել բանաստեղծի հոգեկան վիճակի վրա: Համենայն դեպս, իր բարեկամների բերած անհերքելի փաստարկների և այս ճանապարհորդության շնորհիվ Թումանյանի ժողովածուի տպագրության հարցը վերջնականապես լուծվել է:

2.Մինչև Թումանյանի՝ Աբասթումանից վերադառնալը Շանթը նրան չի հանդիպել:

3,Դարձյալ «Ուրիշի համար» դրաման:

4.Նման, ինչպես, նույն ձևով (ֆր.):

66. Հովհաննես Թումանյանին

<Դեկտեմբերի 2>

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1879 (106):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 374-375, որտեղից էլ արտատպվել է «Մեծերը ամենամեծի մասին» դրքում, էջ 42:

Տպագրվում է ինքնագրից:

1.1902 թ. նոյեմբերի 9-ին ռուս բանաստեղծ, թարգմանիչ Յուրի Վեսելովսկուն գրած պատասխան նամակում Թումանյանը աննպաստ կարծիք է հայտնել Ս. Շահազիզի «Վանի վիշտը» պոեմի մասին՝ նրա հեղինակին համարելով ինչ-որ չափով հայ իրականությունից կտրված գրող, ու քանի որ Շահազիզը տնօրինում էր «Արտյան-Նազարյան» գրական ֆոնդից գրողներին (այդ թվում՝ Թումանյանին) օգնություն տրամադրելու հարցը, բանաստեղծը վախենում էր, որ իր նամակի պատճառով կարող է զրկվել օգնությունից: Այդ մասին նա նույն օրը՝ նոյեմբերի իննին, Ավ. Իսահակյանին գրել է. «Վեսելովսկուն մի պատասխան եմ գրում, որ հասնելուն պես Շահազիզը թռչակս կտրելու է գրական ֆոնդից» (Տ, էջ 468): Այս վախը արտահայտվել է նաև նոյեմբերի 13-ին Փ. Վարդազարյանին, նոյեմբերի 29-ին Կնոջը և դեկտեմբերի 2-ին Մ. Թումանյանին գրած նամակներում (Տ, էջ 473, 481 և 484): Շանթը կարող էր այս պատմության մասին իմանալ Թումանյանի՝ դեկտեմբերի 2-ին իրեն գրած նամակից (չի պահպանվել): Բարեբախտաբար, բանաստեղծի կասկածը չի արդարացել, և նա օգտվել է գրական ֆոնդի նպաստից մինչև 1907 թ.՝ Ս. Շահազիզի մահը: Այս բանին կարող է նպաստած լինել նաև Թումանյանի՝ դեկտեմբերի 4-ին Շահազիզին գրած նամակը, ուր բանաստեղծը նրբանկատ բացատրություն էր տվել Շահազիզի և Պատկանյանի մասին իր հայտնած կարծիքին (Տ, էջ 485):

67. Հովհաննես Թումանյանին

<Դեկտեմբեր>

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1892 (107):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 375-376, որտեղից էլ արտատպվել է «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 42-43:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ըստ Տարեգրության (էջ 486)՝ Թումանյանը Աբասթումանից Թիֆլիս է վերադարձել մոտավորապես դեկտեմբերի 10-11-ին, ուրեմն այս նամակն էլ գրվել է մոտավորապես մինչև ամսի 10-ը:

2.Խոսքը նոյեմբերի 20-ին Պետերբուրգից Ն. Աղբալյանի գրած նամակի մասին է:

3.Նկատի ունի «Հայ գրականության պատմության» համար Ն. Աղբալյանի կազմած ցանկերը, որոնց մասին նա գրել է նոյեմբերի 20-ի նամակում, ՈՒՀ, հ. 5, էջ 365-366: Ինչպես երևում է, Շանթը ծանոթ էր նամակի բովանդակությանը:

4.Ֆրանսուհու՝ Արիստակես Զարգարյանի խնդրանքով Աբասթումանում տեղավորելու մասին Թումանյանը բժշկին գրել է իր նոյեմբերի 13-ի նամակում (Տ, էջ 474), իսկ նոյեմբերի 15-ին կատակով գրել է կնոջը. «Մի՞թե դու կարծում ես՝ Ռուստեմը (Արիստ. Զարգարյանը - Ա.Մ.) լավ մարդ է: Ա՛յ գրել է, հրեն պալատից (Բորժոմի թագավորական ամառանոցային պալատը, ուր բժիշկը հետևում էր Թագաժառանգ Միխայիլ Նիկոլաևիչի առողջությանը, և ուր Թումանյանը եղել էր նոյեմբերի 4-ին - Ա.Մ.) մի ֆրանսուհի աղջիկ է ղրկում մոտս – տեսնեմ հիմի ինչ կասես: Իհարկե, այն ժամանակ մի քանի ամիս էլ կուշանամ: Այնուհետև դու էլ մնաս բարով քո երեխաներով, իմ симпатия*-ն էլ (Վարյա Խանդամիրյանը - Ա.Մ.) իրեն նազերով» (Տ, էջ 475): Կատակը շարունակվել է նաև նոյեմբերի 22-ի նամակում (Տ, էջ 477):*

5.Աբասթումանում Թումանյանն ապրում էր Տյաչկին ազգանունով մի պաշտոնաթող դնդապետի տանը: Տանտերը խանդոտ մարդ էր և կասկածել է, թե բանաստեղծն ու իր կինը սիրային կապի մեջ են: Այս զավեշտալի պատմության մասին Թումանյանը գրել է Փ. Վարդազարյանին և Մ. Թումանյանին (Տ, էջ 476 և 479): Տանտիրուհուն Դեզդեմոնա անվանելով՝ Շանթը արձագանքել է բանաստեղծի՝ Փ. Վարդազարյանին գրած նախադասությանը. «Ես ծիծաղում եմ, տիկինը զարմանում է, իսկ Իվան Օսիպովիչը (տանտերը - Ա.Մ.) լուրջ Օթելլո է խաղում»: Բնականաբար, ո՛չ այս վերջին 2 «սիրավեպերը», ո՛չ էլ հինը՝ «տարօրինակ» հարաբերությունները Վարյա Խանդամիրյանի հետ, և անվերջ կատակները այդ թեմաներով չէին կարող Օլգա Թումանյանի «ճաշակով լինել»:

68. Հովհաննես Թումանյանին

<Հուլիսի 27-28>

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1889 (108):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 376-377:

Տպագրվում է ինքնագրից:

1.Կոջորի, լեռնա-կլիմայական առողջարան Վրաստանում՝ Թբիլիսիից 18 կմ հեռավորության վրա:

2.Թումանյանը Թիֆլիսից Ախալթուման հանգստանալու է մեկնել մոտավորապես հունիսի 24-ին, Ախալթուման հասել է հունիսի 28-ին, իսկ Դ. Դեմիրճյանը մեկնել է Բաքու՝ իր համար ինչ-որ աշխատանք գտնելու հեռանկարով:

3.Ռազմարշավ (ռուս.):

4.Այս վերջին պարբերությամբ Շանթը նկատի ունի 1903 թ. ամռան քաղաքական դեպքերը: Հունիսի 12-ին ցարական կառավարությունը հրաման է արձակել՝ «Ռուսաստանի հայ-լուսավորչական եկեղեցու կալվածքների կենտրոնացման մասին», որը հուլիսին զանգվածային խռովություններ է առաջացրել Անդրկովկասի բոլոր հայաշատ վայրերում: Ցարական իշխանության բռնությունները վիճակը չեն հանդարտեցրել: Պայքարը շարունակվել է այնքան, մինչև որ 1905 թ. օգոստոսի 1-ին ցարը, վախենալով հեղափոխական տրամադրությունների վերելքից և ցանկանալով մեղմել հայ ժողովրդի զայրույթը, հատուկ հրովարտակով եկեղեցապատկան հողերը, գույքը, ինչպես նաև կրթական գործով զբաղվելու իրավունքը վերադարձրել է հայոց եկեղեցուն:

69. Հովհաննես Թումանյանին

<Օգոստոսի 1-2>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., 1893 (119):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 378:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի իր կնոջ՝ Ջավահիր Ներսիսյանի հետ հանդիպումը:

2.Հեղինե Մելիք-Հայկազյանը, որը գտնվում էր Լոնդոնում, Աբասթումանի է հասել օգոստոսի 3-ին:

3.Գրված է բացիկի հակառակ կողմում:

1904

70. Մարիամ Թումանյանին

Հուլիսի 22

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆոնդ, թ. 647:

Տպագրվում է առաջին անգամ:

*Իշխանուհի Մարիամ Թումանյանի հետ Շանթը ծանոթացել է 1901 թ., երբ Թիֆլիսում ապրում էր մանկավոր դասեր տալով: Ինքն այդ մասին ոչինչ չի գրել, իսկ ահա Մարիամ Թումանյանը իր հուշերում այսպես է ներկայացրել իրենց ծանոթությունը. «Շանթի հետ ես ծանոթացա բոլորովին պատահմամբ 1901 թ.: Գնացել էի մի օր Մելիք-Հայկազյանների տուն և հանդիպել էի մի պարոնի, որին ներկայացրին «Հայերեն լեզվի ուսուցիչ Սեղբոսյան»: Այդ ազգանունը ինձ համար բոլորովին անծանոթ էր, և ես անտարբեր ձեռքս մեկնեցի այդ պարոնին ու իմանալով, որ նա եկել էր օրիորդին (Հեղինեին - Ա.Մ.) դաս տալու՝ չուտ հեռացա այդ տնից, որ չխանգարեմ: Մի քանի օր անց ես պատահեցի փողոցում օրիորդ Մելիք-Հայկազյանին և նրանից իմացա, որ Սեղբոսյանը գրող է, մեր Շանթն է, որին կարդացել էի ու շատ էի սիրում: Ես նախատեցի օրիորդին, որ ինձ մոլորեցրել էր Սեղբոսյան ազգանունով, և ես այնքան սառն էի վերաբերվել Շանթին: Իմ սխալը ուղղելու համար ես խնդրեցի օրիորդ Մելիք-Հայկազյանին, որ իմ անունից հրավիրի Շանթին ինձ մոտ, հենց առաջիկա հինգշաբթին: Շանթը չմերժեց, և այդպիսով սկսվեց մեր բարեկամությունը» (Մ. Թումանյան, **Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները**, էջ 100): Այսպես Շանթը դարձել է իշխանուհու գրական հինգշաբթիների (կամ չորեքշաբթիների) մշտական մասնակիցը և նրա լավ բարեկամներից մեկը, որին նա միշտ աջակցել է (իհարկե իր հնարավորության սահմաններում)՝ ձգտելով նրա համար ապրելու և ստեղծագործելու նպաստավոր պայմաններ ստեղծել: Իր հուշերում իշխանուհին հետաքրքիր երանգներ է ավելացնում Շանթի մարդկային կերպարին և հայտնում մանրամասներ՝ կապված Շանթի հետ, որոնք ուրիշ որևէ տեղ հիշատակված չեն: Այսպես, «Հիշում եմ, Շանթի առաջին դրաման (ըստ*

երևույթին, «Ուրիշի համար»-ը - Ա.Մ.) մենք այնքան խիստ քննադատեցինք, որ նա պատուհաս ձեռագիրը և երկար ժամանակ չէր սկսում նորը գրել: Դրանից հետո նա գրեց «Հին աստվածները», որը լավ ընդունելության գոտավ հասարակության կողմից» (նույնը, էջ 107): Ահա և Շանթի բնութագիրը, որը ինչքան էլ այլ աղբյուրներից հայտնի լինի, այնուամենայնիվ հետաքրքիր է և՛ անհատական ընկալման տեսակետից, և՛ Շանթի վերաբերյալ նոր տեղեկություններ հաղորդելու տեսակետից. «Երբ որ նա (Շանթը - Ա.Մ.) նստում էր պարապելու, ոչ ոք իրավունք չուներ նրան խանգարելու, ու նա տեղից չէր վեր կենում դատարկ զրույցի համար (նույնը գրում է Նվարդ Թումանյանը, Հուշեր և զրույցներ, էջ 43): Ճշտապահության կողմից էլ Շանթը չատ խիստ էր ու իր խոսքի տերը: Գոնե ես իմ երկարատև ծանոթության ընթացքում տվիթ չեմ ունեցել դժգոհելու նրանից և նա իմ կատարյալ վստահությունն էր վայելում:

Ընտանեկան կյանքի մեջ էլ Շանթը չատ կանոնավոր էր: Շատ սուղ միջոցներով նա կարողանում էր պահել իր ընտանիքը: Նա հաշվապահի պաշտոն էր վարում արդյունաբերական մի ընտանյակում, բայց Թումանյանի պես անփույթ չէր վերաբերվում իր պարտականություններին, այլ չատ բարեխիղճ կերպով կատարում էր իր ստանձնած պաշտոնը, թեև չատ էր ճնշվում ամեն մի գործից, որ կարում էր նրան զբաղանություններից» (նույնը, էջ 101): Միայն Մ. Թումանյանի հուշերում է բերվում այն փաստը, որ Շանթը 1904-ին մեկ ամսով ազատմամբ բանտարկվել է (էջ 103, նույնը՝ ԹԺՀ, էջ 479): Եվ վերջապես, միայն իր հուշերում չէ, որ նա չերմ խոսքեր է գրել Շանթի մասին: 1902-ի նոյեմբերի 20-ին Թումանյանին գրած նամակում, օրինակ, կարդում ենք. «Շանթի հետ չատ եմ դաստացել, չատ ազնիվ տղա է երևում, սիրեցի նրան» (ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1253 (666): Շանթի՝ Մարիամ Թումանյանին գրած նամակների մատենիկ տոնը ևս վկայում է, որ նրանք իսկապես եղել են լավ բարեկամներ:

1.Այստեղ և էլի մի քանի նամակում Շանթը բառը գրել է մեծատառով՝ ըստ երևույթին որպես մեծ հարգանքի նշան:

2.Մ. Թումանյանը հաճախ էր կազմակերպում բարեգործական միջոցառումներ կամ մասնակցում դրանց: Հավանաբար խոսքը նման միջոցառումներից մեկի մասին է:

3.Նկատի ունի իր անդրանիկ որդու՝ Սուրենի ծնունդը:

4.Այդ օրերին Թումանյանը եղել է Շուլավերում:

5.Խոսքն ակնհայտաբար իր՝ հաշվապահ աշխատելու մասին է:

6.1903-ին՝ Կովկասի փոխարքա Գոլիցինի կողմից Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության գործունեության կասեցումից հետո, Սա-

Լիսիցյանը հիմնել է «Մտ. Լիսիցյան և ընկերներ» հրատարակչական ընկերությունը, որը լույս է ընծայել բավականին թվով գրքեր, այդ թվում՝ Շանթի «Երգերը» և «Լեռան աղջիկը» պոեմը (Լ.Մ. Վարդանյան, Степан Лисициан..., *էջ 55):*

Ըստ Տարեգրության՝ այդ ընկերությունը հիմնադրվել է 1904 թ. մինչև նոյեմբերի 12-ը և լույս ընծայել Հովհ. Թումանյանի, Շանթի, Ղ. Աղայանի և Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունները (էջ 540-541):

7.Հավանաբար խոսքը «Ճամբուն վրա» դրամայի մասին է:

8.1902-ին նաև Մարիամ Թումանյանի ջանքերով հիմնադրված Թիֆլիսի դրամատիկական ընկերությունը:

71. Հովհաննես Թումանյանին

<Օգոստոսի 7>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1880 (109):

Տպագրվում է առաջին անգամ:

1.Բացիկն ուղարկվել է Շուլավեր, ուր Թումանյանը հանգստանում էր:

2.Թումանյանը Շուլավերում է անցկացրել նաև սեպտեմբերը (Տ, էջ 540), իսկ հետո, ըստ երևույթին, վերադարձել է Թիֆլիս:

72. Մարիամ Թումանյանին

<Օգոստոսի 16>

Ինքնագիր բացիկը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 648:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Բացիկի կնիքի վրա երևում է միայն ամսաթիվը՝ 16, իսկ ամիսը ցույց տվող թիվը (VIII կամ IX) փակված է, չի երևում: Մեր պրպտումները՝ պարզելու Սուրեն Շանթի ծննդյան գոնե ամիսը և դրա միջոցով էլ ճշտել բացիկի գրության ամիսը, որևէ արդյունք չտվեցին (բավական է ասել, որ մեր հարցմանը չարձագանքեց նույնիսկ Սուրեն Շանթի որդին՝ ԱՄՆ-ում բնակվող Լևոն Շանթ Կրոսերը): Այնպես որ ամիսը՝ օգոստոսը, որոշվել է՝ ելնելով Շանթի գրած «Ես էլ եմ չատ ուրախ, որ ամառը մոտենում է իր վերջին» նախադասությունից:

2.Խոսքն ամենայն հավանականությամբ անդրանիկ որդու՝ Սուրենի ծննդյան առթիվ ստացած շնորհավորանքի մասին է:

3.Ակնարկում է Մարիամ Թումանյանի հասարակական բուռն գործունեությունը:

4.Չակերտների մեջ առնված այս նրանից-ը մտորումների տեղիք է տալիս. ո՞ւմ նկատի ունի Շանթը՝ կնո՞ջը (բայց այդ դեպքում ինչո՞ւ է գրել չակերտների մեջ և ոչ անունով՝ Զավոյից), նորածնի՞ն (բայց այս դեպքում էլ ինչո՞ւ կնոջը չի հիշում), թե՞ մի երրորդ մարդու՝ դժվար է ասել:

1905

73. Մարիամ Թումանյանին

Օգոստոսի 4

Ինքնագիրը պահվում է Գ.Ա.Թ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 ա:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Մարիամ Թումանյանի որդին՝ Միքայելը:

2.Թումանյանի՝ ինչ գործով գրազված լինելը չհաջողվեց ճշտել:

3.Անդրանիկ որդին՝ Սուրենը:

4.Դարձյալ «ճամբուն վրա» գրամոն:

5.Նկատի ունի Նիկոլայ II-ի օգոստոսի 1-ի հրովարտակը, որով հայոց եկեղեցուն էին վերադարձվում բռնագրավված հողերը, գույքը և կրթական գործը անօրինելու իրավունքը (տե՛ս թ. 68 նամակի 4 ծանոթագրությունը):

6.1905-ի ամռանը Փ. Վարդազարյանը աչքերը բուժելու նպատակով երկար ժամանակով մեկնել է Շվեյցարիա:

1907

74. Մարիամ Թումանյանին

Մայիսի 6

Ինքնագիրը պահվում է Գ.Ա.Թ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 բ:

Նամակը հատվածաբար տեղ է գտել Մ. Թումանյանի «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» գրքում, էջ 101-102:

Ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ:

1.Մարիամ Թումանյանը որդու թոքերը բուժելու նպատակով 1906 թ. գարնանից մինչև 1908 թ. ապրել է Շվեյցարիայում:

2.Որպես Թիֆլիսի Գայանյան դպրոցի տեսուչ՝ Շանթը պաշտոնավարել է 1906-1908 թթ.:

*3.«Ճամբուն վրա» դրամատիկական ընկերության թատերախմբի կողմից Թիֆլիսում առաջին անգամ ներկայացվել է 1907 թ. հունվարի 15-ին, Վահրամի դերը կատարել է Հովհ. Աբելյանը: Ըստ Լ. Հախվերդյանի՝ ներկայացումն անցել է աննկատ (**Հայ թատրոնի պատմություն**, ե., 1980, էջ 111): «Մշակ» լրագրի «Սիրող» ստորագրությամբ փոքրիկ թատերախոսականում թեև նշվում է հանդիսականների ջերմ ընդունելության մասին, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ հաստատվում է Լ. Հախվերդյանի գնահատականը. «Հասարակությունը ջերմ ողջունեց երիտասարդ հեղինակին, մի քանի անգամ բեմ կանչեց և վարձատրեց նրան բուռն ծափահարություններով... Թատրոնը լիքը չէր» (թ. 11, հունվարի 18):*

4.Պարբերական մամուլում, բացի «Մշակի» վերը հիշված գրախոսականից, այլ հոդված կամ գրախոսական գտնել չհաջողվեց:

*5.Ըստ Բ. Հարությունյանի՝ Շանթի «Եսի մարդը» դրաման Բաքվում ներկայացվել է 2 անգամ՝ փետրվարի 4-ին և դեկտեմբերի 3-ին (**XIX-XX դդ. Հայ թատրոնի տարեգրություն**, հ. 2, ե., 1980, էջ 261 և 283): Այստեղ խոսքը բնականաբար առաջին ներկայացման մասին է, որին անդրադարձել է «Баку» օրաթերթը իր փետրվարի 6-ի համարում (թ. 29) տպագրված «Армянский спектакль» խորագրով գրախոսականում: Իսկ «Ուրիշի համար» դրամայի՝ Բաքվում ներկայացված լինելու (և ընդհանրապես ներկայացված լինելու) վերաբերյալ աղբյուրներում որևէ հիշատակություն չկա:*

6.Ամենայն հավանականությամբ նկատի ունի նախորդ ծանոթագրության մեջ նշված գրախոսականը:

*7.1905-1906 թթ. հայ-թուրքական զինված ընդհարումների ժամանակ Թումանյանը Լոռիում և շրջակայքում ոչ պաշտոնական ձևով (տարբերայնորեն, ժողովրդի կողմից) ստացել էր «գեներալ-գուբերնատորի» կոչում: Նրան այդպես է կոչել նաև Թիֆլիսի ժանդարմական վարչության գործակալը 1906 թ. մայիսի 18-ի իր զեկուցագրում. «Լոռու շրջանում նա կարծես «գեներալ-գուբերնատոր» է...» (**ԵԼԺ**, հ. 10, էջ 446):*

8.Թումանյանի վերջին՝ տասներորդ երեխան՝ Թամարը, ծնվել է մայիսի 7-ին:

75. Հովհաննես Թումանյանին

Հունիսի 12

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ընտանեկան ֆ., թ. 1881 (506):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 5, էջ 305-306: Ե՛վ այստեղ, և՛ Տարեգրության մեջ (էջ 589) նամակի հեղինակությունը վերագրվում է Ստեփան Լիսիցյանին, ինչը թյուրիմացություն է, քանի որ նամակը գրված է Շանթի ձեռագրով: Երկրորդ՝ նամակում կարդում ենք. «Ինչ որ ձեռքդ չկա՝ վերցրու Տեր Գյուտի մոտից, կ'ուզես Ստեփանի անունով»: Եթե գրեր Ստ. Լիսիցյանը, կգրեր ոչ թե Ստեփանի անունով, այլ իմ անունով: Եվ հետո՝ նամակի ոճը, բառապաշարը և կատակալին-հումորային տրամադրությունը ևս հուշում են, որ նամակը գրել է Շանթը: Այնպես որ նամակն իրավացիորեն է տեղ գտել Շանթի նամակների հատորում:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը հունիսի 10-ին Ջուլալովի տան ժողովրդական համալսարանում Թումանյանի կարդացած դասախոսության մասին է: Թեման՝ «Կյանք և գրականություն» (Տ, էջ 587):

2.Թումանյանը, Շանթը և Ստ. Լիսիցյանը պատրաստում էին «Լուսաբեր» դասագիրքը, որի Ա. տարին լույս է տեսել 1907 թ. մինչև տպտմիների 5-ը (Տ, էջ 598):

3.Խոսքը բանասեր, բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական ավանդություններ» (Թիֆլիս, (1883) և «Հայ ժողովրդական հեքիաթներ» (Թիֆլիս, 1882, 1890-1903) գրքերի մասին է:

4.Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի հրատարակած 9 ժողովածուները (1901-1913), որոնք լույս են տեսել բանասեր, մանկավարժ, թարգմանիչ, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինի (1815-1890) կատարած միջոցներով: Մեծապես նպաստել են հայ բանահյուսության և ազգագրական նյութերի հավաքման, հրատարակման և ուսումնասիրման գործին:

5.Բանասեր, բանահավաք, բանագետ Գարեգին Սրվանձտյանի բանահյուսական ժողովածուները՝ «Գրոց-բրոց» (1874), «Հնոց և նորոց», «Մանանա» (1876), «Թորոս Աղբար» (1884) և «Համով-հոտով» (1884):

6.Տե՛ս թ. 20 նամակի 4 ծանոթագրությունը:

7.Այս անունով ամսագիր (կամ այլ հրատարակություն) գտնել չհաջողվեց: Երևի պետք է լինի «Живая старина», ամսագիր, որը հրատարակել է Ռուսական աշխարհագրական ընկերության էթնոգրաֆիայի բաժանմունքը 1890-1916 թթ.: Լույս է տեսել տարին չորս անգամ Պետերբուրգում:

8.Խոսքը իռլանդացի հայագետ, ճանապարհորդ-աշխարհագրագետ, փաստաբան, հաս.-քաղաքական գործիչ Հենրի Ֆինիս Բլոս Լինչի «Արմենիա» ստվարածավալ աշխատության մասին է (1901), որն արդյունք է նրա՝ 2 անգամ Հայաստանում կատարած ճանապարհորդությունների (1893-1894 և 1898): Լույս տեսնելուց անմիջապես հետո գիրքը թարգմանվել է ռուսերեն, իսկ 1913-1914 թթ.՝ նաև հայերեն: Հայտնի չափ արևելագետներ ժամանակին բարձր են գնահատել այս գործը, այն այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը և կարևոր աղբյուր է XIX դ. Հայաստանի, նրա պատմության, ազգագրության և այլ խնդիրների լուսաբանման համար:

9.Ճարտարապետ Հովհաննես Քաջազնունին՝ անկախ Հայաստանի առաջին վարչապետը, որն այդ տարիներին ապրում և աշխատում էր Բաքվում, Բաքվի հայոց հրատարակչական ընկերության (ստեղծվել է 1905-ին, սկսել է գործել 1906-ի նոյեմբերից) հրատարակչական խորհրդի անդամ էր, և քանի որ Թումանյանը, Շանթը և Ստ. Լիսիցյանը ցանկանում էին «Լուսաբերը» տպագրել Բաքվում, նրանք լուրերի էին սպասում Քաջազնունուց (տե՛ս ՈՒՀ, հ. 5, էջ 306-308, Տ, էջ 596-597):

10.Վրթանես Ախիկյանը:

11.Այստեղ նամակի թղթի ծայրը պատռված է:

76. Ղազարոս Աղայանին

Հուլիսի 28

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 192:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նկատի ունի «Լուսաբեր» դասագիրքը:

2.Ղ.Աղայանի և «Լուսաբեր» դասագրքի հեղինակների միջև փոխշահավետ համաձայնությունը կայացել է, բայց մի քանի տարի անց կողմերի միջև հարցեր են առաջացել՝ կապված Թումանյանի ստեղծագործությունների՝ Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքում ընդգրկվելու հետ (տե՛ս թ. 98 նամակի 3 ծանոթագրությունը):

77. Հովհաննես Մալխասյանին

Սեպտեմբերի 28

Գյուղագիր, մանկավարժ, հրապարակագիր, հանրային գործիչ Հովհաննես Մալխասյանի (1866-1931) հետ, ինչպես երևում է նրան ուղղված 4 նամակներից, Շանթը անձամբ ծանոթ չի եղել, նամակները գրվել են գործի բերումով, և հետագայում նրանց ուղիները երբեք չեն հատվել:

Նամակի ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, ֆ. 23, ց. 1, պ. 2, թ. 1822: Ուղարկվել է Նոր Նախիջևանում լույս տեսնող «Մեր ձայնը» օրաթերթի խմբագրության (1907-1909 թթ. այդ թերթը խմբագրել և հրատարակել է Հ. Մալխասյանը):

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը «Ճամբուն վրա» դրամայի մասին է, որը 1907-ի հոկտեմբերի 4-ին ներկայացվել է Բաքվում:

78. Հովհաննես Մալխասյանին

Հոկտեմբերի 25

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, ֆ. 23, ց. 1, պ. 2, թ. 1822:
Տպագրվում է առաջին անգամ:

79. Հովհաննես Մալխասյանին

Նոյեմբերի 15

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, ֆ. 23, ց. 1, պ. 2, թ. 1822:
Տպագրվում է առաջին անգամ:
1.«Ճամբուն վրա» դրաման Նոր Նախիջևանում չի ներկայացվել:

80. Հովհաննես Մալխասյանին

Նոյեմբերի 28

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, ֆ. 23, ց. 1, պ. 2, թ. 1822:
Տպագրվում է առաջին անգամ:

1908

81. Մարիամ Թումանյանին

Հուլիսի 11

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 գ:

Նամակը հատվածաբար տեղ է գտել Մ. Թումանյանի «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» գրքում, էջ 104:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ըստ Մարիամ Թումանյանի հուշերի՝ Շանթը 1908 թ. գարնանը Եվրոպա է գնացել իր դրամական աջակցության չնորհիվ (վերոհիշյալ գիրքը, էջ 104):

2.Հավանաբար խոսքը իր դրամաների Բաքվի ներկայացումներից ստանալիք հոնորարի մասին է:

3.Հայտնի համալսարան Փարիզում:

4.Շանթն արդեն 2 երեխաների հայր էր՝ Սուրենի և Վիգենի:

82. Մարիամ Թումանյանին

Հուլիսի 16

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 դ:

Նամակը հատվածաբար տեղ է գտել Մ. Թումանյանի «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» գրքում, էջ 104-105:

Տպագրվում է ինքնագրից:

1.Մ. Թումանյանին գրած նախորդ նամակում Շանթի հասցեն, որ գրված է սկզբում՝ ամիս-ամսաթվի կողքը, փոքր-ինչ տարբերվում է այստեղ գրվածից. Morge՝ փոխանակ Morges-ի, և միշտ էլ B–ից հետո չէ, այլ նրանից առաջ:

83. Մարիամ Թումանյանին

Օգոստոսի 14

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 ե:

Հատվածաբար տեղ է գտել Մ. Թումանյանի «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» գրքում, էջ 105-106:

Տպագրվում է ինքնագրից:

1.Իր հուշերում Մ. Թումանյանը պրում է, որ ինքը ստիպված է եղել մերժել Շանթի խնդրանքը՝ 200 ռուբլի պարտքով տալ Լոզանից վերադառնալու համար (վերոհիշյալ գիրքը, էջ 105):

2.Այդ նամակը Ստ. Լիսիցյանի ընտանեկան փոնդում բացակայում է:

3.Նկատի ունի երիտթուրքերի հեղափոխությունը և Աբդուլ Համիդի տապալումը:

4.1908 թ. ամռանը Ներսիսյան դպրոցի պատվիրակությունը, որի կազմում են եղել նաև Լեոն և Ավետիս Ահարոնյանը, կրթական հարցերով մեկնել է Եվրոպա: Այս երկուսը շատ են ցանկացել, որ Թումանյանն էլ միանա իրենց, բայց ֆինանսական միջոցների բացակայության պատճառով բանաստեղծը չի կարողացել մեկնել: Այդ մասին հուլիսի 2-ի նամակում Թումանյանը Ավ. Իսահակյանին գրել է. «Մի քանի հարյուր ռ. փող պետք է գոնեի <...> Մի՞թե կարելի բան էր: Ջեղավ: Բայց շատ կուզենայի մի անգամ ընկնեմ էդ աշխարհքը, ինչ որ ականջով լսել եմ մի աչքով տեսնեմ - ժողովուրդներ կան, աշխարհքներ ու տեղեր կան, պատմական հիշատակարաններ կան, կուլտուրա ու գեղարվեստ կա:

Հարկավոր էր, շատ էր հարկավոր: Ես էն գլխից հենց ընտանեկան հոգսերի ու նեղությունների տակ եմ մնացել, շատ եմ հոգնած ու ջարդված. լավ կլիներ, բայց չի լինում» (Տ, էջ 630):

Այուխը Շվեյցարիան է:

84. Հովհաննես Թումանյանին

Սեպտեմբերի 28

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1882 (112):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 378-379, որտեղից էլ արտատպվել է «Մնծերը ամենամնծի մասին» գրքում, էջ 43-44:

Տպագրվում է ինքնագրից:

1.1908-ի սեպտեմբերին Շանթն սկսել է դասավանդել Երևանի թեմական դպրոցում:

2.Թումանյանի կինը:

3.Հավանաբար Շանթի վարձած բնակարանի տիրուհին Թիֆլիսում:

4.Նույն Վարյա Խանդամիրյանն է, որը 1904-ին ամուսնացել է պատմաբան Հակոբ Մանանդյանի հետ:

5.Ջավահիր Ներսիսյանը 2 երեխաների հետ դեռ գտնվում էր Լոզանում:

6.Լևոն Սեղբոսյան, հյուրանոց «Օրիենտ» (ռուս.):

7.Թումանյանը ցանկացել է տեղափոխվել Բեհբության 50 տնից, նույնիսկ բանակցություններ է վարել, բայց տեղափոխությունը չի կատարվել դեկտեմբերին բանաստեղծի բանտարկվելու պատճառով (Տ, էջ 638):

8.Ինչպես երևում է, Լոզանից վերադառնալու համար անհրաժեշտ գումարը դարձյալ ուղարկել է Ստ. Լիսիցյանը:

9.Հավանաբար խոսքը Շանթի՝ Ներսիսյան դպրոցից ստանալիք վերջնահաշվարկի մասին է:

10.Խոսքը «Լուսաբերի» Գ և Դ տարիների մասին է:

85. Հովհաննես Թումանյանին

Նոյեմբերի 23

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1883 (113):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 379-380:

Տպագրվում է ինքնագրից:

1.Դ.Դեմիրճյանը այդ ժամանակ ուսանում էր Շվեյցարիայում և գտնվում էր նյութական ծանր պայմաններում:

2.Դեմիրճյանը բաքու էր ուղարկել իր «Դեպի տիեզերք» պոեմը՝ տպագրելու Բաքվի հայոց հրատարակչական ընկերության միջոցով, բայց այն չի տպագրվել: Քաջազնունին ընկերության հրատարակչական խորհրդի անդամ էր:

3.Ակնարկում է Նոր կտակարանի խոսքը. «...Բայց մարդու Որդին տեղ չ'ունի, որ իր գլուխը դնե» (Մատթէոս, Ը, 20):

4.Քալանթարովի տուն (ռուս.):

5.Նկատի ունի «Շունն ու կատուն» բալլադի պատկերազարդ հրատարակությունը Թիֆլիսում:

6.Նկատի ունի Թումանյանի 10 երեխաներին:

86. Համբարձում Առաքելյանին

Մարտի 18

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հ. Առաքելյանի ֆ., թ. 2200: Տպագրվում է առաջին անգամ:

Նամակն ուղղված է գրող, հրապարակագիր, հաս. գործիչ Համբարձում Առաքելյանին: Շահրիար կեղծանունով պատմվածքներ և վեպեր է տպագրել մամուլում: Նրա «Ջհուդ Բուչան» վեպը (1902) Շանթը անվանել է «աչքի ընկնող երկ» (Լ. Շանթ, Ընդհանուր ակնարկ մը հայ բանահյուսութեան վրա, Երկերի ժողովածու, հ. VII, Երևան, 2013, էջ 541): 1913-1918 թթ. խմբագրել և հրատարակել է «Մշակ» լրագիրը:

1.Թե ինչ պարագի մասին է խոսքը, կամ ինչ առիթի խնդիր է Հ. Առաքելյանի և ինչ-որ պաշտոնի հավակնորդների միջև, պարզել չհաջողվեց:

87. Մարիամ Թումանյանին

<Ապրիլ>

Բնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649ը: Նամակը կիսատ է և անթվակիր:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նամակի գրության մոտավոր ժամանակը որոշվել է ըստ նրա բովանդակության, ավելի ճիշտ՝ այն տողերի, որոնցից պարզվում է, որ ոչ միայն Զատիկը, այլև Ծաղկազարդը դեռ չի անցել, մինչդեռ Հաջորդ՝ թ. 88 նամակը թվագրված է մայիսի 7-ով, երբ ոչ միայն Ծաղկազարդը, այլև Զատիկն էլ է անցել: Հայ առաքելական եկեղեցին Քրիստոսի Սուրբ Հարության տոնը՝ Զատիկը, առնում է մարտի 21-ից ապրիլի 26-ը ընկած ժամանակահատվածում, ուրեմն այս նամակը գրվել է ապրիլին:

2.Նկատի ունի Թումանյանի բալլադներն ու հեքիաթները, որ հրատարակել էր Մարիամ Թումանյանը 1908-ին իր հիմնած «Իշխանուհի Մ. Թումանյան և ընկ.» հրատարակչական ընկերության միջոցով: Այս անավարտ նամակի սկզբում գրված են վերնագրերը և թվերը այն գրքերի, որոնք ամենայն հավանականությամբ Շանթը ցանկանում է առանալ. «Շունն - 10, Ուլիկը - 10, Ծիտը - 10, Աղվեսը - 20, Աքլորը - 20, Գառնիկ - 50»: Այս ցանկը լիովին համընկնում է հաջորդ՝ մայիսի 7-ի նամակում բերված ցանկին, որից վերև գրված է. «Ինձ ուղարկել էիք Սահմանի ձեռքով», իսկ ներքևում՝ «Բոլորը ծախված է կանխիկ 13 րուբլի», այ-

սինքն՝ այս նամակով խնդրած գրքերը մայիսի 7-ին արդեն վաճառված են եղել:

3.Քոմթեչ, որով Շանթը հիվանդացել էր 1909 թ. հունվարին, բուժվելու համար ստիպված էր եղել տանը մնալ 40 օր և այդ ընթացքում գրել էր «Հին աստվածներ» դրաման:

4.Այսինքն՝ ազատ ստեղծագործելու ժամանակ, ինչը, ըստ Շանթի, ինքը կարող էր ունենալ միայն Եվրոպայում: Այդ պատճառով էլ նա միշտ ձգտում էր գնալ Եվրոպա: Այդ մասին չատ լավ գրել է Հ. Թումանյանը 1908 թ. մարտի 18-19-ին՝ ժնևում գտնվող Փ. Վարդազարյանին ուղղված նամակում. «Էլ էն Շանթը – ինքն է էստեղ, միտքը Եվրոպա: Դաս է տալիս տրտնջալով – նրա համար, որ Եվրոպա գնա, դասագիրք է չինում, որ Եվրոպա գնա, պիես է գրում, որ Եվրոպա գնա, վերջապես կնոջն ու երեխաներին արդեն ուղարկել է, որ ինքն էլ ստիպված Եվրոպա գնա...» (ԵԼԺ» հ. 10, էջ 39):

88. Մարիամ Թումանյանին

Մայիսի 7

Բնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 գ:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ակնարկում է Թումանյանի առաջին ձերբակալությունը 1908 թ. դեկտեմբերի 23-ին և բանտարկությունը Մետեխի բանտում, որտեղից գրավով ազատ է արձակվել 1909 թ. հունիսի 13-ին:

89. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 9

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 194:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ստ. Լիսիցյանի որդին, որը գնացել էր Վիեննա՝ ուսանելու:

2.Խոսքը վերաբերում է «Լուսաբերի» արևմտահայերեն տարբերակի հրատարակությանը:

3.«Լուսաբերի» մասին մամուլում եղել են գրախոսականներ, ուր ընդհանուր առմամբ դասագրքերը բարձր են գնահատվել: Մասնավորապես Ն. Աղբալյանը 2 գրախոսական է գրել «Լուսաբերի» Ա և Բ

տարինների մասին (Զանգակ, 1908, թ. 9 և թ. 40), ուր առաջինի մասին ասվում է. «Այս դասագիրքը մեծ ապագա ունի, նա մի ուրախալի երևույթ է մեր կյանքում: Նրանով կարելի է ավանդել մաքուր և հարազատ հայ լեզու, դասը սովորեցնել խաղ ու պարով, վառել երեխայի հետաքրքրությունը և կրթել նրա զգացումներն ու ճաշակը», իսկ երկրորդի մասին Աղբալյանը գրում է, որ այն այնքան հաջողված չէ, որքան առաջինը, բայց «իր պակասությունների հետ «Լուսաբերի» II գիրքը ունի մեծ արժանիքներ»:

Իսկ «Խաթաբալա» երգիծական պատկերազարդ դունավոր ամսագիրը 1907 թ. 31-րդ համարում տպագրել է մի երգիծանկար այն մասին, թե ինչպես են ստեղծվում «Լուսաբերները»: Պատկերված է մի մեծ կաթսա՝ վրան գրված «Լուսաբեր», մեջը եփվում են «Հասկեր» ամսագրի (տե՛ս ծ. 6) համարներ: Թումանյանը աղ է ցանում կաթսայի մեջ, Վահրամ Փափազյանը մի ձեռքով խառնում է կաթսայի պարունակությունը, մյուսով՝ ավելացնում նոր «Հասկեր», Շանթը թեժացնում է կրակը, իսկ քիչ հեռվում կանգնած 3 դպրոցականներ դիտում են այդ ամենը: Նկարի տակ կա գրություն. «Բանաստեղծ Հ. Թումանյանը, գրող Շանթը և ուսուցիչ Ստ. Լիսիցյանը եփում են հարիսա - «Լուսաբեր» մայրենի լեզվի դասագիրք»:

4.Ինչպես երևում է Ստ. Լիսիցյանին գրած հաջորդ՝ թ. 90 նամակից, Շանթը Լոզան էր մեկնել հույսը գրած «Լուսաբերի» վաճառքից ստացած չահույթի իր մասնաբաժնի վրա: Այստեղ խոսքը գրա մասին է:

5.Տե՛ս թ. 9 նամակի 13 ծանոթագրությունը:

6.Մանկական ամսագիր, որ Ստեփան և Կատարինե Լիսիցյանները հրատարակել են 1905-1917 թթ.: Եղել է շատ սիրված, նրան աշխատակցել են Հովհ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Աթ. Խնկոյանը, Ավ. Իսահակյանը, Գ. Բաշինջաղյանը և ուրիշներ:

90. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 1

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 194:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը բանկային արժեթղթերի մասին է, որոնց դիմաց Շանթը պաբերաբար վարկ է վերցրել:

2.Խոսքը «Լուսաբերը» արևմտահայերենի փոխադրելու մասին է:

3.Այսինքն՝ արևմտահայ գրականությունից նյութեր հավաքելը:

4.«Լուսաբերի» «Ուղեցույցը» համատեղ պատրաստել են Ստ. Լիսիցյանը և Շանթը: Լույս է տեսել 1911 թ.:

5.«Լուսաբերի» արևմտահայերեն տարբերակը լույս է տեսել 1911 թ. Հունիս-Հուլիսին Կ. Պոլսում:

6.Ձեռագիրը դժվարընթեռնելի է: Կազմական կանոնագիր ասելով Շանթը ամենայն հավանականությամբ նկատի ունի կանոնադրությունը (տե՛ս թ. 120 նամակի 2-րդ պարբերության սկիզբը):

1910

91. Ստեփան Լիսիցյանին

Հունվարի 4

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդ, 428, ցուցակ 1, թղթ. 195:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Շնաձուկ (ռուս.):

2.Այբբենարան, կազմել են Ավ. Իսահակյանը, Արշակ Զիլինկարյանը և Տիգրան Ռաչմաճյանը: I հրատ.՝ 1909-ին:

3.Թղթի վրա տեղ չլինելու պատճառով մանր ձեռագրով գրված է ամենասկզբում, գրվածին հակառակ:

92. Մարիամ Թումանյանին

Հունվարի 5

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Մարիամ Թումանյանի ֆ., թ. 649 է:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը «Հին աստվածներ» դրամայի մասին է:

93. Հովհաննես Թումանյանին

Փետրվարի 10

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1884 (114):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 381-382, որտեղից էլ արտատպվել է «Մեծերը ամենամեծի մասին» գրքում, էջ 44-46:

Տպագրվում է ինքնագրից:

1.Դեմիրճյանը Լոզանից Թիֆլիս վերադարձել է 1910 թ. ամռանը և հայոց լեզվի ու գրականության ուսուցչի պաշտոն է ստանձնել Գայանյան դպրոցում (Հր. Մուրադյան, Դերենիկ Դեմիրճյան, Երևան, 1961, էջ 27): Ինչպես երևում է, Շանթի՝ այս նամակում բերված մասհզացումը իրականացվել է, այսինքն՝ հայթայթվել են գրամական միջոցներ, և Դեմիրճյանը ևս 4-5 ամիս կարողացել է մնալ Լոզանում:

94. Ստեփան Լիսիցյանին

<Փետրվարի 20>

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 195:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նամակն անթվակիր է, գրության օրը որոշվել է այս ամսաթվով: Նոր տոմարով կլինի փետրվարի 20-ը:

95. «Գարունի»-ի խմբագրությանը

Փետրվարի 23

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Կարեն Միքայելյանի ֆոնդ, թ. 750:

Տպագրվում է առաջին անգամ:

1.«Գարուն» գրական-գեղարվեստական ալմանախը լույս է տեսել 1910-1912 թթ. Մոսկվայում (ընդամենը 3 գիրք): Խմբագրել է «Մոսկվայի գրական խմբակը», որի անդամներն էին Վ. Տերյանը, Ալ. Ծատուրյանը, Յ. Խանզադյանը, Պ. Մակինցյանը, Կ. Կոստիկյանը, Ալ. Մյասնիկյանը և ուրիշներ, իսկ ալմանախի տիտղոսաթերթը ձևավորել է Մարտիրոս Սարյանը:

2.«Ճամբուն վրա» գրաման տպագրվել է «Գարուն» ալմանախի Ա գրքում, էջ 51-104:

3.Խոսքը «Կինը» վիպակի մասին է:

96. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 26

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 195:

Տպագրվում է առաջին անգամ:
1.Ստ. Լիսիցյանի որդին:
2.Այսինքն՝ ճանապարհորդության համար դրամ գտնելը:

97. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 30

Ինքնագիրը բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 196:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նկատի ունի Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության վերաբացումը Կովկասի հայոց հրատարակչական ընկերություն անունով: Մարտին ընտրվել է վարչություն (հրատարակչական խորհուրդ)՝ Ստ. Լիսիցյանի նախագահությամբ, հենց սա նկատի ունի Շանթը հաջորդ տողում:

98. Ստեփան Լիսիցյանին

Ապրիլի 18

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 195:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նկատի ունի Ստ. Լիսիցյանի՝ որդուն՝ Լևոնին գրած նամակը:

2.Տե՛ս թ. 91 նամակի 2 ծանոթագրությունը:

3.Ղ. Աղայանը 1875-ից սկսած մինչև 1916 թ. հրատարակել է «Ոտոմն մայրենի լեզվի» այբբենարանը, ուր տեղ էին գտել նաև Թումանյանի ստեղծագործությունները: Խոսքը այդ գրքից Թումանյանի գրվածքները հանելու մասին է: Այստեղ ավելորդ չէ մեջբերել Աղայանի դատեր՝ Լուսիկի խոսքերը Թումանյանի դատերը՝ Նվարդին. «Հիշում եմ այն օրերը, երբ հայրիկդ մկացավ Լիսիցյանի հետ «Լուսաբերի» համար. դա մի կոնկուրենցիա էր, որը սաստիկ ազդեց պապի նյութականի վրա, չէ՞ որ նախանձողներ էլ կային այդ բարեկամությանը: «Էդ էլ քո Հովհաննեսը»,- ասում էին նրանք: «Թող, ոչինչ, երեխաներ շատ ունի, մեղք է, ես նրան չէի կարողանա ապահովել», - պատասխանում է նրանց պապին: Մի օր էլ եկավ հայրիկդ ու ասաց պապին. «Լիսիցյանը պահանջում է, որ ես բոլոր գրվածքներս հանեմ քո դասագրքից, բայց ես նրան մերժեցի, ասացի. «Ավելի շատ ես «Լուսաբերից» կհրաժարվեմ, քան թե

էդպես բան կանեմ»: Պապեն գրկեց նրան, արտասվեց» (ԵԼԺ, հ. 10, էջ 460): Նույն նամակում (1939, մայիսի 14) Լուսիկ Աղայանը իր հոր և Թումանյանի բարեկամության մասին գրել է. «Դու գրած ես նրանց բարեկամության մասին, բայց դա մի ուրիշ տեսակ բարեկամություն էր, հայրը իր զավակին այնպես չէր սիրում, ինչպես պապեն էր սիրում հայրիկիդ» (նույն տեղում):

4.Տե՛ս թ. 93 նամակը:

99. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 8

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 195:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ավճառս, Թիֆլիսին մոտ գտնվող գյուղավայր:

2.Ի վերջո այդպես էլ տասցվել է. «Լուսաբերի» արևմտահայերեն տարբերակը լույս է տեսել հաջորդ տարվա հուլիսին:

100. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 10

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 195:

Առաջին անգամ տպագրվել է «Դպրություն» թերթում, 1991, թ. 75-76, 29 նոյեմբերի:

Տպագրվում է ինքնագրից:

1.Մատթէոս, Թ, 17. Մարկոս, Բ, 18, Ղուկաս Ե, 37:

2.1906-1908 թթ.:

3.Ձեռագիրը դժվարընթեռնելի է:

4.Ձեռագիրը դժվարընթեռնելի է:

5.Թույլատրված է գրաքննության կողմից (ռուս.):

101. Հովհաննես Թումանյանին

<Հունիս-Հուլիս>

Նամակի ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1894 (118):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 382-383:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նամակն անթվակիր է: Առաջին անգամ հրատարակության պատրաստողները, չգիտես ինչ հիմնավորումներից ելնելով, նամակի գրության ժամանակը վերագրել են 1913 թ. հունվարին՝ ընդ որում առանց նշելու, որ նամակում ամսաթիվը նշված չէ, և դա ընդամենը իրենց վճիռն է: Մինչդեռ նամակի բովանդակությունից և այլ նամակների համադրումից կարելի է եզրակացնել, որ այս նամակի գրության ամենահավանական ժամանակը 1910 թ. հունիսի վերջն է կամ հուլիսի սկիզբը: Այսպես, բովանդակությունից պարզ է, որ Շանթն ու Դեմիրճյանը Լոզանում են, թ. 91 նամակից պարզվում է (հունվարի 4), որ Դեմիրճյանը նոր է տեղափոխվել Լոզան, թ. 93 նամակից՝ որ նա վատառողջ է և գտնվում է ֆինանսական վատ պայմաններում, իսկ այս նամակում (ճիշտ է, այն գրված է կատակային ոճով) Դեմիրճյանի վատ վիճակի մասին խոսք չկա: 1913-ի հունվարին Շանթը չէր կարող Լոզանում լինել, քանի որ այդ ժամանակ գտնվում էր Կ.Պոլսում, նամակներ է գրել հունվարի 7-ին և փետրվարի 10-ին (տե՛ս թ. 115 և 116 նամակները), և անհավանական է, որ նա հասներ Լոզան ինչ-որ գործով (և ի՞նչ գործով), նամակ գրեր Թումանյանին և վերադառնար Կ.Պոլիս. բավական է ասել, որ նա դրա համար դրամական միջոցներ չուներ: Իր մայիսի 10-ի նամակում Շանթը գրում է, որ մեկերկու շաբաթից պիտի գնա Պոլիս՝ պաշտոն գտնելու: Նա Պոլիս գնացել է (այն է՝ Դեմիրճյանից բաժանվել է) հունիսի վերջին (կամ հուլիսի սկզբին), ուրեմն այս նամակը գրվել է մինչ այդ մեկնումը: 1913 թ. հունվարին Դեմիրճյանի՝ Լոզանում լինելու որևէ ապացույց չկա (մանավանդ կարճ ժամանակով): Քննվել են նաև այս նամակը 1909, 1911, 1912 թվականներին կամ 1913-ի այլ ամսի գրված լինելու հնարավորությունները, բայց բոլորն էլ մերժվել են կա՛մ վերը բերված, կա՛մ այլ պատճառներով, որոնք կներկայացվեն կետ առ կետ՝ իրենց տեղում:

2.Խոսքը Թումանյանի բալլադների և հեքիաթների մասին է, որոնք 1908-ի դեկտեմբերից սկսած առանձին գրքույկներով հրատարակում էր Մարիամ Թումանյանը (Տ, էջ 651): Մինչև 1910 թ. լույս է տեսել 11 գրքույկ:

3.Ակնարկում է Թումանյանի առաջին ձերբակալությունն ու բանտարկությունը 1908-ի դեկտեմբերի 23-ից մինչև 1909 թ. հունիսի 13-ը:

4.Խոսքը մանկավարժ, կուսակցական և հաս. գործիչ Գարեգին Խաժակի մասին է: Այս մտադրության մասին ոչինչ հայտնի չէ: Պետք է ավելացնել միայն, որ ըստ «Հայրենիք» ամսագրի՝ Գարեգին Խաժակը 1911-1914 թթ. գտնվել է Կ. Պոլսում (1923, թ. 2, էջ 105: Արտ. Աբեղ-

յանի «Գարեգին Խաժակ» հոդվածը), այնպես որ նույնիսկ ամենամեծ ցանկության և ֆինանսական միջոցներ ունենալու դեպքում Թումանյանը 1913 թ. սկզբին չէր կարող Թիֆլիսում ամսագիր հրատարակել Գարեգին Խաժակի հետ:

5.Լեոն «Հորիզոնի» խմբագրի պաշտոնը ստանձնել է 1909-ի դեկտեմբերին (Անցյալից, 1925, էջ 233) և վարել 6 ամիս (էջ 234), հետո թողել է խմբագրի պաշտոնը, ավելի ճիշտ՝ զիջել է Թումանյանին, իսկ մի քանի ամիս հետո՝ 1910-ի աշնան վերջերին միացել է թերթը խմբագրող Աղայանին և Թումանյանին (նույն տեղում):

6.Թումանյանը «Հորիզոնը» ոչ պաշտոնապես (Հենց սա նկատի ունի Շանթը՝ գրելով «Լեոյի «Հորիզոնի» էջերուն») խմբագրել է 1910 թ. մայիսի վերջերից մինչև 1911 թ. հոկտեմբերի վերջը՝ մինչև իր երկրորդ բանտարկությունը: Այստեղ Շանթը նկատի ունի Թումանյանի 1910-ի հունիսին թերթում տպագրված առաջին թղթակցություններն ու առաջնորդողները:

7.Նկատի ունի «Լուսաբերի» փոխադրվելը արևմտահայերենի:

1911

102. Ստեփան Լիսիցյանին

<1911 թ. սկիզբ>

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 196:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նամակն անթվակիր է. նրա գրության մոտավոր ժամանակը որոշվել է ըստ բովանդակության, ավելի կոնկրետ՝ ըստ հաջորդ նամակի հետ ունեցած բովանդակային կապի:

2.Գրավաճառանոց Կ. Պոլսում:

3.1910 թ. հոկտեմբերից Ստ. Լիսիցյանը զիտական-մանկավարժական, ինչպես նաև առաջնությունը վերականգնելու նպատակով մոտ 1 տարի ապրել է Եվրոպայում, մասնավորապես Վիեննայում:

103. Ստեփան Լիսիցյանին

Ապրիլի 19

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 196:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Շանթի որդին՝ Վիգենը:

2.Ժողովրդական գրավաճառանոց Թիֆլիսում: Ստեղծվել է մի խումբ գրողների (այդ թվում՝ Թումանյանի) և գրասերների նախաձեռնությամբ, օգնում էր հայ հեղինակներին՝ վաճառելու իրենց գրքերը:

104. Ստեփան Լիսիցյանին

<Ապրիլի 21>

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 19

Տպագրվում է առաջին անգամ:

105. Ուսումնական խորհրդի նախագահին

Ապրիլի 29

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Լ. Շանթի ֆ., թ. 4:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ջավահիր Ներսիսյանի՝ Կ.Պոլսի որևէ վարժարանում աշխատած լինելու վերաբերյալ ոչ մի տվյալ չկա:

106. Ստեփան Լիսիցյանին

Սեպտեմբերի 7

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 196:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այդ բուժարանի «սարսափելի անունը» հնարավոր չեղավ ճշտել:

2.Կ. Պոլսի թաղամաս:

3.Կ. Պոլսի թաղամաս:

4.Գրիգոր Խալաթյանցը «Հայոց պատմություն» չի գրել: Թերևս խոսքը այլ հեղինակի գրքի մասին է (կամ էլ Շանթը չփոթել է Խալաթյանցի գրքերից մեկի վերնագիրը):

5.Խոսքը Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի մասին է:

107. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 27

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 196:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ստեղծվել է 1880 թ. «Արևելյան ընկերության» և «Արարատյան ընկերության» միաձուլումով և Արփ. Արփիարյանի ու Մինաս Չերազի ղեկավարությամբ գործել մինչև 1892 թ. (գործունեությունը դադարեցվել է սուլթան Աբդուլ Համիդի հրամանով), ապա 1908-1915 թթ.:

2.ՀՅԴ օրաթերթ, լույս է տեսել Կ. Պոլսում 1909-1914, 1918-1924 թթ. և Թիֆլիսում 1917-1918 թթ.: 1918-1924 թթ. լույս է տեսել «Ճակատամարտ» անունով:

3.Գրական, հասարակական և քաղաքական օրաթերթ, հրատարակվել է Կ. Պոլսում 1908-1936 թթ., վերադացվել է 1945-ին և լույս է տեսնում մինչև օրս: 1912-1925 թթ. կոչվել է այլ անուններով՝ «Հառաձայն», «Ժողովրդի արձագանք», «Ժողովուրդ», «Ավետիս» և այլն:

4.«Արծիվ» դրավաճառանոցի տնօրենը:

5.Կ. Պոլսի թաղամաս:

6.Նկատի ունի վերահաս Բալկանյան առաջին պատերազմը (1912 թ. հոկտեմբերի 9 -1913 թ. մայիսի 30):

7.Նկատի ունի Ստ. Լիսիցյանի «Հայրենի առասպելներից և վիպերից: Պատմվածքներ հայոց պատմությունից» վիրքը, որի պատմվածքները նախապես տպագրվել են «Հասկեր» ամսագրի 1905-1906 թթ. համարներում:

8.Ըստ երևույթին, տառատեսակների ցանկ է:

9.Խոսքը վերաբերում է թուրք գրականությունից արոշ գործեր Հայերեն թարգմանելուն (տե՛ս թ. 116 նամակը):

10.Տեղ չինելու պատճառով մանր ձեռագրով գրված է նամակի սկզբում, գրածին հակառակ ուղղությամբ:

108. Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 20

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 196:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ստ. Լիսիցյանի որդին:

2.Նկատի ունի իր նոյեմբերի 27-ի նամակը:

3.Խոսքը Թումանյանի երկրորդ ձերբակալության մասին է այսպես կոչված «Դաշնակցության գործով» (1911 թ. հոկտեմբերի 31-ին): Բանաստեղծը տեղափոխվել է Պետերբուրգ, ուր 1912 թ. սկզբին տեղի ունեցած դատավարության արդյունքում անմեղ է ճանաչվել և ազատ արձակվել:

1912

109. Ստեփան Լիսիցյանին

Փետրվարի 3

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 197:

Տպագրվում է առաջին անգամ:

1.«Լուսաբերի» արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակների հրատարակությունների հաշիվները պահվում էին առանձին-առանձին:

2.Գրավաճառանոց Թիֆլիսում:

3.Խոսքը Թումանյանի պոեմների մասին է:

110. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 27

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 197:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նշադեղձերի պալարախտ (ֆր.):

2.Իշխանաց կղզիներ, Մարմարա ծովի հյուսիսարևելյան մասում գտնվող կղզեխումբ՝ բաղկացած 9 փոքր կղզիներից, որոնք աչքի են ընկնում գեղեցիկ բուսականությամբ և մեղմ, առողջարար կլիմայով: Ամենամեծ կղզին (Շանթի ասած Մեծ կղզին) Պրինկիպոն է:

3.Հունվարին գրված (եթե գրել է) որևէ նամակ չի պահպանվել: Երևի պետք է լիներ փետրվար (տե՛ս նախորդ նամակը):

4.Կա՛մ վրիպակ է Շանթի կողմից, կա՛մ էլ Շանթը կատակով այդպես է կոչել Լիսիցյանի դստերերին՝ Սրբուհուն և Նազելիին:

111. Ստեփան Լիսիցյանին

<Մայիսի 13>

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 197:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Պետք է լինի՝ «Շող», հաս., մանկավարժական, գրական, վիճական միամսյա, վերջում՝ կիսամյա հանդես, լույս է տեսել Կ. Պոլսում 1911-1913 թթ.:

112. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 14

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 197:

Տպագրվում է առաջին անգամ:

113. Ստեփան Լիսիցյանին

Հուլիսի 24

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 197:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այս այբբենարանի մասին որևէ տեղեկություն գտնել չհաջողվեց:

2.Երգերի ժողովածու, կազմից՝ Հ. Աբայանց: Լույս է տեսել 1912-ին Կ. Պոլսում: Այս անունով այբբենարան գտնել չհաջողվեց:

3.Տե՛ս թ. 107 նամակի 7 ծանոթագրությունը:

4.Խոսքը վերաբերում է Ստ. և Կատարինե Լիսիցյանների մանուկ դպրոցին:

5.Խոսքը վերաբերում է 1910-ին վերաբացված Կովկասի Հայոց հրատարակչական ընկերությանը, որի վարչության նախագահի պաշտոնը նույն թվի աշնանը Ստ. Լիսիցյանը թեև պիղել էր Աբիսա. Ջարդարյանին, բայց մնում էր վարչության անդամ:

6.Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911: Աճառյանի աշխատությունը կոչվում է «Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների»:

7.Խոսքը վերաբերում է Ստ. Լիսիցյանի մանուկ պարապմունքներին:

114. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 7

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 197:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Յավկիս, լեռնա-կլիմայական առողջարան Վրաստանում:

2.Տե՛ս թ. 107 նամակի 6 ծանոթագրությունը:

3.Չհիմնավորված, փորձի և պրակտիկայի վրա չհիմնված (ձևով):

4.Պատվեր (ռուս.):

5.Շանթի այս ցանկությունը չի իրականացել:

6.Կարինի ազգային վարժարանների (Արծնյան, Մսրյան, Տեր-Ազարյան, Գավաֆյան և Նոր Սանասարյան) ընդհանուր տեսուչն էր ՀՅԴ նշանավոր գործիչ Ռոստոմ Զորյանը, որը միաժամանակ տնօրենն էր Նոր Սանասարյան միջնակարգ վարժարանի:

7.Երևի նկատի ունի Նոր Սանասարյան վարժարանը և նրա տնօրենին:

1913

115. Լևոն Լիսիցյանին

Հունվարի 7

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 120:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Լևոն Լիսիցյանը սովորում էր Վիեննայի Համալսարանի պատմության բաժանմունքում:

2.«Կինը» վիպակը առանձին գրքով առաջին անգամ լույս է տեսել 1913 թ. Թիֆլիսում:

116. Ստեփան Լիսիցյանին

Փետրվարի 10

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 3, էջ 124-126:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը վերաբերում է «Հին աստվածների» հաջողության առիթով շնորհավորելուն, դրական դատի ժամանակ պաշտպանելուն և թերթերից դրամայի մասին հոդված-կտրածոներ ուղարկելուն:

2.«Հին աստվածների» տպագրությունից հետո Շանթը դրքի մի քանի հարյուր օրինակ ուղարկել է Թիֆլիսի «Գիր» դրավաճառանոցին (տե՛ս թ. 114 նամակի վերջը), և ընթերցասեր հասարակությունը, մանավանդ մտավորականությունը տպվա վերջին ծանոթ էր Շանթի նոր դրամային: 1913 թ. հունվարի 11-ին՝ դրամայի առաջին ներկայացումից 3 օր առաջ, Թիֆլիսում՝ Տիգրան Նազարյանի սալոնում, կայացել է դրամայի քննարկումը, որի մասնակիցները ընդհանուր եզրակացության չեն եկել, և որոշվել է կազմակերպել նոր քննարկում: Հունվարի 14-ին տեղի է ունեցել դրամայի առաջնախաղը (պրեմիերան), որն է՛լ ավելի է մեծացրել հետաքրքրությունը դրամայի նկատմամբ: Հունվարի 16-ից սկսվել է մամուլի բուռն արձագանքը այս առաջնախաղին: Դրամայի երկրորդ քննարկումը տեղի է ունեցել հունվարի 17-ին, դարձյալ անարդյունք:

3.Գրական դատը տեղի է ունեցել փետրվարի 3-ին և կրկին ավարտվել է անարդյունք: Դատարանի նախագահն էր Տ. Հովհաննիսյանը, դատավորները՝ Ա. Աթանասյանը և Հ. Ամիրխանյանը, մեղադրողները՝ Ա. Հարությունյանը և Մ. Մատենյանը, պաշտպանները՝ Գ. Իփեկյանը և Ստ. Լիսիցյանը, երդվյալատենակալների թվում էին Հովհ. Թումանյանը, Մարիամ Թումանյանը, Արիատ. Զարզարյանը, Գ. Բաշինջաղյանը, Լեոն, Ա. Խատիսյանը: Փետրվարի 7-ին կողմերը շարունակել են բանավեճը և դարձյալ չեն եկել որևէ եզրակացության: Ճիշտ է, «դատը» ոչ մի վճռով չավարտվեց, բայց ապարդյուն էլ չի անցել: Ըստ Դ. Դեմիրճյանի՝ «Դիպուտը վնասելու փոխարեն, ինչպես կրակի վրա ջուրը, ավելի դրդեց երկու կողմերին: Սա այն հետևանքն ունեցավ, որ պիեսը դատավ հայ հասարակության զգայունքի և ուշադրության առարկա, թատրոնը լցվեց նոր հանդիսատեսի բազմությամբ, և Մատենյանը (Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, Շանթի դրամայի դլխավոր քննադատը - Ա.Մ.) մնաց իր «հրաշալի մենակության» մեջ» (Դ. Դեմիրճյան, Եժ 14 հատորով, հ. XIV, ե., 1987, էջ 183):

4.Խոսքը վերաբերում է Շանթի՝ Ստ. Լիսիցյանին ուղարկած լուսապատճենին, որը բերում ենք ստորև:

Համաստեղ

Այս թղթով լիազոր իրավունք կու տամ ընկերոջս՝ Ստեփան Լիսիցյանին

Առաջին՝ թույլատրելու կամ արգիլելու իմ բոլոր դրամանիշերուս ներկայացումը Ռուսաստանի բեմերուն վրա,

երկրորդ՝ պայման կապելու այն ընկերություններուն, դերասանական խմբերուն կամ մասնավորներուն հետ, որոնք իմ դրամաներես մեկը կամ մյուսը ներկայացնել կը ցանկան և

երրորդ՝ ստանալու ամեն մեկ ներկայացումն ինձի հասանելիք հեղինակի վարձը:

1913 փետրվար 10

Կ. Պոլիս *Լևոն Շանթ*

5.Բալկանյան I պատերազմը վերջացել է 1913 թ. մայիսի 30-ին Թուրքիայի պարտությամբ, բայց անմիջապես սկսվել է II-ը (հունիսի 29 – օգոստոսի 10), որն ավարտվել է Բուլղարիայի պարտությամբ և Թուրքիայի ու նրա դաշնակիցների հաղթանակով:

6.Առաջինը առանձին գրքույկով չի հրատարակվել, երկրորդը լույս է տեսել 1914 թ. Թիֆլիսում, երրորդը՝ նույն թվականին Կ. Պոլսում:

7.«Կինը» վիպակը առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտի» «Բագին» գրական հավելվածում 1911 թ. դեկտեմբերին և 1912 թ. հունվարին:

8.Տե՛ս թ. 6 նամակի 10 ծանոթագրությունը:

9.1913-ին Ստ. Լիսիցյանը առանձին գրքույկներով տպագրել է իր «Գազտնիք» («Հասկեր», 1909, թ. 3), «Ազատություն» («Հասկեր», 1906, թ. 11) և «Քեռին» («Հասկեր», 1908, թ. 12) մանկական պիեսները:

10.Սատալյանը (Սաղալյան) Ստ. Լիսիցյանի կեղծանունն է, որով բազմաթիվ պատմվածքներ են տպագրվել «Հասկեր»-ում: Լիսիցյանի որոշ պատմվածքներ լույս են տեսել 1969 թ. «Ծաղկաքաղ» ժողովածուում, իսկ դրանից առաջ ո՛չ առանձին գրքույկներով, ո՛չ էլ ժողովածուով լույս չեն տեսել:

117. Ստեփան Լիսիցյանին

Փետրվարի 23

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:.

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 3, էջ 126-127:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը վերաբերում է «Հին աստվածների» Թիֆլիսի ներկայացումների հանդեպ:

118. Աբրահամ Ներսիսյանին

Մարտի 14

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:

Տպագրվում է առաջին անգամ:

Նամակը թերի է, չկա առաջին մասը: Հասցեագրված է իր կնոջ եղբորը, որն ապրում էր Բաքվում:

1.«Հին աստվածները» Բաքվում չի հրատարակվել:

2.Զարգազծեր և զարդանախշեր:

3.Նկատի ունի իր երեք երեխաներին և ամենափոքրին՝ նորածին Արմիկին:

4.Այս անձնավորության ով լինելը ճշտել չհաջողվեց:

5.Ձեռագիրը դժվարընթեռնելի է:

119. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 26

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 3, էջ 127-129:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ստ. Լիսիցյանը, իրոք, եղել է իր մտերիմ բարեկամի ամենաառաջին և ամենաանկեղծ դնահատողներից մեկը: Իհարկե, որպես քննադատ՝ նա չուներ Ն. Աղբալյանի խորաթափանցությունն ու գրական երևիթը արժևորելու բանիմացությունը: Թերևս հենց սա է պատճառը, որ գրական դատի ժամանակ Լիսիցյանի ելույթները Վ. Վազգրչյանը՝ գրա անմիջական ականատեսը, անվանել է «միակողմային բնույթի» (Վ. Վազգրչյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Ե., 1959, էջ 179):

2.Այս «հեզաչքնման» մասին չատ դիպուկ գրել է Շանթի ևս մեկ բարեկամ՝ Ն. Աղբալյանը. «Իր անօրինակ հաջողությամբ Շանթի գրաման դարձավ հասարակական առաջադիմության մի խթան և ազդակ միան-

գամայն: Արվեստի և իմաստասիրության հարցեր, հոգեբանական և բարոյական խնդիրներ, որ հանրային ուշադրության առարկա չէին դարձած մեզանում, քննության և հետախուզության ենթարկվեցին մի չտեսնված եռանդով: Հայ հասարակական միտքը, որ սնված էր առավելապես քաղաքական խնդիրներով և վերջերս կարծես թմրած էր լիովին, «Հին աստվածների» դրման տակ արթնացավ և սկսեց նոր ուղղությամբ աշխատել: Շանթի դրամայից հետաքրքրությունը անցավ դեպի հայ բեմական արվեստը, հայ դրաման և հայ դրականությունն ընդհանրապես» (Ն. Աղբալյան, Երազ և մեկնաբանում, «Նոր հոսանք», 1913, թ. 1, էջ 167):

3.Խոսքը Ստ. Լիսիցյանի՝ թերթերից կտրած և Շանթին ուղարկած գրախոսությունների մասին է:

4.Խոսքը «Հին աստվածների» բեմականացման իրավունքը միաժամանակ Ստ. Լիսիցյանին (Ռուսաստանի բեմերի վրա, տե՛ս թ. 116 նամակի 4 ծանոթագրությունը) և Աբրահամ Ներսիսյանին (Բաքվում, տե՛ս թ. 117 նամակի սկիզբը) տալու պատճառով առաջացած անախորժությունների մասին է:

5.Նկատի ունի հեղինակային իրավունքի դեմ կատարվող ոտնձգությունները:

6.Տիգրան Բեգզադյանը, որ Հեղինե Մելիք-Հայկազյանի ամուսինն էր և Շանթին լավ ծանոթ անձնավորություն, դրամայի նկատմամբ բոլոր իրավունքները վաճառելու խորհուրդը տվողների կարծիքով ավելի լավ կարող էր պաշտպանել Շանթի հեղինակային իրավունքները:

7.«Հին աստվածները» Թիֆլիսում լույս է տեսել նույն 1913 թ.:

8.Բաքվում, թեև Աբրահամ Ներսիսյանը ավելի շուտ էր ստացել հրատարակելու իրավունքը (տե՛ս նախորդ նամակը), դրաման չի հրատարակվել:

9.Կ. Պոլսում «Հին աստվածները» չի վերահրատարակվել:

120. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 18

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 3, էջ 129-130:

Տպագրվում է ինքնագրից:

1.Այս հրավերը, ամենայն հավանականությամբ, իրականություն չի դարձել:

2.Այսինքն՝ կանոնադրությունը: «Գիր» հրատարակչական-գրավաճառական ընկերության մասին տե՛ս թ. 103 նամակի 2 ծանոթագրությունը:

3.Տիկին Խանազատի (Խանազատյան Շուշանիկ) հոդվածը «Հին աստվածների» մասին տպագրվել է «Տարազի» 1913 թ. 3-րդ համարում, էջ 53-56:

4.«Նոր հոսանք» գրական, գիտական, հասարակական, քաղաքական ամսագիրը Ն. Աղբալյանի խմբագրությամբ լույս է տեսել Թիֆլիսում 1913-1914 թթ.: Ամսագրի թ. 1-ում (մարտ) տպագրվել են Շանթի «Կինը» վիպակի առաջին մասը (էջ 1-33) և Ն. Աղբալյանի «Երազ և մեկնաբանում» հոդվածի առաջին մասը (էջ 167-180)՝ նվիրված «Հին աստվածներին»:

5.Թաղամաս Կ. Պոլսում:

121. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 2

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 3, էջ 130-131:

Տպագրվում է ինքնագրից:

1.Դպրոցական տղա (Ֆր.):

2.Խոսքը «Հասկեր» ամսագրի հրատարակած գրքույկների մասին է:

3.Շանթը Թիֆլիսում եղել է 1914-ի մայիս-հունիսին:

4.Ստ. Լիսիցյանի որդին:

5.Ստ. Լիսիցյանի դուստրը, որը պարարվեստ էր ուսումնասիրում Մոսկվայում:

122. Հովհաննես Թումանյանին

Հոկտեմբերի 8

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1885 (115):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 383-384, որտեղից էլ արտատպվել է «Մեծերը ամենամոծի մասին» գրքում, էջ 46-47:

Տպագրվում է ինքնագրից:

1.Հովհ. Թումանյանի անդրանիկ դուստրը, որը ամուսնու՝ Գևորգ Խատիսյանի հետ մեկնել էր Եվրոպա՝ հարսանեկան ճանապարհորդության:

2.Նկատի ունի Թումանյանի հոդվածները մամուլում և 1912-ին ստեղծված Հայ գրողների կովկասյան ընկերության (նախագահ՝ Հովհ. Թումանյան) նիստերը՝ երեկոները:

3.1913 թ. աշնանը Իսահակյանը գտնվում էր Ժնևում՝ Լեմանի հանդիպակաց ափին (Լոզանի դիմաց):

4.Նկատի ունի Դեմիրճյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն, որը տպագրվել էր Թիֆլիսում:

5.Նկատի ունի Դեմիրճյանի բանաստեղծությունների II ժողովածուի տպագրությունը, ինչպես նաև նրա որդու՝ վաղամեռիկ Արտաշեսի ծնունդը:

6.Հովհ. Թումանյանի երկրորդ դուստրը:

7.Նկատի ունի Թումանյանի 10 երեխաներին:

123. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 24

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում. Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 199:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 3, էջ 131-132:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի իր հոկտեմբերի 2-ի նամակը, ուր գրված է, որ այդ նամակը գրվել է Լոզան ժամանելուց 1 ամիս անց:

2.Այս նամակը չի պահպանվել:

3.Առողջարան Վրաստանում:

4.Այս տողերը հաստատում են, որ 1913 թ. ամռանը ո՛չ Թումանյանը, ո՛չ էլ Ստ. Լիսիցյանը Կ. Պոլսում չեն եղել, և Շանթի հրավերը նրանց՝ Պրինկիպո այցելելու (տե՛ս թթ. 114, 116 և 120 նամակները), մնացել է սոսկ բարի ցանկություն:

124. Ստեփան Լիսիցյանին

Ապրիլի 18

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Տպագրվում է առաջին անգամ:

1.ՀՅԴ նշանավոր գործիչ, ծնվել է Երևանում մոտ 1860-ին, ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Անդամագրվելով ՀՅԴ-ին (եղել է հիմնադիր առաջին սերնդից)՝ բուռն գործունեություն է ծավալել Տրապիզոնում, Կ. Պոլսում և Ժնևում, ուր եղել է «Դրոշակի» խմբագիրներից մեկը: 1896-1898 թթ. գործել է ԱՄՆ-ում, համարվում է գլխավոր հիմնադիրը Ամերիկայի ՀՅԴ կազմակերպության: 1905-ին ընտրվել է Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ, ինքը արմատներով այնտեղից էր) քաղաքապլուխ, բայց ցարական ոստիկանության հալածանքների պատճառով ստիպված է եղել փախչել Շվեյցարիա, ուր էլ երկարատև հիվանդությունից հետո վախճանվել է 1920-ին:

2.Տե՛ս 1913-ի նոյեմբերի 23-ի նամակը:

3.Տե՛ս հաջորդ նամակ-բացիկը:

4.Այդ մտադրությունը իրականություն չի դարձել վերահաս պատերազմի և կոտորածների ու գաղթի պատճառով:

5.«Զարիֆյան - Սևումյան» դերասանախմբի հյուրախաղերը Կ. Պոլսում տեղի են ունեցել 1914 թ. մարտ-մայիսին (Բ. Հարությունյան, XIX-XX դդ. հայ թատրոնի տարեգրություն, հ. 3, Ե., 1981, էջ 163-173):

125. Լևոն Լիսիցյանին

Ապրիլի 24

Ինքնագիր բացիկը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 120:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այս մտադրությունը չի իրականացվել (տե՛ս հաջորդ նամակը):

126. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 13

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Տպագրվում է առաջին անգամ:

127. Հովհաննես Թումանյանին

Հուլիսի 18

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովհ. Թումանյանի ֆ., թ. 1886 (116):

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ, հ. 4, էջ 384-385:

Տպագրվում է ինքնագրից:

1.Այս Սաթենիկի ով լինելը ճշտել չհաջողվեց: Ենթադրաբար կարող է լինել Թարգմանչուհի Սաթենիկ Արտեմյանը (տե՛ս Թումանյան, ԵԼԺ, հ. 10, էջ 124-125, Թումանյանի նամակը):

2.Հովհ. Թումանյանը այդ օրերին ընտանիքով ապրում էր Ջաղվեր առողջարանում:

3.Նկատի ունի Հուլիսին Ավստրո-Հունգարիայի կողմից պատերազմ հայտարարելը Բոսնիա-Հերցեգովինային և Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

128. Ստեփան Լիսիցյանին

< Օգոստոսի 9>

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 123-124:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի Գերմանիայի կողմից պատերազմ Հայտարարելը Ռուսաստանին օգոստոսի 1-ին:

2.Հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Այդ ժամանակ Նոր Նախիջևանի թեմական դպրոցում պատմություն և լատիներեն է դասավանդել:

3.Ռուսական դերասանախումբը Զարայսկայայի և Գրիշինի դեկավարությամբ «Հին աստվածները» ներկայացրել է սեպտեմբերի 11-ին, 12-ին, 16-ին և 22-ին: Դրաման ներկայացվել է Կարա-Ներվիչի (Հակոբ Գենջյան) թարգմանությամբ, ռեժ.՝ Կ. Մարջանով, նկարիչ՝ Մարսիլիոս Սարյան (Ռ. Հարությունյան, XIX-XX դդ. Հայ թատրոնի տարեգրություն, հ. 3, էջ 180):

4.Պետք է լինի՝ Գրիշին (տե՛ս վերը նշված գիրքը, էջ 180):

5.Շանթը «Հին աստվածների» ներկայացմանը ներկա չի եղել, քանի որ օգոստոսի 27-ին դուրս է եկել Նոր Նախիջևանից՝ Օդեսա մեկնելու համար (տե՛ս թ. 130 նամակը):

6.Ռեժիսոր, թատերական գործիչ Ստեփան Քալանթարյանի թարգմանության մասին ոչինչ հայտնի չէ:

7.Դժվար է հաստատ ասել, թե ինչ թարգմանությունների մասին է խոսքը: Ենթադրաբար խոսքը վերաբերում է Թիֆլիսի և Բաքվի ռուսական դերասանական խմբերի բեմադրած թարգմանություններին, Թիֆլիսում՝ Մաժակի (Վ. քահանա Տեր-Ղևոնդյան) և Յա. Իսոլինովի (Ձնմարիայան), Բաքվում՝ Տիգրան Բհգզպյանի: Բաքվում «Հին աստվածները» ներկայացվել է 1914-ի հունվարի 9-ին (Ռ. Հարությունյանի վերոհիշյալ գիրքը, էջ 148 , Թիֆլիսում՝ ապրիլի 30-ի և սեպտեմբերի 29-ին (էջ 170 և 182):

8.Ստ. Լիսիցյանի կլոսաեր դուստրը՝ Նազելին:

129. Ստեփան Լիսիցյանին

Օգոստոսի 25

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Անհասկանալի է, թե ինչու է Շանթը գրել չակերտների մեջ: Եթե խոսքը Զավոյի կամ նրան փող ուղարկելու մասին է, ապա չակերտների կարիք չկար:

2.Հյուսիսային ծովը:

130. Ստեփան Լիսիցյանին

Օգոստոսի 27

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 124-125:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ֆրանսիական չոգենավային ընկերություն: Անունը Շանթը գրել է նաև Միսաժըրի, Միսաժըր ձևերով:

2.Թուրքիան Առաջին Համաշխարհային պատերազմին միացել է երկու ամիս հետո՝ հոկտեմբերի 29-ին՝ պատերազմ հայտարարելով Ռուսաստանին:

3.Վարկը բաց է թողնվել Ջավոյի անունով բանկում գրավ դրված արժեթղթերի դիմաց:

4.Ալեքսանդր Աբելյանը Հայտնի դերասան Հովհաննես Աբելյանի եղբայրն էր:

131. Ստեփան Լիսիցյանին

Օգոստոսի 31

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 125:

1.Ֆրանսիական Մարսել քաղաքը: Այլ նամակներում անունը գրել է ուրիշ ձևով:

2.Հարձակում (ռուս.):

3.Նահանջ (ռուս.):

132. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 11

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 126-127:

Տպագրվում է ինքնագրից:

1.Բառի ճշգրիտ բացատրությունը որևէ բառարանում գտնել չհաջողվեց:

133. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 10/23

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 126:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի իր հոկտեմբերի 11-ի (նախորդ) նամակը:

2.Խոսքը հավանաբար վերաբերում է Թումանյանի պապենական հողերի՝ ապօրինի բռնագրավումից ազատելուն (ԵԼԺ, հ. 10, էջ 185, 1913 թ. հուլիսի 29-ի նամակը Աշխենին) և այդ հողերի հետ կապված ինչ-որ դրծերի:

3.Այդ ծրագրի մասին աղբյուրներում որևէ տեղեկություն պահել չհաջողվեց:

4.Խոսքը «Կայար» պրամայի մասին է:

5.Նամակի նախորդ հրատարակության մեջ, ելնելով ամսաթվում գրված առաջին թվից, այն տեղադրվել է նախորդ՝ հոկտեմբերի 11-ի նամակից առաջ, ինչը ճիշտ չէ: Պետք էր նայել 2-րդ թվին՝ 23-ին, որը, ինչպես և թ. 132 նամակի հոկտեմբերի 11-ը, նոր ոճամարով է: Բացի այս, նախորդ նամակի և այս նամակի տեքստերի համադրումից նույնպես երևում է, որ այս նամակը գրվել է ավելի ուշ. մասնավորապես, նախորդ նամակի վերջում Շանթը գրում է. «Եթե այս նամակիս պատասխանը դու՝ կը գրեմ արդեն մանրամասն», ինչն էլ նա արել է այս նամակով:

134. Աբրահամ Ներսիսյանին

Հոկտեմբերի 10/23

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ի Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդում, 428, ցուցակ 1, թղթ. 200:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այդ նամակը, ըստ երևույթին, հասցեատիրոջը չի հասել և չի պահպանվել:

2.Հավանաբար Բաքվում ապրող ծանոթ ընտանիքներ:

3.Խոսքը դարձյալ «Կայար» պրամայի մասին է:

135. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 18

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Տե՛ս թ. 124 նամակի 1 ծանոթագրությունը:

2.Նկատի ունի Հայության ոգևորությունը և հույսերը՝ կապված պատերազմի բարեհաջող ընթացքի և Արևմտյան Հայաստանի ազատագրման հետ:

3.Դարձյալ նկատի ունի Արևմտյան Հայաստանի ազատագրումը:

136. Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 16

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 200:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 127-128:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը դարձյալ Արևմտյան Հայաստանի վերահաս ազատագրման հետ կապված ոգևորության և կամավորական շարժման մասին է:

2.Շանթը չի դիմացել և հաջորդ տարի վերադարձել է Կովկաս:

1915

137. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 11

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 128:

Տպագրվում է ինքնագրից:

138. Ստեփան Լիսիցյանին

Հունիսի 3

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 128-129:

Տպագրվում է ինքնագրից:

1.Վանը ռուսական զորքերի և հայ կամավորների կողմից ազատվել է 1915 թ. մայիսի 3-ին:

2.Խոսքը վերաբերում է Ստ. և Կատարինե Լիսիցյանների մանկավոր պրոգիմնազիայի՝ գիմնազիայի կարգավիճակ ստանալուն:

3.Նկատի ունի Թումանյանի թարգմանած սերբական ժողովրդական վիպերգը՝ «Թե ինչ ուզարկից Թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն» («Հորիզոն», 25 հունվարի):

139. Ստեփան Լիսիցյանին

Սեպտեմբերի 17

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 129:

Տպագրվում է ինքնագրից:

1.Տե՛ս թ. 124 նամակը:

140. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 6

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 130:

Տպագրվում է ինքնագրից:

141. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 8

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 130-131:

Տպագրվում է ինքնագրից:

1.Հոտառական դեպանը:

2.Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան, էջմիածնի միաբան, եկեղեցական և հանրային գործիչ, բանասեր, այդ տարիներին եղել է Թիֆլիսի և Իմերեթիայի հայկական թեմի առաջնորդը:

3.Հաս., քաղաքական գործիչ, անկախ Հայաստանի վարչապետ 1919-1920 թթ., 1909-1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխը: Հեղինակել է «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» գիրքը:

142. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 18

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 131:

Տպագրվում է ինքնագրից:

1.Շանթի ծննդյան թվականը ընդունված է 1869-ը: Այս մյուս դեպքն է, որ կոնկրետ նշվում է այլ թվական: Տե՛ս նաև թ. 257 նամակի սկիզբը:

2.Փակագծերը Շանթինն են:

143. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 1

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 132-134:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի Հավանաբար Բալկանյան երկրորդ պատերազմը, որը 1913-ի օգոստոսի 10-ին ավարտվել է Բուկուրեշտի պարտությամբ:

2.Հավանաբար խոսքը վերաբերում է Մկքայել Պապաջանյանին, իրավաբան, հանրային գործիչ, 1912 թ. Ռուսաստանի IV Պետական դումայի անդամ:

3.Տպագրվել է ամսագրի 1915 թ. 9-րդ համարում:

4.Խոսքը գործակալ «Կայսր» պրոմայի մասին է:

5.Դրամայի նախկին վերնագիրը եղել է «Նոր Հռոմ» (տե՛ս թ. 134 նամակը):

144. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 12

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 134:

Տպագրվում է ինքնագրից:

145. Ստեփան Լիսիցյանին

<Նոյեմբերի 26>

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 135:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ջերմաստիճանի տանդեմը: Ուզում է ասել՝ հակառակ ցրտին:

146. Ստեփան Լիսիցյանին

<Դեկտեմբերի 10>

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 135:

Տպագրվում է ինքնագրից:
1.Թուլլովություն (անգլ.):

147. Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 26

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 201:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 135-136:

Տպագրվում է ինքնագրից:

1.Այսինքն՝ Բաքվում:

1916

148. Ստեփան Լիսիցյանին

<Փետրվարի 15>

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 202:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 136:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ստ. Լիսիցյանի որդին:

2.Կարինը ռուսական զորքերի և հայ կամավորների կողմից գրավվել է 1916 թ. փետրվարին:

3.Նկատի ունի ռուսական զորքերի նահանջը և Վանի հանձնումը թուրքերին 1915 թ. հուլիսին:

4.Պատմաբան Աստվածատուր Խաչատրյանի «Հին Հայաստանի պատմություն» գիրքը, որը գրվել է Ֆրանսիացի պատմաբան Ն. Դոլենտի հետ միասին և 1907 թ.-ին լույս է տեսել Ֆրանսերեն, հետո՝ Հայերեն: Նույն հեղինակի՝ Արշակունիների մասին գիրք գտնել չհաջողվեց: Ըստ երևույթին, Շանթը Ա. Խաչատրյանին է վերագրել Գր. Խալաթյանցի գիրքը, որը կրում է «Հայ Արշակունիք ըստ Մ. Խորենացվո» խորագիրը (1906):

5.Սրբուհի Լիսիցյանը ուսանում էր Մոսկվայում:

149. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 5

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 202:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 136-137:

Տպագրվում է ինքնագրից:

1.Հայոնի հարստարապետ Թորոս Թորամանյանն է, որն այդ ժամանակ ամենայն հավանականությամբ գտնվել է Թիֆլիսում:

2.Տե՛ս թ. 6 նամակի 6 ծանոթագրությունը:

3.Տիգրան Հովհաննիսյանը Բաքվի Գրասիրաց ընկերության (ավելի ճիշտ՝ Բաքվի հայ գրասերների ընկերության) նախագահն էր: Ընկերությունը հիմնադրվել է 1915 թ. մայիսին և գործել է մի քանի տարի:

4.Տիգրան Բեգզադյանն է՝ Հեղինե Մելիք-Հայկազյանի ամուսինը:

5.Խոսքը ՀՅԴ Բաքվի բյուրոյի մասին է:

150. Ստեփան Լիսիցյանին

Մայիսի 29

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 202:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 137-139:

Տպագրվում է ինքնագրից:

1.Սրբուհի Լիսիցյանը, 1911-1917 թթ. սովորելով Մոսկվայի խոսքի և պարի ստուդիայում, 1917-ին Թիֆլիսում հիմնադրել է Արտաստանության, ռիթմի և պլաստիկայի ստուդիան, որը 1924-ին վերակազմավորվել է Ռիթմի և պլաստիկայի ինստիտուտի:

2.«Կայսրը» առաջին անգամ տպագրվել է 1916 թ. Թիֆլիսում:

3.«Կայսրը» իր ծավալով հավասարվել է «Հին աստվածների» 96 էջին:

4.Նկատի ունի արևմտահայ մտավորականների և հանրային գործիչների համագումարը, որը տեղի է ունեցել 1916 թ. մայիսի 1-ից 11-ը Երևանում:

5.Սրբուհի Լիսիցյանը «Կայսրը» ռուսերեն թարգմանել է (տ՛ես թ. 152 նամակը), բայց այն չի հրատարակվել, և թարգմանության ձեռագիրն

էլ թերևս չի պահպանվել: ՀԱԱ-ի Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆոնդում պահվում են միայն «Հին աստվածների» (428, ցուցակ 2, թ. 270, 92 էջ) և «Կինը» վիպակի (նույնը, թ. 271, 133 էջ) թարգմանությունների ձեռագրերը:

151. Ստեփան Լիսիցյանին

Սեպտեմբերի 13

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 202:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 139:

Տպագրվում է ինքնագրից:

1.«Գիր» ժողովրդական գրավաճառանոցի տնօրենը:

2.Նկատի ունի դրամայի 1914 թ. Թիֆլիսի հրատարակությունը առանձին գրքույկով:

152. Ստեփան Լիսիցյանին

Հոկտեմբերի 12

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 202:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 139-141:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը «Կայսր» դրամայի թարգմանության մասին է (տե՛ս թ. 150 նամակը):

2.Բաքվի արդյունաբերական մասը:

3.Խոսքը Լիսիցյանների մասնավոր պիմնազիայի աշակերտների ծնողների մասին է:

4.Խոսքը հավանաբար Բաքվի Գրասիրաց ընկերության մեջ ունեցած աշխատանքի մասին է:

5.«Արև» գրական, հաս., քաղաքական օրաթերթը (ՀՅԴ օրգան) լույս է տեսել 1914-1919 թթ. Բաքվում: 1913-1914 թթ. լույս է տեսել «Բաքվի ձայն», իսկ 1914-ին՝ «Դործ» անունով:

6.«Կայսրի» առաջնախաղը տեղի է ունեցել 1916 թ. դեկտեմբերի 12-ին Թիֆլիսի Արտիստական թատրոնում, Օհան Դուրգենի դերը կա-

տարել է Վահրամ Փափազյանը, կայսրուհի Թեոփանոյինը՝ Սիրանույշը (Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն, էջ 329): Լ. Հախվերդյանի գնահատմամբ՝ «Ոչ այն չափով, որքան «Հին ատամածնները», «Կայսրը» ևս բեմ հանվելուն պես դարձավ հոդվածների ու քննարկումների առարկա (նույն տեղում):

153. Ստեփան Լիսիցյանին

Նոյեմբերի 2

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 202:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 141:

Տպագրվում է ինքնագրից:

1.Խոսքը «Կայսրի» մասին է:

2.Խոսքը Գյուտ քահ. Ազանյանի (1856-1920) մասին է, բանասեր, հաս. գործիչ, հրատարակիչ, որի ապարանում տպագրվել է «Կայսրը»: Տպարանը եղել է նրա դստեր՝ Նվարդի անունով:

3.Թերևս նկատի ունի նույնանուն լուսավորչական հրատարակչության (Պետերբուրգ, Մոսկվա, 1884-1936) բաքվի բաժանմունքը:

1917

154. Ստեփան Լիսիցյանին

Փետրվարի 5

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 203:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 141-142:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նամակի առաջին հրատ. մնջ՝ աուգանավի արժեքը, ինչը տարբերթերցում է: Շանթը նկատի ունի Բալթիկ և Հյուսիսային ծովերում լողացող զինմանևական աուգանավերի վաճառը:

2.Պահվում է Ստ. Լիսիցյանի ֆոնդում, այս նամակի հետ միասին: Սառև բերվում է ամբողջությամբ:

«Գուրգեն» դերասանական խմբի հարգելի վարչության
Մեծապատի՛վ պարոն Աբելյան:

Ստեփան Լիսիցյանի միջոցով ստացա ձեր վճարած ութսուն և հինգ րուբլին, իբրև վճար «Հին Աստվածներու» մեկ ներկայացման, որը սակայն, ինչպես կ'իմանամ, մուտքեն ինծի հասանելիք տասը տոկոսը չէ, այլ ավելի պակաս:

Ամեն թյուրիմացություն մեջտեղեն վերցընելու համար՝ պարտք կը համարեմ ինքս անձամբ ձեզի գրելու, որ իմ հին պիեսները ներկայացնելու համար, ու՛ր ալ որ ըլլա այդ ներկայացումը և որո՛ւ ձեռքով ալ որ ըլլա, հոնորարը տասը տոկոս է, իսկ նոր պիեսի համար Թիֆլիզ ու Բագու առաջին ներկայացմանը 20%-ը, հաջորդ ներկայացումներու 15%-ը, գավառական մյուս քաղաքներու համար միշտ 10%:

Այնպես որ, հարգելի՛ պարոն Աբելյան, կը խնդրեմ բարի ըլլաք լրացնելու այդ 85 րուբլու մնացած թերին ու Ստ. Լիսիցյանի հետ փակեք այդ մանր հաշիվը, ինչպես և նույնը աչքի առաջ ունենաք ձեր առաջիկա վճարումներու ժամանակ:

Ընդունեցե՛ք խնդրեմ խորին հարգանքս ու բարևներս: Կը ցանկամ հաջողություն ձեր աշխատանքին. Լևոն Շանթ

1917 փետր. 5

Բագու

3.Առաջին հրատարակության մեջ ծանոթագրված է. «Նկատի ունի Բաքվի հայ և ռուս համայնքները»: Ավելի չուտ այստեղ խոսքը Բաքու ժամանած ռուսական պատվիրակության և նրան ընդունող հայերի մասին է:

155. Ստեփան Լիսիցյանին

Փետրվարի 9

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 203:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի Համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 142-143:

Տպագրվում է ինքնագրից:

1.Շանթը այդ ներկայացուցիչների հետ հանդիպել է ամենայն հավանականությամբ Արևմտահայ ուսուցիչների առաջին համագումարում, որը տեղի է ունեցել 1916-ի հունիսին:

2.Տե՛ս թ. 6 նամակի 10 ծանոթագրությունը:

3.Տե՛ս թ. 6 նամակի 10 ծանոթագրությունը:

4.Հաս., քաղաքական և պրակտիկ օրաթերթ (ՀՅԴ օրգան): Լույս է տեսել Երևանում 1915-1919 թթ.:

156. Ստեփան Լիսիցյանին

Մարտի 22

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 203:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 143:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նկատի ունի 1917-ի փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության չնորհած քաղաքացիական իրավունքները:

157. Ստեփան Լիսիցյանին

Դեկտեմբերի 7

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ-ում, Ստ. Լիսիցյանի ընտանեկան ֆ., 428, ցուցակ 1, թղթ. 203:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագրում, 1992, թ. 1, էջ 144:

Տպագրվում է ինքնագրից:

1.Հոկտեմբերյան հեղափոխությունը:

2.Շանթի ձեռագիրը դժվարընթեռնելի է, և այս բառը (ւ հրատարակության բառն է) կողքի բառերի չարքում մի քիչ անհասկանալի է: Դժվարընթեռնելի ձեռագիրը, ցավոք, ճշտելու հնարավորություն չի տալիս:

3.Ավատական, ֆեոդալական կարգեր (ուս.):

4.Պետք է համաձայնել նամակի առաջին հրատարակության հեղինակի այն պնդմանը, որ Մոսկվայում, Պետրոգրադում և Հանուպարհին Շանթի տեսածն ու ապրածը ազդակ են հանդիսացել «Ողթայվածք» դրամատիկ դրվագը գրելու համար (1918):

5.Ջավահիր Ներսիսյանը, մի քանի ամիս լուր չունենալով ամուսնուց, 1917 թ. հոկտեմբերի 1-ին Լոզանից նրան գրել է այս նամակը Ստ. Լիսիցյանի Թիֆլիսյան հասցեով: Բիրում ենք ամբողջությամբ:

Չգիտեմ իսկապես ո՞ւր գրեմ, ինչ հասցեով, քեզնից 2-3 ամսով հաճախ ոչ մի լուր չունիմ, չնայած քո խոր համոզմունքին, որ ես կանոնավոր ստանում եմ: Փողը ստացա սեպ. 5-ին 480 fr., չգիտեմ մինչև ամսվա վերջը կհերիքի թե ոչ: Հուլիսի կեսերին երկու բան էի հարցրած քեզնից ու խնդրած, որ հեռագրով պատասխանես. չե՞ս ստացած, թե կարևոր չե՞ս համարած պատասխանելու Սուրիկին վերաբերյալ. կոլևիժը չկարողացավ շարունակելը, որպեսզի տարին չկորցնի մասնավոր դասերով պարապում է այժմս. մեկը սա էր. մյուսն էլ առաջարկում են նրան Վենետիկ ուղարկելու, գուցե դո՞ւ կուզենայիր: Տիկ. Լալայանցը խնդրում է հանձնել այնտեղ 100 րուբլի. Ներսեսյան դպրոցի աշակերտ IV դասարանում. Արիստակես Տեր-Սիմոնյանցին, ես փոխարենը կատանամ այստեղ 100 fr.: Քո գալը չհասկացա պիտի հաջողի թե՞ ոչ: Վերջի կարտդ, որ նոր ստացա, գրած է հուն. 29-ին, գալոտ մասին ոչինչ չես գրում: Արմիկն էլ գնում է մանկապարտեզ, Վիգենը ամառանոցում մնաց 5 չաբաթ ու եկավ չատ նիհարած, վատ էին խնամած: Շատ եմ ափսոսում, որ այդ նեղ ժամանակ Սուրիկին ստիպված եմ ամսականն մոտ 40 fr. ծախսելու, բայց ինչ անելս չգիտեի:

Համբույրներ բոլորիցս մեր հեռավոր հայրիկին.

Ջավո

Exp. D. Seghossian

Av. Druey 24 a

Բացիկը պահվում է նույն թ. 203 թղթապանակում, ուր պահվում են Շանթի՝ Ստ. Լիսիցյանին 1917 թ. գրած նամակները:

6.Ջաղվեր, առողջարան Վրաստանում:

1918

158. Արտավազդ Հանըմյանին

Հունիսի 30

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Լ. Շանթի ֆ., թ. 5:

Առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտ» թերթի «Վարուժան» գրական-մշակութային հավելվածում, 1994, թ. 6 (19), սեպտեմբեր-հոկտեմբեր: Տեքստը տպագրված է բազմաթիվ տարընթերցումներով և վրիպակներով, որոնք բնականաբար ուղղվել են, իսկ ծանոթագրություններ ընդհանրապես չկան:

Տպագրվում է ինքնագրից:

1.Նամակն ուղղված է կուսակցական (ՀՅԴ), հանրային և քաղաքական գործիչ Արտավազդ Հանըմյանին, որն այդ ժամանակ գտնվում էր Փարիզում (տե՛ս հաջորդ նամակը):

2.Ամենայն հավանականությամբ չեն պահպանվել:

3.Կ. Պոլսում լույս տեսնող լրագիր:

4.Նկատի ունի Անդրկովկասյան կոմիսարիատը՝ բուրժուա-ազգայնական կառավարություն, որն ստեղծվել է 1917 թ. նոյեմբերի 15 (28)-ին՝ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (Օզակոմ, Ռուսաստանի բուրժուական ժամանակավոր կառավարության Անդրկովկասի երկրամասային մարմինը) գործունեության դադարեցումից հետո: Կազմավորվել է մենշևիկների, էսէռների, մուսավաթականների, դաշնակցականների, սոցիալ-ֆեդերալիստների և նրանց պաշտպանող սովետների և արհմիությունների ներկայացուցիչների խորհրդակցությունում, նախագահն էր մենշևիկ Գեգեչկորին, կազմում կային 2 հայ նախարարներ՝ Հ. Օհանջանյան և Խ. Կարճիկյան:

5.Անդրկովկասյան սեյմ, օրենսդիր մարմին, ստեղծվել է 1918 թ. փետրվարի 10 (22)-ին, նախագահն էր վրացի մենշևիկ Չխենկելին:

6.1903-ին որպես բոլշևիզմին (մենշևիզմ) հակառակորդ ձևավորված սոցիալ-դեմոկրատական հոսանքի (փոքրամասնականներ) վրացի (կամ ռուս) ներկայացուցիչ:

7.Մուսավաթական (Հավասարություն բառից), ադրբեջանական բուրժուա-ազգայնական կուսակցության (ստեղծվել է 1912-ին) անդամ:

8.Ըստ երևույթին, Անդրկովկասի 3 երկների միության (դաշնության) կողմնակիցներ:

9.Ազգայնական-դեմոկրատ, հարցական նշանը ցույց է տալիս, որ նրա ազգությունն անհայտ է:

10.Ռուսական լիբերալ - միապետական բուրժուազիայի գլխավոր կուսակցության անդամ: Անունն առաջացել է ռուսերեն КОНСТИТУЦИОННЫЕ ДЕМОКРАТЫ *(սահմանադրական դեմոկրատներ) բառերից: Կային նաև փոքրաթիվ վրացի և հայ կադետներ:*

11.Նույն էսէռներն են՝ մանրբուրժուական կուսակցության անդամները:

12.Ագենտ, գործակալ (ֆր.):

13.Նկատի ունի ապրիլի 9-ին հռչակված Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության (ԱԴՖՀ) պատվիրակության բանակցությունները Թուրքերի հետ 1918 թ. մայիսին:

14.Գերմանացիներ:

15.Թուրքեր:

16.Ռուսաստանի նոր (բոլշևիկյան) իշխանությունը չի ճանաչել ԱԴՖՀ-ն և ամեն ինչ արել է Անդրկովկասի 3 երկրները իր ազդեցության տակ առնելու համար: Ի դեպ, ըստ նոր աղբյուրների՝ ԱԴՖՀ-ն չի ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, բայց ուժ չունենալով՝ համաձայնել է բանակցություններ սկսել Թուրքիայի հետ (տե՛ս, օրինակ, Հայկական հարց հանրագիտարանը, Ե., 1996, էջ 38-39):

17.Ալ. Խատիսյանը, Հ. Քալջազնունին և Ա. Սահակյանը:

18.Ա. Երզնկյանը:

19.Հովհաննես խան Մասեհյան, քաղաքական և հանրային գործիչ, թարգմանիչ:

20.Նկատի ունի Հայաստանի Հանրապետության հռչակումը 1918 թ. մայիսի 28-ին:

159. ՀՅԴ ԱՄՆ-ի կենտրոնական կոմիտեին

Հուլիսի 26

Ինքնագիրը պահվում է Բոստոնի ՀՅԴ կենտրոնական արխիվատունը, թղթածրար 1406, թ. 94:

Տպագրվում է առաջին անգամ:

1.1917 թ. Շանթի «Հին աստվածները» տպագրվել է Բոստոնում, գրքի տպագրությունն ու վաճառքն իրականացրել է Պերպերյան գրավաճառատունը, որի հետ կնքվել է պայմանագիր: Խոսքն այդ պայմանագրի մասին է: Ստորև բերում ենք Շանթի նամակը, որով նա հայտնում է իր համաձայնությունը «Հին աստվածները» Բոստոնում տպագրելու առաջարկին:

Պերպերյան գրատուն – Բոստոն

Հարգելի պարոն,

«Հորիզոն»-ի միջոցով ուղարկած ձեր առաջին նամակը չեմ ստացած: Ցանկություն եք հայտնած, որ «Հին Աստվածներու» նոր հրատարակությունը հանձնեմ ձեզի Ամերիկայի հայ գաղութին համար: Համաձայն եմ: Այլև կը խնդրեմ, որ մանավոր ուշ և խնամք ընեք գիրքիս թղթին, տիպին ու ձևին վայելչությանը: Արտատպեցեք թիֆլիզի օրինակեն. Պոլսի օրինակին մեջ բաց ինկած տողեր և սխալներ կան: Ընդունեցե՛ք խորին հարգանքս, կը ցանկամ ձեզի հաջողություն:

Լևոն Շանթ

1917 Հունվար 8-21
Բագու

(«Հին աստվածներ», Բոստոն, 1917, էջ 1)

1919

160. Արշակ Չոպանյանին

Հունվարի 2

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Արշակ Զոպանյանի ֆոնդ, թ. 5509:

Տպագրվում է առաջին անգամ:

1.«Հայաստանի ձայն», գրական, քաղաքական շաբաթաթերթ, լույս է տեսել Փարիզում 1918-1923 թթ.: Խմբագիրներ՝ Ս. Վրացյան, Ավ. Ահարոնյան:

1921

161. Ա. Մաքսապեդյանին և Սամվել Մեսրոպյանին

Մայիսի 7

Ինքնագիրը պահվում է Բեյրութի Համազգային ընկերության կենտրոնական արխիվում (այսուհետ՝ Բեյրութի ՀԿԱ):

Ըստ Ե. Փամբուկյանի արամագրած տվյալների՝ նամակը վտանգված է Արմենակ Մաքսապեդյանի (Վանենի) «Արևմտահայությունը Լեռնահայաստանում» ձեռագիր մատյանի (1921, Թավրիզ) 124-125 էջերում:

Ա. Մաքսապեդյանը 1918-ին՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո, դարձել է Հայաստանի խորհրդարանի անդամ, իսկ 1921-ին՝ փետրվարյան ապստամբության ժամանակ, նա և Սամվել Մնսրոպյանը եղել են Հայաստանի վրկության կոմիտեի անդամ՝ ներկայացնելով Վասպուրականի զինվորական մարմինը: Այլ տեղեկություններ նրանց մասին գտնել չհաջողվեց:

Նամակի առաջին էջի վերևի ձախ անկյունում 2 ձեռագրով (Ա. Մաքսապեդյանի և Ս. Մնսրոպյանի) գրված է նույն բանը. «Ստացված է մայիսի 14 Արթքսի ափ՝ Դուզլալ»:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Բագուբա, քաղաք Իրաքում՝ Բաղդադից քիչ հյուսիս-արևելք:

2.Բաղաք Իրաքի հարավում:

3.Պարսկաստանի հյուսիսարևմտյան՝ Հայաստանին սահմանակից գավառը:

1922

162. Վահան Փափազյանին

Ապրիլի 17

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Վահան Փափազյան (Կոմս), ՀՅԴ հայտնի գործիչ: Թե երբ են ծանոթացել նա և Շանթը, հստակ տեղեկություններ չկան: Սա Շանթի՝ Վահան Փափազյանին գրած մինչ այժմ հայտնի առաջին նամակն է, իսկ դրանից առաջ Շանթը որևէ տեղ Փափազյանի անունը չի հիշում: Իսկ Փափազյանը Շանթին առաջին անգամ հիշում է 1916 թ. իրենց հանդիպումից. նրանք երկուսն էլ մասնակցել են արևմտահայ մտավորականների և հանրային գործիչների համագումարին (տե՛ս Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. Բ, Բեյրութ, 1952, էջ 439): Երկրորդ անգամ նրանք, ըստ Փափազյանի, հանդիպել են Փարիզի ազգային համագումարի օրերին (1919 թ. փետրվարի 24-ապրիլի 22), մասնակիցների թվում էին նաև Արտավազդ Հանըմյանը, Համո Օհանջանյանը, Ավ. Ահարոնյանը, բժիշկ Արմ. Բարսեղյանը: Ըստ Վ. Փափազյանի՝ Շանթն «այն ատեն շատ գործոն դեր չուներ Դաշնակցության մեջ» (նույնը, հ. Գ, Գահիրե, 1957, էջ 39): Շանթի այս նամակից ևս երևում է, որ մինչև նրա գրվելը նրանք հանդիպել են:

2.Տիգրան Բեզազդյան, Շանթի հին բարեկամը, որը եղել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի անդամ (անկուսակցական): 1919-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ նախ Բաքվում, ապա Թիֆլիսում՝ դրսևորելով իրեն որպես ճեռնհաս և հմուտ դիվանագետ:

3.Լևոն Շանթը և Ս. Վրացյանը միասին են փետրվարյան ապստամբության պարտությունից հետո փախել Երևանից և հասել Ֆրանսիա: Իրենց այդ ոդիսականի պատմությանը նրանք անդրադարձել են հուշերում (Լ. Շանթ և Ս. Վրացյան) ու այլ գրվածքներում (Ս. Վրացյան):

163. Զապել Եսայանին

Մայիսի 8

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Հովսեփ Փուշմանի ֆոնդ, թ. 61:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Հովհ. Թումանյանի առաջարկով Հայ արվեստի առաջին տունը ստեղծվել է Թիֆլիսում 1921-ի մարտին, իսկ Կ. Պոլսում՝ 1921-ի դեկտեմբերին (ծրագիր-կանոնադրությունը հաստատել է Ջալին պատրիարքը 1922-ի փետրվարի 1-ին): Ուներ 34 անդամ և 40 թղթակից անդամ արտասահմանից: Ընդհանուր առենապետն էր Երվանդ Օտյանը, գրական մասնաճյուղի ղեկավարը՝ Կոստան Զարյանը:

164. Սիմոն Վրացյանին

Մայիսի 10

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

Կուսակցական, քաղաքական, պետական գործիչ, մանկավարժ, գրող Սիմոն Վրացյանի և Շանթի ծանոթության և հանդիպումների մասին հետաքրքիր տեղեկություններ է թողել Վրացյանը: Ըստ նրա՝ «Շանթի հետ իմ առաջին ծանոթությունը եղավ գրականությունից, էջմիածնի Գևորգյան ճեմարանում» (Ակոս, 1952, թ. 2-3, էջ 17: Նույնը՝ Լևոն Շանթ: 1869-1969, Բեյրութ, 1969, էջ 23 և Ս. Վրացյան, Անձինք նվիրյալք, Բեյրութ, 1969, էջ 146): Տարիներ անց Գևորգյան ճեմարանի նախկին սանը, որն արդեն կուսակցական-հեղափոխական բուռն գործունեություն էր ծավալել, անձամբ է հանդիպել ճանաչված գրողին. «Շանթի անձը ես ճանաչեցի տարիներ վերջ, թուրքիկ կերպով, Պոլսում, երբ 1910-ի ամառը, փախստական Ռուսաստանից, ընկել էի Ոսկորի ափերը: Մեր հանդիպումը եղավ «Ազատամարտի» խմբագրատանը. Վասիլյանի գրասենյակում: Ինչ մեզքս պահեմ, ես բոլորովին տարբեր պատկերացում ունեի «Դարձի» հեղինակի մասին. ռոմանտիկ աչքինչ չկար նրա մեջ: Արտաքին հագուստ-կապուտան էլ ավելի «գործի մարդու» տպավորություն էին թողնում, քան բանաստեղծի» (Ակոս, էջ 18: Լ. Շանթ, էջ 24 և Անձինք նվիրյալք, էջ 146): Մի քանի տարի անց ուրիշ է տեղծվել ավելի մոտիկից ծանոթանալու Շանթի հետ. Վրացյանը Արմեն Գարոյի և Կոմսի հետ (որը այս հանդիպման մասին չի հիշում) 1913-ին այցելել է Պրինկիպո կղզի՝ Շանթին հյուր (նույն տեղերում) և մի ամբողջ օր անցկացրել նրա հետ: Բայց սա էլ այն մտերմությունը չէր, որը նրանց մեջ հաստատվեց Հայաստանի անկախացումից և Շանթի՝ խորհրդարանի փոխխոսնակ ընտրվելուց հետո՝ 1919-ին. «Այդ օրերից սկսվեց ու խորացավ և մեր անձնական մտերմությունը: Խորհրդարանի իր գրասենյակում մենք հաճախ ուրիշ էինք ունենում զրուցելու օրվա հարցերի շուրջ» (նույնը, էջ 20, էջ 28 և էջ 150): Արկածներով լի փախստյան երևանից անկասկած Հ'լ

ավելի է մոտեցրել արդեն տարագիր դարձած գործիչներին, և նրանց բարեկամությունը չարունակվել է մինչև 1951 թ.՝ Շանթի մահը, ինչից հետո հենց Ս. Վրացյանը ստանձնեց Հայ ճեմարանի տնօրենի պաշտոնը:

1.Այս անունով է 1918-1924 թթ. Կ. Պոլսում հրատարակվել «Ազատամարտ» թերթը:

2.Ընկեր (ռուս.): Նկատի ունի բոլշևիկներին:

165. Վահան Փափազյանին

Հունիսի 10

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը վերաբերում է Փափազյանի նորածին որդու՝ Վասիլիի կնքահայրը դառնալու առաջարկին:

2.Ազգերի լիգա, միջազգային կազմակերպություն, որն ստեղծվել է Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշմամբ 1919-ին՝ խաղաղությունը պահպանելու և ժողովուրդների միջև համագործակցություն զարգացնելու նպատակով: Ազգերի լիգայում ղեկավար դեր էին խաղում Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Գոյություն ունեցավ մինչև 1939 թ.՝ ll համաշխարհային պատերազմի սկիզբը, պաշտոնապես լուծարվել է 1946-ին՝ ՄԱԿ-ի ստեղծումից հետո:

166. Սիմոն Վրացյանին

Օգոստոսի 27

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Տե՛ս թ. 160 նամակի 1 ծանոթագրությունը:

2.Խոսքը Բոստոնի «Հայրենիք» չաբաթաթերթի մասին է, որը հրատարակվում է 1899-ից մինչ օրս (1899-1913 թթ.՝ չաբաթաթերթ, 1913-1915 թթ.՝ երկօրյա, 1915-1991 թթ.՝ օրաթերթ, 1991-ից հետո՝ կրկին չաբաթաթերթ):

Իսկ Բոստոնի «Հայրենիք» ամսագիրը լույս է տեսել 1922-1970 թթ. (առաջին համարը՝ 1922-ի նոյեմբերին): Հիմնադիր և երկարամյա խմբագիր՝ Ռուբեն Դարբինյան (Արտաշես Ջիլինգարյան):

167. Վահան Փափազյանին

Դեկտեմբերի 28

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Մեր բոլոր ջանքերը՝ Շանթի մահրիմների և ծանոթների շրջանում հայտնաբերելու Լաքա մականունով անձնավորության, որևէ արդյունք չտվեցին: Հնարավոր է նույնիսկ, որ այս Լաքան ոչ թե անձ է, այլ, ըստ Ե. Փամբուկյանի, կինոյի արտադրության պրպտվող գերմանական ընկերության:

2.1922-ին Վահան Փափազյանը նշանակվել է Ազգային պատվիրակության (տե՛ս թ. 169 նամակի 3 ծանոթագրությունը) ներկայացուցիչ Բեռլինում (Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. 3, էջ 188):

3.Նկատի ունի Իվան Գոլլի «Квартет» առակը:

1923

168. Սիմոն Վրացյանին

Հունվարի 1

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը «Ինչ է ազգը» հոդվածի մասին է, որը լույս է տեսել «Հայրենիք» ամսագրի թ. 2-ում (1922, դեկտեմբեր), 3-ում (1923, հունվար) և 4-ում (փետրվար):

2.Նկատի ունի «Անհավասարությունը ընկերային կյանքի մեջ» հոդվածը, որը լույս է տեսել «Հայրենիքի» 1923 թ. 12-րդ համարում (հոկտեմբեր):

3.Խոսքը Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետության» աշխատության մասին է: Տպագրվել է «Հայրենիք» ամսագրի 1922 թ. 1-ին (նոյեմբեր), 2-րդ (դեկտ.) և 1923 թ. 3-րդ (հունվար) համարներում:

169. Սիմոն Վրացյանին

Հունվարի 15

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը Լոզանի միջազգային կոնֆերանսի մասին է, որը տեղի է ունեցել 1922-ի նոյեմբերի 20-ից մինչև 1923 թ. հուլիսի 24-ը: Հրավիրվել է Մերձավոր Արևելքում դրությունը կարգավորելու նպատակով՝ Թուրքիայի վրա անգլո-հունական արշավանքի (1919-1922) ձախողումից հետո: Շանթի հոռետեսությունը Լոզանի կոնֆերանսի նկատմամբ լիովին արդարացված է. ստորագրված պայմանագրում Հայաստանի և հայերի մասին որևէ հիշատակություն չկա, թեև կոնֆերանսին մասնակցում էր նաև հայկական պատվիրակությունը Գ. Նորատունկյանի գլխավորությամբ: Այդ պայմանագիրը Թուրքիայի փաստացի հաղթանակն էր Անտանտի երկրների նկատմամբ:

2.Նկատի ունի 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը:

3.Խոսքը այսպես կոչված Ազգային պատվիրակության մասին է, որը, որպես ամբողջական Հայաստանի պատվիրակություն, կազմվել է 1919-ին Պողոս Նուբարի և Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ՝ մասնակցելու Փարիզի (1919), Սան Ռեմոյի (1920), Սևրի (1920) և Լոնդոնի (1921) կոնֆերանսներին, ապա Լոզանի կոնֆերանսին, որից հետո էլ մի որոշ ժամանակ փոփոխված կազմով ոչ պաշտոնական ձևով մասնակցել է Ազգերի լիգայի նստաշրջաններին:

170. Վահան Փափազյանին

Փետրվարի 15

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Տե՛ս թ. 167 նամակը:
2.Տե՛ս թ. 167 նամակի 2 ծանոթագրությունը:

171. Սիմոն Վրացյանին

Փետրվարի 23

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.ՀՅԴ Պատասխանատու մարմինը այդ օրերին փոխարինում էր Բյուրոյին վերջինիս կազմալույծ և ցրված լինելու պատճառով:
2.1923 թ. Վիեննայում տեղի ունեցած խորհրդաժողովը:

172. Սիմոն Վրացյանին

Օգոստոսի 9

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ս. Մասուրյանը «Հայրենիք» օրաթերթի աշխատակից էր: Թե կոնկրետ ինչ նամակների մասին է խոսքը, պարզել չհաջողվեց Հայաստանում «Հայրենիք» թերթի 1922 և 1923 թթ. հավաքածուների խիստ թերի լինելու պատճառով (օր.՝ Հանրային գրադարանում 1922 թ. համարներից կա ընդամենը 3 համար, իսկ 1923 թ. համարներից պակաս է մեծ մասը (170):

2.Խոսքը Նիկոլ Ադալյանի՝ Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային վարժարանի տնօրեն հրավիրվելու մասին է:

3.Տե՛ս նախորդ նամակի 2 ծանոթագրությունը:

173. Արտաշես Դարբինյանին

Սեպտեմբերի 26

Ինքնագիրը ամենայն հավանականությամբ պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում:

Առաջին անգամ տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում, 1962, թ. 11-12, էջ 6-7, որտեղից էլ արտատպվում է:

1.Լևոն Շանթի և ՀՅԴ կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ հեղափոխական և հանրային գործիչ, խմբագիր, գրող Ռուբեն Դարբինյանի (Արտաշես Չիլինգարյան) ծանոթության և մտերմության վերաբերյալ տվյալներ չկան, բացի այն նամակներից, որ գրել է Շանթը «Հայրենիք» օրաթերթի և ամսագրի խմբագրին: Հատուկ կարելի է ասել, որ Շանթին ու Ռ. Դարբինյանը ծանոթ են եղել 1916-1917 թթ., երբ Շանթը ապրում և աշխատում էր Բաքվում, իսկ Ռ. Դարբինյանը խմբագրում էր «Արև» թերթը (1916-1917) և «Գործ» ամսագիրը (1917 թ.): Դարբինյանն ու Շանթը, ըստ երևույթին, ավելի մոտ ծանոթացել են 1918-1920 թթ., իսկ 1922-ին՝ Արտաշես Դարբինյանի ԱՄՆ մեկնելուց և «Հայրենիք» ամսագիրը հիմնելուց հետո, նրանց միջև սկսվել է երկուստեք չհավեհատ համագործակցություն: Շանթի՝ Դարբինյանին գրած նամակները այդ համագործակցության արտահայտություն են:

2.Տե՛ս թ. 168 նամակի 2 ծանոթագրությունը:

3.Նկատի ունի «Ժողովուրդ և մտավորականություն» հոդվածը, որը տպագրվել է «Հայրենիք» ամսագրի 1924 թ. 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ համարներում (հունվար-ապրիլ):

4.Հոդվածը տպագրվել է «Հայրենիքի» 1923 թ. 1-ին (նոյեմբեր) և 2-րդ (դեկտեմբեր) համարներում, ինչպես իր նամակում դրել է Շանթը:

5.Շանթը իր խոստումը կատարել է: «Հայրենիքի» 1924 թ. թ. 3684-ում (հունիսի 13) տպագրվել է «Անժամանակ զբաղում», թ. 3685-ում՝ «Որու համար է գրականությունը», թ. 3686-ում՝ «Վհուկներու կաթսան» և թ. 3687-ում՝ «Ընթերցող հասարակությունը» հոդվածը: Հետագայում այս հոդվածները մաս են կազմել «Գրական երկերուն դերը» աշխատության, որը առաջին անգամ ամբողջությամբ տպագրվել է Բեյրութում 1949 թ. (տե՛ս Լևոն Շանթ, ԵԺ, հ. VI, ե., 2012, էջ 387):

6.Նկատի ունի ՀՅԴ գործիչների հուշերը, որոնք տպագրվել են «Հայրենիք» ամսագրում՝ սկսած առաջին համարից: 1922 և 1923 թթ., մասնավորապես, տպագրվել են Սիմոն Վրացյանի 3 ծավալուն հոդվածաշարերը՝ «Հայաստանի Հանրապետությունը» (1922, թ. 1, 2, 1923, թ. 3), «Էջեր մոտիկ անցյալից» (1923, թ. 4, 6, 10) և «Հուշեր մոտիկ անցյալից» (1923, թ. 1, 2, 3):

174. Սիմոն Վրացյանին

Հոկտեմբերի 31

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

175. Արտաշես Դ-արբինյանին

Նոյեմբերի 8

Ինքնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում, 1962, թ. 11-12, էջ 7-9, որտեղից էլ արտատպվում է:

1.Տե՛ս թ. 173 նամակի 5 ծանոթագրությունը: 5 հոդվածներից տպագրվել են չորսը:

2.«Հին աստվածների» Բոստոնի 1917 թ. հրատարակությունը:

3.«Շղթայվածը» ԱՄՆ-ում (Նյու-Յորք) տպագրվել է 1922 թ.:

176. Սիմոն Վրացյանին

Դեկտեմբերի 27

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նկատի ունի Բաջազնունու «Հ.Յ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս» գրքույկի հրատարակությունը և նրա հետևանքը ՀՅԴ շարքերից 1923 թ. օգոստոսին:

2.Ջորավար Դրոն (Դրաստամատ Կանայան) 1923-ին՝ Մոսկվայում 2 տարի մնալուց հետո, ընտանիքով տեղափոխվել է Եվրոպա և հաստատվել Ռումինիայի Պրեչեի քաղաքում: Ձերակվել է նավթարդյունաբերությամբ (Դրո, կազմեց Ա. Անդրանիկյանը, Ե., 1991, էջ 173, 408: Հ. Գևորգյան, Դրո, Ե., 2007, էջ 605): Բազաքական գործունեությամբ նա չի զբաղվել: Սիմոն Վրացյանը 1926-ին Պրեչեում հյուր է եղել Դրոյին (Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. 1, Գահիրե, 1955, էջ 282 և հետո):

1924

177. Սիմոն Վրացյանին

Հունվարի 18

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

178. Արտաշես Գաբրիելյանին

Փետրվարի 13

Ինքնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում, 1962, թ. 11-12, էջ 9-10, որտեղից էլ արտատպվում է:

1.1925-ին Բոստոնում լույս տեսած գիրքը կոչվում է «Մեր անկախությունը»: Շանթի տասած «Կեղտոնացումները» այդ գրքում չկան:

2.Այդ հոդվածները գրվել և ավելի ուշ տպագրվել են «Հայրենիքում». «Կյանքի դպրոցը», 1924, թ. 10, 11, 12, «Սեան ու նյութը լանուհյուսության», 1927, թ. 3, 4, 5, 7, 9, «Բանահյուսական հարատարակությունն», 1927, թ. 11, 12, 1928, թ. 5, 6, 7, 8, 9, 10, 1931, թ. 9, 10:

3.Խոսքը Դարբինյանի «Մեր պատասխանը Հ. Բաջազնունուն» գրքույկի (1923) մասին է:

179. Սիմոն Վրացյանին

Ապրիլի 14

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այս ներկայացման մասին որևէ տեղեկություն գտնել չհաջողվեց: Հնարավոր է, որ չի կայացել, քանի որ հիշվում է միայն այստեղ:

2.Տե՛ս թ. 172 նամակը:

180. Արտաշես Դարբինյանին

Նոյեմբերի 3

Ինքնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում, 1962, թ. 11-12, էջ 10-11, որտեղից էլ արտատպվում է:

1.Խոսքը Մարսելի ազգային վարժարանի մասին է:

1925

181. Արշակ Չոպանյանին

Հունվարի 23

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Ա. Չոպանյանի ֆ., թ. 5510:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում, 1971, թ. 10, էջ 119-120:

Տպագրվում է ինքնագրից:

1.Արշակ Չոպանյանի գրական և հասարակական գործունեության 35-ամյա հոբելյանը տոնվել է 1924 թ. դեկտեմբերին:

182. Սիմոն Վրացյանին

Փետրվարի 24

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Հովհ. Թումանյանի որդին է, 1921-ին մեկնել է Վենետիկ, ապա Փարիզ, ուր սովորել է Սորբոնի համալսարանում: Թիֆլիս է վերադարձել հոր մահից հետո: 1937-ին ձերբակալվել է ու գնդակահարվել:

2.Նկատի ունի «Հայ գրականության քրեստոմատիան», գ. I, Թիֆլիս, 1909, գ. II, 1910, կազմողներ՝ Հովհ. Թումանյան, Ղ. Աղայան, Վրթ.

Փափազյան: 1914-ին ւ դիրքը վերահրատարակվել է:

3.Խոսքը պատմաբան Սահակ Տեր-Մովսիսյանի «Պատմություն Հայոց» դրքի մասին է (Վենետիկ, 1922):

4.Խոսքը Ս. Վրացյանի և Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյան)՝ 1925 թ. հունվարին Փարիզում կայացած ՀՅԴ 10-րդ ժողովում Բյուրոյի անդամ ընտրվելու մասին է:

5.Ձեռագիրը դժվարընթեռնելի է:

183. Սիմոն Վրացյանին

Մայիսի 20

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» դրքում, ւ հրատարակություն, Բեյրութ, 1958, էջ 608-610: Այս դիրքը 1993-ին տպագրվել է նաև Երևանում (էջ 645-647):

Տպագրվում է ինքնագրից:

1.Բոլշևիկյան Ռուսաստանի կառավարության հետ բանակցելու նպատակով ստեղծված ՀՀ պատվիրակությունը (ղեկավար՝ Լ. Շանթ, անդամներ՝ Համբարձում Տերտերյան և Լևոն Զարաֆյան) Մոսկվա է հասել 1920-ի մայիսի վերջին:

2.Շանթի պատվիրակությունը Մոսկվայից դուրս է եկել օգոստոսի 10-ին և Երևան է հասել սեպտեմբերին:

3.1925-ին Փարիզում սկսել է լույս տեսնել «Յառաջ» օրաթերթը (ՀՅԴ օրգան): Թերթի վերջին համարը լույս է տեսել 2009 թ. մայիսի 30-31-ին:

4.Ենթադրաբար կարող է լինել ՀՅԴ գործիչ Աշոտ Արծրունին:

184. Սիմոն Վրացյանին

Հունիսի 18

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» դրքում, էջ 610-615: Երևանի հրատարակության մեջ՝ էջ 647-652:

Տպագրվում է ինքնագրից:

1.Ձեռագիրը դրեթե անընթեռնելի է, դելեկացիոնն (կամ նման) բառից հետո դրված է հարցական նշան, երևի հասցեատիրոջ՝ Ս. Վրացյանի կողմից:

2.Անընթեռնելի բառից հետո դարձյալ դրված է հարցական նշան:

3.Խոսքը Վերսալի հաշտութեան պայմանագրի մասին է, որը ստորագրվել է 1919-ի հունիսի 28-ին Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած պետությունների և Գերմանիայի միջև: Այս պայմանագրով պաշտոնապես ավարտվել է Առաջին համաշխարհայինը: 1935-ին Գերմանիան, այլևս չհանդուրժելով Վերսալի՝ իր համար չափազանց նվաստացուցիչ պայմանագիրը, միակողմանիորեն լուծարեց այն, ինչն էլ հնարավորություն տվեց նրան մի քանի տարի հետո սանձազերծել երկրորդ համաշխարհային պատերազմը:

185. Նիկոլ Աղբալյանին

<1925, մինչև օգոստ. 9>

*Լևոն Շանթի և Նիկոլ Աղբալյանի ծանոթությունն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 1899 թ. վերջերին, երբ երկուսն էլ դարձել են «Վերնատուն» գրական խմբակի անդամ: Ինչպես ասվել է, «Վերնատունը» գրեթե երբեք չի կարողացել հավաքվել ամբողջ կազմով. միշտ էլ մեկը, երկուսը, հաճախ էլ երեքը բացակայել են: Այնուամենայնիվ, Շանթի կամ Աղբալյանի հաճախակի բացակայությունը չի խանգարել, որ նրանք դառնան բարեկամներ: Այդ մասին վկայում է Շանթի՝ Հովհ. Թումանյանին և Մարիամ Թումանյանին 1900-ական թթ. գրած նամակներում հաճախակի հանդիպող Աղբալյանի անունը: Հին ընկերների բարեկամությունն իսկական մտերմության է վերածվել 1918-ին Հայաստանի անկախության հռչակումից հետո, երբ Աղբալյանը 1919-ին դարձել է հանրային կրթության նախարար, իսկ Շանթը՝ խորհրդարանի փոխխոսնակ: Այդ օրերի նրանց մտերմությունը լավագույնս ներկայացրել է Սիմոն Վրացյանը. «Ես չգիտեմ՝ մտերիմ, սրտակից ընկերներ չա՞տ ուներ Շանթը Հայաստանում: Նրա հոգու խորքը, առհասարակ, դժվար էր թափանցել, մեկը կար, սակայն, որից անքաժան էր նա - Նիկոլ Աղբալյանը: Զարմանալի էր այդ զույգի մտերմությունը: Բնավորությամբ ու խառնվածքով բոլորովին հակոտնյա մարդիկ էին նրանք - երկու տարբեր բևեռներ, բայց ի՞նչ մտերմություն կար նրանց հարաբերությունների մեջ, ի՞նչ անկեղծ ընկերականություն: Երկուսի հետ էլ ես մտիկ էի, բայց չեմ հիշում մի դեպք անհամաձայնության կամ վեճի: Ճիշտ է, տեղի ավողը միշտ Աղբալյանն էր լինում, բայց Շանթի բերանից էլ երբեք չեմ լսել մի դառն խոսք Նիկոլին ուղղված: Անբացատրելի մի կապով բնությունը միացրել էր այդ երկու տարամերժ անհատականությունները, իբրև հոգեբանական տարօրինակ մի առեղծված» (**Լևոն Շանթ, 1869-1969, էջ 34: Նույնը՝ Ակոս, 1952, թ. 2-3, էջ 27 և Ս. Վրացյան, Անձինք նվիրյալք, էջ 158):**

1920-ի դեկտեմբերին՝ իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց չատ չանցած, երկուսն էլ բանտարկվել են, և նրանց ևս սպասում էր կացնահար լինելու ճակատագիրը, եթե վրա չհասներ 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը: Մի կերպ մահից խույս տալով՝ ապստամբության պարտությունից հետո նրանք փախել են արտասահման, Աղբալյանը՝ Թավրիզ (մինչև 1923 թ.), ապա Ալեքսանդրիա, Շանթը՝ Մոնպելիե (1922-ին): 1926-ին Շանթը մանկավարժական աշխատանքի է անցել Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային վարժարանում, որի տնօրենը Աղբալյանն էր. երկու բարեկամները զարմյալ միասին էին: Իսկ 1929-ին՝ Բեյրութում Հայ ճեմարանի հիմնադրումից հետո, նրանց կյանքը լիովին կապվեց այս հաստատությանը, որի 2 տնօրէններն էին նրանք մինչև 1947 թ.՝ մինչև Աղբալյանի մահը:

Նամակի ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Նամակն անթվակիր է, թվագրվում է ըստ բովանդակության: Ճիշտ է, ըստ Աղբալյանի գրառի՝ Դորայի հուշերի՝ կարող է գրված լինել նաև 1926-ին (տե՛ս Հաջորդ ծանոթագրությունը), բայց համադրելով այս և հաջորդ նամակներում եղած փաստերը՝ կարծում ենք, որ ավելի հավանական է 1925-ը:

2.Խոսքը վերաբերում է Աղբալյանի ընտանիքի՝ կնոջ և 3 երեխաների, ինչպես նաև Թագուհու (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը)՝ արտասահման մեկնելու իրավունք ստանալուն: Այդ իրավունքը Աղբալյանի ընտանիքը այդպես էլ չի ստացել, և քանի որ ինքը՝ Աղբալյանն էլ տարբեր պատճառներով չէր կարող վերադառնալ Հայրենիք, վաստորեն ամբողջ 26 տարի (1921-1947) Աղբալյանն ու նրա ընտանիքը ապրել են իրարից հեռու, նա միայն կնոջը՝ Հրաբփիին է տեսել Թավրիզում երեի 1923 թ. (տե՛ս Ս. Վրացյան, Անձինք նվիրյալք, էջ 204): Տարիների հետաձգությունից Դորա Աղբալյանը այսպես է ներկայացրել խորհրդային իշխանության՝ Աղբալյանի ընտանիքի մեկնելը չթույլատրելու պատմությունը (վերաշարադրված է հոդվածագրի կողմից). «1926 թվականին Աղբալյանի կինը դիմել էր ՉեկԱ՝ խնդրելով թույլ տալ ընտանիքով տեղափոխվել Եգիպտոս: Ամեն ինչ լավ էր ընթանում: Նրանք վաճառեցին այն ամենը, ինչը արժեք էր ներկայացնում, երեխաները հրաժեշտ տվեցին իրենց ընկերներին: Դորան կոնտրաբասորիա հանձնեց թանկոնքը: Վերջապես ազատվում էր չարած գործիքից, հայրիկը այնտեղ վերջապես իր համար կգներ ցանկալի դաշնամուրը: Հայտնի էր օրը, նույնիսկ նավը, որով մեկնելու էին Բաթումից: Ընտանիքի հայրը Եգիպտոսից պետք է գնար Աթենք՝ նրանց դիմավորելու... Այդ օրը բոլորը սպասում էին մորը, որը

գնացել էր մի վերջին փաստաթղթի ետևից: Նրա՝ դռների մեջ երևալն ու հատակին թրմփալը մեկ է եղել: Մեկնումը մերժված էր: Իսկ պատճառաբանությունը հետևյալն էր. «Դուք կմնաք որպես պատանդներ, որպեսզի Ձեր ամուսինը այնտեղ կուսակցական գործունեություն չծավալի» («Հայուհյուն» երկշաբաթաթերթ, 1993, թ. 7, Ալիս Հովհաննիսյան, Աղբալյանների ընտանիքը): Թերևս հենց այս էր պատճառը, որ Աղբալյանը, Շանթի հետ համեմատած, ավելի մեղմ էր տրամադրված ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

3.Թագուհին եղել է Աղբալյանի երեխաների դայակը, ընտանիքին նվիրված, հարգված ու սիրված կին: Մինչև 1914 թ. նա եղել էր Շանթի երեխաների դայակը, և հենց Շանթի երաշխավորությամբ էր նա մտել Աղբալյանների ընտանիք: Երբ Աղբալյանների ընտանիքը 1925-ին (կամ 1926-ին) պատրաստվում էր հեռանալ Հայաստանից, Թագուհին նույնպես ցանկացել է միանալ նրանց և մերժումից հետո մինչև իր մահը՝ 1953 թ., եղել է Աղբալյաններից անբաժան (տե՛ս վերը նշված հոդվածը):

186. Նիկոլ Աղբալյանին

Օգոստոսի 9

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Փարիզի Շավիլ արվարձանը:

2.Խոսքը, ամենայն հավանականությամբ, Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային Մարսելի վարժարանի մասին է:

1926

187. Նիկոլ Աղբալյանին

Մարտի 17

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը գերմանացի մանկավարժ Ֆրիդրիխ Ֆրյոբելի մանկավարժական ուսմունքի մասին է, համաձայն որի մեծ ազատություն էր տրվում երեխաներին նրանց ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:

2.Մարիա Մոնտեսորի, իտալացի մանկավարժուհի, ստեղծել է մանկավարժական մի մեթոդ, որը ուսուցման գործընթացում հենվում էր երեխաների հիշողության զարգացման վրա:

3.Տիար Անտոնը եղել է ՀՅԴ «Դրոշակ» թերթի «խմբագրատան քարի և անձնվեր պահապանը» (Վիգեն Խահակյան, Հայրս, Ե., 2011, էջ 7, 46): Գրքում Վ. Խահակյանը չկրճ ստղեր է նվիրել տիար Անտոնին, որի հետ Լոզանում հանդիպել է 1918 թ., երբ ընդամենը 8 տարեկան էր:

188. Նիկոլ Աղբալյանին

Սեպտեմբերի 24

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային վարժարանի մասին է, ուր 1926 թ. աշխատանքի է անցել Շանթը:

1927

189. Նիկոլ Աղբալյանին

Օգոստոսի 21

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ամենայն հավանականությամբ սխալագրահայ գրող Սիրան Սեզան է:

2.Այս անունով լեզվաբան ոչ մի աղբյուրում գտնել չհաջողվեց:

3.Այդ ազգանունը ևս ոչ մի աղբյուրում գտնել չհաջողվեց:

4.Խոսքը Շանթի «Հայերենի գրավոր դասեր» աշխատության մասին է, որի Ա, Բ, Գ, Դ տարիները երկու գրքով լույս են տեսել 1927-ին Փարիզի «Նավար» տպարանում:

190. Նիկոլ Աղբալյանին

Հոկտեմբերի 1

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ձեռագիրը դժվարընթեռնելի է: Բառը թողել ենք ե. Փամբուկյանի ընթերցումով, բայց, թվում է, պետք է լինի էքսպեդիսիոնի, որը ֆրանսերեն նշանակում է առաքում (доставка): Խոսքը, ըստ երևույթին, փոստային առաքման մասին է:

2.Շանթի որդին:

191. Նիկոլ Աղբալյանին

<1926-1928>

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Գրության ամսաթիվը և գրվելու վայրը բացակայում են: Հիշատակված անուններից կարելի է եզրակացնել, որ գրվել է Կահիրեում 1926-1928 թթ. ընթացքում, երբ Լ. Շանթն ու Ն. Աղբալյանը միասին գտնվել են այդ քաղաքում:

2.Գասպար Իփեկյան, կուսակցական և հանրային գործիչ, Լ. Շանթի դրամաների բեմադրիչն ու նրա մտերիմ բարեկամը:

3.Խոսքը Հայոնի դիվանագետ, հանրային, պետական և քաղաքական գործիչ Գաբրիել Նորատունկյանի ընտանիքի մասին է, որն այդ ժամանակ ապրում էր Ալեքսանդրիայում:

192. Համո Օհանջանյանին

Հունիսի 25

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

Առաջին նամակն է, որ Լ. Շանթը գրել է բժիշկ, կուսակցական, հանրային, քաղաքական և պետական գործիչ, անկախ Հայաստանի երրորդ վարչապետ, Համազգային կրթական և հրատարակչական ընկերության նախագահ Համո (Համազասպ) Օհանջանյանին: Թե երբ են նրանք ծանոթացել և ինչ պայմաններում, դժվար է հստակ ասել: Հազիվ թե դա պատահած լինի 1897-1899 թթ., երբ Օհանջանյանը գտնվում էր Թիֆլիսում, իսկ Շանթը այդ թվականներին Թիֆլիսում եղել է մի քանի ամիս՝ 1897-ի սկզբին և 1899-ի վերջերին: Քիչ հավանական է նրանց ծանոթությունը նաև 1902-1908 թթ., երբ Օհանջանյանը գործում էր Թիֆլիսում, իսկ Շանթը՝ հիմնականում Թիֆլիսում էր. հատկանշական դեպս, Շանթի այդ թվականների նամակներում Օհանջանյանի անվանը չենք էլ հանդիպում: Ամենահավանական տարբերակն այն է, որ նրանք ծանոթացել են 1910-ականների վերջերին, երբ 1916-ին աքսորից վերադարձած Օհանջանյանը, իսկ 1919-ին նաև Շանթը ծավալել են քաղաքական բուռն գործունեություն: Նրանց մտերիմ եղած լինելու վերաբերյալ մենք ապացույցներ չունենք, բայց քանի որ երկուսն էլ Կահիրեի Համազգային կրթական և հրատարակչական ընկերության հիմնադիր անդամների թվում են (տե՛ս ծանո-

թագրություն 3), ուրեմն նրանք եղել են բավականաչափ մտերիմ, որպեսզի համառեղ նման գործ ձեռնարկեին: Շանթի՝ Օհանջանյանին գրած նամակները հիմնականում վերաբերում են 1929 թ. Բեյրութում հիմնադրված Հայ ազգային ճեմարանի գործունեությանը, ինչպես նաև Բեյրութի համազգային ընկերության հիմնադրմանը: Մեր ձեռքը հասած վերջին նամակը, որ Շանթը գրել է Օհանջանյանին, թվագրված է 1947 թ. փետրվարի 12-ով (տե՛ս թ. 259 նամակը), այսինքն՝ Օհանջանյանի մահից քիչ առաջ:

1.Խոսքը Կահիրեի Համազգային ընկերության կանոնագրության մասին է:

2.Նավասարդյան Վահան, Կահիրեի «Հուսարեր» օրաթերթի խմբագիրը, կուսակցական և հանրային գործիչ:

3.Համազգային կրթական և հրատարակչական ընկերության հիմնադիր անդամներն են Համո Օհանջանյանը, Սահակ Եսայանը, Գասպար Իփեկյանը, Նիկոլ Ադրոյանը, Լևոն Շանթը, Մինաս Խաչատուրյանը, Սեդրակ Պալըգճյանը, Սարգիս Մալխասյանը և Հակոբ Պալըգճյանը: Ընկերությունը եղիպտական իշխանությունների կողմից վավերացվել է մի քանի ամիս հետո և սկսել իր բուռն գործունեությունը, որի կարևոր կետերից մեկը ազգային վարժարանի (Հայ ճեմարան) բացումն էր (տե՛ս հաջորդ նամակները):

4.Խոսքը Համազգային ընկերության Ալեքսանդրիայի մասնաճյուղի մասին է:

193. Համո Օհանջանյանին

Օդեսսա 2

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը Համազգային ընկերության մասնաճյուղերի և առաջին հերթին Բեյրութի մասնաճյուղի մասին է: Վերջինս Լիբանանի նեղքին գործերի նախարարության կողմից թեև պրանցվել է որպես առանձին ընկերություն, այնուամենայնիվ փաստացի այն Կահիրեի ընկերության մասնաճյուղն էր:

2.Նամակի սկզբում թվարկված անձինք՝ Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյանը), Արշակ Ջամալյանը, Շավարշ Միսաքյանը և բժիշկ Տեր-Դավթյանը:

194. Նիկոլ Աղբալյանին

Սեպտեմբերի 19

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը դարձյալ 1928-ի մայիսի 28-ին հիմնադրված Համազգային ընկերության մասին է:

2.Այսինքն՝ ՀՅԴ կուսակցության:

195. Համո Օհանջանյանին

Սեպտեմբերի 24

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

Խոսքը 1929-ի ապրիլ-մայիսին Փարիզում տեղի ունեցած ՀՅԴ 10-րդ ընդհանուր ժողովի մասին է, ուր վավերացվեց Համազգային ընկերության՝ Շանթի և Աղբալյանի ծրագիրը:

196. Համո Օհանջանյանին

Հոկտեմբերի 26

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ինչպես պայմանավորվել էին Շանթն ու Հ. Օհանջանյանը (տե՛ս թ. 193 նամակը), վերջինս 1928-ի սեպտեմբերի 20-ին նամակ է գրել մեծահարուստ բարերար Գալուստ Գյուլբենկյանին և ստացել հետևյալ պատասխանը՝ գրված ֆրանսերեն (նամակը բերվում է ամբողջությամբ):

Փարիզ, Հոկտեմբեր 1, 1928

Պրն. Օհանջանյանին

Գահիրե

Սիրելի պարոն Օհանջանյան:

Ստացա սեպտեմբեր 20 թվակիր Ձեր նամակը և չահագրգռությամբ կարդացի անոր պարունակությունը:

Շատ կը գնահատեմ ազգային գրականության ժառանգությունը պաշտպանելու Ձեր փափաքն ու ճիգերը: Այսուհանդերձ, թերևս կ'անգիտանաք, որ ամեն կողմե ինծի կը դիմեն՝ լայն չափերով բարոյապես և նյութապես օժանդակելու համար ձերինին նմանող ծրագիրներու: Այս

վերջին ամիսները միայն ես նպաստեցի Փարիզի մեջ Մխիթարյաններու վարժարանի մը հիմնադրութեան, հանձն առնելով տասը աշակերտներու թոշակը՝ տարեկան 60.000 ֆրանքի հատկացումով: Մյուս կողմն, Վիեննայի Մխիթարյանները և ավելի կամ նվազ կարևոր բազմաթիվ ուրիշներ, ոչ միայն Արևելքի, այլ նաև Եվրոպայի մեջ, իմ վրաս դրած են իրենց հույսը՝ իրենց օգնության հասնելու: Կ'ըմբռնեք, թե հնարավոր չէ դադարեցում տալ ամենուն: Ես չեմ ալ հավատար արդեն, որ ալ ու ձախ ցրված բոլոր այս ճիգերը, որոնցմե յուրաքանչյուրը իր հետապնդած նպատակը լավագույնը կը համարե և իր դլուխը ունենալով մեր ազգի ամենեն հայտնի անձնավորութիւնները՝ ավելի օժանդակութիւն կը պահանջեն, քան մյուսները, մեծ հաջողութիւն կարենա դտնել:

Դուք տեղյակ պետք է ըլլաք, որ ես միշտ պատմագիր եղած եմ բարեկամաբար օգնելու, բարոյապես և նյութապես, Ձեր այսօրվան բարեկամներուն, որոնց միշտ ալ կ'օգնեմ: Բայց չեմ կրնար հասնիլ բոլոր այս ծրագիրներուն: Ես ինքս ունիմ զազափարներ, զորս կ'ուզեի իրագործել, երբ նպաստավոր պայմաններ ներկայանան:

Կը հուսամ, թե պիտի ըմբռնեք այս նամակիս պատմաբանական իմաստը, և կը խնդրեմ, որ հավատաք ինծի:

Մնամ, սիրելի պարոն Օհանջանյան, բարեկամաբար և անկեղծորեն Ձերդ՝

Գ. Ս. Կյուլպենկյան

(Համազգայինի և Ն. Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակ, Պեյրութ, 1954, էջ 29-30):

2.Վահան Խորասանջյանի հետ Շանթն այլևս չի հանդիպել, իսկ նրանից առացված դրամական օգնությունն էլ աննշան է եղել: Վերհիշյալ դրքում այս առիթով կարդում ենք. «Գ. Կյուլպենկյանն նաք Համազգայինը կը դիմե Լ. Շանթի և Ն. Ադրպյանի միջոցով նաև Վ. Խորասանճյանին: Վերջինս ինքը նպաստակ ունեցած է հիմնելու «Նավասարդ» անունով մշակութային ընկերութիւն մը, բայց գործը չի հաջողիր: Համազգայինի վարչութիւնը կը կարծե, թե այդ անհաջողութենեն նաք Վ. Խորասանճյան կը մտահոգնա Համազգայինին, բայց իզուր: «Նույն վերաբերումն ունեցած է նաև Խորասանճյան»,- կ'ըսե ընկերութեան հիմնադիր անդամներու Առաջին ընդհանուր ժողովի արձանագրութիւնը:

Այսպիսով հայ պուրժուազիայի մեծագույն ներկայացուցիչները ոչ միայն պատմագիր չեն նյութապես օժանդակելու Համազգայինին, այլև հետու կը փախչին անկե: Համազգայինը ակնկալված նյութական ապրյուրները չունեցավ» (նույն տեղը):

197. Համո Ohանջանյանին

Դեկտեմբերի 23

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1929

198. Համո Ohանջանյանին

Մայիսի 10

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը ՀՅԴ X ընդհանուր ժողովի մասին է:

2.Բեյրութը Լիբանանի մայրաքաղաքն է, այն է՝ Սիրիայում չէ (և չի եղել), պարզապես Լիբանանը 1920-ից, իսկ Սիրիան 1925-ից մինչև 1943 թ. գտնվել են Ֆրանսիայի խնամակալության (մանդատ) ներքո, ինչն էլ Շանթին և այլոց հիմք է տվել այդ երկրները մեկ ամբողջություն համարելու:

3.Խոսքը վերաբերում է Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային վարժարանի շուրջ բարձացված աղմուկին մասնավորապես և ՀՅԴ-ական վարներ հակամարտությանն ընդհանրապես: «Լ. Շանթ և Ն. Աղբալյան կը վարեին Աղեքսանդրիո Պողոսյան վարժարանը: Անոնք ջերմ կողմնակից էին բարձր վարժարանի մը հիմնադրության և իրենց խնամքին հանձնված դպրոցը կը տանեին այդ ուղղությամբ: Բայց հայ դպրոցին շուրջ տևական տարիներեն ստեղծված դավադրությունները հարցին նոր գունավորում կուտան և Աղեքսանդրիո Պողոսյան դպրոցի շուրջը առաջացած աղմուկը և հակառակորդներու դավադրությունները կու գան առաջադրված հարցին նոր ձևավորում տալու: 1927-ին դպրոցին շուրջը մղվող պայքարը կը հասնի իր գագաթնակետին. դպրոցը չէր էական և Աղեքսանդրիո մեջ մղված պայքարը լոկ մեկ արտահայտությունն էր գաղութահայության երկու հատվածներուն մեջ մղվող պայքարին: Պայքարը քաղաքական բնույթ ուներ: Հակառակորդը երբեմն չատ անպարկեշտ միջոցներով կը ջանար վարկաբեկել մեր ակնառու մտավորականները և մեկուսացնել զանոնք դպրոցական և հասարակական հաստատություններեն: Հակառակորդները կ'աշխատեին ջնջել և դուրս վանել մեր դպրոցներեն ազգային քաղաքական մտածողությունը, որ սերտորեն կը կապվեր Հ.Յ. Դաշնակցության հետ: Պետք էր մաքրել դաշնակցական մտավորա-

կանայքերն և պրծիչներն մեր պլրոցները, եկեղեցիները, առաջնորդարանները, մարզական միութիւնները:

Աղեքսանդրիա պայքարը կլանած էր բոլոր ուժերը. միայն Լ. Շանթը մասնակից չէր այդ կռիւներուն» (Համազգայինն և Նշան Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակ, էջ 13):

Հենց այս պայքարն է եղել պրպիչներից մեկը, որ Շանթին ու Ադրալյանը ստեղծեն սեփական կրթօջախը:

4.Հայրենակցական միութիւնները Արեւմտյան Հայաստանից և Կիլիկիայից ԱՄՆ գաղթած համերկրացի (համաքաղաքացի, համագյուղացի) հայերին միավորող կազմակերպութիւններ էին: Առաջացել են XIX դ. 80-ական թթ., նրանց թիվը մեծացել է Մեծ եղեռնից հետո:

5.Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» երգիծավիպակի գլխավոր հերոսը:

199. Համո Ohանջանյանին

Օգոստոսի 26

Ինքնագիրը պահվում է Բիւրոեթի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

200. Համո Ohանջանյանին

Սեպտեմբերի 16

Ինքնագիրը պահվում է Բիւրոեթի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

201. Վահան Նավասարդյանին

Հոկտեմբերի 8

Ինքնագիրը պահվում է Բիւրոեթի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

202. Համո Ohանջանյանին

Հոկտեմբերի 19

Ինքնագիրը պահվում է Բիւրոեթի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

203. Համո Օհանջանյանին

Նոյեմբերի 29

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Լինոտիպը չարող և տառաձուլող տպագրական մեքենա էր, որն այն ժամանակների համար ապահովում էր լավ որակ և արտադրողականություն:

204. Համո Օհանջանյանին

Դեկտեմբերի 30

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1930

205. Համո Օհանջանյանին

Հունվարի 27

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Բարենպաստ կարծիք, դրական կարծիք (ֆր.):

2.Խոսքը «Հայրենի աշխարհի» 2 գրքերի մասին է. առաջինը տպագրվել է նույն 1930-ին Փարիզում, իսկ երկրորդը՝ 1932-ին Բեյրութում:

206. Համո Օհանջանյանին

Փետրվարի 14

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը 1876-ին Պոլսի Գատը-գյուղ թաղամասում Ռեթեոս Պերպերյանի ջանքերով բացված վարժարանի մասին է: Գործել է մինչևակարգ կրթական ծրագրով, ամբողջական դասընթացն ավարտողն ստանում էր դպրոցյան կամ դիտուքյան պսակավորի աստիճան: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին չի գործել, վերաբացվել է Սեբաստիայում, 1924-ին փոխադրվել է Կահիրե և վերջնականապես փակվել 1934-ին:

2.«Հոտաբեր» խմբագիր Վահան Նավասարդյանը:

207. Համո Օհանջանյանին

Մարտի 13

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

208. Համո Օհանջանյանին

Ապրիլի 24

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.1540-ին իսպանացի Իգնատիոս Լոյոլայի կողմից հիմնադրված կաթոլիկ միաբանության անդամները, որոնք իրենց կոչում էին Քրիստոսի շներ և իրենց նպատակին հասնելու համար չէին խորշում ոչ մի միջոցից՝ դրսևորելով չտեսնված դաժանություն, ավտոդաժություն, համառություն և դավեր լարելու հակում: Ճիզվիտների գործունեությունը և ամենից առաջ կաթոլիկ եկեղեցին մաքրելու և կաթոլիկությունը ամեն կողմ տարածելու հիվանդագին ջանքերը հանգիցրին նրան, որ Հռոմի պապը 1773-ին նույնիսկ ստիպված եղավ լուծարել այս միաբանությունը, բայց 1834-ին այն վերսկսեց իր գործունեությունը, որն էլ համեմատաբար մեզմ ձևերով (կրթություն, հրատարակչական գործ, ռադիո, հեռուստատեսություն և այլն) չարունակվում է մինչ օրս:

209. Համո Օհանջանյանին

Մայիսի 12

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Գավառ Արևմտյան Հայաստանի Էրզրումի վիլայեթում:

2.Սիրիայի հյուսիսարևմտյան, թուրքիային սահմանակից ծովեզրյա շրջանը:

210. Սիմոն Վրացյանին

Հունիսի 3

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Համաստեղը ինչ-ինչ պատճառներով չի կարողացել ընդունել Շանթի հրավերը (տե՛ս Հավելված 1-ի թ. 4 նամակը):

211. Համո Ohանջանյանին

Հունիսի 5

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

212. Համո Ohանջանյանին

Հուլիսի 3

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Լաթաքիա, ծովափնյա քաղաք Սիրիայում:
2.Այս նամակը Բեյրութի ՀԿԱ-ում բացակայում է:

213. Համո Ohանջանյանին

Հուլիսի 29

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Այդ նամակը Բեյրութի ՀԿԱ-ում բացակայում է:
2.Լեռնային գյուղ Լիբանանում:

214. Համո Ohանջանյանին

Օգոստոսի 20

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

215. Համո Ohանջանյանին

Սեպտեմբերի 13

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Տե՛ս Հավելված 1-ի թ. 5 նամակը:

2.Ձեռագիրը պժվարըընթեռնելի է:
3.Այստեղ խոսքն ակնհայտաբար Վահան Փափազյանի մասին է:

216. Համո Ohանջանյանին

Սեպտեմբերի 20

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

217. Համո Ohանջանյանին

Հոկտեմբերի 3

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Չհաջողվեց պարզել, թե ինչ խնդրի մասին է խոսքը՝ կապված Շեմսի հետ: Եթե այստեղ խոսքը վերաբերում է Հայ ճեմարանի ուսուցիչների ցուցակին, ապա Շեմսի անունը այդ ցուցակում բացակայում է (Համազգային և Ն. Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակ, էջ 125-129):

218. Համո Ohանջանյանին

Հոկտեմբերի 3

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

219. Համո Ohանջանյանին

Հոկտեմբերի 19

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Ինքնագրում՝ 16, ինչը ակնհայտ վրիպակ է:
2.Ջունիե և Ջահլա, քաղաքներ Լիբանանում:
3.Այս նախադասությունները գրված են հաջորդ նախադասության տողերի արանքում, Շանթի ձեռագրից տարբեր ձեռագրով:

220. Համո Օհանջանյանին

Նոյեմբերի 3

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

221. Համո Օհանջանյանին

Նոյեմբերի 29

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1931

222. Համո Օհանջանյանին

Հունվարի 2

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Խոսքը Բեյրութի համազգային ընկերության՝ որպես ինքնուրույն կազմակերպության գրանցելու մասին է:
2.Շանթի «Հայրենի աշխարհի» 1-ին դիրքը:

223. Համո Օհանջանյանին

Փետրվարի 1

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

224. Համո Օհանջանյանին

Փետրվարի 27

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

225. Համո Օհանջանյանին

Մարտի 11

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

226. Համո Օհանջանյանին

Մարտի 27

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Տիգրան Խոյանը Շանթի նախկին աշակերտներից էր, Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) հիմնադիրներից մեկը: Այդ նամակում նա առաջարկում էր հողատարածք տրամադրել իրենց՝ Հայ ճնմարանի համար մարզահրապարակ կառուցելու (տե՛ս հավելված 1-ի թ. 12 և 16 նամակները):

227. Սիմոն Վրացյանին

Ապրիլի 3

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

228. Համո Օհանջանյանին

<Ապրիլի վերջ-մայիսի սկիզբ>

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

229. Համո Օհանջանյանին

Մայիսի 15

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Դպրոցների հիմնադրում և կրթության տարածում, քարոզում (ֆր.):

230. Համո Օհանջանյանին

Մայիսի 15

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

231. Համո Օհանջանյանին

Հունիսի 20

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

232. Համո Ohանջաևյանին

Հունիսի 29

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

233. Համո Ohանջաևյանին

Հուլիսի 13

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

234. Համո Ohանջաևյանին

Հուլիսի 23

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

235. Համո Ohանջաևյանին

Սեպտեմբերի 20

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Թաղամաս Բեյրութում:

236. Համո Ohանջաևյանին

Նոյեմբերի 3

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Ձեռագիրն ընթեռնելի է, և նախադասությունը թերված է հենց այնպես, ինչպես գրել է Շանթը: Անկատարությունը հետևանք է, ըստ երևույթին, Շանթի հոգեկան ծանր վիճակի:

237. Համո Ohանջաևյանին

Նոյեմբերի 14

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:
1.Չհաջողվեց պարզել, թե կոնկրետ ինչ դիպքի մասին է խոսքը:

1932

238. Համո Ohանջանյանին

Փետրվարի 17

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

239. Համո Ohանջանյանին

Ապրիլի 12

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

240. Համո Ohանջանյանին

Ապրիլի 16

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Ձակատիկը գտնվում է Եգիպտոսում:

1933

241. Համազգային ընկերության կենտրոնական վարչությանը

Հուլիսի 8

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

242. Համո Ohանջանյանին

Օգոստոսի 21

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Լեռնային գյուղ Լիբանանում: Հանդիպում է նաև Դհուր-Շվեր ձևով:

2.Լեռնային գյուղ Լիբանանում:

1934

243. Սիմոն Վրացյանին

Հունիսի 28

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը «Վեմ» մշակույթի և պատմության երկամսյա հանդեսի մասին է, որը Ս. Վրացյանը հրատարակել է Փարիզում 1932-1939 թթ.:

1935

244. Նիկոլ Աղբալյանին

Օգոստոսի 30

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.1935 թ. Հայ ճեմարանում դասավանդել են Գառնիկ Գյուզալյանը (1933-ից, հայոց պատմություն, ընդհանուր պատմություն և Հայաստանի աշխարհագրություն), Գառնիկ Բանյանը (1935-ից, հայերեն, հայոց պատմություն) և Գառնիկ Թովմասյանը (1934-ից, թվաբանություն, իրագիտություն, աշխարհագրություն, երկրաչափություն և հանրահաշիվ: Համազգայինի և Ն. Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակ, էջ 126): Այստեղ խոսքը առաջինի մասին է: Գ. Գյուզալյանին նկատի ունենալու օգտին է խոսում այն փաստը, որ նրա անունը նշված է ճեմարանի 5 մնայուն ուսուցիչների թվում (տե՛ս թ. 241 նամակը), ովքեր 2 տեսուչների հետ 1933-ին ֆինանսական բեռը մասամբ վերցրել էին իրենց վրա և 1935-ին էլ կարող էին վարձատրվել ամենավերջում:

2.«Ազդակը» Բեյրութում լույս է տեսնում 1927-ից մինչ օրս:

3.Այս անձանց ով լինելը բացի Հուրիկից, որը Հրաբիին է՝ Աղբալյանի կինը, պարզել չհաջողվեց:

4.Լեռնային գյուղ Լիբանանում:

245. Նիկոլ Աղբալյանին

Սեպտեմբերի 12

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Ամառանոց, ուր այդ տարիներին ամառանը հանգստանում էր Ն. Աղբալյանը:

1938

246. Համո Օհանջանյանին

Ապրիլի 15

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1939

247. Համո Օհանջանյանին

Ապրիլի 20

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

248. Սիմոն Վրացյանին

Հունիս

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Արշակ Հովհաննիսյան, հանրային, կոոպերատիվական և պետական գործիչ, 1920-ին Ս. Վրացյանի կառավարության կազմում գյուղատնտեսության և աշխատանքի նախարար: Եղել է Շանթի և Ազբալյանի հիմնական աջակիցներից:

249. Համո Օհանջանյանին

Հուլիսի 18

Ինքնագիրը պահվում է Բիլրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ձեմարանի ուսուցիչների ցուցակում ազգանունը գրված է Զեթոյան ձևով:

2.Ձեմարանում չի դասավանդել, ուսուցիչների ցուցակում այս ազգանունը չկա:

3.Ձեմարանում չի դասավանդել, այս ազգանունը կա ուսուցիչների ցուցակում բացակայում է:

4.Ձեմարանի ուսուցիչների ցուցակում և լուսանկարների տակ գրված է Փեչոիմալճյան ձևով (Համազգայինի և Ն. Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակ, էջ 127, 126):

1942

250. Համո Օհանջանյանին

Մայիսի 12

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Համբարձում կամ ս. Համբարձման տոն, Հայ առաքելական եկեղեցու Տերունի տոներից: Խորհրդանշում է Քրիստոսի՝ Հարության օրվանից 40 օր հետո երկինք համբարձվելը: Շարժական տոն է, նշվում է ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ն ընկած ժամանակահատվածում:

1943

251. Համո Օհանջանյանին

Ապրիլի 15

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

252. Համո Օհանջանյանին

Հունիսի 30

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

253. Համո Ohանջանյանին

Նոյեմբերի 10

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Նկատի ունի Առաջին աշխարհամարտի սկսվելը 1939-ին:

1944

254. Համո Ohանջանյանին

Մայիսի 3

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:
1.Խոսքը Արփիար Արփիարյանի «Պատմություն ժո դարու Թուրքիո հայոց ղրակառավարության» գրքի մասին է, որը լույս է տեսել 1943 թ. Կահիրեում:

255. Համո Ohանջանյանին

Դեկտեմբերի 8

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1945

256. Սիմոն Վրացյանին

Հունիսի 4

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1946

257. Սիմոն Վրացյանին

Հունվարի 25

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:
Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը վերաբերում է կնոջ՝ Զավահիր Ներսիսյանի մահվան առիթով ստացած ցավակցությանը: Զ. Ներսիսյանը մահացել է 1945 թ. վերջերին:

2.Խոսքը վերաբերում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Հասկ» պաշտոնաթերթին, որը 1932-ից մինչ օրս լույս է տեսնում Անթիլիասում:

3.Հայ ճեմարանի չրջանավարտների միության «Ակոս» ամսագիրը հրատարակվել է Բեյրութում 1944-1960 թթ.:

4.Նիկոլ Աղբալյանի «Պատմություն Հայոց գրականության» աշխատությունը ամբողջությամբ լույս է տեսել 1970 թ. Բեյրութում: Մինչ այդ առանձին հրատարակվել են նրա մասերը կազմող «Պատմություն Հայոց գրականության» (Ներածություն, Բեյրութ, 1944, այստեղ խոսքը այս գրքի մասին է) և «Դասախոսություններ Հայ մատենագրության մասին» (Բեյրութ, 1951) գրքերը: 1970 թ. հատորը կազմել են հրատարակիչները այս 2 գրքերից, և որոշ թեմաներ կրկնվում են:

1947

258. Սիմոն Վրացյանին

Հունվարի 29

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այդ նամակը, ըստ երևույթին, չի պահպանվել:

2.Խոսքը «Լևոն Շանթի երկերը» խորագրով 1946-1952 թթ. հրատարակված ութհատորյակի առաջին երկու հատորների (Հ. 1, Բեյրութ, 1946, Հ. 2, Բեյրութ, 1947) մասին է:

259. Համո Ohանջանյանին

Փետրվարի 12

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Ազգային, գրական և քաղաքական օրաթերթ, լույս է տեսել Փարիզում 1925-2009 թթ.:

2.Շանթի այցը ԱՄՆ տեղի է ունեցել 1949 թ. և ավարտվել է մեծ հաջողությամբ. Շանթին հաջողվել է ամերիկահայությունից հանգանակել

127 հազար դոլլար, որը ունեցած միջոցների և Փալանճյան քույրերի 20 հազար եգիպտական ոսկի նվիրատվության շնորհիվ հնարավորություն տվեց Հայ ճեմարանին (նոր անունով՝ Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարան) 1950-ին սեփական շինք կառուցելու (Համազգայինի և Ն. Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակ, էջ 45: Նույնը՝ Լևոն Շանթ, 1869-1969, էջ 21):

1948

260. Լևոն Տեր-Մաթևոսյանին

Նոյեմբերի 14

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ-ում, Լ. Շանթի ֆ., թ. 7:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Խոսքը վերաբերում է Հայ ազգային ճեմարանին կատարած նվիրաբերությանը:

1949

261. Սիմոն Վրացյանին

Փետրվարի 7

Ինքնագիրը պահվում է Բեյրութի ՀԿԱ-ում:

Տպագրվում է առաջին անգամ:

1.Այս մտադրությունը չի իրականացել:

2.Ս.Վրացյանը Հարավային Ամերիկայում, մասնավորապես Արգենտինայում և Բրազիլիայում եղել է 1936 թ. (Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. 2, էջ 260-280):

3.«Ասպարեզ» ազգային, դրական և քաղաքական շաբաթաթերթը (ՀՅԴ օրգան) Ֆրեզնոյում (Կալիֆոռնիա, ԱՄՆ) լույս է տեսնում 1908-ից մինչ օրս:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՍԵՎԱԳԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ

Հավելված 1-ում տեղ են գտել Շանթի 86 սեւագիր նամակները, որոնք ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին է ուղարկել Բեյրութի Համազգային ընկերության կենտրոնական արխիվի տնօրեն, հայագետ, գրականագետ Երվանդ Փամբուկյանը: Նամակների հետ միասին ե. Փամբուկյանը ուղարկել է պարզաբանում, որը ամենայն կրճատումներով բերվում է ստորև:

«Ահա կը ղրկեմ Լեւոն Շանթի վերջերս յայտնաբերուած մէկ թղթածրարին բովանդակութիւնը: Ինչպէս գրած էի, անոնք պատահական թուղթերու վրայ գրի առնուած սեւագրութիւններ են, որոնք յայտնաբար ծառայած են հեղինակին կողմէ մշակուած ձեւով արտագրուելու եւ իրենց հասցէներուն ուղարկուելուց: Բոլորն ալ կը վերաբերին Համազգայինի Հայ Ճեմարանին 1930-1939 թուականներու կեանքին,- նամակներ՝ ճեմարանի բարերարներու եւ սան որդեգրողներու, աշակերտներու, եւայլն:

Ինչպէս պիտի տեսնէք, անոնք գրուած են սեղմ ոճով, արտագրութեան ժամանակ ամբողջացուելու եւ վերջնական տեսքի բերուելու համար:

Ընդհանուր կերպով պէտք է ըսել, որ այս սեւագրութիւններու մեծագոյն մասը դժուար ընթեռնելի է, գրուած ըլլալով ընդհանրապէս անխնամ, սղագիր, սրբագրութիւններով, տողամէջի մանրագիր յաւելումներով: Ջանացած եմ, առանց բնագրային փոփոխութեան, կարելի սրամտաբանական ընթերցումը տալ անոնց:

Տուած եմ նոյնպէս անհրաժեշտ ծանօթագրութիւններ: Որպէս յաւելում՝ հարկ կը նկատեմ նշել հետեւեալները.

1.Համագումար 86 սեւագրութիւններու չարքը դասաւորած եւ թուագրած եմ ըստ թուականի: Անթուակիր նամակներու դասաւորումը կատարուած է ըստ բովանդակութեան:

2.Բոլորովին անընթեռնելի բառերուն տեղ դրուած է բազմակէտ, իսկ ոչ վստահ ընթերցումներու պարագային դրուած է անկիւնաւոր փակագիծ՝ հարցական նշանով:

3.Պհամտունը, Սալիման, Տհուր Շուէրը Լեռնալիբանանի գիւղեր են, ուր Լ. Շանթ անցուցած է ամառային արձակուրդները:

4.Այն պարագային, երբ հարկ չտեսնէք բոլոր սեւագրութիւններու հրատարակումը, կրնաք բնականաբար ընտրել անոնցմէ ամենէն կարեւորները ըստ ձեր գնահատութեան»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգլիր նամակները, հասկատակ իրենց տեքստային թերությունների, որոշակիորեն ընդլայնում են Լ. Շանթի գործունեության շրջանակները, մասնավորապես նոր լույս են սփռում Հայ ճեմարանը հաստատուն և մնայուն կրթօջախ դարձնելուն ուղղված նրա ջանքերին, համապարական կոնցեպտն որոշից այդ նամակները տպագրել ամբողջությամբ՝ ընդ որում պահպանելով դասական ուղղագրությունը և դրանով իսկ պնդահատելով Ե. Փամբուկյանի կատարած մեծ աշխատանքը և միաժամանակ խուսափելով նույն աշխատանքը երկրորդ անգամ անելու ավելորդությունից: Թողնված են նաև Ե. Փամբուկյանի ծանոթագրությունները՝ մի քանի անհրաժեշտ չակերտներ և հավելումներ անելով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԲԱՑԻԿՆԵՐ ԿՆՈՋԸ ԵՎ ՋԱՎԱԿՆԵՐԻՆ

Մի քանի տարի առաջ անհայտ անձի կողմից (ծրարի վրա անուն և հասցե չկա) ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նախկին տնօրեն Ա. Եղիազարյանի հասցեով ուղարկվել են Լ. Շանթի կողմից կնոջը և զավակներին, ինչպես նաև տարբեր անձանց կողմից Շանթին ուղղված 22 բացիկներով լուսապատճեններ: Դրանցից չատերը վատորակ են, և շատ տողեր պարզապես բացակայում են, իսկ 12-ը մեծ դժվարությամբ հաջողվեց վերծանել: Քանի որ դրանք նոր կողմից են ներկայացնում Լ. Շանթին (որպես ամուսնի և որպես հայր), որոշվեց դրանք հատորում դնել առանձին, որպես երկրորդ հավելված: 1914 թ. գրված 10 բացիկներն ուղարկվել են Լոզանի Montagibert *6 հասցեով:*

1.Սուրենիս

Բացիկն ուղարկված է Փարիզ, որպես հասցեատեր նշված է Ջավո Ներսիսյանի անունը:

1.Գրված է Լևոն Շանթի ձեռքով հասցեից հետո:

2.Բացիկն անթվակիր է, ամսաթիվը որոշվել է ըստ փոստային կնիքի:

3.Նույն օրը Լ. Շանթը բացիկ է ուղարկել նաև մյուս որդուն՝ Վիգենին, ուր գրված է. «Անուշիկ Վիգենս, իմ անգին մանչուկս, իմ երկու տարեկան մե՛ծ-մեծ մանչուկս, հայրիկը քեզ պինդ-պինդ պաչիկ է անում, սաստիկ կարոտել է քեզ, ինչպես և ապպարիկիդ ու մայրիկիդ. ուզում է

չուտով այդտեղ լինի, գրկի ձեզ երեքիդ էլ, գդվի, սիրի ու համբուրի: Մայրիկին իմ կողմից բարև ասա, ասա, որ հայրիկը չուտով պիտի գա ու միասին չա՛տ, չա՛տ պիտի խաղ...»: Վատ լուսապատճենման պատճառով վերջին տողը բացակայում է:

2.Ջավահիր Ներսիսյանին

1.Ամսաթիվը որոշվել է ըստ փոստային կնիքի:

2.Լևոն Շանթի գրածից վեր հակառակ ուղղությամբ Վիգենի ձեռքով գրված է. «Կը հաբուրիմ (մ-ն բաց է թողնված - Ա.Մ.) մայրիկս ու աղբարիկներս»:

3.Ջավահիր Ներսիսյանին

1.Բացիկի գրության ժամանակը որոշվել է մոտավորապես, ըստ բովանդակության:

4.Սուրեն Շանթին

1.Բացիկն անթվակիր է, փոստային կնիքի վրա երևում է միայն ամսաթիվը՝ 28, իսկ ամիսը որոշվել է ըստ բովանդակության:

5.Ջավահիր Ներսիսյանին

1.Բացիկի գրության ժամանակը որոշվել է մոտավորապես, ըստ բովանդակության:

6.Ջավահիր Ներսիսյանին

1.Բացիկի գրության ժամանակը որոշվել է մոտավորապես, ըստ բովանդակության:

2.Ծովային քամի (ֆր.): Նկատի ունի Լեման լճից փչող քամին:

7.Ջավահիր Ներսիսյանին

1.Փոստային կնիքի վրա խփված ամսաթիվն է:

2.Ձեռագիրն անընթեռնելի է, ենթադրաբար կարող է լինել գալու: Այդ մասին Շանթը գրել է մեկ այլ բացիկում, որը, ցավոք, բացի առաջին նախադասությունից և մի քանի բառերից, վատ լուսապատճենման պատճառով հնարավոր չեղավ վերծանել: Բացիկի սկզբում Շանթը գրում է. «Անգին Ջավիկս, Սուրիկի չգալու մասին գրածդ առաջին վայրկյանը ինծի ախրեցրեց, բայց քիչ մը խորհելես վերջը գտա, որ իրավունք ունիս»:

8.Զավահիր Ներսիսյանին

1.Բացիկի գրության ժամանակը որոշվել է մոտավորապես, ըստ բովանդակության:

2.Նկատի ունի Նիկեփոր Ֆոկասին՝ «Կայսր» դրամայի գլխավոր հերոսներից մեկին:

3.«Կայսր» դրամայի առաջին տարբերակը ունի 2 տեսարան: Ինչպես երևում է, դրամայի այս նախնական տարբերակը 1915-1916 թթ. Շանթը հիմնովին վերամշակել է:

9.Զավահիր Ներսիսյանին

1.Ամսաթիվը բերվում է ըստ փոստային կնիքի, բայց այն վրան փակցված նամականիշի պատճառով ամբողջությամբ չի երևում:

2.Այս բացիկից առաջ Շանթը կնոջն ուղարկել է ևս մեկը. «Զավիկս, սահելու տեղ այլևս չմնաց. անտառին մեջ դեռ բավական երկար կտոր մը կա, բայց մինչև հոն երթալ-դալը ձանձրալի է. տեղ մըն ալ հոս կա անմիջապես պատուհանիս դեմը՝ պզտիկ բլուր մը. երեկ ու այսօր Վիգենը գրեթե ամբողջ ժամանակը այդ բլուրին վրա է[ր]: Երեկ և այսօր արևի լավ ատենը դուրս ղրկեցի, որ խաղա, ես ալ աշխատել կարողանամ, արտամադրության հաջող միջոցն է, միտքս չարունակ կաշխատի, բայց Վիգենը երեկ ալ, այսօր ալ ոտ ու գլուխը թաց եկավ տուն. այնպես չորս ղին ջուր է դարձած. հիմա կը վախնամ առանձին ղրկելու, նորեն իրեն պոչ պիտի դառնամ...»: Վերջին տողը բացակայում է:

10.Զավահիր Ներսիսյանին

1.Բացիկի գրության ժամանակը որոշվել է ըստ ներկա Հատորի թ. 126 նամակի:

11.Զավակներին

1.Բացիկի գրության ժամանակը որոշվել է ըստ ներկա Հատորի թ. 132 նամակի:

12.Սուրեն Շանթին

1.Ամսաթիվը բերվում է ըստ փոստային կնիքի:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ-ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբելյան Ալեքսանդր (1858-1940), դրամատուրգ, թատերագետ-239, 241, 246, 247

Աբելյան Հովհաննես (1865-1936), նշանավոր դերասան-268, 271

Աբովյան Խաչատուր (1809-1848) - 25

Աբրահամ (Ներսիսյան Աբրահամ), Շանթի կնոջ՝ Ջավահիր Ներսիսյանի եղբայրը-218, 219, 221, 223-225, 235, 239-244, 246, 259, 523

Աբրահամ, Նիկողայոս Ադոնցի ընկերը-457, 471,472, 481, 512

Ադամ, ըստ Աստվածաշնչի՝ առաջին մարդը, մարդկության նախահայրը-78

Աթիկյան Հակոբ, Հայ ազգային հեմարանի մաթեմատիկայի և բնագիտության ուսուցիչ-414

Ալեքսան, սփյուռքահայ գործիչ-486, 495, 498

Ալեքսանդր Մակեդոնացի (356-323 մ.թ.ա.), հին աշխարհի նշանավոր զորավար-16, 19, 25, 29

Ախիկյան Վրթանես (1872-1936), նկարիչ-162, 163, 185-187

Ակվենյան, սփյուռքահայ գործիչ-502

Ահարոնյան Ավետիք (Ավետիս, 1866-1948), գրող, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ կարկառուն դեմքերից-140, 329, 330, 416, 455, 480, 486

Աղամալյան Տիգրան, Երևանի թեմական դպրոցի տեսուչ-141

Աղայան Ղազարոս (1840-1911)-95, 98, 104. 127, 134, 168

Աղբալյան Նիկոլ (1873-1947), գրականագետ, մանկավարժ, հասարակական-քաղաքական, պետական գործիչ-88, 93, 94, 103, 123, 125, 128, 225, 261, 264, 294, 319-321, 323, 324, 326, 327, 330-335, 339-358, 361, 362, 364, 368, 369, 375, 376, 378-381, 383, 391-393, 395, 398, 401-403, 405, 406, 408-411, 414, 415, 417-419, 422, 425, 441, 444, 451, 453, 456, 457, 460-462, 468, 473, 479, 485, 501, 504

Աճառյան Հրաչյա (1876-1953), նշանավոր լեզվաբան, հայագետ-գիտնական-207, 212

Աճեմյան, սփյուռքահայ գործիչ-329, 330

Աճեմյան Մհերան, սփյուռքահայ գործիչ-500, 502

Ամատունի Հովհաննես (1877-1946), հասարակական-կոոպերատիվական գործիչ (ՀՅԴ)-326

Ամիրխանյան Ռուբա, Թեհրանաբնակ օրիորդ, ուսուցչուհի-460, 461, 467, 469

Ամիրյան, Շանթի և Ադոնցի ծանոթը-272

Այվազյան Մ., «Հայրինիքի» վարչության անդամ-489

Այվազով Ս., Շանթի Բաքվի ծանոթներից-221
Այվազովսկի Գաբրիել (1812-1880), կրթական, եկեղեցական, մշակութային գործիչ, Թարգմանիչ-227
Անանյան, տիկին, Շանթի չկայացած բարերարներից-9, 27
Անանով, Կատարինե Լիսիցյանի ազգականը Նոր Նախիջևանում-12
Անտոն, Շանթի և Ազբալյանի ընդհանուր ծանոթը-323
Աչխեն (Թումանյան Աչխեն, 1891-1968), Հովհաննես Թումանյանի անդրանիկ դուստրը, Թումանյանի տուն-թանգարանի հիմնադիրն ու առաջին տնօրենը-228, 229
Աչոտ, տե՛ս Հովհաննեսյան Աչոտ:
Աչոտ, Թերևս Աչոտ Արծրունին է, դաշնակցական հասարակական գործիչ-313
Առաքելյան Համբարձում (1855-1918), գրող, հրապարակագիր, «Մշակի» խմբագիր-144
Առաքելովներ, բաքվեցի ընտանիք-260
Ասլանյան Մանուկ, Հայ ազգային ճեմարանի ֆիզիկայի ուսուցիչ-426
Ավետիսյան Կարապետ, Հայ ազգային ճեմարանի սան (չի ավարտել)-515
Ավետիսյան Կարպիս, Հայ ազգային ճեմարանի սան (չի ավարտել)-512
Ավետիք, Ավո, տե՛ս Իսահակյան Ավետիք:
Ավետյան Սեդրակ (1873-1949), Թիֆլիսի «Գիր» ժողովրդական դրամատեառնության անօրին, ուսուցիչ, հասարակական գործիչ-189, 223, 264
Ատոմ Գարագաշ (Գարագաշյան), Հայ ազգային ճեմարանի բնագիտության ուսուցիչ-381
Ատոնց (Նիկողայոս Ատոնց, 1871-1942), ականավոր պատմաբան, Հայագիտ, բյուզանդագիտ-272, 396, 456, 471
Արամյան Տիգրան, Հայ ազգային ճեմարանի բարերար-500, 507
Արասխանյան Ավետիք (1857-1912), անտևտապետ, հրապարակագիր, «Մուրճի» խմբագիր-23, 27, 30, 31, 37-40, 44, 45, 49, 63, 70
Արզումալճյան, սիլիստրիահայ գործիչ-491
Արիստակեսյան, տիկին, կանադահայ հվիրատու-191
Արծրունի Գրիգոր (1845-1892), հրապարակագիր, հասարակական գործիչ, «Մշակ» լրագրի հիմնադիրն ու երկարամյա խմբագիրը-39
Արզումյան Սոֆիա (1860-1954), ուսուցչուհի, հանրային գործիչ-133
Արզումյան Հովսեփ (Իշխան, 1863-1925), ՀՅԴ հիմնադիրներից, ազգային-ազատագրական շարժման գործիչ-301, 320

Արմեն Գարո. Արմեն (Գարեգին Փաստրմաջյան, 1873-1923), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ ակնառու դեմքերից-284, 301

Արմենակ, տե՛ս Ղուկասյան Արմենակ:

Արմիկ, Լ. Շանթի կրտսեր որդին (1912-?)-521, 524

Արշակ, տե՛ս Ջամալյան Արշակ:

Արշակ, տե՛ս Հովհաննեսյան Արշակ:

Արսլանով Մելիք Բեյ, ադրբեջանցի նախարար Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարությունում-275

Արտաշես, տե՛ս Զիլինգարյան Արտաշես:

Արուսյակ (Փանոսյան Արուսյակ), Շանթի և Լիսիցյանի ընդհանուր ծանոթներից-231

Արուսյակ, Արմենակ Ղուկասյանի կինը-502

Արփիարյան Արփիար (1851-1908), գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ-436

Բաբախյան Սուրեն, Հայ ազգային ճեմարանի մաթեմատիկայի և հայերենի ուսուցիչ-375, 381, 410, 414

Բաբայան, բժիշկ, Շանթի և Լիսիցյանի ծանոթներից-66

Բաբայան օրիորդներ, բժիշկ Բաբայանի դուստրերը-91

Բաբաջանյան (Պապաջանյան Միքայել,1872-1926), իրավաբան, հասարակական գործիչ, 1912 թ. Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի անդամ-254

Բալայան Գերասիմ, կոոպերատիվ-հասարակական գործիչ (ՀՅԴ), զորապետ-387, 466

Բայրոն Ջորջ Գորդոն (1788-1824), անգլիացի բանաստեղծ-106

Բանյան Գառնիկ, Հայ ազգային ճեմարանի հայերենի և հայոց պատմության ուսուցիչ, 1944-49 թթ. ճեմարանի չրջանավարտների միության «Ակոս» ամսագրի խմբագիր-426, 442

Բաշալյան Լևոն (1868-1930), գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ-7

Բարսեղյան Արմենակ, բժիշկ, կուսակցական-հասարակական գործիչ (ՀՅԴ)-297

Բեգզատյան (Բեկզատյան) Տիգրան (1871-1942), հասարակական, քաղաքական, պետական գործիչ, դիվանագետ, Հեղինե Մելիք-Հայկազյանի ամուսինը-223, 261, 265, 281, 300, 319

Բեգլարյան Սաթենիկ, սփյուռքահայ գործիչ-481

Բերնշտայն, պրոֆեսոր, Կովկասի գերմանական գաղութի ներկայացուցիչ-274

Բոտուրյան, մանկավարժ օրիորդ-322

Brandes (Գեորգ Բրանդես, 1842-1927), դանիացի գրականագետ, գրականության և արվեստի պատմաբան-49, 59

Բրյուսով Վալերի (1873-1924), ռուս բանաստեղծ, թարգմանիչ-268

Brentano, Մյունխենի համալսարանի դասախոս-16

Broogmann (կարլ Բրուգման, 1849-1919), գերմանացի լեզվաբան-հնդեվրոպագետ, Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր-324

Boisarg, բառարանագիր-324

Գաբրիել, *Հայ ազգային ճեմարանի բարերար Հ. Սերոբյանի եղբորորդին-511*

Գալստյան, *Թիֆլիսի «Գուտենբերգ» դրախանութի տնօրեն-218*

Գայայան *Հովհաննես (1865-1934), բանաստեղծ, բանասեր, բառարանագիր-422*

Գառնիկ, *տե՛ս Գյուզալյան Գառնիկ:*

Գասպար, *տե՛ս Իփեկյան Գասպար:*

Գասպարյան Եղիա, *նկարիչ, Հայ ազգային ճեմարանի ուսուցիչ-450, 463*

Գարակյոզյան (Գևորգ Մելիք-Կարագյոզյան), դրական-հասարակական գործիչ, հրատարակիչ-95

Գարակյոզյան Մ., *բժիշկ, ամերիկահայ բարերար-516, 517*

Գարակյոզյան, *սիկին, սփյուռքահայ բարերար-440*

Գարո, *տե՛ս Արմեն Գարո:*

Գերասիմ, *տե՛ս Բալյան Գերասիմ:*

Գյոթե, Կյոթե, *Յոհան Վոլֆգանգ Գյոթե (1749-1832), գերմանացի պրոզ-48*

Գյուզալյան Գառնիկ, *Հայ ազգային ճեմարանի պատմության և աշխարհագրության ուսուցիչ- 414, 417, 423, 425*

Գյումսեբյաններ, *բաքվեցի ընտանիք-244*

Գոհար, *տե՛ս Հովհաննեսյան Գոհար:*

Գոհարիկ *(Փանոսյան Գոհարիկ), Շանթի և Վիսիցյանի ընդհանուր ծանոթներից-231*

Գոնճալյան, *եգիպտահայ գործիչ-328*

Գուլազյան Բենիամին, *բիյրութահայ բժիշկ-378, 511*

Գևորքյան Վարդան, *բիյրութաբնակ դաշնակցական-365*

Դարբինյան, *տե՛ս Զիլինգարյան Ալբասչես:*

Դեզդեմոնա, *Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության գլխավոր հերոսուհին-123*

Դերեն,Դերենիկ, *Դամիրճյան Դերենիկ (1877-1956)-84, 88, 95, 103, 125, 128, 140, 151, 155, 157, 158, 172, 182, 183, 228, 229*

Դիլանյան, *Ժան-Ժակ Ռուսոյի ինստիտուտասավարտ ժնևաց-322*

Դիոգենես Սինոպացի կամ Դիոգենես Կինիկ *(մ.թ.ա. մոտ 404-323), հույն փիլիսոփա-87*

Draysen (Դրույզեն) Յոհան Գուստավ (1808-1884), գերմանացի

պատմաբան-17, 20
Դրո (Դրաստամատ Կանայան, 1883-1956), զորավար, ռազմական և քաղաքական գործիչ-301
Եղիկյան Մ., սփյուռքահայ գործիչ-479
Եղիշ, հավանաբար Իշխանյան Եղիշեն է, Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի անդամ-455
Եղիսաբեթ, օրիորդ, Լիսիցյանի քենի Լիզան-26
Եսայան Զապել (1878-1943)-282
Եսայան Ստեփան (1880-1940), կուսակցական-հասարակական, գործիչ (ՀՅԴ)-324
Եփկարյան, Շանթի բարեւարներից-18, 20, 25, 27, 28, 31, 32, 40, 42, 49, 50, 52, 55, 56, 69
Երեցյան Հովհաննես, Տիգրանակերտի հայրենակցական միության կենտրոնական վարչության անդամ-451
Երզնկյան Արամայիս (1879-1938), պետական գործիչ-315
Երկանյան Նվարդ, սփյուռքահայ նվիրատու-492
Եվա, ըստ Աստվածաշնչի՝ առաջին կինը, որին Աստված ստեղծեց Ադամի կողոսկրից-78
Եվնիկ, Աբրահամ Ներսիսյանի՝ Շանթի աներձագի կինը-221, 244
Զավարյան Սիմոն, հաս.-քաղաքական գործիչ (ՀՅԴ)-472
Զավրիև, Զավրև, Փարիզի «Նավար» տպարանի տնօրեն-355, 361, 365, 370, 386, 448, 456, 466
Զարդարյան Ռուբեն (1874-1915), գրող, հրապարակագիր-204, 210
Զարիֆյան Հովհաննես (1879-1937), դերասան, բեմադրիչ-234
Զարիֆյան, Շանթի ճեմարանական դասընկերներից, քահանա-12
Զաքարյան Պետրոս, սփյուռքահայ-489
Զեյնալաբետին էֆենդի, ապրելջանցի մեծահարուստ-276
Զոհրաբյան, Շանթի բարեկամներից-15, 18, 26, 31, 68, 217, 270
Զվարթ, օրիորդ, բժիշկ Հեչիչյանի քենին Դեթրոյթից-492
Զուտերման (Հերման Զուտերման, 1857-1928), գերմանացի դրամատուրգ, վիպասան-22, 60
Զուրաբյան, Զուրաբով, տե՛ս Զոհրաբյան:
Էլիա, Համո Օհանջանյանի զուտարը-354, 411
Էմինյան, Մկրտիչ Էմին (1815-1890), բանաստեղծ, խորհրդանիշ, մանկավարժ-133, 207, 212
Էմիր Շահապ, Էմիր Ամին Շահապ, Հայ ազգային ճեմարանի արուեստների ուսուցիչ-367, 381
Էսքիլոս (մ.թ.ա. 525-456), հույն ողբերգակ-82
Էքմեքճյան Արսեն, սփյուռքահայ-492
Թագուհի, Ստ. Լիսիցյանի քենին-12
Թագուհի, Նիկոլ Աղբալյանի երև-

խաներրի դաստիարակչուհին-319, 320

Թանդրճյան Կոլեռնիկ, կուսակցական-հասարակական գործիչ (ՀՅԴ)-343

Թաշճյան, կուսակցական-հասարակական գործիչ (ՀՅԴ)-343

Թափառական Ս., սիյուտքահայ բանաստեղծ, գրող, Հայ ազգային ճեմարանի նվիրատու-493

Թելլալյան Պետրոս, սիյուտքահայ գործիչ-501

Թյուֆեյնճյան Խոսրով (1894-1982) հասարակական-քաղաքական, պետական գործիչ, հրապարակագիր-325, 357, 359, 418, 419. 444

Թորիկյան Հակոբ, Հայ ազգային ճեմարանի սան, 1944 թ. շրջանավարտ-502

Թորոմանյան (Թորամանյան Թորոս, 1864-1934), ճարտարապետ-260, 261

Թոփալյան Գառնիկ, Հայ ազգային ճեմարանի 1935 թ. շրջանավարտ և մաթեմատիկայի ու աշխարհագրության ուսուցիչ-426

Թոփուզյան Օննիկ, Հայ ազգային ճեմարանի 1939 թ. շրջանավարտ-472

Թումանյան Աշոտ, Լիսիցյանների մասնավոր դպրոցի ուսուցիչ-25, 26

Թումանյան Հովհաննես (1869-1923)-71, 74, 75, 78, 80, 82, 84, 88, 90-92, 95-97, 99-101, 106-108, 110, 112, 114, 115, 118, 120, 122-124, 126-130, 132-134, 140-142, 144-146, 148, 156-158, 165, 167-169, 172, 182, 185, 186, 196,201, 206, 211, 213, 227, 228, 230, 231-233, 236, 238, 239, 243, 248, 251, 261, 269

Թումանյան Մարիամ (1870-1947), իշխանուհի, հասարակական, մշակութային գործիչ, բարերարուհի-74, 126, 128, 130, 136, 138, 139, 144, 155, 218

Թուրգենև (Իվան Տուրգենև, 1818 -1883), ռուս գրող-22

Թուրիկյան Մհերան, բնագրութաբնակ գործիչ-368

Իբսեն Հենրիկ (1828-1906), նորվեգացի դրամատուրգ-121

Ինճեճիկյան Ավ., բժիշկ, Հայ ազգային ճեմարանի բարերար-475, 477

Իշխան, տե՛ս Արղության Հովսեփ:

Իսակ, Իսահակ, տե՛ս Իսահակյան Ավետիք:

Իսահակյան Ավետիք (1875-1957)-57, 83, 86, 88, 94, 103, 142, 228

Իփեկյան Գասպար (1881-1952), կրթական, մշակութային, հասարակական գործիչ-327, 332, 344, 345, 350, 368, 370, 381-388, 401, 405-408, 410, 411, 415, 419, 422, 432, 434, 441, 485, 491, 492, 494, 505, 507, 511

Լենին Վլադիմիր Իլիչ (1870-1924)-276, 318

Լեո (Առաքել Բաբախանյան, 1860 -1932), պատմաբան, գրականագետ, գրող, հրապարակագիր-140, 182, 183, 198

Լեսսինգ (Գոթհոլդ Էֆրայիմ Լեսսինգ, 1729-1781), գերմանացի դրամատուրգ, քննադատ-48

Լերմոնտով Միխայիլ Յուրևիչ (1814-1841), ռուս բանաստեղծ-22

Լըգրան, Լըկրան (Բորիս Լեգրան), Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում-311, 312, 314-318

Լինչ Հենրի Ֆինիս Բլոս (1862-1913), իռլանդացի ճանապարհորդ, հայագետ, հաս.-քաղաքական գործիչ-133

Լիսիցյան Մարիա, Ստ. Լիսիցյանի եղբոր՝ Սահակի կինը-321

Լիսիցյան Սահակ (1863-1934), Ստեփան Լիսիցյանի եղբայրը, ճարտարապետ-ջրմուղագործ-321

Լիսիցյան Ստեփան (1865-1947), մանկավարժ, գրող, հրատարակիչ, հասարակական գործիչ, ազգագրագետ-գիտնական, պետության վաստակավոր գործիչ-7, 9, 11, 13, 17, 19, 21, 26-28, 30, 33-35, 42, 43, 54, 55, 60-62, 64, 66-69, 75, 76, 88, 90, 101, 105, 108, 127, 133, 139, 141, 143-151, 158, 165-167, 172, 173, 175, 183-185, 188, 189, 191, 195, 197, 199, 202-204, 206, 207, 214, 217, 222, 224, 226, 228, 229, 231, 235, 236, 238-243, 245-253, 257-260, 262, 264, 265, 267, 269, 271

Lipps, Մյունխենի համալսարանի դասախոս-13

Լևոն, Լևոնիկ (Լիսիցյան Լևոն, 1892-1921), Ստեփան Լիսիցյանի որդին, պատմաբան-19, 52, 90, 147, 165, 167, 173, 191, 196, 197, 213, 227, 232, 234, 235, 237, 248, 249, 251, 258, 259, 261, 262, 265, 267, 271, 273

Լևոն, վարդապետ, Լիսիցյանների ընտանիքի Նոր Նախիջևանի բարեկամներից-12

Լևոն, Կ.Պոլսի «Արծիվ» դրավաճառանոցի տնօրեն-194

Խաժակ (Գարեգին Զապսյան, 1867-1915), հասարակական-քաղաքական գործիչ (ՀՅԴ)-182

Խալաթյան Գրիգոր (1858-1912), բանաստեր, հայագետ-190

Խան Խոյսկի, ադրբեջանցի նախարար Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարությունում-275

Խաչատուրյան Արմինե, Հայ ազգային ճեմարանի ձեռագործի ուսուցչուհի-488

Խաչատրյան Հակոբ (1884-1960), մանկավարժ, թարգմանիչ, մշակութային գործիչ-237

Խաչատրյան Աստվածատուր (1861-1937), պատմաբան-260

Խատիսյան Ալեքսանդր (1874-1945), բժիշկ, հաս.-քաղաքական, պետական գործիչ-251, 252, 276, 294, 312, 329, 330, 335, 336

Խատիսյան Իվան, Թիֆլիսցի, Թերևա Ալ. Խատիսյանի հայրն է-133

Խըմեթյան Եվ., Հայ ազգային ճեմարանի բարերար-516, 517

Խնկոյան Աթաբեկ (1870-1935), մանկավարժ, առակագիր-201, 227, 232

Խոճամիրյան (Խոջամիրյան) Արտաշես, սիլոտքահայ գործիչ-495, 497, 498

Խոյյան Տիգրան, սիլոտքահայ գործիչ, Հայ ազգային ճեմարանի բարերար-391, 392, 459, 464

Խորասանճյան (Խորասանջյան) Վահան, սիլոտքահայ մեծահարուստ, բարերար-331, 336, 337, 339, 344, 374, 376, 379, 453, 454, 469, 471, 482-484, 504, 512, 514, 515

Խոսրով, տե՛ս Թյուրթյունճյան Խոսրով:

Խտրյան, Հասարակական-կուլտակցական գործիչ (ՀՅԴ)-343

Խրիմյան Հայրիկ (Խրիմյան Մկրտիչ, 1820-1907), եկեղեցական, հասարակական գործիչ, գրող, Ամենայն Հայոց կաթողիկոս 1892-ից-418

Ծատուրյան, սիլոտքահայ հարուստ անձնավորություն-300

Կանաչյան Բարսեղ (1885-1967), կոմպոզիտոր, նվագավար, խըմբավար, Հայ ազգային ճեմարանի երաժշտության ուսուցիչ-426

Կանզարալյան, գրավաճառ Երևանում-144

Կատարինե (Լիսիցյան Կատարինե, 1863-1957), մանկավարժ, «Հասկեր» մանկական ամսագրի խմբագիր և հրատարակիչ, Ստ. Լիսիցյանի կինը-148, 190, 195, 196, 202, 207, 213, 217, 224, 228, 230, 231, 234, 235, 237, 243, 248, 258, 260, 261, 264, 266, 267, 271, 273

Կարախան (Քարախան) Լևոն (1889-1937), կուսակցական-պետական գործիչ, դիվանագետ-311, 315, 318

Կարապետյան Գ., Հայ ազգային ճեմարանի նվիրատու-499

Կարինյան Արտաշես (1886-1982), կուսակցական և պետական գործիչ, դրական ագետ, պատմաբան-312, 318

Կարպիս, սիլոտքահայ գործիչ-499

Կեկեչկորի (Գեղեչկորի Եվգենի, 1880-1954), վրացի քաղաքական գործիչ-274, 275

Կյուլպենկյան (Գյուլբենկյան Գալուստ, 1869-1955), հայ մեծահարուստ, բարեգործ-329-336, 477, 480

Կյուլպենկյան Ներսես, Թերևա Գալուստ Գյուլբենկյանի եղբայրը-378

Կոմս, տե՛ս Փափազյան Վահան:

Կովալենքո (Քովալենքո), Հայ ազգային ճեմարանի մարմնամարզության ուսուցիչ-381

Կռիլով (Քռիլով) Իվան (1768-1834), ռուս առակագիր-227, 288

Կրետխեն (Գրետխեն), Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության գլխավոր հերոսուհին-290

Կրուչին (Գրիչին), դերասանապետ-237

Հախնազարյան, թարգմանիչ, Հրատարակիչ Պրահայում-459

Հակոբյան Համբարձում, սփյուռքահայ գործիչ-504

Համաստեղ (Համբարձում Կելենյան, 1895-1966), սփյուռքահայ գրող-369, 450, 452

Համլիկ (Թումանյան Համլիկ, 1896-1937), Հովհ. Թումանյանի որդին, թարգմանիչ-307

Համո, տե՛ս Օհանջանյան Համո:

Հայկանուշ, տիկին, Շանթի տան տիրուհին Թիֆլիսում-141

Հայտարով, աղրբեջանցի նախարար Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարությունում-275

Հանգույց, տե՛ս Աղբալյան Նիկոլ:

Հաննես, Հաննես, Հովհաննես, տե՛ս Թումանյան Հովհաննես:

Հանրմյան Արտավազդ, հանրային, կուսակցական և պետական գործիչ-273, 279, 328, 336

Հաջինակի, աղրբեջանցի նախարար Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարությունում-275

Հարությունյան Ճ., Հայ ազգային ճեմարանի նվիրատու-507

Հաուպտման Գերհարդ (1862-1946), գերմանացի գրող-59

Հեղինե, տե՛ս Մելիք-Հայկազյան Հեղինե:

Հեղուշ, տե՛ս Փափազյան Հեղուշ:

Henry V., քերական-324

Հերդեր Յոհան Գոդֆրիդ (1744-1803), գերմանացի գրող, փիլիսոփա, գրականագետ-48

Հերմինե, օրիորդ, Շանթի ծանոթներից-319

Հերսիլիա, Վահան Նավասարդյանի կինը-474

Herrberg, պատմաբան-17

Հոմերոս (մ.թ.ա. 9-րդ դար), հույն բանաստեղծ-82

Հովհաննեսյան (Հովհաննիսյան) Աշոտ (1887-1972), քաղաքական, պետական գործիչ, պատմաբան, գրականագետ, մանկավարժ-318

Հովհաննեսյան Արշակ, Հայ ազգային ճեմարանի ուսուցիչ-325, 422, 511

Հովհաննեսյան Գոհար, Հայ ազգային ճեմարանի ուսուցչուհի-381, 414, 418, 425

Հովհաննեսյան Սահակ, սփյուռքահայ կուսակցապար-479

Հովհաննեսյան (Հովհաննիսյան) Տիգրան (1865-1921), իրավաբան, թարգմանիչ, հասարակական գործիչ-260, 261

Հռիփսիկ, Ն. Աղբալյանի բարեկամուհին-418
Հռիփսիկ, Գասպար Իփեկյանի կինը-385, 461
Հրաստան, Նիկոլ Աղբալյանի քեռին-319
Հրարփի, Հուրիկ, Նիկոլ Աղբալյանի կինը-320, 418
Ղազար Ջարըգ, հասարակական և կրթական գործիչ (ՀՅԴ)-417
Ղամբարյան, Շանթի բարերարներից-15, 217, 270
Ղատիսյան, տիկին, հավանաբար վիպասանուհի Մարիամ Խատիսյանն է՝ Ալեքսանդր և Գևորգ Խատիսյանների մայրը-91
Ղուկասյան Արմենակ, հավանաբար Խոջամիրյան Արտաշեսի քարտուղարը կամ գործակատուրը-495, 497, 498, 501
Ղուկասյան, եվրոպաբնակ հարուստ անձնավորություն-344
Ճանիկյան Մկրտիչ, սիյոուքահայ բարերար-495, 508
Ճերանյան Հայկ, ամերիկահայ բարերար, նվիրատու-494
Ճիկերյան Ասատուր, ամերիկահայ գործիչ, բարերար-510
Ճորճանյան, Համազգային միության Ֆրանսիայի մասնաճյուղի նախագահ-507
Ճուհարիկյան Հրանտ, սիյոուքահայ գործիչ-502
Մադաթ Պետրոսյան (1867-1944), արձակագիր-142
Մաթեոս, տե՛ս Փափազյան Մաթեոս:
Մալխաս (Հովսեփյան Արտաշես, 1877-1962), կուսակցական, հասարակական գործիչ (ՀՅԴ), գրող-285, 300
Մալխասյան Հովհաննես (1866-1931), պյուղապիր, մանկավարժ, հանրային գործիչ-135, 136
Մալխասյան Ստեփան (1857-1947), հայագետ, լեզվաբան, բառարանագիր, մանկավարժ-10
Մահտեսյան Սարգիս, Հայ ազգային ճեմարանի սանի թեկնածու, չի ընդունվել-473
Մամբրեյանները, դիմերոյթցի բարեբար ընտանիք-493
Մանանդյան, տիկին, տե՛ս Վասյա:
Մանդինյան Սեդրակ (1844-1915), դերասան, մանկավարժ-154
Մանուկյան Արմինե, Հայ ազգային ճեմարանի 1939 թ. շրջանավարտ և Հայերենի, հայոց պատմության ու թվաբանության ուսուցչուհի-426
Մասեհյան Օհաննես խան (Հովհաննես խան Մասեհյան, 1864-1931), դիվանագետ, հասարակական գործիչ, թարգմանիչ-286
Մասուրյան, «Հայրենիք» օրաթերթի աշխատակից-293
Մար (Նիկողայոս Մառ, 1864-1934), արևելագետ, հայագետ, լեզվաբան-262
Մարգարիտ, Մարի, Հայ ազգային ճեմարանի սանուհիներ-499
Մարկոսյան, կուսակցական-312

Մարջանով (Կոնստանտին Մարջանիչվիլի, 1872-1933), բեմադրիչ-237

Մարտիկյան, ամերիկահայ գործիչ-441

Մաքսապետյան Արմենակ, ռազմական գործիչ-280

Մելիքյան Ալեքսան, սփյուռքահայ նվիրատու-496

Մելիք-Հայկազյան Հեղինե, ուսուցչուհի, գրող, Նանթի ու Թումանյանի մտերմուհին-95, 126, 261

Մեծատուրյան Մաննիկ, հայ ազգային ճեմարանի ֆրանսերենի ուսուցչուհի-381

Մեսրոբ եպիսկոպոս (Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան, 1865-1939), եկեղեցական գործիչ, բանասեր, 1913-16 թթ. Թիֆլիսի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ-251, 252, 254

Մեսրոպյան Սամվել, ռազմական գործիչ-280

Մեֆիստոֆել, Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության գլխավոր հերոսներից-290

Մինաս Ինաչատուրյան, եգիպտահայ գործիչ-328

Միքե, տե՛ս Շամտանճյան Միքայել:

Montessorie (Մոնտեսորի Մարիա, 1870-1952), իտալացի մանկավարժուհի-322

Մովսես, աստվածաշնչյան մարգարե-81

Մովսես, տե՛ս Տեր-Գալուստյան Մովսես:

Մսրյան Մկրտիչ, հայ ազգային ճեմարանի նվիրատու-404

Municker, Մյունխենի համալսարանի դասախոս-16

Մուրատ (Սեբաստացի Մուրադ, 1874-1918), ազգային-ազատագրական շարժման գործիչ-505

Յուսուֆյան Հովհաննես (մոտ. 1860-1920) կուսակցական-հասարակական գործիչ (ՀՅԴ)-231, 245

Նաբոլեոն (Նապոլեոն Բոնապարտ, 1769-1821), Ֆրանսիայի կայսր 1804-1815 թթ.-81

Նազիկ (Նազելի Լիսիցյան, 1906-2005), Ստ. Լիսիցյանի կրտսեր դուստրը, տնտեսագետ, տնտեսական գիտությունների դոկտոր-237, 258, 260, 273

Նաղաշ Հովնաթան (1661-1722), տաղերգու-260

Նաճարյան Տիգրանուհի, ամերիկահայ բարերարուհի-498, 499

Նաճարյան, Տիգրանուհի Նաճարյանի ամուսինը-498, 499

Նանիկ (կամ Նունիկ), անհայտ անձ-418

Նավասարդյան Տիգրան (1861-1927), բանաստեր, բանահավաք, մանկավարժ, հրատարակիչ-133

Նատիա, Արտաշես Դարբինյանի կինը-296, 299, 306, 517

Նեսիպ Բեյ Ցուսուֆ, ադրբեջանցի նախարար Անդրկովկասյան ֆեդերացիայի կառավարությունում-275

Նիկոլ, տե՛ս Աղբալյան Նիկոլ:

Նշանյան Էոժենի,ամերիկահայ բարերարուհի-445
Նորատունկյան Գաբրիել (1852-1936), հաս.-քաղաքական գործիչ, դիվանագետ-328
Նորատունկյան, Գաբ. Նորատունկյանի կինը-327
Նվարդ (Թումանյան Նվարդ, 1892-1957), Հովհ. Թումանյանի դուստրը, բանաստեր, դրականագետ-229
Շահումյան Ստեփան (1878-1918), կոմակցական, հեղափոխական գործիչ-276
Շաղոյան Լևոն (1887-1974), ՀՅԴ անդամ, զորահրամանատար, հասարակական գործիչ, Հայտնի է Լևոն փաչա անունով-418
Շամիր, Շանթի և Վրույրյանի ընկերանուր ծանոթներից-307
Շամտանճյան Միքայել (1874-1926), հրապարակագիր, թարգմանիչ, խմբագիր-6, 54
Շավարշ (Միսաքյան Շավարշ, 1884-1957), հանրային, կուս. գործիչ (ՀՅԴ), հրապարակագիր-328, 329, 450
Շեկսպիր, Շեքսբիր (1564-1616), անգլիացի դրամատուրգ-46, 82, 121, 266
Շեմս (Սափրիչյան Հմայակ, 1896-1952), բանաստեղծ, բանաստեր-373, 377
Շիրվան (Ալեքսանդր Շիրվանզադե, 1858-1935)-113
Շխյաններ, Թումանյանի մտերիմ փաստաբան Արսեն Շխյանի ընտանիքը-116
Շուքերտ Ֆրանց Պետեր (1797-1828), ավստրիացի կոմպոզիտոր-133
Շուման Ռոբերտ Ալեքսանդր (1810-1857), գերմանացի կոմպոզիտոր-133
Շուշան (Մատակյան Շուշանիկ, 1877-1944), Ավ. Իսահակյանի սիրած աղջիկը-83, 84, 103
Շուշանյան Վազգեն (1903-1941), սփյուռքահայ գրող-356
Ջամիչյան Ա., հայ ազգային ճեմարանի անգլերենի ուսուցչուհի-487
Ջանքոյան Պ., սփյուռքահայ-507
Ջաքըրյան Ավետիք, մարոկկահայ մեծահարուստ կուսակարար-432
Ջեխով Անտոն Պավլովիչ (1860-1904), ռուս գրող-12
Ջէթոյան (Ջեթոյան) Բարսեղ, հայ ազգային ճեմարանի արաբերենի ուսուցիչ-426
Ջիթախյան, Շանթի բարերարներից-49
Ջիրեճյան Ճոն, հնդկահայ գործիչ-461
Ջիլինգարյան Արտաշես (Դարբինյան Ռուբեն, 1883-1968), հաս., քաղաքական գործիչ, գրող, հրապարակագիր, «Հայրենիք» ամսագրի հիմնադիրն ու երկարամյա խմբագիրը-284, 287, 291, 292, 295, 297, 302, 304, 305, 343, 516, 518
Ջիչերին Գեորգի Վասիլևիչ (1872-1936), ռուս դիվանագետ-311
Ջխենկելի Ակակի (1864-1926), վրացի քաղաքական գործիչ-

275
Ջոլաքյան Նահապետ, Հայ ազգային ճեմարանի 1939 թ. շրջանավարտ-489, 490
Ջոպանյան Արշակ (1872-1954), գրող, հրապարակագիր, գրականագետ, հասարակական և մշակութային գործիչ-6, 52, 260, 280, 306
Ջորպաճյան Արաքսի, Հայ ազգային ճեմարանի սանուհի-489
Ջպուքճյան Պ., սիրիահայ գործիչ-475
Ջուբար Գևորգ (1864-1930), գրող, հրապարակագիր, թարգմանիչ-237
Պալայան, ալեքսանդրիաբնակ տիկին-327
Պալըքճյան Բարսեղ, հասարակական-կուսակցական գործիչ (ՀՅԴ)-404, 405
Պաղտասարյան Երվանդ, Հայ ազգային ճեմարանի նվիրատու-497
Պեննեյան Հովհաննես, մարսելաբնակ հայ-516
Պերլիոզ (Հեկտոր Բեռլիոզ, 1803-1869), ֆրանսիացի կոմպոզիտոր, նվագավար-92
Պերպերյան, հավանաբար Հայ ազգային ճեմարանի երաժշտության ուսուցիչ Հ. Պերպերյանն է-417, 418
Պերպերյան, հրատարակիչ, գրավաճառ Բոստոնում-279, 298, 299
Պոլոմյան Արտաշես, սիյոտքաբնակ հայ գործիչ-479
Պողոսյան Գրիգոր, Հայ ազգային ճեմարանի նվիրատու-404
Պռոշյանց (Պերճ Պռոշյան, 1837-1907)-86
Պրոմոթեոս (Պրոմեթևս), դիցաբանական հերոս-82
Պուշկին Ալեքսանդր Սերգեևիչ (1799-1837), ռուս բանաստեղծ-64, 227
Ջամալյան Արշակ (Խսահակյան, 1882-1940),հաս.-քաղաքական, պետական գործիչ (ՀՅԴ)-328, 329
Ջավո, Ջավիկ (Ներսիսյան Ջավահիր), Լևոն Շանթի կինը-125, 126, 128, 129, 131, 132, 134, 137, 140, 141, 143, 149, 155-157, 167, 174, 189-191, 195, 196, 206, 213, 217, 221-224, 226, 228, 231, 235, 237, 239, 240, 242, 244, 247-249, 251, 253, 255, 257-260, 262, 265, 267, 268, 271, 273, 283, 285, 287, 304, 307, 370, 469, 520-524
Riehl, Մյունխենի համալսարանի դասախոս-16
Ռոզ, Արտավազդ Հանըմյանի կինը-278
Ռոստոմ, Ռոստոմյան, ամենայն հավանականությամբ Ստ. Զորյանն է (Աբրահամյան, 1867-1919), հաս,-քաղաքական գործիչ, ՀՅԴ կուրկառուն դեմքերից, -212, 273
Ռոտտեր, նկարիչ-162
Ռուբեն (Տեր-Մինասյան Մինաս, 1882-1951), ազգային-ազատա-

պրահական չարժման գործիչ, գրող-308, 328, 329

Roulke, Մյունխենի Համալսարանի դասախոս-13, 16

Ռուբինա (Արեչյան-Օհանջանյան Ռուբինա), Համո Օհանջանյանի կինը-354, 405, 411, 444

Ռուչեն Բեյ, ադրբեջանցի «երևելիներից» -273, 276

Ռուսսո Ժ.Ժ. (Ժան-Ժակ Ռուսո, 1712-1778), ֆրանսիացի լուսավորիչ-321, 322

Սաթենիկ, երևի Արտեմյան Սաթենիկ, Թարգմանչուհի-236, 239

Սահաթճյան, Շանթի և Արշակ Չոպանյանի ընդհանուր ծանոթներից Փարիզում-306

Սահակ, քահանա-211

Սահակյան Թադեոս, Թադեոս Սահակ, սփյուռքահայ գործիչ-489, 490

Սահակյան Սահակ, Հայ ազգային ճեմարանի 1946 թ. շրջանավարտ-504, 512, 514

Սաչա Մարգարյան, Ալեքսանդրիայի ազգային վարժարանի ուսուցիչ-325

Սասունի Կարո (1889-1977), հաս.-քաղաքական գործիչ, պատմաբան, մանկավարժ-328, 329, 392, 395, 449, 451, 455

Սատալյան, տե՛ս Լիսիցյան Ստեփան:

Սարգիս (Պալըգճյան Սարգիս), եգիպտահայ գործիչ-328

Սարգիսյան Գասպար, սփյուռքահայ նվիրատու-502

Սարգսյան Վ.,Վահան Խորասանճյանի քարտուղարը-504, 512

Սարդու Վիկտորիեն (1831-1908), ֆրանսիացի դրամատուրգ-60

Սեդիկ, Սիմոն Վրացյանի դստերը-294

Սեմերճյան Սամվել, բնյրութահայ լժիչկ-444

Սերոբյան Հմայակ, կտակարար - 511

Սերոբյան Նուպար, Հայ ազգային ճեմարանի ֆիզիկայի և քիմիայի ուսուցիչ-426

Սերվանտես (Միգել Սերվանտես դե Սաավեդրա, 1547-1616), իսպանացի գրող-84

Սիմոն, տե՛ս Վրացյան Սիմոն:

Սիսլյան Քնար, Հայ ազգային ճեմարանի ֆրանսերենի ուսուցչուհի-426

Սիրան, Հավանաբար Սիրան Սեզա (Զարիֆյան-Ֆյուսիլյան Սիրան, 1903-1973), հրապարակագիր, արձակագիր, հաս. գործիչ-324-326

Սիրունի (Ճոլոլյան Հակոբ, 1890-1973), գրող, հաս. գործիչ, հայագետ, հրապարակագիր-375

Shengel,Մյունխենի Համալսարանի դասախոս-16

Chorbonies, Հայ ազգային ճեմարանի ֆրանսերենի ուսուցիչ-426

Սմբատ, Հովհաննես Յուսուֆյանի եղբայրը-232

Յոնի Բաբգեն (Բարկեն, 1873-1896), ազգային-ազատագրական չարժման գործիչ-419, 501

Սողիկյան Խորեն, բժիշկ, Հայ ազգային ճեմարանի բարերար-503, 506, 508, 509, 513

Սոֆոքլես (Սոֆոկլես, մ.թ.ա. 496-406), հույն ողբերգակ-84

Սպենդիարյան Իվան (Հովհաննես), իրավաբան, Ստ. Լիսիցյանի համալսարանական դասընկերը, կրթական-հասարակական գործիչ, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի եղբորորդին-9-11

Ստեփան, տե՛ս Լիսիցյան Ստեփան:

Ստրինդբերգ (Ստրինդբերգ Յոհան Ավգուստ, 1849-1912), շվեդ գրող-22

Սրենց Սարգիս, պոլսահայ թարգմանիչ-216

Սրվանձտյանց Գարեգին (1840-1892), բանահավաք, բանագետ, գրող-133

Սրբուհի, Սուրբիկ (Լիսիցյան Սրբուհի, 1893-1979), Ստեփան Լիսիցյանի ավագ դուստրը, ազգագրագետ, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ-19, 52, 90, 148, 227, 234, 237, 248, 256-258, 260-265, 267, 268, 273

Սուրեն, տե՛ս Բաբախյան Սուրեն:

Սուրեն, Սուրիկ (1904-՞), Լևոն Շանթի ավագ որդին, մանկավարժ, հաս. գործիչ-129, 146, 147, 217, 226, 227, 312, 326, 328, 426, 520, 521, 523, 524

Սուքիասյան եղբայրներ, Հայ ազգային ճեմարանի նվիրատուներ-404

Coզ, Հայ ազգային ճեմարանի ֆրանսերենի ուսուցչուհի-426

Վահան (Նավասարդյան Վահան, 1888-1956), տնտեսագետ, հասարակական գործիչ, հրապարակագիր, «Հուսաբերի» երկրաբանմյա խմբագիր-327, 353, 363, 404, 473

Վահան Չերազ (1886-1927), մանկավարժ, հասարակական գործիչ-460

Վահան, տե՛ս Փափազյան Վահան:

Վաչիկ, Վահան Փափազյանի որդին-285, 286, 292

Վաչյաններ, բաքվեցի ընտանիք-244

Վաչյանց, բաքվեցի հողատեր (հնարավոր է՝ վերևի ընտանիքից)-260

Վառյա (Խանդամիրյան Վարյա), մանկավարժուհի, Հովհ. Թումանյանի մտերմուհին-88, 99, 103, 141

Վարդազարյան Ֆիլիպ (Փիլիպոս, 1858-1935), Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի մտերիմ բարեկամը-74, 83, 105, 108-110, 113, 116, 121, 125, 127, 128, 130, 140, 156, 189, 198, 200, 206, 218, 228, 229

Վարդանյան, տիկին, Հայ ազգային ճեմարանի բարերարուհի-440

Վարուժան Դանիել (1884-1915)-260

Վիգեն, Վիգուշ, Լևոն Շանթի միջնեկ որդին (1906-1944)-146, 185, 188, 190, 196, 199, 206, 226, 227, 253, 262, 312, 521, 523, 524

Viuriguerra, Հայ ազգային ճեմարանի ֆրանսերենի հրավիրված ուսուցիչ (չի աշխատել)-426

Վրացյան Սիմոն (1882-1969), քաղաքական, պետական, հասարակական գործիչ, դրող, հրապարակագիր-282, 283, 286, 289, 290, 292, 293, 296, 299, 301, 304, 307, 310, 313, 318, 320, 369, 373, 392, 394, 416, 417, 422, 426, 439, 440, 442, 445, 446, 448, 451

Տարոնյան Էդուարդ, Հայ ազգային ճեմարանի ֆրանսերենի ուսուցիչ-381, 414, 416

Տեմիրճյան Պ., Հայ ազգային ճեմարանի նվիրատու-489, 507

Տեոպետեոյան, Տերպետերյան Մարափրոս(1872-1931), մանկավարժ, մչակութային և հասարակական գործիչ-326, 395

Տեր-Գաբրիելյան Սահակ (1886-1937), կոմսակցական, պետական գործիչ-318

Տեր-Գալուստյան Մովսես, սփյուռքահայ գործիչ, Հայ ազգային ճեմարանի վարիչ-444, 475

Տեր Գյուտ (Ադանյան Գյուտ քահանա, 1854-1919), խմբագիր-հրատարակիչ «Լումա» հանդեսի, պատմաբան, հաս. գործիչ-133

Տեր-Դավթյան Հովսեփ (1870-1946), բժիշկ, հասարակական-կոմսակցական գործիչ (ՀՅԴ)-328

Տեր-Ղևոնդյան Նիկողայոս (1846-1920), մանկավարժ, դպրոցական դասագրքերի հեղինակ-154

Տեր-Մաթևոսյան Լևոն, ամերիկահայ գործիչ-445

Տեր-Մանվելյան Արամ, սփյուռքահայ գործիչ-479

Տեր-Մելքոնյան Հակոբ, Լիբանանի Համազգայինի խնամակալ մարմնի անդամ-444

Տեր-Մինասյան Երվանդ (1879-1974), բանասեր, պատմաբան, Հայ ազգային ճեմարանի բարերար-510

Տեր-Մովսեսյան Սահակ (1878-1956), պատմաբան-308

Տերտերյան Արշալույս, Հայ ազգային ճեմարանի 1944 թ. շրջանավարտ-506, 509, 513

Տերտերյան, պարսկահայ բժիշկ-418

Տերտերյան Համբարձում, պետական, հասարակական գործիչ-313, 315

Տիգրան, տե՛ս Բեդրոսյան Տիգրան:

Տիգրան Զավեն (Զուքասյան Զավեն, 1879-1938), լրագրող, հրապարակագիր, մչակութային գործիչ-225

Տիգրանյան, օրիորդ-319

Տիկին Խանազատ (Խանազատյան Շուշանիկ, 1874-1956), դրական-մշակութային գործիչ, հրապարակագիր, մանկավարժ-225

Тячкин, *Հովհ. Թումանյանի ամառանոցի տերը Աբասթումանում-123*

Տյուվեներ, *ֆրանսիացի (կամ չվեյցարացի) ընտանիք-520*

Տևեճի, Տևեճյան *(Տևեճյան Հովհաննես, 1892-1976), կուսակցական, հասարակական և պետական գործիչ (ՀՅԴ), մանկավարժ-284, 287, 304*

Փանոսյան Հ., *Հայ ազգային ճեմարանի մարմնամարզության ուսուցիչ-426*

Փանջունի, *Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» վեպի գլխավոր հերոսը-346*

Փափազյան Հեղուշ, *Վահան Փափազյանի կինը, Հայ ազգային ճեմարանի ձեռագործի ուսուցչուհի-281, 285, 286, 292, 364, 378, 381*

Փափազյան Մաթեոս, *Հայ ազգային ճեմարանի անգլերենի ուսուցիչ-378, 381, 410, 485*

Փափազյան Օ., *Ալեքսանդրիայի Պողոսյան վարժարանի ուսուցիչ-324*

Փափազյան Վահան, Կոմս *(1876-1973), ազգային-ազատագրական չարժման, հասարակական և կուսակցական գործիչ (ՀՅԴ)-281, 285, 288, 291, 318, 320, 375*

Փափազյան Վրթանես *(1866-1920)-86*

Փեչտմալճյան Մարի, *Հայ ազգային ճեմարանի ձեռագործի ուսուցչուհի-426*

Փիրումյան, *կուսակցական և պետական գործիչ-315*

Փոթոմկյան Լյուսի, *սիյուտքահայ բարերարուհի-496*

Փոթոմկյան Վահրամ, *բժիշկ, Հայ ազգային ճեմարանի արտոնատերը-362, 496*

Քաջազնունի *(Տեր-Հովհաննիսյան Հովհաննես, 1868-1938), ճարտարագետ, հաս.-քաղաքական, պետական գործիչ, հրապարակագիր-133, 142, 276, 300, 303*

Քարախան, *տե՛ս Կարախան Լևոն:*

Քափանակյան Ստեփան *(1877-1944), բեմադրիչ, թարգմանիչ-237*

Քեշիշյան Ս., *ամերիկահայ բժիշկ, Հայ ազգային ճեմարանի բարերար-492*

Քիլլիյան Ա., *սիյուտքահայ բժիշկ, Հայ ազգային ճեմարանի բարերար-491*

Քլոփշտոկ *(Կլոպշտոկ Ֆրիդրիխ Գոթլիբ, 1724-1803), գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ-48*

Քոչլով, *տե՛ս Կոչլով Իվան:*

Քրաֆտ-Բոննար, *Շանթին ծանոթ չվեյցարացի հայագետ-350*

Օզան, Օզանյան *(Օզանյան Միրիջան կամ Մերուժան, 1885-1965), հասարակական և*

կոնսուլցիական գործիչ (ՀՅԴ), հրապարակագիր-284, 451, 455

Օլյա *(Թումանյան Օլգա, 1871-1971), Հովհ. Թումանյանի կինը-141, 143, 228*

Օկաննեզով, Օկաննեսով *եղբայրներ, հանքարդյունաբերությամբ զբաղվող բաքվեցի գործարարներ-101, 105*

Օհան Կարո, *սիլիստրիահայ գործիչ-455*

Օհանջանյան Համո *(1873-1947), բժիշկ, հաս.-քաղաքական, պետական գործիչ-327, 328, 334, 335, 339, 340, 346, 348-350, 353, 358, 360, 362, 363, 365, 368, 369, 371-373, 375-377, 381, 382, 384, 386, 388, 390, 391, 396, 398-400, 402, 405, 406, 409-411, 413, 415, 419, 422, 423, 427, 429, 431, 434, 443*

Օհանջանյան, *պրոֆեսոր Երևանում-144-146*

Օննիկ *(Դերձակյան Օննիկ, կոչ. անունով Վռամյան Արշակ, 1870-1915), Լ. Շանթի ճեմարանական դասընկերը և մտերիմ բարեկամը, ազգային-ազատագրական չարժման գործիչ, 1908 թ. օսմանյան խորհրդարանի երեսփոխան-18, 20, 22, 28, 29, 41, 50, 56, 61, 68, 70, 71*

Ֆաուստ, *Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության գլխավոր հերոսը-290*

Ֆիլիպ, *տե՛ս Վարդազարյան Ֆիլիպ:*

Ֆիլյան Պաղտասար, *ամերիկահայ գործիչ-498*

Ֆոկաս Նիկեփոր, *Շանթի «Կայսր» դրամայի հերոսներից-523*

Ֆրոբել *(Ֆրյոբել Ֆրիդրիխ, 1782-1852), գերմանացի մանկավարժ-322*

Աժան - էժան
ալճեպրա - ալգեբրա, հանրահաշիվ
ալբոմ, ալպոմ
ալտրուիստ - այլասեր
ալքոհոլ - ալկոհոլ
աղեկ - լավ
ամառանոց, ամարանոց
ամպիոն - ամբիոն
անաթոմի – անատոմիա
անթիքվարիչ – անտիկ (գերմ.)
անիմի – անեմիա, սակավարյունություն
անճախ – հազիվ (թուրք.)
ապպարդըման – բնակարան (ֆրանս.)
ապսուրտ - աբսուրդ, անհեթեթություն
արբիտրաժ – այստեղ՝ իրավարարություն
ափփարատ – ապարատ, այստեղ՝ կազմ
բաղդ – բախտ
բանկա, բանքա, պանք, պանքա – բանկ, դրամատուն
բանքրոտ – բանկրոտ, սնանկ
բանսիոն, պանսիոն, փանսիոնական – այստեղ՝ փոքրիկ հյուրանոց, ուր կենվորներին նաև կերակրում են
բաշըկից, պաշըկից - բակալավր (ֆրանս.)
բարեբաղդաբար – բարեբախտաբար
Բելգիա, Բելժիկ, Բելճիքա, Պելճիկա
Բելկրատ – Բելգրադ
բեննի – պենկի, անգլիական մանրադրամ
Բերլին-Բեռլին
բիանո – դաշնամուր (իտալ.)
*բիլյուլ–*пилюль*, դեղահաբ (ռուս.)*
բլան, պլան
բլանկ – ձևաթուղթ
բլյուա, պլյուա - դրամարած
բյուտճե, բյուտճեական, պյուտճե – բյուջե
բոեմ, պոեմ, փոեմ
բոլշևիկներ, պոլշևիկներ, պոլշևիզմ
բոյկիա – պոլկա (պար)
բրդուճ, փրթուճ
բրիկաշչիկ – приказчик*, կալվածքի կառավարիչ (ռուս.)*
բրոբագանդ, պրոպականտ, փրոփագանդա, փրոփականտ, պրոպագանդ - պրոպագանդա
Բուդաքեստ, Բուդապեստ - Բուդապեշտ
Բուլկարիա – Բուլղարիա
բուլկարական
բուխկալտեր – бухгалтер*, հաշվապահ (ռուս.)*
գաբինետ – կաբինետ, այստեղ՝ վարչակազմ
գոմբինեզոն – կոմբինացիա, համակցություն
գուբե – купе*, գնացքի առանձնախուց*
դարտակ, դատարկ

դևեկացիոն, տեվեկասիոն – պատվիրակություն

դեկորասիոն, տեկոր – թատրոնի դեկորներ

դեկրետ – որոշում (ռուս.)

դժբախտաբար, դժբաղդ, դժբաղդություն, դժբաղդաբար

դիբլոմ – դիպլոմ

դիլետանտ - դիլետանտ, մակերեսային գիտելիքների տեր, սիրող

դիստնանս – աններդաշնակություն

դիվտիբիտ – դիֆթերիա (հիվանդություն)

դոկլադ – զեկուցում, զեկույց (ռուս.)

դրամա, տրամա, տռամա

դուշ – ցնցուղ (ռուս.)

դևիզ, տևիզ – նշանաբան (ռուս.)

էզան – նամազ անելու կոչ

էթիկ – էթիկա

էթյուդ – էտյուդ

էլեկանտ – էլեգանտ, պճնապճղ, նրբապճղ

էնժինիոր, ինժինիոր – ինժեներ, ճարտարագետ

էնտերվյու – ինտերվյու, հարցազրույց

էնտիմ – ինտիմ

էնքլյուենցա – հարբուխ, վարակ

թայֆայություն – խմբակայնություն

թատր – թատերակ, պիես

թաքո, տակտ

թաքթավոր – տակտավոր

թեխնիք, թեխնիքա – տեխնիկա

թեորի – թեորիա, տեսություն

թիփ, թիփո – տիփ

Թիֆլիզ, Թիֆլիս

թոն, տոն

թոփ – վաթուլթ, հակ

թրամվայ, թրանվայ – տրամվայ

թուալետ տալ – հարդարվել

իլլյուստրասիոն – այստեղ՝ նկարազարդում (ֆրանս.)

ինձի, ինձ, ինձի

ինդիվիդուալ – բնազդային

ինստինկտ – բնազդ

ինտելիգենտ – ինտելիգենտ, կիրթ, մտավորական

ինտելիգենցիա – ինտելիգենցիա, մտավորականություն

ինտրիկ – ինտրիգ, բանսարկություն, խարդավանք

ինտրիկանտ – ինտրիգան, բանսարկու

իշտահ – ախորժակ (թուրք.)

իտեալ – իդեալ

Լաթաքիա, Լաթաքիե – քաղաք Սիրիայում

լամպիոն – լամպ

Լայբցիկ – Լայպցիգ

լափա – լաֆ

լևկենատար – լեգենդար

լիկա – լիգա (Ազգերի լիգա)

լիսե – լիցեյ, վարժարան, ճեմարան

լիսեական – ճեմարանական

լիրիտ – լիրա, իտալական դրամանիշ

լոկոմոթիվ – լոկոմոտիվ

լոժ – լոժա, օթյակ

Լոնտոն – Լոնդոն

լևա – լև, բուլղարական դրամանիշ

խազակ – կազակ

խալխ – ժողովուրդ (թուրք.)

խալմաղալ, ղալմաղալ – աղմուկ, իրարանցում (թուրք.)

խամսըզուլթյուն – անփորձուլթյուն (թուրք.)

խայրքով, խարկով

խաչաղ – ղաչաղ, ավազակ (թուրք.)

խրկել, ղրկել – ուղարկել

կազ - նավթ

կանտոր, կանտորա – գրասենյակ (ռուս.)

կասսա, քասսա – դրամարկղ

կաստանիետ – փայտե չխկչխկան, որ օգտագործում են իսպանական պարի ժամանակ

կատալոգ, քաթալոկ – գրացուցակ

կարատաւովոյ – городовой, ոստիկան (ռուս.)

կարդ, կարտ, քարթ, քարտ – բացիկ

կարդոն – այստեղ՝ թղթապանակ

կեդրոնացում, կենդրոնացում – կենտրոնացում

կեչեֆտ – առևտուր, գործարք (գերմ.)

կզկըզված – գզգզված

կլիմնազիոն – գիմնազիա

կլյաս – դասարան

կլիշե, քլիշե

կոզուտած – գողուտած, միզոտ

կոկլյուշ – կապույտ հազ

Կոճոր, Կոջոր

կոմիսիոն – առևտրական միջնորդություն, միջնորդադրամ

կոմպլեկս – այստեղ՝ կոմպլեկտ, հավաքածու

կոնսուլ, քոնսուլա – հյուպատոս

կոնտրոլ – հսկողություն, վերահսկողություն

կորրեկտ, կորրեկդ – ճիշտ, ուղիղ, քաղաքավարի

կրետի – կրեդիտ, վարկ

կուրտիկ – բաճկոն

հալ – վիճակ (թուրք.)

հալա – դեռ (թուրք.)

Հայտելբերգ, Հայտելբերկ – Հայդելբերգ, քաղաք Գերմանիայում

Հանդըպիլ, Հանդիպիլ, Հանդպիլ – Հանդիպել

Հասկանալ, Հասկընալ, Հասկնալ

Հավար – օգնություն բացականչություն (թուրք.)

Հոթենթոթ – Հոտենտոտ

Հոտ – Հոդ, այդտեղ

ղոչաղ – ճարպիկ (թուրք.)

ղուրուշ – թուրքական դրամանիշ

ճամբա, ճամփա

ճժեր – երեխաներ

հիզվիթ – հիզվիտ

ճիժ ու բիժ – երեխաներ

ճիշդ, ճիշտ

մազալու – զվարճալի, ծիծաղելի (թուրք.)

մաթ – անփայլ

մակաւիր – մակդիր

մանթ – մանթո, թիկնոց

մեթեոր – մետեոր, աստղ

մետրայոզ-ըստ երևույթին՝ դնդացիր

մերկանդիլ – չահագրգռական, չահամոլական, առևտրի

մինա – ական

մինինժիտ – մինինգիտ

միքրոֆոն – միկրոֆոն, խոսափող

մյուսիլման – մուսուլման, մահմեդական

մոտել – մոդել

մուզա, մուսա

մուսաֆաւո – մուսավաթ

յութոբի-ուտոպիա

յունիֆորմ – միակերպ, միանման, նմանաձեւ (ֆրանս.)

նաթյուռալիզմ – նատուրալիզմ

նաթուռալիստ – նատուրալիստ

նաթուռել – բնույթ, բնավորություն, անհատականություն

նակլադնոյ – բեռնագիր, ապրանքագիր (ռուս.)

նեյնիմ-ցնդսբանություն, դատարկաբանություն

նոմեր – համար (ռուս.)

նորվեկյան – նորվեգյան

չարմանքա – չարմանկա (երաժշտական արկղիկ)

չիլին – չիլինգ, անգլիական դրամանիշ

չիմի, քիմիա

չիք – չիկ, չքեղ, չքեղություն, փայլ

Շվետ – Շվեդիա

շոք – շոկ

չալ անել – տարածել, հռչակել, ամենքին հայտնել

չեչիտ – տեսակ

չեք - չեկ, անդորրագիր

չեքավոր – չեկավոր

չին – պաշտոն (ռուս.), այստեղ՝ դործ, պրաղմունք

պանալ – տափիակ, անհամ, ճղճիմ

պասթիա – բաստա, վերջ (իտալ.)

Պավարիա – Բավարիա, երկրամաս Գերմանիայում, որի կենտրոնը Մյունխենն է

պացիվ – բացիվ, մանրէ

պաքալորիա – բակալավրիատ

պեռալ – սպազրական մեքենա

պետանդ – պեզանտ, բծախնդիր

Պետերբուրկ – Պետերբուրգ

Պետրոգրատ, Պետրոկրատ – Պետրոգրադ

պերսոնել - անձնակազմ

պլըֆ – բլեֆ, խաբեություն

պոլ – լոլ, բավականին (թուրք.)

պոստ, պոստա, փոստ

ջուռնալ – ժուռնալ, այստեղ՝ մատյան

ռատիքալ – ռադիկալ, արմատական

Ռոստով, Ռոստով, Բաստով, Րոստով – Դոնի Ռոստով

ռեզլամ, ռեկլամ, րեկլամ – գովազդ

սանսաթորիական – սանատորիական, առողջարանային

սանթիմենտալ – սենտիմենտալ, զգայացունց

սանճագ- դավառ (թուրք.)

սեկրետար – քարտուղար

սթերլին – ֆունտ սթերլինգ, անգլիական դրամանիշ

սթիփենտիատ – ստիպենդիատ, թոշակառու

սինեմա – կինո, կինոմատոգրաֆ

սինեմաճիություն – կինոնկարահանումով զբաղվելը

սիսթեմ, սիստեմա – սիստեմ, համակարգ

Սկանտինավ – Սկանդինավիա

սկոլություլ, սկրյուբյուլ, սքրյուբյով – բծախնդրություն, նրբա-

Նկատումբյուն (ֆրանս.)

այուրբրիզ – այուրպրիզ, անսպասելի

սոլիտ – սոլիդ, ներկայանալի

ստիլ – այստեղ՝ տոմար

Ստոքհոլմ – Ստոկհոլմ

վականդ – վականտ, թափուր

վագոն, վակոն

վաննա – լոգնոց

վանտալուբյուն – վանդալուբյուն

վարիանտ – տարբերակ

վարյակ – վարյագ, նորման

վեչեր – երեկո (ռուս.), այստեղ՝ երեկույթ

վիզիտ – այց

վիզյուել – տեսողական (ֆրանս.)

Վլադիկավկաս – Վլադիկավկազ քաղաքը Հյուսիսային Կովկասում

վոտրվիլ – վոդևիլ

տեբո – նավթահոր

տելեգրաֆ – այստեղ՝ կապ

տենդենցիա – միտում

տիպլոմատիկ – դիպլոմատիկ, դիվանագիտական

տոլար, տոլլար – դոլար

տոսսիե – դոսիե, փաստաթղթերի ամբողջություն, թղթապանակ

տովարիչչ – ընկեր (ռուս.)

տոքտոր – դոկտոր

տրամացու – դրամացու, դրամային նյութ

տրամատուրկ – դրամատուրգ

տրաժիկ – տրագիկ, ողբերգական

տվորնիկ – дворник, բակապան, դռնապան (ռուս.)

տուրնե – շրջագայություն, զբոսապտույտ

բանտ – արժեթուղթ

բեակցիոն, բեաքցիոն – ռեակցիա, այստեղ՝ արձագանք

բեբուս – ռեբուս, գլուխկոտրուկ

բեժիսոր – ռեժիսոր, բեմադրիչ

բելս – ռելս

բեոմյուր – 80 աստիճանանոց ջերմաչափ

բեստորան – ռեստորան

բեֆերատ – ռեֆերատ

բոման – ռոման, վեպ, այստեղ՝ սիրավեպ

բոմանթիկ, բոմանթիք – ռոմանտիկ

բուբլի, բուպլի – ռուբլի

բուֆինա, բուտինա – քարտացածություն

բևիզ – ռևիզիա, վերստուգում, վերանայում

ցոցխալ – ձկան տեսակ է

*փալթո –*пальто*, վերարկու (ռուս.)*

փարա – դրամ, մանրադրամ

փարոլ – պարոլ, նշանաբառ

փեսսիմիստ – պեսիմիստ, հոռետես

փիքանդրի, փիքանթուբյուն – նրբանկատություն, զգոնիչ լինելու և զգացմունք չսրժելու հատկություն

փոեզի – պոեզիա

փոլիմիկական – պոլեմիկական, բանավեճային

փոմեչչիք – помещик, կալվածատեր (ռուս.)

փոմփեոզ – պոմպեոզ, փքուն

փորցիոն – պորցիա, չափաբաժին

փրաթիկ – պրակտիկ, գործնական

փրեֆե – պրեֆեկտ

փրոզա – պրոզա

փրոզայիկ – պրոզայիկ

փրոֆեսոր, փրոֆեսսոր – պրոֆեսոր

քաբել- մայստր – նվագախմբի ղեկավար (գերմ.)

քայութ – каюта, նավախուց (ռուս.)

քանտիտատ - կանդիդատ, թեկնածու

քաֆե – կաֆե, սրճարան

քեմբ - երևի անգլերեն camp բառն է, ճամբար, զորակայան

քլասիկ – կլասիկ, դասական

քոնդրակտավոր, քոնդրաքտ – պայմանագիր ունեցող

քոնտրաստ – կոնտրաստ, հակադրություն, ցայտերանգություն

քոքեթ – կոկետ, պչրուն

քոքեթուլյուն – պչրանք

քրիզ – կրիզիս, ճգնաժամ

քուլտուրական – կուլտուրական

օխա – կշռաչափ (1284 դրամ)

օջուշաղ – ընտանիք (թուրք.)

օմնիբուս – այստեղ՝ գնացքի ընդհանուր վագոն (ոչ կուպե)

օյինբազ – ծիծաղելի, ծիծաղաշարժ

օպերասիոն, օպերացիա – վիրահատություն

օրիժինալ – օրիգինալ, յուրահատուկ

օրգանական, օրգանիզմ

օքերա – առևտրական առաջարկ (գերմ.)

փանսան – չատրվան (ռուս.)

փենիկներ – պֆենիգներ (պֆենիգ՝ գերմանական մանրադրամ)

փիզիոլոգի – ֆիզիոլոգիա

փիզիոնոմիա – երես, դեմքի արտահայտություն, արտաքին

փիլիալ – մասնաճյուղ (ռուս.)

փիլոփով – կեղծ

փիզիք – ֆիզիկա

փլեյթ – փլեյտա

փոնետիկ - հնչական

փորմուլյար – օգտաքարա, անհրաժեշտ

փորմուլ, փորմուլա – բանաձև

փուայե – ֆոյե, ճեմասրահ, հանդերձատասրահ, այստեղ՝ դպրոց, ճեմարան

Լևոն Շանթի՝ Գևորգյան ճեմարանի ավարտական
վկայականի լուսապատճենը

Ի տեղին Հաճախ ուշադրության Ա. Ահարոնեանի
ինքնագիր տետրակի մէջ, ծանօթ և հետաքրքիր նիւթ
մը։ (Այդ տետրակը անցեալ տարի տեսած էի Ք. և Ք. Տաճեանի մէջ։ Այժմ չգիտեմ, ո՛ւր է։ Շատ
ո՛ւրախ, որ անոնց ձեռքերուն մէջ չէ։ Ուրեմն հաճախ ո՛չ միայն
ես և Ք. Տաճեան։ Այժմ 8, 22, 35 և 69 էջեր
ի հետաքրքրութիւն. 22-ը խնդրագրական շատ տեսակ է,
մէկ հարցաբանական ոճով և պատասխանը
պիտի հոգայի և տան հանելիքներուն պատճէնը
հետաքրքիր մէ նայէ (ոչինչ նամակներ և գրութիւններ
ան ամբողջ անձնական ձեռնարկութիւնս ծառայէ)։ Կարծէ
ամբողջ մը տեղական ի հարցին։ Եւ ոչ նայ պատասխանը
շատ ընդհանուր ձևի մէջ - ի տեղի հետաքրքիր տեղեկութիւն՝
հետաքրքրական հարցադրումներ տալով։ Ահա և դասագրքի,
ու կասի մը ինչպէս տեղեկութիւններ հետաքրքրական
պահեցիր, ըսած ևն պիտեցած մը, ոչ տասնչ տեղական
պատմութիւն։ Ահրիկ ընդհանուր է, ոչ տասնչ պատմութիւն,
հետաքրքրական մեծութիւն, տարածական մեծապէս է։ տասնչ-
պէս տասնչ ի հետ ու տեղական։ Հետաքրքրական
ու "Ծիրանիք" շատ տարածուն։ տասնչ պատմութիւն
տեղ չեղած մէջ տրիճ ի ի հարցին։ Ու ծրագիր
գիտնալ հետաքրքրական ի տարած ու հարցում և պատմութիւն։
Ինչ հետաքրքրական շատ ի ծրագրական տարած է, չեղած տասնչ,
ծանօթ ևն մէկ հարցին ի տրիճ ծանօթ չեղած։ յատկապէս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակներ և բացիկներ 5

Հավելված 1. Սևագիր նամակներ 447

Հավելված 2. Բացիկներ կնոջը և զավակներին 519

Լևոն Շանթի նամականին 525

Մանրագրություններ 547

Անձնանունների բառարան-անվանացանկ 684

Բառարան 702

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՀԱՏՈՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 739
Հանձնված է արտադրության՝ 22.05. 2017թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:
44,5 տպագր. մամուլ: Տպաքանակը 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Բաղրամյան 24:

II
A 103199